



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

OL 45050.1



**HARVARD
COLLEGE
LIBRARY**

Հ Ա Յ Բ Ո Ի Ս Ա Կ



Հ Ա Յ Բ Ո Ւ Ս Ա Կ



Կ Ա Մ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ո Ւ Ս Ա Բ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն




Վ Ե Ն Ն Տ Ի Կ . - Ս . Ղ Ա Ջ Ա Ր

1895


OL 45050.1

✓





Ն Ա Խ Ա Դ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



Երբ երկու տարի առաջ սկսաւ, եւ հետ զհետէ հրատարակեցաւ մասն մի գրոցս ի Բագմավիպի, խկութեանն համեմատ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, անուանեցաւ, ինչպէս բացատրուած է ի Յառաջաբանին. գիրքը յիշելու համար՝ այդ անուան երկարութիւնն ծանր գալով՝ հիմայ դիւրացընեմք՝ կոչել ՀԱՅԲՈՒԾԱԿ:

Որչափ այլ բառական ըսած էինք մեր խնդիրը, ընծերցողք տեսնեն որ ոմանց անուանց սահմանն բառականէն անցեր է ի բնական եւ բանական. գրեթէ անկարելի ըլլալով այնպիսի սիրուն եւ դալար նիւթոց բացատրութեան ատեն՝ կերպով մի անզգայ եւ ցամբած մնալ. յուսամք որ դարձեալ մեր չափէն շատ հեռացեալ չհամարին զվեզ, այլ եւ միաբանին, թէ, շատ զօրաւոր է ազդեցութիւն բուսականաց յաչս, ի միտս եւ ի սիրտ մարդկան, եթէ ասոնք խանգարեալ չեն ի նմա. Եւ ինչպէս բուսականք ի վնեղութեան արարածոց՝ անդրանիկք գրուին ի գործարանաւորս եւ իբր միջնորդք անկենդանեաց եւ կենդանեաց, այսպէս եւ գերազանցեն ի գեղեցկութեան եւ ի պիտանութեան կամ օգտակարութեան. թէ ի մտունդ մարդկան եւ անասնոց, թէ իբրեւ դեղ, թէ իբրեւ ազանեղիք, թէ նիւթ ջերմութեան, եւ թէ ամենակարեւորք ի շինուածս եւ յարուեստս:

Այսպիսեաց նկատմամբ՝ եւ ըստ անթիւ զանազանութեան եւ տեսակաց բուսոց, հարկ էր որ շատ եւ շատ անուններ ունենային ամեն լեզուօք, բնիկ եւ փոխ առած ի մերձաւորաց եւ հեռաւորաց, ըստ որում ամէն երկիր ամէն տեսակ բոյս չի բերէր. եւ թէ եւ կան ոմանք հասարակ ամէն կողմանց, կան այլ յատուկք միայն այս կամ այն կողման: Ըստ այսմ շատ պիտի չհամարուին մեր հաւաքած անուններն (3400), մանաւանդ եթէ յիշեմք որ մեծ մաս մ'այլ եկամուտ են յօտար լեզուէ (գլխաւորապէս յա-

րաբերէնէ)։ Բայց այսով պէտք չէ աղքատ համարել հայկական Բուսաբա-
 ուռնիւնը. նախ, զի ուրիշ ազգաց բուսաբաւուռնիւնք այլ այսպէս իրարմէ
 փոխ առած են. եւ երկրորդ, որ մեր հաւաքածէն համոզեալ ենք, որ եթէ
 մեր փափագին համեմատ մեզի օգնող գտնէինք, այսինքն ուրիշ բանասէրք
 այլ (գատ անոնցմէ վոր յիշած ենք ի Յառաջաբանին, Ռետեւոդ ըլլային ա-
 նոնց), իրենց գտածը հաղորդելու, դեռ պիտի գտուին ի գիրս եւ մանա-
 ւանդ ի խօսս հայաբնակ կողմանց եւ յատկապէս առ երկրագործս, շատ
 նոր կամ մեզի անծանօթ բուսական բառեր. զորս հաւաքել եւ մերինը ա-
 ճեցընել՝ թողումք սիրողաց եւ յաջողաց. նոյնպէս եւ ներել մեր գրուածեան
 եւ տպագրութեան սղալանաց, մանաւանդ յօտարազգի բառս։

Իբր նշանակ երկու գլխաւոր բաճնէրուս (բուսոց ազդեցութեան ի միտս
 եւ անոնց անուանց շատութեան), ըլլայ մեր նախնեաց մէկուն, եւ նախ-
 նագունին նախնեաց, ըսածն կամ գրուածն, (որ եւ է ձեռօք եւ կերպով),
 մեր ազգին հոգւոյ եւ մտաց լուսատուին՝ Ս. Գրիգորի. յորում՝ ընդ իմաս-
 տից պիտի նշմարեն ընծերցողք՝ վաթսունէն աւելի յիշեալ բուսոց մէջ,
 քանի մի անուն կամ տարբերութիւն անուանց այլ, որ մոռցուած են ի
 կարգի Բուսաբաւուռնեանս եւ ի Յաւելուածին։ Կ'առնումք զայս Ագա-
 թանգերտի ծանօթ գրոց յատկապէս *Վարդապետութիւն Ս. Գրիգորի* կոչուած
 մասէն, եւ *Վասն Յարութեան մեկեոց* ըսուած մասէն. որ եւ այդ գրքէն
 դուրս այլ գտուի ի չառննտիրս. եւ մեր օրինակածն այլ է ընտիր ճա-
 ւընտրէ մի, գրուած ի 1271 թուին Քրիստոսի։ Փափագիմք որ այս ըլլայ
 հաճոյագոյն մասն կամ բոլորն Նախադրութեան գրոցս։

« Կարի նմանութիւնք եւ օրինակք են ամենայն ծառատունկք (յարութեան
 » մարմնոց)։ զի զիւրաքանչիւր կերպարանաց տեսիլս երեւեցուցանել. եւ ոչ
 » երբեք փոխեն զգոյն կերպարանացն եւ զծաղկանցն, զհամոց եւ զհոտոց
 » եւ զտերեւոց։ Չի Արմաւն զիւր տեսիլն եւ զգոյնն եւ զհամն եւ զարարն
 » բերիցէ. որպէս եւ Թուզն զիւր տեսիլ տերեւոյն եւ զարար կերեւոյն, եւ
 » զտարր մրգոյն՝ ի նմանէ որիշ. եւ այլքն ի նմանէ ուրոյն։ Չի Կարմրախըն-
 » ձորն զիւր զօրինակն, եւ Կարմրատանձն զիւրն եւ Կարմրադեղձն զիւրն. եւ
 » են նոյնք ի նորին բնութենէ, եւ են որ այլագոյնք են. զի եւ զհոտն անգամ
 » իւրաքանչիւր ոք ի նոցանէ յատուկ պահէ։ Որպէս Կիւորձն, եւ Ապաբալսալ
 » մինն, եւ *Դափեհիկ*¹, եւ Չիծեւիլն գեղեցիկ, եւ Սերկեւիլն եւ Մուրան, եւ
 » Ընկոյզն եւ Նուշն, եւ Քնարուկն եւ Հանարուկն, եւ Թուծն եւ Նուռն եւ
 » Հոյնն։ Եւ ամենայն ծառք պողաբերք եւ տերեւաբերք եւ հասակաբերք,
 » բարձունք եւ մեծամեծք. որպէս Մայրն եւ Նոճն եւ Ծոճն, եւ Թեղոշն
 » եւ Սարդն եւ Սարսն, Սօսն եւ Ակրին, Գին եւ Կաղամախն եւ Տօսախն²։
 » Սոյնպէս եւ գունակ գունակ եւ երփն երփն ծաղկանցն. որպէս, Մանրա-

1. ի տպագրին՝ *Դափնիլն*
 2. ի տպգ. *Սարոյն ... Ակրին. Տուսախն.*

» գորն եւ Վարդն եւ Շուշանն եւ Ասպուզանն եւ Յասմիկն, Անիարն եւ
 » Սմնակն, Ներգոյնն, եւ Շարդիտակն եւ Նագրուկն (կամ Մեղրուկն)¹, Հօ-
 » րօսն, եւ Մօրօսն, եւ Մանուշակն, եւ այլն ամենայն համասարամ ծաղ-
 » կանցն եւ ծառոցն բոյսք բողբոջոցն՝ գարնայնոյն երեւեսցին յետ ձմեռայնոյ։..
 » Թէպէտ ստէպ ստէպ իսկ յաշունն հասեալ բոյսահունքն չորացեալք տե-
 » ղերնկէց լինին, եւ պարարեալ ձմեռասունք², սառնապատք ծիւնածաղք,
 » եղեմնահար խստութեամբ հարեալք գծծին արմատք ծաղկանցն. եւ կամ
 » բազմակոյտ իմն իմն դարաստանացն, անտառք բարձրաբերձ մայրիցն ա-
 » ճեցելոց, ստուարապատ յուրացելովքն, հանդերձ շառւեղօքն. սակայն ի
 » ժամանակս գարնայնոյն հասեալք՝ ամպաշաղք, որոտընդոստք, անձրեաւ-
 » բուղիս քցօղահարք, ամպասունք (կամ ամարասունք), ի վեր բերեն զիւրա-
 » քանչիւր օրինակ բուսոցն եւ տերեւոցն։.. Նա եւ մանրախոտքն դայարիքն
 » իմն իմն եւ այլեւայլք որիչ են նմանութեամբ ի միմեանց. որպէս, Լօռն
 » եւ Վարձակն (Վարսակն) եւ Կնիւն, եւ որ ինչ նման է սոցա. Նա եւ սեր-
 » մանիքն օգտակարք մարդկան. որպէս, Յորեանն եւ Հահարն եւ Գարին
 » եւ Կորեակն, Գաւարսն եւ Ոսպնն, Ոլեառն, եւ Որիզն եւ Դիւռն եւ
 » Սիսեառնն. եւ այլ եւս բազում սերմանիք, զորս ի թիւ ոչ ոք կարէ ար-
 » կանել. որք իւրաքանչիւր յիւրում ժամու ի գարունն՝ ցուցանեն գյարու-
 » թիւն իւրեանց, բուսովքն, համովքն, հոտովքն, բողբոջովքն, ծաղկովքն եւ
 » բնտովքն. տերեւազգեստ զիւրեանց մանկութիւնն՝ ըստ իւրաքանչիւր տե-
 » սակի ազուցեալ։... Ծաղիկքն եւ ծառատունկքն զարդարին. իսկ նա եւ
 » փուշքն բուսանին. որպէս, Դժնիկն եւ Տատասկն, Եղիճն եւ Պատեղիճն,
 » եւ Խայծահարն եւ Ժանտափուշն, Տափափուշն, Սրափուշն, Որումնն,
 » Կայծուկն, Գաղճն, վնասակար, եւ որ ինչ նման է սոցա. եւ սոքա ամենե-
 » քեան յիւրաքանչիւր բնութեանն բուսանին։ Իսկ օգտակար ծաղիկքն եւ
 » կամ շառւեղք ծառոցն դարաստանաց՝ յիւրեանց բնութիւն անդ եկեալ
 » զարդարին ի հասանել գարնայնոյ ժամանակին»։...

Հ. Ղ. Մ. Ա.

1. Տպգ. Ներգոյնն. Շամպդիտակն և Մեղրուկն.
 2. Տպգ. « Թէպէտ ստէպ յաշունն սնին բոյսք աճունք, չորացեալ տերեւընկէց
 լինին, և պարարեալք ձմեռասունք լինին»:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ



ԵՐՆԱԳՐԻՍ տեսողն թերեւս կարծէ՝ սխալմամբ Ռ և Ն տառից փոխանակ Բուսաբանութեան գրուած Բուսաբանութիւն . սակայն պրոդին ուզածն այս էր , ընթերցողաց իմացընելու համար՝ որ իր դիտումն չէ Հայոց երկրի բուսաբերութիւնն , այսինքն երկրին ինչ տեսակ տեսակ բոյսեր ունենալն , ըստ զանազան կողմանց , (լեռնային , դաշտային , ջրային) , կամ ըստ տեսանելի ցեղից՝ (ընդեղէն , բան-

ջարեղէն , ծաղկեղէն , փայտեղէն , և այլն) , որ և ցանկալի էր թէ հմուտ բուսագիտէ մի քննած և գրուած ըլլար . թէ և դժուար գործ է մէկ մարդու՝ երկրին ամէն կողմերը աչքով և ձեռք քննելն . բայց դարձեալ բաւական պիտանի գործ կ'ըլլար՝ միայն հաւաքելն իսկ՝ ինչ որ 300 տարիէ վեր բնագէտք և ճանապարհորդք՝ մասնաւոր կամ հարեւանցի տեսութեամբ և քննութեամբ նշանակեր են . ինչպէս ԺՉ դարուն՝ Մատտիոլի (Mattioli) , Ռաուլֆ (Rauolf) գերմանացի , Գարդրայգ (Cartwright) անգղիացի , Ժէ-Ը դարուց մէջ Դաունըֆոր (Tournefort) , Դաւեռնիէ , Շարաէն փոանկը , Ճեմելլի իտալացի , և այլն . իսկ մեր ԺԹ դարուս մէջ շատ և ամեն ազգէ Եւրոպացիք , բայց աւելի մանր քննողք և գրողք Կարլոս Գոխ (Koch) , Վակներ Մորից (Wagner Moritz) , Բառոզ (Parrot) , Պուհսէ (Buhse) գերմանացիք , Տիւպուա (Dubois de Montperraux) , Պուասսիէ (C. Boissier) Հելուետիացիք , մասամբ և Չիհաչէֆ և Խանիչեւի Ռուսք , (I. Tchihatcheff, Chanykoff Nik) . և ի ներկայիս Ռատտէ (Radde) գերմանացի բնակող ի Տիվիս , և այլ շատք : Թէ ասոնց

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ



ԵՐՆԱԳՐԻՍ տեսողն թերեւս կարծէ՝ զխալմամբ Ռ և Ն ասուից փոխանակ Բուսաբանութեան գրուած Բուսաբանութիւն . սակայն գրողին ուզածն այս էր, ընթերցողաց իմացընելու համար՝ որ իր դիտումն չէ Հայոց երկրի բուսաբերութիւնն, այսինքն երկրին ինչ տեսակ տեսակ բոյսեր ունենալն, ըստ զանազան կողմանց, (լեռնային, դաշտային, ջրային), կամ ըստ տեսանելի ցեղից՝ (ընդեղէն, բանջարեղէն, ծաղկեղէն, փայտեղէն, և այլն), որ և ցանկալի էր թէ հմուտ բուսագիտէ մի քննած և գրուած ըլլար . թէ և դժուար գործ է մէկ մարդու՝ երկրին ամէն կողմերը աչքով և ձեռք քննելն . բայց դարձեալ բաւական պիտանի գործ կ'ըլլար՝ միայն հաւաքելն իսկ՝ ինչ որ 300 տարիէ վեր բնագէտք և ճանապարհորդք՝ մասնաւոր կամ հարեւանցի տեսութեամբ և քննութեամբ նշանակեր են . ինչպէս ԺՉ դարուն՝ Մատտիոլի (Mattioli), Ռաուլֆ (Rauolf) գերմանացի, Գարգլրայգ (Cartwright) անգղիացի, ԺԷ-Ը դարուց մէջ Դաւունըֆոր (Tournefort), Դաւեռնիէ, Շարտէն փուանկը, Ճեմելլի իտալացի, և այլն . իսկ մեր ԺԹ դարուս մէջ շատ և ամեն ազգէ Եւրոպացիք, բայց աւելի մանր քննողք և գրողք Կարլուս Գոխ (Koch), Վակներ Մորից (Wagner Moritz), Բառոդ (Parrot), Պուհսէ (C. Boissier) գերմանացիք, Տիւպուա (Dubois de Montperraux), Պուասսիէ (C. Boissier) Հելուետիացիք, մասամբ և Չիհաչէֆ և Խանիքով Ռուսք, (I. Tchihatcheff, Chanykoff Nik). և ի ներկայիս Ռատտէ (Radde) գերմանացի բնակող ի Տիվիս, և այլ շատք . թէ ասոնց

և թէ քանի մի յոյն և լատին երեւելի հին հեղինակաց (ինչպէս թէւ֊
փրաստ, Դիոսկորիտէս, Գալիենոս, Սարաբոն, Պլուտարքոս, Պլինիոս, և այլն),
յիշածքն ի Հայաստան, բաւեն ցուցնել, որ եթէ մեր երկիրն շունի ջերմ
կլիմայից բարգաւաճ բոյսերը, բայց բաւական հարուստ և նշանաւոր ալ է
աննդեան, դարմանոյ և բժշկական բոյսերով և ծաղկամբք և հոտաւէտ տունկե֊
րով, եւս առաւել պտղաբերօք. թողլով վայրենի ծառերը կամ զանաատս,
որք անինամուլթեամբ շատ պակաս ըն հիմայ, և երկրին մեծ մաս մի լերկ
ու մերկ թողած, մինչեւ ի մատենագրաց նախնեաց մերոց ակփայտ կոչուիլ
այն կողմերու՝ որոց բարգաւաճութեան վրայ կը հիմնային Հոռովայեցիք,
Քրիստոսի թուականէն զար մի առաջ և յետոյ, իսկ չորս հինգ դար առաջ՝
յոյն հեղինակք ատուութեամբ իսկ կու վկայեն թանձրախիտ անասուաց:

Անհաւանելի և զրեթէ անհաւատալի է որ մեր հետաքնին և բանաւոր
նախնեաց մէջ գտուած չրլլան բուսազէտք և բուսաբանք ալ, և անտարակոյս
պէտք է համարիլ՝ իրենց բժշկութեան հետեւոյ և զրոյ ըլլալէն. իսկ բժշկու֊
թիւն՝ մանաւանդ հին ատեն՝ առանց բուսոց ծանօթութեան չէր ըլլար, զեղբր
կազմելու և պատուիրելու հարկաւ. և նոյն իսկ Յունաց և Արաբաց բժշկա֊
բաններն՝ զոր մերսնք կարգային և թարգմանէին, անհրաժեշտ պահանջէին
բուսոց և զերոց անուններն՝ ազգային լեզուաւ աւանդել, որչափ կարելի էր.
այս բանիս վկայ են մեր հին բառագրոց մէջ առանձինն գրուած բժշկական
Յաւք Գաղիէնոսի, որոյ զրոց թարգմանութիւնն, ափսոս, որ մինչեւ հիմայ
գտուած չէ, այլ միայն թէ՛ անոր և թէ ուրիշ երեւելի վարպետներու անուն֊
ներն և երբեմն քանի մի խօսքերն յիշուած և ի վկայութիւն բերուած են
մեր միջին դարերու բժիշկներէն, որոց՝ նաեւ արաբերէնէ և պարսկերէնէ
թարգմանութիւնք գտուին՝ մասամբ, սկսեալ յ'ԺԲ դարէ:

Այս ատեն ամենէն նշանաւոր և ծանօթ մեզի գրուածովն է Մխիթար
Հերացի (Պարսկահայոց հիմնական խոյ քաղքին սահմանէն), բարեկամն Ս֊
Ներս. Շնորհաւոյ: Իր անուամբ և ժամանակաւ մերձաւոր՝ բայց արուեստով
հեռաւոր՝ Մխիթար Գոշ բազմահմուտ վարդապետն ալ՝ արժանի է յիշատակի
իր վայելչաբան Առակաց մէջ յիշած բուսոց անուանց համար: Նոյն զարուն
և հետեւեալ երկուքին մէջ (ԺԳ—Դ) մեր բանասէրք այլեայլ նախնեաց
թարգմանած զրոց մեկնութիւններ կամ Լուծմուռք գրած են, անոնց մէջ
(ինչպէս Փիլոնի, Ս. Բարսղի, Նեմեսիսի, և այլն) գտուած բուսոց և այլ
բնական իրաց ալ հայերէն անունները կամ ծանօթութիւն տալով: Իսկ այս
յիշեալներէս զար մ'ալ առաջ (ԺԱ) երկու Ասորի կամ Արաբ անուանի
բժիշկք՝ բարեկամք և զարմանողք Գրիգորի Մագիստրոսի, Մուֆարդիւնցիին
Էպու Սայիտ (յամի 1037) և Յախսէ կամ Յեսուշ, հաւանօրէն թարգ֊
մանուած են՝ զէթ մասամբ՝ ի Հայոց. ասոնք և ասոնց ժամանակակից Էպու
Սիւնէ, Սիւնայի որդի ըստ Հայոց, Աշիլեկա ըստ Եւրոպէացոց, շատ անգամ
յիշուած են ի Մխ. Հերացոյ, ուրիշ քսանէն ակելի յոյն, ասորի և արաբ
բժշկաց հետ, ինչպէս նաև մեր յետագայ բժիշկներէն: Ասոնց պարսկալուի

կամ ամենէն նշանաւոր և արդիւնաւորն է Ամիրտուրաբ Ամասիացին, ժԵ դարու երկրորդ կիտուն, որ այլևայլ բժշկական գործեր գրելէ և թարգմանելէ զատ, այբուբենի կարգաւ ընդարձակ բժշկարան մ'ալ յօրինած է, հետեւելով բառագրոց իպն էլ-Պէյթար Սպանիացի-արաբացոյ (1), բացատրելով դեղոց և բուսոց զօրութիւնը և անուանքը, որչափ որ գտեր է, հայերէն, աւելի շատն ալ հասարակաց ծանօթ յոյն և մանաւանդ արաբ կամ պարսիկ և թուրք անուններով. այսպէս բրած են և իրմէ վերջը եկողք, Ասար և Պառնիաթ Սեբաստացիք ժԷ դարու մէջ: Իսկ ասոնց՝ մանաւանդ Ամիրտուրաբայ յանուանէ յիշած տառնէն աւելի Հայ բժշկաց գրուածքն՝ անյայտ են, բաց ի Միխիթ. Հերացոյ. հազիւ հատուածք ինչ իրենց բանից կամ փորձերն՝ յիշուին յԱմիրտուրաբայ և յայլոց: Ասոնց մէջ հնագոյնն է Յովհաննէս բժիշկ թ դարու կիսէն վերջը, որուն բժշկական գրածէն և ոչ բան կամ վկայութիւն մի կայ, այլ ամենեւին տարբեր գործ մի, Ս. Դիոնիսիոսի վարուց թարգմանութիւնն: Իրմէ նոր՝ բայց ժամանակն անյայտ՝ է Յակոբ բժշկապետն, ամենէն ալ փափազելի. վասն զի միայն մէկ կարճ կամ քանի մի սող մնացեալ գրուածն ալ կը յայտնէ, որ արդարեւ զուտ կամ ընտիր հայերէն լեզու և բառեր՝ կարող են եղեր բացատրել՝ ինչ որ բժշկութիւն կը վարդապետէ: Նոյնպէս անյայտ ժամանակաւ, թերեւ ժ կամ ժԱ դարու մէջ գրած է և Այդղարիպ յատկապէս Հայկազն կոչուած բժիշկն: Ոսկեղէն դարուն (Ե) թարգմանուած բժշկարանք հաւանական են, այլ թէ և ինքնա-

(1) Բժշկական բուսոց (Simples) և դեղոց վրայ արաբացի գրողաց (որոց գործն մնացած ըլլայ) ամենէն նշանաւորն է իպն էլ-Պէյթար, այսպէս սովորաբար կոչուած, անանաբուսի մի (Vétérinaire) որդի ըլլալուն համար, բուսաբանութեան համար ալ էլ-Նէպաթի կամ էլ-Աշապ կոչուի. ժԲ դարուն վերջերը ծնած է ի Մալակա Սպանիոյ (որոյ համար կոչի եւս էլ-Մալաքի), ի կէս ժԳ դարու (1248) մեռած է ի Դամասկոս: Բաց իր հայրենեաց կողմերէն՝ Ափրիկոյ և Ասիոյ զանազան երկիրներ գնացեր քններ քաղեր է բոյսեր, որոց զանազան հոմանիչ անուամբ 2000էն աւելի յիշէ: Այս աշխատութեան հաւասար՝ գուցէ և աւելի արդիւնաւոր է, յիշատակութեամբն յոյն, հռովմայեցի, արաբ, ասորի, քաղդէացի՝ իբր 150 հեղինակաց, յորոց վկայութիւն կու բերէ 2000 անգամէն աւելի, որք այնչափ աւելի պատուական են՝ որչափ որ այն հեղինակաց ոմանց գրուածքն հիմայ անծանօթ են: Իր գիրքն անուանած է պարզաբար՝ Հաւաքումն բժշկական բուսոց (Ճակի էլ-Մոզֆրիտաթ). մեր բժշկապետ Ամիրտուրաբն ալ այսպէս Մոզֆրաթաթ կ'անուանէ իր մէկ գրուածը, որ է Դեղոց առանձին զօրութեանց բացատրութիւնն. կու յիշէ շատ հեղ և իր նախօրինակին գործը: Ասկէ զատ իպն էլ-Պէյթար գրած է նման համառօտ գիրք մ'ալ Մոնէի անուանելով, այսինքն՝ Բաւական. վասն զի կարծօրէն կը բացատրէ միայն բուսոց դեղական զօրութիւնը. որ կրնայ աւելի մեր Ամասիացոյն Մոզֆրատաթին նմանիլ: Այլևայլ լեզուով թարգմանութիւնք եղած են բոլորական կամ մասնական Պէյթարի բառագրոց, մեր գործածածն է Լըկլէր (S. Leclerc) փռանկի թարգմանութիւնն, տպագրեալ երեք հատոր ի Պարիզ, յամի 1876-7:

գիր Հայ բժիշկը եղած են, չեմք կրրնար հաստատել, բայց չեմք տարակուսիր որ ոչ միայն այն ասեան եղած են Հայ բժիշկը, այլ և անբի առաջ և շատ հին ատեն, երբ հայերէն գիր չկար, կամ եղածն ալ անյայտացեր է:

Բայց մեր խնդիրն ոչ բժշկաց վրայ է և ոչ բժշկական լեզուի կամ գիտութեան, այլ միայն յիշեցնել, որ այդ գիտութեան հետևող նախնիք մեր՝ քննեք ստուգեք և յետնոց աւանդեր են՝ իրենց բնիկ լեզուի բուսական բառերը, բաղադատելով օտարաց հետ. յայտ է որ շատ անուանք ալ պարզ լեզուագիտութեամբ կամ վաճառականութեամբ և այլ որպիսի և է յարաբերութեամբ ընդ օտարաց՝ ճանչցուած են մերայոց ինչպէս և օտարազգեաց՝ ըստ իւրաքանչիւր լեզուաց: Յայտ է եւս, որ ինչպէս ամեն բոյս ամեն երկրի վրայ չի գտուիր, այսպէս ալ իր անունն՝ հարկ է որ օտար և հետու երկրի բուսոց համար, կամ թարգմանելու են օտար բառերը, եթէ կրրնան թարգմանուիլ, (ինչպէս օրինակի համար, *Եչնաչեզոս*, *Buglossum* լատ. *Լիսանի Սկվր* արաբ, *ամէնն* ալ նոյն բան կը նշանակեն, կը ջնայ գիտնալ՝ թէ որն է *առաջինն*՝ ուսկից ուրիշներն թարգմանուեր են), կամ օտար երկրի լեզուի բառերն առնուլ և գործածել. ինչպէս կ'ընեն շատ անգամ արեւմտեան ազգք, ինչպէս նաև արևելեայք, և մերայինք ալ ըրած են և կ'ընեմք: Դիտելու է միայն, որ երբեմն այսպիսի օտար անուանք, մանաւանդ արաբ և պարսիկ, այնպէս նման և յարմարած են մեր լեզուին, որ բնիկ հայերէն կարծուին, և հարկ է գիտնոց ստուգել և որոշել: Դարձեալ գիտնալու է որ այսպիսի սովորական դարձած օտար բառերու ի մեր լեզուին՝ ամանց բուն հայերէն անուանքն ալ կան. ուրեմն եթէ այսպիսեաց հանդիպիմք մեր թուսաբառութեան մէջ, հարկ է որ բուն ազգային անունը դնեմք յայտարարական կարգի և անոր դիմաց օտարամուտն, և հոմանիշ ուրիշ անունները վասն զի կան մեր լեզուի մէջ ալ բոյսք որ զանազան անուամբ կոչուին, ո՛ր և է պատճառաւ, եթէ այլևայլ գաւառաց մէջ այլևայլ կերպով կոչուելով, եթէ բուսոյն զանազան տեսակներն ըլլալով, որ իրարու նմանելով՝ նոյն և մի անուամբ կոչուեր են: Եթէ մէկ լեզուի և մէկ երկրին մէջ՝ նոյն կամ նման բուսոց զանազան անուանք՝ տարակոյս կամ շփոթութիւն կու պատճառեն, ո՛րչափ անբի դժուար կրրնայ ըլլալ այլևայլ լեզուաց բուսութեան նոյն կամ տարբեր ըլլալը մեր լեզուին մէջ գործածուածէն՝ որոշել. հասարակ կամ գործածական բուսոց անուանց վրայ չէ տարակոյսն, այլ՝ անտառային ծառոց և ծաղկանց. և կան ալ այսպիսիք՝ թէ օտարաց և թէ մեր մէջ, որոց ոմանք ի թարգմանչաց (նաեւ Ս. Գրոց) այս ինչ անուն տուեր կամ սեփականեր են, ոմանք ուրիշ անուն: Նոյն իսկ Յունաց հին և ընտիր հեղինակք, ինչպէս հիմայ ալ Եւրոպացի գիտնականք, երբեմն չեն միաբանիր բուսոց անուանց, և այլևայլ կարծիք ունին. զարմանք չէ՝ եթէ և մեր մէջ ալ, և որ և է ռամկաց մէջ այսպէս ըլլայ, և պիտի ըլլայ. և թերեւս ամենուն միաբան ճանչնալու և նոյն անունը տալու համար՝ զարեք պիտի անցնին:

Իսկ մենք՝ որովհետեւ բառագրոց սճով պիտի գրեմք բուսոց անուանքը : հարկ է որ ամէն հոմանիչ անուններն ալ զատ զատ իրենց տեղը նշանակենք , բայց ամենէն յատուկ համարուածն աւելի բացատրեմք , և անոր խաւրեմք միւսները . և նաեւ երբեմն այն տեղ նշանակեմք այն բուսոյն քանի մի օտար լեզուաց անունն ալ (Յ. յոյն , Ա. արաբ , Թ. Թուրք , Պ. պարսիկ , Փ. փռանկ) . Թ. ռուս , և մանուանդ Լ. լատին , որ բուսաբանութեան յատուկ լեզու համարուի յԵւրոպացոց . բայց այս՝ միայն ծանօթագոյն և ի զիրս յիշեալ բուսոց կամ մասնաւոր գիտելեաց ինչ համար : Կու յայտնեմք մեր տարակոյսներն ալ , և խնդրեմք ի գիտողաց՝ զմեզ տեղեկացընել . և թէ ուրիշ ըոյսեր ալ գիտեն՝ որոց անունները չեն գտնել մեր գործոյն մէջ , շնորհել մեզի , եթէ հաճին , հանդերձ բացատրութեամբ կամ նկարագրութեամբ . մենք ալ ի փոխարէն (եթէ մեզի բաւական անուններ և ծանօթութիւններ տան) , պարտական մնամք մեր գործոյն օրինակ մի տալ անոնց՝ երբ ամբողջ տպագրուի . միայն յիշեցընեմք՝ որ ստոյգ և ծանօթ կամ գործածուած և լուսած անուններ ըլլան , և ոչ իրենց օրբուս կամ իրենցմէ հնարուած , ինչպէս կարծեմք մեզ խաւրուած հարիւրաւոր անուններ , որոց նոյն իսկ շէնքն կամ փափկութիւնն՝ կը յայտնէ որ նոր խելքի մէջ ցանուած և գրի տակ բուսած են . կը թողունք զանոնք իրենց տեղը : Ընդ հակառակն հաճութեամբ պէտք է յիշեմք քանի մի նոր տեղագրաց կամ բնագրաց քիչ շատ բուսական բառից հաւաքմունքն . որպէս , տարածամ + Սրտանէձտեանն , Նարանեանն , Արանեանն (Երեւանեան նահանգի բուսաբերութիւնն) , և այլն : Ասոնց նման աւելի պակաս հաւաքմունք ալ ունիմք մեր միաբան Հարց սմանց ինչպէս Հ. Պօղոս Մէհէրեան Մշեցի (+ 1814) , Հ. Եփրեմ Սէթեան (+ 1838) , որ և 30ի չափ իսկական բուսոց մասեր կամ ծաղիկներ թղթի վրայ կպուցած և անուննին գրած խաւրած է . Հ. Ներսէս Սարգիսեան (+ 1866) , Հ. Սիմէոն Ճուլարտեան (+ 1884) : Ասոնց հետ յիշեմք շնորհակալութեամբ՝ հաւաքում մ'ալ 50էն աւելի թէ բուսոց և թէ անուանց վայելուչ զրքածեւ կողից մէջ ամփոփուած , զոր Պ. Հմայեակ Խուչպաշեան ուսուցիչ , Պ. Պետրոս Մարիմեան և այլ քանի մի բանասէր երիտասարդք Տրապիզոնեցիք՝ քաղքին քովի գեղերէն և լեռներէն ժողովելով , յամի 1890 , յոբելինի առթիւ ընծայեցին առ մեր Հ. Ղեւոնդ վ. Ալիշան , և որ հաճոյ եղաւ իրեն քան զայլ յիշատակս : Նոյն քաղքէն Պր. Տիգրան Դազարտեան ալ խաւրած է ցանկ մի գաւառական անուանց բուսոց ընդ այլոց : Յիշենք նաեւ Եհերիմանեան Ստեփանոսի բժշկական և բուսաբանական գրութեք և բառերը , Թոքեան Ստեփանոս վարդապետի Հայ և լատին մեծ բառարանն , յորում շատ բուսական բառեր ալ կան , թէ և ստուգելու կարօտ : Աւելի հաճութեամբ՝ և օգտիւ յիշատակաց արժանի է Դասիթ Սալաճորցի Սարկաւազն (Կարնոյ գեղերէն) , ԺՁ կամ ԺԷ դարու գրիչ , որ հարիւրի չափ ծաղկունք՝ գրեթէ բոլորն հայերէն անուամբք՝ ոտանաւոր բանիւ համառօտ նկարագրեր է :

Ըրածներէս յայտնի կ'ըլլայ որ մեր հրատարակելի Հայկական Բուսաբա-

աութիւնն ժողովուած է այսպիսի հաւաքմունքներէ, ի Բժշկարանաց, յայլ և այլ բնագիր և հին թարգմանեալ Գրոց Սրբոց և արտաքնոց, և մեր ազգային հեղինակաց. յատկապէս եւս ի վաստակոց գրոց, որ տպագրեալ է ի վանս մեր յամի 1877, և որոյ յառաջաբանի մէջ և ի վերջը դասուած բառից մէջ՝ կան բաւական տեղեկութիւնք այն երկրագործական կամ տրնտեսական գրոց հեղինակաց և թարգմանութեան վրայ, զոր համարեր եմք ՃԳ. դարուն եղած յարաբ լեզուէ ի Կիլիկիա, Թէ և ըստ կարգաբանութեանն համանման է Կոստանդին Պերփիլոստեն կայսեր հաւաքել տուած Երկրագործականին (Geoponicon): — Աւելցընեմք հօս շատ հետաքննական և պանծալի բան մ'ալ. այն մեր հրատարակեալ գրոց յառաջաբանին մէջ յիշած էինք իպն—ալ Ավամ ուպանիացի արաբացայն Մշակական գիրքը (Քիթապ—ալ—Ֆէլլահ), ՃԲ դարու մէջ գրող, որ իրմէ առաջ Ուահշիահ կամ վահշիահի հաւաքողին գործը հարիւրաւոր անգամ յիշէ և վկայութիւն բերէ. այս գործն շատ հաշկաւոր գրուածք է, և կոչուի Երկրագործութեան Երաբարացոց (Agriculture Nabathéene), յանուն Եաբէովթի որդւոյ իսմայէլի որդւոյն Աբրահամ նահապետի, յորմէ Արաբացիք սերուած են, և իրենց ընդարձակ երկրին հիւսիսեղովը բնակող ժողովրդէն համարուի՝ ամենէն առաջ երկրագործութեան վրայօք գրուած, քաղղէարէն կամ արաբերէն, հին Բաբելացոց ինքնակալութեան ատեն. գիտնականք համարին Թէ ոչ մէկ՝ այլ քանի մի հեղինակաց գործ ի մի հաւաքուած եղած է այն Երաբութական Երկրագործութեան գիրքն, ըստ ոմանց Եաբուքողոնոսորի ժամանակ. հաւաքողն ալ Քոռցավի անուամբ մէկն, իսկ վահշիահ ՃԱ. դարու սկիզբները անկէ քաւեր և թարգմաներ է արաբերէն, ինն մաս բաժնած. ամբողջ գործն հազուագիւտ է կամ անգիւտ, և ղեռ չէ թարգմանուած յԵւրոպացոց, որք շատ բան գրած են անոր նկատմամբ. և ծանուցանեն որ վահշիահ այն հին և հնագոյն հեղինակաց մէջ երեք գլխաւոր յիշէ. առաջինն Սագրիտ ոմի (Sagrit) կամ Տագրիտ (Daghrith), վերջինն Տամիրի կամ Յամիրի (Tamiri, Jamitri) Գանանացի. իսկ միջինն ժամանակաւ՝ Հայ մի, Յամբուշատ անուամբ (Jambuschad), յոմանց գրուած նաեւ Jambusckad, որուն գրուածներէն ալ թարգմանաբար կ'ընծայէ վահշիահ, անկէց ալ յիշէ իպն ալ—Ավամ, մասնաւորապէս Այգեգործութեան մասին: Անունն հաւանօրէն այլայլած է, բայց զարձեալ հայկական ձայն կու տայ ակընջի, իրբու Համբուշատ կամ Համբուշատ. (որ կու յիշեցընէ Ասկլեպիոսի դասեր անունը և գեղը, Panacée, Համբուշոյ, ամենաբոյժ ղեղ): Բայց անունէն աւելի գործն կամ գրածն է մեծ յիշատակաց արժանի. միանգամայն և հաւաստիք (Թէ և ասոր կարօտ չէինք) Հայոց մէջ շատ հնուց և միշտ՝ երկրագործութեան բարգաւաճ ըլլալուն. որոյ՝ այսօրուան օրս ալ կենդանի վկայ են Թէ մշակութեան Թէ հովուութեան արուեստից վերաբերեալ բազմաթիւ մանրամասն գործածուած բառք և բացատրութիւնքն. յորոց գուշակուի, որ եթէ ոչ անոնց չափ շատ՝ բայց ոչ ալ քիչ բուսական բառք պիտի լսուէին իրենց լեզուաւ: — Ասոնց մնացորդքն կամ

մնացորդաց մնացորդ համարուին մեր քաղածքն ալ. որոցմէ զատ անշուշտ պիտի ըլլան ղեռ շատ բառք կամ անուանք բուսոց՝ որ մեզի անծանօթ են, կամ մեր յիշողութենէն և աչքէն վրիպեր, ինչպէս նաեւ մեր բուսաբանական գիտութեանն, ուր որ հարկ ըլլայ, քիչ անգամ, բուսոց կամ իրենց տեղւոյն բնութեան և կազմութեան վրայօք տեղեկութիւն տալ. բայց յուսամք որ գիտցողք ներողամիտ ըլլան մեզի, և այլք լուսագոյն և առաւելագոյն կերպով յայտնեն և կատարելագործեն մեր նախընծայն: Այսպէս ալ շատ անգամ Ամիրսուլվաթայ գրածները ի մէջ կը բերեմք, ոչ իբրեւ կատարեալ բուսաբանի տեղեկութիւն, այլ իբրեւ ազգային ասանդութիւն և հաճոյ ազգայնոց, թէ անոր սուած ծանօթութեամբք, թէ պարզ և ընտանի ռոնֆէ և լեզուով, և թէ միանգամայն իբրեւ գիտուն բանասիրի և արժանաւոր հեղինակի, և նշանաւոր ազգայնոյ մի գործ, որ Եւրոպացի գիտնականաց անգամ կրնայ գովելի և պիտանի ըլլալ:

Այսու նկատմամբ կ'արժէ որ լսենք ինչ որ ինքն կ'ըսէ ի յառաջբանի բժշկական Բառագրոցն. « Հիմի պատեհ է որ ասեմ քանի մի բան վասն »
» Դեղերուն, անարժան և անպիտան ծառայ Ամիրսուլվաթ բժիշկս Ամա-
» սիացի: Թիմացէք և հասկացէք, եղբայրք, որ այս գրքիս ձեռն այսպէս
» է. որ զմէկ ղեզի մի անուն՝ շատ բառերով է գրած ի վերայ այբուբե-
» նի. (ինչպէս) Աւրիսորն Յ. (արաբերէն) բառով ի վերայ Ալբին է. և
» Հայ (բառով) վաղմեռուկ ասեն, յիշած է ի վերայ Վելին. հանց որ
» Ալալուսան (Alyssum) Յ. (արաբ.) և Հայ) վառվռուկ ասեն, յիշած է
» ի վերայ Վելին: Եւ լինի որ ասեն զանունն ի մէկ գրի վերայ, և
» մէկ գրի վրայ այլ զպատմութիւն պատմեն և զօգտութիւնն ասեն՝ թէ ի՞նչ
» է. որպէս, յիշած է Արջասպն ի վերայ Ալբին, և ի վերայ Չային՝ Չան,
» և զիր պատմութիւնն: Եւ կայ ղեզ որ հինգ վեց անուն ունի, և ամէն
» անուանքն յիշած է ի վերայ գրին, թէ զինչ զիր որ ի յառաջքն գայ. և ի
» մէկ անուանն վերայ յիշած է զբնութիւն և զօգտութիւնն, և զկարողու-
» թիւնն, թէ որպէս է: Եւ Չարիտան որ յիշած է ի վերայ Չային, և
» մէկ այլ անունն Փարսի Եւաշանն է որ կու յիշուի ի վերայ Փիւրին, և
» մէկ այլ անունն Քուզպարաբ—ըյ պերն (Քուզպերէթ էլ—պիր) է, ի վերայ
» Քէին, և մէկ այլ անունն Շէր ըյ—խնգիրն է, և մէկ այլ անունն Թ.
» (Թուրքարէն) Պաչորրի դարս ասեն: Եւ շատ անուանք ունին այս ղե-
» ղերո. բայց զպատմութիւնն ի մէկ անուան վերայ կ'աւարտեմք. և զայլ
» պագի (քանի մի) անուանքն զամէն մէկն յիր գրին վերայ կու յիշենք.
» որպէս, Պապուռնա որ յիշուի ի վերայ Պէին, և այլ ասեն իրիցոսկ՝
» յիշուի ի վերայ ինիին, և այլ ասեն Գեռնի խնձոր, որ յիշուի ի վերայ
» Գիմին. բայց զամէն անուանքն կու գտնուն Ալբէն իվեր, և կու գրենք,
» և ի մէկ անունն զպատմութիւնն կու յիշեմք: Եւ այս ձեւով կու ըն-
» թանայ այս գիրքս... Եւ թէ Աստուած յաջողէ՝ զրոցս ի վերջն յիշեմ
» մէկ աղէկ Բառագրքմն, որ զինչ որ դժար բառ կայ՝ հայ լեզուաւ պատմէ.
» որ թէ կարպացոյն դիւրութեամբ հասկանայ, և (թէ) ուսանողն պիւրաւ ուսանի,

» և խկի ծածուկ իրք շնայ, և յայանի » : — Թէ և կայ Ամիրտուլվաթի գործոց մէջ բաւարան մի հինգ լեզուաւ (հայ, արաբ, պարսիկ, թուրք, հոսով), զեզոց, բուսոց, և այլն, բայց համառօտ բան է, և ոչ կարծեմ այն խոստացեալ բազմիրքն : — Այս ըսածէն առաջ ալ կ'իմացընէր, թէ « Չայս » զիրքս շինեցաք և ստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով (ի թվին « Հայոց Շինե, այսինքն Շ, 500 + Ի, 20 + Ն, 400 + Է, 7 = 927, » որ է 1478 Քրիստոսի), և որ կարդայ հեշտութեամբ յիմանայ, և ան- » զէան չի յօգտիլ ի սմանէ. և անուանեցաք զայս գրոցս անունն Անգիտաց անկպտ. և պարտական եմ գիտնականացն և ծառայ ամենայն փիլիսոփայեցն :

« Եզիր հեաեւոյ իմաստութեան հետ .

Եթէ չուսանիս՝ բժիշկ ես անգէտ .

Լինիս զու գիտուն, արա բանիս պէտ .

Գրոցս անունն է Անգէտի անպէտ » :

Այս թուականէն տասն տարի առաջ (1468), Ամիրտուլվաթ գրեր և նոյն տարւոյն զեկտեմբերի 25ին աւարտեր է բուն բժշկական գիրքը, Ոստանն Բժշկոսրեսն անուանելով. դարձեալ ուրիշ նման զրուած մ'ալ, Օգոստ Բժշկոսրեսն կոչուած, « որ Տանիկն Քիթայէրի տիպ ասէ. և արարի զայս » զիրքս երկու բաժին. առաջին բաժինն է Ոստանն բժշկութեան և թոպիր » (եղանակ) առողջութեան, և Սաածունն (խնամ, դարման) ամենայն ան- » ձինն. և երկրորդ բաժինն յիշէ զկերակուրն և զիեղերն նորա ամէն մէ- » կէն և խաւնուածէն, և զրնութիւնն և զօգտութիւնն և զօրութիւնն, և » զչափն առնելուն և զփոխանն ամէն մէկի. համառօտ ժողովեցի, և գրեցի » զհին և զնոր բժշկապետացն զիօսքն, որ զամէն մէկին անունն յիր տեղն » պիտի յիշեմք. և արարաք զայս ի վերայ այբուբենից կարգաւ. յառաջն ի » վերն զջաւուն անունն է գրած, և ի ներքեւն զպատճառն, և այլ ի ներ- » քեւն՝ զջաւուն նշանքն, և այլ ներքեւն զստածունն է գրած », և այլն : — Քանի մի տարի վերջը (1481) մեր անխոնջ փիլիսոփայ բժշկապետն գրեր է Աքրապատիեր, որ է Դեղագուցութիւն, զեղերու շինելու և խաւնելու կերպը (Formulaire, Pharmacopée). և որովհետեւ « Աքրապատիին ա- » ոանց Մոսֆրատարի (les Simples) չի լինար, որ է՝ մէկ մէկ զեղերն, (այսինքն իւրաքանչիւր բուսոց և զեղոց յատկութիւնն կամ զօրութիւնն), նա » շինեցի զթարապատիին (Աքրապատիին) լման, և զՄուֆրատարին այլ ի լման. » և զանուանքն զրի ի կարգին հինգ լեզուով », և այլն : Այս գործս աւարտեր է Ամիրտուլվաթ ի Կ. Պօլիս. յիշեալ տարւոյ « ապրիլ ամսոյ ի վեցն, ի » ասնի Աւետման Սրբուհոյ Աստուածածնին » : — Նախընթաց տարին (1480) ի նոյն մայրաքաղաքն էր, երբ խնդիր եղաւ Մատենհար կոստին (Հայկաւ, կամ ասոր մէկ տեսակն), և թագաւորական հրամանաւ « զրկեցաք, կ'ըսէ, երեք մարդ » ի Լիմնոս կղզի, և հարցընելով ծեր մարգիկ՝ գտեր, փորեր ու բերեր են առ թագաւորն, որ « այս կաւէս շինել երէտ շատ փորչեր, » որ զլուրն խմէին, և զայլսն ետ ի խազինան » : — Նոյն տարին ուրիշ

յիշատակ մ'ալ թողեր է Ամիրտովաթ, որով լաւ եւս կ'իմացընէ իր բանասէր ըլլալն, որոյ վկայէ և ընգօրինակողն գրոց Միխայէլ Ասորայ պատրիարքի Պատմութեանց. « Զոր տեսեալ զսա հետեւողն իմաստութեանց և սի- » ռողն սուրբ գրոց՝ մեծահաւատ թարգմանող Ռժիշկ Ամիրտովաթն, և ետ » զսա գրել ի վայելումն անձին իւրոյ և գեղուղէշ նորահաս զաւակին իւրոյ » Ամիրտիշիսն » :

Այսչափօ մեր գործոյս համար բաւական ըլլայ ի ծանօթութիւն. Ամիրտովաթայ, որոյ վրայօք արդէն գրուած է ուրիշներէ ալ, այլ կ'արժէ աւելի քննութեամբ ճանչնալ և ճանչցընել զնա, իբրեւ մեր գրագիտաց, եւս առաւել իրեն ժամանակին, հանճարեղ նշանաւորներէն մէկն. որոյ վախճանն ալ նշանակուի իր գրոց օրինակաց մէջ. « Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրտովաթն » Ռժիշկն թարգմանող գրոցս ի Թագաւորական բժշկարանէ, ի Թուին Զիտի, » (1497) գեկտ. ամսոյն ի ութ, աւուրն հինգշաբաթի » : — Որոյ հանգիստ և փառք մտղթելով՝ ակսինք մեր գործը, ի նոյն Ամիրտովաթայ Անգիտաց անպէտ բառագրոց առաջին բառով (Ապրտաւս), զոր պէտք էր դուրս թողուլ անօր նման շատ օտար բառերով, որ կամ հայերէն նոյնանիշն ունին, կամ ոչ անուամբ և ոչ էութեամբ ծանօթ են Հայոց : Բայց կ'ընդունինք այն օտար անունները՝ որոց ծագումն յայտնի կամ անյայտ են մեզ, և կարծեմք թէ լսուած և թերեւս գործածուած ալ ըլլան ի Հայս, և նշանակեմք աստղով մի (*), զուտ հայկական կամ հայացեալ անուններէն որոշելու համար :





1. * Ալալուսան կամ Ալալուսան.

Ամիրտովլաթայ բուսագրոց առաջին բառն է, նոյնպէս և իսկն Պէյթարի՝ ուսկից առած է. իսկ սա ի յունականէն Ալի'սաս, կամ ի լատինէ՝ Alyssum, որ է ուսուսնական անունն, փռանկերէն ալ Alysson. Ինչ տեսակ բոյս ըլլալը պիտի իմացընէ (երբ այրբենից կարգն հասնի) հայերէն շնորհաւոր անունն Վաստօտի, որոյ համանիշ է անշնորհք անուն մ'ալ, իշաքեղ:

2. * Աբարբին.

Այս ալ օտար և խանգար անուն է, աւելի լաւ գրուած է Ափարբին, որոյ կարգին նշանակենք ինչ ըլլալը:

3. Աբեղախոտ.

Վայելուչ կամ խորհրդաւոր հայ անուն մի, որոյ թարգմանութիւն է թուրքարէն անունն ալ, Գարապաշ կամ Քեշիշ օրի. բայց գաւառային կամ ուսուսնական բառ է. բուն հայերէն անունը բժշկարանք կ'աւանդեն Եզնախոտն կամ Եզնախոտ, զոր գտնես ի կարգին: Աւելցընենք այս տեղ՝ որ նոյն բժշկարանք օտար և խանգար բառով մ'ալ կը յիշեն այս բոյսս, Աստոխօտոս կամ Աստախոտոս:

4. Ագարակի խոտ.

Ի գիրս յիշուած չէ, բայց ի նոր գրողէ, որ համարի գրոց Քաշիս կոչածը. (տես ի Բ.) սա արաբերէն կոչի Ակիր, Ակար, և լատինն Acorus, Փ. Acore. արդեօք այս անուններն են Ագարակ փոխուած թէ Ակարն յԱգարակէ:

5. Ագուալի Թուր.

Ի գիրս չեմ հանդիպած, բայց արաբերէնի թարգմանութեամբ յիշուի յԱմիրտովլաթ, Սէյֆ էլ-ղորապ. այս ալ ըստ յունական Քսիֆիոն բառէն, որ նոյնպէս թուր կը նշանակէ, ինչպէս և լատին անունն Gladiolus, ուսկից փռանկն Glayoul. Ամիրտովլաթ ուրիշ արաբացի անուններ ալ յիշէ, ինչպէս Տոշիտաշ, փոխանակ

գրելու Տոբոսոսի *توبوسوس*, և կ'ըսէ ըստ Պէյթարի, « Ինքն ի վայրի Սուսանին » ազգէն է, որ Հելլենացիքն ֆապիսոն (Քսիֆիոն) կ'ասեն. և ինքն Տանփաստն է »: — Իսկ Պէյթար ալ ուրիշ անուններով կու ստորագրէ ինչպէս, Տարպոս, *تارپوس* Նաֆոսի, զոր յիշէ և Ամիրտովաթ, նոր անուն մ'ալ աւելցընելով, Նաֆուխ, որ է Տիէտու. և այս օտարոտի անուան տակ կու ստորագրէ. « Ինքն կարմիր Սուսանն » է, որ Թուրքն ֆաղիկ յիկտաւի, և ոմանք ի Թուրքացն Ղուզղուն ղիլմի (*) ասեն, » և տերեւն ի Թուր կու նմանի. և միրգ ունի ի բոլորն. և մէկ կանպուն ի գետնէն » ի վեր կու ելանէ. և երկու տակ ունի՝ մէկն ի վերայ մէկին հիծած. մանր սոխ » կու նմանի, և ներքեւինն Թոռմած և վերեւինն ի լի կու լինի և գէր. և թէ զան » վերի տակն զինով և խնկով սպեղանի առնես և յանձն օգտէ հերքունին » . (Թուրք. Թեմիէկի հիւանդութիւն, իրրեւ բորտութիւն):

6. Ագուաւի Ծաղիկ.

Ի գիրս չեմ հանգիպած, այլ ի նոր բտագիրս. Ղրային եղէգի տեսակ է, որպէս կ'ենին:

7. Ագուաւի ճանկ կամ Ագուաւի ոտք.

Բժշկարանք ոմանք համառօտ կ'ըսեն, « Խոտ է, երեք տերեւ ունի, միինն երկան » և քովինն կարն »: — « Մայիսն կը բուսնի այս խոտս. զեղին ծաղիկ ունի »: Իսկ Ամիրտովաթ ի կարգին յիշելով այս երկու հոմանիշ անունները, որ է Ըռիձ Խ-ղու ղապ, մեկնութիւնը կու տայ Ատրիղայ կամ Ատտրիղայ անուան տակ, որ է Թրիղայ կամ Աարիղայ *آواريل* ըստ Պէյթարի. « Թուրքն խէլ առէ, բայց չէ ստոյգ. և » Ղուզղուն այաղի կ'ասեն. և ինքն ամենայն դիմօք ի Սամիթ կու նմանի. բայց ծա- » ղիկն սպիտակ է: Եւ այլ կու ասեն, թէ հունգն նման է կարոսի հընդին, և խիստ » լեղի է, և կապուտօղն, և կայ որ կանաչ քիչ մի մեծկակ է. այն է Ալատրիղայի » դաղան. և այն որ կապուտն է՝ Ալատրիղայի Մըսրին է (Եգիպտական). և Ըռիձ » իլ ղուրապ կու ասեն, որ է հայերէն Ագուաւու ճանկ, և Ճոզգլի շէյխտան (այլ » կ'ասեն ». փոխանակ գրելոյ ճէգրի շէյխտան ըստ Պէյթարայ, որ նշանակէ Սատանի » Ստեպղին (Թ. Հալուճ): — Դարձեալ գրէ. « Ագուաւի ոտք. ի գետնէն ի վեր մէկ » թիզ կ'ենլնէ, և երեք երեք տերեւ ունի. նման է կոտման տերեւին. այն տերեւն » որ ի մէջն՝ երկընկեկ է քան զերկուքն, և երկու քովին կարն լինի. նման է ագ- » աւաւ ոտայ »: Պէյթար զանազանէ իր Աաթիրլայ կոչածը, (զոր Թարգմանինն փռանկ *Ptychotis verticillata* անուանէ ի լատինն), բուն Ագուաւի ճանկէն (Ռիձ Խ-ղուրայ), զոր կոչէ ի լատինն *Lotus Ornithopodioides*.

* Ղուզղուն՝ արժուի տեսակ բարձր Թուրք լաւ մ'է, հայերէն Ուլիսու կոչուածն համա- բուի: Ամիրտովաթ այս անունը կու յիշէ Արաբաց Նաօ բառին տակ. « Որ Թուրքն կուլու- » (Քէրքէզ) կ'առէ, և Հայն Ոսկրիու. և այսոր պատմութիւնն մէկն այն է, որ քան զայս բարձր » Թուրքոյ ձազ չկայ. և մէկ օրն յարեւելից մինչև յարեւմուտս երթայ և զարձեալ կու դառնայ. » և այլ որ զարձեալի ինն այս է, որ քանի ի նեու առ ժողովն միս ուտէ, եւ այն օրն » պիտի որ երթայ վեր բունն (բոյն), և վեր ձազն դառնու »:

8. Ազազու .

Գալիենոսի բառից հաւաքման մէջ գրուած է . « Կարբագէ՛ Ազազուն » . Ստեփանոս Ռոչքեան իր Հայ-Վատին բառագրոց մէջ կ'ըսէ . « Արմատ բժշկական » փոքր և նոսր, նման ոստոց կինամոնի » . և դարձեալ . « Էխոս Թիւնաւոր . Carpesia » . ուղիղն Carpesium . փռանկերէն ալ Carpesie, 'ի յունականէն Καρπήςιον . Պէյթար ալ կու գրէ Գարֆիսիոն, բայց բուն արարացի ֆէպպայ բառով կու բացատրէ . զոր պէտք չէ չփոթել ընդ Քասպպայ (որ և Հասպէլ-արոս), զոր կու յիշէ Ամիրտովաթ ալ . « Քասպպա՛ որ է Հասպըլ յարոս » . բայց առաջինը չի յիշեր :

9. Ազատ .

Այսպէս կոչուած է նոր գրուածի մի մէջ Բրարիոն ծաղիկն . տես զայս :

10. * Ազատդրախտ .

Յայտ է ձայնէն որ Պարսից լեզուով է, Ազատ տիդիս, և մեծ ծառ նշանակէ . նոյն անունն ընդունած է և ուսումնական լեզուն կամ Եւրոպացիք, Melia Azida-rach . այս անուամբ կու ստորագրէ և Ամիրտովաթ ըստ Պէյթարայ . « Ինքն մէկ մեծ » ծառ է, միրգ ունի որ ի կաղին կու նմանի լաւն այն է որ յածուենիքն բուս, » նի : Իպն (Պէյթար) ասէ թէ իր ծառն նման է Ալունին ծառին, և միրգն ալ ի » ալտճու կու նմանի . բայց ի մրգէն մի՛ ուտեր, փնասակար է, կու սպաննէ . և թէ » զծաղիկն հոտվրաս՝ զըղեղան կալուածն բանայ . . . Մինհանին (1) տէրն ասեր » է, թէ Սպաննող է . և մեք փորձեցաք որ չէ հանցզուն, և իր պտուղն քիչ մի » քաղցրութիւն ունի . և Մինհանին տէրն ասէ՛ թէ խիստ լեղի է . և չէ այսպէս : » Եւ իր տերեւն զմազն կու երկընցընէ, թէ զգլուխն իրմով լվանաս » : — Այս երկու վկայութեանց հակասութիւնը թողով նոր փորձողաց ստուգել, յիշենք որ մեր բժշկապետն այս ծառին այլեւայլ արեւելեայ անուններն ալ գրէ . որոցմէ զաս յԱսորիս ալ ճիւղոս կոչուի : Բայց մեզի ամենէն կարեւորն է մեր իրմէ վերջի բժշկապետին՝ Ասարայ՝ յայտնածը, թէ Խորենացւոյ Աշխարհագրութեան մէջ Արարիոյ բուսոց կարգը դրուածն Խախակ՝ այս Ազատտիրախտ ծառն է . ինքն ինչպէս ստուգեր է արդեօք : — Փռանկը կ'անուանեն բաց յուսումնականէն նաեւ Arbre saint . Arbre à Chapelet . ըստ այսմ և Թուրքք (ըստ Պալատցի Տիրացու Գէորգայ Տէր Յովհաննիսեան)՝ Թեապիհ աղածի :

11. Ազատքեղ .

Վայրի կարոսն է, ինչպէս լատին անունն ալ նշանակէ Petroselinum, (Քարերու կարոս), յորմէ փռանկն ալ Persil . Թ . Մադուանու . Ռ . Пемрышка . Պէյթար լա .

(1) Էպն ճէզլա Պաղտատցի դիտուն բժիշկն ԺԱ դարու, մարգուս սննդեան նարկաւոր և դեղոց բառագիրք մի շինած է Մինհան կոչելով, որ նշանակէ՛ չիտակ կամ աղբուսի հանապարհ . Ամիրտովաթ ըստ անգամ կու յիշէ զսա, Մինհանին տէրն կամ զրոգն անուանելով :

տին կամ յոյն բառն ալ տառադարձութեամբ գրեր է Պեքրասէյիևռան. այսպէս և մերս Ամիրտուլվաթ՝ աւելի ծռելով « Պեքրասէյիևռոյ, որ է Ճատրասալիռն » . այս անուան տակ գրէ . « Ճատրասալիռն, և ինքն է վայրի Քարաւիզն . և լաւն այն է որ հունտն » սեւ լինի և պինտ լինի և խոշոր լինի... և թէ զինքն շատ ծամեն՝ զՍոխին և զՍխտորին հոտն կու կտրէ... և իր հունտն օգտէ ամենայն մահացու գեղոց » :

12. * Ազարիղի .

Ըստ Ամիրտ. « Ինքն խոտի տակ է, որ ագռան ուտէ՝ խեւնայ. աղէկն նորն պիտի... Ասէ Սահակն, թէ ինքն թմրադեղ է » : — Սահակն անուանի բժիշկ է Հրեայ, Խարայեչացի մականուանեալ, ծն. յամի 845. † 100 ամեայ :

13. * Ազարիոն .

Ըստ Ամիրտուլվաթայ, « Ինքն Ախհաւանին ցեղերուն է (տես զայս անուն), և թաղիկն ի սկիւռ գոյն կու նմանի, և ի ածվենիքն կու լինի, և ի լերունքն այլ կու լինի . լաւն այն է որ լերունքն լինի... Պատէհին (1) ասէ, թէ պարսկերէն Ազա-րիոն կ'ասեն, և Արտաւ՛ այլ կու ասեն, և ի շատ խօսքն Սահիպ Ճամէյին (2) է, որ ասէ, թէ Ախհաւանին ցեղերուն է, և Կոշի Ախասան կու ասեն. դեղին կու լինի և կարմիր կու լինի . և այս չէ ստուգ. Ախհաւանին ծաղիկն դեղին և սպիտակ կու լինայ : Եւ ասացած է թէ իր բուն մէկ կանգուն կու լինայ . և գրոցս չի նոյն ասեր է, թէ Բուն Ախհաւանին մէկ կանգուն կու լինի, բայց Ազարիոնին բուն մէկ կանգուն և մէկ թիւ այլ կու լինի . և տերեւն Ախհաւանին տերեւին կու նմանի ստուգ. բայց ծաղիկն խիստ կարմիր, որպէս կրակին գունովն, և ծաղիկն մէջն սեւ կու լինի գունն . և Ախհաւանին ծաղիկն ի սորա ծաղկէն փոքր կու լինի . բայց Ախհաւանին ծաղկին մէջն դեղին և եղբրքն զէս երակներ սպիտակ է . և Ազարիոնին եզրի երակներն կարմիր է, և մէջն սեւ է : Այս ցեղիս Շախայիդ (Շէգայիդ, شادق) կ'ասեն և կու ստուգեն : Եւ ասեր է գրոցս չի նոյն (3), պարսկերէն Ազարիոն (Ազէրկիւն (آزركين)) կու ասեն, որ թարգմանի կրակին գունով : — Այսքան բացատրութենէն զատ Ամիրտուլվաթ կու գրէ, թէ Խպն (Պէյթար) ասէ, թէ « իրենն (Ազարիոնի) Եզին աչք ասեն, որ է Այն ըր-պախարն », և այլն . և կու նկարագրէ այս բոյս, որ տարբեր է յԱզարիոնէ, և Պէյթար ալ որոշ և զատ գրէ Պեհար անուան տակ Եզինաչքին նկարագրութիւնը, ուր մենք ալ պիտի յիշեմք : Իսկ այս Ազարիոն կամ Ազարիան (եթէ ստոյգ է անունս) յիշուած չէ ի Պէյթարայ, և կըրնար կարծուիլ թէ մեր հեղինակն չփոթէ ընդ Ասարունի (Asarum), բայց զայս ալ առանձին կու ստորագրէ և հայերէն Մրուանտակ կոչուիլը կ'իմացնէ, որ թէ ոչ տարբեր ցեղէ՛ այլ տարբեր տեսակ բոյս է :

14. Ազոխ .

Յայտնի է այսպէս կոչուիլ տհաս խաղողին . որոյ նմանութեամբ իմն կոչուի և հետեւեալն ,

- 1. Թեբեւ Խպն Պալթուի բժիշկն, յառաջին կէս ԺԱ դարու :
- 2. Մեզ անծանօթ (եզինակ) :
- 3. Շատ նեղ այսպէս կ'ըսէ Ամիրտուլվաթ, և ինքն իսկ կարծուի գրողն . բայց երբեմն օտար նեղիակ՝ ուսկեց Բարզմաներ է :

15 Ազոխ վայրի.

« Որ է, ըստ Ամիրտ., Հայիյալամն, որ է Մեղրահարն ». սա պարսկերէն է յեղեղեղ, և նշանակէ մշտադալար, Sempervivum. այս լատին անուամբ յատուկ բոյսն՝ ըստ մեզ է Գառնադմակիկն. իսկ Միշպահարն՝ զոր Ամիրտ. կոչէ և ՀաՎ-լարն, է Telephium կոչուածն ի Գիոսկորիտեայ, ըստ բուսաբանից, զոր մեր հեղինակն ալ յիշէ, կոչելով « Տիլաֆիոն. ինքն ի Հայիյալամին ցեղերուն յիշած է, » և Գալիանոս ասէ, թէ բնութիւնն տաք է », և այլն. Պէլթար կ'իմացընէ որ օճանք այս բոյսը կ'անուանեն նաեւ Անմեռուկ վայրի:

16. * Աթխար.

Ուղիղն իթխիր, արաբացի բառ, Հայերէն Վաղմետակ: Գրուած է և Աթխար ի Վաստակոց գիրս (Գլ. 244):

17. Աժրի.

Պոնտոսի կողմերը աամկորէն այս անուամբ յիշուի Հանարի ծառն: Տես զայս:

18. Ալաժարի կամ Ալաժահրի.

Մշեցոց շատ ծանօթ բոյս կամ թուփ մ'է. գընձի նման մանր պտուղ կու բերէ, զոր չորցուցած աղալով՝ դեղին ներկ կու հանեն, մորթ գունաւորելու: Ամիրտուվաթայ անծանօթ է այս բոյսս, բայց իրմէ քիչ մի հին հեղինակ, Մատթէոս Վ. աչակերտ Գրիգորի Տաթեւացոյ, իր Վեցօրէից մեկնութեան գրոց մէջ (Գլ. Ի) կ'ըսէ. « Ամենայն բոյսք բնական որակ ունին կանաչ. և այսմ գունոյ պատճառ » ուսանիմք ի ներկոցէ անտի. քանզի զՏորունն (որոյ ցեղէն է Ալաժահրին ալ) » և զԼեղակն յիրար խառնեն, այսինքն զսեաւն և զկարմիրն, ծնանի լուրջ » (գոյն). իսկ յորժամ յԱլաժահրն ձգեն՝ որ է դեղին, կանչի (կանաչանայ). և » նիւթն բնական սպիտակ լինի»: — Եւրոպացիք ալ այս անուամբ կոչեն Ali-zari, այլ և Արեւելեան Տորուն:

19. Ալանկիտակ.

Սխալ գրուած է, պէտք է կարդալ Սղանկի տակ. տես այս անունս, կամ Զրեւանդ կամ Որդնտակ. թէ և կայ Alangium անուամբ փոյտ ծառ մի:

20. * Ալատնի.

Ալատնի Պէլթարայ, որ կոչէ և Լեպրայ, Լ. և Փ. Elatine, ի յոյնէն առած (Ελάτινος, որ է Եղեւին, վասն զի տերեւներն ասոր կու նմանին). իսկ ըստ մեր Ամասիացոյն, « Մէկ ցեղ խոտ մ'է, որ տերեւն սխտորի տերեւ կու նմանի, և » տակն փոքրիկ և բոլոր կու լինի, և ինքն մէկ ազգ սխտոր է, և հինգ կամ

» վեց ճուղ կ'ունենայ, և յերկայնութիւն մէկ մէկ թիզ կու լինի, և ի ցաներուն
» մէջն և ի փոս տեղրանք կու բուսնի. և տերեւին համն ի Գիւթորին համն կու
» նմանի », և այլն :

21. Ալի.

Գեղաբունեաց կամ Սեւանայ ծովու եզերաց ծաղկանց և բուսոց կարգին՝ կու
յիշէ նոր գրող մի (Տէր Աւետիքեան), առանց բացատրելու :

22. Ալոնի.

Պտուղն ալ Ալոն, կամ Ալոն, ինչպէս կ'անուանեն և թուրքք՝ Հալոն. հայերէն
հնագոյն և հարազատ անունն է Սնձնեկ կամ Սնձնի. բայց պտուղը պէտք չէ
չփոթել Սնձնի հետ, որ զատ բոյս կամ՝ բանջար մ'է. ինչպէս նաեւ Ալոն պտուղն
ալ ընդ Ալոն բուսոյ : Վաստակոց գիրքն երկու անուանքն ալ մէկտեղ յիշէ (Գլ.
Գրեմ), « Վասն Սերկեւելի և Սնձնեաց՝ որ է Ալոն. » ուրիշ տեղ ալ (Գրեմ),
« Տունկք՝ որ ի շաչի ջանջիսէ լինին (այսինքն ճիւղէ մի առաջ եկած) այստիկ են,
» խնձորենի, կեռասենի, Սնձնի, Նունենի, և այլ այսպիսիք » : — Լ. Azerolus.
Փ. Azérolier, կ'ըսեն նաեւ Pomette de doux closes. Ռ. Азероловое дерево.
Հայերէն ալ կ'ըսուի վայրի խնձոր, ուրիշ լեզուաց մէջ ալ Լեռան խնձոր. ինչպէս
նաեւ արաբերէն, ըստ Ամիրտ. « Չարուրի ձապարի, որ է Վայրի խնձորն, որ է
» Ալոն, որ հայերէն բառով Սնձնն », և այլն : Թողումք ուրեմն այս բառին
ներքեւ յիշել իր ուրիշ բացատրութիւնն ալ. իսկ հօս յիշենք նոյն անուամբ տար-
բեր ցեղի՝ բոյս մ'ալ, որ է

23. Ալուն.

« Որ է ինքն, ըստ Ամիրտ. ի Մոռիսայասային ցեղերուն, որ պարսկերէն ֆազ-
նաք կ'անեն », կամ ֆազանկ. իսկ Մոռիսայասայն տեսնենք ի կարգի Մ տառի.
այս տեղ այսչափ ըսնք, որ խոտեղէն բոյս է մանր հունտերով, որք շատ բանի
և զօրուոր դեղ կ'ըլլան, ըստ հեղինակին. բայց եւրոպացի գիտունք դեռ չեն
ստուգած ինչ ըլլալը, այլ Linaria (Վշտեսակ) բուսոց ցեղէն համարին :

24. Ալոչա, կամ Ալուչա.

Տեսակ մի է վայրենի Սալորի :

25. Ալոց.

Գեղձի տեսակ է, մեծկակ և մսոտ :

26. Ալու.

Փաթաթ անուանեալ Գետնախնձորն է, ըստ Մեսր. Թաղիադեանց (Առաջն.
Մանկանց). բայց Ալու պարսկերէն Սալոր կու նշանակէ. ասկէ թերեւս վերայի-
չեալն Ալոչա :

27. * Ապուճ.

Հնդկացին պառուզ մ'է, ըստ Բժշկարանի, կամ « Խօտի մի տակ է, որ ի Հընդ-
» կաց կու գայ, և ինքն ի Պուզէտան (Orchis) կու նմանի, և սպիտակ կու լինի,
» և ի վերայ սեւուկ կէտկունքեր կու լինի, և համ լեղէհամ է »: Պէյթար՝ ուս-
կից առած է Ամիրտ. նոյն կու համարի Ապուճն՝ عجب, Արարաց վաճ ըսած եղե-
քանման բուսոյն, որ է Թ. * Аcoron. Լ. Acorus calamus. Փ. Acore.

28. * Ախախիա կամ Աղաղիա.

Արարերէն ալ այսպէս կոչուած, ըստ Լ. Փ. Acacia, Ռ. Акация, ի յոյն άχη բառէ
որ է սուր կամ փուշ, ծառին փշուտ ըլլալուն համար. ինչպէս վկայութիւն բերէ
Ամիրտողլաթ ի Քալիենոսէ, որ ասէ, թէ « Փուշ ալ ունի և խէժ ալ ունի »: բայց
ինքն՝ ըստ Պէյթարի զԱղաղիա համարի Քամուք կամ հոյզ Ղարագ կամ Ղարատ
ըսուած ծառի. և ևս ոմանք ասեն թէ Խառնուպին ծառին (Եղլիւրենի) ըսուպն
» է, և Ղարաղին՝ պարսկերէն ֆարզ կ'ասեն (այսպէս Պէյթար ալ, عرق), և
» Ղուղղուզ կ'ասեն »: Բայց երբ կարգն գայ ի Ղուղղուլ՝ չի յիշեր զԱղաղիա, այլ
ստորագրութեամբն կ'իմացընէ որ նա կասիս ծառն է, Cassia: — Աղաղիայի
տեղ ոմանք հիմայ Եսակիս կ'ըսեն. իսկ Թ. Աթանասեան Հակակ, չգիտեմ նման-
ցընելով թէ ի լրոյ:

29. * Ախինոս.

Անունն յայտնէ յունական ծագումն (Εχίνος որ ոգնի կու նշանակէ). Պէյթար
ալ այսպէս գրէ. « Ինքն խոտ մ'է որ ի գետեզերքն կու բուսնի, և մէկմէկ թիզ
» կու լինի յերկանքն, և տերեւներուն ծայրն ճղած կու լինի և կամ բաժնած
» կու լինի, և հինգ ճուղ կու լինի կամ վեց. և ծաղիկն սպիտակ կու լինայ, և
» մանտրկեկ սեւուկ պառուզ կ'ունենայ... Ասէ Պատէին թէ այսոր Ախիրոս կ'ա-
» սեն, և Խարտինա, և Չառտար այլ կու ասեն. և ոմանք ասեն թէ ինքն չիժե-
» ծած ցորենն է՝ որ ի դաշտերն կու բուսնի և ի կանկնըման լրեզերն. և պտուղն
» սեւ ու մանտր է, և ծաղիկն սպիտակ. և պտուղն ի աչից գեղերն կու մտնէ »:
Այսպէս կու վարդապետեն թէ Քալիենոս և թէ Դիոսկորիտէս, բայց ետքինս
փոխանակ Ախինոսի՝ Երինոս կ'ըսէ, Erinος, և այս ստոյգ համարուի. Լ. Erinus.
Փ. Erine. որ զանգակածեւ (Campanule) ծաղկանց ցեղէն է:

30. * Ախին.

Այս այլ յոյն է'իսիս (Εχίς) բառէն ծագած է, որ վիշապ նշանակէ, և անոր
նմանութենէն Վիշապագլուխ կոչած են, ինչպէս Թուրքարէն ալ անուանի, ըստ
Ամիրտ. « Թաֆի (1) Երլլան պաշի, այնոր համար որ պտուղն ի յայն կու նմանի. և
» ինքն խոտ մ'է որ երկան տերեւնի ունի, և ի վրայ փշեր ունի, և ամէն տե-

1. Կարծեմ Ե-ֆի, որ նշանակէ գոլոս, իբր սուս վիշապագլուխ:

» բեւի տակ դեղին ծաղիկ ունի. և իր տակն քան զմատն այլ բարակ կու լինի » և սեւ », և այլն. — Լ. Bohium. Փ. Vipérine. Համանիչ կամ համանման անուամբ վիշապոսի բոյս մի յիշուի ի Հայս, բայց նոյն է թէ օտարացեղ, ստուգելի է:

31. Ախլախնձոր.

Այս անունս կու շուրի մեր երկրին այլեւայլ կողմեր, բայց էութեանը վրայ չեն միարան. ըստ Հիրակացւոց տեսակ մի Առուոյս է, Trifolium pratense. ըստ Կարմիրքցոց՝ Ձիւնծաղիկն է. բայց տես որ Ձիւնծաղիկն ալ այլեւայլ նշանակութիւն ունի: — « Հօրօտ Մօրօտ... խառներ հետ Ախլախնձորուն », կ'երգէ Դաւիթ Սալաձորցի:

32. * Ախլսաչ.

Որ է Ախարսաձ Պէյթարայ, عاچاچا, որ Եարաթացւոց երկրագործական զբոքէն առած է. անծանօթ բոյս մի Եւրոպացի գիտնոց ալ, որք թզենայ տեսակ մի կտրծեն: Ամիրս. կու գրէ. « Ինչն ծառ մ'է որ ի շող քաղճնի (տաք երկիրներ) » կու լինայ. և իր յերկանութիւն մարդու մի չաք կու լինայ, և տերեւն նման » է թզին տերեւին, և իր ծառն այլ նման է թզին ծառին, և մէջն փռւն կու ո լինի. և ի վրայ ճղերուն միրգ կ'ունենայ շատ ». Պէյթար կ'աւելցընէ, թէ ասոր ճղերուն վրայ տեսակ մի պզտիկ մամուկք կու գոյանան, ճերմակ պատատով, որ երբ պատըռտի՝ մամուկք դուրս կ'ելլեն կու վաղվըգեն, անոր համար մարդիկ կու զբոքին պտուղներն ուտելու:

33. * Ախիաւան.

Որ է Ախուշեան կամ Օքուշեան Արարաց وانچاچا Լ. Matricaria. բացառութիւնը կը թողուք մեր Մ տառին բուռոց կարգին:

34. * Ախունա.

Խորենացւոյ աշխարհագրութեան մէջ կու յիշուի յերջանիկն Արարիա. ըստ այլ օրինակաց Աշխունա կամ Ալիունա: Շէհրիմանեանն համարի վայրի Մանա-նոյս, Sinapi silvestris.

35. Ախրիզան.

Ահա գեղեցիկ անուն մի՝ զոր կ'ընծայէ մեղ Մխիթար Գոշ իր Առակաց մէջ, (Թիւ 19 և 16), իմացընելով գեղեցկադոյն ծաղկանց մէկն ըլլալը. վասն զի կ'ըսէ. « Կամեցան (բոյսը) ինքեանց կարգել թագաւորութիւն.. ոմանք ասէին ՂՇու. » շան լինել, և այլք զԱխրիզան, և բազուկք զՀամասպրան, և ամենեցուն հա. » ճոյ թուեցաւ լինել զՀամասպրանն ». (Ինչ կերպով արդեօք կ'ընտրէին ծաղ.

կուսք իրենց գլխաւորները): Առակախօսն յետոյ քանի մի մութ նշաններ ալ կու տայ ծաղկին յատկութեանց. « Ախրիզանն երիս ունելով կենդանութիւն յարմատս »? . . իսկ բուսոց թագաւորն (Համապարամ) « Ընդ ինքեամբ անյայտ և » զԱխրիզանն արար, լուսով նշանի ի գիշերի գտանիլ... և ասէ. Գիտէք, զի » միանգամայն անյայտ ոչ լինիմ, այլ երեւիմ աղօթիւք և պահօք՝ ինդրողացն. » նոյնպէս և զԱխրիզանն արարի, զի մի գիւրարհամարհելի լինիցիմք՝ դիւրա » գտանելի լիալք»: Խնդրեմք ի բուսաբանից որ իմացընեն մեզ՝ թէ կան ծաղկըներ՝ որ ի գիշերի փնտռուին, կամ ի գիշերի յայտնուին. գուցէ ըլլան անոնք որ ի գիշերի կու բացուին, ինչպէս *Mirabilis Jalapa*, Փ. *Belle de nuit*, *Կեձէ սեֆա Բուրբաց*. կամ *անուշահոտն Pelargonium triste*, որ՝ Տխուր Արագլակտուց թարգմանուի, և գիշերուան դէմ կու բուրէ: — Ստ. Շէհրիման իրրեւ ծանօթ կու նկարագրէ զԱխրիզան, բոյս մի 1½ ոտնաչափ բարձր, տերեւներն ուռնեւոյ նման, թանձր և կանաչ, ծաղիկն բաժակաձեւ դեղին ծիրանեգոյն կամ կապոյտ գծերով, որով ճաճանշաւոր կ'երեւի. լատին անունն ալ կու տայ *Tri-polium*. բայց այս անուամբ բոյս չեն յիշեր բուսաբանք. թերեւս ըլլայ *Tropaeolum*, զոր Փռանկք *Capucine* կոչին և Ռ. *Настурция*. ասոր՝ յիւրաւի՝ ոչ միայն տերեւն, ծաղիկն և պտուղն գեղեցկաձեւք են, այլ և արչալուսէ առաջ վերջալուսէ ետեւ կու ցոլլըտայ կամ փայլփայլի, ըստ քննութեան բնաբանից՝ իր մէջ փոսփորային կամ ծծմբային տարր ունենալով. և այսպէս կըրնայ Ախրիզան մ'ըլլալ. միայն տարակոյս մնայ այս, որ բոյսս՝ երկու կամ երեք դար առաջ միայն Ամերիկոյ Բերու երկրէն յԱւրոպա մտեր և ծանօթացեր է. թէ և ոմանք կարծեր են թէ ի Հնդկաստանէ ալ բերուած ըլլայ. իսկ թէ գտուի մեր երկրին մէջ ալ բնական կամ եկամուտ, դեռ քննելի է:

36. Աճար, կամ Այժար, կամ Այժառ.

Այսպէս կոչեն ոմանք Սեւ կաղամախին *Populus Nigra*, բայց ի գրոց է թէ ի ռամկաց լսուած այս անունս, չեմ գիտեր:

37. Աժիկ.

Յորեն է, խոնաւութեամբ ինքնիրեն ծլած կամ ջրի մէջ դրուած՝ կակղացած (1):

38. Ականդուկ.

Անծանօթ և շատ ստուգելի բոյս կամ նիւթ մի կ'երեւի. մեր հին բժշկարանն (ԺԳ դարու գրուած) կ'ըսէ. « Անակցանի (առանց գործիքի) ակուայ հանել (ոյ » համար). Թեղոյ-տակի կեղեւ և Ականդուկ՝ մանր աղա, և ի քացախն լից և » խառնէ, և կալ յարեւն՝ որ թանձրանայ, և դիւր ի վերայ ատամանն՝ որ շարժի, » և հանէ »:

39. Ականջախոտ.

Ականջացաւի դեղ. լեղի և եղոտ բոյս մի է, ի լրոյ և ոչ ի գրոց հանդիպուած. նոյնպէս և հետեւեալն,

1 ՃՈՒՐԷՆ ԱժՈՎ սկսած անունները տես յ'Այժ:

40. Ականջուկ.

Ականջի ձեւով ծաղիկ մի որոյ օրպիսութիւնն չէ բացատրուած: Շէհրիմանեանն նոյն համարի ընդ շաղհղըկի: Բժշկարան մի գոթութեան դեղ գրէ. «**ՉԱԿԸՆ**» յուկ խոտն քաղէ և շորացո և լուէ. երեք օր հետերաց շորս պատառ հացով » տուր », և այլն:

41. Ակար. Ակարոն. Ակիր.

Յոյն անուն, Ἄκορον, յորմէ Լ. Acorus, Փ. Acore. Պ. Էկիր. իսկ Արարք, ստվորարար կ'անուանեն Ոռաձ, զոր մերայինք ալ վաձ կամ Ոձ գրած են. իսկ բնիկ հայկական անունը տես ի Բաշխ. — Ակիր կամ Ակրը, Ակր, անունն ծանօթ է և ի Հայս, իրրեւ անուշահոտ խոտ մի խուրձաձեւ արմատով, լուի դէմ դեղի գործածուած. բայց բուրովին վերայիչեալ Ակարի հետ նոյն թէ տարբեր ըլլալն ստուգել պիտի. տես և թիւ 27:

42. Ակիրի պտուղ.

Ուր և արարերէնն նշանակուած է Հայ ըլ-Հօլ:

43. Ակուվուկ.

Վայրի վարդ և իր պտուղն. Թ. Գոշ պոշուտ: Լաւագոյն հայերէնը տեսե՛նք 'ի Մասրենի:

44. * Ակրկարիա.

Արարացի անուն اقرا, Արի քարնա, Լ. Pyrethrum. Ռ. Жигунецъ, ըստ Հայոց Իգաբողի տակ, կամ միայն Բողի տակ, այլ և Բողի տակ: Տես այս բառերն ալ, բայց այլեւայլ տեսակ կամ ցեղ կու նշանակեն Ամիրտուլվաթ և այլ բժշկարանք. ըստ առաջնոյն, «**Ինքն Վայրի Տարդունին տակն է (զոր անուանէ յ Այի Տարդուն)**». յորժամ բերանդ առնուս՝ մումրուայ »: Ուրիչ մի կ'աւելցընէ. «**Մուսուլլի Տարդունին տակն է** ». իսկ հին բժշկարանն՝ համարի Կոտեմ:

45. Ակնեւտուկ.

«**Ակնեւտուկն, կ'երգէ Գաւիթ Սալաձորցի, և Գառնիդիմակն կարօտ են Մանիկին տեսուն**»: Ուրիչ օրինակ մի գրէ Ակնտակ. ուրիչ մ'ալ Ականջուկ. բայց այս ետքինս գրողն իր կարծեօք գրած է:

46. Ակքան կամ Եկքան.

Այս անունս մեր Ս. Գրոց Թարգմանութեան մէջ գաուի, (Ռ. Թագր. ԺԴ, 9),

յոյն բնագրին բառի *Ἄκαν.* *l. Carduus. φ. Chardon.* Ռ. *Волчецъ,* « Ակքան ի »
 « Լիբանանէ յղեաց առ Եղեւնափայտն որ ի Լիբանան, և ասէ. Տուր գղուսար »
 « քո որդւոյ իմում կնութեան. և անցին զազանք անա »
 « պատի որ ի Լիբանան, և կոխեցին զԱկքանն »: Ա-
 « ռակն կ'իմացընէ Ակքանի ցած անպիտան բոյս մ'ըլլալն,
 այլ և փշոտ: Եոյն առակն ուրիշ տեղ կրկնուած (Բ Մը-
 նաց. ԻԵ, 18), թէ Ակքան և թէ Ոռոզ կ'անուանէ զբոյսն:
 Այս բանս մեկնելով Ս. Կիրեղ, ըստ հայ թարգմանու-
 թեան՝ կ'ըսէ. « Ակքանն՝ բանջար ինչ է և կամ թուփ »
 « փաթրիկ, նման Մորի կամ Կաղանջեանն »: Իսկ մեր
 բազմահմուտ Վանական վարդապետն աւելի լաւ կու բա-
 ցատրէ. « Ակքանն մանր թուփ է, երեք ազգ. է որ այլ »
 « կակուզ է և անփուշ, հետ զետնոյն տակի (զետնի վրայ »
 « կու տափկի, տարածուի). և է որ բարձրանայ կան »
 « գնաչափ և փուշ ունի, զոր Գազ կոչեն և Հոսի (Հոսի). »
 « լուցկին է այրելեաց. ի կարեաց ժամ՝ եզանց տան »
 « կերակուր, գիրանայ, բայց միան դառն լինի »:



Ակքան *

47. Ակոսախոտ.

Ստեփ. Ռոջքեան Գալիենոսի բառից մէջ գտնէ զայս,
 և գնէ ի լատինն *Calla.* այս բառս յունական կաղլէոն
 (*καλλαιον*) բառէն առնուած է, որ սքլորի կտուցին տակի
 մասնը նշանակէ. և ըստ բուսաբանից Եուիկ բուսոց (*Aroidæ*) ցեղէն է:

48. Աղարդրուկ.

Գալիենոսի բառից օրինակ մի կու գուգէ զայս՝ յունական Եշիււնո կամ Եշիււրոս
 տարակուսելի անուան. հաւանօրէն պիտի ըլլայ Աղարդրուկ, զոր տես քիչ մի վարը:
 Սոյնպէս տարակուսելի է և

49. Աղալուճի.

Զոր՝ Փայտ Հալուճի գրած է բժշկարան մի:

* Աղաղիա. Տես Ախախիտ (Թիւ 38):

* Աղարիկոն կամ Ախարիկոն. Տես Ղարիկոն:

*) Ո՛ր և է պատկեր բուսոյ՝ այս գրոց մէջ Եւրոպացւոց ժամօթ (տարակ տեսակին է. կըրնայ
 ըլլալ որ մեր երկրին մէջ նոյն անուամբ բոյսն քիչ մի զտնագան տեղ ունենայ. փոփոզելի է
 որ ազգային բուսաբանք՝ անուանց (եւս պատկերն ալ ընծայէին:

50. Աղաւնարօտ. Աղվանարօտ. Աղուենարօտ. Աղաւնեկ. Աղաւնիճ.
51. Աղլնու ծիրտ.

Այսքան իրարու մօտ և հեռի անուանց՝ գտնէ առաջինին և վերջինին մէջ տարբերութիւն պիտի ըլլայ, այսինքն տարբեր բոյսք պիտի ըլլան. բայց դժար է որոշելն. նոյն իսկ Եւրոպացիք կու շփոթեն ասոնց դիմաց դրուած արաբացի աւնունները, և կ'ըսեն, թէ երկու տեսակք են. նոյնպէս կ'ըսէ մեր Ամասիացին ալ, բայց չորոշեր, այլ նոյնացնէ կամ նոյնանիչ համարի երկու անուններն ալ. ինչպէս հին բժշկարանն ալ կ'ըսէ. « Աղվանարօտ՝ Աղլնուծիրտ ». իսկ Ամիրտ. երկու անուններն ալ արաբերէն երկու տարբեր անուանց տակ հաւասար գրէ. որոց մէկն բուն Աղաւնարօտ նշանակէ, և է « Ռայ ըլ-համալ, (ع الحام), » որ է Կօկարմին օրի. ինքն խոտ մի է որ ի ջրի տեղեր կու բուսնի, և տերեւն » սպիտակ և երկան կու լինի թիզ մի. և աղաւնիքն այսոր ի տակն կու օթին »: Եւրոպացիք այս բուսոյ սեփականած են *L. Verbena*. *Φ. Verveine*, *Ռ. Желтѣякъ* կոչուածը: — Իսկ միւս արաբերէն անունն է Համաւա, *الحام*, զոր նոյնպէս գրէ Ամիրտ. և կ'ըսէ. « Համամայ. ինքն ծառ-մն է փոքր, և կուզկներ » (ողկոյզներ) ունի. և ծաղիկ ունի սկզբուն, և հոտն անուշ, և ինքն երեք » ցեղ է. և լաւն այն է որ սկուն գունովն լինի և թափա և չոր... Ասեր է » գրոցս շինողն, թէ Համաման երկու ցեղ է, Ամաւոռն և Ամաւան, և պարսկերէն Մահուդէ կ'ասեն. մէկ ցեղն յայտնի է (այն որ) ի Երրազ Մահուլու կ'ասեն. և մէկ ցեղ-մն այլ կայ որ ի Փարսիեօջան (Չարխոտ) կու նմանի. և փայտն » դեղին է՝ որ ի կարմրութիւն կու քլտէ, և տերեւն կանաչ է և մանար, և » ծաղիկն դեղին և փոքր է, և երկայնութիւնն մէկ վաճիպ է, և լաւն... ի « Հայոց գայ և անուշահոտ լինի. և լսեցաք որ հայերէն Աղվենարօտ ասեն »: Ուրիշ բժշկարանք լաւ տեսակն յԱնտիոք և ի Մէրտին կ'ըլլայ կ'ըսեն. մէկն ալ, « Համամայ՝ կարմիր հունտ է, ի Մարտին լինի. աղէկն առողջ պիտի »: Այս Համամայն ըստ Եւրոպէացւոց է Ամիրտովաթայ Ամամոռն կոչածն. *L. Amomum*, *Φ. Amome*. *Ռ. Amomъ*, և յատկապէս *Am. Racemosum* (Շատողկոյզ) ըսուածն. բայց ոմանք կարծեն Արիքովի վարդ ըսուածն, ոմանք տարբեր բոյս մի: — Շէհրիմանեանն Աղաւնիճ կ'անուանէ առաջին տեսակը (*Verbena*), և ¹¹₁₂ ոտնաչափ ցօղուն է կ'ըսէ, անկիւնաւոր, երկայնկեկ ձազարածեւ կապոյտ կամ ճերմակ ծաղկներով, արմատն մատնաչափ հաստ մանրիկ թելերով:

Աղաւնոյ ծիրտն ալ արաբերէն խոշորո էր-Համաւ կոչուի, կամ Խարվ ալ-Համաւ, ըստ Ամիրտ. որ յիշէ ուրիշ անունն ալ ճարզի ճանդոռմ կամ ճոռզ ճօնտօւ, ըստ Պէյթարայ. բայց ասոր բացատրածն հողային նիւթ մ'է և ոչ բոյս. սակայն փռանկ թարգմանիչն բուսեղէն համարի, *Lichens* ըսուածներուն ցեղէն:

Բժշկական բառգիրք Այսպէս մ'ալ գրէ *Lichen*, ֆարսի քոս կամ ժանգ:

Այսչափ ըսածներէս ետեւ՝ ինձ կ'երեւի Աղաւնարօտ անունը սեփականելի Ռայ ըլ-Համամի. Աղաւնոյ ծիրտն՝ ինչ որ դիմացը յիշեցինք քիչ մի վերը. իսկ Համամայն կոչելի է կամ նոյնպէս, կամ Դիւնի Մոռչի, ինչպէս տեղ մի կոչուած է: — Տես և ի կարգին վՀամամա:

52. Աղբաղբուկ.


Տես ինչ որ ըսինք Աղբաղբուկ բառին համար. Բժշկարանք ոմանք այս անունն կու տան Արարաց Ֆու բառին, որ է ըստ բուսաբանից՝ Valeriana, կամ լաւ եւս Valerianella. Ռ. ВУЛНЬЯНЬ. Ամիրտովաթ այսպէս կու ստորագրէ զՖու. « Որ » է վայրի Սնկուռ. մանր տակեր է անուշահոտ. և լաւն այն է որ նոր լինի և » հոտն սուր լինի... Իպն (Պէյթար) ասէ, թէ ինքն վայրի Սնկուռն է, և տերեւն » նման է Քարաւիտին տերեւին, և այլ մեծ. և որձան կանգուն մի է և այլ եր. » կան է, և կոկ լինի, և գոյնն նման է Տիրի? և այն որ խիստ հաստ լինի և » հաստութիւնն քան ի ճկըթի մի չափ է, և տակն անուշահոտ է », և այլն: Գրեթէ ճիշտ Թարգմանութիւն է Պէյթարի, բայց սա կու յիշէ ալ՝ որ այս բոյսս գտուի յատկապէս Պոնտոսի ծովեզերքը:

53. Աղբերաց արիւն.

Այս անուամբ երկու տարբեր նիւթ կ'իմացուի հայերէն. մէկն ծաղիկ, մէկ այլն հիւթ կամ խէժ մի, որոյ համար գրէ Ամիրտ. Թէ արարերէն « Տաւ ըլ-ախպայ » կոչեն (Տիւմ էլ-ախուռէյն)... ինքն կարմիր է և ի Բումանին (Եմէն) կղզին լինի, » անտի կու բերեն. և երկու ցեղ է. լաւն կարմիր է և յստակ»: Ուրիշ տեղ ալ կ'ըսէ. « Արմիր է գէտ Չնճուֆրն, և յաշից դեղերն մտնու»: — Ուրիշ Բժշկարան և Գալիենոսի բառք գրեն. « Դարաշխէն (Տարշիզան կամ Տարշիւան) և Խոնսիաւաշան՝ Աղբրաց արուն ». յետին բառն պարսկերէն է, **سياه سوسان** Խոնս սիւաշան, և նշանակէ վիշապի արիւն, ինչպէս և Լ. Sanguis Draconis, և Փ. Sang-Dracoon. Ռ. Красный шавель. Հասարակաց ծանօթ է այս խէժն կամ հիւթն, որոյ բերողն ալ Արմաւենեաց ցեղին վերաբերեալ եղեզանման ծառ մ'է, Calamus draco. — Ասար բժիշկ կ'աւելցընէ. « Աղբեր-արուն՝ լաղինն Սանկիս տրաքօնիս և Փառքեկիտու ». ետքինս Parthenium ուրիշ տեսակ բոյս է: — Ստ. Ռաշքեան ալ կ'ըսէ. « Փուշ է սպիտակ, մեծ իբրեւ զփոքր ծառ, զծաղիկ վարդի » (նման ունի). որոյ արմատն ազնիւ իւզ լինի. Aspalathus, (ի) բառս Գալիենոսի ». այսպէս նշանակեն և Բժշկարանք ոմանք վերոյիշեալ Տարշիւան և Խոնս սիւաշան բառից դիմաց: — Տես Դարշիւան:

Մեր հայկական Աղբերաց արիւնն հիմայ ալ ծանօթ՝ ծաղիկ մ'է. և ծաղկանց Թագաւոր կամ Թագուհի կըրնանք ըսել, գոնէ մեր երկրին մէջ. մեզի պանծալի, օտարաց նախանձելի, և ամենուն զմայլելի իր գունոյն համար, որ ամեն տեսող և քննող եւրոպացի զարմացուցեր է: Անունն ալ գեղեցիկ, այլ և խորհրդաւոր, և դեռ վիճի տակ, արդեօք եղբարց արիւն նշանակէ, հին և մոռացեալ աւանդու թեամբ մի, ըստ որում և Թուրքք անուանեն Գարտաշ գանդ և յաւելուածով Երեսի գարտաշ գանդ, ինչպէս և Սալաձորեցին կ'ըսէ հայերէն՝ Եօրն աղբոր արիւն, թէ Աղբիւրներու արիւն. որովհետեւ ընդհանրապէս լերանց քարքարոտ կողմեր՝ աղբիւրներու եզերք կու գտուի: Անգղիացի ազնուական (1) մի՛ որ իբրեւ 50 տարի առաջ բարձր Հայոց կողմերը շրջեր և ծաղկաբաղ ըրեր էր, « Դեռ դրախտին թե

1. Lord Curzon Robert.



Աղբերաց արիան.

» Թեւ Յնացորդ (ննոյչ՝ ըստ մերոց բանասիրաց) Յնան, կ'ըսէ, ինչուան մեր օրե-
» ռուս ալ, գեղեցկագոյն ծաղկանց կերպարանաց վրայ, զոր հաւաքեցի այն լեռ-
» նաբլրոյն վրայ՝ ուսկից երեք գետք կու բղխեն և հեռաւոր ծովեր կ'երթան: Թէ-
» պէտ անոնց մէկն ուսումնական լատին անուն ալ ունի, բայց և ոչ մէկ բոյս
» մի անոր նման երեւցեր է յԵւրոպայ, և որչափ ալ հնարք ու ջանք ըլլայ՝ ան-
» կարելի է հօն հասցընել: Սյա ամենագեղեցիկ բերքն է Խօթն եղբարց արիւնն
» (Աղբերաց արիւնն), զոր Եւրոպացիք կոչեր են Ravanea, կամ Phelippea (1)
» coccoina, որ մակարուսակ (parasite) մ'է ի վերայ օշինդրի: Ասկէ գեղեցիկ ծաղիկ
» կարելի չէ երեւակայել. ձեւով նման է շուշանի (լաւ եւս վարդի) 9 կամ 10 մաս-
» նաչափ երկայն ցողունով, որ հանդերձ ծաղկամբն և ամեն մասամբք՝ բոսո-
» ռափայլ Թաւիի կու նմանի. կու գտնուի Կարնոյ քաղաքի լեռանց կողմերը, շատ
» հեղ Արեւելեան Morina կոչուածին հետ, որ նշանաւոր տեսակ մի է Ալքանի.
» ծաղկըններն ցողունին վերէն ի վար. տեսքով և հոտով նման Ճանկիկի» (Che-
» vrefeuille): — Մեր Հարց մէկն ալ ստորագրէ Աղբերաց արիւնը, « Սմենեւին
» անտերեւ, ցողունն խողովակաձեւ երկայն կլոր և մութ կտրմիր. ի գագաթանն
» է բաժակն որ է ծաղիկն, ամենակենդանի գեղեցիկ կարմիր. բաժակն ի հինգ
» տերեւ բաժանեալ, և ի միջին երկու սեւաւ տերեւք՝ լեզուաձեւք փակեալք (կը-
» պած) կարմիր տերեւոցն. նոյնպէս և երկու ծիրք, որոց ծայրն կայ ծաղիկ
» մանր դեղին գունով (սերմնական մասունքն). զբաժակն պատէ մաշկ երկայն
» բարակ տերեւանման. արմատն նմանի փղբ ինչ Չընծաղկի, բայց սա ունի և
» մազմզուկս»: Մէկ բառով կարմիր գոյնը նշանակէ Սալաձորեցին. « Դըրմիզ
» Եօթնաղբօր արիւն»: — Յեւրոպացոց նախ Գուռնըֆոր տեսեր և ստորագրեր է,
անոր համար իր անուամբ ալ կոչուի Anoplantus Tournefortii (2), առաջին բառն
յունարենէ կու նշանակէ բուսոյն մերկ կամ լերկ ըլլալը, տերեւ չունենալով, այլ
Թեփի պէս բաներ: Իրմէ մէկ ու կէս դար վերջը՝ Պուհսէ գերմանացին (Buhse)
նոյն կողմերը ուր Գուռնըֆոր տեսեր էր Աղբերաց արիւնը (Ճաղրուի կամ Ճահ-
կոյ գետահովտին) որոնելով՝ գտաւ այն « հազուադիւտ գարմանայի բոյսը », ինչ-
պէս կ'ըսէ, (hochst seltene merkwürdige Pflanze). և կու նկարագրէ վերոյգրեցիոց
պէս, և մէկ ծաղիկ միայն ունենալն, մէջին երկու սեւ մաշկներն ալ կու նմանե-
ցընէ ծաղկին վրայ նստած միջատներու: — Մաղկին Թերթերն կամ փերթերն
հինգ ըսուեցան, Թէ և + Սրուանձտեան՝ (Մանանայ, 441) երեք կ'ըսէ, ուրիշ-
ներն աւելի շատ և բարդ կ'ըսեն. բուցէ զանազան տեսակք ալ ըլլան: Ինչուան
հիմայ մեզի ծանօթ գտնուած տեղուանքն են Կարին, Բասսն, Ալաչկերտ, Տարօն
(Մուշ), Վարազ լեռ, Լոսի, Կողբ (Սուրմայի), Վարաժնունիք (Տարաշիչակ): —
Աղբերաց արիւնն կու վերաբերի ըստ բուսաբանից Orobanchæe կոչուած ցեղի
ծաղկանց, որ են մակարուսակք, այսինքն ուրիշ մեծ բուսոց կամ ծառոց կոճղերու
վրայ բուսողք: — Որչափ որ անսովոր կամ դժար մտնենալու է Աղբերաց արեան
տեղին, այնքան կերպով մի կ'աւելնայ իր յարգն կամ գեղեցկութիւնն, որ եթէ
օտարազգեաց աչքը յափշտակեց, մերազգեաց աչքն ու միտքն ալ որսացեր է-
ինչպէս այլեւայլ անգամ յիշուած մեր ուսմիկ սիրարան բանաստեղծից երգերն
վկայեն.

1. Գտնուեալ Phelipeaux de Pontchartin ժողովուրդի Ժի Լուզիկի:
2. Կ'ոչուի եւս ուրիշ գիտնականի մի անուամբ, Anoplantus Bibersteinii.

չի գտներ նոյնանիչ անուն օտար: — Բժշկութեան կամ դեղոյ մէջ Աղբերաց ա-
րեան գործածուիլը յիշէ մեր մեծագոյն բժշկապետն Մխիթար Հերացի:

54. Աղեկատիկ.

Նոր ատեն հնարուած կամ յարմարցուցած բառ կ'երեւի, Լ. Spondylium կամ
Branca ursina կոչուած բուսոյ համար, որ Փ. կոչուի Berce, կամ Գերմանական
Ականթ, Acanthe d'Allemagne. Ռ. Медвежья лапа. Մեր Ամասիացին ալ Արա-
բացիէն առած նոյն յոյն և լատին բառով յիշէ, քիչ մ'ալ խանգարելով, « Սոս-
» դանտիիոն. ինքն խոտ-մն է, որ տերեւն նման է Չինարին (Սօսի) տերեւին,
» և յերկայնութիւնն մէկ կանգուն լինի. դազաթն նման է Սամիթի դազաթին,
» և սպիտակ ծաղիկ կ'ունենայ, և տակն այլ սպիտակ կու լինի, ի բողկ կու
» նմանի. և ինքն ի բաց տեղեր կու բուսնի »:

55. Աղծապաստ.

Ամիրտուլվաթայ գրքէն է. հայկական թէ օտար, շիտակ թէ ծուծ. ստու-
գութեան կարօտի. իր բացատրածն այս է. « ինքն ծառ-մն է որ ի Տանձենի կու
» նմանի, բայց շատ փշեր ունի, և պտուղն ի Մրտենու պտուղ կու նմանի. և թէ
» իր պտղէն ուտեն՝ օգտէ հին փորացաւութեան և լուծման... և թէ զտակն
» սպեղանի առնես և դնես ի վրայ ճառահաթին՝ օգտէ »:

56. * Աղծեկ.

Լատինարէն Althea բառն է տառադարձեալ, հայերէնն է Տուդո:

57. Աղին.

Գալիենոսի բառից կարգին դրուած է զուգանիչ Կնիդոսի, որ է Cnidium. Փ.
Cusson. — Տես Գոմեակ:

Աղին — տ. Եղին.

58. Աղնկտակ. Աղնտակ. Աղնկտան. Աղնկուտաւ. Աղջիկտակ.
Աղջկուտակ.

Այսպէս գանապան կերպով գրուած, որ կըրնար վերոյգրեալ Աղին բուսոյ տակն
կարծուիլ. բայց բժշկական բառգիրք կ'իմացընեն հասարակօրէն ծանօթ կամ ըն-
տանի, « Տանու Աղնկուտաւ », ըստ Մխ. Հերացոյ, որ Մոյոյն է (L. Malva, Փ.
Mauro), որ ուրիշ շատ ռամկական կամ գաւառական համանիչ անուններ ալ
ունի, և պիտի յիշուին իրենց այբբենական կարգին:

59. Աղուաշքանկ կամ Աղուէշքանկ.

Ոմանք նոյն համարին զսա և զԲանգ, և ոմանք տարբեր: Ծանօթ է բոյսս Լ.
Hyoscyamus անուամբ. Փ. Inequiame. պարսկերէն Պեճկ կ'ըսուի և անկէ ա-

րարացեալ Պհնձ, ինչպէս գրուի Ամիրտ. բառագրոց մէջ, բայց բացատրութիւնն թուրքերէն գրուած է, և միայն բժշկական դեղն և օգուտն, ըստ զանազան բժշկաց՝ յորոց հաւաքեր է Պէյթար. սա Պէնձ անուամբ կու ստորագրէ, բայց կ'իմացնէ ալ՝ որ արարերէն Սիքրան կ'ըսեն. զայս յիշէ և Ամիրտ. «Սիքրան ըլ-յարպի (աւրարի) Պանձն է»:

Իսկ ինքն Պանձ անուամբ յիշէ և գրէ. «Պանձ, որ է Պագր ըլ-»
 «Պանձ (Բանգի հունտ), Պար-»
 «սիկն Պանձ ասէ, որ է Աղ-»
 «փեչրանկն հայերէն բառով. և»
 «ինքն երեք ցեղ է. սպիտակ է,
 » սեւ է և կարմիր է. լաւն այն է՝
 » որ սպիտակ լինի»: — Դար-
 ձեալ իբրեւ տարբեր բոյս՝ գրէ.
 «Պանձ, ինքն խոտ է, և հունտն»
 » ի պտկըններու մէջն է. երկու
 » ազգ է, սպիտակ և սեւ, ա-
 » ղէկն սպիտակ հունտն է»:

Վաստակոց գրոց մէջ յիշուի իբրեւ դեղ՝ Աղչպենկ և Աղչրանկ գրութեամբ (Գլ. ԽԲ. ՅԼ.) զոր օրինակ, «Օձահարի և կորահարի խայթած տեղն՝ օժ... Աղը- բանկի տերեւին ջրովն»: Նոյն ջուրն գործածել խրատէ նաեւ սէզը և նման խոնաւ բոյսերը ցամբեցնելու համար: Ազգայինը և եւրոպացի ճանապարհորդք յիշեն այս բոյսս կարնոյ, Թոր- թուսի, Երրակայ, Բասենոյ, Լոռուայ, Երեւանայ և այլ կողմեր:



Աղուաշրանկ.

60. Աղուէսիկ.

Աղուէս խարեբայ կենդանւոյն անուամբ քանի մի բոյսեր կան՝ իրարմէ տարբեր ցեղերէ. այս առաջին անունն ի լրոյ է, և թուի աղուիսու սիրած խոտ. ստու- դելի է, և նախ աղուիսու խոտակեր ըլլալն: Բայց հին բժիշկք նոյն իսկ Աղուիսու զանազան մասերէն դեղեր հնարած են.

61. Աղուէս-խրտուկ.

Չայս նշանակած է մեր Մշեցի Հ. Պօղ. Մէհէրեան, իբրեւ կէս մարդաչափ ճիւղաւոր խոտեղէն բոյս մի, դեղին գնտաձեւ ծաղկով, ախորժ ուտելի ոչխա- րաց. իբր թէ, երբ ճիւղերն հովէն խլուած քլուին՝ աղուէսը խրտոտոցի ձայնէն կու վախեն: Փափագելի է որ Եւրոպացի դիտնականք տեսնեն և իմացընեն ու- սումնական անունը, կամ այնպիսի անուամբ կըքեն:

չի գտներ նոյնանիչ անուն օտար: — Բժշկութեան կամ դեղոց մէջ Աղբերաց ա-
րեան գործածուիրը յիշէ մեր մեծագոյն բժշկապետն Մխիթար Հերացի:

54. Աղեկատիկ.

Նոր ատեն հնարուած կամ յարմարցուցած բառ կ'երեւի, Լ. Sphondylium կամ
Branca ursina կոչուած բուսոյ համար, որ Փ. կոչուի Berce, կամ Գերմանական
Ականթ, Acanthe d'Allemagne. Ռ. Медвежья лапа. Մեր Ամասիացին ալ Արա-
բացիէն առած նոյն յոյն և լատին բառով յիշէ, քիչ մ'ալ խանգարելով, « Սո-
» դանտիլիոն. ինքն խոտ-մն է, որ տերեւն նման է Չինարին (Սօսի) տերեւին,
» և յերկայնութիւնն մէկ կանգուն լինի. դազաթն նման է Սամիթի գազաթին,
» և սպիտակ ծաղիկ կ'ունենայ, և տակն այլ սպիտակ կու լինի, ի բողկ կու
» նմանի. և ինքն ի բաց տեղեր կու բուսնի »:

55. Աղճապաստ.

Ամիրտողլաթայ գորբէն է. հայկական թէ օտար, շիտակ թէ ծուած. ստու-
գութեան կարօտի. իր բացատրածն այս է. « ինքն ծառ-մն է որ ի Տանձենի կու
» նմանի, բայց շատ փշեր ունի, և պտուղն ի Մրտենու պտուղ կու նմանի. և թէ
» իր պտղէն ուտեն՝ օգտէ հին փորացաւութեան և լուծման... և թէ զտակն
» սպեղանի առնես և դնես ի վրայ ճառահաթին՝ օգտէ »:

56. * Աղճեկ.

Լատինարէն Althea բառն է տառադարձեալ, հայերէնն է Տոշոտ:

57. Աղին.

Գալիենոսի բառից կարգին դրուած է զուգանիչ Կնիդոսի, որ է Cnidium. Փ.
Cusson. — Տես Գոննակ:

Աղին — տ. Եղին.

58. Աղճկտակ. Աղճտակ. Աղճկտան. Աղճկուտաս. Աղջիկտակ.
Աղջկուտակ.

Այսպէս զանազան կերպով դրուած, որ կըրնար վերոյգրեալ Աղին բուսոյ տակն
կարծուիլ. բայց բժշկական բառգիրք կ'իմացընեն հասարակօրէն ծանօթ կամ ըն-
տանի, « Տանու Աղճկուտաս », ըստ Մխ. Հերացւոյ, որ Մոլոյն է (L. Malva, Փ.
Mauve), որ ուրիշ շատ ուսմկական կամ զաւառական համանիչ անուններ ալ
ունի, և պիտի յիշուին իրենց այբբենական կարգին:

59. Աղուաշքանկ կամ Աղուէշքանկ.

Ոմանք նոյն համարին զսա և զԲանգ, և ոմանք տարբեր: Ծանօթ է բոյսս Լ.
Hyoscyamus անուամբ. Փ. Jusquiame. պարսկերէն Պիկն կ'ըսուի և անկէ ա-

րաբացեալ Պէնն, ինչպէս գրուի Ամիրտ. բառագրոց մէջ, բայց բացատրութիւնն թուրքերէն գրուած է, և միայն բժշկական դեղն և օգուտն, ըստ զանազան բժշկաց՝ յորոց հաւաքեր է Պէյթար. սա Պէնն անուամբ կու ստորագրէ, բայց կ'իմացընէ ալ՝ որ արարերէն Սիքրան կ'ըսեն. զայս յիշէ և Ամիրտ. « Սիքրան ըլ-յարպի (արարի) Պաննն է »:

Իսկ ինքն Պանն անուամբ յիշէ և գրէ. « Պանն, որ է Պագր ըլ- » Պանն (Բանգի հունտ), Պար- » սիկն Պանն ասէ, որ է Աղ- » վիշտանկն հայերէն բառով. և » ինքն երեք ցեղ է. սպիտակ է, » սեւ է և կարմիր է. լաւն այն է՝ » որ սպիտակ լինի »: — Գար- » ձեալ իբրեւ տարբեր բոյս՝ գրէ. « Պանն, ինքն խոտ է, և հունտն » ի պտկըներու մէջն է. երկու » ազգ է, սպիտակ և սեւ, ա- » ղէկն սպիտակ հունտն է »:

Վաստակոց գրոց մէջ յիշուի իբրեւ գեղ՝ Աղշպենկ և Աղշտանկ գրութեամբ (Գլ. ԽԲ. ՅԼ.) զոր օրինակ, « Օձահարի և կորահարի խայթած տեղն՝ օժ... Աղշ- » բանկի տերեւին ջրովն »: Եոյն ջուրն գործածել խրատէ նաեւ սէզը և նման խոնաւ բոյսերը ցամբեցընելու համար: Ազգայինք և եւրոպացի ճանապարհորդք յիշեն այս բոյսս կարնոյ, Թոր- » թումի, Եիրակայ, Բասենոյ, Լօռուայ, Երեւանայ և այլ կողմեր:



Աղուաշրանկ.

60. Աղուէսիկ.

Աղուէս խաբերայ կենդանւոյն անուամբ քանի մի բոյսեր կան՝ իրարմէ տարբեր ցեղերէ. այս առաջինն անունն ի լրոյ է, և թուի աղուիսու սիրած խոտ. ստու- » գելի է, և նախ աղուիսու խոտակեր ըլլալն: Բայց հին բժիշկք նոյն իսկ Աղուիսու զանազան մասերէն դեղեր հնարած են:

61. Աղուէս-խրտուկ.

Չայս նշանակած է մեր Մշեցի Հ. Պօղ. Մէհէրեան, իբրեւ կէս մարդաչափ ճիւղաւոր խոտեղէն բոյս մի, գեղին գնտաձեւ ծաղկով, ախորժ ուտելի ոչխա- » րաց. իբր թէ, երբ ճիւղերն հովէն խլուած քլուին՝ աղուէսք խըրտոցի ձայնէն կու վախեն: Փափագելի է որ Եւրոպացի գիտնականք տեսնեն և իմացընեն ու- » սումնական անունը, կամ այնպիսի անուամբ կըքեն:

62. Աղուէսու Խաղող.

Արարերէնն ալ նոյն նշանակութեամբ « Անայ ըլ-Սայրայ. նոյնպէս Փ. Raisin de Renard. իսկ Լ. Paris quatrifolia (Պարիս չորստերեւնի), ըստ որում և Փ. Herbe à Paris. այս անունս Փռանկաց մեծ քաղաքը չի նշանակեր, այլ անտոյդ է պատճառն. ըստ ոմանց տերեւներուն հաւասար ըլլալէն (Pares, Pair). զոր Ստեփանոս Ռոջեան Խաչատրեանի անուանէ: — Մեր բժշկարանք զանազանն կամ շիոթեն. մէկ մի ըսելով, « Բանայ ըլ-Սայրայ. ինքն խոտ է և սեւ խաղողի ունի. » և կանաչ տերեւ. և աղէկն ի լրային տեղն լինի. և բնութիւնն հովէ », և այն: մէկ մ'ալ մի և նոյն համարին ընդ Շնխաղողայ. իրաւ նմանք են, այլ ետքինս յատկապէս կոչի Լ. Solanum nigrum, մենք ալ յիշենք ի կարգ Շ բառից:

63. Աղուէսու-Չուր.

Արարերէնն ալ նոյնանիչ է, Խոռասր ըլ-Սայրայ, կամ Խոսսաւ ել-Թաշկայ. Լ. Satyrion կամ Satyrium. Ռ. Кукышник. իսկ արմատն արտաքցի բառով Salep կոչուի, որպէս և յարեւելս ալ ծանօթ է այս Սաշկայ անուամբ. զոր համառօտիւ բացատրէ բժշկարան մի. « Խոտի տակ է, Սաշկայ կ'ասեն, կու եփեն ի չէրպէթի » հետն և կու խմեն »: Աւելի երկայն գրէ Ամիրս. « Իր տերեւն ի Քուուաթի » տերեւ կու նմանի. երկու տակ ունի, մէկն իլի է և մէկն դարտակ, և ինքն չորս » ցեղ է. և լաւն այն է որ մէջն լինի իլի, և ինքն տաք և գէճ է... Եւ ցեղ-մն » այլ կայ որ տերեւն կարմիր կու լինի. ով որ զինքն ի տեղացն հանէ՝ նա յայն » ձեռքն կ'առնուի. և իր դեղն այն է՝ որ ալվի զայն խոտն առնուն և այրեն, և » եղով և մումով արորեն և ձեռացն ի վերայ դնեն. օգտէ և լացընէ: Եւ ասեր է » զորոց ժողովողն, թէ լաւն այն է՝ որ իրմէն սերման հոտ գայ... Եւ լաւն » այն է որ ծանտր լինի և ամուր և գէր. և շատ զօրութիւն առնէ »: Նորագոյն բժիշկ մի գրէ. « Աղուեսուձուրն է խոտ մի. տակն զերդ երկու հաւկիթ է. ծա- » դիկն կապուտ է, և կայ որ յղտի է (պէլլամի?) և տերեւն փրասայի նման է. » և ոմանք այս խոտիս Եղրայրսպան ասեր են. և կու լինայ որ հաւկըթի մէկն գէր » և պարարտ և մէկն նուազ. և ծաղիկն մարդոյ կերպ է »: Ամիրտովաթ մեզի կարեւոր և աւելի զուտ հայկական անուն մ'ալ կու տայ այս արմատիս, կոտրկոյ տակ, որով բոյնն ալ գուցէ ըսուէր կոտրուչ կամ կոտրուկ: Նոյնպէս կարեւոր է լատին անունն ալ յիշելով ըսածն, Պոզգիտան բուսոյ կարգին, ըստ Պէյթարայ. « Յառնկն Սադիրիօն ասէ. ինքն դեղ-մն է Հնդի. հաստ և բարակ լինի. լաւն այն » է որ սպիտակ լինի... Մինհաճին տէրն ասցել է, թէ ինքն փայտ է Հնտի. և » այս ալ չէ ստոյգ. և ստոյգն այն է որ ինքն յեղիպոսս լինի և ի յայլ տեղ չի » լինի. և լաւն այն է որ սպիտակ լինի, և ի վերայ գիր և խազ և ճանապարհ » երեւնայ, և հաստ լինի և նոր լինի »: — Այս ըսածները առած է մասամբ ի Պէյթարայ, որոյ վրայ տարակուսեր են գիտնականք. ոմանք համարին կոչոռնիկ (Orobis) մի, և ոմանք պարզապէս Սադիրիոնի տեսակ մի է կ'ըսեն, որով յարգ կ'ունեն. նայ մեր Ամասիացոյն վկայութիւնն, և այնչափ աւելի՛ որչափ որ Պէյթար չէ յիշած զայս: Երկու կարծիքն ալ կու միաբանին, որովհետեւ այդ Պուգիտանն ալ

համացեղ է կտրկոյ տակին և կոշուի հայերէն Շան-ձոռք: — Պէյթար՝ ճիֆտ-էֆ, թիտ անուամբ բոյս մի կու ստորագրէ, որ պարսկերէն՝ խեղեի (Վոխտակ) նշանակէ կ'ըսէ, այսինքն մէկտեղ ծնած: Եւրոպացիք կու տարակուսին ասոր ինչ ըլլալուն, բայց Պէյթար և ուրիշ արարացի մի կ'ըսեն Աղուէսձուոց մէկ տեսակն է. իսկ մեր Ամասիացին՝ ճ տառի շալակին մէջ միայն անունը յիշելով ճիֆտ-աֆրիտ կամ « ճիֆտաֆրանդ, որ է կեղեւով Նուշն », կ'ըսէ. Պէյթար ալ պտուղը Նուշի կամ Սոճիի պտղոյ կու նմանցընէ: — Այս ամեն ըտուածներէն օտար՝ մեր մէկ բժշկարան « Աժուէց Հանդաղուզն՝ որ Երեքտերեւէն է, (Trifolium, նոյնպէս կ'ըսէ), « որ է Աղուէսձուքն »: Չեմ գիտեր ինչ նմանութեամբ նոյն կու գտնէ զաստիք. որովհետեւ ըստ բուսարանից Երեքտերեւեանն կամ Առուոյտն և Աղուէսձուքն տարբեր ցեղէ են և աննման:

64. Աղուէսու Սուսեր.

Պալիենոսի բառից մէջ Լեփոսի դիմաց դրած է. բայց յունարէն Έριον Բամբակ նշանակէ. իսկ Լ. Eryum Ոսպ է: Ուրիշ օրինակ այս հայերէնի դիմաց դնէ Ղանքոտին. Թերեւս գրուելու ըլլար Ղեռնդոտոն, Leontodon, որ Ասիւծու ժանիք ըսել է, և կըրնայ ժանիքն որոյ ալ նմանիլ. կամ Leonotis, Ասիւծու ականջ:

65. Աղուիճակ.

Նոյն է ընդ Խորասանիկ՝ ըստ Հին բժշկարանի. սա ալ նոյն համարուի Լ. Staphysaria, Փ. Staphysaigre, որ ի յոյնէն առնուած են, յորում Սրաֆիտ արքիտ՝ ըսել է Լեռան խաղող, անոր համար ոմանք ի մերոց Խաղողախտոտ կոչեր են, բայց չեմ հանդիպած ի գիրք. Արարացին ալ նոյնպէս կ'ըսէ Զեպիպ իշ-ձեպիչ. այլ և Զեպիպ պիթի, որ է զլիտյ հունտ կամ շամիչ զլիտյ, այսինքն ոլլի դեղ ըլլալուն համար. այսպէս կոշուի և առ մերայինս ռամկօրէն, նոյնպէս և Փ. Herbe aux poux. իսկ Պարսիկք կ'անուանեն Միշֆեզեձ կամ Մէշֆիզաձ. այս ետքի անունով գրէ Ամիրտովաթ. « Մամիզան՝ որ է Չապիպի ըլ-ձամաչ. և հատկներ է գէտ » Չամիչ. յամիի (ամանի) մեջ կու բուսնի, և լաւն այն է որ սեւ լինի. տաք է » և չոր է Ք աստիճան, այրող է և ուտող է. և թէ ծամեն՝ յակապէն շատ » պաղղամ քաշէ, և զօլիլն սպանանէ. և ակապիին ցաւուն օգտէ », և այլն: Դարձեալ գրէ առանձին. « Մամիզան. ինքն ծառի պտուղ է, և սեւ և տափակ, » և շատ (բանի) օգտէ. Հոռուքս լինի իր ծառն, աղէկն տաք է և չոր », և այլն: Նոյն բաները գրոց մէկ ընտիր օրինակի մէջ Թուրքարէն ալ գրուած է*:

66. Աղուիսակ.

Գուցէ վերինն ըլլայ (Աղուիճակ). բժշկարան մի կ'ըսէ. « Թէ ձեռն ուսել լինի » զօրոս (չօտակի) և զՀոռում Աղուիսակն ընդ յիրար ծեծէ և ի վերայ դիր »: Ուրիշ տեղ ալ կ'իմացընէ Աղուիսակի ինչ ըլլալը. « Հոռում Աղուիսակ՝ որ է 0-

* Մամիզան, որ է Չապիպ ուլ-ձեպիլ. հապան ուլզեմի (ուլիւմ) տուր. էէր տէեհուլէ. բին (տասիկները) լարլար եւ զորզարայ էթուէլը՝ չը պալղամ չքարայ, և այլն:

» շինարն »: Հռոմ ըսելով ալ կ'իմացընէ որ տեսակ մի է սա, իսկ բուն Աղուի-
ճակն ո՛ր տեղացի է:

67. Աղուորիկ.

Տես Ալեւորիկ կամ Հալուորիկ. նոյն են:

68. * Աղսու.

« Ինքն փուշ-մն է, որ իր տերեւն նման է Շալքար ըլ-Պայզին (Պատավարտ) տե-
» րեւին. և այն գէտ վարդ-մն է, և ի վերայ գէտ բամպակ իրք-մն կու լինայ. և
» ի լերունքն շատ կու լինայ. և ի Անդալիս (Անտալուսիա Սպանիոյ) այսոր Պա-
» րաս ըլ-Պանն կու ասեն », (Վայրենի կամ լերան Բանգ): Պէյթար այս ետքի
բառս կարծեմ չունի, եթէ ոչ նոյն համարուի Պերսեֆանն կոչածն, որ է L. Ma-
rsum, և Թուի Կատուախոտ: Բայց Ամիրտովաթայ Աղսուսն ալ երկրայելի է, ո-
րովհետեւ անկէ վերջ գրէ ուրիշ նման բառ մ'ալ Աղսուն, և կ'ըսէ. « Ինքն Մաշն
է, և իրենն Պատավարտ այլ կ'ասեն ». որով վերոյիշելոյն հետ կու միանայ:
Ոմանք Վայրի կանգառ կամ Կառ համարին զԱղսուս, որ շատ հեռի չէ Պատա-
վարտէն:

69. Աղպաշար.

Վարդան Թովնանեան լեհահայոց եպիսկոպոսն զսա և զկաղաքոյս նոյն հա-
մարի. իսկ ետքինս կու Թուի սոխարմատ կամ կոճղէզաւոր բոյս, Bulbus, և յատ-
կապէս Bulbus silvestris.

70. Աղպատ.

Թերեւս աամփօրէն, բայց զուտ հայկականն կ'երեւի շատ անուանց մէջ, որ այս
հասարակ բուսոյ տրուած է ի մեր լեզուիս, որոցմէ՝ օտար լեզուաց ալ նոյնանիշ
կամ Թարգմանութիւն է Հինգտերեւեանն, Պ. Փաննանկոչոյ L. Pentaphyllum.
Փ. Quinteseuille, նաև Թ. « Պեչպարնագ կ'ասէ », ըստ բժշկարանի միոյ. դար-
ձեալ յատուկ հայերէն՝ Մատնիկ, Գօտեաց ճանկ կամ Գոթեց ճանկ, Սիրա-
լախուր կամ Սիւրալախուր. որոնք ի կարգի այբուբենինց պիտի յիշուին սոսկ
անուամբ. իսկ այս տեղ գրենք ինչ որ Ամիրտովաթ կամ ուրիշ բժշկարանք նշա-
նակեն Պանտաֆիլիոս անուան տակ. « Ինքն Հինգտերեւէն խոտ է. աղէկն ի ջրի
» տեղերն է. բնութիւնն հով է », և այլն: Ուրիշ բժշկարան մ'ալ գրէ, « Ինքն խոտ
» է և տերեւն հինգ, և կանաչ. աղէկն՝ նորն է »: Գարձեալ ուրիշ մ'ալ. « Հինգ
» տերեւ ունի. իր երկարութիւնը թիզ մի է. ցեղ-մն է. լաւն այն է որ հաստ
» լինի: Իպն (Պէյթար). Թուրքն այսոր Պեչպարնախ ասէ, և Հայն Հինգմատուն.
» երկու ճիւղ ունի և երկու ճիւղ կու բուսնի. և հինգ հինգ տերեւ ունի. տե-
» րեւն նման է Աննուխ տերեւին »: Պէյթար չի յիշեր Թուրքը, այլ կ'ըսէ, Թէ
ոմանք ալ Պեչպարնագը կ'ըսեն, որ Հինգմատնեայ նշանակէ: — Ոմանք ի գիտ-
նականաց՝ հին հեղինակաց Հինգտերեւեան կոչածը՝ կարծեն Թէ Potentilla ըսուած
բուսոց մէկ տեսակն ըլլայ:

71. Աղսաղտուկ.

Ծանօթ խոտեղէն է, թէպէտ ոչ այս անուամբն. *L. Salsola*. *Φ. Soude*. Հաւարակօրէն ծովեզերեայ երկիրներ գտուելով՝ անոր աղէն կ'առնու, և կ'ընծայէ կայ կամ կայաքար ըսուած նիւթը, (*Soude*, Սոտա). ասոր համար Պարսկահայք Շորան կ'ըսեն, որ աղի ջրեր նշանակէ (շօս): — Ի Հայս՝ նշանակած են տեսողք՝ Երասխայ հովտին մէջ ալ, Ճորոխի հովտի մէջ, կողքայ կողմերը, և այլն, զանազան տեսակներ. *ինչպէս*, *Sals. Kali*, որ սովորական կալ տուողն է. *S. Glauca* (կապոյտ), *S. Erioides* *M. B.* իսկ Երասխահովտին յատուկ տեսակ մի՝ անոր անուամբ կոչած է Քոխ՝ *Sal. Araxena*. — Եւհրիմանեանն կարծէ թէ Ի Փղքը Հայս կ'անուանեն այս բոյսս՝ Թանթունիկ, բայց սա տարբեր ցեղի բոյս է:

72. Աղտոր.

Ծանօթ յարեւելս և յարեւմուտս, Սոսնախ անուամբ, *ինչպէս* կ'անուանեն և *Փ. Sumac*, իսկ *L. Rhus Coriaria*, կաշեգործաց ասով ներկելուն համար: Ամիրտ. կ'ըսէ. « Պարսկերէն թարրի ասեն և Հ. Աղտոր ասեն. *ինքն* խրկու ցեղակու » լինի, խորասանի և Շամի (*Ասորոց*, *Գամասկոսի* կողմերն). և ըսնւնայն է որ » նոր լինի և խիստ կարմիր », և այլն: Շատ տեսակ օգուտները յիշելէն ետեւ՝ կ'աւելցընէ անուններ ալ. « Ասցել է Պատ(էհին) թէ այսոր թարմ կ'ասեն, և » Տոսնոսով կ'ասեն և Յարպ կու ասեն... Իր տերեւն հանց կապող է՝ որպէս » Ակակիայ. և զիր տերեւն թէ եփեն զմտ » բուսն լուանան՝ զմաղն սեւ առնէ »:.. *Գարձեալ առանձին գրէ. « Ինքն կարմիր » պտուղ է, և մէջն կուտ լինի և թթու է, » և կըտով ուտեն. և զկեղեւն ի բան տա » նին. աղէկն՝ նորն և խիստ կարմիրն է... » Օգտէ այնց որ կծայ և արիւն ունենայ, » յորժամ եփես և զլուրն ի յաջն օծես »: — Խորենացոյ աշխարհագրութիւնն յիշէ զԱղտոր ի Տայս:*



Աձալ.

73. Աղքատի ժախ.

Արտերու մէջ կու բուսնի, երկու թիզ բարձրութեամբ, ցօղունն մեծ կլորկեկ, շուրջն ալ փոքրեր, որոց վերեւն են տերեւներն գագաձեւ: Բրամկական անունն յայտնէ որ գեղացոց ուտելի է, ձմեռուան պահժու պաշար:

74. ԱՅալ.

Բժշկարան մի այսպէս կ'անուանէ զՍենա Արաբաց, Թուրքարէն Սիսեմաքի կամ Սեյիմաքի կոչուածն, Մէքքէէն գալուն համար. Եւրոպացիք ալ նոյնպէս կոչեն,

Լ. Cassia Senna. ֓. Տճոճ. Ամիրտ. գրէ. « Սինէմարին. Ինքն կանաչ տերեւ-ձէ է »
» Ի Մարու կու գայ, և միրգ այլ ունի. տաք ու չոր է... Ասցել է գրոցս շինողն,
» Թէ Սինիմարուն լաւն այն է՝ որ տերեւն կանանչ լինի և նոր լինի, և Ի Մըր-
» տենու տերեւ կու նմանի... Եւ ասցել է Դնս (Գիողգենիս), Թէ Ի խորու տեղաց
» երեք խըլտ (հիւթ ?) հանէ և զանձն ուժովցընէ », և այլն:

75. Աճաս կամ Աճազ.

« Որ է Դամոնն, որ է Սադրն », ըստ Ամիրտուլաթայ: Տես այս ետքի անուամբ:

76. Աճանկէր.

Բանջարեղէն է, ժանօթ Ի Հայս, բայց ոչ ինձ:

77. Աճուր կամ Աճուռ կամ Հաճուր.

Շէմամ կոչուած գեղեցիկ Չմերուկն է: Ամիրտ. գրէ Տատանպուտ (Տեադու-
պույա Քէչլանաճ) բառին ներքեւ. « Թուրքերէն լանդուճ (կամ Իեղանդուճ) կու
» ասեն. Ի մեր աշխարհն Աճուր կու ասեն:.. Ինքն փոքրկիկ գէտ Սեխկներ է.
» և անուշահոտ է:.. Այսոր Շամցիքն Շամամա ասեն. և ինքն գէտ Շամամկներ
» կատուկ (խատուտիկ) է և անուշահոտ է. և Թէ ուտեն՝ ուշ մարսէ, և զըղեղն
» տաքցընէ »: — Լ. Cucumis Shammam. — Սիմէան կամրկապցի՝ ըստ Հայոց
վարունգ է, կ'ըսէ:

78. Ամանկոտրիկ.

Կարմրածաղիկ մանր խտտ մի: Յիշեն հեղինակք Մանանայի և Պանդըխտին:

79. Ամաւ. Ամաւենի.

Ըստ Ստեփ. Ռոչքեան, Պլինիոսի յիշած Quisquiliam ծառն է, որ է Որդևարեր
Կաղնիկ, Լ. Quercus Coccifera. ֓. Chêne au Kermès. ցածկեկ տեսակ մի կաղ-
նեաց, որոյ վրայ կու կենայ որդն, ինչպէս քանի մի ուրիշ տեսակաց վրայ ալ, Հա-
յաստանի սեփական և պատուական բերոց մէկն, Որդև Կաղնիոյ, ուսկից Որդևև
Կաղնիք ներկն:

80. Ամբասիկ.

Տեսակ մէկահոտ Տանձի. Լ. Pera moscata. Ի գրոց է Թէ Ի րոյ, չգիտեմ:

81. Ամիճ.

Այս բառս պատմիչ մեր Եղիշէ գործածեր է (Ը.) իբրև քնքուշ կերակուր մի
« Փափկասուն Տիկնայց Հայոց աշխարհին . . . որ Ի մանկութենէ իւրեանց սնեալ

» էին ուղղովք գուարակաց և Ամնովք երէնոց ». հաւանօրէն նշանակէ Ամիկ, այժու ձագ. իսկ Բուզանդ կ'ըսէ (Ե. է). թէ մի տարաբաղդ և աշաղուրկ Արշակ Թազաօրին առջեւ յետ կերակրոց՝ դրին « Միրգ, Խնձոր, Վարունգ և Ամիճ ». և կարծել տայ թէ պտուղ մ'ըլլայ, գուցէ նոյն իսկ Ամիանն, եթէ կարենայ սա ախորժելի ըլլալ քմաց:

82. Ամիշ.

Յիշուի ի Խոտուջուր. բայց արդեօք նոյն է ընդ Ամիճ՝ թէ այլ բոյս կամ պըտուղ, ստուգելի է:

83. Ամիր-իշխան կամ Ամիրաշխամ.

Ըստ Վանեցւոց. Ար. Համահիմ 𐎧𐎡𐎴, ինչպէս վկայէ բժշկարան մի. « Համ հայիմ, որ է Թուրքերէն՝ Ամիրիշխանն. ինքն ի պարտիզներոյ մէջ կու բուսնի »: Ամիրտ. գրէ. « Մինհանին տէրն ասէ, թէ Պօսթան-աֆրօզն (Պ. ۱۳۳۱ افسان), » և Սահիպ Ճամէհն ասէ, թէ Մուսի պին-Յէմրանէն լսեցաք՝ թէ ինքն Հապախի-Պօսթանին է, և ի Շամ՝ Հապախի-Նապտի կ'ասեն. և իր գունն խիստ կանաչ է, » և ժաղիկն սպիտակ է, և հունտն նման է Հապախին հընտին... Եւ Թուրքն այս » խոտիս Ամիրիշխան կ'ասէ »: Ուրիշ բժշկարան կ'ըսէ. « Անուշահոտ ժաղիկ ունի դեղին, և մանր սերմն. յայդիքն լինի »: — Համահիմ և Հապախ՝ Ռեհան նշանակեն, ըստ Պէյթարայ և ըստ Թարգմանին. Ամիրտովաթի այլեւայլ վկայութիւնք զանազանն զԱմիրիշխանն և զՌեհան, բայց հարկ է որ մերձաւոր ըլլան. գիտնականք ալ կու տարբերին կարծեօք. Պարսից Պօսթան-էֆրօզը՝ համարին ոմանք զԱնթա-աամն, Amarantha, ոմանք ալ զԱնեմոնն կամ Պուտ, Anemone. Պանդուխտ Վանցիին հեղինակն՝ ինչպէս Ամանկոտրուկին համար՝ այսպէս ալ Ամիրիշխանին՝ խոտ մը կ'ըսէ միայն: — Վերդիշեայ Հապախ կամ լաւ եւս Հապագ արուբացի բառին հետը Նապտի յիշածն ալ՝ ըստ Պէյթարայ է իբր Նարաթացւոց Ռեհան. տեղ կամ երկիր կայ՝ որ Գաղձ նշանակէ, և հասարակօրէն անուշահոտ խոտեր. նոյն մեր Ամիրտ. ալ այդոր համար գրէ առանձին. « Հապաղի Նապտի՝ որ է Համահիմն, և ան՝ » Ֆուրանաշի-Պօսթանին է, որ է Անոշիս » . ահա տարբեր՝ բայց մերձաւոր բոյս մ'ալ:

84. * Ամլան.

Ա. Իսիէճ. Լ. Փ. Emblic. « Որ է Պ. Ամիշա. ինքն սեւ միրգ-մն է, ինքն Հայի- » լաներուն ցեղէն է. լաւն այն է որ սեւ լինի և պինդ լինի »: Ուրիշ բժշկարան մ'ալ կ'ըսէ. « Ինքն զէտ կիտոր (զղթոր) է, և չիր կ'անեն (կու չորցընեն), զկուտն » կու հանեն: Ի Հնդկաց գայ »: — Թէ Պէյթար և թէ Ամիրտ. այս պտղոյն՝ որ ինքնին դառնահամ է, շատ օգուտները և կերպ կերպ դեղ ըլլալը՝ գրեն:

85. * Ամվան.

Վերնոյն (Ամվան) պէս օտար լեզուի բառ կ'երբեի, բայց մեր Ամասիացին չի յիշեր զայն, այլ միայն ինչ ցեղէ ըլլալը և կու զրկէ ի Զանապ ոչ-Թայլ, որ է Զիուագի. մենք ալ նոյնպէս ընենք:

86. * Ամրուսիա.

Յունական բառն է Ամբրոսիա, ուստի և *L. Ambrosia, Ф. Ambroisie, Ռ. Амброзия*. Պէյթար ալ Ր տառը թողեր է, ուսկից կ'առնու Ամիրտ. և կու գրէ. « Ինքն խոտ-մն է որ շատ տերեւ ունի, և երեք երեք թիզ է յերկայնութիւն ճղերուն, » և տերեւն նման է Սազապի տերեւին, և հոտն այլ նման է: Եւ թէ սպեղանի » առնես՝ չի թողու որ իջուածք իջնու ի մարդն »:

87. * Այաւզնուէ.

Այս օտարալուր կամ խորթ բառն ասորերէն է. և յԱտրուց լեզուէ թարգմանեալ Գանիէլ վարդապետի Սաղմոսաց Մեկնութեան մէջ (*ՉԳ Սաղմոսի*) կու յիշուի, և բացատրուի այսպէս. « Աստուած իմ, արա զնա որպէս զՍէնիշ, որպէս » զեղեգն առաջի հողմոյ: Իսկ անիւս այս այն է՝ որ ի գլուխս Սպիտակ փոց » (*Թուի. Oxycantha*) սովոր է բուսանիլ. և յորժամ հասանի օդ՝ փոցն, առ » նուցու Անիւն ի հողմոց, և ոչ տայ դադարումն նմա. այլ և յորժամ նստի » յանկեան ինչ՝ ոչ կարէ զկայ առնուլ, բայց եթէ ոք կալցի զնա: Անիւն որ ի » միջասահման եղեալ է ի մէջ տկար թելոցն սերմանց և փոց, որ կոչի յԱտ- » րիս՝ Այաւզնուէ. և զոր օրինակ ուր անկցի նա՝ փուշս բուսուցանէ, այսպէս » ուր չըջի անիւն՝ որ վարի յայտոցն », և այլն: — Յիշուած փրջոյն կըրնայ յատուկ անունն ըլլալ Սպիտակ-փոռչ՝ մեր լեզուին, ինչպէս *Ф. Epine blanche*, որոյ լատինն է *Oxycantha* ըստ յունարէնի, որ նշանակէ Սրպփոռչ, և հայերէն ալ կայ այս բառս, և յիշուի ի կարգին, Ռ. *Боярышникъ*. — Յիշե՛ք որ այս առնուան մերձաւոր են յունալատին *Aizoon* կոչուած բոյսք, որոց մին է ըստ մեզ *Լուաղեղն*:

88. Այգէպրաս.

Յայտ է անուան բարդութենէն որ Պրասի կամ Քուռաթի տեսակ մ'է, և ըստ հին բժշկարանին նոյն իսկ Քուռաթն. և է Գալիենոսի յունականին թարգմանութիւնն, ինչպէս և լատինն՝ *Ampeloprason*.

89. Այգոյ գայլ. — Տես Գայլխոտ:

Այգոյ ծաղիկ. — Տես Գինէծաղիկ:

90. Այգու մատնի.

Այս ալ վերի գրուածին հետ նոյն կարծուի, բայց տես ի կարգին Մատիծաղիկ:

91. Այծակն.

Ստեփ. Ռոջեան կ'ըսէ. « Խոտ՝ որ է վայրի Ուշաֆ, (*Թ. Եուլաֆ, վարսակ*) *Aegilops* ». Այս *Լ. ուսումնական* բառս իրաւ Այծ-ակն (*Այծու աչք*) թարգմանի

ի յունարէնէ, բայց բուսաբանք ոչ վարօակ՝ այլ տեսակ մի կաղնի ծառ կ'իմանան, խոզկաղնի:

Այծառ. — Տես Ածար:

92. Այծու մօրուք կամ Այծամօրուք:

Գրոց լեզուով կ'ըսուի Քօշմօրուք. զոր տեսնես ի կարգին: Նոյնն կ'ըսուի և Նոխազի մօրուք, որ նոյն բան նշանակէ, որձ այժ:

93. Այծպտուկ:

Ածպտուկ. — Խալոդի տեսակ մի է. Թ. Խարուն պարուաղի կամ Քէլի մեկուսի:

94. Այծտոտիկ:

Պոնտոսի կողմերը տեղացոց ծանօթ և արմատն ուտելի բոյս մի է:

95. Անալուծ:

Խորենացւոյ անուանեալ Աշխարհագրութիւնն Հայոց Գուգարաց աշխարհին բերոց մէջ առաջին կու դնէ զայս, յետոյ քանի մ'այլ ծառ և պտուղ. բայց այս բառս ուրիշ գրոց մէջ ընձուղտ (Giraffe) կենդանին նշանակելով՝ զնոյն կարծեցին ոմանք. սակայն այդ կենդանին ոչ ի Հայս և ոչ անոր սահմանակցաց մէջ գտուի. ապա բոյս մի պէտք է ըլլայ աշխարհագրին այս տեղ յիշածը՝ ընդ Սերկեսի, Տօսախի, և այլն, կամ թէ անունն այլալատ է:

96. Անանուխ. Անուխ. Անանխի:

Ծանօթ հոտաւէտ տերեւով բոյս, որ Ար. Նանա շաշ կոչուելով, այս անուանտակ գրէ Ամիրտ. « Ինքն յածվոց և վայրի լինի. լաւն ածվոցն է... Ատէ Պտ. » (Պատէհին) թէ... Ուժովն և աղէկն այն է որ ածվոց լինի և թաժայ լինի և ի » շուքն չորնայ. տաքցնող է և կապող է... Եւ իր փոխանն վայրի Գաղձն է »: Այս բոյսս անոնցմէ մէկն է՝ զոր Քրիստոս Տէր մեր՝ յանդիմանելով զՓարիսեցիս՝ յիշեցուց, թէ « Տասանորդէք զԱնանուխ և զՍամիթ և զՉաման », (Մատթ. ԻԳ. 33), իբրեւ շնչին կամ հասարակ բաներ, ուսկից ազահուծիամբ կ'ուզէին անոնք շահիլ՝ տասանորդ առնելով: Պէյթար և Ամիրտ. Անանխոյ շատ օգուտները յիշեն. Վաստակոց գիրքն կարճ կ'ըսէ (Գլ. ՄԿԴ). « Իւր օգուտն է՝ որ կերակրոց » կարօտ բերէ, և զործն կտրէ... և թէ ի վերայ խոցոյ դնես՝ յախտեան այլ » շլաշողանտր բնաւ »: — Լ. Mentha, Փ. Menthe, Ռ. Мята.

97. Հոռոմ Աննուխ:

Տարբեր ցեղով և ձեւով, նման հոտով Անանխոյ, ըստ Լ. Balsamina Suaveolens. Փ. Menthe de Coq կամ Grand Baume, Թ. Մարսուեան կամ Մէրսուեանի:

98. Սարի Անուխ.

Այսինքն Լեռնցի կամ վայրենի, յիշի յԱխտարաց գիրս, և է անուշտ Լ. *Mentha Silvestris*. Փ. *Menthe sauvage* կոչուածն:

99. * Անապ.

Ար. անուն է Պատինմանի, ըստ Ստ. Շէհրիմանեան:

Անասրոսան. — Տես Ասպուզան:

100. Անգուժատ.

Լ. *Galbanum*, Հ. ալ Քաղդան կոչուած խէժ կամ հիւթն է, որ մեր գրոց մէջ ուրիշ շատ անուններ ալ ունի, ինչպէս Մաղթ, Կապեղեղ, և այլն: — Տես Անճիտան:

101. Անգուտան.

Հին բժշկարանն յիշէ Համմոց հետ, բայց կըրնայ ըլլալ նոյն Անճիտանն:

102 * Անդարին.

Անունն յայտնէ օտար լեզու, բայց մենք չգտնալով զայն, յիշենք այս տեղ Ա. միրտոլվաթի աւանդածը. « Ի լեառն կու բունի, խոտ-մն է, Ըռեագեանա Ա)ա. միթ) կու նմանի, և հոտն սուր է »:

103. * Անեմոն.

Յունարէն բառ, հով նշանակէ, ուսկից բոյսն ալ թարգմանաբար մեր լեզուի մէջ ալ Հողմածաղիկ կոչուած: Տես Հարսնուկ և Պոստ: Յիշուի ի բառս Գալիենոսի. բայց այս բառից մէկ օրինակն ալ Աղբղղղի ունդ (հունտ) կ'ըսէ ասոր համար: (Տ. Թիւ 48. 52):

104. Անթառամ.

Բառիս վանկից տեղափոխութեամբ յետուստ յառաջ Յունաց Անթասնր անունն կ'ըլլայ, և զնոյն նշանակէ. միայն թէ նոյն իսկ բառական նշանակութիւնն (չթոռմող կամ մըշտողալար) զանազան երկիր զանազան բուսոց կու տրուի. թէ և սովորաբար այսպէս կոչուածն է Լ. *Helichrysum*. այսպէս և մեր ազգայինք՝ այլ եւ այլ բոյս ճանչնան նոյն անուամբ: Մանանայի հեղինակն կ'ըսէ, վայրի ծաղիկ՝ որ բունի անջրգի վայրեր, խիստ անուշահոտ, նարընջի դեղին գունով. բայց ուրիշներ՝ կարմիր գունով կ'ըսեն, (ինչպէս Մշակ, ԺԸ, 88): Մեր բժշկապետն (Ամիրո.) Անարիթիւն կ'անուանէ, փոխանակ Ամարանթանի, և կու գրէ. « Խոտ-մն է որ բարակ տե.



Անթառամ.

» բնւ ունի, որ ի Բացվենեկի տերեւ կու նմանի, և գազաթն բոլոր կու լի.
» նայ, և գոյնն սսկի գոյն կու նմանի, և գլուխն ի ծաթրու գլուխ կու նմանի.
» և թէ հալլի (զգեստուց) մէջ զնեո՝ ցեցն զհալալն չուտէ, փորձած է »:

Սալաձորեցին ալ կ'երգէ.

« Մէկ անթառամ ծաղիկ մի կայ, ծաղիկ ծաղկեր ծաղկներուն.
Ամառ ձրմեռ չի շորանար, հինըն պայծառ նրման նորուն »:

105. Իշու Անթառամ.

Աւելի հասարակ կամ տգեղ տեսակ մի գուշակուի: Արչէ Մշակ, (ԺԸ, 88):

106. Անթեմ.

Լ. Anthemis, յատկապէս ի յունարէնն ծաղիկ նշանակէ, ամէն տեղ գտուած հասարակ ծաղիկ մ'ըլլալուն համար, և մեր լեզուով ալ շատ անուններ ունի, ինչպէս Գետնախնձոր, Խնձորխոտ, Երբիցուկ (Փափաթիա), և այլն, որք իրենց կարգին յիշուին: Գալիենոսի բարեց ընտիր օրինակ մ'ալ կ'անուանէ զԱնթեմիս՝ հայերէն՝ կոյ ծաղիկ: — Բայց Հայք Անթեմ անուամբ ուրիշ ցեղ րոյս մ'ալ ճանչցեր են. վասն զի մեկնիշ վարդապետն Սողոմոնի Ուրախ լեր երիտասարդ բանին՝ կ'ըսէ. « Անթեմի՝ բանջար է երեւելի, և բազմապատիկ ունի շուրջ զինքեամբ զտերեւոցն լուսանման բողբոջն »:

107. Անիար.

Լուսաւորիչ իր վարդապետութեան մէջ առ Հայս՝ յիշած է այս ծաղիկս, ըստ Ագաթանգեղեայ, իբրեւ շատ գեղեցիկ, վարդի և Յամուկի հետ:

108. Անիծամ ծաղիկ.

Երեսնակն է, ասմկօրէն այսպէս կոչուած:

109. Անիսոն.

Լ. Anisum. Փ. Anis, Ռ. Анисъ. Լաւ կ'ըսէ Ամիրա. թէ « Յայտնի է յամենայն լեզուաւ. Պարսիկն Պանիս, ինքն ասէ. ինքն հունա է անուշա, հոտ, և Թ. Հագարբարա ասէ: Ասոս ըն թէ ինքն Հոռմցի Ըագիա, նին հունան է... Ասէ Պոս... ինքն երկու ցեղ է. այն որ Հոռմցին է՝ ի Նամիսոն (Նանախաւ, Լ. Ammi) կու նմանի. և այն որ Հոռմցի չէ՝ ի Ղըրամանէ (Cardamine, Զրկոտ տեմի տեսակ) կու նմանի. և լաւն այն է որ Հոռմցի լինի »:



Անիսոն.

Ասկիտան. — Տես Անձիտան:

110. Անձիտանի ծառ.

Վաստակոց գիրքն յիշէ (Գլ. ԺԳ). « Յորժամ տեսանես զկաղնին և զԱնձիտանի » ծառն՝ որ շատ պտուղ առնեն, անձրեւի նշան է »: Յունարէն բնագիրն այս ծառս գրած է Πιρος, որ է Լ. Pice, և ըստ մեզ Սղոցի:

111. Անձխտտ.

Լ. Fumaria. Փ. Fumeterre, Ռ. Дымяка. — Հայերէն կ'ըսուի և Շահրատակ, բայց պարսկերենէ առած է, որ կու նշանակէ Թազաւորական բանջար, և նոյն անունն պէսպէս գրուի Շարասեճ, Շետասեճ, Սարասեճ, և այլն. Ար. անունն ալ նոյնանիչ ունի, զոր մերայինք թերեւս լաւագոյն թարգմանած են կրանալաց բագաւոր. միայն՝ թէ ասոնք և թէ օտարք՝ կու շփոթեն զԱնձխտտ ընդ Նուարտակի, զի շատ մերձաւոր և նման են. այսպէս բժշկարանն, « Սաթաթեճ՝ որ է Անձխտտն ». « Անձխտտ՝ որ է Շահթառանն ». յետոյ, « Շէտարած՝ որ Թ. Զերքիշէ կամ Սարքուշա, կու ասէ, և Հայն Նուարտակ ». կ'աւելցընէ Ամիրտ. թէ, « Եւ ի » Եզընկան Արքուշա կ'ասեն. և ինքն տակի կեղեւ է, հաստ և բարակ այլ կու » լինի, և լաւն այն որ ի Հնդկաց գայ: Ասեր է Պտ. թէ Ազապ կու ասեն, և » ի Պարապրի լեզուաւ Լիպիոն (Lepidium). և ինքն շատ ցեղ է. և լաւն այն է » որ Իպն. ասեր է, Հնդին է կամ Պահրին է »: ասոր համար Շահրատեճ Հիւնոի կ'ըսուի — Անձխտտի շատ տեսակաց մէջ Corydalis alpina կոչուածն նշանաւ կուած է ի Մաղկոցածորն Անի մայրաքաղաքի:

112. Անձրուծ կամ Անզրուտ.

Լ. Sarcocolla. Փ. Sarcocollier. Ռ. Эфиопское смолистое дерево. թէ և խէժ կամ հիւթ մի կ'իմացուի այս անուամբ՝ բայց ՚ի բուսականաց առաջ կու գայ. անունն առնուած է ի պարսկերենէ (Անզէրուզ), ուր գտուի ասոր լաւն: Ամիրտ. գրէ, « Ինքն յայտնի խէժ-մն է. երկու ցեղ է, սպիտակ և կարմիր. լաւն այն է » որ սպիտակ լինի... Ասէ Պատէհին, թէ ինքն փշի մի խէժ է՝ որ Աշուպարա » ասեն. ինքն կարմիր և սպիտակ այլ կու լինի, երկուսն ալ ի մի փուշ, և յոր » ժամ արեգական տարութիւն յինքն շատ հասնի՝ հին և կարմիր լինի. և այս » ցեղիս Անզրուտի վաղարգու ասեն, և Բանձատա ասեն. և պարսկերէն կազրու » ասեն: Եւ լեառն մի կայ որ կօհի Շապան կահվարտանան կ'ասեն, անկից կու » ելանէ. լաւն այն է որ սպիտակ լինի և ի դեղնութիւն քշտէ և լեզի լինի »: — Բժշկարան մի նոր անուն մ'այլ տայ Անձրութի՝ Հայերէն, Գունիծատակ. բայց թուի թէ տարրեր բոյս մի ըլլայ, որովհետեւ տակ կ'ըսէ. ինչ որ ըլլայ նշանելու է Գունիծ անունը:

113. Անդարա. — Տես Ապուզան:

114. Անդուն.

« Ար է վարդին Մնթինն (կամ մթինն), որ է Գիշունտ փաթգ. հոտով վարդն չէ »: Այսպէս գրուած է յԱնգիտի-անպէտն:

115. * Անճարա կամ Անճորա.

Լաւ եւս Անճիրտ. — Եղճի հունդն է. Պ. Անճորտ ö, ځج : Տեա Եղիճ.

116. Անճարակ.

« Որ է Մարգանկօղն », ըստ բժշկարանի, որ և պէսպէս այլայլութեամբ գրուի, Մարգանձօղ, Մարձանկօղ, Մարգանկոռ, Մարտակոռ, Մարտադոռ, և այլն. ամէնն ալ են Պ. Մերգեկեկոռ, مرگوجو, որ նշանակէ Մկան ականջ, ինչպէս և « Արապն Ազան ըլ-ֆար կու ասէ », բայց զանազանէ այլ և այլ տեսակ. յորոց յիշելով մեր բժշկապետն ալ, մէկն Ազան ըլ-ֆար Պօտտանի՝ կու գրէ, զոր « Թուրքն » Սըլան դուրդի ասէ. որ է Մկան ականջն, որ է Անագալիան (Anagallis), որ է Սա... » մոսիս որ է Սանսիմոնն (Σάμψυχον), և այլն. դեռ ուրիշ վեց եօթն անուններ ալ աւելցնելով կ'ըսէ, « Այս ամենայն անուանքն Մարճանկօղին անուանքն է... » և ոմանք այլ ասեն թէ Մարգանկօղ չէ՝ Խոռզանի է », (Lavanda Spica, Փ. Lavande mâle. Ռ. Лавенда). Այս խօսքերս յայտնեն, որ հարկ է բուսոց զանազան տեսակներ ըլլալ, թէ և նոյն ցեղէ. և այսպէս բուսաբանք Մարգանկօղ կամ մեր Անճարակ՝ կու ճանչնան ի Majorana, Փ. Marjolaine. Անագալիսը՝ Փ. Mouron, Ն. Տգրիախոտ. Մկնականջն ալ՝ նոյն իմաստով և հոռմի բառով Միոսոտիս, Myosotis, մենք ալ նոյնպէս նշանակեմք ի կարգի Մ, և Տ տառից, այն տեղ նշանակելով Ամիրտողլաթայ ըսածները, իսկ այս տեղ յատուկ առաջի նին համարը. « Մարգանձօղ. ինքն խոտ է, և մանր տերեւ ունի, սպիտակ գոյն » է. աղէկն վայրին է... Ասէ Յեսու բժիշկն (1), թէ բանայ գեր(ա)կնուն կա... » լուածն և զըղեղն », և այլն: — Պէյթար յիշէ որ այս խոտիս լաւն կ'ըլլայ ի Կիպրոս և ի Կիւղիկոն, և թէ Կիւղիկեցիք Ամարալոն կու կոչեն, անոր համար ոմանք ի գիտնոց ալ այս ցեղիս նման բոյսերը զանազանելով՝ կոչեն զսա (Անճարակը) Majorana Amaraeus. Այսոր բոլորակտերեւ կոչուած տեսակն նշանակուած է Սըրգուին, Պաթում, Մանսախ (Կիւմիւլիանէ):

117. Անճիտա. Անճիտան.

Մէկ գրի (ն) յաւելմամբ Ամիրտ. կու զանազանէ երկու բոյս. առաջնոյն համար գրէ « Խոտ է, և իր տակին խէժն է Ոչախն (Ոչակ. Ammoniac). աղէկն » Ննտին է... Ասէ Ֆուլուան (Fulvius), թէ ինքն զթանձր կերակուրն լաթիթ » (բարակ, թեթեւ) առնէ. և ասէ Մասրճուանն (2), թէ սպիտակն և անուշա... » հոտ՝ շկերակուրն աղէկ ուտեցընել տայ »: — Այս խէժս հին ատեն կու գար Եգիպտոսէ և Ալիւրիկիոյ Ամմոնիայ գաւառէն՝ որ յետոյ Կիւրենական կոչեցաւ, անոր համար Եւրոպացիք Ալեմոնիակ կոչեցին, և ի Միջին դարս՝ խանգարմամբ Armoniacum. Հատարակօղէն՝ Նարդէսէ կու հանուէր. իսկ հիմայ ուրիշ բոյսէ կու դատուի (Dorema Ammoniacum). — Բայց դարձեալ գրէ Ամիրտ. « Անճիտա, որ է Հալիլ ըլ-քալպն (Շանխոտ) և Հայն Հօտիսայ ասէ », որով շիթթէ կամ զուգէ միւս տեսակին հետ որ է,

1. Այս է Յատէ, բարեկամ կամ բժիշկն Գրիգորի Մազեաբարոսի :
 2. Հրեաց բժիշկ, Ը դարուս սկիզբները, Masserdjouih.

118. Անճիտան.

Այս անուամբ ալ դարձեալ երկու տարբեր ցեղի բոյս կարծեցընեն մեր բժշկա-
 րանք, մէկն թուրքարէն խօրոզ կեօզիս (Աքլորի աչք) անուանելով. իսկ միւսը և
 գլխաւորն՝ շատ նշանաւոր, իր խէժին համար, որ մեր լեզուաւ այլեւայլ անուններ
 ունի, Անգոշժատ, Մաղթ, Կապնդեղ, Ոսպան, Քաղդան (Galbanum), Չարնոտ, Բարկ
 ժատ կամ Բարգատ. Հլթիս, և օտարներէ ալ առած և յիշուած թ. Ղասնիլ,
 Մախրոս, և այլն, զորս յիշենք իրենց կարգին, եթէ կարենանք ալ տարբերու-
 թիւն մի գտնել նիւթոց մէջ: Մեզի աւելի կարեւորն էր այս Անճիտանի ընդհա-
 նուր անուան իսկը ճանչնալ (1), կամ անոր համանիչ ըսուածներուն նոյնութիւնը
 կամ տարբերութիւնը. վասն զի ի բժշկարանս մեր՝ խէժին նման խժարերն ալ
 այլեւայլ անուամբք իրրեւ նոյն նշանակուի. և չիոթի. այսինքն են, բնիկ և եկա-
 մուտ, Մեղրածոժ, Հօտիսոյ, Հլթիս, Շանշօնիք, Շանխոտ, Խորտակ ժորդիկ, Ֆա-
 րապիոն, Սասալիոն. ասոնք ալ նշանակենք իրենց անուան կարգին. բայց յիշենք
 այլ որ Եւրոպացիք եւս տարակուսին և չեն միաբանիր Յունաց և Արտաքաց գրած
 անունները զուգելու կամ զանագանելու (2). զոր եթէ մենք ալ չմէք կըրնար
 բոլորովին պարզել, գոնէ հաւանօրէն՝ անոնց նմանելով և քիչ մի զատելով՝ այս-
 պէս զուգեմք. Ա. վերայիշեալ Օչակն, Ammoniac. Բ. Անճիտան-Silphium. Գ. Ան-
 ճիտան Ռումի (Հոռոմոց), Seseli: Դ. Անճիտանի տակ—Մախրոս: Ե. Մեղ-
 րածոժ—Ֆարաօնոն—Marrubium. զոր տես ի կարգի Մ տառի:

Ամիրտովլած ընդհանուր անուամբ զԱնճիտան զուգէ Սեսելիայ, Բ. Տի:ժու,
 և Սայսալիոս կոչէ ըստ Արաբաց, որոյ « թուրքն Ղասնու ծառ կ'ասէ. և ինքն եր-
 » կու ցեղ է. և Պ. Անկիտան ասեն, և ինքն Հլթիսին ծառն է, և Մախրոսն
 » է, և Հլթիսն իր խէժն է, և իր տերեւն սպիտակ և սեւ է, և լաւն այն է որ
 » սպիտակ լինի և անուշահոտ. և այն որ տերեւն սեւ է՝ մեթինն է, և ինքն
 » Անճիտանին սամին (խէժ) է. և այն Անճիտանն մեթին կու լինի. և այն որ
 » Անճիտանի տայիպն է՝ անոր Հլթիսի տայիպ կ'ասեն, և Անճիտանի Քալիս կ'
 » սեն. և այն որ Անճիտանի Խորտակն է՝ Ոչքոչիսար կ'ասեն անոր տակին. և
 » այն որ Անճիտանի Ռումին է՝ Սայսալիոս կ'ասեն. և հունդն՝ Քալիսն է: Իպն
 » (Պէյթար) ասէ, թէ Անճիտանն Ուշթուրխարն է, և կարմիր պտուղն է. և
 » Ղասնին իր խէժն է. և ինքն սեւ այլ կու լինի և սպիտակ այլ կու լինի », և այլն:
 Այս Սէսելի Անճիտանի Libanotis կոչուած տեսակը տեսած են տեղաբնիկք
 'ի Կիւմկիւմ, Մշյ կողմերը:

» Քալիսի Ռումի, որ է Անճիտանի Ըսոն. ինքն ի բարձր լերունքն կու բուսնի
 » և ի ծառերուն ի մէջն, և Սամթի պէս է և Աթլիմէլիքի պէս կակուղ, և հոտն
 » աղէկ կու լինի, և հունտն ի Ըագիան կու նմանի... Հունտն և տակն տաքըը-
 » նող է, և զկերակուրն մարսէ:... Եւ ոմանք ասեն թէ ինքս ի Սայսալիոսին ցե-

1. Ինչպէս օժԱՅԷՂ պարսկերէն վարդ Պրաս բանջարը նշանակէ:
 2. Եսա ըլլայ այս տեղ Պէյթարի Թարգմանչին (Leclerc) այս խնդրոյս վրայը ըսածին սկիզբը
 և վերջը. « L'histoire du Silphium (Անճուտան) est une des plus épineuses et des plus
 controversées de la matière médicale... En somme, l'histoire des Silphium et de
 l'Andjoudan présente encore des lacunes à remplir.

» զերուն է:.. Աբէ Պտ. (Պատէհին) թէ ինքն Անճիտանի ըռուսին է, և Հռոմն
 » վաշղիտիզոննէ? (Tordylium) կ'առէ լաւն այն է սր զեղին լինի և մեծ, և տե-
 » բնն այլ ի Անճիտան նման է, և ուժն ի Քամոնի կու նմանի... Թիատուզ
 » (Tiadocus) բժիշկն ասէ, թէ Քաշիմ' ածւոցն է », այսինքն յ'ածուս, արտերու
 մէջ կու գտուի: — Այս Քաշիմի Ռուսի ըսուած Անճիտանը Եւրոպացիք Ligusticum,
 Փ. Ligustique կոչեն, ըստ Գիոսկորիտոսի, ի Լիգուրիա (Ճենովայի կողմերը) շատ
 գտուելուն համար, և Հովանեկածեւ բուսոց ցեղէն է, ինչպէս Աեանլին ալ: Այս
 յոյն անունով ալ առանձինն գրէ Ամիրտ. « Սասաթոս. ինքն Օշախին ծասն է, և
 » պտուղն է Սասալիոսն. աղէկն ի Լնդկաց գայ »:

Իսկ Անճիտանի տակ կ'անուանէ զՄախրուս, (Մահրութ, ماخر) ըստ Պէյթա-
 րայ, « և լաւն այն է, կ'ըսէ, որ սպիտակ լինի և թեթեւ լինի »: Ուրիշ տեղ
 նայնպէս Անճիտանի տակ կոչէ վերոյիշեալ Ռաշուրխար Իշչիտարդազ, (اشترغاز)
 պարսիկ բառը, որ է Բզտափուշ, և յիշուի ի կարգին:

119. * Անճիրիտամ.

« Ինքն թուզ կու նմանի, բոլոր և կարմիր. և ինքն Հանդալն է (տես զայս). և ի
 » մէջն որպէս կէտեր ունի, և ինքն ծառի մի միրգն է. ի Լնդկաց կու գայ »: — Ամիրտ:

* Անճորա. — Տես Անճարա.

120. Անճորան.

Ոսպան տերեւ է, կ'ըսէ բժշկարան մի:

121. * Անճուհ.

Ըստ Ամիրտ. է Յօտ (տես զայս), Հալուէի տեսակ մի. իսկ Պէյթար յիշէ Ան-
 ճուք, և ըստ ոմանց Անճարուկն է, կ'ըսէ:

122. * Անճուպար.

« Ինքն խոտ մ'է, որ ի գետեզերքն կու լինի և ի Մրտենուն տակերն կու բուսնի,
 » և տերեւն նման է Առվուտին տերեւին, և ճղերն այլ ի Առվուտին ճղերն կու
 » նմանի, և այլ հաստկեկ. և գոյնն կարմիր, և ծաղիկն այլ կարմրածեա է... Այ-
 » սոր չարապն.. զհին թղբացաութիւնն շատ ուժովցընէ և օգտէ. և ասեր են,
 » թէ Մեք երեքամսուն թղբացաութեան՝ այսով դեղ արաք, շատ օգտութիւն
 » գտաք:... Ասէ Պատէհին, թէ ինքն հընդին Շատախ կ'ասուի, և Շաշախ այլ
 » կու ասեն. և Ինճուպարն ի պատուական դեղերուն է. և ի տակն և ի քա-
 » մուքան՝ որպէս Թրթի Նուրն է, խիտա կարմիր. և այն որ սպիտակ է՝ չէ աղէկ »:
 Թարգմանիչն Պէյթարայ՝ անծանօթ բոյս մի գտնէ զայս, թէ և ուրիշ արաբացի
 հեղինակ մի ըսած ըլլայ՝ թէ Ճանկիկն է, Chevreuille. — Պ. انجاب.

123. Անճուուկ.

Մանթ բանջար ուտելի, որոյ ուտելի ընտիր անունն է Փրիթեմ, և այն տեղ

յիշենք ինչ որ Ամիրս. կ'աւանդէ արարացի անուան տակ. Լ. Portulaca. ֆ. Pourpier. Վաստակոց գիրքն առաջին անուամբն յիշէ իրրեւ դեղ: Բժկարան մի՝ « Անմեռուկ՝ Փրփրեմին հունտն է, կ'ըսէ, և այլ անն Ղըրքայ », (նոյն Փրփրեմն), ոմանք ալ վայրի Փրփրեմն է կ'ըսեն:

124. Անտախ.

Արմ. կամարկապցի կոչէ, Թ. Տեղի տիրէնի, որ է Ալքան փշեղէնն (1) (տ. Թ/ւ 46):

125.* Անտուզ.

Թ. ինտուզ. կամ էնտուզ, 3, 3 ΔΙ հայերէն կղմուխ. տես զայս:

126. Աշարայ.

Այսպէս կ'անուանեն զաւառականք նորարոյս խոտերը:

Ի Թէ ոչ ամենու՝ զոնէ սակաւոց միայն ծանօթ կարծեմ այս անձ, որոյ՝ առ ծամո՝ փոքր է շատ ծանօթարար ըլլալ իր զրոց ճակատադիրն, որ է. « Գեղքս որ կոչի Հեփթաբան արաբեալ է յիմաստուն բժշկապետացն. »

Գըրեալ եղև ի նըաստէ
Փրկչին ծառայ Սեփեկ,
Ակնայ գեղչէն կամերկապէ.
Արուեսաքն իւր Ս—ֆ է.

Եւ նորն անուն Գրիգորի է:
Ընթերցողն ողորմիս ասցէ,
Մեկը Հայր մերիւ. Ամէն:

Ես իմ կենաց մէջն ինչ որ լսեր իմ փորձեր կամ, Թէ մեզի որ պատահեր է կամ այլոց, աւմէնն ի յայս զբոնս զբեցի, առ ի յիմոյ յիշատակի ճամբ. Որ է յիշատակն արդարոցն օրու նութեամբ եղիցի. եղիցի. Ամէն: Որ է զբեցաւ տեսարկս ի Թուականին Հայոց ՌՄԼԳ (1788), յունկարի մէկ. ի մայրաքաղաքն Ըստամպուլ. ի շնչին նօտար Եւրոպայի վաստակաւորացն եղև զծաղրեցեալն:

Գիրքն նախ Մարդակազմութեան վրայ խօսի. յետոյ առանձին առանձին հիւանդութեանց վրայ. յետոյ բժշկական նիւթոց է բուսոց, և անոնց զօրութեանց սյրբենական կարգաւ. վերջը բառադրք մի նոյն նիւթոց չորս լեզուաւ. Հայ, արաբ, Թուրք, պարսիկ:

Ինչպէս իր զրոց ճակատը գրած է՝ իրմէ առաջ գրողներուն բժշկարաններէն քաղած է, և տեղ տեղ անոնց յիշած բժշկիչները կու յիշէ. բայց ինչպէս ինքն նոր է՝ նոր անգլոյնի և օտար բժշկիչներ կամ փորձողներ ալ կու յիշէ. ինչպէս Եւրոպայի Տեր Սեփեկ, Եւրոպայի Ժամուր օղի տիրացու Բօհաննէս, Մ'նաս շոտան, Գոտլոս, Սէփեկ ֆեյրե Ֆրանսացի, կիւլոտանցի Խօնայ Հոտոտայ զեղապաճաւ, որոց խանութն էր « յՆստամպուլ պէզէստանին ֆինկոցն գուռն », և յիշուի սա տեսակ մի սպիղանույ (մէլլէմ) ճամբ, որ « Ֆրէնկիստանու կու զայ. մէկ » խութին 12 փարսոյ կու տան, և նեան ալ փաթենթայ ունի. անունն Պալտոմայ Միհլիթ է. « ամենայն խոցի, կարայի օգուտ է. ինչ Թունուոր կարայ և ցաւ կ'ըլլայ՝ Թող լինայ, կու » բժշկէ. ևս մեղաւորս շատ փորձեր կամ, և շատ մարդու արժեք կամ, և Թարթի արեր կամ. օղ- « աստիճանն տեսեր են » — կամերկապեցույն լեզուին օրինակ մի տալու ճամբ ալ ճամբուրի այս յիշատակս. Թէ է տեղ տեղ աւելի յասակ և իրմէ նին բժշկարանաց ոճով և բանիւ ալ գրէ:

127. * Աշխէն.

Թ. Աղբըն. Փշոտ խոտ մի է. այս անունս լսուի 'ի կողմանս Սեբաստիոյ:

128. Աշմունիսայ ?

Վայրի Ստեպղին, ըստ Սեբաստացւոց:

129. Աշմուշայ.

Հալուորիկն է, կամ տեսակ մի Մուշի. տես զասոնք:

130. Աշնապ.

Ստեփ. Ռոշքեան գրէ ի Բառարանին. « Թուփ է, որ ի սկիզբն ձմեռան պըտ, դաբերէ ». և վկայութիւն բերէ, « ՉԱշնապի պտուղն քաղեաց և արար », և այլն:

131. Աշնապաշար.

Յատուկ բոյս մի որ յաշնան կու ծաղկի, և անանոց կեր կ'ըլլայ:

132. Աշորայ.

Երկու բոյս նշանակուի այս անուամբ. մէկն է ծանօթ Հաձարն, զոր տես. միւսն՝ ըստ ոմանց լոռքիս կամ անոր մէկ տեսակն. Բժշկարան մ'ալ մէկտեղ յիշելով կ'ըսէ. « զԱշորայն և զՍիսեոն և զԲակլայն՝ մեղրով եփէ », և այլն: Ուրիշ տեղ ալ նոյնպէս զոյգ յիշուի « Աշորայ, Կորեակ, Ոսպն »: Յայտնի է որ Հաճարէն հաց ալ յինեն՝ որ այս բառով կ'անուանի Աշորեայ հաց:

133. Աշորախոտ.

Չայս ալ Ռոշքեանն յիշէ, իբրև արտերու մէջ բուսած Աշորայի և Յորինի միջոց, ի բժշկարանէ վկայութիւն բերելով, և Լ. կ'անուանէ Consiligo. բայց այս Լ. անուամբ բուսարանք կ'իմանան Ելեբորոս (Hellebore) և կամ անոր ազգակից բոյս մի, Veratrum, զոր նոյն Ռոշքեան ջոռ կոչէ:

134. Աշորուկ.

Թերեւս վերինն ըլլայ կամ Աշորայն. վասն զի նոր ծանօթարարն կ'ըսէ, Հաճարի նման երկայն խոտ է, ծաղիկ կու բերէ այլ ոչ պտուղ կամ հաստ:

135. Աշտիպ.

Բժկարան մի այսոր գիմաց գրէ Սրոր, և կ'ըսէ, « Ի նքտ հետ մարտին ելանէ » —

Ador, ցորեն նշանակէ առ Հոռոմայեցիս. Գալիենոսի բարոց մէջ ալ համանիշ գրուած է Չաւար: Ասկից ալ յինուի Աշտրպեայ հաց, ինչպէս գրուած է:

136. Աշխրնթին.

Քննելու և գիտնալու արժանի բոյս մի, որովհետեւ յիշէ հին բժշկարանն, այս բանիւ. « վայրի Խողխիչի ունտ Գ դրամ, Աշխրնթին դրամ Ա. աղա, մաղէ »:

137-8. Աքթաղիկ.

Չայս յիշեն տեղացիք և ծանօթք ի Խոտուջուր, Համէն, Արտահան և ասոնց մտերը. և ոմն կ'անուանէ թ. Կիւլիկիւի. և համարուի վայրի վարդ մի, ինչպէս Rosa Eglatea կամ Latea. Թերեւս նոյն է ոմանց Աքթախոտ ըսածն ալ:

139. Աքրափուց.

Թ. Եկօզ օրի, իբր դեղ աչաց. Թէ և ինքն թունաւոր կաթ ունի, կ'ըսուի: Լ. Euphrasia. Փ. Euphrasie. Հասարակ տեսակն այլեւայլ զանազանութիւն ունի, մէկն Tatarica կոչուի, յոմանց ալ Հայկական, Euph. Armenia, 'ի փոքր Հայս նշանակուած, ուր գտուին և Սալխարդեան կոչուածն ալ, Euph. Salisburgensis.

Ապանոս. — Տես Ոպնիաս:

140. Ապիկու խոտ.

Ըստ Ար. Հալիչեր եգ-գիւնձաձ. حشيشة الجرجاج, Ամիրտ. կ'ըսէ « Հալիշ » ըլ-գիւնձաձ, որ Հայք Ապիկու խոտ կ'անեն, և Հռոմն Ռիսիմօն (Ρύσιμον, Փեգեճնա), » և ինքն խոտ-մն է որ աղբերներուն մէջ (կամ խէշն) կու բուսնի և ի ջրեղերք. » և իր տերեւումն ապիկի կու լինան »: Պէյթար փոխանակ յունարէն Ռիսիմօնի՝ կ'ըսէ Էլիքսիճի, որ է Helxine, յոյն Έλκω բառէն, որ քաշուլտիլ ըսել է, այն խոտին գետնի վրայ ճապղեղուն համար. այս պատճառաւ ոմանք ի մեր նորոց կոռնիճ կոչեցին. Դիոսկորիտէս գրէ՝ թէ պատերու վրայ ալ բուսնի, ասոր համար Ստ. Ռոչքեան ալ Սիստրալ թարգմաններ է. լատին անունն ալ որմ (պատ) նշանակէ. Parietaria. Փ. Pariétaire. Եղիմներու ցեղէ է: Տես և Փիթրախ:

141. Ապկաւ.

Սերաստից կողմանց բառահաւաքն յիշէ և զուգէ Ար. Լուպապ ըլ-շահմ, թ. Նիչաստան անուանց:

142. * Ապուզան.

Ամիրտ. Անդարա անուամբ կու ստորագրէ, զոր լաւ եւս գրէ Պէյթար՝ Օնադրա افسانج | ի յոյն անունէ, որ իչու որս կամ կեր նշանակէ. նոյնպէս անուանի և Լ.

Oenothera. **Փ.** Onagre. « Ինքն խոտ-մն է՝ որ փայտ (ծառ) կու նմանի, և տե-
 » բուն նի տերեւի կու նմանի. և ի մէջն տերեւ կայ որ ի Սուսան կու նմա-
 » նի, և ծաղիկն նման է նուան ծաղկին. ի լերունքն կու բուսնի. և բնութիւնն
 » հով է. և տակն փոքր կու բուսնի, և սպիտակ է. և թէ առնուս զայս խոտս և
 » չորացընեա՝ հոտն ի զինու հոտ կու նմանի. և թէ զայս խոտս ջրով եփեն և
 » զջուրն խմցընեն այն զազանացն և անասնոցն՝ որ ի մարդ չէ սովրել, սովրի
 » (ընտանեանայ). և թէ սպեզանի առնես և օծես ի վերայ պեղծ խոցերուն,
 » օգտէ և աղէկ միս բուսցընէ. Ասէ Պտ. թէ այս խոտիս պարսկերէն Անուար
 » կ'ասեն և Ապուզան այլ կ'ասեն »: Իսկ բուսարանք հիմայ անուանեն Epilo-
 » bium angustifolium (նեղտերեւի) կամ hirsutum. Այս անուամբ նշանակեն զիտ-
 նական ճամբորդք՝ որ տեսեր են ի կողմանս Հայոց, յԱրգոսին, Համէն, Խո-
 տալուր, և այլն:

143. * Ապրանն.

Պարսկերէն անուն է, **عبري**, զոր Պէյթար Պորինն կամ Պորենք գրէ. Ա.
 միրտ. կ'ըսէ. « Ինքն Հնդի եղեգին հունտն է. աղէկն ի Հնդկաց զայս.. Ասէ
 » Սահակ բժիշկն (1)՝ թէ օգտէ ամենայն թանձր պալղամին »: Դարձեալ գրէ, թէ
 » Սեւուկ հունդ-մն է, և բողկի հունդ կու նմանի. և մանր այլ կու լինի և խոշոր
 » այլ կու լինի. լաւն այն է որ նոր լինի... Ասէ Պատէհին, թէ Ապրանն և Պար-
 » նախ կու ասեն. և պարսկերէն Պրիմկ Բապիլի կ'ասեն. և ինքն երկու ցեղ է,
 » մեծ և փոքր. լաւն այն է որ փոքր լինայ, և գունն կարմիր կու զարնէ... Ըզ-
 » ճիւնն սպանելու համար՝ իսկի դեղ այսոր նման չկայ... Եւ այլ ասացած է թէ
 » Ղանդին է », Բիւպիլ, **جلايد**. այս անձանօթ բոյս մ'է Եւրոպացոց, բայց
 կարծեն իրենց Mallotus philippensis կոչածը. իսկ մեր Ամիրտ. Ղ գրին շալակին
 մէջ կ'ըսէ, Բաքանաան է, Alkekengi. վերոյգրեալ Պրիմկն ալ համանիչ կամ հո-
 մացեղ է Քաքանաանի:

144. Ապրիմ Բունտով.

Գաւառական անուն **Թ.** Սոռաւ օրու կոչուածին:

145. Ապրիմ ճորով.

Թ. Ապրուայ օրու, իբր թէ սակաւակեր ճգնաւորաց ուտելիք: Երկուքին որպի-
 սութիւնն ալ ստորագրուած չէ. յետինս կըրնայ ըլլալ Արեղախոտ. (Թ. 3):

146. Ապրիմ մուսիմ, կամ Ապրիմ չապրիմ.

Մանր և բարդ կամ բազմաթերթ ծաղիկ, ըստ Մանանայի, (եր. 461). ըստ
 ամանց Երիցուկն է, կամ անոր նման մի:

1. Հրեայ բժիշկ մ'է, Ազու Եաքուլ պէն Սուլեյման եւ-իպրայիլի մակոմուանեալ, Թ զարու
 կիտան ծնած և զար մի ազրած է. շատ բան գրած է, որոց ամանց բնագիրն հիմայ չի ըլ-
 տաիր, այլ լատին թարգմանութիւնն.

147. Ապրիլի?

Անծանօթ ծառ մի է. բժշկարան մի յիշէ:

148. Ապրշումի ծառ.

Վղուանից կամ Նուխի կողմերը յիշուի. (Մեղու, ԻԲ, 83).

149. Ապրուր.

« Ինքն դեղին խոտ—մն է, սեւգուն փշեր ունի, և ի Սնպուլի կերպ է, և անուշ հոտ ունի »: Այսպէս Ամիրտ: Պ. Էպրոշտ Օջրի կոչուի Սնպուլի տեսակ մի:

150. Ապրսամ կամ Ապրսաղ.

Ոչ է բոյս, այլ բուսեղինի հիւթ կամ եղ: Տես Բաշասան:

151. Առաքեալ.

Ասարայ բժշկարանի բառից մէջ գրուած է, « Հափարիօն Առաքեալն է ». բայց այդ Հափարիօն անուն ուստի ծագած է. — չեմ կարծեր որ ըլլայ Ամիրտուվաթայ յիշածն « Հավարի. որ է լուացած ցորենին ալուրն, և բարակ մաղած և եփած »:

152. Առիւծախոտ.

Միայն Վաստակոց գիրքն յիշէ առասպելաբանութեա ՚ր այս խոտս, բնիկ անունը Խատիաչ ըսելով. « Վասն խոտին որ անուանեալ կոչի Խատիալ, զոր ուն մանք Առիւծախոտ անուանեն: Ինքն հետ հընտանացն լինի, և խածարդէ զբոյսն, եւս առաւել զբակլայն. արդ առաջինքն գտեալ են դեղ այն խոտին, և Դիմոկրատէս վկայեալ է զործոյն. և է դեղն այս. տանին կոյս աղիի մի յայն տեղն ուր խոտն լինի. և տան ի ձեռն խօսող մի (աքլոր), որ գայ շուրջ ի վերայ տեղացն՝ ուր խոտն լինի. նա ի նոյն ժամանակ չըքի խոտն և շորանայ, և ներմանքն զերծանին և արքինանան: Եւ ճմարտած է որ զերդ խոտս սասանի ի կուսէն և ի խօսողէն, նա և թէ կենդանի առիւծ երթայ՝ խրտչի ի նմանէ. և որ առնու զսերմն և խօսողի արեամբ մնչէ և ցանէ այս խոտս՝ բնաւ չմերձենայ ի յինքն »:

153. Առիւծմորենի.

Բառգիրք մի այսպէս կոչէ Բաստոս կամ Բարտոս կամ Բրաստոս օտարալեզու բոյսը, որ ծանօթ չէ այդպիսի՝ հաւանօրէն խանգարեալ անուամբ. քիչ մի մօտաւոր է Վյարիս Βράδυσ յոյն անունն՝ որ նշանակէ Գի, Լ. Juniperus Sabina. մեր հին բժշկարանին ստորագրութիւնն ալ մօտենայ այս ծառոյս պտղոյն, բայց Մորենեաց ցիղէն գուշակուի. « Առոյծմորենին, կ'ըսէ, փոթօթ է. զհերն

» եփեալ և զօստան՝ զփորանցութիւն արգիլէ... Որ զպտուղն ուտէ՝ լընդացն » օգտէ, ու զփորն կապէ... Արմատն խառնեալ ընդ մեղր և տալ? (դալ?) օգտէ » կրծացաւոյ և հագի »: — Յիշեալ տեսակ Գի և մանաւանդ Բարձրաձաղկն, I. Sabina excelsa, կամ Sabina orientalis, նշանակուած է ի Սիսական նահանգի (Փարսպաղ):

154. Առկայծ.

Ոչ ի գրոց այլ ի լրոյ. ցամաք դաշտային խոտ մի է որ շուտով բուրնկի. անկէ առած է անունը, ինչպէս և Թ. Աթէշօրի, Պ. Ազգրիպէյը:

155. Առնուկ.

Այս ալ ի լրոյ է, բայց ի՞նչպէս ըլլալն չէ բացատրուած:

156. Առուակարոս.

Աթանասեանն գրէ (եր. 86) կարօսի ցեղէն բոյս մի ոտնաչափ բարձրութեամբ, մանր և դեղին փայլուն տերեւով. առուակներու եղերք գտուելուն համար այսպէս կոչուած:

157. Առուեղ.

Դաւիթ Սալաձորցին կու յիշէ Աւգէր ծաղկի հետ (տես). Թէ և գրուածը օրինակող մի՛ Առուեղնբրու տեղ՝ Առուեղերու գըրած է. բայց հեղինակն ընդհանրապէս ուր երկու կամ այլեւայլ ծաղկըներ կու յիշէ՝ այն տեղ հետ բառով զուգէ:

158-9. Առուոյտ.

Ամենածանօթ և պիտանի բոյս, կեր ընտանի անասնոց, ծաղկին գունովը, քիչ մ'ալ տերեւոց ձեւով կամ վրայի պիտակով՝ յայլեւայլ տեսակ զանազանի, և թերեւս այս պատճառաւ զանազան անուններ ալ ունի մեր լեզուաւ ալ. և նախ իր միացեալ կամ



Առուոյտ.

միակից երեք տերեւներուն համար Եռատերեւ կամ Երեքնուկ, ինչպէս և Լ. Trifolium, յորմէ Փ. Trèfle Ռ. Трѣлистникъ. Ասպատ. Ախլախնձոր (Թ. 31), Գնդաժաղիկ, Կորնգան, Հանդաղուղ և այլն. գործք տեսի կարգին: Ամիրտ. Ռատ. պայ՝ ԶԵ, բառի ներքեւ գրէ, « որ Թ. Եռանձա կու առէ, և Հ. Ապխտ, և » ինքն երեք ցեղ է. լաւն այն է որ դալար լինի և կանանչ լինի. և ինքն ի գի. » բացընող դեղերուն է, բայց ստամոքին զէն կու առնէ... Ասէ Պտ. Թէ Ֆաս. » ֆասայ սսեն չոր Եռանային, որ Պ. Ասպատտ ասեն, և Հ. Աւվտտ ասեն »: Բայց Ասպատտ բառն ալ գործածեն Հայք, վասն զի զատ տեսակ մի է, ի Լ. կոչուածն Medicago. Փ. Luzerne.

Առուոյտի քանի մի տեսակները յիշէ Մեխթար Գոշ յառակին (ԼԳ). « Գնդա. » ծաղիկը և Կորնգան և Խուրձ, Առուոյտ կապոյտ և Սէզ և նմանք սո. » ցին, ծաղր եղեալ զՅինկ՝ ասէին, եթէ Չի է զի մեք զուարճացեալ կամք, » և նա ծիրեալ դեղնութեամբ » և այլն: — Բարդ կամ կից անուամբ յիշին Հետեւեալ տեսակք.

160. Իշառուոյտ.

Որ է դեղին Առուոյտն. այդ կենդանւոյ անուամբ յիշեր են և հին յոյն հեղի. նակք, և նոյն բառու նսեւ Լ. Onobrychis. Փ. Esparcette. ինչպէս գրէ և Ա. միրտովլաթ և կ'ըսէ. « Ունուարուխիս. որ ի փլիվկած տեղեր կու լինի, և ի » Թաց տեղեր կու բուսնի. երկայնութիւն մէկ թիզ կու լինի, և տերեւն մանր » որպէս Ոսպան տերեւ, և կարմիր ծաղիկ ունի »:

161. Եղան Առուոյտ.

Անուամբ նոյն բայց տեսակաւ շատ տարբեր, մարդաշափ բարձր կ'ըլլայ և նը. զեր ալ ունի. ծաղիկն դեղին ծոպաձեւ կախուի. գործածուի դեղի համար: Մա. նօժ է Մշոյ կողմերը:

Առուոյտի հունտ ալ յատուկ յիշուի ի հին և նոր բժշկարանս արար բառին քով Պըզր-Էլ-Ճարձիր, որ Պ. Թուխի ֆիքիզ կ'ասեն, ըստ Ամիրտ. և ի Շիրազ ֆա. » մասը? կ'ասեն. և լաւն այն է որ ածւոց լինի և ի լի լինի »: Հասարակ Առուոյ. տէն տարբերիլն ալ նշանակէ Ռուզկան որդւոյ (1) վկայութեամբ, թէ այգոր « փոխանն իր չափով՝ Առուոյտն է »: Հայերէն ալ Ճարձրոզ կ'ըսուի. Փ. Roquette.

Այս հայերէն բառերով անուանուածներէն զատ՝ Առուոյտի շատ տեսակներէն քսանի չափ յիշեն բուսաբանք ի Հայս, որոց մին յատուկ Հայկական, T. Armenium ի լեռնակողմանս. Գիսագլուխն Trichocephalum ի Մասիս. Նկունն՝ T. Hybridum ի Մուշ, Բարերդ, և այլն:

162. Առսան ?.

Ըստ Ամիրտ. այս ալ Առուոյտի տեսակ պիտի ըլլայ, եթէ ստոյգ է գրուածն. վասն զի Յարափ անուան տակ գրէ. « Որ է Ռատպան, որ հայերէն Առսան ա.

1. Անուամբ և դիտուն բժշկ Պարսիկ: Թ. դարու մէջ, կոչուի շատ նեղ Մուռամմա որգի Զաքարիայի. բայց աւելի շատ՝ Ռազիկ, Բազիկ, Ռազէս, յանուն Ռէյ քաղաքի ուր ծնած է:

» սեն »: Դարձեալ Յ տառի (1) շարակաց մէջ գրէ (Փբ տեղ Թ), « Յալաթ, որ է » Ռատուպայ »: Տեսանք որ և Ռատուպայ Առուոյտն է. իսկ Յալաթ կամ Յալաթ անձանօթ է ինձ:

163. Ասիկ.

Առնի տեսակ պտուղ. գրէ Սերաստացի ոմն.

164. Ասլանն.

« Որ է իսլին ^{چالسا} ինքն խոտ-մն է՝ որ ի աւզին մէջն կու բուսնի, և » յերկան յերկան և դեղին դեղին է. Ջրկոտեմ կու նմանի. և ներկարքն կու » բանին գինքն: Եւ յորժամ զտերեւնին եփես և սպեղանի առնես՝ օգտէ պալ- » զամի ուռէցնուն. . Եւ մէկ ցեղ այլ կու լինի՝ որ ի չոր տեղեր կու բուսնի, և » ծաղիկն ի Աղվէշբանկի ծաղիկ կու նմանի »: Պէյթար ասոր համանիչ անուն մ'ալ գրէ, [Իրոան. իսկ բոյան է վայրի կանխոտ (Réséda). բայց այս Ասլանն նշա- նաւոր անունը՝ ոչ նա յիշէ և ոչ այլք:

165. * Ասխիս ?.

« Որ Թ. Սախիզ քիչանի ասէ » ըստ բժշկարանի:

166. Ասղուկ կամ Ասեղուկ.

Սուր սուր թելի նման խոտ, ուսկից կու զգուշանան գառներն ուտելու:

167. Ասմաղուն կամ Ասմահուն.

Գրուի ի բառս Գալիենոսի և կու զուգի Լոռը Շոռչանի:

168. Ասորեկ.

Որ է Ար. և Պ. բառիւ ճարճիր կամ ճարճրուկ, Լ. Erica, Փ. Roquette, Ռ. Шпугляка: Ծանօթ բանջար և աղցան ուտելի. երկու տեսակ է ըստ Ամա սիացոյն. « մէկն ածուիքն լինի և մէկն վայրի լինի. և լաւն այն է որ յածուցն » լինի. . Եւ Հարսնուկ ասեն անասուն մի կայ, թէ խայթէ՝ գչարութիւնն տա- » նի. Եւ գրած է ի Խասիաթին գիրքն (Վաստակոց, Մշակութեան) թէ որ » զճարճիրն ծեծէ և զլուրն առնու և ի Թթու Նոան տակն ընու, քաղցր Նուռ » լինի. և այն որ Վայրի ճարճիրն է՝ Խարտաչ կու ասեն »: — Տես և ճարճիր: Գալիենոսի բառից մէջ գրուի « Էրզոմն՝ Ասորեակ »: ուղիղն՝ Էրզոմոն Ερζομον. զոր յիշէ և Պէյթար ի Դիոսկորիտեայ գրոց, Ուզիւնուն գրելով, ^{ارزومون} »:

1. Յեռնէք որ Ամիրաուլաթ՝ մեր նշմամբ Ա կամ Ե սկսած արաբերէն բառերը՝ Յ տառի գրէ, ինչպէ՞ս Արաբը՝ Յարաբ:

Ասորեկի անուամբ մեր բժշկարանք կ'իմանան նաեւ անոր մերձաւոր կոտեւը և Զրկոտեւը. մէկն գրէ, « Ասորեկ՝ որ է Զրկոտիմն, որ է Ճարճիրն ». միւսն « Կարդամոնց (Cardamina) Ասորեակ կամ Կոտեմն »:

Զարմանալի կամ հետաքննական բան մ'է՛ որ մեր Ասորեկ կոչածը՝ Ափրիկեցիք ալ հիմայ Ասորիկ կոչեն, ըստ վկայութեան Ատանտոն բուսարանի, որ շատ տարիներ կեցաւ ի Սենեկամպիա:

169. Աոււիկ.

Արի նման կակուղ և փափուկ խոտեղէն մի, ըստ նոր գրողի առ մեզ:

170 * Ասպաղօլ կամ Ասպայուլ.

Պարսկերէն է. բժշկարան մի յիշէ « Ասպաղօլի Լուսպ » դեղ: Տես Զրախոտ:

171. Ասպանակ.

Նարեկի աղօթագրոց Լուծմանց մէջ կ'ըսուի, « Ասպանակն է Սառապիսեայ փայտն »: — Sarapias անուամբ բոյս ճանչնան բուսարանք Կոլոսիկներու (Orchideae) ցեղէն. բայց բոյս կ'ուզէ նշանակել մեր հեղինակն, թէ Եզդիպտացւոց Սերապիս շատուածոյն զլիարկը՝ որ էր գրիւ մի, իբր նշանակ առատութեան բերոց:

172. Ասպանտ ?.

Սպիտակ Մանանեխն է, ըստ բժշկարանի մի:

173. Ասպաստ.

Տես ինչ որ գրուած է Առուոյտի համար, որոյ մէկ ազգն է ըսուեցաւ. Լ. Medicago. Փ. Luzerne. Ռ. Медунка. Ըստ Ամիրտ. պարսկերէն նշանակէ Զար Առուոյտ: Երոպացի տեղագրողք յիշեն այս տեսակս յայլեւայլ կողմանս մեր երկրին, ի Կարին, յԵրասխայ հովտի, յարևելեան հիւսիսային գաւառս. ինչպէս. Մատղուկ տեսակն, M. Glutinosa, ի ստորոտս Մասեաց. — M. Papillosa (Պիսակտ) ի Կարին, Թորթում. — M. Gerardi ի Շահպուլագ Սիւնեաց:

174. Ասպուզան.

Որչափ որ մեր հեղինակք կարճ խօսքերով կ'իմացընեն, գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ մ'է լեռնային. ինչպէս Միս. Գոյի (L) առակն վկայէ. « Եզեւ երբեմն զըժ. » տութիւն ի մէջ լեռնականացն և դաշտականացն ծաղկանց. զի Հօրուտն և » Մօրուտն և Ասպուզանն և այլք այսպիսիք՝ ոչ տանէին պարսաւանացն Գաշտա. » կանաց, Արքայածաղկին, Կակալին և այլոց նմանեաց, զի սոգտանէին իբրեւ » տմարդիք և անիմատք, և զիւքեանս հանճարեզս և ի բժշկութիւնս պատ. » բաստս ». բայց բուսոց թագաւորն կու յանդիմանէ զանոնք. և յիշեցընելով որ ինքն ամենուն յարմար տեղ տուեր է, և կըրնան մէկմէկու պիտանի ըլլալ:

« այսպէս համոզեաց զնոսա »: — Վաստակոց գիրքն (գլ. ԾԵԸ), խրատէ « Ի մի. » Նոյն ծառոցն երակ երակ անուշահոտ ծաղկունս սերմանել, Վարդենի, Մա. » նուշակ, Զաֆրան, Մնփուր, Ասպուզան, Նոճէս, և այլ այսպիսիք »: յոյն բնագիրն շորս ծաղիկ միայն գրէ, հայերէնին առաջին երեքն և Շուշան, որով շիմացուիր Ասպուզանի ինչպէս կոչուիլն յօտարաց, որոց Թերեւս ծանօթ ալ չէր, բնիկ ըլլալով մեր երկրին սահմանաց. որ և մեր դպրութեան առաջին հեղինակի մէջ՝ յԱզգաթանգեղոս՝ յիշուի Ասպուզան գրութեամբ այլ. անունն յայտնապէս Հայոց և Պարսից լեզուի ձայն կու տայ: — Քիմիա — գիրքն նորալուր բան մի կ'ըսէ և անունը յայտնէ. « Ասպու. » զան ծաղիկն Հալոդի ներկին կ'ասեն. Թուրքն՝ « Ասփուր չիլակի կ'ասէ »: (տես Ասփուր): Իսկ հին բժշկարանն, « Ալլապիտ ? Ասպուզան », զուգէ. և արիչ տեղ մի իբրև դեղ, « զՊոճամորին և զԱսպուզանի տակն եփէ ջրով և խմցո ի յանօթից »: Այս նուսխայս ալ կու յանդիմանէ վերոգրեալ բամբասող դաշտական ծաղկընները, որ զլեռնցիս բժշկութեան անկարմար կ'ըսէին. իսկ Ասպուզանի լեռնային ըլլալուն՝ վկայէ և Սալաձորցին, ականատես 'ի Կարնոյ բարձրաւանդակին, նաև գունոյն.



Ասպուզան.

« Ան Աբրասան ծաղիկ մի կայ, իսկի վար չի գար վառ Կապրոտ. հոտն է սակաւ »

Շէհրիմանեանն այս բոյս համարի Լ. Psyllium, որ յատուկ նշանակէ վայրի Բըզրուկն (տես), Լուսխոտի տեսակ մի. բժշկարանք ոմանք զուգեն զայս վերոյիշեալ (Թիւ 170) Ասպաղոջի կամ Խապաղոջի, որ է Պ. Խափեղոջ, عوجا, և նշանակէ Զիականի: — Ուրիչ բժշկական բառից հաւաքման մ'այլ մէջ գրուի, « Խաղափարի ? քամուքս՝ Ասպուզան »:

175. Ասպուզանուկ.

Անշուշտ Ասպուզանին նման՝ այլ անկէ պզտիկ է. զօր վերոյիշեալ բառից հաւաքողն զուգէ Խափիթ անուան. ուրիչ մ'այլ երկու անուանքն եւս այլայլելով գրէ, Խաղափար՝ Ասպուզան: Եթէ Խափիթ՝ է հաւանօրէն Ղաֆիրն, և սա հայերէն Երեսնակն է, (Eupatorium), ինչպէս գրէ Ամիրտ. այլ, բայց անկէ զատ դարձեալ կայ ուրիչ Ղաֆիր մ'այլ, և ասոր համար կ'ըսէ. « Ինքն խոտ մի է, մէկ Թիզ է, կէս » տերեւ է և կէս ծաղիկ, երեք ազգ է. աղէկն ծիրանի ծաղիկ ունի, բնութիւնն » տաք է և չոր է », և այլն:

176. Ասպուր. Ասպուրակ. Ասպուռ. Ասփուր.

Թէ և նոյնանիչ են այսպէս զանազանեալ գրուածքն, բայց մի և նոյն իսկ ա. նուան նշանակութիւնն տարակուսական է. այսինքն Արարացոց այլ Ասփուր կո.

չածն և իրր համանիշ Ղրտումն կամ Կրտիմն՝ Բնչ տեսակ բոյս է կամ Բնչ զա-
 նազան տեսակք. մեր բժշկարանք՝ կամ Ամիրտ. հասարակ Ասպուրը չի ստորա-
 գրեր՝ այլ Վայրին. երկուքն ալ Ղուրտում անուան տակ, որ է ըստ Ար. Գոր-
 բում, **قطر**. Պէյթար կ'ըսէ, երկայն Թաննը և փշոտ տերեւներով բոյս մի է, երկու
 կանգուն բարձր, գլուխն մեծ ձիթապտղի մի չափ. ծաղիկն քրքամային, համեմի
 տեղ ի գոր ծածուի, իսկ սերմն կարմիր և ճերմակ, երկայնաձև և անկիւնաւոր,
 է: Մեր բժշկապետն գրէ, « Ղրտում, որ է Ասփորին հունսն. ածուց լինի և վայրի,
 » և լաւն այն է որ սպիտակ լինի. տաք է և կակուղ... Թէ իր հնդին եղն
 » ծովու փրփրով ի յաշքն քաշեն՝ զսպիտակն ի յաշացն տանի. և Թէ զգլուխն
 » այնով լուանայ՝ զովիլն սպանանէ: Եւ ասացել է, Թէ Վայրի Ղուրտումին՝
 » (եթէ) մէկ մարդն կարիճ հարեալ լինի՝ ի հետն պահէ, զցաւն խափանէ. և
 » յորժամ ձգէ՝ այլքի ցաւի... Ատէ Պատ. Թէ Պ. այսոր Հասարակայ կ'ասեն »: -
 Իսկ Վայրի Ասփուրին համար գրէ. « Ղորտումն պերդի.. Վայրի Ղուրտումն
 » այլ Ասփուր է. բայց տերեւն յերկան կու լինի, և գագաթն կու բուսանի մէկ
 » մէկ կարմրուկ հատիկներ. և ծաղիկն դեղնուկ կու լինի, և տակն բարկուկ. և
 » Թէ զտերեւն և զգագաթն մանր ծեծեն և պեղպեղով և գինով խմեն, օգտէ
 » կարճահարին », և այլն. Պէյթար կ'ըսէ, Թէ տերեւներն՝ միայն գագաթան
 վրայ են, և Թէ կանայք անկէ իւ (իւիկ) կու չինեն. Արարացի անունն Գորթում՝
 Ղրտում, Ղուրտում կամ Կրտիմ՝ ըստ մերոցս, համաձայնի Փ. և Լ. Car-
 thame, Carthamus. Ռ. Сафлоръ Красильный. Վայրի Ասփուրն այլ Cartha-
 mus lanatus. Այն տեսակն որ Սրափոշ կ'ըսուի, Carthamus Oxyacanthus, 'ի
 Միջագետս Երասխայ և Կուրի նշանակած են բուսաքնիկք. Թերեւս այս տեսակն
 է զոր Ամիրտ. Տարիդան անուանելով գրէ, « Որ է Վայրի Ղուրտումն. ինքն
 » բոյս-մն է որ գարունն կու բուսնի, և իր ծաղիկն նման է Հասակին ծաղկին
 » (Տատաշ, Tribulus), և դեղին է և բոյր է, և ծաղիկն փուշ ունի, և ի Երբազ՝
 » Անկուլիզ կու ասեն: — Երբ հայերէն անուն մ'այլ կ'ընծայէ Անգիտաց ան-
 » պէտն այս բուսոյ ». Ղուրտում, Հասարակայ պարսկերէն, հայերէն Հանկի-
 » ռակ ասեն, որ է Ասփրի հունսն ». լաւ եւս Հակժիրակ, զոր տես.

Վաստակոց գիրքն յիշէ (զլ. ԶԼԱ) զՎայրի Ասփուրն, գինեգործութեան վրայ
 խօսելով, զոր և կամ Դաղձ կ'անուանէ կամ ասոր յետ կու յիշէ. « Եթէ ուզես
 » որ (գինին) յեռայն չվայթի, առ զԴաղձն կամ զՎայրի Ասփուրն, և կանդի
 » (վանդակաձեւ) չինես կարասին բերանոյն չաքօ՝ գերդ գտակ, և ի վերայ բե-
 » ո բանոյն դիր ». յոյն բնագիրն Καλαμίντης կոչէ զբոյսը, որ է Nepeta, Փ. Pou-
 liot sauvage, Ռ. Дыкия полей. Վայրի Դաղձ: — Ոմանք յԵւրոպացի գիտնոց
 Dulcamara կոչեն զԱսփուրն:

177. * Ասպուրակ.

Որ է Հայինոն, կ'ըսէ բժշկարան մի, և յոյն կամ լատին բառին տառադար-
 ձութիւնն է, Asparagus, որ է հայերէն Ծրնեքիկ:

178. * Աստախօտոս.

Տ. Արեղախոտ (Թ. 3) և Եղնախոտն. Յ. և Լ. Stachys. Այս յոյն անունը
 գործածէ և Միս. Հերացի (երես 126):

179. Աստեղած.

Բայս մի աստեղանման՝ որ գիշերը կու բացուի, ըստ նոր գրողի մի. քննելի է. այսպէս և հետեւեալքն,

180. Աստղիկ.

Որոյ սոսկ անունը գրէ նոյն անձն. նոյնպէս և.

181. Աստեղունք.

Յեղեալ ի Մշակ օրագրի (ՊԸ, 88):

182. Աստղափուշ.

Ըստ նոր գրողաց՝ երկթզաչափ բայս մի է մութրագոյն մեծ տերեւներով, կտպոյտ ծաղկով, գլուխն թաւ գնտաձեւ:

183. Ասրունն.

Յովասափ անուամբ բժշկական բառից և բանից հաւաքող մի՝ գրէ այս անունս, և կ'ըսէ, Սիլիկոնն է. լատինն Siligo, հասարակ ցորեն կամ ցորենի տեսակ մի նշանակէ, ըստ յունականին Σίλιγιον.

184. Ասաքոխի.

Մեկինաւոր բունով կամ ցողունով կէս Չափ բարձրութեամբ բայս մի, թելաւ ձեւ տերեւներով, վերէն ի վար ծաղկալից և անուշահոտ, ծաղկըներն հովանաւ ձեւ են և ճերմակ. ուտելի է:

185. Ատմատ.

Հնգի բակլայ, գրէ բժշկարան մի:

186. Ատուլ.

Գեանախնձորի (Փաթաթ) նման մանր կոճղէզ է քաղցրահամ ուտելի, և գտուի ի կարին և այլ տեղուանք. Շիրակայ կողմերը խանտոյ կ'անուանեն զայս:

187. * Ատրագոյն.

Էտրեկիսն ըստ Պարսից, գրէ Շէհրիմանեանն, և համարի լ. Flos Adonis, Փ. Adonide, յանուն Ադոնիս պատանւոյ ըստ առասպելաց, զոր վարազ մի սպանեց, և Աստղիկ այլափոխեց ի ծաղիկ: Այլ և այլ տեսակք տեսնուած են ի կարին, Թորթում, Բարբրդ, Մանախ (Կիւմիւլխանէ) Պարխար, Սպեր, Նախճաւան:

188. Ատրուք ատրաք ?

Առճի պտուղ, ըստ Սերաստացւոց:

189. Արած.

Քարերու և ժայռերու վրայ մաշկի պէս կպած բան մի, դեղին կամ կանաչ, որ թէ և չի նմանիր բուսոց սովորական ձեւին, բայց անոնց նման անուամբ և սերումն ունի. հասարակօրէն Եւրոպացիք Lichen կ'անուանեն. և կան տեսակք որք դեղի այլ գործածուին ներկելու այլ: Քարերու, պատերու և ճապղած չրոց երեսն այլ կու պատեն այսպիսի բոյսը. որ մեր լեզուով այլեւայլ անուններ ունին, և ըստ կարգի յիշուին. ինչպէս Գորտնբուրդ, Լօռ, Մամուռ, և այլն:

190. Արանդ.

Յ. Բուդրոս բառն է Գալիենոսի, Βολβός: Լ. Bulbus, Ռ. Цбѣточная луквица. որ է յայտնի բուսոց ոմանց սոխաձեւ տակն կամ կոճղէզն. Պէլթար այլ նոյն յոյն բառով յիշէ, (Σκῆλη). բայց յատկապէս այսպէս կ'անուանէ ուտելի Սոխը, Պասալ եզ-գիր, զոր մեր Ամասիացին այլ նշանակէ գրելով « Պասալ ըլ-գի, որ է Պալպուսն »:

191. Արանդուպարանդ կամ Արիտպարիտ.

Ըստ Պարսից՝ دڭ دڭ. « Ինքն դեղ-մն է որպէս սոխ ճղքած, և ինքն ի Սիս- » թանու աշխարհէն կու գայ ». կ'ըսէ մեր բժշկապետն. ուրիշ մ'ալ. « որ է զէտ » երկու սոխ ». Այսպէս գրէ և Պէլթար, և ուրիշ անուն մ'այլ կու տայ, Տօլ-պոռք կամ Տալապոռք, որոյ ստորագրութիւնն ցուցընէ Ագասախոռք կոչուած բոյսը, զոր յիշած եմք (թիւ 8). Լ. Gladiolus.

192. Արանց ծաղիկ.

Աւելի պարզ բառով հայերէն կ'ըսուի թաղք, և ուրիշ անուամբք այլ, զոր գտնես ի կարգին. և է Լ. Cyclamen զոր տառադարձութեամբ գրէ բժշկարանն՝ ըստ յու- նին, « Կիկրամինոն, Արանց ծաղիկ կամ Լօշ ».

193. Արապլէզ.

Ըստ Սերաստացւոց կամ Բրզնիբցոց, խոտ մի՝ զոր և Լէկլէկի Սխտոր կոչեն. թերեւս պէտք էր ըսել Արազլէզ:

194. Արզանդաց ծաղիկ.

Այսպէս յարմարցուցեր են նոր գրողք կոչել Լ. Matricaria. Փ. Matricaire. Տես Մածնի ծաղիկ:

195. Արդդիկ.

Վայրի բանջար է, ըստ Մանանայի, որ այսչափ միայն գրէ:

196. Արդուխա.

Հին բժշկարանն յիշէ Այդուխայի տակ կամ Այդուխի տակ, զոր նոր բժշկարանք կու մեկնեն՝ Նուարտակ (տես ի կարգին) կամ Սարգուշա, որ նոյնն է. իսկ Ամիրտ. կ'ըսէ Այդուշա կամ Սարգուշա կոչուի յԵզնկա Շէտառէճն, որ է Անձխոտ, ինչպէս յիշած ենք:

197. Արեան խոտ.

Թարգմանութիւն է արաբերէնին Ըխախլ պէշաբի, և Թ. Գան օրոշ. նոյնպէս Լ. Sanguinaria, Փ. Sanguinaire. Տես Ոսկէխոտ:

198. Արեգական ծաղիկ.

Յունական բառի թարգմանութիւն, որպէս և Լ. Helianthemum. Փ. Hélianthe-mo, Ռ. Солнецветъ. քիչ օր դիմանալուն համար այսպէս կոչուած համարուի. խոտեղէն բոյս է, մանր ծաղկով, ի ցեղէ Տփատեսակաց (Cistacæ).

199. Արեգական մայր.

Գեղեցիկ անուն, բայց քիչ մ'այլ այլարանեայ, ըստ Երազահանից, ուր և գրուած է. « Խաղախար խոտ, զոր Արեգական մայր ասեն. չորս տերեւ կ'ելնէ, » ի գետինն կու փռուի խաշանման. տերեւին երկանքն երկու թիզ է, և մէջն » զէտ ճութն է? և յետին փուշեր ունի զէտ ասղան ծայր. և յետեւ տերեւին » այլ մանտր փշեր կայ. և որձան կոկ որպէս վարոց մի և զէտ տանկինակի կոթ. » և տերեւն խաշանման, և ի ծայրն ծաղիկ ունի կարմրեա. և այս խոտս կաթն » ունի որպէս կարմիր արիւն: . . . Լսեցի թէ ի Մնծրայ լեառն այլ կու բուսնի »: — Բժշկարան մ'այլ աւելի համառօտ գրէ, կոչելով « Խաղախար, որ ասի Արեգակն. » յառաջն չորս տերեւ ի գետինն փռվի. որձայն քան ի վարոց մի. տերեւն խաշ, » կաթ ունի զէտ արուն. պատրաստ (զգուշացիր) որ չցաթկէ կաթն. ուր հասնի՝ » խոցէ անբժշկելի: Ասեն, թէ ի Մնծրայ լեառն բուսանի »: Մնծուր լեռն և գաւառ՝ Կարնոյ հարաւակողմն է, Մուզուր կոչուի յայլազգեաց:

200. Արեմիճ.

Ձայս յիշէ Ստ. Ռաջեան ի բուսագիրսն. « Խոտ է նման Պոպղակի (Գոճամօ- » բուաց), ունի վարսս՝ որք ձեռք ճմեպաք զարեան ծուծս հոսեն »: Ինքն Լ. անուանէ Asyrum կամ Ascyrum, որ է տեսակ մի Գոճամօբուաց. իսկ Ստ. Շէհ-րիման Ձագխոտի զուգէ:

301. Արեւադէմ.

Ի բառս Գալիենոսի այս զուգուի Հիդար բառի, կամ լաւ եւս ըստ այլ օրինակաց՝ Հեղիոտրոպոն, որ է ճիշդ Յ. և Լ. բառն Heliotropium, որ Արեւադարձ ըսել է, այսինքն յարեւն դարձող. Փ. Tournesol, Ռ. Подсолнечникъ. Թ. Այ չիլիկի. Ժանօթ բոյս է և սչք առնող իր մեծ անուանման կամ սկաւառակի նման զլսով, որ և ծաղիկն է, անհամար կուտերով. Ար. կոչուի Սաւեր-եւաւա, ասորերէնէ առած, ըստ Պէյթարայ. Ամիրտ. այլ այս անուան տակ ստորագրէ. բայց ասով երկու տեսակ բոյսք ճանաչուին, զորս խառն գրէ Պէյթար, մէկն յիշեալ մեծ տունկ և ծաղիկն է, միւսն փոքր. և այս է մեր հեղինակին յիշածն, այսպէս. « Սաւեր եւաւա, որ թուրքն Մանկոյ օրի կ'ասէ, և Յադրայ օրի այլ կ'ասէ. » այս խոտ-մն է որ մէկ տակէն երեք կամ չորս ճիւղ կու ելանէ, և ի դազաթն » սպիտակ ծաղիկ կու լինի, և ի կարմրութիւն կու քլտէ. զէտ կորու (կարիճի) » ազի կու լինի ծուռ, և տերեւն՝ արեգակն յոր դեհ որ ցայթէն՝ նա յայն դեհն » կու դառնայ. և ի խոշոր տեղրանք կու բուսնի. և տակն բարակ կու լինի. և » բժշկնուն ի բան չի մտել... Եւ ցեղ մի այլ կու լինի մանր, և ի հանգած ջրե » ռուն ի մէջն կու բուսնի. և տերեւն բոլոր կու լինի, և միւրգ կ'ունենայ բոլորկեկ » երեք չորս հատ, զէտ կոթիծներ, կախման կու լինի »: Կարիճի ազիի նմանու թեանն համար յԵգիպտոս՝ կ'ըսէ Պէյթար, կ'անուանեն Հայիէթ էլ-ագրեպ, Կարճի խոտ:

302. Արեւարաց.

Թ. Կիանէլ սեվկն, ըստ նոր գրողի առ մեզ, արեւ ատեն բացուելուն համար. բայց ինչ տեսակ կամ ձեւ է, ստուգելու է, նոյնպէս և հետեւեալն.

303. Արեւածագ.

Թ. Կիանէլ սոդան, Ար. Շահրդոյ? ըստ նոյն գրողի:

304. Արեւածաղիկ.

Նոր հնարած բառ է, որով ոմանք Արեւադէմը կ'մանան, ոմանք Արեգական ծաղիկը:

305. Արեւալայ.

Այսպէս կոչէ բժշկարան մի թ. Այ չիլիկի բոյսը, որ է Արեւադէմն:

306. Արեւքուրիկ.

Այսպէս կոչեն գաւառականք Պոնտոսի զՔոնճամօրուս որ և Պոպղակ. հարկաւ հին կամ նոր աւանդութեամբ մի, և անչուտ այսոր ցեղին հարիւրաւոր տեսակաց գեղեցիկներէն մէկն է, Թերեւս Hypericum Pulchrum, Փ. Millepertuis élégant.

207-8. Արինճ. Արինճ.

Ի բառս Գալիենոսի Արինճ կոչուած է *L. Centinodia*, Փ. *Centinode* կոչուածն, որ հարիւր հանգոյց կամ կապ ունող նշանակէ, և Մատիտեղին ցեղէն է, յատկապէս *Polygonium Aviculare* (Մատիտեղն թռչնոց) տեսակն, Փ. *Renouée des petits oiseaux*. Ռ. Спорышъ пшеницы. արարերէն կ'ըսուի թոռնա չչխ (կամ թօրիէ). բայց աւելի լաւ կերպով, կ'ըսէ Պէյթար, կ'անուանի Պիտազ էլ-դոչ որ նշանակէ ճիւղի կամ ջատուկ (կնոջ) կապերտ: — Ի կողմանս Խոտուլոյ սխուի Արինճ բոյս մի, բայց նոյն ըլլալն ընդ Արինճի՝ յայտնի չէ:

209. * Արիովթ.

Մերայական բառ է. (Ռ. Թգր. Դ, 39). Եղիտէ մարգարէի գործոց մէջ պատմուի, որ սովի ատեն օր մի իր աչկերուն զնաց արտը՝ « քաղել Արիովթ. և եգիտ » Որք յանդին, և քաղեաց ի նմանէ ազոխ լի շալակաւ ». Լատին թարգմանութիւնն կ'ըսէ վայրի բանւար. իսկ քաղած Որթն՝ թէ և նոյն անուամբ վայրի որթ կ'ըսուի, բայց դժուար տեսակ պտուղ ունի, (*Colocynthis*). Տես Չմիտուկ վայրի:

210. Արիւնակուլ ?

Տարակուսելի բառ, զոր նոր բառագիրք մի զուգէ *Pimpinella* խոտոյ, որ է Սէզ:

211. Արիւնշղփի.

Վայրի Զողալենի. կու լսուի Պոնտոսի կողմերը:

212. Արծին.

Ըստ Ստ. Ռոչեանն է *Satyrium*, որ է Աղուեսու ձուքն, զոր ստորագրած եմք (Թ. 63). Նոյնն ուրիշ լատին անուն մ'ալ գրէ, *Arvenogonum*. բայց հիմա բուսաբանութեան մէջ այսպիսի անուն չի լսուիր:

213. Արծուահանկ կամ Արծուոյ ճանկ.

Թ. բառի թարգմանութիւն, կարգազ այսպի, ինչպէս գրէ Ամիրտու. այդպիսի նմանութիւն մի տեսնուելով բուսոյն բազմաթիւ բարակ թեփերուն վրայ, որոյ փոխան Յոյնք օձաւանդրի (Թ. գրքի այսգ) ստից նմանցընելով՝ Հազարատուի, *Σκολόπενδρα* կոչեցին, զնոյն և *L. Scolopendrum*, և Փ. *Scolopendre*. Ռ. Олений ясыкъ. այս յոյն անուամբ գրէ և Պէյթար. յորմէ և Ամիրտ. « Սղուռոֆանուս. » ղիտն, որ է կարգազ այսպի: Ինքն տերեւ է՝ որ ի վերայ քարին կու բուսնի, և « եզերքն խաղ խաղ է, և յետեւն կէտկներ ունի դեղնուկ. և ինքն երկու ազգ է. » և նորն լաւ է... Եւ իր ուտելուն չափն մէկ մթխալ է, բայց ստամոքին զեն կու ուսնէ... Իսպտ (Պէյթ.) ասէ, թէ իր տերեւն նման է Պասպայիճին (Փ. *Poly-pode*) տերեւին, և ծաղիկ չունի. և տակն կարմրուկ կու լինի... Եւ հեղենացի

» բառով ասեն, թէ պախրէ-Ճն է ի ծովուն ի մէջն. և այլ Ըսողուլուճանտարինն
 » ասելն թարգմանի՝ թէ փայծաղ չունի. և այս դեղիս գործն այն է որ զփայ-
 » ծաղն կու հալէ. Եւ այլ ասացել են թէ ինքն քիչ մի ի Չարխոտ կու նմանի...
 » Եւ այլ ասացել է գրոցս շինողն, Սղոջոս ասեն Հեղինացւոց բառովն, պախրէ
 » մի ի ծովն կու լինի՝ որ Գանարիկն? ասեն, այնոր համար այս անուամբ կու
 » ասուի՝ որ այն պախրէն փայծաղ չունի. Եւ այս խոտիս թէ հարցանես զա-
 » նունն՝ հայ բառովն Արծիոյ ձանկ կ'առեն »:

Պէյթար ալ կ'ասէ թէ յԵգիպտոս Արծուածանկ կոչեն كف النجاسه քաֆ էր-
 Նասր: Իսկ փայծեղան. համար ըսուածն ուղղակի այս բուսոյ համար չէ, այլ անոր
 ազլակցին, որ յունական բառով (α επλην, անփայծաղն) կոչուի. Լ. Asplenium,
 Փ. Doradille, ըստ մեզ Հ. այլ խոտաւ:

214 Արծուոց Մոշի.

Ըստ բժշկարանաց ոմանց Ար. կոչի Աքալ, « և իր պտուղն Յատպէն է »: Այս
 անուամբ գրէ և Ամիրտ. « Յատպէ, ܐܘܕܐ, Մոշու պտուղն է, և լան այն է որ
 » նոր լինի.. Որոյ լեզուն թուլանայ՝ օգտէ (ի դեղ). և որոյ բերանն և լեզուն
 » վեր տայ՝ օգտէ, և ախալին ցաւուն օգտէ, և զստաւորսն ուժովցընէ... բայց
 » կըրծոց զեն կ'առնէ »: — Ըստ Պէյթարայ ծառն կամ մոշին կոչի Թաւրայ-
 Աքալ, որ է ծանօթ վայրենի ծառն Tamarix, Թ. Իդրուն աղաձի: Տես և Մոշայ:

215. Արծպայ.

Ըստ Ստ. Ռոջեան, « Սպիտակ խոտ, որ զՔրքմի հոտ ունի. և ի բուրբեալ
 պտակս դնի »: Լ. Serratula. Փ. Sarrette, Ռ. Серпуха. որ փշտ կառի ցեղէն
 է, և գործածուի ի ներկարարութեան:

216. Արկած ?.

Բժշկարան մի ի կարգի դեղոց գրէ. « Սատան հընդիկ, Հնդիկ Արկածի տե-
 բե »: Նոյնն. Հնդիկ Սատանը Նուարտակն է կ'ըսէ, բայց Արկածին ինչ ըլլալը
 չի յայտներ:

217. Արճիճուկ կամ Արճնուկ.

Ռամկորէն կանգար նշանակէ. իսկ,

218. Արճնուկ գետնի

Խանդատն է, ըստ Պ. Գալանթարեան (եր. 125):

219. Արճուան.

Ամիրտուլաթ օտար լեզուի հոմանիշներն այլ յիչէ այս անուան տակ. « Պանար
 » տրախտի կամ Տրայխո? ասեն, և Պ. Արդաւան ասէ. և այսոր բնութիւնն հով

» և չոր է... և թէ իր ծաղկէն շարապ շինեն և խմեն՝ զգինուն խումարութիւն
 » տանի »: Արդաւանն Պարսից է, ըստ Գէորգայ կամ Ֆէհրէնկի, « Տեսակ իմն
 » կարմիր ծաղկան՝ որ ի ծառ բուսանի, որոյ և ծառն խոշոր լինի »: յետոյ ասէ
 թէ և ծառն կոչի Էրդեփանի: — Պէթար վկայէ որ Արճուան անունն ի Պարսից
 առեալ արաբացեալ բառ է, انجور, անոնք կ'ասեն Արդուան انجور, ծաղկին
 գոյնն այնքան կարմրափայլ և գեղեցիկ է՝ որ Արաբացիք այն անուամբ կոչեն
 ամեն կարմիր բան. կ'ուտուի ալ, մանաւանդ զինեխումէ ետեւ. փայտն կակուղ
 և թեթեւ է. կանաչք այրելով զայն՝ ծարուր կ'ընեն մոխիրը: Նփրդկերտոյ կող-
 մերը շատ գտուի, կ'ըսեն, ինչպէս և ի Սպանիա: Այս ծառիս Լ. կ'ըսեն
 Cereis siliquastrum. Փ. Gainier. Ռ. Спручковое дерево. նա և Հրէաստանի
 կամ Յուդայի ծառ, Arbre de Judée.

290. Արմ.

Վանական վարդապետ քիչ մի մութ կամ ստուգելի բառիւ և բանիւ կու հար-
 ցնէ, և պատասխանէ. « Միկունն ինչ է (յունարէն). — Արմ ասեն, քան զՁա-
 » ֆրանն հով է և քան զՍպաղոն տաք. երբ մարդոյն ձեռինն լցաւ տայ կամ
 » այրի կամ խոցի, ի բերանն փախ? ցանէ »: Միկուն՝ յունարէն Μήχον, յայտնի
 է Խաչախն. իսկ թէ նոյն նշանակէ Արմ հայերէն, թէ անոր փոխանն կամ
 տեղը բռնողն է, և թէ ցանելու է թէ փակցընելու, ինձ անյայտ:

291. Արմաւենի.

Որչափ որ միայն տաք կլիմաներու յատուկ է, անուամբ և պտղովն աշխարհա-
 ծանօթ է, մանաւանդ Ս. Գրոց յիշատակութեամբ և պէսպէս գովութեամբ և
 նմանութեամբը: Հետաքրքրական է մեզ անունն, այնու որ առ Յոյնս՝ Փիւնիկ,
 Ֆիւնիքս կ'ըսուի, մանաւանդ պտուղն, ուտուի և առ Լ. ծառն Phœnix, ի Փիւնի-
 կեցւոց ծանուցուած ըլլալուն համար. նոյնպէս և առասպելիւ թռչունն ալ Փիւ-
 նիկ. իսկ առ մեզ ինչպէս ծառն և պտուղն Արմաւ կոչուի, նոյնպէս և Փիւնիկ
 թռչունն ալ Արմաւ: միթէ Արմ-հաւ? Առ Լ. Dactylus եւս կ'ըսուի, որպէս և
 Palma, ուտուի Փ. Dattier և Palmé. Ռ. Феникковое, пальмовое дерево. Ար-
 թմի կամ Թամի. թ. Խոշորն, որ քիչ մի մերձենայ Արմաւ ձայնի: — Թողլով Ս.
 Գրոց և Ս. Հարց ըսածներն այս գերահռչակ ծառոյն և պտղոյն վրայք, յառաջ
 բերենք մեր Ամասիացւոյն Թմր բառի կարգին գրածը. « Այնքան ցեղ ու ցեղ կու
 » լինի. և լաւն այն է որ գէր և քաղցր լինի. տաք է առաջին տարածաին վերջքն,
 » և չոր է ու տարածին առաջն. և ճիշտ այնող է: Արմաւին հատն որ այրեն՝ զմաղն
 » սեւ առնէ և շթողու որ վաթի... թէ Արմաւն շատ ուտեն՝ զմիսն կ'անեցընէ,
 » և շտեր կու հանէ: — Արմաւ ուտող մարդոյն թէ ակոսան վատուծնայ, Թող Առ-
 » տորին Նրօնը գերանն լվանայ, և վարդի Նրօնն խաղաչ առնէ »: — Չքօսանաց
 համար ըսենք, որ Արմաւենոյն յարզը ծանուցանէ մեր Առակախօսն ալ (Մի-
 Գոշ), զինքը տնկոց թագաւոր կարգելով, որոյ թէ և չէին հաւանիր ուրիշ տունկը՝
 ըսելով, թէ՛ թէպէտ « Բարձր ես հասակաւ և քաղցր պտղով, բայց երկու ինչ
 » պակասէ քեզ. զի յաւուրս մեր ոչ տաս պտուղ, և ի ինուած ոչ պատշաճիս.
 » մանաւանդ զի բարձրութեամբ քո՝ անճաշակ բազմաց լինիս »: Բայց Արմա-

ւենին զանոնք շողորթելով և ամենուն մեծամեծ պաշտօններ տալով լուեցուց. Որքն ըրաւ գինէպետ, Դժնիկը՝ դահնապետ, Նաենին՝ բժշկապետ, Թզենին՝ հիպատոս, և այլն:

Քէպէտ և մեր երկրի կլիմայն շընդունիր զԱրմաւենի, բայց անոր հարաւակողմն և Կիլիկիա անընդունակ չեն, և այսոր համար անշուշտ վատակոց գիրքն գլուխ մի բան գրէ տնկելու կերպին. գոնէ հետաքննութեամբ լսեմք մաս մի. « Փոս արա խոր ու կանգուն ու » կէս, և ի լայնութիւն նոյնպէս. և » աղբախառն հող լից ի ներք, որ » ընուի կէս փոսոյն. և ան կուտ » Արմաւի, և զ'ոտքն ի վայր արա » և զժայրն ի վեր. և յամէն փո » սոյն յատակն ցըցեա մէկ զհետ » մէկի՝ խփատ մօտ ի յիրեար, որ » ընուի փոսդ. և ապա ան աղ և » խառնեա ի հողն ափ մի մանր, » որ շաղղի յիրեար. զի Արմաւեն » նին զաղտաղտուկ հողն սիրէ. և » ի վերայ ած, և զփոսն լից և » այգւոյ յօտով ծածկեա, մինչեւ » բուսանի որ ծլէ. և ապա զյօտն » ի հետ ձգեա. և ծառայեա որ » ծիլն չկոտրի, և սաէպ չրեա »:

Միմէոն կամարկապցի նորալուր անուն մի գրէ իրրեւ հոմանիչ Արմաւոյ, « Փրիքոռակ, Խուրմայ. նոյն » պէս կամ Փրիքոռակ գրուի՝ 1728ի » տպագրեալ բառագրոց մէջ »:



Արմաւենի.

333. * Արմինան.

« Որ է Արմինան, ըստ Ամիրտ. ինքն խոտ-մն է՝ որ ի գետնէն ի վեր կէս կան » գուն կու ելանէ, և չորեքժուէն (քառակուսի) կու լինի, և հունդն նման է » Հուլպային. և աղէկն այն է որ ի պարտիզնին լինայ և բուսնի, և հունդն եր » կանկուկ լինի և սեւուկ »: — Անունն է Ար. Արմինիկ կամ Օրմինիկ. (ارمینیون) » [L. Horminum (Salvia). Փ. Horminelle, Ռ. Шаалфея (полевоѣ). Պէլթար Հուլպայի տեղ Պրասիոն կ'ըսէ, որ է Մեղրածուծ, Marrubium, բարձրութիւնը՝ կէս կանգուն, և լուրիայի նման մաշկաւոր հատիկներ:

323. Արշատ.

Խորենացւոյ աշխարհագրութիւնն յիշէ այս անուամբ պտուղ մի յերկրին Մ. կաց: Մեր բառագրող հեղինակն կ'ըսէ. « Արշատ, որ է Հաճար ըղ-նուան, որ է Բաղնայն ». զայս ալ նոյն համարի ընդ Մարգարիդոյ. բայց ասոնք հանքային զանգուած են և ոչ բուսական: Մոկացւոց յանձնեմք ծանուցանել մեզ այս իրենց երկրին պտուղը:

324. Արուանտակ ?.

Ս. Եէհրիման գրէ զայս և զուգէ Լ. *Densocanis*, փոխանակ ըսելու *Cynodon*. Φ . *Chiendent*. Ռ. *Палочная трава*. որ Թարգմանի Ենատամն, իբրև ծամոց շանց: Ար. Նաձմ, Թիլ կամ Սիլ. այս ետքի անուամբ ստորագրէ Ամիրտ. և կ'ի- մացընէ որ Հայք Սէգ կ'անուանեն մէկ տեսակը. մենք ալ Թողումք ի կարգի Ս. տառի:

325. Արուսիկ.

Թերեւս նորահնար, զի ոչ է ի գրոց այլ ի լրոյ, իբրև ծաղիկ Արուսեկի նուիրուած. և Թ. Սինայա քաղաքիս կոչուած, որ նշանակէ երկնանուէր:

326. Արջախստոր.

Նոր գրողք յիշեն իբրև մեր գաւառականաց Ղանձիլ կոչածն. զոր անուանեն և Խալիար: Յայտ է անունէն՝ որ տեսակ մի վայրի Սխտոր է, և ըստ այսմ Լ. *Alium silvestram*.

327. Արջնդեղ.

Թերեւս սեւ գունոյն համար այսպէս կոչուած է և ոչ Թէ գազանին անուամբ, ինչպէս կարծեց ինքն, ըստ առակին Միս. Գոյի. « Լուեալ արջու՝ » ի ցաւել որովայնին առեալ եկեր, կարծելով դեղ » ինքեան, վասն անուանն. և ինչ ոչ օգտեալ », և այլն. կ'ըսուի և Սեւ Սոնիձ, ՍեւԳնտիկ կամ Հընտիկ, Սեւոչ Հնտիկ, և Եոնիզ, որ Ար. անունն է, $\gamma\lambda\gamma\alpha$. ուրիշ անուններ ալ կան յարաբերէնն. մերոց մէջ հարազատն է Արջնդեղ, որ և ի Ս. Գիրս յիշուի. Ո՛չ ապաքէն, կ'ըսէ, Եսայի մարգարէ (ԻԸ, 35-7) սերմանոցն նախ երկրին երեսը կու կակղէ, « և ապա սերմանէ փոքր մի Արջնդեղ և Չաման... Ոչ եթէ խստիւ ինչ սրբի Արջնդեղն ». — Թէ և իբր որոշելով Սեւ կ'ըսուի տեսակն, բայց տարբեր չի ստորագրուիր, և ճերմակ չի կոչուիր ուրիշ տեսակն: — Իբրև հանրածանօթ բոյս՝ Բժշկարան մի կ'ըսէ. « ինքն Սեւ հունտ է, որ ամէն մարդ զինքն կու ճանայէ »: Լ. և Φ . անուանքն այլ սեւութիւնը նշանակեն, *Nigella*, *Nigelle* կամ *Nielle*, ինչպէս և Ռ. *Черныша*,



Արջնդեղ.

Ամի, տուվաթ այլ թէ և երկու հեղ կու գրէ Շոնիզ անուամբ, բայց զանազանութիւն մի չերեցընեբ. նախ կ'ըսէ, « Շոնիզ, ինքն Սեւ հունտն է, կու ճանչլի. » աղէկն նորն է... Ասէ Մասրուճուանն, թէ՛ Սեւուկ Հնտիկն ընդ առաջին դե- » դերն սահմանեցին Գալիանոս և այլ իմաստասէրքն ». յետոյ գրէ. « Շոնիզ, » Սեւ գետիկն, որ Ար. Հապի Սեփոս կ'ասէ (Հապարա Սոռատ, Ἰδγασ αὐλα), և շատ տեսակ հիւանդութեանց դեղ և օգտակար ըլլալը կու շարէ: — Միաբանող Նդրարք անուանելոց առաքեալն (Եր. Բարգողիմէ) իր մէկ քարոզին մէջ կ'ըսէ. « Արջնդեղն՝ որ կոչի Սոնիճ, է եռանգիւնի և սեաւ, մանր և քաղցր, և ի հաց » ձգեն », որ համ տայ: — Գալիենոսի բառից մէջ Արջնդեղ կոչուի յունարէն Ղազանոն կամ Ղաշանոն, բայց լատինացի բառն ուրիշ բան նշանակէ: — Եւրոպացի տեղագիրք յիշեն զԱրջնդեղ յայլեւայլ կողմանս մեր երկրի, ի Կողբ, Մուշ, Ջուլամերիկ:

328. Արջու ականջ.

Թարգմանութիւն է Թ. անուան Այոս դու- շադի, զոր յիշէ Ամիրս. Աստար-ասդիզու ա- նուամբ, (որ է Ἀστὴρ ἀστειός, Աստիկեան աստղ. Լ. Aster Amellus, յանուն Մելլա գե- տոյ Իտալիոյ), և գրէ. « Ինքն խոտ-մն է որ ի » զետնէն մէն կու ելնէ և ճղեր շունի. և ինքն » ամուր կու լինի և խոշոր, և ի մէջն դեղին » ծաղիկ կ'ունենայ, նման է Պապունածի ծաղ- » կին. և զազաթնին մէկմէկէ զատած կու » լինի, և տերեւնին յերկան կու լինայ »: Դեղ կ'ըլլայ պէսպէս ուռէցքներու: - Փ. Amelle.



Արջու ականջ.

329. Արջու աչք.

Տեսող մէկն ըսաւ, թէ աչքի ձեւով ծաղիկ մ'է մեծ ու սպիտակ. Ամիրս. գրէ սոսկ Ար- բառով. « Այն ըլ-տուայ. Արջուն աչքն է. և թէ » զինքն ի կտաւ կապես, և ըսիպ լերման տի- » ըովն ի վիզն կապես, լերմն թողու. փորձիւ է »:

330. Արջնգոյգ. Արջու Ընգոյգ.

Ըստ Ար. Ճավզի մարիչ կամ Ճիվզի մայիչ, جوز مائل, Փ. Noix Métel. Ըստ Ամիր. կ'ըսուի « Կավզ մարիչ, և Հնդկքն Թորոռուար կ'ասեն. և ինքն երկու » ցեղ կու լինի. մէկ ցեղն ի ճավզ ըլ-տայր, جوز المي, և մէկ ցեղն ի վերայ փուշ » ունի, որպէս փայտի խարտուց կու նմանի փուշն, և սպիտակ այլ կու լինի. և » իր միջին հատն մեծ է քան զՊատնածին հունտն և քան զԼուֆահի (տես » Լուֆ), մանր է և դեղնար է, և մէջն ի լիք հունտ է, և կեղեւն նօսր է, և » զըլուին նման է Պատինճանի և Լուֆայի. և մեծութիւնն Ընկըզի չափ է. և » թէ մէկ կուտ յիրմէն ուտին՝ ըղեղին զեն առնէ և հարբեցընէ. մէկ տէնկն և

» մէկ դրամն սպանանէ և մէկ օրն քուն անէ, և փողել տայ և թմրեցընէ: և
» իր դեղն այն է՝ որ փողեն, և այլն: Եւ գիտացիր որ թ. թարուչայ սանն »:
Ըստ այսմ և Լ. Datura Stramonium.

Վերոյգրեալ արարերէն Ղայը կամ Գայի անուանեալ Ընգոյզն՝ փսխեցուցիչն է, Փ. Noix vomique. որոյ համար կ'ըսէ Ամիրտ. թէ կոչի և « Ճավզի քուսար. ինքն ընկուզ-մն » է՝ որ մեծութիւնն կաղինի մի չափ » է. և լան այն է որ ամուր լինի և « մեծ . . փսխեցընող է . . և իր տա- » լուն չափն՝ կէս տրամ է »: Ուրիշ բժշկարան մ'այլ կ'ըսէ տընկին մեծութեանն համար, « ինքն բարձր » թուփ է, և հնտի բունն փշփշուտ »: Պէշար ալ մարդաչափ մի է կ'ըսէ Արջնգուզենոյ բարձրութիւնն:



Արջնգոյզ (փսխեցուցիչ)

331. Արջի Բատ.

Այսպէս կ'անուանէ բառագիրք մի Լ. Mèlapyrum. Փ. Mèlapyre կոչուածը, որ յունարէն բառի Սելցորեան նշանակէ: Հասարակ դաշտային ցորենի նման հասկաձեւ խոտեր են, անոր համար և կ'անուանին ի բուսաբանից ածուոց կամ մարդաց, Arvensè, Pratense. — Կու յիշուի ի Հայս Տայոց կողմերում, բայց ուրիշ կողմեր ալ պէտք է ըլլայ:

332. Արջինդեղնի.

Ծառ կամ թուփ, Նուխոյ կողմերը յիշուի յորագրի. (Մեղու, ԻԲ, 83):

333. Արջմըջմի.

Սրածայր տերեւներով թուփ մի, ժանօթ ի Խոտուշուր:

334. Արջնի.

Վայրենի Զողպենուոյ նման կամ տեսակ մի պտղատու ծառ:

335. Արջու խաղող.

Ըստ Ար. Ինկայ ետ-տոյ կամ Ինկայ իշչ-տիչայ. զոր Ամիրտ. գրէ Ինկայ ըլ տեպ կամ տոռմ. Լ. ալ նոյնանիչ Սոս Սրսի. Փ. Raisain d'ours կամ Basserole. « Արջու խաղողն, որ թ. Չիլակ ասէ, և կ'թով կու լինի, և մարդու չափ երկայնութիւն ունի. և տերեւն նման է Նուան տերեւին. և ի մրգին մէջն մանր

» կուտ ունի չորս կամ հինգ հատ: Եւ թէ ուտեն՝ օգտէ լուծման և արիւն »
» թքնելուն. փորձած է»: Այսպէս աւանդէ Ամիրտովլաթ:

336. Արջտակ. Արջատակ.

Աւելի գուտ հայերէն կոչուի թուղր. ըստ տեսակին՝ Վայրի Շաղգամ, կամ
Շողգամեակ՝ բոլորակ ձևին պատճառաւ. յունական բառի Κυκλάμιος կոչուի և
Լ. Cyclamen. Փ. Cyclame, (որ հայերէն անուանն ալ նման է). ինչպէս մեր մէկ
բժշկարանն ալ կ'ըսէ. « Ինքն բոլոր գէտ Շողգամուկ է, և գունն ծիրանի լինի »:
Ուրիշ մ'ալ. « Խոտ մի կայ Արջատակ ասեն. տերեւն զինչ Մանուշակի, և տակն
» զինչ Շողգամբի, և ծաղիկն կարմիր է »: Առաջինն այս անունս զուգէ Ար-
տանիսս յոյն անուան, որ և փոխուած է ի Լ. Arthanita. Այս հասարակ և
անշնորհք անուանց հետ՝ Արարք շնորհաւոր անուն մի տան՝ զոր մեր բժշկարանք
այլ յիշեն. « Արտանիսս, որ է Պոլիտարի Մարիամն (Բուրուժն Մարեմայ, Suffi-
tus Mariæ), որ է Արջտակն »: Անգիտաց անպէտն կ'աւելցընէ. « Ար Պ. Ղալ-
» դանիս Շաղգամի կու ասէ. թ. Տօկկոզ աղիդրաղի կամ այաղի (Խոզի ծընկի
սոկր). բայց տարբեր տեսակ մի ցուցընէ, ըսելով. « Ար ինքն փուշ-մն է, որ
» բուրդն այնով կու լուանան, և լաւն այն է որ նոր լինի »: — Յէհրէնկ ի
պարսիկ բառարանի գրէ. « Շեղիւնք. է արմատ ինչ նման Շողգամբի. թ. Տեւ-
կից թօփալաղի »: աւելցընենք որ ոմանք ալ Եեր Կուրանի կ'ըսեն: — Շատ տե-
սակ գեղոց և օգտից մէջ մէկն ալ այս է, ըստ մեր բժշկապետին, որ թէ այնով
« Օժես յայն տեղն՝ որ ի ցրտուն ձեղքեալ լինի, օգտէ. և լաւն այն է որ քիչ
մի մոմ խառնես ի հետն »: — Արջտակն Գարնանային բուսոց ցեղէն համարուի
(Primulaceæ).

Արջտակի մէկ տեսակն Ար. իրենց լեզուով Ասիւծածանկ կ'անուանեն, Քաֆ
ըլ-ասաստ, նոյնպէս և Լ. Leontopetalon. զայս այլ յիշէ մեր հեղինակն Ամասիացի,
Արտանիսս (Յարտանիսս գրելով) բառին ներքեւ. « Յ. (Արարն) Քաֆ ըլ-ասաստ
» ասէ, և թ. Արտան այնաղի. և ինքն խոտ-մն է որ մէկ թիղ երկայնութիւն ու-
» նի, և շատ ճղեր ունի. և յամէն ճղի ծայր հանց որ ի Սիսեա կու բուսնի,
» Հնդեր ունի, և տերեւն նման է Կաղամբի տերեւին. և յամէն ամանի մէջ
» երկու երեք հատ հունտ կ'ունենայ. և տակն սեւ կու լինի, և ի Շողգամն կու
» նմանի, և ի վարած արտերու մէջն կու լինի, և ի ցարենին մէջն այլ կու բուս-
» նի... Եւ թէ կապանին և զքթան կտանին լուանան այս խոտովս՝ յիստակ
» առնէ և սպիտակ »:

337. Արջփիլունց.

Ի գաւառս Պոնտոսի՝ Փիլունց կոչուած՝ բուսոց մէկ տեսակն է, որ լայն և բո-
լորի տերեւներուն համար Լ. Aspidium կոչուի, յոյն սասպիս ἄσπιδος բառէն,
որ նշանակէ մեր հայերէնի նմանաձայն Ասպարը, որ է վահան:

338. Արտախոյր կամ Արտախուր թաւարտ.

Մեր հին հեթանոս վիպասանից երգերէն հանած է Խորենացի (Ա. Լ.) այս
անծանօթ բանջարին անունը, որոյ նման զրոյցն ալ շատ յայտնի չէ. « Տենչայ

» Սաթինիկ տենչանս զԱրտախոյր հաւասար խաւարտ և զՏեց խաւարծի ի բար-
» ձիցն Արգաւանայ » . Թէ և ջանացեր են նոր բանասէրք պէսպէս՝ նաեւ այլան-
դակ մեկնութիւններ տալ :

239. Արտիճ .

Ըստ Սա . Ռոչբան՝ է « Խոտ որ յարտս բուսանի » . և վկայութիւն բերէ ի
Բժշկարանէ . « Արտիճ . երեք կամ չորս հատս ի բուքն » . և Լ . Aphaca կոչէ :
Այս բոյս բանջարեղինաց ցեղէն և ճուլպանի տեսակներէն է . բայց նաեւ Վիզի
տեսակ մի ; որ Vicia Cracca կոչուի . և կ'երեւի թէ այս է Արտիճն . ասկէ տար-
բեր պէտքէ ըլլայ

240. Արտիճուկ .

Աւելի սովորական անուն բանջարեղէնիս է Կանկաս, զոր տես . իսկ առջի ա-
նուան նոյնաձայն է Փ . Artichaut, և իս . Articiooco . ո՛վ որմէ՞ առած է :

241. Արտուճ .

Բժշկարան մի յիշէ տերեւը, մինչ վերոյգրելոյն տերեւն անպիտան գուշա-
կուի : — Բրգնիքոց բառից հաւաքողն նոյնանիչ դնէ Վայրի Հառուկի ? (Հավուճ ?)

242. Արքակաղին . Արքակաղնի .

Ծանօթ ծառ , մանաւանդ պտղովն , որ է Կաղին , ուստի և ծառը՝ Կաղինի կո-
չեն Խոտուլըրցիք . Լ . Nax . Փ . Noisette . Aveline . Ար . Պոնտոք . Թ . Յընտզգ .
նոյնպէս ծանօթ է Պոնտոսի կողմերն այս ծառիս յատուկ կամ հայրենիք ըլլալն .
անոր համար ի հնուց Յոյնք՝ Պոնտական ընգոյզ կոչեր , են Κάρυα ποτινά . Մեր
հին Բժշկարանն՝ կ'ըսէ . « Արքակաղին ծանր և չոր է քան զԸնգոյզ , և այլ շատ
» կերակրէ քան զընգոյզ . և Ընկուզի ձէթ լաւ է քան զԿաղնի . բայց Կաղին լաւ
» է քան զԸնգոյզ » : Իսկ մեր բնիկ Պոնտոսի երկրցին՝ Ամիրտուլվաթ՝ կ'իմացընէ ,
որ « Պնդախ երկու ազգ է , մէկն Վայրի և մէկն Տեղացի . աղէկն քաղքին է , և
» կեղեւն նօսր . բնութիւնն տաք է և զէջ » : Եւ գարձեալ գրէ . « Պնտուխ , որ
» է Յնտուխն որ Հ . Կաղին կ'ասեն . լաւն այն է որ մեծ լինի և քաղցր լինի ,
» և տաքութիւն ունի միջակ , և ինքն գիրացընող է . յորժամ մանր և կանաչ լինի՝
» ծեծեն և մեղրով խառնեն և յաշքն քաշեն , զգաճրան տանի , որ է ըզունկն ?
» և թէ ուտեն՝ զըզեղն յաւելցընէ . և իր կեղեւն կապող է » , և այլն : — Վա-
տակոց գիրքն Արքակաղնոյն տնկելու կերպը կու գրէ (գլ . ԾԼԸ) այսպէս . « Իւր
» ցանեւն՝ զերդ այլոց (ծառոց) է . բայց ինքն զսպիտակ հողն և զկակուղն և
» զչառ ջուրն սիրէ . և իւր տնկելոյն նշանն (կերպն) է , որ արձակ փոս առնես
» և պարան (երկար կարգաւ) . և գրբուրիկ ճիւղն չաչեր առնես և շուրջանակի
» փոսերոյն շարես , և ապա զհողն ի վերայ ածես . և փոս թող , որ ջուրն ի ներք
» հանգչի . և այսպէս արա զամէն դրախտն ի պարան . զի ինքն ծառ չսիրէ լի-
» նել՝ քան թուի բազմաճիւղ » :

Իսկ մեր մեծ առականսն (Մխ . Գոչ) զԱրքակաղնին՝ Վայրի Կաղնի ծառոյ
հետ համեմատելով , այս ետքինս ներկայացընէ հպարտ իր մեծութեան համար .

« Իսկ Արքայկաղնի ոչ ժուժեալ՝ յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ...
» (զի ծառք) ի պտղոյ առաւել քան ի հառակէ գովեալք (իինին). զի՛ այդպէս
» յանդըզնիս. ես և ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպտուղ իմ ուտելով՝ և զիս
» եւս յարգեն. այլ պտուղ քո ի գարման կայ խոզից »:

Յետևառաջութեամբ բարդեալ բառիցն՝ կ'ըսուի և կաղին արքայական, ինչպէս քարոզարան մի գրէ. « Տէրն պտուղ խնդրէ, ոչ եթէ Նուշ և Թուզ և կամ կա-
» ղին արքայական, այլ պտուղ պահոց, պտուղ աղօթից », և այլն:

243. Արքայածաղիկ.

Նոյն առակախօս վարդապետն յիշէ զայս այլ՝ կակաղի և իր նման դաշտական կամ ընտանի ծաղկանց ցեղակից. զորս պաշտպանեց ծաղկանց Թագաւորն՝ լեռ- նականաց մեղադրանքէն, ինչպէս յիշեցինք յԱսպուզանն: Անունէն գուշակուի որ գեղեցիկ և մեր երկրին մէջ հասարակ կամ ծանօթ ծաղիկ մ'է, բայց Թեր- եւս հիմայ ուրիշ անուամբ կոչուի, և այս հին անուամբն անծանօթ մնայ:

244. Արքայամոր.

Մորենոյ տեսակ մի յայտնէ անունն. հաւանօրէն ֆ. Framboise կոչածն է, լ. Rubus idæus. Թ. Չմստչա, որ Դժնկաց ցեղէն է, բայց պտուղն և անօր օշարակն քաղցրիկ և զովարար:

245. Արքայեակ. Արքայիկ.

Հին բժշկարանն գրէ. « Խոտ մի Արքայիկ ասեն. ծաղիկն դեղին է, տերեւն
» որպէս Խոչըրինակ? և տակն՝ որպէս Սունկն, առ ծեծէ, և ի վերայ սընկան դիր, կտրէ և ընկենու »: Իբրեւ ակնատես ճանչցող մէկ մի գրէ մեզ, Թէ ծաղիկն եռագոյն է, կարմիր, ճերմակ և սեւուկ: — Սիմ. կամրկպ. գրէ. « Արքայեկ. Պ. Ար. Շեկչեք. Ինքն խոտ մի է. ջուրն կու հանեն, Շեկչեք սոռի կ'ասեն »:

246. Արքայորդի?

Եթէ նորահնար չէ, վասն զի ի լրոյ է, և զուգուած Թ. Թամ լիլեկի ծաղկին:

247. Արօսախոտ.

Վայրի կամ ածուց խոտ կարծուի, զոր հին բժշկարանն յիշէ, և կաթով ե- փելով դեղ կու տայ սընզան և ուրիշ հիւանդութեանց: Պուցէ ըլլայ նոյնն՝ որ Պ. և Թ. անուամբք Արոսախոտ կոչուի հիմայ այլ, ըսա նոր ծանուցողի, և է Պ. Արոսպոչիսէ, Թ. կեյիկն օրոշ կամ Եկեկի կեյիկն օրոշ¹ (Հարսխոտ), իբրեւ հար- սանց ուտելի, զոր գաւառականք կոչեն եւս Հարսիկ Արոս:

248. Արօսի.

Հազորանի ծառի և պտղոյ տեսակ մի կամ նոյնանիշ անուն: Տես զայն ի կարգին:

¹ Այս անունս հարցնելով բուսաբէտ Թուրքի մի (Ղ. լաթալը Ամէտ էֆէնտի), առաւ զե- ղին ու կարմրուկ մաշկով պտուղ մի, որ էր Յակոբուկ, ֆ. Coqueret,

349. Աւգեր ծաղիկ.

Առուեղին հետ յիշեցինք Սալաձորեցոյն երգով, որ անոր և Մամխոպոպի հետ յիշէ. ծանօթ է և յարեւելակողմանս մեր երկրին, որպէս յիշէ Մշակ (ԺԸ, 88):

350. Աւելախոտ.

Ընդհանուր անուն այն տեսակ խոտերու՝ ուսկից աւել կու շինուի:

351. Աւելուկ.

Փայիենասի բառից մէջ սա զուգած է Ղափարին, այսինքն Լապարոն, Λάπαρον, անուան, յորմէ Լ. Lapatham, բայց բուն Լ. է Rumex, Φ. Oseille. Իսկ մեր լեզուի մէջ կայ ուրիշ անուն մ'ալ պէտք էս այլայլեալ, Թրակիչ, Թրակիձ, Թրքնչոռի, Թրքիձ, որ սովորաբար վայրի Աշերուկ համարուի: Ամիրտովաթ Աւելուկ չի յիշեր, այլ արաբերէն Հռուսագ բառին ներքեւ կու ստորագրէ. « Հուսագ, որ Հ. Թը- » բարկի առէ, որ է Գասնադնակիկ (փոխանակ ըսելու Գասնականչ, վասնՊղի) » և Թ. Ղոզգի դոչադի առէ. ածուց լինի, և ի լերունքն այլ լինի. լաւն այն է որ » ածուենիքն լինի... Թէ գիր տերեւն յայն խոցին վերայ դնեն որ ի յակնթթոռքն » լինի՝ օգտէ. և իր հունգն օգտէ արեան Թքնելուն... Եւ ցեղ մի այլ կու լինի՝ » որ ի ջրին մէջն կու բուսնի, և տերեւն նման է ֆասնոչ մասօրչին? տերեւին, և » ի գազաթն հունտ կու ժողովի. և Թէ եփեն և ուտեն՝ օգտէ փորոյն պնդու- » Թեան և կակղացրնէ. և Թէ զհունտն ծեծեն և գինով խմեն՝ զսիրտն ուրախ » առնէ և զհոգան ի սրտէն հանէ:... Ատ Պտ. Թէ ինքն շատ ցեղ է. մէկ վայրի, » մէկ Ածուց, մէկ Զրի. և այն որ Զրի է՝ Աքսոչաեաբառն (Oxylabathon) կ'ա- » սեն, և այն որ վայրի է՝ Սիլիս վայրի կ'ասեն, և Հռուսագ ըլլափախար կ'ասեն. » և ինքն ի լերունքն կու լինի. և ի Թուլ հողի վերայ կու բուսնի, և Հոսոմն » այսոր Տաստադարչիոն? կ'ասէ »: Այս խանգարեալ բառին վերջի կէսն՝ վայրի նշանակէ, առաջինն? միթէ Լապաթ Λάπαρον և Τρύβλον, Ճակնդեղ:

Հին Բժշկարան մեր Աւելուկի այլեւայլ օգուտները գրէ. « Աւելուկ՝ հով ու չոր » է. եփած աուր, հանէ զխարտէշ մաղձն և հահընդէ. — հում ծեծէ և ի վերայ » քաղցկեղի գիր. — զունգն գինով խմցո որովայնածաց և ստամոքսվաց. — Թէ » ջրով զգա յառաջ խմէ, իժահարի օգնէ, և Թէ խայթէ՝ չահոկէ. — քացխով » եփած՝ ի վրայ հերքունի դիր կամ բորոյ. — Թէ ըղընգունքն կուտ է, չփէ » քացխով և բորակով, և զինքտ ի վրայ դիր. Եփէ ու ի ջուրն նստո, կամ լից՝ » որ կիծ ուննայ. — Ակաացվու՝ ի գինի եփէ վի բերանն առնու. Թէ ի կղակ- » զուխնելունտ կամխոգք (լինի), եփէ գինով և ի վրայ դիր. — Փայծաղնցվի՝ եփէ » քացխով և ի վերայ դիր. — եփէ գինով և խմցո, զգոյնն սրբէ, և զքար՝ որ » ի փաղաբուշան՝ սրբէ »:

352. Էգ Աւելուկ.

Ոմանք զայս նոյն համարին ընդ Էգ Երնջայի, ուր պիտի յիշենք:

253. Աւելի Ծաղիկ.

Փոքր խոտեղէն բաժակաձեւ ծաղիկ մի կարմրասպիտակ, չրթունքն թել թել:

254. Աւելտկուկ.

Որ և Աւելտկի տակ, յիշուած ի Բժշկարանս իբրեւ դեղ, օտար յոյն անուամբ, Բառչիդոս? խոտ, զոր սրինակող մ'ալ գրէ Բառչիդոսիտոս:

255. Աւելի պիպիլ.

Անտառային բոյս մի, աւելը՝ նմանութենէն առած, Տրասիգոնի կողմերում ծանթ ուսկից անգլիացի գունցն՝ յամին 1883-4՝ հրուշակեց իբրեւ տեսակ մի Չայ (տես յէջ 72):

256. * Աւենիա?

Ըստ Ամիրս. « խոտ-մն է » որ տերեւն ի Զրկստիմի տերեւ կու նմանի, և շատ » ծակտիք ունի. աւեն, թէ » ցեցն է ծակծրկել. և թ. » այսոր ազգ մի կաշրնձուկ » չիլակի ասեն. և թէ քամեն » զջուրն ի յալքն կաթեցը. » նեն՝ գաղից մթութիւնն » տանի »:

257. Աւետիկ. Ավետիք

Կարմիր հատուկ ցորենի տեսակ, « որոյ հասկերն ան » փուշ են », կ'ըսէ Մանանայ (եր. 442):

258. Աւիւն.

Կամտեսակ մի է կամ հոճ անուն կնիւնի: Տես զայս:

259. Աւնոր.

Ընդհանուր անուն ընդեղինաց ըստ Չէյթունցոց, ինչպէս Բակլայ, Ոսպն, և այլն:



Առորոսկ.

280. * Ափարբիոն, կամ Աբարբիոն.

Խանգարեալ անուն *Euphorbia* L. Euphorbe, բուսոյ, յանուն Եւփորայայ բժշի Մուրիտանիոյ Յուրաս Թագաւորին: Ռժշկարանք աւելի կրեատելով ալ գրեն. « Պարֆիոն, և Ֆուանկերէն Պարպիոն »: Ափրտովաթ՝ արարերէն Եթիոպիոն ներքեւ կու ստորագրէ. « Այն խոտն է որ կաթ ունի. եսթն » ցեղ է. կաթն և հունտն և տերեւն՝ երեք տարածան տաք և չոր է և այրող » է. և կաթն՝ այրած ակուան կտրատէ, և զսպին ի յերեսացն տանի... և ի ըզընգան քովի զաւելի միան ուտէ, և զմորթն խոց կ'առնէ. — Ատէ Պասէհին՝ » թէ ամենայն խոտն որ կ'աթ ունի՝ այն ի Եթիոպիոնն է. որպէս Շիպրիոն » և Բաշան և Բագիան. և իր ցեղերն շատ աղգեր ևն և ամէնն փնասակար է. և ու » ժովն կաթն է, և այլ յետեւ հունդն է. և այլ յետեւ տերեւն է. և թէ զկաթն » որ (ի) չոր վաթես, որ տեղ որ ձուկ կենայ՝ ՚ի ջրին երեսն գան »:

Նոյն Ափրտ. առանձինն յիշէ և զԱփարբիոն, ոչ իբրև բոյս, այլ անոր հիւթը, հանդերձ Լ. Պարպիոն և Ափարպիոն առ նուամբք. « Եւ ինքն ի » Անծրութ կու նմանի. » խէժ-ձէ է, մէջն փոս » և խիտ սուր է. լաւն » այն է որ նոր լինի. և » սուր լինի »: Այս այլ կ'աւելցունէ մեր բազմաբրբիր հեղինակն. թէ « ի յայլ զիրք գտայ որ » Ճոնտուպատասպարն » է », կամ Ճոնտուպատասպար, այսինքն է Ճոնտուպատեղէր *جنتان*. որ բոլորովին տարբեր բան է, և ինչպէս ինքն իսկ գրէ այս անուան տակ, կըրու ձուն է, որ է Ղունտուգ հայասին: — Դարձեալ գրէ. « Ինքն » խէժ է գեղնբար, և » փշեր ունի, աղէկն նորն է և ուժով »: — Ափարբիոնի հարիւրաւոր տեսակք կան, ի Հայաստան այլ գտուին շատ, և հարկ է որ բնիկ հայերէն անուն այլ ունենայ ազգն, կամ ոմանք ի տեսակաց, որոց մէջ բուսարանից կոչած մէկն այլ է Հայկականն, E. Armeniaea. — E. Gerardiana ի Գանձակ. — E. Marshalliana,



Ափարբիոն.

Ափարբիոնի հարիւրաւոր տեսակք կան, ի Հայաստան այլ գտուին շատ, և հարկ է որ բնիկ հայերէն անուն այլ ունենայ ազգն, կամ ոմանք ի տեսակաց, որոց մէջ բուսարանից կոչած մէկն այլ է Հայկականն, E. Armeniaea. — E. Gerardiana ի Գանձակ. — E. Marshalliana,

յԱզդոր, վան. — E. Denticulata ի Մանախ. — E. Bothriosperma (Խորասերմ) ի Մուշ, Կիւմկիւմ, — E. Romicifolia ի Մոկու: — Մեծածաղիկն՝ E. Megalantha յԵրեւան. — E. Wittmanni յԱզդոր. — E. Eriophora (Արարբեր) ի թ-Ն.* — E. Subtuberculata ի Հեր. — E. Orientalis ի Մոկու, Խոջատերէ. — E. Macrocarpa, E. Condilocarpa, E. Szowitsi, E. Arvalis, E. Petrophila, E. Virgata, E. Iberica, E. Glareosa, E. Tinctoria, յայլեայլ կողմանս:

261. Ափիոն.

Մանօթ այս անուամբ՝ յարեւելս Աֆիոն, յարեմուսս Opium. ոչ բոյս, այլ հիւթ բուսոյ Մեկնինն որ և Խախաշ. այս ետքի անուամբ յիշեմք մենք այլ բոյսը. իսկ այս տեղ քիչ մի մեր բժշկապետին ըսածէն, հիւթին համար « Աֆիոն, որ է գա. » ըլար և սեւ Խաշխաշին և Հագրին խէժն և կաթն. երկու ազգ կու լինի. լաւն » այն է որ խիստ լեղի և հոտն սուր լինի... Իսկն (Պէյթար) ասէ, թէ ինքն » դայար Խաշխաշին կաթն է. և թէ ի տաք ջուրն ձգեն՝ շուտ տրորի. և թէ յա. » բեւն դնես՝ շուտ կակղանայ. և այն որ սուգժու է՝ զջուրն դեղին կ'առնէ, և » խոշոր լինի որպէս մումիա: — Եւ ասեր են, թէ վայրի Հագրին կաթն է. և » այն որ փայլուն է՝ խէժն է:.. Աղէկն ի Մարայ գայ:.. Ասէ Պտ. թէ յորժամ » ուղենաս որ ի ծառէն քաղես, պիտի որ դրերանն ամուր կապէ և փակէ մարդ, » որ փոշին ի բերանն չմտնու. թէ մտնու՝ զակուանին կու վաթէ իր փոշին զա. » մէջն. և յորժամ զինքն ժողովեն՝ կու պիտի որ կտուած Բակլայ խառնեն ի » մէջն. որ ուժն յիսափանի »: — Շատ տեսակ օգուտներն և զնաններն յիշելով կու վերջացընէ գրողն. « Աստուած օրհնէ զայն մարդն՝ որ զԱֆիոն ուտելն իր գործ » չանէ »: — Տես և Խաղպատ:

262. Ափնիք.

Արար բառէ անուած, որ է ֆե. ֆի-ատաւ, Ազամայ կամ մարդոյ ձեռք. Խոտ-մն է կ'ըսէ Ամիրտոլվաթ, որոյ ուժն կամ աղդեցութիւնն նման է ֆուֆ ըր-Հարիրին օգտութեան և զօրութեան. ետքինս կատուածանկն է, զոր գտնես ի կարգին: Պէյթար կ'ա. ւելցընէ՝ որ բոյսն կանգնաչափ մի բարձր է, տերեւներն Մրտենուոյ նման, վերի ծայրերնին քիչ մի կլոր. արմատն կամ տակն կէս դեղին կէս սեւ գու. նով, ներսի դին կարմիր: Թարգմանիչն (Leclerc) անծանօթ բոյս մի համարի. բայց հաւանօրէն է Լ. Symphytum, ֆ. Consoude, և Ն. Շամդիտակ, կամ Մործորակ: Տես զայս:



Ափնիք.

Ֆ. Consoude, և Ն. Շամդիտակ, կամ Մործորակ: Տես զայս:

* Կարգա Թուրքանաչք. Թուրքոյ Հայաստան, Ինչպէս Ռ-Ն. Ռուստուպ:

263. * Ափրիանա.

Ափրիանոս և ստուգելի « Խոտ մի, ըստ Բժշկարանի. որ ի շարեաց կամ ի ջատ-
» կաց (կախարդ կին) ահ լինի, զնա հանէ և առ իւրն պահէ, շկարէ ոք ինչ
» առնել: Նշանն այս է, բարձր է, և ծաղիկն բոլոր և խիստ կարմիր՝ քան զա-
» մենայն ծաղիկ. տերեւին ծայրքն սուր լինի. տերմն նման է Նշան հատի. ի
» շերինս լինի: Երբ կտրես՝ առանձն, թէ, Չքեզ վասն այս իրացս հատանեմ »:

264. Աքալ.

Ափրա. Ազգայինսս անուան տակ կու գրէ. « Որ է Աքալ. Իպն (Պէթար) ասէ,
» թէ ինքն խոտ-մն է որ երկու ցեղ կու լինայ. և ինքն ի ջրեզերինն կու բուս-
» նի. և մէկն պտուղ չունի, և մէկն սեւ բոյրիկեկ պտուղ ունի. և թէ այն
» պտղէն զինով խմես՝ զփորն կապէ. և թէ զտերեւն սպեղանի առնես և ի վե-
» րայ օձահարին դնես, օգտէ. բայց (թէ) զայն պտուղն ի կրակն տապկես և
» ապա խմես, օգտէ »: — Երկու անուններն այլ չի գտայ Պէթարայ մէջ. առա-
ջինն յունաձայն է, որոյ նման կան Ascalea և Ascalia բոյք՝ կանգառի և կառին
ցեղէն. կայ և Ascalonia, որ Սկաղոնի Սխտոր նշանակէ. բայց և ոչ մէկն Ա-
միրտովաթայ ըսածին յարմարին: — Ծանօթագոյն է Ասկլիպիան Յ. Ἀσκληπιός,
Լ. Asclepias. Ար. اسكليبيا, որոյ յատուկ Հ. անունն ինձ յայտնի չէ. և
մեծ ցեղ մ'է բուսոց, աւելի տաք երկիրներու, այլեւայլ ազգ բաժնուած. յորոց՝
Թունաթափ՝ Vicetoxicum ազգի ճերմակ տեսակն (A. Canescens) տեսնուած է ի
Ծանախ, յՈւռհա. — Սեւ տեսակն V. Nigrum ի Հս. և Հր. կովկաս, Ճիմիլ լեռ. —
Տմայեան կողուածն V. Tmoleus ի Ռարբրդ, ի կողմանս Մոկաց. — As. Cyanchum
ազգէն՝ Սուր՝ (Acutum) կոչուածն՝ յԱմիդ, Խարբրդ:

265. Աքաղաղի խոտ.

Բժշկարան մի յիշէ, բայց չի բացատրեր, զուցէ ըլլայ Աքլորուկն:

266. * Աքիլիւնիք կամ Իքլ իւլ-մէլիք.

Արարերէն նշանակէ Թագաւորի պսակ, և ըստ այսմ կոչած է Ասար բժիշկն
Թագաւորապսակ, ուր և յիշեմք նաեւ ուրիշ անուններ. բայց այս արարացի ա-
նունն յարեւելս հասարակաց ըլլալով և ի մեր բժշկական գիրս, հարկ համարե-
ցանք յիշել և այս տեղ:

267. Աքլոր-կոտոշ.

Ըստ Շէհրիմանի սա է Յունաց և Լատինաց Oxyris կոչած բոյսն, զոր նոյն-
պէս կոչէ և Պէթար ասցչալ, և սեւադոյն բոյս մ'է կ'ըսէ, բարակ՝ բայց զը-
ժար կոտորուող ճիւղերով, զոր կրակ վառելու գործածեն. տերեւներն ալ նման
կանեփոյ, նախ սեւ՝ յետոյ կարմիրն. համն լեղի և բացողական (aperitive).
Ինչ նմանութիւն ունի աքլորի կոտոշի կամ գազաթան. — տեսնողն ստուգէ:



Առեղի պիպիլ .

268. Աքլորուկ կա' Աքլորիկ.

Որ և կարնրանչար կոչուի, և գտուի մեր երկրին այլեւայլ կողմերում, ի Շիրակ, Լոռի, Վան. գարնան կու բուսնի և կ'ածի. կարճ բոյս մ'է, զոր թթուեցընելով կու պահեն ի պաշար ձմեռուան և պահոց (տես յէջ 68):

269. * Աքսար.

Աարուցար ըստ Ար. ۱۰۰۱۱. « Որ է խաչ (ըստ Թուրքաց). ինքն խոտ-մն է՝ » որ իր տերեւն նման է Ստեպղնին տերեւին, և ինքն մէկ մէկ կու բուսնի, » և յերկանքն երկու թիզ կու լինի, և գագաթն Սամիթի գագաթ կու նմանի. » բայց ծաղիկն սպիտակ է և տակն բոլոր քան ընկզի մի չափ. և թէ ի քօքէն » հաց առնեն և ուտեն՝ քնացընէ: Եւ ինքն լինի ի ցանի տեղերն և արտերն և » ի շերունքն. և ինքն տաք է և չոր է, և իր անունն Թ. խաչալ ասեն: Ով որ » յամէն վաղվընէ մինչեւ տասնուհինգ օր ամէն օր զասոր հունդն երկու մթխալ » ուտէ և Տատաշի շուր խմէ ի վերայ, հալէ գան քարն որ երկկամն լինայ »:

Այս բոյսս բուսարանից տարակուսի և վիճի առիթ եղած էր, հիմայ հաւանին թէ ըլլայ կոչուածն Bunium Bulbocastanum. ֆ. Noix de terre, որ նշանակէ Գետնի Ընկոյզ, Ամիրտուլվաթայ ստորագրածին այլ յարմար: Պէթար ուրիշ շատ անուններ այլ յիշէ Աքսարայ՝ Ատրուոց և Աիրիկէի այլեւայլ կողմանց մէջ Ատուած: — Հաւանօրէն այս է և Հ. Գետնիպտոռղ և Գետնի աղիք կոչուածն, այլ և Երկրնայր, զորս տես ի կարգին:

270. * Բաբունան կամ Պսպունիճ.

Տես Գետնախնձոր կամ Երիցուկ: — Ըստ ոմանց է Լ. Achillea fragrantissima.

271. Բազաւորդ ?.

« Մանր Երնջակի տակ » է, կու գրէ բառգիրք մի, և ի Լ. Baccharis, որ ըստ առասպելաց նուիրեալ էր Բաբսս դից:

Բադդկենի. — Տես Բաթկենի:

272. Բադրուանկ.

Մեծ և լեղուահամ լիմոն, ըստ Քալանթարեանի:

273. * Բադիան.

Պարսկերէն բառ է بادريان Միս. Հերացի յիշէ (եր. 78. 122). « Բադիանի հունդ, որ է Բագիան », կամ Ռագիան. Լ. Foeniculum. ֆ. Fenouil. Տես Բագիան:

Բադրուճ. Տես Պատրուճ կամ Պատրիճ:

274. * Բագրագ.

Ար սովորարար Պասպաս գրութի, բայց լաւագոյն անունն է առ մեզ իշ:

275. Բագղ? . Տես Դասնուշ.

276. Բագուկ. Բագլիկ.

Վաստակոց գիրքն (ԾԿԱ) նոյն համարի զԲագուկ և զՃակնդեղ, ռակայն թէ և ազգակից՝ այլ տարբեր տեսակք են. առաջինն կոչուի Լ. Beta. Փ. Bette. Իրկ. բորդն Լ. Beta Rapa. Փ. Betterave. Ամիրտ. Բագուկի համար կ'ըսէ. « Արապն՝ » Սիլիս (Սիլք ܩܠܐ) և Հոսոնն Սեչըտն (Տեչտիտն, Τίτυλλον) առէ. և ինքն » երկու ցեղ է, կարմիր և Սպիտակ. լաւն այն է որ սպիտակ լինի... և տերեւն » կ'օգտէ կրակին այրածին, և զուռէցն կու տանի և կու բանայ, և զշտերն այլ » կու բանայ. և ինքս սովորայի բնութեան մարդոյ չէ աղէկ », և այլն: — Աւրիշ Բժշկարան մ'այլ կ'ուզէ որ աղէկ Բագուկն ոչ միայն սպիտակ ըլլայ այլ և տափակ. իսկ Վաստակոց գիրքն՝ Սպիտակ և աղւոր ընելու համար « Պախրէից » այրած ի վերայ, կ'ասէ. նոյնպէս և զկարմիրն ի յիւր ոճն շինէ՝ պախրէից » այրն: — Ինչպէս շատ բանջարեղինաց՝ այսպէս և այսոր այլ կայ վայրին, կամ Լեռնային Բագուկն, ըստ Ար. Սիլիսի ձապարի, որոյ համար գրէ մեր հեղինակն. « Սիլիս ձապրի և Սիլիս պարրի ասեն, որ է վայրի Բագուկն. և իր » տակին Հայինուս ասեն (Β. Ἄλιμος) և ինքն Չարալն է, և Պ. Սլատտարու » Գ'ՍՏԻՅԻ, կ'ասեն, և Հարնօր այլ կու ասեն », և այլն: — Թէ և հասարակ բոյս է Բագուկն, բայց քանի մի տեսակ զանազանուած է, որոցմէ ի Թ-Հ. նշանակուած են, B. Trigina և B. Lomatogona. իսկ B. Macrorrhizza ի (Հեր) խոյ:

277. Բաթկենի. Բաթտուկ. Բաղդկենի. Բաղկենի.

Երկու ցեղ բոյս կ'իմացուի այս անուամբ. մին է Գայլիտուն, զոր տես ի կարգին, և որ օտար անուամբ կոչուի Շքոչր. ինչպէս գրէ հին Բժշկարանն. « Շքոչրի ունտ, որ է այն Բաղդկենին՝ որ լինի յայգիւն »: Վաստակոց գիրքն այլ (89) բուսոյն Թելանման մասերը կ'անուանէ Բաղկենոյ հեր (մեզ): — Միւս համանունն բոյսն կարծուի կնձնի ծառն. և անուշտ այսոր հիւթն է յիշեալն ի Բժշկարանի՝ Բաղկենոյ խեժ:

278. Բալախ.

Ըստ Ամիրտ. է Օղևան. ուրիշ մ'այլ կ'ըսէ, « Օղևանին խոտն, և ինքն Սիռուան նման է »: Նման և ոչ նոյն. այլ ըստ Ստ. Շէհրիմանի և ըստ վկայութեան տեսողաց և լսողաց ի Հայս, է տեսակ մի Պրտու կամ կնին, որով կու հիւսեն նստոց, սիրիդ, և այլն: Այս բառս որ սեմական լեզուաց սեփական թուի, Ս. Եփրեմի գրոց Թարգմանութեան մէջ գտուի, և անպիտան խոտ կամ շնչին բան

մի նշանակէ. և Քրիստոսի վասն Յովհաննու Մկրտչի ըսածին համար, « Զի՛նչ » ելէք յանապատին տեսանել, Նղէզն շարժուն ի հողմոյ », կ'ըսէ. « Ոչ էր նա » Նղէզն Բաշախ : Ուրիշ տեղ մ'ալ (Մեկն. Նլկց), « Փոխանակ այնր զի ասէ » սակաւ հացիւս, հերբայեցի Բաշախ հացիւս՝ ասէ ու : — Լ. Salicornia. Փ. Salicorne անուան պատշաճի, և յատկապէս խոտեղէն կոչուած տեսակին, S. Herbacea, որ հանչուած է ի կեսարիս, ի Հր. կովկաս :

279. * Բալախուր ?.

Այս անունս յիշուած չէ առ մեզ, այլ նման է Հ. բառից. Ար. նշանակէ տեսակ մի ճանկիկ. (Chèvrefeuille), Լ. Lonicera Iberica.

280. Բալասան.

Ծանօթ յարեւելս և յարեւմուտս՝ անուշահոտ իւզոյն անուամբ, որ մասամբ զըտուի իր ծառէն. « Որ է ինքն Մեռոնիկ ծառն, ըստ Ամիրս. որ Ֆունկն » Պաշտամի ասէ (Balsamum). ինք ծառ-մն է որ ի յԵգիպտոս կու բուսնի. նըս » մանի ծառն ի Փշատի ծառն, և ի ոստերուն եղ կու ելանէ. էգ և որձ կու » լինի. լան այն է որ անուշահոտ լինի... իսկն (Պէյթար) ասէ. թէ, իր փայտն » երկըթով ճեղքեն, և եղ կու ելանէ... և թէ զայս ձէթս ի կաթն կաթեցընէ՝ » մտկըրդի. և թէ կաթով խմես՝ զմահացու դեղն խափանէ: Եւ ասեր են հին » բժշկապիտքն, թէ Բալասանին եղն ուժով է քան զհամն, և հապն ուժով է » քան զփայտն... Աւէ Պատէհին, թէ.. տերեւն նման է Սազապի տերեւին, » և այլ սպիտակ է. և իր տեղացն անունն (յԵգիպտոս) Այնի շէմս կ'ասեն (Ե- » լիուպոլիս, Արեգ-քաղաք), և Պատի-հունէյնի այլ ասեն ու : — Մեր նպատակէն » օտար համարելով Բալասանի իւզոյն վրայ զանազան գիտելիքն, յիշեմք միայն » արեւելեայց նա և Արաբացոց ոմանց աղուական աւանդութիւնը, թէ Բալասանն » անուշահոտ՝ այլափոխութիւն մ'է այն լրոյն՝ որով Տիրամայրն՝ Յիսուսի մանկան » հագուստը լուանալով թափեր է : — Ուսումնականք հիմայ փոխանակ Բալասանն » անուան՝ կ'ըսեն Amyris Gileadensis, իրր՝ Զմուսս Փալասարու. — Իւզարեր » ծառէն զատ կայ նաեւ,

281. Բալասան Ծաղիկ.

Ծանօթ մեր հայրենի հողուն վրայ այլ, և երգողին եւս (Սալաձորեցոյն), որ կ'իմացընէ ոչ մի՛ այլ շատ տեսակ ըլլալն, ըսելով.

« Այն Պալասան ծաղիկն որ կայ, երամբն մեծ (կամ շատ) է Ափրնուն.
Մեռանին մակարդն այն է՝ որ կու կարդան մէջ գրքերուն »:

Միթէ Ամիր կոչածն՝ վերոյիշեալ Լ. Amyris է՝, թէ մանաւանդ նոյնանուն Balsamita կոչուած ծաղիկն, զոր Պէյթար ալ յիշէ Ահիեալ գոսդա անուամբ, իրր համեմային սուր անուշ հոտով բոյս մի, կանաչ ու ճերմակ գու-նով, զոր տանց պարտիզաց մէջ կու դարմանեն, և Թրընյխտաի տեղ կու բուսնէ (Մեկիտա), քան զայն զօրաւոր :

Բալասուր.

Տես Պալատուր, վասն զի աւելի Պ տառի գրուի:

282. 283. Բալենի. Բալի. — Նալկապ Բալի.

Որոյ պտուղն է Բալ: Այս անուամբ հիւսայ ընդհանրապէս կ'իմացուի քիչ մի թթուհամ տեսակն կեռասի, Թ. Ֆիչնէ, խտայերէն Visciola. L. Cerasus Griotta. Փ. Griotte. բայց շատ տեղ ի Հայս և ի գիրս՝ բուն կեռասը, որ նոյն անուամբ կոչի յարեւելս և յարեւմուտս. (տես կեռաս): Ամիրտուլթի չի գանա. զաներ, այլ երկու անուամբք ալ նոյն մի պտուղը և ծառը ցուցնէ, վկայելով որ զանազան տեսակներ ունի: Առաջին անուամբ կ'ըսէ, « Բալի պտուղ, որ է » Ղարասիա, որ է կեռասն: Երկրորդը Ղարասիա բառի յիչէ, ինչպէս նաեւ Պէյթար. « Ղարասիա: Թուրքն կեռաս ասէ, և Հայն Բալի պտուղ ասէ »: Պէյթար այլ յիչէ կեռասի զանազան տեսակներ ունենայր, բայց առանձին անուամբ Բալ չի յիչեր. նոյնպէս և Վաստակոց գիրքն շատ անգամ յիչէ զկեռասի ծառը. բայց և ոչ մի անգամ զԲալենի: — Նալկապ Բալի կոչուի ի Խոտուղուր այն Բալին՝ որոյ պտուղն կարմիր ու ճերմակ է. ինչպէս կ'ըլլայ և Խնձորն, որ յարմար կամ անյարմար՝ Երգերգոցի մէկ խօսքով՝ Երբորորդի ըսուած է յոմանց:

284. Բակլայ.

Ծանօթ ընդեղէն, նոյն անուամբ կամ Պաքիչա Ա. և Թ. بقله նաեւ Ալ-Ֆուռ յոյսի իսկ L. Faba. Փ. Fève. « Լաւն այն է, կ'ասէ մեր հեղինակն, որ » Նապտի լինի կամ Մըրի, և շուտ եփի, և խոշոր լինի և գէր, և բնութիւնն » մուհթատիլ է (բարեխառն) ընդ տաք և հով. բացող է. և զմանն յերեսացն » տանի, և անձինն ճիշտ տայ... և ինքն աղկ կերակուր է, և զանձն առողջ » պահէ. և թէ քացխով եփեն՝ օգտէ... և իր կանաչ կեղեւն օգտէ բորին և » քորին... Ատէ իսն. թէ զԲակլան հաւուն ուտեցընէն՝ այլ հաւկիթ չածէ. և » զբակլան շատ ուտելն զհոգս կու յաւելցընէ. և թէ զիր ալիւրն նի ձիթով » խառնես և ուտես՝ օգտէ հազին և զաթլճամին՝ որ է կողցաութիւն... Եւ » լաւ եփելն այն է՝ որ կտվեն և ճղքեն և ապա եփեն, և աղով և հոռոմձիթով » և Ծաթրինով և Քամոն և Տարչինի և Պղպեղ և Յութանած (Դաղձն) և Ան » ճիտանով ուտեն, և ի վերայ Չանճապիլ սնուցած ուտեն »:

Հին Բժշկարանն այլ նոյնն և ուրիշ օգուտ ու վնասը գրէ. « Հով և չոր է. Դաս » լարն՝ հով ու գէճ. պակաս կերակրէ, և յուշ երթայ ի ստամոքաց՝ և շատ » քամի ձգէ ի ստամոք. Ծայթրինով՝ չձգէ խիստ, և կիր գինք՝ Պղպեղով. Վայրի » Դաղձնով, Չամիով, հոռոմ ձիթով և Նշի: Եւ ինքտ սրբական է. և ի է վասն » քամոյն չէր՝ իր լուրն զարէլրի բան այնէր. և ինք աղէկ է հազի, կրծացվի՝ » և որ ի տաքէ լինի: Եւ լաւն՝ մեծ, սպիտակ և եգիպտացին՝ որ է Թլմուզն »:

Վաստակոց գիրքն շատ տեղ զԲակլայ յիչելէն զատ՝ առանձին զլուխ մի (ԻԳ) այլ գրէ անսր մշակութեան. թերեւս ոմանց պիտանի ոմանց հաճոյ ըլլայ լսելն.

« Ասացին ոմանք ի փորձականացն և հաւանեցան, թէ զԲակլայն ի զիջային և ի շաղախուս տեղ պարտ է ցանել. զի թէ ի նօսր և ի չորային տեղ ցաննս, նա մանր լինի և աննիւ. և Բակլայն երբ ծաղկի՝ զանձրեւն խիստ ընդունի. նոյնպէս և զԲակլայն պարտ է թրջել և ապա ցանել, և մինչ թրջել կա՛վենաս՝ ի ջուրն սակաւ մի նատրուն գիր. — նատրունն զերդ աղ է, և ի Մորայ գայ. — երբ հանց անն՝ նա Բակլայն մեծ գայ և եփուն լինի և լաւ: Եւ զիտելի է, զի չէ պարտ զառաջնոց իմաստուն և փորձական արանց խրատութն զանց առնել և հակառակիլ բանից նոցա. քանզի գրեալ են, թէ Բակլայն զմարդն մուսուլման և անմիտ առնէ. և աստի է յայտ, որ երբ զինքն զատ (կամ շատ) ուտէ զք՝ նա զբոլոր զիւերն մինչ ի լոյս յերազանայ »: — Մխիթար Գոշ այլ քանի մի առակ գրած է՝ Բակլայի մեծութիւնը և տափակութիւնը ցուցնելով, յորում յիշէ, թէ « մարդիկ աղօթեալ չափախն զիս », թերեւս այլիւ չինելու համար: — Նարաթացոց Մշակութեան գիրքն շատ երկար գրէ Բակլայի վրայ, յորում նշանաւոր է մեզ հին Յամբուշատի (1) վկայութիւնն, որ ըսեր է, թէ երբ մեր երկրի բնակիչք Բակլայ ցանեն, (մեր հաշուով) յանուարի սկիզբները, մեծ և աղէկ կ'ըլլայ պտուղն և որդնահար չըլլար: Նոյն հեղինակն խրատէ, որ Բակլայն ձկան հետ չուտուի, զի սուր ցաւեր պատճառէ:

Պիւթագոր փիլիսոփայի հետեւողք և այլք յարեւելս և յարեւմուտս՝ խորչին Բակլայ ուտելու, պէտպէս առասպել կարծեօք. ոմանք այլ համարէին՝ թէ մեծելոց հոգիք Բակլայից մէջ մտնեն, կամ գտնէ յարաբերութիւն մ'անին. այսոր հակառակ քրիստոնեայք այլ հաստատեցին ի յիշատակի մեռելոց՝ Բակլայ ուտել կամ տալ աղքատաց, և դեռ այսպէս կ'ընեն տեղ տեղ, Բակլայի տեղ ուրիշ բան այլ տալով՝ բայց միշտ Բակլայ անուամբ. մեր բարեսէր Լամբրունեցի Հայրն այլ՝ ոչ միայն քանի մի մեռելոց յիշատակի օրեր, այլ « Սահմանեալ եմք, կ'ըսէ, յուրբաթի և ի չորեքշաբաթի 200 և 300 աղքատաց՝ հաց և Բակլայ բաշխել »:

285. Վայրի Բակլայ.

« Պախիչայի Ղպտի (ըստ Արար.) ի կանկնման (անշարժ) ջրերուն ի մէջն կու բուսնի. և իր երկայնութիւնն երեք թիգ կու լինի, և հաստութիւնն մատի մի շափ կու լինի. և գունն կարմիր կու լինի վարդի պէս. և թէ ծեծեն և խմեն ո այլիւրով՝ օգտէ լուծման և աղից գաներուն (վէրք). և թէ տրորեն և խառնեն նշի ձիթով և յականնն կ'սթեցընեն, զծանրութիւնն տանի »: Ի Պէյթարայ առած է Ամիրտ. այս և ուրիշ բացատրութիւններ. նա յիշէ որ Եգիպտացիք կամ Ղպտիք՝ Ճնմասա կոչեն ջրային Բակլայն . L. Nymphæa Nelumbo. — Իսկ Ամիրտովաթ իրրեւ տարբեր տեսակ մի կ'ըսէ. « Պախիչայի Ղպտի-մն այլ (կայ), որ է Ճարսուսա »: Թէ սա և թէ Պէյթար շատ ուրիշ տեսակ Պախիչա կամ Պախիչաք յիշեն, որոց շատն ոչ միայն տեսակաւ՝ այլ և ցեղով տարբեր բոյսեր են. տւելի մօտ տեսակներէն յիշինք « զՊախիչաք ըլ-Եյամանիա (որու) կանանչ և կարմիր այլ կու լինի որձան. և ի յԱմասիա՝ այս խոտիս՝ Թուրքք ֆրսիթեմ օւնայի (վայրենի) կ'առնն. և լաւն այն է որ դեռ հունտ չէ բռնել. և հունտն սեւ և մանր և պսպղուն լինի »: Ասիկայ է յունարէն Վլիտոն կոչուածն,

1. Յետևել 61

Βλήτων, որ նոյն ձայնով գրուած է և հայերէն. **Փ. Blotte.** — «Պսիլար բլ-Ռանկ» որ իրենն Ազի Բակլայ կ'ասեն, այնոր համար որ ի աւզոս տեղեր կու բուսնի ո. **Փ. այլ այսպէս կոչուի, Plante des sables.** — Տես և Գոգիզ:

286. Խոզի Բակլայ.

Սո. Ռոշքեան նոյն համարի ընդ Բանգ կամ ընդ Աղուէշբանկ. Տես զաստեղ:

287. Բակլախոտ.

Արտերու մէջ ինքնարոյս խոտ մի է, նման Բակլայի, զոր **Ք. կոչեն Երասն բակլայ:**

288. Բակլուսին.

Այսպէս կոչուի, ըստ նոր գրողի առ մեզ, մահկաձեւ ոսկեգոյն ծաղիկ մի, զոր **Պ. կոչեն سانسو, Զերնիլան (ոսկէնիլ), Ք. Այ լիլիկի:**

289. Բահման.

Հայերէն Փշաքեղ կոչուի. տես զայս ի կարգին:

Բաղասամոն. — Տես Բաշտան:

290. Բաղբակ կամ Բաղբաք, կամ Բաղբաղ.

Բժշկական բառգիրք կու դրկեն առ համանիշն և զտագոյն հայերէն Զրարար: — Բաղբակա (Balbaka) կ'անուանեն Հնդկիք բրնձանման ընդեղէն մի, **Eleusine** ըստ Բուսարանից, և յատկապէս **Eleusine Indica.**

291. Բաղամ փայտ.

Որ և Որդան փայտ. տես Մժղի: Յիշուի յԱրուեստաբանական գիրք:

292. Բաղեղն.

Ծանօթ բոյս, որ կու պլլուի ուրիշ մեծ բուսոց (ժառոց) վրայ, պատերու վրայ և որ և է նիւթոյ. անոր համար Պատաստոզկ այլ կ'ըսուի. և ուրիշ անուններ այլ ունի թէ մեր լեզուի մէջ և թէ Արարացոց և բայց նոյն իսկ անուանց շատու թիւնն կ'իմացընէ բուսոց այլ ասորերութիւն, թէ և ունենան ընդհանուր նմանութիւն. սակայն զժուար է զանազանելն ըստ անուանց. այլ ըստ մեր կարելոյն՝ հասարակ Բաղեղ իմանանք կոչուածն **Ա. Գիսոս عوجاڤ կամ Դոսոս ըստ Ա. միրոս. Լ. Hedera. Փ. Lidrre. Ք. Մարմարոզ, Յիշուի Ար. անուան տակ ստորագրելով մեր հեղինակն՝ յիշէ ուրիշ նոյն լեզուաւ անուններ այլ ըստ**

Պատէհինի, Ղայրառու, Հայ ըլ-Մասաքիւն, Մեծ Հայրապ, և ի մի խառնէ
 ասոնց յատուութիւնները: Նախ ըստ Պէյթարայ կ'ըսէ, «Թէ ինքն ի քարերուն
 » և ի պատերուն մէջ կու բուսնի և կու կպի. և Սիննայ որդին ասէ, թէ ինքն
 » մեծ ծառ-մն է, սպիտակ և կարմիր կու լինի.
 » և լաւն նորն է»: Յետոյ ըստ Պատէհինի Մեծ
 » Հապլապին համար գրէ. «Իր տերեւն քան
 » զՄանր Հապլապին մեծ է. ասոր ի Շիրազ
 » Մարդս կ'ասեն. և ինքն շատ ցեղ է. և մէկ
 » ցեղն Սպիտակ է, և մէկ ցեղն Սեւ է. և
 » այլ պղտի ցեղին Ղաս կու ասեն. և այն որ
 » Սպիտակ է՝ միրգն այլ սպիտակ է, և այն
 » որ սեւ է՝ միրգն այլ սեւ է և ի սեւութիւն
 » կու քրտէ, և դոյնն զաֆրանի լինի.. և եր-
 » րորդ ցեղն այն՝ որ Ղաս կ'ասեն, ինքն թե-
 » թեւ է, և իւկի միրգ չի բուներ և չի բուս-
 » նիր, և ճղերն բարակ է, և տերեւն փոքր
 » է», և այլն:



Բաղեղ.

Հայրապ անուան ներքեւ այլ կու գրէ Ամիրտ.
 « Որ է Բաղեղն. ինքն կանաչ խոտ-մն է, տա-
 » քութիւն և չորութիւն կու քրտէ, կակղացընող
 » և հալոլ է... Ասէ Պատ. Թէ ինքն Ղարպուզն է և Ղարպուզն կ'ասեն, և ինքն
 » Ղառուսին ցեղերուն է, և Ճոշպուզ այլ կ'ասեն, և ի Շիրազ Հայրապ ասեն.
 » և ինքն ուր բուսնի՝ քովեր կու բուսնի, յինքն կու փաթփի »: Այլ տե-
 » սակ Բաղեղան յարմարի Բաաղեղ անունն, և Լ. Convolvulus arvensis կոչածն.
 իսկ Սինայի որդւոյն (Աւլչնա) յիշած ծառն և Մեծ Հապլապն՝ Hedera Arborea.
 Բժշկարան բառից հաւաքման մի մէջ գրուած է, « Հիւսնի իսաուֆ, որ է Բա-
 » ղեղն՝ որ ծառերն կու փաթթլլի ». բայց նոյն գրիչն գարձեալ զնոյն Թ. ա.
 նունը վառվառուկի զուգէ:

293. Բաղմ.

Քթան նշանակէ, ըստ կալհօկցի Տ. Պետրոսի:

294. Բաղինջ.

Բիւլուած է աղցան կամ թթուուկ ուտելի բուսոց հետ:

Բաղշտակ. — Տեա. Բաշխտակ.

295. Բաղջ.

Սեւհրնակի նման մանր հատեր ունի, զոր հացի վրայ ցանեն. ըսել է նոյն
 կամ նման Հացհամմի: Թ. Էքսիկ չէորէկի. Պ. Նանէքիւնու. տ. Արջնդեղ:

296. Բաղրջուկ.

Մուշի շատ անուններէն, թերեւս և տեսակներէն մէկն է, գուցէ Լ. Hibiscus Pentacarpus. Թ. Խոշարագի մէյեղ, որ Թագաւորական Մուշ ըսել է:

297. Բահիճ կամ Բաջիջ.

Այսպէս կոչուի որ և է ընդեղինաց մաշկային պարկն կամ պարկուճն, որոյ մէջ կ'ըլլան հատերն. բայց յատկապէս այս անուամբ կոչուի Լուրիայն:

298. Բամբակ. Բամբակենի.

Աշխարհածանօթ պիտտնի բոյս, իր պտղէն շինուած զգեստեղէնի նիւթոյն համար, որով զուգակից կամ եղբայր Քրանի կըրնանք ըսել. դիտման արժանի է՝ որ այս ետքինին անուամբ կոչի Բամբակն արաբերէն Գըճ, կամ Ղուտն, ըստ մեր բժշկարանաց. նոյնպէս Փ. Coton և Cottonnier. Լ. օտար անուամբ՝ Gossipium. Իտալացին ալ մերին պէս Bombacoe. որպէս և Թ. Փամպուզ, Արաբացի անուան տակ Ամիրտ. կ'ըսէ. « Բամբակն երկու ցեղ է. լան այն է որ » սպիտակ լինի ». և բժշկական օգուտները յիշելով՝ կ'աւելցընէ. « Բամբակէ հալաւ » հագնիլն՝ զանձն տաքցընէ և կակղացը. » նէ, և խոշոր բամբակէ՝ զանձն ավաղցը. » նէ. և հին բամբակն՝ զխոցերն յիստակ. » ցընէ և սրբէ. և կուտն զծաղկին (հիւան. » գութեան) տեղն կու յիստակէ և սրբէ »: Մի. Գոշ առականեւելով՝ Բամբակին բերնով կ'ըսէ. « Ես թէպէտ փանաքի և տկար » (եմ), այլ բազմաշահ. ոչ միայն մեծա. » պանց այլ և աղքատաց, ի տաժել, ի » քաղել և ի գործել. և լինիմ հանդերձ՝ » որպէս զասր՝ յոչխարաց, և զվուշ՝ ի կը. » տաւէ, զմետաքս՝ յորգանց »:



Բամբակ .

Բամբակի մշակութիւնն որչափ տարածուած է մեր երկրին մէջ, մանաւանդ միջին և արեւելեան կողմերում, յայտնի է. յիշեցընեմք միայն որ Ռուբինեանց ժամա, նակ՝ կիլիկիոյ տաք կլիմային զյխաւոր բերոց և վաճառուց մէկն էր, և շատ կու խաւրուէր ի գուրս, մանաւանդ յիտալիս, ասոր վաճառականաց ձեռքս:

399. Բամբակխոտ.

Այսպէս կոչուի Պոնտոսի կողմերում բարակ երկայն խոտ մի, որ ցորենի նման՝ բայց մաս մաս բաժնուած հասկ ունի ծայրը. տափակ և ճերմակ բազմաթիւ հատիկներով, առանց մաշկի և մազի:

300. Բամբոզ կամ Բիււմրոս.

Ի Կիլիկիա և այլ կողմեր յիշուի ի տեսողաց և լսողաց, բայց մեզ չեն բացատրած որպիսութիւնը.

301. Բամիկ ?

Արտասուակաթ աչքի դեղ գրէ Բժշկարան մի. « գԲամկին Կոստն այրէ՝ և » դիր »: Կուտէն գուշակուի պտղատեսակ բոյս մ'ըլլալ:

302. Բան.

Խորենացւոյ Աշխարհագրութիւնն յիշէ Ներջանիկ Արարիա, և համարուի Լ. Myrobolanum. ֆ. Myrobolan. Ա. Հայիշա կամ Հիւիթ, **جليلو**. ծանօթ է տեղի իր համեմաւոր սալորանման պտղով՝ քան իր ծառովը: Պէշար չորս տեսակ կու յիշէ, Դեղին, Սեւ, Հնդիկ և Փոքր սեւ կամ Քապուլի: Ամիրտոռլաթ յիշէ զՍեւն Հնդկին հետ և զՔապուլին. ասոր համար գրէ. « Հայիշայի Բան » պիշի. լաւն այն է որ գէր լինի, և թէ ի Զուրն ձգես՝ ի տակն նստի », և այլն: Իսկ Սեւին համար, « Պարսիկն Հայիշա Սիահ ասէ, և Ար. Հայիշա՛ ըլլաւստ ա ստէ. լաւն այն է որ Հնդի լինի ». և երկուքին այլ օգուտները կու գրէ: Ուրիշ Բժշկարան մ'այլ գրէ ասոր համար. « Ինքն ի Հնդկաց զայ, նման է սեւ » Չամշի. աղէկն առողջն ի բան մտնէ »: Ուրիշ տեղ յիշէ և զԴեղինն, « Որ Ար. » Հայիշա՛ի ասվատ կ'ասեն, և Պ. Հայիշայի գարտ, և Թ. Սարու Հայիշա կ'ասէ. լաւն այն է որ գէր լինի և մալի... Եւ ասեր են, թէ Հայիշայքս մէկմէկի » փոխան են, և շատք կու վկայեն այս բանիս »:

Հին Բժշկարանն անծանօթ անուն մի գրէ. « Բանի պտուղ, որ է Աղլուանտի » հոստ », եթէ չէ Աղլըրանկ, ինչպէս գրուած է Բանկի համար. (Տես թիւ 304):

— Այժմու բուսաբանք Բանին մէկ ազգը կու կոչեն Terminalia կամ Dracæna.

303. Բանբուշ.

Այսպէս գրուած է Սլաւոնորիցւոյն ծաղկանց երգոյն մէկ օրինակի մէջ, որ կըրնար ըլլալ վերոյգրեալն (թ. 300), բայց ստուգագոյն թուի Բաքոշ:

304. Բանգ կամ Բանկ.

Երեք չորս զանազան ցեղէ բոյսք կոչուած են այս անուամբ. մին՝ նոյն կամ նման յիշուած Աղուէչրանկի, որպէս կ'ըսէ մեր Հերացի բժշկապետն այլ. « Բանկի

» հունդ, որ է Աղվէշբանկ » . Ար . Պեկն կամ Պեկն : Մէկ մ'այլ նշանակէ
 « Հնդի կանեփն, որ է Արար » , ըստ բառագրոց Ամիրտուլաթի, զոր հաստ-
 տնն և ընտիր բաագրիք Փռանկաց (Լիարէ) . նոյն դարձեալ ի շալակ բառից Ա-
 տառի գրէ . « Առաննդա ? որ է Պանն » : Ուրիշ տեղ այլ կ'ըսէ, թէ Պեկն Թ .
 Պանք օրի կ'ըսուի, և շատ մի օգուտները յիշէ : Եւ դարձեալ, « Պանն . ինքն խոտ
 » է . և հունտն ի պտկներու մէջն է . երկու ազգ է . Սպիտակ և Սեւ . աղէկն
 » սպիտակ հունտն է : — Ստէ Գալիենոս, թէ օգտէ սափրային, և զարիւնն
 » պակսեցընէ, և զանձն հովացընէ . և թէ զինքն ծեծես և մեղրով խառնես՝
 » զկիծն տանի . և թէ յերեսն քսես՝ զմանն տանի . և զմարդն թմրեցընէ » :

Այս ամենէն տարրեր և նշանաւոր Պանկ մ'ալ կայ, որոյ համար գրէ Ամիրտ-
 ըստ Պէլթարայ . « Ինքն կեղեւնի է, Եամանու կու գայ, և ի Մրտենու ճիւղն
 » կու բուսնի, և հոտն անուշ կու լինի . տաք է և չոր է ի մէկ տարածէն . կա-
 » պողութիւն կայ ի յինքն, և իւր հոտն զըղեղն կ'ուժալցընէ, և օգտէ այն գլխուն
 » ցաւուն՝ որ ցուրտ անցած լինի, և ստամոքին և լերդին լաւ է . . . Սասցել է
 » Պա . թէ ինքն Ուսիդայիանիս տակէն կու ելնէ . լաւն այն է որ դեղին լինի և
 » թեթեւ . և այն որ սպիտակ է և գէր է՝ չէ աղէկ » : Ում կամ Օւ - դիյիւանն՝
 ميموزا քալ է Լ . Mimosa gummiifera . Իսկ այս Եմէնի կամ Հնդկի Պանկն՝
 զոր հին բժշկապետք Յունաց Նասկաֆրոն, Νοσκαφρον, կոչեն, նոր գիտնոց
 քննութեան տակ ընկած է, բայց դեռ չեն կրցոր ստուգել ինչ ըլլալը : —
 Վերոյիշեալ Սեւ ու Սպիտակ իոտեղէնն է անշուշտ, որ իբր արորժաբեր՝ վար-
 դապետի մի բարոյական գրուածի մէջ կու հարցուի . « Բանկ կերա՞ր՝ վասն շատ
 » ուտելոյ » : Թերեւս այս ըլլայ և

305. Բանկէխոտն .

Չոր Ասար բժիշկ համարի Ղարաւֆիլի պօստանի կոչուածն, որ թէ ըստ Պար-
 սից և թէ ըստ մեր Բժշկարանաց՝ է Ծարաննամուշկն, ի մեզ անգրադարձեալ
 Փաղանգամուշկ, որով և յիշեմք . բայց հարկ համարիմ այս տեղ յիշեցընել որ Բժշկա-
 րանք մեր միարան կ'ըսեն, թէ Դաղձն է . նոյնպէս կ'ըսեն թէ և Չագխոտն է .
 յայտ է թէ նոյն ցեղի այլևայլ ազգք կամ տեսակք են . ինչպէս վկայէ և մեր հեղի-
 նակն Դաղձին համար, թէ երեք տեսակ է : Մեր լեզուու շատ բառեր կան Դաղձի
 և Չագխոտի համանիչք կամ քիչ զանազանեալ բոյգք, որոց զժուար է պատշա-
 ճեցընել օտար լեզուաց անունները, այլ ինչ որ հաւանական երեւի՝ նշանակեմք
 ի կարգի բառիցն . Բանկէխոտին յատուկ համարելով արեւելեայց Ղարաւֆիլի
 պօստանին, իբրև տեսակ մի Ծարաննամուշկոյ : — Անունով նոյն բայց տարրեր
 բոյս թուի

306. Բանկի Ծաղիկն .

Յիշուած ի կողմանս Աղուանից, և նշանակէ Աղուաշբանկ :

307. Բանկուլակ .

Լուպիա հասարակ կամ տեսակ մի, ըստ Խոտուլիեցոյ :

308. Բանպօտ. Բօնպօտին. (1)

Երկրայելի կ'երեւէր անուանս ստուգութիւնն, եթէ ուրիշ նման անուն մ'այլ զայն չհաստատէր. Ամիրտ. գրէ, « Բանպօտին տակն որ է Պասպայիմն. և « Հոռումբ Պոդապոտիոն ասեն ». երկու յոյն անուանքն եւս ոչ միայն համաձայն այլ և համանիշ կըրնան ըլլալ. Բ. բառերով, Լ. Polypodium, Փ. Polipode, որ նշանակէ Շատտոռոշի, ինչպէս Թարգմաններ և գրեր է Ստ. Ռոյքեան: Ամիրտօւլ-վաթ՝ Ար. Պասպայիմ բառին (جاسپاييم) ներքեւ կու ստորագրէ. « Ինքն խոտի » տակ է կարմիր և ճուղումուկ (ծոււումոււ), և համն քաղցր է. աղէկն ֆստուխ » լինի » : Դարձեալ, Պէյթարի գրածէն համառօտելով կ'ըսէ, թէ « Ասոր » Թաշրիոն կու ասեն (Բարբարոսաց լեզուաւ, Թէրքիոնաւ قتيوان), և « Արասս րլ-քուչպ ... քօք (արմատ) է զէտ Ակիր (Տեա Թիւ 41). և ի մէկ » քօշլէ ի վար ճղեր ունի սէզ (մազի նման), և ի մէկ դին չէ, և լաւն այն » է որ Ղարամֆիլին համոշլէ լինի. և ինքն քառսուն ստվօք (Թ. Գորք այագ) » սողուն կու նմանի. և ինքն մեծ և փոքր այլ կու լինի. և լաւն այն է որ կա. » նանչ լինի և հաստ » : — Սյս բոյսս Պտերներու տեսակէն է (Pteryx, Fou- gère), որ ծառոց կոճղերու և քարերու վրայ կու բուսնի, քրչպի մի բարձ- բուժեամբ, վրան գծեր ունի, ուսկից այն 40տուռի ճճոյն նմանութիւնն և անունն կ'առնու. ըստ Պէյթարայ 44տուռի: Շատ տեսակ բժշկական սզուտները յիշեն հին բժիշկը, որոց հետ մեր Ամասիացին այլ. որ և վերը յիշուածներէն զատ՝ ա- ռանձին անունը կրկնելով կու գրէ. « Լաւն այն է որ երբ կուտրես՝ մէջն դեղին » լինի, և հաստ լինի քան զճկոյթ. եփէ գարեջրով կամ մեղրաջրով, և տուր » : — Սյս Բազմատուռի բուսոյ հասարակ տեսակն Pol. Vulgaris, կովկասու երկու կողմ այլ գտուի :

309. Բանջար.

Չատ ընդհանուր ուտելի տունկերէն՝ որք Բանջարեղէն կ'ըսուին, ռամկօրէն կամ ըստ Թ. այսպէս կ'անուանի Ճակնդէղն: — Բատուկ Բանջար կոչուի և Թեթեւ ու արմատով մազանման բարակ ծիւլերով բոյս մի, զոր չորքընելով կերակրոց հա- մեմ կ'ընեն. Շոռթեցիք իրենց լերան անուամբ Այանկի Բանջար կոչեն :

310. Դառն Բանջար. Տեա Դառնիմ:

311. Բաշխ. Բաշխտակ. Բաղշտակ.

Այս է հայերէն անուն Ակիրին՝ զոր յիշեցինք (Թիւ 41) Լ. Acorus. Փ. A- corus. Իսկ Ա. սովորաբար Ոռաձ անուանեն, չ) զոր մեր բժիշկը այլ վաձ կամ Ոձ կու գրեն, նա և վաշտ. Թ. Լիիր օրի: Ամիրտ. հայերէն անուամբն ստորա- գրէ, արաբացի անուններն այլ յիշելով. « Բաղշտակ. ինքն սպիտակ և Թեթեւ » տակ է, և լրին մէջն կու բուսնի. լաւն այն է որ իլի լինի և Թանձր լինի և

1 Օրինակ մի գրոցն սխալ գրէ, « Բուրծին տակն, որ է Սորընջան » :

» անուշահոտ լինի... Եւ թէ խմես և թէ սպեղանի ամենա՝ զերեսին զգունն
 « յիստակ ամենէ, և պիտակին և կերուածին օգտէ »: Հին Բժշկարանն այլ կ'ըսէ.
 » Որ ի կողն վի կուրծքն խէթ կայ կամ աղիքն ցաւի կամ ոլրի, կամ փայ-
 » ծաղն ցաւի, հալէ... զտակին ջուրն յաշտդ դիր, լուսաւորի »: Անուշահոտու-
 թեանն և ջրի մէջ կամ եզերք բուսնելուն համար՝ Էդէգ ալ կ'ըսուի Լ. *Acorus*
calamus, և *Acorus aromaticus*. Իտալացիք այլ կ'ըսեն՝ *Canna odorifera*. —
 Ի Բառս Փայիենոսի գրուի Բաշխէ = Ակարոն:

312. Բառեղ կամ Բարեխ.

Փայիենոսի Բառից մէջ գրուած է Եղիեպինէ, (*Helzine*) = Բառեղն. ըստ Ա-
 սարայ է հասարակ Բաղեղն (*Տեա թ.* 292). բայց հիմայ գաւառական այս ա-
 նուամբ կոչեն այն գետնի վրայ նաեւ ծառոց վրայ գրեթէ կպած և ճապաղ բոյսը,
 ներմակ և կարմրանիչ բաժակաձեւ ծաղկամբ, որ կոչուի Լ. *Convolvulus arvensis*.
 Փ. *Lizeron des champs*. Թ. Չատոր Էիլիկի: Պէյթար Լիպրայ կ'անուանէ, և
 բաղեղան նման՝ այլ փոքր տերեւներով: Յիշուած է ի Պարոկահայոս:

313. * Բատավարդ կամ Պատավարդ.

Ըստ Ար. ۱۹۱۳۱۶ Բ. Սպիտակ փոշ կոչուի, "Δκανθα λευκη, յորմէ և Լ.
Spina alba. Ամիրտուլվաթ ասոր ուրիշ արարերէն անուն մ'այլ յիշէ. « Պատա-
 » վարդ, որ է Շավքար էլ-պաղա. ինքն փշով խոտ-մն է, մեծ տերեւներ ու-
 » ղնի. նման է Ասփըրի հնտին. և լաւն այն է որ տերեւն սպիտակ լինի »: Շատ
 տեսակ բժշկական օգուտներն այլ յիշէ. ինչպէս. « Իոյն (Պէյթ.) ասէ, թէ զհունտն
 » որ տղակներն քսեն՝ օգտէ տղայոց ցաւուն, և ամենայն գազանահարին՝ որ
 » փլաս առնէ, և թէ զայս խոտն ի տունն կախ անեն՝ ամենայն փլասակար
 » գազան փախչի ի տանէն... Ասէ Պտ. թէ՛ ինքն ի լերունքն և ի աւազոտ տե-
 » ղեր կու բուսնի. և իր որձային հաստութիւնն մատի շափ լինի և այլ հաստ
 » լինի. և իր երկայնութիւնն մէկ երկու կանգուն լինի, և այլ աւելի և պակաս
 » լինի. և գունն սպիտակ լինի, և ծաղիկն մանուշակին գունովն լինի. և հունտն
 » նման է Ասփրին հնտին. և փուշ ունի. և լաւն այն է որ տերեւն սպիտակ
 » լինի »: — Ուրիշ Բժշկարան մի համարոտ կ'ըսէ, « Տերեւն մեծ և փշոտ, ծա-
 ղիկն նման Ասփուրի. ջրի տեղ լինի աղէկն. փուշն (պտուղն) հաւկըթի նման »:
 Այլեւայլ բժիշկք կամ բժշկարանք զանազան բուսոց զուգան զԲատավարդ, կամ
 զանազան անուն կու տան. Հերացին (*Միթար*) կ'ըսէ. « Պատվարդ՝ որ է
 « Հոտվարդ, որ է վայրի Երնչակին տակն »:

Բատկենի. Տեա Բաքկենի

Բատրխան. Տեա Պատրխան

314. Բարաբբի ?

Այս անծանօթ կամ անստոյգ Բառս գտուի գուսանական երգոյ մի մէջ.

« Գիշեր ցորեկ շունիմ դադար.
Միշտ կը շրջիմ սարէ ի սար.
Ո՛ր գըտանեմ մի անգին քար,
Որ քեզ լինի Բարարբի ծաս »:

315. Բարբիւզակ. Բարբիւզնակ. Բարբուզան. Բարբուզնա.

Բժշկական բառգիրք կ'ըսեն, « Որ է Վլիտուն և ինքն Միմնն է » զոր տես ի կարգին: Բայց հիմայ այս անուամբ ի Վլան և ուրիշ կողմեր ծանօթ է տեսակ մի Վարունգ կամ Վարընգի նման բանջարեղէն մի:

316. Բարդոց ?

Յիշուի ի Խոտուղուր. խնդրեմք ստուգել:

317. Բարիբոյս.

Աղքատի Ժախի նման բոյս մի, ըստ գաւառականաց. ի սկիզբն գարնան բուսնի, և բանջարեղինաց պէս ուտուի, ըստ վկայութեան տեսողի, որ չէ բացատրած ձեւը, այլ կ'ըսէ, թէ Թ. Պանար օրի կոչուի:

318. Բարկածոր.

Ոչ ի գրոց այլ ի լրոյ. վարդաձև հոտաւէտ և իւզային ծաղիկ և համեմ, Թ. Ճեննէր կիւռիւ. Պ. Նեփրոզի Խոռտի (Աստուծոյ նոր օր), Ար. Թապանայ միակ ? Քեղեցիկ անուներ, այլ ստուգութեան կարօտ, որպէս և բոյսն իսկ:

319. Բարկժատ.

Ոչ բոյս, այլ բուսեղինի հիւթ. Տես Մադր:

320. Բարկի կամ Բարկու.

Լեռնային հոտաւէտ ու գոյնզգոյն պզտիկ ծաղիկ մի, որ Մեռոնի պատրաստութեան մէջ կու յիշուի ուրիշ ծաղկանց հետ. Թ. Փիլիսկէնկ յիշկի, որով տեսակ մի Բալասան ալ կըրնար կոչուիլ: Յիշուի Աղուանից կողմերում, ի Նուխի:

321. Բարծմանեակ. Բարծուենեկ. Բարծուինեակ. Բարծումենեկ.
Բարծնակ. Բացուենեկ. Բացմենակ. Բըրթվինակ. Համբարծում.

Այսչափ զանազանութիւն անուանն կամ բառին՝ յայտնեն հառարակ և ծանօթ բոյս մ'ըլլալը՝ նա և մեր երկրի շատ կողմերում, ինչպէս յիշեն եւրոպացի տեղագրողք այլ, և աւելի յարեւմտակողմն, ի Տայս, Արդուին, Խոտուղուր, Թորթում, Կարին, Սախէթ, Երասխայ դաշտ, և այլն: Տեսակ մ'է Չնդա-ծաղկի (Artemisia), կոչուի Լ. Abrotanum, Փ. Aurone. Ար. Գայստով կամ ըստ

Ամիրտ. Ղայսում, *قجامد*. որ և գրէ, « Որ է Բացդենեկն. ինքն մանր և մեծ » կա լինի, և Դեղին և Սպիտակ այլ կու լինի ծաղիկն... Ասացած է, թէ ինքն ի » Պարանձիֆի ձայպառն ցեղերուն է, և իւր ծաղիկն քան զՍլինդրին ծաղիկն լաւ » է »: Դարձեալ գրէ. « Ղայսում. ինքն խոտ է, երկու ազգ է. մէկին ծաղիկն Սպիտակ է, մէկին Դեղին. աղէկն դեղին և անուշահամն է. բնութիւնն սաք է և » չոր է երկու տարածան », և այլն: Ուրիշ տեղ ալ գրէ. « Թուրքն՝ զայս խոտս » Չոսաֆ լիլակի անուանէ, և Հոռոմն Այիստանս ? առէ »: Գոյներուն զանազանութեամբն օտար անունները զանազանեն բժշկարանք մեր: « Պարանձաիֆն » (գոր ուրիշ մի գրէ Բրնչաս) է Դեղին Բացդենեկն ». որ է Արտեմիսիայն ըստ Ամիրտ. իսկ Սպիտակ Բացդենեկի յարմարի *L. Artemisia argentea. Φ. Armoise argentée*. Սալաձորցին կ'երևի թէ գոյներուն չի հաւնիր.

« Բարձուենեկին գունն է պակաս », կ'ըսէ:

Մաղկին գոյնէն զատ բուսոյն սեռն ալ զանազանեն հին բուսարանք. մէկն Որձ Բարձ. *L. Artemisia Abrotanum*, միւսն Էգ Բարձ. *Artemisia Pontica, Φ. Armoise pontique*. Մեր հին Բժշկարանն այլ յիշէ զանազանութիւնը, հանդերձ յատկութեամբք. « Բարձվենեկ երկու ազգ է. կարմիրն էգ է, և Սպիտակն՝ որձ: » Չծաղիկ նորա եփէ ջրով, և նոյն ջրովն լեւել և տալ՝ օգնէ թառանչի, լար » դածի, որ ի փորին ինչ հատել է, քամակցվի, դժվարամիզի: Յուսմ մահու դեղ » տան՝ գինով խմէ, նա դեղթափ է, և զամենայն ինչ արգելու. և զով թու » նաւոր զազան խածէ կամ կարին և մոր, Սերկելովով գինք ծեծես և հացով » և ի վերայ գնես, օգտէ. — և խառնել ընդ ձէթ և օժել՝ զսողունս փախցընէ »: — Ուրիշ Բժշկարան մ'այլ այլեւայլ բուսոց հետ կարմիր Բարձուենեկը մալ զասկաթի դեղ գրէ:

Շատ տեսակ Բարձուենեկ կայ, որոցմէ յիշուին՝ Դաշտայինն *Ar. Campestris canescens* ի Ռ-Հ. — *A. Scoparia*, ի Գարապաղ, Հր. Կովկաս, Մելիտինէ. — Անուշահոտն՝ *A. Fragrans*, ի Թ-Հ. յերեւան. — *A. Fasciculosa* ի Թ-Հ. Վրաստան, Ատրպատական. — *A. Austriaca* ի Բարբերդ, Կարին, Մուշ. — *A. Procerca* ի Թ-Հ. — *A. Chamæmelifolia* ի Ռ-Հ. Գարապաղ. — Հասարակն, *A. Vulgaris*, ի Կարին, Հր. Կովկաս, Ամիր. — *A. Annua* ի Գարապաղ. — *A. Tournefortiana*, ի Կարին, Խարբերդ, Վան. — *A. Absinthium* ի Թ-Հ. — *A. Splendida* ի Մասիս, ի Թ-Հ. — մեզի աւելի նշանաւոր է հայկականն՝ *A. Armeniaca*, ի Կարին, յԱրագլի գլուխ լ. Սիւնեաց:

332. Բարձուկ.

Այս անուամբ բոյս մի ծանուցանէ մեզ ոմն, բայց ինչպէս ըլլալը չ'ասեր. գուցէ վերոյգրեալ Բարձուենեկն ըլլայ:

333. Բարտի.

Վայրենի և շատ տեղ գտուող բարձր ծառերէն մէկն. Թ. Ղափախ աղաձի ճանչցուած յարեւելս. Ար. Ղարեպ կամ Ղոշոպ *جراد*. երկու կերպով ալ գրէ մեր հեղինակն, և Ղոշոպ, որ է Ղարապն, որ է Ղառախն, որ է Բարտին. երեք ցեղ կու լինի:

» լաւն այն է որ թաժայ լինի... Ասէ Պտ. թէ Ղարապն ծառ-մն է, և միրգ չունի,
 » և ոմանք տանն խէժ-մն է՝ որ կու ճեղքեն և կու հատանեն... Թէ գծաւին
 » տերեւն այրեն և քացողով տրորեն և սպեղանի առնեն և օժեն ի վերայ կո-
 » ծիծներուն՝ օգտէ, զտերն կակղացընէ. և թէ դալար կեղեւն և կամ զտերեւն
 » տրորեն և նոան կեղեւով յականջն կաթեցընեն, զցաւն տանի. և թէ եփեն
 » և զլուրն յամառան աւուրքն նիկրիտին սաքն օժեն, օգտէ. և թէ այս ջրովս
 » զգլուխն լուանան, զթեփուկն տանի. և թէ զտերեւն չորացնեն և ծծեն և
 » դնեն ի վերայ խոցին որ նոր լինի՝ օգտէ և բուսուցանէ... և թէ կեղեւն ե-
 » ուացընեն ջրով և զմազն այնով լուանաս, սեւցընէ »: — Պէյթար՝ այս Ղուրպ
 կամ Ղարէպ անուամբ ծառն շատ ծանօթ է ըսելով, համառօտ կու ստորագրէ,
 և միայն մաղին ներկելը կամ սեւցընելը յիշէ՝ Ամիրտովլաթայ համաձայն. Թարգ-
 մանիշն (Լըզլէր) Ուոռնի (Saul) համարեր է այս ծառս. մեր բանասէրք այլ
 չեն միաբան Բարտիի եւրօպական անուանց. ըստ ոմանց է Populus Tremula,
 Փ. Tremble, զոր այլք Կաղանակի ճանչնան, այլք ուրիշ ծառ. ինձ թուի թէ ըլ-
 լայ Լ. Alnus. Փ. Aune կամ Aulne. Ռ. Ольха Ստ. Ռոշքեան այս անուամբ
 ծառը հայերէն Լատանի կոչէ: Անտառային կամ վայրենի ծառք՝ ծաղկանց և
 բանջարեղինաց պէս շատ կամ շատերու ծանօթ չըլլալով՝ իրենց քիչ շատ իրարու
 նմանութեամբն զիրաւ կըրնան շփոթուիլ յանուանս. այսպէս եղած են Բարտի,
 Կաղանակի, Յոփի, և այլն:

Բարտի ծառն մասնաւոր յիշատակ մ'այլ ունի. մեր կիսակրօն ազգային Արեւ-
 որդիք՝ արբազան կամ պատուելի համարէին զսա. պատճառն և զգուշանալու
 խրատը կու տայ մեր Շնորհալի հայրապետն. « ՉԲարտի ծառն՝ մի աւելի պա-
 » տուէք բան զՈւռին և զԿաղամախին և զսյլս ի ծառոց. և մի կարծէք թէ փոյտ
 » խաչին Քրիստոսի Բարտի էր »: Նոյն դարձեալ յիշեցընէ, որ « Այդ ծառ որ
 » Բարտի անուանի՝ ի կուսպաշտութեան ժամանակն՝ ի պաշտօն առեալ էր նոցա »:
 Այս պաշտօն կամ պատին նուիրեալ էր և Կաղամախի, զի ըստ առասպելաց Յու-
 նաց՝ Արեգական և Կլիւմենեայ երեք դստերքն (Լամպետիա, Փեթուսա և Փեբէ)
 իրենց Փայեթովն եղբոր մահուան վրայ անմխիթար կու լային չորս ամիս.
 շատուածք գթալով՝ զանօնք այլափոխեցին ի Կաղմխի ծառս, արցունքնին այլ
 յ'Ամբար (ambre). Ոմանք համարին թէ այս ծառիս տրուած պատին ի-
 րեն ձեւին համար ըլլայ, որ նեղկուկ բարձր ու երկայն կու վերանայ յօդս, շատ
 հեղ ի յրեզբոս: — Քանի մի տեսակք կան Բարտեաց, յորոց յատուկ յիշուի
 խիժայինն A. Glutinosa ի Հր. Հայս, ի Կորճայս:

324. Բարփ.

Ըստ Սալաճորեցւոյն՝ մէկն է այն չորս ծաղկըններէն՝ որ յառաջ քան զայլս ի
 սկիզբն գարնան կու բացուին, ու

- « Չայն ածեն (դեռ չերևցած ծաղկըններուն).
- » Մաղկունք, զարթիք ի խոր քընոյն.
- » Քանի պառկիք ներքեւ հողոյն »:

Երգոյն ուրիշ օրինակաց մէջ Բարդ կամ Բարք գրուած է փոխանակ Բարփի:

325. Բացզառի ?

Միջակ մեծութեամբ ծառ մի, կ'ըսուի, սեւագոյն, փշոտ տերեւներով, որ առանց կեր կ'ըլլան ի ձմերան: (Արարատ Օրագ. ԻԵ, 430):

326. Բաւեղ.

Այսպէս կ'անուանեն հին բառգիրք և Ստ. Ռոջքեան, Լ. Phlomis կոչուած բոյւր. Φλογιόσ բառէն՝ որ բոց ըսել է. վասն զի անոր բարակ հիւղերէն պատրոյգ կը շինէին: Շատ տեսակներ ունի, թէ՛ խոտեղէն թէ թուփ, գեղեցիկ հինգթերթեան ծաղկըներով, որոյ համար և պարտեզաց մէջ կը գար, մանուի, Շրթնատեսակաց ցեղէն է (Labiée). Այլեայլ տեսակներէն յիշուած են Հայկականն, Ph. Armeniacus ի Կարին, Բարբրդ. — P. Bruguierii յԱմիդ, Մարտին. — Արեւելեանն P. Orientalis ի Մուշ. — P. Linearis ի Հր. Հայս. — P. Rigida ի Կիւմկիւմ, Մարաշ. P. Herba-venti (Հողմախոտ) ի Բարբրդ. — P. Tuberosa ի Կարին, Բարբրդ:

327. Բաքուօշ.

Մի ի վերայիշեալ (Թիւ 303) չորս գարնանաբեր ծաղկըներէն, ըստ Սալաձորեցոյն, որ ուրիշ օրինակաց մէջ գրուած է Բամբուշ, Բերդօշ.

Բղոււմ. Տես Բոռնս:

Չաթլանդուճն է, գրէ Ասար: Տես Բեւեկ:

Բղրաղ. Տես Փիթրախ:

328. Բերկի. Տես Բեւեկնի:

Բերդօշ. Տես ի վեր (327) Բաքուօշ:

329. Բեզա կամ Պեզա.

Մէկ երկու թզաչափ բարձր բոյս մի, նեղ ու սուր տերեւներով, ծայրը մանր մանր դեղին ծաղկներէ փունջ մի ձեւացած. որձայն իբր մատնաչափ հաստ: Բոլորն այլ թթուեցընելով պահեն ուտելու: — Յիշուի և

330. Հայոց Պեզա.

Իբրև յատուկ տեսակ մի, ի նոր բառհաւաքէ:

331. Բեխի.

Աղուանից կողմերում այսպէս կոչուի այն բոյսն՝ որ ուրիշ տեղ Բոխ կամ Բոքի, ևս և Պոքի: — (Բարխուդար. եր. 307):

332. Բեկոն.

Այսպէս կոչուած գրէ նոր ոմն՝ Հանարի ծառը: Տես դայս:

333. Բեհեզնիկ.

Գեղեցիկ անուն, զոր այլ նոր ոմն յիշէ, առանց որպիսութիւնն իմացընելու:

334. Բեմնա կամ Բիմնա.

Նայնպէս և այլ ոմն ի կողմանց Սերաստիոյ՝ գրէ այս անուամբ բայս մի:

Բեպկի. Տես Բերկի, Բեռեկ:

335. *Բերեզատ.

« Որ ինքն խոտ է », կ'ըսէ հին Բժշկարանն: Արարերէն կամ պարսկերէն Պարզեո, Ծղլէ է Մաղթն, որ և Քաղբան, Չարհատ, եւայլն, և մերձաւոր անուամբ Բարկժատ (Թիւ 319):

336. Բերկրիճ.

Հին Բժշկարանն պատուիրէ. « Ծեծէ զԲերկրիճն դալար կամ շոր », դեղի համար: Հարազատ հայ բառ ըլլալով՝ աւելի փափագելի է գիտնալ ինչ ըլլալը:

337. Բեւեկ. Բեւեկնի. ռամկօրէն Բերկի, Բեպկի.

Հին Բժշկարանն յիշէ ի կարգի պտղոց, և կ'ըսէ. « Տաք է յերկու տարաւ, » ճայն՝ ուքն, և շոր՝ ի մէջն. յուշ հայի. չէ ախորժական. և ձէթն օգտէ պըլ- » դամի »: Իսկ Ամիրտ գրէ. « Բեւեկ, որ Թ. Մանակօշ ասէ և Ար. Պաշտով » բեք և Թեյք ասէ. ինքն էգ և որձ լինի. և լաւն այն է որ խոշոր լինի և » Թաժա »: Ուրիշ Ար. բուռով այլ գրէ. « Հապ ըլ-խագրոյ, որ է Պուռտն... և ես » այլ յիշեմ քիչ մի, որ է Բեռեկին միրգն. որ է Պարսիկեպան. և ինքն երկու ցեղ է. » և մէկ ցեղին Շահպուռն կ'ասեն, և ան մանտր և նուրբ է, և կեղեւովն կ'ուտվի. » և մէկայլ ցեղն Պոռն ասեն. և լաւն այն է որ Թաժայ լինի և մեծ լինի և կե. » դեւն կանաչ »: — Բառագիրք մ'այլ տարբեր կու ստորագրէ. « Է փշոտ և մըշ- » տականաչ, ի դեռընձիւր ծայրից սորին կազմեն ԹԹւենի, զոր Թուրքք Ֆիլիզ » բարչոռսի ասեն. պտուղն է կարմրագոյն, ռամկօրէն Ղզխան, Չատանայ, Չար- » բաղոռ. Պ. Ֆիֆոռչի քիճի (Լերան Պղպեղ), Սագըզ աղաճի »: — Թուր. Թէ երկու ոչ նոյն այլ նման ծառոց նկարագիր է այս. մէկն բուն Բեւեկնի, Լ. Terebinthus, Փ. Terebinthe, միւսն Հէրձի, կամ յատուկ ձութ տուողն (ծաման, Մազդիկ ծառն, Թ. Սագըզ աղաճի):

Առաջինէն կ'ենէն Բեռեկնոյ խեժն, զոր ի Հայս վանի խեժ կ'անուանեն. յայտ է

ուրեմն ծառայն այն կողմերում գտնուիրն: Պտուղն կամ հատերն՝ թէ և կարծր բան մ'է, ոմանց ուտելի կամ ծամելի է, համեմային ըլլալով: — Վաստակոց գիրքն Մազտաբէին ծառն որոյ է ի Բեւեկնոյ, միանգամայն նմանութիւնն այլ իմացընելով, երբ գինւոյ կարասները ձիւթել խրատէ. « Են որ Մազտաբէին ցա- » խովն ձիւթեն, կամ Պանին ցախովն, և են որ Բեւեկնի ցախովն, կամ այլ » սնուչահամ ծառոց »: — Բժշկարանք յիշեն Բեւեկնոյ օգուտներն իբրեւ դեղ. մշակութեան մէջ ալ մէկ օգուտը: Ս. Բարսղի Վեցօրէից մեկնիչն, անոր ըսածն աւելի պարզելով. « Թթու Նռնենին և Լեղի Նռնենին՝ թէ Բեւեկնի սեպ տան » յատակն ի վայր, նա քաղցրանայ »: — Այս ծառս Ս. Գրոց մէջ շատ տեղ յիշուած է, և ամենահին ժամանակ Ասորոց, Արարացոց և Պաղեստինոյ կողմերում իբրև նշանական սորձանի տեղ ճանչցուած, թերեւս անապատի սահմաններն քիչ ծառ ունենալով, նշանաւոր բան մի երեւէր, կամ ոմանք այլ մեծութեամբ աչքի զարնէին: Արբաւամ նահապետի ատեն երբ չորս թագաւորք հինգ թագաւորաց դէմ պատերազմի ելան, եկան « ի լեռնէն Սէիրայ մինչև ցԲեւեկնի » ձորոյն՝ որ է յանապատի անդ »: (Մննգ. ձԱ, 6): — Յակոբ նահապետ՝ իր կանանց և ծառայից կուսպաշտական բաները « Մածկեաց ի ներքոյ Բեւեկնոյն ի Արկիմ, » (Նոյն. ԼԵ, 4). Յեսուէ ի յիշատակ իր մեծամեծ գործոց և պատուիրանաց՝ « Առ վէմ մի մեծ և կանգնեաց զնա ի ներքոյ Բեւեկնոյն, առաջի Տեառն », (Յես. ԻԳ, 28): Եղիա Յեզարելէն փախչելով կ'երթայ յանապատ, կու նստի ընդ Բեւեկնեաւ (Պ. Թգր. ձԲ, 4), և ձանձրացած այնպիսի թագուհւոյ և անոր արժանի թագաւորի (Աբաբաբու) և ժողովրդեան անկարգութենէն, այն մեծաւոր ծառին տակ մեանիլ կ'ուզէ. « Շատ է արդ, Տէր, առ զոգի իմ յինէն ». բայց Աստուած կարծուածէն աւելի կը պահէ անոր հոգին, և հրեղէն կառօք ողջ ուղ յափշտակէ յերկինս: Եսայի մարգարէ՝ ոչ միայն զԲեւեկնի՝ անապատի հետ կու ըծորդէ, այլ և զծառն անապատացեալ կու ցուցընէ, երբ կ'ըսէ. « Բեւեկնի տերեւաթափ ». կամ « իբրև զԲեւեկնի և իբրև զԿաղին թսթափեալ յուրաքան- » յիւր պատենից »: — Չեմ ուզեր ծառապաշտ երեւնալ այս վկայութիւններով, Բարտին պատուօղնորուն նման, այլ որչափ հին և հեռաւոր՝ այնքան քաղցր են այսպիսի յիշատակք սրբազան անձանց: — Բեւեկնոյ Խեթն՝ որ իր պիտոսներոյն մասն կամ բերքն է, կ'ըսուի եւս Չէր, ինչպէս Բժշկարան մի. « Բեպկի և Տաֆնի ձէթ »: Թուի Տաֆնիի, Գափնոյ:

338. Բզէզավարդ. Բզէզի վարդ.

Ստ. Շէհրիման կու յիշէ զայս իբրև բոյս մի ոտնաչափ բարձր, հերձոտած տերեւով եղիւրաձեւ, ծիրանեզոյն ծաղկով, ածուոց մէջ աճող. արմատն կ'ըսուի Բուրդեղ կամ Կուրդեղ:

339. *Բզրկատուն կամ Պզրկատուն.

Տես Կտաւախոտ կամ Կտուախոտ և Գաղտիկուռ:

340. Բզրուկ.

« Խոտ, զոր ոմանք Մ'կնականջ կոչեն, ի ճափին տեղիս լինի. Aisine ». այսպէս

գրէ Ստ. Ռոչքեան: Գալիենոսի բառից մէջն այլ գրուած է Բգրկի տոտոն՝ *Alopocurus*. Լ. բառն ի յունականէն նշանակէ Աղուեսու տուտն (ագի). ըստ այսմ Բգրուկն այլ աղուէս պիտի նշանակէր. այս յայտ է՝ որ թէ տուտ թէ ա- կանջ՝ ի նմանութենէ մասանց բուսոյն կոչուած են: — Կայ և Բգրուկ վայրի, ո- րոյ համանիչ գրեն Բժշկարանք՝ Ասիոյի կամ Ասֆայօշ, որ թուի թէ պիտի ըլլայ Ասպաղօշ կամ Ասպաղոշ, որոց ամենն ալ նոյն և մի համարին ընդ Պգրուկա- տունի: Այս վերջի բառին համար պարսկերէն բառադիրն կ'ըսէ, « Իսփեդոշ, է » խոտն այն՝ որ կոչի արապերէն Պիզրիգադոնա, թուրքն Գառնիեարդգ, և այս » անուն տուտալ է վասն նմանելոյ նորա ականջաց ձիոյ. քանզի դոշ նշանակէ ա- » կանջ, և իսպ՝ ձի... Ոմանք մեկնեն զսա թէ նշանակէ Պուդա եպիբարդի »: Բգրուկի կամ Աղուեսու տուտն՝ զանազան տեսակներով գտուի ի Պոնտոս, ի Կովկաս. Եղեգնակերպն այլ *A. Arundinaceus* ի Թ-Հ. Պոնտոս, Արգիաս Լ. — *A. Gerardi* ի Թէքտաղ Լ. յԱրգէոս Լ. — *A. Glacialis* ի Համէն, Ճիմիլ, Պորճոմ. — *A. Aucheri* յԱրագիզլուի Լ. Սաւալան Լ:

341. Բէշ. Բիշ.

Հին Բժշկարանն գրէ. « Ի հետ Բէշի կու բուսնի ճատվարն »: Նոյն է անշուշտ Պէշ- Թարայ յիշածն Բէշ կամ Բիշ, شمشاد զոր Ամիրտ. կոչէ « Պիշ, Ինքն խոտ-մն » է որ Հնդկաց աշխարհն կու լինի. երկայնութիւնն մէկ կանգուն կու լինի. և տե- » բուն ի Հագրի տերեւ կու նմանի, և Փասնու տերեւ (այլ) կու նմանի. և երեք ցեղ » է. լաւն հալանիլ լինի, որ է լեղի. և Ինքն ի մահացու դեղերուն է. հանց » զահր (Թոյն) է, որ թէ ծառին տակն բուսնի, նա այն ծառն այլ պտուղ չի » տայ... Այն Իսպն. Թէ Խոտ-մն է որ մէկ թիղ երկայնութիւն կու լինի, են. և հա- » նապաղ զինքն, Պլարրճին կ'ասեն Թուրքքն՝ ձագ մի կայ, զինքն կ'ուտէ, և » այն պատճառին համար Թ. այս խոտիս Պրորճին օրի կ'ասեն. և մուկն այլ » զայս խոտս կ'ուտէ. և թէ մարդն զինքն յանձն օժէ՝ զմիսն ուտէ, և թէ կէս մթխալ » յիրմէն ուտէ, զմարդն կու սպանանէ... քան զԹիւնաւոր օձն աւելի վնասող » է. և թէ խմեն՝ զզլուխն ի շուրջ կ'ածէ, և ուխաւորութիւն (ցնորք) կու բերէ » մարդուն. և իր թտպիրն այն է՝ որ շատ փսխել տան շողգամի հընտի ջրովն և » պախբու կարագ եղովն, որ խմցնեն օգտէ Աստուծով. մինչև որ չի փըս- » խեցընեն զմարդն՝ չի ազատիր... և ոմանք ասացեալ են, թէ իր թրիաքն կա- » պարին տակին կեղեւն է »:

Բէշի նման և անուանակից ըոյս մ'այլ յիշէ Ամիրտ. Պէշնոշխա, որ է ըստ Պէշ- Թարայ Բիշնոշքիչա. « Ինքն խոտ-մն է որ ի Պէշին քով կու բուսնի, և Պէշն » որ ցեղն որ յոր ծառի մտ բուսնի՝ այն ծառն միրգ չի տար. և այս խոտս այլ » զՊէշի զօրութիւնն ունի... և այսոր անունն Պէշնոշ էր եղեւ. — և այնոր հա- » մար Պէշմուշ ասացին՝ որ անասուն մի կայ Պէշմուշ անուն, ի մուկն կու նը- » մանի. ի յայս խոտիս տակն կու կենայ... ամենայն մահացու դեղոց թրիաքն » է »: Այս անասունն Բէշի մէկոյ ըսուածն է, Ինքն և խոտն իրարմէ առած կ'երևան անուններն: Բուսարանք թէ և տարակուսին այս խոտերուն ստուգիւ ինչ ըլլալուն, բայց առաջինը հաւանօրէն կոչեն *Aconitum ferox*. (Բարկ Ընձա- խոտ), երկրորդը *Aconitum Napellus*. — Բէշի մահացու զօրութիւնը յիշած է հեղինակ մեր հին Աշխարհագրութեան (Խորեն). « Ի Հնդկա, ուր կան, կ'ըսէ,

« Մկունք՝ որ կոչին Բէշմաշէ, յաղագս Բիշ մահացու արմատ ուտելոյ՝ որ լինի
» անգեղեայք »:

342. Բէշկ-ուռի, կամ Փոկուռի.

Ըստ Ստ. Շէհրիմանի՝ Ասորոց ըսուած Ուռենիի տեսակն է. Լ. *Salix siriacca*.

343. Բէշար կամ Բէշար.

Յիշէ Սալաւորցին, և վկայէ՝ Թէ « Հոտն անուշ է »:

344. ԲԹակ ?

Բժշկարան մի դեղոց նուսխայ գրէ. « Առ Բթակ ու Սատաֆի տերեւ չորս
դրամ », և այլն:

345. *Բիան.

Թուրք անուն Մատուտակի:

Բիբերդ. Տես Փիփեք:

346. Բիբկան.

Բժշկարան մի խրատէ. « Բիբկանի խեժ արա և ի կերակուրն խառնէ »: Թե-
րեւ Բեւեկնին ըլլայ:

347. Բիծխի կամ Պիծխի.

Այլ և այլ ծառոց հետ յիշէ վաստակոց դիրքն (Գլ. ԿԱ). յոյն բնագիրն է
Մֆենտանոս Σφένδακος, որ է Լ. *Acer*. Փ. *Erable*. Հայերէն աւելի յատուկ կ'ե-
րեւի Տխկի. տես զայս:

348. Բիճուռի.

Այս ալ Ուռենեոյ տեսակ մի յայտնուի անունէն. բայց մեզ անծանօթ է. ա-
նունէն զատ բան չի յիշեր Բժշկարան մի:

349. Բինդ ?

Ստոր կը զուգէ այս անունս Բեւեղի հետ, երկուքն ալ անծանօթ ինձ, բոյս
ըլլալն ալ, վասն զի յետին անունն կըրնայ ըլլալ արաբերէն, որ Բուստ նշանակէ:

350. Բիպիկ.

Պղպեղի հատի նման և աւելի փոքր և իւղային է, որ կու սեւնայ երբ հասուն-
նայ. խարկելով՝ կերակրոց համեմ կ'ընեն. Չէյթունի կողմերում: (Ուլնի, 180):

351. Բլւ-ըրիա ?

Իբրև աղցան և թթուիկ՝ ուտելի բուսոց կարգին յիշէ օրագիր մի (Մուրճ, Ե) :

352. Բլթենի.

« Որ է Հացհամեմն, որ է Զապար ըլ-Սափտան » . գրէ Ամիրտովաթ : Ս . վորարար երկրորդ հայերէն անուամբն հասարակաց ծանօթ է . բայց ինչպէս սա նկարագրական անուն է, Բլթենին այլ նոյնպէս հացի բլիթէն առած կ'երեւի, անոր համեմ տայու, նաև ուրիշ ուտելեաց . Լ . *Fœnum grecum*. Փ . *Fœnugrec*. Հին բժշկարանն զՀացհամեմն զուգէ Հոչպէ և Հիլիոփոսի անուանց : Մի . Հերացին ալ կ'ըսէ . « Հոչպա, որ է Հացհամեմի ունդ » : Նոյնպէս և Ամիրտ . « Հուլպա որ է Հացհամեմ . նորն աղէկ է, յատենն քաղվի . աղէկն չոր և ա . » աողլ, բնութիւնն տաք և գէճ . . . Օգտէ սրնկան և կշտացաւուն և թոքացաւուն, ո և այլն » : Տես և Հուլպա : — Ոմանք նոյն համարին զՀացհամեմն և Բլթենին ընդ Արջնդեղի, որ այլևայլ անուններ ալ ունի, ինչպէս յիշեցինք (Թիւ 227) և պիտի յիշենք իրենց կարգին :

353. Բլիլան.

Կու յիշուի ի Հին Բժշկարանի . Ամիրտովաթ Պալիլան կոչէ, և թէ « Ինքն » բոլոր է զէս Գղթոր, և մէջն կուտ լինի . աղէկն այն է որ նոր և անխուտ » լինի » և այլն : Գարձեալ առանձին գրէ « Պալիլան որ է Բէլիլիճն, ինքն Հա . » լիլաներուն է . լաւն այն է որ դեղին լինի և ամուր . . . թէ ծարուր անես և » յաչքն քաշես՝ զաչքն արացընէ և ուժովցընէ, և զարցունքն կտրէ . և թէ այրես » և օծես՝ զարուսանունքն բուսցընէ, և թէ զինքն ուտեն՝ զղղերն ուժովցընէ, » և չթողու որ մարդն շուտով ծերանայ », և այլն : — Լ . *Bilirio* կոչուի Բլէլիճն, ցեղակից է Հլէլիճի կամ Հալիլայի : Տես զասոնք :

354. Բիւրուն. Տես Բողոչ :

355. Բծիծ .

Ստ . Բոչքեան կ'ըսէ . « Տակի ազգ, գոր Սոխ ծովու կոչեն, *Scilla* » . Բառ . գիրք մ'ալ կ'անուանէ զնոյն՝ Պայրասխտոր . զոր հարկ է զուգել ընդ Մկնսոխի : Այս այլևայլ հայերէն անուանց մէջ պարզագոյնն ըլլալով Բծիծն, այս տեղ գրեմք ինչ որ Ամիրտ . կ'աւանդէ, որ և այն յոյն և լատին անունը (*Scilla*, Փ . *Scillo*, որ յունարէն՝ կնել, խայթել նշանակէ), փոխեր է « յիսդիլ . որ է իս . » կիլն : (Իշքիլ որ է *اسقيا* Մկնսոխն, որ է Պասալ ըլ-յանուլն, որ է Պասալ » ըլ-Ֆարն (*بصل الفان*), և ինքն վայրի Սոխն է, և ինքն ի յա . » նապատ լերինքն կու լինի . աղէկն այն է որ այն տեղերն լինի՝ որ ի Հօն » Քիթրա (Գազ ?) բուսնի . . . Իպն . ասէ, թէ եփեն Հառով ձիթով և Փիճոյ խէժ » խառնեն և օծեն ի ձեռքն որ ճեղքել լինի, օգտէ, և ոտիցն այլ

» օգտէ. և թէ եփեն և ի կոթիծնուն վրայ դնեն, յետ տանի. և թէ զայս Սոխս
 » անարատ ի դուռն ի վայր կախեն, փնասակար և թունաւոր գաղան ի յայն
 » տունն չի մտնայ. և թէ յանձն օծես՝ շտեր այնէ յանձն. և թէ մուրտասանկ
 » քսես՝ աղէկցընէ: Եւ որ այս Սոխին կեղեւին վրայ կոխէ՝ կաղ կու լինի. և թէ
 » զայս Սոխն մուկն ուտէ՝ մեռնի: Եւ յիշեմք զշարապն. այս է. առ զսոխն և
 » մանտրէ մանտր, և իր շքաքն չորս այնչափ չիրայ լնուն, և կենայ վեց ամիս.
 » քամէ և ի բսն տար. և այն ցաւոցն օգտէ՝ որ ի վերն գրած է... Եւ ասեր
 » է գրոցս ժողովողն, թէ լաւ թուպիր այն է, որ յորժամ գինքն ի գետնէն հա,
 » նեն՝ պիտի որ կտրեն, այսպէս հանց կու պիտի. զկղմիրդն տաքցընեն և զայս
 » սոխին որձան ի մէն հանեն՝ փատէ դանկով, և երկաթ չի հասնի յինքն. և
 » խարեն այն տաք կղմնտրոյն զտակն որ ուժն չերթայ. և յորժամ ուզենաս
 » որ եփես, կեղեւէ փատէ դանկով, և ի խմորին մէջն առ և եփէ, կամ ի փուռն
 » կամ ի թոնիրն. և թէ ի վերայ խմորին կու այլ օծես՝ լաւ է, հանէ կտրէ
 » փայտէ դանկով և փռէ ի վերայ քթան կտաւի՝ որ չորնայ... Եւ ասեր է
 » Մինհաճին տէրն (Բժշկութեան հեղինակ մի), թէ Ղղերուն գէն կ'առնէ, և
 » զիր շարութիւնն տանի Համաման... Եւ այլ գրած է, թէ զիր տերեւն գայլն
 » կոխէ՝ նա կաղ լինի, և այլ օճանք ասեն՝ թէ մեռնի »:

Վերոյիշեալ Մկնսոխի շարապ շինելը սովորեցընէ և Վաստակոց գիրքն (գլ. 388),
 որ և գինի կոչէ. « Առ Մկնսոխ ի յեռնէ, և թէ չգտանես՝ ի ծովեզերէ, լաւ
 » է ի թէմուզի (յուլիսի) օձ օրն թէ քաղես պահես ի շուք տեղ. և ի մուս,
 » տառին (եփ ելլելուն) ժամն առ և հան զդրուց կեղեւն, և կարեալ զքիթն
 » և զտակն, և խաչք ճեղքեա. և երկու նուկի ի տասն լտեր աման ձգեա. և
 » այս կղուով (չափով) արա զայլ շատն, և երբ գինենայ՝ (ի գինի փոխուի) ի
 » բան տար »: — Նոյն գրէ (գլ. 387) « Դիմուկրատէս? գրեալ է, թէ ով ի
 » գարնան սկիզբն առնու Մկնսոխ և Մորենոյ տակ, ծեծէ և ի ջուրն դնէ, և
 » տայ գրաստուն տասն օր զհետ իրերաց՝ որ խմէ, նա փրկէ զանասունն յա,
 » « մենայն անծանօթ և ի ծանօթ ցաւոց »: — Բժիժի տեսակներէն ճանչցուած
 է *S. Cernua* կոչուածն ի կարին, Ծանախ, Ուռհա. — *S. Bifolia* ի Վիրս:

356. Բոզ.

L. Gentiana, **Փ.** *Gentiane*. յանուն կենտիսի թագաւորին Ղերիկոյ, որ
 նախ գործածեց զայս ի դեղ, Դիոսկորիտէս բժշկապետին խրատով. Պէյթար այս
 անուամբ կու ստորագրէ. հայերէն կ'ըսուի նա եւ Օձի սխտար կամ Օձի դեղ.
 ամանք Տերեփուկի հետ այլ զուգեն: Ամիրտուլավթ ոչ այս ետքի անունս յիչէ և
 ոչ զրոգ, այլ հասարակաց գործածած յունարտին անուամբն. բայց ուրիշ բոյսե-
 րու հետ այլ զուգէ, այսպէս գրելով. « Ճնդիանայ, որ է Չրեդիանայ.. ասեն՝ թէ
 » Ալեզիին էգն է, որ օրձայ շունի. ճամբիտ է՝ որ է Երենջակին տակն. յերկան
 » տակեր է, և դեղնութիւնն ի Չրեւանդ կու նմանի, և տերեւն յՂնկըզի տերեւ
 » կու նմանի... յաչից գեղերուն (մէջ) կու մտնու. գերդին և զփայծաղին կա,
 » լուածն կու բանայ.., և որ ի բարձր տեղաց ի վայր անկանի՝ օգտէ, և կըս-
 » նակին ցաւուն այլ օգտէ. և օձահարին և կարճահարի այլ օգտէ, և կատղած
 » շան խածածին, և ամենայն փնասակար դեղոց օգտէ... Ասէ գրոցս ժողովողն,

» Թէ է՛ր այս զեղիս անունն Ճնդիանայ Թարգմանեցաւ: —
 » Ասացած է, Թէ Ճնդիանան երկու ցեղ է. մէկն Հռոմայեցի
 » է և մէկն Ճարմաղանի է (Պերմանական. **خيمقاني** Պէյ-
 » Թարի Թարգմանիչն Խոչարեացանի կու գրէ և կ'ըսէ Թէ
 » ձեռագրի մի մէջ ձէրմագանի կարդացեր է). ինքն
 » տակ-մն է կարմրագոյն, և հաստութիւնն մատի մի չափ է
 » և այլ հաստ է և երկան. և սուած է, Թէ ինքն Թագաւորի
 » մի անունն է, որ այն Թագաւորին Ճնդիանայ կու անուա-
 » նէին, և Ճնդիկապ կ'ստէին. և լան Հռոմցի է, որ խիստ
 » կարմիր լինի... Եւ սուացած է, Թէ Չրեւանդ մուտաւերաւն
 » (Բալոր Չր.) է. ինքն տակ է Ճնդիանան, մէջն զեղին, և
 » կեղեւն սեւուկ է. աղէկն ի Հռոմքս լինի »:

Բոցն բարեխառն կլիմայից բոյս է, և 200 կամ 300 տեսակ
 կու զանազանի. Թէ բոլոր տնկոյն ձեւին և Թէ ծաղկանն հա-
 մար՝ պարտիզաց զարդ մի համարուի: Մեր երկրին կողմերում
 յիշուած են *G. Obtusifolia* ի լ. Պոնտոսի և Վրաց. — *կովկասեանն* *G. Caucasica* ի *կովկաս*, *Գարսպաղ*. — *G. Aurea* ի *կովկաս*, *կիլիկիա*. — *G. Pyrenaica* ի *կարին*, Թ-Հ. — *G. Humilis* ի *ձիմիլ* լ. — *G. Ciliata* ի *կարին*, *կովկաս*. — *G. Verna* ի Թ-Հ. — *G. Septemfida* Պինկէօլ լ. ձիմիլ լ. — *G. Gelida* ի Պինկէօլ, Թ-Հ. — *G. Crucata* ի *Բաբերդ*, *կարին*, Պինկէօլ. — *G. Olivieri* ի *կարին*, *Մարաշ*, *Ատրպատական*:



Բոգ.

357. Բոլի կամ Բօլի, որ և Բոլիկ.

Դառնահամ վայրի բանջար մ'է, ըստ Մանանայի. իսկ ըստ Աթանասեանի
 (եր. 82) « Ամենապատուական լեռնային ամենաթանգ բոյս... սենի մանր խիտ
 ճիւղեր ու տերևներ, և հաստ ու դալար ցողուն. փնջանման մի բնի հաւաքուած
 ծաղիկ, Յօղունն ընդհանրապէս լեղի է, բայց անուշն ալ գտուի, ինչպէս նաև
 ծաղիկն, որ դեռ չի բացուած կ'ուտեն. բայց հոտն Սխտորի պէս կծու է »:

358. Բոլորդեղ.

Ըստ Ստ. Շէհրիմանի արմատ Բզէզավարդի. Տես զայս:

359. Բոլոր Չրեւանդ.

Տես Չրեւանդ, Որդնտակ և Սղանդ: Բժշկարան մ'այլ գրէ, այլ ոչ ուղիղ,
 « Բոլոր Չրեւանդ, որ է հայերէն Խաչնդեղ »:

360. Բոլորհամեմ.

Լ. *Acetosa*. այսպէս զուգած է Բժշկարան մի: Տես ԹԹակին.

361. Բոխ.

Որ և Նարդու. Լ. *Ferula Communis* ֆ. *Férule*. Ար. ֆերիս, كلكلج Հովա. նեկաձիւ բուսոց ցեղէն է. գեղեցիկ ձեւով. ըստ Աթանասենի շատ գտուի ի Գաւառ (Նոր Պայէզիրո), ոսնաչափ բարձրութեամբ. շորս հինգ տափակ ու հաստ ճերմակ ցողուն ներով, որոց ծայրք փնջաձեւ ծրիւր ունին, զոր քաղեն և աղեն և պահոց կերակուր պատրաստեն: — Եթէ հասարակօրէն յԵւրոպա ճանչցուած Նարդէան է, իր գլխաւոր բերքն է մաղթի նման խէժն: — Գաւառի մօտ ի վարածնու նիք՝ ճանչցուած է Հայկական Բոխն, *F. Armena*. — Արեւելեանն *F. Orientalis* ի կարին, կեսարիա. — *F. Persica* ի Նախճաւան. — *F. Microcolea* ի Գաւրէժ. — *F. Oopoda* ի Նախճաւան:



362. Բոխի.

Վայրենի ծառոց մէջ յիշուի ի Հայս, Հաղբատայ կողմերում, առանց ձեն ու շափը ստորագրուելու: (Մեղու, Իգ. 85. — Արարատ, թ. 445):

363. Բոխնի.

Ըստ Պետ. Քալանթարեան Լ. *Angelica*, ֆ. *Angélique* բոյան է. հովանեկաձեւաց ցեղէն. խոտեղէն, բաւական բարձր. թէ՛ դեղ կ'ըլլայ այլևայլ ախտից (որոյ համար իբրեւ զարմանալի՝ Հրեշտակային կոչուած է ի Լ. ֆ. Իտ. լեզուս. նոյնպէս և Թ. Միչայիք օրոս), թէ՛ քաղցրաւենի՝ շաքարով զանգուած: Կու յիշուի ի Հայս՝ վարածնունեաց կողմերում. ուրիշ կողմերում խմի կոչուի:

Բոխ.

364. Բող.

Ստ. Շէհրիման կ'ըսէ, թէ բարձր բոյս մ'է, արմատն լաւ Սունկ. Լ. *Caucalis*. Ստեպղինի տեսակ մի: — Ըստ հեղինակի Նոր Հայաստան գրոց (Ինճիճեան), է ա Բանջար եռաչառաւեղ ծածնրահոտ. ունի և ի միջի բուն կամ ջիղ (որձայ) » սերմնաբեր, զոր՝ ի բաց արկեալ՝ զչառաւեղոն խարչեալ թողուն ի ջուր. առ ի » բառնալ զհոտն. ապա արկանեն ի ջուր աղի, որ տեւէ մինչեւ յառն. իսկ » զարմատ նորա մինչդեռ է ի գետնի՝ ընդ մէջ հատեալ՝ դնեն անօթ առ նո. » վաւ, ի հաւաքել զլաթնանման հիւթ նորա, (որ կոչի Բողիճ), որոյ հոտ զօրաւոր » գոյով սաստիկ, ի դործ անեն հովիւք ի սատակունն որդանց զմակաց խա. » շանց »: — Մշոյ կողմերում գտուի, որոյ երկըրցի մի (Մէհէրեան Հ. Պօղոս), Բազմաստեղն և մարդաչափ բարձր բոյս գրած է, կրորակ դեղին ծաղկըններով. տերեւներն նման Սամթի և հոտուէտ. յաղջար դնելով՝ ձմեռուան ուտելիք պա. տրաստեն: Յիշուի և ի հիստիային արեւելեան Հայս և ի Պարսկահայս՝ յատուկ Ստեպղինի նման, Լ. *Cau. Daucoides*. — Տարբեր բոյս է

365. Բողոյ տակ.

Զոր յիշէ հին Քիչկարանն ուրիշ դեղոց հետ. Գալիենոսի բառից մէջ զուգուի Ս. կրքորանայի, և սա այլ իգարողի. յետինս՝ բարդուած անուն ըլլալով կու վայլէ որ այդ ազգ բուսոց սեռական անունն ըլլայ պարզն, այսինքն Բողն, և է Լ. *Pyrethrum*, Փ. *Pyréthre*. Ար. Արեքքարնա, عاقر قرحا, զոր Ամիրս. գրէ « Թակրկարնայ. (և կ'ըսէ) որ է Վայրի Տարդունին տակն. և լաւն այն է որ » պինտ լինի, ապիտակզոյն լինի... լաւն այն է որ սուր լինի և այրող լինի. և » ումանք ասեն թէ Հոսի Տարդունն է: — Դարձեալ գրէ հաստատութեամբ, թէ « Ինքն Վայրի Տարդունին տակն է. յորժամ բերանս առնուս՝ մրմայ. ա. » զէկն ի Մաղրիպու գայ »: — Շաս և շատ տեսակ դեղերն և օգուտներն այլ յիշէ, ինչպէս և Պէյթար. սա իր առանձին փորձերն և զանազան տեղ անձամբ փնտաւելն և գտնելն այլ պատմէ, և Բողի ինչն ալ յիշէ:

Այս բուսոց շատ տեսակներէն՝ Պտղաւէտն՝ *P. Fructiculosum* գտուի ի Մա. նախ, կեասարիա. — *P. Sericeum* ի Ռ-Հ. — *P. Nivale* ի լեւնակողմանս Մշոյ. — *P. Roseum* ի Ռ-Հ. — *P. Aucherianum* ի Մէզրէ, Բարբերդ. — *P. Palustre*, յԱրտահան, Մուշ. — *P. Sorbifolium* ի Ճիմիլ Լ. — *P. Parthenifolium* ի Ռ-Հ. Ճիմիլ Լ. Փայանտէօքէն Լ. — *P. Balsamita* ի Բարբերդ, Թէք տաղ Լ. Գարա. պաղ. — *P. Cadmeum*, յԱմիդ, Սեւերակ. — *P. Uniflorum* ի Խոյ. — *P. Millefoliatum* (Հագարթերթեան) որ և Հայկական կոչուած է, ի կարին, Վարսժն. ունիք, Գարապաղ: — *P. Myriophyllum* (Բիւրաթերթ) ի Նախնաան. — *P. Vulgare*, ի Մուշ, Գարապաղ, Մարդուան. — *P. Canescens* ի Քէմէրիւ Երեւանայ. — *P. Argentum*, ի Բերդազրակ. — *P. Tomentellum* ի Բաղէշ. — *P. Bourgæi* ի Բերդակ Բարբերդու. — *P. Tabrisianum* ի Սէրասպատ Դարիժու:

366. Բողաղ?

Յիշուի Բարդաղ լերան (Թաքալդու) կողմերում, բայց ինչպէս ըլլալն չէ բա. զատրուած:

367. Բողբոջ կամ Բողբուճ. Բխրուճ.

Գետնախնձորներու ազնուագոյն տեսակն. Լ. *Tuber*. Փ. *Truffe*. Թ. *Տումարան*.
 Պ. Ար. Բանահ կամ Գեհնար ա՛յ՛ճ ըստ Թարգմանչին Պէյթարի, որ երկար գրէ
 իր օգուտները, իսկ Ամիրտ. համառօտ. « Թէ զլուրն յաչքն քաշես, զկապն
 » (կօպ) ուժով առնէ, զաչքն սուր առնէ, և աչաց սպիտակին նշէ տայ... Ասէ
 » Պտ. Թէ Բամահն շատ ցեղ է, մէկ ցեղն Ղաւշանան է, և մէկ ցեղն Քիւնիչն է »:
 Ժաճաջ Գաւշանա կամ Ղոշինա, ինչպէս գրէ ի կարգին՝ Փարթի հետ՝ որ է
 Մանքարն կ'ըսէ. « Եւ իպն. ասէ, Թէ յերուսաղեմայ կու գայ, և անդ շատ կու
 » լինի. և ի հօն Պկոռչիա կ'ասեն. և յորժամ չորնայ՝ կապայ կու լուանան. և
 » ԹԹու կ'ուսովի... և հանց հով չէ որպէս զԲամահն՝ որ պեղծ խըլտ ընծայէ »:
 Պկուռչայի տեղ տպագրեալ Պէյթարի բառն է Բերսեհա շա՛յ՛ճ, բայց Թարգ-
 մանիչն համարի զայս ոչ *Tuber*, այլ *Lycoperdum*, Փ. *Lycoperde* կոչուած Սունկ.
 Թ. Ա. Շահնէր իւշ-արգ (Գետնի ձարպ). — Մեր երկրին սահմանաց մօտ՝
 Ամրայ կողմերում յիշուի ազնիւ Տօմալան. Եթէ ոչ նայն՝ նման պիտի ըլլայ այսօր՝
 Ատոն զոր յիշած եմք. — Վաստակոց գրոց բառերը մեկնելով Գէորգ Պալատ-
 ցին՝ Գիմէ բառին համար Թ. Տօմալան կ'ըսէ. մեր հին Բժշկարանն այլ Քիմէն
 զուգէ Խորենացոյ աշխարհագրութեան յիշած Գերերիին: Տես զայս:

368. Բողիկ.

Նոյն կամ նման Բողոյ (Թիւ 364), ուտելի Ժախ կամ բանջարեղէն մի, յիշուի
 այլևայլ կողմերում. Բժշկարան մի կ'ըսէ Թ. Չաչուր? կոչուի:

369. Բողկ.

Raphanus Լ. Փ. *Radis*. « Ար. Ֆիճի ասէ (կամ Ֆոճի *لجس*) և Պ.
 » Թուրքի. և ինքն երկու ցեղ կու լինի, մէկն վայրի է, որ է Աֆիոնս ? (Աֆրոնոս ?),
 » Պ. այսօր Թարպուզ կ'ասէ, և մէկ ածվոցն է. լաւն այն է... Բողկին ձէրն օգնէ
 » նամազին (կեղ, քոս) և քալաքին (երեսի մշուշ)... Ասէ Պտ. Թէ այն որ վայրի՝
 » ուժով է ամենայն դիմաք քան զածվոցն... Եւ հունդն՝ զմազն սպիտակ առնէ՝
 » և զձայնն կու բանայ, և Թէ կերակրէն յառաջ ուտեն՝ չԹողու որ կերակուրն
 » ի խոշակէն ի վայր երթայ և անցնի, փսխել կու տայ. և Թէ կերակրէն յե-
 » տեւ ուտեն՝ մարսէ, և ստամոքաց զպալղամն կու կտրէ... և լուրն զինով օգտէ
 » օձահարին. և Թէ կորն խայթէ զմարդն, յայն պահն Բողկ ուտէ՝ զէն շայնէ,
 » և եղն օգտէ ոսկրացաւութեան... Եւ ասեր են, Թէ զԲողկն առանց տերեւի
 » ծեծեն և առնուն ի լրէն տասն դրամ և անօթից խմեն, զմեծ և զփոք քարն
 » հալէ և հանէ ի քլտէն. այս փորձած է... Եւ Թէ զժայրն կտրես և զմէջն փո-
 » րես և վարդի ձէթ տաքցընես ի մէջն և ի յականջն կաթեցընես, զցաւն խա-
 » ղեցընէ... Եւ Թէ զմէջն փորես և չորս դրամ շողգմի հունդ ի մէջն դնես, և
 » զԲողկն խմորով ծեփես և ի հահանդ կրակ Թաղես մինչեւ եփի, և տաքցընես
 » եղկ՝ և երեք օր խմես անօթուց, զքարն հալէ. փորձած է »: Այսպէս և ա-
 » նելի բժշկական բաներ կու գրէ Ամիրտուվաթ:

Բողկի բնութեան համար վաստակոց գիրքն կ'ըսէ (ՉԼ. 2Թ), Թէ, Շողգամի և Կաղամբի պէս « քարոջ են գիջութեան և ապականեն զայգին, (որոյ մէջ) »
 « ամենևին չէ պարտ ցանել »: Իսկ Բողկի մշակութեան համար այլ գրէ (ՉԼ. ՄԾԹ).
 « Եթէ կամիս որ Բողկն մեծ լինի և գեղեցիկ, երկու Թիզ փոս արա վարսամով
 » (ցից), և յարդ և հող լից սակաւ մի, և սատրեա (զատէ իրարմէ), կամ
 » զհունտն անդ գիր. նա Բողկին ցըցին օրինական լինի »: յետոյ խօսի Բողկի
 օգտից վրայ ըստ Բժշկարանաց. « Որ ի սէվտայէ նեղհոգուկ և Թալուկ ունենայ,
 » խաղաղեցուցանէ... Եւ մրչափ գովեմ՝ երբ գովելի է, գի ով առնու զլուրն
 » նորին և զնեան օծանէ, և զօձն բռնէ և զկօրն, նա շկարէ խայթել. և թէ որ
 » գԲողկն ի վերայ կօրի դնէ՝ սատակի: Եւ իւրն ահակն (Պլաան) այս է, որ
 » զակուայքն և զձայնն աւերէ »:

370. Սեւ Բողկ.

Թիչէ զայս Բժշկարան մի առանց բացատրելու զանագանութիւնը:

371. Բողկուկ.

Երկայն բարակ Թելանման ճիւղերով բոյս կամ բանջար մի, որոց ծայրն ման-
 րիկ սպիտակ ծաղկանց փունջ մի է, տերեւներն կէս մասին երկայնութեամբ,
 նեղկուկ և ցանցառ: Ուտելի է, և համին համար այսպէս կոչուած է: Ազգակից
 համարուի Շողգամուկի:

372. Բոմբոզ կամ Բիւմբոս. Բամպոզ.

Տեսողք ի Հայս և ի Կիլիկիա վկայած են, այլ չեն բացատրած. նայնպէս և
 Սիր Բամպոզ, զոր յիչէ մէկն:

373. Բոշխ.

Խոտեղէն մի Թելի պէս բարակ և սուր տերեւներով, փնջաձև մանր ծաղկով
 անասնոց և Թռչնոց ուտելի նա. և ոտք տաքջընելու համար կօշկաց մէջ դրուի,
 անոր համար Թ. կոչուի Այսպ օրի: Ծանօթ է ի Կարմիրք, Խոտուջուր: —
 Այս բոյսերն Լ. Carex կոչուին. Փ. նա և Laicho. յատուկ Բոշխ տեսակն C.
 Davaliana. Մեծադոյն տեսակն այլ կոչուի Չխարշխ:

374. Բոշնակ.

Որ և Ասոր, ըստ Ստ. Ռոշքեան, « Խոտ է որ յԱսորեստանէ բերի ». անուանի
 Լ. Singidium. Այս անուամբ յիչէ Պէյթար, և տեսակ մի Ստեպղին է, կ'ըսէ,
 աւելի բարակ և լեղի, ճերմակ արմատով. յԱսորիս և ի Կիլիկիա կ'աճի. ուր
 ինքն գտեր է ի Սատալիա և նմանջընէ Քաղարի:

375. ԲՈՐ.

Գառանց և այժուց ախորժելի խոտ. որոյ հատերուն մէջ մանրիկ յլի նման տիզեր կ'ըլլան, անոր համար Թ. Պիր օրո: (ժլլախոտ) կ'ըսեն:

376. *ԲՈՐԿՈՆԻՄ.

Երբայերէն բառ (Պարզանիմ), Բ. Թարգմանիչք այլ Հ. այլ՝ պահեր են նոյն անունը (ի գիրս Դատաւ. ը. 7. 16), ուր կ'ըսուի թէ Գեգէոն սպառնացաւ և իր հակառակորդները փշոց և Բարկոնիմայ վրայ քաշելով սպաննց. որ էր տեսակ մի Դժնիկ:

377. ԲՈՅՏԱՆ ՄՊՈՒԿ.

Թ. Փէյրամպեր տիւնկաի. Թուի երկայն և օղ օղ կամ հանգոյց հանգոյց, զի տղայք այսով պոսկ շինեն կ'ըսէ Բառագրողն: (Պատկ. Գ. 133):

378. ԲՈՒՐՈՒ.

Դեղին ծաղկով խոտ մ'է, ըստ Մանանայի (եր. 143):

379. ԲՈՒԹ ?

Բժշկարան մի կ'ըսէ. « Եամի (Դամոսկոսի) Բուրն, որ է Հոռոմ Բուրն ». առանց բացատրութեան: Տես և Բրակ:

380. ԲՈՒԽՍՏԱԿ.

Երջանիկ Արարիոյ ծաղկանց կարգին յիշուի յԱշխարհագրութեան Խորենացոյ:

381. ԲՈՒՍ.

Վայրենի ծառոյ մի ողկուզաձեւ մանրիկ հատերով պտուղ, զոր աղջրով Թթուեցընելով կ'ուտեն: (Մանանայ, եր. 163):

382. ԲՈՒՐԱՍՏԱՆ.

Անշուշտ անուշահոտութեանն համար այսպէս կոչուած, որու վկայէ և Սալաձորեցին, առանց ձեւը կամ գոյնը բացատրելու, Թերեւս կարմիր նշանակէ. ըսելով,
« Բուրաստան ծաղիկ մի կայ, վարդ է շարեր հետ Բանգերուն
Կարմիր ինձոր Թագաւորաց, օսկի բուրվառ է խնկերուն »:
Երգոյն ուրիշ օրինակք անունը գրած են Բուրագան կամ Բուգան:

383. ԲՈՒՐՈՒԻ ԾԱՌ. — Տես Դարիսպար:

384. Բուրեմ ?

Շատ անուշահոտ կամ սաստկահոտ ծաղիկ մ'է. Ար. Պոլիտեր Լաչե կոչուի. Թ. Քիսեմբուկ չիլեկի: Այսչափ գրէ՝ մեզ տեսող մի յարեւմտեան Հայո:

385. Բուրճինից ?

Նորահնար բառ (որմէ՞) ի նշանակել զկեղեւ Cascarilla կամ Cinchona ծառայ, որ է տեսակ կամ նման ջերմահալած կինկինայի (Quinquina):

386. Բոքի.

Կակուղ կամ խոտեղէն մեծ բոյս, որ ծառածեւ կ'աճի և կու հասարնայ, դեղին ծաղիկ ունի մազի պէս բարակ թելերով. դալարութեան ատեն անասնոց կեր կ'ըլլայ, չորցած՝ մարագնեբու և հիւղերու տանեաց ծածկոյթ: — Ոմանք Բոքի անուամբ Խոնդատը կ'իմանան:

387. Բունչի. Բունչենի.

Պառուղն այլ որ Թունապի գունով և փոքրիկ է, Բուինչ. տերեւն նման վարդին. հաւն անոյշ, ախորժելի տղայոց. Թ. Չարլանկոն: Քայիենոսի բառից մէջ կան քանի մի անտայգ և խանգար բառեր՝ որ այսօր զուգուին. Նարակ (Ար. Նըրբէ), Քոնար ? Կալալ: Եթէ ասոնք անծանօթ են, կան շատ հայերէն անուններ՝ որ այս հասարակ կամ ոչ շատ պիտանի ծառայն կու տրուին, շատ հեղ նոյն համարելով ընդ Բեւեկնոյ, որպէս յիշեցինք (Թիւ 337) և ընդ Բդուսի. հարկաւ թէ ոչ նոյն՝ այլ իրարու շատ նման ըլլալով, զոր շկարենալով մենք որոշել յիշեմք յաղորդ անուան տակ: Թէ ոչ մի և նոյն՝ այլ մօտ ազգակից է Բունչին ընդ Լիգնեւայ (զոր տես), երկուքն այլ Լ. Celtis, ետքինն C. Australis, կոչուի, իսկ առաջինն C. Occidentalis, իբր հար. և հիւս: — Ոմանք վայրի Էնտասեկի համարին զԲունչին:

388. Բտոււմ. Բդոււմ. Պտոււմ. Բուտոււմ. Պուտոււմ.

Ինչպէս տեսանք (Թիւ 337) Ար. Հայ ըր-Ղատրա կամ Խազրա զԲեւեկն նշանակէր՝ ըստ Բժշկարանաց ոմանց. նոյնք գրեն դարձեալ, « Հայ ուր-ղատրա, որ » է Չատրաղոս Թուրքերէն, և հայերէն Կապոսի ասեն, որ է Բուտոււմ; որ է վանն »: Ամիրտուլաթ Ար. Չարու կամ Չիրու: چرخه բառին ներքեւ ստորագրէ. « Չա- » թու էք և որձ Պուտոււմ ասեն. լաւն այն է որ կանաչ լինի. . կապող և չորացնող է. » օգտէ բերնին ցաւուն և ակընջին, և զարտեւանունքն բուսցընէ՝ իր ծառին մո- » խիրն. և իր ձէրն զերիկամն տաքցընէ. . և զքարն կու հանէ, և իր միրգն լուծում » կու առնէ. . և թէ զձէթն խմեն՝ զկոնըկին ցաւն տանի, և սակրացաւութեան » օգտէ, բայց զստամոքն վատուօցընէ. . Իպն. ասէ, թէ ի լերունքն կու բուսնի. » ծառ-մն է, ի կաղնու ծառ կու նմանի, և հաստ ծառ է. և միրգն Մանա-

» կողին (Բեւեկնոյ) միրգին պէս կուզ կուզ լինի, թէ աղէկ հասնի՝ տերեւն և » միրգն ծեծեն և զեղն հանեն և օժեն յանձն, զքամին ի յանձնէն հանէ. և » թէ զժառն այրեն և զգործելին լոսեն և ի վերայ խոցին ցանեն, օգտէ Աստուծով »: — Ամիրտովաթ ըսածներն ըստ մասին Պէթարէն կ'առնու, իսկ սա կ'որոշէ գՊատուսն ի Բեւեկնոյ, ասոր տերեւոց ծայրն կարմրուկ կ'ըլլայ կ'ըսէ, որ յետոյ պտղոյն պէս աւելի կարմրնան. կու յիշէ և խէժն որ ինք իրեն կու ծարի քիչ քիչ: Թարգմանին կ'իմացընէ որ եւրոպացի գիտնականք այլ նոյնացուցեր են զԲեւեկնին և զԲուսուսն, բայց հիմայ այս ետքինս ճանաչուի Լ. Lenticus Փ. Lentisque. — Դառնալով մեր լեզուի հոմանիշ բառից, նախ յիշեցընենք որ Բանին այլայլեալ հնչմամբ ըսուած է և Փղնըղի. իսկ ծառն կամ իր ազգակիցքն կ'ըսուին Հեղձի, Շշի, Նորգեկի, Մահրայի, զորս տես ի կարգի անուանցն. այլ և Լեվոր և Լուստ, զոնէ պտուղն այս ետքի անուամբս, որպէս և Պոսկնոսկ: — Ար. Բատուս կոչուի և Պիստակն Պաղեստինու. Pistacia palestina.

389. Բրաբինո.

Ելայտ է մեր լեզուագիտաց. որ այս յոյն բառս՝ Βραβειον շատ հեղ նշանակէ պսակ կամ վարձ յաղթութեան, ինչպէս կ'երգէ Շարականն, « Ընկալեալ զբրա » բրինն յաղթանակ նահատակաց »: կամ Գանձն,

« Հրեշտակապետին բերեալ Բրաբինոն կուսին, Նշան յաղթութեան կրից աշխարհի. » — և այլն.

ըստ այսմ Լ. Præmium. Փ. Primo. Եւ որովհետեւ ինչպէս ի վկայութեան Գանձին՝ (զոնէ մեր ազգի աւանդութեան մէջ) հրեշտակին երեւնալն առ Ս. Աստուածածին՝ թէ Աւետմանն առնն թէ ի Ննչմանն, ձեռքում ծաղիկ մի նկարուի, ոչ միայն ծաղիկն Բրաբինոն կ'ըսուի, այլ և յատուկ ծաղիկ մի անուն համարուի Բրաբինոն, կամ նոյնն Մարտինայ ծաղիկ կոչուի, նա եւ առ օտարս. ըստ որոց է և Լ. Sanamunda, կամ Geum urbanum, և ըստ Տուռնըֆորի՝ Caryophyllata, իբր մեխակահոտ: Ղիտիք՝ Բրաբինոն անուանեն թ. Հիսուսի - Երուսիֆ — ըսուածը (Յովսէփ Գեղեցկի ծաղիկն), որ ըստ Ամիրտովաթայ է Հայոց վապտոսն, թէ և ուրիշ տեղ կ'ըսէ « Հոսանի Իսուսի, որ է Բաղեղն, որ ի ծառերն կու փաթ » թըլի »: Հիմայ ոմանք ի մերոց համարին թէ Բրաբինոն է սպիտակ Շուշանն, ըստ որում աւետարներ Գարրիէլ հրեշտակապետին ձեռքում այս ծաղիկս կու տրուի. այլք այլ տեսակ ծաղիկ. ինչպէս Շահխաթունեանն կ'ըսէ, Բնոյ Չորուա ձորակին մէջ բուսնի Մարտն ծաղիկ մի կամ Բրաբինոն. ցօղունն երկու կանգնաչափ, շատ անուշահոտ, զոր եռացընելով լըրի մէջ կողացաւութեան (զաթլըճամ) գեղ կ'ընեն. և թ. Չանքափ կոչեն այս ծաղիկս: Տուռնըֆոր յիշէ այս ծաղիկս ի Բարձր Հայոս, այլ և ի Դ Հայոս. յիշուի և յԵրեւան գաւառի, ի Համէն, և այլն: Սալաձորցին ուրիշ յարգի և անուշահոտ ծաղկանց մերձաւոր ընելով կ'երգէ.

« Մուրան ու Սուսամն եւ Բրաբինոն՝ հասարթ են թէ զիրար տեսնուն »:

390. Բրինձ. — Տես Որիգ:

391. Բրինձ ծաղիկ.

Մանրիկ և անուշահոտ ծաղիկ մի, ըստ Սեբաստացւոց:

392. Գար. Գարծիլ. Գամբիլ.

Բազմանկիւն ըսուած բուսոց ցեղէն է, մետրաչափ բարձրութեամբ, ծուռու մուռ ճիւղերով. և հասարակօրէն կարմրագոյն, թանձրիկ ափսածե տերեւներով, որ յատկապէս Գար կ'ըսուին, ու շատ ծաղկըններով: Բոլոր բոյնն ամէն մասամբ թթուահամ է, բայց շաքարով չաղուած՝ լաւ դեղ կ'ընծայէ: Բժշկարանք նոյն համարին զԳարծիլ և Խառածիլ. բայց հին Բժշկարանն որ տեղ մի այսպէս ասէ, տեղ մ'այլ գրէ, « Գարին տակն՝ որ Խառածիլ ասեն »: Նոյնպէս ուրիշ Բժշկարան մ'այլ, տեղ մի գրէ, « Գարծիլ, ինքն Խործիլին է, և համն թթու. ի Չինու » գայ. ուրիշ տեղ, թէ ոմանք կ'ըսեն այսպէս, բայց Խործիլն նման է Գարին»: Ամիրտովաթ գրէ. « Գամբիլ, » որ է Ըրիպան, որ է Ըրիպան, ինքն ցեղ-ն է, լաւն » այն է որ մատողաչ լինի և դալար... Պատէհին ասէ. « Թէ իր ուժն նման է Հումագին (Թթուիլ) և Ութ- » բունհին և Ազոխին ուժին. և լաւն այն է որ Պարսից » գայ. և ճղերն երկան և հաստ լինի, և ջրի և դալարի » լինի »: — Ասար բժշկապետն այլ յիշէ լատին անունն Ռիպես, որ յատկապէս է Rheum Ribes. Իսկ Ռիպաս կու լսուի նաեւ Ասորոց կողմերում, ուր կ'ըլլայ լաւ տեսակ բուսոյն, ինչպէս և ի հարաւային Հայս, բայց գտուի և ուրիշ կողմերում. Անգղիացի հին ճամբորդ մի, ծջ դարու վերջերը (Քարթրայթ), յիշէ նաեւ ի ստորոտս Մասիս լեռին: Կիլիկիոյ Պրիտ բարձր լեռին քարոտ կողմց վրայ այլ գտուի լաւ տեսակ մի Գարի, զոր տեղացիք կոչեն Սալիդիկն Գար: — Գար գրի և Գափ. իսկ Միջ տերեւոց և ճղից միջոց ընծայուած մասերուն յարմարի: Հին Բժշկարանն յիշէ Սերկեւի և Դուր հետ Գարի շարաս: Բայց հիմայ ամենէն նշանաւոր մասն բուսոյն և դեղն՝ է արմատն կամ տակն (rhizome), որ կ'ընծայէ հոշակաւոր Խաչն-դեղը (Ռաւէնտ), մեր երկրի ամենէն նշանաւոր բերոց մէկն. այս անունն այլ առած է անշուշտ տեղացեաց սովորութենէն, որ արմատները կտրտելով խաչանց (ոչխարներու) վըզին կու կախեն՝ որ շորնան: Արեւելքի Գարն կամ տեսակներն՝ դեռ լաւ չեն ճանչցուած. եւրոպացւոց ծանօթին պատկերն է այս ծաղիկս, Տես և Խաչնդեղ:



Գարի ծաղիկ.

393. Գազ.

Շատ փշոտ Թուփ մի, որոյ բնութիւնը կամ իրեն անվտանգ մօտենայու դժարութիւնը՝ լաւ բացատրեց Մերուժան Արծրունին, երբ Ուսնայր Աղուանից Թագաւորն պարծենալով կու խնդրէր Պարսից Թագաւորէն՝ որ ինքն ելնէ ընդդէմ Մուշեղի՝ Հայոց և Պապ Թագաւորին զօրապետին, « Աստ, ըսաւ (Մերուժան) » արկեր զԳազի՝ գիրկս. բայց թէ ժողովել կարիցես՝ մեծ զարմանք իցեն »: այսինքն, շատ փշոտ բանի մի ձեռք երկընցուցիր, Մուշեղի պէս կարիճ մի բաներու, բայց եթէ կարենաս բռնել կամ ձեռքերդ ազատել իրմէ, մեծ զարմանք պիտի ըլլայ. — (զարմանաց տեղ խայտառակ եղաւ պարծենկոտն, երբ

Մուշեղ իր նիզակով Ուռնայրի գլուխը ծեծելով հալածեց, կենացը խնայելով ի պատիւ Քազաւորութեանն): — Գազն՝ Թ. ալ կեզ կոչուի. Լ. Spina Hiroi. բայց կայ և մեծ տեսակ կամ Գազի ծառ: Իսկ Բժշկարան մի զանազանէ անուամբք ըստ տեղեաց. « Գազին ծառն՝ յորժամ ի լեռն բուսնի՝ Նազար ասեն, և յոր- » ժամ ածունիքն՝ Իսկոս: » որ պիտի ըլլայ Թ. պարզ իսկ կամ իլկոսն ա- դաճի. իսկ զՆազարն լեռնցի՝ ուրիշ Բժշկարան մ'այլ անուանէ (Թ.) Քեղեկն: Ալևք Չուքաղ կ'անուանեն « Գազին փայտն, երբ զփուշն վայր տան » (յա- շող ձեռագք քան զՈւռնայր). մէկն գրէ. « Չուքաղն է Գազին վայտին վարդն ». Թուի Թէ վարդի նմանութիւն մի ունի ծաղիկն: Մաղկէն ետեւ յիշուի Գազի պտուղ, և Ար. Չովզմագիճ, յորմէ և Գազմագիճ, իբր ընկոյզ վայրենի ծառայն, որ և Մոշոյ պտուղ կոչի ի մերայոց. անունն աւելի ծագելով՝ գրուի « Քազմագոռ, » ինքն Մաքքային ճամփուն Մոշուն պտուղն է, աղէկն այն է՝ որ ի յատենն քա- » ղուի. և բնութեամբ հովէ և չոր է »: Տես Մոշա: — Մաղկէն և պտղէն պա- տուական է Գազի Խեժն, Ար. Քրիթա կամ Քարիթա خريث որ և Բասի- րայ, ինչպէս գրէ Ամիրտովաթ, և կ'ըսէ. « Ինքն խեժ է. երկու լագգ է, սեւ » դեղնագոյն, աղէկն սպիտակ և յստակն է », և շատ տեսակ դեղերու մէջ մտնէ և կ'օգտէ. եթէ « օծեն ի ձեռքն և յաղքն՝ զճզբիլն կու տանի... զարեւուն » այրածն՝ ի յերեսէն տանի. հազին և կրծոց խոչորութեան և Թոքին խոցերուն » օգտէ », և այլն: Այս խեժը կ'անուանեն Լ. Adraacanthum. Փ. Adragante. Խի- ժարեր ծառն այլ Tragacantum. Բայց ոչ այս ծառէ միայն՝ այլ և ուրիշ կանի ծառոց տեսակներէ հանուի հիմայ Աղբականտ ըսուած խեժն:

Գազի այլեւայլ տեսակք յիշուին, ինչպէս.

394. Գունձ Գազ.

Գրէթէ մարդաչափ բարձր փշեղէն է, զընտանել, և վաւելու գործածուի. երբեմն գիւղացիք իրենց տանիքն ասով կու ծածկեն և վրան հող կու լեցընեն: Այս է կարծեմ ոմանց Գեանգիզ կոչածն:

395. Սեւ Գազ.

Թերեւս իր խիժին գոյնէն այսպէս կոչուած. աւելի քննելի է կոչուածն ի նոր գրողէ կերերի Գազ.

Գազ կ'անուանեն Պոնտացիք կրծոժն այլ, որ պիտի յիշուի իր կարգին:

396. Գազար.

Սոյնպէս կոչի և Ար. Ճագար կամ Ճէգար, چغندر ծանօթ խաւարտ, մեր լե- զուով սովորաբար կ'ըսուի Ստեպղին (զոր տես). բայց Գազարն դեղնագոյն կամ մթազոյնն է, և ոչ ազնիւ իրբեւ զկարմիրն. լաւ եւս ըսել վայրի Ստեպղին է, որ կոչուի Ար. Ճագար ըլլ-պարրի. Լ. Pastinaca (Dasganthia), Փ. Panais. Ամիր- տովաթ վայրի Ստեպղինը Ար. կոչէ նաեւ Ճագարի իկիտի ? և աւելցընէ, « Ար » է Շաղափտուն. և ոմանք ասեն Թէ Տուդունն է »: Այս ետքի անունովս լեռան Ստեպղին կ'իմացուի, իսկ Շաղափուլ նշանակէ նաեւ ուրիշ տեսակ բոյս, որ

տեսնուի ի կորզին: Ընդհակառակն Յունաց Ստաֆիլինոս կոչածը՝ որ է բուն ըն-
տանի Ստեպոդինն, Ափրտ. կ'ըսէ « Առուֆլին, որ է վայրի Ստեպոդինն. . և մէկ
» ցեղն այլ կու լինի՝ որ տերեւն Անձխտին տերեւն
կու նմանի, և ի ջրեզերքն կու բուսնի »: — Գազարի
քանի մի տեսակաց մէկն յատուկ Հայկական կոչուած
է. *Pastinaca armena*, և ճանչցուած ի կողմանս Գան-
ձակայ:

397. *Գագերըուակ.

Խորենացոյ աշխարհագրութիւնն արեւելեան Ափոյ
բերոց մէջ յիշէ հաւանորէն Ար. Պ. Ճաւզ էլ-պուէ.
զոր ոմանք խնկեղէն համարին, և այլք Հնդկաց
ընդոյզն: Տես Նարձիլ:

398. Գալ.

Տեսակ մի մանր Շաղգամ, զոր պահեն Կարնեցիք
ձմերուան համար:

399. Գահտակ.

Ըստ Բժշկարանի է Ակիր, որ յիշուած է ի Թիւ
41-2:

400. Գահրշակ.

Անծանօթ պտուղ մի, զոր Խորենացոյ աշխարհա-
գրութիւնն նշանակէ ի նահանգին Մոկաց, եթէ չէ
ուրիշ օրինակաց մէջ Արշատ գրուածն, զոր յիշեցինք, Թիւ 223:

Գագար.


Գաղբան. — Տես Քաղբան և Մարր:

401. Գաղձ կամ Գաղձն.

Անպիտան բոյս և մլասակար այլոց, որոց հիւթը ծծելով և վրանին պլլըւելով
կու շորցընէ. ըստ ոմանց է Գալիստան (զոր տես քիչ մի վարը): Վաստակոց
գիրքն յիշէ (Գլ. ԼԴ. թժԹ) և Գետի և Մովոն Գաղձ, և պարարտութեան աղբ
յինեղու համար՝ խրատէ, թէ, « Գաղձն՝ զոր ծովն ի դուրս ձգէ՝ լուս օր աղիու-
» թիւնն ելանէ, և ի ներք խառնես. նոյնպէս և Գետի լինի »: Նոյնն հնձանի
մէջ կոխուած խաղողին՝ անձրեւէ թրջըւելէն պահելու համար՝ խրատէ ձարձա-
տած Գաղձ ձգել մէջը:

402. Գաղտիկ. Գաղտիկուռ կամ Գաղտիկուր. Գաղտնակոր.

Այս տնտանս ծագումն անյայտ է և կու թուի հին աւանդութենէ մի. բոյսն



կոչուի մեր լեզուաւ և Գառնաչեզոս, բայց աւելի հասարակ Զդախոտ, մինք այլ այս ետքի անուան տակ բացատրեմք . այս տեղ միայն երկու անուանց հոմանիչ ըլլալն և առասպելական աւանդութեան մէջ յիշուիլը նշանակեմք, աղթարախառն Բժշկարանի մէջ գրուած աղցիփեզց խօսքով, իբր ի դեղ սունկ (տեսակ մի ուսեցք) ախտի . « Ա՛ռ խունկ և նոր դանակ մի, և գնա յառաջ ի Գաղտիկու- » ռանն, և արկ զխունկն ի վերայ կրակին, զգանակն զարկ ի տակն, և աստ . » Հրաւիրած ես, Զդախոտ, 368 ցաւոց դեղ, այս անուն մարդոյն սնկան », եւ այլն : Անանիի է Գաղտիկոսեան բառն, որ է Գաղտիկուռի արտ կամ ածու : Գաղտիկոսի բառից մէջ Գաղտիկուր գրուած է Առնոզդու, Առնոզդոս խանգարած բառին առջեւ, որ է Arnoglossum, և Թարգմանի Գառնայեզու . — Հայերէն բառն այլ խանգարած գրուած կայ Կիտրկոսր . Լ. Plantago. Փ. Plantain. Ռ. Подптанкы Բժշկական գրոց և բառից մէջ յիշուի և .

403. Գաղտիկուռ Բարակ .

Որոյ համանիչ արարերէնն՝ այլայլած անչուլտ՝ գրուի . Աւրոնարար աստփիչ ?

404. Գամանտրաշ .

Սալաձորեցոյն ծաղկանց երգոյն մէջ յիշուի .

« Գամանտրաշ և Չաւոր—ծաղիկն, Գօճակն ծաղկեր արտերուն » :

Ուրիշ օրինակի մէջ կանոնաչ գրուած է . Թուի Գանոնաչն :

405. Գամբ .

Փշեղէն բոյս մի Թուի իր հետ յիշուած Տաստակ բառէն . բայց ըստ ոմանց է Անճիտայ . զոր տես ի Թիւ 117 :

406. Գամնակ . — Տես Գոճանակ .

407. Գամուտաշ .

Կապոյտ ու սեւի զարնող խոտ մ'է . գուցէ, նոյն ըլլայ ընդ Գամանտրաշի, մանաւանդ որ զայս յիշողքն կարնոյ կողմէն են, ուսկից և Սալաձորցին :

408. Գայիսոն ?

Մաղիկ, զոր յիչէ Քաջբերունի յարեւելիան սահմանս կարսի . եթէ չէ Ար . Ղայտաճն, որ է Բարձուենեկ :

409. Գայլ . Գայլխոտ .

Հին Բժշկարանն կ'ըսէ . « յայգիքն լինի, որպէս Բաղեղ է » : Ար . անուան է

Քրոսոր, զոր Ամիրա. գրէ Քրոսը կամ Քրոսս, այլ և Աքրոս شمشاد . և աւելի պարզէ Բաղեղի նմանութիւնը. « Ինքն ի յոր տեղ բուսնի՝ ի յայն տուփն (Թուփն ?) » կու փաթվի, և զգիծութիւնն կու քաշէ. և լաւն այն է որ ի վերայ փշին բուսնի ։ Իր օգուտները կու գրէ նաեւ առանձինն իր հունարը յիշելով և կոչելով Ար. « Պզր բր-Քրոսը, որ Պ. Ըռահնոսը կու ասեն և Աքրոսը այլ կ'ասեն, և Ասորին » Տինարքրոս ասէ ։ Խոտին պատասուկ բնութիւնը (մանրիկ փուշերով ուրիշ բուսոց պլլըւելով) և սոսկ անունը՝ համառօտ գրէ ուրիշ մի. « Ա՛ն զՔայլն՝ որ » զորթովն պատատէ », եւ այլն : Այս բնութեանս համար կոչուի եւս Բարտոռն կամ Բարդիկնի, ինչպէս որ տեսանք ի Թիւ 277 : — Լ. Cuscuta, Փ. Cuscute. — Թէպէտ շատ հասարակ և անարգ խոտեղէն է, բայց բուսաբանք իրեն տեսակներ այլ որչեր են, և Եւրոպական կոչուածն՝ C. Europea. ի Հր. Հայս նշանակած են :

410. Գայլարոխ.

Քերտոխ սամկօրէն, տեսակ մի Բոխի (Տես Թիւ 361). Յիշուի Սեւանայ ծով-եղերըում :

411. Գայլասխտոր. — Տես Բժիժ.

412. Գայլասոխ.

Յիշուած է, այլ ոչ բացատրուած :

413. Գայլթամ.

Տեսակ Մորչի. Լ. Alchimilla Vulgaris, Փ. Alchimille. յարմարի և Pied de Lion կամ Lapin կոչուածին (որ և Mantelet de dame). փոքրիկ քլաշափ բոյս մի, եօթն շերտ կամ մասն բաժնուած վայելչաձեւ տերեւներով : — Բայց բուն բաւին նշանակութեամբ յունարէնէ առնուած անունն Լ. Lycopodium, Փ. Lycopode, տարբեր ցեղէ բոյս է, խոտեղէն, ճղճղած, և ասոր համար գայլու Թաթի նման ցուցած, մանրիկ տերեւներով պարուրաձեւ որձային վրայ շարուած : — Այս ետ-քինս քանի մի տեսակ ճանչցուած է ի Պոնտոս, Ճիսիլ և Լեռնային կոչուածն Լ. Alpinum ի Թ-Հ :

414. Գայլթիլ ?

Թուի անպիտան բոյս մի. զի բանջարոց յատկութեան վրայ գրող Բժշկարան մի յիշելով զՍունկն՝ իբր գէշ ցաւ տուող, « Վատ (է կ'ըսէ) քան զԳայլթիւն » :

415. Գայլու ականջ.


Որդնտակ կամ Սղանգ բոյսն է, զոր չորցուցած զեղ կ'ընեն ձիոց հին վէրքե-բու : Անունն առած է ձեւէն, որ է իբր սուր եռանկիւն. ծայրն երկայն, վարի կողմն երկու կլորիկ բաժնուած : Պատկերս չորցած տերեւէ մի հանուած է :

416. Գայլու Թուր. ԳելուԹուր.

Կանգնաչափ սոխարմատ բոյս մի սուր տերեւներով, հասկաւոր բաժակաձեւ շառագոյն ծաղկներով:

417. Գայլուկ.

Յերոպա շատ ծանօթ՝ զարէլուր զուգելու համար գործածուած խոտն է. Լ. Lupulus. Փ. Houblon, որոյ Թերեւս լաւագոյն հայերէնն է Հուսել կամ Հմել: Տես զայս:



Գայլու ակակի.

418. Գայլիկ.

Նշանակած է բառահաւաք մի, առանց բացատրելու:

419. Գանգլեղ.

Նոյն բառահաւաքն զայս ալ նշանակէ առանց բացատրութեան: Թերեւս ըլլայ Գունձ Գաղն:

420. Գանի.

Նոյն կամ Մայրի ծառ է, ըստ գրոց Նոր Հայաստանի, իսկ ըստ Պետ. Կալ. հօկեցւոյ է Գի. Լ. Juniperus Sabina. Փ. Gênevrier Sabine.

421. Գառան դմակ.

Տեսակ մի խաղողոյ է յԵրեւան, նմանցընելով այսպէս կոչուած:

422. Գառնադմակ. Գառնադմակիկ. Գառանդմակ. Գառանդմակիկ.

« Արարն Հայ ըլ-յայաւ ասէ ۞ الحاحا ۞ և Ֆրանկն Սիմպերվիվում (Semper-
 » vivum. Փ. Joubarbe) ասէ, և Թ. Ղայա դորուդի ասէ, և ինքն երեք ցեղ է. մէկ
 » ցեղին տերեւն տափակ է և թանձր.
 » և մէկ ցեղն մանտր՝ զէտ ազոխ է.
 » և մէկ այլ ի քարերուն վերայ կու
 » բուսնի. և լան այն է որ թաժայ
 » լինի... Իպն. ասէ, թէ ցեղ-մն այլ
 » կայ՝ որ ի վերայ պատերուն կու
 » բուսնի. և թէ յանձինն շտերուն
 » վերայ բոսս՝ օգտէ:.. Իւ այս խո-
 » տիս Հայ ըլ-յայաւ ասելուն պատ-
 » ճառն այն է՝ որ հանապազ կանաչ
 » է և թաժայ. և սմանք ասել են
 » այսոր՝ թէ Պոստան աֆրոսն է. չէ
 » ստոյգ: Պատէհին ասէ, թէ այսոր
 » Պարսիկք Ապրոսն կու ասեն, որ
 » հանապազ կանաչ է և կենդանի է,
 » և իր տերեւն չի թոսմիլ: Իւ ասեր
 » է Գս. (Դիոսկորիտէս), թէ երեք
 » ցեղ է, և ինքն ի շուք տեղեր և ի
 » պատտըկեր շատ կու բուսնի. և իր
 » սրձան կարճ կու լինի, և ծաղիկն
 » դեղին, և այն որ ամփոցն է՝ հաստ
 » կու լինի՝ մատի-մն չափ:.. և երրորդ
 » և ցեղին Պախրաք ըլ-հաւզայ է ասեր
 » և կամ նմանցուցեր »: Սնահաւատ
 բան մ'այլ աւելցնէ. « Ասած է, եթէ ուզես որ երկու չարկամին ի մէջ սիրե-
 » լութիւն ձգես, եփ որ երկուքն ի քուն լինին՝ զինքն չոր տրորես և ի վրան ցանես՝
 » սիրեն զիրար »: — Վերոյիշեալ Պ. Ապրուն բառը՝ ուրիշ տեղ յիշելով Ամիրտ.
 նոր հայերէն անուն մ'այլ կու տայ բուսոյն, « որ է Վայրի Ազոխ »: Իսկ Թ. Ղայայ
 դորուդին՝ կ'անուանէ Փերփեր քարի. այս քարերու մէջ բուսած տեսակը յիշէ
 հին Բժշկարանն այլ լատին անուան դիմաց, « Սիմպերն (Sempervivum) Գառ-
 նադմակ՝ որ ի քար է »: — Ի Պինկէտլ լ. յատուկ տեսակ մի գտուած՝ անու-
 նուած է Հայկական, S. Armenum. Հօն տեսնուած է և Globiferum. (Գնտաձեւ)
 տեսակն: — Գառնադմակին մէկ օգուտն այլ է. ըստ Վաստակոց գրոց (Գլ. Ի.)
 ընդեղինաց սերմերը ապահովել ի վնասէ, ցանուած ատեն. « Առ զԳառնադը-
 » մակիկ խոտն, և ծեծեա ի սանդի, և զնոյն իւր ջրովն լից ի տաշտ, զսերմն
 » այնով չփեա և մնչեա աղէկ և ցանեա, նա ոչ մուկն մերձենայ և ոչ թռչունք.
 և լինի բոյսն խիստ թորթոշ և լաւ »:



Գառնադմակ.

423. Գառնադմակիկ փոքր.

Պզտիկ տեսակ մ'է և աւելի քարերու մէջ բուսողն, որ կոչուի *L. Sedum minus*, և պարզապէս այ *Sempervivum*. մինչ մեծ տեսակը կոչեն ոմանք *Sempervivum arboreum*, այսինքն Ծառակերպ: — Յիշենք որ Սայաձորցին իր զոված ծաղկենբունն մէջ յիշէ զԳառն-դմակն եւս Ակընջուկի հետ, իրրեւ « *Կարօտ մանուշկին* » տեսուն »:

424. Գառնալեզու.

Չայս նշանակէ՛, և Ար. Լիսանը-համար: Տես ինչ որ ըսինք Գաղտնիկու բառին և պիտի ըսեմք Չղախտոսին համար: Ամիրտովաթ Հ. Ար. բառերը յիշելով նոյնացընէ վերայգրելոյն հետ, ըսելով. « Եւ Գառնադմակիկ այլ կ'ասեն »: սակայն տարբեր բոյսք են:

425. Գառնականջ. Գառան ականջ.

Ըստ վկայութեան Ասարայ և այլոց՝ Թրքերչոնին է, և այս անուան տակ բացատրուի: Բայց հօս յիշեմք որ հինգ կամ աւելի տեսակ այս բուսոյ զանազանեն բուսարանք, որոց մէկն կոչուի *Limonion*. Ամիրտովաթ յիշէ զայս բառս և կ'որոշէ. « Լիմոնիոն՝ Գառնալեզուին և Գառնադմակիկին խորոն է, որ Թ. » Ղոզգոռ զոչարդի ասէ (Գառնականջ), և տերբեն նման է Չքընտրի տերբին, » և որձան բարակուկ կու լինի, և տերբեն յերկան կու լինի և տասն կու լինի » տերբեն, այլ աւելի այլ կու լինի: Եւ Թէ զմիրզն մանտր ծեծեն և Սերկելի շաբապով խմեն՝ օգտէ աղեաց գաներուն. (սուր ցաւեր) և հին լուծման, » և այլն: — Ըստ ոմանց Գառնականջն է *L. Oxalis*. Փ. *Oxalide* կոչուածն, որ յատկապէս է Թրթնջուկն:

426. Գառին ծաղիկ.

Գալիենոսի բառից մէջ այս բառս դրուած է թիրի անուան դիմաց. Թէ Պէյթար և Թէ մեր Ամասիացին վկայեն, Թէ սա շատ կամ « *Վեց ցեղ է (այլ և այլ գոյներով)*. լաւն այն է որ դեղին և անուշահոտ լինի... Թէ զծաղիկն » Նյաչքն քաչեն՝ ճիշտ այս աչաց... Օգտէ այն որ կարմիր ծաղիկ ունի՝ ոսկրանցաւին, Թիրեաք է... Իպն. ասէ, Թէ որն սպիտակ, որն դեղին, որն կարմիր, » որն խոտ, որն ծիրանի. լաւն այն է որ դեղին լինի »: Պէյթարի Թարգմանուած օրինակին մէջ միայն կարմիր, սպիտակ և դեղին գոյնքն յիշուին, ուստի տարակուսելի մնայ հեղինակին խոտ ըսածն ինչ գոյն է. գիտեմք որ խոտոյ սովորական գոյնն է կանաչ, այլ այս բոյսս՝ որոյ արարացի թիրի *خيزي* անուան վրայ յունական անբոս (ծաղիկ) անունն այլ յարելով *L. կ'ըսեն Cheiranthus*, Փ. *Giroflée*, Թ. Շեհկոյ, յորմէ յարմարեալ է հայերէնն Շահկոյակ, միթէ կ'ըլլայ և կանաչ:

427. Գառնակերտ.

Տարակուսական անուն, նոր բառահաւաքէ մի նշանակուած ի լրոյ կամ ծաղիկը տեսնելով. զոր թողով ստուգելու, խորհրդածեմք՝ այսչափ Գառին անդամոց նմանութեամբ յարմարած անուանց վրայ. որք կարծել տան, թէ հովուութեան՝ որ է ըսել և մարդկութեան՝ առաջին դարուց մէջ հնարուած են, երբ հովուութիւնն հասարակաց արուեստ էր. մարդիկ դեռ քիչ մտաւոր գաղափարներ ունենալով՝ շատ հեղ իրենց ընտանի կենդանեաց (գառն, եզն, կով, ցուլ, էշ, ձուգտ, աղաւնի, ճնճղուկ, աքլոր, եւ այլն), և երբեմն և վայրենեաց (առիւծ, գայլ, արջ, աղուէս, ինձ, ագռաւ, արծուի, և այլն) անուամբք՝ կամ անոնց անդամոց՝ կ'անուանէին իրենց նոր տեսած բոյսերը, երբ երկուքին մէջ ձեռոց նմանութիւն մի նշմարէին. վայրենեաց անուանքն աւելի եւս հաստատեն այս կարծիքս, հնա, գոյն ժամանակներ յիշեցընելով, երբ քաղաքականութիւնն զարգացեալ չէր, և դեռ գաղանք շատոր և մտաւոր էին մարդկանց կիսաչէն կամ փորած անուրջ բնակարանաց:

428. Գառուլիկ ?

Վերոյիշեալ բառահաւաքն նշանակեր էր և զայս.

429. Գարեկենի.

Տեսակ անոյշ և փխրուն խնձորոյ, ըստ Խոտաւորեցոց:

430. Գարի.

Մանօթ ընդեղէն, ուտելի մարդկան՝ այլ աւելի կենդանեաց. « որ Արարն Շեր » ասէ (կամ Շաիր $\gamma\epsilon\alpha\delta\alpha$) և Պ. Ճալ, և Թ. Արփա ասէ. (L. Hordeum. « Փ. Orge. Ռ. Ячмень). և ինքն երկու ցեղ լինի. մէկն կեղեւ ունի, և » մէկն չունի, մերկիկ է. և այսոր Սաշար ատեն. և լաւն այն է որ գէր լինի... » Լաւ Գարին այն է որ յՅգիպտոս լինի. և ազգ-մն այլ Գարի կայ որ սեւգուն » կու լինի, այն լաւ է և ուժով և ծանր, և գովելի է »: — Տարակոյս չկայ որ ցորենոյ պէս մշակուած է Գարին մարդկութեան առաջին դարերէն. որոյ հնութեան մէկ նշանն այլ է՝ կշռոց միութիւն կամ տարր ըլլալն, Գարեչափ կոչմամբ. միւս՝ և սեւ նշան մ'այլ է՝ մուր մտաց գարիով գուշակութիւն կամ կախարհութիւն ընելն. ցրուելով, համրելով, և այլն, (Արփա արմաք ըստ Թուրքաց). որոյ ընտղն Գարեդիար կոչուէր և կոչուի ինչուան հիմայ: Ըստ այսմ դիւրին է գուշակել, թէ պատմութեան մէջ որքան յիշատակներ ունի Գարին. բայց ամենէն արժանին և ախորժելին է՝ « Հինգ նկանակն Գարեղէն », զոր Փրկիչն մեր որհնեց, անեցոց, 5000 մարդու կշտանալիք ըրաւ, և աշակերտքն « Լցին 13 սակաւի » զկոտորոցն՝ ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերտղացն »: (Յովհ. 2. 13): Այդ անհատուած հինգ նկանակաց բաղդակից եղան երկու ձև կունք այլ, կամ մտնաւանդ ուտողքն:

Գեղորէից մէջ այլ շատ գործածուի Գարին. « և թէ զգլուին Գարեջրով լուս. » նան՝ զմոսացկատուութիւն տանի, և գլխուն գիճուութիւն տայ և մազն հաւտարէ, » (կ'ասէ Ամիրս.) և թէ զԳարին այրեն և սղ խառնեն և ակուան քսեն, սպի. » տակ առնէ և ճիէ տայ. և Գարեջուրն զկուրծքն կակղացընէ, և օգտէ հագին. » և թէ սպեղանի առնես՝ օգտէ ճաանցաւութեան. և թէ յիրմէն մալեգ առնես՝ » զստամաքն հովցընէ... Գարուն ջուրն օգտէ ամենայն տաք ջերմերուն... Իպն. » ասէ, թէ Գինով խառնես զգարուն ալուրն և ի ձեռքդ զէտ հինա օծես, զտաք » զլիսացաւութիւն տանի. և թէ զինքն գիշերն թրջես ջրով և վաղն տաս որ խմէ, օգտէ » ջերմերուն և ամենայն տաքութեան, և զժարուն այլ կտրէ »: — Գարեջրոյ խմելու զօրութիւնն կամ օգուտն ու վնասն թողումք փորձողաց. բանասիրաց այլ նշանակեմք հայանման Յ. անունը Գարոյ, Կրօ. — Վաստակոց գիրքն Գարի ցանելու հողոյ թանձրութեան համար խրատէ՝ որ միջաշաւիղ լինի, այսինքն մի. ջակ, « ոչ խորու լինի և ոչ նօսր »: — Հին Բժշկարանն այլ գրէ. « Գարի, հով և » շոր է և հալական, զայտոյցն ի ստամաքէն սրբէ, զայտոյցն հալէ, և սրբական » է, զանձն կերակրէ պակաս քան զբակլան, և թեթեւ է, և Գարոյ ջուր լաւ է » քան զՅորենոյ, զօրկութիւն ունի, և Սպիտակն լաւ է, և որ ոչ նօր լինի կամ » շատ հին. զինք փերճակէ և կորկոտ արա, և մէկ զինք աւ ծծ ջուր, և եփէ որ » ի ծծ չափէն մէկ մնայ. թէ մարդն գիջարնութիւն լինի և պղլամիկ, պակաս » մի աղ արկ ի ներս և տուր, և օգուտ է. զի Բագարատ գովէ, թէ զժարուն » կտրէ, զտաքութիւնն հահընդեցընէ, զստամաքն սրբէ, և ինք շոյտ գնայ ստա. » մաքաց. և օգուտ ողջոյ և հիւանդի. ապա (բայց) Գարի հացն թեթեւ կերակրէ » և զիրցընէ ոչ »: — Գարիի տեսակաց մէջ յիշուած է ի Բարերդ Մանիշա. կային՝ Կ. Violaceum. կոճորիզաւորն Կ. Bulbosum ի Սնճար լ. ի Հր. կովկաս. — Դիւրարեկն՝ Կ. Fragile ի Բարերդ:

431. Գարնին կամ Քարնին.

Տեսակ մի վայրի Տանձի, այսպէս կոչուած է ի Հայս:

432. Գարնան ծաղիկ.

Ոմանք համարին Հարանու ծաղիկն. տես զայս և Պոստ. Բայց թ. Պէհար օ. րի՝ որ ճիշդ Գարնան ծաղիկ ըսել է, նշանակէ զՆրիցուկն, զԳետնախնձոր:

433. Գարնան Հալուորիկ.

Ի գարնան ծաղկելուն, և գունով ճերմակ ըլլալուն, միանգամայն և ծաղկին մազանման թելերով ձեւացած ըլլալուն համար՝ այսպէս կոչուած է. հասարակ վայրենի խոտեղէն մ'է, բանջարեղինաց նման լընդարձակ և անկիւնաւոր տերեւ. ներով. պտուղն կամ պարկուճն (հունտերու ամանն) այլ՝ երկայնաձեւ և հնգէ ինչուան տասն կողմն կամ երես կ'ունենայ. — Լ. Senecio, որ նոյնպէս հալուօրութիւն կամ ծերութիւն նշանակէ. Փ. Senegon.

434. Գաւարս.

Ար. և Պ. ալ նոյնաձայն. Ճափարս, جاجار. Ամիրտուլվաթ ըստ Պէյթարայ՝ նոյն համարելով գրէ, « Ճավարս, որ է կորեկ. լաւն այն է որ հատն մեծ լինի » . բայց կ'աւելցընէ այլ, թէ, « գիտացիր, որ կորեկն երեք ցեղ է, մէկին ասեն » Տոսիս جوس , և երկրորդին կ'ավարս, և երրորդին ասեն Արզաւ... Եւ ցեղ » մի այլ պատմէ Պտ. թէ, կորեկն երեք ցեղ է, մէկ ցեղին Տուխն կ'ասեն, և » այն Արդանն է որ ի Շիրազ Ալուս կ'ասեն. և երկրորդ ցեղն Ճափարսի Հնտին » է, և այսքան երկու ցեղն մեծկակ և սպիտակ է. և ասոր Պ. Զոռասար կ'ասեն. » և ցեղ մի այլ Ճավարս կ'ասեն, և ի Շիրազ Քալ ասեն. ամենուն բնութիւնն » հով է և չոր, կապող է » : Պէյթարի Թարգմանն ալ Ճաւարսը հասարակ կորեկ համարած է, Փ. Millet, բայց ծանուցանէ, թէ Արարացոյն յիշածը պէտք է ճանչնալ Լ. Panicum miliaesum, և ոչ պարզ Milium. կորեկի և Գաւարսի զանազանութիւնն մեր լեզուի մէջ ալ ամենէն հին ազգային գրոց մէջ գտնեմք. « Գարին և կորեակն և Գաւարսն », գրուած է յԱզգաթանգեղոս : — Բժշկարանի մէջ փոխանակ Գաւարսի և Ճաւարսի՝ գրուած կայ և կապարս (1) : — Ասոր բժշկապետ մեր՝ Գաւարսի և Զօռաթի զոյգ գրէ և խոսուոյ կորեկ. իսկ այդ զանազանիչ « խոսեմն կամ խոստում, ինչ տեսակ է. նոյնպէս և

435. Գաւարսուկ.

Ար լսուի ի խոտուջուր, նոյն հասարակ Գաւարսն է, թէ մանրահատիկ տեսակ մի :

436. Գեղաւեր. Գեղաւերակ. Գեղաւերիչ.

Խոր արմատով արտորէից վնասող փշեղէն մի, որ ի գարնան հողը հերկելու ատեն կու բուսնի և կու հանուի. ոմանք կ'ուտեն հում : Յիշուի ի Շիրակ, ի ծովեզերս Սեւանայ 'ի Փոքր Հայս :

437. Գեղծ.

Պատասուկ վնասակար բուսոց տեսակէն, այսպէս ճանչցուած ի Հնուց. Ս. գրոց Նաւումի մարգարէութեան մէջ գրուած ըստ մեր Թարգմանութեան (ս, 10). « Իբրեւ զԳեղծ պատեալ կերիցի, և իբրեւ զԵղէզն լի երաշուութեամբ », ուրիշ Թարգմանութեանց մէջ բացատրուի, Գեղծի պէս իրարու կը պլլուէիք կերուխումի ատեն : Պիտոյից գրոց հեղինակն այլ կ'ասէ (ժԹ). « Եթէ զԳեղծս քաղելով » այժմ զբժկութեան ծառ մաքրեալ՝ պտղաբեր կենաց կազմիցէք » : — Ամիրտուլվաթ արարացի անուամբ ստորագրէ այս բոյսս. « Ծառս. (جڑد Գեղաղ), » որ է Չիրզանկուկ. Ինքն խոտ-ձն է՝ որ ճղերն Յուշիս ըլլալպին (Շան մորենի) » ճղերն կու նմանին, և ի յայն ծառն կու փաթտվի՝ որ ի քովն լինի, և շատ » ճղեր կ'ունենայ. և փուշերուն վրայ միրգն կուզ կուզ լինի և կու բուսնի, և մանր

(1) Խաւստեբէն Coirce, Cuirce, Curca կոչի վարսակն. ին գերմ. Hirse, Hirsli կորեակ :

» և կարմրուկ կու լինի. և միրգն և տերեւն կ'օգտէ ամենայն մահացու դեղոց... և
 » թէ ի մրգէն երեք դրամ առնուն և խմցընեն, ցեղ ու ցեղ երազ տեսցընէ
 » մարդուն՝ գիշերն »: Պէյթար՝ ճիւղերուն նմանող բոյսը յոյն կամ լատին ա-
 նուամբն կոչէ Պալիուրոս, Paliurus, որ տեսակ մ'է կորակոր ճղերով Գփնըկի-
 ասորերէն ալ Շապահի կոչուի, կ'ըսէ: Իսկ Գեղձն է ըստ Լ. և Փ. Smilax aspera. —
 Անուամբ և բնութեամբ նման է այս բոյսս նախայիշեալ Գաղձի (Թիւ 401),
 իրրեւ չարածնիկ եղբայր և քոյր, բայց ոչ նոյն: Բարձրաձիգ կոչուած տեսակն
 Տ. Excoelisa շատ գտուի ի Պոնտոս, Հս. Կովկաս, Վրաստան:

438. Գեղձի.

Սա ծառ է, և ըստ Ստ. Ռոջեան, « մեծութեամբ և տերեւով նման Գիոյ.
 » ունի պտուղ թունաւոր, մանաւանդ որ ի Հիսպանիա և յԱրկադիա լինի ».
 Բայց վկայութեամբք կու չիոթէ ընդ վերոյգրեալ Գեղձ բուսոյ, թէ լատին ա-
 նուամբ այլ նոյն համարուին, վասն զի Կեղձին է Smilax Taxus. Փ. Ի. Պէյթար
 եւս Սմիլաքս, سماكس անուամբ ստորագրէ: Ռոջեանի բերած վկայութեանց
 մէջ յիշուի և Գեղձեայ անտաւ: — Եւրոպացի տեղագիրք յիշն զԳեղձի ի հիւ-
 սիսային արեւմտեան Հայս, ի Սպեր, Խոտուշուր, Սոմխէթ, և թուի հասարակ
 կամ Հատեւոր տեսակն Taxus Baccata, ճանչցուած է նա և ի Ռ-Հ:

439. Գենգեն.

Բժշկարանի մի մէջ գրուած է երկու ուրիշ անուանց
 հետ « Գիսանարոն՝ Թթենի, Գենգեն ծառ »: Թուին
 » նոյնանիչք, զի յայտնի է Թութն Յ. Μοχα. Լ. Morus.

440. Գենի.

Տես Գի կամ Գիհի, վասն զի նոյն ծառն է:

441. Գետափու ուռ.

Նոյն համարուի ընդ Գազի ծառին (Թիւ 393)
 կամ ընդ Մոչայի:

442. Գետնաբաղեղ.

Սոյն բառերով կոչուի և Փ. Lierre de terre կամ
 terrestre. Իսկ Լ. Glechoma, ի յունարէնէ Γλήκων,
 Ղլիխոն բառով, որ սիսակ մի Անանուի է. վասն զի
 այս Գետնի բաղեղն այլ անոր նման բայց ծանր հոտ
 ունի, կապոյտ՝ երբեմն այլ վարդագոյն ծաղկով, իր-
 բեմն նաեւ ճերմակ: Թէ և գետնի վրայ կու տարածուի, կ'երեւի նա և թփա-
 տեսակ կանգնած:



Գետնաբաղեղ.

443. Գետնաբուրդ.

Թուի տեսակ մի Մամուռ կամ Գորտնբուրդ:

444. Գետնաթուռ.

Կարմիր, քիչ անգամ ճերմակ՝ ելակ մ'է, շատ անուշահոտ, և զայս նշանակէ Լ. անունն *Fragaria*.

445-446. Գետնախնձոր. Գետնի թնձոր.

Այս անունով հիմայ սովորաբար կ'իմացուի Ամերիկայի ընծայած կոճղէզն, հասարակօրէն փարսաք, *Potato* կոչուած. Լ. *Tubera*, որ կոճ կամ կոճղէզ նշանակէ. Հին աշխարհի և մեր երկրի մէջ գտուած այս ցեղ Գետնախնձորն է Թ. Տօմարան կոչուածն, Ար. Գամահ, ինչպէս յիշեցինք Բողբոջ անուամբ. տես Թ. 367: Պէյթար կ'ըսէ, թէ համն աղած միս կու նմանի, բայց տաք չրով աղիութիւնը կորուսցընէ, և թանձր ու կալուն կ'ըլլայ. մինչ առաջ թոյլ էր: Մէկ տեսակն այլ կոչուի Գիլիլի. ուղիղն՝ Գալուռն چلندر, որ ըստ Պէյթարի է Սունկ մի, նման Ղաշանայ, և ըստ Էպուս Սինայի՝ աւազոց մէջ կու բուսնի. շատ ախորժակամ է. առատապէս գտուի ի Խորասան և ի Մաւառաննահար: Փափագելի է քննել և ստուգել, թէ մեր երկրին մէջ զըտուած կոճղէզն կամ Գետնի-թնձորն՝ այս յիշելոց որ տեսակին նմանի: Տես և Հողկիթ: — Ասոնք ըստ այժմու իմացման Գետնախնձոր անուանին, այլ ըստ գրոց,

Գետնախնձոր է շատանուն բոյսն և աւակօրէն Երիցոյզ կոչուած ծաղիկն, և շատ հեղ՝ Ար. բառով Բարտանաձ կամ Պապուռնիձ, چلبه, որով ստորագրէ Ամիրտ. յիշելով, « Ար է Երիցոյզն, որ է » Գետնի թնձորն, որ է Տօմ. փարսաք » քիս (լաւ եւս՝ յունարէն). և » ինքն սպիտակ կու լինի, և դե- » ղին այլ կու լինի. և լաւն է որ » մէջն դեղին լինի և եզերն սպիտակ, և հոտն սուր, և Գարունն բուսնի.. » օգտէ ամենայն հով գլխացաւութեան. և թէ օժեն զըղեղն (ուղեղն) ու- » ժովցընէ, և զայից արցունքն կտրէ, և իր ձէթն օգտէ ակընջին ցաւութեան » որ ի հովութենէ լինի. և չոգին այլ զայն օգտութիւն կ'առնէ... Էր Սահակն



Գետնախնձոր (*Potato*).

» ասէ, թէ փողացն զեն առնէ, և զիր շարութիւնն տանի մեզրն », և այլն: —
 Լ. Anthemis ըստ յունարէնի և Chamæmelum. Փ. Camomille. ըստ Պէթարայ
 յատուկ Ար. անունն է Ախնուան, باجوج, իսկ Բարունան կոչումն Ափրիկեաց
 կողմերում լսուի: Իբրեւ աշխարհածանօթ և աշխարհաքաղաքացի ծաղիկ մի, թէ
 և հասարակ և անմշակ, այլ իր պարզութեամբն և առջինեկութեամբն ի գարնան՝
 սիրելի ծաղկանց մէկն է, և ըստ այսմ մեր լեզուով այլ այլեւայլ անուններ առած.
 վերը յիշուածներէ զատ՝ նաեւ կոկոռնիկ, կոռնուռի, Օշոշ, Հոշոշիկ, Խնձոր-խոտ,
 Կարնապոշ, Շնփնածաղիկ, Գարնան ծաղիկ. աւելորդ է յիշել որ թերեւս ծաղ-
 կին տեսակներն ալ անուանց շատութիւն պատճառեր են: Եւրոպացի տեղա-
 գիրք յիշն Cham. Pterigantha (Փետրածաղիկ) կոչուածը՝ ի Շիրակ. - Cham.
 Pusilla (Փոքրիկ) Երեւանու կողմերը. - C. Disciforme (Պնակածեւ) և Փոքրա-
 գլուխն, C. Microcephalum ի Մուշ. - C. Decipiens ի Կեօարիա, Խոյ. - C. He-
 terocarpum ի Համէէն. - C. Kochii ի Տայք. - C. Oreades ի Բարերդ, Ծանախ,
 Հր. Հայք. - C. Monticolum ի Կարին, Բարերդ, Պրիտ լ. Սիսուանայ, և այլն:

447. Գետնախնձորենի:

Յած ծառ մի, ըստ Ստ. Ռոշքեան, զոր Լ. Arbatus կոչէ, իսկ սա համարի
 Մաթըզենի կոչուածն առ մեզ, զոր տես ի կարգին:

448. Գետնամայր.

Որ և Գետնի փիճի, որ է Թարգմանութիւն արաբերէնի Մանափայր ըլ-արզ
 صونج البرية ինչպէս զրէ և Ամիրտովաթ, Քանաֆատուս անուան տակ, ա-
 ուանց յիշելու զԳետնամայր, այլ բնիկ հայերէն անուն զրէ Ճանկխոտ, մենք ալ
 այս անուան տակ թողումք բացատրել:

449. Գետնամուշկ.

Ըստ ոմանց Գայլթաթն է (թ. 413), բայց տարակուսական է:

450. Գետնամօրուք

Վաստակոց Գիրքն (Գլ. 46) նորատունկ որթերը ծածկելու համար կ'ըսէ « Են
 » ոմանք որ ծածկին զտակ տնկացուին այն իրօքն՝ զոր Պօլոնեացիքն կոչեն
 » Գետնամօրուք և Սուրացիք Ռիպոս. և այս սովորական է մեզ փորձով, որ լաւ
 » պահէ »: Այս բանս յունարէն բնագրին մէջ չկայ. Ռիպոս բառին տեղ այլ
 ուրիշ օրինակի մէջ՝ մեզ գրուած է, որ կըրնար սեզ գրուած ըլլալ, և նշանակել
 մազմզուկ խոտ մի, յարմար գետնի մօրուք կոչուելու, և մատղաշ տունկ մի
 ծածկելով պաշտպանելու, քան թէ կարծել Ռիպէս Ribes, լատին անունը՝ որ
 Թոր բոյսը նշանակէ:

451. Գետնանոն.

Որ է Թարգմանութիւն Chamæcypressus Բ. և Լ. անուան, ըստ Ստ. Ռոշքեան,

որ կոչէ զոս « խոս, որ գինուով արբեալ՝ ընդդէմ թիւնից օձից և կարճաց » զօրէ »: Լատին բառն պէտք է ուղղել Chamæocyparissus, որ հիմայ խափա- նուած է, և բոյսն՝ որ թուփ է հիւսիսային կողմանց՝ Santolina կոչուի. պտուղ- ներն 3-5 անկիւնի ձեւով են (թ. 445):

452. Գետնաշագանակ.

Ի նորոց յարմարացուցած Փաթաթի (Patate) համար, զոր այլք կոչեն Գետ- նախնձոր. զոր տես:

453. Գետնաուլիճ.

Վերջիչեալ Ռոշքեան զայս այլ նշանակէ իր բառագրոց մէջ, ըսելով. « խոս » ինչ խայթոցաւոր, որ զանազան տերեւս ունի, և ըստ գետնոյն զգոյնս փոխէ. » Chamæleon, Chardapastum ». Այսպէս գրէ լատին անուններն ալ, որոց յե- տինն անծանօթ է հիմայ. իսկ բոյսն անշուշտ է Chamæleon Carlina, և աւելի ընդ- ունեղի կոչմամբ Atractylis gummifera. Հին յոյն հեղինակք երկու տեսակ Գետն- առիճ փոտ բոյս ճանաչին, Սեւ և Սպիտակ. ետքինս կ'ըսուի Ար. Իշխիս, կամ ըստ Ամիրտ. « Իսխիս, որ Թ. Սպիտիզ տիգրանի ասէ. եթէ զտակն ծեծես » և Սերկեւելի շարապով խմես, զտափակ ճիճին հանէ, և թէ գինով յօրն երկու » տրամ խեցած մարդուն խմցընես, օգտէ... և թէ օձահարն և կարճահարն » խմեն օգտէ. և թէ ալուրով խառնես ջրով և հոռոմ ձիթով, շներն և խոզն » և մուկն ուտէ՝ մեռնի », եւ այլն: Հիններն այս բոյսս սաստիկ թունաւոր գրեն, բայց Արարացիք հիմայ աղցանով կ'ուտեն:

454. Գետնասօս.

Chamæplatanus. — Զայս այլ յիչէ Ռոշքեանն ի մեկնութենէ Մննդոց գրոց. լատին անուան տեղ՝ որոյ թարգմանութիւն է հայերէնն, հիմայ բուսաբանք կո- չեն Viburnum Opulus. փոքր ծառ կամ թուփ մ'է կակուղ ճիւղերով ուսկից կո- ղով կու շինեն, և անկէ առնուած է նոր Լ. անունն. Փ. Viorne, սղոցածեւ տե- բեւներով, սպիտակ կամ վարդագոյն ծաղկօք:

455. Գետնատափն.

Ըստ հին Բժշկարանի, ճիշդ թարգմանութեամբ Chamædaphne բառի, փոխա- նակ գրելու Գետնադափնի. « Նման է կաւայի, այլ նօսրգոյն է, և բի բերանդ » գնես՝ նա բերանդ շողնայ և զփողքդ կակծեցընէ. ծաղիկն սպիտակ է. պտուղն » եր հասնի՝ սեւ է, գտանի ի լերինս և ի լանջ տեղս: Զտերեւն չորոց և մեղրով » խառնէ, և տուր եղկ ջրով. զմաղձն ի վայր հանէ ու զմաղաանն ի վեր բերէ, և » զիր հունդն ծծ հատ մաղձնդեղ տալ՝ ազնիւ է »: — Հիմայ բուսաբանք փո- խանակ հին այդ լատին անուան՝ կոչեն Vinca major. Փ. Grande Pervenche, Ար. Դոզապ. (الرفص), որ Թ. Երեքոց գառագանին մեծն է, ասէ. և ոմանք « ասնն թէ խոտ-մն է, երբ բուսանի՝ գետինն կու ճապաղի և կու բովի՝ բար-

» կուկ և երկայն ճղիւր ունի, ի սէզի ճիւղ կու նմանի, և մանր տերեւ ունի-
» նման է Տաֆնու տերեւին, և այլ մանր կու լինի. և յանկից (Թէ) զմէկ տե-
» բուն ճղովն ուտեն խմեն՝ զլուծումն արգիլէ... և Թէ քացախով խառնեն և
» խմեն՝ օգտէ վիշապին խածածին, և Թէ գինով խմես՝ զգորն կապէ, և օգտէ
» աղեց գաներուն »:

486. Գետնատօսախ.

« Եղջ ցած Տօսախ. Chamæactis ըստ Ստ. Ռոջքեան. Հիմայ կոչուի Լ. E-
bulus. Փ. Yéble կամ Hiéble, այլ և Sureau. որով կ'իմացուի Թանկրոսնի ծառն.
զոր տես:

487. Գետնարմաւ.

« Երա նման Արմաւենույ, ըստ Ռոջքեանի, բայց լայնաղայն տերեւ ունի :
Լ. Chamædaactylis. բուսաբանք ոչ ծառ՝ այլ խոտեղէն ճանչնան այս անուամբ,
Սիւղոց ցեղէն, (Graminées Cynouréées)

488. Գետնի աղիք.

Որ և Գետնի պտուղ. — Գուցէ լաւ եւս համա-
բուի Երկրմայր անունն հայերէն. որոյ համար բժկա-
բանն կ'ըսէ, « Խոտ է. երկու ազգ է, մէկին ծա-
» ղիկն կարմիր և մէկին ծիրանի՝ զէտ կապուտ »:

489. Գետնի աստղ. Գետնի աստղուկ.
Գետնի աստղուկը.

Ըստ Արաբ. Բաւլքապ իռ-արգ, كوكب الارض.
« Ասացած է (ըստ Ամիրոս), Թէ Բաւլքապի դմուսին
» է, (Քիմուլիա, كيموليا). և Ըռագին (բժիշկն) ա-
» սէ, Թէ Տաղլն է. և իսկն Սամհուն ասէ, Թէ
» ծառ-մն է՝ որ գիշերն լոյս կու տայ, և ասացած է
» (յայլոց) Թէ քար է որ գիշերն լոյս կու տայ. և
» ինքը Տախն է »: Ուղղագոյն գրէ յետոց Տախ,
قلق, ինչպէս կոչուի Հիմայ այլ յԵւրոպացւոց, Tale,
Թէ և Թափանցիկ և շերտ շերտ քարն իմացուի այս
անուամբ. հիներն այլ տարակուսէին էութեանը վրայ,
ոմանք լուսաւոր քար մի, ոմանք բոյս կ'ըսէին. ստու-
գիւ երկուքն այլ, և ամենայն լուսափայլ նիւթ այս ա-
նուամբ կոչուէր: Ամիրտուլաթ իբրեւ քար ստորագրէ
զՏալխ, և Թէպէտ կու յիշէ՝ Թէ, « Ասէ Ըռա-
» ղին Թէ ինքն ք ցեղ է, մէկին Պանրի կու ասեն, և մէկին Երանսի, և



Գետնի աստղ.

» մէկին Ճապարի կու առնն, և Ալին (1) ասէ թէ ք ցեղ է, Սամոնի, Հնդի և Ան-
« դալիսի », բայց ոչ քար կոչէ և ոչ բոյս. յետոյ դարձեալ նոյն Տալիս անուամբ
գրէ, « Ինքն որպէս քար է, ի գետնէն ելնէ, աղէկն սպիտակն և յիստակն է,
» եւայլն » Իբրև բոյս Գետնի աստղն համարուի Լ. *Asperula odorata*, Փ. *A.
asperula odorante*, կամ *Petit Muguet*, այլ և *Hépatique étoilée*, *Reine des bois*.
Հատաւէտ և փայլուն տերեւներով խոտեղէն, որ տեսնուած է և ի Ճիմիլ Լ: Պոն-
տոսի: — Յիշենք այս տեղ որ Գետնի աստեղ նման Գետնի ձրագոռ այլ կայ,
Ճառզի ձանդուս ըստ Ար. հող է և ոչ բոյս:

460. Գետնի Դաղձ.

Կոչուի և Առոյի Ռեհան: Տես Դաղձ անուան ներքեւ:

461. Գետնի խնձոր. Գնտակ խնձոր.

Չատ ի Գետնախնձորէ՝ զոր յիշեցինք (Թիւ 446), նշանակէ և Չարխտը:

462. Գետնի Չար.

Վերայգրեալ Չարխտն է:

463. Գետնի Պտուղ. — Տես Գետնի աղիք:

464. Գետնի Ռեհան.

Որ և Գետնի Դաղձ. տես Դաղձ:

465. Գետնի վարդ.

Յիշուի ի կողմանս վանայ:

466. Գետնի փիճի. — Տես Ճանկխոտ:

467. Գետոյ պտուղ.

Բժշկարան մի համանիչ գրէ զսա և զԱլոյզ ? և Հոյ:

468. Գերերի.

Խորենացոյ Աշխարհագրութիւնն Սիւնեաց երկրի բերոց մէջ յիշէ « Մարտ և
» Գերերի և Նուռն ». զոր Սէն Մարտէն Փռանկթարգմաներ է *Geranium*. Հին
բժշկարանն զուգէ, « Գերերի՝ Գիմէ ». նոյնպէս և Ամիրտ. Բիսկն՝ որ է Գե-
րիէ, փոխանակ գրելու Գերերի: Ռոջբեանն բ տառի տեղ տ կարդալով Գետերի

1 Ան տեսնուած ըստ Արարացի բժիշկէ կան, որք մակահուամբ կ'որոշուին մէկմէկէ. նորի
էր և զսա այսպէս որոշել:

զրէ, և ըստ իմաստին (մօտ ի գետ) համարի Potamogeton, Փ. Potamon, բոյսը, » և կ'ըսէ. « Ազգ Բալասանի, բարձրագոյն քան զայլս. Թաւ կեղեւով. Eumeces? »: Մերոց յիշեալ Քիմէն Թուի Քաւնան Արարաց, զոր տեսանք Գետնախնձոր կամ Տօմալան: — Բայց այս ամենայն կ'ունայնանան՝ եթէ փոխանակ գ տառի գ կարգանք Դերերի. զի այս անուամբ կոչեն Արարացիք ուրիշ բոյս մի. Aristida obtusa, ի ցեղէ Սիզոց:

469. * Գերիոն. — Տես Եղանա:

470. Գերմաստ կամ Գերմաստի.

Հին Բժշկարանն և Բառգիրք զուգեն զսա օտար անուան մի, Աստրան, կամ Ալաստրան, որ Թերևս ըլլայ Astepanus, Ասկլեպիադեան (Asclepiadæ) կոչուած Թփատեսակ կաթոտ բոյսերէն. Գայիենոսի բառից մէջ Գերմաստի զուգուած է Թերմոկելիոն բառի, որ եթէ է Thermocœlium, տեսակ մի Ջրմուռ է (Algae). ոմանք համարին թէ յունական Թերմոնն է, Θέρμος և Լ. Lupinus, Փ. Lupin, արեւելեաց Թրմոզն, կամ Եգիպտական Բակլայ: Ուրիշ Բժշկարան և բառգիրք մի զրէ Գերմաստի Թ. Կերակշիկ. — Բառագրոց մէկն այլ յիշէ Գերմաստոյ պտուղ: Դարձեալ, ուրիշ Բժշկարան յիշէ Գերմաստի ոռն, Գերմաստի փայտ: Հաստատութեամբ ստուգել մէկը կամ մէկայլը՝ մնայ հմտից կամ ժամանակի: Եւ եթէ զրի սխալ չէ՝ ի նոր գրողէ յիշուի՝ մէկ գրով զանազանեալ հետեւեալն:

471. Գերմասրի.

Ի կողմանս Աղուանից, նման Մասրի և Յախաւելի Թփոց:

472. Գերսէն.

Ըստ Սերաստացւոց կամ Բրգնիբցոց՝ նոյն է ինչ որ Գամբ (թ. 405):

473. Գզիր.

Թուփ մի է բազմաթիւ բարակ ճիւղերով, ուսկից կողով կու հիւսեն:

474. Գզմազ. Գզմազիճ. Գզմաստ.

« Մոռոյ պտուղն է », ըստ Բժշկարանաց, այսինքն Մոռի ծառոյ. աւելի յատկութեամբ զրէ մէկն, « Մաքային համբուն Մոռուն պտուղն է »: Գզմազիճ կամ Քեզմազիք պարօկերէն է, عجزك, ա բարբրէն Հասպ կէտրի: Ոմանք Գազի հռնդ կոչեն. վասն զի, ըստ Ամիրտուլվաթայ, « Ասէ Պատէհին, թէ կազ կ'ասեն » (Ժառին) և իր պտուղն Էազմազոն է, և իսլ կ'ասեն և իւր պտուղն Հապ » ըլիսն է »: զայս զրէ Տարֆա անուան ներքեւ որ է Մոռայն. տես զայս ի կարգին և զԳազ: — Մանուկեանն ալ զրէ իղիկն աղամի եհմիցի:

475. Գէշուր.

Ստեպլինն է, ըստ Պոնտացուց կամ Տրապիզոնցուց:

476. Ս. Գէորգու խոտ կամ խոտիկ.

« Որ երկան լինի, կ'ըսէ Բժշկարան մի. և դեղ աչաց՝ որ նասուր ելանէ »: Ուրիշ մի գրէ, « Մեծ Ս. Գեորգոս խոտ. հոռմերէն Սիրիական »: այս բառս Եղէզ նըշանակէ. նոյնը կ'ըսէ և Գրիգորի Մասի համար, շիթեղով, վասն զի սա Սալիխա կոչուի. Ամիրտուլվաթ ի բառգիրքն գրէ. « Սալիխայ Հոռմի, Սիրինդա, և է



Գըմուռ.

» ինքն Մեծ Ս. Գեորգոս խոտին տակն, որ ի բակերն լինի »: — Ըստ քննողաց սմանց Ս. Գէորգի խոտն է կատուարստն *Valeriana sativa*. Իսկ որոշելով խոտի տեղ Տակ ըսուածն այլ՝ Լ. *Dentaria*, Փ. *Dentaire*. որոյ Հնգտերեւեան կոչուած տեսակն՝ *D. Quinquifolia* նշանակուած է յԱտրպատական. — Սոխարերն *D. Balfifera* ի Թ-Հ:

477. Գըմուռ.

Մեծ բանջարեղէն մի է Թփաձեւ, բարակ և մազստ, խիտ առ խիտ փունջ փունջ բաժակաձեւ կամ հովանոցաձեւ մանր հոտաւէտ ծաղկըներ ունի. արմատն այլ

կօճղէզ է կոնձիւ, թէ հում կ'ուտուի և թէ խաշած աղջրով: Յիշուի ի Մուշ. ի Երբակ: — Երբևի թէ անունն Գիմ բուսոյ նուազականն է:

478. Գի. Գիհի. Գննի.

Լ. Juniperus. Փ. Genévrier. — Բառգիրք մի գրէ » Գիհի, Արտուճ, Յրդի ». միջին բառն թ. է. ուրիշ հայերեն հին գրքի մէջ կարդամք, « Գի ծառ է ան, » փուտ և անթաւամ, բոլորոստ և տերեւաւոր, արեւ և անձրեւ ի տակն շան, » կանի »: Ծանօթ է ծառս և ի Ս. Գրոց. ինչպէս, Սողոմոնի համար կ'ըսէ (Գ թագ. ք. 31) թէ տաճարին դարերային դռները շինեց « ի փայտից Գիոց »: Արքաթանգելոսի մէջ ալ յիշուի ուրիշ ծառոց հետ:

Ամիրտողլաթ Ար. Արար անուամբ գրէ, جرج « Յարար, որ է Վայրի Սարլն » (Նոճ) տերեւն այլ նմանցընէ թ. իղուճ ծառոյն (Մոյի). « մեծ կու լինի և փոքր այլ » կու լինի, և լաւն այն է որ կարմիր լինի... » քնքուշ այնող է. իւր հոտն օգտէ ընտաւորին, » և պիղծ պուխարն ի գլխոյն տանի, և չի թողուր » որ յաւելնայ. և իր ձէթն չի թողուր որ ականջն » ծանրանայ. և իր հոտն օգտէ կրծոց ցաւուն. և » թէ ծխես՝ ամենայն գազանահարի (օգտէ) »:

Մեր երկրին անտառային կողմերում գտուի այս ծառս, և հին դարերէ յիշուած է գործածութիւնն շինութեան համար. Գր. Մագիստրոս իր թղթոց մէկին մէջ ծառոց վրայ գրելով, յիշէ Սեւանայ ծովուն հարաւային արեւելեան կողմը Մար աւանին եկեղեցոյն չէնքն՝ այս տեսակ փայտերով. « Մա, » կարուսեան վաղնջուց գեղեցկուղէն Գի, յորմէ » սրնս ոչ սակաւ՝ հզոր և սոււարս ի կոշա, » բանում անդ տեսաւ մեր. և գերանք գերակա, » տարք և երկայնածիգք, որ է վկայարան Սրբոյն » Յակովբայ. ամենայն կաւք տաճարին գերակայ, » տախտակք և խոյակք և խարխիւք, և զթա, » կաղակք և զգրունս և զսեամն՝ հանդերձ բա, » ռաւորք, և ներքոյ զատակս կազմեալ ի միոյէ » ծառէ յայնմանէ Գիոյն գոլ սանն զնա »: Մեծամեծ ծառոց վրայօք խօսելով կըրնայ կարծուիլ թէ ի միոյէ ծառէ ըսածն՝ մի և նոյն մէկ Գի ծառ էր, թէ և կըրնայ եւս իմացուիլ թէ միայն Գի ծառի տեսակէն էր: Հին Բժշկարան մեր գրէ. « Գի. գտերեւն չորցո և աղա մանր, կամ զդալարն ծեծէ և մեղրով շաղէ, » և յաղտեղի վիրին վերայ դիր, մաքրէ, զայտոյցն նստցընէ, զսեւութիւնն սրբէ, » զչար կեղն ի բաց հատանէ... Չարմատն եփել և ի ջուրն զնել՝ զմսածն ու զայ, » բածն բժշկէ զտեղն. Քոսի և Խաղվորի՝ թէ զտերեւն ծեծես և ընդ Սարտակ » խառնես և զննս ի վերայ, զվէրն սրագ կըցցէ »: — Ըստ բանական աւան, դութեան մերայոց՝ այս ծառս Քրիստոսի յատուկ օրհնութեամբ անթաւամ և անուշահոտ եղեր է, որովհետեւ այնոր տակ պահուրտեր է անգամ մի՝ ի Հրէից հալածուած, կամ յԵգիպտոս փախչելու ատեն. ի Գերմանիա այլ Գիոյ ճիւղերն դիւահալած կամ չար ոգիներէ պահպանող համարուին:



Գի. (պտուղն).

Ուրիշ յիշատակներ ալ կըրնամք գտնել այս Հայոց սիրող կամ սիրելի ծառին, բայց ամենէն սիրելագոյնն և սրբագոյնն է՝ իրենց Լուսաւորչին զարմանալի մակէն և կամ տապան ըլլալն. վասն զի ինչպէս աւանդեն պատմիչք մեր և եր. գողք, այս իրենց « Հովուին հսկողի՝ նշմարիտ և քաջ Հովուին պատկերի՝ հետեւող « Հովիւք », գտին յետ ժամանակաց մովսիսանման անտեսարար վախճանելոյն մարմինն՝ « ի փորուած Գիոյ միոյ », կամ ըստ Առաքեալ Գանձասացի,

« Ի լեառըն Սեպուհ ելեալ | Հրեշտակք յերկնից նըմա առաքեալ
Եւ ի Գիհոյ ծառին աղօթեալ. | Եւ զմաքուր հոգին անդէն աւանդեալ »:

Այս է աւանդութիւնն, թէ, մահուանէն հաւանօրէն շատ տարի ետեւ՝ հովիւներ գտան Լուսաւորչի մարմինը, մեծ Գի ծառայ մի հնութենէ բացուած փորոյ մէջ, կռթընած կեցած, գաւազանն ի ձեռին. և հօն անարուեստ գմբթակերպ գերեզման մի ձեւացընելով թաղեցին: Տեղաքնինք յիշեն Հասարակ և ցած տեսակ Գի ի Թ-Հ. J. Communis depressa. — Բարձրը J. Excelsa ի Գարապաղ, Պոնտոս նոյնպէս և Հոտածը, J. Fœtidissima. — J. Oxycodrus ի լեռինս Մասեաց 8000' բարձրութեան վրայ. աւելի բարձր կարծուի (երբ 9000') ի Շահեօլ լեռնանցոյ:

479. Գիւմ.

Կոճղէզ մի է, որոյ բոյսն Ղեր կ'ըսուի, և դալարութեան աստն կ'ուտուի: Յիշուած է ի կողմանս Խասուջոյ, ի կարմիրք, այլ և ի Բարդող Լ. (Թաքեալդու):

480-1. Գինածաղիկ. Գինէծաղիկ.

Որ է Թարգմանութիւն յունական անուան, οenanthe, որով և Լ. և Փ. Oenanthe. ծաղկին ձեւոյն և կոտոյն համար այսպէս հոշուած. ընդհանրապէս թունաւոր բոյս է, ի ցեղէ Հովանեկաձեւոց. այլեւայլ տեսակ, խոնաւ և յրոտ տեղերում, ճերմակ կամ բաց դեղին գունով: — Նարդոսային կոշուած տեսակն Oe. Ferulacea տեսնուած է ի Վարդոյ, ի Չմշկածագ: — Կոշուի և Այգոյ Ծաղիկ:

482. Գինարբ կամ Գինարփ.

Երկայն որձայով բոյս մ'է դեղին փընջաձեւ մանր ծաղկըններով, զօրաւոր հոտով, սմանց անոյշ ունեց անհաճոյ. ճերմակն այլ կայ ըստ ոմանց. « Փորացաւի դեղ » է », կ'ըսէ գրիչ մի: Յիշուի ի Տարօն, Սասուն, Վարազ, Կարին. որոյ ծաղկարան երգիչն կ'ըսէ գովութեամբ.

« Գինարբին հոտն է գովական. շատոնք հասրաթ են նորա հոտոյն.
Խաղիկն փունջ փունջ է եղել, մարդ չի յագիլ իւր կարօտոյն »:

Թէ զգետուսց մէջ կու դնեն անոյշ հոտ տալու համար, թէ ծխախոտի հետ խառնեն: Այս Սալաձորեցոյն երկոյն մէկ օրինակն Գինարբի տեղ Գինեփարդ գրէ:

483. Գինարբու.

Եթէ նոյն չէ, նմանութիւն մի ունենալու է վերնոյն հետ. բայց զերկուքն այլ

առանձին յիշէ նոյն գրիչն (Մանանայ, 443), և հաջինիս ծաղիկն կապտակար. միր կ'ըսէ. ուրիշ մ'այլ (Միրախորեան) « մեր երկրի սիրուն ծաղիկ, և վեհ » Թագուհի բոլոր ծաղկանց » կ'անուանէ:

484. Գինել, Գինելկոթ կամ Գինելկոթ.

Փոքր բանջարեղէն մ'է նեղ տերեւներով, ծանօթ մեր գաւառականաց, զոր տապկեղով կ'ուտեն: Ոմանք իրարմէ տարբեր համարին այս երկու անուամբք կոչուածները և ոմանք թրոսաչ կոչեն:

485. Գինեխաղող.

Լա. գինի շինելու խաղող, ըստ Վաստակոց գրոց (Մժ) :

486. Գինեղէգն.

Գալիենոսի բառից մէջ Պիկրի, Πικρός, յոյն բառին զուգուած է, որ նշանակէ կծու կամ թթու. և Թուի Լ. Picris. հասարակ տեսակն կոչուի եւս Scorzonera picroides. ուրեմն Սինձ բանջարին տեսակ մ'է. տես զայս: — Այլեւայլ տեսակք են Գինեղէգի, յորոց Picris Stricta յիշուած է ի Բարերդ. — P. Glomerata, յԱվուես Եփրատայ. — P. Strigosa ի Մարաշ, Այնթապ:

487. Գինձ.

Մանօթ բոյս մանրիկ անոյշ խաղողանման հատերով կամ չամչով. Ամիրտ. յիշէ շիթթեղով օտար անունները, « Որ է Գինեհաձն (Քիչմիշ شمشادک) որ է, » Գոզգարա څږجک, որ Ծառակն կոչիանդրոս (Coriandrum) ասէ. ածվոց և « վայրի լինի. և լաւն այն է որ ածվոց լինի ». շատ ու շատ բժշկական օգուտները կու համրէ, վկայութեամբք Հիպոկրատայ, Գալիենոսի, Ռուփոսի և այլոց. « յիշէ և փնտր. « Իր շուրն սպաննող է. զչարութիւնն ի լերդն կու հասցընէ, » և խելքն կ'անցնի և արուն կ'երթայ, որպէս հարբած կու լինի ». կ'աւելցընէ, « Թէ հետ մահացու դեղին լինի՝ մահացու է. և Թէ հետ բանճարնուն ուտվի՝ » բանճար է »: Բայց այս ամենն այլ ոչ է Քիչմիշ կոչուած Գինձն, որ անուշահամ, ախորժելի և անփնաս է, այլ Գոզգարա կոչածն, որոյ վրայք Պէլթար աւելի երկար գրէ: Գինձին զովեստն՝ ինքնին կու տայ առակագիր Վարդապետին գրչով (Մի. Գոյի), ընդդէմ մեծ՝ այլ անպիտան խոտոց, զի Թէ եւ քիչ և փոքր է՝ իրեն քանի մի նմանեաց պէս, բայց « եփեալ՝ զօրութիւն տամք կերակրոց. և » իբր զպատուական ակունս՝ ի վարչամակի ծրարիմք: » Կըրնար այլ պարծիլ որ իտրայելացոց համար՝ երկընքէն իլած մանանայն Ս. Գիրք նմանցընեն Գընձի: Գընձի բնութեանն համար հին բժշկը. կ'ըսէ. « Հով ու չոր է, հով շատ է » քան չոր, և ի ներս քիչ զիճութիւն կայ, զի իր վաստակն ի զիճութենէ է. » և քիչ լեղութիւն և փոթտութիւն. օգտէ ջերմի և սաֆրայի՝ որ ուտէ» եւայլն: Գընձի C. Tordylioides կոչուած տեսակն ճանչուած է ի Սեւերակ:

Գինձի անուամբ ուրիշ բոյսեր ալ կան, կամ անքով կամ ցեղով տարբեր. ինչպէս,

488. Գինձ լերան.

Ար. Ուեսսիձ կոչուած, *Сасса*, ըստ Ամիրտ. « Վասիթիձ, (որ գուցէ լաւագոյն գրուած ըլլայ), ոմանք այսոր լերան Գինձ կ'ասեն. և տերեւն նման է Գնձին » տերեւին, և ի քարերուն մէջն կու բուսնի, և ճղկներն բարկուկ կու լինի, և » տակն ի կիպեռիս կու նմանի, և պողուն պողուն կու լինի, և համե տտիպ կու » լինի որպէս Գղթորի. և թէ զայս տակս չորցընեն և լոռն կէս դրամ, և բոս- » ֆոտոն հաւկըթով ուտեն, զկրծոց տախտակին զկոտրածն բուսցընէ. և թէ ծե- » ծելուն և ընկնելուն՝ ոսկրն կոտրի. բուսցընէ շուտ »: — Կու մնայ գտնել այս տեսակ Գինձը, որ Պէյթարի Փռանկ թարգմանչին այլ անծանօթ է:

489. Գինձ վայրի.

Ար. « Պարպինա, որ է վայրի Գինձ. ինքն խոտ-մն է՝ որ երկան տերեւ ունի, » և գոյնն խիստ կանաչ է, և չորեքզոէն ճղեր ունի, և մէկ մէկ կանգուն երկայն » է, և ի ծայրերն ծաղիկ ունի, նման է Գնձին ծաղկին ». այսպէս գրէ Ամիրտ. ըստ Պէյթարայ:

490. Գինձ ջրհորի. — Տես Չարխտոս:

491. Գիշախոտ.

Վաստակոց Գիրքն (Գլ. 84), այս խոտիս տակն և թեղոյ տակ ու Բադկենոյ հերը՝ (մազը) լաւ եփելով դեղ կազմէ՝ ձիոց ցաւած Նիղերը օծելու և բժշկելու:

492. Գիշերաճաղիկ.

Ոմանք ի նորոց այսպէս կ'անուանեն Թուրքաց կէձէ սէֆա կոչածը. Լ. *Mirabilis Jalapa*, Փ. *Belle-de-nuit*. բայց մեր երկրրոցիք ուրիշ ծաղիկ մի ճանչնան այս ա. նուամբ, որ ինձ անծանօթ է:

493. Գիշերավար.

Քալիֆոնսի բառից մէջ դուգած է Աստրիգէ ? անուան: Մերձաւոր նմանու. Թեամբ կան բուսարանական անուանք, *Asterochæte*, խոտեղէն մի, *Asterochiton*: Մռլոշներու ցեղէն:

494. Գլանտոր կամ Գլընտոր. Կլընտոր.

Նոյն կամ տեսակ մի կլանտորի, որ ծանօթ է Մշեցոց. և է սա փոքրիկ ու ման. բաւերեւ բոյս մի, զոր աղցան ընելով կ'ուտեն. բայց աւելի պատուական համարին իր տակը կամ կոճղէզը, որ գետնին բաւական խորը կ'իջնէ. շագանակի նմանի և հում կ'ուտուի. ճերմակ և կաթոտ է: — Սիմ. կլամարակապցին յիշէ բոյս մի Գանտի անուն, Ար. Լըֆթ, Թ և Պ. Չեչեմ. և կ'ըսէ. « ինքն հունտ է, կու բուսնի, » կու լինի տակն Շողգամ »:

495. Գլկիլ.

Մորացորենի (Maïs) նման բազմահատ բոյս մի է: Ըստ անուանն կրնար հին Գողգոն ըլլալ, զոր տես քիչ մի վար: Պէյթար յիշէ ուրիշ բոյս մ'ալ Գիլգիլ ա- նուամբ, զոր Ամիրտ. կարգայ Ղոչդոչ, մենք այլ Թողումք ի կարգ բառից Ղ տառի:

496. Գլնդուկ կամ Գնդուկ.

Փոքրիկ բոյս մի է, բայց ծառածեւ, ճերմակ ծաղկով, և անուշահոտ հունտով, զոր շորցուցած՝ համեմեն ի կերակուրս: Մանօթ է ի Տարօն:

497. Գղգիղ.

Հին Բառգիրք յունարէն Կիւստնո բառի զուգեն, որպէս կոչի և Լ. Cyamou, այլ և Nelumbium. Փ. Nélumbo. Այս անուամբք ծանօթ բոյսն է վայրի Բակրայն, զոր նշանակեցինք ի Թիւ 388 տես հօն. կոչի հասարակօրէն Եգիպտոսի կամ Ղիտի բուկ- յայ, Ար. Պաքիլայի Գիլպրի ܩܘܠܕܐܝܠܐ: Ըստ Գիոսկորիտեայ կոչուէր և յանուն Պան տոսի. եթէ գտուէր այս տեղ, վաղուց ծանօթ պիտի ըլլար Հայոց, որք և իրեն սե- փականեր են այս Գղգիղ անունը, յորմէ կարծեցինք և հիմկու Գլկիլ կոչուածը: —

Մեր հին Բժշկարանն այլ յիշէ: Սնդան (երեսի վրայ սունկի պէս ելած վէրբի) գեղ՝ « Գղգղոյ տակ ծեծէ » մանր, մարդոյ կաթամբ » խառնէ և դիր ի վերայ, » մաչէ և հանէ »:



Գղգոյ.

498. Գղժոր.
Գխտոր կամ Գխժոր.

Աշխարհածանօթ զարմա- նալի բերք մի կաղնի ծառոց, իր տուած ներկին համար, զոր ոչ ծառն ինքնին բերէ, այլ մանր որդեր տերեւները ծակելով կու պատճառեն

պտղի նման ուռոյց մի. Լ. Galla. Փ. Noix de Galle. Ար. Աֆս, صاعق. Մագու- Ռ. Червиный орешек, Ամիրտ. արարերէն անունը Յաֆուզ գրէ, և «լան այն » է, կ'ըսէ, որ կանանչ լինի և խակ... Ինքն երեք ազգ է, սեւ և կանանչ և սպիտակ. » աղէկն կանանչն է... Քացխով՝ օգտէ ակապցաութեան. զքթին արիւնն կու » կտրէ, և զմազն կու երկընցընէ և որոյ պուկունքն ճիւրի՝ օգտէ, և զքթին զաւելի » միսն տանի և ուտէ », եւայլն, և այլն:

499. Գղթոր ծաղիկ.

Նոր բառհաւաք մի գրած է Կիպոր ծաղիկ, համարիմ թէ պիտէր Գղթոր գրել. բայց ծաղիկն անծանօթ :

Գմուկ. Տես Գրուակ.

500. Գնգեղ կամ Գոնգեղ.

Մշեցիք Գնկեղ կ'ըսեն արցակ մի Կանեփի թելոց. բայց հին գրուածոյ մէջ Գոնգեղ կոչուի յատուկ բոյս մի, զոր յիշէ մեր բազմահմուտ Վարդան վարդապետն ի բանաստեղծական բանից Պիտիդիոսի. « Ուզտ՝ զայրեցած մաղձ փսխէ՝ Գոնգեղ ու » տեւով ». բայց հին թարգմանիչն ըստ յոյն հեղինակին գրած է. « Դալար տերեւ » տով կաղնուոյ մաղձաղեղով՝ ուզտ փսխէ զմաղաս այրեցած »: — Հաւանօրէն է Վայրի Շաղգամի. ինչպէս նշանակէ յունարէնն ալ Γονγλις, Դոնդիլիս. Լ. Rapumrotundam.

501. Գնտածաղիկ.

« Որ է Ղայսռան, որ է Բարձուենեկն », ըստ Ամիրտուլվաթայ, ըստ որում և մենք նշանակեցինք այդ (Բարձմանեակ) անուամբ. (տես թիւ 331, այլ և յԱռուոյտ թիւ 159). Գալիենոսի բառարանն այլ գրէ, « Արտեմիսին (Δαρμισια) Եղեւին կամ « Գնտածաղիկ »: Հին Բժշկարանն այլ որոշելով ի Բարձուենեկէ, երկու տարբեր ծաղիկ կ'իմանայ այս հայերէն անուամբ. « Գնգածաղիկ, երկու տարազ » են », կ'ըսէ, բայց չի բացատրեր զանազանութիւնը, այլ խրատէ զծաղիկն եփել և դեղ տալ այլեւայլ հիւանդութեանց. և « գինով եփէ և տուր, ի մահադեղէ փրկէ. » (և) Փայծղնցաւի՝ զտերեւն ծեծէ և կար(ա)գով սպեղնիլք արա և ի վիրայ դիր, և » Քամակի, Հեծկի, Քարի՝ որ ի փաղաբուշտն՝ զլուրն խմցո օգտէ »: — Ըստ յունին է և Լ. անունն Artemisia. Փ. Armoise կամ Herbe de la Saint-Jean. վասն զի Ս. Յովհ. Մկրտչի տօնին քաղն և տարի մի պահեն տանց մէջ, բարեացաբեր համարելով. նոյնպէս և Խտալացիք. հեթ անուք այլ Անահտայ նուիրած էին այս բոյսս, և իր բազմապատիկ բժշկական զօրութեանց համար՝ Մայր ամենայն բուսոց անուանէին: — Գալտային կոչուած տեսակն Ar. Campestris նշանակուած է ի վան, ի Ռ-Հ. — A. Scoparia ի Գարապաղ. — A. Herba alba ի Մելիտինէ, Ատիաման. — A. Fragrans (Հոտաւէտ) յԵրեւան, ի Ռ. և Թ-Հ. — A. Fasciculata, ի Թ-Հ. Ատրպատական. — A. Austriaca ի Կարին, Մուշ, Բարերդ, Թ-Հ. — A. Procera ի Թ-Հ. — A. Chamæmelifolia ի Ռ-Հ. — A. Vulgaris ի Կարին. — A. Annuա ի Գարապաղ, վան. — A. Absinthium ի Ռ. և Թ-Հ. — A. Splendens ի Մասիս, Թ-Հ. — և յատուկ Հայկական՝ A. Armeniaca ի Կարին, յԱրազիդղուխ Լ:

802. Գնծիկ .

Փոքր խոտ մի, բթաչափ երկայնկեկ սղոցածեւ տերեւօք, ծայրն թանձր շառապոյն մազմզուկէ ձեւացած ծաղիկ մի, որչափ որ գուշակուի շորցած խաւրուած էն :

803-4. Գնծմնծուկ կամ կնծմնծուկ .

Ըստ բազմաց՝ է Ազատքեղն (տես զայս ի թիւ 11), Լ. Petroselinum, որ ծանօթ է շատ տեղ, յիշուի յօտարաց յԱրտահան, ի վանանդ, ի Կոստայս, ի Համբէն, եւայլն : Բայց ըստ Գինձ անուանն նշանակէ և տեսակ մի Գնձի, Երովպիոյ Գինձ անուանեալն յԱրարաց, Քոչգպարար էր-Հապէշ, Լ. Thalictrum. Փ. Pigamon. նոյնպէս գրէ և Պէլթար, *الطيطون* . և փոքր բոյս մ'է, կ'լսէ, տերեւներն նման Գնձի, բայց խժային հիւթ մի ունին :

805. Գնտակ .

Այսպէս կոչուի երբեմն թնձորն ի բժշկարանս . երբեմն այլ զոյգ

806. Գնտակ-թնձոր .

Որ շանակէն զԳայլ խոտն, տես ինչ որ այսանուամբ նշանակուած է ի թիւ 409 .

807. Սեւ Գնտիկ .

Որ և Հնտիկ, (տես ԱրՆնդեղ, թիւ 337), վասն զի նոյն բոյսն է, որ այլեւայլ անուաններ ունի :

808. Գոդուէն .

Չորցած և բացուած Մասուր (տես զայս) . զոր սեւ ներկելու գործածեն կանայք, ըստ Պ. Կալհօհեցւոյ :

Գոզմազիճ . Գոզմոս . — Տես Գգճագիճ :

809. Գոթեց ցանկ, կամ Գօտեաց ցանկ .

Տես Ազպատ, ուր զանազան անուններ այլ յիշեցինք . հօս ակելցընեմք որ թ. Պ. Փեկնէնկոչտ (*داجن كوجن* Հինգմատնի) անուամբ կ'իմացուի և ուրիշ տեսակ մի բուսոյն, որ է Լ. Agnus Castus (1) կամ Vitex. Փ. Gattilier. Ըստ Ամիրտուլվա

(1) Այս երկու բուսերն այլ մէկն Յ. միւսն Լ. Պարկելա կամ ոչլախոն նշանակեն : Կարծէին հինք և ի միջին գարս եւս՝ թէ այս բոյսս պարկելաութեան և կուսութեան պակօղ է. անոր համար տերեւները վրանին պակէին կանայք . իսկ արք անոր հիւզերէն զօտի կապէին մէջերին . թուի թէ զպն նշանակէ և Հ. Գօտեաց ճանկ կոչուան :

« Թայ այսոր « Թ. Այնտ ախա՛ի առէ. և տերեւն նման է կանեփի տերեւին, և
 » հուսան նման է Չնծին հնաին, և հոսն անուշ. և ինքն ծառ է »: Չստ ի շատ
 » ոգուաներէն, և թէ ի փայտէն գաւազան առնեն հովիւքն և ճանապարհորդքն
 » վերջընեն, քանի որ հետեւակ քայլն չի հօգնին: Ասեր է Պտ. Թէ այս խոտիս
 » Ար. Խամնար ըլ-արփագ առէ և Խամնար ըլ-ասապէհ առէ. և չէ ստուգ. և ինքն
 » ծառ է՝ որ ի յրեղերք և ի գետեղերքն լինի, և ի յաւզոտ տեղերն այլ կու բուսնի..
 » և ժաղիկն ի բուն կու մտնէ և տերեւն և հունտն. և լան այն է որ նոր լինի...
 » և իւր մուխն փայտքնէ դամենայն վնասակար գաղանք, և օձահարին և ամենայն
 » կատղած շան խածածին՝ Թէ տիմէտ տունեն՝ շատ օգտէ, և խափանէ զվնասն,
 » Աստուծով »:

810. Գոմար Վարդ.

Վարդի հետ միացուցած Թանկ և լուսափայլ ազնիւ քարի անունն՝ ի հարկէ պիտի
 նշանակէ գեղեցկագոյն տեսակ մի Վարդի. մեր քնարերգակն Նարեկացի՝ Քրիստոսի
 հրաշափայլ Այլակերպութեանն պատշանեցընէ, ըստ հասարակ կոչման տօնին
 Վարդավառ.

« Գոհար Վարդըն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից,
 Ի վեր ի վերայ վարսիցն պզպըջէր ծաղիկ ծովային ».

Ինչպէս նորագոյն աղգային գուսան մի՝ Ս. Աստուածածնի նմանցընէ, երգելով,

« Գոհար վարդն ինքնագոյն, Սիրամարգ սկեզոյն.
 Գոհար վարդն ինքնագոյն ի Հոգոյն, Սիրամարգ յարփոյն...
 Մայրըդ Մարիամ, Տիրուհի, Սրբուհի, Թագուհի »: Եւ այլն:

Դաւիթ Սալաձորցի այլ չէր կըրնար մոռնալ զայս, բայց իր երգոց երեք օրինակաց
 մէջ երկուքն փոխանակ ասոր՝ Սիրամարգ գրեն, և գունով կարմիր պայծառու-
 գոյն պանծալի:

811. Գոնամօրուք. Գոնմօրու. Գոնմօրէք. եւ այլն. — Տես Քոշմօրոտք

812. Գոնմակ կամ Գոնամակ.

Պաշտեան գրէ ի Բառարանին. « Խոս՝ որ տերեւս նմանս Զիթենուց ունի. է դառն
 » և հոտաւոր, յաղաւած տեղիս լինի, մի թղաչափ »: և համարի ըստ Գալիենոսի
 Chamelæa, և Oleago? Մեր քով եղած Գալիենու բառից մէջ օմանք Գոնմակի
 ուրիշ անուն գրեն, Կիպո-կոկոն. ուրիշ մ'այլ Բարսեղի, որ մօտ է Ռոշքեանի Քա-
 մելիային. մէկ ուրիշ մի գրէ « Գոնմակի հոսնդ, կոկոն-կնիդոյ, Coccus Gnidia »,
 որ է Թ. Kόκκιοս յորմէ և լատինն Coccus Gnidios կամ Daphne Gnidium, և նշա-
 նակէ Դափնոյ հատիկները կամ պտուղը, և այս Թաւի Գոնմակի հունդն: Պէյթար
 իր լեզուով այս բոյսը Մերնան կոչէ, ὄλιξ և վկայէ որ տերեւներն նմանին
 ֆամելիա կոչուածին. մեր Ամասիացին այլ ըստ այնմ և յաւելուածով եւս գրէ.
 « Մարնան, որ Թ. Դոքոտ պարդի ասեն (Գայլոյ աղիք?), և ինքն խոտ-մն է, որ
 » զեռ Քթան կու բուսնի, երկու կանգուն երկայնութեան կու լինի, և մանր և

» սեւուկ հատիկներ ունի, նման Մրտին հնտին, և ուղիտակ ծաղիկ ունի, և կեղեւն
 » պինտ լինի, և սեւ կու լինի, և մէջն ուղիտակ կու լինի. և ասոր Հնգիկըն Գըր-
 » ր մոտնա կ'աօտն... (Պ. Գիրմուսանէ, ըստ Պէյթ.): Եւ ցեղ մի այլ կու լինի՝ որ ծառի
 » պէս է, և ծաղիկն դեղին է կամ դեղնութիւն կու քշտէ, և մանրկեկ և պընտ,
 » կեկ միրգ ունի. նմանի Եղիճին հնտին, և յամանի մէջ կու լինի, և ի յաւառտ տե-
 » ղեր կու լինի, և յամէն տմանի մէջ երկու հատ կու լինի. և ճղերն ի գետինն է
 » ճկել: — Եւ ցեղ մի այլ կու լինի՝ որ ի Յրդի կու նմանի, և ի ծովեզերքն կու բուսնի,
 » սպիտակ հունտ կ'ունենայ, և ի տերեւն կու բուսնի այս հունտս. և թէ զտերեւն
 » ի քացախն թրջես և ի շուքն շորացընես նշի ձիթով և մեղրով և հալես խառ-
 » նես, և մէկ տրամ տաս որ ուտէ կամ խմէ, զճիճին ի փորուն հանէ, թէ մանր է
 » և թէ խոշոր, և զտափակն այլ կու հանէ... Եթէ զճղերուն կեղեւն ծեծեն և
 » ցանեն ի վերայ խոցերուն՝ օգտէ »: — Այս Գոնմակ դափնի ծառը բուսարանք
 կ'անուանեն ըստ հին Բունաց Thymolæa. իսկ Մէթնան կամ Մաթնան անուամբ
 հիմայ Ափրիկիոյ Բարբարոսաց երկրքէ կ'իմանան անոր Լ. Passerina, ֓. Passerino
 կոչուած տեսակը:

513. Գոմէշ սպանող.

Մայծի (Մայիզ) նման մետրաչափ բարձր բոյս մ'է, փաթութաձեւ տերեւներով,
 դուլին այլ մոխրագոյն ծաղիկ մի ունի: Յիշուի ի Եփրակ:

514. Գոմշու ականջ.

Յիշուած է ի կողմանս վանայ. գուցէ նոյն ըլլայ և

515. Գոմշու կոտոր.

Ճակիճներու մէջ բուսած Եղէզի տեսակ մի: Յիշուած է այս այլ ի Եփրակ:

516. Գոմիզ.

Մեր Ս. Եղիշէ վարդապետի վարդանանց պատմութեան մէջ յիշուած այս
 պարսիկ բառն՝ յայտ է որ հայերէն կովու մէզ նշանակէ. բայց նոյն անուամբ բոյս
 մի գրէ Ս. Ռաշքեան. « է խոտ, գլխիկս ունելով ի ծայրն, և դեղ է արտից ե-
 » րանաց »: Լ. Bubonium. Այս լատին անունս յայտնէ կղմուխ, ֓. Inule կոչուած
 բուսոյ տեսակ մի: Ուրիշ լատին անուն մ'այլ կու տայ Ռաշքեան, Aster Atticus,
 որ առ մեզ ասմկորէն Այռակ կոչուի:

Գոնգեղ. — Տես Գնքեղ:

517. Գոնգոճ.

Խոտ վայրի, կ'անուանէ Մանանայի հեղինակն (երես 443). գուցէ նոյն ըլլայ և

518. ԳՈՆԾՈՒ

Ար է փշեղէն բոյս մի, ըստ Խոտույրեցւոյ, Թերեւս կոծածն ըլլայ: Ըստ ամանց Գոնծո՞ծ կոչուի և կաղամբի գլուխն:

519. ԳՈՎԱՂԱԿ ?

Կարծուի Լ. Cnicus benedictus կոչուած փշեղէն Ալքրանն. Փ. Chardon béni, կամ Carthamus, Փ. Carthame, որ տարբեր տեսակ մ'է նոյն ցեղին (Tubuliflora, Փողածաղիկ կամ Խողովակածեւ): Յիշուի յԵրեւան, ի Կօղըր, յԱմիր: Առաջինն գտուի ի Հր. Կովկաս, տեսնուած է և ի Հալէպ:

520. ԳՈՐՍԱԿ ԿԱՄ ԳՈՐՍԱԿ ԽՈՍ.

Ըստ Ռոշքեան Ստեփ. Խոտ է, և սակէստընձոյ նիւթ, յոյժ Թրւնաւոր. ըստ Գալիենի Բառազրոց Baccium. Այս Լ. անունս չի յիշուիր հիմայ, այլ Baccion, ի յունականէ աւանուած, որ Բաքսասկան նշանակէ, Փ. Bardane, ըստ մեզ կասարոզի: Սակայն ըստ հայերէն նշանակութեան Գորտակի՝ Ռոշքեանն անշուշտ Batrachium կ'ազդէ գրել, որ յիրաւի Գորտ նշանակէ յունարէն, աստի առած է և լատինն. Ա. միրտովաթ այլ վկայէ, Թէ, « Հոռոմն Պատրարիոն ասէ », և ստորագրէ Ար. Բէ. պիքեձ կամ Բապիքալ كبدکچك անուան տակ. ուրիշ անուններն այլ յիշելով, որ է « Եւանդարտի Չափտահ ? և ինքն խոտ-մն է որ ի Գինժ կու նմանի. սպիտակ դեղին » կերպն, և երեք ցեղ է... և տակն փռնգտալ կու տայ խիստ... Եւ Պտ. ասէ, Թէ « ասոր ֆրայ բլ-գրայն ասեն... և այս ցեղիս տերեւն ի Գնժի տերեւ կու նմանի, » բայց այս տափակ է, և գոյնն սպիտակ է, և քիչ մի յինքն լազիճութիւն (կալչո-ղութիւն) ունի. և ծաղիկն դեղին է, և որձան հաստ, և երկայնութիւնն մէկ կան, » դուն է և այլ երկայն է, և տակն փոքր է և սպիտակ է խիստ, և լեղի է, և հան, » գունի (օղ օղ) ունի, որպէ՛տ Խարպախ (կոծ վրացի). և այս ցեղս ի քայման » ջրերն ի մտ կու բուսնի: Եւ ցեղ մի այլ կայ մթնագոյն և ուր է. և երրորդ ցեղն » փոքր է ծաղիկն և սակոյն գոյնովն է... և երեք ցեղն այլ (մէկմէկու) կու նմանի. » բայց ո՛ր ցեղին ծաղիկն սպիտակ կաթն կու նմանի, և բնութիւն չորրորդին այլ » ասք ու չոր է »:..

521. ԳՈՐՍԱՆ ՂՄԱԿ.

Ախտարական գրոց մէջ յիշուած է այս անուամբ բոյս, առանց բացատրութեան:

522 ԳՈՐՍԱՆ ՔԱՔ. ԳՈՐՍՆՐՈՒՂ.

Ջրային Մամուռն է, (տես զայս բառ), անոր համար կոչուի և Ջրխնոս. ուրիշ աւանուամբ այլ՝ Ս. Գրիգորի Արևասացւոյ Բնութեան գրոց մեկնիչն կ'ըսէ. « Պրտու, » զոր ամանք Գորսորուղ ասեն, և այլք Խոտի մէջ »: Ամիրտովաթ ըստ Պէյթաբայ յունական և Լ. Ստրատիոտիս (Stratiotis) անուամբ ստորագրէ, ծռելով « Սա- » տրատիոտիս, Ջրին Գորսորուղն է, որ Թ. Սոս Երուսնի կ'ասէ. և տակ չունի. » և տերեւն նման է Հայրաշամին (Գաննադանկի) տերեւին »:

533. Գորտնակ . Գորտնուկ .

Թերեւս վերոյիշեալ Գորտակն է (Թիւ 330), լսուի ի Սերաստիա կամ ի Բրգնիք .
ոմանք այլ Հարսնուկի նման բոյս մի համարին :

534. Գուգէնիմ .

Հին բժշկարանն յիշէ « Խուս Գուգէնիմի . ուժովքն է զստամարն » : Յն
Վարդանատ :

535. Գուգ .

Ընկոյզ , ըստ Պ . Կիսզ , կամ Ար . Ճիւզ բառի :

536. * Գուգէլ .

Թուի Թ . Կիսզէլ , գեղեցիկ նշանակող բառն , տեսակ մի ազուար ծաղկի յաս-
կացեալ , զոր յիշէ Սարաձորցին .

« Գուգէլ անուն ծաղիկ մի կայ , որ դեղ է ամեն անբժիշկ ցաւերուն » :
Նոյնպէս Թ . կամ Պ . անուամբ յիշէ և երգէ զյաջորդն այլ .

537. * Գուլի սապառն .

« Գուլիսապառն ծաղիկ մի կայ , որ չի բացուիր զօրն արեւուն ,
Արեւմբտեան յետ կու բացուի , պայծառտեսայ մէջ գիշերուն » :

Թերեւս մեր զարմանալի հայ Ախրիզանն ըլլայ , զոր տեսանք ի Թիւ 35 : — Նոյն
երգին յիշեցընէ մեզ նոյնպէս օտար և բնիկ անուամբ բարդած

538. Գուլվարդ .

« Վարդն ու Գուլվարդն ու Հազրէվարդ . երամն ծանր է Վարդենոյն » :

այսինքն , Վարդի ցեղն շատ տեսակներ ունի , որոց գեղեցիկագոյններէն մէկն պէտք
է կարծել զայս : Սասնոյ կողմերում այլ յիշուի , և տեսնողն կ'ըտէ , Թուփ մի է ,
որոյ հիւղերն երեք երեք վարդ կու բերեն , որ Չայի տեղ ի գործ ածուին՝ շատ քր-
անաբեր ըլլալով :

539. Գունդունա ?

Նոր բժշկարանն մի շատ հեզ յիշէ Գունգունայի կոտ և շուր : Անուամբ մօտ , բայց
չի կարծուիր *Gentiana* (Բագ) :

530. Գունիծատակ.

Բժշկարան մի նոյն համարի զսա և զԱնձրուԹ. տես Թիւ 113:

531. Գունուղ.

Այսպէս կոչեն մեր երկրացիք տեսակ մի մանր Շաղգամ:

532. Գուզի.

Հարանց Վարուց գրոց մէջ կու յիշուի. « Արմատ ինչ անտպատին իբրեւ զԳուզի ». որով երեւի չոր տեղերու բոյս ըլլալ. բայց ըստ Նոր Հայաստան գրոց և գաւառա-կանաց՝ Բողկոյ նման, տերեւներն այլ նման Սընձի, բանջարեղէն ուտելի, զոր այլազգիք՝ Սգորլինա կոչեն, ըստ իտալ կամ սպանիացի բառից, յորմէ և Լ. Scorzonera, ֆ. Scorzondre, որ Թարգմանի Սեւկեղեւի, վասն զի արմատն սեւ է: Իսկ ըստ Շէհրիմանի՝ կանգնաչափ բարձր բոյս է, երկայն և սրածայր տերեւներով, զեզին բաժակաձեւ ծաղկօք, պտուղն կամ հունտն այլ եռանկիւնի ձեւով, մարկապատ: Քանի մի ազգ և շատ տեսակներ են Գուզեաց, որոց մէկն Հայկական կոչուի, Sc. Armeniaca, տեսնուած ի Խօջապա-բունար կարնոյ. — S. Jacquiniiana, ի Սպեր, Բարերդ, Ծանախ. — S. Tuberosa, ի Բարերդ և Խօջապարունար. — S. Mollis, յիլիճէ կարնոյ, Երեւան, Նախճուան. — S. Ino-quiscapa, ի Բարերդ. — S. Semicana ի Մէրտին. — S. Incisa, ի Բարերդ. Ծանախ. — S. Parviflora, կարին, Որմիա, Կեսարիա. — S. Cinerea, յԱլան տաղ լերին Փարսպազ. — S. Tomentosa ի Մէկմանսուր. — S. Sericea և S. Rigida, Եփրատայ քովերը ֆ. և Մ. Հայոց մի-ջոց. — S. Seidlitzii, յԱրագած լ. — S. Lanata, ի Կա-րին, Սոմխէթ, Միջագետք, Ամիդ. — S. Eriophora ի Կեսարիա. — S. Nervosa, ի Մուշ, Ամիդ, Նախճուան. — S. Eriospema ի Հելինտորֆ Գանձակայ:



Գուզի.

533. Գուզիկ.

Տեսակ մի Հազարի. ըստ անուանն (զուղ) շատ իրարպատած տերեւներով. որ նոյնպէս անուանի Լ. Lactuca Crispa, մէկն ի միւսմէն Թարգմանուած. — հաւան-օրէն այս է կամ առաջինն (Գուզի) ակտարական գրոց մէջ ր տառիւ գրուածն

534. Գրգեայ.

« Գիր Քամոյ. Գրգեայ կամ Կըղնչանան կտրէ, և կաթն ի վերայ կտթեցուր, երբ » լուսինն նոր լինի » եւ այլն:

535. Գուրմրի.

Փոքրիկ թուփ մի գետնի վրայ տարածուած ճիւղերով. ծանօթ Խոտուղեցուց :

536. Ս. Գրիգորի Խոտ.

Որ և Մարեմխոտ կոչուի, այլ և Խնկողկուզակ. տես զայս յետին բառս :

537. Ս. Գրիգորի Ծառ.

Ամիրտուլվաթ և ուրիշ Բժշկարանք Սալիխա *خضيد* անուան տակ գրեն, թէ « Ս. Գրիգորի ծառին խէժն է. սպիտակ և կարմիր կեղեւ է քօղի. աղէկն կար. » միրն է ». կամ, Ս. Գրիգորի Ուխտին փայտին կեղեւն է : Ուրիշ մ'այլ. « Մանր » կեղեւ և կարմրածեռ, և Հինգ ցեղ է. լաւն այն է որ կարմիր լինի գունաօքն, » և Թանձր լինի կեղեւն և երկայն, և ծակն փոքր լինի, գետ Ղրֆա? փա. » թուփ լինի. և այն որ սեւ է՝ չէ աղէկ, և այն որ նօսր է՝ Քոտս այլ տօի, որ » Սալիխային զալսն է... Եւ այլ Սալիխայ կայ, գէտ Տարլիէի է. և այն լաւ է » քան զամենայն ցեղն » : Այս ամեն վկայութիւնք յայտնեն՝ որ ուսմիօրէն կամ Թ. Տարլիս կոչուածն է, ըստ մեզ Դարիճենիկ կամ Դարիսեհի (տես զայս). բայց Ս. Գրիգորի նուիրուած ըլլալն՝ ոչ այնքան անոր արժանաւորութեան համար երեւի, որ քան այն յիշեալ Հինգ ցեղ ծառոց մէկն մեր երկրի ծառերէն ըլլալուն, որ քիչ շատ Դարիճենիկ կեղեւին նման կեղեւ և մանաւանդ հոտ ունենայ. զոր ստուգել վայլէ ուր որ Հիմայ Ս. Գրիգորի անուանի ուխտատեղիք գտուին, ինչպէս յՄզընկայ : Հին Բժշկարանն ուրիշ բան գրէ. « Սալիխա, հոռմերէն Սիրիսգոտ ասեն » : Այս բառս Եղէզն նշանակէ. բայց կայ և անուշահոտ Եղէզ. և վերայգրեալ նկարագրութիւնն այլ՝ Թանձր և երկայն կեղեւ փոքր ծակով, Դարիճենիկի եղեգանման կտորները կ'երեւցընեն : Այս ամենայն և եւրոպացի բանասիրաց քննութիւն՝ հաստատէ հասարակօրէն ընդունիլ զՍ. Գրիգորի ծառն՝ Արարից Դարիճենիկ, Փ. Cannelle. Բայց ինչպէս մեր գրիչք ոմանք խեղ համարեցան զՍալիխա նոյնպէս և Եւրոպացի բնասիօք տարակուսին, և ամանք համարին Կասիա : — աստակոց գիրքն տեղ մի յիշէ զՍալիխա (զլ. 222) Օնդրի գինի շինելու համար, « Թէ Սալիխա խառնես ի ներք՝ լաւ է » կ'ըսէ. տեղ մ'այլ (228) հալողական քացախ շինելու համար, ուրիշ նիւթերով խառնած. որով երեւի՝ Թէ կամ իր ճանչցած Սալիխայն Դարիճենիկէն տարբեր և աւելի դիւրագիւտ ծառ մ'էր, կամ վաճառականութիւնն առատապէս կու բերէր զԴարիճենիկն ի Հայո :

538. Գրնակ.

Ըստ Շէհրիմանի Դափնոյ տեսակ թուփ մի է. զոր և անուանէ Լ. Laureola Daphnoides.

539. Գրքոր կամ Գրխոռ.

Բազմաճիւղ կամ բազմացողուն՝ իրր երկու ստնաչափ բարձր բոյս մի է, զեղին ծաղկներով ճիւղերուն ծայրը. ասոնց ծուռ մուռ ըլլալուն համար՝ Աւաղիբրտցիք կոչուեն Ծուռ գախ :

540. Գօճակ կամ կօճակ. — Տե՛ս Գարնետրաշ.

541. Դաղէ ?

Բժշկարան բառագրոց մէջ գրուի. « Սօխ է, որ ընդ որմն ի վեր երթայ, և սպի-
ռ տակ ծաղիկ ունի »: — Այսպիսի պատէ վեր քալող Սօխի յարմարագոյն անուն
համարի Ստ. Ռոշքեան՝ Մոխարմն, և յարմար լատին անունն ալ գրէ, զատ յայլոց,
Parietaria, ֆ. Pariétaire, որ որմնային թարգմանուի: Այս բոյս է արարերէնէ
թարգմանուած Ապիկոս խոտն, զոր յիշած եմք. (Թիւ 140): — Մեր Հարց Բառա-
գրոց մէջ կոչուած է և ֆիքրախ: — Այս խոտիս մէկ տեսակն Հրեական կ'ըսուի,
P. Judaica և գտուի նաեւ ի Մարաշ, Այնթապ, Ուսհա. — P. Lusitanica կո-
չուածն այլ ի Հ. և Հր. կոչկաս, ի Սննար լ:

542. Դաժամման ?

Դամառկացի Սալորն այսպէս կոչուած է. բայց կոչողն ինձ անյայտ.

543. Դալ.

Բանջերեղէն է: շուտ անեցող և մարգաշափ բարձրացող, մատնաշափ հաստ,
Թարմ եղած ասեմն՝ խաշկով կ'ուտուի:

544. Դակիկ. — Տե՛ս Մանիքեղ:

545. Դաղձ կամ Դաղձն.

Դանօթ բոյս Անանուխի ցեղակից, կամ անոր վայրենին, Լ. Mentha sylvestris.
Փ. Menthe sauvage. Ամիրա. գրէ. « Դաղձ, որ Արարն Գորսանաձ, عودج,
» և Պարսիկն Պոտինա ? առէ. վայրի լինի և ածվոց լինի. և լաւն այն է որ տե-
» բեւն նօսր լինի... Ասէ գրոցս շինողն, թէ այս երեք ցեղ է. մէկն ի լեռան կու
» բուսնի և վայրի տեղրանքն, և մէկն ի ջրեզերք կու բուսնի. և այլ ասեր է գրոցս
» շինողն, թէ այն որ լեռան է՝ երկու ցեղ կու լինի. մէկ ցեղին Հաշա, لسان
« կ'ասեն.. և մէկ ցեղ-մն այլ Գոտֆորնուն ? կ'ասեն... Եւ ան որ վայրի է՝ այն այլ
» երկու ցեղ է. և մէկ ցեղն այլ վայրի Դաղձն է, և այն ստուգ Դաղձն է. և այն
» որ Զրին է՝ մէկ ցեղէն աւելի չի լինիր. և այն որ լեռանն է՝ աղէկն այն է որ
» հոտն անուշ լինի, և դալար և կանաչ լինի, և տերեւն փոքր լինի »:

Յուտէնէն անունն՝ զոր իբր հայացուցեալ Փօտինէն գրէ հին Բժշկարանն, յաս-
կապէս վայրի կամ լեռան Դաղձին կու տան մեր և օտար գրիչք. յիշեալ հին Բժշ-
կարանն գրէ պէսպէս անուամբք. « Լեռնցի Գոտինէն, լերին Դաղձն, Փօտինէն, որ
» է խոուն, և ինքն վայրի Դաղձն է »: Վաստակոց Գիրքն այլ (քր) Գոտանչն՝
որ է լեռան Դաղձն: Ասար կ'անուանէ Սարի Դաղձ՝ - Զութանաձ: Ուրիշ օ-
տար բառով Գոտաքան կոչուի վայրի Դաղձն, իսկ ըստ Լ. Palegium ֆ. Pouliot.
վայրի Դաղձից այլ և այլ տեսակք այլեւայլ անուն կամ մականուն ունին. ինչպէս,

546. Առուի Դաղձն.

Յիշուած ի Միտիթարայ Հերացույ ի զեղորայս պալղամի. էլ ֆուգեհեճ էլ - Եւհրի Արարաց, նոյն պիտի ըլլայ և Ջրեզրի կամ Ջրի Դաղձն:

Բժշկական բառակարգ մի խանգարելով գրէ. « Մեղիտայ Էպոհեն ? (Mentha ?) որ է Ջրի Դաղձն, որ արարերէն Ծութէնէն առէ »: Բուսարանը վայրի Դաղձին մի տեսակը՝ M. Sylvestris Glabrata (լերկ) յիշեն ի Մուշ:

547. Անջրդի Դաղձն.

Որ յատկապէս խոտիճ կոչուի ի Բժշկական բառս:

548. Կարմիր Ջրի Դաղձ.

Լ. Mentha aquatica, կամ Mentha Rubra. Փ. Menthe Rouge կամ Rougoâtre, որ և M. Aquatique. Ճանչցուած է այս ի Փ. Ասիա, ի Հս. և Հր. Կովկաս:

549. Էգաղալձ.

Այսինքն այգեաց կամ ածուոց Դաղձ. Լ. Mentha Arvensis. Փ. M. des Champs, կամ Pouliot-Thym. Այս այլ յիշուած է ի Կովկաս:

Բուցէ Դաղձին այսչափ և աւելի զամազան տեսակք ըլլան, բայց այս անուններն ամենն ալ զանազան շեմք կըրնար ըսել, որովհետեւ մի և նոյն գրոց մեջ գրուած չեն, այլ զանազան գրիչք զնոյն տեսակը՝ տարբեր բայց նման մականուամբ գրած են, որով շփոթութիւն կ'ըլլայ. ինչպէս եւրոպացի գիտունք այլ խոստովանին իրենց թարգմանածին համար: — Հին Բժշկր. մեր իբրեւ ազգակից մէկ տեղ գրէ զԱննուիս և զԴաղձն. « Մէկ բնութիւն են, տաք են յճ տրն. այլ յԱննուիս քիչ » զինութիւն կայ. զտամաքս տաքցընէ և ուժովցընէ. զկերակուրն հալէ, զորովկալն » ի պղղամէ՝ դաղրէ »:

550. * Դամասխ.

Դամասկեան սեւ սալորն է. մանաւանդ անոր շիրն:

551. Դամոն. Դամոյն. Դամոնի.

Մտռ և պտուղ Սալորի, կամ տեսակ մի. հիմայ հասարակօրէն մեր լեզուի մէջ այս եւսքի բառ նշանակէ Լ. Prunus, Փ. Prune կոչուած աշխարհածանօթ և բազմաշտ տեսակ պտուղը. գրոց և Բժշկարանաց մէջ շատ հեղ անզանազան համանիչ գործածութիւն Դամոն և Սալոր. զոր օրինակ կ'ըսէ մէկն. « Դամոն, որ է Սալորն, որ է » Աձաւն ». նոյնն ուրիշ տեղ գրէ, « Դամոն՝ Ալուշա (Թիւ 34), ինչոս. ինքն շատ » ազգ է. զաղէկն կու չորցընեն, որ է Ալտիսիս և Ալուշ րիսարս »: — Վաստակոց Գիւրքն չի յիշեր Սալոր կամ Ալոր, այլ միայն Դամոն կամ Դամոնի (զլ. ՄԺԸ, ՄԸ).

և անոր պահելու կերպն այլ սովորեցընէ. « Առ գրամանն և դիր ի կարաս, և յիս. » ասկած քաղցր գինի լից ի վերայ. և երբ անկիս (պէտք ունենաս) կեր, անուշ » լինի: Այլ ազգ. Քաղեա զաղուոր հասած Դամանն ձեռքդ, որ չհարու, և լից ի » նոր կուէ աման, և զբերանն ծեփես և պահես, շատ դիմանայ: — (Դար. » ձեալ) Առ գրակ Դամանն, կիտակի արա, և շորացո ի փունն »:

Բայց Դամանի և Սալորի զանազանութիւնն աւելի հին ատեն՝ յայտնէ Միս. Գոչի առակն (ծծ). « Ի միտսին Սալոր և Դաման և Միրան ամբաստանեցան՝ » թէ ընդէր զատամունս հարուն », եւ այլն: Որ արդեօք տեսակն էր Դաման կոչուածն իր ազգակցաց մէջ. — Նոյն վաստակոց դրոց նորագոյն օրինակ մի գրէ, թէ այն է՝ « զոր այլազգիքն Պարտաղ երիգի ատեն ». թէ և ամանք Ամասոյ սաղորը կարծեն: — Հին Բժշկարանաց մէջ ի կարգի դեղոց յիշուի շոր Դամանն՝ Դամանայի կոչմամբ. շուրն կամ օշարակն այլ Դամանաչոք: — Դամանի այլեւայլ ազգակցաց վրայ յիշեկոր թողումք ի բառն Սալոր: — Մեր հին Բժշկարանն գրէ վասն Դամանի, թէ « Լաւ կերակրէ և գինացընէ զստամօք, և » իր լուծումն զՍաֆրա հանէ. Սեան լաւ է քան զՍպիտակն, և մեծն լաւ է » քան զմանր. և յանօթից լաւ է ուտել, եւս մանաւանդ թէ տաքութիւն ուն » նայ. թէ հովարեութիւն մարդոց տաս, ի վերայ մեղրլուր խմցո՝ որ տանի ի » ստամօքէն զգինութիւն »:

Դանըու. Տես Թանկոչ:

552. Դանդուռ.

Անմեռուկ է ըստ Սիմէանի կամարկապեցոյ:

Դանդունակ. Տես Թանքունիկ:

553. Դանիկ.

Նուինն է, ըստ վերոյիշեալ կամարկապեցոյն:

554. Դառնիմ. Դառինչ.

Մանր վայրի խնձոր է թթուահամ, զոր շորցընելով Լիմոնի տեղ գործածեն ի Հայս. Լ. Pomus acerba. ֆ. Pomme à Cidre. — Ըստ ոմանց Դառնիմ նշանակէ և Եղբակ կամ վայրի Հազար. կամարկապցին գրէ, ֆ. « Աճի օր. ինքն է » խոտ լեղի, դառն. Գասնի Էդեգն, Դասն Բանչար »:

555. Դառնուշ.

Այսպէս գրուած է երկու անգամ բաւական ուղղագիր Բժշկարանի մի մէջ, որ և կրտէ, « Բազո՝ Դառնուշն է ». ուրիշ տեղ՝ գլխոյ և մօրուքի թեփուկի դեղ գրէ. « Առ գրառնուշն, ծեծէ և լրով յարոյ և ծծ. և յերբ ցամքի՝ այլ » ած, և ճակնդեղի լրով »: Հաւանօրէն է Դառն Նուշ (լեղի), դիւրաւ ար.

տասանելու համար մէկն գիրը թողած: Կամարկուպցին յայտնի գրէ. թէ և ուրիշ գրի մի սխալով. « Բագգ, Ա. Աննիօզ. Թ. Անի պատեմ. Պ. Անդիօն. Ինքն ծառի » պտուղ է, Լեդի Նուշ կ'ըսեն »:

556. Դառնջիկ կամ Դառնճիկ.

Գուցէ ուրիշ կերպով պէտք էր գրել, որովհետեւ այս բառս՝ եւրոպական գրով գտած եմ, Tarandschick, և վկայուած հայերէն ըլլալ. Բազադրեալ (Composé) բուսոց կարգէն, Լ. Phaeopappus aalignus կոչուած տեսակն է, ըստ Բուսորէի, Chartolepis ըստ Լիննէոսի, զոր կարլ. Քոխ բուսարան բժիշկն տեսած և նշանակած է ի վարդոյ և ի Պոկլան՝ Տարօնոյ կողմերում, ուրիշ մ'այլ յԱլգիստան՝ սահմանակից Կիլիկիոյ, քանի մի ոտնաչափ բարձր, նեղտերեւի բոյս մի. Թ. և Պ. Անպիւրոյ կոչուած ծաղկին նման: Մէկ տեսակն այլ զոր Կիլիկիոյ բարձր Պրիտ լեռան վրայ տեսաւ Քոչի, իր անուամբ կոչուի Phaeopappus Kotschy. Դարձեալ տարբեր տեսակ մի Phaeopappus leuzeoides՝ Պուհսէ գերմանացի յիշէ Նախճաւանի կողմերում, ինչպէս նաև յԱրարատական. ասոնց սահմանակից Պարսկահայոց Հեր (Խոյ) գաւառի մէջ այլ քիւսի Ph. Carthamoides, Ասփոսի նման:

Անուանց մերձաւորութիւնն կրնար կարծեցընել թէ օտար ակընթի լաճն Դառնճիկ՝ կըրնայ ըլլալ Թարիինջակն, բայց սա տարբեր ցեղէ բոյս է, ինչպէս պիտի տեսնուի ի կարգին:

557. *Դառնըուշտ.

Հին Բժշկարանն հոմանիշ գրէ, « Դառնաըուշտ՝ Կոստի տակ » ուրիշներն գրեն Դոշտ կամ Խոշտ կամ Գոշտ: Տես Կոստ և Կապտրասի:

558.. Դավարա.

Հոյնի կամ Զողալենեոյ (տես գասոնք) ազգակից կամ նոյնանիշ կ'երեւի, ըստ բնագրի Ս. Բարսղի Վեցօրէից, ուր կ'ըսուի գառնահամ պտղոց կամ պտղանըմանեաց համար. « Կաղնեաց և Դավարայից պտուղ՝ ճաշակս գղտորահամ » ունին »: մեկնիչն կ'ըսէ, « Դավարայից պտուղ՝ Դարիսենի ծառն է ո. այս ծառս՝ պէտք է ոչ սովորաբար Դարիսենիկ կոչուած Դարիսենին իմանալ, այլ վերոյգրեալ Զողալենին կամ Դափնին, ինչպէս վկայէ և մեր Ամասիացին »:

559. *Դարապղպեղ.

Տարի ֆիշի ֆիշի Ար. Եթև Եթ « Որ է Եերկան պղպեղն, ըստ Ամիրա. (Piper » longum. Փ. Poivre long.) Ոմանք ասեր են, թէ Տարֆուի ծառն զատ է, » ստուգ. լաւն այն է որ հաստ լինի. և իր համն ի Պղպեղ կու նմանի. և թէ » գինքն ի յայծուն լերդին մէջն եփեն և զլուրն ի յաջն կաթեցընել պիտի, » զհաւկուրութիւնն տանի »:

560. Դարբուսիկ .

Յարմար անուն . բայց տեսակն անժանօթ : Նշանակած է բառհաւաք մի :

561. Դարիճենիկ . Դարիսեն .

Երկու անուններն այլ իրրու հոմանիշ գրէ Հին Բժշկարանն : Յայտնի է որ ուսով . որէն կամ Թ . Տարչին կոչուածն է , որ նշանակէ ծառ կամ փայտ Չինաց , այն երկրէն բերուելուն համար . ինչպէս վկայէ և Բժշկարան մի , « Դարսենենկ , » Տարչինի . ինքն փայտի կեղեւ է կարմիր , քաղցր և անուշահոտ » : Ամիրտուլվաթ այլ . « Տարչինի . յայտնի է որ է Տարսինի , և ինքն Հինգ ցեղ կու լինի , և լուսն » այն է որ հոտն ուժով լինի և անուշահամ լինի , և զլեզուն այրէ , և ի տաք » Նրբին մէջն շարորի » : Ուրիշ Բժշկարան մի . « Դարչիսեն , Ս . Տարսինի կամ » Խոֆէ , Թանձրն՝ Խոֆէ , նօսրն՝ Տարսինի . Լատ . Լինամոմում » . Cinamomum . Փ . Cinnamon , յորմէ , և Հ . Կինամոմոն , կամ Կինամոն : Այս բառով յաճախ կու յիշեն Ս . Գիրք այս անուշահոտ կեղեւը , որ ինչպէս յայտ է , ամէն տեղ և ամէն ժողովրդոց՝ փափկութեան նիւթ մ'եղած է , թէ հագուտի թէ ճաշակի համար : Մեր ազգային հեղինակք՝ անուամբ զանազանեն իրենց երկրի տարբեր բոյս մ'այլ , զարմանալի զօրութեամբ , զոր յիշենք նոյն բառին կարգաւ : Իսկ այս տեղ կրկնեմք Դաւարայի անուան տակ նշանակուածը բացատրելով , թէ

562. Դարիսենի .

Նշանակէ և ծանօթ Դափնի ծառը ինչպէս գրէ Ամիրտ . ի բառագիրսն , « Դար . » սենեկ որ է հայերէն բառ , որ ասեն Տաֆնի , և արարն Ղար ասէ » : — Դար . ձեռալ Դարսենենկն կամ Դարսինենկ ուրիշ ծառ մի նշանակէ , ըստ Բժշկարանի , որ և յատուկ անուամբ կոչի Ճիֆնի . տես զայս :

563. Դարինամ . Դարինին . — Տես Խօտակ :

564. *Դարիսվար . Դալիսվար , կամ Տալիսփար .

« Ինքն Հնդի Չայթունին տերեւն է , ըստ Ամիրտ . լուսն այն է որ ի դեղ շայնէ » մուկթատիղ . և շոր է և կապող է . . և զակուային զմիսն կու ամբացընէ , և » արուն թքնելուն կտրելուն դեղերուն է : . . Ասէ Պտ . Թէ Հելենացիքն Տար . » քիսա ասէ ګرد ګرد ګرد ګرد , և այլ ասացած է՝ Թէ Պասպանն է , և այլ ամանք » ասացել են . Թէ Լիսան ըլ-ասֆորն է . և ասացել են թէ Յարսին (Areca) է » Հնդի ծառին . և ամանք ասեն թէ Բոչրդին ծառն է , և այսոնք չէ ստուգ . և » Ճամուսին ասացել է . Թէ Հնդի Չէյթունին տերեւն է : Եւ գրոցա լինողն՝ զՄին . » հաճին խօսքն է ընդունել , որ ասացել են , թէ Հնդի Չէյթունին տակին կե . » դեւն է . և ամենայն խօսք որ կու ասեն՝ չէ ստուգ . և այս կեղեւն քան զՏար . » չինին կեղեւն թանձր է և ամուր է , և ի սեւութիւն կու քրտէ . և համի խիստ » ստիպ է , որպէս Գղթորի համ , և քիչ մի անուշ հոտ ունի » . . . — Բժշկա .

րան մի Ար. և Լ. անունները յիշէ. « Դարսփեր. Լազ. Մայսիս ». որ է *Macis*.
 Փ. *Macor*. — Ամիրտովաթայ ըսածներն իբրև ստոյգ և անստոյգ՝ են ըստ Պէյ-
 թարայ. բայց ինչուան հիմայ գիտնականք անտարակոյս շին այս Յոյն (հեղինակաց)
 յիշած բուսոյ կամ ծառի կամ հիւթոյ ինչ ըլլալուն, և ուր տեղ գտուելուն. ու
 մանք ըսած են, թէ Հնդկաց Բրահմանաց Մակր կոչած ծառն է, զոր քրիստո-
 նեայք կոչեն Սոչրթ թոպմայի ծառ: Բայց ծառը ցուցընող չկայ. Թերևս նոյն իսկ
 Նարմի կամ Հնդկային Ընգուզին է, որ է Լ. Մայսիս կոչուածն:


868. *Դարշիշան. Դարշիշիան. Տարշիշան.

Այս այլ վերիններուն նման օտար երկրի և տարակուսի տակ ընկած բոյս մի
 է, հասարակօրէն ընդունուած իբր. Լ. *Aspalathos*. Փ. *Aspalathe*. Ասպարասս
 գրուած հայերէն: Մեր Բժշկարանաց մէկն համառօտ կ'ըսէ. « Ինքն փայտ է
 » ամուր, և տերեւն նման է Փիճոյ տերեւին, և այլ հրկայն է, տակն կարմիր է »:
 Կ'աւեցընէ ուրիշ մի. թէ « Ի յԻստօլիս (Հոսոս) և Ի Պարսիկ լինի »: Իսկ
 Ամիրտ. « Ասէ Սինայի որդին, թէ ինքն փշով միրգ է, և դեղին ծաղիկ ունի.
 » և իր փայտն ի Սանգալ կու նմանի. և ինքն մէկ ցեղ է. լաւն այն է որ պինգ
 » լինի և հասն անուշ:.. Ասէ Իսլան. թէ՛ ինքն ծառ-մն է, որ մէկ կանգուն բար-
 » ձրութիւն ունի և բարակ ճիւղեր, և ի ճղղերուն ի ծարերն պինտ զէտ փուշ
 » ճղեր ունի, ի վերայ գաղտուկ պահած տերեւնի ունի մէկմէկէ հեռու. և դե-
 » դին ծաղիկ ունի, անուշահոտ է. և տակն սեւ կու լինի: Եւ թ. այս ծառիս
 » Շիմշակ աղամի ասէ: Եւ թէ ասոր ի ծառն խունկ ծխես և քիչ մի ապրում
 » փաթտես, և լուսնին ձգ գիշերն՝ բարձիտ ի ներքեւ դնես, զինչ որ խնդրուած
 » ունիս՝ գիշերն ի յերազդ տեսնուս (1). Ասէ Պտ. իրեն Զանդոյ կ'ասեն պարս-
 » կերէն. և Պարպարի լեզուաւ Ազգոսի (2) կ'ասեն. և այլ բառով է Զիլափոչոյ
 » Եւ ասեր են, թէ ինքն ծառ-մն է Թանձր և փուշ ունի. և յիր կեղեւն սը-
 » բութիւն կայ և այրողութիւն կայ, և ի փայտն տապութիւն: Եւ ոմանք ասեն
 » թէ Սմկոչի Հինդկին տակն է. և ոմանք ասեն՝ թէ Հոռոմցի Սմկուլին փայտն է.
 » և չէ ստուգ. և այն որ ստուգ է՝ այն է՝ որ իր կեղեւն զէտ Ղրֆա (Դարի-
 » ճենիկ) լինի կերպովն, և շատ երկան լինի և Թանձր. և գունն կարմիր՝ որպէս
 » արունի գունով. և լաւն այն է որ ծանր լինի և կարմիր. և թէ կեղեւնս՝ ւ-
 » բունի գուն լինի, և անուշահոտ, և համն քիչ մի լեղի: Եւ ցեղ-մն այլ Տար-
 » շիշան կայ՝ որ կոկ կու լինի և սպիտակզուն, և հոտ չունի բնաւ »: — Գայիենոսի
 կամ Բժշկական բառից հաւաքման մի մէջ գրուի: « Դարշիշիշան՝ Ասպարոչոս ».
 Թուի Ասպարթոսի հետ շփոթելով. Ասպարտեիս նշանակէ Ասկալոնի Սխտոր.
 Իսկ Ասկալէ, *Ascalea*, է տեսակ մի վայրի կանգառի կամ Ակքանի, *Carduus*
nutans. Փ. *Chardon penché*. Նոյն Գայիենու բառակարգին մէջ գրուած կայ և
 « Դարսայիսն և Խոնմիսայիսն (Խոնմի սիյալիշան, *جوشان*) Աղտերաց

1. Այս Սինայի (աւստրալեանութիւնը՝ Պէյթար կ'իմացնէ, որ Վանշիւն է աւանդողն:
 2. Պէյթարի Թարգմանողն կու կարդայ որով (عجوة) և ասորակուսելով կարծէ ուղղել
 Ասկալէ-چ) և ըստ Գազալի Արաբաց նշանակ է վրտա Թուփ մի, Փ. *Senet* (Օրու):
 Տես թ. 8:

» արիան »: Բայց Թուի Թէ Դարչիւնէ տարբեր բոյս կամ նիւթ ըլլայ: — Տես Ճամբուկ:

566. *Գարունէն. Տարունան. Դրունան.

Յարմէ և Լ. *Doronicum*. Փ. *Doronic*. Թ. *Չիմեկ օրոս*, ըստ Ատարայ: « Ինքն » տակ է. ըստ Ամիրա. գէտ կարիճի ազի. բայց հետ Շաղախուրին բուսնի. աղէկն » ի յԵրախու (Իրագ) գայ. տաք և չոր է Գ տարանա », եւայլն: կարիճի նմանութիւնն այլ բացատրէ Լ. *Dor. Scorpoides*. այսպէս այլ կ'անուանեն կ'ըսէ Պէյ-Թար՝ յԱտորիս, Ագայիրեպս, , ուր գտուի ի Լիբանան և ի Գըֆր Սո. լիւան, և Պերութի լեռանց վրայ. տերեւներն Բզրի տերեւոց նման գետնի վրայ կու տարածուին, որոց միջէն երկու կանգնաչափ կամ աւելի՛ կու բարձրանայ որձայն, միայն չորս հինգ նեղ ու երկայն տերեւներով, ծայրն ալ դեղին խորունկ ծաղիկ մ'ունի. արմատն կարճի նմանի, և ամէն տարի կու բուսնի, կարիճներն այլ կու շատնան երկու կամ իրեք հատ: — Մեծ տեսակն *D. Maximum* գտուի ի Թէքտագ Լ. կարնոյ և ի Պինկէտ. — Երկայնատերեւն՝ *D. Macrophyllum*, ի Ճիմիլ Լ. — Կովկասեանն՝ ի Պանտոս և յամեն կողմ կովկասու. նոյնպէս և *D. Oblongifolium*.

567. Դափնի.

Ծանօթ անուն ծառի յունականէն առնուած, մեր լեզուի աւելի յատուկ կ'երեւի կասպա, և այսոր կարգին Թողումք բացատրել:

568. Դգալուկ.

Այս բառիս նշանակութեամբ ուրիշ լեզուաց մէջ այլ կան բոյսք, բայց սա որն է, հնձ չէ յայտ:

569. Դդմախոտ.

Յիշած է բառհաւաք մի, բայց ոչ և Դղըմոյ հետ ինչ ազգակցութիւն ունենալու:

570. Դդման.

Ի գետեզերս բուսող բանջարեղէն մի, Թթուահամ տերեւներով, որոց ձեւն նմանի Դդմենոյ. տապկելով կ'ուտուի:

571. Դդմնի.

Մեր երկրացոց՝ գոնէ Տարօնեցոց, ծանօթ ծառ մի է փունջ փունջ ծաղկօք. այլ չբխում Թէ նոյն տեսակէն, զոր մաղձառ մարգարէին Յովնանու հովանոց ըրաւ գթածն Աստուած, և տպա գինքն խրատելու համար՝ երկրորդ օրը որգնահար շորցոց: Թողումք մեկնչաց սինարանել այս ծառիս նկատմամբ, զոր շատք

և Լատինաց Թարգմանութիւնն՝ համարի Քաղեղ մի. շատք եւս Ջըու (Ricinus), սրովհետեւ յունարէն այսոր կ'ըսեն Քիքի, հրէարէն այլ Յոփնանու Դղմենին կաշուի Քիքայուն: Հռովմի գետնագամբանաց և ուրիշ հին նկարաց մէջ Յոփնանու վրայ հովանացեալ բոյսն Դղմի տերեւով և երկայն վարունգի կամ կոթայի ձեւով կախուած խաւարտ կամ պտուղ ներկայացընէ: Մեր հեղինակ Սնանիա վարդապետն՝ Յոփնանու վրայօք գրած ճառին մէջ կ'ըսէ. « Դղմենին զարդարեալ էր » խիտ առ խիտ ուղէշօք և թանձրամած տերեւօք, և ոչ պտղովք »:

573. Դղմուլ.

Յիշուած է ի բառհաւաքէ՝ այլ ոչ բացատրուած:

573. Դղում.

Եթէ տարակուսական է Դղմենին՝ աշխարհածանօթ է Դգոսմն. « Որ Ա. Ղարբն » ۷ ۸ ۹. Գոստոս? և Հոռոմն Կոլոկինտուսն (Κολοκύνθα) առեն, ըստ Ա. միրտ. (L. Citrullus. Գ. Citrouille). և ինքն երկու ցեղ լինի, քաղցր և լեղի, լաւն այն է որ քաղցր լինի և թաժա: » Շատ ուշատ տեսակ բժշկական օգուտ ներուն մէջ՝ գրէ նաեւ, թէ, « Ասցած է, թէ Դղումն ի խմորն առնուս, և զան ջուրն ի յաչքն քաշես, օգտէ աչաց դեղնութեան որ ի յ'արաղանէն (գեղ. նախտ) լինայ... Եւ թէ զկուտն կտուեն և զձէթն հանեն, օգտէ տաք ա. կընջին ցաւուն... Եւ յորժամ Դղումն ի վերջն հասնի, զտակն բաց և ծակ ա. բա զմէջն, և երկըթի աղ լիցի ի լի, և քառասուն օր ի շուքն դիր, և յետեւ կտարէ զԴղումն, և այնոր մէջն լցիր և հան, քամէ, յրմէ սեւ ջուր կ'ենլնէ. ի յիջ արկ և պահէ. թէ ուզենաս որ ի բան տանիս՝ հինայով օժէ, զմազն ներկէ և սեւ առնէ խիտա: Եւ թէ զգալար Դղմին քերուցն տիմէդ առնես, սուր ակուս. ցաւութեան զտաքութիւն տանի. և լաւն այն է որ զարու ալուրով լինի շա. դած. և տաք գլխացաւութեան այլ օգտէ »:

Վաստակոց զիրքն (զլ. ՄԿԸ) Դղումին և նմանեաց համար կ'ըսէ, թէ « զաղ. բին և զաղէկ փորած գետին սիրէ... և ջրելն՝ զԴղումն մատղայցընէ և քաղ. ցրացուցանէ և գճցընէ. և թէ լեղի լինի՝ առ փուշ մի և զծիլն ծեծես. նա ջուրն քամի և Դղումն քաղցրանայ, և այլ շաա բեր առնէ... Եւ թէ ուզես որ Դղումն երկայնանայ, առ ջուր ամանով և ներքեւ Դղմին օռիցն թերի կախես, այնպէս որ չհասանի յինքն, զէտ չորս մատ ի յետ կենայ Դղումն, պիտի որ ի ջուրն հրոսանայ. և դու յամէն օր տես, քանի. ցածանայ՝ զլուրն ցածացո. և այդու երկայնացո որչափ և կամիս: Եւ թէ կամիս որ Դղումն բոլոր լինի, զկուտն՝ ընդ քոփն ծակես և հան, և դիր մի ընդ բերանքն. նա Դղումն բոլոր լի. նի... Եւ թէ զմատղալ Դղումն ի յարդն թաղես՝ շատ զիմանայ: Եւ ոմանք տանուն զմատղալ Դղումն և ի չորս ճեղքեն, զկուտն հանեն, և եւջուր ատեն ի վերայ, և ի գիշերն յաստեղան պաղեցուցանեն, և ի քաղ(ել)ն ի զազան (բարկ) ազլուր դնեն, և հանեն և պահեն. շատ զիմանայ »:...

574. ԴՌՈՒՄ ՎԱՅՐԻ.

Ամիրտ. օտար և խանգար բառով կու բացատրէ « Անուպուշիոն, որ է Ան. » պուշիոն, ի ԴՌՈՒՄ կու նմանի. խոտ—մն է. և այս խոտին վայրի Դքոսմ ասեն. » և թէ քոսերուն և նառահաթներուն վրայ գնես՝ աղէկցընէ և զուռէցն տանի, » և միս բուսցընէ »: Արշեալ յոյն կամ լատին անուանքն անծանօթ են ինձ:

Յայտնի է որ ձեւով, գուշով, մեծութեամբ շատ ու շատ տեսակներ կան Դքըմոց, և բնաւ իրարու չեն նմանիր, բայց եթէ բուսարանից ուսումնական դիտմամբ. և հարկ էր որ այդ այլակերպ զանգուածքն այլեւայլ անուններ ունենային, (Ինչպէս Մանոր, Կոշ, Տոշ, Եւայն, գորս յիշենք ի կարգի անուանցն: — Ի գործածութեան նշանաւոր են Դքուսմք չիշի կամ կուժի ձեւով, զոր սովորաբար գինւոյ աման կ'ընեն մշակք:

575. ԴԵՂԱՆ

« Ի՞նչ է. (կու հարցընէ վանական վ. և պատասխանէ). Եղեգան և Սիզոյն » տակն է »:

576. ԴԵՂ.

Բանջարեղէն, զոր պանրի մէջ գնեն և անուշ հոտ ունի: (Միրախոր. Ա. 48):

577. ԴԵՂ.

Տուգորի նման ծաղկաբեր բոյս մի, որոյ արմատն օճառի պէս կու փրփրի ջրոյ մէջ. և աղկուանք զործածեն մազերնին երկընցընելու համար: (Մանան, 443):

578. ԴԵՂԻՆ ԾԱՂԻԿ. ԴԵՂՆԱԾԱՂԻԿ.

Սիմ. Կամարկապցին անորոշ կամ խառնակ գրէ. « Ստրոս չիւակ. ինքն Հա. » միջարահար? կու լինի, Ճնահարի? Անթառամ ծաղիկ »: — Եւրոպացի դիտնական մի Թ. այսպէս կոչուածին զուգանիշ գրէ Լ. Anochonium Glehifolium. Բայց ըստ բառին զուգանիշ է Յ. Լ. Anthoxanthum. Փ. Flouvo. սակայն այսօր ձեւն չի յարմարիր ծաղկին: Մերագգիք այլ յիշած են Դեղնածաղիկ ի կողմանս Կարսի:

579. ԴԵՂԻՆ ԿՈՏ.

Դեղին ներկ տուող փայտ է, ծանօթ յարեւելս. Պ. Չէրոտ չիֆա կամ Չէրոտ լօփ անուամբ. Ար. Օրոշք էլ—սասպադին عروق الصباغين, ըստ Ամիրտ. « Յորոշ » Սասպադին, որ է Չարաաչաւն... Այսօր Երիտանկի գեղ կու ասեն. այնօր համար » որ յորժամ ծիծառն ձագն կոյր կու լինի, մայրն կու բերէ զայս գեղն, ի յաչքն » կու քէ: աչքն կու տեսնու: (Որ) զլուրն ի մեղրն կու խառնէ և ի քիթն կու » կաթեցընէ, զըղեղն կու յստակէ: Եւ ցեղ—մն այլ կու լինի մանր, այնօր Մամի.

» րան կու ասեն »: Պէսպէս կերպով բացատրի Միծեանիկի դեղ կամ խոտ կոչուան, զոր տեսնենք ի կարգի այն անուան. այնպէս կոչուի և *L. Chelidonium* և *Փ. Chelidone*, յունարէն *Χελιδων* բառէն՝ որ ծիծառանուկ նշանակէ: Բայց թէ Պէյթար և թէ այլք զանազանեն և երբեմն շփոթեն այս երկու տեսակներն, որոց վրայ կ'աւելցընէ երրորդ մ'ալ *Հորտ, Տ, Ծ*. Մէկ տեսակը Մեծ կ'անուանեն, և այն է յատուկ Միծեանիկի դեղն. իսկ Դեղին կոճի յատկազայն է *L. Carouma* կոչուան. որ և մեր լեզուաւ ուրիշ անուններ այլ ունի. Վարս, Սպարակ, Եւալին. իսկ Մամիրանի՝ Ամիրտ. ուրիշ Ար. անուն մ'այլ զուգէ, զոր տեսնենք ի կարգին:

580. Դեղծ.

Մանօթ աղնիւ պտուղ, որոյ ծառն այլ կոչուի Դեղծի կամ Դեղծնի. և Ար. բառով ալ խոսիս կամ խոսիս կոչուի Մշչ կոչուի Մշչ կողմերը Եւրոպա ի Պարսկաստանէ բերուած համարելով *Persica* կոչուի, *Փ. ծառն՝ Pêcher* պտուղն *Pêche*. իսկ « Պարսիկն Շաֆրայոս ասէ (ըստ Ամիրտ.) և ինքն երկու երեք ցեղ լինի. » լուսն այն է որ ի կրտէն շուտ բաժնի... իր տերեւին լուսն օգտէ քթին հոտուն. և որոյ ականջն ճճի կենայ՝ կու սպաննէ և հանէ զորդն.. լուսն այն է որ շորացընեն և ապա ուտեն. և տպան հատ կեր և աւելի մի ուտեր. (գի) » շուտ բորբոսէ զմարմինն »..

Դեղծի օգուտն ու վնասը՝ այսպէս բացատրէ հին Բժկրն. « Ըղորկուտ և Թանձր » պղլամ ընծայէ. զսասմաքն շոյա խանկրէ, և յանօթից կեր, և շորն ծանր է քան զգալարն. և ով ուտէ՝ վերայ ջուր խմցո կամ անապակ գինի. զտերեւն ծեծէ և զլուսն հան ու խմցո, զամենայն ճիճի՝ թէ տափակ թէ բուրձ հանէ, և յականջն լից, նա զորդն սպանանէ »:

Վաստակոց գիրքն խնամով գրէ Դեղծի դարմանը և մեծ ու անբարոյ ընկու կերպը. « Զգիթային տեղ սիրէ (Դեղձենին), և սակաւ լիւծ ուզէ.. Եւ իւր կուտն » այսպէս ցանուի. որ ի Դեղձէն սակաւ մի ի վերայ կըտին թողուս. և թէ ներքեւ Դեղձենույն և ինձորենույն կարմիր Վարդենիք տնկեն, նա Դեղձն և խընձորն կարմիր լինի.. Որ զինքն ի Դամոնի կամ ի Կլենի պատուուտէ՝ նա խիտա աղէկ է, և մնացական լինի ծառն և անոյշ պտուղն. և փորձած է որ երբ պտուղ ունենայ՝ նա ի կըտին տեղն Դամոն ընծայի, և ի գրուցէ Դեղձ. Եւ թէ ուզես որ Դեղձն ի յիւր ծառն առանց կըտի լինի, դու առ ի յամուր փայտէ և սրեա երթի և ի բունն զարկ, որ զորտուկն ճեղքէ և հանէ, և զերթն ի տեղն թող, և հողով աղբախաւն ծածկեա և թող. նա Դեղձն անկուտ լինի »: — Թուի թէ այս վնասին համար մեղադրուած է Դեղձն ի Սերկեւիլէ (ի ծձ Առակի Միս. Գոչի,) երբ ինքն զսա կու յանգիմանէր, թէ « Դեղին ես տեսեամբ » և դժուարութեամբ մարդկան. իսկ ես բարետեսիլ և դիւրաճաշակ. և նա ասէ. » Կիդժուար ես ամենեւին և պատրիշ մարդկան, քաղցր երեւիս ի ճաշակել, և մտեալ յորովայն՝ բազում քնտաս զարծես. իսկ ես դեղին եմ, զի ցաւակցեմ հիւանդաց՝ ի տես երթալով և զհիւանդութիւն բաւանալով, և ոչ որպէս դու » հալածեալ ի հիւանդաց »:

Վերը յիշուեցաւ կուտէն բաժնուող լաւ Դեղձն, չբաժնուողն՝ ի մեր գաւառականաց՝ Լօզ կամ Լօզ կոչուի:

581. Դեղձնիկ.

Աժմ. կամարկապցի գրէ. « Տրտրանա՛մ որ է Դեղձնիկ, որ է խարսիռոց »: Լաւ եւս էր Դեղձնիկի տեղ Դաղձնիկ գրել, որ է Դաղձն. իսկ Ֆութանա՛ճ՝ Մթթրին է:

582. Դեղնախունկ. — Տես վարս:

583. Դեղուկ խոտ.

Ըստ բժշկարանի Ասարայ, « խոտ մի կայ Դեղուկ ասեն, որ Տրանգք Դիքամ կ'ասեն »: ուրեմն է Լ. Dictamus, Փ. Dictame, որ կոչուի առ մեզ և Ողկոզակ և խանքեփար: Բժշկարան մ'այլ այս խոտը կ'անուանէ Թ. Մանդրոք օրոտ:

584. Դեղու-տակ.

Բժշկարան, մի գրէ « Դեղուտակի կեղեւ, որ է Ղաշֆեր »: մեր լեզուով ուրիշ համանիշ անուններ ալ ունի. տես Երեսնակ:

Դերեփուկ. Տես Տերեփուկ:

585. Դելի Մուշկ. Դիւամուշկ.

Այսպէս կոչուած է տեղ մի Ալլաւնարօտը. տես զայս: Բժշկարան մ'այլ օրտի ցաւի դեղ գրէ Թրիսքը Դիւամշկի հետ խառնած:


586. Դելու Եղունգ.

Արարերէն ալ Մարար ըլ-տիս. այսչափ միայն յիշուի ի հաւաքման բառից:

587. Դելու Չար.

Չարխոտն է, որ այլեւայլ անուններ ալ ունի:

588-9 Դժնիկ.

Անուանն համեմատ դժնդակ փշոտ Թուփ, Լ. Rhamnus. Փ. Nerprun. Ար. Անաճ , որ ըստ Ամիրտ. « յՈւլէխին (Մարեհնի) ցեղերուն է. ծառ-մն » է որ փուշ ունի. և լաւն այն է որ կանանշ լինի, և հոտն զէտ խնձորի հոտ » լինի... և Թէ ուտես (իր պտուղներէն՝ որ մանր ու սեւ են) ազգի ազգի ջեր- » մերուն զչարութիւնն խափանէ... Մուսի գիշիեան ալ ասեն. և ինքն անվար » վայրի տեղեր լինի. ազէկն անմարդարնակ տեղեր լինի.. Եւ Թէ զինքն ծեծեն և » զլուրն առնուն եօթն օր՝ յամէն օր աչքն կաթեցընեն, զըսպիտակն յաչիցն տանի, » եւայլն: — Դժնիկ ծառին նմանութիւնն ուրիշ փշոտ բայց պաղատու ծառի մի

հետ՝ կու յայտնէ (ՅԸ) առական Միս. Գոշի. « Յանմտից որ եհար զՅունասի՝
» կարծելով զնա Դժնիկ. որոյ զայրացեալ տասաց. Ո՛յ անագորոյն, զտունկ՝ ի
» պտղոյ արժան է ճանաչել, և ոչ ի տեսակէ »: Այսպիսի առակ մ'այլ հազա-
րաւոր տարիներով առաջ Երրայեցեաց նահապետաց մէկն ըսած էր, անզգամ
իշխանները նմանցընելով Դժնիկի, որք պաշտպանել խոտտանան հպատակները,
յետոյ իբրեւ բռնկած Դժնիկ կ'այրեն միկեն զանոնք: (Դատաւ. Թ. 13): Եր-
բեմն իբրեւ հոմանիշ կամ աւելի բացատրիչ կ'ըսուի

Դժնիկ Փուշ կամ Դժնոց Փուշ. Որոյ համար Նարեկացեայ (ԿՔ) ազօթից
մեկնիչն գրէ. « Դժնիկ փշոյն ծայրն կեռ է »: — Դժնիկի այլեւայլ տեսակներէն
յիշուին R. Pallasii ի Բարբերդ, Թ-Հ. Ատրպատական. — R. Petiolaris ի Թ.
Հ. Պոկլան, Կեսարիա. — R. Microcarpa, ի Մանսիս, Թ. Հ — R. Cathartica ի
Հր. Կովկաս. — R. Pontica, ի Ճիմիլ Լ.

Դիզան. Տես Դեզան.

590. Դիր.

Ապիտակ և մեծ հատիկներով Յորեն: — Բառհաւաք մի նշանակած է և Դիրդ.
որ տարբեր և անժանօթ թոյս գուշակուի:

591. *Դիֆլա.

Արարերէն Էլձձ ի յունէն առնուած, որ Թերեւս հին Բժշկարանին աւելի
հայակերպ Տիֆա կոչածն է: Ըստ Ամիրոս. « Ինքն երկու ցեղ է. մէկն լեռան և
» մէկն Լրեզերի լինի. և լաւն այն է որ կանաչ լինի և Թաժա: Տար և չոր է
» և հալող է... Թէ զտերեւն քացխով եփես և զլուրն ի տունն ցանես, զօրիչն
» և զլուն սպանանէ... Ասած է, Թէ այս խոտի՝ Սանճ ըլ-հիմար (իշու թոյն
» կամ գեղ) կ'ասեն, և Պ. Խար զանրա կ'ասեն. և լաւն կանանչն է, և տերեւն
» խիստ լեղի, և ծաղիկն կարմիր վարդ կու նմանի. և պտուղն պինտ լինի »:
— Թէ և խոտ կ'անուանէ Ամիրտովաթ՝ բայց Դիֆլան ծառ է, Լ. Nerium. Փ.
Oléandre կամ Laurier-rose. հոտաւէտ տեսակն այլ Ol. Odorant. Թ. Չրգրմ.
բջճ). — Տերեւոց և ծաղիկն նմանութիւնները մէկ տեղ առնելով՝ նոր գրիչք մեր
Դափնեփարդ կամ Վարդասարդ անուաներ էին, այլ լաւագոյն և սեփական հայե-
րէն անունն է Ճիֆի. տես զայս:

592. Դկուղ.

Ոսպան և Սիսուան հետ կու յիշուի Լուսաւորչի վարդապետութեան մէջ՝ իր
պատմութիւն (Ագաթանգեղոս). յայտ է որ անոնց նման ընդեզէն մ'է, գուցէ Լա-
վիաս, որ մեր առջի գարերու գրականութեան մէջ չի յիշուիր, և կամ մանաւանդ
անոր փոքր ուղգակիցն, որ ռամկարար Սեւ պորտիկ կաշուի կամ Պոլոմիկ, Թ.

Պէտրիւն. Լ. *Dolichos melanophthalmus*, Փ. *Dolie կամ Dolique á oeil noir*.
Իս. *Fagiuolo ad oocchio կամ oochiato*. ամենն ալ հատին մէջտեղի կամ փո-
րին վրայի նիւր աչքի նմանցընելով, ինչպէս՝ մերոնք պորտի. անոնց տուած անունն
յունարէնէ առնուած է, *Δολιχός*, որ երկայնաձեւ նշանակէ, բուսոյ ցողունն շատ
երկընեալուն համար:

893. Դմակ Թուծ.

Տեսակ մի սպիտակ և մեծ Թուծ պտուղն է:

894. Դմակուկ.

Փոքր բոյս մի, քիչ երկայն տափակ կոթով զոյգ տերեւօք, որոց միջէն աւելի
երկայն բարակ որձայ բարձրանայ, ի ծայրն երեք (զուցէ և աւելի) բաժակաձեւ
Թանձր կապոյտ ծաղկընէր կ'ըլլան:

895. Դոկո ?

« *Մշկի ծաղիկ*, որ է *Սօք* »: Այսպէս գրուի ի բառս Գալիենոսի: Կամար-
կապոյնն Դատկոյ կարգայ:

896. Դոճ. Դոչ.

Այն ծառն է որոյ վրայ ճնիներու ներգործութեամբ կու գոյանայ *Լայքա*,
Lacca ըստ Եւրոպացւոց, *Լաք*, *Լոք* կամ *Լեօք*. Թ. և Ար. Ս. Ամիրա. կ'ըսէ.
« *Լոք*, որ է *Դոճին խեժն*. լուսն այն է որ կարմիր և յստակ լինի. . Պտ. ասէ
» *Թէ ինքն խէժ է որ ի ծովուն դիչէն կու գայ*. և ասեր է գրոցոյ շինողն, *Թէ*
» *Պ. Բասնկի լաք կ'ասեն*, և *Բասնկի լաքա այլ կ'ասեն*. և իրմէն գուն շինեն,
» որ կանայքն զերեսնին կու ներկեն. և այն որ *Թանձրն է՝ ի յատակն կ'իջնու*,
» այնոր *Տօշ կ'ասեն*. և *Լուքն պիտի որ լուացած լինի* ». լուանալուն կերպն
այլ գրէ երկար, ըստ Իպն *Ճէզզարայ* (1) յորմէ ասեր է *Պէյթար*: *Հիներն կար-*
ծէին որ ի Հնդկաց կու գայ այս նիւթս, հիմոյ ստուգուած է ոյլեւայլ ծառոց և
մանաւանդ *Թղենեաց ցեղին վրայ գոյանալն՝ Որդան կարմրոյ նման որդերէ*:
Նշանաւոր և քննելու արժանի է Դոճ բառին կամ ծառին բուն նշանակութիւնը.
որ նոյն *Թուի և Դոչ*, զոր *Բժշկարան մի զուգանիչ դնէ Մուկիի*. տես զայս:

897. Դոշտ կամ Թէօշտ.

Ուտելի բանջարեղէն մ'է. Թ. Թաւարա կոչուած, Թերեւս Պոնտոսի կողմերու
յատուկ, ուսկից որ ծանուցուած է մեզ:

1. Ափրիկեցի բազմամուս բժիշկ մ'է Ժ դարու, ի Խէյրուան. շատ ըջկական գրքերէ զաս՝
Մուրիտանիոյ տիրող Մաւոի տունին պատմութիւնն այլ դրած է:

508. ԴՈՒԱՂԼԿ .

Այս ալ երկայնաձեւ բանջերեղէն մ'է . տեսակն անծանօթ ինձ . այսոր ա- նուան նման է և հինն

509. ԴՈՒԱՂԱԿ

Խորենացոյ Աշխարհագրութեան մէջ յիշուած , Հնդկային բուսոց կարգում :

600. ԴՈՒՂՄԱԿ .

Տեսակ մի է Սեխի , կակուղ և անոյշ :

601. ԴՈՒԿՈՒ .

Վայրի Ստեպղին է ըստ բառագրոց Ամիրտուլվաթայ . անունն նման վերոյգրեալ Դոկոյ , բայց տարբեր բան ժանուցուած :

602. ԴՈՒՆ . ԴՈՒՆՈՅ ՌԱՄԻԿ .

Ոմանք կարծեր են Լուրիա , բայց բժշկական բուսոց բառակարգն գրէ իբր հո- մանիշ կիպեսիսի : Ամիրտուլվաթ յիշէ Սառտ կամ Սառտ բառով . Ծրա , « որ » է կիպեսիսն , որ է Թ . բառով Թօփաշախն . ինքն խոտի տակ է և անուշահոտ » է , և լաւն այն է որ Քոֆի լինի և Հնտի և Մորի լինի և Պարսի . և ի Հոռո- » մոց երկիրն այլ կու լինի . . . զմոռացկոտութիւնն կու տանի , և զքթին հոտն . » աղէկ կու առնէ և զբերնին այլ . և զպուխուրն կու կտրէ . և զգինուն և զՍո- » խին և զՍխտորին հոտն կու տանի , և զլեզուին Թուլութիւնն կու տանի . . . Տեղ » մի այլ կայ որ զէտ Չանճապիլ է , յերկան է , և մէջ տեղն բարակ է , որ Հո- » առմն Մակրոս կիպեսիս ասէ » : — Լ . Cyperus rotundus . Փ . Souchet odo- rant . — Մէկ տեսակն ուտելի կ'ըսուի C . Esculentus , Փ . S . Comestible Ար- կոչուի Հայ ըլ-գեղիւմ *حب* , որ ըստ Ամիրտ . « ինքն տափակ հատիկներ » է , և եղլի է . և ի վերայ զէտ գիր կայ . և ինքն ի Շամխու երկիրն շատ կու » լինի . լաւ այն է որ նոր կու լինի » . և դեղի համար գործածուի :

603. ԴՈՒԻՆՏ .

Բժշկարան մի ի նուտիայ դեղոց պատուիրէ խառնել չորս տրամ այս նիւթէս , որ Թուրինջէն տարբեր կ'երեւի :

604. ԴՐԱՄԱՆԻ ?

Սերմն Santonicum լեզուահամ բուսոյ , ըստ Պ . Քալանթարեան :

Դրունաջ կամ Դարունաջ . — Տես Խոսակ :

605-6. Դօլ և Դօլխոտ.

Իբրեւ իրարմէ տարբեր բոյս գրէ բառհաւաք մի. առաջինն՝ եթէ չէ Տոյ Դդումն, զոր տես ի կարգին, երկրորդին պէս անծանօթ է ինձ:

607. *Եապրուռ.

Ար. անուն բուսոյ, զոր յիչէ Ամիրտուլվաթ. տես Մանրագոր և Հալոր:

608. Եզախրուկ.

Եզան անուամբ բարդեալ կամ յարմարեալ բուսոց՝ այս առաջինն՝ ի գրոց չէ, այլ ի լրոյ. տեսակ մի է Սեւախրոյ կոչուածին, երկայն տերեւներով. լաւ կանաչ և անուշահամ բանջարեղէն: Ի Խրոսի բառէն զանազանեալ յիշուին բոյսեր. ինչպէս և Սյախոսի Խրոսի: Հին գրոց մէջ Խրուկն ներկատու խէժ մի նշանակէ, **Փ. Cinabre.**

609. Եզան ագի.

Ար և Պախրու ագի. ուրիշ անուններ այլ ունի, որոց ամենէն զուտ հայկականն համարի Խուրնդատ. արարերէն այլ պէսպէս կոչուի, հաւանօրէն նոյն ազգ բուսոյ զանազան տեսակները նշանակելով. Թ. այլ պարզապէս Եզան ագի կոչեն, Սղրո դոչրոչի. **Լ. Verbascum, և Phlomis. Փ. Moldne.**

— Ամիրտուլվաթ կու ստորագրէ **Պ. Մանի** զանրէ **عجوة** անուամբ, կամ Մանի զանրաձ, որ ձկան թոյն նշանակէ, ինչպէս հայերէն ալ կոչուած է Չկան մահարար. « Ինքն խոտի տակ է, կ'ըսէ, (որոյ) Եզան ագի ասեն, և կեղեւն ի » բան կու գայ. աղէկն հաստ-կեղեւնին է ». զարձեալ գրէ. « մեծ Յասայի ապին » տակն է, և ինքն է ի յԵրողներուն (ցեղէն).. Ասէ Պտ. Թէ իր պատմութիւնն » Սամի սամաքն է, որ Թարգմանի Ձկան սպանօղ. և ինքն տակ է, և կեղեւ է. » և իր բոյսն նման է Երպրիմին բոյսին, և այլ երկայն. և գոյնն հողին գունովն » է, որ ի դեղնութիւն կու քլտէ, և մօտիկ է: Եւ ասացել է գրեցս չինողն. Թէ » այս խոտի երկայնութիւնն մէկ կանգուն ու կէս է, և այլ երկայն, և լինի որ » այլ կարճ կու լինի. և ծաղիկն դեղին է և անուշահոտ է. և ծաղիկն մէջն » կարմրագոյն է, և տերեւն մթնագոյն է: Եւ Մինհաճին տէրն ասէ, Թէ տակն » մէկ է և ճղեր ունի:.. Թէ զհունտն ի ջուրն ցանես՝ ձկներուն փորն ի վեր » գայ:.. Եւ այս խոտս երեք ցեղ է. երկու ցեղն լեռան է և մէկն վայրի է. և » այն որ լեռան է՝ ուժով է ասեն, և Չոչրոս ասեն. և այն որ վայրի է՝ ասացած » է Թէ Մանի զահրայ և Մանիզահրաձ է ». — Յատկապէս այս պարսիկ բառով կոչուած Վայրի Խուրնդատն՝ կոչուի **Լ. Menispermum Cocculus**, որ **Յ.** նշանակէ մահկաձեւ (լուսնաձեւ), հունտին ձեւին համար: — Ար. յատուկ անուն Խուրնդատի է Պոչսիոյ **عجوة** կամ Պոչսիոս. զայս այլ առանձին յիչէ Ամիրտ. « Ինքն Պախրոս ագիէն է. Թէ Էզ և Որձ կու լինի. և էգին տերեւն ի » Քալամին (Կաղամբ) տերեւն կու նրմանի, և որձին բարկուկ և յերկանկուկ

» լինի . երկուսն այլ ի դուրս տեղե: և ի լերունքն կու բուսնի , և ի քարոս
» տեղեր կու բուսնի : . . Թէ զտերեւն ի Թղին մէջն դնես՝ որդն չի ընկնի և
» ցեցն չի ուտէ , և Թուզն առողջ կենայ » : — Ուրիշ անուն մ'այլ յիշէ Պէյթար ,
յորմէ և Ամիրտ . Սիգրաս ըլ - Հուք որ ձկանց վերոյիշեալ ջրին երեսն ելնելն
և սատկիլը նշանակէ :

610. Եզան ականջ . Եզի ականջ .

Թէ Պէյթար և Թէ Ամիրտ . զայս սոսկ Ար . Լիսան **عساف** անուանեն , որ
Լեզու նշանակէ . բայց « Թուրքն Պախտոշ ականջ կ'ասէ . և ինքն ի գետինն կու
» ճապդի , և կու բուսնի , և Եզնալեզու կ'ասեն խոտ մի կայ՝ ի յայն կու նմանի .
» բայց հոտն նման է Խիարի հոտին . և ի միջէն մէկ կանգուն որձայ կ'ելանէ ,
» և ի գազաթն ծաղիկ կ'ունենայ : Եւ Թէ ծաղկովն եփես և ուտես , օգտէ խա-
» ֆաղանին (Սրտի տրփալուն) և ստամաքին տաքութեան . և այն շտերն որ ի
» բերնին մէջն լինի և զցաւն այլ տանի . և Թէ ի լեզուին վրայ զէտ նուան հատ բուշտ
» լինի՝ օգտէ » : Լ . *Echium Plantagineum* . Յիշուած է ի Պոնտոս և ի Թ - Հ :

611. Եզան ճակատ .

Որ և կովու ճակտիկ . աղցանով ուտելի բանջարեղէն մ'է :

612. Եզան շուռկ .

Խոտեղէն բոյս մի , մանրիկ կարմիր պտուղներով , մորենայ նման ուտելի : Այս-
պէս կ'ըսուի ի կողմանս Սերաստիայ , բայց Թուի Թէ պէտք էր ըսել

613. Եզնացուռկ .

Չոր յիշէ Շէհրիմանեանն , որ՝ կամ որոյ Թարգմանութիւն է Լ . *Antirrhinum* , ի
յունականէն , և ըսել է Յըռկի (քըթի) նման . Փ . այլ նոյն իմաստով *Muffier* , Թ .
Տանապուռնու . Ար . **الحب** կամ ըստ Ամիրտ . « Անֆահ ըլ-
» յօձրլ , որ Թ . Հորթոշ քիթ ասէ , այնոր համար որ միրզն հորթու քիթ կու նը-
» մանի : Եւ Թէ զայս խոտս եռցընես և զջուրն խմես , օգտէ ամենայն մահացու
» դեղոց . և Թէ Սուսամի դեղով խառնես և յերեսն օծես , ով տեսնու՝ ընդունի
» զինքն սիրով ! »

614. Եզնալեզու . Եզան լեզու .

Ի Թորթին ցեղերուն է , կ'ըսէ Բժշկարան մի , (տես զայն) . բայց Ամիրտ . ուրիշ
ոչ հեռու ցեղի կամ ազգի վերաբերէ . « Լիսանի Սիկի (կամ Լիսանի բոյր (Յու-
» լեզու) , որ է Եզնալեզուն , և լաւն այն է որ տերեւն Թանձր լինի : Պտ . ասէ
» Թէ Պ . Կալզուպան կ'ասեն . և ասած է Թէ ինքն ի Մարվին (Մուրդի) ցե-
» դերուն է . և լաւն այն է որ Շամի և կամ Խորասանի լինի . և տերեւն Թանձր
» լինի , և ի վերայ տերեւին ծին ծին լինի » : — Լ . *Buglossus* . Փ . *Buglosse* . որ

ի յունարէնէ առած՝ նոյնպէս Եղան լեզու նշանակեն: — Սիմ. Կամարկապին՝ փոխանակ Քորթի կամ Մարվի՝ Օլինտրի նմանցընէ այս բոյսս: — Ք. յատուկ Եղան լեզուն կոչուի Սղրբ տիլի:

615. Եզնախեղղ. Եզնիճ.

Ռոջեանն կ'ըսէ, « Խօտ, որ կերեալ յեզանց՝ զկոկորզն նեղէ և սպանանէ. » Լ. Baplonom. » Յայտ է թէ յունարէն բառի կամ անուան թարգմանութիւն է, բայց այդպիսի բուսարանական անուն կարծեմ չի լսուիր հիմայ: Բառագրքի մի մէջ գրուած է, « Եզնիճն՝ է մահ արջառոց »:

616. Եզնախոռն. կամ Եզնախոտ.

Ե. սկզբան Բուսարանիցս ծանուցինք՝ որ սա աամկորէն կոչի Արեղախոտ (Թիւ 3) և Բժշկարանաց մէջ Աստախոտու, որ է Յ. Σπορχαε, և Լ. Stoechas բառէն ծեքած. ինչպէս որ գրած է և Պէյթար Եթոփօրեալ. բառին իմաստն այլ է ըստ Ամիրտ. Հոգի ընող, իսկ ըստ Պէյթարայ Հոգինեբը բռնող կամ կեցընող (Մուգաֆ էրբոսի). « Ք. Ղարապաշտո ասեն. ինքն ծաղիկ-մն է որ սերտ տե- » ռենի ունի, և կարմաժեռ ծաղիկ ունի. և լաւն այն է որ կարմրագուն լինի. « ըսած է թէ Աստուխոտոս ասելն՝ թարգմանի Հոգի ընող. ասէ Պտ. թէ ինքն » զհոգին կու յեմեցընէ (կ'ուշացընէ)... Եւ այս ի յայն կղզին լինի՝ որ Սատ- » հատիս ասեն ». (ըստ Պէյթարայ՝ Ստեխատէս՝ կղզիք Գաղատիոյ, այսինքն » Գաղղիոյ), և իր Շահասֆրատի տունի ասեն. և լաւն այն է որ կանանչ լինայ, » և համն լեղի լինի »: — Բոյսս յատկապէս կ'ըսուի Լ. Lavandula Stoechas. Փ. Lavande St. — Մեր կողմերում բուսաբնինք նշանակած են զայս յԵրեւան, Ար- » դաբն, Արտահան. Համէն: — Հին Բժշկարանն և Միխթար Հերացի յու- » նական արարացեալ անուամբ Աստախոտու կոչեն, առաջինն վկայէ, թէ Անտաք (Անտիոք) լինի, յայտ է թէ լաւն:

617. Եզնածաղիկ.

Քուրի թէ Դեղին Եզնակն է. միայն Սալաձորցի երգիչէն յիշուած և բացա- » արուած գտնեմ.

« Եզնծաղիկն է խիտ դեղին, գունն է դունով քան զծիրանուն. »
Անջրդի տեղն կու բուսնի, զուարճանայ ամուսն ջերուն »:

618. Եզնակն. Եզին աջք.

Այս ալ յունարէնէ թարգմանուած է ամեն լեզուաց մէջ. Լ. Buphthalmom, Փ. Buphthalmo. Ար. « Պանար ըր-տանար, (ինչպէս գրէ Ամիրտ.) որ Եզի աջք » կ'ասեն խոտ մի կայ. և այն որ ծաղիկն գեղին է՝ ազգ մի այլ է այն: Եւ թէ » մոմով և եղով սպեղանի առնեն և դնեն ի վերայ պինտ ուռեցնուն՝ օգտէ, » և պալլամի ուռէցին.. և թէ զծաղիկն ժողկեն և չորցընեն և ի յաչից դեղերն

» խառնեն, զաչաց մթանալն տանի, և զաչից լափախնին աստառն ուժովցընէ,
 » և ջուր իջնուլն խափանէ, և զճերմակն տանի »: — Պէլթար միայն Պեհար
 յԼգջ կոչէ, Պ. այլ գրէ կիտոս իհըմ րանջ, Կ, որ կովու աչք ըսել է. ուրիշ անուն-
 ներ այլ չիլէ. — Ամիրտովաթի Եզան աչքն և Ազարիոն իրարու հետ շփոթելը կամ
 նոյն համարիլը յիշած եմք այդ ետքի անուամբ (Թիւ 13). որ և Թուի Լ. Ta-
 nacetum, Փ. Tanaïsie կոչածն: — Կամարկապցին համառօտ կ'ըսէ Եզան աչքին
 համար. « Ինքն տերեւ (խոտ) է, երեք ազգ է, ծաղիկն կապուտ, տերեւն փշատ »:
 — Բժշկական բառգիրք մ'այլ, « Արհասան' որ է Օրոսզ կեօզէ », (Եզնակն):

619. Եզնակն.

Այսպէս կոչի նաեւ տեսակ մի Խաղողոյ:

620. Եզնիճ. — Տես Եզնախեղդ:

621. Եզրեղի.

Յատուկ հայերէն անուն երեւի Դափնի ծառոյ, որ հասարակօրէն ընդունուած
 է մեր լեզուի մէջ, գտնէ լաւ և պտղաբեր տեսակն. Բժշկարանք և Անգիտաց ան-
 պէտն գրեն, « Եզրեղոյ պտուղ, որ է Հապ ըլ-Ղարն, որ է Տափնին »: Կամ,
 « Եզրեղոյ պտուղն' որ է Տափնոյ պտուղն »: Տես Դափնի և Կապա:

622. Իզրկան ծաղիկ.

Բժշկարան մի գրէ « Դեղ աչաց. Ա՛ռ զԵզրկան ծաղիկն, Դդմի ծաղիկ, միա-
 » լար (հաւասար) Գինձ ընդ իրար, չորցու և մանր ազա, բեր Ազրխ իրար
 » խառնէ, չորցու, և կրկին մանդր ազա, և ի շարէն անցու աչաց դեղ է »:
 Փափագելի է որ այդ վայելուչ և հարազատ հայանուն ծաղիկան որպիսութիւնն
 յայտնուէր. մանաւանդ որ կարելի է Ձ գրին տեղ Ղ կարգալ և Եզրիկ կոչել:

623. *Ելեմուհ.

Շատ անգամ յիշուած արարացի բառ է ի Բժշկարանս. տես Ափարիոն:

124-25. Ելակ. Ելակ Մորէ.

Ծանօթ, հաճելի, գեղեցիկ, այլ և տարօրինակ պտուղ մի. որովհետեւ ուտելին՝
 բուն պտղոց պարունակող կամ պահող մասն է, իսկ պտուղքն՝ վրան և մէջն
 երեւցող մանր մանր կէտերն են: Թէ մշակութեամբ յառաջ գայ, և Թէ ինքնա-
 յոյս անտառաց մարմանդներու մէջ, անցորդաց և մանաւանդ տղայոց քմաց անուշիչ:
 Չեւով մեծութեամբ՝ շատ տարբեր տեսակներ կ'ըլլան, և զանազանին անուամբ
 ի բուսաբանից. հասարակ անունն է Լ. Fragaria, Փ. Fraisier.
 Թ. Չիլիկ կամ Յրատոչա. ըստ իտալ. Fragola. — Մեր լեզուաւ ինձ ծանօթ ա.

նազանութեան տեսակք են Ելիակ-մորի, Fr. Sylvestris, ֆ. Fr. des bois. — Ելիակ
փրայիկ, զոր յիշէ Ռոշքեանն ի Բառադիրոն: — Հասարակ անուն մ'այլ է Խոն-
րաշկ, զոր ասես:

Եկքան. — Տես Ակրան:

626. Եղածաղիկ.

Տեսակ մի Խառածաղիկի, Լ. Ranunculus Lingua & R. Flammula. ֆ. La Douve
(grande et petite).

627. Եղակոմ.

Հասունցած Յորեն, կամ տեսակ Յորենոյ, ըստ Մշեցւոց:

628. *Եղամա.

Յովրայ գրոց մեկնութեան մէջ կ'ըսուի. « Բանջարն՝ զոր յիշէ Յովր՝ Գե-
» ղիոն, որ Եղամա ասեն »: — Պայիենոսի բառից մէջ գրուած է կերփոն, որոյ
հայերէն յատուկ անուն ալ գրուի ֆարփոն կամ ֆարփեղ: Յունարէն Եղիմա
Ἐλιμος տեսակ մի է կորեկի:

629. Եղափիլունց. — Տես Փիլունց:

630. Եղապրասպան.

« Որ է Սալպան » (Սալլապ), գրեն Բժշկարանք. իսկ սա տեսանք որ Աղուե-
սուձուք կոչուածն է (Թ. 63). Ար. ֆարբլի-ափիէ خالو لالو), և այսպէս կո-
չուելուն պատճառ՝ այն է կ'ըսեն հին գիտունք, որ երբ նոր արմատ կամ ձու
մի բուսնի՝ առջիններէն մէկն կու չորնայ:

631. *Եղերորոս.

Elleborus. Այս Բ. և Լ. անուամբ շատ հեղ յիշուածը՝ սեռ ի կոճ վրացի:

632. Իղենի.

Իղին պատճառաւ այսպէս կոչուած է Չիբենին ի գիրս Վաստակոց (զլ. Մշո,
և ի հետեւեալքն):

633. Եղեղնակ կամ Եղեղնակ.

Սխամամբ երկու անուն գրէ Աթանասեան (եր. 86), և Հարճտուկի նման
կ'ըսէ, միայն տերեւներուն մեծութեամբ կու զանազանին, « որոնց գրսի կողմից
« ընկած ջիւերը՝ պարզ երեւում են ձգուած թելերի նման ». և թէ, դալարն ա-
խորժելի ուտելիք է ոչխարաց, չորցածն՝ անպիտան:

634. Եղեսպակ.

Այսպէս հայացուցեր են յունարէն Եղեսպակը *Έλελ σφαρον* անունը, զոր Ա-միրտ. գրէ Ալիսֆադին. և է Լ. *Salvia*. Տրապիզոնեցիք Մեդրքեր կ'անուանեն, զոր մենք այլ ընդունելով՝ այնոր կարգին բացատրենք:

635. Եղերդ. Եղերդակ. Եղերդակն. Հիւղերդակ.

Այսպէս զանազան կերպով գրուած կամ այսպէս է այս անունս. իսկ բոյն զանազան անուններ եւս ունի մեր լեզուաւ. Ինչպէս, Դասնիձ, զոր յիշ-ցինք (Թ/ւ 584), Էդիգ, Ճարձատուկ. Թերեւս քիչ մի զանազանութիւն ունենան մէկմէկէ, ինչպէս նաեւ Կայծխոտ և Հնդիպէ (տես զայս), զոր նորերս զանա-զանեն, այլ մեր Բժշկարանք երբեմն խառն գրեն, իբրեւ նոյն ազգ բոյս, մէկն ընտանի (Եղերդն), միւսն Վայրի (Հնդիպէն). յետին անուամբ կոչի և Լ. *Endivia*-իսկ Եղերդն՝ *Cichorium*. Փ. *Chicorée*. Լսենք մեր Սմասիսցւոյն. « Հնդուպէ, որ » է Վայրի Հագարն, և Հ. Եղրդակ ասեն, և Անտիդեա այլ ասէ, և Պ. Քասնի » կ'ասէ. և լաւն է այն որ ածուոց լինի »: Դարձեալ առանձին կամ կրկին գրելով կ'ըսէ. « Կապուտ ծաղիկ » ունի. աղէկն ի պաղչան լինի. . . Սոցել է Սահակ » բժիշկն, Թէ ինքն ազգ-մի է ի Քասնուն»: Ուրիշ Բժշ-կարան մի գրէ. « Քասնին որ է Եղերդականն, որ Ա- » յայն Հնդուպէ ասէ. մէկն ասնոյ է և մէկն վայրի. » և այն որ վայրի է՝ Տարչադուի ասեն »: Դարձեալ. « Աւէ Պատէհին, Թէ Հո. Սադիխ կ'ասեն (*Salvia*), » և Մեհռնիդուն? և իր տերեւն տափակ է. և այն որ » ածուոց է՝ Անտիդեա (*Endivia*) կ'ասեն. և ինքն եր- » կու ցեղ է. մէկ ցեղին տերեւն տափակ է որպէս Հա- » զար, և ցեղ մի այլ կայ՝ որ տերեւն բարակ է և համն » լեղի է. և լաւն այն է որ ածուոց լինի, քաղցր լինի. » և լաւն այն է որ Շանցի, *شاذ* լինի, այնոր Անդու- » նիս (*Անդուպիս* *انبطريه*) ասեն. . . ինքն ի յաղէկ » Քասնիներուն է. Սասեհն (1) ասէ, Թէ ասոր բնու- » Թիւնն Քասնուն և Հազրուն մէջն է. և Տապարին (2) » ասէ, Թէ քան զՀազարն նուրբ է, և քիչ կիրակրէ զանձն. և Թէ զտերեւն » ծեծես և ուռեցին վերայ դնես՝ որ կակուղ է, բանայ և հովցընէ, և իր լուրն. . » և տակն և հունտն ուժով է. և կեղեւն ի բան կու մտնէ »: Բժշկութեան մէջ շատ Եղրդակի պէտպէս մասամբ՝ տեսակ օգուտներն այլ յիշէ առանձինն կամ ու-րիշ գեղոց հետ զուգած: — Ուրիշ անուն կամ տեսակ մ'այլ յիշէ մեր հեղինակն.



Եղերդ.

1. Անու Սահ Սասե Վրկանցի (Էլ Ճորանի) անուանեալ քրիստոնեայ բժիշկ մի է Ժ դարու երկրորդ կիսուն, որոյ աշակերտած է Լուչիակուրի Էպու Սինա:
 2. Անծանօթ է ինչ իբր բժիշկ. իբր պատմիչ հանրածանօթ է այս անուամբ (Տապար-ստանցի) հեղինակն Թ. դարու:

» Եւ Քասեհ վայրի կայ՝ որ այնոր Խանդարեկի կ'աւան » . (տես զայս) : Աւելի հետաքրքրական և արտառոց անուններ յիշե ուրիշ Բժշկարան մի . « Հնտիպա-Եղըր » դակն . Հնտիպա չորս ազգ է . մէկն Չրլիան է . մէկին Ջէյթունցիք Ղազտաւ » պոստս կ'անեն . մէկն Քասեհն է , մէկն Մատուշն է » (Հազարն) :

Վերը յիշեցինք , որ Եղրդակին մէկ անունն այլ է Եղեգ . այս անուամբ յիշի թ Ս . Գիրս , երբ Եգիպտոսէն ելնող Հրէից պատուիրէր Մովսէս՝ ուտել Բաղարջ Եղեգով (Ելք , ԺԲ , 8) . մեր հին Բժշկարանն այլ պատուիրէ հիւանդին , « Հետ » հացին Հազար և Հնդպէ թող ուտէ » . և ուրիշ տեղ մ'այլ իմացընէ՝ թէ « Ե » զէգ՝ որ է Հնտիպէ , կայ յինքն լեղութիւն ու փոյթտութիւն (փոթոթ) . և լե » զութիւնն է շատ , և լեղութիւնն ամառն լինի . և երբ լեղութիւնն շատնայ » հովութիւնն պակսէ . այլ ձմեռն և զարուն հովութիւնն է շատ . և է ինքն հով » յառաջին տարածան , և չորի մէջն (միլակ) , և երբ չորնայ՝ պակաս տաքութիւն » լինի յինք . զերդի ճանպահն բանայ և զստամոզան սրէ : (կ'աւելցընէ մեր » թիւն կայ » — Վաստակոց զիբըն Եղերդը ուրիշ անուան մի հետ զուգէ . Կանկաւոր անուշ և անփուշ ընելու համար՝ հունտը այլեւայլ բուսոց չրոյ մէջ թրլոց դնել խրատէ , որոց մէկն այլ՝ « կամ ի յԵղրդոյն (Չուրը) , այսինքն ի » իշէֆն » : Բայց այս Եղերդա չէ Եղերդակն , այլ հարկ է թէ Եղրդուտ ծառն ըլլայ . ինչպէս տեսնենք իր կարգին : Լսենք հիմայ մեր երգիչ Սալամորեցոյն .

« Սինձ , Երիցուկն , ու Եղերդակն (!) կու սպասեն Արեւորդուն .
Նոցա երամն ուրիշ է , կու չրջին զօրն հետ արեւուն » ,

Նման Բարտի ծառոյ , որոյ յարեւ զառնալն և պաշտուիլն յԱրեւորդուց՝ յիշեցինք (Թիւ 323) :

636. Եղրդակ վայրի .

Վերը ըսուածէն կ'իմացուի ինչ ըլլալն . բայց որովհետեւ Բժշկարանք որոշելով կ'ըսեն « Եղերդակն վայրի՝ որ է Խանդարիտն » կամ Խանդարեկ , յիշենք այս անուան տակ այլ :

637. Եղրդան տակ .

Այս այլ առանձին յիշուի . Ասար պարզապէս վայրի Ճարձատաւին է , կ'ըսէ . որով կ'ըլլայ անմիկապէս աօկէ վերի գրուածն . ուրիշ մի զուգէ ընդ Տարչադուի կամ Տարչիտակ , որ նոյնպէս Եղրդակ կամ մէկ տեսակն է , և յիշենք զայն այլ ի կարգին :

638. Եղնդրական ծաղիկ .

Այսպէս յիշուած է աղաւաղ գրուած Բժշկարանի մի մէջ , որ Թերեւս ըլլայ

1. Սրուածմտեան և կոտտտեան իրենց օրինակին մէջ Եգեթ-է կամ Եգեթ-! զբեր կամ զտեր են , բայց ոչ ուղիղ :

639. Եղրդոյ ծաղիկ.

Ըստ հին Բժշկարանի այսպէս կոչուի և տարբեր նիւթ մի, այսինքն Եւրոպի քար, որոյ հետ յիշէ և Եփրատնաքար, կամ նոյն կամ նման, և այրելով դեղ պատրաստել խրատէ: Նոյն Բժշկարան յիշէ և

640. Եղրդոյ պտուղ.

Եւ ասոր զուգանիչ դնէ « Դարնի՛ կոկոն » . եթէ չէ շփոթուած ընդ Եզրեղոյ, որ Դափնի նշանակէ. տես Թիւ 631, կամ Թերեւս ըլլայ

641. Եղեւան.

Եթէ չէ Եզրեւան. հին Բժշկարանն կ'ըսէ. « Գիտացիր՝ որ Եղեւանին ջուրն » և Ուռոյն, Թորմըզին (և քանի մ'այլոց), այս ամենս մէկ զօրութիւն և գործ » ունի, (որ է) զճիճի հանել յանձնէ, զտափական ու զբոլորն » :

642. Եղեւին (1).

Այս ծանօթ անունս երկու տարբեր և աննման բոյս և բերք նշանակէ, մէկը յիշեցինք ի Գնտածաղիկն (Թիւ 501) որ շատ հեղ ի Բժշկարանս կոչուի Շէհ Թորքի, ինչպէս հին Բժշկարանն այլ գրէ . « Եղեւին՝ որ կոչի Թորքի Եղեւին » կամ Շէհ Թորքի, կամ Հաշիշ, յԱթթիմոն նման է » : Ամիրտ. կու նմանցընէ Օշընդրի, և համն լեղի (կ'ըսէ) . աղէկն ի Թուրքաց գայ . բայց ուրիշ Բժշկարան լաւը մեզնէ հեռու չի դներ, Շէհ անունն տակ նորէն գրելով . « Եէհ, որ » է Խորասանին . Թ . Եւաշան ասէ . լաւն այն է որ գեղին լինի, որ ի Հայոց » գայ . ասեր են Թէ, Պ . Տարսինան ասէ . և այնոր Տարսինայի Թորքի ասեն, և » Շէհի ձապալի ֆիլիոն . համն լեղի է . յոր տեղ որ օծեն՝ մազ կու բուսցընէ... » և ի յայլ գործ որ մտէ՝ Եէհն է, որ ի Հայաստանեայց երկրէն գայ » : Ուրիշ մ'այլ գրէ . « Եղեւին՝ Եէհ . ինքն նման է Օշընդրի, բայց չէ Օշինտր . զի լեղի է . » և ապա հունտն է Խորասանն . ի Հայոց գայ » : Պէյթար Շիհ կ'անուանէ և կ'աճի կ'ըսէ ի լերինս Տորսի, ի կապադովկիա, որք սահմանակիցք են Հայոց և ի Բուչիո Եզրիպտոսի : — Նարեկի լուծմանց գիրքն քիչ մ'եւել բացատրէ (ի Բանն ԳՍ) Թերեւս սուրբ վարդապետին ծառ կոչածը . « Տատանին տազնապաւ » տերեւը տնկոց Եղեւին ծառոց՝ շարժեալք ի հողմոց ուժգին բաղխելոց, հոսեալք » ի խոնարհ, » և Շէհ բոյսին հետ շիոթելով . « Եղեւին՝ ցախ է ծանծաղար, » մատ, այսինքն սաղ ? է տակն . Եղեւին ասի, յայգիսն բուսնի . աւելի կապեն » զինքն » (աւել, աւելու գործի) : Օշընդրի նմանութեանն համար ի բուսարաւնից յատկապէս կոչի Artemisia Absinthium . մէկ տեսակն այլ Ar. Maritima .

1. Այս կանուր ձայնով Յ . Έλατι կոչուի տեսակ մի նման ծառ (L. Abies Pinus), ի Սլաւոն լեզուս՝ էլբ կամ Եւ, իւլանտ . Ailm.

643. Եղեւին (Ծառ).

Երկրորդ կամ գլխաւոր նշանակութեամբ՝ վայրենի բարձր և ճիւղերն իրարմէ հեռու ծառ մի է Եղեւինն, հասարակաց ծանօթ, և շատ հեղ յիշուած ի Ս. Գիրս. և կարծեմ առաջին անգամ սրտածմբիկ և ողբերգական յիշատակաւ տառապեալ մօր մի (Սգարայ), և ծարուատանջ կիսամեռ որդւոյն՝ (Իսմայելի). որոյ մահը շտեւ նեւու համար՝ « Ընկէց զմտնուկն ի ներքոյ միոյ Եղեւին ծառոյ, և երթեալ նըս- » տաւ յանդիման նորա ի բացեայ, իրբեւ վտաւանաւ. զի ստէր, թէ՛ ոչ տեսից » զմահ որդւոյ ինոյ. և (սակայն) նստէր յանդիման նորա ». ուրիշ կերպ այլ չէր կըրնար ընել մայր մի. որոյ՝ և զսակին՝ գթալով Աստուած բոխեցուց կենարար շուրջ: Բայց ծառիս նկատմամբ հարկ է նա և յիշել, որ Ս. Գրոց բնագրին (ե. բրայերէն) յորմէ և լատին թարգմանութեան մէջ՝ նշանակուած չէ ծառին տեսակն, մեր թարգմանիչք ըստ Եթովպացից՝ Եղեւին ճանչցեր են: Ոսկիբերանի անուամբ Մենգոց Գրոց մեկնութիւն մ'ունիմք, ուր Սոռաի կոչուի ծառն, անշուշտ Սօսի իմանալով: Հին դարերում Եղեւինի փայտն՝ որ յատկապէս Եղեւնափայտ կոչուի՝ ապարանից և տաճարաց շինուածքի լաւագոյն և ազնուագոյն նիւթ համարուէր, ինչպէս նոյն Ս. Գիրք վկայեն, թէ՛ Սողոմոնի և թէ՛ այլոց համար. նոյն իսկ Եղի տապանի փայտն՝ ըստ ոմանց Եղեւին էր: — Յ. և Լ. նոյն անուամբ կոչեն այս ծառս, 'Abies. Abies. Φ. Sapin. — Յիշելի է որ շատ վայրի կամ անտառային ծառեր՝ իրարու նմանութիւն ունենալով՝ անուամբ այլ չփոթին, ինչպէս այս Եղեւին՝ Եռնի կամ Սոնոպի ծառոյ հետ, որոց նմանին և Մայրիք: Եղեւնոյ մէկ յատկութիւնն այլ է իր խէժն. լաւագոյն քան զայլոց, որ գործածուի ի դեղս, և կ'ըսուի առ մեզ Եղեւնափոխ, (Φ. Térébenth. Φ. Թիթիմեթիս). այս խժաբեր Եղեւինն Φ. Sapin Peotiné կոչուի, իր տերեւոց տարածուած և ցրուած ըլլալուն համար. կոնաձեւ պտուղն այլ աւելի թեփոտ է և նեղկուկ: — Սլաւալ տեսակք են Եղեւնեաց. մեր երկրին վրայ դժար է գտնել և որտեղ, թէ կլիմային համար թէ ծառոց պակասութեան: Մեր բառագրոց մէկն զոյգ կամ նման համարելով նշանակէ « Եղեւնափայտ. Յրդի. Իսպանի Սէլի. Կենի »: Բուն Եղեւնեաց տեսակներէն՝ Երրդմանեան կոչուածն՝ Ab. Nordmaniana, յիշուած է ի Մանսիո, ի Քօշ տաղ. յատուկ տեսակ մ'այլ կիլիկեան կոչուի, հօն ի Պրիտ Լ. և Գասան օղու:

644. Եղէզն.

Մանօթ և յատկագոյն քոյս ճակիճներու և ծանծաղ ջրերու. իր բարակութեամբ և երկայնութեամբ, նոյնպէս և տերեւներուն, ցամքած ատեն դեղին գունովն, փրն. լաձեւ ծաղկամբն, և պէտքէս գործեաց՝ մանաւանդ փշողական երաժըշտութեան փող և սրինգ ընծայելով, պարզագոյն, հնագոյն և ընտանեկոյն գործին, նշանակ Հովուական ըսուած բանաստեղծութեան. իսկ իր տկար կազմութեամբ՝ հովերէն կոծուելով ծեծուելով ծռելով՝ և սակայն առանց կոտորուելու նորէն կանգնուելովն՝ բարոյական օրինակներ ընծայած է. որոց գլխաւոր կըրնամք յիշել մեր Փրկչին ըսածը՝ վասն Յովհաննու Մկրտչի. « Սինչ ելէք տեսանել յանապա- » տին, Եղէզն շարժուն ի հօղմոյ »: — Այս յիշելով՝ անկարելի է որ քրիստո-

նեայ մի չյիշէ և չհարցընէ Քրիստոսի, կամ ինքն իրեն, ի՞նչ է այդ Եղէզդ այլ քու ձեռքումդ. — յարժար գաւազան փշապսակ Թագաւորի...

Ըստ զանազանութեան յրայատակին և կլիմայից՝ հարկ է որ շատ տեսակ Եղէզք ըլլան. մեր հեղինակն այլ վկայէ, Ար. Ղասապ բառին ներքեւ, **قص** . « Ինքն » շատ ազգ է. ի Սիս է աղէկն և դեղինն. բայց (ամենէն) աղէկն ի Եամ » լինի »: Դարձեալ գրէ երկու տեսակ. « Մէկն Ֆարսի է և մէկն Նասպտի է. » լաւն տակն է ». շատ տեսակ հիւանդութեանց օգտակար դեղ ըլլայն յիշէ, բայց և զգուշացընէ, « Թէ ծաղիկն մարդուն յականջն մտնէ՝ խուլ առնէ զմարգն »: Հասարակ Եղէզն կոչուի Լ. Canna կամ Arundo. Փ. Roseau. — Տես և Բալախ: Պէտպէս Եղեզաց մէջ ամենէն նշանաւոր և իբր Թագաւոր կըրնանք կոչել, Թէ և ոչ մեր երկրի բոյսերէն է և ոչ մեր լեզուով հին յատուկ անուն ունի,

645. Եաքարի Եղէզն.

Լ. Saccharum officinalis, Փ. Canne à Sucre. « Ղասապ ըլ-Սուքար, որ է այն Ե. » դէզն, ըստ Ամիրտ. որ Եաքար կու բուսնի, եթէ ծամես զայն Եղէզն ի կե. » բակրին վերայ և զլուրն ի կուլ տաս, օգտէ կրծոց և Թքին խոշորութեանն, » և զխոշակն կակղացընէ, և զգէճութիւնն տանի. . և օգտէ հազին, և զըս. » տամբին զբոցն ալ տանի »: Հին Բժշկը. մեր ի պտղոց կարգի՝ բայց ամենէն վերջ յիշէ զԵաքար. « Տաք է յՍ տրճ. և քամի յՍ տրճ. յառաջըն գիճային է, » կակղցընէ զփոր և ախորժ ի ստամոք, զի սրբական է, եւս՝ որ սաֆրայտո » չլինի, իսկ սաֆրայտի զեն է, զի սաֆրայտո՝ զԹթու ախորժէ, և այս քաղցր է, բայց Տապարզին (տեսակ Եաքարի) կակղցընէ զբնութիւն »: Աւելի մերձաւոր մեզ և հայանուն է

646. Եաւառ Եղէզն կամ Եաւառն.

Ըստ Ար. Ղասապ Զարիրա **عص** Լ. Calamus, կամ Calamus aromaticus. « Լաւն այն է որ գոյնն եաղութին գունովն լինի... օգտէ բժին հո. » տին, և աչիցն ճէ կու տայ, և սրտին ցաւուն օգտէ. .: Ատէ Պտ. Թէ բարակ » Եղէզն է որպէս՝ գրիչ, և այլ բարակ. և ինքն երկու ցեղ է. մէկ ցեղն ի Եուշ. » մայի փայտն կու նմանի, և այն ցեղն կարճկուկ է, և յերկայնութիւնն մէկ » Թիզ է և այլ քիչ մի յիրկան. և մէկ ցեղն այլ կոկ է և յերկայնութիւնն մէկ » կանգուն, և համն սուր և լեղի, և գոյնն մթնագոյն. և Թէ կոտորես՝ մէջն » սարդոստէ կու նմանի. կանգուն ցեղս ի Քալաքթթու դիհէն (կալիզուզ Հընդ. » կաց) կու գայ, և այնոր Պարքասիրա ասեն. աղէկն այն ցեղն է որ ի բուսն » Եուշմայի ծառ կու նմանի, և իր ճղերն և հունքն ի գազաթն լինի՝ որպէս » Սիսեռ՝ որ ի յամանի մէջն լինի, և այս ցեղս սրութիւն և լեղութիւն քիչ ունի. » և ի Հնդկաց կու գայ. բայց չէ աղէկ... Եւ Պ. այսոր Նայրնի հաւանտի ասեն ու » Եաւառն նշանաւոր անուն մ'է, որոյ ստուգարանութիւնն կամ ծագումն անծա- » նօթ. բայց Եղէզ նշանակելն յայտ է այնով այլ՝ որ նշանակէ եւս Երաժշտական փող. դարձեալ, Եաւառնէ՝ նշանակէ Տաղաւար, գուցէ Եղէզներով լինուած բնա- կարան: Պետրոս առաքելոյն առ Քրիստոս ըսածն զմոյլմամբ ի Թարոր լերին՝ յիշե,

լով վանական վարդապետ, կ'ըսէ. « Եւաւո՛ւն տաղաւոր շատ էր արարեալ »
Պետրոս: — Իսկ իր անուշահոտութիւնն կրնայ հաւատաբել թէ ըլլայ նոյն իսկ

647. Եղէգնախունկ կամ խունկեղէզն.

Որ յիշուի ի Ս. Գիրս. ինչպէս (Եւեց, լ. 23) ուր և լատինն Calamus գրէ. Գա-
լիենոսի բառից մէջ խանգարած գրուի « Եղէգնախունկ՝ կաղանաս արտիկոն
կամ արխատիկոս », որ պիտի ըլլար կաղանոս արունատիկոս (Calamus Aro-
maticus.

648. Եղեգան Երաղիկ.

Միս. Գոշ (16) Եղրդակի և Բարտոյ նման արեւահայեաց բուսոց կարգին դնէ
զայս, առանց աւելի ծանօթութիւն մի տալու, զոր ուրիշ տեղ այլ չեմք գտած.
« Երախատեցաւ Եղեգան ծաղիկ և նմանք նորա՝ պաշտօնեայ լինել արեգական. և
» նորա ձգեալ զձեռն յարեւն՝ երգուաւ արեգական, թէ ոչ եմ »:

649. Իղիգի.

Եղրդակ նշանակող Եգեգն է. տես զայս:

650. Եղիճ կամ Եղինճ.

Թէ ոչ անպիտան՝ այլ անարգ բուսոց կարգին է, ճամբաններու մէջ ոտից կոխան
բուսեցելով, բայց հունտերն դեղի գործածուին. Բժշկարան մի գրէ. « Եղինճ՝ Ան-
» ճիւրէ (Ար. ۵۰۳۱). ինքն երկու ազդ է. մէկին ծաղիկն երկայն, մէկի բոլոր. ա-
» դէկն ի Եամ լինի »: Ամիրտ. յիշէ այլեւայլ օտար անունները, որոցմէ « և Պար-
» սիկն Թուրքի Անճիքա սաէ, որ է Եղիճին հռչան. ինքն երկու ցեղ կու լինի. և
» լուսն այն է որ կանանչ լինի և հունդ ունենայ: . . Թէ դիւր հունդն սեւ ձութով
» ծեծես և դնես ի վերայ ակուային՝ հանէ. և թէ զտերեւն հիփես և դնես ի վերայ
» աւռեցին՝ օգտէ՝ որ ի ակունջթ ոռքն լինայ », եւայլն, և այլ շատ տեսակ ցաւոց և
» աւռեցից դեղ նշանակէ: Հունտի տեղ՝ Եղիճի Սերմն այլ գրուի: — Մեկնելով Եւ-
» բեկացոյ այս խօսքս (Բան 29), « Տնկեցի յոգիս խոտս խայթողականս ինքնա-
» թոյնն ընդարմացուցիչս », մեկնիչն կ'ըսէ. « Ինքնաթեմն ? (ինքնաթոյն) Եղիճն
» է »: — Լ. Urtica, ֆ. Ortie.

Այլեւայլ տեսակ Եղիճք յիշուին առ մեզ այլ. հին Բժշկարանն կ'ըսէ, « Եղ-
» ճին երկու տարազք են, (բայց չի բացատրեր, այլ օգուտներն յիշէ). գտերեւն
» ազով ծեծէ և ի վերայ գիր, այսնուլ շտայ, և յականջն ի շատ տարեց գան
» կենայ և կամ յայլ մարմին. կամ սունկն կամ աղտեղի վեր, գկեղեւն ծեծէ,
» ի վերայ գիր: Թէ ընդ մոմու ձէթ խառնես ու դնես ի վերայ փայծղան, զխըս-
» տութիւնն լուծանէ. — և զտերեւն ծեծէ և ի քիթ գիր, զարոյնն կարէ. և
» թէ. չոր աղատ և մեղրով շաղես ու տաս, օգնէ Թաւանջի, խոչելոյ, կողջվի,
» Թաղջվի. որ ի կուրծքն մաղաս կայ, զփորն լուծէ և փքանալ շտայ »: — Բու-
» սարանք քանի մի տեսակ յիշեն, և մէկը Ս. Pilulifera (Կուլարեր) ի Միջագետս
և ի Հր. կովկաս:

651. Կուրի Եղինճ.

Ի կողմանց Տրապիզոնի խաւրուած էր մեզ՝ այս անուամբ մեծկակ և իրարմէ հետու տերեւներով, մանր շառագոյն կամ նռնագոյն ծաղկամբ մաս մի բուսոյ:

652. Մեռեալ Եղինճ.

Ստ. Ռոշքեան համարի Լ. *Lamium*. բայց լաւ եւս և նոյն նշանակութեամբ ճանաչուի Փ. *Ortie morte* կամ *Ortie des marais*. Լ. *Stachys palustris*.

653. Մշկան Եղինճ.

Ըստ Գալիենոսի բառից է Լեղակն:

654. Սողնոց Եղինճ կամ Սողնոյ Եղինճ.

Գլխու երակի ցաւուն դեղ գրէ Բժշկարան մի, առանց տեսակը յայտնելու:

655. Եղնճամայր.

Չայս յիշէ Ստ. Շէհրիման, իրրեւ Լ. *Lamium galeopsis* Փ. *Lamier*. — Յիշուի ի Համէն, ի վարաժունիս, ի Տաւուշ:

656. Եղնճկտուկ. Եղինճկտուկ. Եղինճկտուտ. Եղնճկտակ. Եղինճկտակ.

Մուշի բազմաթիւ անուանց և տեսակաց մէկն, հաւանորէն Եղինճի նմանութիւն ինչ ունենալով:

657. Եղին ականջ.

Ամիրտուվաթ գրէ. « Եւաննայ (عوان) որ Թ. Արնա օր առէ Ջղախտաին, և » Եղին ականջ ասեն խոտ մի կայ, այնոր ի մէջն կու բուսնի, և ի անննց. » մէն փոքր լինի, և ի տերեւին ի միջէն որձայ ելնէ, մէկ թիզ երկայնութիւն » կու լինի, և թէ հաստկեկ ծեծեն և ցանեն ի վերայ խոցերուն՝ բուսցընէ: » Եւ ի Շիրազ՝ Մուղղաարու ասեն »: — Պէթար՝ ճերմակ բոյս մ'է կ'ըռէ այս, մազոտ տերեւներով, կէս մի Ջղախտաի կէս մի Շանլեզուի նման. ըստ Թարգմանչին՝ է Լ. *Hieracium Pilosella*. Փ. *Piloselle*. նշանակուած է սա ի Հր. կովկաս և ի Թալիշ:

658. Եղիտամն.

Գալիենոսի բառից մէջ այս զուգուած է յունարէն Ղագոգիրաս կամ Ղագոգիրաս բառի. եթէ այս ետքինս ըլլար (Լադոքիրոս Δαδοκίρος), նապատակի որ.

որդ նշանակէր . եթէ *Lagochilus*, խոտեղէն բոյ մ'է ի *Շրթնա-*
ձեւից ցեղէն, ծաղիկն նեղկուկ բաժակով, վկայուած *Պարսկաստան*, *Թուրքա-*
ստան, *Քապուլիստան* :

659. Եղնակճիճ .

Խաչեանն՝ նախ *Cantharida* միջատը նշանակէ այս բառիւ , բայց կ'ըսէ ,
թէ « է և *Խոտ*, որով՝ որսորդք զնետս թիւննն , (վասն որոյ) յոմանց *Եղանց*
» բոյն կոչի . » Լ. անծանօթ բառ մի զուգէ , *Limoum* ?

660. Եղուարդի ծառ .

Ծանօթ Մշեցոց, կարմրագոյն ծառ մի կարծր փայտով, երկայն տերեւներով,
Ալեքի նման պտուղներով, որոյ ճիւղերէն կողով կու հիւսնն : Այս է անշուշտ ի
գիրս *Եղրդի ծառ կոչուածն*, յորմէ *Եղրդուտ*. տես զայն (Թ . 666) :

661. Եղջերուարօտ .

Կարծեմ *Շէհրիմանեանն* է զայս յիշողն , և զուգողն Լ. *Pastinaca Elaphobos-*
seum ? անունն նշանակէ զՊազար, իսկ մականունն ի յունականէն *Ελαφοβυσκος*
ճիւղ հայերէն *Թարգմանուածն* է :

662. Եղջիւր . Եղջիւրի .

Ըստ նմանութեան ձեւոյն և ըստ կարծրութեան՝ յարմարած անուն , տաք կլի-
մայի պտղոյ և ծառոյ , որ կերպով մի անժոռանալի ծանօթացեալ է *Անառակ որ-*
գւոյ առական (*յաւետարանին Ղուկայ*) . Յ. *Κέρας* (*եղջիւր*) Լ. *Ceratonia*, իսկ
Փ. *Caroubier* յատորի կամ յարսբ բառէ , *كروبيون* , յորմէ և հայերէն ալ ը
գիրն *աւերջնելով*, *Խաւնուպ*. բուն Ար. է *Խանկար* , *خانكار* որով բացատրէ Ա-
միրտօլլաթ . « *Խանկար* , որ է *Իղջիւրն* , և թ . *Կէլի* պոչնուզի ասէ . և ինքն
» երկու ցեղ կու լինի . մէկ ցեղն զէտ փուշ է , և միրզն զէտ թնձոր , և ի մէջն
» կարմիր հատկներ ունի . զփորն կապէ . և մէկ այլ ցեղն ծառ կու լինի մեծ ,
» որպէս թնձորի ծառ և տերեւինն *Մորի տերեւէն* մանտր կու լինին . և միրզն
» նման է *Ալուճին* (!) , և սեւակ լինի և խիստ քաղցր . և զկուան՝ սառաֆին
» ի գործ կու արկանեն՝ սկի ի արծաթ կշռելու համար . — Թէ զտակին կե-
» ղեւն յսկաւն օժես , զցաւն տանի , և զակուան անմիտա շուտով հանէ : Ատէ
» Պա . Թէ *Խանկարն*՝ *Խաւնուպի Նապտին* է : . Ի յանապատ և ի պարտէզն
» կու բուսնի . և իր պտուղն նման է գառին երիկամի , և գունն կարմիր՝ որ ի
» սեւութիւն քաշէ . և ի *Սեգիպոսո այսոր Հապ ոչ-ըլիայ* ասեն . և իր հունան
» նման է *Եղջիւրի կըտին* » : Տես և *Խաւնուպ* :

663. Եղջերնի .

Այսպէս կ'անուանի ըստ ոմանց՝ Ս . Գէորգի խոտ կոչուածն . տես թ . 476 :

664. Եղջրիկ.

Վայրի բուսոց կամ ծաղկանց հետ յիշէ Տէր-Աւետիքեան:

665. Եղոջայ կամ Եղրնայ.

« Բոյս վայրի, զոր արմատով հանեն և յաղջուր գնեն » . գրէ Մանանայ, յիշէ և Երեմիա Եպիսկոպոս ի Հայրենասիրին (եր. 317) :

666. Եղրդուտի ծառ. Եղրդի.

Մեր եկեղեցւոյ աւանդական պատմութիւնն ի Յայսմաւուրս և ցանկ սրբազան նիւթոց՝ յիշեն անուշահոտ իւղոյ շիշ մի. իբր Քրիստոսի զլուխ Թափուածին, զոր Թաղէոս Առաքեալ « բերեալ եղ ի Մառն Եղրդի, առ ստորտով լերինն Տորոսի », Մշոյ կողմերում. ուր վանք մի շինուեցաւ ի յիշատակ պատուական իւղոյն կամ շիշին, և կոչեցաւ Եղրդուտի վանք: Արդեօք ըստ դիպաց եղն և Եղրդի ծառն զիրար գտան, թէ ծառն եղի անուամբն կոչեցաւ: Թէ աւելի կամ պակաս ստոյգ աւանդութիւն, միշտ քաջոր է մեզ, և ներել տայ քիչ մի հեռանալ մեր նպատակէն, մանաւանդ որ առանձին Պատմութիւն ալ գրուած կայ այսօր, և կ'ըսուի թէ Աղուանից գրոց մէջ գտան և թարգմանեցին հայերէն. յորում պատմի, թէ Թաղէոս երբ եկաւ ի Հայս, « առ ստորտով լերինն Տորոսի գտանէ վայելուչ » տեղի մի հարաւային կողմն. և էր անդ ծառ մի Եղրդի. և եզ անդ զիւզն աստուաւ « ծային՝ հրամանաւ Ս. Հոգւոյն. և աղօթիւք հարեալ զՔեղարզն աստուածաւ » յին՝ բղիսեցոյց ի տեղուղէն աղբուր գեղեցիկ և յոյժ յորդ և խիստ սառն, որ « կայ մինչեւ ցայսօր » : Յետոյ պատմէ թէ երբ Ս. Լուսաւորիչ դարձաւ ի Կեսարիոյ և եկաւ ի Տարօն, հրաշալի լոյս տեսնելով՝ գտաւ սուրբ իւղը, և վանք մի հաստատեց հօն յանուն Ս. Յովհ. Կարապետի. « Եւ իւղն այն աստուածային » ոչ պակասի և ոչ թերանայ մինչեւ ցայսօր » : Թէ մինչեւ մեր օրերս այլ առատանայ իւղն. — յեմ գիտեր. բայց Եղրդուտի վանն պատուի ուխտիւ. իւղոյն սկիզբն այլ աւանդի՝ ի Մովսիսէ օրհնեալ ի Սինէական լերին, եթնարփեան ծաղկօք, յորոց երկուքն Հայոց պանծալի ծաղկներէն են, և մեր գրուածին յարմար, Հագրեփարոյն և Հանասփիռն: Այն անսպառ իւղէն օծուած կ'ըսուին Թագաւորք և քահանայք Հրէից, և Քրիստոս ինքն մկրտութեամբ Յովհաննու, եւ այլն:

Դառնամք հիմայ մեր բուսաբանութեան, և քննենք թէ ի՞նչ տեսակէ էր Եղրդի ծառն. — Հին բժշկարանն կ'ըսէ. « Խլէֆ՝ մանր Եղրդի » ծառ է. ուրեմն չէ Եղերդ բանջարն. իսկ Արարաց Խլէֆն որ և Խլեփ, է տեսակ մի ուռենի անուշահոտ. ինչպէս վկայէ մեր մեծ բժշկապետն Միս. Հերացի, տաքութենէ պատճառած զլիտացաւի դեղ գրելով. « Արկ ի վերայ գլխոյն Վարդի ձէթ, և Եղնրդի » ձէթ, և Խլէփն՝ այն մանտր Ուռենիքն են, որ անուշ հոտ քայ յիւրմէն » : Այս գրուածին կամ գրողին մէջ սխալ կայ. Եղնրդի տեղ՝ նախ Եղրդնի յարմարէր, յետոյ պակաս կ'երեւի կապ մի անոր և Խլեփին մէջ, իբր թէ, որ է Խլեփն, և Խլեփն՝ այն մանտր, եւ այլն : Տեսանք վերը՝ որ Վաստակոց գիրքն զուգեց զԵղնրդն անուշահոտ ընդ Խլէֆի. մեր օրերս այլ Նաթանեան վարդապետն (Արատոր, 93)

վկայէ իւրեքի անուշահոտ Ուռի ըլլալը : Հապա ի՞նչ կ'ըսէ մեր Ամասիացին.
 « Խորձ, որ Թ. Սորգուն (կամ Սորկուն) կ'ասէ. լաւն այն է՝ որ դեղին ծաղիկ
 » ունենայ... Իսն. ասէ, թէ զծաղիկն հոտ(ւրտ)ան՝ ոգտէ տաք բնութեան
 » մարդոյ, և զըղեղն ուժովցընէ. և թէ զծաղիկն ժողվես և Շուշմայով անցընես
 » և զեղն հանես, խիստ հովեղ լինի : Ատ Պտ. թէ այսոր տերեւին Սաֆսաֆ
 » կ'ասեն. և Պ. Պետ կու ասէ. և Պայլցիքն (Պահլաւ, Բահլ) Պահրաւսն կ'ասեն,
 » և իր խէժն ի տերեւէն կ'ելնայ. և լաւն այն է որ ի ջրեզերք լինի » :

Եղրդին ի բուսարանից կոչի Եգիպտական Ուռենի, Լ. *Salix Egyptiaca*. Փ. *Saule d'Egypte*. Իս. *Salice odorosa*, այսինքն Հոտաւէտ Ուռի : — Գինին ազնուացը-
 նելու համար՝ Վաստակոց գիրքն խրատէ • « Առ շոր Եղրդի փայտ, Լախլախեսա
 » և ի գինին ձգես. լաւացուցանէ » :

667. Եղրեւանի.

Այսպէս կ'անուանեն Ղրիմեցիք և Ռոչքեանն՝ Պարսկաստանի սեփական գե-
 ղեցիկ անուշահոտ և անուշագոյն ողկուզածեւ ծաղկօք ծառը. Թ. Լէշրագ Ար. **انجرف**
 Փ. *Lilas de Perse*, Լ. *Syringa persica*. Եղուրի և ի Տաղստան : Տես և Արճուան :

Եղրիկ. — Տես Եղրիկ :

668. Եռատերեւ. Եռատերեւուկ.

Երեք տերեւոց իրարու կիպ ըլլալով՝ այսպէս կոչուրի և Լ. *Trifolium*, և յայլ
 լեզուս, ասմկորէն. հասարակ անունն առ մեզ է Աւույտ, որով և բացատրած եմք :

669. Երեսնակ.

Շատ հասարակ բոյս մ'ըլլալով՝ այլեւայլ անուններ ունի մեր լեզուաւ. ինչպէս,
 Անիծած ծաղիկ. Իեղուտակ. Չաստաղ կամ Չեանատաղ. *Ղաֆէթ : Այս ետքի
 անուամբ Ար. **عشرون** գրէ Ամիրտ. « Որ է հայերէն Երեսնակն, Անիծած
 » ծաղիկն, որ Թ. Ղշիկն պոչքրաղի (Ուխարի ծոակ) ասէ. և տերեւն նման է
 » կանեփառի տերեւին, և ծաղիկն դեղին է. և լաւն այն է որ ի Հոռմոց եր-
 » կիրն լինի և բուսի :... Ատ Պտ. թէ լաւն այն է որ ի Պարսից ալխարհն
 » բուսնի, ի Կիրազու բոլորն, և իր ծաղկին գոյն լաճվարդին գունովն լինի. և
 » և իր ճղերն բարակ յերկայնութիւնն, մէկ մէկ թղէն մինչեւ մէկ կանգուն լինի,
 » և իր ծաղիկն և ճուղն և տերեւն՝ ամէնն լեղի է քան զՍապուն. և զիր շա-
 » բութիւնն ասնի Անիտան » :

Դարձեալ գրէ. « Ինքն խոտ է. մէկ թիզ է, կէս տերեւ է և կէս ծաղիկ. ե-
 » րեք ազգ է. աղէկն ծիրանի ծաղկի ունի » : Այս ծիրանեգոյն տեսակն յա-
 » տուկ մականուամբ ալ կոչուրի Լ. *Eupatorium purpureum*. Ըսել է որ հասարակ
 անուն ազգին է *Eupatorium*. Փ. *Eupatoire*, եւս *Pimpinelle*. Հին բժշկարանն թուի
 թէ *Poterium* համարի, զի գրէ. « Ղաֆէթ որ է Երեսնակն. այլ ասեն Ղուսարա,
 » և հոռմերէն Պաստերիօն. խոտ է. թիզ մէկ երկայն, ի ծայրն ծիրանի ծաղիկ.
 » յՈւռհա լինի. և քամուք այնեն » : Բուսարէնն *Ποτρίσον* նշանակէ Բաժակ : Պարս-
 կաստանի հիւսիսային կողմերում շատ գտուրի, եւս և ի Կիրակ, Վարաժնունիք :

670. Երեւանդ ?

Այս անունն յիշողն թուի Շէհրիմանեանն . Լ . գրած է *Orozophora tinctoria*, իբր յունարէն (*չբօսօփօրօս*) ներկաբեր նշանակելով . Թ . ալ խարտոյ օրի գրուած էր : Լ . անուամբն ծանօթ է բոյսն և ներկն :

Երեքնուկ . — Տես Երատերէս :

671. *Երիաս .

« Որ է Մրտին տակն » , ըստ Միս . Հերացւոյ (եր . 145) . Ստուգելի է :

672. Երիժնակ .

Կէս բժշկական կէս աղթարական զիրք մի՛ զիւահարի և կատղածի գեղ կու գրէ Երիժնակի քօք (տակ) . զոր՝ ուրիշ մէկ մի բացատրէ , « Փշայից բանջար . որ . » ձայն անեփ ուտի . արմատն բժշկարար է վիրաց » : Ըստ Շէհրիմանի է Լ . *Agrimonia* . Փ . *Agrimoine* . կըրնայ մեր հայ անունն նոյն կամ լծորդ ըլլալ Երես . նակի , վասն զի ասոնցմով նշանակուած երկու բոյսքն այլ լծորդք կամ ազգակիցք են , և մէկ տեսակն կ'ըսուի *Agrimonia Eupatoria* . — Տած տեսակն *A. Repens* յիշուած է ի Բարերդ , Մուշ , Պրիտ և :

673. Երիցանուկ .

Ըստ Մանանայի (444 եր .) Բանջար՝ զոր Պարսիկք կոչեն Բէշիշ Բեճէրի ?

674. Երիցի աղցան .

Գուցէ նոյն ընդ վերնոյն : Սա ծանօթ ուտելի բանջարեղէն է , անուշահոտ և անուշահամ . քարքրոտ և ամայի տեղուանք բուսնի ի դարնան : Յիշուի ի կողմանս Արդուինու , և ուրիշ կողմեր այլ : Տես և Թ . 689 :

675. Երիցուկ .

Իմաստն յայտնի է , ըստ Յունաց հոմանիշ Փափաս բառին , որով Փափարիս կոչի ուսմկօրէն , եւս և ի Թուրքաց . ուրիշ շատ անուններ ալ ունի հայերէն , զոր նշանակեցինք Գեանախնձոր բառիւ (Թ . 446) :

676. Երիցուկ վայրի .

Առանձինն գրուի ի կարգի Գալիենոսի կամ Բժշկական բառեց . այլ յունարէնն խանգարուած գրուած է Ալարտակ ? Այսպէս տարակուսական է թէ յոյն թէ հայ հետեւեալ անունն

677. Երկախարպուզ . ?

Որոյ հումանիշ ի բառս Գալիենոսի Յ . գրուած է Մակրոնի , որ նշանակէ ցանկապատ կամ բակ :

678. Երկայն Ջրեւանդ . — Տես Ջրեւանդ :

679 . Երկիպարի փայտ .

Այսպէս գրուած է տեղ մի , բայց հաւանօրէն սխալ է , և Կիպարի պիտի ըլլայ : Տես Տապադոսի :

680. Երկնմայր .

Հին բժշկարանն մէկ երկու հեղ յիշէ . « Երկնմայրն ծեծէ՛ , մանրէ՛ և քաց . » խով երո՛ » , ևւ այն . կամ . « Ջերկնմայրն չորցո՛ , աղա և կովու եղով տապկէ , » և յականջն կաթեցո՛ » : Բայց ինչ տեսակ նիւթ ըլլայն չի յայտներ . կըրնայ ըլլալ և կենդանի արարած , յետագային պէս՝ որ է


681 . Երկրմայր .

Սա՛ ինչպէս ուրիշ տեղ ծանուցինք (Թ . 488) թէ տեսակ մի բոյս նշանակէ և թէ սողուն մի : Տես Գետնի աղիք և Աքսար :

682 . Երկրատակ .

Անծանօթ է յիշողն , համարուած է տեսակ մի տակ կամ կոճղէզ նման Աիպեցի , և Լ . Buniam .

683 . Երնջակ . Երնճնակ . Երնջայ : Երնջան . Երինճան . Երինճակ .

Յ . Լ . և Փ . անուանքն ալ նման . Eryngium . Erynge այլև Panicaut . Ռ . Перекатицола . Ար . Գարսանաթ  , կամ ըստ Ամիրո . « Ղարսանաթ . » Իպն . ասէ , » թէ ասոր Թ . Իպրեհիմ բիքեհի ասեն , (հիմայ Պոռդա բիքեհի այլ կ'ըսեն) . » ցեղուցեղ կու լինի . փշով խոտ է . և որուն ծաղիկն սպիտակ է՝ այնոր ըրտոռ » խնձոր կու ասեն . և տերեւն տափակ է . Հայք Երնջան կ'ասեն . և ինքն ի քառ բոս և չոր տեղեր կու բուսնի , և ինքն ի փշերուն ցեղերուն է , և յորժամ ի » գետնէն ելնէ և բուսնի , յառաջն տերեւն ի գետինն կու ճապղի , և կանանչ » և պինտ կու լինի . յորժամ մեծանայ՝ փուշ կու լինի սպիտակ : և երկայնու » թիւնն մէկ թիզ և այլ աւելի . և ծաղիկն սպիտակ կու լինի . և ծաղկին ծայրն » ի ապրտակութիւն կու քշտէ . և ի բոլորն վեց փուշ ունի . և տակն ամուր է , » և հաստութիւնն բըթի մի չափ է . և երկայնութիւնն երեք չորս թիզ է . և » մեղուն իւր ծաղիկն կու առնու և մեղր կու լինէ : Եւ տակն օգտէ կրծոց ցանի

» և գազանահարին », եւ այլն: — Ուրիշ մ'այլ գրէ: « Երնջան փշոտ խոտ է...
 » և ասոր տակն ի խորուկ է: և չի գտուիլ. նա իմաստասէրքն այսպէս են հնա,
 » ընթ, թէ, առ կարաս մի և լից հողով, և ցանէ զգարա հունդն ի յերեսն, և
 » ծառայէ տարիք՝ մինչեւ մեծանայ; ապա թափէ զհողն և առ գտակն, շորցու »
 եւ այլն: Արմատէն վերի հաստ մասը կեղեւելով կ'ուտեն մեր երկըրցիք, և Ստեպ-
 զինիհամով է կ'ըսեն: Երնջանի տեսակներէն յիշուին, Հասարակն և Կապուտակն
 ի Հր. Կովկաս (E. Vulgaris, E. Cœruleus.) — Հսկայաձեւն, E. Giganteum և
 E. Thyrsolideum ի Մասիա, Ճիմիլ լ. — E. Billardieri յԱրագած լ. — E. Pla-
 num ի Հս. և Հր. Կովկաս. — E. Glomeratum ի Մարաշ, Տարսոն: Այլեւայլ
 տեսակք Երնջանի՝ նոյն անուամբ յիշուին մեր բժշկական գրոց մէջ, բայց իրենց
 օտար բառով զուգածքն՝ երբեմն տարբեր տեսակ բոյք են. ինչպէս,

684. Ործ կամ Հոռոմ Երնջա. Էգ Երնջա կամ Իգաերնջայ.

Հին Բժշկարանն կ'ըսէ. « Զանգիանա (Gentiana) — Երնջանի տակ. ի Կրիտն
 լինի », ուրիշ մի Երնջայի տակը կոչէ Թ. Պոռդա բիքիկնի, զոր ոմանք կարծեն Լ.
 Sideritis montana կոչուածը. Էգ Երնջայն ալ ըստ ոմանց է Աեդուկն (Թ. 281):

685. Ման Երնջան.

Գալլիենոսի բառից մէջ գրուած կայ Ման Երնջնի տակ, որոյ հումանիշ յունա-
 բէնն անորոշ բառ մ' է, Բադաւորդ? կամ Բազաւորդ, եթէ յունարէն է, Թեր-
 եւս Բաստափարդ (տես թիւ 313): Ի Լեհաստան գրուած բառարան մ'այլ գրէ,
 Երնջակի-տակ՝ Baccharis. ասոր Ար. է Չահրա, զոր տես:

686. Երնջանուկ.

Մեծատերեւ և փշոտ բանջարեղէն մ'է, կլորակ որձայիւ, անուշահամ, և
 աղելով պահուի: (Աթանաս. 81. Մանանայի հեղինակն այլ յիշէ, բայց սոսկ
 Երնջնակ կոչէ):

687. Երնջնականկառ. Երինճնականկառ.

Թերեւս վերոյ գրեալն է, կամ այնոր նման ուտելի բանջար մի:

688. Երուսաղեմի Կորեկ.

Երուսաղեմի ցորեն այլ կոչուի սովորաբար, Թ. Մարդ պոռդոսայ: Տես Մայծ:

689. *Երպատուր.

Պէյթար կ'ըսէ, թէ Սնտալուսիա՝ այսպէս, *عظوة* կ'անուանեն Լ. Peucedanum
 ֆ. Peuceddane կոչուած բոյսը, որ յոյն Πεύχη բառէն կազմած է, և
 մեր լեզուի մէջ Պեչկես փոխուած, և նշանակէ զՍոճին: Ամիրտուլվաթ այլ այդ

անտալուսիկ բառով գրէ. « Ինքն խոտ-մն է որ տերեւն և որձան նման է Ղաւ-
 » դիանին, և շատ մազմզուկ ունենայ, և ի վերեւն ծաղիկ ունի, և տակն սեւ
 » լինի, և հոտն ծանր. և ի վերեւ կալտուկ լինի. ի լեռան և ի շուք տեղեր կու
 » բուսնի. որ գտակն կու ճեղքեն և զլուրն կու հանեն, և ի շուքն կու չորացընեն...
 » Եւ թէ ծխեն՝ ամենայն սողունք կը փախչին. թէ վարդի ձիթով խառնեն և ի
 » յականջն կաթեցընեն՝ զցաւն խաղեցընէ, և թէ կերուած ակոսանին կաթեցընեն՝
 » ամբասընէ », եւ այլն: — Պէյթար այլեւայլ բոյսեր յիշէ Եարպատուր անուամբ,
 որոց վերոյիշեալ լատին անունը պատշաճեցընէ թարգմանիչն. նոյն իսկ Արար հե-
 ղինական յիշէ այն անունը **قنادل** գրելով. անոնցմէ մէկն այլ
 պատշաճի առ մեզ Կորդոսախոսն կոչուածին, զոր տես իր կարգին. կարծուած է
 եւս թէ Երիցու աղցանն այլ ասոնց տեսակէն է:

690. Չարարակ կամ Չապարակ.

Լաւ եւս Սպարակ կամ Սպորակ. Հնդկաց Գրքում կոչուածն է, զոր բացա-
 րեցինք Դեղին կոճ անուամբն. տես թիւ 579:

691. *Չառթեր ?

Ի կարդի դեղոց՝ Չուֆայի հետ յիշուի ի Բժշկարանի. Թուի Սարիւր Արարաց.
 Տես Չամբուռ:

692. *Չահրայ.

Ար. 99) Լ. Baccharis, Բագոսի անունէն. « Ինքն խոտ-մն է որ աղէկ և
 » անուշ հոտ ունի, և ի Կիպարին ծառին ներքեւն կու բուսնի և խոցոր տերեւնի
 » կ'ունենայ. նման է Մանուչի տերեւին, և ծիրանի ծաղիկ ունի՝ որ ի սպի-
 » աակութիւն քլտէ, և երկայնութիւնն մէկմէկ կանգուն կու լինի: Եւ ոմանք
 » այսոր վայրի Ղարանֆուլ կու ասեն. և տակեր կ'ունենայ, զէտ սեւ Խարպախ
 » (Վրացի կոճ). և խոտն նման է Տարչինու »: Պէյթար է ըսողն թէ Անտա-
 լուսիացիք Գարանֆուլիա կոչեն, **قنادل** Ըստ բուսարանից գիտնոց՝ այս Յու-

նաց յիշեալ բազոսական բուսոյ յատուկ տեսակն կոչուի *Gnaphalium sanguineum*,
 և գտուի ի Պաղեստին և ի ծովակողմանս Կիլիկիոյ:

693. Չամբիւղ ծաղիկ.

Թ. Չեւկիլ լիլիկի. բայց այլեւայլ տեսակք են այս ուսմկական անուամբ և
 նմանութեամբ կոչուած բուսոց. Մանանայն՝ Սիւնկիւլ է, կ'ըսէ, զուցէ անուանը
 նմանութեամբ. ըստ Աթանաս (եր. 67) եղեգնանման տերեւներ ունի, կարմիր
 ու դեղին քլտող մեծ բուրբակ ծաղիկներ՝ ի ծայր որձային, թեթեւ հոտ ունի, բայց
 Սալաձորեցւոյն հաճոյ է. զի կ'ըսէ.

« Չամբիւղ ծաղիկն հոտով անուշ. ինքն կարմիր պայծառագուն »:

694. Չամբուռ. Չամպուռ.

Հին Բժշկարանն վկայէ՝ որ Ար. Հաշա Լահ Լ. Thymus, Φ . Thym. է. Ափրա. այլ այս անուամբ ստորագրէ. « Թուրքն այս խոտիս Տռփնայիմա » Սոսփոսրիս ասէ. և ծաղիկն կարմրեա կու քշտէ, և տերեւն սպիտակ. և » լաւն այն է որ նոր լինի.. Ասեր է Բոֆոսն՝ Թէ այս խոտիս Խիդայի մամնն? » (Վաղմեաուկ) կ'ասեն, և Թուրմա, և Սափար ըլ-հիմար (Խու Մոթրին, Հ. » կ'ըսուի Չիածորրիկն) այլ ասեն... և ճղերն բարակ և ծաղիկն սպիտակ է և » կարմրեա. և ինքն ի լերունքն և ի բարձր տեղեր կու բուսնի, և ի լերանցն » ի գազաթն և ի դաշտերն կու բուսնի. և ճուղն բարակ է որպէս Խրիսի » (Վաղմեաուկ), և տերեւնին նման է Ճօտային (Նուրճ) և Վայրի Դաղձին » :
— Տես Մայթրին :

695. Չամպ ?

Սալաձորցին՝ ինչպէս կարդացինք և ուրիշ տեղ, կ'երգէ,
« Բագուշն և Սքօնօշն՝ որ Լաջաուին ի Հետ Չամպուն » .
առջի երկուքին նման բոյս մի կըրնար երեւիլ. բայց օրինակ մի գրէ, « ի Հետ » ամբոյն » . և գարձեալ, Չամպ նշանակէ մնացորդ ձեան լերանց վրայ, որոց մէջ կըրնայ կարծուիլ Թէ բացուին և փայլին Բագուշն և Սքօնօշն :

696. Չանազան.

Այս բառս սովորական իմաստէն զատ՝ նշանակէ և գեղեցիկ. իսկ իբրև բոյս՝ գոյնզգոյն Մանիշակի սեփականեր են ոմանք. Լ. Viola tricolor.

697. *Չաննապիլ. — Տես Կոճապղպեղ :

Չապարակ. — Տես Չարարակ :

698. * Չառնար. Ար. بزرگ

Բժշկարանք մեր գրեն այսոր համար. « Դեղին խոտի տակ է անուշա- » համ և բարակ » . : Ափրտ. երկար գրէ այսոր համար. և նախ Թ. անուամբ « Սձասպ աճաղի. Ատէ Սինեայ որդին, Թէ ինքն ծառ-մն է՝ որ տերեւնին Ուռու » տերեւի պէս է, երեսն կանաչ և յետին սպիտակ, և մանրութիւնն Սաուխ- » տոսին (Եզնախոսն) տերեւին չաք է, և հոտն նման է Թուրնճին հոտին : Եւ » զտայ զինքն ի կոստնպօլիս. յածվենիքն կու բուսնի, և ի վերայ քարերուն ալ » կու բուսնի. և Թէ տակովն հանես ի յայլ տեղ տնկես՝ չի բուսնիր. և Թէ » զճուղն կարես և տնկես՝ բուսնի : Եւ Հոսոմն այսոր Անդրասիանոյ ասէ, և » Հեղինացիք այս խոտիս Լիվանատիս (Libanotis) կու ասեն. և լաւն այն է » որ հոտն անուշ լինի : Ասեր է Պա. Թէ ինքն Լոխձ ըլ-ձարտան է, (جدج جدج), » և այս անունն անոր համար է՝ որ տերեւն ի մօրեխին ոտքն կու նմանի. և

» Ընդիպքն թապրան ասեն . և Պ . Սոսրոս բոսրչի և Սոսրոս թոսրչիստանի
 » Եյյա : Եւ ծաղիկն դեղին է և հունտն դեղին է և տափակ է . և տակն
 » Մաղտանոսի տակ կու նմանի . բայց այլ սուր է և տաք է և հաստ է » : —
 Պէյթար այս բոյսս նմանցընէ քանի մ'ուրիշ հոտաւէտ բուսոց . բայց Ամիրա .
 աւելի տեղեկութիւն կու տայ զանազան անուամբք , որով թերեւս դիւրին ըլլար
 արեւմտեան գիտնոց ստոյգ ճանչնալ՝ ինչ և որ ցեղի բոյս ըլլալն , վասն զի շատ
 կարծիք եղած է և շնն միարանած . վերջերս (Կ'ըտէ Լըզէր) յամին 1878 ի Լեւ
 տոն եղած բուսաբանական հանգրիտագրութեան ատեն՝ սահմանեցին կոչել կամ
 ճանչնալ *Flacurtia cataphracta* .

699. *Չարնի .

Ար . عرعر « Ինքն խոտ—մն է , ըստ Ամիրո . որ ի յաղի ծովուն եզերքն կու
 » լինի . շատ կու գտլի և կու ձգլի , և թէ ջրով եփեն և դնեն ի վերայ սուկրա .
 » ցաւութեան , օգտէ . և թէ զուգամին (հարբուխ) տէրն ծխէ , օգտէ » : —
 Ինչ տեսակ ծովային խոտ ըլլալն անծանօթ է . Պէյթար կ'ըտէ թէ ծովն ի խորէն
 դուրս կու նետէ զայս :

700. Չարիւր .

« Ինքն բոյս է և վարդ է , որ ի լեբուսն կու բուսնի . և ներկարնին իրմով դե .
 » դին կու ներկեն » : Տես Դեղին կտճ :

701. *Չարու . — Տես Հերձի :

702. *Չարուր .

Խնձոր նշանակէ արարերէն . թէ ընտանին թէ վայրի Խնձորն , կամ Ալոճի . նա
 և . որդնաբեր կաղնին :

703. *Չարրին տրախտ .

« Ասեն , թէ թուահնճին ծառն է . ասացեալ է Պտին . թէ ի Պարսից երկիրն
 » և Արզրում կու լինի շատ . տերեւն նման է Ձիթենու տերեւին . ծաղիկն նման
 » զեգ ոսկի հայլի է . ի խաղաղին ատենն կու եղքի , և տերեւն կանանչ կու
 » լինի . ծեծեն և զլուրն քամեն և խառնեն ի մայի փոսխաան (բժշկական եփած
 » ըմպելիք) և խմէ . . . Իր փոխանն բարակ Ղանգարիտն է » :

Այսպէս դրէ լաւ Բժշկարան մի . Պ . անունն Ոսկի-ծառ նշանակէ . բայց Ար .
 գրումի կլիմայն շննդունի որ թուրինջի ծառը . հարկ է որ ըլլայ թուրինջիստան
 կամ օտար բոյս մի :

704. Չարոշ . — Տես Լեքրախտ :

706. *Չափրան

Տես Քրքում և Սպարակ: — Սալաձորցին այս բառով գովէ ծաղիկ մի, որ թերեւս սովորաբար իմացուած Քրքումն չլլայ. օրինակ մի երգոյն գրէ « Հետ ճգնաւորնուն », իբր թէ ճգնաւորաց պէս լերանց վրայ առանձնացած լլլայ:

« Բարձր լեռներ կու բուսանի Չափրանն հետ Ճինաւարոսն ».

706. Չելիխա.

Թուի Սալիխա, գոր տես ի Ս. Գրիգորի ծառն (թ. 537):

707. Չեֆին ?

Ինչ ցեղէ բոյս լլլայն ծանօթ չէ ինձ, փաք տերեւօք է կ'ըսուի, և մութ կար, մրագոյն թերթերով վայելուչ ծաղիկ ունի:

Չիմել. Տես Երևել

708. Չինջարակ. Չինջուփր. Չնճալի.

Գալիենոսի բառից մէջ առաջին երկու անուանց դիմաց տարօրինակ կամ այլ-այլեալ անուն մի գրուած է, իդուրոտ կուզ ? Տես Կոճապղպեղ:

709. *Չիր

Որոյ հունտն յիչէ Բժշկարան մի և Խաչխաչի կեղեւով հիւանդը քնացընելու գեղ խրատէ. ուրիշ Բժշկարան մ'այլ յիչէ Չիր-տակ: Արարացիք Չիր անուանեն (ըստ Մատթիոյի իտալացի բուսարան բժշկի), փոխեցուցիչ կոճողը կամ սոխը, (Bulbe vomitigue կամ Emitigue), որուն սովորաբար Ա. կ'ըսեն Պասայ ըր-թէյ. իսկ Չիրէ՝ Չաման նշանակէ:

710. Չիւան.

Որոման նման, և ձեւով՝ չոր մեխակի, իւղային հունտ մի, որ բորոտած ա. նասնոց դեղ կ'ըլլայ. յիշուի Մշոյ կողմերում:

711. Չլելիս.

Ճախնային կարմիր խոտ մ'է, մանրիկ հունտի պէս ծաղկներով. և գործա. ծուի մանածներ ներկելու:

712. Զղեար. Զկեռ. Զկոի

Պարտիզաց կամ այգւոյ խնձոր ըստ Ար. « Զարտար պատանի, որ Թ. Մոս-
ն անչա ասէ. և մէջն երեքզոէն և գունն կարմիր. ի Շիրազ քեյի ստորիս ասեն.
» լաւն այն է որ հասուն լինի. և բնութիւնն տաք և չոր է. և ասած է՝ Թէ
» պաղզամ ընծայէ », եւ այլն: Մանօթ պտուղ է. Լ. Mespilus ֆ. Nômier.

713. Զմունենի. Զմուռն.

Որչափ որ ծանօթ և հաշակեալ է իր բերքն, անուշահոտ և անփուտ պահող
հիւթն կամ խէժն, — Սողոմոնի՝ Հարսին ու Փետային և անկէ առաջ նահապետաց
մարմնոց օծուելով պահուելէն և քահանայական պաշտամանց նիւթ ընծայելէն,
մինչեւ յընծայարեւութիւն Արեւելից մոգուցն առ նորածին արքայն Հրէից՝
առ ամենաթագաւորն մեր Քրիստոս, « Ոսկի, կնդրուկ և Զմուռն », և իր
անապական մարմնոյն օծումն. — այնքան և անծանօթ կրնայ ըսուիլ ծառն. որ հրէա-
րէն Մոս կոչուելով՝ ամենայն ազգք այլ այլայլելով կոչած են. և նախ Յ. Մսրբա
կամ Տրմբա, Լ. Myrra. ֆ. Myrrhe. Թէ և Յոյնք ըստ իրենց սովորութեան ա-
մեն բան առասպելաբանելով իրենց յատկացընեն. զայս ալ նախ կիպրոսի կիսիւ-
րաս թագաւորին դուռար կ'ընեն, Միւռա անուամբ, որ յԱրարիս փախելով
կ'այլափոխուի ի Զմունենի. Հիներն համարէին թէ Զմուռն կու բերուէր յԱ-
րարիոյ և յԵթովպիոյ. յետոյ ոմանք յԱրարիս այլ կ'ըլլայ ըսին, նա եւ յԱփրիկէ
ճանչցուած է:

Զմունենին. կատայի նման փշոտ թուփ մի է. — Պէյթար այլեւայլ տեսակ
Զմունենաց յիշէ, իսկ Ամիրտ. միայն բերքը՝ « Մոսայ կոչելով, որ է Զմուռն.
» ինքն կարմիր խէժ—ն է, շատ կու փլչի և լեղի է, և լաւն այն է որ յիստակ
» լինի, և կարմիր լինի. տաք է 9 սրճ. բացող և հալող է. քուն կու բերէ, և
» զերեսն կակուղ կու առնէ և կարմիր կու առնէ », եւ այլն. յիշէ պէսպէս օ-
գուտներն և յատկութիւնները, ստոյգ և անստոյգ, ըստ աւանդութեան Ար.
հեղինակաց: Վանական Վ. մեր յիշէ և

714. Զմուռն Մովային.

« Եղեգն լինի (կ'ըսէ) ի Ղրումն, այնց որ փարլ լինի, այնոր կռէզն է »:

715. Զոխ կամ Զօխ.

Համաձայն Բոխի հետ յիշեն Արովեան (ի Վէրք Հայաստանի, եր. 28), և
Բամբակ գաւառի, տեղագրողք (Տաշիր):

716. Զողալ-ենի.

Վայրենի և ծանօթ պտուղ մի, որ թերեւս շատ տեղ գտուելուն համար ի
Հայոս, այլեւայլ անուններ ունի, կամ իրարմէ քիչ տարբեր տեսակներ ըլլան. և

են Չոսմ. Հոյնի. Կոթի. Դափարա. ետքինս յիշած եմք (Թիւ 558), Լ. Cornus Ma-
scula. Փ. Cornouiller. Ար. Գարսնիա, قزانيا Թ. Գզընդոց: Ար. անուամբ
ստորագրէ Ամիրտովաթ. « Դարանիա. ինքն միրզ է կարմիր, և ի մէջն կուտ
» ունի. աղէկն հասունն է. Սասցին Հոռոմոց իմաստասէրքն, թէ իր բնութիւնն
» և գործաւորութիւնն՝ մտտ է՝ Ծորին, և գտրտն հովցընէ և զգորն կապէ, և
» ստամաքն սուր առնէ, և օղտէ լերդին տաքութեան. և աղայոցն լու է »: —
Կովկասու երկու կողմերում այլ գատուի այս ծառս (1):

717. Զողլապատ.

Բանջարեղէն, զոր այլոց հետ յիշէ կուռածաղիկ վիպասանութեան հեղի-
ղինակն (Փորձ, Բ. Բ. 81):

718. Զոպա. Զուփա. Զուֆ.

Լ. Hyssopus. Փ. Hysope. ամենն ալ հրէարենն առած, Ար. Հիսսույ, ܚܝܣܘܥ
կամ ճիւսի. Բժշկարանք պէտքս գրեն կամ մեկնեն անունը. մէկն կ'ըսէ.
« Զուֆա, և յամանց ասի Մշտիկ, Ար. Զուֆա. Լ. Իզօրոյս » ուրիշ մի (հինն).
» Զուֆա խոտ է, ի կաւալա լինի, մտտ ի կօն », (Իկոնիոն, Ղոնիա): Ուրիշ մի,

(1). Զուպի կորմիր հիթը կամ շուրը արեան նմանընկում առասպելեցին Յոյնք և Լա-
սիքք, թէ նա երբեք գժտող Պրիամու կրտսր օրդին էր, Պոլիուզոր. զոր՝ նոյն յուսանաած
էր և Տրոյկոց բաղչէն, մտուտնէ ազատելու և իրեն ժառանգ թողուլու նամար, զրկեց թրակացոց
Պոլիքնետարէս թագաւորին. ոտ ազանութեամբ անգթացու և սպաննել տուաւ պատանին՝ որ
ինչք ժառանգէ. Ազուզն՝ զթալով փոխարկեց զնա ի Զուպիէն, կամ Զըմնէն, ինչպէս գրէ,
մեր Վերդիլոսի նոյ թարգմանիչն (Հիւրմիւզեան, Վրոյք). Լատին բանաստեղծն կ'ուզէ նա-
ւասացընել, թէ Ենէաս փախելով Յունաց նուաքն յետ անբան Տրոյլոցոց, եկեր է ի թրակիա
և ուզեր է բերդպաղաք մի շինել, ինչպէս յետոյ պատմէր Դիդէ զշուպի. թէ.

« Մերձ ի տեղւոյն ըստ զիպուսոց էր բլրակ,
Զոր Զըմնիք ծածկէին թուփք զգլխասկ,
Եւ յոգնախուան ըստեզամբ խիտ մըրտնէի.
Մաստոյ զթրփուան անտի խընել զալարի..
Եւ.. ի կորդն յերկրէ զթրուփն նախիին...
Կայլակէին շիթք արեան թուփք անգըստին...
Ողբք ի խորոց բլրոյն եզն լընիլի.
Եւ նոյն առ իս աղիողորմ բարբառի.
Նիմ, Ենէաս, զզնէքս զիս կեղեքոս.
Խընայեա յիս. և կանց ի բաց ի յիմէս...
Փախիբ, աւուզ, ի զօլպազ ծովափնէս.
Անա ես ինքն Պոլիուզոր խօսիմ զեզ,
Զոր սաս սառչասս նեախց արկ խոց երկաթիկաց,
Եւ ի սըլաքս սպրտատուրս ընծիւզեաց »:

Ենէաս զերեզման կու շինէ Պոլիուզորի և պալատն կառարեկում կու փախի մինչև ի Լատինս: —
Նոյն առասպելախօսք կամ վիպասանք կ'ըսեն որ Յունաց ի Տրոյա մտուցած փայտեղէն մեծ նին այլ
Զուպիէնիկերով շինուած էր:

« Զուպայն կանաչ Մոթորն է »: Այսպէս Բարսեղ վարդապետ մեկնիչ Մարկոսի աւետարանին կ'ըսէ, « Մշտիկ Զուպայի, որ է սրցակ Մայթրնի »:

Բաց գրեթէ ամենքն ալ միարանին երկու տեսակ Զուպ կամ Զուփա ճանչնալու, Դաբար և Զոր. սակայն շփոթեն իրարու հետ և նա և բոյսը օտար նիւթի մի հետ. աւելի որոշ կ'ըսէ մէկն. « Զուֆ որ է հայերէն Զուփայ. և ինքն » երկու ազգ է, Զոր և Դաբար. Դաբարն այն աղտն է որ ժողովի ի վերայ ոչ » խարին բրդին անդամնոյն ի մէջն. և Զուփայ Զորն այն է՝ որ այն ալ երկու » ազգ է, վայրի և Ածփոց. և իր երկանքն թիզ մի է. որ իր տերուն զէտ Մար » զանկօշի է, և ճղերն փուշք փուշք, ոստկներն (ճիւղերն) զէտ ճիւղ կուծն է »: Ամիրա՝ Դաբարը՝ Գեճ Զուփա կ'անուանէ. և խառնուած է կ'ըսէ, այսինքն բազազութիւն մի, որ գոյանայ ոչխարին դմակին ներքեւ՝ երբ արածի Զարասիոնի (Մեղրածուծ) վրայ. « Այլ ասացած է, թէ ի հորթերուն ազին կու ժողվին » այն խոտերն որ կաթ ունին, որպէս Եթթողնի, և կաթին աղտն ի ազին կու » ժողովի, և կ'առնուն և կ'եփեն և ի դվամ կու բերեն. և այս ալ դաւար Զու » Փան է »: Իսկ Զորին համար գրէ. « Ար. Զուփայի Երայինս (چراغی لای) » և Հ. Մշտիկ ասէ. և ինքն ի յածվենիքն կու բուսնի. . . Ասէ Պո. թէ ինքն » խոտ-մն է որ տերուն ի Հինայի տերու կու նմանի. և լաւն այն է որ ի յԵ » բուսաղեմայ լերունքն կու բուսնի, և խիստ աղէկն ի յԵգիպտոս լինի, և ի Հոռ » մայ երկիրն ալ կու լինի, և մէկ մէկ գունտկներ ունի ի մէջ տեղն, և ծա » զիկն կապուտ է, և յերկայնութիւնն մէկ թիզ է »: — Թիզէ շատ աւելի երկայն ալ կ'ըլլայ, և ճիւղերն և ծաղկներն խիտ առ խիտ ըլլալով (կամ « խիտ և » ուռուցակ », ինչպէս կ'ըսէ Սարգիս վարդապետն մեկնիչ Կաթողիկեայ թղթոց,) միանգամայն և անուշահոտ: Հին ատեն կրօնական պաշտամանն մէջ՝ Ղուր կամ արիւն սրսկելու գործածէին, քանի մի հատ մէկտեղ կապելով, որով կ'ըլլար տըրցակ մի, կամ Մշտիկ մի. ասկէ մեր մէջ մտած է Զուպային ալ Մշտիկ ըսել, և թերեւս պաշտամանն մէջ մտնելէն Մշտիկ և Մաշոոց զոյգ կրօնական իմաստն ունենան: — Ամենայն քրիստոնեայ յիշէ առ Տէրն մեր Քրիստոս խաչին վրայ աւանդման մօտ՝ քացախ և լեղի մատուցանելն Մշտիկու Զուպայի՝ եղեգան մի ծայր դնելով: — Զի մոռցուի Սողոմոնի համար ըսուածն ալ, թէ զրած ըլլայ բուսաբանութիւն՝ Լիբանանու մեծամեծ Մայրերէն մինչեւ պատի վրայ բուսած Զուպայն, զոր ոմանք Մամուռ կամ Քարաբոս կ'իմանան, ոմանք Կապպար բոյսը, այլք ուրիշ բոյս: Ինչուան քսան կարծիք եղած է այս Ս. Գրոց մէջ յիշուած Զուպային վրայք, զոր աւելորդ է մեզ քննել, ալ մի անգամ եւս յիշե՛ք՝ որ շատք ալ մեր վերայիչալ հեղինակաց նման՝ Մոթորին համարին: Ար. Զուփա ալ նշանակէ տեսակ մի կոտեմ, Cresson alénoa.

719. Զուպայի ծառ.

Յիշուի ի նոր գրողէ Հայ-Աղուանից կողմերում, այլ թէ ինչ նմանութիւն ունի հասարակ Զուպայի, ստուգելի է: — Բառհաւաք մ'ալ նշանակած է առանձին

720. Երգ-Զուպայ և Երգ-Մշտիկ.

Որք գուշակուին նշանակել տեսակք Զուպայից:

731. Զուիրակ.

Տնտեսութեան մէջ ծանօթ և պիտանի բոյս մի, որ այլեւայլ անուններ ալ ունի մեր լեզուաւ. ինչպէս, Էրատասան, Իշկորնգան կամ Իշկորոտրան, և նմանեաց հետ շփոթելով անոնց անուններն այլ կ'առնու. ինչպէս Փիլոնի գրոց լուծմունք գրողն կ'ըսէ. « Զուիրակ՝ կամ Մարնայ խտան ». ուրիշներ այլ Ծոթրինի զուգեն. որոյ յարմարի Ար. Սայրար քաջ անունն, որով ստորագրէ Ամիրա. « Ինքն երկու » ազգ է, մէկ վայրի և մէկն Ջրի. բայց անուշահոտ է. աղէկն վայրին է և » զօրաւորն »: — Լ. Origanum. Փ. Origane. — Քանի մի տեսակք կան Զուիրակի, յորոց՝ Բոտրատերեւ կոչուածն O. Rotundifolium զտուր յԱրդուին, Պաթուճ. Ծանախ. — Հասարակն O. Vulgare ի Պոնտոս, և Թ-Հ:

732. Զուկի ձէթ.

Տես Միւսորակ. որ յիշուի և Լուպնի ծառն՝ ուսկից կ'երնէ ձէթն կամ խէժն. և ըստ այսմ Թուրի Թէ Զուկ ըլլայ Հ. անուն ծառայն:

733. *Զուռուայ.

Ար. ٥٧٥ որ և Տոսոսա, նոյնպէս այլ գրուած փ. Doutra, կամ Durah, որ է Լ. Sorghum vulgare, Փ. Sorgho. այս յետին անուամբ կոչեն ուրիշ Եւրոպացիք այլ. « Ինքն ցեղ-մն է, կ'ըսէ Ամիրա. ի կորեկէն, և յերկայնութիւնն Յո- » ռենի շափ լինի, և շատ տերեւնի կ'ունենայ՝ ապօրակ. և աղէկն սպիտակ և » ծանար լինի: (Իբրեւ. դեղ) զլուծումն կու կարէ. և թէ սպեղանի առնեն ի » դրուց դնեն, հովցընէ զփորոքն, և կապէ զփորն աղէկ »: ՅԱփրիկէ, նա եւ յԱսիա՝ ցորենի պէս հաց կ'ըլլայ:

734. Զուսպ.

Հին բժշկարանն զուգէ զսա Յունապի հետ. տես զայս: Ունի նմանութիւն ինչ Լ. Zizyphus կոչման:

735. Զուրիկ.

Սամթի նման խոտ մ'է սպառած տեղերու, անտանոց ախորժ ուտելի:

736. *Զուրպամ.

Բժշկարան մի՛ ոչ հին՝ գրէ. « Մէկ մեծ ծառ է. Սեօյիւտին մէկ սոյն է. հո- » տաւէտ ». եթէ չէ ներբոյգրեալ Զրմբատն.

*Զուկիա. Զուֆ. Զուֆա. — Տես Զուրա:

*Զպսեման. — Տես Սպրատան:

727. Զրմբատ. Զրնպատ. Զրումպատ. Զուրումբատ. Զուրբատ. Զրորատ.

Գրուած է և Յրեդփար ի Սա. Ռոլքիան. յայտնի է Պ. և Ար. անուն ըլլան, (داجز) որով կոչի և Լ. Cureau Zerumbat. Բժշկարան մի կ'ըսէ. « Քեա. » Քուրի քէզն է ». Ամիրտուլվաթ ասելի բացատրէ, « Հնդի լեզուա Քանաք » կ'ասեն, և ի յայլ լեզու Տարաք. և յորժամ դալար է՝ գանկով կու կտրտեն » և կու եռցընեն. գիճութիւնն պակաս կու լինի, և այն որ չէ կտրած՝ լեղի է. . » Արցած է թէ ՔեաՔուրին տակն բոլոր և յերկան այլ կու լինի », եւայլն: — Ատար բժիշկ կ'ըսէ. « Զրումպատ լոլոր (եթէ չէ բոլոր) և շիզ տակ է: Հին բառագիր մի. « Զրնբատ՝ Զեջրիջի »: Կամարկապցին, « Ինքն նման է Գիտորի » և Գրեկածիկնի? ունի »:

728. Զրեւանդ. Ար. Ծճյլյ)

Թէ և յտուակ հայերէն անուններ ունի այս բոյսս, Որդեսակ և Սղանգն, ինչպէս Միս. Հերացի այլ գրէ, « Զրեւանդ յերկայն՝ որ է Սղընկան տակն ». այլ յաճախ այս պարսիկ անուամբ գրեն բժիշկք մեր և Բժշկարանք, եւս առասել երբ իր տեսակները կ'որոշեն Երկայն Զրեւանդ, Բոլոր կամ Կարճ Զրեւանդ, Որճ կամ Էգ Զրեւանդ անուամբք. երբեմն այլ իրարու հետ շփոթելով կամ մի և նոյն համարելով. — Բունարենէ առնուած է Լ. անուն Aristolochia, զոր Ամիրտ. գրէ Սրատուդուսիսիայ ըստ Պէլթարայ, (اسطوخودوس) Փ. Aristolochie, Ռ. Карказонь, Ք. Տրանզկ տիպի ըստ Բժշկարանի միոյ. ըստ Ամիրտ. Ղուարուճա:

Հին բժշկարանն, ինչպէս և այլք՝ զանազանէ նրկու տեսակ, « Զրեւանդ՝ Որդըն. » տակ, կամ Բոլոր կամ Երկայն ». ըստ այսմ զանազանելով ստորագրէ Ամիրտ. Երկայնք (Aris. Lunga) Զրեւանդն Ար. կոչէ Տասիլ կամ Թոյիլ « որ է Շաճրի » լատատամն (ساجد ریح), և Անդալուսցիքն Մոնարալիզար ասեն. (Պէլթ. » Մասեքար և Մասեկարան) . և լաւն այն է որ գունն Բոլորին գունովն լի. » նայ. քան զմասն հաստ լինայ. և աղէկն Որճն է », եւ այլն: — Բոլոր (Կլոր) Զրեւանդն (Լ. Rotunda) կոչուի Ար. « Զեր Մոնարալիզա, (عجوة) որ Պ. » Զրեւանդ Մոնարալիզար ասեն. և լաւն Շամցի լինի և Էգ, և լաւն այն է որ » Քեաճար կ'ասեն, և Զրնպատին ալ Քեաճար կ'ասեն Հնդի լեզուա, և լաւն » այն է որ գունն Զաֆրանի գունովն լինի, և գէր. քան զԵրկայնն՝ այս լա. » ախճ և ուժով է »:

Բժշկարան մի Բոլոր Զրեւանդին համար կ'ըսէ. « Որ է հայերէն լեզուա » Խաշնդեղն ». բայց մենք տեսանք (Թիւ 393) որ Խաշնդեղն Գարի տակն է: — Այլեւայլ տեսակներէն՝ A. Clematitis կոչուածն գտուի ի Պանասս, Կովկաս, Վրաստան — A. Maurorum ի Մանախ, Ատրիք. — A. Pontica ի Ռիդէ. — A. Iberica ի Մժխէթ, յիմերէթ: Ուրիշ տեսակներ այլ ըստ գտուին ի Փ. Ատիա, Ատրիք և Կիլիկիա:

739. Զրիշկ կամ Զրեշկ.

Պարսիկ անուն է Ծորի, տես զայս: Ըստ ոմանց է Սրափուշն:

730. Զօխօ ?

Կամարկապին յիշէ զայս, ըսելով. « Ինքն խոտ մի է... նշանք այս է՝ որ կա-
» թոտ լինի, տերեւն Սպանախի և Բողկի նմանի »

731. Էգաբացուենեկ. — Տես Բարձմանեակ:

732. Էգադարդ. — Տես Դադձ: — Ատոր գրէ, « Էգաբաղ, կարմիր Դապճ »:

733. *Էգիր կամ Էկիր. — Տես Բաշխ:

*Էթրէնց. — Տես Թորթիշ:

734. Էշխրտուկ.

Վայրենի փշոտ բոյս մի: — Ինչ անուամբ զուգուած բուսարատերը տես իշ սկիզբով:

Էրեւանդ. — Տես Երեւանդ:

*Էթի մէլիք. Էթի իւլ-մէլիք. — Տես Աշի մէլիք և Կորնգան:

735. Ըղընգան Խոտ.

Արաբերէն Զաֆրայ, ըստ Ամիրտ. լաւ եւս Զեօհրէ կամ Զէհրէ օյնք. խոտ, մի՛ « որ ի վերայ գետնին կու փռվի և կու բուսանի. և բարրկեկ և մանար տե-
» բեւ ունի. ի յըղունկ կու նմանի. և գուրսի դեհն կանանշ և մէջն կարմիր
» կու լինի. և ի գագաթն դեղնուկ ծաղիկ ունի. և թէ գտերեւն և զտակն չբու-
» ցընեն, և ծեծեն և ի վերայ պիղծ խոցերու կերվածին ցանեն, օգտէ նասու-
» բին, և կոծիծներուն այլ օգտէ և քալ (կունտ, անմաշ) գլխուն ալ օգտէ »: —
Պէյթարի Թարգմանիչն տարակուսանօք համարի այս բոյսը Լ. Hieracium Pilo-
sella. Փ. Epervidre Piloselle. Մեր ազգային Թուրքահայոց բժշկաց մին ըսու. Eu-
patorium Canabinum, Փ. Eupatoire Chanvrine.

736. Ըղտափուշ. Ըղտու փուշ.

Թարգմանութիւն արաբերէն բառի. Պէյթար՝ յորմէ և Ամիրտ. ստորագրեն պարսկերէն բառով՝ Ուշբարդար կամ Ուշբարդար (عشبار) « որ Թ. Տափա թիքանի ա-
» սէ, և ոմանք Խանտախ այլ ասեն. և իր օգտութիւնն այն է որ գործան ի վեր բե-
» բէ. ...Ատէ Պտ. թէ ինքն Զանձապի յաձաձն (Պարսիկ կոնապոլպեղ) որ Ար.

» լեզուս Դասքի (Եէվքէթ) ձառնայ ասուի, որ Թարգմանի Ըղտու փուշ. և ինքն
 » Անճիտանին տակն է. որ Խորասանի է, և Վայրի Անճիտանն ինքն ի Բաաֆ.
 » Թային? ցեղերուն է. և այս երկու ցեղն այլ ի Հոռոմոց երկիրն կու լինի, լան
 » Հոռոմցին է՝ որ Անճիտանի Ըռոմի ասեն. . Եւ ասէ Աինեայ որդին, թէ դորա
 » քացախն օգտէ ստամոքին և ուժովցընէ և կերակուր կերցնէ », եւ այն: Պէյ-
 Թարի Թարգմանիչն գրէ Փ. Racine de Magydaris, ի յունականէն Μαγυδαρις, զոր
 Հիմայ կոչեն Lasæpitiium, ըստ մեզ Ուսպան: Մեր Բժշկարանաց մէկն յատուկ
 նկարագրական Հայ անուն մի ընծայէ Ըղտափրշոյ, Դատժուի: Կամարկապցին
 այլ աամկարար գրէ. « Պռոշա բիքէնին այն փուշն է՝ որ մատղաշ իրեն՝ Հասակին
 » կեղզին, դանկով քերեն վրայի խապոսիսն և ուտեն. ոմանք Տէվէ բիքէնի ա.
 » սեն »: Ըստ այսմ՝ յարմարի Լ. Cynara Cardunculus.

737. Ըղտու աչք.

Յիշուի Բժշկարանի մի մէջ, առանց բացատրութեան. վերոյգրելոյն նման թուի:

738. Ըղտու լեզու.

Պէյթար և Ամիրս. Յ. անունը Թարգմաներ են այսպէս, 'Ελελλο:φακον, զոր և
 գրէ առաջինն ..(ἑλελλο) մերս՝ « Ալիսֆադին, որ այսոր Թուրքն Ըղտու
 » լեզու կ'ասէ, և ինքն յերկան յերկան կու լինի և կու բուանի, և շատ ճղեր ունի, և
 » փայտն չորեքզուէն կու լինի և սպիտակ, և տերեւնին Սերկէւիլի տերեւ կու
 » նմանի, բայց երկայն կու լինի և բարակ: Եթէ զայս խոտիս զճուղն տերեւումը
 » եփես և զլուրն... խմցընես և թէ օծես, զսպիտակ մազն սեւ առնէ, և զխո-
 » ցերն կու բուսցընէ, և զշտերն այլ կու աղէկցընէ. և թէ եռցընեն և խմեն՝
 » զլեզուին ծանրութիւն կու տանի և քաղցր զբուսցընել կու տայ. և թէ չլուրն
 » լուացվին՝ դիվիճն տանի »: — Անշուշտ յոյն բառը լաւագոյն քան զԱմիրսու-
 վաթ՝ նոր բանասէրք մեր Հայացուցեր և Եղեսպակ կոչեր են, զոր և յիշեցինք
 ի կարգին, ծանուցանելով որ է Լ. Salvia, Փ. Saugo.

739. Ըղտու Խնձոր.

Այսպէս կոչուած է սպիտակածաղիկ Երնջանն: Տես զայս, Թ. 683:

740. Ըղտու կակաջ.

Որչափ տղեղ է այս կենդանին՝ այնքան գեղեցիկ ծաղիկն, և հրաշալի եւս ըստ
 աղբալին կամ աամկական աւանդութեան, որ ընծայեր է անոր շատ վայել-
 չափոյն անուններ, զորս յիշնք իրենց կարգին և բացատրեմք Խաչափայտ կամ
 Փեննունա անուանց ներքեւ:

741. Ըղրի.

Պեննութեան արժանի անուն և րոյս, զոր կարծեմք ծանօթ կամ արժանի ծա-
 նօթութեան բուսարանից. մենք ցամբած ծաղիկն և ճիւղը տեսնելով՝ համարեմք

Թուփ կամ ծառ, իրարմէ հեռու երկայն կոթի ծայր հինգ վեց տերեւով, հասարակ գափնոյ տերեւին կէս մեծութեամբ, նոյնպէս երկայն կոթի ծայր փունջ փունջ դեղին չրթնածեւ ծաղկօք, երկայն առէշներով և մանրիկ հունտերով:

742. Ընկոյզ. Ընկուզի.

Թերեւս իւղապառուզ ծառոց մեծագոյնն, և անունն այլ նոյն ի Հ. և յԱ. ճալզ, կամ ճուզ, جوج, որ Երբ Էկօզ. հին Գերմ. Hnos. Ամիրո. գրէ. « ճալզ, որ է Ընկուզն. լաւն այն է՝ որ կեղեւն նօսր լինի և թաժա և ի լի ո լինի », եւ այլն. յունարէն անուամբն այլ գրէ. Արդիս, որ է Աղիրաս... այսօր » ձէթն լաւ է քան զՆի ձէթն, և փոխանն Մանուչիի ձէթն է », եւ այլն: — Լ. Nux Juglans, ֆ. Noyer, Noix. Հասարակաց ծանօթ ըլլալով ծառն և պտուղն՝ աւելորդ համարիմ նկարագրութիւնն. բայց ի բանասիրական դրօսանս յիշե՛ք Մի. Գոշի առակն (ծե), իբր. Թէ Տունկք բամբասէին զնա, Թէ « Ռիշա (ա. » գահ) ես ամենեւին և տմարդի, կծու և չար, (զի) զպտուզ քո բերես անու. » տելի: Որոց պատասխանեալ ասէ. Ո՛չ ապաքէն նման ձեզ առնեմ. զի մ՝ օք » ի ձէնջ նախ քան զժամանակն տայ զպտուղն իւր յուտել... սակայն և արդ ա. » մենեցուն ընդարձակ եմ (առաս), մարդկան և թռչնոց, ոչ նման ձեզ ան. » կարգարար տալով... ամբողջ՝ անուտ ելով ի ժամու մերկանամ զօրջտութիւն ո: կծու և անուտելի կոշտիլն յայտնէ իր գրսի պատեաններն և կեղեւները. և ըստ այսմ նշանաւոր է Ընկուզի մասանց զանազան անուններ օւնենան. ինչպէս. Ոգրի, Կդիգ և Կաղազ գրսի կանաչ կենպն, ուսկից Թերեւս բոլոր ընկուզին Կախալ կոչումն. — Կորձ ներսի պինս և երկու բաժնուօզ ու պարպած կեղեւքն. — Փոռ՝ ներքին մաշկն. — Չնձում՝ ամբողջ անկենեպ ընկոյզն. — Փոսակ և Կրան ըստը կած Ընկոյզ. — Ոտիփ ? անծանօթ մաս մի: Չանազանին և տեսակքն ըստ Խոսուլրեցոց. Բորոջ՝ մեծ և ազնիւ. Կրկիս՝ կարծր. Չունոզ՝ մէլը պարապ, Փոստակ, փատած. Ունուկ՝ առողջ Ընկոյզ:

743. Սուտ Ընկուզի.

Թ. Երան Դօզ, յիշէ Բարխուզարեան ի կողմանս Աղուանից (Աղու. Երկ. եր. 84). Թուի Թէ վայրի և ոչ ուտելի պտղով ծառ մ'է:

744. Հայ Ընկոյզ.

Անունն հրապուրիչ է քննութեան, մանաւանդ որ դեռ լաւ չէ նանչուած, Պէյթար կ'անուանէ ճաւզ Արմանիոս, جوز ارمانیوس. ֆ. Noix arménienne. և Թզալափ փոքր բոյս մի է, կ'ըսէ. տերեւներն նման Փեգենայի՝ բայց աւելի լայն. ծայրն ալ սպիտակ ծաղիկ մի. համն կծու. և կարծէ այն բոյսն՝ որ կ'ըսուի Մօխիւսս, خضاد կամ Մոխիալլասս, զոր յիշեցի՛ք ի Թիւ 23 (Ալուճ). բայց ստորագրութիւնն (զոր խոստացանք յիշելի կարգի Մ. տառի, չերեւիր նման Հայկական Ընկուզի համար գրածին: Այս անուամբ Ընկոյզս յիշէ ալիսարհագիրն Կողմաս

Հնդկանաւորդ, (Cosmas Indicopleustes) ի Ձ դարու. և քաղելու ժամանակն այլ յՍեդիպոսոս, կ'ըսէ. Բայինի ամսոյն մէջ կ'ըլլայ, որ է յունիս, և Ձիթապղտի նման է կ'ըսէ:

745. Հնդիկ Ըկոյզ

Վաստ. Գիրքն յիշէ (248) Հնդի Ընկոյզ, որ է անշուշտ ծանօթ Մշկընկոյզն, Լ. *Nux muscata*. բայց ըստ Ամիրոս. է Նարնի. տես Նարդերակ, և Ճօզպէ:— Տարբեր ծառ և պտուղ է Հնդկային Փսիսեցուցիչ Ընկոյզն, Լ. *Strychnus*, Փ. *Vomiquier*.



Հնդիկ Ըկոյզ.

746. Ընձախոտ. Ունծի խոտ

Բժշկարան մի գրէ. « Ընձախոտն՝ որ է Անրատաւ ծաղիկն ո. սակայն այդ ծաղիկն անուան ձօտ անունէն չիթած կ'երեւի. զի Գալիենոսի բառից մէջ գրուի, « Կապիտոյան ? Թասակ, որ է Ընձախոտ » . ըսել է որ համանիչ են այս երկու անուանք: Ամիրտուլվաթ. հայ անունն այլ կու տայ, բայց արարերէնովն ստորագրէ. « Խանիդ ըլ-նանի, (خانیق) որ Թ. Ղափրան օրի ասէ, և

Պայլըն այլ կ'ասեն. և թէ սպեղանի առնես և դնես ի վերայ կոծիծնուն, օգտէ.
 » և հանէ ի տեղացն. և - Ատուածոյ համար, չլինի որ խմես, - կու սպանանէ. թէ
 » զտերեւն ծեծես ճրագի իւզով և հացն խառնես, և տաս աղուէսին և շան և
 » դափրանին և գայլուն և խողին, յայն պահն կու անկնի ի վայր. և թէ սպե-
 » զանի առնես և դնես ի վերայ պինտ ուռէցին, յայն պահն հայէ... Ասեր են
 » թէ ինքն ի Մազարիոնին ցեղերուն է, և ոմանք ասեր են՝ թէ Մկնտին է
 » կամ Խարաբին (Վրացի Կոն), և ինքն չէ ստուգ. . և Հայք այս խոտիս Ունծի
 » Խոտ կ'ասեն »: Լ. *Doronicum Pardalianches*, կամ պարզ *Aconitum*, Փ.
Aconit.

Այս խոտին հետ յիշեն Պէյթար և Ամիրտ. ուրիշ մ'այլ. Խանիդ ըր-գեպ կամ
 գիպ, որ Ար. նշանակէ Գայլխոտ, բայց չէ այն հայերէն Գայլխոտն զոր յիշած
 եմք (թիւ 409), այլ կոչուածն Լ. *Aconitum Napellus*. վերոյիշելոյն նման է,
 կ'ըսէ Ամիրտ. « Եւ ինքն զգայլն կու սպանանէ շուտով. և ինքն ստուգ Խար-
 » պախն է »:

747. * Ըռասան.

Պարսկերէն անուն է հայերէն կղմուխ կոչուածին:

748. Թագաւորապսակ.

Այսոր հոմանիշ գրէ Ասար Նշանիս. յետ-
 նոյս համար ուրիշ Բժշկարան մի գրէ. « Նշա-
 նիս՝ որ է Քլիլիւկիդ »: այս Ար. բառն որոյ
 ուղղագոյն է Իբլիլ իւլ-մէլիլ զնոյն նշանակէ,
 այսինքն Թագաւորի պսակ. նոյնպէս և Լ. *Fri-*
tillaria imperialis, Փ. *Fritillaire impériale*. Այս
 գեղեցիկ անունն տրուած է խիստ հասարակ
 և անասնոց կեր խոտի մի, կորնգանի տեսակ,
 որ և տգեղարար կոչի Իլկորնգան. ոչ աւելի
 աղուոր անուն մ'այլ ունի Թ. ըստ Ամիրտ, Ղօշ
 պոչնոզգի (խոյի եղջիւր). « Եւ ինքն խոտ-մի
 » է՝ որ մէկ աւուր լուսին կու նմանի, և սպի-
 » տակ ու դեղին կու լինի, լաւն այն է որ նոր
 » և դեղին լինի՝ և պինտ... Իպն. ասէ, թէ
 » ցեղ-մի Աքլիլմէլիլ կայ՝ որ ի լերունքն կու
 » բուսնի, և յերկայնութիւն մէկ կանգուն կու
 » լինի, և տերեւն յերկան յերկան կու լինի.
 » և գունն սեւութիւն կու քլտէ. և փայտին
 » մէջն փուռ կու լինի և պինտ, և զլուխ կ'ու-
 » նենայ. և յորժամ միրգն հասնի և կու բա-
 » ցուի, և միջի հունդն Մաննեխի չաք է, հատ-
 » կներն. բոլորկեկ. և զիր հասն որորդնին կ'առնուն և իրենց որսած մերն
 » մէջն կու գնեն, որ չի հատիր... Ասէ Պահն. թէ այս խոտիս Պ. Գիանեղապար
 » կ'ասեն. և լաւն այն է որ դալար և հատուն լինի և գունն ի գեղեցութեան և
 » սեւութեան մէջն լինի. և թէ ճղքեն՝ հատին մէջն գեղին լինի »: — Այս



Թագաւորապսակ.

նկարագիրս վերոյիշեալէն շատ տարբեր բոյս մի ցուցնէ. Պէյթար այլ վկայէ՝ որ այս անուամբ շատ տարբեր բոյսեր կ'իմացուին և կու շփոթին. մեզի բաւական ըլլայ հաւատանն թէ ըստ բառին և նշանակութեան՝ նոյն են Քաղաւորապական և Էջիլի Իւլ-մէլիքն: — Շատ տեսակք կան այս բուսոյ, որոց մէկն կոչուած է Հայկական. F. Armena, ի լիբիոս կարնոյ և ի Մանախ. — Նոյնպէս կոչեր են ոմանք F. Sibtorpiana ըսուածն այլ. — F. Lutea տեսնուած է ի Մասիս. — F. Crassifolia ի Թէքուազ կարնոյ, ի Պանտոս. — F. Kurdica և Minuta ի վան և Բաղէշ. — F. Persica ի Մասիս:

749. Թագաւորասպրամ. Թագաւորասպրակ.

Ինչ տեսակ բոյս ըլլալը չըսեր Բժշկարանն, այլ անոր փոխան՝ երբ պէտք ըլլայ՝ գործածելու է կ'ըսէ Մեդրածուծը, որով կ'իմացնէ՝ կամ ասոր ազգակից կամ նման յատկութիւն և զօրութիւն ունենալը: Թերեւս պարտիկ բառով Շա. հասպրամն ըլլայ:

750. Թագկալ?

Օրագրի մի մէջ յիշուած է առանց բացատրութեան. (Մշակ, ժԸ, 88?):

751. Թագուհւոյ խոտ.

Բժշկարան մի ոչ Հին, դեղի նուսխայ գրէ. « կալ. գրուան մի տերեւս խոտոյն » Թագուհոյն կամ Նիկոցիտանի ». Nicotiana, ծխախոտի բոյսն է, Nico Փաանկի անուամբն, որ նախ մտուց զայն ի Փաանկաստան. այլ թէ արդեօք մեր գրողն այլ զայն իմանար. կամ ձվ այն հրապուրական (Թագուհւոյ) անունը ընծայեր է այդ ծխոտ միտտ խոտին:

752. Թամաուիճ. — Տես Թրակի

753. Թամուլ.

Բժշկարանք կ'ըսեն, թէ սա է — « Որձ Ուպիտոյն » Եւրոպիայի « Ուպիտու է » Յրդուս պտուղն, որ Թ. Արտուզ եւմիշի ասէ. ինքն երկու ցեղ է, սեւ և կար. « միր, և լաւն այն է որ կարմիր լինի... Ասեր է Պտ. Թէ ինքն Ճապի Ուպ. » հոչն (Յրդոյ ընկոյզ). և ինքն վայրի կիպարուն պտուղն է. և Պ. Թոնիսի « հասալ կ'ասէ, և ի Խորասան՝ Փարոս? կ'ասեն. Պալիսոս ասեր է թէ բնութիւնն » սաք է Գ տարճան, և լաւն այն է որ գունն սեւ լինի, և գէր լինի, և տե. » բուն կանանչ լինի ». եւ այլն: Որչափ որ չոր և անպիտան բան մի կ'երեւի Թամութ, շատ տեսակ բժշկական օգուտները նշանակուին: — Տես Յիրգ կամ Յրգի:

754. Թամուլ կամ Թամուլա. — Տես Արչու ընգոյզ

755. * Թամրա. Թամրի կամ Թեմրի. Պ. օչճ

Բժշկարան մի յիշէ միայն « Թեթրի տերեւ » ի նուսխայս գեղոց սակրացաւու Թեան. ուրիշ մի գրէ, « Թաթրի է վայրի Սումախ », այսինքն Ազար. Իսկ

« Թաթրայ՝ Չերայի տունի, Պարսիկն՝ Բարասիս առէ », որ է Կրտիճի։
Թթուքիւնն այլ նշանակէ. « Ազոխի կամ Թթուքի ջրով յաչքն քաշէ ».
« Լան այն է որ Թաթրով լինի եփած » (Կերակուր մի)։

Թալ. — Տես Դալ.

756. Թախ.

« Որ է Քասսան », կ'ըսէ Ամիրտ. ի բառագիրքն, և թէ մեկնութիւնն « յի-
» շեալ է ի վերայ Քին », այսինքն Քասսայ բառի սակը. սակայն չեմ գտած այս
բառս Ք տառի կարգին. իսկ Պայթար գրէ քաս՝ տեսակ մի մեծ Արմաւ,
համեղ և պղտիկ կուտով, որ կ'ըլլայ յիլագ, կարմիր գունով դէպ ի ներմակ,
Թախտիկ. — Տես Թադր.

757. Թաղաղու.

Ասոր հոմանիշ գրէ այսոր Պրուխ. իսկ սա ըստ այլ Բժշկարանաց՝ Երեշի բաղ-
մաթիւ անուաներէն մէկն է. նոյնպէս առանձին գրէ և Թաղաթուի տակ. Չար-
մանք է այս բուսոյ այնքան բնիկ և օտար լեզուաւ անուաներ յիշուին յայլեւայլ
Բժշկարանս. որք են, այս յիշած երեքէն զատ, Թորոշ, Խեզէ, Փայլկտակ,
և օտարքն լեզուաւ՝ Ապրասի, Աշրաս, Խոռնաս և Ասփոդելոս. Յեաինս է յոյն ա-
նունն, Ασφοδελος, Լ. Asphodelus, Փ. Asphodèle, այսպէս գրէ Կոննոսի առակաց
կամ առասպելաց մեկնիչն, « Ասփոդելոն տնկոյ անուն է. զհոտն անոյշ ունեւով
» և զժաղիկն հրճուելի ». յԱմիրտուլվաթ խանգարելով գրուած է « Ապոստոս-
» ինքն տակ-մն է, որ ի ջաղացքն կ'ազան, և ինքն Երէշն է, որ է Խոռնայն ».
այս ետքի անուամբ կու ստորագրէ, ըստ Պէյթարայ, որ ի սպագրին գրուի Խոռ-
րաշ. شاذل « Որ է Աշրասն որ է Երէշն (Թ. Չիիշ), և տերեւն նման է կան-
» գանայի տերեւին (տես Թ. 356), և ի գագաթն սպիտակ ծաղիկ ունի. և
» տակն ի կաղնոյ պտուղ կու նմանի, բայց շատ կու լինի. և մուկերն և
» գտակերերն (մուճակ և գտակ կարողք) զինքն ի գործ կու արկանեն. լան այն է որ
» ի լիզն լինի... և ինքն պոպղացընոյ է և ճլէ սուռոյ է ». այսոր համար անշուշտ
Փայլկտակ կոչուած է. « Իր ծաղիկն և միրգն կ'ուսով ». այսոր այլ վկային հի-
մայ Մշեցիք և Կարնեցիք, զալարն անեփ ուտելով, չորն՝ եփելով։ « Ատր է
» գրոցս շինողն թէ այս խոտիս Պապրասի կ'ասեն Պարպարի լեզուաւ, և ինքն
» սուր է և կոկ »։ Ուրիշ բժիշկներէ այլ զանազան օգուտները կու յիշէ. ինչպէս
այս. « Թէ զլուրն ի յաջիկ ականջն կաթեցընես, զձախիկ դիու ակաւացաւութիւն
» տանի. և թէ զիր պտուղն և զժաղիկն տաս կարճահարին, օգտէ... և թէ
» զինքն շատ ուտեն. զգլուխն շուրջ ածէ »։ — Ոչ միայն ամբողջ բոյսն՝ այլ և
որձան առանձին անուն ունի, որ է Պոչիկ, և ըստ այլոց՝ Օղին կամ Ըղնի.
երբեմն ամբողջ բոյսն ալ Օղին կոչուի։ — Արմատին կայցընոյ յատկութիւնն
խմացոց մեր հեղինակն՝ գտակ և մուճակ կարողները յիշելով. ուրիշ արուեստից
մէջ այլ մանէ։ Պէյթար իբր զատ բոյս կամ զատ տեսակ՝ Աշրաս կամ Խշրաս
Սալ, մա անուամբ այլ ստորագրէ։ Տես և Երէշ վայրի։

788. * Թաղանդաստ.

Հայկական ձայն լսուի բառէս, բայց Ամիրտ. ծանուցանէ, « Որ է Պարպարի » լեզուաւ Ակրկարհան ». (տես Թիւ 441, և յետոյ Իգարող). Պէյթար այլ յիշէ այս անունս ԵԱՍԾՃԷՅ բայց ինքն Ակրկարհա անուամբ ստորագրէ: Ինչուան հիմայ ի Ճէզայիր Թիքէնտեստ կոչեն:

789. Թաղթ. Թաղթիկ. Թախտիկ.

Շատանուն բուսոց մէկն է և այս, սրոցմէ յիշեցինք Արանց ծաղիկ և Արջտակ. (Թ. 1:12. 236.) կոչուի և Խոզի հաց, վայրի Շաղգամ, ըստ ոմանց և լոջ. այս տգեղ անուանց հակա. աակ՝ մեր բժշկարանք Ար. ազնիւ անուն մի ընծայեն, « Պոսիտարի Մէրիեմ, որ Պար. » սիկն Ղաչառեայ Շաղգամք » կու առէ. Թ. Տոյնկոզ ա. » զրջաղի. որ ինքն Թաննար » փուշմն է, որ Բուրդն այնով » կու լուանան, և լան այն է » որ նոր լինի »: Գէորգ Պա. լատցի պարսիկ բառարանի մէջ գրէ. « Ենդլէմէք՝ է ար. » մատ ինչ նման Շողգամի, » Թուրքերէն Տենկիզ բոփաշա. » դի ». ըստ այսմ Բժշկարանին գրած Թուրքարէնն ալ մեկնելու է՝ ծովու լիտեան կամ գնտակ, և ոչ խոզի. սակայն այլք կ'ը. սեն Թ. Եկր սունտնի. ուրիշ Բժշկարան մ'այլ գրէ Յ. ան. ուամբ, « Արտանիսս (L. Artha. » nitā) որ է Պոսիտարի Մա. » դիամն, որ Արջտակն. ինքն » բուրբ զէտ Շողգամուկ է, և » գունն ծիրանի լինի »: Յունա. րէն հասարակ անունն է Կուլամոս, յորմէ և L. Oyelamen, Փ. Oyelano, զոր հայերէն տառադարձութեամբ գրեր են նախնիք Կիսկրամինոս: Այսչափ հայ և օտար անուններ յայտնի կ'ընեն որ այլեւայլ տեսակք պիտի լլտն Թաղթի. վերայիւնալ Արտանիսսն այլ բուսարանք համարին Եւրոպական Թաղթ. Oyelamen



Թաղանդաստ.

Europeanum. մէկ տեսակն այլ՝ Պարսկական. Cyc. Persicum. Հաւանօրէն այն տեսակէն է և անոր մերձաւոր Հայկական թաղթն, որ երբեմն իր ազգակից. Շողզամի և Սաեպղինի հետ շարախօսէր իրենց վրայ իշխան դրուած Ճակնգեղը և յանդիմանուեցան ի թազաւորէն բուսոց, (Մխ. Գոշ. Ե). Ինքն այլ ուրիշ անգամ յանդիմանեց ազէտ մի, որ գարնան ատեն կարծելով թէ թաղթնի ամեն մասն այլ օգտակար է, « Սերմամբն հանգերձ եկեր, և » սկսաւ ործալ ». և նա ըսաւ, ես ամենայն մասամբ պիտանի եմ, բայց գիտցողին համար, թէ որն ուտելու է. որը դեղ ընելու: (Ն. ԵԱ): Այս դեղերէն մէկ քանին յիշէ Ամիրտ. Ինչպէս. « Յորժամ » քացխով եփես՝ զոչիրն կու սպա, » նանէ, զակընջին զգիջութիւնն » կու տանի. և թէ յաչքն քաշես՝ » զաչքն սրացընէ... և թէ խմեն՝ » զճիւրին և զօճն հանէ ի փորուն՝ » ուժով, և վերբերութիւն տայ » այնել », եւ այլն: Մէկ տեսակ թաղթնի C. Coam անուանեալ՝



Թաղթ.

տեսնուած է ի Գարագափան կարնոյ և ուրիշ կողմեր, ի Պոնտոս, Քուժայիս. որոյ նման է Վրացի կողուածն այլ, C. Ibericum, Տփղիսու քովերը. — ի կիլիկիա՝ զատ յայլոց յատուկ տեսակ մ'այլ կայ C. Cilicium. — Հին բժշկարանն յիշէ և թաղթի ոռնո, որ կըրնար ըլլալ ուրիշ ցեղ բուսոց հանաւ. այսինքն

760. Թաղթենի.

Անուան կազմութիւնն յայտնէ՝ որ սա չէ թաղթն՝ այլ ծառ է, հին բառգիրք այլ կ'ըսէ « Սարեկայ՝ թաղթենի կամ Ուռոյ անուն է »:

761. Թաղի ?

Ստուգութեան կարօտ գուցէ և ոչ բուսեղէն: Հին բժշկարանն դեղ մի պա. » տուիրէ « կարմիր թաղի տապկէ լրով, օժնէ նօզով, և խարկէ զգուրս. » եկածն »:

762. Թաղիկ.

Ըստ Սիմ. կամարկապոյ՝ է « Արտիճոսկ. Ինկիւնար. Ինքն խոտ է, զլուխ կու կապէ նաւն չաք »: Տես կանգառ և Արտիճուկ:

763. Թամբուլ.

Ասար՝ օտարոտի կամ աւրուած անուան մի զուգէ, Յնոստանապահն ? և Յոփի

(ծառի) տերեւի նման կ'ըսէ: Վաստակոց զիլքն (չլ) գինին անուշահամ ընելու համար այլեւայլ հնարքներու մէջ խրատէ քանի մի նիւթերու հետ զնել տերեւ մի Սատէն հընտի, թէ չգտանի՝ թոյնոյ դիր՝ աւելի, նա զայն կեցուցանէ », այսինքն անոր տեղ կու բռնէ. ոմանք ծառը կարծեն Պերէլ, որ Հնդկաց լեզուով Թամբուլ կոչուի: Եւհրիմանեանն կ'ըսէ տեսակ մի համեղ Սալոր է, երկայնաձեւ, մութ կարմիր գունով:

764. Թայլ.

Բժշկարանք ոմանք նոյն համարին զսա և զԹաղթ. Հին և Գալիենոսի բառ. գիրք գրեն հոմանիչ Յ. բառի Անոփաքսի կամ Անքրփաքսի, փոխանակ գրելու Ատրոփաքսի Ἀτροφαξ, յորմէ Լ. Atriplex, Փ. Arroche. Լ. կոչուի նա և Posa Anserinus, որ ըսել Բադի սաք: Ուրիշ Հին բառգիրք մ'այլ օտար անուններ զուգէ Թայլի, « Կոտոր և փրշոնիս », որ է անշուշտ Անձառ, այսինքն Փրփրեմ կամ Անմեռուկ: Ամիրտալվաթ Ար. Ղատաֆ Անձ և Սարնախ, անուամբք յիշէ զայս « Որ է Հոսի Սպանիան և թէ ուտեն՝ զփորն կակղացընէ... և թէ եփեն և » բորոս մարգիկ զձեռն ի մէջն խոթեն, օգտէ. և թէ զհունդն իր չքօքն շարով » ծեծես և յաչքն քաշեն, զաչաց բորն տանի... Եւ թէ եփեն և ջրովն զաղտօտ » ապրումէ հալան լուանան, յստակէ և պայծառ առնէ »: Ետտ տեսակք կան Թայլի. որոցմէ A. Littorale գտուի ի Կեարիս, ի Կասպից ծովեզերքը. — A. Patulum ի Հր. Հայս, Քրդաստան. — A. Tataricum virgatum ի Բարբերդ, Մարաշ. — A. Ohanikowii յՈրմի. — A. Verruciferum յԵրասխայ հովտի:

765. Թանժունիկ կամ Թանժընիկ կամ Իանդունակ.

Ըստ Եւհրիմանի Աղտաղտուկն է. (Թ. 71) կամ աղային Kali բոյսն. այլ հաւանօրէն Լ. Telephium, Փ. Telephe. զոր Պէլթ. գրէ թիլաֆիոն طيلافيون Ամիրտ. Տիլաֆիոն. և կ'ըսէ թէ ի Հայրի յայտմին ցնդերուն է, այսինքն Գառնազմակի. Պէլթար այլ պայտս կ'ըսէ, և նա եւ Փրփրեմի ցեղէ, կամ Վայրի Փըրփրեմէ — Արեւելեան ըռուած տեսակն, T. Orientale, ճանչցուած է յԱնթապ, Մարաշ:

766. Թանժրուենի.

Թէ և ի գիրս չկայ, այլ ծանօթ է այս անուամբս ի Հայս. Լ. Sambucus, Փ. Bureau. Թ. Միտրվեր աղաձի. Ար. Խաման خامان որով ստորագրէ և Ամիրտ. « Ինքն բուսմն է որ տերեւն Ընկզի տերեւ կու նմանի, և փայտն սպիտակ » կու լինի, և յամէն ճուղ երեք չորս տերեւ կու լինի, միողն նման է Մանակօշին » (Բեւեկի մրգին). և թէ զտերեւն եփեն և ուտեն և կամ զլուրն խմեն, զսով. » տան լուծէ... Եւ թէ զգալար տերեւն գարու ապուրով խառնես և սպեղանի » առնես և զնես ի վերայ սաք ուռէցին, օգտէ... Եւ ցեղմն այլ կայ՝ որ զէտ » խոտ է ծաղիկն. և տերեւն զէտ առաջինն է. այսոր Խամայիխտի կ'ասեն » (Խաման ախթի ըստ Պէլթ. خامان اقط) որ Թ. Իիթ օր կ'ասեն ». որ է իկիր, այսինքն Բաշտակ. — Ոմանք ի նոր գրողաց մերոց՝ Խոնդի կոչած են զԹանժրուենին, Քալանթարեանն այլ՝ Քալանդաշի ծառ: — Կոչուի նա և Խորի.

Թէպէտ այս այլ ոչ ի գրոց: — Յ. Ebulus կոչուած տեսակն գտուի ի Պանաս, ի Թ-Ղ. և Մէրսին:

767. Քանի բանջար.

Սնունն յայտնէ ինչ բանի գործածութիւն. բարակ տերեւ ունի և կարծիր ծաղիկ:

768. Քանտերեպ.

Քերեւ Քանտերեւ կոչելի. վերինէն տարբեր պիտի ըլլայ, որովհետեւ տերեւն (զոր միայն տեսած եմք) թափ ձեւով բաւական թաւ է, նրզած լղերով:

769. Քառակ.

Ի բառս Գալիենոսի նշաննիչ է Ընձախտտի. տես զայս, Թ. 746:

770. Քառնգին.

Որ է Քասանձուպին կամ Քերեկիւպին ըստ Պարսից: Տես Շիրախոս:

771. Քասորեմ ?

Բժշկարան մի գրած է. « Աշրվիտն, որ է Քասորեմն, որ է Ծուարեմն »: Առաջին համանիչ բառն Քերեւս է յունարէն Օրմենիս Օրմոս, յորմէ և Լ. Ormonis, որ փողակերպ (Tubuliforme) ծաղկանց ցեղէն է և Սնթեմի ազգակից. միւս բառն աւելի երկրայական է. քիչ մի Potiriam ձայնը լսեցրնէ:

772. Քավթվուն.

Բանջար. այս բառովս միայն բացատրէ Մանանայն:

773. Քարթափննի.

Լեհակացոց մէջ լսուած բառ է, և կարծուի Գալիէի:

774. * Քարխուն.

Տես Նուին: Վաստակոց գիրքն կ'ըսէ (ԿԿԳ) « Չկասուտաին հունանն ի Քաղին » կամ ի Քարթինն խոթեն, ի հողն թաղին, Քարխուն քինն », եթէ ուրիշ բան չի նշանակեր այս բառս՝ ապա Տարղունն է:

775. Թաւրընջակ.

Բառիս վերջաւորութիւնն նուազական ըլլալով գուշակել տայ զԹաւրընջ, զոր շեմ գտած կամ լսած. Թաւրընջակն այլ ի լրոյ է քան ի գրոյ, և նշանակէ գարնան կանխիկ ծաղկանց մէկը, ինչպէս է և Լ. ա. նունն *Primula*. Փ. *Primovère*. Այս բառի փոխան Շէհրիմաննանն. Կախցնեռակ գրած է: Թուի թէ նոյն է Թաւրընջաքն, որ ըստ Սալաւորեցոյն, « հետ Մշկերուն », կ'երևուայ, որոյ ուրիշ օրինակք գրեն Թաւրընջակ կամ Թորնոչան: — Տեղագիրք յիշած են զԹաւրընջակ ի Գեղարունի, Կոզ, Սոմխէթ, և. այլն: Օտարք յիշեն *P. Acanthis* (Անծղօս) տեսակն ի Տրապիզոն, Կիլիկիա, Թ-Հ. — Հոսեղն *P. Suaveolens* ի Ծանախ, Ջաղալար խանէ. — *P. Macrocalyx* ի Թ-Հ. և ի Պարսից սահմանի. — *P. Elatior* ի Եւրոպ. — *P. Pallasii*, յԱրարատեան լ. ի Կարին. — *P. Amœna*, ի Ճիմիլ լ. — *P. Nivalis*, ի Պանաս, Կովկաս. — *P. Auriculata* յամեն կողմ Թ. և Թ-Հ. — *P. Algida* ի Թ-Հ. ի Գարսպաղ. — *P. Darialica* յԱրանայ Դրան:



Թաւրընջակ.

776. Թըլղի.

Յիշեն Բարխուզարեան (Աղուանք, եր. 55) և Մեղու օրագիրն (ԻԲ, 83). ի կողմանս Հայ-Աղուանից, իրրև ծառ կամ Թուփ:

777. Թելախաշ. — Տես Թեղխաշ:

678. * Թելուկ.

Յիշեն նոր գրիչք մեր. Աթանասեանն (եր. 73) կ'ըսէ. Սովորական բարձրութիւնն երկու կանգուն, բազմանիւղ, տերեւներն ներսէն կանաչ կապոյտ, դրբսէն մոխրազոյն՝ ոպիտակ փռով, մանրիկ հունձով. դալար եղած ատեն կ'ուտուի իբր աղցան. իսկ Թաղիագեանն կ'ըսէ՝ թէ կատուախաղողն է. բայց սա միթէ ուտելի է. Թերեւս նոյն է և.

779. Շըն-Թելուկ.

Չոր և Աթանասեանն (եր. 74) անուտելի վկայէ:

780. Թեղանի տակ.

Ասոր կեղեւը յիչ Բժշկարան մի՛ քաշուած ջրից գեղոց մէջ. ինքն անժանօթ,
Թերեւ հետեւեալն ըլլայ.

781. Թեղի. Թեղեայ ծառ.

Վայրի ծառոց բարձրագոյններէն մէկն, բոլորակաձեւ կամ աչտարակաձեւ. բայց
շատ ազգակիցներ այլ ունի, զորս որոշել դժար է, և իբրեւ նոյնանիշ համարուին
սա և Էնձնի Պտղի, Նշրտնեկի, (զորս տես ի կարգին), այլ և Բարդեկեկեկի զոր յի-
շած եմք, որոց աւելցընեն Բժշկարանք և բուսարառգիրք ոմանք և զՏուղտ, որ ս-
վորաբար նշանակէ ծանօթ ծաղիկն *Althea*. բսել է թէ առ նախնիս կամ այս
անուամբ եւս վայրի ծառ մի ճանաչուէր, կամ Տուղտ ծաղկան Թեղի այլ կ'ըսէին:
Ամիրտ. յԱնգրիտաց անպէտան բայայայտ կ'ըսէ. « Թեղի, որ է Սպիտակ Տուղտն,
» և Թուրքն Սուրբան օրի առէ. և Ար. Խարմի պեռզ ». Ուրիշ մի գրէ, « Թեղի՛
» Տղտին քոքն է: — Դարձեալ, և ուրիշ մի է, « Թեղի՛ որ է Դարար Չուֆա »:
— Ուրեմն Թողունք զայս ի բառն Տուղտ, և քննենք զծառն. որ է *L. Ulmas*,
Փ. *Orme* և մատղաշն *Ormeau*. Ռ. *МОЛОДОЙ БАРЬ* Թ. Գարա աղամ, ըստ
Բժշկարանաց մերոց, այլ և « Տարտար, որ է Շէձար զահր ըլլ-պախար? որ Թուրքն
» Դարայ աղամ առէ, և հայ լեզուաւ այս ծառիս Թեղի ասեն. . Եւ յարժամ
» միրգն ելնէ և ի վերայ կաշուկ իրք մի կայ, զան առնուն և ի յերեսն օժեն,
» ճէ տայ. և թէ այն կաշուկ գիճութիւնն չորնայ՝ կենդանի մի կու լինի որպէս
» Մեղեխ, և զան ծառին տերեւն կ'ուտէ: Եւ թէ զան ծառին կեղեւն քայտով
» տրորեն և օժեն պիտակին, օգտէ. և թէ ի տակէն մէկ կտոր ի կրակն ձգես և
» մէկ ծայրն ի դուրս լինի՛ այն փայտին լուրն ելնէ ի մէկայլ ծայրէն »: Ուրիշ
շատ օգուտներէն զատ՝ արեւելեան օտար անունները յիչէ: — Վաստակոց գիրքն
(84) ձիոց ջղացաւի դեղ գրէ. « զԹեղիտակն և զԲարդեկեկոյ հերն և զԳիշախտոյ
» տակն եփեա քալ և այնու ծեփեա զլեղն », եւ այլն: — Քանի մի տեսակ Թեղի
կ'որոշեն բուսաբանք, որք գտուին ի Պոնտոս. Դաշտային կոչուածն այլ *U. Cam-*
pestris, ի կողմանս Հայոց: —

782. Թեղօշ.

Անուան մերձաւորութիւնն տեսակն այլ գուշակել տայ, միանգամայն և շիտթել.
ինչպէս Բժշկարանք նոյնանիշ գրեն զսա և զԹեղի՛ ընդ Թ. Գարա աղամ. և *L.*
Սլոռանու, (*Ulmus*). ի Ս. Գիրս յիչի այս ծառս (*Եսայի*, ԽԴ, 14. Բ մնաց Բ. 8)
ուր լատինն *Pinus* գրէ. բայց եթէ ըստ ոմանց ի մերոցս նոյն է Գարա աղամ և
Տեփտար, զոր զուգեն ընդ Թեղի և Թեղօշի. Տէփտարն է Հնդկաց Տեփտարա, *L.*
Cyperus Devadara, որոյ համար գրէ Ամիրտ. թէ « Թ. Ղին աղամի առէ. ինքն ի
» Յրդի ծառ կու նմանի, և օգտէ ջղերուն Թուրքեան » ևն: Հնդկի և Թուրք ա-
նուանքն նոյնանիշք են, իբր Դիւսաց կամ Քալաց ծառ. իսկ մեր կամարկապոցին
այլեւայլ ծառերու զուգելով խառնակ գրէ. « Թեղօշ՝ Սալվ. Մախր, Քամ. ինքն
» Սէլվի ծառն է, որ է Բեւեկն, Եղեւնափայտ »:

Թերեփուկ. — Տես Տերեփուկ:

783. Թերխաշ.

Բանջարեղէնի տեսակ մի կանգնաշափ բարձր, մատի հաստութեամբ. որ՝ ըստ
ամաննց՝ միայն մէկ տերեւ մի կ'արձըկէ, բայց գրեթէ Թղենույ տերեւէն այլ մեծ, և
Թէ և կծուահամ՝ բայց կ'ուտուի. որձայն կոցուկ կոչուի կամ Էրժժուկ, դեղին ծա-
ղիկ մ'այլ ընծայէ ի ծայրն: Տերեւին ճապաղ և քանի մի մաս բաժնուած ձեւէն՝
Արշամագի կոչեր են մեր նոր գրիչք: Թուի
Թէ ազգակից է Լ. Heracium, Փ. Berce
կոչուածին. որոյ այլեւայլ տեսակներէն
գտուին H. Pubescens ի Վարդոյ, Նախնա-
ւան. — H. Apifolium ի կարին, Ղիմիլ և.
H. Brevittatum ի Գարապաղ. — H. Pastina-
caefolium ի Սիսիան, Վարաժնունիք. — H.
Incanum ի Թէքոսաղ. — H. Choradatum ի
Գարապաղ:



Թրակիչ.

784. Թընկըլ.

Ըստ Տրապիզոնեցեաց Զղեար պատուէն է:

785. ԹԹուաշ. — Տես Գինեկոթ

786. ԹԹուարօշ.

Խոտույրեցաց ծանօթ, բանջարեղէն Թուի:

787. ԹԹուիմ.

Գաղիենոսի բառից մէջ գրուի. « Բետունի-
կես՝ Թրուիմի արևատ »: Յ. բառն հաւանօ-
րէն նշանակէ Betonica, Փ. Bétoine. ուրիշ
օրինակաց մէջ այն բառին դիմաց գրուած է
լոտուներս կամ լաթի սերակն. տես զայս:

788—89. ԹԹուկիչ. ԹԹունիմ. ԹԹունուկ. Թրժնջուկ. Թամաուիմ. Թրժկիմ. Թրժնուկ.

Յայտ է որ կամ լեզուի կամ գրչի այլայլութենէն այսչափ շատցեր է մի և նոյն
անունն, կրնանք ըսել Թէ և բոյսն. վասն զի նոյն համարուի և Գառնականջն (Թ. 435),
մանաւանդ ըստ Ամիրտաղլաթայ կամ օրինակողին, որ գրէ Ար. բառով, « Հոսնայգ,
» (حماص) որ Հայն ԹԹուկիչ ասէ, որ է Գառնադմակիկ, և Թ. Դոզդոզդոզդի ասէ:

» անուոց լինի և ի լերունքն այլ լինի. լանն այն է որ անուենիքն լինի... Յեղ մի այլ
 » լինի որ ի ջրին մէջն կու բուսնի (որ է Հոսանայ ըլ-մայի, *سالم*) և ան-
 » բեւն նման է Բասնու մնառղին? տերեւին, և ի գաղաթն հունս կու ժողովի, և
 » թէ եփեն և ուտեն՝ օգտէ փորուն պնդութեան... Ատէ Պա. Թէ ինքն շատ ցեղ
 » է, մէկ վայրի մէկն անուոց, մէկն ջրի, և այն որ ջրի է Աքսուրանարան? ասեն,
 » և այն որ վայրի է՝ Սիլիս վայրի կ'ասեն, և Հոսանայ ըլ-պախար կ'ասեն, և ինքն
 » ի լերունքն կու լինի և ի Թուլ հողու վերայ կու բուսնի. և Հոսանն այսոր Պա.
 » տաղ աղիտն ասէ, և Արտիզոս այլ ասէ »: Թողլով գիտնոց զքննութիւն և ուղ-
 զութիւն յունական բառիցն՝ յիշմբ արեւելեան մ'այլ ըստ Ամիրտ. գրութեան:
 « Թրրիլընի հոսնտ, որ է այս հայերէն բառով, և Պ. Թռռիլի Թռռչայ ասէ »: արիշ
 Բժշկարան մի ջրային Թթուկիլը կոչէ « պարսկերէն՝ Թռռչայ »: — Բառգիրք
 մ'այլ գրէ. « Բետակիկէն՝ Թրթկէն արմատ. *Acetosa* ». որով վերոյգրեալ Թթուկն
 կ'ըլլայ մի և նոյն Թթուկիլ. իսկ լ. բառն ստոյգ է, և աւելի որոշելով կ'ըսուի
Rumex Acetosa, Φ . *Oseille*. — Քալանթարեանն *Lapathum* համարի, որ ըստ մեզ
 պատշաճի Աւելուկի. Շատ տեսակ Թրթնլուկ կայ, որոց մէկն Հայկական կոչուի,
R. Armenus, ի վարածնունիս տեսնուած. — Ալպեանն, *R. Albinus* ի Մրկեզար
 Ալաշկերտի. — *R. Angustifolius* յԱրագլիղուխ լ. Սիւնեաց. — *R. Conglo-*
meratus ի Թ-Հ. — *R. Stenophyllus*, ի Կորի. — *R. Scutatus*, ի Թ-Հ. — *R. A-*
cetoselloides ի Թ-Հ. Պնտոս, Հր. կովկաս. և այլն:

790. Թիւմ. — Տես Զտեմոս:

791. Թլքի?

Ըստ ոմանց է կաղամախի կամ Սուի. եթէ նոյն չէ ընդ Թրլդի:

792. Թխածաղիկ.

Աթէ օտար լեզուէ Թարգմանուած չէ. յիչէ Քաղերունի ի կողմանս Կարսի:

793. Թխտնի.

Ըստ Ռոշքեանի է « Մառ, որոյ կեղեւն է յոյժ սպիտակ, և յարմէ Թիլիտ հանի », կարանման հիւթ մի. և համարի լ. *Betula*, Φ . *Bouleau*. Դանտուր է անտա-
 սիկ մի Թխտնեաց ի Մասիս, 7800' բարձր տեղ: — Տես և Հաւամբգի:

794. Թղկի. Թղկենի. Թխկի. Դոքի. Տխկի.

Այսպէս այլեւայլ արտասանութեամբ գրուի ի նորոց, և յիշուի յարեւելեան
 Հայս, և մի և նոյն ծառն կարծուի. լ. *Acer*, Φ . *Erable*, փշոտ ծառ մի է, և
 շատ տեսակներ ունի:

795. Թմրի.

Այսպէս կոչուի ի նորոց լ. *Tilia*, Φ . *Tilleul* ծառն. Թ. Օճրանուր, զոր ոչ
 Պայթար յիչէ և ոչ Ամիրտ. Թէ ցուրտ և թէ բարեխառն կլիմայից ասկ գտուի:

և քանի մի տեսակներ ունի. որոց մին կամ միւսն մեր երկրին մէջ այլ դասու-
լուն վկայէ անունն: Տես և Լորի:

Թմրուլ. — Տես Թամրույ:

ԹմրՌինտի. — Տես Հնդկ Արեւսեակ:

796. Թնալի. Թնօսլի. Թնըպու.

Հին Բժշկարանն գրէ. « Խարիկոն՝ Թնօսլի, Սոնկ » . առաջին բառն է յունա-
րէն, յորմէ և Լ. Agaricus, Փ. Agaric, և Ար. Ղարիքուն, ۱۳۵۲, Լ. Հ.
Ղարիկան, որ է տեսակ ինչ Արնկոյ. ըստ Ամիրա. « Փ. Ղարբան կօչակի ասէ.
» էգ և որձ է. լաւն այն է որ սպիտակ լինի և կակուղ ». շատ տեսակ բժշկա-
կան օգուտներն յիշելէ ետեւ՝ գրէ և զայս. « Թէ կտոր մի մարդ ի վիզն կախէ, կորն
» (կարին) զինքն չի խայթէ: Եւ այն որ սեւ է՝ պինդ է և ծանր է, չէ աղէկ.
» և այն որ սպիտակ և թեթեւն է և կակուղ է՝ լաւ այն է. և չէ սլատեհ որ
» ծեծեն, այլ ի մազն քսեն. որ ի վայր Թափի՝ լաւ է » :

797. Թնջուկ.

Այս այլ Սունկի՝ ցեղէն է. Գալիենոսի բառից մէջ գրուած Բողխոս՝ Թնջուկ,
և սխալմամբ Բոլխոս. Լ. Boletus, Փ. Bolet. Թէ՛ ուտելի տեսակներ ունի թէ
Թիւնաւոր:

798. Թղնոյ Մաղիկ.

Այսպէս գրուած է, Թարգմանեալ Քիմիական գրոց մէջ, որ գուցէ Թղնոյ ծա-
ղիկ կարգաւու էր, եթէ Թղնին ծաղիկ ունի:

799. Թոզախ ?

Բժշկը. մի բերնի վերքերու զեղ գրէ. « Աւ զՊրտուն՝ որ ի լրին մէջն բուսնի,
» և ի զլստն Թոզախ ունի. երէ՛, և զմոխիրն ի բան տար » : Գուշակուի որ
Պրտունն փունջն կամ ծաղիկն է:

800. ԹոՅոշ.

Այսպէս այլ կոչուի Երէջի բոյսն: Տես Թաղաղու, Թիւ 757:

801. Թոխըմալի.

Մաս մի կարծիր կեղեւով. շատ կարծր փայտով և բարակակ ճգերով. ծանօթ
ի Տարօն:

803. Թոր.

Բժշկարան մի կ'ըսէ միայն, « Նման է հոտն և համն ի Թուրինը », Թուր Թուրինն խոտն. տես :

803. Թորն. Թուրն.

Ի բառս Գալիենոսի՝ յոյն Անդրաքնէ անուան գիմաց գրուած է, որ եթէ 'Ασφραχος է, Լ. Anthericum, Նրէշի բոյսն է, որպէս վերայիշեալ Թորնն: Բայց Թորն նշանակէ և Եղնալեզու (տ. Թիւ 614): Եղն բժշկապետին հայ բառացրոց Թորնը՝ ոմանք տարբեր բառի և բուսոյ զուգեն. մէկն գրէ Պրոմն, Թ. Βρώμος, Լ. Bromus, Փ. Bromo, որ նշանակէ եւս նիւթ մի ոչ բուսեղէն. ուրիշ մի՝ « Սասինոս ? Թորն »: — Առաջին ծանօթ բուսոց տեսակներու մէկուն համար է անշուշտ Սալաձորեցւոյն տողն.

« Տուրտն ու Թուրնն ու Մեղրիկ ծաղիկն՝ նման են ծաղկանց ծառերուն »:

Ըստ գունոց՝ Բժշկարանք յիշեն Սպիտակ և Կարմիր Թորն:

804. Թորնիկ.

« Բանջար վայրի, ըստ Մանանայի, զոր իբրև մաքրիչ արեան համարին, և » ասեն թէ կրիայն երբ զօժ ստտակէ՝ Թորնիկս իբրև դեղթափ ի վերայ ուտէ »: — Ազնաբք գրոց մէջ այլ յիշուի Թորնիկ խոտ, որ անշուշտ Մեղրածուծն է, վասն զի ի կողմանս Կարնոյ թէ Թորնիկ կոչեն զայն թէ՛ Մուծ:

805. Թորնոռիկ.

Տէր Աւետիքեանն յիշէ Գեղաբունեաց բուսոց մէջ: Ուղղագոյն երեւի Թորնիկ գրել:

806. Թորմ. Թուրմ.

Ըստ Սիմ. Կամարկապոյ Ար. և Պ. լեղուաւ ? Բակկայ նշանակէ. Թերեւս Թըրմուսի հետ շփոթելով:

807. Թուղ. Թզնի.

Ամենէն հնագոյն և միակ բոյս յանուանէ յիշեալ ի Գրախտին, յերջանկութեան մարդոյն, և Թուառութեանն քող. յամէն կողմ՝ երկրի չի գտուիր, բայց ամենուն ծանօթ է ի գրոց, և ի տեսոյ՝ գօնէ չորն. և իբրև համեղ և անդադար պտուղ՝ ոչ միայն հին արտաքին հեղինակք յիշեն և առասպելք, այլ և Ս. Գիրք Խաղողոյ հաւասարեն, Նրէից երջանիկ կեանք մաղթելով՝ բնակիլն « ընդ Որթով » և ընդ Թզնեաւ »: Իսկ Փրկիչն մեր՝ ամառուան նշան տուաւ զայն. « Ի » Թզնեւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա օտքն կակղացին և » տերեւն ցցուիցի, գիտէք թէ՛ մերձ է ամառն »: Անգործ և անշահ մաղդիկն այլ՝ անպտուղ Թզնեւոյ նմանցուց, և չորցուց այնպիսի ծառք: — Ամիրս. ստո.

րագրէ Ար. Թին, ۳۳ բառով, և զանազաներով Գալարը՝ Ըռապտ, Չորը՝ Երայիս. առաջինին համար գրէ. « Լաւն այն է որ վագրիի ասեն և սպիտակ » լինի կեղեւն, յետեւ կարմիրն է, և այլ յետեւ Սենն է. և այն որ խակ » է՝ հովուքեան մօտիկ է ինքն, և ճիշտուող. և թէ կոծիծուռն օծես՝ օգտէ, » և պիտակին այլ օգտէ. և այն Թուզն որ սպիտակ և հասուն լինի՝ զանձն ա » ղէկ կերակրէ, և լաւ քան զամենայն միրգ շուտ հալի ի ստամոքն, և զանձն ա » ղէկ գիրացընէ. . . Եւ թէ պախրու միան յուշ եփի, կտոր մի Թգին ճղէն ի » պտուկն ձգէ, շուտ եփի միան և տրորէ », եւ այն: Չորին այլ օգուտներն և քնաները գրէ: Մէկ օգուտն այլ Երայի մարգարէն յայտնեց Եզեկիայի՝ վերքերը բժշկելու (Դ. Թագ. Ի. 7)

Հին բժշկիւր. այլ գրէ Թզոյ համար, թէ, « Քան զամենայն միրգ լաւ է. » զքնուքին կակուղ պահէ, զանձն աղէկ կերակրէ, և սրբէ զերկկամուռն ու » զմսանք. և քիչ մի քամի և ողի ձգէ ի մարդ. և քաջասն լաւ է, զլերդն ու » զփայծաղն սրբէ. և Մորէով լաւ է ուտել, կամ յետ Սքնճպին ի վերայ խմել, » որ մեղրով լինի և որբէ զկուրծքն »: — Մեր երկրին կիմայն Թզենոյ համար ցուրտ է, բայց գտուի այլ հարաւային կողմերը, իսկ Արիլիկա յայտ է որ շատ յարմար էր: Վաստակոց գիրքն Թուզը Թարմ պահելու կերպ ցուցընէ (Գլ. ՄԻԲ). « Առ նոր պուտուկ և լից զկանաչ Թուզն ի ներք. այսպէս միեւս զպտուկն ի » մուտտառն (քաղցու, նոր գինի), որ պուտուկին բերանն և կարասին՝ հաւասար » դան իրերաց, և խփես զերկոսեանն և ծեփեա և թող. յորժամ ուզենաս՝ » զԹուզն Թաղէ (Թարմ) գտանն և անուշ. և թէ յապիկեայ բղուզ դնես և » մոմով գրեթանն կաշնուս ամուր, նոյն է »: — Նոյն գիրքն շատ տեղ յիշէ զԹուզ պ կամ Թուզ Թուզ, որ է վայր գայ, և շարոց արա և կախես ի տանու Թզենին, » նա շտայ Թախել զպտուզն, արգելու և շտորեր տայ առնել, և ճարտար հա » սուցանէ զԹուզն » — Գառանց կաթն շտոցընելու համար այլ դեղ կու տայ Թզենոյ չոր տերեւը, և չորցած Թուզ Թուզ: Այս վայրի Թզենին կոչուի Լ. Caprificus, իսկ ընտանին պարզ Ficus, Փ. Figuier. — Թզենոյ ճիւղերուն զէպ ի վայր կախուիլը, միանգամայն և պտղոյն ազնուութիւնը նշանակէ Մի. Գոշ՝ առակաւն (ՃԲ). « Հարցաւ ընդ Թզենի, թէ գիւրդ է՝ զի բազում ոտտա տա երկ » րաւ տարածանես. և նա ասէ, Քանզի բազում են Թշամիք իմ, և ես խօնարհիմ » դի մի ոտտակոտոր եղէց, և նախ քան զելանելն յիս՝ յագեցուցանեմ. մտանան » զչարութիւնն: — Տնտեսութեան կամ դեղոյ համար չորցուցած և պահուած Թուզն՝ Պաղարտիս կամ Պաղարտիկ կ'ըսուի, ըստ ոմանց յոյն Παλαδίη բառէն փոխուած: — Թեփուկ հիւանդութեան զեղ խրատէ մեր բանգիտաց մէկն, « Խո » ժոնայի չոր Թուզ ». եթէ նշանակէ զԽոժոնի, սա Գուգարաց Մորոփոր գա » առին մէջ է, որ կուրի գետահովտին մէջ ըլլալով՝ Թզենաբեր տեղ մ'այլ յայտնէ ի Հայս, զոր և արժան է քննել:

808. Թու. Թ. Թենի.

Լ. Morus, Փ. Mouriér. Ա. Թ. ۳۳ վերոյգրելոյն (Թզենոյ) գրեթէ ձայնակից, և անոր պէս ծանօթ և նշանաւոր, և աւելի եւս. զի ոչ միայն պտղովն յարգի է, այլ տերեւովն մետաքսառիթ որդանց կերակուր և նիւթ պատրաստելով, որ երբեք

միայն հեռաւոր արեւելեան աշխարհի բնակչաց՝ Սերաց և շենաց ծանօթ, հիմայ ընդհանուր աշխարհի, որոյ համար և մշակութիւնն հետ զհետէ աւելի ընդարձակի և զարգանայ, թողլով զայլս, և ի ձեռն մերազնեաց, մանաւանդ ի կողմանս արեւելեան Երասխայ հովտի կամ հարաւային Սիւնեաց, և ի կողմանս Գանձակայ ուր՝ ոմանք Մոչ կ'անուանեն տերեւները: Մեր Ամասիացին քանի մի տեսակ թըթոյ յիշէ. « թուր Հոչլին, որ է Քաղցր թութն, որ Ար. Ծարսատ կ'ասէ, և Պ. »
 « թուրի սրփոտ կ'ասէ, և Հ. Սպիտակ թութ ասեն. և ինքն դաւար թղին պէս է »
 « ամենայն դիմաք. և քամի ունի, և չէ աղէկ կերակուր, և ստամոքին զեն է, և »
 « պիղծ արիւն ընծայի յիրմէն... և լաւն այն է որ խոշոր լինի և քաղցր բնութիւն. »
 « և լաւն այն է որ քան զկերակուրն առաջ ուտեն և յետեւ այնոր պնծիւյին (օշարակ) խմեն: Եւ իր տերեւն Սեւ թղին տերեւնին կու նմանի. և Սեւ թղին »
 « տերեւն Խաղողին տերեւին պէս է. և թէ զայս տերեւն անձրեւի յրովն եռընեն »
 « և զմազն այնով լլանանա՝ սեւ այնէ... և թէ զտերեւն եփեն և ակաւային մաղմատա »
 « առնեն, ցաւն խաղեցընէ:

Թուրի Համիլ (Թըթու ?) որ է Սեւ թուրն. և այս թըթին՝ թուրի Շամի կ'աւսեն, և լաւն այն է որ խոշոր և հասուն լինայ և սեւ լինի. և յորժամ շորացընես՝ զՍումախին զտեղն կու բռնէ... և իր տերեւն օգտէ բերին խնախին (փողացաւ):
 « և իր քամուքն օգտէ պիղծ խոցերուն և շորացընէ », եւ այլն: — Ըստ գումար՝ յիշուի և կարևոր թուր, որ ըստ երազահանից՝ դահեկան նշանակէ, այսինքն սոկի:

— « թուրի վահի **شاد**, **شاد**, որ է Յաշիխն թուրն, որ Պ. թուրի Շահիլ կ'ասեն... և Հ. Մորսննոս պտուղ կ'ասեն. և ինքն զէտ Սեւ թուր է »:
 Այսպէս կ'ըսէ և Պէթար, բայց արարերէն բառն (վահի) վայրի նշանակէ:

— Հոռոմ թուր. Ըստ Բժշկարանի միոյ է « Սեւ թուրն, որ Շամի ասեն »:

— Ի Խառտուր լսուին անուանք այլեւայլ տեսակաց թըթոյ, ինչպէս. Յովայ թըրի. Հոռնոցի թըրի, Խաշ թըրի. Իշրըրեհի՝ մեծութեանն համար այսպէս կու չուած. Տեւ և Դեակ թուր, Լօսի, Մոռուրի:

Հին Բժշկր. գրէ. « թուրն՝ է քաղցր և է որ Մոռգ. Բաղցրն քիչ մի զէպ ի »
 « տաքն է, և զբնութիւնն կակղացընէ, և է որ թորո է. և այն հովու գէճ է. զփորն »
 « կայէ. զստամոք և զաղիք փոյթուէ, և զմիտըն բանայ յուտել. թէ յանօթուց »
 « ուտէ՝ շատ զնայ ի ստամոքէ, և թէ հետ հաց ուտելոյն՝ խանգրէ զկերակուրն »
 « ի ստամոքն... և այն որ խիտա թթու է՝ փողցավի օտուէ: Թէ ըմբելի առնէ՝ »
 « այս նուսխայովս. զթթու թթին լուրն հան ու քամէ. և սու ի յայդ իրէտ »
 « կէս լիտր, և գիր ի ներս գինի 100 դրամ, մեզր 50 դրամ, ի մէկտեղ եփէ՝ »
 « որ զէտ ըմբելի լինի. և ապա առ Չմուռ և Խախա 2, 2 դր. Չափրան և »
 « Պղպեղ դր. դր. (քանի՞) Գղթոր և Մոշոյ պտուղ կէս կէս դր. աղա, մաղէ և »
 « ի ներս խառնէ. և այտիւ խախանչ այնէ »:

Մեր նպատակէն դուրս է թթենույ գլխաւոր բերքին կամ բերոց առթին (մետաքսի) վրայ խօսիլն. բայց հետաքննելի է թէ սա երբ ծանօթացեր և մտեր է ի Հայս, եւս առաւել թէ երբ սկսեր են Հայք զթթենի և զչերամ դարմանել. Խորենացի կ'իմացընէ՝ որ արդէն ազգայինքն ի գործ ածէին զմետաքս, բայց հարուստք միայն. սովորաբար կ'ըսուի թէ մետաքսադործութեան գաղտնիքն և շերամոյ սերմն ի Չ դարու մտաւ ի կայսերական քաղաքն Կ. Պօլս. նոյն ժամանակ (871-2 թուականին) և վարդան Մամիկոնեան՝ որ զՊարսիկ մարդպանն սպան,

նեց, շատ մետաքս տարաւ առ կայսրն՝ ընծայ : Կաղանկատուացի պատմիչ մեր յ'է գարու՝ իր հայրենեաց Հայ-Աղուանից երկրին համար՝ կ'ըսէ, թէ ունի Արքիշատէ և Բամբակ անբառ. ըսել է որ այն ատեն արդէն սկսած էր հօն շիրա մտպահութիւն. և այն կողմերէն ԺՊ-Գ գարուց մէջ շատ մետաքս բերէին յիտալիա, մանբուանդ. ի Լուկկա քաղաք՝ անուանի այն ատեն ի կերպասագործութեան. իսկ Շահ Աբասայ օրերը ի սկզբան ԺԷ գարու, Հայք առանձնաշնորհութեամբ առատօրէն բերէին ի Վենետիկ, ի Տոսկանա և քանի մի ուրիշ վաճառաւոր քաղաքներ, շատ տուրք տալով Շահին, բայց իրենք այլ շատ վատուկէին: Բազրատունեաց ատեն՝ շատ հեղ յիշուին մետաքսեայ զգեստք և սպասք ու զարդք եկեղեցեաց: Առակախօսն (Միս. Պոշ) որ հայրենեաց մօտ էր մետաքսաբեր զաւառներու, իր մէկ հանճարեղ առակն այլ նուիրէ Քթենւոյ, բազրատուով ուրիշ պիտանի ծառայ մի հետ. և չէ անախորժ լսել. « Խնամութիւն առնել ընդ » միմեանս կամեցան թրքնի և Չիրնի. պանծայր ի գորութիւն իւր իւրաքան. » չիւր զք. Չիրնի, յարազուարճութիւն և ի պտզաւէտութիւն, մանաւանդ զի » պտուղ նորա նիւթ է ձիթոյ, և ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի. » իսկ Քթենի ի քաղցրութիւն պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ է մետաքսոյ՝ զոր » օրգունք ծնանին, յորմէ կերպտոք լինին, զոր թագաւորք և իխանք վայելին: » Արում և դիմադրէ Չիրնի՝ զգիւրանցութիւն պտղոյ նորա, և զախտաւորն » լինել հանդերձ՝ քան թէ հարկաւոր, և զի ի գիշերի մերկանայ. բայց լոյս ի » գիշերի վառի: Ատէ Քթենի. Այլ ի տունջեան յիշանի: Եւ ասէ Չիրնի, թէ » ոչ չիշանի, այլ յազգակիցն իւր խառնի. իսկ փառք քո ծաղկընկէց է և ան. » ցաւոր: Եւ այսու պարտեակ Քթենի՝ հայցէ լինել իրին », (այսինքն հաւանի որ ըլլայ խնամութիւնն): — Պրիզոր Աղթամարցի զուարճատէր կաթողիկոսն՝ գարնան ընծայած պտուղներն երգելով նախակարգէ զՔուսթ.

« Թուժն յառաջեաց քան ըզՀալիան,
 Կեռասն աղէկերի նման.
 Միշիշն ի ծառն գեղնեցան,
 Եւ Խնձորին կարմրեցան », եւ այլն:

809. *Թուժիա.

Բայտ է որ այս անուամբ կ'իմացուի մետաղական նիւթ կամ ժանգ, և ի գործածուի ի բժշկութեան. բայց կայ և համանուն ծաղիկ մի՝ ծանօթ Սալաձորեցոյն, որ վկայէ, թէ

« Խառ Թուժիայ ծաղիկ մի կայ, ձեռքն չինգնիր լառըհներուն.
 Ամեն սահմանք չեն գտնուիր, դիմաթ չունի ինքն իր տեղուն »:

Անուշահոտ գեղին կամ մանուշադոյն ծաղիկ է, աչաց դեղ կ'ըլլայ. յիշուած է ի Բարդուղ լերին. ոմանք նոյն համարին ընդ Հօրոտ Մօրոտ, բայց կարնոյ Թութիայն մանրիկ չրթնաձեւից փունջ մ'է, զոր Մշեցիք Շոշոսն անուանեն:

Ամիրո. որ ի սկզբան վկայէ Թութիայի մետաղէ և զուգժու (չինծու) ըլլալը, ի բացատրութեան՝ բուսեղէնի տեսակ երեւցընէ, որովհետեւ « Իր փոխանն՝ » Չիրնիս նուրի է », կ'ըսէ՝ և դարձեալ. « Իսն (Պէյթար) ասէ, թէ Մըր-

միայն հեռաւոր արեւելեան աշխարհի ընակչաց՝ Սերաց և Ճենաց ծանօթ, հիմայ ընդհանուր աշխարհի, որոյ համար և մշակութիւնն հետ զհետէ աւելի ընդարձակի և դարգանայ, թողով զայս, և ի ձեռն մերազնեաց, մանաւանդ ի կողմանս արեւելեան Երասխայ հովտի կամ Հարաւային Սիւնեաց, և ի կողմանս Գանձակայ ուր ոմանք Մոլ կ'անուանեն տերեւները: Մեր Ամասիացին քանի մի տեսակ Քըթոյ յիշէ. « Թուրք Հոչլին, որ է Քաղցր Թուօն, որ Ար. Ծարաստ կ'առէ, և Պ. » Թուրքի սրփրտ կ'առէ, և Հ. Սպիտակ Թուօ ասեն. և ինքն դաշար թղին պէս է ուսննայն դիմաք. և քամի ունի, և չէ աղէկ կերակուր, և ստամոքին զեն է, և պիղծ արիւն ընծայի յիրմէն... և լաւն այն է որ խոշոր լինի և քաղցր ընութիւն. » և լաւն այն է որ քան զկերակուրն առաջ ուտեն և յետեւ այնոր զքնծիպին (օշարակ) խմեն: Եւ իր տերեւն Սեւ թղին տերեւնին կու նմանի. և Սեւ թղին տերեւն Խաղողին տերեւին պէս է. և թէ զայս տերեւն անձրեւի ջրովն եռցընես և զմաղն այնով լվանաս՝ սեւ այնէ... և թէ զտերեւն եփեն և ակուային մաղմատա և առնեն, ցաւն խաղեցընէ:

Թուրքի Համիզ (Քըթու ?) որ է Սեւ Թուրքն. և այս Քըթիս՝ Թուրքի Շամի կ'առնեն, և լաւն այն է որ խոշոր և հասուն լինայ և սեւ լինի. և յորժամ չորացընես՝ զՍոււմախին զտեղն կու բռնէ. և իր տերեւն օգտէ բերնին խնախին (փողացաւ), և իր քամու քան օգտէ պիղծ խոցերուն և չորացընէ », եւ այլն. — Ըստ գունոց՝ յիշուի և կարմիր Թուրք, որ ըստ երազահանից՝ դահեկան նշանակէ, այսինքն սպի:

— « Թուրքի Վահի فاحی , այժ, որ է Բաշեխին Թուրքն, որ Պ. Թուրքի Շամի կ'առնեն. և Հ. Մորմենու պտոռ զ'առնեն. և ինքն զէս Սեւ Թուօ է և Այսպէս կ'ըսէ և Պէլթար, բայց արարերէն բառն (վահի) վայրի նշանակէ:

— Հոռոմ Թուրք. Ըստ Բժշկարանի միոյ է « Սեւ Թուօն, որ Շամի ասեն »: — Ի Խուսու՛նուր լուսին անուանք այլեայլ տեսակաց Քըթոյ, ինչպէս. Զսկայ թղրի. Հռնոռի թղրի, Խաշ թղրի. Իչքըրենի՝ մեծութեանն համար այսպէս կու չուած. Տես և Դնակ Թուրք, Լոսի, Մոսուրի:

Հին Բժշկը. գրէ. « Թուօն՝ է Քաղցր և է որ Մոռգ. Քաղցրն քիչ մի զէպի տաքն է, և զընութիւնն կակղացընէ, և է որ Թրոռ է. և այն հովու զէճ է, զփորն կապէ, զստամոք և զաղիք փոյթուէ, և զմիտքն բանայ յուսել. թէ յանօթոց ուտէ՝ շոյտ գնայ ի ստամոքէ, և թէ հետ հաց ուտելոյն՝ խանգրէ զկերակուրն ի ստամոքսն. և այն որ խիտա թթու է՝ փողցամի օգտէ: Թէ ըմբելի առնէ՝ այս նուսխայովս. զթթու թթին լուրն հան ու քամէ. և ա՛ռ ի յայդ ջրէտ կէս լիտր, և գիր ի ներս գինի 100 դրամ, մեզր 80 դրամ, ի մէկտեղ եփէ՝ որ զէտ ըմբելի լինի. և ապա առ Չմուռ և Խտիխա 2, 2 դր. Չաֆրան և Պղպեղ դր. դր. (քանի՛) Գղթոր և Մոշոյ պտուղ կէս կէս դր. ազտ, մաղէ և ի ներս խառնէ. և այսիւ խախանչ այնէ »:

Մեր նպատակէն դուրս է Թթենույ գլխաւոր բերքին կամ բերոց առթին (մետաքսի) վրայ խօսին. բայց հետաքննելի է թէ սա կ'ըր ծանօթացեր և մտեր է ի Հայո, եւս առաւել թէ երբ սկսեր են Հայք գրթենի և զէրամ դարմանել: Խորենացի կ'իմացընէ՝ որ արգէն ազգայինքն ի գործ օժէին զմետաքս, բայց հարուստք միայն. սովորաբար կ'ըսուի թէ մետաքսագործութեան գաղտնիքն և Ներամոյ սերմն ի Չ դարու մտու ի կայսերական քաղաքն Կ. Պոլիս. նոյն ժամանակ (871-3 Թուականին) և Վարդան Մամիկոնեան՝ որ զՊարսիկ մարզպանն սպան,

նեց, շատ մետաքս տարաւ առ կայսրն՝ ընծայ : Կաղանկատուացի պատմիչ մեր յ'է գարու՝ իր հայրենեաց Հայ-Աղուանից երկրին համար՝ կ'ըսէ, թէ ունի Ապրիլըսմ եւ Քամբակ անբաւ. ըսել է որ այն ատեն արգէն սկսած էր հօն չերաւ մապահութիւն. և այն կաղմերէն ԺԳ-Դ գարուց մէջ շատ մետաքս բերէին յիտալիա, մանրուանգ ի Լուկկա քաղաք՝ անուանի այն ատեն ի կերպասագործութեան. իսկ Շահ Աբասայ որերը ի սկզբուն ԺԷ գարու, Հայք առանձնաշնորհութեամբ առատորէն բերէին ի Վենետիկ, ի Տոսկանա և քանի մի ուրիշ վտնաւաշահ քաղաքներ, շատ ատարք տալով Շահին. բայց իրենք այլ շատ վտառկէին : Բագրատունեաց ատեն՝ շատ հեղ յիշուին մետաքսեայ զգեստք և ոպար օգարգք եկեղեցեաց : Առակախօսն (Մի. Գոշ) որ հայրենեաց մօտ էր մետաքստեր գաւառներու, իր մէկ հաննարեղ առակն այլ նուիրէ թԹենույ, բողոքատելով ուրիշ պիտանի ծառայ մի հետ. և չէ անախորժ լսել. « Խնամութիւն առնել ընդ » միմեանս կամեցան թրեկի և Չիրեկի. պանծայր ի գօրութիւն իւր իւրաքան. » չիւր ոք. Չիրեկի, յարազուարճութիւն և ի պողաւտութիւն, մանաւանդ զի » պտուղ նորա նիւթ է ձիթոյ, և ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի. » իսկ թԹենի ի քաղցրութիւն պտղոյ, և զի սազարթ իւր նիւթ է մետաքսոյ՝ զոր » որդունք ծնանին, յորմէ կերպապք լինին, զոր թագաւորք և իշխանք վայելին : » Արում և դիմադրէ Չիրեկի՝ զգիւրանցութիւն պտղոյ նորա, և զպիտաւորն » լինել հանդերձ՝ քան թէ հարկաւոր, և զի ի գիշերի մերկանայ. բայց լոյս ի » գիշերի վառի : Ասէ թԹենի. Այլ ի տունջեան յիշանի Եւ առէ Չիրեկի, թէ » ոչ չիմանի, այլ յազգակիցն իւր խառնի. իսկ փառք քո ծաղկընկէց է և ան. » ցաւոր : Եւ այսու պարտեալ թԹենի՝ հայցէ լինել իրին », (այսինքն հաւանի որ ըլլայ խնամութիւնն) : — Գրիգոր Աղթամարցի զուարճասէր կաթողիկոսն՝ գարնան ընծայած պտուղներն երգելով նախակարգէ զթութ.

« Թութն յառաջեաց քան ըզՀալիսն,
 Կեռասն աղէկերի նման.
 Միշմիչն ի ծառն դեղնեցան,
 Եւ Խնձորին կարմրոցան », և այլն :

809. *ԹուԹիա.

Քայտ է որ այս անուամբ կ'իմացուի մետաղական նիւթ կամ ժանգ, և ի գործածուի ի բժշկութեան. բայց կայ և համանուն ծաղիկ մի՝ ծանօթ Սալաձորեցոյն, որ վկայէ, թէ

« Խոտ ԹուԹիայ ծաղիկ մի կայ, ձեռքն չինգնիր ջառհչներուն.
 Ամեն սահմանք շեն գտնուիր, դիմաթ չունի ինքն իր տեղուն » :

Անուշահոտ դեղին կամ մանուշաքոյն ծաղիկ է, աչաց դեղ կ'ըլլայ. յիշուած է ի Բարդուղ լերին. ոմանք նայն համարին ընդ Հօրոտ Մօրոտ, բայց կարնայ ԹուԹիայն մանրիկ չրթնաձեւից փունջ մ'է, զոր Մշեցիք Շոշրան անուանեն :

Ամիրա. որ ի սկզբան վկայէ ԹուԹիայի մետաղէ և զուգծու (չինծու) ըլլալը, ի բացատրութեան՝ բուսեղէնի տեսակ երեւցընէ, որովհետեւ « իր փոխանն՝ » Չիրեկու թուրն է », կ'ըսէ՝ և դարձեալ. « Իպն. (Պէլթար) առէ, թէ Մար-

» տենուն այլ կու շինեն Թութիայ, զիր տերեւն և զծաղիկն և զմիրգն՝ ի դա-
 » լար ատենն առնուն և ի քարէ պտուկ մի դնեն, և զքերանն շոխով (չաղախ)
 » ծեփեն և ի փուռն դնեն, և ծակեր այնեն ի յայն շողախն. և եփի ի փուռն.
 » և յետեւ ի պտուկ մի այլ դնեն. և այլվի զէն առաջինն այնեն. և յետոյ հա-
 » նեն և լվանան, և ի բան տանին. և ի Ձիթենի ծառէն այլ այսպէս կու առ-
 » նուն. և ի Բարձուենեկէն այլ այսպէս կ'առնուն. և զՁիթենուն զկուտն կու
 » հանեն »: Կտուած պտուղն ըստ Պէթարայ՝ է Սերկեւիլ, Թէ և յիշէ նա և
 զՁիթենին. այլ աւելի օտար ըսածն (ըստ փռանկ Թարգմանութեան), է վերո-
 յիշեալ պտուկներուն տեղ խցիկներ ըսելն՝ փռան նմանութեամբ. Հեղինակք Յու-
 նաց Թութիային նիւթը Կարմիա (Փ. Cadmie) կոչեր են, որ յիշուի և ի Բժըշ-
 կարանս մեր և բացատրի Անադաժ Դարդիր: — Սահակ Մանուկեան ի բժշկա-
 կան բառս՝ զՄիշմիշ (Միրան) Թութիայի երևեկի գրէ:

810. Թուլակ.

Ըստ Սիմ. Կամարակապոյ պարսկերէն նշանակէ Սեխ, Պտեխ:

811. Թուլան խոտ.

Ըստ նոյն Սիմոնի՝ այս ալ ա Սլոռոռ խոտ մի է, Ընձապան », որոյ և հին լատին անունը գրէ Փատտայիանդես, Pardalianches. Տես Ընձախոտ:

812. Թուլխը.

Կաւարոյս. այսպէս գրած է Սար, առանց աւելի բացատրութեան:

813. Թուլխմար ?

Ըստ Սալաձօրեցւոյն,

ա Խաչխաչն.. գեղեցկացիւր հետ Թուլխմարուն ».

զոր՝ ուրիշ օրինակ գրէ Դարմարոն: Անունն յիշուած է և յօրագիրս, բայց ոչ բացատրուած:

814. Թուլխմաքան.

Փրփրեմն է, ըստ բառագրոց, տես զայն: Բուշկարան մի տաքութենէ վիրաւո-
 բուած լեզուի դեղ զուգէ զայս, Սուժախի, Եռան վարդի և ուրիշ նիւթոց հետ:
 Եոյն և հունտերու հետ յիշէ « Թուլխմաքանն, Մանանեխն, Հարֆն; Շունիզն », եւ այլն, և երկու տարի դիմանան, կ'ըսէ:

*Թուլխարի. — Տես Չագխոտ:

815. Թուլրինջ. Թրնջի.

Թուլբարէն այլ  Լ. Citrus vulgaris. Փ. Citronnier Bigaradier. Եարինջ

և թուրինը կըրնան նմանութեամբ հարազատ եղբայր կոչուիլ, այլ և խեղեփք վասն զի երկուքն այլ իրարու հետ չփոթուին կամ նոյն համարուին, կամ մէկ անուամբ երկու տեսակքն եւս յիշուին, ի զանազան գրողաց . Պէյթար միայն զՆարինը յիշէ, այսպէս և Ամիրտուվաթ . սա երկու հեղ գրէ Նարինը, զմէկն կոչելով « որ է լիման », զմիւսն՝ « Ինքն թուրինն է, բայց այլ մանր անուշահոտ . » աղէկն հասունն է . . . Ատէ Սահակն՝ թէ թթուն հով է, չոր է . . . և կերակուր » տայ ուտել և զծարան կորէ . օգտէ տաք ջերմերուն, և ծերոց զեն առնէ » : Այս խօսքէն թուի թէ մեր հիմակուան ճանչցածին հակառակ՝ զՆարինըն կոչէ թուրինը, և զՊուրինըն՝ Նարինը, և գլխինս այս՝ փոքրագոյն, որ հակառակն է ըստ մեզ, Վաստակոց գիրքն այլ Նարինը չի յիշեր անուամբ, բայց թուի զայն իմանալ՝ երբ խրատէ ի հոկտեմբեր ամսեան՝ « զՊրնիլին և զՆոնայիքն և զԼի . » մոնիքն ծածկել » . առանձին գլուխ մի (ԳԻԳ) բան գրած է « Վասն թրուն . » լաց . ՉՊրնիլին՝ յաշնանէն ի վեր մինչեւ ի զարնանամուտն կարեօ, երբ քեզ » պիտի՝ տնկել . և իւրեանս սնուցիչն և գոյացուցիչն՝ պախրցի (հիւսիսային) » հողմն է, և . . . ոմանք որ կամենան զՊրնիլանին մեծ առնել՝ նա զեղն այս է . » որ թեթեւացուցանեն զճիւղան և զաւելի պտուղան ի վայր տան, և զարքենի » թրնիլանին մէն թողուն, նոյնպէս և զաւելի տերեւուն . նա մեծ լինին և աղէկ . . » Եւ զՊրնիլին չէ պարտ տնկել՝ եթէ ոչ մօտ ի պատ և ի պարիսպ . և ի ձմեռն » պարտ է ծածկել », և այլն . ծածկելուն կերպն այլ գրած է : — Միւթար շերացի ստամուրաց տաքութեան զեղ գրէ, զատ յայլոց թթու բուսեղինաց՝ « և » թարուան՝ բանդակով . . . և զՊուրիննին թթուն տուր » :

Ամիրտուվաթ օտարանուն բոյս մ'այլ յիշէ, Չարիմ տրախտ, իբրեւ նոյն կամ նման թրնիլոյ . տես ի կարգի Չ տառի, թիւ 703 : — Պուրինըն ուրիշ ծառոց պտղոց հետ յիշուած է և ի Վարս Հարանց : — Հին Բժշկր . գրէ . « թրունը՝ չորս » բնութիւն է . կեղեւն՝ տաք ու չոր յ'բ սրժ . և յուշ հալի, ապա զայլ կերակուր » հալէ . և միան հով ու գէճ, և գէճն շատ քան զհոգն . . և յուշ երթայ ի ստամուրէ . » և թթուն հով ու չոր . . օգտէ սափրայի և խափակնի (1) . . և զինք չպիտի ուտել » (գկուան) քան այնոց որ մահդեղ լինի տված՝ օգտէ . զբնութիւն կակղցընէ, և » զրերնին հոտն անայցընէ . և կեղեւն զնոյն գործէ . և զՊուրինըն յանօթից կեր, » և մի հաց ուտեր ինչլի երթայ ի ստամուրէ . թէ ոչ թուխմա այնէ . զթթուն ծամէ » և ի վերայ երբոյնի (հերբուն) անժ, օգտէ . և իւր ըմբելին՝ զինեհարի օգտէ . » զտաքութիւնն տանի, զփորն կապէ » :

816. Թուրինջխտո . Թրնջխտո . Թուրունցակ խտո .

1. Melissa, ֆ . Melisso . Ռ . Пчельникъ . Ամիրտուվաթ ըստ Պէյթարայ Պ . անուամբ ստորագրէ . « Պատրաննպուռէ ܟܝܘܘܢܝܘܬܝܘܢ որ 2 . Թուրիննխտո ասէ » և Թ . Օղուշ օրի . Ինքն երկու ցեղ է . լաւն այն է՝ որ հոտն անուշ լինի . . Իպն . » ասէ թէ ազգ մի այլ կու լինի՝ որ հոտն թուրիննի հոտ կու նմանի . և թէ ի տա . » կէն և ի տերեւէն և ի հնդէն առնուն և չորացընեն, և ի մէկ լաթ մի կապեն . և » ի վերայ ապրչում փաթթեն և ի ձեպն դնեն՝ որ է գրապանն, և ի հետ վերցընէ ,

1 . Խափակն կամ խափանակ, է Թ . Խօֆալա ըսուած սխտան, (նեղձամղձուկ ըլլաւ, և ո՛յնն :

ն նա խիստ սիրուն և պատուական և ընդունելի լինի ի մէջ մարգկան, և ուժ մտ
» որ լինի՝ խնդիրքն կատարի, և ուրախութիւնն չերթայ քանի որ ի հետն լինի ո՛ր
վատասկոց գիրքն այլ առջի ըսածին նման գրէ (ՄՂ) . « Խոտ մի զոր Թուրքն
» Օղուօթի ասէ, հտան Թուրիննի է . մեղուն որ կոչէ (չուէ, երթայ) ճիւղ մի
» ձգես՝ սիրեն, միաբանին ի վերայ ու : — Թրն՛խոտն պարսկ բառիւ իրքեւ ազ-
գային գրուի առ մեզ և Պատրիկն, զոր տես ի կարգին : — Այս խոտս կովկասի
երկու կողմերն այլ գաւուի, նոյնպէս և յԱսորիս և ի Հս . Պարսկաստան, որով գու-
շակուի և ի Հայս :

817. Թուրիշակ .

Յիշուի ի վարագայ լերին . Թերեւս ըլլայ Թուրքն-
լակն . տես թիւ 775 :

818. Թուրշա .

Չայնի նման է վերայգրելոյն՝ բայց Թուի տարբեր
տեսակ . Բժշկարանի մէջ յիշուած է ի դեղս « Թուր-
շայի հունդ վայրի » :

819. Թոււի Լուսնի .

Ար . زبادج دڤاڤڤار . Լ . Zedoar . Curcuma Ze-
doaria . Aconitum Napellus . Փ . Zédoire . Այս կէս
զարմանայի բուսոյ համար գրէ մէկն քիչ մի խառնակ .
« Բայս մի այլ կայ զոր Տանկին Ղուչրա Խտնար (կամ
» Ղուլ Բախամբար) անուանէ . Թարքմանի Թուսի
» յոսնի . . . Խը նշանն այս է որ ի Լուրն ի մտ բու-
» սանի, որ ի այն տեղն որ հանապազ գէճ լինի . և
» արմատն մէկ է և արձակէ բազում ճիւղ, և բար-
» ձրանայ թիզս երկու . և հաստութիւնն յիլիկի շափ
» շափաւոր է . դանգով ? ծաղիկ է . իսկ տերեւք նորա
» զհետ լուսնին ընթանայ, . . . (և) տերեւ ստանայ .
» և ստան կերպիւ հնգեասանօրեայ լուսնին ու : —
Ամիրտովաթ պարզարար կամ գիտնարար ասէ .
« Ծառուար, որ է Չատվարն որ է Մահուպարվինն . և
» ինքն Թրիաք է . հետ Պէշին (Ընձախոտ) կու բուսնի . .
» ասեր է գրոցս առաջին շինողն, թէ Հնգիկք այս
» դեղիս Նարիսի կ'առնեն, և ինքն խոտի մի տակ է՝ որ
» ի Սրտի Հնդի կու նմանի, և . քան զայն այլ ծանր է
» և ամուր է և պինս է . և լուսն այն է՝ որ յորժամ
» յրով տրորեն՝ գոյնն ծիրանի լինի տրորածին . և
» այն Հնդի է . և այն որ Խթայի (Չինու) է՝ այլ
» մեծակ է, ի շափ շորցուած Սաւորի . և մէջն սպիտակ լինի զէս Արմաւի կրտին
» միջին պէս, զէս մարդու ըղունկ . և թէ հնանայ՝ կարմիր գառնայ քիչ-մն, և
» պնտանայ զէս ոսկոր . և այնոր գոյնն ալ տրորեն՝ մանուշկին գունովն լինի . և
» այն որ է Հնդի՝ ի սեւութիւն կու քլտէ : Եւ ասացած է, թէ ի Հնդուստան



Թուսի Լուսնի .

» մեծ լեռան մի կայ, և այն լեռան անունն Ղարածիլ կ'ասեն, և ինքն խիտ
 » մեծ լեռան մի է. և այս լեռան մէկ դեհն Հնդկաց աշխարհն է, և այս դեղս՝ որ
 « է Ճատվարն՝ ի յայն լեռն կու բուսնի. և այս դեղիս Նարպասի կ'ասեն. և Նար-
 » պասի նորա համար կ'ասեն՝ որ զահր մի և մահացու դեղ կայ, որ անոր Պես կու
 » ասեն Հնդկաց լեզուաւ: Եւ այս Ճատվար անուն խոտին տակն՝ այնոր թրիաքն է,
 » և երկուքն ի մէկ տեղ կու բուսնի, նա զիւր շարութիւնն և վնասն խափանէ.
 » և այն տեղաց մարդիկն զայն Պէշ կ'ուտեն զէտ Մաուզ, զեն շառներ. և թէ այս
 » Պէշն ի յայլ տեղ բուսանէր՝ որ Ճատվարն յիրմէն հեռու բուսանէր կամ չլինէր.
 » Թէ կէս դանկ ուտէին՝ կու սպանանէր զմարդն յայն պահն »: Դիպուած մ'այլ
 պատմէ, մէկուն չգիտնալով այս Պէշն ուտելուն, հիւանդանալուն և բժշկուելուն.
 յետոյ յիշելով դեղին շատ օգուտները՝ կ'աւելցընէ. « Եւ այլք ասեր են, թէ այս
 » դեղս հարիւր քսան ցեղ ցառց դեղն է և օգտութիւն առնէ. և մեք զայն չափ որ
 » ի վարդապետաց լսեր եմք և փորձեր եմք՝ զայն գրեցաք: Եւ զխոտցիր, եղ-
 » բայր, որ բոյս մի կայ և իր անունն թուրք բառով Փեղաքիք չիլէկի ասեն, և
 » ինքն ի լեբունք կու բուսանի, և ի դաշտ տեղեր այլ կու բուսանի. ծաղիկն սպի-
 » տակ է և անուշահոտ, և մանր է, և տերեւն այլ մանր է և քիչ է, և տակն
 » սեւ ի Սօս կու նմանի, և այլ մեծ, և մէկմէկի կից է բարակ մազմզղկով, և
 » մէջն կարմիրժեռ է, և ի դրսի դին կեղեւն սեւ է և պինդ, և քան զՍօսն մեծ
 » կու լինի և փոքր այլ կու լինի: Եւ բժշկապետքն այս դեղս Անրապայի սափտայ
 » կ'ասեն... Ինքն ի Հոռոց երկիրն կու բուսնի, որ է Գամրաց աշխարհն, և ի
 » Մակեդոնիա և ի Կ. Պօլսին եզերքն և ի բոյրքն, և ի Սեւ ծովուն եզերքն: Ասէ
 » Ամիրտօւլէթն և Բժիշկն. թէ ես պակասաւ որ ծառայ՝ զտայ զինքն ի յայն տեղ-
 » բանքն և ի գործ շատ արկի՝ որպէս Հնդի Ճատվարն, և ի յայն տեղն՝ որ Հոռոմն
 » Թէրկուզ կ'ասէ: Փառք Աստուծոյ »: Վերջի յիշած տեղն է Տերքոս կամ
 Դերքոս անան ի Իուսիլի: — Ի Հայս Բջնոյ կողմերում կեչառուաց վանաց մօտ
 յիշուած է այս բոյսս:

820. Թորխոտ.

« Ինքն մէջէ ծառին վրայ գտվի տալախի նման », կ'ըսէ կամարկապցին. և ճիշդ
 համանիչ է Լ. անուանն *Sticta pulmonacea*. Փ. Pulmonaire de Chêne. Օձահա-
 րի գեղ այլ պատուիրէ. « Ա. զԹորխոտն, մեղրով կնածին վրան դիր. օգտէ Աստու-
 » ծով »: Եւրոպացի բժիշկք այդ Թորքանման Մամուռէն Թորքախտի դեղ՝ բանդակ
 կազմեն:

821. Թռթեռնիկ.

Երևուած է ի Մշակ օրագրի (թԸ, 188 ?):

822. Թռֆայի Ծառ ?

Նոր Բժշկարան մի յիշած է զայս:

823. Թսախոտ.

Ըստ Ստ. Շէհրիմանի այսպէս կոչուի կամ կոչեր է գրոյսն Լ. *Atriplex foetida*.
 Իբրև Գարշառնոս Թայլ (տես զայս, թիւ 764), զոր Ամիրտ. Ար. Ղատաֆ կո-

չէր. իսկ այս տեսակս յատկաբար կոչեն Մաշուխ, **ملخ** ըստ Ամիրա. Մուշուխ. որոյ համար գրէ, թէ պէտ իսկապէս Ծովու ժանկ նշանակէ, բայց « ոմանք ասեն թէ » ի Մորսենի կու նմանի, ծառ-մն է, բայց փուշ չունի, և տիրեն նման է **Ձիթենույ** » տերեւին, և ի ծովեզիրքն կու բուսնի »: Թէ ոչ յատուկ այս Մուշուխն է Թսախոտ ըսուածն՝ մէկ զանազանութիւնն է:

Թրմկիճ. Թրմճուկ. Թրկիճ. Թրմուկիճ. Թրմնջուկ. Տես Թրակիչ:

Մխ. Հերացի առաջին կերպով (Թրթկիճ) գրէ (եր. 44),

824. Թրմուլմ.

Բժշկական բառից հաւաքման մի մէջ հոմանիշ գրուի Ալտորի:

825. Թրիմի.

Վայրի ծառոց մէջ յիշուած է ի կողմանս Հայ-Աղուանից:

826. Թրմուզ.

Ար. سماق ل. Lupinus Sativus. փ. Lupin. Ռ. Волчій бобъ. Հին Բժշկա-
րանն՝ *Եգիպտացի Բակրայ կոչէ (Պախլաթ ըլ-Մըսրի). Կամարկապցին, « Վայրի*
» Բակլան է, քան զԲակլան բոլոր է և սպիտակ »: *Իսկ Ամիրտուվաթ գրէ « Իր*
» Նապոտի բակրայ ասեն. ցեղ-մն է. և լաւն այն է որ մեծ պինտ լինի. . . ճիշտովոյ
» է երեսին և մարմնուն, և զքալաքն տանի զերեսին և զչտերն այլ տանի, և զխողքն
» (կոկորդի ուռէցք) հալէ և զճիճիքն սպաննէ. և թէ կեղեւեն և յանթուց ու-
» տեն՝ լուսն յաւելցընէ. . . Եւ թէ ի ջուրն թրջեն և այն ջրովն զպատն լվանան, այն
» ճանճն որ ի յայն պատն նստի՝ չարդի, » եւ այլն: — Վաստակոց Գիրքն շատ տեղ
» յիշէ զայս (ԻԾ). « Թրմուզն զնօսր և զաւազուտ վայրսն ախորժէ. և յերեսն
» պարտ է ցանել զնոյն՝ որ լաւ բուսանի և աղէկ: . . Եւ Թրմուզն՝ պարտ է որ յա-
» ուղ ցանուի քան զայլ սերմանքն, և թէ ի հերկոտն ցանես՝ նա խիստ լաւ է. և
« յաշնան՝ ցանեա ի սեպտեմբերի ձգ աւուրն, յառաջին անձրեւին »: — (Խ) « **Յաղագս**
» քաղցրացուցանելոյ զԹրմուզն. Դնէ՛ զԹրմուզն՝ ի թրջոց, կամ ի ծովու ջուր
» կամ ի քաղցր. և թէ խառնած լինի ծովուն և քաղցրն՝ լաւն այն է. և մնայ երեք
» օր և քաղցրանայ: » — (ԽԸ) « **Ոմանք հոգցի ցանեն զԹրմուզն ի սիզուտ և ի**
» փշաբեր վայրսն, նա սրբէ գտեղն և չորացուցանէ զամէն վայրի խոտն. . . Են ո-
» մանք որ զԹրմուզն ի յայգին ցանեն, նա զայլազգ խոտն սպառէ. և տայ ինքն
» զիւր պտուղն »: — **Մարախի դէմ այլ գեղ գրէ. (29) « Աւ զԹրմուզն և զվայրի**
» Խիարկի ցողունն, լեսեա, ի յիրար խառնեա, և ի ջուրն արկ որ թրջի, և ապա
» զայն ջուրն ի վերայ բուսոց և տնկոցն ցանեա. նա ուր այդ ջուրդ հասնի՝ բնաւ
» մարախն չուտէ »:

Թրնջխոտ. — Տես Թուրքիան խոտ:

826. Թրուկ. Թրիկ.

Ըստ ոմանց զառի վայր տեղերում բուսած խոտ մի, որոյ շորցածն ախորժելի է անասնոց: Ըստ այլոց՝ Թրիկ Սուսամ ծաղիկն է:

828. *Թրպուտ.

Ար. Turbith. « Ինքն տակ է սպիտակ, և սեւ այլ կու լինի և կար-
» միր այլ. և լւան այն է որ սպիտակ լինի և խէժ ունենայ, և մէջն փուճ լինի:..
» Ասեր են թէ լաւ Թրպութ այն է՝ որ սպիտակ և կակուղ լինի և ի ծայրն խէժ և
» մէջն փուճ լինի, և նոր և փթած չի լինի, և խիստ հաստ չի լինի և ոչ խիստ
» բարակ, և կեղեւն կարմրաուն լինի, սեւաուն չի լինի »: Ըստ Պէյթարայ լաւ
Թրպուտն ի Խորասան լինի: Բուսարանք Սպիտակ Թրպուտը կ'անուանեն Globalaria
Alypum, Փ. Séné des Provençaux. — Փոքր Ասիայ այլեւայլ կողմերում
գտուին քանի մի տեսակք Թրպուտի:

829. Թքեռնի.

Աղուանից կողմանց վայրի ծառերուն մէջ յիշէ Բարխուդարեանն:

830. *Թօփալախ.

Տես Դուն, թիւ 602: Վաստակոց գիրքն՝ (ձձՁ) ուրիշ բուսեղինաց հետ խառնել
կու տայ և զԹօփալախ՝ քացխած գինին աղէկցընելու համար:

831. *Թօփալ-խոտ.

Կարճութեան համար այսպէս կոչուած. բայց ի՞նչ տեսակ է. քննելի է՝ եթէ
կ'արժէ:

832. Ժախ. Ժախուկ. Ժաղուկ.

Ժաժուկ ալ գրուած է, բայց սխալմամբ. Լ. Apios, ըստ յունին "Απιος զոր Ա-
միրառլվաթ ըստ Պէյթարայ գրէ Աֆիոս سوساف որ է Թ. Պուսլալախն, և Հ.
» Ժախուկ, և Կաղնչալ այլ կ'ասեն. և բժշկապետացն ոմանք Աշխիս ասեն (ուղիղն
» 'Ισχάδα), և ոմանք Խասնալանիս ասեն (Χαμαιβαλανος), և ոմանք Ըսայնանի ա-
» ղրիս (Ορεινή άγρια) որ Թարգմանի վայրի Բողի. և Ինքն բարկուկ ճղեր ունի,
» նման է Վաղմեռիկ ճղերուն, և գետնէն երկու թիզ կու բարձրանայ, և յաւելի
» երկան չի լինի, և կանանչ տերեւ ունի, նման Սազապի տերեւին, և մանտրկեկ
» միրգ ունի, և ասկն նման է Խունասին (Երէշ) տակին, բայց այլ բողրկեկ կու
» լինի, որպէս Տանձի կերպ է. և դուրսի կեղեւն սեւ կու լինայ և մէջն սպիտակ
» կու լինայ: Եւ թէ զկիսէ ի վերն ուտեն՝ սաֆրա և պալղամ փոխեցընել տայ.

» և թէ զկիսէն ի վայրն ուտեն՝ լուծումն առնէ. և թէ զամէնն ուտեն՝ անարաս
 » լուծէ և փոխեցընէ խիստ. և թէ ծեծես և լակնին (կոնք) մէջն ջրով խառնես,
 » և այն փրփուր որ ի վերեւն գայ՝ զինքն փետրով ժողվեն առնուն և շորացընեն,
 » և շորս գրամ տան որ ուտէ, լուծումն առնէ և փոխեցընել տայ խիստ ո: — Այս-
 քան զորաւոր շերեւիք Ժախի բնութիւնն մեր երկըրցոց, որովհետեւ անխախտ
 կ'ուտեն թէ ազցան և թէ թթուած: — Ամիրտ. առջի յիշած հոմանիշ բառը՝
 Աշխիս առանձին այլ գրէ, թէ « Մագարիոնին (Տերեւատ), ցեղերուն է և իրեն
 » խառնարանդոյիս (խամեվալանոս) ասեն, և ինքն սպիտակ? ասել կու լինայ..
 » և ինքն ի լերունքն կու լինայ ո: — Փ. Raifort sauvage. — Տես և Բողիկ:

833. Ժախրաւուն.

Լայն տերեւներով խոտեղէն մի, ծանօթ յԱրցախ, ուր նայնպէս յիշուի և

834. Ժանգալ.

Որ վայրի բարձրկեկ խոտեղէն մի է, կ'ըտուի:

835. Ժանտամզնի.

Աւելի ճիշդ բացատրութեամբ յունարէնի (Συκομορος յորմէ և I. Sycomorus),
 Թարգմանուի ի մեզ Մուրազնի. բայց Աւետարանի մէջ առաջինն գործածուած է,
 երբ յիշէ (Լուկաս, ԺԹ, 4.) կարճահասակ Չակքէոսի անոր վրայ ելնելն՝ տեսնելու
 զՌիսուս, երբ վերջին անգամ կու գար յԵրուսաղէմ: Յայտ է որ այնպիսի տաք եր-
 կրի բոյս է, զոր Ամիրտ. ստորագրէ արարացի բառով, « Ճամիզ, չէ՞՞ որ է
 » Տարածայ ինձիր. ինքն ծառն է որ ի Թղենի կու նմանի, և կաթն շատ կու լինի,
 » և տերեւն նման է Թուփի տերեւին. և ի տարին երեք շորս անգամ միւրջ կու
 » տայ. և սորա միրգն զէտ Թղի ճղերուն միջէն շելներ, բայց փայտն կու ճղքի և ի
 » միջէն կու ելնէ, և միջի հունտն մեծ չի լինիր.. Եւ այս Ափսրոս և յԵղիպտոս կու
 » լինի.. Ատէ Պտին թէ Հոռոմն այսոր Շիշունարի (Սիկումոր) կ'ասէ, և Այնտու-
 » դասին? (Αισυλαργόν? զնասակար) որ Թարգմանի Պ. Թին-անմախ, հայերէն
 » լեզուաւ պատմեն Յիւնար քուզ, և խիստ անհամ է ո:.

836. Ժանտափուշ.

Իրեն նման փշեղինաց հետ յիշուի ի վարգապետութեան Ս. Լուսաւորչի, կամ
 Ագաթանգեղոսի. « Եղինն և Պատաղինն և Խայթահարն և Ժանտափուշն ». զորս
 անշուշտ այդ գիրքը գրողն կամ Թարգմանողն կու ճանչնար և իրարմէ կ'արուէր,
 բայց մենք ոչ:

837. Ժիժք.

Պատասուկ կամ մակարուակ (parasite) մ'է յիշեալ ի գրուածս Ռուսահայոց,
 (Մշակ, Թ. 43.) իսկ բժշկական բառգիրք մի գրէ, « Ժիժ որ է Սարուր? որ է Զիզ ».
 - յետինս նշանակէ Մկնտիս:

838. Ժիւաւս.

Վատտակոց գիրքն իբրտէ, (837). « Պարտ է ծնած կովուցն Ժիւաւս' (1) կամ » այլ ազգ հընտանք տալ և լու գարմանել, որ դկաթն շտտացուցանէ », եւ այլն: Յունարէն Բնագիրն այս մեզ անծանօթ բուսոյ կամ հունտի տեղ՝ երկու բոյս գրէ, *Myrica* և *Kúrtos*, առաջինն է ըստ մեզ *Urtica* տերեւուն, երկրորդն՝ *L. Cytisus*, որ Ար. այլ գլուած է *Գրքիս* *سجدة*, և Թուի Հասանդգի, և ըստ նորոց՝ *Urtica* դոստիտանկ. և ոչ անյարմար. վասն զի, և Ամիրտ. ըստ *Պէթարայ Ար. Ղասառ* գրեւով կ'ըսէ. « Ոմանք զայս խոտս մեղուն փեթկին մօտիկ կու դնեն, վասն » մեղուի օւժոյնալու համար ». նոյնպէս Թ. անունն ալ գրէ *Urtica* օրի, և բացառորէ, « Սպիտակ խոտ կու լինի, երկու հազ ունի, յերկայնութիւնն մէկ մէկ կան » դուն, և տերեւն նման է Հալպսոյ տերեւին. ծեծեն և հացն խառնեն, և սպե » դանի առնեն և դնեն ի վերայ պալլամի ուռեցնուն »:

839-40. Ժիրակ. Ժիրաքաղ.

Քամոնի և Չամանի հետ յիշելով զԺիրակ՝ Բժշկարան մի՝ իմացընէ անոնց ցեղակից ըլլալը. բառգիրք մ'այլ տարբեր և բնական իմաստ մի կ'ընծայէ բառին՝ յիշելով Ժիրակարոյս ժողովի, և ոչ աւելի բան մի: Ուրիշ գիրք մ'այլ (*Աղթարաց*) յիշէ Ժիրաքաղի սերմն: Այս ամենս մեզի որոշ բան մի չեն իմացըներ, բայց եթէ քննութեան և գիւտի արժանի ըլլալը, որոյ համար յիշենք և կոկիտրակ անուան մէջ լսուիլն այս բառիս:

841. Ժմիրակ.

Ի կարգի բառից *Գայիենոսի*՝ սխալ գրուի կրողուն կամ կրողն կասիա յունական բառից դիմաց. որ համարուի *hāssia* *Syriz*, *L. Cassia Fistula*, սովորաբար կոկիտրակ, բայց կայ գրուած և Ժմիրակ. անոր հետ Ար. և արեւելեան անունն այլ խիտր շանբար *چلبيد چلبه* որ Թէ և հեռաւոր երկրի բոյս է (*Հնդկաց*), այլ իր պտղոյ միջուկին գործածութեանն համար՝ աշխարհածանօթ: *Պէթարի* երկայն գրած տեղեկութիւնը համառօտէ Ամիրտ. « խիտր շանպար. ինքն ի Քա » պիլ և ի Պարսս և ի Հնդուստան կու լինի. լաւն այն է որ սեւ և հասուն լինի » և մեղրով լինի. բնութիւնն մուկրատի է, հալող և կակղացընող է ո. և տասն տողով պէսպէս օգուտները յիշէ: Տես և կոկիտրակ:

842. Ժոխ. Ժուղ.

Մանօթ վայրի փշոտ Թուփ, որ կարմրուկ կամ կարմրասպիտակ խաղողանման պտուղ կու տայ, վասն որոյ Թ. կ'անուանեն *Յռանգի* խաղող, (*Յրեկի իզիլմիս*), նա և կրասպոչաւ. *L. Rubus Idæus*, *Փ. Framboisier*. կ'անուանեն ոմանք յարեւելս, Թէ *Քրիտոսի* փշեղէն Պասկն այսոր նիւղերէն ոլորուած ըլլայ: Թէ և

(1). Պարսկերէն՝ *Ճիւաւ* պատրած ըւր նշանակէ, բայց մեր նկրեակին Ժիւաւս՝ քով ըսածէն « այլ ազգ հընտանք », կ'իմացուի որ ասոնց նման նմանդէն է:

ոչ միայն պտուղն այլ և բոյն խոխ կ'անուանի, բայց հաւանօրէն՝ յետինս ա-
նուանելի է խողունի, զոր յիշէ Վաստակոյ գիրքն (837), և կենդանեաց
տապախ հիւանդութեան դեղ գրէ. « Ան խողվենւոյ տերեւ, ծեծեա, և ի գա-
» րէփոխինդ խառնեա, և տուր որ ուտէ »: Բնագիրն ըստ Լ. Rhamnus կ'ըսէ,
որ է Գժնիկ, կամ Մորենի, և չէ հեռի ի նմանութենէ խոխ պողոնք և ճիւ-
ղով: — խոխ՝ R. Idæus՝ գտուի ի Պոնտոս և ի Հր. Կովկաս, նոյնպէս և ազ-
գակիցն R. Cæsius. իսկ R. Glandulosus ի Ռ-Հ. — R. Tomentosus ի Մարդուան,
Հր. Կովկաս, Ատրպատական: — Ի Բժշկարանս այս բոյս կոչուի օտար լեզուաւ՝
Անիխ, ստուգութեան կարօտ:

843. Երկուռ.

Վերոյգրեալ բառով բարդած է, նշանակէ որ և է անոր կամ Կեռասի և Ելակի
նման վայրի պտուղներ:

844. Երկուսնի. — Տես վերոյգրեալ Երկուռ:

845. Երկուս.

Ազոխ նշանակէ, ըստ Մխ. Հերացոյ (Գ. Ի.):

846. Երկուսի.

Նոյն է ընդ Այգոյ ծաղիկ, Այգոյ մատնի, Մատի ծաղիկ:

847. Իգարողի տակ.

Տես ինչ որ ըսուած է Բողոյ տակ (Բ. 365) և Արկարհա (Բ. 44) անուամբ,
այլ և Թաղանդաստ (Բ. 758):

848. Իգաերնջանի տակ.

Տես ինչ որ Երջան անուամբ ըսած եմք վայրի Աւելուկ կարծուելուն:

849. Իգախնկամուղ տակ.

Հին Բժշկարանն բորի և քոսի դեղ պատուիրէ՝ զատ յայլոց՝ և « Իգախնկա-
» մուղ տակ. չորոց և աղա, Կտավատի ձիթով խառնէ, եւցո և օծնէ. օգտէ
» մարդոյ և անասնոյ »: — Տես Խնդակութ, որ և Մուլխիդ:

850. Իգախունդասու.

Չայս այլ յիշէ հին Բժշկարանն՝ Իգաերնջանին տակի հետ. և քար ունեցողի
խմելիք դեղ կազմէ. նոյնպէս կողացաւի և այլ պէսպէս ցաւոց համար պատուիրէ:

« Լան երեք իգախոնդատի տակ, լուս և անուշ գինով եփէ գիշեր մի, և յա-
» նօթուց յառվտուց խմցո՛ երեք օր »: Վաստակոց գիրքն այլ (84) ձիոց հի-
ւանդութեան գեղ գրէ, ուրիշ շատ նիւթոց հետ: — Տես Խոնդաւա և Եզանադի:

851. Իգամեղերդոյ սակ.

Զայս ալ նոյն հին Բժշկարանն գրէ գեղ լոյծ փորցաւի. « Լան գիգամեղերդի
» տակն և ծեծէ, և եփէ գինք գողով, և դարոյ կորկոտ ի ներս խառնէ, և ի
» վերայ ցաւոյն դիր և փաղտէ »: Տես Մեղերդ:

852. Իգավրացի կոճ.

Նոյն Բժշկարան սունկի գեղ խրատէ զայս: — Տես կոճ վրացի:

853. Իգաօշինդր.

Դարձեալ նոյն Բժշկարանն յիշէ զայս, ստամոքսի և լերդի պաղութեան և ու-
րիշ քանի մի հիւանդութեանց դեղերուն հետ. երբեմն բառին բարդութիւնն այլ
ըջլուով գրէ Օշինդրիգա: — Տես Օշինդր:

Իգիմատնի. — Տես Այգոյ մատնի և Մատնեժադիկ:

854. Իգարիղայ ?

Երկրայական, ստուգելի անուն, որոյ համար կ'ըսէ Բժշկր. մի. « Իւր տերեւն
» նման է Մըրտին տերեւին, և ճղերն տունկ ? (Սունկ ?) կու նմանէ, և եր-
» կան կու լինի, և մէկմէկի կու փաթութէ, և ամենայն ճուղ ծաղիկ մի ունի:
» Թէ զլուրն խմեն՝ օգտէ լուծման և արեանքերի և գաներուն, և արզանգի
» գիճութեան, և արուն թքանելուն »:

* Իթխիր.

Որ և Արխար քժժ) գրուած տեսանք (թիւ 16), և իմացանք որ հայերէնը
գտնելու է ի վաղամտուկ:

* Իթող. — Տես Եէրոճ և Կաղանչան:

855. Իթուս ?

Բառահաւաք մի կողմանց Սերաստիոյ յիշէ միայն իբրև ծաղիկ մի:

856. * Իլլունի.

Հայ-Աղուանից անտառային կամ վայրի ծառոց հետ յիշուի. և է Թուրքարէն
տնուն Մոչայի կամ Մոչոյ (Իլլուն աղանի):

857. Իմփու.

Ճըղճղկէն վայրի բոյս մի, ըստ Թ. Իֆտէրի, որ գրեթէ և ոչ անասնոց ուտերի է. բայց ոմանց Թուր տեսակ մի Զուիրակի:

858. Իշամուզ.

Ինչպէս ուրիշ կենդանեաց անուամբ զուգուած բուսարատեր տեսանք, այս անարգեալ՝ բայց պիտանի կենդանւոյ անուամբ այլ կան, իբր անարգ բոյսք. որոց այս առաջինն՝ ըստ Բժշկարանաց մերոց՝ է Պանին պսոռոյն, զոր և ըստ Ար. Հարօյ-Պան կամ Հապի Պան գրեն, ինչպէս և Ամիրտ. « Ինքն պտուղ-մն է որ ի » կաղին կու նմանի, և այլ կեղեւն նօսր է և փոքր է և շուտ կտորի. և այսոր՝ » Ծստոշխ աշ-Հինար ասեն (Իշոյ Պիտակ). և համն լեղի և կապոզ է. և լանն » այն է որ անուշահոտ լինի. օգտէ կոծիծնուն և քալաֆին և բորին և քորին... » և Սահակն ասէ, թէ լերդին գեն է, և զիւր շարութիւնն տանի Ըգգիանան »: — Որովհետեւ Պանի պտուղ կ'ըսուի, և Պան անուամբ զանազան բոյսք ճանաչուին, տես զայն:

859. Իշամուր.

Տգեղ անուամբ՝ թէ և գեղեցիկ ծաղկանց ցեղէն է, Հիրիկ, Iris, անուանելոց, զարձեալ տգեղ բացատրութեամբ մի Լ. Spatula foetida կամ foetidissima (գարշահոտ). գոյական բառն այլ (Spatula) Թուրի նմանութիւն ընծայէ. և պարզապէսնայն ցեղ ծաղկանց տեսակ մ'այլ Xiphium կոչուի, որ Յ. Թուր նշանակէ. բայց ի գիրս կարծեմ չէ յիշուած Իշամուր բառն, այլ ի բառագիրս Այսոր մէկ տեսակն՝ X. Reticulata տեսնուած է ի կարին, Սոմխէթ, Գարապաղ. — Կովկասայինն X. Caucasica ի Դանախ, Սոմխէթ, Գարապաղ. — Տեսակ մ'այլ գտուի և կուչուի Սնճար լերին անուամբ:

860. Իշախաղող.

Ս. Գրոց (Թագաւարութեանց) մեկնիշ կամ լուծիշ մի հարցընէ. « Չինչ է » Դրովային խաղողն. (և պատասխանէ). Իշախաղող ասեն և Դնախաղող, նոյնպէս » և Զրախաղողն է. բայց խելաց քնասակար է. թէ զտպագիտն ակն ի յեօան » հարուն զլուրն արբուցանեն՝ լաւանայ »: — Տես Դնախաղող:

861. Իշախոռն.

Ի բառագիրս յիշուած և զուգուած Լ. Ononis բառի, որ յաւանակ նշանակէ. Փ. Bugrane, նա և Arrête-bœuf (եղնարգել), իբր թէ հերկող եղները կ'արգելու իր երկայն և խիտ ճիւղերով. Ար. Երիշ, شجاء. այս անուամբ գրէ Ամիրտ. « Երիշ, որ ի ճանփանուն վրայ և ի լեռներն կու բուսնի, և տերեւն » մանր կու լինի, նման է Սազապի տերեւին (1). և տակն բորբկեկ կու լինի,

1. Այս տեղ Թուրքարէն կ'առկընէ. « Տեփէնուլլէրի տէգիբմէէ ուլու », պոփուզ զառնթաներն գնասանէ կամ շորեփուզ կ'ըլան: — Թ. կուրուր Գոյիփ էբրու:

» սպիտակ և պինդ քոքեր լինի »: Այս բանն Պէյթար առած է ի Դասկորիտեայ (Գ. ժԸ) որ գնատաձևն կ'ընէ զլուխները, անբեւեներն այլ մանրիկ և ածուոց Առուոյտի նման: — Քանի մի տեսակ ունի այս բոյսս. Փշոտն՝ *O. Spinosa* գուռի ի Բարերդ, կոզկաս. — *O. Antiquorum* յԱրարատական. — *O. Columae*. յԱյնթապ. Հր. կոզկաս:

862. Իշաճոճրին. — Տես Երորիկն վայրի:

863. Իշաշինգղ.

Եինգղ կոչուի կօզայն, որով և իշաշինգղ նոյն է ընդ իշավարունգն: Այս ա. նունս գառի Գալիենու բառից կարգին, դիմացն այլ կաշինար գրուած, որոյ վերջին մասն Ար. յայանէ զկենդանին (էշ):

864. Իշառուոյտ.

Տես ի տեսակս Առուոյտի. Թիւ 158-9.

865. Իշավարունգ. Իշկոյ վարունգ. Իշու խիար.

Օտար լեզուք այլ այսպէս կոչեն. Ար. Ղրսսս կամ Բըշու ըշ-հինար *الحما لسا* « Եւ Թ. ալ Աշաղ խիարի կ'ատէ. և լուսն այն է որ հասուն լինի... Ասէ Պտին. » Թէ ինքն խիարի լանհսպետն? է, և ինքն վայրի խիար է. և Անդալիսցիքն » Յալզում կ'ատեն. և Հռ. Ասիիրոս կ'ատէ, և Աղիդեսու կ'ատէ » (Աղրիոս): Պէյթարայ ծանօթարարն կ'իմացընէ որ Դիոսկորիտ (Դ, ճԾ) Պիկրոս, *Πικρός*, կոչէ զբոյսը՝ լեզուութեանը հաճար, զոր Արարք փիկրոս կարգաւով՝ Սաղորբ *چراغ* Թարգմաններ են, որ նշանակէ փոքր. արգեազ ասկէ՛ Ամիրտ. Ասիիրոս կոչէ. « Եւ իր բոյսին կապար կ'ատեն, բայց փուշ չունի. և գոյնն կանանչ է » և ի սեւութիւն կու քլտէ: Եւ իր քամուքան այսպէս է, որ իր պտուղն առ նուն յամուան վերջի ամիսն՝ որ դեղնել լինի, և լուսն այն է որ չուրն շատ » լինի. և քթանէ կտաւէն քամեն և յիստակեն, և դնեն ի յաման՝ որ կենայ » և չորցընեն, որ ի յինքն չկենայ, և Ղուրս անեն » և շատ ու շատ տեսակ ցաւերու դեղ լինի: — Իշավարունգն՝ կոչուի *L. Echolium agreste*, կամ *Elaterrum Momordica*, Փ. *Concombre sauvage* կամ *d'âne*. Վաստակոց գիրքն խիարակ վայրի կոչէ (ԾՂ). և զգուշացընէ մեղուանոցի մտտ անկելէ, ուրիշ տեղ այլ (Ի) խրատէ խաշել այս խիարուկը և անոր տաք ջրովը մեշել ցանելուք ցորենը:

866. Իշաքել.

« Ար է վառվառկն, որ է Ալուուանն », ըստ Ամիրտ. տես այն բաւերը:

867. Իշխուկայգ.

« Ար է Մեծ Խոշպագիկ », ըստ Անգիտաց անպէտի. այսինքն մեծ Մոյոչ, կամ Տուղա:

868. Իշկամնուկ. Իշու կամլուկ. որ և կամնխոտ.

Առաքել վարդապետ Արիստոտելի Սահմանաց գրոց լուծման մէջ (ծբ) գրէ. « Զղլիկանն նստեալ ի վերայ կանխոյ, այսինքն Իշկամնուկն ». ուրիշ տեղ այլ. « կանչողն Իշկամնուկն է կամ Ուռնկի շոր բազուկ բարակ »: Տես կանչող:

869. Իշկորնզան. Իշկուրկուրան.

Տես ինչ որ ըսուած է ի Զուրրակ, թիւ 731 : Նոյն իմաստով է Լ. անունն այլ, *Hedysarum Onobrychis*. բայց կոչուի եւս *Isopyrum*, Φ . *Isopyre*. սակայն այս անունս՝ որոյ սկզբնականն է յունարէն *Isópyros*, և Պայթար գրէ ἰσοπύρος Աստաֆորոն, տարակուսելի է: Ամիրտ. բառագրոցը մէջ կ'ըսէ. « Գլխիւնիք, որ է » Իշկորնզայի հունան »: — Տես կարնզան և Մառանց պտուղ: Տեղաքնինք յիշեն այս բոյսս մեր երկրի արեւմտեան Հիւսիսային կողմերում, ի Սպեր, Տաք, Սօմ. խէթ, անտարակոյս գտուի և ուրիշ կողմերում:

870. Իշխագրիկ.

Բանջարեղէն երկայն տերեւներով, որք երկու կողմէն այլեւայլ անկիւններ և սուր ծայրեր ունին. ուրիշ յատկութիւնքն ծանօթ չեն, բայց ըստ անուանն թուի հետեւեալն

871. Իշոյ մառու.

Լ. *Sonchus*. Φ . *Laitron*. Ար. Թուֆախ, سناج , այս անուամբ յիշէ Ամիրտ. բժշկական օգուտները համառօտ: Պէթարայ Թարգմանիչն Թիֆաֆ կարգայ և այսպէս ալ լսեր է ի Ճէղայիր, ի Բամկաց. Իշոյ մառուն ուրիշ Ար. անուամբ այլ յիշէ, որ է Շանձար կամ Շենկիար. բայց անունս աւելի կօթայի կու տրուի. տես զայն: — Մէկ տեսակն *S. Bupleurifolius* յիշուի յԱլիէրի խան ի Խ-Ղ. — Աժւոցն *S. Arvensis* ի կարին, կովկաս. — նոյնպէս և Ճախնայինն *S. Palustris*:

872. Իշու խաղող.

Յիշուած է իբրեւ ծանօթ բոյս, և թուի Շնխաղողն:

873. Իշտատրակ.

Կարմրածաղիկ բոյս մի կ'ըսուի, լայնկեկ տերեւներով. երկայն ցօղունի մի վրայ իրարմէ հեռու երկու փունջ ծաղիկներով: Յիշուի ի կողմանս կարնոյ և Մշոյ: Մերձաւոր՝ այլ աւելի տգեղ անուամբ յիշուի նոյն կողմերում և

874. Իշտտուուկ.

Պրասի նման, որոյ յարմար և նոյնանիշ լսուի Φ . *Pet d'âne*. Լ. այլ ի յունական,

նէն առած՝ Onopordon. Այս Լ. անունս յատկացուցեր են թարգմանք Պէթարայ՝
ասոր յիշած թաւապս ܚܘܒ րուսոյ, որ նոյնպէս քրիստոնէից լեզուէ անունած
բառ մ'է, կ'ըսէ, և նշանակէ տեսակ մի կանգառ, որ կու տարածուի և կան-
գնաչափ տերեւներ կ'արձըկէ, որոց եզերքն փշոտ են, անոր համար մականունանի
Օ. Acanthum. որձայն փորոք է, գագաթը մազոտ կանգառ մի կ'ըլլայ. ծաղկներն
կարմիր, համն լեղի. Ար. استاڤا Էրաստին կամ Էրասին կոչուի: Ամիրտու-
վաթ չի յիշեր զայս: Տեղաքնինք տեսած են ի Գուրէժ, ի Հա. և Հր. կավկաս. —
Լիւրիկիական Օ. Illirycum տեսակն՝ ի Սնճար Լ., Մարաշ. — Օ. Heterocanthum
ի Խոյ, Ապլաստան. — Օ. Leptolepis ի Բարերդ:

875. *Իշխուն.

Ըստ Բժշկարանաց՝ Գարծիլին « Թուրքերէն իշխուն տանն ». ուրիշ մի գրէ
» Բիպաս, որ է իշխուն, այսինքն Խաւարծիլ »: Տես զայս և զԳարծիլ (Թիւ 393):

876. * Իւզէրիկ.

Այս Թ. բառս գործածած է վաստակոց գիրքն (ԾԿԳ), երկբայեի խրատով
կամ հնարքով. հունտն « ի Բողկին մէջն դիր », կ'ըսէ, և կ'ըլլայ Սատար կամ Ան-
նոշի: Իսկ ինքն Փեղեկնայ է կամ Սպանդ:

877. Իւլապ. Իւլապնի.

Խոչքեանն նոյն համարի ընդ ծառոյ և պտոյ Յունապի:

878. Իւղաճաղիկ.

Գեղնադոյն ծաղիկ մի, յիշուած յօրագրի (Նոր Դար, է, 102):

879. *Լալա.

Թ. անուն կակաջի, շատ հեղ գործածուած վերջին դարուց հայերէն գրուածոց
մէջ. համարիմ թէ այսոր համար գրէ Բժշկարան մի՝ մազ սեւցընելու գեղ. « Լալայի
» տերէն ի շուքն շորցու. և չիրիկ ձէթ. յիրար խառնէ, և դիր ի շուշան » (չիշ):

* Լարլար. — Տես Լապրայ.

880. Լալազար.

Վնասակար բոյս մի, քառակուսի ձեւով կունտ պտուղներ ունի, որ եթէ լրի
մէջ ձգուին և խմուի, գրեթէ օր մի գինովութեամբ թմրեցընէ: — Նշանակուած է
ի Տարօն, ի Բարդաղ լերին (Թաւքեալդու). ծանօթ է և Սալաձորեցւոյն, որ յիշէ
ընդ Խաճի և Խայիճի:

881. Լաթիր.

Յեշէ Տրապիզոնեցի բառահաւաք մի, և Թ. Բիւզիսը անուանէ:

882. Լախլախայ ?

Տարակուսելի բառ, զոր յիշէ Մխ. Հերացի, (եր. 97) և մտղձի լուծման դեղ գրելով՝ պատուիրէ հիւանդը հով(զով) տուն մի բնակեցընել, և սփռել տան մէջ վարդ և քանի մի տեսակ տերեւ, և աւելցընէ. « և ի տանն յանկիւնն դիր Լախլախայ, » որ հովային և անուշահոտ իրով լինի եփած. և օգտակար են կամօքն Աստուծոյ » :

883. Լախուր, որ և Նեխուր.

Առասպելախօսք և պատմիչք Յունաց կ'աւանդեն, թէ Նեմէա քաղքին մօտ անտառ մի կայր, ուր իրենց գերագոյն դիւցազն Հերակլէս՝ ահաւոր առիւծ մի սպաննեց, որոյ յիշատակաւ ըմբռական խաղ կամ մրցանք հաստատեցին՝ երեք տարին հեղ մի, և յաղթողին կու տային փունջ մի Լախուրի. այս բանս կու յիշէ Պր. Աստուածաբան իր մէկ ճառին մէջ, զոր մեկնելով Նոննոս՝ կ'ըսէ, ըստ հայ թարգմանչին. « Լախուրն՝ խոտ է պարտիզական, ա. »

» Նուշահոտ և անուշահամ, որոյ անուն յունա. »
» ըէն Սելինա անուանի » : Գայիենոսի բառից մէջ այլ գրուի, « Սիլինոն, Սիլի վայրի կամ Լախուր ». բայց կարծեմ, թէ Սիլին՝ Լ. Selinum, ֆ. Selin, ոչ է բնիկ Լախուր, այլ իր ցեղակիցն Կարոս. իսկ Լախուր կամ Նեխուր է Լ. Apium, ֆ. Ache. Ար. և Թ. ֆերեվիս سوسان .)
այս անուամբ ստորագրէ մեր Ամասիացին, յիշելով և տեսակները. « Բարասու որ է Բարասիգ. »
» Աժոց և վայրի և Հոսեցի և Ջրի. լաւն այն »
» է որ Աժոց լինի (այս է վերոյիշեալ Պարտիզականն) ... Ասէ Պտին. թէ ինքն շատ ցեղ է, »
» աժոց և վայրի և Շամի ? և Լեռան և Էսանանցի և Մարտեղի (Ղրային ? سوسان .) »
» և ցեղ մի այլ կայ որ ի Լուրն կու բուսանի, »
» այնոր Մայի ասեն, որ է Ճարձիր բլ-մային, »
» և Ղոշաթ բլ-այն այլ կ'ասեն. և այն որ Լեռանն է Պարտասայինոնն է (Petroselinum . »
» տ. Ազատքեղ, Թիւ 11). և այն որ յանա. »
» պատն կու բուսանի՝ Սառկար և Էսարուն ? կու ասեն ... Ացել են, թէ հունտն ու. »
» ժով է քան զտերեւն. և լաւն այն է՝ որ ով ի կորուն խայթելուն կու վախէ՝ չէ »
» պատեհ որ Կարաւս ուսէ, այնոր համար որ զգաղտ շնչերակն բանայ, և շատ »
» և շուտ հասնի վնասն ի սիրտն : Եւ գրոցս շինողն ասցել է, թէ կին մի տեսայ որ »
» Կարաւս կերաւ, և այն օրն զայն կինն մեղուն խայթեց, և մէկ ժամ անցաւ և »
» կինն մեռաւ » :



Լախուր.

Լակուտ. — Տես կժմախոտ :

884. Լայնտերեւի. Լայնտերեւուկ. Լոնտերեւի.

Ստ. Ռոշքեան կոչէ և Լորոպի և Միրանի փոշ, և համարի Լ. Charduns Benedictus. Փ. Chardon-bénit. Այս անուամբ քանի մի տեսակ փշոտ բոյսեր որոշեն բուսարանք: Ըստ Խոտույրեցւոց է Բռնչի ծառն (տ. թիւ 387). յիշէ և Բարխուզարեան ի ստորագրութեան Աղուանից (եր. 54) առանց բացատրութեան:

885. Լաշի.

Է (նոյն կամ) տեսակ կոմար ծառայ, տես զայս: — Լ. Rhododendron Ponticum. յայտնի է գտուիլն ի Պոնտոս, բայց Արարատ օրագրի (ԻՆ, 431) յիշելն. և ի կարնոյ մեզի խաւրուած ծաղիկ մի՝ կարծել տայ՝ թէ գտնուի և ի կողմանս Հայոց: Բառաբաղ մի գրած է. « Լաշի. արմատ՝ որ արձակէ տերեւս նման թթենւոյ »: Բնաւ չեն նմանիր այս երկու ծառոց տերեւքն իրարու, այլ այսոր ըսած արմատն անշուշտ է հետեւեալն,

886. Լաշիկ.

Որոյ տերեւն ունի թթենւոյ նմանութիւն, և մեծ կարմրագոյն բազմառէշ ծաղիկ, որչափ որ կըրնամք հաւաստել ի կարնոյ խաւրուած շորցած ծաղկին տեսքէն:

Լապատ. — Տես Առեւոյկ.

887. * Լապլապ.

Որ և Լարլար. տես Բաղեղն: Բուսարան մի յատուկ տեսակ մի համարի և կոչէ Dolichos Lablab, յոյն բառով (Δολιχός) որ նշանակէ երկայն, զի շատ կ'երկայննայ այսոր բարակ ու սողուն որձայն: Բժշկարանք յիշեն ի դեղորայս Լապլապի տերեւն:

Լառի Սերմ. Տես Լոտասերմ.

888. Լաստ. Լաստենի.

Հայերէն լաստ բառի նշանակութենէն յարմարցընելով Ստ. Ռոշքեան գրէ. « Մաս որ ի ջրուտ տեղիս լինի, և յորմէ նախնիքն զլաոտ առնէին, և այժմուս » զնառն չինեն, զի գժուարաւ փոխի ». և Լ. Aloys կոչէ, որ է ըստ մեզ Բարտի » (թ. 323): Բառագիրք մի գրէ « Լաստ. Թ. Սիւրան աղամի »:

889. Լատան.

Խէժ է անուշահոտ, Լ. *Ladanum*, Փ. *Ladan*, որոյ գոյացընող Թուփն կոչուի Լ. *Cistus* և յատկաբար *C. Ladaniferus*, Փ. *Ciste Ladanifère*: Խորենացւոյ աշխարհա-
գրութիւնն փոխանակ բուսոյ՝ կ'ըսէ, ի տորագրութեան Կիպրոս կղզւոյ, « Լինի
» անդ Լատան ցօղ անկեալ զխտով կռեալ ի վարիչս և ի մորթօ քօչից »: Այսպէս
ըսած է Դիոսկորիտէս, ըստ որում կարդալու է ոչ ի մորթս այլ ի մորոսս քօչից:
Ամիրտովաթ այս խիժարեր բոյսը կ'անուանէ օտար լեզուաւ « Ղայսոսսան, այնոր
» ծառին վերայ կու անկանի. լաւն այն է որ եղլի լինայ և ի մէջն հող չի կենայ...
» Ատ Գտին. Թէ լաւն այն է որ եղլի լինի և անուշահոտ, և գունն ի դեղնութիւն
» քստէ. իսկ աւազ չունենայ. և Թէ եղով տրորես՝ իսկի տակն իրք չիջնու »: —
Բժշկարանք նոյն համարին զԼատան և զՀոսովիսունկ: Պայիենոսի բառից մէջ կայ
գրուած Աղադանոյն փոխանակ Լադանումի:

890. * Լարեկ.

Լ. *Larix* անուան փոխադարձութիւնն է ի նորոց ըստ Ստ. Ռոչքեան. բայց մեզ
երեւի Թէ այս ծառս ծանօթ է ի հայս Կելի անուամբ:

891. Լափազա ?

Տրապիզոնեցւոց կոչիկզոս անուանած խոտին՝ քիչ մ'աւելի լայն տերեւովն է
տես գայն: — Նմանաձայն Յ. Լ. *Lapathum* նշանակէ Թրթնիկ:

892. Լդդեմի կամ Լտտեմի.

Ի նորոց հնարեալ բառ երեւի, նշանակելու Լ. *Celtis australis* կամ *Lotus* (*Matth.*
և Tournel.) կոչուածը, Փ. *Micocoulier*. Ար. Միյս *ساجو*, կամ ըստ Ամիրտ.
« Մայս, որ Թ. Տադուն աօէ, և իրենն վայրի Պղպեղ կու աօեն, և քան զՊեղպեղն
» այլ մեծ կու լինի, և միրգն քաղցր կու լինի. և ստամոքին աղէկ է. և զփորն կու
» կապէ. և Թէ զփայտն խարտես և խարտուքն առնուս, և եփեն զլուրն խմեն՝
» օգտէ աղեց գաներուն.. և զմազն կարմիր կու առնէ. և օգտէ տղակներուն հա-
» ղին, և Թէ զկուտն ուտեն այլ՝ օգտէ.. և Թէ զայս տակս ջրով և Թեփով եփես և
» ղնես այն զօգուածին վրայ որ կտորեր է և ծուռ է բուսեր, կակղացընէ », ...
— Պոնտոսի ծովեզերեայ կողմերում գտուի, նա և Կասպից ծովու արեմտեան գա-
ւառներում, և ի Հր. Կովկաս: Ըստ Պէյթ. գտուի և յԱմիդ. ուր կոչուի Գեդրաշ
կամ Գեդրեաշ *کوکناش, کاش*. Իբրև 70 տեսակք զանազանուած են Լդդեմ-
ւոյ. պտուղնին ընդհանրապէս մանրիկ և գնտաձե է. մէկ տեսակն կոչկասեան
կոչուի՝ Լ. *C. Caucasica*, և գտուի նաև ի Ռուսահայս և ի Վրաստան: Հին հեղի-
նակք Լոտոս կոչեր էին զայս, բայց որովհետև նոյն անուամբ շատ եղեգնաձե
բոյսեր այլ կոչէին, զայս՝ Մասային Լոտոս անուանեց Դիոսկորիտէս. *Αυτός τω*
δένδρον. — Տես և Լուտուս:

893. Լեառնախնձոր.

Ինչ ըլլալը կ'իմացընէ զայս գրողն. « Ազգ մի խնձոր կայ վաղահաս. Մանրագոր »
» ասի կամ Լեառնախնձոր »: Թէ և յատուկ վայրի խնձորն Մանրագոր չէ, այլ
տես զայս, և խնձորակ:

894. Լեզուակ. Լեզուիկ.

« Լեզուակ անունն ծաղիկ մի կայ, որ կու բացվի մէջ մարգերուն.
» Ծաղիկն մօռ մանաւշայ է, նորա երամն է ինքնագուն »:

Տեղն ու գոյնը իմացուց Սալաձորցին. ձեւն ու շափը սպասեմք յայլոց ստուգել:

895. Լեզուենտակ.

Ըստ Բագնիքցոց կամ Սերաստացւոց նշանակէ Մաղթ:

896. Լելեզակ.

Կամարկապցին Այխաշայ օտար բառը մեկնելով կ'ըսէ. « Ինքն է- »
» ղիկն խոտն է, կամ Լելեզակ կու ասեն կամ Անձուրիայ (Անձորա),
Դժնիկ »: Տես Լեղիկն:

897. Լեղակ.

Ծանօթ իր տուած ներկին համար. Լ. Փ. Խա. Indigo, Ար. Երիւմ
جلايد « Տերեւն ի Զղախոտին տե- »
» ղեւն կու նմանի, գրէ Ամիրտ. և
» ի գետնէն ի վեր մէկ թիզ կու
» ելանէ, և կամ մէկ կանգուն, և
» տերեւն սեւ կու լինի. . Եւ ցեղ մի
» այլ կու լինի որ վայրի է, և տե-
» ղեւն նման է Հազրին տերեւին.
» և գագաթն զէտ լեզու կու նմանի,
» և ամաննի ունի և ի մէջն հունտ
» ունի. և այսոր օգտութիւնն այլ
» զէտ առաջինն է »: — Դարձեալ գրէ Լեղակ նիւթին համար. « Նիլ, որ է Լե-
» ղակն, երկու ցեղ է, մէկն ածվոց և մէկն վայրի. և լաւն այն է որ շուտ տորթի. .
» Աւէ Պտին. Թէ ինքն խոտն է՝ որ իր քամուքսին Երևան, և իր ծառին Յալզամ
» կ'ասեն. և լաւն այն է որ տերեւն կանանչ լինի՝ որ ի կարմութիւն քշտէ »: —
Ուրիշ Բժշկարան մի գրէ. « Լեղակ, Նիլ. ինքն խոտ է Երնճին նման. ի Չուրն գնեն
» և հատընեն, զչիրէն առնուն. ի Հնդկաց գայ. չիրէն շորընեն և լինի Լեղակ »:



Լեղակ.

898. Լեղկի ունտ.

Հին բժշկարանն յիշէ զայս. Ար. Հապպիի կոչմամբ, حب النجيل. բայց տարբեր տեսակ բոյս է սա, որոյ համար առանձին գրէ Ամիրտ. « Հապ Դիլ. ինքն Լապլապի » նման խոտ-մն է, և կապուտ ծաղիկ ունի, և սեւ հունտ... Ասեր է գրոցս շինողն, » Թէ ինքն Լապլապն է՝ որ ի ծառերն և ի փայտերն կու փատտովի, և ծաղիկն նման » է Լապլապին ծաղիկին, և իրենն Դիլ ասեն. և Թէ իր տերեւին վրայ քացխով » գրեն՝ նա յայն պահն կարմրի : — Լ. Convolvulus Nil. — Տես Հետեւեալ բառն այլ :

899. Լեղինն.

Քալիենոսի բառից մէջ՝ վերոյիշեալ Ալիոզագ բառին զոյգ գրուած է, « Մշկան Լեղինն, որ է Լեղակ » : — Դոր բառահաւաք մ'այլ նշանակած է այս անունն :

900. Լեղլեղուկ.

Բառահաւաք մի գրած է իր ցանկին մէջ այլ չէ բացատրած :

901. Լեղնամ ճաղիկ.

Վաստակոց գիրքն ուրիշ երեք բուսոց հետ պատուիրէ հեռացընել զայս այլ՝ մեղուներու փեթակաց մտախն, որ չի վնասուին. յոյն կամ լատին բնագրին մէջ վեց բոյս յիշուին, որով շիմացուիր Թէ որն է Լեղուհամ ծաղիկն. երեքին վրայ մնայ հաւանականութիւնն, որք են Thapsia, Tithymalus և Veratrum, որոց հայերէն ուրիշ անուններ կան, և ըստ կարգի յիշուին :

902. Լեղնտրուկ.

Քան զՄխախտտի տերեւն լայն տերեւներով և դեղին ծաղկով խոտ-մն է, քանի մի Թիզ բարձրութեամբ, լեղուհամ: Յիշուի ի Տարօն, Տես և Վարսաման :

903. Լեղրդակ.

Եղրդակն է (տես Թ. 638) ըստ Բժշկարանի միոյ, որ այլեւայլ տեղ զուգէ Հնդուպէի, Քասնոյ, Տարչաղուշի, տեղ մ'այլ գրէ « Ահիպէս ? որ է Լեղրդակ » :

904. *Լեպեղիս.

Հին Բժշկարանն ուրիշ բուսոց հետ յիշէ՝ ակըն՛ի դեղ. Թերեւս ըլլայ Lepidium որ է ըստ մեզ Դոսարտակ.

905. Լեվոր.

Մահապի ծառն կամ պտուղն է, անս զայս և զՇշի :

906. Լերդախոտ.

Այլևայլ անուններ ունի այս բոյս հայ լեզուաւ. Զարօշ, Կենարար, Գետնի Կաղնի, եւ այլն: Հին Բժշկարանն գրէ, « Մահրկայութիա? Լերդախոտ, Զարօշ »: Ուրիշ մի յունական բառիւ, « Քամատարիոսն (Χαμαιδρος), որ է Սենեկպար « ոչ-հարգն »: Լ. Teucrium Chamedrys. Փ. Germondrée, այլ և Petit-Chêne vert. Ք. Եւեր փաշամուտոս: Յունական անուամբն ստորագրէ Ամիրտ. ըստ Պէյ-Քարայ, سوسن « Քամատարիոս, որ է Պարտա ըլ-յարգ (Գետնի Կաղնի), » նղկներն և տերեւն է որպէս Կաղնու տերեւի, և ծաղիկն ծիրանի է... ոմանք » Տոսֆարիս ասեն (Teucrium). Հ. Լերդախոտ ասէ, Ք. Ղաանոյի Մահնուտ, » որ է Գետնի Կաղնի. և ասել են թէ Օչախին ճիւղն է և տերեւն է, և շէ » ստոյգ. ասացել է գրոցս շինողն, թէ խոտ-մն է կանաչագոյն և խիստ լեղի, » և տերեւն և ճիւղն Կաղնուն տերեւին նման է. և ի Շիրազ այս խոտիս թալիս » կ'ասեն. և լան այն է որ թափա լինի ». — Լատին անուամբն այլ ստորագրէ Հանգերձ զանազանութեամբ տեսակին. « Տոչարիոս (Teucrium) ըստ Պէյթ. سوسن » ինքն ազգ-մն է ի Քամատարիոսէն. և այսոր Ք. Տալիս օրի » ասէ, և տերեւն նման է Սիսոան տերեւին ». — Շատ տեսակներ կան Լերդախոտի. Արեւելեանն T. Orientale, գտուի ի Ռ. և Ք-Հ. ի Կեասրիա. — T. Parviflorum ի Ք-Հ. Միջագետք. — T. Chamedrys, ի Պոնտոս, Ք-Հ. Սոմխէթ. — T. Polium ի Հր. Հայս, Միջագետք. — ուրիշ շատ տեսակք այլ ի Կիլիկիա, յԱնթապ և Մարաշ:



907. Լերդածաղիկ.

Նշանակուած ի բառհաւաքէ. թուի վերոյիշեալն:

908. Լէբլէբուկ.

Յիշուած յօրագիրս, թերեւս ըլլայ Լապլապն:

909. Լէգ.

Բոյս ծանօթ Խոտալրեցւոց, բայց որդիսութիւնն անյայտ է ինձ:

910. Լիբանոն. Լիբանոս.

Լերդախոտ.

Սուրբ Գրոց մէջ այս անուամբ կ'իմացուին երկու տեսակ բնական բերք. մէկն անուշահոտ խէժ կամ խունկ մի, յունարէն Διβανον. միւսն նշանակէ Լիբանանու մայր ծառերը, որ իբրեւ մեծութեան նշանակ յիշուին, ինչպէս մարգարէն (Ովսէէ) կ'ըսէ Հրէից ազգին համար, երբ զառնայ առ Աստուած, նորէն պիտի աճի, « Եւ արձակեսցէ զարմատ իւր իբրեւ զԼիբանոս. արձակեսցին ոստը նորա »:

911. *Լիբանովիտ կամ Լիբանովտան.

Այս այլ վերայիչեալ յոյն բառէն առնուած է, որպէս և Լ. Libanotis, խնկեղէն կամ անուշահոտ նշանակութեամբ. սակայն շատ տարակոյս և կարծիք եղած է գիտնոց այս անուան վրայ և այսոր հոմանիչ համարուած արարացի անուանց. նոյնպէս և մեր լեզուի մէջ այլ այս և շատ անուանք՝ յոմանց նոյնանիչ համարուեր են, ինչպէս Խնկի ծառ, Խնկունի, Մարիամի ծառ, Լուսացտակի ծառ, Հազրեմար. այս վերջի անունս զուգէ Ռոզմարան Լ. Rosmarinus, Փ. Romarin անուշահոտ բուսոյ, սակայն նախնեաց յիշատակութիւնք ցուցընեն որ Հազրեմարդն՝ ոչ միայն հոտով այլ և տեսեամբ գեղեցիկ ծաղիկ էր, որպիսի չէ այդ Ռոզմարին կոչուածն, որոյ յարմարագոյն է Լուսացտակի ծառ ըսուիլն: Ամիրտովաթ այլ կ'իմացընէ այս զանազանութիւնը կամ շփոթութիւնը, գրելով. « Լիպաս » նոստաս, և յունարէն Լիփանոստաս կ'ասեն. և ոմանք ասեն թէ Խնկին ծառն » է, և ոմանք ասեն թէ Խնկին ծառն չէ, հսպակ կու նմանի և ձութ կ'ունենայ, » և հոռմերէն Անդրոս-Լիփանոս ? կ'ասեն: Ինքն ծառ-մն է որ Ուռի ծառի կու նմանի, և տերեւն նման է Պիլիսկիին (գտնես զայս ի կարգին), բայց կոկ, և » մէկ երեսն սպիտակ է և մէկ երեսն կանանչ է, և հոռն նման է Խնձորին » ծառին. և յածվենիքն կու բուսնի. և թէ տակոյն հանեն և ի տեղ-մն տնկեն՝ » չի բուսնիլ. և թէ զճուղն կտրեն և տնկեն՝ կու բուսնի. Իւ ոմանք ասեր » են՝ թէ ծառերուն քոյն կու բուսնի, և տերեւն նման է Հազրին տերեւին »: — Այս բացատրութեանց նման գրէ դարձեալ ուրիշ արար. բառով մի որ է » « Չառնապ Թ. Աձապ աղաձի. Ասէ Սինեայ որդին՝ թէ ինքն ծառ-մն է, որ » տերեւնին տերեւի Ուռու պէս է, երեսն կանանչ և ետեւն սպիտակ, և ման » տրութիւն Ստոչիտոսին (տես Արեղախոտ) տերեւին չաք է, և հոտն նման է » Թուրունճին հոտին: Եւ գտայ զինքն ի Կ. Պօլիս, յածվենիքն կու բուսնի, և » ի վերայ քարերուն այլ կու բուսնի. և թէ տակոյն հանես և ի յայ տեղ տըն » կեա՝ չի բուսնիլ, եւ այլն. և Հո. այսոր Անդրոսիոնոյ ? ասէ, և Հելլենացիք » այս խոտիս Լիփանոտիս (Libanotis) կու ասեն. և լաւն այն է որ հոտն անուշ » լինի: Ասեր է Պտին. թէ ինքն Ըոիձ ըղ-ձարտան է (Մորեխի սրունգ). և ա » նուն անոր համար է որ տերեւն ի մորեխին ոտքն կու նմանի. և Հնդկիքն » Թապրահ ասեն և Պ. Մոչրոն Թոչրի ասեն և Մոչրոն Թոչրիստանի: Եւ ծա » ղիկն գեղին է և տափակ է. և տակն մաղտանոսի տակ կու նմանի, բայց այլ » սուր է և տաք է և հաստ է »: — Պէթարի Թարգմանիլն յիշելով այլեայլ գիտնոց կարծիքը Չառնապ բուսոյ համար՝ բան մի հաստատած չէ:

912. Լիլամաղ.

Բառհաւաք մի նշանակած է, առանց բացատրութեան:

913. Լիլիկ կամ Լոլիկ.

Ոչ է յատուկ բոյս, այլ մասն բուսոյ. Գի ծառոյ և նմանեաց պտուղն կամ խոպոպաձեւ ծաղիկն:

914. * Լիլուփար. Լիլուփար.

Այս անուամբ շատ հեղ յիշէ Մխ. Հերացի (եր. 9. 18. 24. եւ այլն), միանգամայն իր Զերն և Շարապն: Հասարակօրէն Ն տառի գրութի, Երևոփար, տես զայս:

915. Լիմոն. Լիմոնի.

Փ. Limonier. Ար. ليمون հանրածանօթ ծառ և պտուղ պիտանի, ոչ սոսկ պէտք յուտել, այլ ի համեմել զուտելիս, որոց սմանց այնպէս կարեւոր է՝ որպէս աղն. իսկ գործածութեամբ ի դեղ և ի տնտեսութեան՝ իր ամեն մասերով՝ անթիւ օգուտ և դարման ընծայող. որոց վրայօք Պէյթար այլ երկայն գրէ, իսկ Ամիրտ. համառօտ. « Լիման. Լան այն է որ խիտ դեղին լինի և մեծ. և այն » որ ալի է՝ տաք և չոր է, զսաֆրան կտրէ և գինու խումարին օգտէ, և թթուն՝ » զմանն տանի. և թէ յաչքն քաշես՝ աչից սպիտակին ճիշտայ. զմորուքն շատ » կու բուսցընէ. զստամուքն ուժովցընէ և զկերակուրն մարսէ », եւ այլն: — Մեր երկրին կլիմայն անյարմար է այս պատուական ծառին և պտղոյն, բայց Սեւ ծովու ափունքն, ինչպէս Տրապիզոն, Կ'ընդունին, եւս առաւել Միջերկրականի եղերքն, ուր և Կիլիկիա, առատապէս՝ հանդերձ անոր նմանեօք. զորս յիշէ և Վաստակոց գիրքն (ԾԳ), պատուիրելով ի հոկտեմբեր ամիս « զթրնջիքն և » զնռնայիքն և զլիմոնիքն ծածկել. և զլիմոնեաց ճիւղքն փաթթէ, և զտե » բեւն ի վերայ զորդէ, որ ծածկէ զծառան, և շտանէ նոցա պարզկայն այլ » բնաւ այժ », այսինքն գիշերուան ցուրտ օդն չի վնասեր:

916. Լիմոնիոն. — Տես Գառնակոնց:

917. Լծափն.

Մլուն թելերով ծաղիկ մի է, ըստ Սալաձորեցոյն. որ տարբեր օրինակաց մէջ Միջօտի գրուած է. բայց լաւագոյն օրինակի մէջ երկուքն այլ առանձին յիշուած են. Քայ գիտնալ թէ ի՞նչ ձեւ ի՞նչ գոյն ծաղկունք են:

918. Լկոի.

Տեսակ մի Խաղողոյ անուն է:

919. Լկոթնի.

Արցախոյ կողմերու վայրի ծառոց մէջ յիշուի: (Բարխուրդար. 54. 201).

920. Լզպոր կամ Լզմոր.

Այս այլ տեսակ մի Տանձի անուն է:

921. Լոզ.

Ջրային մամուռ տարածուած լճակաց և առուակաց երեսին:

922. Լողակի ծաղիկ ?

Եթէ չէ Լեզակ. յիշուած է Գեղարունեաց ծաղկանց կարգին:

923. Լողարի ?

Յիշուած յանձանօթէ և զուգուած *Felandrium* ? որպիսի անունն Հիմայ չկայ բուսաբանութեան մէջ, այլ *Phyllanthorum*, որ կոչուի և *Tryllium*, Փ. Paris կամ *Parisotto*. Խոտեղէն դիմացկուն բոյս է ի Շուշանային ցեղէ:

924. Լոյս ?

Ծանօթ անուն, անձանօթ բոյս, յիշուած ի նոր բառհաւաքէ. կ'արժէր այս առ նուամբ բարդեալ կամ կազմեալ շատ անուններ ունենալ ծաղկանց, բայց չեն յայտնուած:

925. Լորախոտ.

Հասարակ գետնի խոտ է, ըստ Աթանաս. (եր. 89). բայց եթէ թուրքարէնի թարգմանութիւնն է Պըրտորմըն օրի, նշանաւոր և թունաւոր բոյս մի կ'ըլլայ, որ Ար. Պէշ կամ Պիշ կոչուի. Տես Բէշ, Թ. 341.

926. Լորի. Լորենի.

Ի գրոց չէ, բայց առ նորս ճանչցուած է Լ. *Tilia*, Փ. *Tillouil* կոչածն. Թ. Օխշանուշ, ըստ սմանց Ճըրանդուշ ազգամի:

Ոչ միայն անունն այլ և ոչ բոյսն ուրիշ անուամբ չեմ գտած յիշուած ի Պէշ. Թարայ և Ամիրտուվաթայ, և ոչ Թմբի անուամբ Թ. 795: Կարմիր կոչուած տեսակն *T. Rubra* յիշուի ի կողմանս Սիւնեաց և Արցախոյ (Գարապաղ) և յայլ կողմանս Ռուստհայոց:

927. Լուաղեղ. Լուախոտ. Լուխոտ. Լուիխոտ.

Լ. *Conyza Inula* կամ *Inula pulicaria*. կամ լաւ եւս մինակ *Pulicaria*. Փ. *Conyze*, Ար. *Թօպպագ طيباق*. Ռ. *Комарникъ*. Անգիտաց անպէտի մէջ այս Պէշթարայ բառը չկայ, այլ անոր ուրիշ բառի մի տակ, որ է *Տոշասս*, *سوس*, յիշէ. « *Տոշասս*, որ է *Հաշիշար* ոչ-պարադիոն ? որ Թ. Պոշրա օրի (փիրէ) ասէ, » Հ. Լիխ խոտ. ինքն խոտ է, և տերեւն Ըռզիանի տերեւ. կու նմանի, և գառն զաթն ի Պփնձ կու նմանի, և ծաղիկն սպիտակ է, և միրգն այլ սպիտակ է, և ի

» վերայ մազկներու պէս կայ, և գետնէն ի վեր մէկ թիզ կու ելանէ: Եւ մէկ ազգն
 » որպէս կարոս կու լինի, և ցեղ մի այլ լինի որ տերեւն ի Գինձ կու նմանի, և զա-
 » զաթն ի Սամիթ կու նմանի »: — Այս Ար. տարբեր տեսակ Տոռչաս կամ Տոռչասս
 Լուսիստին՝ Լ. կ'ըսեն Athamanta Poucedanum. ոմանք ի մերոցս կարծեր են թէ
 Լուսիստն ըլլայ Լ. Pulgium, զոր տեսանք Դաղձ վայրի (տ. թիւ 848) և որ հայե-
 ռէն ուրիշ անուններ այլ ունի. Հին բառագրոց մէջ այլ Լուսիստի զուգուած է
 Այիզոն (Aizon): — Լուսիստն (այսպէս ուղեւով կոչել զ'Coniza) յիշուի ի
 տեղագրաց յայլեւայլ կողմանս Հայոց, աւելի ի հիւսիսայինս. Սպեր, Խոտուշուր,
 Արտահան, Լօսի: Իսկ Լուսիստն Pulicaria շատ տեսակներ ունի, որոց մին
 Հայկական, P. Armona, ի Կարին, ի Կիւմկիւմ Տարօնոյ, — P. Dysenterica.
 ի Կարին և ի Հր. Կովկասս. — Հասարակն P. Vulgaris ի Հր. Կովկասս. —
 Արարականն այլ P. Arabica ի Միջագետս:

928. Լուսժաղիկ.

Կրբու Լուսիստն տարբեր յիշուի Երեւանի կողմերում և համարուի Alchimi-
 mella Matricaria, որ Մուշի բազմազգի ցեղէն է: Տես Փայլթաթ (թիւ 413):

929. Լուակ ?

Բժշկարան մի խարտէջ մաղձի դեղ գրէ. « Ա՛ռ Դեղին Հախլայ և Լուակ և Դամոնի
 չիր բ բ բաժին, մին քաղցր և մինն թթու, խառնէ յիրար », եւ այլն: Փափա-
 գելի է ստուգել, կարծուի իր հետ յիշուածներուն նման պտուղ մի:

930. Լուսցտակի ծառ. Լուսնատակի ծառ.

Տես ինչ որ յիշեցինք Լիբանոսի մասին (թ. 912), համարելով զսա Լ. Ros-
 marinus, Փ. Romarin. Ռ. Ромаринъ. Ար. Էջլի էլ-ձէպէլ اكليل الجبل.
 Ամիրտ. Աթիլ մէլիքը (Տ. Թագաւորապսակ, թ. 748) յիշած ատեն, կու յարէ.
 » « Իպն ասէ, թէ ցեղ-մն այլ Աթիլ-մէլիք կայ՝ որ ի լերունքն կու բուսնի, և
 » յերկայնութիւնն մէկ կանգուն կու լինի, տերեւն յերկան յերկան կու լինի, և
 » զոյնն սեւութիւն կու քլտէ, և փայտին մէջն փուճ կու լինի և պինտ, և գլուխ կ'ու-
 » նենայ. և յորժամ միրգն հասնի և կու բացուի, միջի հունդն Մանեխի շափ է.
 » Հատկներն բուրկեկ. և զիր հատն արտորգնին կ'առնուն և իրենց որսած մսին մէջն
 » կու գնեն որ չի հոտիլ... Ասէ Պարն. թէ այս խոտիս Պ. Քիւսի դաշտար կ'ասեն.
 » և լուսն այն է որ դալար և հասուն լինի, և զունն ի գեղնութեան և սեւու-
 » թեան մէջն լինի. և թէ ճղքեն՝ հատին մէջն դեղին լինի »:

Ամիրտ. և ուրիշ Բժշկարանք ոմանք նոյն համարին զլուսցտակն և զՄարիամի
 ծառն. զոր մենք առանձինն յիշենք, վասն զի և Պէլթար զատ յիշէ Շամար
 ըլ-Միքիւմ անուանելով. Թարգմանքն այլ տարբերին կարծեօք:

931. Լուրիա կամ Լուսիա. Լովիաս.

Մտնթ պարարտ ընդեղէն և շատ մշակեալ տնտեսութեան համար. Հին Հնդկ.
 այլ Լորիա (Lobhya), Ար. Լուսիէ لوبيا. Լ. Phaseolus, Փ. Haricot, Իս.

Fagioli. Ռ. Бобъ пурейкии, Фасоль, հայերէն երկրորդ կոչմամբն՝ Լովիաս (որ կարծուի Յ. Λοβός Փեճեկ նշանակութենէն առնուած), յիշեն առ մեզ՝ նախ երկու Մխիթարք, Հերացին և Գոշն. սա իր Առակաց մէջ (ԽԴ. ԽԵ) Ոսպի հետ վիճել » տալով՝ նկարագրէ, « Սպիտակ մարմնով և սեւ բերանով », որոյ համար Սեւ պորտիկ կոչուի ի բամկաց մէկ ազգն, ինչպէս յիշուեցաւ ի Գեղուշ (Թ. 892). Իսկ Հերացին հակառակ Գոշի յիշէ զԿարմիր Լովիաս (եր. 84), իբրեւ վերաբերութեան դեղ, անոր ջուրն՝ ուրիշ նիւթոց հետ խառնուած : Ամիրտ. գերկուքն այլ մէկ տեղ յիշէ. « Լոսպիայ որ է Լոսպիանն, որ Թ. Պօկրմայ ասէ, կարմիր » և Սպիտակ լինի. և լաւն այն է որ կարմիր լինի, և չլվացվի... գլուխ շուրջ կ'ածէ, » և գերեան պայծառ կ'առնէ, և զգունն կ'իստըկէ, և զմանն և զսպին կու տա. » նի... և խոցերուն ճիւտ տուող է... Ասէ Պտին. Թէ ինքն Սամիրն ? է, և ինքն » քան զՄաշն լաւ է մարսելութեան և Ռակլան. և լաւն այն է որ կարմիր լինի », եւ այլն : Բժշկարան մ'այլ գրէ, « Լովիաս՝ Խարակոզն է. Ար. Լոսպիէ. Լ. » Ճառոտի ». Խարակոզն նշանակէ Լովիային աչքի նման սեւ նշանն ի փորին, զոր տեսանք և Փ. Dolie à l'œil noir ըսուած (Թ. 892):

932. Լուիկ.

Նշանակուած ի նոր բառհաւաքէ. Թերեւս ըլլայ հետեւեալն,

933. Լուիճ.

Տես Եռիմ : — Գուցէ նոյն է և Լուիճն. նշանակուած ի բառհաւաքէ :

934. Լուկուան ?

Վայրի Ստեպղինի հունտ է, կ'ըտէ հին հաւաքում մի բառից :

* Լուպահ ? — Տես Լոսֆ :

935. Լուսնի. — Տես Միաշորակ :

936. Լուսնակ ?

Յիշէ նոր բառհաւաք մի, առանց բացատրելու :

937. Լուսնատակի ծառ. — Տես Լոսսոտակի ծառ (Թ. 930) :

Լուսնի Թուկ. — Տես Թուսի յոսնի (Թիւ 819) :

938. Լուսնի ծաղիկ.

Ար. Ղաւեր կամ Գաւեր, և Թ. Ղաւեր յիշեկի, ըստ կամարկապեցոյն և ուրիշ նոր հեղինակաց : — Թերեւս նոյն ըլլայ Թուկ Լուսնին, բայց քիչ մ'այլ ա.

ւելի կու ստորագրէ Բժշկարան մի. « Ունի մէկ արմատ, կ'ըսէ, և արձակէ բա-
» ղուկն մէկ, լայն ճուղք, և բարձրանայ թիզս երկու. և հաստութիւնն իրկի
» չափ է. և տերեւն կարմիր յորդան գունով, և ի վերայ գլխուն դեղնազոյն
» ծաղիկ, և տերեւք նորա զհետ լուսնի ընթանան. զի առաջին օրն լուսնի մէկ
» տերեւ ստանայ, և յերբ լուսինն փլէ՝ նորա տերեւքն թափին, և զիր ծաղիկն
» ի վերայ զլուսն պահէ. և հանապազ այդ է իւր բնութիւնն. ի նոր սկսանի(լն)
» տերեւն արձակէ, և ի բուսանելն՝ մին մին թափի »:

Ուրիշ գրող մի տարբեր անուններ այլ յիշէ. « Թ. Մուսարէք օրոտ ասեն, և
» ոմանք Միլիանայ ասեն, և ոմանք Ուշրգլար օրոտ. . Սորա ծաղիկն Մշկի ծաղկի
» կը նմանի, և տերեւն որպէս Չէյթունի տերեւ և Օշնայի տերեւ է. . . . ամէն
» օր մէկ տերեւ կ'թափի, և կ'մնայ մէկ տերեւ. այսպէս ծաւմիս ծա հեղ կ'նո-
» րոզուի, և ծա անգամ կ'թափի. . Այս խոտս կ'բուսանի ի Մարայ երկիրն, և
» ի լեռինքն և ի գետեզերն, և Մուսայ տէրեասին (Կարմիր ծով. ?) և յԵրու-
» սաղեմայ երկիրն »:

939. Լուսնոտ.

Նշանակած է բառհաւաք մի առանց բացատրելու որպիսութիւնը:

940. Լուտաս.

« Որ է Հանդարդոյի պօստանին ». այսինքն Աժուոց Առուայտն. (տես Առուայտ): Բայց
» Ոմանք ասեն (Ամիրտովլաթայ է խօսքս) թէ Նիլուֆարն է, և իր ցեղերուն է և ի
» Նիգիպտոս Ճագայիր կ'ասեն. և այն ցեղ-նն այլ Նիլուֆարն է, և Ար. Լուտաս, և
» Սիբրին (Մութրին) ցեղերուն է. այս չէ ընդունելի ». իսկ թէ որն է ընդունելի,
» փոխանակ քննելու կամ երկարարանելու, « Եւ փառք Աստուծոյ » ըսելով կու
» վերջացընէ: — Լուտաս ըսածն է յայտնի և հաշակաւորն Թ. Λωτός, Լ. Lotus,
» իր եղբզանք թագուհին, յատուկ Լ. Nymphaea Lotus, Ար. Պիշին ܢܝܢܝܘܐ: Ըստ
» յունական առասպելաց Լովտոս դուստր էր Նեպտոնի, և Պրիսպու յափշտակու-
» թենէն փախելով՝ յանկարծ փոխարկուեցաւ յայս բուսեղէն: Ուրիշ համանուն
» (Լուտաս) ծառ մ'այլ կար, կ'ըսեն, անուշահամ պտղով, կամ ըստ Աշխարհա-
» գրութեան Խորենացոյ՝ « Բանջար ինչ Լուտաս անուն, զոր թէ ոք ուտէ, զհայ-
» ռենիոն մոռանայ՝ ասէ Հոմերոս ». այսպէս եղաւ կ'ըսէ բանաստեղծն այն իր
» Ողիւսեւս դիւցազին, որոյ նաւն մրկէ քըռած Ափրիկիոյ այն կողմը՝ ուր մո-
» աջաբեր բոյսն կ'անէր, և իր երկու լրտեսներն ուտելով անոր պտղէն՝ մոռցան
» իրենց առաջին կեանքը, և շատ դժուարութեամբ կրրցաւ Ողիւսեւս հանել զանոնք
» այն երկրէն: — Բատուկ Լուտուան ի Նեղոս գետ փնտռելու է. բայց կան տե-
» սակներ այլ որ գտուին նա և մեր երկրում ի Ռ-Հ. ինչպէս Լ. Strictus, Լ.
» Corniculatus, Լ. Uliginosus. իսկ Լ. Gebelia ի Խարբերդ, Խոյ, Հր. Հայք. —
» Լ. Solphoreus ի Միջագետս:

941. Լուտուտ կամ Լտուտ.

Այսպէս կոչուած է ուրիշ անուններէն զատ Բոխնն. տես զայս և զԲաոււմ.
(Թ. 387-88) և զԼգդենի (Թ. 893):

942. Լուք կամ Լոք. — Տես Դում:

943. Լուֆ. Լուֆա. Լուֆահ.

Յետին անուամբ կ'ըստ կամարկապցին . « Խօտի տակ է , որ զմարդն կու » թմրեցնէ » : Բայց Լուֆ սովորաբար նշանակէ զՆոռիկ , զոր տես : — Լուֆա Ար. նշանակէ տեսակ մի Գօշմօրուաց զոր Պէյթ. կոչէ և երիցու մարուք , Ազան էլ-քէշիլ : — Դարձեալ , նոյն լեզուէ առած Լ. և Փ. Լսնա նշանակէ բազկաձեւ երկայն Դրումի (Թ. Գօշ գապաղը) կերպ մի , որոյ մէջն բրդի պէս մարմին մի կ'ըլլայ . և Սպունգի տեղ ի գործ ածուի : — Բժշկը. մի գրէ . « Էպո՛՛ որ է վայրի Լուֆակն (կամ Լուպակն) » : — Ար. Լիպախ لج նշանակէ Պերսէի ծառը , զոր տես ի կարգին :

944. Լունի.

Քանձակայ կողմերում այսպէս կոչուի Լորին կամ Թմբին :

945. Լսեռնիկ կամ Լսեռկէն.

Տեսակ մի Տանձի. Թ. Տէկիրսէն արեւոտի :

946. Լսընտորի.

Տեսողք ի կողմանս Կարնոյ և Խաղտեաց կ'ըսեն , փոքր ծառ մի է , տերեւ ներն նման Կաթնտերեւի կոչուածին , բարակ ա բոլորակ իւղոտ բաճիճներ կու բերէ , որ շատ ախորժելի է այժից . Թ. Ազմա աղամ : Ըստ սմանց սա է Լ. Cercis, Փ. Gainier կոչուածն . բայց ըստ այլոց Dipsacous, Փ. Cordre. զայս՝ նոյն և տարբեր անուամբ այլ յիշէ Ամիրտ . ըստ Պէյթարայ . մին՝ Լիհիանի جاني , որ է Տիպ-ասդան » (Տինսադան գրուած) , միւսն է այս . զոր մեր բժշկապետն՝ ج (Ծ) կամ ب տառը ج կարդալով (Ն փոխանակ Գ) գրէ « Տինդասուս , որ է Տինս » ստղուս որ է Տիտաղուս (ساقساجو) . Թ. Տարախի ստէ և Չօպան տայադի » ստէ » . այս ալ սխալ գրուած է , պէտք է ըլլայ Չօպան տարադի (Հովուի սանտր) . վասն զի Չօպան տայադին է Հովուի բիր , ըստ Հայոց այլ , և սա է Մատիտեղն . իսկ Հովուի սանտրն (որ չի լսուիր մեր լեզուաւ) ինչպէս անուանէ և Պէյթար . Մ'էշք էլ-նայի اعا , طاس , և նոյն ինքն Ամիրտ . քիչ մի վերջը կ'ըսէ . « Ատէ Պտին . Թէ » ինքն Խաս ըլ-քալպն է , որ Մուշտի-րոսային փուշն է , և Հարսերայ այլ տանն . և » ինքն ի փշերուն ցեղերուն է . և ի Եիրազ՝ այնոր Տարաք կու տանն . և իր որ » ձայն յերկան է և փշով է . և իր տերեւն նման է Հազրին տերեւին . և պատ » մութին (պատճառ) Տինսաղուս ասելուն՝ փոքնգտացընող տսել է . և յորժամ » չորնայ՝ սպիտակ լինի գոյնն , և ի մէջն մանր որդկներ կու լինի . — Էլ թէ » դանոր միջի որդկներն ի մէկ մորթի մի կապես , և ի վիզն և կամ ի թեւն կա » պես , ըսիպ (չորեքօրեայ) լերմն չի բռնէ , և զայլ ցեղ լերմնտի : Էլ թէ գծա ,

» զիկն թէ չոր և թէ դալար՝ ի մէկ սուրբ կտաւ մի կապես և ի կաթին մէջն
» տրորես, և ի յայն լաթն իսկի իբր չի մնայ, և յետև առնուս զայն կաթն ի
» մէկ պնակ կաթն խառնես, յայն պահն մակըրդէ. և թէ եփեն և սպեղանի
» առնեն և յայն տեղացն ի վերայ դնեն՝ որ կտրելու է, թմրեցընէ, զկտրելն որ
» չիմանայ և չի ցաւի », եւ այլն: — Վայրենի տեսակ Լօշնտորին D. Sylvestris
գառի ի Հր. Հայս. — Մազոտն՝ D. Pilosus ի Տրապիզոն, Պոնտոս. — D.
Strigosus ի Կարին:

947. Լօղ կամ Լօզ.

Տեսակ Դեղձի՝ որ չի ճղբուիր կամ երկու բաժնուիր:

948. Լօլօզ Պղպեղ.

Ըստ բժշկարանի միոյ այսպէս կոչեր են ոմանք զԴարապղպեղն (թ. 559):

949. Լօշ.

Ըստ Գալիենոսի բառից է Թաղթն, կամ Արանց ծաղիկ, տես զասոնք: —
Բայց Հասարակօրէն Բժշկարանք արաբացի Քարաւի պարթի անուամբ զրեն.
« Վայրի թաղող, որ է Լօշն, յերկայն յերկայն ճղեր ունի, նման է այգու ճղե-
» բուն, և կեղեւն ի վրայէն կեղեւած, տերեւն նման Յանապ ու-սայրսպին
» (տ. Աղուէտու խաղող, թ. 62) տերեւին. ծաղիկն նման կարմիր Հինայի
» ծաղկին տերեւին. միրգն մանր է, կուզ կուզ կու լինի, և կարմիր՝ յօրժամ
» Հասանի »: — Յիշուի և Լօշի պտուղը՝ Տրոզու պտղոյ և ուրիշ բուսեղինաց հետ՝
դեղոց պատրաստութեան մէջ, բայց ամենէն նշանաւոր այլ և նշանագործ մասն
(ըստ ռամկաց) է արմատն, կամ տակն, որ այլեւայլ յարմարական կամ երեւա-
կայեալ անուամբք կոչուի, և է յատկագոյն

950. Լօշտակ.

Տակին կամ արմատին կէս իրաւ կէս կարծեցեալ ձեւովն իբրև մարգու նման՝
կոչուած է և Մարմնատակ, կամ Մարդատակ. որ և Մարդայատակ, Մարդախտո,
Մարդածաղիկ, և ստուգապէս Մանրագոր. L. Mandragora կամ Bryonia Alba,
Փ. Mandragore, Ար. Մարաձ ըլ-Ղուտրոռայ جرجير القبطي. Այս անուամբ ստորա-
գրէ Ամիրտ. հայ և յոյն անուններէն զատ յիշելով « և Պ. Էսպարտի Սանամի
» կ'ասեն, և Էսպարտի ըլ-Վախնագ, (جرجير القبطي) այլ կու ասեն. և Լաւն նոր լինի »:
Իսկ այսոր հասարակաց ծանօթ և կիսածանօթ զարմանալեաց համար՝ լաւ կ'ըսէ,
թէ α Դատ խօսք կայ ի հոս. և ասցել են, թէ խոտս Սողմոն իմաստնոյ ծառն
» է, Սիւշիյնան աղաձի, . . և իր մասանուն ներքեւ էր այս ծառէս, այնոր ամե-
» նայն գազանք և սողունք և (!), ի նորա հրամանն էր, և իշխանութիւն կու

1. Օրինակաց մէջ պարսպ թողուած է կիսկատար զբուած է և էի:

» առնէր ամենայն զազանաց և անասնոց: Եւ այլ ասացել են, թէ Աղեկասնոցը
 » թազաւորն զթազաւորութիւնն այս ծառովս ունէր. և զայս փայտն ի հետն
 » ունէր. և այս խոտովս շատ բան և թազաւորութիւն վարէր. . Եւ այս փայտիս
 » կերպն այսպէս է, և այսոր տակին պատմութիւնն այսպէս է. և իր ամենայն
 » զօգուածն ի մարդ կու նմանի, և ի յոտիցն ի վերայ կու կանգնի, և տերեւն
 » ի գետնին վերայ կու պուկի. և տերեւն նման է Իրպոռնոն (Շանխաղող)
 » տերեւին, և կարմրուկ մրգեր ունի. և հոտն նման է մեղրի հոտին. և ի յէգես-
 » տանն և ի լերունքն կու լինի: Եւ այս խոտիս հանելուս ատեն յայն ժամն է
 » որ Մարեխն (Հրատ մոլորակն) ի Խոյն լինի և կամ ի յԱլթեղլիւրն լինի. և
 » օրն երեքշաբթի լինի, և արեւն ի ցայթել ժամն լինի. յայն ժամ փորեն ըզ-
 » չորեք դեհն, և հանց որ ինքն ի կախ մնայ. և մէկ քտնի որ քաղցած մնացած
 » շուն լինի բերեն և ի վիզն շուն կապեն, և զչալիին զմէկ ծայրն ի յայն
 » խոտին տակն կապեն՝ որ փորել էիր, և ի հեռու տեղ երթաս, և այն շանն
 » ձայն տաս, և այն շանն քաշքչի, և զտակն ի տեղացն հանէ, և շանն սաս-
 » կի (!): Եւ այս խոտիս տակն մարդակերպ է ամենայն գիմօք. և առնուծ ի
 » սպիտակ նոր կտան փատթեն և պահեն»: Ստորագրելէն ետեւ կու սկսի
 պատմել հրաշալի ներգործութիւնները բժշկական զօրութեամբք և ծիծաղական
 հնարքներով. ինչպէս,

« Թէ ի ծաղկէն՝ որ գեռ չէ բացվել և պղպուղ է՝ առնուն և ի քթան կտաւ
 » լաթն փաթտեն, և եօթնգուն ապրումով կամ դերձանով փաթտեն, և ըխտաւոր
 » (լուսնոս) տղին ի վիզն կապեն, քանի որ այս կապած լինի՝ ըխտաւորութիւնն
 » անհոգ լինի և խաւի... Եւ թէ ի տակէն ի կրակն ծխես՝ գետնն և ստտա-
 » նայքն փախչին. Եւ խելքն ցրվածին և ձրի գրուցողին (զառանցող) թէ ծխես,
 » օգտէ և փարատի... Եւ Բժշկապետքն ասցել են, թէ այս խոտիս նշանն այս
 » է, որ յորժամ գիշերն լինի այս փայտիս տերեւնին և կեղեւն՝ զէտ կրակ կու
 » այրի և կու փայլէ, և թէ չորնայ՝ այլ չի փայլէ. և թէ թրղեն և ի լաթն
 » փատթեն՝ այլի պայղայ: Եւ այլ ասցել են Բժշկապետքն (ըսողն Պէյթար է)
 » թէ, կտոր մի Նիպարուն տակն առի՝ տան ի մէկ քուննն ձգեցի, և կէս գի-
 » շերուն զարթեայ, և տեսայ որ տանն մէջն լուսով լցուեր էր, և զարմացայ
 » յոյժ պայծառութեանն. ասացի, թէ այս ի՞նչ է զարմանալի, և տեսայ որ այս
 » փայտս էր. և յորժամ չորացաւ՝ պայծառութիւնն գնաց. . Եւ Ղաֆիզին ասէ.
 » ցեղ մի կայ որ Մարսն ընդ-Մուշայնոնի ասեն, և ինքն բուս-մն է որ ի քթանի
 » արտին մէջն կու բուսնի. և ցեղ մի այլ ասէ, և իր ծաղիկն նման է կարմիր
 » Վարդին, և տակն նման է Ընկըզի, և ինքս այլ ի գիշերն կու փայլի: Եւ այլ շատ
 » խօսք. . Եւ գիտացիր, որ շատ հակառակ բաներ են ասցել ի վերայ այսոր, և
 » չեն կարեն ստուգել թէ ինչ իրք է »:

Ուրիշ Բժշկարան մի կ'ըսէ. « Գեղ մի կայ Մարտածաղիկ ասեն. լինի բարձր
 » և ծմակ տեղիք. և ծաղիկն իւր սպիտակ է կամ կարմիր վարդագոյն կամ կա-

1. Ինչուան հիմայ հիշք այսպէս կ'ընեն, ըստ վկայութեան իտալացի գիտնոց, իրենց Աղ-
 պուրոցի կոչուած նարաւային զաւառի գիւղացիք. ուրիշ կողմ՝ փոխանակ շան՝ կաղնի փայտ
 մի կապեն լոշտակին և շուննով քաշեն: Գրեթէ այսպէս իրատե ընել և բազմամտուտ Պլինիոս
 (ԻՆ. ԺԳ.), Քրիստոսի Ա զարու նեղինակ, իրմէ հիներէ տուած:

» պուտ, բայց վարդագոյնն լաւ է, որ գերդ հուր վառի, մանաւանդ թէ զկար-
 » միրն գանենս. և նման է տակն նորա մարդոյ, առն կամ կնոջ. երբ գտանենս՝
 » փորէ զտակովն շուրջ բոլորն, և հար աման մի, խնկէ հետ խնկով, և փորէ
 » շուրջ զտակովն, և պատրաստ կաց որ չկտրի տակն. և երեք օր պարա է զար-
 » դարած աղիկ մի ի հետ տանել, որ առաւել պայծառանայ. և յետ երեք ա-
 »ւուրն գնա դու և աղիկն, և շուն մի հետ ձեզ տարէք. կապէ զշունն տոռամբ
 » զվիզն, և մէկալ տակն շուանին կապէ ի ծաղկին տակն. և գնա դու զատէ
 » (հեռու), կանչէ զշունն ի քեզ, և նա վազվազ գայ առ քեզ, և զտակն հա-
 » նէ (1), և շունն սատակի. յայնժամ դու առ գնա. յամենայն ուրեք պիտանի
 » է... Հայք Լօշտակ, Պարսք՝ Ղօստի Թալիս, Արապք Գարմար ըլ-պարա...
 » Հելլենացիք զդորա անունն Անտոսանքոս ասեն » : Զեմ կարծեր որ հիմայ այս-
 » պիտի անուն լուի, բայց եթէ ստոյգ գրուած է՝ կըրնար նշանակել Անմասն ծա-
 » դիկ. ուրիշ օրինակ մի աւելի օտար կամ այլայլեալ գրէ Մճամոտոտանքոս ? —
 Ուրիշ յոյն անուն մ'ընծայեն Բժշկա-
 » րանք կամ աղթարարանք. «Վասն Խոտին
 » որ Լօշտակ ասեն ոմանք, յոյնն Սպիտա-
 » չեղի ? կոչէ, և յատկութիւնն է շորս
 » կերպիւ. Կախ, թէ մարդ առնու զտ-
 » րա տակն՝ և վերայ այն մարդոյն դնէ որ
 » չիղն քաշվել է, նա օգտակար է »,
 » եւ այլն. և երեսունէ աւելի օգուտները
 » յիշէ այլեայլ ցաւոց, և կնքէ զխօսքն .
 » « Թագաւորն Կպրիանոս (կախարդաց Թա-
 » գաւորն) զայս խոտս Թագաւոր է ա-
 » նուանել ամենայն խոտի. և շատ խա-
 » սիաթ ունի՝ ուտելով ըմպելով և հետ
 » պահելով, շատ ողորմութիւն առնու
 » յԱստուծոյ. և խոտիս (ի բան տանո-
 » ղին) միտքն բացվի, կարէ գիտել զեր-
 » կնայինն և զերկրաւոր յատկութիւնս | » :
 Լաւ և ստուգագոյն գրէ ուրիշ մէկն.
 » Այս Լօշտակիս նշանն այս է. և է
 » տերեւն որպէս Դդում, (այսոր համար
 » Թ. կոչուի Իսպան գապարը), և ինքն
 » ի Շարմաշուղին (Բաղեղան) ցեղէն է,
 » ճղերն, թելերն և տերեւն. և փաթութի սա ի թփերն և փշերն : Երկու ազգ
 » է, Սպիտակ և Սեւ, և նման են միմեանց, զի մկրատնի ունին և կու փատ-
 » տուին. հերն զէտ Զմերկի լինի, պտուղն կարմիր և սեւ. խակն կանաչ ի վերայ
 » սեկացն ? գործի, զէտ զէգ է պտուղն (էգ կամ այգի) և ճաւերն... Ի մայիս՝
 » զտակն և զծիւն քաղէ, և օգոստոս՝ զպտուղն, երբ կարմրել և հասել լինի » :
 Թողլով ուրիշ և ուրիշներուն ըսածները, նորագոյն հեղինակի մ'այլ գրածը
 տեսնեմք, որ է Յակովբ Վ. Սիմոնեան կամ Այուրեանց, անցեալ դարուն եր-
 » կրորդ կիսուն, որոյ գրած Հէյտէր Ալի խանի պատմութիւնը ծանօթացուցեր է



Լօշտակ.

1. Ուրիշ օրինակ գրէ, « Հանէ զծաղիկն ի տակէն » .

Ազդարար օրագիրն Մատրասի. գրած է սա և Երգերգոցի մեկնութիւն, յորում
ի յիշելն զՄանրագոր' կ'ըսէ. « Լօշտակն ամենայն ուրեք գտանի, որ միշտ տե-
» սանեմք, և հանապազ արմատ նորին ի գործ ածեմք ի գեղորայս, և զիւղն
» սոսոցն խարչեալ յաւուրս պահոց աղիւ համեմեալ ուտեմք, և յայլ աւուրս
» իւղով տապակեալ ախորժելի կերակուր առնեմք. զի է ախորժելի յոյժ և օգ-
» աւաւտ ազնիւ բանջար. որոյ պտուղն է հանգոյն Շնխաղողոյ՝ մանրիկ: Այլ
» այն է իսկապէս Մարիլատակ, որոյ ականատես մեք եղաք, զի էր սոսոց նման
» նորածին մանկան, ամենեւին անզանազան ի կերպարանաց մարդոյ. բոլոր ան-
» դամաքն՝ անթերի և անպակաս, զլուխ՝ հերօք և վարսիւք, և ւայն, և ւայն: Որ
» լինի ի Յունաստան, ուստի բերեն ի Կ. Պօլիս՝ ի պէտս բժշկաց. բայց զօտան
» զեղէզն զծիւղն, զտերեւն և զպտուղն՝ ոչ եմ տեսեալ՝ զի զսոսոցն գրիցեմ,
» այլ միայն զարմատն՝ զոր պատմեցի: Եւ տածիկ բժշկաց հարցի, թէ դուք զի՞նչ
» կոչէք անուն սորա. — պատասխանեցին, թէ Ապրիսիւրալ (Ապրուսանէմ) ա-
» սեմք մեք: Եւ ոմն ի մերայնոց հաւատարիմ բժշկաց պատմեաց մեզ, թէ հան-
» դիպելով իմ սոյն արմատոյ՝ ուստի հատեալ կտոր մի փոքրիկ ի շափ փոքր բակ-
» լայի՝ առեալ բերանս սկսայ ծամել և կլանել. յայնժամ իսկոյն սկսայ լինել
» որպէս ցուցանեաւոր ոմն, զի կարմրացայ դիմօք յոյժ, մեծացաւ զլուխ իմ հնգապս-
» տիկ քան զառաջինն, որպէս թուէր ինձ, նմանապէս և բոլոր անձն իմ մե-
» ծացաւ, և եղէ որպէս արեալ ի գինւոյ. և տեսողքն զիս՝ ծիծաղէին զինեւ,
» և տեսեաց աւելի քան ժամ մի. ապա և իմ անճարացեալ մատն արկի և փըս-
» յ խեալ դադարեցայ »: — Վկայեն նա և ընախօսք այս բուսոյ լեղութեան և
» թմրեցուցիչ բնութեան. բայց կարեւոր է գիտնալ՝ որ կայ զանազանութիւն
» Լօշտակի և Մանրագորի մէջ. առաջնոյն սեփական է վերոյգրեալ լատին կոչումն
» Bryonia Alba, Փ. Brione, միւսոյն նմանաձայնն և յօտար լեզուս՝ Mandragora.
» զոր և մենք ի կարգին պէտք է յիշեմք՝ այս և իսնճորակ անուամբ. թողով այլ
» շատ խօսքն, որով թերեւս մենք այլ մեղադրեմք. սակայն հարկ է Լօշտակի մար-
» դանմանութեան առակը պարզել՝ բուսոյն արմատը կամ տակը պատկերելով, ուր
» միայն, մարմնոյ երկու բաժնուած մասին նմանութիւն կայ, իսկ միւս մասանց
» կամ անդամոց նմանութիւնքն՝ խարեբայից արուեստով ձեւացած են, (և մեր
» Այուրեանց վարդապետն այլ խարած). և այս օչ միայն առ մերայինս կամ յա-
» բեւելս հիմայ, այլ և հին ատեններ և առ Եւրոպացիս: — Լօշտակն (B. Alba)
» գտուի Կովկասի երկու կողմն այլ. — B. Dioica կոչուածն ի Բարբերդ, ի Հր-
» կովկաս. — B. Macrophylla ի Պոկլան՝ մօտ ի Տարօն:

951. Լօռ.

Սովորաբար այս անուամբ կ'իմացուին թէ ցամաքի և թէ մանաւանդ լրի Մանուռք,
որք հազիւ բուսոյ կերպարանք ունին. նոյնպէս և մանրիկ րոյսեր: Հին կամ մեծ
» ծառոց վերայ այլ կու տեսնուին, մանաւանդ խոնաւ տեղերում, ուսկից բար-
» դուած կամ բացատրուած են Եօսա-մարգ և Եօսա-րոյս մայրիք: Եւ նմանու-
» թեամբ՝ կ'ըսէր բրտացեալ մարմնով ճգնաւոր մ'այլ (ի Վարս Նարանց), « թէ
» յանձն իմ իբրեւ զփուշ և զլօռ եղեւ բուսեալ, անհանգիստ առնելով զիս »: —
» Իսկ Ազաթանգելի յիշածն՝ « Մանրախոտքն դալարիք, որպէս Լօռն, Վարսակն և
» Կնիւն », յերաւի այս ետքիններուս պէս և այլ աւելի բարակ երկայն խոտ մի
» է, և այսպէս կ'անուանի գեռ այլեւայլ տեղ ի Հայս:

952. Լօռասերմ կամ Լառի սերմ.

Գալիենոսի բառից մէջ համանիշ գրուած է *Βουανίκου* կամ *Βουανիկես*, որ համարուի *Betonica*, ինչպէս գրէ և Ռոշքեանն. իսկ հայերէն շատ նոյնանիշ անուններ ունի այս բոյսս, մի ի հրաշալի բուսոց Հայոց, զորս յիշենք խաչափայտ անուան ներքեւ:

953. Լօռի.

Տեսակ մի աղէկ անոյշ Թուփ, որ Ալինայ կողմերում առատ կ'ըլլայ, և շորցուցած վաճառուի:

954. Լօք.

Ոչ է բոյս. այլ թէժ բուսոյ կամ կռէզ, ինչպէս կ'ըսէ Վանական Վ. բուսոյ տեսակին համար այլ, « Թուփ կայ՝ Կապուաշենեաց շափ, ի Սասունք լինի, ուր » Գաղպէն իջանէ »:

955. Խարբրուկ. Խարուկ. Խարշուկ.

Առաջին անունն յիշուած է յօրագրի, երկրորդն ի Շէհրիմանէ, որ համարի *L. Lapsana*, *Φ. Lapsane*. ուրիշ (անծանօթ) մ'այլ Խարշուկ կոչած է, զոր գրէ և Պէյթար, *لجسان* Ամիրտ. « Լայսան. ոմանք այս խոտիս Թ. Ղիձի կ'ասեն. » և ինքն վայրի խորտաշն է. և թէ եփես ջրով և մէջն նստի տղան՝ զէտ աւազան՝ շատ շուտ քայլէ. և թէ զհունտն ծեծեն կաթով շաղին և յերեսն օծեն՝ զմանն տանի. և թէ շատ տարպանի (շատ անգամ) օծես՝ զերեսն պայծառ առնէ և յտառկէ »: — *Lap. Intermedia* կոչուի տեսակ մի՝ որ գտուի ի Կարին, Մուշ, Մանախ. — *L. Grandiflora* (Մեծածաղիկ), ի Պոնտոս և Կովկաս:

956. Խազազ ?

Բոյս ուտելի. յիշուի յԱրարատ օրագ. էջմ. (Ե, 93), եթէ չէ հետեւեալն,

957. Խազազ կամ Խազէզ.

Որ տեսակ մի փոքր և պինդ Սխտոր է, Պրասի համով: Յիշեն մեր տեղագիրք (Մանան. 145. Կալհօկցի. 131. Նոր Դար, Դ, 62.)

958. Խազալ.

Զայն ծանուցանէ մեզ ծաղկերզու Սալաձորցին.

« Խազալին Թուփն է բուրբել, բուսել է հետ Ճինարտուն »:

Ասոնցմէ տարբեր բոյս Թուփ հետեւեալն,

959. Խազաս ?

Վասն զի յիշուած է ի կարգի ուտելեաց, աղցան կամ Թթուեցուցած:

960. Խազիրան.

Ի գիրս հանդիպած չեմ այս անուան, բայց մեր նոր օրագրողք այսպէս կոչեն, հնոց աւելի իր ձեւին համար ծանօթ բոյս, Յ. 'Αστράγαλος, Լ. Astragalus, Փ. Astragale, որ յունարէն նշանակէ ողնաշարի կամ ոտից կրընկի սակր. իր հունտերուն ձեւէն. նոյն անուամբ գրէ և Պէլթար

سالغاطسا, յորմէ և Ամիրտ .
« Աստարադայիս. որ Թ. Տաւլիան .
» մի ջրանաղի սակ (սակրկուլի
» ճանկ). ինքն խոտ-մն է որ վերայ
» գետնին կու ճապղի. տերեւնին
» և ճղերն Միսոան կու նմանի, և
» մանտր ծաղիկ ունի, և տակն ի
» Բողկ կու նմանի, և ի շուք տեղ-
» բանք կու բուսնի, և ձունտ տե-
» ղեր շատ լինի: Եւ Թէ ծեծես և
» շտերուն ցանես՝ որ հին լինի,
» օգտէ և բուսցընէ », եւայլն: —
Հին ճարտարապետք Յունաց Խա-
զիրանի տերեւներուն ձեւը յարմար
գտան իրենց սիւներու գլուխները
ձեւացընելու, և բուսոյն անուամբ
քանդակեալ ձեւն այլ կոչեցին:
Արեւելեան Հին Մշակութեան
գիրքն (Իպն էլ-Ալլամ) Խայզու-
րան կամ Հայզուրան կոչէ Թուփ
մի՝ որ փոտ տերեւներ ունի, տե-
րեւոց մէջն այլ կարմիր հատեր. ըստ
բուսաբանից է Լ. Ruscus aculeatus.
Փ. Houx Fragon կամ Frelon.



Խազիրան.

961. Խազուր.

Թերեւս նոյն վերոգրեալ անունն ըլլայ, բայց հին բառգիրք յիշեն ընդ Զոպայի, և ըստ Ռուբենանի՝ վայրի Մորրիմ է:

962. Խածխած.

Թէ ստոյգ Թէ սխալմամբ՝ այսպէս գրուած է Բժշկարանի մի մէջ Խաշխաշն:

963. Խաժուակ.

Ըստ Սալաձորեցւոյն գարնան կարապետ չորս նախընծայ ծաղկանց մէկն է, որք « Զայն ածեն ծաղկըններուն.. Զարթիք ի խոր քընոյն »: Հաւանօրէն նոյն ըլլայ և

964. Խաժուրեկ.

Կանաչագոյն կամ ներմակ ծաղիկ, որ ձեանց հալելու սկզբան բացուի, և յիշուած է ճօրոխի գետահովտին մէջ, փանօթ կարմիրքոց և խոտուլիքոց տե-
րեւներն եռանկիւնի սուրի ձեւով են, անոր համար իբր զինուորի պատշաճ կ'ա-
նուանի Լ. Stratiotes Aloides, Փ. Stratiote Aloide.

965. Խալանք կամ Խալանջ.

Ար. خالج . Լ. Erica. Փ. Bruyere. « Ոմանք, առն, կ'ըսէ Ամիրտ. Թէ Փիճոյ
» փայտն է, և չէ ստուգ, և այսոր Հա. Գրանտա ? Եւ թ. փրան ? ասէ .
» և ոմանք առն Թէ ծառ-մն է որ մարդու մի չափ յերկանութիւն ունի, և տե-
» րեն նման է Մոլու տերեւին, և մանտրկեկ կարծրուկ ծաղիկ ունի, և ի
» մէջն դէտ Գարի իրք մի լինի կակըղկեկ. և Թէ զծաղիկն սպեղանի առնեն գա-
» ղանահարին վրան դնես.. օգտէ »:

966. Խալար.

Ծաղիկ մի Արաբոյ, خالار, ըստ Աշխարհագրութեան Խորենացւոյ. նշանաւոր
տեսակ պէտք է ըլլայ որ յատուկ յիշուելու արժանանայ. ըստ Արաբացւոց Ոսպի
նման ընգեղէն է, նոյնպէս Պէյթար այլ կ'ըսէ Թէ ճոռչպան է, որ է փոշնայ
ըստ Ամիրտուլաթայ:

967. Խալի.

Kali կոչուած աղային ծովեզերեայ բոյսն. բայց գիտնական մի (Սալմաստիոս)
լտեր է Թէ ի Հայս՝ չոր տեղերում ծառի պէս կ'աճի և բարձրանայ (1). — Ա-
միրտ. գրէ Ղալի կամ « Ղալի. ինքն խոտ է, այրի և զէտ կապուտ քար լինի,
» աղէկն մուր լինի.. Ասէ Գեղիանոս, Թէ զփտած միսն ուտէ, և ինքն ի մոր-
» համին (մէհլէմ) շատ զօրութիւն ունի. զնաստրն տանի և քակէ զպեղծ
» խոցն և աղէկ միս բերէ. և ի ներկն շատ զօրութիւն առնէ »:

968. Խալիար.

Այսպէս կոչուի յոմանց Արլախստորն (Թ. 336) կամ Ղանճիչն:

1. In justum arborem apud Armenios assurgere ajunt.

969. Խալիմ կամ Խալիմնճ.

Յիշէ Սալաձորցին քանի մի նմանեացը հետ: Տես Խաճ:

970. Խախակ.

Այս այլ Խորենացոյ Աշխարհագրութեան մէջ յիշուած Արարիոյ ժողով մ'է, և ինչպէս ուրիշ տեղ յիշեցինք (Թիւ 10) ըստ Առարայ՝ Ազատդրախան է:

971. Խախիւս.

Հին Բժշկարանն այսպէս գրէ միշտ, փոխանակ Ախախիւս. տես զայս Թ. 38:

972. Խաճի.

Մտռոց անուանց վրայօք համառօտ գրուածի մի մէջ յիշուի այս սոսկ անունն, եթէ խանգարեալ հնչմամբ Հացի ծառն չէ:

973. Խակակուճ.

Սովորական իմաստով բառս նշանակէ տհաս քաղուած պտուղ, և նոր մզուած ձէթ. բայց Սանեցիք այսպէս կոչեն և բանջարեղէն մի՝ գեղեցիկ կարմիր ծաղկով, որ ուրիշ տեղ կոչի Պոստ: Տես զայս:

974. Խաղավան ?

Տես ինչ որ յիշուած է այս անուամբ ի Թիւ 174:

975. Խաղող.

Այս ամենածանօթ պտուղն և պաղոց թագաւորն կամ թագուհին՝ դրկենք իր մօր քով, կամ հօն տեսնենք, այսինքն յԱլգին, կամ զինքն և զինին բերող ծառն, որ է Որճ. այս տեղ յիշելով Խաղողոյ բազմաթիւ հայանուն տեսականերէն մի քանին. զորս և առանձինն իրենց անուան կարգին պիտի յիշեմք:

Ալեւորիկ.

Աճուպտուկ, ըստ Թ. Խարոսն պարոնայի.

Եզնակն.

Ժոխուր.

Լկոի.

Խանտըռնիկ, ի Բաղէշ.

Խունկի.

Խստոր (յերեւան).

Խժտորուկ.

Գառան զմակ.

Գինեխաղող. լաւ գինի տուող Խաղող.

Ճուարս.

Շլոռոս.

Չամչի, (ի Նախնուան և յերեւան).

Չաթալզլուխ (յերեւան).

Պապժըռի, մեծահատ, ծայրերն տափակ.

Պարտրաշխոց կամ Պարտփախոց.

Սահապի (յերեւան).

Կարմիրկապ .
Հայկանկազ ? (1)

Տանեղ, մանր ու կլար .
Քաջբեր, կարմրազոյն .

Չիթենոյ խաղող . « Ար . Ասպէհ ըլ-Յատարի . Ինքն սեւ խաղողին ցեղէն է » :

Տնտեսութեան և բժշկութեան մէջ յատկութիւններն և օգուտներն՝ այսպէս յիշէ հին Բժշկարանն . « Խաղող՝ լաւ է քան զամենայն միրգ, երբ լինի հասուն » ու քաղցր, և զանձն լաւ կերակրէ . զկուտն ու զփեմնակն ձգէ, զի անհալ է :
» Եւ չորս իրք է . Փեմնոկ, Միս, Կուտ և Ջուր . Փեմնոկն է հոգ ու չոր և անհալ,
» Միան տաք ու գէճ է՝ հասածն, Կուտն հոգ ու չոր և քիչ կօու, վասն այն յուշ
» գնայ ի ստամաքէ, և Ջուրն կաթված լաւ է քան զընձանի կոխած, և լաւ
» կերակրէ . բայց զինին այն քամի ձգէ քան զամենայն գինի : Եւ է Խաղող՝ որ
» խիտ քաղցր է, է որ Սպիրտակ, է որ Թթու, և է որ գինեհամ, Մուզն՝ ի
» մէջ է ընդ հոգն և ընդ տաքն . և լաւ այն է որ միջակ է : Թթուն լաւ է սա-
» Ֆրայտ մարդոյ . և գինեհամն լաւ է քան զքաղցր . և Թթու խաղող զփորն
» կապէ, զստամաքն ուժովցընէ, և զանձն լաւ կերակրէ քան զայն . և լաւն՝
» մեծպտուղ և հասուն և շատ օրեր պահածն է . բայց պղղամտ մարդոյ Սեւն
» լաւ է քան զՍպիրտակն, և տաք բնութեան՝ Սպիրտակն քան զՍեւն . և ամե-
» նայն հասուն՝ տաք ու գէճ է, և շոյտ գնայ ի ստամաքէ : Ժառն հոգ ու չոր է,
» օգտէ սաֆրայտ մարդոյ : Չամիխ միսն տաք ու կակուղ է . կուտն՝ հոգ ու
» չոր . և որ Թթվութիւն ունի՝ քիչ մի կապէ . և երկօսեան ցեղեր զբնութիւն
» ուժովցընեն և զլերգ և զփայծաղն . բայց որ ընդ քաղցր ու ընդ մուզն ի մէջն
» է, շատ ուժ ունի քան զայլ . և որ միսն շատ է՝ լաւ կերակրէ զանձն . զկուրծքն
» սրբէ, զստամաքն պնդէ, Թաքաց օգտէ : Եւ որ զՉամիչ անկուտ ուտէ՝ կակուղ
» պահէ զբնութիւն, և օգտէ փողցավի և կրծացվի . և կտոզն՝ լաւ է աղէցն,
» զի փոթաթ է . և Չամիչ՝ հոգ բնութեան լաւ է քան զԽաղող, ապա տաք բը-
» նութեանն՝ Խաղողն է լաւ : Ահա, Պարոն (2) » :

976. Խաղող լեռան .

Թէպէտ այս անունս ինքնին յայտնէ ինչ և ուր գտուիլը, բայց նշանակէ և խա-
ղողի քիչ նմանութեամբ բոյս մի, որ հասարակօրէն տանեաց վրայ կու բուսնի,
և այն անուամբ կոչուի Ար . Հայ ըլ-աշամ, Թ . Տամ գօրուղոս, Թէպէտ յատուկ
լեռան խաղողն եւս Թ . Գայա գօրուղոս կոչուի, ինչպէս և Լ . Jovis barba teo-
torum . Փ . Joubarbe des toits, յայտ է որ Լ . և Փ . բացայայտեալ անուանքն
Արամաղղայ մօրուք նշանակեն, անշուշտ անոր երկայնութեանն համար . ինչպէս
կ'երեւի յանդրիս նորա : — Տես Աղուիճակ, Թիւ 65 :

977. Խաղող վայրի .

Այս այլ յիշուի հիմայ . բայց նոյն է ընդ վերնոյն Թէ տարբեր բոյս . — ստուգելի է :

- 1. Գերմանացի տեղագիր մի յիշէ Haykanwas, զբեւոյժ մեծողղղա խաղող յԵրևան, Նախ-
հուան, Գանձակ :
- 2. Թուի Թէ զբիւն կ'ըսէ զայս առ սասցող գրոցն, որ է Պր . Հեթուճ տէր Կոստիկոսի և
Պատմիչ Թաթարաց կամ Արեւելեան աղագ :

978. Խաղողի տակ.

Անունէն տարրեր բան մի նշանակէ, բայց ոչ ոտոյզ. Բժշկարանք զուգեն զայս ընդ Քոսրոմ, և զսա ընդ Բիւմ կամ Բիւմե, զայս այլ ընդ Գերերի՛ զոր յիշած եմք (Թ. 468):

979. Խաղողախոտ.

Այսպէս կոչեր են ոմանք ի նոր գրողաց՝ վերայիշեալ բոյսը: Տես զնոյն և Թ. 65:

980. Խաղողածառ.

Այսպէս կոչեր են նոյն գրիչք Լ. Staphylea բոյսը կամ ծառը. տ. Կաօնի:

981. Խաղողիկ.

Անունէն տարրեր բոյս է, ըստ բառից Փայիենոսի, ուր գրուի Կիոնոս, Κίανος, Լ. Cyanos, ըստ գունոյն՝ որ է կապոյտ, քնչպէս անուանի և Փ. Bluet. այլ և Barbeau, Casso-lunette, եւայլն. ըստ բուսաբանից՝ Տերեֆոսի (Centaurum) ցեղէն է. տես և զայն:

982. Խաղպապ.

Հին բառագիրք մի այսպէս կոչէ՝ այլ և Տոռոչպ՝ զԱփիոնն, զոր յիշած եմք (Թիւ 258). անծանօթ է անուան ծագումն կամ պատճառն. բայց քանի որ հաւկառակ պատճառ մի չկայ՝ կըրնամք օտար Ափիոն անուան տեղ ընդունել զայս իբրև յատուկ հայկական:

983. Խաղվարտ. Խաղուարտ. Խաղարտ.

Բժշկարանք կ'ըսեն թէ այսպէս կոչուի Դեղին Խիարին հունտն. Ամիրտ. իր բառգրոց մէջ Ար. Պզր ըլ-Ղասր բառին ներքեւ գրէ. « Այս Խիարին Դեղին » Խիար կու ասեն, այնոր համար.. որ զհունտն ի դեղնէն կու ասնէ՝ որ կաւտարեալ դեղին հասնի, և ապա կու ասնուն զհունտն. և Հ. այսոր Խաղարտ » կու ասեն »: Տես և Խաւարտ:

984. Խամ.

« Խամն, Խարին և Լալազարն, հոտիկն անուշ Լալազարուն ».

Կ'երգէ Սալաձորցին, և տայ փափազել որ իր մէկ հայրենակիցն այլ ճանչնար և ճանչընէր մեզի զասոնք:

985. Խանար.

Վայրի Արմաւ կոչուածն՝ Լ. Fœnix Sylvestris.

986. Խանին.

Ջրեղբրբում բուսած կակուղ խոտ մի է, որ անասնոց ուտելիք՝ և զիւղացոց անկողին կ'ըլլայ:

987. * Խամալօն.

« Որ է Հ անայունն », կ'ըսէ Բժշկարան մի, և կ'աւելցընէ մեզի դիտելին, « Խոտ-մն է որ ի Հայոց (գայ) և բնութիւնն տաք է »: Անշուշտ է Յ. Χαμαίλιον, Լ. Chamæleon. Բայց այս անուամբ զանազան անասկ բոյսեր կան. և նախ՝ երկու բաժնուին Սպիտակ և Սեւ. Սպիտակն կոչուի կամ գրուի Ար. Աշխիս, ինչպէս գրէ և Ամիրտ. ըստ Պէյթարայ, և կ'ըսէ « Մազարիոնին ցեղերուն է (որ » է Տերեւատ), և իրեն Խանայուն շոշիս (λίπυχη) ասեն, և ինքն սպիտակ ասել » է. և ինքն ի լերունքն կու լինայ, և այսոր մեկնութիւնն ի Մազարիոնն կու » յիշուի »: Մենք այլ Թողունք այն տեղ, նոյնպէս և Սեւ Խամալուն. Բայց գիտելի է որ յունարէն կամ լատին անունն նշանակէ նա և Լ. Tussilago, ըստ մեզ Տատրակ կամ Խոնկորին. կու մնայ գիտնալ թէ այս՝ եթէ Տերեւատն էր իրրեւ ընտիր նշանակեալն ի Հայս: Տես և կարկար:

988. Խամբար.

Այսպէս կոչուի յԱրցախ Արեւադէմն (թ. 201, Tournesol),:

989. Խայծախար.

Անունն և վկայութիւն Ագաթանգեղի գրոց՝ յայտնէ որ փշեղէն է, ըստ ոմանց Պատաղին ըսուածն:

990. Խայծեղանի ծառ.

Թ. Գաբրան աղաձի. յիշուած է ի կողմանս Սերաստիոյ:

991. * Խանդաղբ.

Կամարկապցին գրէ « դեղ ակընջի որ չի լսէ առ զԽանդաղի տերեւն, ծեծէ դալարն, և զլուրն յակտնջն կաթեցո. օգտէ Աստուծով »:

992. Խանդարեկ. Խանդարիա.

Յովնատի անուն (Թերեւս Սերաստացին) բժշկական բառից գրող մի՝ կ'ըսէ այսոր համար. « Թ. Սոսնէրլիձէ օրի ասէ, ոմանք վայրի Գասնի ասեն »: Ամիրտ.

գրէ Ար. Եսադիս անուան տակ, **يخصيص**. « Որ է Խանդարեկն ». ուրիշ տեղ այլ,
 « Խանդարիա, որ է ֆասնի պարրին, որ է վայրի Եղրդակն. բայց խիստ լեզի
 » կու լինի, և իր տերեւն վայրի Քասնու տերեւ կու նմանի, և իր պտուղն և
 » որձան ի Սմպուլ կու նմանի. բայց քիչ-մն փոքրիկ է, և ի վերան զամի կու
 » լինի, ի Մազտաքէ կու նմանի. նման Բակկայի. և իր ուժն նման է Ածվենոյ
 » Եղրդակին ուժին. բայց իր լեղութեան համար ուժովկեկ է... և իր խէժն
 » զաւելի մազն տանի՝ որ ի յաչքն բուսնի.. և յորժամ դալար լինի՝ գինով
 » խմեն, օգտէ օձահարին », եւ այլն: **L. Cichorium Intybus, Φ. Chicorée sauvage.** Տես և Եղերդ, Եղրդակ վայրի, Խինձ:

993. Խանել ?

Ի Խոտուղուր ճանչուած բոյս մի է. ինձ անծանօթ:

994. Խանթեփար.

Ար. « Պահարս ըլ-դագզայ, որ է Մոչքարամէկն (Մէշքարաս մաշիւ **كشكوش**
 » **چشمه** գրուած ի Պէլթար, և ասորերէն է), որ է ինքն ի Դաղձին ցեղերուն, և
 » տերեւն Ըռահանի տերեւ կու նմանի, և հոտն սուր և համն լեզի... Այն Պտ.
 » Թէ ինքն ի Յութանանին (Մթրին) ցեղերուն է, և Թէ ի յինքն ոչխարն աւ
 » բածի՝ ի կաթին տեղն արիւն կթվի ի ծրծէն. և որ ուտէ զինքն՝ Թող մէկ
 » մթխալ ուտէ... Եւ Թէ ծեծես յաչիցն ի վերայ զնես՝ զկապուտկելն տանի. և
 » Թէ իր գուշն ի յականջն մտնէ, զակընջին որդն հանէ և զգոռալն կտրէ. և
 » Թէ խմեն՝ օգտէ սարային և զխղձակիլն կտրէ »: — **I. Dictamus Creticus**
Φ. Dictame de Crète. Φ. Կիթիտ օրոս:

Խանձիլ. — Տես Ղանձիլ:

995. Խանտող. — Տես Ատոյ, Թիւ 186:

996. Խաշ.

Այսպէս կոչուի վայրի Դաղձն. տես Թիւ 546:

997. Խաշ կամ Խաշ Հընի.

Նշանակէ ի Խոտուղուր վայրի Հուն պտուղը, գուցէ քիչ մի զանազանութեամբ:

998. Խաշար. Խշր.

Բուզանդ պատմիչ կ'ըսէ (Գ. Ը) մեր Բ Խոսրով Թագաւորին համար՝ որ իր
 դաստակերտը վայելչացընելու համար՝ հրամայեց « Հանել յաչխարհէն բուզում
 » Խաշար, և բերել զվայրենի կաղնին մայրեաց, և տնկել ». Թուի Թէ Խարձի
 կամ Յախի տեսակ է, կակուղ ճղերով. եթէ նոյն է և Խշր որ յիշուի ի Գիրս

վաստակոց (ՅՔ). ուր՝ պատրուսելու տունկերը կամ ճիւղերը՝ « Հալֆայով կամ » խշրով պինտ փաթտթես », պատուիրէ. և զի Հալֆայն ցուցընէ վնասակար խոտեղէն մի կամ Եղէզ, անոր նմանութիւն մ'այլ ունենալու է խշր՝ երկայն և ճապուկ ճղերով: Իբրև հասարակ բառ՝ խաշար և խոշոր նոյն են: Այսպէս այլ համարին քննողք զՀալֆա لالچ , Լ. Arundo epigeios, կամ Stipa tenacissima.

999. Խաշղն.

Պալիենոսի բառից մէջ այս անունն զուգած է խանգարած Արտրոքոլիկ ա. նունն (միթէ Aristolochia ?), ուրիշ օրինակք այսոր տեղ գրեն Բլէքուէն, զոր Ռոչքեանն համարի Լ. Blechnum, Յ. Եղիչտ, որ է տեսակ Գաղձի:

1000. Խաշխաշ.

Թէ և յընտիր գիրս մեր յունական Մեկոն, Μήλον, անուամբ յիշուի այս ծա. նօթ բոյսս, Լ. Papaver, Փ. Pavot, բայց շատ հեղ մանաւանդ առ յետինս՝ այսու արեւելեան կոչմամբ, حشاش, ինչպէս գրէ նա և Մի. Գոշ իր առակաց մէջ (ԽՔ), արնութեան օգտակար անուանելով, այօրինքն քուն բերող, ինչպէս և հին ժամանակաց Յունաց Թէ՛ առասպելախօսք Թէ՛ բժիշկք գրած են, և քնոյ շատուծոյ մ'այլ՝ Մորփեւսի (Մրափ ?) ընծայած: Ըստ գիտնոց նոցա և Արարաց՝ մեր Սմատիացին այլ կ'ըսէ, « Սեւ ու Սպիտակ լինի. լաւն այն է որ Սպիտակ » լինի. ինքն քուն կու բերէ. և կեղեւն զմազն սպիտակ կու առնէ. և Սեւուն » ծաղիկն դիտցերուն տեղն անյայտ առնէ. և ի աշից ցաւերն այլ ի բան կու » մտնէ. Եւ Թէ այն խաշխաշն որ ի ծովեզերքն կու բուսնի՝ ալէ այնես կաթովն » նկրիսին օգտէ » : — Այս ծովեզերեայ խաշխաշին համար առանձինն գրէ, Մուսքարուն մականունանելով ըստ Պէյթարայ (Մաքրուան, ماقرد), « Մէկ » խաշխաշն է որ ի ծովեզերքն կու բուսնի, և ծաղիկն դեղին կու լինի, և » ծուռ ծուռ միրգ կ'ունենայ, որպէս Հացհամմի հունդ կու նմանի. և ոմանք » այսոր Երոզն խաշխաշ կ'ասեն », Փ. Pavot Cornu.

1001. Խաշխաշ վայրի.

Հին Բժշկարան մեր գրէ հոմանիշ, « Պրինգ, Շախրուան, որ է վայրի խաշխաշ » : Ըստ Լ. Papaver Rheas, Փ. Pavot Coquelicot, կամ Ponceau. — Տես և Արարան. Շախրուն. Պապլաս. — Բիշենք մեր ծաղկերգուին նկարագիրը.

« Խաշխաշն ըզթագն է բուրեղ, գեղեցկացեր ի հետ Ղաթմարուն, Բալոր զլիւնն ալ է ներկեր, մօտ է քաշեր վերայ փորուն » :

Մեր երկրին այլեւայլ կողմերում նշանակուած է խաշխաշն ի քննողաց, մանաւանդ Արեւելեան և Կովկասեան կոչուածքն (P. Orientale և Caucasicum). Իսկ P. Lateritium կոչուածն ի Ճորխայ հովտին. — P. Commutatum ի Թ-շ. — P. Polytrichum ՍԱրղնի. — P. Lævigatum ի Կարին և Մանսխ. — P. Macrosto-

mum (երկայնբերան) ի Քորթում. — *P. Hybridum grandifolium* ի Քանձակ: — Տեսակ մ'այլ յատուկ Հայկական կոչուի ի Ք-Հ. *P. Armeniacum*, որ և *Argemone Armeniaca*, այլ և *P. Stenocarpum* (Խշ. Ներպատուղ):



Խաշխաշ .

1003. *Խաշխաշի Չապտի.

Ըստ Պէթարայ յիշէ զայս Ամիրա. « Որ ինքն սպիտակ խոտ-մն է, և սպի. » տակութիւնն ի փրփուր կու նմանի. և մէկ մէկ թիզ յերկանութիւն ունի, և » մանտր տերեւ կ'ունենայ. և թէ ամաան աւուրքն ժողովին և զմէկ դրամն

» Մայ ըր-Ղարայտին (Մեղրաջուր) խմեն՝ փսխել տայ, յիտըկէ »: Այս տեսակս յիշած է Դիսկորիտէս՝ փրփրոտ Մեկոն (Աֆրոտիս) կոչելով, յորմէ և Փ. Pa-
vot écoumeux.

1003. Խաշխաշ Նարքիվիա.

Չայս այլ յիշէ Ամիրտ. ըստ Պէյթարայ, սա ըստ Վահշիահի, և սա ի Նարքեով-
թեան Վաստակագրոց, որ Յունաց անծանօթ բոյս մի համարի. « Ինքն Խաշխաշին
» մէկ ցեղ-մն է, և ոմանք ասեն՝ թէ Սեշ Խաշխաշն է (P. Nigrum), և թէ ճղէն
» բաժանես և շորացընես և լոսես, և ի թանձր շտերուն վրայ ցանես, կու կակ-
» ղացընէ »: Ոմանք նայն համարին զայս վերոյիշեալ վայրի Խաշխաշին հետ, այլ
չէ հաւանական:

Խաշխաշի Խէժ.

Խաղապայսն է, տես թիւ 982:

1004. Խաշնդեղ.

« Որ է Գարծիլին տակն », ինչպէս կ'ըսէ Ամիրտ. և ինչպէս գրած եմք Գար
անուան տակ, զոր տես ի թիւ 392: Գեղոց գործածութեան համար ամեն աշ-
խարհք ծանուցուած է, յարեւելս Ռափէնտ կամ Լոսաւանդ անուամբ, յարեւմուտս՝
Լ. Rheum, Փ. Rhubarbe, Իտ. Rabarbaro. Մեր Ամասիացին օտար երկրէ ե-
կածներն անուանէ Չիկի և Խորասանի, առջինը լաւագոյն համարի, և շատ տե-
սակ ոգուտները յիշէ. բայց Պէյթար անկէ շատ աւելին և երկար գրէ: — Օգտա-
կարութիւնն և մեր երկրին իբր յատուկ բերք ըլլայն՝ մեր Բագրատունի (Հ. Ար-
սէն) քերդողահօր եռանդը վառեր և գովել տուած է զինքը (1):

1. Աւետիս, գըտաք գըտաք ըզժառ կենաց՝
Զոր հրանիւթից սըրոյն նախանձըն ցանկեաց.
Դից փոխան դու խօյն գրեղ անուն ասեալ՝
Այ խօսարեւել, զերգս ընկալ:..

Յած հողւով և մեզմ կոչմամբ՝ մերկ յամայիս
Եւ յառապարս եւ ի լեբինըս ընակիս.
Գանձ կենաց զարմառդ արկեալ խոր ի յերկիր՝
Լայն տերեւովք ծածկէիր.

Այլ անշուշտ մեզ երկնառաք ոմն յանմահից
Յերկրի շրջեալ՝ եցոցս ըզքեզ գըթալից,
Վարսազեղ թուփ ծիւ ի ծիւ ձիւնածաղիկ,
Ախորժաւամ եզեզիկ.

Շէկ արմատդ անմահութեան սուհաւազիկայ
Զուլամբ խաշին՝ որ ի կարեզ կեմ գընայ,
Բուրազուտարձ զանգեալ հովտաց ծաղկանց ի բոյլ՝
Քան շար ոսկի տայ նըշուլ:

1005. * Խապալախ.

Աւելի տակի հետ յիշէ կամարկապցին զայսօրն այլ, Խապարախի քոք գրեւով:

1006. Խաչախնձոր.

Թէ և անունն Խնձորի տեսակ մի ցուցընէ, բայց Թուի Թէ աւելի ձեւին նմա-
նութեան համար կոչուած է, վասն զի միակ մեզի ծանօթ յիշողն (Հեղինակ
Նոր Հայաստան գրոց, եր. 104) կ'ըսէ, Թէ կամախու կողմերը Բագաախ գիւղի
Ս. Նշան վանքի պարտիզին մէջ գտուի « և այն պատու՞ զոր կոչին Խաչախնձոր »:
կ'ըսուի և Խաչորկէն:

1007. Խաչահամբոյր.

Ատոր այլ սոսկ անունը լսած եմք ի նոր բառհաւաքէ, և վերնոյն պէս ծանօ-
թանալ փախագիմք:

1008. Խաչավարդ.

Յիշէ նոր բառհաւաք. Թուի Քաջավարդն կամ ներքոյգրեալ Խաչափայտն:

1009. Խաչափայտ.

Չունի ինչ մերձաւորութիւն պաշտելի Ս. Խաչին, սակայն մեր սնտոխապաշտ
նախնիք սրբազանացուցեր են այս բոյսս, աղօթքով և պատուով, և պէտպէս պան-
ծալի անուամբք. ինչպէս, Հարիշրաշամ, Քանանայատակ, Քաջփարոյ, Արմիկարոյ

Թոյր եւեթ բերեալ զսոկոյն Խարտիշազեզ՝
Այլով չէ ուղ ի նըզովեալ հոգ գունեզ.
Այլ, աւուղ, նա տիրացեալ, դու տնծանօթ.
Յամբ է բարին գալ յանօթ :...

Հիւրք և եկք, զի՞ զարմանայք Թէ յիմ՝ աշխարհ
Հոյլ գեղեցիկն իբրև զաստեղս է ի զար.
Կենաց բոյսն առայգութեան ըզնա տիրաց.
Անք է կարէզ Բըզնակեաց:

Երանի տամ աշխարհին զոր նա տիրէ.
Ո՛վ տիրելիք, ծընգեալք ի գեղ առ տխտէ,
Կամ աստեղք խոժոռ խեթիւ Թէ հայցեան,
Մասիք մասիք ի զարման :...

Պարզեւեալ ամենեցուն կեանք գեղեցիկ.
Եւ քան ըզկեանքս Թէ մեծի փափաքիք՝
Ձեզ խանդից քերզողական վառէ աշխոյժ.
Նա յիս ազգէ գտողս տնոյլ:

կամ Արշխարդ, Կաթփիրակ, Կախահի, Ճնարտ կամ Ճնարադ, Կոնստանտ, Պրո-
 վտակ, Կարրեր, Յասի սալապ. բայց յատկազոյն և ստուգազոյն Փենոնա, որ
 այլալեակ գրուած է եւս Գրոսկանիա, Խառանիա, Փաղանիա. Թող աւելի օտարոտի
 անուններ՝ զոր յիշեմք քիչ մի
 վարը. հին Բժշկարան մեր գրէ
 միայն « Դաստ ըլ-Սալիպ, Կարէ-
 » Թի տակ, և Փենոնա, որ է
 Խաղափայտն » . այս կօշման այլ
 պատճառ կու տայ ուրիշ տեղ,
 « Որ եր կարես՝ մէջն զեղ Խաչ
 » է, որ կօշի յունարէն Փաղա-
 » նիա, և տաճկերէն Յաստ ըլ-
 » Սալիպ » : — Փենոնա ա-
 նուան ստոյգն է Լ. Peonia, Փ.
 Peonie, ըստ առապելաց Յու-
 նաց՝ յանուն Պէոն բժշկի, որ
 այս բոյսը զեղ ըրաւ Հերակլէ-
 սէն վիրաւորուած Պրուտոնի :
 Ամիրտ. այսպէս նկարագրէ Գրո-
 վանիա անուամբ՝ որով և Պէյ-
 Թար (Գրոտանիա, لاجونيا). « Ինքն
 » խոտ (եղէն) է, և ծաղիկն կար-
 » միր է. և ինքն էգ և որձ կու
 » լինի. և լաւն այն է որ Հոռմցի
 » լինի. . . Որձին տերեւն նման է
 » Ընկղզի տերեւին. և այն որ
 » էգ է՝ ի ծայրերն զէգ Նախ կե-
 » դեւի նման աման ունի. և յոր-
 » ժամ հասանի՝ կարմրուկ հատ-
 » կներ ունի, զէտ Նոան հա-
 » տեր. և այն որ որձ է՝ տա-
 » կին հաստութիւնն մէկ մատին
 » շափ կու լինի, և յերկայնու-
 » Թիւնն մէկ Թիզ կու լինի. և
 » այն սր էգ է՝ տակն շատ կու
 » լինի, և ճուղ ճուղ է՝ որպէս
 » կաղնի փայտ, և եօթն կամ
 » ութ հատ կու լինի. որպէս
 » Երէշի տակ է » , եւ այլն : Քանի
 մի անուններ այլ յիշէ, որոց մի
 Քահանայոցն է, փոխան Քահա-
 նայատակի, յետոյ կ'աւելցընէ.
 « Նաանն այսոր տակին՝ զէտ ճիւղ
 » լինի. և յոր տեղ կտարես՝ զէտ խաչ դառնայ մէջն. նոյն է և Ճնդիհուայրն (1) . և այս



Խաղափայտ .

1. Այսպէս գրուած, փոխանակ Ճնդիհուայրն :

» Մրտի տակ է, որ հաքիմին Յօտի Սալիպ ասեն. Հռ. Պղիտակն, որ է Օչին.
 » դրին տակն : Եւ թէ յիրք մի շարեն զայն սեւ հունտն՝ և տղոցն ի վիզն կա-
 » խեն, օգտէ ըստաւորին... և այնոց որ յանվայր վայրիքն շուրջ գան՝ ի վիզն
 » կախեն, շատ օգտէ. և թէ այս չգտվի՝ իր փոխանն Նաան կեղեւն է, և վար-
 » սամանն է. և Սղն ? (Սղր ?) կայիկի կ'ասեն եղն մի կայ՝ այն է, և նորա
 » կրունկն է, և նորա ոտից իջին ոսկրն է փոխանն » : Պէթար՝ եղին կամ եզ-
 ջերուի տեղ՝ վիթ (gazelle) և կզնաքիս (martre) կ'ըսէ :

Վերջին նուտաններն քիչ քիչ բնականէն ի գերբնականն առաջնորդեցին. —
 » որ ատեն այս կարծիքն, այսինքն Փենունայի հրաշայի զօրութեան՝ մտեր էր մեր
 նախնեաց խելապատակին մէջ. չի կրնար ստուգուիլ, բայց եթէ շատ հին է ըսել,
 ինչպէս Լուսնի Թուփին և Լոյտակի աւանդութիւնքն, մանաւանդ որ նոյնպիսի
 երեւակայութիւնք ուրիշ ազգաց և ինչուան Պլինիոսի գրոց մէջ այլ գտուին ի
 Հնուց : Մեր գլխաւոր առականսն (Մխ. Գօշ) ԺԲ դարուն վերջերը՝ կու յիշէ
 այս բուսոյ (զոր ֆեննա կ'անուանէ) դիւահալած զօրութիւնը, որոյ՝ կարծես
 թէ՛ կու հաւատայ. « Փեննա՝ զանձն սրբասէր ասէր լինել, և ամբարհաւածէր ի
 » բնաւից, իբրու զի ընդդիմանայ դիւաց, ոչ գիտելով՝ եթէ ի Թագաւորէն իւրմէ
 » զօրանայ. և յինքն ամփոփեալ արքայի զիւրն շնորհ, գտաւ ունայն քան զբա-
 » ռումս. վասն զի ծաղիկք ամենայն ի պէտս վարէին բժշկաց, իսկ նա և ոչ
 » բնաւ » : — Ներուի մեզ՝ եթէ յիշեալ սնտոխապաշառութեան իբրեւ կանոնական
 կամ մաշտոցական կարգն այլ յառաջ բերեմք. գտնէ Հնութեանն համար, որ
 Թուականէս ճիշդ 600 տարի առաջ գրուած է մեր հին Բժշկարանի մէջ, (յամի 1394) :

« Փենունա հանելոյ նշանք. Խոտ մի է որ կոչի Փենունայ և ոմանք ասեն (յիշէ
 զանազան անունները), այլք Ուղնիա, ոմանք Դեղմիւնաք. այլք Ողիտտան, և
 » ինքն կարկերն է, և ամենայն իրաց օգուտ : Թէ ծխես յիրմէ՝ պատահարի օգտէ
 » և լեզվանոյ. ի Հետն ունենալ՝ ի կախարդէ չվախէ, ի դժար ճամբոյն անահ
 » անցնի. զտակն և զտերեւն ծխէ. դեւք շմտնեն ի տունն. զպտուղն թէ գինով
 » տա՝ պատահարի և ական (աչքիչելու) օգտէ : Եւ է այսպէս. Երթայր Մով-
 » սէս ի Սինա, և զգրանչ նորա տազնապէր ի դիւէ. և հրեշտակ Աստուծոյ ե-
 » ցոյց զՓենունայն, և բժշկեցաւ կինն : — Եւ իր հանելն այսպէս է. Երթայ
 » քահանայն խաչի և աւետարանաւ և սաղմոսիւ, ողջոյն տայ խոտին, և ասէ
 » զՄ. սաղմոսն, Ողորմեա ինձ Աստուած : Աղօթք, Օրհնեալ ես Տէր Առ-
 » տուած, որ արարեր զերկինս և զերկիր, և վասն արդարոյն Մովսէսի շնորհեցեր
 » զսա ի բժշկութիւն. կարդամք առ քեզ, Տէր Սարաւովթ, տուր զօրութիւն
 » Փենունայիս. զի ի քէն է զօրութիւն, և քեզ փառք յախտեանս : Եւ այլ ասա
 » զնոյն Սաղմոս Մ. և կարդան Աւաքեալ և աւետարան, և քարոզ՝ Խնդրեսցուք.
 » Հայր մեր : Դու Տէր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, որ զարդարե-
 » ցեր զմարդն առաջին՝ անապական. զոր նախանձեալ չարն՝ խաբեաց զժաղրա-
 » միտ կինն, ճաշակմամբ պողոյն. և ելեալ ի դրախտէն անկաւ յերկիր անիծից
 » և ցաւոց. և աղաղակեցին առ քեզ, Տէր, և ցուցեր նոցա ծաղիկս և պտուղս,
 » խոտս և արմատս ի բժշկութիւն մարդկան. ետուր և զզօրութիւն շնորհի քո ի
 » Փենունայս յայս՝ ի ձեռն ծառայի քո մեծին Մովսէսի : Արդ, աղաչեմք զքեզ,
 » Տէր, տուր շնորհս բժշկութեան Փենունայիս այսմիկ, ի հալածուած կախարդաց,
 » և ի բժշկութիւն ախտից մլասակարաց. և քեզ փառք յախտեանս : Եւ այլ

» Սաղմոս ԶԸ, Զողորմութիւնս քո՝ Տէր, յաւիտեան, ի լման (ամբողջ ըսել, յեւ տոյ աղօթք.) Աստուած կենդանի և բարձրեալ, արեգակն, երկիր, ծով, ցամաք, և ամենայն վայելչութիւնք կարդան տա քեզ. տուր, Տէր, զարմատս այս » ի բժշկութիւն մարդկան, զի դու ես թագաւոր ամենայն արարածոց և բուսոց, » և ի ձեռս քո է ամենայն. և դու պահես յամենայն փորձութեանց. և քեզ » փառք յաւիտեանս: — Եւ ապա փորեն և հանեն, որ ի տակէն շինայ ի տեղն. » և սրբութեամբ կալ զնա. դեւք սարսեն ի նմանէ, և ամենայն ախտք դիւա- » կանք. ի մահդեղն՝ դեղթափ է. ուր դնես յանդաստանս՝ պահէ ի կարկըտէ » և յամենայն ցասմանէ. ի տուն որ կենայ՝ չար չմտանէ. ներքեւ սնարուցն դիր, » ըսվ երազ տեսնես. — զպտուղն առ քեզ կալ. ի շարէ չվախես: Թէ մեղրով » տաս՝ ամենայն ցաւի օգտէ՝ մարդոյ և անասնոյ. կանանց զկաթն շաւոցընէ. օգտէ » և օձահարի: Տղային տուր յառաջ քան զսուալին կաթն, բնաւ չդիպի շարի, » և թէ տա քեզ ուննա՝ չմնասն քեզ օձք և զազանք: Թէ մեղրով տաս ծր օր, » զզոյն կարմրցընէ. թէ ի տուն ծխես՝ կախարչութիւնն ի վայր ընկնի: Եւ ա- » մենայն իրաց օգտակար է, կարողութեամբն Աստուծոյ »: — Զգարմանանք մերայնոց այդչափ երկար գրուածոց Փեննունայի համար, մինչ արեւմտեայք այլ իրենց *Betonicae* համար առանձին գրքոյկ կամ տետրակ հրատարակած են: — Այսչափ խնամքով յարգութեամբ ստորագրուած բոյսն հարկ էր որ մեր երկրին մէջ այլ գտուի, որոյ թէպէտ յատուկ տեղն չի յիշուիր, ինչպէս Համասփիւռ ծաղկին, բայց օտար գիտնական տեղաքնինք նշանակեն, Նրբատերեւ (*Pæonia Ten- uifolia*) և Կարմրորակ կամ Բսորային (*P. Corallina*) կոչուած տեսակներն ի Ռ-Հ. իսկ Սասար կամ Ամենազան *P. Peregrina* տեսակն՝ ի Պարխար լերինս մօտ ի Բարբերդ, այլ և ի Վան, Բաղէշ, Պինկէօլ, Մանախ:

1010. Խաչորկէն. — Տես Խաչախնձոր.

1011. Խառ.

Ի բառս Պալլինոսի յիշի Խառի պտուղ, իբրեւ վայրի թփոց մանր պտուղներ:

1012. Խառածաղիկ.

Ոմանք ի նորոց այսպէս կոչեն զբազմատեսակ ծաղիկն *L. Ranunculus*, որ կոչուած է և Եղածաղիկ:

1013. Խառքուշտ.

Մոլդի՝ մանաւանդ վայրենւոյն՝ շատ տեսակ անուններէն մէկն է:

1014. ԽառԹուԹ.

Բժշկարան մի յիշէ Խառքոթի շարապ. Սեւ Թըթոյ տեսակ. մ'է զոր, Հայք բարեգուշակ շեն հաւարիբ:

1016. Խառնիճ.

Այս անուան զուգանիչ գրուած է Գեղմակ Մարտի: Տես Մարուխ և Մատուտակ:

1016. Խառնկտուկ.

Այս անուամբ կոչուած է Լ. Chamæscio, Փ. Figuier sauvage. զոր Ամիրտ-ըստ Պէյթարայ գրէ « Խամասուֆի, (خامسوخ) (1), ինքն խոտ-մն է որ հուշ » ունի և յերկայնութիւն շորս մատ լինի. ի գեափնն պառկըման կու բուսնի. և » տերեւն նման է Ոսրան տերեւին: Եւ ոմանք այսոր լեռան Թուզ կ'ասեն. բայց » նմանութիւն շունի այս խօսքն: Եւ թէ զայսոր կաթն ի կոծիծնին քսեն՝ օգտէ. » և թէ մեղրով խառնես յաչքն օծես, զցաւն և զմթնալն տանի. և թէ ջուր իջ- » նու՝ խափանէ... և թէ եփեն և ուտեն՝ զփորն կակղացընէ. և թէ կարիճն » հարէ՝ թէ զկաթն քսեն, օգտէ. փորձած է Աստուծով »:

1017. Խառնճուկ.

Այսոր գրողն կամ զուգողն ծանօթ չէ ինձ, բայց այսպէս կոչուած է Լ. Pœ-
plis, Փ. Pourprier sauvage. Ար. Պախլաթ ըլ-համախա պէրրի կամ Համախ, որ է
վայրի Փրփրեմ. Տես Փրփրեմ. և Թիւ 123:

1018. Խառնուկ.

Ար. անուն بوجوخ, է Եղլիչրի կամ Եղլիչրենի ծառն. տես զայս, Թ. 662:
Չանագան տեսակներէն յիշէ Հին Բժշկարան մեր գ'Խառնուկ Ասորի, աղեաց
Հիւանդութեան դեղերու մէջ, — Խառնուկ Ուռնայեցի, արիւնբերի դեղ, — Խառ-
նուկ Շիմի, զոր կարծեմ Շամի, Գամատկոսի, « որ է Աղլայրն », (Եղլիւրն),
կ'ըսէ, և դեղ փորցաւի՝ ուրիշ այլեւայլ նիւթերով խառնած: Առաջին տեսակն
(Ասորին) Պէյթարի Խառնուկի Նապտի կոչածն է, զոր յիշէ և Ամիրտ. և նոյ-
նանիշ, Ղաալի-դուրեշ, և Պ. կուրկու, եւ այլն. — « Խառնուկի Մարի. որ է
» Ղարագն » և Խառնուկի Հնդի, որ է Խիարդանկարն »: Պէյթար յիշէ և Խառ-
նուկի Խնդիր, որ է խօզի Եղլիւր, Լ. Anagyris, զոր ինքն գրէ Անադուրիս,
ساجغلسا. Ամիրտ. այլ գրէ « Անադուրիս որ է Անադուրուս. Թ. խօզի փոշ առէ.
» ինքն մէկ ծառ-մն է՝ որ խիստ պեղծ հոտ ունի և միրգն երիկամ կու նմանի. և
» զունն ազգի ազգի է. և խաղողին աստենն խիստ կու լինի. և յորժամ տերեւն
» թաժայ լինի ծեծես և սպեղանի առնես և դնես ի վերայ պաղլամի ուռեցին, օգտէ
» և հալէ... և թէ գինով խմցընես՝ զղլիտուն ցաւն տանի »:

1019. Խատատ ?

Բժշկարան մի յիշէ Խատատ ջրի, այսինքն ջրային. որով յայտնուի ցամաքային
տեսակ այլ ունենան, անունն Թուի արարերէն. բայց ինձ անծանօթ:

1. Պէյթարայ Թարգմանն խամասուֆի կարգայ:

1020. Խատխալ. — Տես Առիձախոս:

1021. Խարաժիլ.

Ըստ Աթանասեանի (եր. 87) Մատուտակն է, որ և Մարուխ:

1022. Խարահար Խոտ. — Տես Արեգական մայր, թիւ 190:

1023. Խարամագ. Խարամագան.

« Ինքն բոյս է, Սնպուլ կու նմանի, բայց գունն ի կանանչ մօտիկ է. և իր »
» տակն ի Սնպուլ կու նմանի, և հոտն ի Սմպուլի հոտ կու նմանի. բնութիւնն և
» զօրութիւն ի Սպուլի մօտ է. և համն քիչ մի քաղցր է: Եւ Սնպուլ ասածս՝
» Սնպուլի Հնդին է »: — Պէյթար չի յիշեր զայս. բայց բուսաբանք տեսնելով
կարնայ (Խոշապրունար) կողմէն մեզի զրկուածը՝ ճանչցան որ Լեանային Թաւ-
րինջակն է. Լ. Primula montana.

1024. Խարատ ?

Հին Բժշկարանն կ'ըսէ, « Ունտ է, զէտ Տիզկանեփայտ » (Ricinus). ուրիշ
Բժշկարան մ'այլ. « Սամղ արապի ծառին պտուղն է. այս ծառիս Սանտ ասեն.
Ար. Խարատ, Լ. Աշէք ? »

1025. Խարաք.

Բժշկարան մի գրէ, Ռուպ (Ուարակ) շինելու մասին. « Ռուպի Խարաք, որ է
Պոսրին ըռուպն. Ար Խարախ, որ է Պոսրն՝ զաղէկն, և զհունտն ձգէ, և ծեծէ,
» և զլուրն քամէ », եւ այլն: Ար. Պոսր կամ Պոսարը նշանակէ տհաս Արմաւ:
— Տես Խարիք:

1026. Խարը.

Ի գիրս Վաստակոց յիշուի Խարրի տակ, Թերեւս ըլլայ

1027. * Խարբախ կամ Խարբակ.

Որ է բազմանուն բոյսն կոճ վրացի, տես զայս:

Խարբակ. — Տես Խարպիզակ:

1028. * Խարզահրա ?

Թիւնտար նիւթոց կարգը զրուած է ի Բժշկարանի, և հաւանօրէն բոյս է,
որովհետեւ յիշուի ընդ Ափիոնի և Պալատուրի (Մօլեփինդ), Թերեւս նշանակէ
վայրի կամ գէշ Չահրայ (Baccharis). անգիտութեամբ զայս ուսողին ճար, և Բա,

» գարատն (Հիպոկրատ) ասէ, թէ լաւն այն է որ փսխէ, և Թգի ջուր խմէ և
» ամբաւի ջուր »:

1029. Խարի. Եէկ Խարի կամ Եիխար.

Քալիենոսի բառից մէջ այսպէս կոչուած է յոյն բառն Ἄρχουσα, Լ. Anohusa, որ սնգոյր ըսել է, իր կարմիր ներկին համար. Ար. Եիենար կամ Եիենար, چاينس, چاينس. Պ. Ազանկար, ըստ Ամիրտ. որ ուրիշ անուններ այլ տալով կ'ըսէ, թէ, « ի հով լերունքն կու բուսնի »: Չայս գրէ Եիենար անուամբ. դարձեալ Եաննար անուամբ գրէ. « Թ. Աչակ մնառլի (իչու Հազար) առէ. և թէ ական սպեղանի » առնես և օծես պիտակին, օգտէ:.. Եւ ցեղ մի այլ կայ՝ մանր տերեւնի ունի » և բարակ ճղեր ունի, և ի ծիրանի և ի կարմրութիւն կու քստէ. ծաղիկ ունի, » և զէտ արեան կարմիր տակեր ունի. և կալոց ատենն յաւազոտ տեղեր կու » բուսնի. թէ զտակն դրամ մի ծամեն՝ և կամ օձին և կարճին բերանն թըք. » նուն՝ մեռնի »:..

Այս բոյսս հայերէն կոչուած է և Հաւածիպակ ի բառագիրս: — Պէթար չորս տեսակ է կ'ըսէ Եիխարն. բայց հիմայ շատ աւելի տեսակք ճանաչուին. որոցմէ յիշուին Առ. Canescens կոչուածն ի Բարբերդ. — Առ. Aueheris Բասենոյ և կարնոյ կողմերում. — Արենդեանն՝ Առ. Orientalis ի կարին և Պինկէտլ. շատ տեսակք այլ ի կիրիկիա և ի Փղքր Հայս:

1030. Խար Խիար.

Պ. և Թ. բառերով այսպէս գրուի ի Բժշկարանս, որոյ հայերէնն է Խչակա-
րունգ, զոր տես, Թ. 8ԷՑ:

1031. Խարխուռ ?

Նշանակուած ի բառհաւաքէ, առանց բացատրութեան, եթէ չփոթած չէ ընդ
Խառթութ:

1032. Խարիք.

Ըստ Սահակայ Մանուկեան Բժշկի՝ է՝ Տրապիզուն Խոչրմասի, որ է Ծուաղ.
տես զայս և զԽարաք (Թ. 1025), որոյ հետ կըրնայ նոյն ըլլալ:

1033. Խարծ.

Հին բառգիրք մի այս անուան նոյնանիչ գրէ՝ Եղեգնաչաւք. և յիրաւի շատ տեղ
յիշուած է ի գիրս նախնեաց, եղեգնոտ երկայն և խիտ խոտատեղի նշանակելով,
մանաւանդ խոնաւ կողմերում. ոչ մէկ տեսակ՝ այլ զանազան բոյսեր. ոլք երբեմն
թըփոց անտառ մի ձևացընին, և Եղեգնապուրակ այլ կոչուին: Ասկէ ծագի և

1034. Խարձի.

Որ նշանակէ, ըստ Խոտույրեցւոց անպտուղ ծառեր, մանաւանդ անոնք՝ որոց փաթթընի Որթն: — Խմաստով և ձայնիւ Խարձի յարմարի Անգղիացւոց Farzy բառն:

1035. Խարճի.

Անծանօթ բոյս, զոր յիշէ հին Բժշկարանն՝ Բաղշտակի հետ ի գեղա՝ երեսի և աչաց գոյն տալու:

1036. Խարշափուն Բանջար.

Յովբայ գրոց մէջ յիշուի, ըստ ոմանց իրրեւ պարզ տծական՝ որ և է հովէ Նարժած չընջող բոյս կամ տերեւ նշանակելով. բայց ըստ այլոց՝ յունական Ալիսն կաշմանէն երեւի գոյական բառ, յատուկ աղային բոյս մի ձիթենանման տերեւներով. ինչպէս մեր վանական Վարդապետն այլ կ'ըսէ. « ԶԽարշափունն՝ այլ ք յ Ալիսնայ Թարգմանեցին, և կէսք Գերիոն (տես Թ. 628). և է սա բանջար ա. » դէհամ, որ յուտելն լցուցանէ զտեղի հացի: — Ըստ Լ. Ալիմայն տեսակ մ'է Զդախստի, Alisma Plantago, Ար. Մեզմար-էր-Սիայի, որ Թարգմանի Հո. Վոսի փող. տես զայս: — Ոմանք այլ համարին այս Խարշափուն բանջարը կամ զԱլիմայն՝ Զրային Աննետակ Portulaca marina.

1037. Խարշուկ. — Տես Խարթակ:

*Խարպախ. — Տես Խարթակ, և կոճ վրացի:

1038. Խարպիզակ. Խարբզակ.

Ետքի կերպով գրէ Մի. Հերացի, և կ'ըսէ, « Որ է Սեխ »: Բայց Թ. Խարթուզ նշանակէ Զմերուկ: Երազահան գիրքն առանց ցեղը կամ ազգը յիշելու՝ տեսակներուն համար կ'ըսէ՝ « Խարպիզակն՝ Սպիտակն՝, Սեռն, կանաչն ամէնն « աղէկ է. իսկ դեղին կոյրն՝ հիւանդութիւն է: » — Բժշկարան մ'այլ գրէ, « Մակիոն, Երկայն Խարթզակ »:

*Խարտալ. — Տես Մանանեխ:

1039. *Խարտինա. — Տես Ախինոս, Թիւ 29:

1040. Խաւար ?

Նոր բառահաւաք նշանակէ զայս ծաղիկ կամ բոյս:

1041. Խաւարծիլ. Խաւարծլոյ տակ.

Տե՛ս Գաբ, Գարծիլ, և Խաշնդեղ, այլ և Խործովիլ:

1042-43. Խաւարտ.

Հասարակօրէն նշանակէ որ և է ուտելի բանջարեղէն. բայց ըստ Բժշկարանաց՝ յատկապէս զՎարունգ և զկաղամբ. այսպէս գրած է և Մխ. Հերացի (Եր. 24): — Վանական Վ. իր Հարցմանց մէջ ուրիշ իմաստով այլ գրէ. « Խաւարտ. Տանձն » չորացընեն, չիր կամ բլիթ, և ուտեն ի վերայ այլ կերակրոյ. օտամբքացն շահ » է. և կամ մանր փոշի առնեն և ի վերայ կերակրոյն ձգեն: Այլ բառ է, մեք » կանանչ ասենք դաշարոյ որ ուտելի է, նոքա Խաւարտ ասեն:

1044. Խափիթ. — Տե՛ս Ախպուզանոկ և Ղաֆիր:

1045-46. Խելառ.

Յորենի կամ Որաման նման խոտ մի, զոր թէ ձիերն ուտեն՝ կու փրփրտին: — Այս անուան իմաստով յիշէ օմն նոր բառահաւաք զԽենթուկ, բայց չէ բացատրած որպիսութիւնը:

1047. Խելտրուկ.

Ստ. Ռոշքեան յիշէ զայս՝ իբր Լ. Dorycnium. Փ. Doryenie. սոյն Լ. կամ Յ. անուամբ գրէ և Պէյթար ٠٠٠٠٠٠٠٠٠٠٠٠. յորմէ Թուի թէ և մերս Ամիրտ. գրէ միայն « Տորոսդուն, որ է Պարտասի », կամ Պարտասիգի. և այս անուամբ յիշուած է. կ'ըսէ իր Անգիտաց անպէտին մէջ. սակայն ես չեմ գտած, այլ ուրիշ անուն մի « Պարգաիֆի որ է Պարտանիֆի, որ է Պաստանիդի », գուցէ նոյնն ըլլայ, բայց այս անունն այլ ստոյգ չեմ գտած ի Պէյթար. իսկ այսոր Տորունիքուն պատաստուկ բուսոց տեսակ մի համարուի. Convolvulus Dorycnium, կամ Con. Oneorum. սակայն Թուի թէ Պէյթարայ ٠٠٠٠٠٠٠٠٠٠٠٠, Պերանիքա գրածն ըլլայ, որ է Լ. Յ. Βριταννικῆ Γησοκληριտեսայ, Լ. Britannica. ինչ տեսակ բոյս ըլլալուն տարակուսին գիտնականք. որոց Թողլով ստուգելն և հաստատելը, դառնանք մեր Ամասիացոյն, որ յետ այն երեք նման և աննման անունները գրելու՝ կ'ըսէ. « Մինհանին տէրն ասեր է թէ Պաստան-աֆրօզն է. (տես թիւ 83). և այժմ » կամիմ յիշել. ինքն երկու ցեղ է. լաւն այն է որ ծաղիկն հասնի... Իպն ասէ » թէ ինքն նման է այն խոտին տերեւին՝ որ Թ. Ղուգի դոշաղի ասէ (Պառն. » ականջ), և տերեւն զաղապ (աղուամսզ) ունի. և թէ չորցընեն և ցանեն ի » վերայ խոցերուն. օգտէ. և թէ եփեն և զլուրն ի բերանն առնուն, զբերնին » խոցերն քաշէ և զշանկանուն (ծնօտից), և զուռէցն տանի: » — Այս Խելտրուկ բուսոյ մէկ տեսակն՝ Dorycnium Intermedium՝ ըստ բուսաբանից նշանակուած է ի հարաւային Կովկաս, որ բովանդակէ և զՌուսահայս. մէկ տեսակն այլ Dor. Haussknechtii (յանուն բուսաբանին) ի Կիւմիւրի վարդոյ վիճակի Տարօնոյ:

Խենթուկ. — Տես Խեղատ:

1048. Խենձեղինոյ տակ.

Հին Բժշկարանն ձեռաց և ոտից ուռէցքի դեղ խրատէ զայս, մէկ լիտր ջրով եփել, « և ապա ծեծէ և հան զլուրն և խմցոյ ամէն յանօթից, մէկ լիտր քաջ » շոգ՝ որ լուր խմել կարէ, հինգ օր, յօրն լիտր մի »: այսինքն այնքան տաքցու որչափ որ կարենայ դիմանալ խմողն: Տես և Խինձ:

1049. Խզեւ.

Ոչ է յատուկ բայս այլ նշանակէ զմաշկն Յորենոյ:

1050. Խզրակ ճաղիկ.

Այսչափ միայն գրուած է ի Ռառգիրք մի. սովորական բառգիրք բացատրեն՝ Թէ Խզրել բայն նշանակէ Քեզ ի՞նչ?

1051. Խէժուկ. — Տես կարկուռ:

1052. ԽՅուս.

Յիշուի ընդ Քիմոնի, Անիսոնի, Գընձի և Ակքանի. եթէ ասոնց նման բոյս մի չէ, Թերեւս անպիտան Խիթրկ բոյսն ըլլայ, զոր այրելով՝ փռչիէն տեսակ մի լուռ նալիք շինեն. (Մանան. 446):

1053. Խիար. — Տես վարդանգ:

1054. Խիարուկ. — Տես Խշափտորանգ:

1055. *Խիարշամբար. — Տես կասիա:

1056. Խիթըկ. — Տես Խորուս:

1057. Խինդ.

Միայն բառագրոց մէջ գտուի այսպէս պարզ անունն, այլ ի գործածութեան գրոց միշտ բարդութեամբ Մուլէխինդ, Խնդամուլի, Խնդակոթ. այս յետին անուամբ բացատրեմք. բայց պարզ անունն կըլինայ կարծել տալ՝ Թէ ընտանի կամ ոչ շատ լեզի բոյս մ'ալ ըլլայ:

1058. Խինձ.

Հին անուն, բայց լուրի և հիմայ ի Հայս, և նշանակէ զԵղրդական վայրի որ և Խանդարեկ. այս երկու անուամբք այլ յիշած եմք, զորտ տես. այլ և զԽենձեղէն, Թ. 1048:

1059. *Խիր.

Արարերէն նշանակէ Մանուշակ, և յատկապէս սպիտակն: Տես զայն:

1060. *Խիրի.

Այս այլ ըստ Արար. է Մեխակն, նաեւ Շահպարակն:

Խիրի վայրի. — Տես Հոռասու:

1061. Խիրու ծառ.

Ամիրս. զուգէ զայս Ար. Գամքամ **الكمك**, կոչուածին. « Խիրուն ծառն է, և
» կամ կեղեւն է, և տաք է. և ասացած է՝ Թէ իր խէժն է »: Փռանկ Թարգմանն
գրեմքամ համարի **Térebenthine**, որ է Բեւեկնի: Յիշուի և Խիրոս Չէր. որ կամ
նոյն է ընդ խէժին, կամ վերոյգրեալ ծաղկանց հիւթն:

1062. Խլալ կամ Խալալ.

Տես Աքար (Թ. 266) և Ագռաշիւանկ (Թ. 7):

1063. Խլել.

Վերինէն տարբեր կ'երևի որովհետեւ նա բանջարեղէն է. իսկ ասոր համար
Քրմիական գիրքն պատուիրէ, « Առ Խլելի փայտ և փաթութէ », եւ այլն, Թուրի
մուխ տալու համար:

1064. Խլեփ. Խլեֆ.

Ար. Խիլաֆ, **الخلخ** և **Salix Egyptiaca** կամ **Salice odorosa**, Փ. Saule d'Egypte.
Ըստ Ամիրս. Թ. Սորդուն կ'ասէ. Հայն Ուռի ասէ, (բայց հոտաւոր Ուռի). լաւն այն է
» որ դեղին ծաղիկ ունենայ... իր հոտն զսիրտն յուժովցընէ, և իր ձէթն զստամոզն
» յուժովցընէ... Ասէ Պտ. Թէ ասոր տերեւին Սաֆսաֆ կ'ասեն և Պ. Պետ. կու ասէ,
» և Պալեսիքն (Պահլաւ. ք) Պահրաւամ կ'ասեն. և իր խէժն իր տերեւէն կ'եղնայ.
» և լաւն այն է որ ի ջրեղբք լինի. — Մեր նոր գրողք այլ և տեսողք (Նաթան. 93)
վկայեն որ Խլեփն անուշահոտ Ուռի է: — Հին Բժշկարանն՝ Մանր Եղրդի այլ ա-
նուանէ զԽլեֆ նմանցընելով Եղրդի ծառին կամ Եղրդուտի (տես Թ. 666) կամ
նոյնացընելով: — Մխ. Հերացի այլ յիշէ (եր. 67) ցաւած գլխոյ դեղ գրելով.
« Արկ. Խլեփն. այն մանտր Ուռենիքն են՝ որ անուշ հոտ գայ իւրմէն, և Վարդի
» Նուր », եւ այլն: Իսկ Վաստակոց գիրքն (ԾԸ) ըստ Հին Բժշկարանի նոյնացընէ
ընդ Եղրդոյ. երբ կանկառը անուշահամ ընելու համար խրատէ անոր հունտը դնել՝
զատ յայլոց, ի Նուր « Եղրդոյն, այսինքն ի Խլեֆին, երեք օր յաշունն ի Թրթոց գիր ».
եւ այլն: — Ամիրս. Խլեփի տերեւին համար ըսաւ Թէ կոչուի Սաֆսաֆ, սակայն
ոմանք ի բուսարանից զԺառն այլ այնպէս կոչեն, և **Salix Salsaf**.

1065. Խլէզագի.

Անունն յայտնէ որ մողէսի ձետի (պոշ) նման բոյս մի ըլլայ, զոր բառագրողն լեհարէն գրէ Choszeza (Խօշէզա). Բժշկարան մ'այլ յիշէ. « Խոտ մի կայ՝ որ առնունն Խլէզագի ասեն. զայն խոտն ծեծէ », եւ այլն, ցաւոտ եւ շարժուն տկուայի գեղ, նաեւ ուսացաւի:

Խլթիթ. — Տես Հրխ:

1066. Խլրդուկ.

Նոր բառահաւար մի նշանակէ, առանց բացատրութեան:

1067. Խլրպուզ. — Տես Զիւնծաղիկ:

Խմէլ. — Տես Հոսեկ:

1068. Խմի.

Բարձրեկ բոյս մի է երկայն եւ փետրաձեւ տերեւներով, հովանացաձեւ հոտաւոր ծաղիօք, որ դեղի գործածութիւն, եւ (մէկ տեսակն) շաքարով անոշ շինելու. եւրոպական անուամբ Հրեշտակապետային, Archangelica, կոչեն այս տեսակս, իսկ հասարակ տեսակները (որ շատ չեն) Հրեշտակային, Լ. Angelica, Փ. Angolique. Ք. Սիւնկիշի Խիրայի: — Ի կովկաս եւ ի վրաստան տեսնուած, հաւանորէն եւ ի Հայս գտուի:

1069. Խմորուկ.

Տեսակ Ելակի, կարմիր ու սպիտակ. տերեւներն կամ ճղկներն գետնի վրայ կուտարածութիւն. պտուղներն հետ գհետէ հասնուննան: — Խմորուկ կոչուին նա եւ Մորի տեսակ (Ribes) որթանման թուփք մանրիկ խաղողներով:

1070. Խմրախոտ. Խմրխոտ

Բժշկարան մի Սինամաբիին համար կ'ըսէ, թէ « Ոմանք Խմրայխոտ ասեն »: Բայց ի Հայս ծանօթ բոյս մ'է Մնեբեկի նման, որչայն ոտնաշափ մի միայն բարձրանայ, գարնան սկիզբները կ'ածի, եւ իբրեւ աղցան ուտուի: Քուի Լ. Anthoxanthum Փ. Flouve կոչուածն:

1071. Խնդակ.

Բժշկարան մի շատ հանրաբար եւ անորոշ բացատրէ. « Խնդակ քոքն՝ որ ի լեռն » բինս լինի, մոխրագոյն է »: Կարծուի տեսակ մի Զուիրակի. Լ. Origanum Aromaticum կամ Diotamus Oreticus. Տես եւ Անարակ, թ. 116:

1072. Խնդակոծ. Մոլեխինդ. Խնդամոլի. Խնդամուլիկ.

Այս բարդեալ բառից նախատիպն է Խինդ զոր քանի մ'անուն առաջ յիշեցինք (թ. 1057). իսկ ասոնց առաջինն վերջի երկուքէն արդեօք տարբեր է թէ նոյն, կամ թէ կըրնար զանազանիլ, մէկը յարմարցընելով Լ. Conium, Փ. Ciguë, Ռ. Омегъ կամ Волиголовъ կոչուածին, միւսն կամ միւսաները՝ Cicutia, Փ. Cicutaire, Ռ. Водной омегъ կոչուածին, փափագելի էր որոշել և սահմանել: Բայց մեր նախնեաց զօրծածութեան մէջ անզանազան կ'երեւի. մանաւանդ երկու տեսակքն այլ համացեղ ըլլալով (Հովանեկաւորաց ցեղէն), թէ և պիտեականք կու նշմարեն տարբերութիւններ ի ձեւ և ի մասունս. մէկու պըտուղն աւելի կլորկեկ է, միւսն աւելի երկայնաձեւ, երկուքն այլ դըրսէն շերտ շերտ: Ի գիրս նախնեաց Ոսկիբերանի Եսայեայ մեկնութեան թարգմանիչն գրէ (եր. 424), « Իբրև թմբի ինչ առեալ կամ կոնիոն » (Յ. Κώνιον), որ է Խնդակոծ ». այսոր տեսակն որոշելու համար Փ. Grande Ciguë կոչեն, հարկաւ միւս մ'այլ Petite Ciguë. — Վանական վ. իր Հարցմանց մէջ կ'ըսէ. « Մոլեխինդն խոտ է, » « ցօղուն առնէ որպէս այն որ Սպանդ են յասել » (Pogonum), պտուղն որպէս զմանր Պատին. » « ևն. մահադեղ է մարդոյ ». — Եւ ո՞ր պատմագէտ չի յիշեր Սոկրատայ մահը, որոյ յիշատակէն անբաժան է այս մահառիթ բոյսն. և ո՞ր հայագէտ իր մեծ պատմոյցին ըսածը (Խոր. Բ. ՂԲ), իրենց մեծազոյն և սրբազոյն թագաւորին (Տրդատայ) համար, որոյ՝ ապերուխտ պաշտօնեայք՝ « տան » արբումն, որպէս անդ ուրեմն ի հինան Աթենայ » ցիքն՝ Սոկրատայ՝ զՄոլեխինդն »: . . . — Հին բժշկարան մեր՝ որ շատ կանոնաւոր և ուղիղ գըրուած է, զարմանք, այս անուան մէկ գիրը (Թերեւս հնագոյն օրինակի մի այլաձեւ գրութեան հետեւելով՝ կու գրէ. « կոնիոն, Խնդամոլի, Փրի. » փա ? » և ուրիշ տեղ այլ իբրև գիտութեամբ » նոյնպէս գրէ Խնդամոլոյ տակ »: Թողլով զայս անոր՝ տեսնեմք ինչ գրէ մեր Ամասիացին:



Խնդակոծ.

Սա Ար. Շուքրան, كوكوش, բառին ներքեւ կ'ըսէ. « Շավքարան, որ է Հոռ. » « տռռոն ? (կամ Հուղտուտ) և Հելենացոց բառովն՝ Միդոնիոն ? » - Յ. Միզոն Միքոս, Խոշիտաչ նշանակէ. — « Շավքարան—մն այլ՝ որ Թ. Պարտրան ասէ (և կ'աւելցընէ թուրքերէն, թէ ցօղունն Ռազիանի նման ծունկ ծունկ կամ կապ կապ » է, տերեւն բարակուկ) և իր հունտն ի Նանիու կու նմանի. լաւն այն է որ » նոր լինի. . . զմարդն հարբեցընէ. և իր քամուքն զմանն կու տանի յերեսէն. . . » և թէ զմազն փետեն և յայն տեղն Շավքարան քսեն, և կամ տրվէտ առնեն, » ի յայն տեղն այլ մազ չի բուսնի. . . Իպն ասէ, թէ ինքն խոտ—մն է որ իր ծառն

» (բայան) Ըռգիանի ծառ կու նմանի, և ծաղիկն սպիտակ կու լինի, և քսիտ
 » խորուկ չի մտնուր ի գետինն. և հունտն յԱնիսոն կու նմանի. և տակն փուճ
 » կու լինի. . . Եւ բժշկապետքն ասեր են, թէ այս խոտէս ոչ ուտեն և ոչ խմեն, որ
 » զխելքն կու տանի, և զմարդն կու սպաննէ. և կու պիտի որ Օշինդր և Պըղ-
 » պեղ և Կղբու ձու և Սազապ խմեն (որ) զՊնասն խաղացընէ » : Իրմէ հազար
 տարի առաջ գրէր մեր մեծ վարդապետն Եզնիկ. « Մուխիհո՞՛ որ առանձինն
 » ի յայտնի ինչ ժամանակի ոպանող է, նովիմք զմաղձս հնացեալս՝ հնարին բժշիկք՝
 » հատանել » : Անշուշտ աւելի անվնաս տեսակն պիտի ըլլայ Թափառկոտ Թաթարաց
 անապաններուն մէջ, զոր իտալացի տեղագիրն ՅՅ դարու՝ Յովսէփ Բարբարոյ,
 անոնց հացի տեղ ծառայէ կ'ըսէ; և թէ չգտնէին՝ անօթութենէ կու մեռնէին :
 — Ինչպէս շատք ի բուսոց՝ այս այլ ունի իր Եգիպտականոյին. (տես թ. 849) :

1073. Խնդեղի կամ Խնդեղնի.

Ոմանք ի նորոց այսպէս կոչեն զԹանթրուենի (թ. 766) :

1074. Խնդէ.

Երէջին անուններէն մէկն է. տես Թաղադու (թ. 757) :

1075. Խնճաղեղ.

Նոր բառահաւաք մի նշանակած է. անծանօթ է իսկութիւնն. տես և Խնճնի.

1076. Խնկածաղիկ. Խնկողկոյգ. Խնկողկուզակ. Խնկողկուզուկ.

Այս հոտաւէտ անուններէն գերազոյն կոչում մ'այլ ունի այս բոյսս, — Աստուա-
 ծամօրն. Մարեմիտտ, կամ Մարեմիտտ, Մարեմայ խոտ, Մարիմիտտ Մայրամ-
 խոտ. այսպէս այլեւայլ կերպով գրուած. ըստ օմանց կոչուի և Ս. Գրիգորի խոտ,
 այլ և Անբասամ. և օտար և երկրայելի անուամբք՝ Գովիզ, Մանուզ, Հագուպ-
 և այլ եւս՝ զոր յիշեցընէ մեր Ամասիացին, Ար. Ճօտայ կամ Ճատա բառիւ շԱՔՁ
 « Որ է Մարեմիտտն, որ է Խնկողկուկն, և Թ. Ղօշուն եւսլանի ասէ. լւան
 » այն է որ սպիտակ լինի. . . օգտէ ակոացաւութեան, և զյօնաց զմազն կու բուս-
 » ցընէ՝ օծելով. և թէ իր քամուքն մեղրով յաչքն քաշեն՝ սրացընէ և զմթնալն
 » տանի, և զմոռացկոտութիւնն տանի. . . և զճնիքն և զօճն ի փորուն հանէ, և
 » զտափակն այլ հանէ. . . և զնոր խոցերն կու եփէ և զչոր խոցերն կու չորացընէ. .
 » և թէ զինքն ծխեն՝ զգազանքն և զսողունքն ի տանէն փախցընէ. . . Ստէ Սա-
 » հիպ ճամբհն, թէ մարդ զինքն ի ներքն փռէ կամ ծխէ, ի յայն բուրքն սո-
 » ղունք և Թռչունք փախին. . . Եւ ասէ Պտ. թէ այս խոտիս Պ. Ղոշիտն կ'ա-
 » սեն և Ճիսիրկօզ ? կ'ասեն և ֆիսու կ'ասեն. ինքն երկու ցեղ է, մեծ և փոքր.
 » և Պ. Անպարպետ այլ կ'ասեն. և լւան այն է որ փոքր լինի և շամի լինի, և
 » վայրի և սպիտակ լինի » : — Այս հոտաւէտ և համեմային գովանի բոյսս՝ որ
 « Աղաղակէր երեւմն՝ թէ ես պատճառ եմ սրբութեան քահանայից », ըստ (ԼԵ)
 առակի Մի. Գոշի, և ի զեղորայս պիտանի եղած է միշտ, կոչի Լ. Polium mon-
 tanum կամ Teucrium Polium, ևս Teucrium montanum, Փ. Pouliot de montagne.

Ռ. Սալճճ. Որձայն մեծութեամբ ծաղիկն այլ գոյնով զանազանին : — Հին բժշկարանն փորլուծութեան և աղէցաւութեան դեղոց կարգին՝ զայս այլ գրէ. « Խոտ մի Խնկածաղիկ ասեն, չորցո, աղա, և պախրի ճրագվով խաւիժ չինէ, » ցանէ ի վերայ զդեղս, և ուտէ »: — Թէ ի Մեծ և Թէ ի Փորր Հայս գտուի Խնկածաղիկն՝ վկայութեամբ բուսարանից, վերոյգրեալ լատին անուամբք: Սակայն կըրնայ շիտթուիլ ուրիշ բուսոց հետ՝ որոց նոյն անունն տրուի. ինչպէս Տրապիզոնի կողմերը Խնկածաղիկ կոչեն նա եւ տեսակ մի երկայն ճիւղերով և գետնահասպաղ դեղնածաղիկ Աուոյտը, որ է *L. Trifolium Procumbens*. — Հանունն Խնկածաղիկ՝ յարմարի իր ցեղակից Խնդակի. (*Amaracens* կամ *Origanum Mayorana*). Ըստ յունական առասպելաց կիպրոսի Թագաւորի մի արքանեակ՝ իրեն Խնկի աման մի տանելու ատեն, ձեռքէն կ'իջնկնայ կու կոտորի. մանուկն այլ վախէն և շիտթուիլէն կու մարի կ'իջնկնայ, և իսկոյն փոխարկուի յայս խնկահոտ բոյս և կոչուի Ամարակ:

1077. Խնկասինձ.

Այսպէս կոչեն Սերաստացիք դեղին Սինձը, տես զայս:

1078. Խնկատերու.

Գայիենոսի բառք նոյնանիշ գրեն զսա, Ար. Հայըլ-փակ և Փանջանկոչոտ, որ է անշուշտ Ար. Ֆերեհէմուշկ *كاشكاش*, Ըստ Ամիրո. « Պարանձամուշք. որ Հո. » Պրուսկոն և Ռահանի Ղարանֆիլի կ'ասեն. և հոտն օգտէ զուգամին, և զքթին » կալուածն կու բանայ: . . Ասէ գրոցս չինողն՝ Թէ ինքն Վայրի Դաղձերուն ցեղերուն է. և իր բուսն ի իրարբի տեղեր կու բուսնի. և ի մէկ հետէն ի տակէն » մէկ հետ ճղեր կու ելնէ. և տերեւն նման է Ըռահանի տերեւին. և յորժամ » բարձրանայ և յերկանանայ՝ զէտ Ըռահան գլուխ կու բռնէ. և ծաղիկն ծիրանի » է ի սպիտակութիւն կու քլտէ, և քանի երթայ կու սպիտակի. և հոտն սուր է »: — « Ասէ Յեսու բժիշկն՝ Թէ սրտին խնդում բերէ, և զստամաքն զօրացընէ, և » զբերինն հոտն անուցընէ, և բանայ զգլխուն և զըղեղին կալուածն »: — Այս բոյսս Դիոսկորիտէս կոչած է *Acinos*, զոր սմանք յաւելուածով կոչեն հիմայ *Thymus Acinos*, և այլք *Ocimum pilosum*. Φ . *Calament Acinos*.

1079. Խնկողկուզակ. Խնկողկուզուկ. — Տես Խնկածաղիկ:

1080. Խնկուկ.


Այսպէս գրէ օրինակ մի Սալաձորեցւոյն կաընկուկ գրածը ուրիշ օրինակի մէջ. տես զայս:

1081. Խնձնի կոթ.

Յիշեցինք (Թ. 1058) զԽինձ, ուսկից ծագած կ'երեւի Թէ՛ այս կոթն և Թէ Խենձնդինայ տակն (Թիւ 1048): Ասար բժիշկն է ըսողն « Խնձնի կոթ՝ որ չորս. » ցընեն »:

1083. Խնձոր. Խնձորենի.

Լ. Malus. Φ. Pommier, Pomme. Ամենածանօթ, թերեւս և ամենապատուական պտուղ և ծառ, որ կամ իրբու ամենայն պտղոց ներկայացուցիչ և հասարակ ա- նուն, կամ իր ձեւոյն և գունոյ գեղեցկութեանն համար՝ Թագաւորաց Թագի և գա-ւազանի զարդ ընտրուած է ի հնուց, և նոյն իսկ սրբազան խաչից ներքեւ զրուած գունտն այլ Խնձոր կոչուի: Այս պատիւը նշանակէ և մեր Առակախօսն (ժԱ), իրեն եղբայր և նախանձորդ կոչելով զՏանձ, որ շքաշելով անոր պատիւը՝ կ'ըսէր. « Թէ հարազատ մեք (լինելով) զիմրդ Թագաւորք զօրինակ քո արարեալ ոսկի՝ » ի ձեռին նկարեն. և նա ասէ, զի բոլորատեսակ եմ և անուշահոտ. և Թէ ոչ » նախանձիս՝ առնեմ լինել և քեզ ընդ իս ի սեզան ճոխից. Թէ և նշանակն ոչ լինի » ոսկի »: Բանաստեղծից, վիպասանից և տարիածուաց՝ արեւելեայց և արեւ-մտեայց՝ Թողով Խնձորոյ պէսպէս նշանակութիւնները և զօրութիւնները, Եսպերի-տեան պարտիզաց ոսկի Խնձորնիբէն սկսած՝ մինչեւ Վանայ կամ Արտամետի հըռ-շակեալ Խնձորը. (որ օրիորդէ մի խածուած Նարկիս ծաղկի նման երիւեցաւ ա-րարացի քերթողի մի), (1) Վանայ ծովուն դրացի Խլաթայ Խնձորներն այլ Թէ համով Թէ մեծութեամբ անուանի են:

Ար. Թոֆֆան կամ Թուֆան կոչուի Խնձորն . այս անուամբ ստորագրէ Սմիրտ. յիշելով նախ տեսակները, « Քաղցր լինի և մուգ լինի և թթու. լաւն այն » է որ քաղցր լինի և անուշահոտ. և Թէ զԽնձորն եփեն և ծեծեն և դնեն ի » վերայ աչիցն՝ զաչքն յուժովցընէ և զցաւն տանի, և զսիրտն յուժովցընէ և » ուրախ առնէ... Իպն. ասէ, Թէ զգարնան Խնձորն ուտեն՝ զսաֆրան յաւել- » ցընէ և մոռացկոտութիւն բերէ, և Թէ զթթու Խնձորն ուտեն՝ զմարդն յու- » կ'առնէ. և զքաղցր Խնձորն հոտվրալն լաւ է քան զուտելն... Այլ ասած է » վասն Խնձորին, Թէ լաւ ատենն Խնձոր ուտելուն այն է՝ որ ի վերայ գինի » խմէ. և ամենայն մահացու դեղոց Թրիաքն է և զազանահարացն, և այն Խըն- » ձորն որ խակ լինի՝ չէ պատեճ որ ուտվի. հանց գիտացիր որ... Լերմեր կու » բերէ », եւ այլն:

Հին բժշկիւր. աւելի ամփոփ գրէ. « Խնձոր, ազգեր են. Քաղցր, Թթու, Մուգ, » Փոթոթ, և է որ բնաւ համ չունի. Փոթոթն Թանձր ցաւեր ընծայէ յանձն, » և Թթուն՝ հով ցաւեր, և Նօտն ու Մուգն լաւ է քան զայլն. Քաղցրն տաքու- » թիւն ունի, և այն որ համ չունի՝ գիջութիւնն յուղով է: Հով բնութեանն քաղցրն » է լաւ, և տաք բնութեանն Թթուն. սր վասն կապութեան ուտէ՝ փոթոթն լաւ » է: Եւ զԽնձորի ըմբելին եր Թթու Նաւան գինով այնն: Խառնած կամ Ազոխ » ջրով, շատ օգտէ լոյծին ի սաֆրայէ և որձկալոյ, և զստամոզ ուժովացընէ. և » շատ ուտելն ջղացաւութիւն այնէ »:

Վաստակոց գիրքն այլ խնամով գրէ (ՄԻԿ) Խնձորին տնկելու և դարմանելու » վրայ, որ « զհովային և զսեւակ գետինն ընդունի. և Թէ որ զՄկնտխն շուր- » անակի տակուցն տնկէ, ճիճեկեր բնաւ չիտայ լինել, և ոչ Թողու որ բնակի

1. Յունաց աստուղեկելու Եսպերեան պարտիզաց պահպան երէց քերք՝ առաջինն Աբիբուտ կուռէր. այս անուամբ բանասէրք Հին Հեգրեակաց Արեթուսայ լիճը հանձնան՝ աւելի՝ քան զվա- նայ ծովան՝ անոր մօտ Նազուկ լիճք:

» յինքն.. Խնձորին՝ բերրի քան զամէն ծառ ի գողէն (երբ ի տակն ամեն)..
 » Եւ թէ ուզես որ Խնձորն քաղցր լինի՝ քաղցր գինւոյ մրուր ամ ի տակն՝ ի շարժան՝
 » երբ կամենայ ծաղկել, նա զծաղիկն արգիլէ և քաղցր առնէ զԽնձորն: Եւ
 » թէ ուզես որ կարմիր լինի՝ ցըցեր գորկ շուրջանակի ծառին՝ արձակ, և զճիւղն
 » նոյն Խնձորովն իջո, և ի ճիւղն կապեա, որ ի վերայ գետնին ցածանայ, և ներ-
 » քեւ փոսեր արա. և երբ ի խայծ լինի Խնձորն՝ շուրջ լից ի փոսերն. նա դիպի
 » արեւն ի շուր և ծախ հանէ, և այն ծախն որ ի Խնձորն հասանի՝ կարմրա-
 » ցուցանէ զԽնձորն: Եւ թէ բնութեամբ ուզես որ կարմիր լինի՝ ի Մաթըղի ծառի
 » տակն պատուստա զԽնձորենին, նա լինի Խնձորն կարմիր և քաղցր:.. Եւ
 » թէ արճընայ գօտի իննս և ծառին կապես զերդ երկու թիզ հողոյն ի վերեւ,
 » շատ Խնձոր սոյ առնել և ի պինդ ունենալ: Եւ թէ ուզես որ Խնձորն չնեխի
 » և թրթուր յինքն չմերձենայ, երէ մի կայ որ իւր անունն սարու կ'ասեն
 » (կանաչ մողէզ), զտակոխեն՝ նորա լեղեան օծ»: — Պտուղներն այլ երկար
 » ատեն պահելու համար խրատէ (ՄԺՁ). « Քաղեա ձեռքդ, և ի տուն՝ ուր ծուխ
 » չհասանի՝ գարէ յարդ լից, և ինքն ի վերայ ամբողջ մնայ. քանի տունն հով
 » լինի՝ լաւն այն է: Եւ թէ առնու զք ընկուզի սղոցուր կամ կլիկնոյ կամ գէր
 » Մարտի, և շուր ի կարաս անձիւթ, և զԽնձորն ի ներք թաղէ, ամբողջ մնայ.
 » բայց զբերանն ամուր ծեփեա՝ որ օդ չմտանէ: Սակայն այս է լաւն քան զա-
 » մենայն. առ Խնձոր ամբողջ ի ծառէն, և ի վերայ փայտին խամ կապեա. և
 » առ ընկուզի ցախ և ի վերայ Խնձորին փաթաթեա՝ որ աղէկ ծածկէ Յախն
 » զԽնձորն, և այնու կախեա յանծախ և ի հով տուն. ամբողջ պահէ:.. Եւ թէ
 » ի մուտտա դնես՝ անուշանայ ինքն և անուշացուցանէ զգինին, և շէն մնայ,
 » բայց զմիջոցն այլաչամ ուտես »:

Խնձորն շատ տեսակ ունող պտուղներէն մէկն է. ի Հայս 80 տեսակի չափ կ'ը-
 սուի. որոցմէ մեզի ծանօթք անուամբ՝ հռչակեալ Խաչխաչի Խնձորն Արտամետի.
 — Դառնիձ, որ և դատ թթու պտուղ մի ճանաչուի. — Խաչախաչի, կամ Խաչա-
 կեկ. — Կաքնախաչի. — Կանաչկեկի, ըստ գունոյն. — Կարմրկեկ. — Հարչ. —
 Մառնուակ. — Մեղրախաչի. — Մլախի. — Շաքարկեկի, — Պահուի. Չրտ-
 կեկ. — Վարդախաչի. — Տոտրիձ (Վայրի Խնձոր). — Փացի, որ և թեփոռչ
 խնձոր: — Տեղ մի գրուած էր Եզնկայի Խնձորենեաց թ. անուններն, Սագի, Թալ-
 շան, Սիւնայի, Երաչքըլ էրնասի, Կէլիկ էրնասի (Հարսին խնձոր): — Գանձակի
 լերանց վրայ այլ գտուի կարծր ու կարմիր փայտով, ծաղկով ու պտղով Խնձոր մի,
 զոր կակղելու համար հողի տակ թաղեն, և ի Չատկի հանեն ուտեն, որոյ համար
 թ. կ'ըսուի Գռզոն կտրեկ:

Յիշած եմք թէ Առճն այլ կ'ըսուի Վայրի Խնձոր (Թ. 32), Սինձն այլ:

1083. Խնձորակ. Խնձորակ խոտ.

Մշեցի ծերունի մի ստորագրէ զայս, փոքր բայց ծառածե բոյս մի գետնատարած
 ու աղուամազոտ տերեւներով. ընկուզաչափ խնձորածե կանաչ պտղով, որ և
 կ'ուտվի, բաւական անոյշ ըլլալով: Նոյնն կ'ըսէ՝ որ սովի ատեն ասոր հունտերը
 ուրիշ վայրի բուսոց հունտերու հետ աղալով՝ հաց կ'ընէին և կ'ուտէին: — Լոյտակի
 ծանօթութեան մէջ յիշեցինք զՄանրագոր՝ անշուշտ այս Ս. Գրոց մէջ յիշուածն
 և Խնձորակն նոյն են, որ թէ վերոյգրեալ բացատրութենէն և թէ Նարեկի Լուծ-

մունք հին գրողի մի խօսքէն հաստատուի. « Ազգ մի խնձոր կայ վաղահաս, Ման-
» րագոր ասի կամ Լեառնախնձոր, ուստի քաղեաց Ռուբէն »: Ս. Գիրքն այլ
(Մենդ. Լ. 14 խնձոր) Մանրագորաց կոչէ զայս, զոր անդրանիկն Յակովբայ « եգիտ
» և երերյանդի առ Լիա մայր իւր », և նախանձ ձգեց անոր և իր մօրքորջ մէջ:
— Տես և Լօշտակ և Մանրագոր: — Հին բառգիրք մ'այլ կ'ըսէ, « Մանրագոր՝
« խնձորի խոտ կամ Մորի »:

1084. Խնձորխոտ.

Ուրիշ է վերինէն, և նշանակէ զԳիտնախնձորն (Թ. 446), այսինքն զԵրիցուկն:

1085. Խնձործաղիկ.

Յիշուի ի Բժշկարանս ուրիշ ծաղկանց և տերեւոց հետ, ինչպէս. « Անթառամն
» ծաղիկ և Զղախոտ և խնձործաղիկ ». ծանօթ է և հիմայ, բայց ոչ ինձ:

1086. Խնձորկոտիկ.

Զայս յիշէ Հին Բժշկարանն, ուրիշ շատ խոտոց և բուսոց հետ, իբրեւ դեղ մար-
մնոյ պաղած մասանց:

1087. Խնձորկուլ. կամ Խնձորակուլ?

Երկրայութեամբ յիշեմք զայս, որ Քալիենոսի բառից մէջ՝ Խարիէն? անուան
զուգուի, և Թերեւս ոչ բոյս այլ կենդանի ըլլայ (ինչպէս Ոսկրկուլն):

1088. Խնձորուկ.

Տեսակ Առուայտի, տերեւքն ըստ Երեքնուկի, տանձածեւ. իսկ ծաղիկն կլորակ
գեղեցիկ կարմիր, զոր խնձորի նմանցընելով՝ այգ անունը տուած են:

1089. Խնճլուգ. Խնճլոգ. Խունջուլօգ.

Բանջարեղէն մի, տերեւներն մէկ կարգի վրայ շարուած, Բասենոյ կողմերը ա-
ւատ գտուի: (Մանան. 446. Նոր Դար. Դ, 63): Այս է կամ այսպէս կոչուի
Չիւնձաղիկն, Փ. Galantine.

1090. Խնճորակ.

Շան Թոռք այլ կոչուի, Հաղարթի նման պտուղ է, Թուի վերոյիշեալ Խնձորակն,
և բազորոց Մորի գրածն:

Խշո. — Տես Խաշար:

1091. Խշրիկ.

Բժշկարան մի նոյնանիշ համարի զսա ընդ Թուրքիայի:

1093. Խոզակ.

Այսպէս կոչուի անտառային ծառոց կլորակ շուտուելու պտուղն:

1093. Խոզակաղնի. Խոզկաղնի.

« Որ Թ. Պալանուտ ասէ, ըստ Ամիրտ. որ է մեծկեղեւ կաղնին »: Ուրիշ բժշկարան մ'այլ կ'ըսէ. « Պլութ (Պալուտ) որ է Խոզին կաղնին »: Քանի մի տեսակ կաղնեաց նշանաւորներէն մէկն է բարձրութեամբ և հաստութեամբ. Լ.



Խոզակաղնի.

Quercus Aegilops (Աճակն), կամ *Cerrus*. ֓. *Chêne Velani*. պտուղն կամ Բալուտն՝ ըստ առասպելաց՝ մարդկան ուտելիք էր՝ երբ դեռ վայրենութեան վիճակի մէջ էին: — Տես կաղնի, ուր յիշուին հասարակ և այլ տեսակք: Քիմիաբանութեան գիրքն փոլատ (պողովատ) շինելու մէկ նիւթն ալ դնէ զԽոզկաղնին:

1094. Խոզատանձ.

Գալիենոսի բառք այսոր համանիշ գրեն (ըստ այլեւայլ գրչաց) Ագրակէզ, Ագրակէս, Ագրագէս, որ է Յ. Αχράς; , Լ. *Pyrus silvestris*: Անունն յայտնէ որ վայրի Տանձ է, որոյ պնդութեան համար՝ նոյնպէս կոչուի և կոկորդի մէջ գոյացած ելունդն կամ սուէցքն, հասարակօրէն խոզք կոչուած առ մեզ (*Scorofules*).

1095. Խոզեպանրուկ.

Ճերմակ և կլորիկ արմատով բոյս մ'է ուտելի, շագանակի համով. այլ մեծութիւնն և ձեւն ինձ անժանօթ:

1096. Խոզի Բակլայ.

Ամիրտ. շատ տեսակ Բակլայ գրէ, բայց զայս ոչ. Շէհրիմանեանն է զայս յիշողն՝ իբրեւ նոյն ընդ Բակգի. տես զայս (Թ. 304), թէպէտ նման չերեւիր:

1097. ԽոզիԹ.

Մանր խոտեղէն մի բթաչափ երկայն և կեռ կեռ տերեւներով: — Բժշկարանք յիշեն և խոզիք վայրի? դեղ ցաւոյ աղեաց, շուքի մէջ շորցուցած և ծեծած:

1098. Խոզի Ճաղիկ.

Անուամբ բոյս է, իրօք աղային նիւթ մի. Ար. Չահրաք ըլ-Միհի, ըստ Ամիրտ. « Այն իրօքն է՝ որ ի Նիլէն կու ելանէ, ի փոս տեղեր ուր որ շուք կայ՝ ի հոն կու բուսնի, և գունն ի Չաֆրան կու նմանի, և հոտն ի ձկան հոտ կու նմանի »:

1099. Խոզի կաշի?

Մտ. Ռոշքեան գրէ, թէ այսպէս կոչուի Չամանն. Թուի թէ Լեհահայոց մէջ:

1100. Խոզի Բագ.

Թաղթի շատ անուններէն մէկն է, տես զայս և Արջտակ (Թ. 336. 759):

1101. Խոզի մազ.

Այս այլ Չարխատի շատ անուանց մէկն է:

1102. Խոզի Փուշ.

Այսպէս Թարգմանէ Ամիրտ. Յ. Ανάγυρος, Լ. *Anagyris foetida*, Փ. *Anagyris foetida*. « Ինքն ծառ-մն է՝ որ խիստ պեղծ հոտ ունի, և միրգն երեկամ կու նըմանի, և գունն ազգի ազգի է. և խաղողին ատինն խիստ կու լինի. և յոր- » ժամ տերեւն Թաժայ լինի՝ ծեծես և ոպեղանի առնես և դնես պալլամի ու.

» Բէջին, օգտէ և հալէ. և թէ մէկ դրամ Մորի շարպով խմցընես՝ օգտէ այն
» ցաւերուն... և թէ գինով խմցընես՝ զգլխուն ցաւն տանի »: — Պէյթար՝ Խօզի
եղջիւր թարգմանէ (Խարուպ ըլ-Խընցիր), պողոյն ձեւին համար. Ամիրտ. այլ
այնպէս է կ'ըսէ ըստ Եգիպտացւոց:

Խոզկաղին. — Տես Խոզակաղնի:

1103. Խոզմատ.

Թուի Բալուտ, այսինքն վայրի Կաղնոյ պտուղ. Վաստակոց գիրքն (ԿԸ) Այգի
տնկելոյ խրատից մէջ կ'ըսէ. « Ոմանք առնուն զխոզմատն և զԿաղինն (կամ
» զԽօզմատ-Կաղինն) և կեղեւեն, և աղան խոշոր զերբ Բակլայ և այլ մանր, և
» երբ դնեն զտունկն՝ նա յիւրմէ ի տակսն ընուն ճանկ մի, և ապա զհօղն ի վերայ
» ածեն », եւ այլն:

1104. Խոզ-Մատիտեղն.

Յիշուած է ի Բժշկարանս, դեղ փորցաւի, թուլութեան, և արիւն զողելոյ. անունն
յայտնէ որ Մատիտեղի վայրի տեսակ մի է:

1105. Խոզուկ.

Ջրային մամուռ է, սովորաբար խօզ գրուի. տես զայն:

1106. Խոզպանդուկ. Տես Խոզեպանդուկ:

1107. Խոլորձ.

Ամենայն դաշտաց հասարակ բերք, անասնոց ուտելի. անունն այլ նոյնպէս
հասարակաց ծանօթ մեր հին հարց. իսկ նորերու՝ քիչ մի երկրայական. վասն
զի ըստ ոմանց Առուոյտի տեսակ մի է, որոյ և նմանեաց հետ տեսանք յիշուած
յառակախօսէն. « Գնդածաղիկք և Կորնգան և Խոլորձ, Առուոյտ կապոյտ և Սէզ
» և նմանք սոցին », եւ այլն, (տես Առուոյտ, թ. 188-9): Ըստ այլոց է Վիգն,
L. Vicia, Փ. Vesce. տեսողք ու լսողք կ'ըսեն իրր երեք թգաչափ բարձրացող
բարակ բոյս մի, փունջ փունջ մանիշակագոյն ծաղկամբք և ոլոռնաձեւ սեւ հուն-
տերով: Սալաձորցին իրբեւ աւելի աչքի զարնող ծաղիկ մի նկարագրէ.

« Խոլորձըն չահառեալ թըփին՝ պայծառանայ առաւօտուն ».

Իսկ իրմէ՝ նա և քան զամէն ազգային նախնիս մեր հին բանաստեղծ Նարեկա-
ցին՝ իր նշանաւոր Սայլի երգոյն մէջ կ'ըսէ.

« Այն հարիւր բարդ Խոլորձան՝ այն Նահապետքն են ».

բուռոյն միւս մասերն այլ Սրբոց ուրիշ դասուց նմանցընելով: Ըստ նոր բառհա-
ւաքի Սեբաստիոյ կողմանց՝ Խոլորձ կոչուի չամանաբեր խտտն:

1108. Խոկարի ?

Վայրենի ծառ մի ի Հայ-Աղուանս : (Մեղու, ԻԲ, 83)

1109. Խողի .

Այսպէս կոչուի ի Մուշ՝ հասարակօրէն Մխախտ կոչուած աշխարհածաւալ բոյսն, բերնով ծխելու սովորութեամբ . Լ. Tabacum կամ Nicotiana, Փ. Tabac, Nicotiane . Թ. Թիւրքիան, որ լուսի ի բոլոր արեւելք. որոյ գործածութեան պատմութիւնը թողուով բնապատում բանասիրաց, յիշեմք միայն ինչ օտարոտի և անբանական բան երեւնալն՝ ի սկզբան, (Հիմայ ո՛չ) . որ և խղճահաւատից մեղանշական երեւցաւ, և այնու մտօք շարժեալ աղգային քերդող մ'այլ յ'Յիշ դարու՝ գրած է ստանաւոր բան մի՝ Վասն Թիւրքիանի, զոր և ի Ս. Գրոց նշուելալ համարի :

« Թէ հարցանեմք ի սուրբ Գրոցն, Շատ մարդ յիւար կան և երերուն,
Գարշ և զագիր ասէ զԹութուն . Ոչինչ ունին ի տան յանկիւն,
Որպէս մեղուն փախչի ի ծխոյն՝ Փող մի չունին որ տան հոգւոյն,
Նայնպէս հրեշտակն յայն պիղծ հոտոյն . . Երթան պարտօք գնեն զԹութուն : . .

Մուխ կու հանեն ի քրթբոյն, Բայց դուք որդիք արքայութեան,
Ըզսեւ սձն ի բերանոյն . Մի՛ առնէք զձեզ տուն շարութեան՝
Վայ է նոցա հազար հոգւոյն, Խմելով զԹութունըն զագրութեան,
Որ կատարեն զկամօքն դեւոյն : . . . Ի անմասն ինել շաղորդութեան » . . .

1110. Խոճիկ . Խոճկորակ . Խոճկորիճ .

Սովորաբար իր հունան յիշուի , Խոճիկ ունտ , Խոճկորձի ունտ . Լ. Tussilago կամ Petasites, Փ. Tussilage կամ Pas d'âne . յատկօրէն այլ կոչուի Լ. Tussilago Farfara . այս անունս այլ պէսպէս կերպով է գրուած հայերէն ի Բառգիրս և ի Բժշկարանս , յաւելուածով և տառի, Փաշփայնա , Փարփանա . աւսկօրէն փոխան՝ Փոանկաց իշու սօքի նմանցուցած անուան՝ կոչուի հայերէն Չիու ըղունգ , ինչպէս կոչեն և իա . Unghia cavallina , իսկ Թ. ուղտի ներքան , Տեվէ տապաւնր . Հայերէն կոչուի և Տատրակ , կամ այսպէս կարծուի : — Պէշթար ղանազան աւնուամբ բոյսեր յիշէ , զոր թարգմանիչն ստոյգ կամ տարակուսուի՝ Խոճկորիճ (Tussilago) համարի . Ամիրտովլաթայ գրոց մէջ շեմ հանդիպած կամ շեմ ճանչցած անոնց մէկը և ոչ հայերէն անունները : — Վայրի խոտեղէն բոյս մի է , ծաղկըներն կլոր տափակ ձեւով ճղերու ծայր , որ յետոյ աղուամազի պէս գունտ մի ձեւանան . — Յերոպպցի քննողաց յիշուած է ի կողմանս Կարնոյ :



Խոճիկ .

1111. Խոյի ?

Բառգիրք հոմանիշ գրեն զսա Զոսիայի, որ է Զոպա (Թ. 718) :

1112. Խոյի ձմուռ.

Նոր բառհաւաք մի նշանած է զայս, առանց բացատրութեան :

1113. Խոշակ.

Վնասակար բոյս մի երեւցընէ զայս Սաղմոսամեկնիչն Դանիել Ասորի (Սաղմ. 15) . « Իբրեւ զժանգ Յորենոյ, և իբրեւ զխոշակ անդաստանաց, այնպէս կռփի » (կրիւք) հասկ հոգւոյն, և լինիցի առանց արդեանց » : — Հիմայ այլ լսուի այս բառս՝ Յորեն դատարկ հասկ նշանակելով :

1114. Խոպոպ Գարնան կամ Գարնան Խոպոպ.

Գեղեցիկ անուն մի, զոր արժան՝ էր ստորագրել. լսուած է ի Սասնեցւոյ. գուցէ նոյն ըլլայ և

1115. Խոպոպիք կամ Խոպոպիկ.

Անշուշտ ուրբած կամ զուռզ մազերու ձեւով խոտ մի, որ յիշուի ի գաւառական բառս Սեբաստիոյ կողման :

1116. Խոռ. Խուռ.

« Խոռ որ է Դաղձն », գրէ Հին Ռժշկարանն. ուրիշ մ'այլ՝ վայրի կամ լեռնցի Դաղձ : Ըստ Ստ. Ռաշքեան է Լ. Chamaepitio, զոր համարի Լերդախոտ :

1117. Խոռիմ.

Այս այլ է Անջրդի Դաղձն, ըստ նոյն Հին Ռժշկարանի :

1118. Խոռմոյ կորեկ.

Ըստ Ասարայ է Գաւարս. տես զայս : Բայց ստուգելի է ծագումն Խոռեմ անունն :

1119. Խոռն.

Յիշուած է ի նորոց. գուցէ վերոյգրեալն Խոռ ըլլայ :

1120. Խոռնիկ.

Սալոր կամ սալորանման սեւեւակ անուշահամ պտուղ մի, 3 կամ 4 կուտերով, աշնան վերջերը կու հասուննայ:

1121. *Խոռնջան. Խօլջնան. Խուլջնան. Խօլնճան.

Ար. خولجان. — Բժշկարան մի կ'ըսէ. « Տաք դեղ է (Պղպեղ). Ար. Խուլն. » ջան, Զուանկն՝ կրչանկէ », այսինքն Galanga: Ուրիշ մի, « Ինքն կարմիր տակ է, » և անուշահոտ է, փանին քօքն այ. մանրն է պիտանի. Հնդկաց փանի տակն է ո: Ուրիշներ այլ կ'ըսեն, Խուլինջան, որ է Խոսրովուդարոս, կամ Խոսրովդարա: څړاڅړاس. Ամիրա. այլ. «Կարմիր տակ է խոտի, և ի Զանճապիլ կու նմանի. երկու » ցեղ է, հաստ և բարակ է, տաք և չոր է երեք տարածա, և նուրբ այնող է, և » գրերնին համն աղէկ առնէ, և գերեան պայծառ առնէ. զգինուն և զսոխին և զսխտո » ըին հոտն ի բերնէն տանի, և զստամաքն յուժովցընէ, և զկերակուրն հալէ... և. » Թէ գինով խմեն՝ գիրացընէ:.. Եւ ասեր են բժշկապետքն, Թէ Խօլնջանին լաւն այն » է՝ որ ի բազային բունն զտնվի: » — Յայտնի է հիմայ որ այս բոյսս կամ ար » մատս Կարանկա կոչուած, Թէ և ի Հնդկաց կ'ըսուի, բայց ի Ճեաւայէ այլ կու զայ, նա և ի Զինաց. ետքինս փոքր կոչուի, միւսն մեծ. երկուքն այլ լեղի և կծու են, բայց համեմային, և պիտանի ի դեղորայս:

1122. Խոսկում. Խոստում. Խօսքիմ.

Կարօտի նման ուտելի բանջարեղէն մ'է, ըստ Խոսուլրեցուց. Կարնեցիք Խոր » խնտոզ կոչեն:

1123. Խոտ.

Հասարակ անուն ամեն կակուղ անփայտ և յօղաւոր կամ անյօղ բուսեղինաց:

1124. Խոտի մէջ.

Այսպէս այլ կ'անուանի Գորտնբուրդն կամ Մամուռն, զատ յայլեւայլ անուանց:

1125. Խոտոր.

Անուն տեսակ մի Խաղողոյ, յԵրեւան:

1126. Խորասանի.

Տես Երեւին՝ առաջին նշանակութեամբ (Թ. 643):

1127. Խորասանիկ. — Տես Աղուհիակ, (Թ. 65):

1128. Խորդենի կամ Խորտենի ?

Մադիկ մի է ըստ Բրգնիքոց : (Պատկեր, Գ. 184) :

1129. Խործիլ Այգւոյ .

Որթոյ բարակ ծիւերը կամ ճանկերը նշանակէ :

1130. Խործովիլ. Խործուիլ. Խործւիլ .

Վալիենոսի բառից կարգին՝ ասոր զուգանիչ գրուած է Բանիան ? սխալ գրուած անուն մի հաւանօրէն, ոչ ամեն օրինակաց մէջ. նոյնպէս հաւանելի որ ի Բժըշկարանս՝ ուր Արմատն և հռոմոն յիշուի՝ ըլլայ յատուկ Խաւարծիլն և Գարծիլն. տես զայս և զիշխոսն. զի կարնեցիք և այլք ոմանք այսպէս կ'անուանեն զԽաւարծիլ : Սիմ. կամարկապցին նոր նշանակութիւն մ'այլ կու տայ, Չմեդուկ, Մեդրասպոս, գրելով :

1131. Խործոնօի տակ ?

Այսպէս գրուած է հին Բժշկարանի մէջ, և զուգուած Խամիրէ անուան. տակ բացատրութեամբն՝ յայտնուի Թանձր արմատ ունենալն. իսկ Խամիրէ՝ Ար. և Պ. ինչպէս և մեր լեզուաւ՝ Խմոր նշանակէ. բայց հարկ է որ բուսեղէն մ'այլ ըլլայ, որ ինձ անծանօթ է :

1132. Խորում .

Լսուի ի Խոսուշուր . Թերեւս վերայիշեալ Խոսմոյ կարելն ըլլայ :

1133. Խորոտ ? — Տես Հօրօտ :

1134. Խորտակ Ծոթրին . — Տես Մեդրասոն .

1135. Խորփրըստ ?

Մուտ կամ սխալ գրուած կ'երեւի, բայց անտարակոյս զովացուցիչ և գինային խաւարտ մ'է, ինչպէս կ'ըսէ Միս. Հերացի (եր. 46), և նման Հազարի, Փրփրեմի, Դալար Գընձի :

1136. *Խուզամի . — Տես Անձարակ. Թիւ 116 :

1137. Խուլէպ .

Ոչ է յատուկ բոյս, այլ խուրձ մի կանեփի, ըստ Պոնտացոց :

1138. Խունկերէզն. — Տես Էդեգնեսիանկ:

1139. Խունկի.

Անուն տեսակ մի Խաղողոյ:

* Խունսիաւշան.

Պարսկերէն նշանակէ Վիշապի արիւն. տես Աղբերաց արիւն:

1140. Խուշըինակ.

Քէպէտ տեսանք ի թիւ 248, որ Հին Բժշկարանն Արքայիկ խոտին տերեւը կու
նմանցընէր Խուշըինակի, բայց այսոր ինչ ըլլալն չիմացուեցաւ:

1141. Խուպագ. Խուպէզ. Խուպայզ. Խուպուզիկ.

Շատ հեղ յիշուի ի Բժշկարանս, փոխանակ Մալոյի. տես զայս: Ար. հաց այ
նշանակէ այս բառս:

Խուռ. — Տես Խոռ:

1142. Խուռամ.

Ամիրտ. իր բառագրոց մէջ՝ Ղարաւֆի ծաղկան հոմանիշ գրէ. տես Շահագրամ:

Խուռնիկ. — Տես Խոռնիկ:

1143. Խուրծ.

Բաց ի հասարակ խոտի կապոց կամ շափ մի նշանակելէն, յատուկ բուսեղէն
մ'այլ է, ըստ Խոտուլրեցոց. ինչպէսն՝ ինձ անծանօթ:

1144. Խպապի.

Այսպէս յԱրցախ կոչուի Լ. *Taraxacum officinale*, որոյ ուրիշ տեսակներն Հ.
այլ ուրիշ անուն ունին: Տես Փաղտիկուր:

1145. Խպըլիկ կամ Խպիլիկ.

Ըստ ոմանց է վայրի Որթ. բայց ըստ Տրապիզոնեցոց՝ վայրի Յասիկն է. Լ.
Olemais. կոչուի և Հոտոտ, տես զայս:

1146. Խուբու.

Ըստ անուանն խոշոր և անարգ բոյս մի պիտի ըլլայ, որովհետեւ արջու ախոր.

ժակի յարմարի . որոյ համար վկայէ Առակախօսն (Խէ) , թէ երբ Աբնդեղէ չօգտեցաւ , փափազելով կ'ըսէր . « Ո՛ր Խաբու և Ճանդի , որքան բարի էք որօ վայնի » : — Տես Խրբուկ :

1147. ԽՈՒԹԻԿ .

Բժշկարան մի գրէ . « Միշիշ , Պ . Չէրտալու , և հայերէն Խօթիկ ասեն և » Միթրան » : Տես զայս :

1148. ԽՈՆՈՂԱՍՈՒ .

Եղնագին է . տես զայս : Իգական բարդութեամբ այլ յիշուի , Իգախոնդատի տակ . կամարկապցին կ'ըսէ , « Խօնդատն որ ի լերինս լինի՝ մոխրագոյն է » . Իսկ Սալաձորցին ,

« Խօնդատն է ծաղկեր ծառերովն , ընկեր եղեր է կօճմերուն » :

1149. ԽՈՆՉՆԱԿ . ԽՈՆՍՏԱԿ .

Նման կամ նոյն են ընդ Խօնդատի . վասն զի Բժշկարանք՝ մէկը կոչեն Ար . Մահի գահրա , և Ամիրտ . կ'ըսէ , « Ինքն խոտի տակ է , Եղնագի ասեն » . միւսոյն համար Բժշկարան մի գրէ , « Թ . Պալիզ օրի ասէ » . Խօնդատն այլ ինչպէս տեսանք յԵղանագի՝ կոչուի Ձկան մահարար :

1150. ԽՈՒՈՎԽՈՍՈՒ .

« Վայրի խոտ՝ զոր դեղ առնեն վիրաց » , գրէ Մանանայն (եր . 446) .

1151. ԽՈՒՈՒԿ .

Նոյն հեղինակ (Մանան . 146) և ուրիշ մ'այլ (Աղբուր , Չ . 333) կ'իմացընեն բանջարեղէն ըլլալը , բայց սրպիսութիւնն՝ ոչ , իրրեւ ծանօթ իրենց կողմերում :

1152. ԽՈՒՍԻՉ .

Հին բժշկարանն հոմանիչ գրէ զսա և զՀոսոմ Սմֆուլ կամ Աւարոն . տես ի Մրուանտակ :

1153. ԽՈՒՍՈՒԿ .

Այս այլ բանջարեղէն մի , ըստ Մանանայի (եր . 446) .

1154. ԽՍՈՒՐ .

Որ ուսմկօրէն Սխտր կոչուի , ծանօթ ի տնտեսութեան՝ Սօխի հետ (1) , մա .

1 . Հասարակաց ծանօթ է այս , և իբրեւ առակ յիշուի մեկտեղ Սօի և Սիտր . այս զարմանք չէ . և ոչ այլ Հրէեց Եգիպտոսի տնոջ Սօիերը յիշելով փափազելին նորէն զտանա .

Նաւանդ զօրաւոր ստամազաց. **L. Allium, ֓. Ail. Ար. Սոսմ, րչա.** այս բառով սկսի գրել Ամիրտ. « Աժւոց լինի և վայրի լինի, լաւն այն է որ մեծգլուխ լինի ». շատ օգուտներն և դեղերը յիշէ, նա և՛ թէ « զմարդուն գոյնն պայծառ և կար- » միր առնէ ». մեր Առակախօսն այլ (ԾԳ.) Պնտան և օգուտը միանգամայն. « ՉԽտոր՝ Գայիանոս՝ Թիւրակէ կոչէր շինականաց. և լուեալ մշակի միոյ՝ ա- » ռեալ եկեր կայթիւ (մեծ չափով), և խելագարեալ կուրացաւ »: Սոս բնական զօրութիւնն այլ ինչպէս և իր հարազատ Սոխին՝ առակէ (ձԾ). « Ի հրապա- » բակս ճոխաց ի միասին Սոխ և Խտոր՝ ընդ բանջարս կամեցան գնալ ծածկել » զինքեանս, և ոչ կարացեալ, զի ի հոտոյ՝ արնգունքն լցան, և աչքն արտա- » սուեաց բազմականին, վասն որոյ և բնաւքն արտաքս անկան »: — Վաստակոց գիրքն առանձին գլխով (ԾԿԾ.) գրէ Սխտորի մշակութեան խրոստ. « Սխտորն » զսպլտակ և զփաղ գետնին սիրէ, որ չլինի կաղճին, և ի դեկտեմբերի ձմ օրն » է իւր գնեղն մինչև ի փետրվարի եօթն. և որ զինքն ի փուլն (լուսնի) դնէ » և ի փուլն ժողովէ, նա ով ուտէ՝ հոտ չչայ ի բերանոյն... Սձահարի և կո- » բահարի և կատաղի խածածի օգտէ », եւ այլն: — Հին Բժշկր. գրէ. « Սխտոր՝ » տանոյ և վայրի. տաք են. բայց վայրի՝ բնական տաք է քան զտանոյ (ածւոց). » և ինքզ հով բնութեան և պղծամիկ մարդոյ ախտօժ է, և տաք բնութեան ա- » հոկէ... Գաղիանոս՝ զինքս Շինական թրեակ ասէ »:

1155. Խտոր վայրի.

Ար. Սոսմի Հայրայ կամ Սոսմի Պարրի **ᾠ. րչա. Թէ** այս անուամբ յիշէ Ամիրտ. և թէ **Թ. և L. Scordium** (տառից շարուածքն տարբեր, բայց նոյն **L. ա-** նունն յայտնուի), զայս գրելով Շկոտրտիան, որ է Իսղոտրտիանն, որ է վայրի » Սխտորն. խիստ կարմիր՝ զէտ արիւն ծաղիկ ունի. և համն և հոտն Սխտոր » կու նմանի, և տաքքընող է ». և յետ յիշելու այլեւայլ բժշկական օգուտները, կ'ըսէ. « Թէ մեռելի յանձն օժեն և կամ ի փորն ընուն, նա իսկի չփտի. և » զայս զրուցնին՝ առաջին բժշկապետքն եկան և մեզի պատմեցին: Իսկն (ասէ).. » Խոտ-մն է՝ որ տերեւն ի Քանարտիոնին ? տերեւն կու նմանի. բայց Քամարտիոնն » ճղեր չունի, և այս խոտս ունի. և այս ճղերուն ծայրն կարմրօժեռ ծաղիկ ունի, » և տերեւին վերայ զաղապ ունի... և իր տերեւին գունն խիստ կանաչ չէ. և » Թ. այս խոտիս Ելլլան օրի ասէ. և յսր տեղ որ այս խոտս կու բուսնի՝ օձն » ի յայն չի բնակել, կու փակչի... Եւ մեզի պատմեցին հին բժշկապետքն և ստու- » գեցին և ասացին, թէ յանկարծակի պատերազմօնք եղեւ ի Հելլենացոց եր- » կիրն, և շատ մարդիկ շարդեցան ի դաշտի մի մէջ. և ի յայն դաշտն ի յայս » խոտէս շատ էր բուսեր. և այս մեռելնին ի վերայ յայս խոտիս պառկել էին. » և կային այլ մեռած մարդիկ որ պառկեր էին, և այս խոտս չկայր ի նոցա ներ- » քեւն և ի բոլորքն. նա կամօքն Ատուծոյ այն մարդիկն որ ի վերայ այս խո- » տիս էին պառկեր՝ չի փտեցան. այն մարդկացն՝ որ այս խոտս ոչ ի ներքեւն

լու հօն. այլ զարմանք է Ելլլպատացոց աստուածային իմ կամարեւն և երգնուն ի Սոխ և Սել-տոր. որոյ կամար լատին բանաստեղծն Յուրենալ ծագրելով ըսած է.
 « Ո՛վ սուրբ ազանց՝ որոց պարտէչ
 Բուսուցանէ աստուածս այսպէս »:

» և ոչ ի բոլորքն էր, նա ամէնն փտեցան և աներեւոյթ եղան. և այս պատ-
 » ճառովս իմացան՝ որ քան զառաջի Սկուրտիոնն այս լաւ է և ուժով է և պա-
 » տուական է . և զայս ի բան տարան » : — Առանց որոշ անունն բռնու Ա-
 միրա . ստորագրեց յատուկ Օձի Սխտոր կոչուածը, որ է *L. Teucrium Scordium*,
 Փ. *Germendrée Scordone*. Ասոր համար կ'ըսէ վաստակոց գիրքն. « վայրի
 » Սխտոր՝ որ է Սկորթոն, շատ ուժով է քան զ'տանունդ, և ի թրակիսին և ի
 » մեծ մաճունն խիստ մտանէ. և զվերի (Սխտորի) օգտակարութիւնս ունի, և
 » այլ աւելի » :

1156. Խստորամայր .

Այսպէս կոչուի ըստ ոմանց սխտորահոտ բոյս մի Խաչաձեւից (*Crucifère*)
 ցեղէն, մութ կանաչ գունով, ողկուզաձեւ ճերմակ ծաղկօք. հասարակ անմշակ
 գետնի վրայ կու բուսնի. *L. Alliaria*, Փ. *Alliaire*. կոչուի նա եւ *Erysimum*.

1157. Խստորապրաս .

L. Scordoprasum. Ար. Սոււ Գորաթի *سكندر* քչա . բարդեալ անունն ցուցնէ
 բնութիւնը կամ տեսակը, և ինչպէս կ'ըսէ Ամիրտ. « Մէջ Սխտորին և Քուռաթին
 « (Պրաս) է » . և վայրի Պրաս համարի :

1158-59. Խստորուկ կամ Խստորակ .

Քալիենոսի բառից մէջ սա նշանակէ թէ ելեփանդական ըսուած ախտն կամ
 բորոտութիւնը, և թէ անոր դեղ համարուած բոյս մի, *Elephantodon*, որ հիմա
 կոչուի *Dioscorea bulbifera*, վասն զի արմատն ստի կամ կոճղէզ մ'ունի, ուսելի .
 տերեւներն այլ ջերմահալած համարուին : — Խստորուկ կոչուի նա եւ տեսակ
 մի Խաղող :

1160. Խստորուկ վայրի .

Ըստ բառին նշանակութեան է վայրի Սխտոր, Փ. *Ail sauvage*. բայց հին
 Բառգիրք մի այսոր համանիշ գրէ Դաղձի կամ Ծոթթինի ցեղէն բոյս մի, զոր
 ասորի բառով Պէյթար և Ամիրտ . կոչեն Մոշկտամէի կամ Մոշքարա-
 մաշի, որ Պարտիի Դաղձ նշանակէ . և ըստ այսմ շատ հեռի է ի Սխտորէ .
 մենք այլ այդ օտար բառը դրկեմք մեր Ողկուզակ բառին, որ անուշահոտ բոյս
 մի նշանակէ, նոյն կամ նման Դեղուկի՝ զոր յիշած եմք, (*Թ. 583*) :

1161. Խոտուտ .

Ըստ ոմանց Արժուածանկն է, զոր յիշած եմք (*Թիւ 313*) *L. Scolopendium*.
 բայց աւելի հաւանորէն է *Asplenium Trichomanes*, Փ. *Doradille*. Ար. *Լիւս*
էլ-դուու, *لجوج* *لجوج*, զոր Ամիրտ . կոչէ թ. *She* տախալի, այս ինքն Դիւի մօրուք,
 բայց գրէ *Լիւսայ րու-Ղուզուու*. « ի գետնէն զէտ մազ կու ելանէ, և տերեւ ու

» ճուղ չունի.. թէ այն մարդիքն որ հետեւակ քայլեն՝ ի թեւն կապեն՝ չյօգնին » :
— Բժշկարան մ'այլ գրէ. « Աչք որ արին ունենայ.. Նուան կեղեւն այրէ և դիր
» ի վերայ աչացն՝ Խոտու խոտի կաթով » : Այսոր համաձայնի մեր Մէհէրեան
Մշտի Հայրն, բայց ոչ Ամիրտովաթի նկարագրին, զի կ'ըսէ, նման է վայրի Հըն-
դիպէի, երեք կամ չորս ծղօտ ունի, դեղին ծաղկով, կաթնային հիւթով՝ որ
աչից դեղ է. քարքարոտ տեղուանք բուսնի : Այսպէս է և կարնեցւոց ճանչցածն
և ցուցածն :

1162. Խրէն ?

Օրագրի մի մէջ (Ն. Դար, 105) համարուած է դգալանման տերեւներով բոյսն
Cochlearia, ի ցեղէ Խաչաձեւից, որ ծովու և գետոց եզերք կու բուսնի, և սկոյ-
րոտ հիւանդութեան դեղ կ'ըլլայ :

1163. Խրխնտուկ. — Տեա Խոստոռն :

1164. Խրուկ .

Բանջարեղէն մի, որոյ տեսակներն՝ գունոյն համեմատ կոչուին Սեախրոռնկ,
Սպիտակսխրոռնկ. ծանօթ արեւելեան Հայոց : (Մեղու, ԻԲ, 83. Մշակ, ԺԹ, 41) :

1165. Խրփուկ .

Անուամբ մօտ ի Խարու. Թորթի տեսակ մի է . L. Bromus Secalinus, ϕ . Brome
des Seigles.

1166. Խփուկ .

Գիշերը տերեւներն ամփոփուելուն համար՝ այսպէս կոչեն Տրապիզոնի կողմե-
րում՝ քանի մի տեսակ Սրեքնուկ կամ Առուոյտ Մարգաց L. կոչուածն, Tri-
folium Pratense, և Առ. Բժշկական, Tr. Medicum. — Դարձեալ նոյնպէս կո-
չեն Առուոյտի նման բայց տարբեր դեղնածաղիկ բոյս մի, L. Argyrolobium caly-
oicum (Արծաթրթակ) :

1167. Խօզ .

« Չրխնտան է, կ'ըսէ Բժշկարան մի, և այլ ասեն Գորտարուրդ » . կանգնած
չրերու և ճահիճներու վրայ տարածուած Մամուռնէ . զոր մեր պատմիչն Ղազար
Փարպեցի՝ իրային հաւուց ուտելիք ճանաչէ . « Խօզակեր ջրասուզակ հաւք », կօ-
չելով, Փոր, Թանձր, Սագ. — Գայիեհնոսի բառից մէջ գրուած է Ստրկոս բառի
դիմաց՝ Խոզուկ . հաւանօրէն Alga, ϕ . Algae. — վաստակոց գիրքն՝ Աթենի
դարմանելու խրատուց մէջ գրէ (ՄՁԱ) . « Թէ սպիտակ հոզ և կու՝ շաղախ առ-
» նես, և Գետի Խօզ չոր ի ներքս խառնես, և ի տակն ածես, օգտէ » :

1168. * Խօլօրա .

Յորենը հորին մէջ պահելու համար պատուիրէ Վաստակոց գիրքն (ԼԷ) . « Առ » զեստն որ կոչի Ար . Խօլօրա . և Թոշեցո զնա , և տարածեալ մեկնեա ի յա . ո տակն հորոնին , և զցորեանն ի վերայ ան » , եւ այլն : Այս խոտս Լուարեզն է . անս Թ . 927 :

1169. Խօսակ ?

Բժշկական բառագիրք մի գրէ . « Դարինի՛՛ վրացի Խօսակ » : Երկու անուանքն եւս անծանօթ . գուցէ Խոստում կամ Խօսիմ կոչուածն ըլլայ , եթէ ոչ և Դառնի՛՛ն , կամ վրացի կոճակ ?

1170. Խօսողի ձուք .

Այսինքն Աբրորի . Թարգմանութիւն է Ար . բառի , Խօսար ետ-տիք , ըստ Ամիրտ . Խոսար ըլ-տեկ الطيب العذب . « Սպիտակ բոլորկեկ հատիկներ լինայ . և ինքն » ի կեռասին կուտն կու նմանի . . և թէ սպեղանի առնես և դնես ի վերայ » պինտ ուռէցնուն , օգտէ » : — Շնխաղողի կամ Մորմի տեսակ մի կարծուի :

1171. Խօրժի կամ Խօրճի .

Թոշեանն Գալիենոսի բառից մէջ գտնէ զայս , և բացատրէ , Շուշան ժանգա . սագոյն , և Լ . Verbena , որ հիմայ Verbena կոչուի . Փ . Verveine . Տես Ազաւն . արօտ , (Թիւ 80) :

1172. Ծամերին . Երայերին . Երոճրին . Երոճոր . Երոճրոն .

Այսչափ ծրամրակի անուանն Թերեւս շատ հասարակ և մեր երկրի մէջ ամեն կողմ ծանօթ ըլլալը յայտնէ , նմանապէս և համանունութիւնն յԱր . Մահրէր կամ Մայրէր جاذو , և Լ . Satureja , որ յատուկ է կորդիան կոչուած տեսակին . իսկ հասարակն կոչուի Serpyllam , Փ . Serpolet , — Ամիրտ . Ար . բառի ստորագրէ . « Մայրար , որ է Երորիկն . և ինքն երկու ազգ է . մէկն վայրի և մէկն » Աժուոց , և լաւն այն է որ Աժուոց լինի . . օգտէ հով ականջին ցաւուն , և զակ . » ապին ցաւն տանի . . և թէ յաչքն քաշեն՝ զգիլութիւն տանի , և զքամին » յանձնէն հանէ , և զճիճիքն սպանանէ . . Եւ այն որ վայրի է՝ նա՛ սավտա կու » լուծէ . և թէ հոտվտան՝ զերեսին գոյնն պայծառ առնէ , և զքրտինքն կու շո . » րացընէ . . իպտ . ասէ , թէ լաւն այն է որ տերեւն ի Չուֆայի տերեւ նմանի . » և թէ զինքն եփեն գինով և տան Գազանահարին , զՖիսան տանի . . և թէ » ծեծեն և մեղրով խառնեն և զէդ լուու (լօղապ) առնեն և տան այնոր որ » հազ ունի , օգտէ . . Եւ ցեղ մի այլ կու լինի՝ որ սպիտակ կու լինի , և տերեւն » նման Չուֆային . . Ասացել են բժշկապետքն , թէ ինքս զմարդուն միտքն և » զգայութիւն յաւելցընէ » :

Ածուց կոչուած տեսակն կոչուի և Տան Ծորրին, որոյ զոյգ օտար անուն մի գրէ հին Բառգիրքն, Սարարփեոս, Թերեւս Satureja. Իսկ վայրի Ծորրին կոչուի Գայիենոսի բառից մէջ՝ Եպիթիմոն, և Epithymum Onscuta. — Բժշկարան մ'այլ գրէ. « Դատր, վայրի Մաթրին. Գեղիկ օրի ». բայց յետինս ուրիշ տեսակ խոս է. տես Կաքաշարոս: — Դարձեալ ուրիշ մի գրէ. « Հոնի, որ է վայրի » Մաթրինն ». Հոնի ըստ մեզ ուրիշ բոյս նշանակէ, զոր տես ի կարգին:

1173. * Ծալիկա.

Այսպէս կոչեն Արդուինցիք զՅինգ, վրացերէն բառիւ, եթէ վիրք այլ չեն առած ի Հայոց:

1174. Ծամուկ.

Ըստ Բրգնիքցոց է կակալ վայրի կամ Ծափկոտրուկ: Տես զայս և զՊոստ:

1175. Ծառանց պտուղ.

Բժշկարան մի այսպէս կոչէ զԱթիլ մէլիքն Արարաց, զոր տեսանք Հ. անուամբ Թագաւորապատկ (Թ. 748), և որ ուրիշ անուններ այլ ունի. մէկն այլ Սատանի Ծրան, ըստ Ասարայ: Տես և Իշկորնգան (Թ. 869):

1176. Ծառիկ.

Կամարկապցին կ'երեւի զուգել զսա՝ Գղթորի. վասն զի գրէ, « Անժակ Գըխ. » տար՝ Անժակ Ծրանիկ »:

1177. Ծառկանգառ.

Ըստ անուանն անշուշտ վայրի կանգառ մ'է փշոտ, որուն ճիւղերը կեղեւելով կ'ուտեն:

1178. Ծարուր.

Ոչ սովորական իմաստով սնգոյրն, այլ ըստ կամարկապցոյն « Կանաչ Ծարուր (է) Հօրատ, (որ) Կանաչ Թորփայն է, որ է ծաղիկ, կարինոյ սարն լինայ »: Գուցէ ըլլայ և հետեւեալն (Ծարուրիկ): Ծարուր կոչուին և վնասուած Յորենի և Գարոյ հասկերուն ծայրերն:

1179. Ծարուրիկ.

Սալաձորեցիին Երգեւով կ'ըսէ.

« Ծիլն ու Ծիվայն ու Ծարուրիկ, սուբմայ են քաշեր աչերուն ».

որով յայտնի թէ ծաղիկն աշաձեւ է կամ ծարուրի գունով եզերք մ'ունի:

1180. Մափ.

Չայս այլ յիշէ նոյն երգիչն.

« Մափն ու Մափծափն ու Մափկոտրուկ, որք կու բացվին կարգն թնկուկոյն »:

1181. Մափծափ.

Ահա տեսանք Մափին հետ յիշուած ի Սալաձորցոյն, որ դարձեալ կ'ըսէ.

« Մափծափ ծափ տայ, ծիծաղի Լծափն ծըլուն թելերուն »:

1182. Մափկոտրուկ.

Մափ՝ մեր լեզուաւ նշանակէ և հոգեղէն աման, պտուկ, ուստի այս ծաղիկս կ'ըսուի նոյնպէս և Պտուկկոտրուկ, կըրձակոտրիկ, այլ և Հաւկոտր ծաղիկ, եւ այլն. բայց պէտք է գիտնալ և որոշել, ինչպէս և մեր Ամասիացին կ'ըսէ, որ ինքն « Մանր է և խոշոր է. ինքն վայրի լինի և ւծուոց լինի. և այն որ ծաղիկն » մեծ լինի՝ այնոր Լարս կ'ասեն. և ցեղ մի այլ կայ՝ որ ինքն Շաղալիղէն է, Ա. » գարիոն կ'ասեն »: Յիշած ենք զայս ի թիւ 13, ուր՝ ինչպէս և հօս կու յայտնէ՝ մեծ տեսակ ծաղիկն կամ բուն Մափկոտրուկն՝ է Ար. Շաղալիկ կոչուածն. շատ մեծ և գեղեցիկ վարդաձեւ կարմիր բարդ ծաղիկ, որ կարծես՝ եթէ կարելի ըլլար ամանի մէջ մտցընել՝ ածելով պիտի ճաթեցընէր կոտրեր ամանը, և այսոր համար այսպէս կոչուած է. Լ. Pæonia, Փ. Pivoine: Տեսանք եւս որ այսպիսի ծաղիկ մի չէր կըրնար վրիպիլ մեր նախնի ազգայնոց աչքէն, այլ և երեւակայութենէն, զոր և շատ փառաւոր անուամբք կոչեցին, և յիշեցինք Խաչափայտ անուան կարգին, ուր դարձընեմք մեր ընթերցողը: — Իսկ մանր տեսակ ծաղիկս՝ է հասարակօրէն Հարսնուկ կամ Հարսին ծաղիկ ըսուած վայրի պարզ կարմիր ծաղիկն, որ և յոյն անուան թարգմանութեամբ՝ Հողմածաղիկ՝ կոչուի առ մեզ, այլ և Պուտ: Տես այս ետքի անունները:



1183. Մերոց Գաւազան.

Ար. Դոզապ. Տես թ. 455, Գետնատափ անունը:

1184. Մեփիկ.

Այսպէս կ'անուանեն Պոնտացիք իրենց երկրին բնական և ծանօթ գոյնազեղ ծաղիկը ծածկուած ձեփուած ծառը, որոյ համար երբեմն բուսաբանք յոյն տնունով կոչէին Anthodendron, այսինքն Մաղկածառ կամ Մառուածաղիկ. հիմայ կոչեն

Մեփիկ.

Azalea, ուրիշ յոյն բառով, Ἀζαλέος, որ ցամաք նշանակէ, ծառին այնպիսի չոր ու ցամաք տեղերում բուսնելուն համար, որոց շատ վայելուչ զարդ է. Եւրոպացիք այլ խնամեն իրենց պարտիզաց մէջ: Մեր երկրին ամէն կողմին յարմար չէ այս բոյսս, և ոչ Ամիրա. յիշէ և ոչ Պէյթար. բայց Ճորոխի գետահովտին մէջ գտուի, տեսնուած է և կործայից մէջ ի հարաւային Հայս:

1185. ԾՐԸԾՐԸԸԸԸԸ.

Այսպէս կոչեն Պոնտացիք 1. **Silene** կոչուած հասարակ խոտեղէն, որ առանձնակ կամ փունջով հինգթերթեան ծաղիկ ունի (թերթերն այլ երկու շերթունք բաժնուած), պտուղն այլ զլիսիվայր շիւածեւ, ծայրն 3-6 ակուպի ձեւով: Շատ տեսակներ ունի, որոց ոմանք պարտիզաց զարդի յարմարին, ոմանք ուտելի են, ոմանք դեղ կ'ըլլան: Այլուայլ տեսակք ճանչցուած և յիշուած են մեր կողմերում. ինչպէս **Sil. Noctiflora** (գիշերափթիթ) ի Թորթում. — **S. Viscosa**, որ փսթեցուցիչ է, ի Թորթում, Բարբերդ, եւ այլն. — **S. Compacta**, և **Squamigera** ի Մարաշ. — **S. Humilis** ի Ծանախ. Քէօփրիւ պաշի. — **S. Leyserooides** ի Նախճաւան. — **S. Ampullata** ի Խարբերդ. — **S. Otites** ի Բարբերդ. — **S. Olympica**, ի լեբինս Պինկէօյի և Փալանտօքէնի. — **S. Dianthoides**, ի կարին, Բարբերդ, Ծանախ, Սիւնիք. — **S. Canescens Cephalanta** ի կարին. — **S. Aucheriana**, ի վան. — **S. Sisiana** ի Սիսիան Սիւնեաց. — **S. Arguta Armena**, ի կարին. և ուրիշ 30 տեսակք այլ կարնոյ, Բարբերդի, Պինկէօյի, Պարսկահայոց և կապադովկոյ կողմերում:



Ծիթրայ.

1186. Ծիթրայ.

Անունը յիշէ նոր բառահաւաք մի, այլ ոչ որպիսութիւնը:

1187. Ծիթրայ.

Գալիենոսի բառից մէջ գրուած է, « Պիթէս՝ Ծիթրային ». որ հաւանօրէն է β Πυθίων, և **Phyteuma**, **Φ. Raiponce**. Ար. ըստ այսմ, Լոջ, բայց կարծուի սխալմամբ գրուած ի Պէյթարայ՝ Գոչրունս, ըստ որում և Ամիրա. գրէ, « Ղոչրունայ որ է վայրի Ազարիոնն ». սակայն հիմայ բուսարանք զանգակածեւ ծաղիկ մի համարին զսա. **Campanula persicifolia**, ոմանք ալ կանչխոտ մի, **Reseda Phyteuma**.

1188. Ծիլ և Ծիլվա.

Ծանօթք Սալսանորեցոյն, որ հաւնած է անոնց ծարրեալ աչից.
« Միլն ու Ծիլայն ու Ծարուրիկն՝ սուրմայ են քաչեր աչքերուն »:

1189. Ծիլամբուռ.

Բանջարեղէն մի է, ծանօթ յարեւելեան Հայս:

1190. Ծիճափ կամ Ծափծիլ.

Նմանանուն բուսոց կամ ծաղկանց հետ երգուած ի Սալաձորեցւոյն

« Ծիճափն ծաղկեր ծիրանի, խիստ գեղեցիկ ու վախճախ սիրուն » . կամ
« Ծիճափն սպիտակ է հազեր, դեղին քաշեր վերայ փորուն » :

1191. Ծիծակ .

Կանաչ Պղպեղն է, ըստ Բախտամենի (եր. 240) :

1192. Ծիծեռնադեղ. Ծիծեռնիկի դեղ. Ծիծռան խոտ. Ծիծեռնիկի խոտ.
Ծիծռան ճաղիկ .

Յունարէնէ առնուած անուն է, որպէս և Լ. Chelidonium, ֆ. Chélidoine, և Ար. Խալխառնիռն . Տես ինչ որ ըսինք Դեղին կոճ անուան բացատրութեամբ (թ. 579) :

1193. Ծիծռան բոյն .

Կաթով տրորելով գողարգելի դեղ գրուի . և վերայգրելոյն ու ներքոյ գրելոյն պէս բոյս երեւի :

1194. Ծիծռան կօշիկ .

Վերինէն տարբեր բոյս կ'երեւի, ինչպէս ըլլալն՝ ինձ անյայտ . արուեստագրանական գրուած մի կ'ըսէ . « զԾիծռան կօշիկն քաղէ, զժաղիկն չորացո և կա-
» թամբ թրջէ, և կռիզով գրէ » :

1195. Ծիմել. Ծիմիլ .

Հին բառագիրք կամ Գալիենոսի բառք՝ որ զուգած են զայս Յ. Վլիտո-
նի, Լ. Blitum, ֆ. Blite կամ Bléte. ինչպէս և Մխիթար Հերացի գրէ . վրա-
ցերէն այլ Յիմիլ կ'ըսեն : Ծանօթ բանջար է, ուտելի, նման՝ և ըստ ոմանց նոյն
ընդ Շովինի . հին Բժշկարան մեր օտար անուան հետ զուգէ . « Բարբազեօ՝
» Ծիմիլ » . տես ինչ որ ըսուած է Բարբիւզակ անուամբ (թ. 315), ըստ Ար. ۳۳۷ :
բայց սխալ կարգացուած է, պիտի ըլլար Եարպուզ ۳۳۷ կամ Ճարպուզ ۳۳۷
գոր Պէյթար նոյնանիլ գրէ Պախար ըլ-Երանանիէ անուան, ۳۳۷ کاج، որով
գրէ և Ամիրտ . և կ'ըսէ, « Կանանչ և կարմիր այլ կու լինի որձան . և ի
» յԱմասիա՝ այս խոտի թ . Փրփրեմ օնաշի (վայրենի) կ'ասեն . և լաւն այն է
» որ դեռ հունտ չէ բռնել, և հունտն սեւ և մանր և պսպղուն լինի... Թէ
» գիր քամուքսն վարդի ձիթով խառնես և օժես, օգտէ այն զխսացաւութեան որ

» ի արեգական տաքութենէ լինի, և տաք ուռէցնին որ ի յականջն լինի՝ օգտէ », և ւայլն — Ամիրտուվաթի յիշած կարմիր տեսակն, Bl. և յատուկ զանազաննալն Bl. Rab. subintegrum. Rubrum յիշուած է և ի Հայս, նոյնպէս ուրիշ տեսակ մ'այլ Bl. Virgatum թէ ի Թ-Հ. և թէ ի Ռ-Հ:

1196. Ծինկարի.

Այսպէս կոչուի ի կողմանս Պոնտոսի կազմըխի վայրի ծառն, կամ անոր մէկ տեսակն. 1. Carpinus Duiniensis, Փ. Charme, զոր տեղաբնիկ տեսած և նշանակած են ի Պոնտոս, ի Կովկաս, ի Փոքր և Մեծ Հայս:

1197. Ծիպան. Ծիպանուկ.

Դեղին բաժակաձեւ կամ չրթնաձեւ ծաղկով խոտ մի է, երկայն կոթով տերեւներ ունի Որթոյ նման և այլ աւելի ճղած երեք մատի, Յինկի նման. զոր ճմլելով՝ մարմնոյ վրայ կու դնեն՝ երբ պէտք ըլլայ խարան բանուլ:

1198. Ծիրան.

Յատուկ Հայկական պտուղ, և այսպէս կոչուած ի բուստարանութեան, Armeniaca կամ Prunus Armeniaca (Հայկական Սալոր), և յայտ է ի պատմութենէ որ Հռովմայեցիք երբ մտան ի Հայաստան՝ Արշակունի Տիգրանայ և յաջորդացն հետ կռուելու, իրենց լաւագոյն աւար այս պտուղը մտուցին յԵրոպա, ոչ միայն համովն այլ և հատովն զմալած, ինչպէս կ'իմացընէ Պլինիոս (1). անունն սլլանթառամ պաւ հեցին, Փ. Abricot, Abricotier. Ի. Armellino, Albicocca. Ռ. Абрикосъ Արարացիք այլ իրենց ծանօթ պտղոյ անուամբ (ինչպէս Լատինք՝ Սալորոյ) Հայկական Խնձոր կոչեցին, Թուֆահ ըլ-Էրևանի, (ինչպէս հիմայ այլ Նապոլիի կողմերում՝ Ոսկի խնձոր կոչեն), բայց առանձին անուամբ այլ կոչեն Միշիշ, شمشاد, որով ստորագրէ և Ամիրտ. յիշելով ուրիշ անուններն այլ. « Պ. Զարտաշու, և Հ. Խարիկ » ասեն, և Ծիրան ասեն. և ինքն շատ ցեղ լինի, լաւն այն է որ խոշոր և դեղին » լինի. թէ սւտեն՝ օգտէ պոխարին (զոլոյիք հարբբիս). և թէ զտերեւն եփեն » և խաղաչ առնեն՝ օգտէ խնախին (փողացաւ), և իր կըտին եղն օգտէ ականջին » գոռալուն, և զորդն այլ հանէ յականջն... և իր խէժն ղհերբունն տանի, և լաւն » այն է որ շոր թրջն և ապա ուտեն: Ասէ Պտին. թէ լաւն այն է որ քաղցր լինի, » և Պ. դայսի կ'ասէ, և Հո. Արմինիադին (Armeniicum), և լաւն և աղէկն ի » Հայոց երկրին լինի: Ասէ Դո (Դեոսկորիտ) թէ քան զԴեղձն՝ ամենայն դիմաքաղէկ » է, և ստամոքին այլ լաւ է. և թէ զչորն յորժամ ծամեն և թրջեն և զլուրն » խմեն՝ զծարաւն կտրէ, և ստամոքսն հովցընէ. և սուր ջերմերուն օգտէ »: — Հին Բժշկր. այլ Միշիշ անուամբ յիշէ զԾիրան, և հովութեանն ու գիճութեան պատճառաւ կ'ըսէ. « Ընծայէ ի մարդ դէշ ցաւեր հով և Թանձր, որպէս Դեղձն՝ ի » յերական և ի լերդն. և եր օրեր անցնի՝ ջերմնատ առնէ. և կայ յինք զորկու.

1. Պլին. Բնախոսութիւն. ԺԵ, ԺԲ. Ab extrema gente Armeniaca, quæ sola et odore commendatur,

» Թիւն. և յետ ուտելոյն զինք՝ մտադառնէ ծամէ, կամ Սնիսոն, կամ զԲան ? Հետ
» իրաց, և ապա գինի խմէ՝ զոր շամշով և մեղրով շինեն. և իր գործն այս է, որ
» խիստ ջերմային ախտեր ընծայէ » :

Ի հետոց մինչև հիմայ Միրանն հայկական՝ իր յարգը պահած է, մանաւանդ երկրին հարաւակողմանը, ուր աւելի մեծ և անոյշ կ'ըլլայ՝ քան ի հիւսիսակողման, ուր Թուի Թէ մեր առակախօս մեծ Վարդապետին քմաց դպած էր. վասն զի Սալորի և Դամոնի հետ ամբաստանութեան կ'ըսէ (ժե.) Թէ ուտողին ակուայն կ'առնուն (զատամունս հարուն), և որովայնի վնասիչ են. Թէ պէտ և կամու այսպէս կ'ընեմք կ'ըսէին պտուղքն՝ որ չափէն աւելի շուտեն : — Յայտնի է որ Միրանն Թէ հում, Թէ եփած և Թէ չիր (չոր) ուտուի, և Թէ չաքարով սնած : — Վերոյիչեալ անուններէն զատ կոշուի առ մեզ և Շարուկ և Պարկուկ. այս ետքի անունս լուի և առ Արարացիս և առ արեւմտեայ գրիչս, ինչպէս տեսնուի ի կարգին.

1199. Միրանի ծաղիկ.

Բժշկը. մի յիշէ. « Յեղ մի այլ ծաղիկ կայ՝ որ իւր անունն Միրանի ծաղիկ ասեն, » հան զինքն, և տուր մեղրով ուտել՝ կապած մարդուն » :

1200. Միֆին.

Թուի մի է յիշուած, բայց որպէսն ինձ յայտնի չէ, գուցէ ըլլայ շփոխին :

1201. Մլագարի.

Ողջեանն յիշէ ի բառգիրքն և վկայութիւն բերէ Թարգմանեալ աշխարհագրութենէ. « Պարեջուրն ի Մլագարայ և ի Բաղեղէ եփի ». և զուգանիչ գրէ անծանօթ Լ. բառ մի Byné ?

1202. Մլեր.

Բժշկարան մի գրէ. « Փռակեանի Օթխոր, որ է Մլերն » : Ամիրա. բառազրոյց մէջ « գրէ Ֆռակեան-իսթիր. ինքն իխթիրին ծաղիկն է. լուսն այն է որ անուշահոտ լինի... » (բայց) Թէ շատ հոտովյան՝ զզուսին ծանր առնէ և քուն կու բերէ, և զարիւնն թանձր » առնէ » : Իխթիր, Իրթիր, Օխոր կամ Արթոր. ամենն այլ նոյն Ար. բառն է, որ նշանակէ զվաղակեանի :

1203. Մծանի.

Հայ-Աղուանից կողման վայրի ծառոց հետ յիշուած է :

1204. Մծմոր.

Եղնալեզուն ճանաչուի ռամկօրէն այսու անուամբ, Թէ պէտճումանք համարին կապոյտ Տերեփուկը, Լ. Centaurea Cyanus, Փ. Bluet կամ Bleuet. Ռ. Виспалец Բժշկարան մի գրէ. « Որ աչքն վերաւորեալ է ի մաղասոյ և արիւն ուննայ կամ այս » տոյց, զՄծմորն եփէ, լեւէ, և արկ ի վերայ աչիցն » : Թ.՝ Փէյդաւկեր Կիլիկի (Մարգարէի ծաղիկ) :

1305. ԾՅՈՒԿ, որ և ԾՅՈՒՄԸ.

Կարճագոյն ծաղիկ մի է, որ անոյշ հիւթ ունի, զոր ծծելուն համար՝ այս անունն առած է. ճանչցուած է ի Խոտուջուր: (Յիշուած և ի Նոր Դար, է 103). Ազգական է Եղեսպակի, որ և Մեղրթեր. տես զայս:

1306. ԾԼՈՒ.

Փայլեկնու բառից մէջ այսոր զուգանիչն է Դրեմիսին. որոյ նոյնանայն կայ Drymys կամ Drymis բոյս մի, բայց նորագիւտ աշխարհաց Ամերիկոյ և Աւստրալիոյ. սակայն կայ և Drymeia բոյս, Carex կոչուած Պրտուեղինաց տեսակներէն:

1307. ԾՊՈՆ.

Յատուկ բոյս մի թուի ի Խոտուջուր, հասարակօրէն Որթոյ ծիլերուն պէս պլլուող կամ Խիղթ կոչուած մասեր այլ նշանակէ:

1308. ԾՂՍՈՒԿ.

Յայտնի է որ նոր բուսած խոտից և նմանեաց ծիլերն և բողբոջն Ծղոս կոչուի. բայց սա յատուկ տեսակ մի բոյս է. ստուգելի:

1309. ԾՄԱԽՈՒՍ.

Յարմար անուն յիշուած ի բառհաւաքէ. փափագելի է բացատրութիւնն:

ԾՄԻԼ. — Տես Երևան:

1310. ԾՆԷՐԵԿ.

Ջոր թերեւս աւելի իմաստասիրարար Երևելքեկ գրի Միս. Հերացի (Ջերմ, 18). ըստ ոմանց՝ ճղերուն կակղութեան և տկարութեան համար այսպէս կոչուած, ըստ որում և թ. Գոռ գօծմագ, իբր թէ վրան թռչուն մի չի կրնար կենալ: Յ. բառի կոչուի Լ. Asparagus, Փ. Asperge. Ռ. Спаржа զոր Պէյթար՝ Ասֆարաձ գրէ բայց ուրիշ Յ. անուամբ ստորագրէ. զնոյն յիշէ և Ամիրտ. « Որ է Հայիոնն. ինքն » երեք ցեղ է, Ածվոց և Վայրի լինի, և լաւն այն է որ ածվոց և մատղաշ լինի... » զզուկն շուրջ ածող է. և թէ զտակն եփեն և մագմատայ այնեն՝ զակոային » զցաւն տանի. և թէ զտակն սպեղանի առնեն՝ զմոնն ի յերեսացն տանի... » և թէ եփես և զլուրն շունն խմէ՝ յայն պահն մեանի »: — Վաստակոց գիրքն երկար խօսի (ԾԿԷ) « Վասն Հիլիոնի՝ որ է Ծնեքեկն . . . Ջպարարտ գետինդ առ խորճայ և զարեգակնակոխն. . . և զսիկն և զանասառախիտ վայրոն: Եւ իւր » ցանկն այսպէս. . . ի մարտին կամ յապրիլին՝ փոսեր արա խորու երեք մատն, » և յամէն փոս ի Հիլիոնին հընաէն եօթն հունտ, և ծածկես նոյն հողովն...

» յետ երկու տարւոյն ի գարնանային ժամն փորեա ղտական, և սակաւ մի աղբ
 » ան՝ որ հերիք լինի. և ի յերրորդ տարին կանուխ յառաջ որ ծլէ՝ փորեա և
 » քաղհան արա ղտական. աղբ մի ընուր. տեսանես յետ ամսոյ միոյ՝ որ ծլէ և
 » ուրախացուցանէ զքեզ », եւ այլն: Յետ այլ խրատուց գայ զարմանալիքն. « Եւ
 » օգտութիւն մի կայ ի սա, զոր արժան համարեցաք գրել, թէ և զժուարաւ
 » հաւատայք զարմանալի բանիս, զի թէ շէաք փորձիւ հաստատեալ՝ ոչ էաք
 » ընդ գրով արկեալ: Առ խոյի եղլիւրք մեծ և անարատ, և արա յիւրեան փոքր
 » ծակ մի. թէ զինքն՝ որպէս նշան տուաք՝ դատարկ (թողու) առանց հընտի,
 » նա յիւրմէ բնութեամբ Հիլիոն ծլէ՝ անհնար » (անվրէպ): Աւելի հաւատալի
 բան մի զարմանալով գրէ ուրիշ մի. « Լսեցաք ի բազում մարդկաց, որ զայս
 » տակն հանեն և լուանան, և մանտր մանտրեն և ի գարին խառնեն. յամէն
 » գիշեր երեք արամ մինչև ի հինգ գիշերն ձիւն տան, սըրահայն շարքնէ և
 » չքէ. շատ մարդիկ փորձած է »: — Այս տեսեսութեան մէջ պիտանի և
 ինքնակերպ ուտելի բոյս՝ շատ տեսակներ ունի, որոցմէ տեսեր և նշանակեր են
 բնախօսք ի Հայս. As. Trichopyllus (կարբտած տերեւով), — As. Officinalis ի
 գետահովտի Ճորոխի, ի Բաբերդ, կեսարիա. — As. Maritimus, ի Հար. կով-
 կաս, որոյ մէկ զանազանեալն, As. Breslerianus, ի Նախնաւան և Խոյ. — As.
 Filifolius, Եփրատայ եզերքում և ի Միջագետս. — As. Verticillatus ի Քարապաղ
 կամ Սիւնիք. իսկ Վայրենի տեսակն իբրև հասարակ խոտ կ'անի Հայաղուանից
 դաշտերում:

1211. Մնծող.

Թուփ մի, բայց տեսակն ինձ անծանօթ:

1212. Մնծղար.

Ըստ Ասարայ՝ է Թալղ. որ եթէ Տալին է, ապա Գետնի աստղ է. տես զայս, Բ. 489:

1213. Մնկածաղիկ.

Այսպէս կոչեն Պոնտայիք (Թարգմանորէն Քարկոտրուկ) L. Saxifraga, փ.
 Saxifrage կոչուած ծաղկանց տեսակ մի. Sax. Cymbalaria, որ գտուի ի Թ-Հ.
 այլ, իսկ ի Ռ-Հ. Sax. Muscoides տեսակն. — S. Sibirica ի Պինկէօլ, Մանսիս.
 — S. Rotundifolia ի Սպեր. Ճիմիլ. — S. Huertiana, ի Մուշ, ի Պոնտոս, եւ
 այլն. — Բազմաթիւ և իրարու աննման տեսակներ ունի Մնկածաղիկն, որ պարզ
 խոտեղէն մ'է, մանր և ընդհանրապէս գեղնագոյն ծաղկներով, կան այլ ճերմակ
 և վարդագոյն, բայց ի գործածութեան շատ պիտանի չեն:

1214. Մոծոր. Մոծրին. — Տես Երարին:

1215. Մոն ?

Բժշկարան մի ոտեպ յիշէ զՄոն Բժշկաց, Ար. այլ Թայն ըլ-հօքիտեայ կամ
 Թայն ըլ-հէօքիտէն, գրուած է եւս Թայ ըլ-հէօքիտէն. բայց բոյս թէ այլ ինչ ըլ-
 լայն՝ ինձ անծանօթ է:

1216. Ծովու ժանկ.

Ար. Մուրուսի կամ Մըրուսի, *عرجل*. Բժշկարան մի գրէ, « Մուլուս, որ է « Ծովուն ժանկն. և ոմանք առեն՝ թէ ի Մորենի կու նմանի, ծառ-մն է, բայց » փուշ չունի. տերեւն նման է Ձիթենոյ տերեւին. և ի ծավեզերքն կու բուսնի »: Ըստ յայն բժշկապետաց՝ է *Δλιμος* կոչած ծովային բոյսն. *L. Atriplex halimus*.

1217. Ծովու խոտ. — Տես Չարեհ:

1218. Ծոր.

Ար կոչուի և *Չրիչկ*. կծոխուր կամ կոծոխուր. *L. Φ. Berberis*, զոր գիտէ և Ամիրսո. « Ծոր, որ է Պարսպարիսն, որ է Ամիրսպարիսն (*سوسان*), որ է *Չրիչքն*. » Ինքն սեւ և կարմիր կու լինի, և լաւն այն է որ կարմիր լինի և նոր. Թ. » Ղարամուսի? և խարանն տուզրուդի ասէ. և լաւն այն է որ հասուն լինի և նոր » և գէր լինի և կարմիր՝ որ ի սեւութիւն քլտէ »: Վայրենի թթուաշ և ջրոտ պտղոց ցեղէն ըլլալն յայտնի է, և այլեւայլ տեսակներ ունենալն. յորոց *B. Densiflora* (Թանձրածաղիկ) կոչուածն տեսնուած է մեր Արարատ լեռանց ստորոտում. — *B. Cratægina* տեսակն ի Թ-Հ. — Հասարակ տեսակն՝ *B. Vulgaris*, ի կովկաս և յԱրարատական:

1219. Ծորի տակ.

Աւանձին անուամբ յիշուի, ըստ Պէյթարայ՝ Աարդիս կամ Այարդիս? յոյն բառով, զոր « ի Դամասկոս Թօրի Ըռեհ այլ ասեն », ըստ Բժշկարանաց մերոց:

1220. Ծոր Հնդկցի.

Այսինքն Հնդկաստանի, յիշուած է ի հին Բժշկարանի, բայց ոչ բացատրուած:

1221. Ծորենի.

Հասարակ Ծորէն տարբեր ծառ մ'է, զոր հին Բառգիրք յիշեն յայն Աքինոս *Σχίνος*, նոյնանիշ բառիւ, որպէս կոչի և *L. Schinus*, *Φ. Mollo*, Բեւեկենաց կամ Հերձի ծառոց ցեղէն: Այս *Φ.* անուամբ հիմայ ճանչցուի Հասարակօրէն Ամերիկոյ Տանձ կոչուածն:

1222. Ծորենոյ տակ.

Այս այլ տարբեր բան նշանակէ, այսինքն Չեռատարոյ տակ, որ է Երեւանակ, տես զայս: — Կամարկապցին յիշէ և Ծորենտակի պտուղ:

1223. Ծործորակ ածուի.

Ըստ Շէհրիմանի է Ծամդիտակն, զոր տես:

1234. Մուածեղ?

Աշտնակած է բառհաւար մի:

1235. Մուաղ. Մուաղենի.

Պոնտացեաց ծանօթ ծառ և պտուղ, զոր Թ. կոչեն Գարա եւիչ. Լ. Prunus Laurocerasus, Փ. Laurier-Cerise. վայրենի պտաղատու ծառոց կարգէն է, մանր սեւեւուկ պտղով, ախորժիւի, մանաւանդ տղայոց, զոր և կու շորցընեն, և Չաւ չարակ կամ վառիչ կոչեն: — Փ. կոչուի եւս Laurier Amandier, զի նշային համ կ'ունենայ կուտն՝ երբ խառնուի ի կաթն:

1236. Մուծ կամ Մուծք. — Տես Մեղրածոստ և Թորթիկ:

1237. Մուռգմուկ.

Ի Խոտուչուր և ի Մուչ ծանօթ բանջարեղէն մի, տեսակ Գմուկի, զոր տես, Թ. 476:

1238. Մուռ Յախ. — Տես Գրքոր, Թ. 539:

1239. Մպիխի. Մպիխի. Մոպիխի.

Վայրենի ծառ կամ Թուփ, ծառնօթ ի Տարօն և մերձաւոր կողմեր, որոյ կեղեւներէն սեւակարմիր ներկ մի հանեն, մորթ և կաթի աիկեր ներկելու:

1230. Մտապաշար. Մտիպաշար.

Բանջարեղէն կամ աղցան, խիտ երկայն և զետնատարած սղոցաձեւ տերեւներով. ըստ Շէհրիմանի Լ. Bursa Pastoris (Հովուի քսակ) ըսուածն է:



Մռաղենի.

1231. Մտի այք.

Յիշուած է յԱզրիւր օրագրի (Չ, 333) առանց բացատրութեան:

1232. Մտի Լեզու. — Տես Ճնճղիպեզու:

1233. Ծաղիկնձոր կամ Ծուի-խնձոր.

Հասարակորէն Սին կոչուած պտուղն է, Լ. Sorbus.

1234. Ծուի-ճինգի.

Քայլխոտն է ըստ Արցախեցւոց, Լ. Ouscuta.

1235. Ծուի-ճանձ. — Տեսակ մի Տանձի:

1236. Ծրդի. Ծրդենի. Ծրդենիկ.

Վայրի թուփ է փոքրիկ, որոյ՝ Բառզիրը մի հոմանիչ գրէ Արտղձի և Փիձի. տես զյետինս, այլ և Արտիճ, Արտուն (Թ. 237-Ք). Հաւանօրէն տարբեր գրով կամ ձայնով գրուած է, այլ նոյն է ընդ Յրդի, զոր տես ի կարգին:

1237. Կազ. Կազի ճաղիկ.

Այսպէս կ'անուանեն կարնոյ կողմերում Լ. Veronica, Փ. Véronique կոչուած ծանօթ ծաղիկը, ի պատիւ նոյնանուն Սրբուհւոյն. շատ տեսակներ ունի, յորոց յիտին ի կարին Եռատերեւուկ կոչուածն, Լ. V. Triphyllus և Փ. V. Digitée. — յատուկ Հայկական՝ V. Armena կոչուածն ի Խէչքտաղ. — V. Pedicularis ի Պինկէօլ և ուրիշ կողմեր. — V. Microcarpa ի Նախճաւան, Պայէղիտ. — V. Multifida tenuifolia, ի Խարբերդ, Կեսարիա և ուրիշ լեանոտ կողմերում. — V. Orientalis ի Ռ-Հ. — V. Tenuifolia (Նորատերեւ.) ի Բարբերդ, Ամիդ, եւ այլն. — V. Kurdica ի Պինկէօլ, Արտահան, Արապատական. — V. Cimerea ի Մեծ և Փ. Հայս և ի Կիլիկիա. — V. Chamædrys ի Խ-Հ. — V. Teucrium, ի կարին, Բարբերդ, Թարթուս. — V. Austriaca ի Հիւս. Հայս. — V. Telephifolia, Թանթանիկի տերեւով զոր Դուանըֆոր նախ տեսաւ ի Մասիս և գովէ գեղեցկութիւնը. մէկ զանազանութիւնն այլ (Pilosula) նշանակուած է ի կարին, Պորթում, Լիվանէ. — V. Gentianoides, ի Ռ. և Թ-Հ. — V. Serpyllifolia ի Ռ-Հ. — V. Longifolia ի Հար. Հայս, Մուշ. — V. Verna, ի Մեծ և Փ. Հայս. — V. Viscosa ի Հար. Հայս, Մէրաին. — V. Aconifolia, ի Ծանախ, Միջագետք. — V. Hispidula, ի կարին, յԱրագած. — V. Amæna, ի Շամախի, Պազու, Վրահայք, — V. Biloba և V. Camphylopoda ի Ռ-Հ. և Թ-Հ. — V. Filiformis ի Սպեր, Ճիմիլ Լ. — V. Cimbaliarioides, ի Սնճար Լ., եւ այլն: — Անշուշտ ուրիշ տեսակներ ալ կան, և ասոնց մեծագոյն մտան գտուին և ի Կիլիկիա:

1238. Կազմոր.

Ըստ Ստ. Թոշքեան՝ « Թուփ է ցած, տերեւս ունի Մրտոյ նմանս, յարմար ի ցանկս և ի կապիւլ զորթս ». Լ. Acaos կոչէ, անսովոր բառ մի. այլ լաւ եւս է Ruscus, Փ. Fragon. — Բժշկարանաց և Քալիենոսի բառից մէջ տարբեր նշանակութիւն ունի նոյնանունն կամ նմանանունն:

1239. կազմորէ. կազմուրէ. կազմորննի.

Հին Բժշկարանն գրէ, « Նարդ, որ է կազմուրէ »՝ և գարձեալ « Խստիչ, կազ-
» մարե, կամ Հոսով Մեֆոչ կամ Ասարոն » : Բառգիրք մ'այլ փոխանակ Ասարոնի
գրէ Ակարոն՝ Վայրի Նարդին, կազմորի տակ », Այս ետքի անունս Գայիենոսի
բառից մէջ զուգուած է Մագմագիկի : — Ամեն անուանքն կամ շատն մի և նոյն
բոյսը նշանակեն, զոր բացատրեմք Մրուանտակ անուամբ :

1240. կամնախնծոր.

Տեսակ մի խնծորի. *Փ. Pomme d'adot.*

1241. կամնապուր.

Երիցուկի կամ Գետնախնծոր ծաղկան բազմաթիւ անուանց մէկն է, ըստ
Ղրիմեցւոց :

1241. կամնըանջար.

Այսպէս կոչեն Շիրակացիք զԱբլորուկն (*Բ. 265*) :

1243. կամնբել.

Ըստ Ռոչքեանի՝ է « Որպէս Ծնեբել, խոտ փշուտ անկիւնաւոր, որոյ ծիղն ի
» ներքս է ունայն. ի բեկանելն շատ կաթն հոսէ » : — Բժշկարան մ'այլ յիշէ.
« Ա՛ռ զկաթնբել խոտն, և նորին կաթամբ օժ զխոցն » : — Շատ ցեղ կաթնաւոր
խոտոց մէջ սա հաւանօրէն է Լ. Sonchus, *Փ. Laitron*. Թէպէտ այս Լ. անուամբ
քանի մի տեսակ բոյսը նշանակուին, զորս յիշէ Ամիրտ. Հարկոչոռս անուան
տակ, (զոր Հերֆոչոռս կարդայ Թարգմանիչն Պէյթարայ՝ *سجده*) . « Որ է
» Պախար ըլ-Խանուտիա. և ինքն ի Հնտուպէին ցեղերուն է, որ է վայրի. և ոմանք
» ասեն թէ Շիխարին (Իլու Խիար) ցեղերուն է. և Շարիֆն (1) ասէ թէ Ղրսու-
» նան է » (Երինճնակ), եւ այլն :

1244. կամնխոտ.

Ըստ նշանակութեանն է *Յ. և Լ. Polygala*, զոր Պէյթար գրէ *پولجا*, յորմէ
և Ամիրտ. « Պոչոչդային, որ է Պոչոչան. այս դեղիս *Բ. Սոտ* օրի ասեն. և տե-
» բեն նման է Ուբան տերեւին. և մէկ թիղ երկայնութիւն ունի. և ով ուտէ կաթն
» կու շատնայ » : — կամնաւոր խոտոց վրայօք՝ տես ինչ որ ըսուած է Ավիար-
փիոն (*Բ. 267*) : — Ալլեւայլ տեսակք կաթնխոտի նշանակուած են ի Հայս. որ-

1. Թուր Շերէֆ էտաին իպն էլ-Ռաւապի գիտնական բժիշկն, որ Ախալի որդւոյն գրոց լաւ
ժանօթութիւններ գրած է :

պէս, Արեւիկեանն P. Anatolica՝ վանայ և Բաղիշու կողմերում. — P. Alpina, ի Խարբերդ. — P. Floribunda (Մաղկաւէտ) ի Բարբերդ, Կարին. — P. Major, ի Մանախ. — P. Pruinosa, ի Մանախ, Մարաշ. — P. Supina, յԱրեւմտ. Հայս. — P. Hohenackeriana, ի Նախնաւան, Գանձակ. — P. Paeoifolia, ի կողմանս Կե. սարիոյ. — P. Papilionacea, ի Կարին, վան, Բաղէշ, եւ այլն. — P. Vulgaris, ի Գարապաղ. — P. Hybrida, ի Կոտայք, վարաժնունիք: — Նոյն երեւի և

1245. Կաթնծաղիկ.

Որ ի Տարօնոյ կողմանս լսուի, և վկայուի կոտրած ատեն կաթ հանելը:

1246. Կաթնկոռնի.

Ըստ Արցախեցոց է Գաղտիկուր (Թ. 402) կամ Ջղախոտ բոյսն:

1247. Կաթնուկ.

« Կաթնուկ ծաղիկն է դեղին, դունն է գլուխ դեղիններուն », ըստ Սալաձուրեցւոյն, բայց հասարակ վայրի խոտ է. և ըստ ոմանց նոյն է և Խլկաթնուկ (տես Թ. 868, և Կանչող). և դարձեալ նոյն համարուի և Խեժուկ կոչուածն, ըստ Թ. Կրնայիկ ?

1248. Կաթնտերեւի.

Մեծ Թուփ մի է, որոյ կաթոտ տերեւներն այժուց արտօժելի ուտելիք են. Բիծխի կամ Տխկի կոչուած ծառոց ցեղէն է, յատկապէս Լ. Acer Platanoides, Փ. Plane, (Սօսիակերոյ Տխկի) տեսակն, որ Գարապաղի (Սիւնեաց) մէջ ճանչցուած է, որպէս և ի Պոնտոս, ուր Թ. Ագ աղած կոչեն:

1249. Կաթնփուղրի.

Ըստ Պոնտացոց՝ Փոռոյն ուրիշ կոչմերում Տարակ կամ Խոճկորիճ կոչուածն է, (տես զատոնք). իսկ Կաթնփուղրին ուրիշ ազգ է, բայց ոչ հեռաւոր, և անունն այլ համեմատ է Լ. անուան Mulgedium, Փ. Mulsède, որ կըթել նշանակէ, բուսոյն կաթոտ ըլլալուն համար. և է խոտեղէն մի կակուղ երկայն (երկու երեք թիղ) ճշգրտով նոյնպէս երկայն կաթով եռանկիւնածեւ և եղերքն կեակեռ տերեւներով. ծայրերնին փունջ մի մանր բաժակածեւ բարակամաշկ ծաղկանց, քիչ մի կարմրաներմակ: Այլեւայլ տեսակներէն նշանակուած են M. Macrophyllum (երկայնածիլ) ի Ռ-Հ. Տփղիսու մօտերում և Սարիալ լեռներում. — M. Albanum, ի Կարին, Մանախ, Թէքտաղ, Ճիմիլ և. — M. Prenanthoides, Տփղիսու և Կովկաս լեռներում. — M. Cacaliæfolium, ի Պոնտոս, ի Վիրս, Քութայխ. — M. Burgœi, և M. Dubium, Տրապիզոնի մօտերում. — M. Salicifolium, ի կողմանս Տայոց:

1350. կաժ.

կոշուի և կասկաժ. Ար. Սատեհ ج Լա. որով անուամբ ստորագրէ Աժիրաւ.

« Սատեհ, որ է Սատեհ-Հնդին, ի Հնդկաց կու գայ. անուշահոտ. և լաւն այն է
 » որ հոտն սուր լինի. նուրբ այնող է, և շթողու որ մազն ի վայր գայ, և գրեքնին
 » համե անուշցընէ, և քուն կու բերէ:.. Ատէ Պա. թէ... այն որ Հնդիկ է՝ Մա-
 » հիստան կու ասեն. և Մալալարան այլ կու ասեն, և Մալալարան այլ կու ասեն.
 » (որ է Լ. անունն Malathrom). ինքն տերեւ է, նման է Ընկզի տերեւին, և ի
 » ջրի յերեսն կու լինի. և ինքն տակ ունի որպէս Ոտրան՝ որ ի ջուրն կու բուսի.
 » և լաւն այն է որ թաժայ լինի. և մէկ երեսն ի գեղնութիւն քլաւ. և այն որ հոտն
 » ուժով է և գոյնն սեւ է՝ որպէս Ղարանֆիլին գունոջն է. որ թէ ծեծես և ի
 » վերայ հալաւին ցանես՝ գոլիլն սպանանէ. և թէ ի լեզուին ներքեւն դնես՝ գրեքնին
 » համե անուշ ասնէ և զակաւատակերն ամրացընէ: — Ատեն մի Եւրոպացիք կաժը՝
 » Հնդկաց տերեւ կոչին, Folium indicum. Մեր հին բժշկարանն կ'ըսէ. « Սատեհ
 » Հընդի, ի Հնդկաց գայ. գէտ կապայի տերեւ է: Նոյնպէս և Աժիրաւ. « Սատեհ
 » Հնդի. ինքն Հնդկաց կապային տերեւն է. աղէկն համոյն է:.. Ատէ Յետու բըժիշ-
 » կըն, թէ օգտէ ալացաւութեան՝ որ խոց լինի, աղէկցընէ, և օգտէ կապերուն
 » թուլութեանն »:

1351. կաժկժիկ.

Մազկի պատշան անուն. փափագելի էր որ բառհաւաքն յայտնէր մեզ տեսակը:

1352. կալախար.

Փոքրիկ բոյս մի, քլալափ. աւելի հունտի նման փոքրիկ հատկներով, որ իր ծա-
կին են: Թուի Անձխոտի ցեղէն:

1353. կալիմար. — Տես իշաշիկզդ:

1354. կախմըխի.

Տես կաղամախ, որոյ տեսակ մի է, Թերեւս Լ. Carpinus, Փ. Charme
կոչուածն:

1355. կաժակ. կաժուկ.

Աղթարական բժշկարանութեանց մէջ յիշուի. հիմայ այլ լուսի յԱրցախ. վայրի
կանգաւան է, կամ Ըղտափուշ:

1356. կաժըլիուշ.

Ըստ Սերաստացոց Թ. Չագրա՝րիքեճի ըսուած փշեղէնն է:

1257. Կակալ. Կակլի.

Ընգոյզ. Ընկուզենի, ըստ Խոսողրեցւոց. գուցէ հին Պոնտացւոց բառ ըլլայ:

1258. Կակաւիլ.

Խաչափայտի անուանց մէկն է. տես թ. 1009:

1259. Կակաւիկ.

Անունն միայն վերջի տառին որոշուի վերինէն, բայց բնութեամբ տարրեր թուի. միայն հին Բժշկարանի մէջ յիշուած գիտեմ. « Կակաւիկն կծու է. զլուրն ի » քիթ ան, մաղաս հանէ, և զխելք սրբէ. քաղցր իրօք եփէ և ի վերայ այտոյց աչաց դիր »:

1260. Կակալց.

Մանօթ, շատ տեսակ և շատ գեղեցիկ գոյն զգոյն ծաղիկ. գարնան երախայրեաց մէկն, ոչ միայն պարտիզաց՝ այլ (և Թերեւս աւելի) անմշակ տեղեաց, մի ի զլիսաւոր վայրենի ծաղկաց, մինչև կարծել ոմանց՝ թէ սա ըլլայ Քրիստոսի Տեառն մերոյ ցուցած Շուշանն վայրենի: Զանազան գունոցն համար երգէ Սալաձորցին.

« Կարմիր Կակալ, աչ և դեղին, մօռ և մարմնոյ՝ զարկեր Թեւերուն »:

Որչափ որ գունոց և ձեւին համար գովելի և ցանկալի է, ոչ ինչ կըրնայ ըսուիլ օգտին համար, որով և չի յիշուիր ի Բժշկարանս, մանաւանդ որ ասոնց գրութեան ատեն՝ այնքան բազմացած չէր Կակալից տեսակն, հեռաւոր կողմերէ այլ բերուելով. և թէպէտ Պէթար և Սմիրտ. յիշեն անոր արեւելեան լեռքի անուամբ բոյս մի, բայց օտարացեղ և անծանօթ. « Խոտ—մն է՝ որ ի Մաքայու կողմանէն կու գայ, » օգտէ Սնկան. թէ զմիրզն ծեծես՝ օգտէ ստամոքին ցաւերուն և խտրեցընէ » զցաւն. ասէ Պտին. Թէ խմեն՝ Զարունն կապէ »: — Լ. Tulipa, Փ. Tulipe, Ռ. Тюльпанъ, որ Պ. Տիչպիենտ բառէ առնուած կ'ըսուի. որովհետեւ այն կողմերէ՝ ի Թուրքաց կամ ի Թաթարաց բերուած է յԵւրոպա ի ԺՁ դարուն: Իսկ մեր հայերէնն զուս ազգային է, որով յայտնուի ծաղկին տեղացի ըլլալն, և անունն ալ կրկնակ ձայնիւ նման կարկաջանաց, փայլփլուն կամ գոյնզգոյն ըլլալը իմացընէ, — Զանազան տեսակներէն յիշուին ըստ Լ. Oculus Solis ըսուածն (Արեւակն) ի Մեծար լեռինս. — Լեռնային կողուածներուն մէջ յատուկ մէկ մի կայ Հայկական T. Armeniaea, նշանակուած ի վան, Բաղէշ, Կարին. Եփրատայ եզերք և ուրիշ կողմերում. — T. Gesneriana Minor, ի Կարին, Մանախ, եւ այլն. — T. Eichleri, ի Շամախի. — T. Suaveolens ի Կովկաս. — T. Pulchella (Գեղաղան) ի բարձունս Կիլիկիոյ 6500-8000' բարձրութեան: — T. Violacea (Մանիչազոյն) ի Թալիշ Կաղբից. — T. Bibersteiniana, Տփղիսի մօտերում: — Առանց յատուկ տեսակի յիշելու (որ այն ատեն դեռ որոշուած չէր) անցեալ դարուն սկիզբները՝ Ճեմսկի

իտալացի տեղագիրն՝ զմայլմամբ յիշէ Բասենոյ Մժնկերտ և Խորասան աւանաց մօտերում տեսած կակաշները, որ եւրոպական պարտիզաց վայելուչ զարդ կրնա-
յին ըլլալ, կ'ըսէ: — Սալաձորեցւոյն յիշած գուներով այլ իբր առանձին տեսակներ
յիշեն մերայինք հիմայ, կարմիր կակաշ, Մօս կակաշ, նա եւ Սիւրմա կակաշ, որ՝
չգիտեմ ինչ նշանակէ:

1261. Գեղին կակաշ.

Կոչուած է ի Հայս՝ ձեւով աննման վերոյգրեալ ծանօթ կակաշից. կարծրեկ
կոթի ծայր մեծկակ բուրդի գեղնասպիտակ կէս գնտաձեւ բազմաթիւ մանր թեր-
թերով ծաղիկ մի, որոյ չափն և տերեւոց ձեւն յայտնի չէ ինձ:

1262. կակժիրակ. կակճիրակ. Ծակժիրակ.

Ըստ Իժչկարանաց զարմանալի Փննունային անուանք են. տես Խաչափայտ (1009)
և Մափկոտրուկ (1182): Բայց Ամիրտ. գրէ « Ասացել է գրոցս Ժողովողն, թէ
» այսոր (Ղրտումի) Պ. Հասարտանս կ'ասէ, և Հայք կակճիրակ ասեն, և Ասփոռի
» հունտ ասեն »: Քալիենոսի բառից կարգին գրուի. « Կենդան՝ կակժիրակ, որ է
» Խիարիչամբ » . կամ, « Կնիկոն՝ կակժիրակ » : Տես Ասփուր, Գովաղակ, և
յետոյ կրտիմն, և Կասիա՝ որ յատկապէս այլ կակժիրակ կոչուի, Cassia.

1263. կակղի.

Այսպէս կոչուի կամ կարծուի յոմանց Tilia ծառն, զոր յիշած եմք Թըմրի և
Լորի անուամբք (Թ. 795 և 936):

1264. կակուլ.

Ամիրտ. ի Բառգիրքն կ'ըսէ, Հոսնցի Յորեանն է. — Ի՞նչ տեսակ է:

1265. կակուլա.

Որ է Ղազուշի Արարաց, և այլեւայլ անուններ ունի. յորոց տես Մաչախ, և
Հիլ: — Իժչկարան մ'այլ գրէ, « Քէքուլէ, որ է Դժնկի պտուղ »:

1266. կակվորդիկ.

Լեհահայոց բառագիրք մի այսոր զուգէ Չապոսն, որ է Ճապուռ կամ Չաման:

1267. կաղարոյս.

Այսպէս անուանին՝ ըստ նորոց՝ սոխային տակք. Լ. Balbas. Տես Արանդ
(Թ. 190) և Կոճողի:


1268. կաղաղ.

Կանաչ լճգոյզ, ըստ Արցախեցւոց: Տես և Կակալ:

1269. Կաղամախ .

Ընտիր օրինակ մի բառից Գալիե- նոսի գրէ կաղամախ: Վայրենի ծառոց մէջ նշանաւորներէն մէկն է ձեւովն և բարձրութեամբն, և շատ տեղ ծանօթ .
 Լ. Populus, ֆ. Peuplier, և ձեւոյն համար յատկացեալ P. Pyramidalis (Ռրգաձեւ) . գունովն այլ զանաղանեն բուսաբանք ի Սպիտակ P. Alba, ֆ. P. Blanc, Ռ. Пшоплб. և ի Սեւ, P. Nigra, ֆ. P. Noir, Ռ. (Сокорь . նա եւ Ձիւնատեսակ, P. Nivea, ֆ. P. Cotonneux . Թերեւս մեր երկրին մէջ գտուին ասոնք և իրարմէ տարբեր ա- նուամբք կոչուին . Սպիտակ տեսակն

կոչուի Ա. Հառաք, ܕܘܢܐ, ըստ Ամիրտ .
 « Լայր. ծառ-մն է որ ի Հոռոմոց եր-
 » կիրն կու բուսնի, և ես գտայ ի
 » գիրք-մն այլ, թէ Լավրն ծառ-մն է՝
 » որ Թ. այս ծառիս Ղայրիկն աղամի
 » ասէ (ոմանք այլ կիտրիկն աղամի ա-
 » սեն) . և ինքն ի հով և ի չոր տեղ-
 » բանք կու բուսնի . և ինքն չորացնող
 » է . և թէ զիր միրգն մեզրով յաչքն
 » քաչես՝ որացընէ . և այն որ ի Հո-
 » ոսմէ բուսնի՝ զմիրգն քաջխով խմես,
 » օգտէ Ղխաւորին », ևւ այլն . —
 Մեր երկրին մէջ այս ծառիս, (թէ և
 ոչ շատ բարձր տեսակն) շատ գտուե-
 լուն յայտարար է և կաղվիտատ ա-
 նունն . հին հեղինակք (ինչպէս Կուր-
 աիոս) Սօսեաց հետ յիշեն Երասխայ
 հովտին կաղամախները . Գուռնըճոր
 յիշէ Ղարսի և Հասանկլայի միջոց Սեւ
 կաղամախս . ինչուան կարնայ բարձրա-
 ւանդակին վրայ այլ տեղ տեղ տես-
 նուին կաղամախք . Բարձր տեսակը՝
 բարձրամաղկ կոչելով՝ Սօսի և կաղ-
 նեաց հետ յիշէ մեր Սարգիս մեկնիչ



Կաղամախ .

վարդապետն (Յուզ. Բ.) . յիշեն և ուրիշ հեղինակք մեր, և Ս. Գիրք շատ տեղս Նոր տեղաբերինք Դողդաղուն կոչուած տեսակը՝ P. Tremula, Փ. Tremble, յիշեն ի Պոկլան մօտ ի Մուշ, ուր մերայինք յիշեն զկալսմաստ տեղն . — Եփրատական, P. Euphratica, Եփրատայ և Տիգրիսի միջոց (Միջագետք), ի Մարաշ . — Սեւն ի Հս . և ի Հր . կովկաս : — Բրգաձենն ի Մեծ և Փ . Հայս :

1370. կաղամբ .

Մեծագոյնն և բոլորակ ի բանջարեղէնս, և քանի մի քիչ շատ նման տեսակօք, ոչք թէ և անուամբ զանազանին, այլ շատ հեղ և շփոթին իրարու հետ . հայերէն անուանն նման են հնդկին՝ ֆալանգա, և Պ . ֆալամ, Ար . Քարնապ, كرفس Լ . Brassica Oleracea, Փ . Chou commun կամ Potager, Թ . Լահանա . Ամիրտ . յիշէ Ար . անուամբ, և թէ « Երեք ցեղ է . Նապտի է, Հոսնցի է և Շամի » է . . . կակղացընող է և եփող է . . . և լեզուն կու չորցընէ . և թէ զլուրն ի քիթն » կաթեցընես՝ զգլուխն յստակէ, և զան ուռէցնին որ ի յականջթաքն լինի՝ » կու եփէ . և իւր ճիւղն քաջիտով սգտէ, լուծումն կու առնէ . և իր միսն կապող է » . ըստ այսմ մեր Առակախօսն այլ գրէր (ԳԱ), թէ, « Ի բժշկութիւն որովայնի » զինքն քարոզէր կաղամբ, եթէ՝ կերեալ զք հում՝ զորովայնն լուծանեմ, և ե . » փեալ՝ պնդեմ, և բազում ինչ ստութեամբ բարբառէր », եւ այլն . — կաղամբի տեսակաց համար այլ կ'ըսէ Ամասիացին՝ Պատէհինի վկայութեամբ, « Ածուց » լինի (Քարմն և Քալամ), և այն որ Հոսնցի է՝ Ղաննապիք կ'առնն . . և ծա . » վային (Chou marin) և վայրի (այլ լինի) . և այն որ Ղրային է՝ Նապտի ա . » սեն . Լան այն է և Լա է որ պստանի լինի » : Դարձեալ զանազանէ ըստ Բժշկապետաց, « թէ Քարնապն երկու ցեղ կու լինի . մէկ Նապտի և մէկ Խոզի . » և այն որ Նապտի է՝ յայտնի է . և այն որ Խոզի է՝ տերեւն թանձր է և պինտ է » : Այս ըսելէն ետեւ կու գրէ Ար . Քարնապ ըլնայ, որ Ձրային կաղամբն պիտի ըլլար . ըստ վերոյգրելոյն, բայց ինքն գրէ, « Որ է Նիդուֆարն » : — վաստակոց զիրքն առանձին զլսով գրէ վասն կաղամբի, որ « զաղէհամ հողն ախորժէ . և » վասն այնորիկ պարտ է որ երբ կաղամբն չորստերեւան լինի . նա առնուս լեռած » նադրուն կամ աղի հող, և ի մէջ տերեւոյն ընուս պտղամբզ, նա խիստ աղբի . » նացուցանէ, և փայտ շտայ առնել տակին, և փուխ լինի . . Եւ զինքն արձակ » արձակ և յետ ի յետ ցանես, որ հանել շպիտենայ, նա արքինի լինի . . Գի . » տել պարտ է որ կաղամբն եւս առաւել վատնի ի թրթրէն՝ քան զայլ բան . » Ղար . և ի վերայ ամենի իւր դեղն այս է , որ Թզենի կրակաց մոխրաջուր » առնես, և զունդն ի ներքս պահ մի ի թրջոց արկանես և ապա ցանես . այլ » թրթուր չվերձենայ անդ . և թէ այդ շինի արած և թրթուր կենայ . զմոխիրն » մանր մաղած ի վերայ ցանես, ողջանայ կաղամբն և զամէնն սատակէ » :

Հոսնցի կաղամբ կոչուածն է Թ . Ղաննապիք طيخون (Քառնապիթ), Լ . Brassica Botrytis, Փ . Chou-fleur, Ի . Brocoli, որոյ տերեւոց փոխան ծագիկն է ուտելի, որ թանձր մարմին մ'է : Ամիրտ . գրէ « Ղաննապիտ, որ է ինքն ի կակ » բոսի ? ցեղերուն ազգ-մն, և Լան այն է որ դեղին լինի . չորացընող է, և չի թա . » զուր որ մարդ շուտ հարբենայ . . սգտէ հազին և կակղացընէ՝ և հունդն զհիճին » և զօձն հանէ, բայց գաղքն մթընցընէ . Լան այն է որ . աղէկ եփեն գէր մտով .

» որ գիր չարութիւնն տանի »: — Գարնեալ գրէ. « Քարնայ. ինքն երկու ազգ » է. մէկն գլուխ բռնէ և մէկն կապտաս է. աղէկն այն է՝ որ գլուխ բռնէ »: Գլուխ բռնողն կոչուի Լ. B. Oleracea Capitata, ֆ. Chou Cabus. միւսն (որոյ կոչումն փռանկ Cabus բառին ձայնակից է) հարկ է թէ ըլլայ Անգլուխ, Լ. B. Acephala, ֆ. Ch. sans tête. — Անգլուխի փոխան յիշուի հայերէն հին Բառա. գրոց մէջ և Անտոկ կարգաբ. բայց մեկնուի՝ Գարնար աշխատի, որ վերոյ գրեալ Նապտին է: — Հին բժշկր. խրատէ, « Թէ եփես ու զլուրն ձգես և ապա » ուտես՝ լաւ է. ինք կապ է, և շուրն լոյծ. տերեւն լաւ է քան զինք. և թէ » զինք ծեծես ու զլուրն խմցընես, զտափակ ճիճին հանէ. և ունդն զսաւտա » շատցընէ ի մարգ . . . Իրմով խախտան այնել՝ զզանգիկն (լեզուիկն) պնդէ և » թալմեցընէ. ասամնացվի որ ի տաքէ՝ օգտէ, թէ ի վերայ Խուրսի ածես, օգտէ »:

1371. կաղին, կաղինի.

Անոյլ կամ ուտելու կաղինն է, որոյ ծառն Արքակաղնի կոչուի ըստ գրոց, և ի կարգին բացատրած եմք (տես թ. 243) որպէս և պտուղն կաղին Արքայականն.

1372. կաղն.

Ինչ ըլլալը գուշակուի այս կարճ յիշատակութենէն ի Գիրս Թղթոց. « կաղն » փաստեալ և որոնն ապականիչ ». որ իմաստիւ այլ ձայնիւ այլ մօտ է Գաղճի. տես թ. 401:

1373. կաղնի.

Անտառային կամ վայրի ծառոց Թագաւորն կամ գերագոյնն կըրնայ կոչուիլ. թէ իր մեծութեամբն և թէ բազմապատիկ սրբազան և աստապելեալ յիշատակօք և պաշտամամբք հեթանոսաց. մինչև մէկ տեսակն Հնգկաց լեղուաւ Տեվադարա (Deodara) կ'ըսուի, այսինքն Ատուածածառ: Ի Ս. Գիրս շատ տեղ յիշուած է. սկսեալ Կաղնոցն Մամբրեի. պա որով Ատուած երեւեցաւ Արբահամաւ. Փիլոն երբայեցին զայս յիշած ատեն, ըստ մեր Թարգմանչին՝ կ'ըսէ, « Ստեղծատունկն՝ » վայրենի է, իսկ պտուղն նորա կաղին՝ ընտանի ». սակայն վայրենի կաղնեաց պտուղն այլ՝ որ Թ. Փեյխո կամ Բաշտա կոչուի՝ վայրենի է, այսինքն լեղի. և անտանոց ուտելի: Կայ տեսակ որոյ ծառն այլ կոչուած է ի մերոց՝ Լեղի կաղին, և սա համարուի Որդնարերն, ինչպէս գրէ Ամիրտ. « Արմըզ (որդն) որ է » կօկազ, ինքն կենդանի է, որ ի Լեղի կաղնուն տերեւին փայ՝ կարմրուկ կար. » մրուկ սաքան չափ հատկներ է, և թէ շժողվեն՝ կու թռչի և կ'երթայ, իրք մի » չի ձար. և ներկրարնին կու ժողվեն, և զապրումն և զբուրդն անով կու ներ. » կեն, և զպոնն (1) (այծու մազ) այլ այսով կու ներկեն. և ամառք ասեն թէ ի » փշերուն վրայ կու լինի . . և մեծնալով Սիսուան չափ կու լինի . . և թէ ի կար. » միւր ապրումն օծես և շերմն բռնողին ի վիզն կախես, կտրէ: Ասէ Պա. թէ » Զաղիս կ'ասեն և ի Թ. երկիրն կօկազ կու ասեն »: Յոյն բառն պիտի ըլլայ Փոյզոս,

1. Աստի մեր Բ կոստանդին կաթողիկոսն կեսարացի՝ կոչուած է Պրոմօթրի:

որ նշանակէ նա եւ Փիճի, իսկ կաղնին՝ Վարաեսս Βαλανος կոչուի. *L. Querous, Φ. Chéno. Ար. Պալլուտ, Եղև Թէ ծաւն Թէ պտուղն, որ ըստ Աժիրա. յառ- կապէս Մոմնո կոչուի առ մեզ, և անոր նման վայրենի պտղոց սեռակա՞ն անուն է. « Թ. Փէլլոտ առէ. մանր և մեծ այլ կու լինի. լաւն այն է որ մեծ լինի և » քողցր լինի... օգտէ ընտերուն և ակուային որ ցաւի, և արիւնն կտրէ. և իր » դուրսի կեղեւն՝ ի մազի ներկերն կու մտնէ և կու սեւացընէ և պայծառ կու » առնէ. և օգտէ արիւն Թքնելուն և Թաքին խոցերուն », եւ այլն: Բժշկարան մի կ'իմացընէ, որ « Աղէկն ի մայիս ամսոյն քաղվի »: — Հին Բժշկարանն այլ կ'ըսէ. « Ահում կաղնին՝ Թէ ծեծես և ի վերայ դնես օգտէ Թունաւորաց խած- » մանց և զայտուճի նստցընէ. և Թէ ի շար արտոց լինի այտոյցն և խառնես » ընդ հին խոզրի և ի վերայ դնես, բժշկէ »:*

Կաղնեաց տեսակներէն մեր լեզուաւ յիշուին խոզկաղնի, զոր յիշած եմք, (*Թ. 1093*) Ծանկաղնի, որ է Ծաւրարուտ, Մասնկաղնի, Սարկաղնի՝ որ համարի Փղթորարերն, կոչուի և Նշագ, Փշակաղնի, զորս տես ի կարգի անուանցն: — Մեր երկրին հիմակուան վիճակն՝ մանաւանդ հիւսիսային մասն՝ մեծամեծ կաղ- նիներ չի բերեր. ի հարաւակողմն գտուին՝ Թէ և ոչ մեծք՝ այլ քանի մի տեսակ, յորոց ճանչցուածքն կամ մեզ ծանօթք են, *Qu. Pedunculata* և *Pinnatipartita* ի Տարօն. — Բուն Հայկական կոչուածն՝ *Q. Armeniaea*, ի Պոնտոս. — *Q. Sessiliflora* ի Փարսպաղ, ի Բաղէշ և ի Մոկս, ուր և *Q. Cedrorum* զանազա- նեակն. — *Q. Mannifera*, Մանանարերն, որ է Փազպէն, ի Տարօն, Մանախ, ուր և Ճորոխային կոչուածն, *Q. Schorochensis* որ գառի և ի Տայս. մէկ զանա- զանեակն այլ *Q. Pubescens* կամ Սպերացին *Q. Ispirensis* ի Սպեր. — *Q. Ma- oranthera*, ի Փարսպաղ, Նախճաւան. — *Q. Pontica*, ի Պոնտոս. — *Q. Lusit- anica genuina*. ի Թ-Հ ուր և տեսակտիցն *Q. Boissieri*. — *Q. Brantis* ի Բաղէշ. — Լիբանանու կաղնի, *Q. Libani*, կոչուածին մէկ տեսակն այլ՝ *Vesca* ի Բաղէշ: — Յիշեցընեմք որ Աւստրիացին Քոչի *Kotschy* Թերեւս ծանօթ մե- րայոց իր բուսարանութեամբն ի կողմանս Սիսուանայ, Թէ հօն և Թէ ի կողմանս Վանայ և Պինկէօյի և ի Կիպրոս, երկար տարիներ քննելով՝ 40 տեսակ կաղնեաց զանազաներ և ստորագրեր է:

Մանօթ է ամենուն կաղնեաց փայտի ամրութիւնն և գրեթէ անփտութիւնն, որոյ համար առասպելախօս Յոյնք իրենց զիցա՛օր Արամազդայ նուիրած էին, և սա երբ ուզեց վարձաարել զՓիլիմոն՝ որ միայն իրեն հիւրըկալ եղաւ ի Փոխ- գիա, յետ երկար ծերութեանը փոխարկեց ի կաղնի. նոյն վայրկենին անոր պա- աւն այլ (Բաւկիս, *Bauceis*) ի Լորի! — Գր. Մազիստրոս իր խրթնախօս ծա- արանութեան մէջ (*Քղթ. ծԱ*) զսա կամ ուրիշ պառաւ մ'այլ յիշէ Արամազ- դայ և իր ծառին հետ. « Կաղնի պառաւեակն Կիրրայի՛ յոր աւագս ? (որ յաւագս ?) » պատուեալ յանապատին, և գերակատար զագաթանն Արամազդայ տապ ժամու՝ » հովանաւորեալ պարածածկէր ի բեզիկեան տապոյն »: Նոյն բանը ուրիշ տեղ (*ԳԸ*) գրէ, « Ոչ Արամազդեանն կաղնին պառաւեալ տայր պտուղ, յորում աւա » զան պատուիւր »: Ասոր հետ յիշէ նա և ուրիշ զարմանալի կաղնիներ, ինչպէս Ուիմպիտեանն Ալպողոնի, որուն մէկ ճիւղէն մէկ գիշերուան մէջ կիզիկօն քա- ղաքն շինուեցաւ, և ծառին վրայ նորէն ճիւղեր բուսան !:

1274. Կաղնոյ Բուրդ. — Տես Օշնայ:

1275. Կաղնոյ Խնձոր.

Այսպէս կոչուած է Գղթորն, ձեւին նմանութեամբ:

1276. Կաղնճնի.

Շէհրիմանեանն յիշէ զայս և կոչէ Լ. Dentaria Orobanche. Ար. Էգպար իշլ-
ձէն: Այդ լատին անուամբ բոյսն Զրկոտեմի ազգէն է, և վրան ակռայի ձեւով
Թեփեր ունենալուն այդպէս ըսուեր է. իսկ տեսակն Orobanche հիմայ չի յի-
շուիր, այլ ուրիշ տեսակներ, D. Pinnata, Digitata, Bulbifera. գուցէ այս յետինս
ըլլայ Շէհրիմանի Կաղնձնին, և վկայուած է ի նոր քննողաց՝ որ գտուի յԱտլըր-
պատական, D. Quinquefolia. Հինգտերեւեան տեսակն այլ ի Թ-Հ. իսկ ի Կով-
կաս և վիրս D. Bipennata և D. Microphylla տեսակքն:

1277. Կաղնչան կամ Կաղնան. Կաղնչան. Կաղնչան. Կաղնճնան.

Բնիկ և օտար ուրիշ անուամբք այլ կոչուի Մեղմերդ, Շարիմ կամ Շրքամ,
Քանկան, ըստ ոմանց նոյն և Ժախ (Թ. 832). Լ. Tithymalus, Փ. Tithymale. Ա.
միրա. գրէ. « Շիպրիմն որ է Կաղնչանան, որ է (Փ) Սոքրիկէն (կամ Սութլուճէ).
» ինքն խոտ-մն է, նօր կեղեւ ունի և կաթն ունի, և ինքն յԵրողներուն է (Թ. 633).
» Կարմիր և Թեթեւ լինի. լաւն այն է:.. Ասցել է Պա. Թէ ինքն բուս-մն է որ ի
» պարտիզին կու բուսնի և ի գետեղերքն այլ կու բուսնի և ի դաշտերն այլ կու
» բուսնի, և իրենն Ար. Ղարի ըլ-պսխար ասէ, Հ. Կաղնչնայ. և ասցել է գրոցս
» չինողն, Թէ զինքն պարէն ուտէ՝ այն պահն մեռնի, և Թէ ոչխարն ուտէ՝
» չի մեռնիր, և զէն այլ չի անել, և լաւն այն է որ Թեթեւ լինի, և ճղերն կարմիր
» լինի. այն որ ի Պարսից գայ՝ չէ աղէկ... Թէ զիր կաթն՝ չոր և դալար հեր-
» քունին օժես, օգտէ. և քանի մի հեղ փորձած է. և ամենայն Իէթողներուն
» կաթն զայս խառլիաթն » (ունի): — Հին Բժշկարանն կ'ասէ. « Շարուն՝ Կա-
» զնչանի տակ, և անձնաս Մժեբնցին է ». ուրիշ մի բացատրէ զայս. « Ան-
» ձնանն ի Մժբնու գայ, և աղէկն այն է որ տերեւն բոլոր լինի զէտ գրամի »:
Ասոնցմէ առաջ Եզնիկ վարդապետ գրած էր, Թէ, « Կաղանչանան ազգ ինչ
» առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դեղոյ՝ մաղձադեղ է բուժիչ ի
» մահուանէ »:

1278. Կաղնակ.

Բժշկարան մի գուզէ զայս Ակնդում բուսի, որ է անշուշտ Լ. Acanthium, նոյն-
պէս գրուած և ի Պէլլարայ, اقننون. զոր ոմանք Մերոյ-գլուխ կոչեն, կ'ըսէ,

Ռաս էյ-Շիյի, *اس الشيخ*, և նման է Բատավարդի (թ. 313) : Ըստ բուսաբանից ոմանց այս բոյս է *Onopordum Acanthium* կոչուածն, որ յիշուեցաւ ուրիշ անուամբ (թ. 874) :

1279. Կանապ.

Նուրկ կամ Նուրն կոչուած բոյսն է, զոր տես ի կարգին. և զոր ինչուան հիմայ սոյն անուամբ կամայ Բանջար կոչեն ի կողմանս Հայ-Աղուանից, ըստ Շէհրիմանի: Ասար գրէ իբր համանիշս, « Կանապ, Լֆա (թ. 943), *Պիլձուդ* » :

Կանկիրակ. Կանկրակ. — Տես Կակժիրակ:

1280. Կանուտ.

« Որ է Շուշման, որ է Սուսամն », գրէ Բժշկարան մի: Սուսամն շատ ազգ ծաղկանց և բուսոց նշանակէ, Շուշմային համար այլ տրուած է այդ անունն, բայց սա յատկապէս մեր Կանուտն և Կնիթն է, և այս ետքի անուամբս բացատրեմք:

1281. Կանրար.

Լայնատերեւ բանջարեղէն մի, ըստ Մանանայի (եր. 446). սպասեմք որ ուրիշ ծանօթ մ'այլ մեզի աւելի ծանուցանէ:

1282. Կամբ. կամ Կամբի. Կամիի.

Անծանօթ ծառ կամ կաթոտ բոյս մի, զոր իմացընէ Բժշկարան մի, միայն այս քանի մի բառով, քամիէ պատճառած ըխտաւորութեան ցաւու դարման գրելով, փոր լուծելու համար, զատ ուրիշ դեղէ, « Կամբի ծառ կաթով ». կըրնար այլ կարգացուիլ այս տողիկս, կամ Բիծատի կարով, եթէ Բիծատ բառ մի յայանուած ըլլար իբրեւ կենդանի մի քան թէ բոյս: Յիշած ենք Հռոմցի կաղամբի ստորազրութեան մէջ ստուգելի կամբոսն այլ:

1283. Կամբոս ?

Տես ինչ որ յիշուեցաւ ի կամբ և ի կաղամբ (թ. 1270. 1282).

1284. Կայծխոտ.

Եղերգի տեսակ մի է, ըստ նոր բառահաւաքի:

1285. կայծու.

Վնասակար խոտոց տեսակ մ'է ըստ Ագաթանգեղի գրոց: Թերեւս այս երկուքէն մէկն՝ մանաւանդ առաջինն՝ ըլլայ կամարակապեցոյն գրածն:

1285. Կեծուկի Ծաղիկ, Իբր կայծակի.

Եթէ Ար. բառի մի թարգմանութիւն չէ, ինչպէս Պէյթար Դարչիշանի (թ. 585) համար կ'ըսէ, թէ յԱփրիկէ ասոր կայծակի ծառ կ'ըսեն, Առաւ եղ-պարտգ, عود البرق. ասոր յարմար է նաեւ:

1286. կայծուկ փուշ.

Չոր լոսելով՝ հերքունի դեղ պատուիրէ Բժշկարան մի:

1287. կայլ.

Ըստ Շէհրիմանի՝ առանց տերեւի սպիտակածաղիկ խոտեղէն մ'է, մակարուսից ցեղէն. Cynomorium Orobanche, որ է Թ. Χυνομόριον, այն է Շանձուքն. տես զայս:

1288. կանաչաց Թագաւոր.

Անձխոտն է. Բնչ պատճառաւ կամ աւանդութեամբ թագ ընծայուած է այս բուսոյ. փափագելի է գիտնալ:

1289. կանաչկենի.

Տեսակ մի Խնձորոյ այսպէս կոչուի:

1291. կանգառ. կանկար.

Վայրի և ընտանի ծանօթ փշեղէն բոյս մի, որ փշեղինաց մէջ պատուականագոյն կրքնայ ըսուիլ, տնտեսութեան մէջ տուած ճաշակով. Ամիրտալվաթ Ար. Հարչաֆ, فاسج բառով կու ստորագրէ. « Երեք ցեղ է, լաւն այն է որ թաժայ » լինի... օգտէ և շան խածածին այլ, և քրտինք բերէ, զհոտն անուշ առնէ, » և իր խէժն զխոցերն շորացընէ. բայց ըղեղան զէն է:.. Իր բնութեան վերայ » աղզի աղզի խօսք են ասեր, և Պ. այսօր Բանկար կ'առնն ». Ինքն այս խօսքերուն քանի մի օգուտները միայն յիշած է. Պէյթար այլ երկար չի խօսիր: — Թիչեցինք որ Ն. Թաղիկ այլ կոչուած է, ռամկօրէն նա և Արտիճոպ, կամ ի Փ. Artichaut, և Ի. Articiooco առած, կամ ասոնք մեղմէ. Լ. կոչուի Cinara, ըստ Թ. K. v d r a .

1292. Կանգառ վայրի.

Նման է ընտանույն, միայն տերեւոց ձեւով և փշերով զանազանի. Լ. *Cinara Cardunculus*, Փ. *Cardon* կամ *Cardonette*. Տարբեր տեսակ մ'է

1293. Ծառկանգառ.

Աւելի փշոտ կանգառ մի, որոյ ճիւղերն կ'ուտուին: Ծանօթ է Պոնտացոց:

1294. Կանգառի խէժ.

Այսպէս կ'անուանեն և Փ. *Gomme d'Artichaut*. բայց Ամիրտողլաթի և Պէյթարի յիշածն՝ կանգառէն տարբեր բոյս է, զոր կոչեն « Ղինսպարի, قنجر ».

» Ինքն խոտ—մն է որ ի ցորենին մէջն կու բուսնի. և լաւն այն է որ կանանչ
» լինի, և ինքն նման է Ղանդարիոնին (Տերեփուկ), բայց ծաղիկն մանր է խիտ
» և սպիտակ, տերեւն նման է բարակ Ղանդարիոնին, և այլ մեծկակ. և յար
» տերուն և ի ցորենուն մէջն կու բուսնի, և ի փլիփած տեղեր այլ կու բուսնի.
» և տակն այլ ի Ղանդարիոն կու նմանի. և քան զամենայն կանուխ կու բուսնի ի
» գարունն: Իպն. ասէ թէ փշով խոտ—մն է, և տերեւն նման է Քունի կամ
» Քասնի Մասոյի տերեւին, և այլ մանր. և ծաղիկն սպիտակ է և տերեւն
» փշկներ ունի զերտ Մորմենու փուշ, և ի շողխոտ (տղմոտ) տեղեր կու բու
» սանի, և գարունն շատ կու բուսանի, » եւ այլն:

Յատուկ կանգառի խէժն ըստ Պէյթարայ՝ Ամիրտ. գրէ « Քանկարգառ, كنجركو ,
» Ինքզ Հարչաֆին խէժն է.. հով է. փոխել կու տայ հեշտութեամբ (թէ) տաք
» ջրով և Սքննպինով խմեն և մեղրով »: — Տարօնոյ կողմերը ծանօթ է այս
փշոտ բոյսս, իբր երկու թզաշափ բարձր կանաչ կամ դեղին՝ որ աւելի լաւն է.
ուսկից սպիտակ հիւթ մի հանեն և ծամելիք ձութ. յիշուած է և ի կարմիրք:

1295. Կանդանա.

Ամիրտ. Ուրուր հաւու վրայ գրած ատեն՝ կ'ըսէ, եթէ անոր ուղեղը « կան
» դանայով խառնես և կամ մեղրով, և տաս այն մարդուն՝ որ սունկ կամ նիգ
» ունենայ, օգտէ յորժամ խմեն »: Պէյթարի թարգմանութիւնն Պրաս գրած
է Կանդանայի տեղ: Բժշկարան մ'այլ կ'ըսէ, « որ է Քոռաս Շափն, և նապտի
» է և վայրի է »:

1296. Կանեփի կամ Կանափ. Կանեփատ.

Տնտեսութեան մէջ պիտանեղոյն և ամենածանօթ ի հին ժամանակաց, թէ
զգեստու թէ զեղերու՝ եւս և ուտելու պիտանութեան համար. անունն այլ գրե
» թէ նոյն է յամենայն լեզուս և ազգս. Յ *Kάναβις*, նոյնպէս և Լ. *Cannabis*, Փ.
Chanvre. Ար. Քանապ, قنب. զոր Ամիրտ. գրէ « Ղանապ. Ինքն երեք ցեղ է,
» ածւոց և վայրի, աղէկն ածւոցն է.. Ասէ Հուննայն, թէ զինքն ծեծես և քամես

» և քիչ մի յականջն կաթեցրնես, զակնջին ցան տանի. . . Եւ կանափին հնտին
 » ոմանք Չատանա կ'ասեն » : Այս անունս՝ որ և գրուի Շահտանա՞ կամ Շահտա-
 նիզ, Ար. Շահրանեք, قاشاڤاش, կամ اشچادش. կանափին հունտը նշանակէ,
 որ առ մեզ կոչուի կանեկատ, և կ'ուտուի, բայց աւելի իր եղն է պիտանի տնտե-
 սութեան և բժշկութեան համար, որոյ օգուտներն երկար գրէ մեր Ամասիացին :
 « Ի՞նչ զհունտն տապկեն և ուտեն՝ զեն քիչ լինի, և լաւն այն է որ ի վերայ
 » Աքնճային խմեն. . . Թէ շատ ուտեն՝ զլուխ կու ցաւցընէ, և զաչքն կու մթացընէ .
 » և զեղն այն է որ ի վերայ պաղ լուր խմեն : Եւ Վայրի կանեկատն զէս Տուզտ
 » կու լինի, բայց կարճ կու լինի. . . Ասէ Պտ. Թէ կանափն երեք ցեղ է . մէկն
 » Աժուոց լինի և մէկն Վայրի և մէկն Հնդի. և այն որ Վայրին է՝ որձան նման
 » է Տղտին որձային և սեւ կու լինի խիստ . և Հնդուն այլ տերեւն ի յաժուոցի



կանեկ.

» տերեւ կու նմանի. և Հնդուն տերեւն քիչ մի պինդ է . և այն որ Աժուոց է՝
 » սեւութիւնն պակաս է և սպիտակութիւնն յաւելի է, և ծաղիկն կարմիր, և
 » պտուղն ի Պղպեղ կու նմանի. . . և իր հնդին անունն Շահրանա՞ կու ասեն. . .
 » Այն որ Հնդի կանափն է՝ ի Շիրազ Պակի ասեն, և Ար. Հաշիչ կու ասէ, և
 » ոմանք Ճուզվի յատաւ կ'ասեն. . . և ինքն զմարդն խեւ կու առնէ, և Թէ շատ
 » ուտեն՝ կու սպանանէ. և ցեղ մի այլ կայ՝ որ մուֆտրնի (զուարթարար) է . կու
 » խնդացընէ և ուրախացընէ, և շատ կերակուր ուտեցընել կու տայ և շուտ մար-
 » սեցընել կու տայ : Եւ ցեղ-մն այլ կայ որ զսիրտն տրտմեցընէ, և իր մերզն
 » պիղձ քրվտաք ընծայէ », եւ այլն :

Վաստակոց Գիրքն (102) կանեկի ցանելու համար կ'ըսէ, Թէ ընտրելու է « զթանձր
 » և զգէլլ պետինն, և պարտ է զինքն ի փետրվար ամսոյ 26 օրէն ցանել մինչև

» ի 246 մարտի. և զկտաւատն որ է Քրտան՝ պարտ է ծիրանեպայն զեռինն ցա-
» նել:.. Չկանեփն ծեծեա ի պարկն ընուս, գրեբանն կապեա, ի տաք ջուրն ձգեա,
» փայտով մի թրեա, եղն ի դուրս ժողովի »: — Հին Բժշկր. կանեփ չի գրեբ.
այլ կանեփայտ, և կ'ըսէ. « Որ շատ ուտէ՝ գլուխն ցլովի. և յուշ երթայ
» ի ստամոքէ. թէ ականջ ի տաքէ ցաւի՝ ձէթն օգտէ:.. Աղնծած լաւ է ուտել
» քան հում. և թէ զտերեւն ծեծեա և այնիւ զգլուխն լվանաս, օգտէ զխա-
» ս ցաւի և մազկերթի, անուամբն Ատաուծայ »:

1297. կանեփխոտ.

Անուն կանեփի է բայց ինքն տարբեր ցեղի խոտեղէն է, գէջ զեղեր կու բուսնի.
ժողկներն գէմ առ գէմ շարուած ատամնաձեւ բաժակաւ և հինգթերթեան
պսակաւ. չորս կամ հինգ տեսակ միայն գտուի այս բուսոյս, որ կ'ըսուի Լ. Ly-
copodus, (Պայլտոն), տերեւներուն ձեւէն. սովորական է Եւրոպական կոշուածն
L. Europus, որ համեմային հոս այլ ունի, և լուծողական է: Այս անուամբ
ճանչցուի ի Պոնտոս, գտուի և ի Հայս:

1298. կանեփուկ.

Յիշէ զայս մեր ոսկեգրիչ Հայկարանն Եղնիկ, և կ'ըսէ. « Թուփ ինչ է. որոյ
» սերմն նորա ղեղ է, և նոյն դարձեալ կատեցուցիչ ցանկութեան »: Այսպիսի
զօրութիւն շատ բոյսերու կ'ընծայուի, որով այսոր տեսակն անոտայգ մնայ. մեր նոր
գրչաց մէկն կարծէ զՊոթեաց ճանկն, Vitex Agnus Castus (Թ. 309):

1299. կանթափ ?

Թեթեւ, զեղնագոյն քրտնաբեր ըմպելիք մի առուղ ըլլալը՝ յայտնէ օրագիր մի,
այլ ինչ ցեղ ըլլալն ոչ: (Ն. Դար, է, 103):

1300. կանթեղխոտ.

Որ կոչուի և Հոգմափայտ և Մամիրան Ար. անուամբ انجیران, որով ստո-
րագրէ և Ամիրա. յիշելով և ուրիշ անուն մ'այլ, Տոփայի խոտատիֆի. նա և ուրիշ
շատ անուններ կան առ Պէյթարայ, զորս Թարգմանիչն նոյն Լ. անուամբ Oho-
lidonium կոչէ, որ է Եթիօսան խոտն, զոր յիշած եմք նոյնպէս և Քեղին կոճն
(Թ. 379), ուր և իմացուցեր եմք որ այլ և այլ տեսակք ըլլալով այս կամ նման
բուսոյն՝ չփոթեն և գիտնականք: Այս կանթեղխոտ-Մամիրան տեսակին համար
գրէ մեր Ամասիացին. « Բարակ տակեր է զեղին, որն ուղղորդ է որն ծուս.
» Ձինի և Խորասանի ինի:.. Ատ Պտ. թէ:.. մթնագոյն է, ի կանանչութիւն
» կու քշտէ. և ինքն բարակ տակ է խոտի, և հանգուսնի ունի:.. և Հոգմափայտ
» ասեն. աղէկն նորն է. և օգտէ լղացաւութեան. և զլիտացաւութեան », և այլն:

1301. Կանկատունկ.

Փիլոն երրայեցի իր Նախատնամութեան գրոց մէջ յիշէ ըստ հայ Թարգմանութեան, և ըսածէն գուշակուի կառարայս մի ըլլալ. գրոց մեկնիչն այլ վկայէ, թէ « Դօմնիկ է, կամ փուշ մի որ կանկատ սսեն »: Ըստ Յ. Լ. և Փ. Acanthe կոչուածներուն տեսակ մի: Տես և Քսուկ:

1302. Կանկրրնուկ.

Բարձրկեկ կանգառի տեսակ մի է ուտելի, կարմիր ծաղկով, քանի որ դաւար է. խանէն կոչուի ի Մշեցւոց. ծանօթ է և ի Խոտուջուր:

Կանկուկ. Ուղիղն կռնկուկ կ'երեւի, տես զայս:

1303. Կանճրակ. Կանրճրակ.

Մանանային հեղինակն գրէ (եր. 447). « Փշարոյս մշակեալ, որ ունի ծաղիկս » նման Զաֆրանի և հասկս կազմէ. որոյ հատիկներ նման են Արեւածաղկի հատին, զորս խաշեն, ծեծեն, կաթ հանեն, և պահոց կերակրոց ի պէտս » գործածեն »:

1304. Կանջխոտ կամ Կանանջխոտ.

Լ. Փ. Reseda. Ար. Ճէպէի հանգ կամ Ճէրպի հանգ. كزباج. առջի կերպով կարգայ և գրէ Ամասիացին, « Ճապարհանգ, որ Հա. կասկուտ ? սսեն, և Հ. կանջխոտ. ինքն մանր հունտ է, երկու ցեղ կու լինի. մէկն դեղին, մէկն կարմիր... » և ասէ գրոցս շինողն թէ ասոր ճա(պա)լհանկ, կ'սսեն. և ինքն դեղին հունտ է » և փուշ ունի իր խոտն, և իր տակն դեղին թրպուրն է, և ասացած եթէ Սե » Տանտին հունտն է. և իր հունտին ուժն՝ նման է Խարպախի ուժին. և լաւն » այն է որ Հնդի լինի. և Հալոդի գոյն ունի, և խիտ մանտր լինի, և երկայն » լինի. և ինքն փսխեցընող է խիտ », եւ այլն: Դարձեալ գրէ մեր բժշկապետն. « Ճապարհանգ, ինքն Բողկին հունտն է, աղէկն ի ջրի տեղ լինի: Ասէ Ապուճա » րեհ, թէ ինքն զսիրտն խառնէ և դարձընէ, և զաչըն մթացընէ. և այլք ասեր » են՝ թէ զսափրան և զպլղամն ի յանձնէն վարէ, յորժամ առնուս կէս տրամ. » բայց դիժար է և մլուս »: — Եթէ և Բողկին հունտն այլ Ճապարհանգ կ'ըսուի արարերէն, սակայն Կանջխոտն (Reseda) տարբեր բոյս է, համեմային, և համեմիչ ուտելեաց. շատ տեսակներ այլ ունի, որոց մէկն յատուկ Հայկական կոչուի, R. Armena, և նշանակուած է ի Թ-Հ. իսկ ի Ռ-Հ հաւանորէն R. Phyteuma. — R. Truncata ի Մանախ. — R. Luteola յԱրդ. — R. Tomentosa Ե. փրատայ կողմերում Ա. Հայոց. — R. Microcarpa, յԱրապատական:

1305. Կանչող. Կանչուխ.

Կաղնչանն է՝ զոր յիշցինք. (Թ. 1277) տես և Իշկաթնուկ, Թ. 868: Որոց փայ աւելցնեմք մեր Տարօնեցի Մէհէրեան Հօր գրածը. « Կանչուխ. լինի գեղին և » կանաչ, լաւն՝ դեղին. ուտի եփեալ և անեփ. արմատն բղխէ հիւթ կաթնային՝ » յորմէ գործեն ձիւթ կամ կիւ. բոյսն փշալից և բազմաստեան է, երկթզաշափ » բարձր գնտազուխ »: — Եթէ ոչ մեր բացատրեալ Կաղնչանի համանման է, կըրնայ մէկ տեսակն ըլլալ, կըրնայ և տարբեր՝ բայց համանուն:

1306. Կանսող.

Տես ինչ որ ըսուած է Գլանտարի համար, Թ. 494: Յիշենք Հարեւանցի արեւելեան Հնդկաց նմանանուն բոյսը, Gandole, Դոմինի նման: Դոյն երկրում ֆրանքոյ Kanthul անուն ծառ մ'այլ կայ, որ L. Artocarpus (Հացապատուղ) կոչուի, ֆ. Dufrene.

1307. Կանտորի.

Թուփ մի կամ Յախ, որ ի գետեզերս կու բուսնի, և որոյ ճիւղերէն աւել չենեն. ծաղիկն հոտաւէտ է. համն լեղի՝ Օշնդրի պէտ: Ճանչցուած է ի Տարօն:

1308. Կաշ?

Տէր Աւետիքեանն յիշ Գեղարունոյ գաւառի բուսոց և ծաղկանց հետ (եր. 48):

1309. Կաշկա?

Կտաւատի տեսակ, ըսուած յարեւելեան Հայս, կամ Վիշապազուխ (Dragocephalum) կոչուած բուսոյ ազգակից, L. Lalemantia Iberica (ըստ Զելենսքեայ):

1310. Կապարասի.

Ըստ հին Բժշկարանի՝ է այն բոյսն կամ տակն՝ որ սովորաբար Քոչոտ կամ Կոտո ըսուի յարեւելս, և ի Հնդկաց՝ Քոչոտ սրբազան բոյսն, ուսկից կու գայ այսօր լաւն կամ ի հնուց ճանչցուածն. Ար. այլ Ղոչոտ կամ Գոչոտ Էստ L. Costus. Երկու տեսակ կ'ըլլայ, մէկն լեղի որ աւելի գործածականն է և կ'ըսուի Դասե-Քոչոտ, L. Costus amarus, միւսն՝ Քաղցր, L. C. Dulcis. առաջինն կու ճապղպեղի ցեղակից համարուած է: Մեր հին Բժշկարանի բառն՝ Կապարասի՝ համարելով անուն ընդհանուր տեսակին, յիշեմք Ամիրտոլլաթայ զանազանելով գրածը. « Ղոչոտ, որ է Քոչոտ, ինքն Թանձր տակ է և անուշահոտ. Քաղցր և » լեղի է. և լաւն այն է որ սպիտակ լինի և իլի... զոր զօղուած (մարմնոյ) որ » ուղեո՝ կու տաքցընէ, և զծաղկին տեղն և զխոցին տեղն և զպիտակին այլ ո ճլէ կու տայ. և Թէ ծխես ոլլի համար և ամենայն գազանահարի՝ օգտէ... Ատէ

» Պտ. Թէ Հռոմն կրտասա ստէ, և ինքն շատ ցեղ է. և հինգ ցեղ լինի. մէկ
 » ցեղն Արապի է, այնոր Ղուստի պահրի (ժողային) ասեն, և ինքն սպիտա-
 » կազոյն է. և մէկ ցեղն Հնդի է, սեւագոյն է, այնոր Ղուստի մոռտ ասեն. և Պ.
 » Ղուստի քայիս ասեն. և ինքն խիստ լեղի լինի և թեթեւ լինի: Իսկն. ստէ Թէ
 » Ղուստի Հնդին սեւ և քաղցր լինի, և Ղուստի պահրին սպիտակ և լեղի լինի.
 » և ստոյգն այն է որ լեղի է, և Սպիտակ Ղուստն քաղցր է. և այն որ Սեւ
 » է՝ Հնդի է: Եւ ցեղ մի այլ կայ որ ի սեւութեան մտտիկ է և զէտ ստպոն հոտ
 » ունի. լաւն այն է որ նոր և սպիտակ լինի և գէր լինի, և այլ սեւ թեթեւ:
 » Եւ ասացեալ է գրոցս յինողն, Թէ Ղուստի Հռոմոց ինքնաքաղցր է, և Սու-
 » տանին տակն յիր տեղն է, և սնուցած Մանուշակին մէջն կու դնեն, և զը-
 » րեք գիհն կու կտրեն. և ինքն զուգծու է. և լաւն այն է որ ի լի լինի և թաժա,
 » և զլեզուն մարդոյ խածնէ. և այն որ զուգծու Ղուստն է՝ նա Անտուզին տակն
 » է, ամուր և պինա լինի, բայց Անտուզն զլեզու չի խածներ. և անոր համար
 » կու բաժանի ի մէկմէկէ. հանց իմացիր: Ղուստ՝ ինքն խոտի տակ է և լեղի
 » է, աղէկն ի Հնդկաց գայ... Ղուստի Շամի, որ է Ռասսանն » (Անտուզ) : —
 Գիտնականք ոմանք Գալիենոսի և Պլինիոսի յիշած Քաղցր կոսան՝ համարին Al-
 pinia Galanga կոչուած տակը:

1311. * կապէնդաքտիոն.

Հին Բժշկարանն գրէ. « Խոտ մի կայ կապէնդաքտիոն (1) ասեն, ինքն որձ և
 » էգ է, ծաղիկն ծիրանի, և տակն նման կաղնոյ և Բեւեկնոյ, և տակն խոր լինի
 » և երկու, մէկն պինտ և մէկն թոյլ, զպինտն չորցր և աղա, և յիրիկունն բնաւ
 » իրք չուտէ (հիւանդն) քան զայդ գեղդ, գինով և կամ ջրով առնու » : —
 Յունարէն բարդած բառ ըլլալն յայտնի է, այլ ինձ անծանօթ, Թերեւս և խան-
 դարեալ. կայսկիս Κάπιος նշանակէ մոխրագոյն կամ ծխագոյն Որթ (այգի):

1313. կապնդեղ.

Հռոմի Անճիտան ըսուածն է, կամ Քայիմի Ռոռի, որ յիշուած է Անճիտան
 անուան տակ. (թ. 118), և այս է լաւագոյն հայերէն անուն:

1313. կապոյտ Ծաղիկ.

Նոր գրողաց մէկն յիշէ ի Գեղազունիս, գառի և ուրիշ տեղ. փոքրիկ բոյս մի
 է սլաքաձեւ մանրիկ տերեւներով, երկայն բարակ կոթով և կապուտիկ ծաղկանց
 փունջերով:

1314. կապուլի.

Մէկն է շատ հոմանիչ անուանց Բեւեկնի և Բտումի, տես զանօնք:

1. Թերեւս դոփրիլ՝ պէտք էր դրել, որ յունարէն մտտ նշանակէ, δάκτυλος, և միւս (կապ-
 նիսս) բառին նեո՝ հիշտ մեր Ալփոս—տոբէ: ըսուածին զուգուի:

1315. Կապուլտ աւել կամ Կապուլտիկ աւել.

« Տաճիկն Ալշան օրի (Եջան) ասէ. զհունտն մեղր խառնէ և խմէ », ի դեղ ճճուի. այսպէս պատուիրէ աղթարական գրիչ մի: Ծանօթ է հիմայ այլ ի կողմանս Սերաստիոյ. կարծուի տեսակ մի Դաղձ, և. *Pulegium L. Mentha.*

1316. Կապուտակ ծաղիկ.

Թուի նոյն Կապուտն. յիչէ Մշակ օրագիրն (ժճ. 86), և ուրիշ բառհաւաք մի:

1317. Կապուտակաղեղ.

Հին Բժշկարանն՝ Հոռոմ ձիթոյ հետ դեղ կարգէ լուսն իջած աչքի, և այտուցի, և և այլն:

1318. Կապտախոտ.

Գուցէ Լեղակն է: Վերիններէն զատ յիչէ Կապոյտ ծաղիկ յիշողն՝ ի նոյն կողմանս:

1319. Կապպար. Կապար. Կապրացախ, Քապրցախ.

Յետին անունս հայացեալ է, եթէ առաջինն օտար է. վասն զի նոյնպէս կուչուի Ար. Քապար, كبر, Թ. Կեպերե կամ Քիփրի օրի. Լ. Capparis, Փ. Căprier. Համեմային հատիկներ կամ ծաղկներ բերող բոյս մի: Ամիրտ. Ար. բառով գրէ « Կապար, որ է Հ. Կապրցախն. լուսն այն է որ ի լի լինի.. կարող և նուրբ » այնող է. և տերեւն զմազն կու սեւցընէ, և զակնջին զորդն սպաննէ. Թէ սպեղանի առնես՝ զխոզքն (կոկորդի ուռէցք) կու հալէ. և տակն օգտէ ակուային » ցաւուն. և աղտծն օգտէ փայծաղան. քան զամենայն դեղերն լաւ է.. և զօձն » և զճիճիքն սպաննէ և ի փորուն հանէ.. և թէ տերեւուլն զշտերն շիես՝ տանի.. » Ասէ Պտ. Թէ Հո. Ֆիարիս ասէ, և ի Շիրազ կորաք ասին. ինքն միրգ ունի » որպէս հապ, և այլ միրգ ունի որպէս Խաղուարտ. և թէ զինքն ի գինուն կարան ձգեն՝ զ'եռն խաղեցընէ.. և Մաննեխն այլ զայս գործս կ'առնէ, և զգինին չի թողուր որ եփի և զինի լինի. և լուսն տակին կեղեւն է:.. Ասէ Դո. (Դիոսկորիտ) թէ զիր պտուղն և զիր ճղերուն զծարերն քսցիտով թրջեն և աղով՝ որ կենայ, և տաս փայծղան տիրոջն, երեսուն օրն հալէ զփայծաղն. » յօրն երկու դրամ տուր, և ի վերայ գինի խմէ... Լաւ թտայիրն այն է՝ որ » զիր ճիւղն ի աղի լուրն թրջես և փոխես շատ հեղ, և քաղցր ջրով վլանաս, » և ապա ի քսցախն թրջես և դնես, աղէկ լինի, մինչև քառասուն օր »:

Շատ գրոց մէջ յիշուած է Կապարն. Սողոմոնի Ժողովողի խօսքն (ժԲ, Յ) « Մաղկեացի Արին.. տարածեացի Կապարն », մեկնելով մեր վարդապետաց մէկն՝ գրէ. « Զի խոտն Կապար՝ տարածանի ընդ երկիր և ոչ բարձրանայ ». նոյնպէս ուրիշ մի. « Խոտ է դաշտի, որ ընդ երկրաւ տարածանի և ոչ կարէ բարձրանալ.. »

» և է ժահահոտ և գառն և փշաբեր »: Բարոյախօսք այլ՝ Սողոմոնի ըսածը ծերութեան նկարագիր համարելով, տարածեալ կապար՝ կ'իմանան անոր ծաղկանց Թափթըփիլը, ծերոց մազերու նման. ոմանք այլ ասոնց լեզուին համ շառնուլը, զի կապարն համեմող է: — Մխիթար Հերացի յիշէ « Կարկիր Կարպրի տակ, » որ է Քարպրի: Վաստակոց գիրքն կապարի յարգը կամ գործածութիւնը յայտնէ առանձին գրելով (Թէ և կարճ), « Յաղագս Քապրցախի և Թրմըզի »: զայս պէտք է ցանկել, կ'ըտէ, իսկ « Քապրցախն հակառակ է սմա, զի ինքն ըստ » ինքեան բուսանի »: Դոյնն՝ բորոտած շան դեղ գրէ, (ՅԻԸ). « Թէ առնուս » Քապրցախի տակ և այրես, և առնուս զմոխիրն և խոզտուով խառնես, և երբ » պիտենայ՝ մոխրաշուր արա և լուս զբորն և օժ, օգտէ »: — Այս յիշատակութիւններէ և նորոց այլ վկայութեամբ՝ յայտնուի կապարի ծանօթ ըլլալն ի մեր կողմանս:

1330. Կապուաշ կամ Կապրաշ. Կապուաշննի. Կաւրաշ.

Թուփ է, շիտակ բարձրացող, կլորակ և Թանձր տերեւներով, փայտն սպիտակ կամ դեղնաօգոյն, կեղեւն կարմիր, ուսկից հանեն նարընձագոյն ներկ, որով հաւկիթ այլ ներկեն: Գտուած անդեաց մէկը յայտնէ բազմահմուտ վանական վարդապետն մեր, հարցընելով. « Լզբն ի՞նչ է. — Կոէզ է. Թուփ կայ՝ Կառ » պտաշենեաց չափ, ի Սասունք լինի, ուր Գաղպէն իջանէ »:

1331. Կապրենի.

Չայս յիշէ հին Բժշկարանն, ախտի մի դեղ գրելով. « Կապրենոյ զտակն կեռ » դեւէ, և զկեղեւն չորցո և աղա, և բարակ մաղէ, և կաթն լից ի վերայ, եռցո « և խմցո »: Թուփ Թէ վերոյիշեալ կապարն է. գուցէ նոյն ըլլայ և

1332. Կապրուկ.

Որ յիշուի ի բառս Գալիենոսի, և իրեն յոյն գուգանիշ գրուի իրիս:

1333. Կառ.

Բժշկարան մի կ'ըտէ Թ. Տէֆնի եհմիշի է, այսինքն Դափնոյ հատիկներն, բայց հասարակօրէն

1334. Կառ կամ Կառն.

Է վայրի Կանկառի նման փշեղէն, Լ. Carduus, և յատկաբար C. Natans, Փ. Cardon Թ. Ղարղան քիքեհի, ըստ Բժշկարանի միոյ. ցողուն կամ ճիւղ շունեցող տեսակն կոչուի Լ. C. Acaulis. շատ մազ կամ բուրդ ունող տեսակն՝ C. Eriophorus կամ Lanuginosus, ախորժելի է գրաստուց և պանարաց, ինչպէս վկայէ և մեր առականսս վարդապետն (ԼԳ). « Խոկացեալ բուսոց Թէ ո՞րքեօք յառ » ուղապահ մեզ կացցէ, և խրոխտացեալ կասի և նորին նմանեաց, ասեն՝ Թէ

» մեք հարկանող գողով՝ մեզ արժան է: Եւ ի կարգին՝ եկեալ էչք և ուղտք կե-
 » րեալ և առաթուր հարեալ՝ գօսուցեալք և տարեալք ի հողմոց եղեն »: — Կայ
 տեսակ կառին որոյ ճիւղերն կեղեւած կ'ուտուին. Բոլորաձեւ զլուխը կամ ծաղիկը՝
 Բազմածիղ կոչէ Բժշկարան մի, և բոլորն մէկ տեղ ըստ ձեւոյն՝ Անիւ կոչուի,
 ինչպէս կ'ըսէ Վարդան վ. (Մեկն. Մենդոց). « Անիւ կոչի փուշն՝ որ ի ծայրս
 » կառինն շորացեալ անկանի »: այսոր նման է և Անիւն զոր ասորի վ. Դա-
 նիէլ Այազնուէ (Թ. 87) կոչելով ցուցուց հովէ տարուբերեալ:

Ուր որ շատ բուսած է կառն՝ տեղն կասեռուտ կ'ըսուի, ինչպէս յիշէ վաս-
 տակոց զիրքն (Մչր) : — Թէ և կառն հասարակօրէն անասնոց ուտելի և անարգ
 բոյս մի համարուի, բայց բուսութանք ընտրած և զատած են անոր այլեայլ տե-
 սակներ, որոցմէ վերոյիշեալ բրգօտն (Lanuginosus) նշաներ են կարնոյ կողմե-
 բում. նոյն տեղ գտուի և Օ. Natans տեսակին մէկ կերպն շատ փոքտ մանր տե-
 բուններով, բուն Հայկական կոչուած, Օ. N. Armenus, նոյնպէս և ի Բարերդ, Սպեր,
 Մանախ, Մարաշ. — Օ. Onopordioides (իւրոց արործելին) ի Փանձակ. — Օ.
 Humulosus, ի կարին և ուրիշ կողմեր. — Օ. Olympicus, ի կեսարիա կամ
 Ազգէսու լեռան ստորոտքը. — Օ. Adpressus, ի Համիէն, — Օ. Flavescens, յԱր-
 աւհան. — Օ. Crispus (Գռուզ) ի ՄարիէնՖէլտ Վրահայոց. — Օ. Pycnoce-
 phalus (կունտ գլուխ) ի Շահպուլազ Գարապաղի, Պազու, եւ այլն — Օ. Ner-
 vosus (Ձղուտ) յԱշտարակ՝ մօտ յԷմիածին. — Օ. Argentatus, ի Պոնտոս, Մի-
 շաղեաք. — Օ. Imoleus, ի Մարզուան:

1335. Կառարոյս.

Անուամբ և նմանութեամբ բոյս, այլ էութեամբ կենդանի, կամ միջտասանան
 և միջնորդ բուսեղինաց և շնչաւորաց. անոր համար կոչուի և կենդանարոյս կամ
 կենդանատունկ, Փ. Zoophite. Ծովային բուսածեւ նա եւ ճիւղաւոր արարածք,
 որոց համար մեր Ս. Գրոց մեկնիչք այլ կ'ըսեն. « Ել հրաման (յԱստուծոյ) ի
 » Ղուր և յերկիր վանն կենդանեաց, սկսեալ ի կառարոյս և ի Սպունգս », (վար-
 » դան). Յայսմաւուրքն այլ (Արեգի ծօ), « Ետ Աստուած զնշան կենդանութեան
 » ի կառարոյս և ի Խեցեմորթս »: — Իբր գրաւորական զբօսունք՝ լսենք ինչ
 կ'ըսէ այս երկացեղ էակաց վրայօք՝ Առաքել եպիսկոպոս Սիւնեաց, զեռորդին Գր.
 Տաթեւացւոյ, ի մեկնութեան Սահմանաց Գրոց Արիստոտելի. « կենդանարոյսն՝
 » այսինքն կառարոյսն՝ որ ի ծովեզերքն լինի, որ բուսեալ է ի քարն և արմա-
 » տացեալ է ի նմա, որ շուսփական զգայութիւն ունի, բայց անդամք և զգա-
 » յարանք ոչ ունի, և յորժամ զձեռն տանին՝ թէ կտրեն, յերեսն փոթէ զլուրն
 » և կծկի: Այս է որ իբրեւ զչեչաքար փուշ փուշ է, և որպէս զԹոք կակուղ,
 » զոր Սպունք ասեն, զոր Գրոց կազմողքն ունին՝ որ զսեկն թանան, զոր ասեն
 » թէ Ամպ ծերացեալ, և այլք՝ թէ Փրփուր ծովուն է քարացեալ. և սուտ ասեն.
 » զի այն կառարոյս կենդանի է, զոր Սպունք կոչեն »:

1336. Կառան.

Բժշկարանք վկայեն որ վայրի Փեգենա է և գրեն Ար. Չուֆայրա կամ Չու-
 ֆրի, Լյճ. Ամիրտ. կ'ըսէ. « Սազապին ցեղերուն է, որ վայրի է և գէշ հոտ

» ունի, ծաղիկն դեղին է. և թէ գտերեն ծեծեն և խմեն՝ օգտէ ակուցա-
 » ւութեան և Ըոհպ շերմանն և լերդացաւութեան »: Ուրիշ մի հայ ան-
 ւամբն հանդերձ՝ գրէ. « Զուֆայրա՝ որ է կառան, և է ինքն նման Սազապի
 » կերպոյն և զօրութիւնոյն, և այլ կոչի Ֆարֆա ? որ է վայրի Սազապն, և ունի
 » վատ հոտ, թփի թէ Մաշն խոտն է »: Այս վատ հոտին համար՝ Երանրահոտ
 կոչի Լ. *Ruta graveolens*. Փ. *Rue fétide*. Արարացի անունն կերպ կերպ գրուի
 և այլեայլ նշանակութիւն ունի. Ամիրս. Զուֆրի գրէ կառանի համար, իսկ Զու-
 ֆայրա կոչէ՝ աղէկ զանազանելով, ուրիշ տեսակ բոյս մի, զոր յիշենք Զ տառիւ:

1327. կառշուկ.

Վարսակ նշանակէ. յիշողն՝ անյայտ:

1328. կասը ?

Բժշկարան մի փորացաւի դեղ գրէ: Ա՛ւ վարդ և կասը, միատեղ եփէ:

1329. 1330 կասիա.

Այլ եւ այլ նշանակութիւններ ունի, որոց գլխաւորն է Ս. Գրոց մէջ ստէպ յի-
 շուածն, որ անանց բնագրին (Երրայական Քեճիօթ) բառէն առնուած է, որով
 կոչեն և Յ. *Kassia*, Լ. *Cassia*, Փ. *Casso*. որ՝ ըստ միոյ գրչաց մերոց՝
 « Ազգ մի ծաղիկ է, դեղին, ի
 ծառն բուսնի, և հոտն Ամպէրի
 է »: բայց Ս. Գրոց յիշեալն Դա-
 բիճենիկն է (տես թ. 561), ա-
 րեւելեան Հնդկաց բոյս, և հոտոյն
 համար փափկութեան նիւթ մի: —
 Հիմայ սովորաբար յարեմուտս կա-
 սիա կոչուի առ մեզ կակժիրակ կո-
 շուածն (տես թ. 561), թէ և այսոր
 այլեայլ նշանակութիւնք տրուած
 են, և է յարեւելս Ար. և Թ. Խիար
 շեմպէ կամ Խիար — շանպար شبان
 کاسيا կոչուածն, զոր և Հնդկաց
 Խառնուկ կոչեն, այն տեղէն գա-
 լուն և եղիւրաճեւ պտղոցն համար-
 դեղոց և գործածութեան մէջ շատ
 կարեւոր և պիտանի նիւթ մ'է.
 « Ինքն ի Քասպիլ և ի Պարսա և ի
 » Հնդուստան կու լինի, ըստ մեր
 » Ամասիացւոյն. լաւն այն է որ սեւ
 » և հասուն լինի և մեղրով լինի. հալող և կակղացընող է, զփորուն ուռէցներն
 » տանի և բանայ », եւ այլն:



կասիա.

1331. * Կասիմոն.

Կասիայի նման կամ նոյն բուսեղէն մի գուշակուբ, վասն զի Դարիսենիկի հետ յիշելով Խորհն. աշխարհագրութիւնն ի ճենաստան, կ'ըսէ, « Եւ Կասիմոն ի Կասիա լեռնէ »:

1333. Կասլա.

Այս է հասարակօրէն Դասիմի կոչուած մշտադալար և առասպելայիշատակ ծառն, յոյն բառիւ, ինչպէս յիշած եմք (թ. 367), նոյնպէս Եզրեղի կոչուիլն այլ (թ. 631). կոչուի եւս ի մեր լեզու՝ Սարդենի, Շար և Հոփի. մեր երկրին կլիմային ընդունակ չլլալով, զարմանք է որ այսչափ անուներ ստացեր է առ մեզ. գուցէ այլ եւ այլ նահանգաց բնակիչք տեսնելով զայն ի Յունաստան կամ ի Փ. Ասիա, իրենց հոգուն մէկ ծանօթ ծառոյ անուամբ կոչեր են: Լ. Laurus, Փ. Laurier, Բ. Տէֆնէ. Ռ. Лавръ. Ար. Ղար, Ե. որով ստորագրէ Ամիրս. « Ղար, որ Տա. »
» Լայուրի ասէ, և Հ. Կասլայ ասէ, և Հոս. Տաֆնի ասէ, և Դարսենի այլ
» կ'ասեն, և իր պտուղն սեւ հատկներ է... ամենայն մահացու դեղոց թիրեաք
» է և կարճահարի... և թէ ծեծեն և սպեղանի առնեն և օծեն այն տեղացն վե-
» րայ որ մեղուն է խայթել, օգտէ. և թէ հացով կամ ալուրով սպեղանի առնես
» և դնես ի վերայ տաք ուռէցին, օգտէ... և թէ ի օերեւէն մէկ կտոր կտրես
» և ի դետինն չի ձգես, և յակընջին յետեւն կպցընես, քանի որ գինի խմէ՝
» չի հարբենայ մարդն. (զգճյ լկաց). Եւ թէ ի փայտէն մէկ կտորիկ ի տգակ-
» ներուն յորոցքն կապես, չի կանչեր, և ի քուն լինի... Եւ թէ ի ջուրն թրջեն
» և զան ջուրն ի տունն ցանեն, ճանճերն փախչին: Եւ թէ զտերեւն քացիով
» եփես և ի բերանդ բռնես, օգտէ ակռային ցաւուն »: — Հին Բժշկարանն
այլ գրէ. « Պտուղն նորա ջերմին է քան զտերեւն, թէ աղաս զնա և մեղրով
» խառնես և տաս (այնոր) որ ելունդ կայ ի փորն կամ թառանջ, կամ ի կործքն
» մաղաս, օգտէ: Որ գինով խմէ՝ զպիտակն սրբէ: Չէթն դորա խառնել ընդ
» վարդեղ և ընդ հին գինի և յականջ ածել, օգտէ որ վատ լսէ. և յամենայն
» տաք օձնելիք աղէկ է խառնել զդա. և կեղեւն ծառին դորա տալ որոց քար
» է ի փաղարչտին. փչրէ. և լերդացաւի օգնէ »: — Դաշնագոսայ՝ Կասլայի պտուղ », գրէ Հին Բժշկարանն. ինչ լեզուով? յիշեն ուրիշներն այլ Եզրեղի պտուղ և Շարի պտուղ կոչելով. որ է Լ. Bacchus Lauri. Ասկէ տարբեր է

1333. Կասլապտուղ.

Ձիթենւոյ տեսակ մի, որոց պտուղն « Կասլայի պտուղն է նման և յայն ձեւն է », ըստ Գրոց վաստակոց (ՄՀԸ):

1334. Կասլիկ.

Գուցէ Կասլա անուան նուագականն ըլլայ: վանական վարդապետն է յիշողն, Թթու Նուռն անուցընելու համար գործածուած. « Փայտն՝ որ յարմատ Թթու Նուռն

» հարկանենն՝ որ քաղցրանայ, կէսք Կապիկ ասեն. այլ կայ, Տահիկն Կասափ ասէ,
» բայց Մրտին է »: Անծանօթ է ինձ Ար. Կասափն՝ եթէ չէ Ղասապ, որ է Ե-
զէզն: Վաստակոց Գիրքն (ՄԼԸ) Նանենայ ծակին զարնելու փայտը կամ ցիցը,
ինչպէս կ'ըսէ, Սոնոպրի կամ Գէր Մարխ ցուցընէ:

1335. Կասկ.

Երկու նշանակութիւն ունի բառս, մին « Գարի կամ Գարեջուր », զի այսպէս
մեկնէ լուծողն Եւազրի բանից, « Սակաւ մի կասկ ընդ արմաւաջուր խառնեալ »:
Միւսն

1336. Կասկ. Կասկենի.

Պատու զ'է, զոր Թովմաս Վ. յիշէ Կիրիկիոյ յատուկ պտղոց հետ. գուցէ ըւ-
լայ Կաստանայն. բայց բժշկարար պտղոց կարգին յիշուի. իսկ Միւ. Գոշ կ'ըսէ յառակս
(ԻԳ). Թէ անուշ Աշենին իր անհարազատ եղբոր դառնութենէն նեղուած՝ « ա-
» բար իւր բարեկամ և եղբայր զԿասկենին, բարոյակից զնա գտեալ ըստ եր-
» կուց որակաց. (մըք են). և ի բազմաց միղադրեալ՝ ասաց. Որ ըստ կամաց ի-
» մոց է՝ նա է իմ եղբայր: Եւ ոչ ոք կարաց ասել նմա ինչ »:

1337. Կասկած.

Չոր ուրիշ օրինակ գրոց (բժշկարան) Կարկած գրէ, և յիշուի տերեւն. Կաս-
կածի տերեւ. և է Սատեձն Հընդի, Լ. Malabathrum. Ըստ Ամիրտ. « Սատէճ,
» عاوا որ է Սատէճ Հնդին՝ ի Հնդկաց կու գայ, և լաւն այն է որ հոտն
» սուր լինի... Ասէ Պտ. Թէ. այն որ Հնդի է՝ Մաճիստան կու ասեն, և Մա-
» շարտան այլ կու ասեն, և Մաշա(պա)րրտան այլ կու ասեն. Ինքն տերեւ է. նման
» է Բնկըզի տերեւին, և ի ջրի յերեսն կու լինի, և ինքն տակ ունի որպէս Ոս-
» բան՝ որ ի ջուրն կու բուսնի. և լաւն այն է որ Թաժայ լինի, և մէկ երեսն ի
» գեղնութիւն քլտէ. և այն որ հոտն ուժով է և զոյնն սեւ է որպէս Ղարանֆիլին
» գունովն. և իր խասիաթն այն է՝ որ Թէ ծեծես և ի վերայ հալաին ցանես,
» զօջիլն սպանանէ. և Թէ ի լեզուին ներքեւն դնես՝ զերբնին համն անուշ առնէ,
» և զակուատակերն ամրացընէ »:

1338. Կասկամոն կամ Կաստամոն.

Յայտ է յունական ձայն անուանն, բայց ինչ ըլլալն ոչ նոյնպէս. Պիոիդեայ
քերդուածէն առնըլով յիշէ՝ Վարդան Վ. Թէ Նոխազ՝ զԿաստամոն ուտելով բժշկի:

1339. Կաստանայ. Կաստանոն.

Յունական բառ է ծանօթ համանուն պտղոյն, որով կոչուի նա եւ Թ. որ-
պէս և Շարաշոք կամ Շահրաշոք. և Թէպէտ Խորեն. աշխարհ. Կաստանոն
անուամբ յիշէ ի Տուրուբերան Հայոց, այլ հայերէն ընտիր անունն համարուի
Մաշկամիրզ. տես զայս

1340. կասաղի.

Այս բուսի բացատրութիւնը տես ի նշոյ: — Խոտալրեցիք այլ կու ճանչնան
կատղենի բոյս մի, բայց տարրեր պիտի ըլլայ:

1341. կատատուկ. — Տես կտատենակ:

1342. կատաւան.

Գալիենոսի բառից մէջ գտուի այս՝ նշանակութեամբ Զոռիրակի (Թ. 72):

1343. կատղած շան խոտ.

Այսպէս կոչուած է վառվառկն. տես զայս:

1344. կատուախաղող.

Նոյն որ ինչ Շնախաղողն. տես զայս, այլ և Պապկէպլոր:

1345. կատուակ խոտ.

Հին Բժշկարանն պատուիրէ դեղ « Մամացի, զկատակ խոտն հան, և հաւով
» եփէ քաջ, որ զոսկերքն զգալով հանես, և ձգէ ի ներս Աղբղբղկի (Թ. 82)
» ունտ, և ուտէ յանօթից »: Հաւանօրէն է վայրի Դադճ մի, և. Nepeta Cataria,
Փ. Chataire. Փռանկը՝ կատուախոտ Herbe aux chats, կ'անուանեն Մովային
Զարօղը:

1346. կատուականջ.

Բժշկական Բառգիրք մի այսոր զուգած է Ար. Արանայփար, այսինքն Էզան
ըլ-Ֆար, որ է Մկնականջ. իսկ կատուականջն է ըստ Ամիրտ. Ար. « Սզան
» ըլ-զըք, որ է Քետի դոչակի. որ է Զրաւանտի մոտահրաձին խոտն, որ Զրաւ
» փանտ մոտափար կ'ասեն, և Զիկ բիրեաք և Ղազմա բիրեաք. օգտէ օձահաւ
» բին »: — Մուտափար և Մոտահրաձ عشرون նշանակեն կլորած տեսակն
Զրեւանդի, զոր և էգ Զրեւանդ կոչեն. (տես Թ. 778):

1347. կատուակծկունծ. — Տես կատուի դեղ.

1348. կատուաճատ.

Հուճ կամ եփած՝ յիշուի ի Բժշկարանս. Թուի կառահատն:

1349. կատուելիշ?

Անպիտան խոտ մի կոչուի, ի կողմանս Սերաստիոյ, բայց անունն ստուգելի:

1350. Կատուի դեղ. Կատուի խոտ. Կատուակծկունճ.

Քէ և աավկական բառ է, բայց աւելի հայկական համազգային՝ քան զՓռ, կամ Ֆռ՝ որ օտար է, և Ար. այլ ڨ. և է բժշկութեան կամ գեղագործութեան մէջ ծանօթ բոյսն Լ. Valeriana, Փ. Valériane, Ռ. Булдырьянъ և ըստ Պէյթ. և Ամիրտ. « Է Վայրի Սնպռչ. մանր տակեր է՝ անուշահոտ որպէս » Սնպռչ, և լաւն այն է որ նոր լինի, և հոտն սուր լինի... Իպն ասէ թէ.. » տերեւն նման է Գարաւիտի տերեւին և այլ մեծ, և որձան կանգուն մի է և » այլ երկայն և կոկ լինի, և գոյնն նման է Ֆիդի ? և այն որ խիստ հաստ լինի » և հաստութիւնն քան ճկըթի մի չափ է, և տակն անուշահոտ է, և ուժն որ » պէս Սնպռչ է »: — Շատ տեսակներ ունի այս բոյսս, յորոց յիշուին Valer. Alliarisæfolia, յայլեւայլ կողմանս արեւմտեան և Փ. Հայոց. — V. Alpestris ի Պոնտոս և ի կողմանս Կարնոյ. — V. Phu ի Ռ-Հ. — V. Sisymbriifolia ի Կարին, Պինկէօլ, Գարապաղ. — V. Officinalis, ի Կարին, Բարբրդ, եւ այլն. — V. Dioscoritis, ի Ծանախ. — V. Leucophaea ի Պինկէօլ, Պայէզիտ, Նախճաւան: — Գարձեալ այլ և այլ տեսակք անզանազանք յիշուին յԵրասխայ հովտին, ի Երակ, Վանանդ, յԷջմիածին, Կոտայք, Կողբ, Խաղտիք:

1351. Կատուի կող.

Յիշուի ի Խոտուղուր. խոտ մի՝ զոր չորցընելով՝ այրած վերաց դեղ կ'ընեն:

1352. Կատուի կօշիկ.

Այս այլ յիշուի, բայց անծանօթ է ինձ որպիսութիւնն, գուցէ ըլլայ հետեւեալն,

1353. Կատուի ճանկ.

Ըստ Ար. Գաֆ ըլ-հարիրա كف الهمر, « Որ է Գաֆ ոչ-հիստա, որ է Կատուի վին ճանկն. ինքն խոտ է և բարկուկ կու լինի, և բոլորկեկ տերեւնի ունի. և » երբ բուսնի՝ ի գետինն կու ճապղի և մէկ թիզ երկայնութիւն կու լինի. և տակն » նման է Զիթապտղին. և աշնան առաջի ամիսն կու բուսնի. և թէ զտակն չոր » ցընեն և ի պիղժ շտերուն վրան ցանեն, շատ օգտէ, և կոծիծնին ի տեղացն » հանէ »: — Թարգմանիչն Պէյթարայ՝ տեսակ մի Խառածաղկի համարի զայս, (variété de Renoncule).

Պէյթար բուն Կատուի ճանկը՝ Զաֆր ըլ-քաթ ظفر القى կոչէ, վերինէն տարբեր բոյս մի, Լ. Clymenum, զոր և նոյնպէս գրէ Գրոնմանոն, قلمونان. իսկ մեր Ամասիացին « Ղռչոնմային. ինքն խոտ-մն է, որ զէտ Բակլայ կու բուսնի, » և տերեւն նման է Զղախտտին տերեւին, և ի զագաթան աման ունի ի մէկ » մէկին նման, Սուսանի ծաղիկ կու նմանի. և այս երկու ցեղ կու լինի, մէկն

» ի ցամաքն կու բուսանի, և մէկն գետեզերքն կու բուսնի, և ի դետին մէջն
» այլ կու բուսնի, և այն որ ի գետն կու բուսնի՝ օգտէ գոթութեան. և թէ մանր
» ծեծես և դնես ի վերայ խանազիրին (Sorosules), օգտէ »: Բուսարանք հիմայ փո-
խանակ այն յունարէնէ ծագած (Clymenum) անուան՝ անուանեն Latyrus Tu-
berosus, որ ճուղկաներուն տեսակ մի է, և տեսնուած է ի կարին և Մարաշ:

1354. Կատուի ոտ.

Մանր բոյս, բարակ կոթով, նշաձեւ կամ ձուաձեւ մատնաշափ տիրեալք. ու-
րիշ յատկութիւնքն անծանօթ են ինձ:

1355. Կատուի պոչ. — Տես Աղունսուշ, թիւ 60:

1356. Ս. Կարապետի ճաղիկ.

Մշեցիք այսպէս կոչեն զԱնթառամ ծաղիկն:

1357. Կարար.

Ըստ բառից Գալիենու՝ ուր գրուի Կարարոյ սերմ՝ է Անիսոն (թ. 109):

1358. Կարք?

Նորայիր Բժշկական բառգիրք մի գրէ, « Կարք՝ Գալտք աղաձի », Կաղամախ?

1359. Կարդ.

Ստ. Ռոջեան գրէ. « Խոտ, որոյ սերմն նման է Լուոյ, Լ. Sicelium ». բուսարանք
այս լատին անուան տեղ հիմայ կ'ըսեն Coccoocypselum. սակայն սա յատուկ է
միջին Ամերիկայի. Ռոջեանի յիշածն թուի Պ. Խորտ կոչուածն, որ է Լ. Carda-
momum, և յատկապէս մանր տեսակն, C. Alpina.

1360. Կարկ կամ Կորկ. — Տես Աղունսուճուք, թ. 63:

1361. Կարկած.

Գրում նշանակէ յԱրցախ. որ է ըսել տեսակ մի Դղըմոյ: Տես և Կասկած:

1362. Կարկար. Կարկարիուն.

Հին Բժշկարանն յիշէ այսոր հունտն իբրեւ դեղ տափողի ցաւի և կոծիծի. ետ-
քինիս համար կ'ըսէ. « Ծեծէ և խառնէ քացախով և պախրի ջեղով, և հար որ լինի
» գէղ մորհամ, և ի վերայ կոծի անձ, չորցընէ »: Կարկարիունի ինչ ըլլալն այլ՝ ու-
զելով բացատրել տեղ մի՝ կ'ըսէ, « որ է ».. և չի դնէր հոմանիշը: Ռոջեան յիշէ
Կարկարիուն, Լ. Chaneleon, որ պիտի ըլլայ Chamæleon, և կ'ըսէ. « Խոտ. տերեւ,

« Լըն Ձիթենույ, հոտն Խնձորի » . Ուրիշ Բառգիրք մ'այլ գրէ, « Քամիդոն, Կար-
» Կոր, Chamæleon » . որով կըրնամք համարիլ զԿարկար հայերէն անուն այս բու-
սոյ, զոր Ար. գրութեամբ յիշած եմք Խամաչոն (Թ. 987) :

1363. Կարմիր Բանջար. Կարմրաբանջար .

Ճակնդեղն է ըստ ուսմկաց . ըստ հին Բառագրոց է Վլիտոն . Լ. Blitam .

1364. Կարմիր Լալա .

Խաչափայտի բազմաթիւ անուանց մէկն է :

1365. Կարմիր Կակաջ .

Թուի թէ նոյն Կարմիր Լալայն է :

1366. Կարմրադեղ .

« Որ է Սիլիկոն », կ'ըսէ Բժշկարան մի . իսկ Սիլիկոնն՝ է Արունճ . տես Թ. 123 :

1367. Կարմրադեղծ .

Յիշուի յԱզաթանգելոս, որպէս և

1368. Կարմրախնձոր .

Որ Թուի հիմայ Կարմրիկէն կոչուած Խնձորն :

1369. Կարմրածառ .

Գալիենոսի բառից մէջ գտուած է յամանց, Լ. Taxus ծառի նշանակութեամբ,
տես Գեղձի :

1370. Կարմրատանձ .

Այս այլ կարմիր Դեղձի և Խնձորի հետ յիշուած է յԱզաթանգելոսէ :

1371. Կարմրորակ .

Զոր յիշէ բառհաւաք մի, անունէն գուշակուի կարմիր պտուղ մի ըլլալ :

1372. Կարմրուկ .

Կարմրժեռ ծաղիկ մի է, ըստ Ասարայ : Ըստ Սեբաստացւոց Գի ծառոյն ման-
րիկ կարմրուկ պտուղներն են : Գուցէ նոյն ըլլայ ընդ վերնոյն :

1373. Կարոս.

Տեսեսուժեան մէջ ծանօթ բանջար, համանուն Ար. كرفس **Ք. Քէրէվից,**
Լ. Selinum, Փ. Selin, Ռ. Горичник. Բայց շատ տեսակներ ունենալով՝
երբեմն անուամբք այլ շփոթուին նա եւ ազգակից բուսոց հետ: Ամիրտ. զանա-
զանէ տեսակները, զորս յիշած եմք Լախուր անուան տակ (**Ք. 883**). հօս յիշեմք
լաւագոյն տեսակաց վրայ առանձին գրածը:

1374. Քարաւս Պօստանի.

« Ինքն ի պաղչան լինի. աղէկն հետովն է: Ատէ ծեր Պաղտատցին, թէ օգտէ
» գնծակուին, (Գանձակ ?) և երակնուն կալուածոցն և լերդին և փայծաղին.
» բայց դիւահարին (լուսնոտին) մի տար, զեն առնէ »:

1375. Ջրի Կարոս.

« Դոշրաք ըլ-այն **عین قوت** որ է Ջրին Քարօսն, և լաւն այն է որ հօտն
» սուր լինի. բացող է: Ատէ Պտ. թէ Հա. Սեյիկոս ասէ, և ինքն ի կանգնման
» ջրերուն մէջն կու բուսնի, և ի ճղերն կպչտուկ գիճուժին կայ, հանց որ ի ձեռն
» մարդոյն կու կպչի. անուշահոտ է, և տերեւն Քէրէվուգի տերեւ կու նմանի,
» և մեծ է քան զԱննուխին տերեւն »:.. Այս տեսակ Կարոս Լ. կոչուի **Sium,**
Փ. Berle. Վաստակոց Գիրքն յատուկ գրէ « Վասն Քէրէֆսին. մի մաշարայ ցա-
» ներ զոստերն. (այսինքն հատ հատ մի ցաներ յածուն) ապա փոս արա, և
» զհունտն ամկից ի ներք լից և ծածկեա, նա գնդուկ արքինի ելանէ. յայն-
» ժամ զամէն գնդուկ հան հողովն, և տակ տակ բաշխատեա և սանարեա. նա
» այն խիստ արքինի և մեծտակ և քաղցրահամ լինի:.. Եւ երբ մեծանայ՝ զտակսն
» փորել պիտի և բանալ, և զակնուռն սուր դանակով կտրել. նա տակքն մեծ
» և թորթոշ լինի: Եւ այսպէս երկու հետ պարտ է առնել. և երբ նշանօքս առ-
» նես դժէրէֆսն, նա խիստ արքինի լինի »:.. Ջրի Կարոսին մէկ տեսակն, **Sium**
Lancifolium (Սլաքատերեւ) յիշուած է ի տեղագրողաց ի Բարբերդ, ի Մարաշ և
ի Հար. Կովկաս:

1376. Վայրի Կարոս.

Յ. անուամբն **Σέλιον**, որով և Լ. Փ. կոչէ Ամիրտ. Սասայիս, և « Վայրի Կա-
րոսի հունտ է, կ'ըսէ... ի հով լերունքն լինի. բազուկն հաստ, մէջն բարակ, տե-
րեւնին լայն »:

1377. Կաւվրուջ ?

Հացի ծառ ըսուած է. բայց ոչ ըսողն և ոչ ըսածն յայտնի է ինձ:

1378. Կափուր

Խորենացւոյ աշխարհագրութիւնն յիշէ զայս ի Հնդկս. Թերեւս Քաֆորն է:

1379. Կաքաւախաղող.

Ըստ Մանանայի (եր. 447) Թուփ է, յԱրագած լեռան վերայ տեսնուած, սղոցանման տերեւներով. որոյ պտուղն ուտելի է թէ հում թէ շաքրով եփած:

1380. Կաքաւախոտ.

Թ. այլ նոյնպէս Քեքլիկ օրի կ'ըսուի: Վիլոդ ի բառագիրսն և Կամարկապցին գրեն Պ. կամ Ար. Մերգեկիշ, որ է Անճարակն (Թ. 116), Լ. Mariolana. Ամիրտ. Սահբար կ'ըսէ, որ է Ծոթրին: Ոմանք համարին Լ. Lithospermum (Քարասերմ), Փ. Gremil ըսուածն: Արեւելքէն բերուածը ցուցինք բուսարանից (ի Պադուա), ճանչցան Լ. Thimus Serpillum E. Chaubardi, որ է տեսակ մի Չամբուփ. (Թ. 694), և գրեթէ յատուկ է Յունաստանի և Բիւզանդիոնի: Այս տեսակս Ար. կոչուի Նաննամ, رنڤ, ինչպէս գրէ և Ամիրտ. նա եւ ուրիշ անուամբ Նաննամ ըյ-նոք, և կ'աւելցընէ, թէ « ինքն Սիսանկարն է. լաւն այն է որ » կանաչ և սուր լինի (հոտով).. Սիննայ որդին ասացել է թէ.. զլուսն և զօլիւն » սպանանէ, և օգտէ հով ուռէցնուն.. և զտափակ ճիճին հանէ.. Եւ զրոցս » շինողն ասցել է, թէ շատ եղեր է որ Սիսանկարն այն կամ Նաննայ (Նամնամ) է դարձել, և փոխեր է ի բուսած տեղն. և այս բանս իսկի հակա » ռակութիւն չի կայ՝ որ Սիսամբարն Նաննայ ելաւ »: Պայթար այս բանս պարզէ. տեսակ մի կայ, կ'ըսէ, որ Herpillos կոչուի, և Սողացող Թարգմանուփ, վասն զի գետնին երեսը սողալով կ'երկըննայ, և ուր որ կենայ՝ արմատ ձգէ:

1381. Կաքաւարօտ. Կաքուարօտ. Կաքւարօտիկ. Կաքաւոյ արօտ.

Այլեւայլ ազգ բոյս ցուցընեն Բժշկարանք. ինչպէս և Կամարկապցին՝ Գառնադմակիկն է՝ կ'ըսէ. այլք՝ Կենարար կամ Կենդանարար, որ և Քանատարիոս, այն է Chamædris, զոր տեսանք Լեռնախոտի տեսակ մի (Թ. 906). նոր ո՞նկ այլ կ'ըսէ Կեյին պարմադի կոչածն է, կանգառանման ցած և անուշահամ բոյս մի:

1382. Կաքաւկրկուտ.

Այս յիշողն անյայտ է ինձ, և զուգած է վերոյիշեալ Քարասերմն Թարգմանուած բուսոյ. Լ. Lithospermum, Փ. Gremil, Ար. Գոշոյ قلس, կամ ինչպէս Ամիրտ. գրէ « Դոշոյ, որ է Հայ ըյ-Ղալարն, որ Մաշի Հնդին, և Թ. Թաշքասան (Տաշքէսէն, Քարկարող) օրի կ'ասէ. սպիտակ հունտ ունի, յարծաթ կու նմանի. և » տերեւն նման Չիթենոյ տերեւին, բայց յերկանկուկ և կակուղ և տափկուկ կու » լինի, և ի պինտ և բարձր տեղ կու լինի, և ճղերն յերկան կու լինի և բա-

« րակ, և Սէզի ճղի պէս յամէն ճղի մէջն մանր տերեւ կ'ունենայ, և յամէն » տերեւի ներքեւ ամրկէկ հունդ կու լինի բոլոր, որպէս սպիտակ քար կու » նմանի. և բնութիւնն հով է. և ասացած է թէ տաք է և չոր. զործկալն » տանի. և թէ ի հընդէն երկու դրամ սպիտակ գինով խմեն՝ զքարն հալէ », եւ այլն: Արեւմտեայք՝ հունտերը մարգարտի նմանցընեն, որպէս և Φ . Herbe aux perles կոչեն բոյսն այլ:

1383. Կաքաւոտնիկ. Կաքուոտիկ. Կաքուտտոտիկ.

1384. Կաքաւուտի բանջար. Կաքովխոտիկ.

Կաքաւու ոտից նմանութենէն առած անունն, գետնամած բոյս մ'է խորոժելի կովուց, բայց համեմի տեղ այլ մտնէ ի կերակուրս: Ռոջքեանն \mathcal{L} . Perdicium գրէ, որ հիմայ կոչի եւս Trixis. սակայն այս տեսակի բոյսերն Ամերիկոյ սեփական են: — Բժշկարան մի (ի \mathcal{L} եհահայոց գրեալ) Կակիդոգիկ գրէ, և՛ այսինքն Չապոտան է, կ'ըսէ. որ պիտի ըլլայ Ճապուռ, զոր տես ի կարգին: — Ուրիշ Բժշկարան աչքի սպիտակութեան դեղ գրէ այս խոտս:

1385. Կաքոտ.

Պոնտոսի կողմերում այս անուամբ ճանչցուի խոտեղէն մի, որոյ տերեւներն եփուած կ'ուտուին: Խոտուրոյ կողմերում այլ այսպէս կոչեն՝ նորոց Չանգակ-ծաղիկ թարգմանածը, \mathcal{L} . Campanula, Φ . Campanule, զանգակի ձեւին համեմատ:

1386. Կաքուեղէգ. Կաքաւու եղէգ.

Չայս Սալաձորցին իր Ծաղկանց երգոյն մէջ յիշէ.

« Կաքուեղէգն և Կաքուեղէգն խիստ բացուին մէջ սորերուն »:

Բժշկարան մի յայտնէ. « Քասնին՝ որ է Կաքաւու եղէգն », և մաշած լերդի դեղ գրէ: Քասնին θ . Եղերդն է:

1387. Կեարմաւի? եղէգ.

Յիշուած ի կողմանս Սասնոյ, ուր կ'ըսուի՝ թէ տաք ջրի մէջ եռացընելով բորոտութեան դեղ կ'ըլլայ լողացողներու:

1388. Կեծի. Կեչի, Կըչի կամ Կիչի.

Թերեւս տարբեր ըլլան առաջինն և երկրորդն, բայց երկուքին համար այլ տեսողք, ի կողմանս Տարօնոյ. վկայեն որ վայրի ծառ մի է խժաբեր, զոր՝ մանաւանդ այրած աստեղ ի դուրս կու տայ. փայտն կարծր ու ճերմակ, հիւսնութեան յարմար: Քայիենու բառից մէջ Կեչոյ հոմանիշ գրուած է Ղորկա կամ Ղորեա, գուցէ \mathcal{L} . Larix Pinus կամ Laricio ծառն ըլլայ:

1389. Կեծուկի ծաղիկ.

Յիշէ Բժշկարան մի, և Հին պանրով եռցընելով չսող ակընջի դեղ գրէ. ան. ւամբն նման կոճուկի և կայծուկի, այլ նոյն ըլլալն չէ յայտ:

1390. կենատ.

Վարդան Յովնանեան (եպիսկոպոս Լեհահայոց) յիշէ, և հոմանիչ գրէ Լ. Sardonian կամ Sardoia, որ հիմայ կոչուի Ranunculus Sceleratus. և կեսարիոյ կողմերում տեսնուած է:

1391. կենարար. կենդանարար.

Բժշկարանք ոմանք նոյն՝ ոմանք տարբեր կու ցուցընեն, հոմանիչ գրելով Լ. Քամատարիոսի, որ է Chamædryas, և Քամաֆիտոսի, որ է Chamæpytis, և իրարմէ տարբեր ազգէ են. բայց բացատրութեամբ կու միացընեն, ըսելով. « Ինքն » խոտ է, ծիրանի ծաղիկ ունի, և տերեւն նման է կաղնոյ. աղէկն ի սարերն » բուսանի »: Մէկն զանազանելով՝ զայս կ'ըսէ կենարարին համար, իսկ կենդանարարին՝ Մաղիկն գեղին, և « տերեւն նման շփնոյ տերեւին. աղէկն ի » արտերն կու լինի »: — Մենք զանազանելով կենարար համարինք զՔամաֆիտոսի. Ար. کامافيطوس գրուած, Քամաֆարոսս յԱմիրտ. « Որ է Ստեանկար » ըլարզն, որ է (ճիշդ թարգմանութեամբ) Գետնի Փիճին. Հ. Ճանկիտտ, Թ. » թափ տորթան. և տերեւն նման է Փիճու տերեւին. ծաղիկն դեղին է. և բուն » այն է որ նոր լինի. Բացող և ճլէ տուող է:.. Խպտ. ասէ, թէ Հոռմցի կարօսին » հունտն է. Մանուսին ասէ, թէ Հոռմցի թարղոն է. և ոմանք ասեն, թէ Ղինա » յին տերեւն է. և ամէնն չէ ստոյգ: Եւ ասէ գրոցս շինողն, թէ ստոյգն ան է՝ » որ ինքզ խոտ-մն է, որ ծաղիկն պանալի (մանիչակագոյն) և դեղին կու քլտէ. » և կու լինի որ յետոյ հունտ կու բռնէ, և յերկայնութիւնն մէկ թիզ կու լինի. և » ի Շիրազ Մաչարար կու ասեն. և լեղութիւնն յաւելի է քան զգորութիւնն և քան » զսրութիւնն. և տերեւն բարակ կու լինի. Եւ ասացել են թէ Քամատարիոսն է » իր փոխանն »: Այսով ազգակից ցուցընէ գետնի Փիճոյն կամ Ճանկխոտի մեր զանազանեալ կենարարն, Chamædryas, کامادرياس, « Որ է Պայուտ ըլարզ (Գետ » նի կաղնի), ճղկներ և տերեւն է որպէս կաղնու տերեւի, և ծաղիկն ծիրանի » է:.. Ասէ Պտ. թէ Հա. խամատարիոս կ'ասէ, որ թարգմանի Պայուտ ըլարզ. և » ոմանք Տոսֆարիս ասեն. Հ. Լերդախոտ ասէ »:

1392. կելի. — Տես կեծի:

Ի կողմանս ինչ այսպէս կոչեն և զՍեւուկն, զոր տես:

1393. կեռաս. կեռասի.

Բալի վրայ խօսելով (Թ. 282) յիշեցուցինք որ այն անուամբ կ'իմանան մեր

նախնիք զԿեռասն, որ՝ իր յատուկ հայրենիք համարուած Պոնտոսի Կերասինն քաղաքէն տուած է անունն առ Երոպացիս, ի Հռովմայեցւոց բերուած, ինչպէս և Միրանն հայկական. Լ. Cerasus, Փ. Cerasier, Ար. Բարասիա, لچاصا Թ.

Քիրագ. Ռ. Вишня « Ինքն ցեղացեղ կու լինի, ասէ Ամիրտ. և լուն այն » է որ քաղցր և հասուն լինի, և քաղցրն ի տաքութիւնն մօտիկ է, և լուծումն » կու առնէ. և թէ գիր խէժն ի յաչքն քաշեն՝ ճլէ տայ աչացն, և տերեւն որ » եփած լինի՝ զնուզլան խափանէ՝ որ ի փողն պիտի իջնու, և զուռէցն տանի. » և իր խէժն օգտէ հազին, և զխնաֆսին (չնշարգելութեան) և արիւն թքնե. » լուն և թոքին խոցեցուն... և թէ զչորն թրջն և զլուրն խմեն, զսաֆրային » զարութիւնն տանի. և ինքն ամենայն դիմօք ի Սալոր կու նմանի, և խէժն » կակղացընող է, և զքարն կու հալէ, և տերեւն զփորն կու կակղացընէ. և » իր զենն այն է՝ որ զգր խառնուած աւելի տեսնու՝ յինքն դառնայ : — Աօէ » Պտ. Թէ Զարասիա ասեն. և ասէ զրոցս շինողն, թէ Սյուսի ապառայի ասէ, » և ինքն երեք ցեղ է. մէկ քաղցր և մէկ տրտիպ և մէկ թթու. և այն որ քաղցր » է՝ տաք է ու գէճ է, և շուտ անցանի յստամաքէն, և զինչ որ տեսնու՝ յայն » դառնայ. և ինքն չէ աղէկ կերակուր, սալտա կու ընծայէ : Եւ այն որ տը » տիպ է՝ նա քաղցրին ներհակ է. և այն որ թթու է՝ զժարաւն կտրէ և զփորն » կապէ, և որոյ ստամաքն ի ի լինի պալղամով՝ օգտէ, այնոր համար որ չորացը » նող է : Ասէ Դէսոկորիտոս, թէ այն որ դալար լինի՝ լուծումն առնէ, և յոր » ժամ չորացընեն և ուտեն՝ կապէ զփորն. և թէ գիր ծառին խէժն զինով և » ջրով խառնես և տաս, զհին հազն կտրէ, և զերեսաց գոյնն աղէկ առնէ, և » զաչքն սուր առնէ » : — Վաստակոց գիրքն (ՄԻՐ) խրատէ, ոչ հունտով այլ » ի շալի ջանջխէ շատցընել, և զայս ի նոյեմբերի. տնկելի տեղւոյն համար այլ » կ'ըսէ (ՄԻՐ), « Կեռասենին բնաւին զգէջ և զհով տեղիսն ընդունի. թէ առ » նուս սեւ խաղողի պատրոյս և պատրուեսս ի Սեւ Կեռասենւոյն բազուկն, » նա բերէ խաղող, և այնպէս կանուխ հասուցանէ՝ զերդ զԿեռասն. . . ԶԿե » ասն ի մէջ փարչին ընուս, ի վերայն զմեղր ընուս, դիմանայ մինչեւ յերեսուն » օր. թէ ուզես ան, յօտար երկիր տար » : — Ամիրտ. ըստ համոյ պտղին երեք » ցեղ ըսաւ զԿեռաս, բուսարանք ըստ այլ յատկութեանց զանազան տեսակներ » կ'որոնեն, յորոց C. Incara և C. Padus կոչուածքն՝ նշանակած են ի Ռ-Հ. C. Tortuosa, ի Կեսարիա, ի Սննար լեռներ. — C. Mahaleb ի Մարաշ. — C. Chamocerasus (Գետնի Կեռասենի) ի Մանախ :

1394. Կերթ. Կերդ. Կարտ.

Ուտելի բանջարեղէն մի առանց եփելու. մանր տերեւով և դեղին ծաղկով. կաթի նման հիւթ ունի՝ վիրաց բժշկարար, որ և ախարժողաց ծամոն կ'ըլլայ : — Ար. لچاصا, Եգիպտոսի Առուոյտ նշանակէ :

1395. Կերիոն.

Տես Գերիոն և Եղամաս (Թ. 469 628) : Յիշուի ի Տարօն և ի Խոտուչուր :

1396. Կէնէկէրչէք ?

Կտաւատի նման իւզաւոր բոյս մի կ'ըսուի :

1397. Կիզուկ .

Մեծ Երիցուկ է գեղին գունով, փոքր Արեւածաղկի նման . յիշուած է վանայ կողմերում :

1398. Կժոցիկ .

Նշանակած է բառհաւաք մի, առանց բացատրելու :

1399. Կիզուօն կամ Կիւզուօն .

Հարցընելու է Խոտուչրեցուց :

1400. Կիկիւ . Կլկիւ . Կլկու .

Հաւանօրէն նոյն է որ ինչ Գիլգիլն և Գղգիղն, թէ և քիչ մի զանազանն յիշողք . ոչ հին գրուած մի կ'ըսէ . թէ Կեռասի կուտի չափ հատիկ է, զոր ազալով թան կ'եփեն : Յիշատակագիր մ'այլ պատմէ, թէ սովի կամ թանկութեան ատեն յամին 1575, ի կողմանս Խարբերդու, « ի թվին Հայոց Ռիօ . ելաւ շա . » բեկ մի Յորեն՝ ի Փլորի մի, շարեկ էլի սերմանն ասեն՝ Յորենի պարապար . » Ատուած պահէ ի փորձանաց, թէ այլ չընու » : Ամիրտ . յիշէ ըստ Պէյթարայ՝ Ղոչղուչ, զոր աւելի մօտ հայերէնի Գիլգիլ կարգայ թարգմանիչն, قلقل այլ և այլ կերպով եւս գրէ, « Հասլի Ղոչղուչ ինքն կանաչ ծառ է, և ի վերայ » Լուպիայի պէս հատեր կու բուսանի, և երեք երեք տերեւ կու լինի . և թէ » շատ ուտեն (Կնճուտ և մեղր խառնելով) թուխմա առնէ » : Պէյթար կ'ըսէ՝ թէ տերեւին ներսի կողմն կարմիր է, դըրսին կանաչ . երբ չորնայ և հով դպլի վրան, սարսուռ ձայն կու հանէ . տերեւին համն լեղի է, ծաղիկն քթանի նման, բայց աւելի ճերմակ, որձայն կարմրուկ և մազոտ . հատիկներն թանձր պարկուճի մէջ են, մթնկեկ գունով, խիժոտ և անուշահամ : — Բուսաբանք կոչեն զԿիկիլ՝ Cassia Tora .

1401. Կիկի .

Ըստ Կամարկապեցոյն՝ Գղթոր է . վասն զի գուգէ, « Մագոս . ծառի պտուղ » է, որ է Փէլիտ թօխումի » . այսինքն պտուղ Բալուտ ծառայ :

1402. Կիմբիթ . — Տես Կոնապրակեղ :

1403. Կիմոդիկ.

Տես Հարուէ, որոյ հոմանիշ է կամ տեսակ մի:

1404. * Կինամոն. Կինամոմոն.

Երբայական բառ է, յորմէ Յ. Κινάμωμον, Լ. Cinamomum, Փ. Cinnamome, և Cannelle, Ռ. Корница. որ սովորաբար Գարրինենիկի համար կ'ըսուի, թէ և երկուքն եւս մի և նոյն բուսոյ բերք են. սա կեղեւն է, Կինամոմոն անոր հիւթն կամ որ և է հոտաւոր մասն: Ս. Գրոց մէջ շատ հեղ յիշուի այս յատկութեանը համար, իբրեւ փափկութեան նիւթ. Պէյթար առաջին անուամբն յիշէ ց. Ե. Ամիր-տողլաթի մէջ շեմ հանդիպած և ոչ մէկ անուամբ, և զարմանք է. ոչ միայն այսպիսի աշխարհահռչակ նիւթ մ'ըլլալուն, այլ և յիշատակուած՝ ի մեր նախնեաց, պէսպէս ստոյգ և կարծեցեալ յատկութեամբք. Մխ. Գոյ ի Մեկն. Երեմիայ՝ գրէ. « Մի ի խառնուածոցն խնկոց՝ Կինամոմոն է, պտուղ բանջարոյ, որ և գտանի » ի Տմորիա Հայոց և յայլ աշխարհ. և ոչ միայն անուշահոտ է, այլ գոյ և գիտական « զօրութիւն ի նմա, զի ի քուն՝ խօսել տայ և յայտնէ զծածուկս սրտի »: Այս զարմանալի յատկութիւնը յիշէ և Յալհ. Երզնկացի՝ չափաբանութեամբ.

« Է և ի խոնկս ինչ Կինամոն զարմացական, Այլ և ի քուն զուով մարդոց և թմբական՝
 Որ զնմանէ են սքանչելի բանք ճառական. Մերձ առ շրթունս եղեալ՝ բոլոր բարբառ և բան.
 Եթէ ի շուր ինչ կաթնայից եռանդնական Այլ և կարծիք ինչ կուտութեան ոք լուծական՝
 Արեւել փոխէ զնա ցըրտութեամբքն սառնական Զնա ծխելով իսկ ճմարիտ տեղեկանան »:

Թողլով քնախօսից քան բնախօսից այս յատկութիւնը քննել, մեզ աւելի հետաքննելի էր գիտնալ թէ ինչպիսի բոյս է Խորենացի աշխարհագրին յիշած Կինամոմոն կամ Կինամոմոն Տմորեաց, (որ յայտնապէս չէ Գարրինենիկն հնդկային), և զոր յիշած է նախ Յովսեփոս (Հնախօս. Բ, Բ) ի Քարոն ? Կորդուաց, ուր է և Տմորիք գաւառն. իրմէ առաջ այլ Սալուստիոս՝ Կինամոմոնի հետ ուրիշ հոտաւէտ խնկեղէններ յիշէ, որոց համար անշուշտ լատին քերդողք Խենկաբեր (Tharrifera) կոչեցին մեր երկիրը. սակայն կարծեմ զԿինամոմոն Cinamomum և զՀամամոյն Amomum շփոթած ըլլան հեղինակք. վասն զի գիտուն բնախօսն Պիլինոս (ԺԲ, ԻԸ) ետքինը (Amomum) յիշէ ի Հայս, յՈւտի. Գիոսկորիտէս այլ յիշելով այլեւայլ տեղեացը՝ պատուականագոյն զՀայոցն գրէ: — Տես Համամա, այլ և Աղաւնարօտ:

1405. Կինսձ.

Ազատքեղ կամ այնոր նման տերեւօք՝ մշակուած բոյս մի է:

Կիչի որ և Կեչի. Տես Կեծի:

1406. Կիպարի. Կիպարիս.

Լ. Cypressus, Փ. Cyprés. Ժանօթ ծառ, որոյ ժանօթագոյն անունն է Կոճի, զոր տես. Թէ և այս յոյն անուամբ եւս յիշուի, Թէ ծառն և Թէ պտուղն Կիպարի ծառի. ինչպէս ի Վաստ. գիրքն (ձգ. 81) որ և խրատէ (10. ձէձ). Եւրջա-
» նակի պատին՝ արժան է Կիպարիք կամ Բարտիք տնկել : — Ս. Հարց ոմանք համարին Թէ Տեառն մերոյ Քրիստոսի խաչն Կիպարի փայտէ էր, ինչպէս կ'ըսէ և մեր Ենորհային, յԱռական.

« Ի խընկաբեր բլրին վերայ
Չոր Կիպարի ծառ մի տեսայ » :

1407. * Կիպերիս կամ Կիպեռիս

Այս այլ յունարէնէ առնուած անուն է, Լ. Cyperus, Փ. Souchet, Ռ. Морской
СИПНИКЪ. Հայերէն Դռն կոչուիլն և բացատրութիւնը զրած եմք նոյն անուան
տակ. (Թ. 602) : Հօս յիշնք Կիպերիսի տակն, որով Վաստակոց գիրքն (61) խրատէ
« Երծեա և ջրով եփեա աղէկ ուժով, և այն ջրովն Թաց և լուա զոխարն.
» նա զգարան և զօլիլն և զտիղն սպանանէ » : Այս Կիպերիսի տակն՝ Մշկի
Ժողիի տակ այլ կ'ըսուի. (տես զայս). և է հաւանօրէն անուշահոտն Cyp. Longus,
Փ. Souchet odorant, Թ. Գըրգ պօղոս :

1408. * Կիտրոն.

Համեմային Թթուեղէն պտղոց մեծագոյնն, յունական բառիւ, որպէս և Լ.
Citreus, Փ. Citronnier. Ար. « Ուրբուռն. Թ. Աղաձ դախնիի ասէ, և Հո.
» Կիտրոն ասէ, և Պ. Թոռիւն. քաղցր այլ կու լինի և Թթու այլ կու լինի, և մանր
» և մեծ այլ կու լինի. և կեղեւն տաք է և չոր. նուրբ այնող է և կտրող է,
» զգէչ հոտերն՝ աղէկ հոտեր առնէ. և Թէ գիր Թթուն յերեսն օծեն՝ զաղտն և
» զմուխն յերեսացն տանի. և Թէ յաչքն քաշեա զէտ ծարուր՝ զսպիտակն տա.
» նի, ... և տերեւն զսիրտն խնդացընէ. և ծաղկունքն այլ խնդացընող գեղե-
» րուն է... և մէն շարապ կ'առնեն, և զկեղեւն կու սնցընեն », եւ այլն, եւ
այլն. շատ ուժերն յիշելէն ետեւ՝ վերջացընէ կրկնելով. « Իր կեղեւն և տերեւն
» և ծաղիկն՝ նուրբ է խիստ » : Բայց ինչպէս Պ. անունէն ալ տեսուեցաւ՝ նոյն
համարի զԿիտրոն և զԹուրինը : — Կիտրոն յիշուած է և յԱգաթանգել : Ծառին
փուշերը՝ ինքնարոյս սրերու նմանցընելով՝ բանաստեղծօրէն ըսեր է Պիտիդիոս,
և ճարտար Թարգմաններ է Հայն. « Ո՞վ գինեաց զԿիտրոն՝ փշովք, և բուսոյց ընդ
» նմին սուրս ինքնազարբնեալ » : Հեթանոսք այլ Կիտրոնի փայտն անփուտ
համարելով՝ անկէ երեսնց կուոց պատկերքը յինէին. Materie ipsi æternitas.
(Պին. ԺԳ, 6) :

1409. Կիրիլայ.

Իբրեւ Կիրայի սիրած ուտելի խոտ, յիշուած է ի Սասուն :

ԿԼԿԻԼ. — Տես Կիլիկի:

1410 * Կիլ Ծաղիկ.

Թէ և Թ. Վարդ նշանակէ առջի բառն, բայց տեսող և ճանչցող անձի վկայու-
թիւնն համաձայն է գիտնականաց վկայութեան, այն բազմագոյն (սպիտակ, դե-
ղին, բաց կարմիր, մանուշակի, նա եւ Թուխ) և հոտեղ ծաղկին՝ որ Լ. Crisan-
themum, Փ. Chrysanthème Բ. ՀԱՍՈՍՍԻՄՈՆ. կոչուի, թէ և այս անունս բառ
առ բառ նշանակէ Հ. Ոսկեծաղիկ, զոր պիտի յիշեմք ի կարգին, և որոյ անունն
աւելի մարդոյ յատուկ անուամբ յիշուած առ նախնիս՝ չի յայտնեի ծաղկի տե-
սակ: Թիշեմք եւս որ ձայնիւ և իմաստիւ նման Թուի Գուլվարդն այլ երգեալ
ի Սալաձորեցոյն, բայց տարբեր ըլլալը վկայեց զերկուքն այլ տեսողն ի կողմանս
Սասնոյ. ուր, կ'ըսէ, չորցընելով զծաղիկն՝ թէ հոտառութեան ի գործ ածեն թէ
եռացընելով Չայի տեղ: Բուսարանք 80 և այլ աւելի տեսակ գրեն այս բուսոյ,
որ խոտեղինաց կարգին է, թէ և փոքր թըլիի պէս կ'աճի, շատ ճիւղերով և խիտ
ու բազմութեբ ծաղկընեբով, որ գրեթէ յամէն կողմ երկրի գտուին, ինչուան
աշնան վերջը դիմանան: — Ch. Segetum կոչուած տեսակ յիշուի ի Հր. Կովկաս:

1411. Կլմբոզ կամ Կլմպոզ.

Ըստ Մշեցւոց է ճակնդեղ ծանօթ բանջարն:

1412. Կլոր.

Խոտուղրեցւոց բարբառով Սեխ նշանակէ:

1413. Կլուլ.

Հատիկներուն ձեւէն առած է անունն՝ իբրեւ Կլոր, և նշանակէ զՄաշ. տես:
Սանսկրիտ լեզուաւ այլ կոչի Կոյա, Կոյակա:

1414. * Կլունուս.

Վաստակոց գիրքն յիշէ (88), բայց թարգմանինն սխալ կարդացեր է, յայն
Φλόμος բառը, որ տառադարձութեամբ հայերէն Փլունոս գրուի, և է Եզանագին:

1415. Կխտըկուր խոտ.

Հաւանօրէն սխալ կամ ուսմկօրէն գրուած է փոխանակ Գաղտիկոչի:

1416. Կծախոտ.

Ծառոց կարգին յիշուի (Մշակ օրագիր, Ժ. 16), բայց անունն խոտ ցուցընէ:

Ը

1417. Կծմախոտ. Կծմակոմ. Կծմակոլոմ. Կծմակոլոտ.

Բանջարեղէն է, նման Եղերդան սրածեւ և անկիւնաւոր տերեւաք: Կ'ըսուի և Լակոտ. թերեւս պարզապէս Կոլոթ ըսելու տեղ: — Բառգիրք մ'այլ անասոյք բառերով գրէ, « Աշինձ և Որբայ կամ Ողորայ, Կծմակոթ. Alrhoa, և ուրիշ աւելի խանգար իբրեւ Լ. բառ մի:

1418. Կծմանն .

ի Խոտուղուր ծանուցուած է:

Տես Կցնցռակ. Կծմնծուկ.

1419. Կծոխուր. Կծոխրի. Տես Ծոր.

1420. Կծուիչ.

Նոր յարմարացուցած բառ թուի՝ Մանանեխի տեսակի մի, որ կոչուի, Լ. Armoracia Rusticana, Փ. պէսպէս, Armoracia, Cranison rustique, Moutarde des Capucins, Grand Raifort. բայց այս անուամբք կոչուի և Չախուկն (թ. 923):

1421. Կծուուկ.

Բանջարեղէն մի աղցան ուտելու. այսչափ յիշէ նոր գրող մի:

1422. Կծուուրց ?

Այս այլ ուտելի խոտեղէն մ'է. վարդագոյն, (Նոր Դար, է. 102):

1423. Կկոցիկ.

Յարմար անուն ծաղկան, զոր նշանակած է բառհաւաք մի, առանց բացատրութեան:

1424. Կղեմ.

Տեսակ մի կնիւն է. յիշէ Ռոչքեանն. իսկ Ասար կ'ըսէ « Ծիւ մանր և բար »:

1425. Կղէզ Դառն ?

Լստելով և մեղրի հետ խառնելով ականջացաւի դեղ գրուած է: — Ըստ ոմանց ընկուզի կանաչ կեղեւն է:

1436. Կղմուխ.

Անտուզ անուամբ յիշուած է (Թ. 128). Ար. Ռասան, ساس, որով սկսի գրել Ամիրտ. « Բասան, որ է Անտուզն, որ է Կղմուխն. որ է Չանձապի շամին. « Ինքն երկու ցեղ է, ածվոց և վայրի. լուսն այն է որ կանաչ և ի լի լինի. » կտրող և նուրբ է. զճիճին ի փորուն ձգէ, և ոսկրացաւուն և կանակին ցա. » ւուն օգտէ. և դիւահարի և գաղանահարի. իպն. ասէ, թէ ծեծես և զլուրն » քամես և մեղր խառնես և տաս՝ հազին օգտէ և զխնաֆասին »: Աւրիշ Բժշկարան մի կ'ըսէ. « Ինքն ջրի տեղ և դաշտերն լինի. մայիսին քաղէ. լաւ է »: — Ըստ Հին Բժշկր. « Կղմուխ տաք ու չոր է յ'Յ տրճի մէջն. և ցած տաք է » քան զխստոր և զՊղպեղ և զՄաննեխ. օգտէ ամենայն հով ցաւու՝ որ ի գիճէ և » յղորկութենէ լինի ի կուրծքն, թէ մեղրով շաղիս և տաս ուտել. և զըստա. » ցաւի օգտէ, կամ թէ կէս զլիտյն ցաւի ի հովէ, կամ թէ զօղվածքն ցաւին. » որ ուտէ՝ ի ստամոքն յերկարէ. . . . և որ ուտէ՝ ի քացախն թանայ. . . թող զակն » ու զծայրքն »: — Լ. Helonium, Φ. Δανθό. Հռոմցի Կղմուխ. կոչուի վերայիշեալ Չանձապիին կամ հասարակ Կոնապղպեղն:

1437. Կղպուր.

Մթերինի և Քամոնի հետ յիշէ Կամարկապցին, որով անոնց նմանին յայտնուի:

1438. Կճան. Կճան խոտ.

Ռամկական անուն է Եղիճին:

1439. Կճանկոմ.

Այսպէս գրուի վերայիշեալ Կճանկոմն՝ Գալիենոսի բառից օրինակի մի մէջ:

1430. Կճըճակոտրիկ. — Տես Դրափկոտրոկ:

1431. Կճուճ.

Լ. Polypodium, Φ. Polipode, Ար. Պեսպայիճ سباج. « Ինքն խոտի տակ » է կարմիր և ճուկումուկ. և համն քաղցր է. աղէկն ֆատուի լինի », ըստ Ամիրտ. որ դարձեալ գրէ. « Քաք Լ, զէտ Ակիր. և ի մէկ քովն ի վար ճղեր սնի » սէզ, և ի մէկ դին շէ. և լաւն այն է որ Վարաֆիլին համովն լինի. և ինքն » քառասուն սովաք սողուն կու նմանի (համաձայն Լ. անուան). և ինքն փոքր և » մեծ այլ կու լինի. և լաւն այն է որ կանանչ լինի և հաստ. . . և ինքն լուծող » է. և թէ տլէ անես՝ չի թողոր որ նուզլան ի յաչքն իջնու, և ինքն զուստան » կու հանէ և զպաղղամն կու լուծէ. . . և թէ սծես՝ զլղերն կ'ուժովցընէ, և ձե. » ռաց և ոտից զճեխքին տանի. »: . . — Կովկասի թէ Հս. թէ Հր. կողմերում գտուի Հասարակ տեսակն. անունն այլ յայտնէ՝ որ ծանսթ էր ազգայնոց:

Կմբիր որ և Կիմբիր՝ տես Կոնսպիլյեդ:

1432. Կմնտաշ.

Ըստ Տրապիզոնեցւոց՝ տեսակ մի Եղեսպակի. Լ. *Salvia verticillata*. Փ. *Sange verticillée*.

1433. Կմշտրուկ ?

Ըստ ոմանց Լ. *Mercurialis*, Փ. *Mercuriale* բոյսն է, այսպէս կոչուած իր բժշկական գորութեան համար. Ար. Հալպիս, « Խոտի տակ է, ըստ Ամիրտ. ի » Հնգկաց կու գայ, ի Սորնջան կու նմանի. . . օգտէ նկրիսին և ոսկրացաւին » : — Դիմացկուն տեսակն *M. Perennis*, տեսնուած է ի Պոնտոս, ի Մանաս:

1434. Կմոթուկ.

Խոտուղուրեցւոց ծանօթ բոյս մ'է. սպասեմք որ մեզի այլ ծանօթացընեն:

1435. * Կնափ.

Ըստ Ռոշքեանի « Փշոտ թուփ է, և ի նմանէ բուսեալ Կառն թափչական, » որով թափիչք նորագործ կապերտաց բուրդ և գոյն վերածին ». ըսածին վկայութիւն այլ բերէ ի թարգմանեալ գրոց (Դամ. Փիլ.). « Նա եւ Կնափ առանց » արուեստաւորի ոչ առնէ զիւր գործ ». բուսոյն անունն այլ գրէ Լ. *Gnaphus*. որպիսի անուն չի լսուիր հիմայ, այլ Կնափ բառն է յոյն *Γναφύς*, որ նշանակէ թափիչ, այսինքն լաթ լուացող և ճերմակցընող. այս բառէն յարմարած է Լ. *Gnaphalus*, որ ըստ մեզ է ճաղճողակ կամ Ալիանջոակ (թ. 40):

1436. Կնրիլ.

Տարբեր ի Կիմբիրէ (թ. 1402). Պէյթարայ յիշածն է Ար. *جنيبي*, ըստ Ամիրտ. « Ղանկի. մանտր հունտ է, և լանն այն է որ կարմիր լինի և ի գեղ. » նութիւն քլտէ. . . Ացցել է Պտ. թէ ինքն Պգր ըլ-Ռանին է. և Իպն. աօէ, թէ » մանանայ է, յերկնիցն կու իջանէ ի Եամանու յանապատն. և ասցել է Ռա. » զին՝ թէ կարմիր հող է, և յորժամ տապկեն՝ դեղին լինի », եւ այլն: Այսչափ տարբեր իմաստներ շփոթեն զբուսաբանս, որք կարծեօք կ'ըսեն թէ ըլլայ *Mallotus philipensis* կամ *Echinus* կոչուած բոյսն, Ափսարբիոնի տեսակ մի.

1437. Կնիւն.

Հասարակ անուն ջրի մէջ բուսած Եղեգի նման՝ բայց աւելի բարակ՝ բուսոց, որք (ըստ տեսակաց) հայերէն կոչուին եււ Ագռաւի ծաղիկ (թ. 6.) կղեմ, ճիլ, Պրոտո, եւ այլն. Լ. *Juncus*, Փ. *Jono*. Ար. Սիւնար. Այսպիսի բոյսք գործածուին խրօփր կամ սապատ հիւսելու, կամ կակուղ և դիւրարեկ բաներ պլլելու, եւ այլն: Ս. Գրոց մէջ այլ յիշուի Կնիւն իր ազգակցօք, Պրտուով և Եղեգով (Յովբ.

Խ, 16) : Թէպէտ և հասարակ կամ ոչ կարեւոր բոյս, այլ շատ տեսակներ որոշած են բուսաբանք, որոց շատն գտուին ի Պանտոս և ի Հար. Կովկաս՝ որ բովանդակէ և զՀայս. Այսպեան կոչուածն՝ J. Alpigonus յիշուի ի Փալանտէօքէն լերին Կարնոյ և ի Մուշ. — J. Tenagea կոչուածն ի կողմանս Հերայ (Խոյ) :



ԿՆԻՆՆ.

1438. ԿՆՃՆԻ. ԿՆՃՆԻԻ (1).

Վայրի ծառոց հասարակ տեսակներէն է, որք իրարմէ դժուարաւ զանազանին, անոր համար կարծուի թէ շատ անուամբ կոչուի մի և նոյն ծառն, ինչպէս այս, որոյ այլ և և այլ անունները յիշեցինք Թեղի անուան տակ (Թ. 781), հանդերձ օտար լեզուօք. յորոց մի էր և Ար. կամ Հնդիկ Տարտարն. Ամիրտ. Թուի երկու նման անուամբք ծառ զանազանել, մէկը Տեփտար (չին աղածի) որ « ի Յրդի » ծառ կու նմանի », միւսն Տերտար, ۱۱۳۵ զոր Թեղի գրէ : Եղուած է հօն և այս ծառին խոզակներուն կամ պողոց վրայ մթեղի նման ճճեաց երեւնալն, որոյ համար ծառն կոչուի Մոծակի ծառ, նոյնպէս և Ար. Շեճրեդ ել-պաք, شجر البق, Փ. Arbre des Mouchérons. Թէ և անուններէն յայտ է որ ԿՆՃՆԻ և նմանիքն ծանօթ են ի Հայս, այլ Եւրոպացիք յիշեն հասարակ կամ Դաշտային տեսակը, Ulmus Campestris. Լեռնայինն այլ Ս. Montana ի Կովկաս և ի Պանտոս, ուր և Ս. Pedunculata կոչուածն :

1. Քիչ մի նմանակոյնութեամբ իւրանաացւոց լեզուով կոչուի Oinsean, Uinsean.

1439. ԿՆՏՈՒԹ. ԿՆՉԻԹ. ԿԱՆՏՈՒՍ.

Օտար լիզուի բառով կ'ըսուի և Շուշու, Շուշույի, Շուշուշ, Սոսամ, Սոսմառ, ըստ Ար. Բառա. որով բացատրէ Ամիրտ. և ըստ սովորութեանն՝ « լաւն այն է, կ'ըտէ, որ նոր լինի.. կակըղցընող է և հալող է. և թէ զտե. » բուն եփես ջրով և զմազն լուանաս՝ յերկանցընէ և կոկ առնէ, և զլիսոյն բո. » լորին ճլէ տայ, և զըղեղն գէջ պահէ.. և թէ եփես և տաս՝ հին հազին օգտէ, » և զձայնն յորդորէ.. Սասցել է Պտ. թէ մարդ օձն զարնէ և կապուտնայ, թէ օ. » ծես՝ տանի, և թէ ուրն և ձեռքն ճղքի՝ օծեն, նա տանի »:

Մանօթ է այս տունկէս հանուած ձէթն, մանաւանդ յարեւելս, ուր թէ ուտելու և թէ դեղոց և այլ պիտոյից գործածուի: — Գր. Տաթեւացի կ'ըտէ (ի Լուծմ. Պորփիւրի). « Ձէթ Շուշ. » մային զլերմ և զցուրտ գորութեամբ » ունի. և յոր ինչ խառնի և լինի ներ. » գործութեամբ, մին զմիւսն կորու. » սանէ. և թէ յերկու ինչ խառնի՝ » լինի ոչ լերմ և ոչ ցուրտ, այլ գաղլ »: — L. Sesamum. Փ. Sésame.



Կնչիթ.

Կնչիթք խոտեղէնք են տարեկան կամ դիմացկուն, ոմանք կանգուն ոմանք գետնատարած. ծաղկներն սըրուակաձեւ կամ կտրած եղջիւրի ձեւով. պտուղնին պատիճաւոր երկայն. կուկ հունտերով: Իւղաբեր լաւ տեսակն՝ Հնդկային կ'ըսուի, S. Indicum, և գտուի տաք երկիրներում:

Հին Բժշկը. մեր գրէ. « Շուշու տաք է ի Ս տարածա և գիճային յ'ոռքն և զոր. » կուտ. խանգրէ զստամոք և զբերնին հոտն, և յուշ երթայ ի ստամոքէ. և իր ձէթն » լաւ է քան զինք. թէ մեղրով ուտես զինք՝ տանի զիր չարն. և թէ իր ջրովն զմօ. » բուք և զմազ լվանաս, զմազն կակըղցընէ և յերկանցընէ. զթեփուկն ու զմաշ. » կերն հանէ. և զձէթն Սապուով և Սամթի ջրով տալ՝ օգտէ որ կրկունքն » պայթտէ, և որոյ խաշորութիւն է՝ խիստ օգտէ »:

1440. Կշայ ?

Ոչ բոյս, այլ ծառոց խժժ կամ ուետին կ'ըսուի:

1441. Կողին ?

Այս կամ այսոր նման անուն մի համանիչ է Սընկոյ. տես Ղարիկոն:

1442. Կոզակ.

Տեսակ մի գեղեցիկ պտուղ է, կ'ըսէ Շրէտտեր, առաջին հեղինակ հայ-լատին քերականութեան, և *L. Gossypium*. բայց սա Բամբակենի նշանակէ, ինչպէս որ և Ար. կոզ' Բամբակ է:

1443. Կոզուկ.

Աստ Ստ. Ռոչքեան է *L. Solanum*, Փ. Morelle, որ կամ Շնխաղողի տեսակներէն է կամ Պատնիճանի պէս թանձր բանջարեղէն մի: Բառգիրք գրէ. « Ստրկոյ, » Կոզուկ, *Stryenus* ». սա նշանակէ Ճանտ-ընկոյզ կամ ործացուցիչ *L'նկուզենին*, Փ. Vomiquier, որ թուփ կամ ծառ կ'ըլլայ. պտուղքն հատեր են կակուզ մտով, որոց մէջ մէկ կամ աւելի կուտ կ'ըլլայ:

1444. Կոճրինճ.

Բանջարեղէն մի կարծուի:

1445 Կոլոլ?

Եթէ չէ Կլուլ, անծանօթ է ինձ:

1446. Կոլուճիկ կամ Կօլորճիկ.

Այսպէս կոչուին կլորածեւ կամ ձուածեւ տակեր. *L. Orchis*, ինչպէս Ազուե-սուճուք (թ. 63), Շանճուք, եւ այլն:

1447. Կոլոտուր.

Այսպէս անուանեն Պոնտացիք տեսակ մի *L. Bidens* կոչուած բոյսերու, որոց պտղոյն ծայրն երկու բաժնուած ըլլալով ակռայի ձեւով այսպէս կոչուին (Նրկ-կեռիք), և հարիւր տեսակի չափ կան, շատն յԱմերիկա. իսկ այս տեսակս որ գտուի և յԵւրոպա՝ խոնաւ տեղերում՝ *B. Tripartita* անուանի (Նուարածին), որովհետեւ մէկ կոթի վրայ կ'ըլլան երեք տերեւք, միջինն մեծ, եզերքն սղոցածեւ:

1448. Կոլորդեղ. — Տես Բոլորդեղ և Բզգաւարդ:

1449. Կոճիճ.

Այսպէս կոչեն Խոտուրեցիք Մայժի (Մարացորենի) հասկը:

1450. Կոճճուկ. — Տես Թերխաչ:

1451. Կոճոճ.

Փշալից բոյս մի, որ ըստ վանական վարդապետի « Ի շրավայրի է լինել ».
և է հաւանօրէն տեսակ մի յունարար Լ. *Acantholimon* անուանելոյն, որք ի
հասարակի թուփեր են, խողովակաձեւ ծաղկով և տրկաձեւ հնգանկիւնի պտղով.



Կոճոճ.

A. Bracteatum տեսակն նշանակուած է ի կողմանս Կարնոյ, ի Սպեր, ի Հեր.
— *A. Calverti*, ի Թէքտաղ. — *A. Venustum* (վայելուչ) յարեւմ. Հայս, ի Կի.
լիկիա, Սմիդ, Սէրտին. — *A. Petreum* ի Մուչ. — *A. Tenuiflorum* (Նրբա-
ծաղիկ) ի Գանձակ, Շամսիսի. շատ հաւանօրէն այս է վանականին տեսածն.

— A. Araxenum (Երասխեան), Երասխայ հովտին շրս կողմերը, Ի Հեր. — A. Hentii, Ի Մէկմանասուր. — A. Glumaceum, յԱկոռի Մասեաց. — A. Cæsareum, Ի կողմանս Կեսարիոյ. — A. Acerosum, յԱրզնի, Կուտինա, Կիլիկիա. — A. Caryophyllaceum, Ի Վարդոյ Տարօնոյ, Ի Կորնայք. — A. Armenum, յատուկ Հայկականն Ի Կարին, Բարերդ, Ծանախ, եւ այլն. — A. Echinus Tournesfortii Ի Բարերդ և ուրիշ լեռնային կողմեր. — A. Lepturoides, Տփղիսու և Մծխեթու միջոց. — A. Karelini, Ի Նախճաւան, Որդուատ. — A. Tragacanthinum, յՈրմիա, Սուղանիէ:

1452. Կոծոծիկ.

Գուցէ վերայիշեալն ըլլայ. նշանակած է նոր բառահաւաք մի:

1453. Կոծոռի կամ Կուծոռի.

Անուն մի կամ տեսակ մի Երիցուկի:

1454. Կոկանենի.

Ռոչքեանն գրէ. « Վայրենի ծառ փշալից, որ մանր բոլորակ սալորս բերէ. » Spinus ». Լ. անունն իրաւ տեսակ մի Սալոր նշանակէ: — Բժշկարան մ'այլ գրէ. « Կոկանենեոյ պտուղն մաքրէ զորովայն ». — Նոյն թուի և Կոկամ կամ Կոկոմ (Գէօմգէօմ) յիշեալ յօրագիրս (Ն. Դար Դ, 63. Ը, 170). գուցէ՛ նոյն և հետեւեալն,

1455. Կոկոն. -- Տես Եղորդոյ պտուղ, Թ. 640:

1456. Կոկոռ ծաղիկ.

Ջրային Նունուֆարն է. Լ. Nymphaea, Ար. نرجس, « Նիլոսֆար, որ է Նոնոֆար, երեք ցեղ է. լաւն այն է որ անուշահոտ լինի, հոլ եւ գէճ է. քուն բերէ և խաղեցընէ, և օգտէ այնոր՝ որ քուն չլինի. և թէ զՋուրն ի գլուխն օծես՝ օգտէ տաք զլիսացաւութեան, և իր ձէթն այլ զզլիսուն ցաւն խաղեցընէ. և իր շարապն օգտէ սարթամին (ըղեղի ցաւ) և զկուրծքն կու կակղացընէ, և հա. գին և թոքին խողերն կու չորացընէ, և զհոգին կու ուժովցընէ և հան. գիտ կու առնէ: Արցած է, թէ ստոյգ և լաւն և աղէկն այն է որ ի Պաղտատ լինի, և ծաղիկն կապոյտ լինի, և ասմանի կու նմանի: Այսոր ասի թէ երեք ցեղ է. այն որ Պաղտատին է՝ գունն կապուտ է, և այն որ Հոռոմոց երկիրն կու լինի՝ դեղին է գունն և սպիտակ, և քան զամենայն լաւ խիստ դեղին է »: Տես և Հարոնամատն:

1457. Կոկոռնիկ

Այս այլ Գետնախնձորի՝ այսինքն Երիցուկի՝ անուանց մէկն է:

1458. Կոկոռչի տակ.

Քալիենոսի բառից մէջ գրուի « Արն, Կոկոռչի տակ, Շուշան ծաղիկն է »: Աս Շուշանս վերոյգրեալ Կոկոռն է կամ Նիլուֆարն, որ արդարեւ Ջրի շուշան կոչուի: Իսկ Althum Քալիենոսի (Ե) գրոց մէջ յիշուի իբրեւ աղահամ ծաղիկ մի ի Կիլիկիա:

1459. Կոկոռոշ.

Տեսակ Մորի, ի նորոց Հաղարջ կոչուած. Լ. Ribes, Փ. Groseillier. Ռ. կարմիրն Смородина, իսկ կանաչն՝ Крыжовникъ. Ար. ريباس. զոր Ամիրտ. Գամբո՛խ կամ Գարթի՛լ գրէ, և այս անուան տակ նշանակեցինք, բայց որոշելի է զայս ի Գար ծիլէն, որ տարբեր ցեղէ է: — Շատ տեսակք կան այս վայրի խա. զողանման տնկոց (զոր Թ. Ֆռենկ իռզիւմիռ, Փռանկաց խաղող կոչեն), յորոց մէկ տեսակն, R. Nigrum, յիշուած է ի Մուշ. — Արեւելեան կոչուածն R. Orientale leptostachys, ի Բարբերդ և Թէքտաղ. — R. Petreum, ի Կովկաս, ի Ճիմիլ Լ. Պոնտոսի, ուր և Ալպեանն, R. Alpinum.

Կոճուկ.

Որ և Կոճժուկ. տես Թերխաշ և Կոցուկ.

1460 Կողակ.

Ըստ Ստ. Ռոջքեան է Կոստ. զոր տես:

1461. * Կողամիտա ?

Ըստ Խորենացւոյ աշխարհագ. գտուէր յԻսաւրիա Փ. Ասիոյ: Անձանօթ կամ անտոյգ. եթէ ըլլար գրուած կաղս միերս՝ կ'ըլլար Χαλή Μίνδα. Լ. Calamintha, ազնիւ ազգ մի Աննուխի կամ Դաղձին, որոյ հասարակ տեսակն՝ C. Officinalis ի Պոնտոս և ի Կովկաս նշանակուած է. — C. Nepeta, ի Հայս և ի Հար. Կովկաս. — C. Umbrosa, ի Պոնտոս և ի Վիրս. — C. Staminea, ի Մուշ. — C. Graveolens ի Հայս և այլ շատ երկիրներ: Շատ աւելի տեսակք այլ ի Կիլիկիա տեսնուած են:

1462. Կոճ վրացի.

Բժշկութեան մէջ հին ատեն շատ նշանաւոր բոյս մի, որ և զանազան անուամբք և տեսակաւ յիշուեցաւ. առ նախնին շատ հեղ յունալատին բառիւ Եղեբորոս կոչուի, Helleborus, Փ. Hellebore. իսկ Ար. Խարպախ, Խարբակ خردق. այս անուամբ գրէ և Ամիրտ. և յաւելու, թէ «Իպն. ասէ, թէ Պուռասայ այս խոտիս Ղար » լիլյակի ասեն, և Թ. Պաշտո կ'ասեն, որ է Տօխոնգ պաշտո »: Ըստ կու զանազանէ

երկու գլխաւոր տեսակները, ինչպէս և բնախօսք և բժիշկք Սպիտակ և Սեւ. « Ա-
 » սեր են վասն Սպիտակ կօճին (Խարսպախ սպիտաք. *Veratrum album*) թէ ինքն
 » տակ է, և իր կեղեւն ի բան կու մոնէ, և նման է կապարին տակին. և ինքն ի
 » Լխան ըլ-հանալ (Գառնալեզու) կու նմանի. և համն քան զՍեւ Խարսպախն լեղի
 » է, և իր տակն շատ մաղմղուկ ունի, և նման է Ասարոնի. և մէկ ցեղն կոկ է և
 » մաղմղուկ չունի. և մէկ տակ է և խիստ պինտ է. . և Թ. այս խտտի Տօխոզ տա-
 » փաղոս (Իննագագաթ) այլ կ'ասէ: Ասէ գրոցս ժողովողն, թէ լաւն այն է որ զլե-
 » զուն խածնէ, և թէ ծամես՝ լուսպ ունենայ՝ և թէ մուկն ուտէ՝ մեռնի. և մար-
 » դու վնաս առնէ՝ զիր շարութիւնն տանի հաւուն շուրվանին »:

« Խարսպախ Սեւ (Խարսպաք Աստատ). լաւն
 » այն է՝ որ ոչ խիստ պինտ և ոչ կակուղ լինի...
 » օգտէ գլխացաւութեան որ հին լինի և տայու-
 » սայլապին (աղուեսացաւ), և զոլիլն սպանա-
 » նէ, զաշքն սրացընէ և ուժովցընէ... Իր տա-
 » քութիւնն աւելի է քան զՍպիտակ Խարսպա-
 » խին տաքութիւնն, և իր տերեւն նման է Չի-
 » նարին տերեւին, և քիչ մի ճեղք ունի և սե-
 » ռութիւն կու քշտէ, և որձան փոքր է, և ծա-
 » դիկն սպիտակ է որ ի կարմրութիւն կու քշտէ.
 » և պտուղն նման Տատալի Հընդին. և իր տակն
 » շախչախ է. և իր տակին կեղեւն ի բան կ'ան-
 » ցնի. և ինքն ի չոր տեղ կու բուսնի. և թէ զինքն
 » կտրես՝ մէջէն սեւ փոշի ելանէ, և փաթութի
 » ունի, որ մէկմէկի կու փաթվի, և մէջն փուճ
 » կու լինի. և բունն ի դուրսէ սեւ է զէտ զօս,
 » և մէջն սեւ չէ. և քիչ բարակ բարակ մա-
 » մզուկ ունի », եւ այլն: — Բժշկարան մի այլ
 » գրէ. « Ի լերանց հաննն (զՍեւ Թ.) ի կորդ
 » տեղաց. սիրտն որպէս բարակ փողիկ լինի և
 » պարարտ »: Վաստակոց Գիրքն (ՁԱ. ԵՔ)
 » Վրացի կօճի համար կ'ըսէ, « որ է Մրաի տակ »:



Կոճ վրացի.

Դեղական օգուտներէն զատ՝ կոճն պարտի-
 զաց մէջ դարմանութի իր վայելուչ ձեւին և ծաղ-
 կին համար, որ 5-10 թերթով բաժակ մ'ունի
 բազմառէշ, և ձմեռ ատեն ծաղկելուն համար՝ շատ յարգի է, մանաւանդ Սեւ կո-
 շուածն, որ և Եննդեան (Քրիստոսի) Վարդ, *Rose de Noël*, և փոքրիկ Դեղ-
 նածաղիկն, Լ. *Erantis hyemalis*, որ ձեան հալելուն սկիզբը կու ծաղկի:

1463. Կոճակուկ կամ Կոճակիկ.

Նշանակած է բառհաւաք մի:

1464. Կոճամիրու. Կոճամիրուս.

Անունն համաձայն է Թ. Փօշմորուաց. բայց Գալիենու բառից մէջ այսոր յու- նարէնն գրուի Կիզարիս, որոյ ստոյգն անշուշտ պիտի ըլլայ Կիֆորա, *Kiçora*, և օրինակի մի մէջ մէկն աւելցուցեր է Լ. *Intubium erraticum*. այս այլ անսովոր անունն է հիմայ, միայն մերձաւոր է *Intubus major* համանիչ *Cicorium Endivia*, որով յայտ կ'ըլլայ թէ Կոճամիրունն է տեսակ Եղերդ-Հինդուպէի:

1465. Կոճապղպեղ.

Որ և այլեւայլ օտարալեզու անուամբք յիշուի, Անգրուեղ, Կիմբիր, Չանձապիլ, Լ. *Zingiber*, Փ. *Gingembre*. Ար. *زنجبيل*. Ռ. Կкбирь. « Երկու ազգ է. ըստ » Ամիրտ. մէկն Չինի և մէկն Հնդի... ամենայն ցաւու որ ի պալղամէ և ի հո- » վութենէ՝ օգտէ, և զմիտքն սրացընէ, և զլեզուին ծանրութիւն տանի, և թէ » յաչքն քաշեն՝ զմթնալն տանի, և զթանձր գիճութիւնն որ ի փողիցն՝ կու տանի, » և զքամին կու հալէ, զկերակուրն մարտել կու տայ », եւ այլն:

Այս բացատրութենէն վերջը յիշէ ուրիշ տեսակներն այլ. յորոց՝ « Չանձապիլ - » անմ (Պարսից) որ է Ուշքարպարն ». սա տարբեր ցեղէ բոյս է, և յիշած եմք (Թ. 118), նոյնպէս և « Չանձապիլ Շամի, որ է Ղասսանն, որ է Անտուզն, որ է » հայ բառով Կղմուխն », տես զասոնք: — « Չանձապիլ Քալպ, որ է Շան Չան- » ձապիլն, և տերեւն նման է Սուրբուսի (Ուռի?) տերեւին, բայց զեղնուկ կու » լինի. և թէ շունն ուտէ՝ կու մեռնի. և թէ դալար հնտոյն ծեծեն և օծեն՝ զհին » բորն տանի և զտեղն այլ շերեւցընէ... և թէ զհունտն և զտերեւն ծեծեն և » դնես ի վերայ ուռէցին, օգտէ »:

1466. Կոճեմ ?

Դաւիթ Սալաձորցին յիշած է, « Կոճմերուն հետ եղեր է Խանդատն »: Կըր- նար կարծուի թէ Կոճամիրունն ըլլայ, բայց յոգնակի յիշուելով՝ հաւանական է որ եզակին Կոճեմ է: Ուրիշ օրինակաց մէջ Գոլմեր կամ Կոլմեր գրուած է:

1467. Կոճկորակ.

Անուն հասարակ կամ տեսակ մի Փրփրեմի. տես զայս:

1468. Կոճղէզ.

Ընդհանուր անուն կոճ կամ կլոր և թանձր արմատոյ բուսոց, մանր կամ մեծ. բայց նշանակէ և յատուկ տեսակ մի Գետնախնձորոյ, մատնաչափ մեծութեամբ, որ հում կ'ուտուի, և կոչուի Թ. Ելլուզդ քեօքի: Սալաձորցին իբրեւ ծաղիկ այլ յիշէ զԿոճղէզ,

« Կոճղէզն է դանաւթ հագեր, հաւան չէ միւս գուններուն ».

ուրիշ օրինակ մի գրած է.

« Կոճղէզն ներկած դանաւուզ, հաւան չի լի միւս գուններուն »:

1469. Կոճողիս.

Կոճողէզ է ըստ գրոց, իբր սոխային տակ կամ արմատ, որովհետեւ հին Բառա-
գրոց մէջ գուգուած է « Բողրոս (Bulbus) Կոճողիս կամ Կոճողիզ . Ռոջքեանն
այլ վկայութիւն բերէ ի Բժշկարանէ . « ԳԿոճողիս Սխտորով ուտել՝ լաւ է լուծ-
» ման սրովայնի » :

1470. Կոճոճիկ.

Այսպէս կոչի տեղ տեղ Աւելուկի արմատն :

1471. Կոճտակ դեղ.

Այսպէս գրած է Ռոջքեանն, բայց Թուի Կոճ տաքդեղ գրելի, որ է Կոճա-
պղպեղն :

1473. Կոմար. Գոմար.

Այսպէս անուանեն ի Պոնտոս այն գեղեցիկ ծառերը կամ Թուփերը՝ զոր



Կոմար .

արեւմտեայք յունական բառիւք բարդեալ Rhododendron անուանեն, որ է ըսել
վարդածառ. վասն զի հասարակօրէն վարդագոյն և վարդանման են ծաղկըներն՝

առանձնակալ կամ փունջ փունջ, որովք բոլոր ծառն ծաղկած կ'երեւի, և պարտիզաց վայելուչ և հարուստ զարգ է: Իրեն ցեղակից *Azalea* այլ մէկ տեղ առած՝ 300ի չափ տեսակ ունի յԱսիա, յԵւրոպա և յԱմերիկա. բայց իր բուն հայրենիքն կըրնայ ըսուիլ Պոնտոս և Կովկաս, և ասոնց անուամբ կոչուին երկու գլխաւոր խումբք տեսակաց, *R. Ponticum* և *R. Caucasium*, որոց մէջ բովանդակի և մեր հայրենիքն. վասն զի ասոր արեւմտեան կողմերում այլ գտուի, ի Քարադափան լեռինս Բաբերդու և ի մերձաւոր մասին Թուրքահայոց: Յատկապէս ընդ մէջ *Setchank*? և *Koblat*? տեղեաց կամ գիւղից, ըստ եւրոպացի բնաբնին տեղագրի մի, բայց անուանքն այլայլած կ'երեւին: Արդ այս տեղուանքս ըլլալով բնավայր ծաղկազարդ ծառիս՝ պէտք է իր յատուկ անունն այլ ճանչնալ կոնար:

1473. Կոյշ?

Անծանօթ անուն մի և նիւթ, որոյ նոյնանիշ յոյնն ըստ բառից Քայլենու է ուրիշ անծանօթ մի, Դադիրէ?

1474. Կոյոց ծաղիկ.

Քայլենու բառից մէջ այսոր հոմանիշ յոյնն է Աքրեխոս կամ Աքրետիս, որ կըրնար ըլլալ Աքրեմիս (Յ և Ց տառից չփոթութեամբ ի հին հայերէն ձեռագիրս). տես թ. 106. բայց Բառազրոց օրինակի մի մէջ աւելցուած է Լ. *Anthedon*. այս բառս՝ զոր յիշած է Թէոփրատ հին բնախօսն, ոմանք համարին վայրի Ալոնին կամ Մնձենին: Իսկ եթէ հայերէն բառին նշանակութեան նայուի՝ անարգ ծաղիկ մի նշանակէ:

1475. Կոնզում.

Վարդի և նման ծաղկանց կնգուղն է, և ոչ յատուկ ծաղիկ: — Դարձեալ, ըստ քիմիական գրոց՝ « ՂՇոնոյ խէժն՝ ոմանք կոչեն Կոնկում »:

1476. * Կոնիումն

Յոյն (յորմէ և Լ. *Oonium*) անուն Խնդակաթի. տես զայս (թ. 1072): Ս. Բարսղի Վեցօրէից մէջ գրուի. « ԶԿոնիումն արմատ՝ հաւքալք ուտեն. քանզի այս » պէս կաղմեալ են մարմինք նոցա՝ զի մի վնասեացին ի վնասակարութենէ ար. » մատոց »:

1477. Կոնձօծ.

Արարատայ կամ Քեղաքունոյ կողմանց բուսոց մէջ յիշէ նոր գրող մի, եթէ չէ՝ Կոծոծն.

1478. Կոպղ.

Քետնատարած փշեղէն մի, որոյ արմատն կ'ուտուի և Մատուկ կոչուի: — Պէտք չէ շփոթել Կոպղ բառի հետ, որ հնձուած ցորենոյ դէղ նշանակէ:

1479. Կոպուոչ.

Նոյն համարուի որ ինչ Միպանուկն, Թ. 1197.

1480. Կոստ. Կոստի տակ. — Տես Կապարասի:

1481. Կոստղի.

Սո. Ռոշքեան Լ. Aquifoliam կոչէ. որ հիմայ չի լուսիր, այլ Ilex, որ է Սը-
ղոցի. Տես ի կարգին:

1482. Կովացնծուկ ?

Նորերու հնարած կ'երեւի բառս, փոխանակ Թաւրինջակի:

1483. Կովի աչք.

Նշանակէ զԵզնակն, տես Թ. 618:

1484. Կովլեզու.

Արդարեւ ձեւն նման է լեզուի կովու կամ եզան (ուսկից և Եզնալեզուն),
սակայն օտարք՝ Յ. և Լ. ուրիշ նմանութեամբ անուն տան այսոր, չնչին ճճիի մի,
օձասանդրի, ինչպէս յիշեցինք Արծուտանկին բացատրութեամբ (Թ. 213), զայս
այլ նոյնպէս Scolopendrium կոչեն. միայն յարելով՝ Հասարակ մակդիրն այլ,
Տ. Officinale և Տ. Vulgaris. Տեղաբնինք յիշեն զայս ի Պոնտոս և Կովկասու
երկու կողմերում այլ. տեսակ մ'այլ կայ, Տ. Hemionitis որ գտուեր է ի Գաւլը-
պօղազ Կիլիկիոյ:

1485. Կովլուկ.

Վայրի խոտեղէն մի որ ընկուզաչափ պտուղ բերէ, ըստ բառաւհաւաքի Սերաս-
տիոյ կոզմանց:

1486. Կովու ճակտիկ. — Տես Եզան Ճնփատ:

1487. Կովու ուրուկ ?

Բժշկարան մի յիշէ զայս, գրելով. « Բանճար մի կայ Կովու ուրուկ ասեն..
չորցո՞ւ. Թէ գիւահարի տաս ուտել՝ բժշկի »: Թերեւս ներքոյ գրեալ Կովուճն
լլլայ:

1488. Կովտուն.

Ոչ է յատուկ բոյս այլ Կտաւատի թեփն:

1489. Կովրուհ.

Հացի փայտ կոչուած է ի Բժշկարանս և աչքի գեղ. « Ան զՀացի փայտն՝ որ » է Կովրուհ, որ յանջրդի տեղ լինի, մանր կոտորատէ և շատ եփէ որ Թանձրանայ, » և գիր յաչքն երեք հեղ, Թէ կոյր լինի՝ նա լուսաւորի »: Քիչ մի տարբերութեամբ գրէ հին Բժշկարանն, առանց յիշելու զԿովրուհ. տես Հացի փայտ: Թէ և փայտ կոչուի՝ բայց ոչ Թուի ծառ, այլ առ առաւելն Թուի:

1490. Կոստեմ. Կոսիմն.

Ուրիշ անուամբ այլ կոչուի, ինչպէս Հարր կամ Հորի **حار**. **L. Nasturtium, փ. Cresson alénois.** Ռ. **Крещъ - саладъ.** Թ. Թասայ օրի. Ար. Ըռիշտ կամ Ռիշատ, **دلس,** այս անուամբ ստորագրէ Ամիրտ. « Իր հոտն սուր է. լանն այն է որ » անուոց լինի... եփող է և հալող է.. գերետին մանն կու տանի, և զթեփուկն » ի գլխուն կու տանի, և չի թողուր որ մազն ի վայր թափի... և զչտերն և » զմկնատամներն եփէ, և զպաղղամի ուռեցնին այլ եփէ », եւ այլն: Ածուոց տեղ՝ ուրիշ Բժշկարան՝ Տանոյ Կոստեմ կոչէ: — Հին Բժշկր. մեր գրէ. « Կոսիմն՝ տաք » ու չոր յ'Յ տրծ. կամ ի Դ. դեղ է ստամոքի, և հանէ զտափակ ճիճի, սրբէ » զկուրծք և զթոք ի պղրամէ. Թէ չորս դրամ ծեծէ և տաք ջրով առնու, զփորն » լուծէ. և զքամի հանէ յաղեց. Կոչնջի օգտէ.. զունդն աղնձած տալ՝ զփորն » կապէ, անծեծել տուր զաղնձածն: Ապա որ զտերեւն ուտէ՝ դալար գնձով » կամ հազրով կամ Եղիգաւ Թող ուտէ, որ զիր չորութիւն մանրէ »: — Այլ եւ այլ տեսակք կամ ազգք կան Կոստեմայ, որք տարբեր անուամբք այլ կոչուին օտար լեզուք. ինչպէս,

1491. Կճու Կոստեմ. փ. **Cresson amère.**

1492. Հորի Կոստեմ. փ. **Cresson de fontaine.**

1493. Զրի Կոստեմ. փ. **Cresson d' eau. L. Sisymbrium nasturtium.**

1494. Թուրք Կոստեմ.

Draba, և Draba Arabis. փ. Drave. Ազգ մի Կոստեմայ, առատ յարեւելս. մէկ տեսակն Մասիս լեռան ձեռն սահմանին 1338 Չ. բարձրութեան վրայ բուսած գտաւ Ռատտէ բնագէտ, յամի 1871:

1495. Կոսիկ.

Հին Բժշկարանն գեղ գրէ մաղասէ շարժած ակուայից՝ այլեւայլ նիւթեր, որոց մէջ նա եւ Զառիկ, Շէկ Ոսրն. Երտիկ, Բարձուենեկ և Քամատարիտս (Կաքաւարտ). « զամէնտ լեւէ և սա զգալ մի հոռոմ ձէթ և մեղր, և շաղէ, և » ի վերւ, ատամանցն գիր »:

1496. Կոտինոլ.

Բիւզանդ պատմիչ (Ե. ԻԳ) կ'ըսէ, որ անարժան թագաւորն Պապ' ընթրեաց ատեն « Դեղ մահու ընդ Կոտինոն խառնեալ », խմցուց Ս. Ներսէս Հայրապետի, և թունաւորեց. հաւանօրէն է Յ. Κόττινος, վայրի Չիթենոյ (Olbaster) կուտ.

1497. Կոտմուկ. Կոտմնտուկ.

Վայրի Կոտեմ. Լ. Iberide, Փ. Iberis, նման Նուարտակի:

1498. Կոտշուկ.

Ռամկական անուն վարսակի:

1499. Կոտոր. — Տես թալլ:

1500. Կոտրուկ. Կոտրկու տակ. Կոտրկոյ տակ. Կոնտրկու տակ. Կորկոտակ.

Պարզ բուսոյ անուն. Կոտրուկ յիշուած չէ, այլ միշտ հոլովեալն կամ սեռա կանն. իսկ ինքն կամ տակն է Աղուեսուձուք. տես թ. 63:

1501. Կորամի.

Թերեւս Կորափի գրեկի. յիշած է Շէհրիման, իբրեւ Populus Libica. բայց աւելի հաւանօրէն է Երեբուն Կաղամախն. Լ. Populus tremula, Փ. Peuplier tremble. որ իր ազգակըցաց մէջ ամենէն վայրենի կամ անտառայինն համարուի, և տերեւներն երկայն կոթեր ունենալով միշտ շարժուն կ'երեւան. շատ չեն բարձրանար: Մեր երկրին մէջ այս տեսակ Կաղամախ՝ յատկապէս յիշուած է ի Պոկլան՝ Տարօնոյ կողմերում:



Կորդիան.

1502. Կորդիւն. Կորդոն. Կորդոյն. Կորդոււմ.

Տեսակ Մոթրինի, Գալիենու բառից մէջ որոշակի գրուած է թոռակ բրա՝ Կորդիւն, որ է Τυμβρα. Լ. Satureja, Փ. Sarriette. Ար. այլ սոյն անուամբ գրած է Ալէթար, سطره, զի այսպէս լատի կ'ըսէ ի Սպանիա.

Ամիրա. այլ նոյնպէս գրէ « Շատրիա. ինքն ի Սահթարին (Մոթրին) ցեղերուն » է, և տերեւն յերկան է, և ամփոց լինի, և ի Քարվէժ՝ Մարգա ասեն »: Այս

Ածուց տեսակն *S. Hortensis* յիշուած է *Եւրոպացւոց* ի *Մեծ և ի Փ. Հայս.* — *S. Maorantha* ի *Պարսպաղ.* — յունական բառով *S. Timbra* կոչուածն այլ ի *Կիլիկիա, յԱսորիս, յարեւմտեան Փ. Ասիա:*

1803. Կորդուղ.

Անըդդի տեղերում բուսած խոտեղէն մի է, անասնոց ախորժ ուտելի, և գեղեցիկ ծաղկով, որոյ համար արժան է աւելի տեղեկանալ:

1804. Կորդուախունկ.

Ըստ *Շէհրիմ.* Եղէգի նման երկու սոնաչափ բարակ բոյս մի է, վարդաձեւ հինգթերթեան ծաղկով. ոմանք համարին հիմայ *Երիցի* աղցան կոչուածն, զոր տես թ. 874. այլ և *Երպատուր:* *Նշանելի է որ Ար. այլ Կորդուախունկ կոչուի, Պր. խոտը ը-Աքրաստ* *داكراي* *چراغ.* Պէյթար կ'ըսէ թէ ոմանք Համամա կարծեն զայս, և թէ *Սնտալուսիա՝ Երպատուր կ'ըսուի, յԱսորիս՝ Անդրասիոն? Քուրդք շատ գործածեն զայս իբրեւ ծխոց, և Շահպուշ, شاي* կոչեն, որ է *Ք. Շէհայո:*

Կորդուա. — Տես Կորդիան:

1808. Կորեակ. Կորեկ.

Ընդեղինաց մէջ Յորենէ և Պարիէ վերջ՝ ամենէն ծանօթ և պատուականն է. բայց տեսակներն իրարու շիոթելով՝ Գաւարսի հետ միացուցեր կամ մերձեցուցեր են Պէյթար և Ամիրտ. անոր համար այդ անուան տակ յիշեցինք երկու կամ այլեւայլ տեսակներն այլ (թ. 874). Հօս յիշեմք կամ կրկնեմք՝ որ յատուկ Կորեակն է ըստ *Լ. Milium, Փ. Millet.* իսկ *Գաւարսն Panicum Miliaceum. Փ. Panic Millet. Լ. կ'ըսուի եւս P. Esculentum (ուտելի):* Վաստակոց գիրքն ուրիշ զանազանութիւն մի կ'ընէ *Մեծ և Փոքր Կորեկի.* առջինին համար միայն գրէ (ԻԳ) » *Մեծ Կորեակն զաղախուտ և զգիջային զաղեհամ և զլրարբի վայրսն սիրէ, և* » *քչիկ սերմամբն շատ գետին լնու, և զքաղհան առնելն խիստ ընդունի և ա* » *խորժէ. և իւր ցանելոյն ստենն ի մարտի ամսոյ ձա աւուրն ի վեր է. և թէ* » *թանձր բուսանի՝ նօսրացընել պիտի, զի մէկ հատն բազմապատիկ պտղաբերի »:* Յատուկ Կորեկի հասարակ տեսակքն *M. Effusum և M. Vernale* գտուին ի Հայս. նոյնպէս և *Գաւարսն*, որոյ հայրենիք համարի Հնդկաստան: — Կորեկի բազմաբերութիւնն յիշէ և *Առակախօս վարդապետն (ԱԶ - Ը) զԳարին վաթսրնաւոր, զԿորեակ՝ հարիւրաւոր կոչելով, որով հպարտանային. իսկ Յորեան խոնարհութեամբ լռելով՝ բուսոց թագաւորին մերձաւոր եղաւ. զայս տեսնելով մէկայլքն՝ սկսան խոնարհութիւն կեղծաւորիլ, և անով անապարժիլ. Կորեակ կ'ըսէր, թէ « այնքան եմ խոնարհ, մինչ զի ի պատուողացն ձեռանէ սողուկեալ՝ » անկանիմ յերկիր. (բայց) այսպանի և սա իբրեւ զանմիտ, լինելով կերակուր » անմտաց »:*

— Սեւ Կորեակ. — Անունն յայտնէ զտեսակն:

1506. Կորեկխոտ.

Քուի թէ ոմանք ի գաւառականաց այսպէս կոչն զՄայծն կամ Մորացորենն :
— Յիշուի և

1507. Կորեկուկ. կամ Կորեկիկ.

Ի նոր բառհաւաքէ, բայց ինչ ըլլալն՝ ոչ :

1508. Կորթում.

Անանոց ուտելի մշտադաւար խոտ մի, ըսուած է :

1509. Կորիւն.

Վայրենի պտուղ կնձնի ծառայ և նմանեաց :

1510. Կորկրուկ.

Երկայն ցողունով տեսակ մի վարսակ :

1511. Կորնգան.

Երկրագործութեան և մանաւանդ խաշնադարմանութեան մէջ շատ ծանօթ և անանոց պիտանի կեր է, Առուոյտի ցեղերէն, որք իրարու հետ չփոթին պէտքէս անուամբք, և դժար է որոշել թէ որն է յատուկ Կորնք գանն. իրարու նմանութիւննին յայտնեց մեր Առակախօսն այլ (15) երբ մէկ տեղ ըսաւ, « Գնդածաղիկք և Խոլորձ, » Առուոյտ Կապոյտ և Սէզ, և նմանք սոցին », ինչպէս յիշած եմք Առուոյտ անուան տակ, (թ. 158) : Հին բժշկարանն պարզապէս կ'ըսէ « Կորնկան՝ որ է Չփիրակ » . ուրիշ մի յաւելուածով, « Չուիրակ որ է Իշկորնկանն, որ » է Աբրիվէլիքն, որ է Կորնգանն » : — Այս անունս դեռ լսուի չի Հայս, և ճանչցուի գնտաձեւ գլխով կամ դեղին ծաղկամբ Առուոյտ մի : — Մեր հոգէնուագ Նարեկացին իր Սայլի կամ Յարութեան երգոյն մէջ յիշէ այս բոյս . « Այն վեց բարդք Կորնգան՝ այն վեցօրեայ գործք Առուոյտ » . նմանութիւնը թողունք իր երեւակայութեանն : — Այլեւայլ ազգակցաց մէջ մեզ կ'երեւի թէ Կորնգանն է լ. *Trifolium odoratum* որ և *Melilotus*, ֆ. *Méillot*. Այս տեսակն այլ քանի մի գանազանութիւն ունի, որոցմէ մէկն և հասարակ՝ յատուկ Հայկական կոչուի, լ. *M. Officinalis Armena*. — զուս Հասարակն յիշուած է և ի Բարբրդ. — *M. Parviflora*, (Մանրածաղիկ) և *Dentata* (Ատամնակերպ) ի Հար. Կովկաս, ուր և Ռուսահայք. — Սպիտակ, *M. Alba* ի Կովկաս ընդհանուր :



Կորնգան.

Կորնգանի յատուկ ազգք են Քաղցր Կորնգան, լ. *Hedisarum*, ֆ. *Sainfoin*. — Իշկորնգան, որ տես ի կարգին այս անուամբ :

1812. Կորոսնի. — Տես Կաստուկ:

1813. Կորու ազի.

Նոյն իմաստով կոչի և *L. Scorpiurus*, Φ . *Scorpiure*. Ար. *Չանայ ըլ-Ագրայ*, *ذنب العفرب* Ամիրտ այլ գրէ « *Չանայ ըլ յադրայ*, որ β . *Ախրայիայ* ասէ, և » *Հայն Կորու ազի*. Ինքն խոտ-մն է որ քիչ տերու ունի. իր հունտն նման է *Կորու* » *ազու*, և β է գհունտն սպեղանի առնես և դնես ի վերայ կարճահարին՝ օգտէ Աս. » *տուծով* »:

1814. Կոցուկ. Կոծծուկ. Կոճուկ.

Այսպէս անուանեն *Պոնտացիք* *L. Heracleum*, Φ . *Berce* թ. *Медвѣжья лапа* կոչուած բոյսը. որ 50 կամ 60 տեսակ ունի, և ընդհանրապէս բարձր խոտեղէններ են ասրեկան կամ երկու տարեկան, մեծամեծ տերեւներով կերպ կերպ բաժնուած, հաստակօրէն երեք, հինգթերթեան բաժակաւ և պսակաւ հովանացածեւ ծաղկօք. բոլոր բոյսն այլ աղուամտղոտ կամ բրդոտ է: Հիւսիսային կողմերում տերեւներէն ըմպելիք կու հանեն գարէջրի պէս, ճիւղերէն այլ՝ ալքոոլ, կամ չորցուցած կ'ուտեն, որովհետեւ նշայի նման նիւթ ունի: — Խժարեր տեսակն *H. Gummiferum* շատ գտուի ի Հայս և Պարսկաստան, և ասկէ կու հանեն Ամմոնիակ խէժը. անոր համար բոյսն կոչուի եւս *Dorema Ammoniacum*. ուրիշ տեսակներէն տեսնուած է *H. Rubescens* ի Նախնաւան. — *H. Apifolium* ի Կարին, ի Ճիմիլ. — *H. Brevittatum*, ի Գարապաղ ուր գտուի և *Chorodanum* տեսակն. — *H. Partinacæfolium* ի Սիսիան Սիւնեաց, ի Վարաժնունիք. — *H. Incanum* ի Կարին. — *H. Platitæniun* և *H. Argæum* ի Կեսարիա. — Մերայինք ստորագրին զԿոցուկ՝ Եզեզի նման հանգուցաւոր և սնամէջ, և ի ծայրն դեղնազոյն ճառագայթածեւ ծաղիկ, ուտելի դաւարութեան ատեն:

1815. Կուգել ?

Աղթարական դեղաբանութեան մէջ յիշուի. « Խոտ մի կայ՝ Կուգել ասեն, այնոր Լուրն յիրար խառնէ Լօշտակի և Ճլի լրոց հետ, դեղ մագի և մօրուաց՝ որ չթափին »:

1816. Կուենի. Կուի.

Հին և նոր Ռժշկարանք յիշեն պէսպէս. « Կվենի փայտի տակ ». — Մայր փայտի » խէժ՝ որ է Կվենին. — Մայրափայտն՝ որ է Կվենին » : — Վաստակոց զիրքն այլ (ծՔ), « Ա՛ռ սեւ ձիւթ և Կվենւոյ փայտի կամ Մարխի սզոցուքով », մրգեր պահելու համար ի սնտուկի: Իսկ Գայիենու բառք գրեն, « Պիտոնէս՝ Կունենի », որ է *Πιτύνος*. այսինքն փոքրիկ Նոճի կամ Գետնի Փիճի, *Chamæpitis*. բայց այս անուն տրուած է և Ճանկիտոյի, և Կենդանարարի, ուր և բացատրեցինք. կամ երեքն այլ մի և նոյն ծառը նշանակեն, կամ չփոթին նմանիք. Կուենւոյ յիշեալ խէժն՝ կիւ կ'ըսուի, և է ձութն ծամելի, (ծամօն):

1817. ԿՈՒՂՎԻՈՒՂ.

Յիշուի աղթարական Բժշկարանութեան մէջ. Թերեւս Գաղի նման ըլլայ:

1818. ԿՈՒԺԽՈՍ.

Նշանակուած ի նոր բառհաւաքէ, որ առանձինն նշանակած է և հետեւեալը.

1819. ԿՈՒԺԿՈՍՏՐՈՒԿ. — Տես Երափկոստոնչ:

1820. ԿՈՒԼԱ.

Այն ձեռով Դրում՝ որ հեղուկի աման կ'ըլլայ:

1821. ԿՈՒԾԱԿ.

Ըստ Ասարայ է Ասորի Բահնան, տեսակ մի Փշաքեղի. տես զայս:

1822. ԿՈՒԾՈՒՈՒԻ.

« Որ է Իրիցուկն, Պապատիան », գրէ Բժշկարան մի: Տես Գետնախնձոր, Երիցուկ:

1823. ԿՈՒԿՆԱՐ.

Ըստ Բժշկարանաց է Թ. « Ճաղղուզա, որ է, Հապի Սոնուպար », այսինքն Սնուկ պարի հատն կամ մոմոն. Ամիրտ, կ'ըսէ. « Հապի Սանակպի իւ-քիտար, որ է » Ճաղղուզան, և իր ծառն փոքր լինի քան զՀապի Սանուպարի ստորարին, և ինքն » ի Սիսթանու երկիրն կու լինի, և ի Հոսոմոց երկիրն այլ լինի. և իր ծառին Սոս » սոն ասեն », եւ այլն: Իսկ « Հապի Սանակպարի Սուղարի, այսոր Պ. Թոռիակի » քաճ ասեն. և ինքն պտուղ է երեքզուէն, և ամի մէջ է, և այնոր ճալզ ըլլ-քաճ » կ'ասեն, և համն ի Ճաղղուզա կու նմանի »: — Ուրիշ Բժշկարան մի պարզապէս կ'ըսէ Փիձոյ պտոռոյ. ուրիշ մ'այլ ձայն բանալու դեղոց կարգին գրէ և զԿուկնար:

1824. ԿՈՒՏՈՒՄ.

Ըստ Խորեն. Աշխարհագր. Խնկեզէն է յԽաւրիա. այլ որպիսի բուսոց՝ չէ յայտ:

1825. ԿՈՒՄԿՈՒՄ.

Խոտեղէն, Հարանուկի նման ծաղկող:

1526. Կուշ.

Թերեւս կայն է (թ. 1473). ուրիշ նիւթոց հետ յիշուի ի Բժշկարանի. « Նիւթու » քար, Խաչառ, Կուշ և և Գարիապուր »:

1527. Կուտակեայ Բանջար.

Յիշուի ի հին Թարգմանութեան վարուց Աղեքսանդրի, և Թուի հետեւեալն,

1528. Կուտակուտ. Կուտատուկ. Կտատեակ. Կուտաւտուկ. Կտատուկ. Կուտատակ.

Գալիենոսի բառք իմացընեն թէ Աղբիս է, այսինքն Δίττα, որ է Տոզտ. տես զայս իր կարգին. միայն Բառգիրք մի Կատատեկի զուգէ Սրինորոս, որ անծանօթ է ինձ. միւս մ'այլ Պատեղի:

Կուտրկու տակ. — Տես Կոտրկոյ տակ եւ Աղոսեւանք:

1529. Կուրեղիկ.

Անունն Եղիճի տեսակ կարծեցընէ. որոյ միայն տերեւ մի տեսած եմք, բորոտ բոլորակ, եզերքն այլ կլորիկ կլորիկ բաժնուած, վայելուչ ձեւով:

1530. Կուփ.

Տեսակ մի Արմաւ է կ'ըսէ Բառգիրք մի, « որ զերդ Փշատ է »: Գուցէ նոյն է և

1531. Կուփէ.

Որ ուրիշ նիւթոց հետ յիշուի, « Քուշտ և Կուփէ և Սնպուլ »:

1532. Կպշուկ.

Բարակ արձայի վրայ իրարմէ հեռու նշաձեւ տերեւներ ունի, որոց կոթին արձային կպած տեղ՝ ոսպնաչափ տափակ գնտիկ մի կայ, մանրիկ կանաչ մասերէ ձեւացած. ուրիշ յատկութիւնքն անծանօթ են ինձ: Ասկէ տարբեր երեւի

1533. Կպշան. Կպշուկ կամ Կպշուտ.

Պատատուկ երկայն բոյս մի, որ կը կպչի և փաթաթուի որու որ դպչի. զոր Կոռնինչ անուաներ են նոր բանասէրք. երկուքն այլ թ. Եւափոյզան բառի իմաստով. 1. Gallum Aparine. ֆ. Gaillet Gratteron. կաթնտու յատկութեանն համար

1517. ԿՈԼՂԻՈԼՉ.

Յիշուի աղթարական Բժշկարանութեան մէջ. Թերեւս Գաղի նման ըլլայ:

1518. ԿՈԼԺՆՈՍ.

Նշանակուած ի նոր բառհաւարքէ, որ առանձինն նշանակած է և հետեւեալը.

1519. ԿՈԼԺԿՈՍՐՈԼԿ. — Տես Իրափկոսորուչ:

1520. ԿՈԼԼԱ.

Այն ձեւով Դղում՝ որ հեղուկի աման կ'ըլլայ:

1521. ԿՈԼԾԱԿ.

Ըստ Ասարայ է Ասորի Բանման, տեսակ մի Փշարեղի. տես զայս:

1522. ԿՈԼԾՈԼՈԻ.

« Որ է Իրիցուկն, Պապատիան », գրէ Բժշկարան մի: Տես Գետնախնձոր, Երիցուկ:

1523. ԿՈԼԿՆԱՐ.

Ըստ Բժշկարանաց է Թ. « Ճաղղուզա, որ է, Հապի Սոնոպար », այսինքն Սնուկ պարի հատն կամ մոմոնն. Ամիրտ. կ'ըսէ. « Հապի Սանակպիր իչ-քիտար, որ է » Ճաղղուզան, և իր ծառն փոքր լինի քան զՀապի Սանոպարի առդարին, և ինքն » ի Սիսթանու երկիրն կու լինի, և ի Հոռոմոց երկիրն այլ լինի. և իր ծառին Սո. » սոն ասեն », եւ այլն: Իսկ « Հապի Սանակպարի Սուղարի, այսոր Պ. Թոռիակի » քամ ասեն. և ինքն պտուղ է երեքզուէն, և ամի մէջ է, և այնոր Ճալզ ըլլ-քամ » կ'ասեն, և համն ի Ճաղղուզա կու նմանի »: — Ուրիշ Բժշկարան մի պարզապէս կ'ըսէ Փիձոյ պտուղ. ուրիշ մ'այլ ձայն բանալու զեղոց կարգին գրէ և զԿոլկնար:

1524. ԿՈԼՏՈԼՄ.

Ըստ Խորեն. Աշխարհագր. Խնկեղէն է յիսաւրիա. այլ որպիսի բուսոց՝ չէ յայտ:

1525. ԿՈԼՄԿՈԼՄ.

Խոտեղէն, Հարսնուկի նման ծաղկող:

1526. Կուշ.

Թերեւս Կոշն է (Թ. 1473). ուրիշ նիւթոց հետ յիշուի ի Բժշկարանի. « Նիւշու-
» Փար, Խաշխաշ, Կուշ և և Պարիսպուր »:

1527. Կուտակեայ Բանջար.

Յիշուի ի հին Թարգմանութեան Վարուց Աղեքսանդրի, և Թուի հետեւեալն,

1528. Կուտակուտ. Կուտատուկ. Կտատեակ. Կուտաւտուկ. Կատատուկ.
Կուտատակ.

Գալիենոսի բառք իմացընեն թէ Աղրեաս է, այսինքն Δίσα, որ է Տոչոտ. տես
զայս իր կարգին. միայն Բառգիրք մի Կատատեկի զուգէ Սրինորոս, որ անծանօթ
է ինձ. միւս մ'այլ Պատեղի:

Կուտրկու տակ. — Տես Կոտրկոյ տակ եւ Աղոնսաճոչ:

1529. Կուրեղիկ.

Անունն Եղիճի տեսակ կարծեցընէ. որոյ միայն տերեւ մի տեսած եմք, բրդոտ
բուրակ, եզերքն այլ կլորիկ կլորիկ բաժնուած, վայելուչ ձեւով:

1530. Կուփ.

Տեսակ մի Սրմաւ է կ'ըսէ Բառգիրք մի, « որ զերգ Փշատ է »: Գուցէ նոյն է և

1531. Կուփէ.

Որ ուրիշ նիւթոց հետ յիշուի, « Քուշտ և Կուփէ և Սնպուլ »:

1532. Կալտուկ.

Բարակ որձայի վրայ իրարմէ հեռու նշաձեւ տերեւներ ունի, որոց կոթին որձային
կպած տեղ՝ ոսպնաչափ տափակ գնտիկ մի կայ, մանրիկ կանաչ մասերէ ձեւա-
ցած. ուրիշ յատկութիւնքն անծանօթ են ինձ: Ասկէ տարբեր երեւի

1533. Կաչան. Կաչուկ կամ Կաչուտ.

Պատատուկ երկայն բոյս մի, որ կը կաշի և փաթաթուի որու որ դաշի. զոր
Երոզիմէ անուաներ են նոր բանասէրք. երկուքն այլ Թ. Երափոջգան բառի իմաստով.
l. Galium Aparine. ֆ. Gaillet Gratteron. կաթնտու յատկութեանն համար

այսպէս անուանած ի Յ. Γαλα ρաւէ. Պէյթար, յորմէ և Ամիրտ. օտար անուամբ յիշէ, « Պիլիսքի (Πιλισ) ». որ այսոր Թ. Չօպան սուզակի ասէ. և կու ասեն » Թէ հովիւն զկաթն այսով կու քամէ. և այս երկու ճիւղ կու լինի, և յերկան կու » լինի, և տերեւն ի Տորունին տերեւն կու նմանի և մէջն փոս՝ ի պորա կու » նմանի. և Թէ զմիրգն և զճիւղն և զտերեւն քամես, և զլուրն գինով խմես, » օգտէ՝ օձահարին. և Թէ յականջն կաթեցընես՝ զցաւն տանի. և Թէ հին ճրագ- » եղով սպեղանի առնես և դնես ի վերայ խոցին, օգտէ և հալէ և չըքի, և խաղտի » Ատուածով « :

1534. Կպրէթի տակ. — Տես Խաչափայտ:

1535. կո. կոան.

Յունական ձայն է, ինչպէս յայտնէ և Ամիրտ. « Ղարանիս, որ հայերէն Չոս » և կո և Հոն (Հոյն) ասէ, և Թ. Ղզըմոշի »: Ուրիշ մ'այլ գրէ, « Յոյնք Ա- » կաանեայ կամ Կասկարի տան », որով կոչի և հետեւեալն:

1536. կուարանջար. կուարանջարի տակ. կուան Բանջար.

Երբի կերպս գրած է հին Բժշկարանն. ի բառս Փայլիենոսի հոմանիշն գրուած է Կամիէլ կամ Ղանայիլ, այլ և Սարխոս: Բժշկարան մի գրէ « Ղանրիլ, խոս, մով- » նեղն? երկայն, կարմիր յարարտիկ է. Սարխոս »: Ըստ Ամիրտ. և Պէյթա- րայ. Ղամայիլն (القمي). է նոյն կնքիլն զոր յիշեցինք, (Թ. 1436). Բժշկարան բա- գիրք մ'այլ գրէ, Թէ այսոր « Յոյնք Ակաանեայ կամ Կասկարի տան »: Բուսարանք և բնախօսք տարակուսին ինչ ըլլալուն, և պէտպէս կարծեն. ոմանք այլ համարին Թէ ըլլայ լ. Taraxacum, ֆ. Pissenlit. Լատին անունն յունարենէ առնուած նշա- նակէ Խաղաղցընող: Լեանային տեսակն՝ T. Montanum, յիշուած է ի Ռ-Հ. — T. Serotinum, ի Բարբրդ. — T. Officinale genuinum և T. Crépidoforme ի Թ-Հ. և T. Stenoccephalum Բարբրդոյ մօտերում. — ուրիշ այլեւայլ տեսակներ ի կիլիկիա:

1537. կուանի ծառ.

Թերեւս վերոյիշեալն կա. բայց տարբեր կերպով գրեն Բժշկարանք օմանք. « Ասեն, Թէ (Մարանն) Խեքանի ծառն կու նմանի. և ոմանք ասեն, Թէ ստոյգ » կուանի ծառն է: — Ասէ Պտ. Թէ Մաչիայ ասեն ինքն ծառ-մն է բարակ և » երկայն, և իր փայտէն ումը կու շինեն ի Դամասկոս, և ինքն շատ կու լինի. » և տերեւն դեղնակ կու լինի. և ինքն կապողութիւն ունի և Թեթեւութիւն » ունի: Եւ ասացել է գրոցս շինողն, Թէ այս փայտին որ Մարան կ'ասեն՝ իր » միրգն տոխպ է և ուժով որպէս Գղթոր », և այլն: Կամարկապցին այլ կ'ըսէ. « Ինքն կարմիր միրգ է, և մէջն կուտ ունի. հով է և շոր. լաւն հատունն է »:

1538. կուապալ.

Հին Բժշկարանն ճարտրդեակ կոչուած վիրաց դեղ գրէ, « Կուապալի տերեւ » շոցս և դիր, և ճիճն (ստէպ) փոխէ »:

1539. Կոսսուկ. Կոոթուկ. Կեռոտնի ?

Ստ. Ռոչքեան գրէ Կորաթի. թէ սա և թէ Շէհրիման համարին զսա Bardana, որ հիմայ կոչուի Lappa, և Կանգառեղինաց (Cinaroïdes) ցեղէն է. Կառից նման, ճանկող փշեր ունի, բարձր և բազմաճիւղ. ծաղիկն կանգառանման երկայնաձև նեղկուկ, բարակ և գիրաթափ բրդով. Փոքր կոչուած տեսակն Լ. Minor, յիշուած է ի Ռ-Հ. նոյնպէս և Մեծն՝ L. Major, որ և ի Պնտոս, ուր և Լ. Platylepis.

Կոռկ. — Տես Գռեկ.

1540. Կոզի. Կոզնի.

Թերեւս նոյն ընդ Գոզի (Թ. 532). յիշուի յարեւելեան Հայս: Ռոչքեանն համարի Cinar, Կանգառ. կամ Cactus: — Յիշուի և Կոզոյ տակ, որ ըստ ոմանց բանջարեղէն է:

1541. Կոէզի Թառ.

Լայնատերեւ բանջարեղէն անպիտան, (ըստ Մանան. եր. 448):

1542. Կոէժ.

Այս բառս զուգեր են Mimosa nilotica բուսոյ. լատին անունս այլ թարգմանք կ'ընծայեն Ար. عرق کونولون, զոր Ամիրտ. գրէ « Ղարատ. ծառ մի է որ իր » պտղէն Աղաղիա կու շինեն, և լաւն այն է որ թանձր լինի... կապող է. զա » կռան կու ամրացընէ. և թէ զմազն այնով լվանան՝ ամրացընէ, և չի թողուր » որ թափի:.. Ասէ Պտ. թէ փշով միրգ մի է... և իր միրգին Պ. Կարայ կ'ա » սեն. և ինքն ի Խառնուպ կու նմանի. բայց սպիտակ և վատուժ կու լինի. և » ասացել է գրոցս շինողն, թէ Խառնուպն չորս ցեղ է », եւ այլն:

1543. Կոմզան. Կոըմզուկ.

Ուտելի բանջարեղէն մի ի կողմանս Սիւնեաց և Արցախոյ:

1544. Կոնի.

Այս անունս՝ ինչպէս և Խազիրան՝ մեր նոր գրողներէն յիշուած է, Astragalus բուսոյ նշանակութեամբ, որոյ ինչպէս ըլլալը բացատրեցինք (Թ. 960). Հ. Մէ. հերեանն Կոնի և Կոննոնի նոյն համարի, և պինտ կարմրափայտ թուփ մի է, կ'ըսէ, ասեղի նման սուր սուր փշերով: Յիշենք քանի մի այլ այս բազմազան բուսոց, որոց իբր 300 տեսակք ճանչցուած են ի Հայս և ի սահմանս. և նախ զՀայ. կական As. Armeniacus ի Խարբերդ, Մէկմանսուր. — Սպերացիև A. Ispirensis ի Սպեր. — Խարբերդացիև, A. Karputanus. — Ակոսեցիև, A. Arguricus. — Ամենա.

մեծն *A. Maximus* ի Սպեր. *Կարսեցին* *A. Karsianus*. *Պրիտացին*, *As. Berytius*,
 Կիլիկիոյ Պրիտ լերին. *Որմիացին*, *A. Urmiensis* և *Փեղողէշն* *A. Pulohellus*
 յՈրմիա. *Բագոցին* *A. Bakuensis* ի *Բագու*. *Սեբաստացին* *A. Sivasicus* ի Սե-
 բաստ և ի Խարբերդ. *Սիւնեցին*, *A. Karabaghensis*, ի *Հազարու գետահովտին*.
Վարդոցին, *A. Wartsensis*. *Մշեցին* *A. Muschianus*. Մրմանցն կամ *Պինկեօցին* *A.*
Binghiolensis, *Դաշրիժեցին* *A. Tabrisianus* ի Սահանդ լերին. — *Կապադոկիա-*
ցին *A. Cappadocius* ի Խարբերդ, Բարբերդ, *Կեոսարիա*. — *Մելիտինացին* *A. Meli-*
tinensis ի Միլիտինէ, Սեբաստիա. — *Երկնագոյն* *A. Cælestis* ի *Փեղաբունի*. —
Քորդաքաժակ *Sphærocalyx*, ի Մասիս. — *A. Xerophilus*, *Մէլեքեանն*, *A.*
Meyeri, ի Մասեսոց Ոսին. — *A. Halicacabus* ի Մասիս, Կարին. — *A. Ura-*
niolimneus յԱրագած. եւ այլն, եւ այլն. քանի մ'այլ անստոյգ կամ անորոշ
 տեսակք *A. Incertus* ի Մասիս, յԱրագած և Սրմանց լերինս:

1545. Կռնկուկ.

Սալաձորեցին երգած է. « Կռնկուկն և Կաքունդեզն խիստ կու բացուին մէջ
 սորերուն »: ուրիշ օրինակք գրեն խնոզ կամ Կանկոռկ, և Կակվեղիկն:

1546. Կռնկու ջղայ.

Խոտուլրեցոց ծանօթ բոյս մի:

1547. Կռնուկ.

Եթէ չէ Կռնկուկն. յիշուի ի Խոտուլուր: Տես և Կառ:

1548. Կռոթուկ.

Էւ սա Թուի Կռատուկն. Աթանասեանն (եր. 93) կ'ըսէ մեծատերեւ և փշա-
 ձեւ մարդաչափ ! Հաստ բունով բազմաճիւղ և դիւրարեկ բոյս մի, խոնաւ տեղերում:

1549. Կռոյ ծաղիկ. — Տես Անթեմ:

1550. Կռութ.

Ցորենի հասկը նշանակէ, և ոչ յատուկ բոյս:

1551. Կռուիւնչ.

Տես Կպչուկ: Ըստ ոմանց է *Paretaria*. տես Ապիկոյ խոտ:

1552. Կռտան Սունկ.

Սունկ կամ արմատ մի լուծող յատկութեամբ, ծանօթ ի կողմանս Սեբաստիոյ:

1553. Լուփուլ կամ Կրփուլ.

« Սանդալ. ինքն փայտ է, երեք ցեղ լինի, Կարմիր, Սպիտակ և Դեղին. » լաւն այն է որ մուղասիր լինի (բարակ ?)... Թէ սնուն առնես՝ զակաւայն ամ. » բացընէ, և թէ ծխես՝ օգտէ նուզլային և տաք զլիսացաւութեան և աշաց տաք » ոււէցին », եւ այլն: Այսպէս գրէ Ամիրտ: Լ. Santalum, Փ. Sandal. Ար. جندب. Թ. Սանտալ աղամի.

1554. Կոօնի.

Մառ կամ Թուփ մեծ ձուռնեւ տերեւներով, ծանօթ ի Պոնտոս, պտուղն բարակ մաշկով պարկուճ մ'է, որոյ մէջ Լուպիայի նման հատիկք կան. Լ. կոչուի Staphylea pinnata, Փ. St. Penné, որ ըստ Բ. բառին Ողկուզուկ նշանակէ, ծաղկանց ձեւին համար. ուստի ոմանք ի նորոց կոչեր են յառողջածառ. իսկ Փ. կոչն եւս Nex-օօսը (պնշաւ, կտրած քիթ) և Patenôtrier (Աղօթահամարիչ), պտղաց ձեւին համար:

Կտատեակ. — Տես Կոռուպուս:

1555. Կտաւատ. Կտաւահատ.

Տնտեսութեան մէջ ամենէն ծանօթ և պիտանի բուսոց մէկն, աւելի հազուատի նիւթ տալուն համար քան իւղոյն. Լ. Linum, Փ. Lin. Ար. Պէզր էլ-Քարան, جز الكتان. Թ. Քէրէն բոխումու. Սովորաբար հունտն քան թէ բոյն կոչուի այսպէս. « Լաւն այն է, կ'ըսէ Ամիրտ. որ խոշոր և ի լի լինի. կակղացընող և ե. » փող է. և թէ օծես նատրունով՝ զքալաֆն տանի (զլիսոյ կեղ). և թէ վարդով » և պորայով եախու անես և օծես՝ զշտերն տանի.. և թէ աղնծես և տաս՝ » զփորն կտպէ », եւ այլն: Վաստակոց զիրքն պատուիրէ (ծՔ), « զՅորեանն և » զկտաւատն ի խորու գետին ցանել և ի դուրն ». ուրիշ տեղ այլ (ԵՁ) կ'ըսէ, « Պարտ է ի ծիրանեգոյն գետինն ցանել ». ցանելու ժամանակն այլ սեպտեմբեր ամսոյ 33էն մինչեւ ի յունվարի երեքն. — Կտաւատի մշակութիւնն և գործածութիւնն՝ իր իւղով և թեփով և թելերով՝ ամենուն յայտնի ըլլալով. հիւսուածքին գործիքներուն ազգային անուանց համար կըրնամք Մխ. Կոչի ձեռ առակն յիշել, որովք կտաւագործ մի իբր Թագաւորակերպ զարդարուելով պարծէր. « Սանդր Շոյն իբր զԹագ դնեմ ի գլուխ, և զՍոթ իբր զուր վերացուցանեմ. և « ի գործ կտաւին նստիմ իբր յարոս. ընդ ոտիք ունելով պատռանդան, և զիտուս » ժողովեմ իբր ալխարհ հնազանդեցուցանելով. և ձայն Սանդրն իբր զձայն փո. » ղոյ. և այլինչ ասացեալ այսպիսի »: — Անշուշտ մեր գաւառականաց ծանօթ են Կտաւատի քանի մի տեսակք. յիշենք բուսաբանից ճանչցածներն ի Հայս և ի դրակից կողմանս. L. Catharticum ի Բարբերդ. — L. Orientale ի Մանախ, Խարբերդ. — L. Nervosum ի Մանախ. — L. Tenuifolium ի Թ-Հ. — L. Austriaicum ի Թէքտաղ, Կեսարիա, Վրաստան. — L. Alpinum glaucensens, ի Մանախ, Եմիդ. — L. Incertum ի Կող (Երասխայ):

ի կարգի գեղոց հին Բժշկը. Կտաւատի համար գրէ « Ինք աղնձած ու մեզրով » փոխինդ՝ հազի օգտէ որ ի հովէ. խառնէ զինք ընդ մոմ ու մեղր, շփէ ի վերայ » ձեռաց, քցպան օգտէ »:

1556. Կտաւատ վայրի.

Գուցէ վերայգրեւոց մէկն ըլլայ. յիչէ Աթանասեան ի կողմանս Սիւնեաց:

1557. Կտաւատուկ.

Գետնի վրայ բուսածնու մատնաչափ երկայն և կեռկեռ եղերքներով փունջ մի տերեւոց ունի, որոց միջէն բարձրանան բարակուկ կարծր ճիւղեր, տեղ տեղ բարակ փոքր տերեւներով և շատ փոքրիկ եռանկիւնաձեւ մաշկերով, որոց միջէն ամե նամանր ճերմակ ծաղկանց փնջիկք կ'ելնեն:

1558. Կտողնի.

Վայրի ծառ մի. յիշուի ի կողմանս Գանձակայ:

1559 Կտուախոտ.

Բզրուկ վայրի և Բզրկատուն անուամբ յիշած եմք. աւելցընեմք հօս ստոյգ Աթ. անունն Պզրր էլ-քարունա, كزبندو, Ամիրտ. գրէ Պզրր ըլ-Ղատունեն, որ « Պ. Սպաղաղոյ կ'ասեն. և Հռ. (Ψυλλιον). Ֆրասիոն (L. Psyllium) ասէ... և » ինքն երկու ցեղ է. Սպիտակ և Կարմիր է. և այլ ասացած է, Թէ լաւն այն է » որ ի ջրին յատակն իջնու... Լաւն այն է որ ինքն չի ծեծեն ի բան տանին.. » ասէ Պտ. Թէ զինքն ծեծած ի բան տանին՝ կու » սպաննէ. . և Թէ այն մարդն որ զայս ծեծած » ուտէ, իր դեզն իտարպէն և Պղպեղն է »: — Բուսոյն յունարէն անունն լու նշանակէ, անոր համար տեսակ մի Լուախոտ համարուի. Փ. այլ այսպէս կ'ըսեն Herbe aux puces. Լ. այլ յատուկ Plantago Coronopus, և Plantago Psyllium, որ իրարմէ քիչ զանազանուին. գտուին և ի Հայս. տեսակ մ'այլ կայ որ Եփրատական կ'ըսուի, P. Euphratica և ի Մելիտոնոյ կողմեր՝ ճանչցուած է:



Կտրածի խոտ.

1560. Կտրածի խոտ.

« Ինքն խոտ—ն է, և դեղին ծաղիկ ունի. և » այս խոտիս Թ. Սիւտ օրի ասէ. զէտ խախացք » զկաթն կու կապէ, և Թէ զծաղիկն սպեղանի » առնեն և դնեն ի վերայ կրակին այրածին՝ օգտէ »: Ամիրտ. այսպէս կ'ըսէ Ղալիոն անուամբ, ըստ Պէլթ. غاليون, որ է Լ. Galium, Փ. Gaillet. Կալուկ խոտի ազգակից կրնայ համարուիլ. տես Թ. 1531.

1561. Կտրան ?

Ասար գրէ ասոր հոմանիշ Սարար և Քեքիկ. (գուցէ Քեքլիկ, կաքա). վերջինն անյայտ. իսկ Սարար նման է Սայթարի որ է Մոթրին. բայց Հին Բժշկարանն Կտրանի նոյնանիշ գրէ Խայժդան, որ Կտրանի Համեմատ կտոր, կտրած բան մի նշանակէ և ոչ բոյս: Ուրիշ Բժշկարան մի փտած ակուայի դեղ գրէ, « զՊղպեղն աղա և Կտրանիւ շաղղղէ և գիր ի վերայ այն տեղացն », եւ այլն: Նոյնն ուրիշ տեղ կ'ըսէ « Կտրան՝ Ղադրանն է »:

1562. Կտրանուղ ?

Լեհահայոց բժշկարանի մի մէջ Անանուխ Համարուած է:

1563. Կրկատի.

Ստուգելի ի Խոստուղուր. ըստ ոմանց Ընկուզենի է. պտուղն այլ կրկիտ կոչուի:

1564. Կրկտենի.

Նոյն թուի ընդ վերնոյն, բայց ըստ ոմանց տեսակ մի Չղեարի է, *Crataegus Orientalis*.

1565. Կրմնձուկ ?

Կարծեմ կցմցուկն է (Նոր Դար, Դ, 52). տես քիչ մի վարը:

1566. Կրտիմ. Կրտոմ.

Ղրտոմ կամ Ղրտոմ ըստ Ամիրտ. և այլոց. Ար. է قوشق . Լ. *Crithmum*, Փ. *Crithmo*. « Որ է Ասիոյն հունտն » . ըստ Ամիրտ. այդ անուան տակ երկար բացատրուած է. տես թիւ 177.

1567. Կրտմանէ.

Հին Բժշկարանն գրէ, « Կրտմանա՝ վայրի Գարառէ » . ուրիշ մի, « Որ է վայրի Չաման. և դարձեալ, » որ է Կիիք, որ է Ասի, որ է Չաման: — Բացատրութիւնը տես ի Գարառէ:

1568. Կրփէ. ԿրփուԼ.

Տարչինի հունտ է, կ'ըսէ Բժշկարան մի. տես Դարիսենիկ. թէ և այսոր կեղեւը գիտէինք ի բան եկող և ոչ հունտն:

1869. Կցմցուկ. Կցուլցուկ.

Շատ հանգոյցներ ունեցող եղեգանման խոտ մի է. որոյ կազմութեան կամ ձեւին յարմարին Յ. Լ. և Թ. անուանքն Լ. Թուի Polygonatum, զոր յիշէ Ա. միրտ. ըստ Պէյթարայ, այլայլմամբ, Թուրքերէնին հետ. « Պոռոզոսանտին, որ » Թ. Պոռոզոսանտ սո կու ասեն, այնոր համար որ հանգուց հանգուց է, և ի » լերունքն կու բուսնի. մէկմէկ կանգուն երկայնութիւն ունի. և տերեւն նման » է Տաֆնու տերեւին. համն ի Սերկեսլի համ կու նմանէ. և տակն սպիտակ է » և յերկայն է, և պուղուն պուղուն է. և թէ սպեղանի առնես և դնես ի վերայ » խորային՝ օգտէ, և մանին օգտէ, և խորա ասելն՝ կերուած ասել կու լինի »: — Այս բազմահանգոյց բուսոյ տեսակներէն Բազմածաղիկ կոչուածն P. Multiflorum գտուած է ի Մանասխ, ի Հար. Կովկաս. — P. Polyanthomum տեսակն ի Պոնտոս, ի Քարապաղ, ի Պուլղար լեր. Կիլիկիոյ, եւ այլն — P. Verticillatum, ի Ճիմիլ լերին. Խողտեաց, ի Վիրտ. — P. Convallaria տեսակ մ'այլ յիշուի իբր յատուկ կամ հասարակ:

1870. Կողա. Կոմայ.

Ջրոտ և մտոտ բանջարեղէններէն է, ընդ մէջ Վարունգի և Դրուսի. և « լաւ » է քան գիծիար », կ'ըսէ հին Բժշկարանն, ուրիշ տեղ մ'այլ զուգէ Շինկո ա. նուան, որ է Պ. Շենկիխար: — Մեր աշխարհագրաց մէկն Կիլիկիոյ բերոց մէջ գրէ, ընդ այլոց՝ « Շամամ և Կօթայ »: Այս երկրիս հասարակ բերք մ'ըլլալուն հաւաստիք համարիմ և վաստակոց գրոց երկար գրելն այսոր վրայօք՝ Դոքմի և Պատեխի (Սեխ) հետ, որ « զաղբին և զաղէկ փորած գետինն սիրէ, առաւել եւս » յորժամ չորեւան լինի. զտակսն փորեա և քաղհան արա և ընդ տակսն ի վեր » կուտեա. և քանի այլ մեծանայ և տակուէ՝ այլ փորեա և զհողն ան... Հինքն » փորձեալ են վասն Կօթային, գրել չէ պարտ. զի փորձով է որ թէ փորք տղայ տա » քանայ, իւր չափով երկայն Կօթայ մի հետ փորքերն յորոցին պատկեցո՞ ի լերդին » դեհն. նա տաքութիւնն անդ փոխի և տղայն լաւանայ. և թէ ի տղային յամէն » ձեռն մէկ մի դնես, նոյնպէս արժէ Վերմանն: Եւ Կօթային ուտելն՝ ի վերայ կերա » կրին՝ (լաւ է) քան յանօթեաց: Եւ թէ ուզես որ յամէն ձմեռն ունենաս զինքն, » ի կարաս՝ ուր սպիտակ գինի լինի կամ անոյլ քացայ՝ կախեա զինքն, այնպէս » որ ի գինին չհասանի, և ի վերայ ծեփեա. երբ ուզես՝ բաց, Թաղէ գտանես »: — Սեիրտ. վերոյգրեալ Շանճար կամ Շանկիար անուամբ յիշէ զայս, թէ և իշոյ մասոյ կոչէ, բայց ինչպէս տեսանք այս անուան տակ, Թ. 871 առանձին համարով յիշած է նա այս Մառօլը. անոր համար հօս գրեմք Շանճարի համար ըսածը, յիշեցընելով որ և Պէյթար պէտպէս անուամբ կոչէ Լ. Anchusa ըսուածը, և չփոթէ կամ միացընէ իրարու. Շէնճարի այլ չորս տեսակ դնէ, որոց մէկն յարմարի Կօթայի: Արդ Ա. միրտ. առանց նախ Շէնճարի ինչ ձեւ ըլլալը գրելու՝ բժշկական զօրութիւնները գրէ. յետոյ յարէ. « Յեղ մի այլ կայ՝ մանր տերեւնի ունի, և բարակ ճղեր ունի, և ի » ծիւրանի և ի կարմրութիւն կու քլաւ. ծաղիկ ունի և գէտ արեան կարմիր տակեր » ունի. և կալոց ատենն յաւազոտ տեղեր կու բուսնի, և թէ զտակն և զտերեւն » ուտեն և կամ զլուրն խմեն և կամ լուուխ առնեն, օգտէ ամենայն գազանահա.

» րին. և թէ զտակն դրամ մի ծամեն և կամ օձին և կամ կարծին բերանն թըք-
ո նուն՝ մեռնի ո, ևւ այլն: — Հաւանօրէն այս բացատրութիւնք Կօզայի շնն յար-
մարիր, բայց զի սա այլ վկայի ուրիշ Բժշկարանէ Շէնկխիար կոչուիլ, արժան հա-
մարեցանք յիշել:

1871. Կօշ.

Տեսակ մի կարծբակեղեւ Դումոյ. Թ. Մոս Գապայի. Ելարնեցիք ճշտով Դոքոս կ'ըսեն,
երկայն կոթին համար: Հաւանօրէն նոյն են և Կոյշ և Կուշ, որք յիշուե-
ցան, (թ. 1473. 1836), իբրեւ գինւոյ աման¹, որոյ գոյնն այլ կ'առնու. կամ կար-
մբրի հիննալով, և աւելի կարծրանայ:

Կօշիր. — Տես ճօշիր:

1873. * Հարակ. Հապախ.

Աբ. բառ. է. حبق, նշանակէ Դաղձ և Ռեհան: Տես Հաւաք:

1873. Հագնի.

Ծառ մի որոյ անունն նշանաւոր եղած է բարդութեամբ Հագնեբրգութիւն բառի,
որով կ'իմացուի՝ ըստ քերականաց՝ գիւցազնական կամ յաղթողական երգ, մանա-
ւանդ Համերոսի, զոր կ'ըսուի թէ երգէին՝ ձեռուընին այս ծառիս ճիւղեր կամ գաւա

1. Այնքան սովորական է այս բուսեղէն ամառին զարժանութիւնն՝ ազակեղէնի սակաւազիւս
եղած տանն կամ ի տեղիս, սր պարզապէս Դոքոս՝ կոչուի ամանն. ինչպէս յիշատակաւոր մի է վերջ
ԺԶ գարու կամ ի սկիզբն յաշտրգին, պատուիրէ Աւետարան մի դնողի կամար, « կուլամիրի որ-
» զին Տէր կարապետ՝ ամենայն տարի կուլամիրի ևոպն՝ Դոքոս՝ մի գինի բերէ աւետարանին
» կամար », — Թէ ամանը թէ ամանուածը՝ ասոր ազնեցութեամբ զտառած՝ կ'երգէ Խաչիկ ա-
նուամբ գուտան մի, թերեւս վերայիշելոց ժամանակակից.

« Տեսէց զամանըս Դըքօմի՛:

Դեզնուկ կապէ կոր ինցն ունի.

Փորն է իլի կարմիր գինի.

Աննշ, եղբայր, քեզ խմուղի:..

Դըքօմի, գու մեզ ես պարտական,

Չմեզ խմցընեա ևաւարական.

Տազէր ամեն եւ շարտական,

Ննշեցելոց մեր քաւարան:

Որ է նախնուրն Յոթանի

Գլխոյն՝ եզեր գու ևովանի,

Ալք ամենուս ի քեզ ևայի.

Լըր զկըթ զպս տաւաւ է իլի:

Իբրեւ զորդեակ ըզքեզ զըզուեն,

Վերայ ծընգաց զքեզ մեծարեն.

Թաղ չեղարդի փորեա գինին,

Թէ չէ՛ շուտով կու աքտրեն:...

» նայ՝ քարն ի հետ մեծացո. նա խիստ գեղեցիկ լինի և աղուոր:.. Եւ թէ ուզես
 » Հազար շինել որ Թրընջի համ գայ յիւրմէ, առ Թրընջի կուտ, ճեղքեա և զՀա-
 » ղարի հունտն մէջն դիր և յիրեար բեր, և մուշխայով փաթաթեա, և տնկես
 » նոյն օրինակովն. նա բուսանի և համն Թրնջի լինի... Թէ «ք զինքն շատ ուտէ:
 » ըոյժ աւնէ, և թէ սակաւ՝ կապ. Եւ որ զիւր շուրն ի վերայ կարմիր ելլնդի դնէ
 » կամ կարմրած աչաց, շատ օգտէ:.. Եւ Հազարին՝ զիտնականքն՝ մեռելոտեաց
 « մահիճք են անուանել »: յոյն բնագիրն կ'ըսէ մեռելոց կերակուր. վասն զի շարա-
 գուշակ համարուէր, և ի յիշատակս մեռելոց կ'ուտուէր: Մեր Եզնիկ զգօն վար-
 դապեան Հազարի այլեւայլ յատկութիւնները հակառակ գրէ. « ԶՀազար՝ եթէ
 » ի աօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, գտապս ի փորոյն փա-
 » բատէ, և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, ֆլաստ. և եթէ զշուրն քամեալ
 » անապակ ըմպիցէ ոք՝ սատակի, և եթէ զսերմն աղացեալ ջրով ըմպիցէ ոք՝ ի
 » ցանկութենէ արկանէ »:

1576. Հազար վայրի.

Սա ըստ վաստակգրոց՝ « Այն մանրտերեւ սպիտակագոյն երկայնաձեւ և լեղի
 » Հազարն է. և ինքն բնութեամբ և կերպիւ նման է հոտոյ Խաչիաչի, ուստի
 » Աֆրոնն կու լինի (տես թ. 358)... Որ ի վայրի Հազարիս ջրէն ջրախառնած
 « քացախով տայ մարդոյ՝ որ մաղձի տաքութիւն ունենայ, սղջացուցանէ. և կս-
 » բահարի և մորահարի օգտէ »: — վայրի Հազար համարուին յոմանց և Դառ-
 նիճն, Հնդուպէն և Ճարճատուկն. — Տեսակ մի Հազարի այլ յիշուած է իւրոյ
 Մառզ անուամբ. տես թ. 871. 1570 և Դնկիար:

1577. Հազարածակի ծաղիկ ?

Բշտերու զեղ գրէ ուրիշ նիւթոց հետ Բժշկարան մի:

1578. Հազարգարուն.

Ըստ անուանն թուի գեղեցիկ ծաղիկ մ'ըլլալ. յիշուի ի լերինն Քեղաքունեաց:

1579. Հազարդարա.

Որոյ « Հոտիկն անուշ », երգած է Սալաձորցին. հապա ձեւն և գոյնն:

1580. Հազարնաշան.

Բժշկարան մի կ'ըսէ. թէ սա է « Սպիտակագոյն տունկն ». կարծեմ Սուսկ
 գրիկի էր: Ուրիշ Բժշկարան մ'այլ յիշէ Հազար քաշան, և է, կ'ըսէ, « Հազա-
 » բաֆլան, որ է Ֆաշարայ », իսկ Ֆաշարայ կամ Ֆաշիր՝ Լոշտակն է :

1581. Հազարտերուեան. Հազարտերուուկ.

Եւոյն նշանակութեամբ կոչուին Յ. և Լ. Myriophyllum կամ Millefolium. Փ.
 Myriophylle, Mille feuille. Պէթար այլ յունարէն անուամբ գրէ, որպէս և Ա.

միրտ. « Մարիաֆիլոն. որ Թ. Ալֆիայ կու ասեն, և Հազարտերեւեան այլ կու » ասեն. խոտ-մն է. և տերեւն նման է Աւվատի Ռազանի տերեւին, և ի գե. » տինն կու ճապղի՝ յորժամ բուսնի:.. Եւ ցեղ մի այլ կայ որ ի Գամակոտ » բուսնի, և ասկն որպէս Լուֆայի տակն կու նմանի » — Թէպէտ և խիտ հասարակ և ճամբաներու վրայ ոտնակոխ բոյս մի է, այլ ի տեղաքննաց յիշուած է ի Հիւս. Հայս բովանդակ: — Ուրիշ բառով Չորսորեակ կոչուած է Հազարտե-
րեւեանն:

1583. Հազորան. Հազորանի.

Մեծագոյն պտղով Սինձ է. և մեր երկրին մէջ գտուե-
լուն վկայէ Ռոջեանն ի պատմական գրոց՝ որ հիմայ
չեն գտուիր. նա եւ լատին բառագրողն Ռիվոյա, Խնձորի
նման մեծ Սինձի տեսակ է, կ'ըսէ, երեք կարմիր կու-
տերով, և կոչէ Լ. Sorbus Pietas.

1583. Հազրէվարդ.

Հայոց գովանի և շքնաղ ծաղկանց մէկն է, ըստ ա-
նուանն և ըստ յիշատակութեան բանաստեղծից, որոց
առաջին համարելու է Նարեկացին իր կարճ խօսքովն,
« Փունջ. խուռն Հազրէվարդին, մանուկաբեր բիրին »:
Սալաձորեցին այլ զուգէ « զվարդն ու Գուլվարդն ու
Հազրէվարդն »: Իսկ Կեչառեցին, կամ իր գրուածը ու
գրոց (Աղեքսանդրի պատմութեան) պատկերները՝ ոտա-
նաւոր խօսքերով զարգարողն, լաւ ձիւ վարձք՝ իրր ամե-
նընտիր կեր՝ խոտտանայ զայն.



Հազարտերեւեան.

« Այ ձի, Թէ ինձ ազէկ առնես,
Ձիս ի յայտ երկրէս խալըտես,
Չամէն Մանուչակ տամ քեզ,
Հազրէվարդ՝ ինչ որ դուն ուտես »:

Բայց ի՞նչ է այդ Հազրէվարդն. ըստ Ռոջեանի Լուսցտակի բոյսն է, Rosma-
rinus. ըստ գովարանից՝ Խաչափայտն (Թ. 1009), ըստ այլոց՝ ոչ այլ ինչ բայց
բազմաթերթ գեղեցիկ վարդ մի:

1584. Հազրի.

Ըստ հին Բժշկարանի՝ « Աֆիոնն որ է Հազրին և Խաչափայտն խէժն », եւ այլն:
Ըստ ոմանց Հազրին Հազարի տունկն է, որոյ քնաբեր բնութիւնն յիշուեցաւ,
նման Աֆիոնի. տես և Խաղպապ (Թ. 982), սակայն թուի նշանակել և ուրիշ
բոյս, մանաւանդ ծաղիկ մի. վասն զի երգ մի կ'ըսէ. « Հարիւրալամն և Հազրին
» ի միասին ցնձացեն ». Թերեւս նոյն ըլլայ և

1585. Հագրիկ.

Յիշուած ի բուսեղէնս Խոտուրոյ:

1586. Հալածուկ կամ Հալածուկ,

ինչպէս գրեն օրագիրք (Սարատ, Դ, 329. Նոր Դար, Դ, 114), և ընդեղէն մ'է, կ'ըսեն:

1587. Հալաւիկ.

Նշանակուած և ոչ բացատրուած ի նոր բառհաւաքէ:

1588. Հալեհիտուկ.

Իրեն պէս անծանօթ Մանտրանկոչի հետ (եթէ չէ Մարզանկօշ) յիշուի աղ-թարական գրոց մէջ:

1589. Հալի.

Խորենացոյ Աշխարհագրութեան մէջ յիշուած է, և ըստ Ռոշքեանի՝ Գոթրինի նման ժողիկ ունի: Գուցէ նոյն ըլլայ որ ինչ Խալի. տես զայս Թ. 967:

1590. Հալիլա. Հլէլիհ.

Ար. է, حليله. Լ. Myrobolanum. Փ. Myrobolan, լաւ եւս Myrobalan. ինչ ըլլալն յայտնէ Բժշկարանն. « Ինքն ի Հնդկաց գայ. նման է Սեւ Չամչի. աղէկն » առողջն ի բան մտէ ». ոմանք աւելի Սալորի նմանցընեն քան Չամչի: Չորս տեսակ յիշէ Պայթար և իր հետեւողքն. մէկն է « Հալիլայի Քապիլի. լաւն » այն է որ գէր լինի, և թէ ի ջուր ձգես՝ ի տակն նստի »: — Մէկ տեսակն այլ է « Հալիլա Սեւ, որ Պ. Հալիլա սիահասէ, և Ար. Հալիլա ըլլաւատ. լաւն » այն է որ Հնդի լինի »: Մէկ տեսակն այլ է « Դեղին Հալիլա, որ Պ. Հալիլա ըլլաւատ. լաւն այն է որ գէր լինի » և մայի.. Իւ. ասեր են, թէ այս Հալիլայքս մէկմէկի փոխան են, և շատք կու վկայեն այս բանիս »: — Հին Բժշկարանի մէջ տեղ մի ուր յիշուած է՝ « Դեղին Հալիլա ի կրտէն հանած », գրոց լուսանցքին գրուած է՝ « Եէկ Չամիլ կտված »: — Բժշկական պտղոց կարգին յոգնաբար յիշուին Հիլայքն ընդ Դամոնի և Խիար-չամբարի՝ ի մեկնչէ գրոց Ս. Բարսղի Հարցմանց:

1591. * Հալիոն կամ Հիլիոն.

Յայն անուն Մեներեկի, որով ստորագրէ վաստակոց գիրքն:

1592. Հալիք.

Ըստ Ստ. Ռոշքեանի՝ Խոտ լուծողական և Լ. Ceratia. սա կոչուի և Halenia յազգէ Swertia բուսոց. յանուն Swert Հոլանդացի բուսաբանի, ժէ դարուն

սկիզբում. տարեկան խոտեղէնք են, հինգխորշայ ծաղկոններով. 30 կամ 35 տե-
սակ. յորոց Ազգերեան կոչուածն ՏԿ. Ancheri տեսնուած է ի Կարին, Բարերդ,
ի Ս. Գրիգոր Եղնկայի. — ՏԿ. Punctata ի Կովկաս. վրաստան. — ՏԿ. Balansae
ի Պանտոս, ձիմիլ լեռ.

1593. Հալլուկ.

Թուի Սին պտուղն, ըստ բառհաւարքի միոյ:

1594. Հալիալէմ ?

Անտայգ. Բժշկարանի մի մէջ յիշուած է Հալիալէմի քամուած. դուցէ նոյն
ըլլայ և հետեւեալն

1595. Հալիամիճէ կամ Հալիաւիճէ.

Երկու կերպով այլ գրուած է ի վաստ. դիրս (ՄՂԳ. 87). և է Հիլն կամ Շոշ-
միր, զոր տես:

1596. Հալորի.

Բժիշկ վարդապետ մի (Անտոն) Թ. Ետփրոսն անուան համար գրէ. « Որ է
» Հալորի եէմիլի ծառ »: Ար. Եսպրուհ, ինչպէս յիշած եմք՝ Մանրագոր կամ
Լոշտակ նշանակէ. կարելի էր Մանրագորի պտուղն ըլլալ, բայց պողոյ ծառ կո-
չելն տարակոյս տայ. իսկ անունն անտարակոյս այնպէս է և ոչ Սալորի:

1597. Հալուէ.

Այս անուամբ երկու տարբեր ցեղի բոյսք կ'իմացուին, մին ծառ, միւսն խո-
տեղէն. սա՛ որ և ըստ Ար. Սապո կոչուի, جوسو. « է, ըստ Ամիրս. Աղվայ (Հա-
» լուայ ? , ինքն Սուսանի պէս խոտի մի քամուքս է, և լուսն այն է որ Սզուրտի լինի
» և կարմրժեռ զերդ լերդ լինի. և շուտ լոտի. . Երեք ցեղ է, մէկն Մուզուտրի, մէկն
» Արապի, մէկն Սամանի, և քան զամէնն Սուղուտրին լու է. և իր ջուրն Զաֆ-
» րանի ջուր կու նմանի, և հոտն նման է պախրու եղուն. . և քնքուշ է և պայծառ
» է և շուտ փշրի. . Եւ այն որ Արապին է՝ աղէկ նշաննի շունի. . և այն որ Սամանի
» է (سوسو կամ Սամանանի. سوسو) պեղծ հոտ ունի և սեւ է. և այն որ
» Սուղուտրի է (Սղոթորայ կղզոյ) քանի որ հին լինի՝ սեւնայ. և Տանիկն Սարա-
» կինոն Ալվի ասէ, և Ար. Արապայ ասեն. . Երազիկն այլ նման է Սուսանի, և տե-
» րեւն Թանձր է և մեծ քան զՍուսանին տերեւն. և լրի է. . և ասփակ է, և քիչ մի
» յետեւն կոյս ճկեալ. և զտերեւն կու հնձնն և կու քամեն ոտիք, և զջուրն կու
» աանուն ի Թաղարնի կու լնուն, և ի յարեւն կու գննն՝ որ կու Թանձրանայ և չոր-
» նայ սրպէս Աղաղիա. . Ասել են թէ Սուղուտրին կղզի մի է և մօտիկ է Երամանու
» ծովիզերէն մինչեւ յայն կղզին 40 փարսանկ է. և այն կղզոյն մարդիկն ամենն

» անհաւատը են և կախարդը են, խիստ ուժով. և նոցա բնական տեղիքն յառաջն ի
 » Հռոմոց երկիրն էր. և Ալեքսանդր թագաւոր Մակեդոնացին՝ զնոքա ի Հռոմոց
 » երկրէն ի յայն կղզին քշեաց և ուղարկեաց, որ ի հոն բնակեցան վասն Սապա չի-
 » նիու համար. . որ է Սապր Սոչոտորի. և նոքա են գրեալ զայս օգտութիւնն իւ-
 » ռեանց բառովն. և այժմ՝ գրեցաք մեք այլ ի մեր բառն: Եւ աղէկ Սապո Սուղու-
 » տրի այն է՝ որ ի լերդ նմանի գունովն. և հոտն զէտ Մուռի հոտ լինի, և փայլուն
 » լինի որպէս Չամիս արապի, և ի
 » ձեռքն շուտ տրորի, և գոյնն Չափրանի
 » գոյն լինի և յիրմէն ոչխարի եղի հոտ
 » գայ. . Գալիենոս ասէ, թէ զայս ի
 » վերոյ գրեալ պատմութիւնն ես ըն-
 » դունել եմ, Աստուծով: — Այս
 » գովանի Հալուէն կոչուի Լ, Alve So-
 » cotrina, և այլ եւ այլ տեսակներ ունի.
 » Լեղուահամ հիւթն կամ քամուքսն ի
 » հնուց մինչեւ հիմայ դեղ է, մանաւանդ
 » ստամոքի:

1598. Հալուէի փայտ.

Այս է երկրորդ ցեղ Հալուէ ա-
 նուամբ բոյսն, որ և ծառ. որ և յի-
 շուեցաւ Աղաչոսի անուամբ (Թ. 49),
 ըստ Բ. և Լ. անուանց Αγαλλοχος, A-
 gallochos, Փ. Agallocho, իսկ Ար-
 իստ կամ Էտտ, Ծջք, նոյնպէս և Թ.
 Իստ աղաձի, զոր Ամիրտ. գրէ « Բոտ,
 » որ է Բոտ աղաձին. ինքն փայտ է, ի
 » գետինն կու թաղվի, և հոտն անուշ
 » է. տասն ցեղ կու լինի. լաւն Հնդկին
 » է. . . գրեթէն հոտն անուշ կու աւնէ,
 » և զակուային և զլղերուն և զ՛ղեղան
 » զգայութիւնն և զսիրտն կու խնդա-
 » ցընէ և ուրախ կու աւնէ, և զան-
 » զոհութիւնն կու տանի. . և զստա-
 » մոքսն կ'ուժովցընէ, և զորորքիլն
 » ի ստամոքացն կու տանի, և զկերակուրն հալել կու տայ. . . և թէ գինուն
 » մէջն թրջեա՝ զմարդն շուտ չի հարսեցըներ. . . Ասէ Սինեայ որդին՝ թէ լաւն այն
 » է որ Բոտի մանտալի ասեն, ի Հնդկաց միջէն կու գայ. և յետոյ Բոտի Հետին է,
 » և այն ի Լերուէքն լինի. լաւն լերինն է, որ ոչիլ չի անէ ի հալան. Եւ շատ մարդիք
 » կան՝ որ զՍանդալին և զՀնդկին ի մէկմէկէ շեն ի բաժանել. և ցեղ մի այլ լինի որ
 » Սաւանտարի Ե)ϩϩϩϩϩϩ լինի. և ինքն Սախալիայի Հնդկի ասեն տեղ մի կայ (Ա-
 » թալա ըստ Ալեքսարայ), յանկից կու գայ. և այն այլ խիստ աղէկ է. և յետ նորա
 » Ե)ϩϩϩϩϩϩ Դումարին է, և այն այլ ի Սախալիին ցեղէն է. և յետ նորա Չաղիին է
 » և Պարրին է, և Ղառունի և Սիևի, որ այնոր Ղամարի Ե)ϩϩϩϩϩϩ կ'ասեն. և



Հալուէ.

» Ինքն կակուղ է և քաղցր է. և Մանգալին քան զամէնն աղէկ է. և յետ սոցոս
 » Սամանտարին, ազրախ լինի և գէր և պինտ և յրի. և հանց պիտի որ իսկի սպի-
 » տակութիւն չցայ յինքն. և ի կրակն աղէկ է. և լաւն այն է որ ծանր լինի հանց՝
 » որ ի չրին յատակն նստի, և թէ ծեծեն՝ թելեր չի ելնէ, և շուտ ծեծվի. . . Յօտն
 » ծառի մի տակ է՝ որ կու հանեն և այլվի գետին կու թաղեն՝ որ փայտահամու-
 » թիւնն յիրմէն երթայ և փոխի և Յօտն մնայ » :

1599. Հալուորաց Ռեհան. Հալուորիկ.

Մուշի տեսակ մի է անուշահոտ, ծիրանեզոյն կամ սպիտակ ծաղկըներով: —
 Առանձինն յիշուի և Հալուորիկի Հունտն. Ար. Պղբր ըլ-Մարզ. և և լաւն այն է որ
 » դաւար լինի և գէր, և գոյնն ի կարմրութիւն քլաէ » :

1600. Հալուորիկ.

Այս անուամբ կոչի և Ելակն, կամ տեսակ մի. ըստ ոմանց նտեւ Բանչոյ պը-
 տուղն. (Թ. 387) :

1601. * Հալպուկ.

Սպիտակ Տուղան է, ըստ Ամիրտուվաթայ :

1602. Հալվա. Հալվի Խոտ. Հալֆա.

Առաջին կերպով գրէ Սալաձորցին, և Թութէն վերջը գալը կ'իմացընէ. (Թ. 808)
 Իսկ Հալֆա ըստ Ամիրտ. այն է՝ « որ Թ. այս խոտիս Տիսկիան օրի տաէ. և թէ գիր
 » էրն առնուն և զչորեք դին այրեն ի վերայ բըշտին խարեն, և յայնժամ որ երեւ-
 » նայ՝ նա փարատի » : Ար. Թ. անունս քննելով գիտունք բժշկութեան արեւելից՝
 համարեցան Ranunculus acris, ֆ. Ranuncule acre. կամ R. des prés. եւ Bouton
 d'or. — Իսկ վառտակոց գիրքն ուրիշ ցեղ քոյս մի երեւցընէ, զոր յիշած եմք Խա-
 շար անուան տակ. տես Թ. 998: — Ոմանք այլ Հալֆայն համարին Լ. Eragrostis
 cynosuroides. — Հալվի խոտ կոչուի ուրիշ քոյս մ'այլ, իրեւ հալաւի կամ զգես-
 տեղէնի. պատճառը տես Տուղաս (Տուղու) անուան ներքեւ :

1603. Հախան.

Ըստ Բժշկարանաց մերոց՝ այս է Հ. անուն Քրքըմոյ, ինչպէս գրէ մէկն. « Չաֆ.
 » յրան որ է հայերէն Հախան » : Ամիրտ. այլ, « Աօէ Պարն, թէ Չաֆրան՝ որ է
 Հաշի, և Հայն Հախան կ'աւէ, և Հաշի՝ որ է հաստատ, որ է Լոֆ հախան, որ է
 » Քրքումն » : Տես զայս :

1604. Հակակ. — Տես Ախախիտ, Թ. 28:

Հակժիրակ. — Տես Կակժիրակ, Թ. 1263:

1605. Հաղարճի.

Վայրի ծառ կամ թուփ մի թուփ. յիշուած է ի Մեղու օրագրի (ԻԲ, 83). Մեր դարուս գրողք Հաղարջ անուանէին քանի մի թփոց խաղողանման պտուղներ, Լ. Ribes, զոր և Մոր անուանեն. եթէ օրագրին յիշածն այլ նոյն է, անունն այլ ընդունելի է իբրեւ աղգային:

1606. * Հաճ.

Ար. جاح. « Ինքն փուշ-մն է, որ Թ. այսոր Ղարայ եսևտաղ? առէ, և զԹա. »
« րանկուպինն յիբմէն կու ժողկեն, և Քշուան յինքն կու փաթ վի, և ի Շիրազ՝ այսոր »
« Խարտարու կ'ասեն. և թէ զիր քամուքան ի յաշքն քաշեն, զսպիտակն տանի և »
« զմթնաշն, և ծաղիկն՝ Մնկան խիտ օգտէ »: — Յիշեալ օգտակար խէժին համար Գաւրիժոյ կողմերում խնամքով մշակիլը տեսաւ ԴուռնըՔոր տեղագիրն՝ ի սկիզբն ԺԸ դարու. — Թ. բառն Եսևտախ գրէ Ասար, և միջոցաւութեան դեղ, եղկ չրով տրորելով:

1607. Հաճար.

Ընդդեմնաց գլխաւոր տեսակներէն մէկն, մարդկան և անասնոց ուտելի, աղ. « գակից Ատրայի և Ճոնի. Լ. Secale, Փ. Seigle. ոչ Պէյթար և ոչ Ալիրտ. յիշեն այս կարեւոր բոյսը, այլ զՃոն (զոր տես) իբր նոյն կամ նման համարելով հասարակօրէն Հաճար ըսուածին. և Թ. Ղոնին Չավտար կ'ասէ, ըստ Ամիրտ. որ է Հաճարն, Ս. Գրոց մէջ շատ տեղ յիշուած է Հաճար՝ Յօրենի և Գարւոյ հետ. յիշուած է և Հաւարդեհն հայ: — Առակախօսն մեր յիշէ (ԼՔ) ընդ Մնեւի, իբրեւ լաւ պատասպարուած մաշկով և « անդրժելիք ի թռչնոց », այսինքն ազատք անոնց կտուցէն. բայց եկեալ զազանաց և անասնոց՝ կերեալ և կոխան արարեալ փճաջուցին: — Ատուածատուր Ներսիսեան ի Լատին-հայ բառագրին՝ Հաճարը Vicia կոչէ, որ է ըստ մեզ Վիկ կամ Վինգն:

1608. Հաճարածառ. Հաճարի. Հաճրի.

Խորենացոյ Աշխարհգ. յիշէ ի Գուգարս Հայոց, բայց ինչ տեսակ ըլլալը չիմացըներ, որով տարակուսելի եղած է այլ եւ այլ կարծեօք. ըստ ոմանց նոյն է ընդ Փիճի, ըստ այլոց՝ է Թմրի կամ Լորի, Tilia. այլք Թ. կիչկեկն աղաձի ծառը կ'ըսեն. Մխ. Գոշ՝ որ հայրենեօք էր այն նահանգէն ուր Խորենացի և նոր գրողք յիշեն զՀաճարին, քիչ ճիւղերով և կարճ արմատով ծառ մի նկարագրէ յԱռակն. վասն զի խորարմատքն կ'ըսէին, « Տեսանե՛ս զեղբարս մեր՝ զՀաճարի և զՓիճի, զի ոչ բազմ. » ստորք և ոչ ընդդիմանալ հողմոց կարեն՝ ի խոր արմատս ոչ ունելով: ըստ այսով գուշակուի և ազգակցութիւն ծառոյս ընդ Փիճոյ:

1609. Հաճարուկ.

Ազաթանգելոս յիշէ զսա պողոց հետ, « Ընկոյզն և Նուշն, Քնարուկն և Հաճարուկն ». Հայադուանից կողմերում այլ յիշուի Հաճարկի ծառ:

Հանկիրակ. — Տես Կակոփրակ. Թ. 1262.

Հաճուր. — Տես Աձուր, Թ. 87:

1610. * Համալուն.

Յ. Χαμαλίδιον. Լ. Chamalium, Փ. Chaméléon. Ար. Իշխիս կամ Աշխիս այս անուամբ յիշէ Ամիրտ. « Ասցած է, թէ Քարմոսանային ծառն է, և ինքն » Մագարիոնին (Տերեւատ) ցեղերուն է, և իրեն Խամալուն շուրջ (Լեւկիս) ասեն, » և ինքն Սպիտակ ասել կու լինայ. և ոմանք Աղսիս ասեն. և ինքն ի լերունքն կու » լինայ »: — Լ. Կոչի եւս Cardopatium, և է ի ցեղէ Փշականգառաց:

1611. * Համահիւմ. — Տես Աւիրիշխան. Թ. 87:


1612. Համամա. Համամէ.

« Ինքն խոտ է զէդ Աղաւնեկ. յԱնտաք լինի ». ըստ Ամիրտ. իսկ ըստ Կա. մարկապոյն՝ « Կարմիր խոտ է և ի Մէրտին կու լինի »: Ինչպէս ըլլալը բացատրած եմք այդ Աղաւնեկի կամ Աղաւնարտի անուամբ. տես Թ. 80: Յիշենք հօս Վաստակոց գրոց խրատը՝ (ՔԿԽ) գինին լացընելու համար այս խոտովս. « Համամայն աղուորագոյն և ծաղկած լինի, և հեշտ լեսի և մզլահոտ » չլինի. — Յիշենք Բժշկարանի մի ըսածն այլ Համամէի համար, թէ Միտրդէր ազաձին է, որ է Թանթրուենին:

1613. Համասպրամ. Համասպրան. Համասպիւռ.

Թէ և տարբեր բառերով բարդեալ բայց երկուքն այլ նշանակեն զնոյն զարմանալի՝ և թերեւս Հայկական բուսոց մէջ ամենէն զարմանալին, որոյ ընծաշուած պայծառութիւնն՝ կարծես թէ աչաց հետ միտքն այլ չլացընելով չի թողոր ստոյգ ճանչնալ կերպարանը կամ բնութիւնը. մանաւանդ որ ամենայն գեղեցիկ և անուշահոտ ծաղիկք եւս մեր լեզուով Համասպրամ կ'ըսուին միանգամայն. ինչպէս Ազաթանդելուս կ'ըսէ. « Յամսկին և Մանուշակին, և այլ ամենայն Համասպրամն » ծաղկանցն և ծառոց բոլոր բողբոջոց »: Զաքարիա կաթողիկոս այլ. « Իբրեւ » զհո իրա զարնանային՝ զանագան և Համասպրամ ծաղկօք զարդարեալ և պառնուհեալ »: Եղենպէս և Վարդան Վ. յԱնթառամն. « Իբրեւ մարգս Համասպրամ ծաղկօք ի », և այլք: Բայց գալով ի մասնուորն, հարկ է թէ՛ յատուկ գեղեցիկ ծաղիկ մ'էր Համասպրամն որ արժանի Համարեցաւ ծաղկանց թագաւոր ընտրուելու, գերազանցեալ քան զՎարդ և Շուշան և Ախրիզան, ըստ ոչ առակի Մխ. Գոշի. որովհետեւ՝ ինչպէս « Երկոտասան մասն է երկրի, և 13 ոստ է » Համասպրամին. մանաւանդ զի մեծամեծ ունելով զօրութիւն բժշկութեան » զհիւանդս բժշկիցէ, և զայլս (զաւշ) քաջատես առնիցէ, և ի վերայ ծովու զնալ » տացէ, և իմաստութեամբ զտգէտս լցուցէ »: Մէկ զարմանալի յատկութիւնն

այլ յայտնէ հետեւեալ առական (իւ), զոր ուրիշ տեղ այլ յիշած եմք (թ. 38),
ինք զինքը ծածկելն, և գրեթէ 30 (օր) յայտնի ոչ լինելով. (յետոյ) գտեալ ի բը.



Հանասպրաւ.

» ժըլկաց՝ այնուհետեւ ի պէտս վարի » • բայց եթէ աղօթքով և պահօք խնդրեն՝
գարձեալ յայտնուի:

Սուսանայի անուանակից Հերացույն կ'ընծայեն յետինք՝ այս զարմանալի ծաղկին նկարագիրը. « Եւանք ծաղկին այս է. մի արմատ ունի. և արձակէ բա. » զուկս 12. և ունի ամեն մէկ գոյն մի ծաղկի այլեւայլ, կապուտ և ծիրանի և » շուշան, և այլ, որ ամէն գունից զարդարեալ է Համասփիռն. իսկ թուական » ժամանակի ծաղկին այս է, ի Նոբի ամսոյն ի 23 բուսանի (մայիսի վերջերը) » և ի Կթից ամսոյն ի 27 (օգոստոսի վերջերը) անցանի. այլ պարս է խնդրել » զծաղիկն ի գիշերի, զի ի գիշերն պայծառագոյն երեւի ծաղիկն ի յաշ խըն. » զրողաց »: — Դարձեալ կ'ըսեն. « Ինքն ելանէ ի մէկ ճղէ և բաժանի երեք » ճիւղ. տերեւն կանանչ է և բոլոր, որ ի ձախուն ի յալն ի տերեւի եղերն » կարմիր և լուրջ լինի զինչ աղեղակն որ իջանէ. ծաղիկն ծիրանեգոյն է կար. » մի ղեղնափառ, կապուտակ է ինքն »: — Մեր հրկրին մը կողմերում գտուիլն այլ գրեն հիացողք. « Թէ ուզես որ գտանես՝ զնա ի գիւղն մեծ Խուի (կամ մեծ Խուի, բայց կարծեմ Մեծ Դու), ի լեռն Դարունից. — ի կարնոյ քա. » ղաքն՝ որ է Արզում. ի Բարգոյ լեռն. ի Ձորն Մասեաց՝ որ հայի ի Խա. » խուա? — զնա գիտ ի բոլորն Վարազայ, ի գլուխ լեռանն երեք վէմ կայ, ի » մէջ վիմացն գտնես. — ի սահմանս Խնձորեաց երեք ձոր կայ, գտնես զնոր. » հալի ծաղիկս այս: Հաստատեա ի յունիս ամսոյ 28, և ի Քաղոց 11 »: — Ուրիշ մ'այլ գրէ. « ի Դարոյն՝ ուր Վերմուկն է (ի Բասն), ել ի կատար լերինն, » անդ գտանես զծաղիկն. և են երեք վէմք, և գտանի ի մէջ երկց վիմացն », որոց մէկն է յԱյգորդ լերին. վերոյ գրեալ Խնձորեաց այլ՝ յետին գրողս անուանէ Խնձորեբրդ ի Բասն. յիւրի և ի Ձողկերտ գիւղ Սուրմաւույ. այս տեղուոյս համար գրեն, թէ « Ասաց Անանէ, թէ ես գտայ ի Ձողկերտ, և շարն փոր. » ձեցի, երանի նմա որ զբարին գործէ »: — Այսպիսի ծաղիկ մի ի հարկէ չէր վրիպեր Սալաձորեցույն աչքէն, զի տեսանք որ ի կարին այլ գտուի եղեր, ուստի կ'երգէ.

« Այն Համասփիւռ ծաղիկն որ կայ՝ ծաղկէր ծաղկոյն հազարգոյն.
կուր աչերուն լոյս կու բերէ, թէ Տէրն տայ ազամորդուն.
Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարուն.
Ամէն թրփին գուն մի ծաղկի. հրեշտակք զմայլին անուշ հոտուն.
Այն արքայիկ օձն է թագաւոր, ինքն սպիտակ որպէս ըզձիւն,
Համասփիւռին կու հետեւի, և զօրութիւն կ'առնու հոտոյն »:

Ետքի երկու տողերը՝ ուրիշ օրինակ մի գրէ այլ ազգ, ծաղկին մտաց լոյս տալը բացատրելով.

« Այն արքայիկ օձն է սպիտակ, խիստ խորագէտ և իմաստուն.
Իմաստութեան կու հետեւի, և զօրութեամբ կ'առնէ հըլուն »:

Եթէ բանասէր կամ բնասէր մի վերոյիշեալ տեղուանքը քննէ, անշուշտ գտնէ Համասփիւռը. երբ այն զանազան տեղերում նոյն և նման գեղեցիկ ծաղկի մի հանգիպի՝ այն է, և այնով ստուգուի բուսաբանական որպիսութիւնն և անունն, միանգամայն և արժէք հոշակեալ գեղեցկութեանն, որոյ համար հէթիսայի գովասաց բանաստեղծն (Մինաս Թոխաթցի) կ'ըսէր.

« Ազնիւ ծաղկանց դու նրման ես, Համասփիւռ և վարդի թերթ ես »:

Մինչեւ որ այդ գիւտն յաջողի՝ մենք համարիմք զՀամասպրամն *Lychnis* կոչուած ծաղկանց ցեղէն, որ և Յ. կապոյտ նշանակէ:

1614. Համբար. Համբարապետ.

Այսոր տակը յիշէ հին Բժշկարանն այս երկու անուամբք փորացաւի դեղ գրելով, « Համբարապետի տակ շորցո, աղա և տուր խափժով՝ եօթն օր ». ուրիշ տեղ այլ ճաթըռուած մատոնց կամ շրթանց դեղ, այլեւայլ նիւթոց հետ, « Յա » աւլ ծեծէ զՀամբարոյ տակն մանր զէդ փոշի, և յիրար խառնէ և շաղէ պա » խրի գոզով թանձր զէդ հայտ », եւ այլն. քիչ մի առաւ յիշելով զայս՝ ուղեր է բացատրել կամ նոյնանիլը գրել և չէ գտած, զի գրէ « Համբարոյ (կամ Համբարապետոյ) տակ՝ որ է »... և տարակուսական նշան մի դնէ:

1615. Համբարձում.

Գայիենոսի բառից կարգին գրուի. « Աբրոտանն (*Abrotanum*) Բարձուենեակ, » որ է Համբարձում »: Տես Բարձուենեկ, Թ. 331 .

1616. Համեմ. Համհամ.

Գրուած է եւս և շիթուած Համամէի հետ, ինչպէս ծանուցինք ի թիւն 50. բայց ի հնուց ի վեր հուշակեալ անուշահոտ բոյսն՝ Ար. *Amomum*, է Լ. *Amomum*, Փ. *Amome*, որոյ համար Ամիրտովաթի ըսածն այլ գրած եմք այն տեղ: Քանի մի տեսակ ունի Համեմն, ամենն Ասիոյ և Ափրիկէի տաք կողմերում, լաւագոյն Նիգիլացն է, մշկահոտ ընգուզի նման պտղով, որոյ մէջ կ'ըլլան հոտաւէտ հատիկքն: — Կինամոմի վրայք գրելով յիշեցինք Պլինիոսի և Գիոսկորիդիսի գոված Հայոց Համեմն. ԺՁ դարու իտալացի աշխարհագիր մ'այլ (*Լորենցոյ Անանիա*) Հայաստանի բերոց մէջ յիշելով զԱմեմն, առատապէս կու բերեն կ'ըսէ, և տեսայ. շատ անուշահոտ հատիկներ են, քիչ մի մեծ քան զՊղպեղի:

1617. Համեմ.

Այսպէս կոչուին և համեմային այլեւայլ բոյսք. իսկ իրրեւ յատուկ անուամբ և առանձինն՝ Սամիթն:

1618. Սուտ Համեմ.

Յիշուած է գտուին ի Ռ-Հ. այլ որպիսութիւնն՝ ոչ:

1619. Համկնա ?

Ըստ Ս. Ռոշքեան է Գափնի կամ Գափնոյ հատերն:

1630. Հայ խունկ. Հայի խունկ.

Հին Բժշկարանն աղեաց ցաւերու դեղ գրէ Մազաքէի, Սնովպարի, ԱնձրուՅի հետ և « Հայի խունկ՝ իր փեճեկովն » . որով կ'իմացընէ փեճեկաւոր բուսեղէն ըլլալ, ինչպէս տեսանք որ Կորդուախունկն այլ բուսեղէն է. փափագելի է ճանչնալն :

1631. Հայմշուշ.

Զայս այլ յիշէ նոյն Բժշկարանն, պաղած անդամոց դեղ գրելով Խաչխաչի կեղեւ, Գարոյ ալուր, Խնձորկոտիկ, Հայմշուշ, Ֆուֆիլ, եւ այլն. զամենն այլ « ծեծէ քաջ, և Հնդդպի իրով և քացխով շաղէ և անըսէ և օժ զտեղին » . այս տեղ Հայմշուշին վրայ տարակուսական նշան դրած է օրինակողն, յԺԳ դարու. ըսել է որ երկու դար առաջ երբ այն գործն թարգմանեցաւ կամ հաւաքեցաւ, թէ այս բոյս թէ Համբարն և այլք եւս՝ ծանօթ էին ի Մեծ Հայս :

1632. Հայոց Բանջար.

Նուիճն է. տես ի կարգին. միթէ յաւութեանն համար սյօպէս կոչուած է, կամ զի ըստ Կամարկապեցւոյն, « Ասէ Գազիանոս, թէ ինքն է վայրի, և Հա- » յերն չորցընեն, քամեն և տան՝ որ վերցընէ, զճճին հանէ և իստակէ. և սպի- » տակն օգտէ նգին » :

1633. Հայվազ ?

Ըստ Ռոշքեանի է Լ. *Consolida* և լաւ եւս *Symphytum*, Փ. *Consoude*, կու շուածն. տես Ափնիք (Թ. 259) և Մործորակ, յետոյ և Շամդիտակ : — Այս օտարալուր անունն (Հայվազ) յիշեցընէ աւելի օտարակերպ Հայկանկազ անունը Խաղողոյ (Թ. 975) :

1634. Հայրասպան.

Ար. անուան թարգմանութիւն է *عقارب*. Գաթրի-ապիւնի, ըստ Ամիրտ. Ղաթիլ ինչ-տեկպի. Պէյթար պոսպիսի կոչման պատճառ գրէ զայն՝ որ այսոր պտուղն չի չորնար ինչուան որ ծառէն նոր ընձիւղ մի չբուսնի. Ամիրտ. միայն յատկու-թիւնները յիշէ. « Լաւն այն է որ կարմիր լինի. . և կապող է. թէ զիր միրգն » ծեծեն և սպեղանի առնեն՝ չի թողու որ ի յաչքն լուր իջնու, խափանէ. և » տերեւն զխոցերն կու եփէ, և զգլխոյն խոցերն կու չորացընէ, և կրակին այ- » րածին օգտէ » : — Իսկ ծառն և պտուղն տես ի Մաթուզ և Մաթըզեների (*Arbutus*) :

1635. Հայքար.

Իրաւ այսպէս կաշի քար մի, բայց և Խոտ մի կարմիր և փայլուն, ըստ Բրգը-նիկցոց. Թ. Արրատիան ?

1636. * Հանդալ.

Ըստ Ար. جنط، որ և Շահնի հանդալ. — Տես Զմերուկ վայրի. կամ ըստ Բժշկարանաց ոմանց՝ Գուրաքիկեայ, Colocyntha, որ է Դոմենին Յովնանու, տես և զայն, Թ. 871:

1637. Հանդաղուղ.

Վայրի Առուոյտն է. Ար. حندق، Լ. Lotus, Փ. Lotus sauvage, որ և ըստ Պէյթ. կոչի Տորագ և Հարակ حباق. Ամիրտ. այլ կ'ըսէ, « Ինքն երեք ցեղ է. » լաւն այն է որ ի ածվենիքն լինի. Թէ. զայնոր քամուքան առնես և մեղրով » կաթեցընես ի յաչքն՝ զթանձրութիւնն տանի », եւ այլն. Տես Առուոյտ: — Ըստ ոմանց է Լ. Globularia Arabica.

1638. Հանդաղ?

Բժշկարան մի գրէ. « Եթէ զք առնէ Հանդաղին տակն և ծխէ, սողունքն որ » զանոր հոտն առնուն՝ փախչին »:

1639. Հանդի.

Ըստ Սիմ. Կամարկապոց է Շահթառած. տես զայս ի կարգին.

1630. Հանթիթ.

Կապպարի և Տուռախի հետ յիշուած է ի Բժշկարանի.

1631. Հաշա.

Տես Զամբուռ: — Կամարկապոցին կ'ըսէ. « Խոտ է սպիտակ. աւել չինեն »:

1632. Հաշիղ.

Բժշկարան մի կ'ըսէ թէ այսպէս կ'ասեն հայերէն? զՂանապ, այսինքն զԿանեփատն:

1633. Հապալաս. Հապալասենի.

Հայերէն ձեւացեր է Ար. Հապ ալ-Աս, որ նշանակէ Հատ կամ պտուղ Մուրտի. Վաստակոց գիրքն խնամով խօսի թէ պտղոյն թէ ծառին վրայօք: Տես Մրտենի: Բարտամեանն՝ Մոզ համարի զՀապալաս. ոմանք Լ. Vaccinium կոչուած Մրտենեոյ ազգն. Փ. Airelle.



Հապալաս.

1634. Հապաղիակ կամ Հապալակ. — Տես Փանջնակ:

1635. * Հապըլխոր.

Ար. անուամբ հին Բժշկարանն դեղ զուգէ՝ ֆէլճ հիւանդութեան (որ կոչն գնայ), ուրիշ նիւթերու հետ, և տարակուսական նշան դնէ: Նոյն հիւանդութեան համար գրէ դեղ և հետեւեալը.

1636. Հապ ըլ-միթ.

Որ նոյնպէս Ար. լսուի. այսոր համար՝ մեզի թողու տարակոյսը:

1637. * Հապ ըլ-մլուք.

Ըստ բառին Ար. նշանակէ Սյրքայտհատ. ինչպէս որ մեր նոր գրիչք կոչէին Տիզկաննփատի հատիրը (Rioinoss), բայց Պէյթար, կ'ըսէ թէ այս թագաւորական հատիկներն կեռաս են, և ինչուան հիմայ այլ այսպէս կոչեն յԱխրիկէ: — Տես Տանտիսնի:

1638. * Հապնիլ. կամ Հապ ըլ-նիլ.

Տես Լեղկի հունտ: Ի դեղորայս յիշուի Հապնիլ կտուած.

1639. * Հապ ըլ-Պան. — Տես Պան և Իշարոզ:

1640. * Հասակ.

Ար. բառ է, յառ տեսակ մի փոյ կամ Տատակի. Բժշկարան մի Թ. կ'առ նուանէ Տամուր քիքանի: Տես Տատաչ, և Պուտմ:

1641 * Հասաքտանա. — Տես Ասփուր, Թ. 177, և Կրտիմն (Թ. 1566):

1642. Հասաֆ.

« Չէտ Կորեկ է », կ'ըսէ Ասար:

1643. Հասկ.

Հասարակաց ծանօթ՝ Յորենի և նմանեաց ծաղկի և հատից՝ թեփոտ և մազոտ բովանդակութիւնն, ի ծայր ցողունին:

1644. Հասոււմ.

Ըստ Գալիենոսի բառից է Իշերորու յետս, այսինքն Ապիտակ Վրացի կօճ. տես Թ. 1463:

1645. Հասպա ?

« Սեւ վարդն է, » ըստ Ասարայ. — Ինչ լեզուով է բառդ, և ինչ զարմանալի վարդ:

1646. * Հավարի. Հավարիոն. — Տես Ասարեայ, Թ. 151.

1647. * Հավր.

« Ծառ-մն է. կ'ըսէ Ամիրս. որ ի Հոռոմոց երկիրն կու բուսնի, և ես գտայ » ի գիրք-մն այլ, թէ Հավրն ծառ-մն է, որ Թ. այս ծառիս Ղային աղամի կ'ասէ. » և ինքն ի հով և ի շոր տեղրանք կու բուսնի, և ինքն չորացընող է. և թէ » գիր միրգն մեղրով ի յաշքն քաշես՝ սրացընէ. և այն որ ի Հոռոմք կու բուսնի՝ » զմիրգն քացախով խմես՝ օգտէ ըխտաւորին »: — Ար. ၅၅. Ըստ արեւելա- գիտաց և բուսարանից՝ է Սպիտակ կաղամախին Լ. Populus Alba, Փ. Peuplier Blanc կամ Կրծնա. խոնաւուտ գետիններ սիրէ. գտուի ի կովկասային գաւառս, որով Թուի թէ և ի Հայս:

1648. * Հատաղ. Հատաղայ. — Տես Պատնիճան վայրի.

1649. Հարան ?

Բժշկարան մի գրէ՝ եփել զայս սեւ աշխարի կաթով և դեղ ընել թոյլ անդամոց. ուրիշ տեղ այլ յիշէ Հարնի ալիւրը, որով յայտնի ընդեղէն ըլլալ, և հաւանօրէն Հանարն է:

1650. * Հարբ. Հորբ. Հորփ. Հարֆ.

Ար. և Ասորի բառեր են: Տես կոտեմ և Զրկոտեմ:

1651. Հարիւրալամ.

Փենուանայ, տես Խաչափայտ և Հագրի:

1652. Հարկուտի ?

Հին բառագրոց մէջ գրուած է, հոմանիշն այլ Շիրաւէոջ ? երկուքն այլ ինձ ան- ծանօթ:

1653. Հարշ.

Տեսակ մի Խնձորոյ:

Հարշակ. — Տես Հրշակ:

1654. Հարուր.

Հին Բժշկարանն յիշէ զայս, և ուրիշ անծանօթ բառիւ մեկնէ. « Որ է Աւարձ. » փոթոթ է. զմարմինն պնդէ, զորովայնն լուծանէ, զատամուկս հաստատէ և պնդէ. » թէ հով ջրով խմէ յամ արոյն գայ՝ արգելու. թէ ընդ այլ մաղձեղեղի խառնես՝ » ստամոքի չտայ մլնասել, զալոյրն ի վերայ գանի (զարկուած, վէրք) ան՝ օգտէ » և և այլն. վերջի ըսածէն իմացուի թէ այնպիսի բոյս է որ ալիւր կամ ալիւրի նման նիւթ ունի. Բեւանդի և այլ բժշկական խոսոց կարգին գրուած է:

1655. Հարսնամատն.

Անունն գուշակի գեղեցիկ ծաղիկ մի. և է ըստ ոմանց մատնաշափ երկայն կարմիր ծաղիկ մի. այլ փափագելի էր աւելի բացատրութիւն: — Հասարակօրէն այս անուամբ կ'իմացուի, ըստ բառից Գայիենոսի « Դիմփէա, Եոչաւ ի գետեզեր կամ » Հարսնմատ »: Ըստ ոմանց նոյն է և Դունուֆարն (Դիլուֆէր), բայց սա յատուկ ի ջրի յատակ բունողն է: Իսկ Հարսնամատն՝ ինչպէս ցուցուց Գայիենոսի բառագիրքն՝ Գետեզերաց Եուշանն է, Nymphæa. ի յունէն Νύμφη, որ ըստ առասպելաց Յաւերժահարան նշանակէ, և յիշեցընել տայ մեզ՝ Խորենացոյ Այրարատեան Գաշտի նկարագիրը (Ա. ժԲ), ուր « ականակիտ աղբիւրք, գետոց կարկաշտասահից ընդ մէջ » անցելոց. . (և) առ սահմանը նոցա՝ պատանիք ոմանք իբր առ երիտասարդուհեք » ճեմիցին »: անշուշտ մեր հին հարց Հայկազանց երկնակերպ Յաւերժհարսունքն այլ՝ ոչ պակաս գուցէ և աւելի քան ղհելլենականն՝ մտահանոյ ծագումն և այլակերպութիւն ունեցեր են, և գուցէ իրենց ծաղկաբաղ ձեռաց վայել համարուած և կոչուած են այդ գետեզերեայ Հարսնամատն շուշանն: Եունաց Դիմփայք բազմազան էին, երկրայինք, ջրայինք, գետայինք, լճայինք, աղբերայինք, ինչուան և զբոխայինք. որոց համեմատ թերեւս հարկ էր անուն, պատկեր և նուէր հնարել. մեր հարց աւանդութենէն այդպիսի զանազանութիւն Յաւերժհարսանց՝ չէ հասած, և ոչ զանազանութիւնք ջրայատակ կամ ջրեզերեայ ծաղկանց, այլ միայն ջրային կոչումն տեսակաց բուսոց ոմանց. իսկ այս տեսակ ծաղկանց՝ միայն այդ Հարսնամատն անունն և եկամուտ Դիլուֆարն կամ Դոնուֆար, առանց խտրելու զայս ի Դիմփէայ, ինչպէս շատ հեղ օտարագրէք այլ չեն որոշեր կամ չիթթեն: — Ամիրտ. յիշէ առաջին անունը, « Դիլուֆար, որ է Դոնուֆար. երեք ցեղ է, լաւն այն է որ անուշահոտ լինի... Ասէ Պտին Թէ ասորերէն այսոր փարսնայի մայ կ'առնն, և Հռ. » Անիւն ? ասեն, և իր հապին Հազ ըլ-Առուս ասեն (Հարսնահատ, մէկ գրով որոշ » չեալ ի հայերէնէն). և ասացեալ է Թէ ստոյգ և լաւն և աղէկն այն է որ ի Պաղտատ լինի, և ծաղիկն կապոյտ լինի և Սամանի կու նմանի... Հնտի Դիլուֆարին » Ֆուլ ասեն. և այսոր ասի Թէ երեք ցեղ է, այն որ Պաղտատին է՝ գոյնն կապուտ է, և այն որ Հռոմոց երկիրն կու լինի՝ դեզին է գունն և սպիտակ. և քան » զամէնն լաւ խիտ դեղինն է »: — Աւելցընենք, որ Արարք ծաղկի անուն մ'այլ ունին նման Հարսնամատին, Ասսայկա էլ-ֆերիադ, որ յԱմիրտ. սխալ գրուած է դաքիար, և նշանակէ օրիորդաց մատներ. բայց անուշահոտ Ռեհան մի է կ'ըսեն, կամ Փաղանգամուշկն Պարսից: — Տես զայս և զՆունուֆար:

1656. Հարսնու ծաղիկ. Հարսնուկ. Հարսնածաղիկ.

Թ. այլ այսպէս կ'ըսեն, կելիմէիկ յիշեիի. իսկ մեր լեզուով ուրիշ այլեւայլ անուններ այլ ունի, Հոդակաղիկ, Օճկակաշի, և աւելի հասարակօրէն Պոշու կամ Պտիկ: Առնք Յաւերժահարսանց նազելի դասէն չեն, այլ օր և է դաշտաց և արտորէից մէջ խառնուած ուրիշ բուսոց և ընդեզինաց հետ՝ ոչ սակաւ զարդ կու տան և հեռուէն աչքի զարնեն: Լ. Papaver Rhœas. ֆ. Coquelicot Թ. Πολεβοΐ μακρ. — Բուսարանք զանազանեն այս ծաղիկս բովանդակող ցեղին մէջ՝ ազգ մ'այլ

քիչ կամ շատ տարբերութեամբ, զոր և դիւրին չէ որոշելն, և յունարէն բառով անուանեն *Anemone* (*Ανεμώνη*) որ հողմային նշանակէ. և ըստ այսմ Ն. Հորմա- ծաղիկ կոչուած է, իբր թէ ծաղիկն թերթերն հովի փչմամբ շուտով կու թափին և ցրուին. այսոր զուգակից կամ զուգանիշ համարին ոմանք և Պուտ, ըստ բառից Գալիենու. սակայն ըստ մեզ անզանազան երեւին երկուքն այլ. հին ատեն Հարս- նածաղիկ բառն կամ չկար և ի Թուրքաց անուուած է, անոր համար չէր յիշուեր, կամ թէ իբր բամկորէն՝ չէր ընդունուած ի գիրս: Դարձեալ, Պուտ շիոթուի Ա- տրուկ անուններով ծաղիկն հետ (Ծափկտորուկ, Ամանկտորուկ, եւ այլն), զոր որո- շած և նշանակած եմք այն անուամբ, (Թ. 1193): — Արդ յիշենք այս տեղ ինչ որ յոյն Անեմոն և Ար. Շագաչիկ ըլ-Նոմոն անուամբ ճանչցուած է առ մեզ. ետքի անուամբ ստորագրէ Ամիրա. բայց երկու տեսակ ծաղիկներն այլ խառն և անզանա- զան, մանաւանդ թէ Թ. կալիմեանչ չիչակի գրէ, իսկ Ն. Հարսնուկ կամ Հարսին ծաղիկ անուն չի յիշեր, հապա Ծափկտորուկ, եւ այլն. կ'երեւի թէ իրմէ վերջը մտեր է առ մերայինս այդ Թ. բառին համանիշ հայերէնն. յիչն նա և, թէ « Ասեր » է Պտին, թէ Հելլենացուց բառովն Շաղր? ասեն և Արմենի ասեն. ինքն վայրի լինի » և ածուց լինի ». և այս խօսքով ցուցընէ հասարակ Հարսնուկը. յետոյ ըսելով թէ « այն որ ծաղիկն մեծ լինի այնոր Լաչա կ'ասեն », ցուցընէ զԱնեմոնն. իսկ յաւել- լով թէ « ցեղ մի այլ կայ որ ինքն Շաղաչիդն է », ցուցընէ զԾափկտորուկն, *Pæonia*, ինչպէս նշանակած եմք: — Հողմածաղիկ այլեւայլ տեսակաց մէջ նշանա- կած են բուսաբանք՝ Հայկական մ'այլ *Anemone Armena*, պղտիկ մանուշակարմիր ծաղիկով, ի Պինկէօլ ը. ի Մէկմանսուր և յԱրգէոս ը. — *A. Albana* Տփղիսու գո- վերը. *A. Alpina*, ի Հս. և ի Հր. Կովկաս. — *A. Coronaria* Եփրատայ ականց մօ- տերում, և ի Կիլիկիա. — *A. Blanda*, ի Կիլիկիա, Տրապիզոն, և Փոքրիկն *A. Par- vula*, ի Գալքէօփրիս. — *A. Ranunculoïdes*, ի Գանձակ (չելենէնտորֆ). — *A. Narcissiflora*, ի Վան, Բաղէշ, Թեքտաղ, Գարապաղ: — Ըստ առասպելախօսից Անեմոնն զոյացեր է Արտնիսի արիւնէն, որ սիրելի էր Աստղկան, և կամ այսոր արտասուքներէն:

1657. Քողած Հարսնուկ. — Տես Յակոբոս:

1658. Հարֆայ.

Ըստ Ասարայ սպիտակ տուղտն է. իսկ Խարֆայ՝ է Ճուլպան:

1659. Հաց.

Թամկորէն Յորենն այլ որով կ'ըլլայ ուտելի Հացն՝ նոյնպէս կ'անուանի: Գար- ձեալ Հաց կոչուի և Մոլոն:

1660. Հացադեղ. Հացիդեղ. Հացուզող.

Լ. *Ammi*. *β. ἀμμος* բառէն, որ բուսած տեղոյն համեմատ աւազուտ նշանակէ, և հատիկներն հացի համեմ կ'ըլլան. Գալիենու բառից մէջ անուանած է եւս Նեկի կամ Նանխոս ըստ Ար. Նանխոսիս *σπλαγχι*, որով ստորագրէ Ամիրա. « Որ է » Նանխոսայ. — Ինքն հունտ-մն է նման է Անխոսի, (ուրիշ տեղ Մթթրիսի հունտի

» նմանցրնէ) և խիստ տաք է. աղէկն յԱսարայ (Ագ սէրայ) լինի...⁽¹⁾ Արէ Պինա.
 « Թէ Նանիոյ և Նանիուեան և Նախահ, և ի Նիրազ Նանիեան կ'ասեն և ի
 » Սպահան Սարնիեան կ'ասեն. և այս ամենայն անուանքն Նանիուին Պ. անուան.
 » քըն է. և Ար. Տարիպ ըլ-խոսպզ կ'ասեն, որ Թարգմանի Հ. լեզուաւ Հացի
 » դեղ և կամ Հաց ուզող⁽²⁾. և լաւն այն է որ նոր լինի ուժով և կարմրժեռ կամ
 » սսկէգոյն լինի: Եւ Տօլոսն ասէ, թէ զստամաքն կ'ուժովցընէ, և զքամին կու
 » վարէ յանձնէն. և զհիճիքն այլ կու սպաննէ. և Սահակն ասէ, թէ զկաթն
 » կու պակսեցընէ »: — Մէկ տեսակն A. Visnaga ճանչցուած է ի Հր. Կով.
 կաս: — Յիշուի և Սպիտակ Հացի դեղ նոյն Նանիու կոչմամբ:


1661. Հացի. Հացենի.

Վայրենի ծառոց ցեղէն. որ Գալիենու բառից մէջ Յ. կոչուած է Սփեդանու,
 և պիտի ըլլայ Սփենդամնու Σφιδαμνος L. Fraxinus (կամ Acer.), Փ. Frêne. Թ.
 բառգիրք մի գրէ « Տիչ պուտագ, հովանին մահարեր է օձոյն ». այսպէս հա-
 ւատալով և արեւմտեաց՝ առակ էր անուանել զծառը կամ հովանին՝ Վնասիչ
 Վնասակարացն, Nocentibus noxia. Մորան կամ Մարան Ար. անուամբ գրէ Ա-
 միրա. « Մարան (جوز) ասեն, թէ խերանի ծառն կու նմանի. և ոմանք ա-
 » սեն թէ ստոյգ կուանին ծառն է (Թ. 1537). և թէ զիր տերեւն ծեծեն և
 » զլուրն քամեն և տան որ խմէ, օգտէ զազանահարին. և թէ սպեղանի տա-
 » նեն՝ զառաջին օգտութիւնն այնէ. և թէ զկեղուն այրեն և արորն իրով և
 » օձեն՝ բորին և քորին, օգտէ: Ասէ Պտ. Թէ Մայիայ ասեն (Melis), ինքն
 » ծառ-մն է բարակ և երկայն. և իր փայտէն առմբ կու շինեն ի Գամակոս.
 » ինքն շատ կու լինի. և տերեւն դեղնուկ կու լինի. և ինքն կապողութիւն ունի
 » և թեթեւութիւն ունի: Եւ ասցել է գրոցս շինողն, թէ այս փայտին Որումն ?
 » կ'ասեն. իր միրզն աղտիպ է և ուժով որպէս Գղթոր... Իր փայտին խար-
 » տաքն սպաննող է. որ խմէ՝ վնաս առնէ մարդուն »:

Քանի մի տեսակք են Հացի ծառոց, որոց ի Հայս գտուելուն՝ պատմական և
 աշխարհագրական ճոխ վկայութիւն ունիմք. Հացեաց Դրախտն ի Տարոն, ուր
 Ս. Գրիգորի Որդւոց և Թոռանց հետ տօնելի ծերունին Ս. Դանիէլ՝ բնակէր և
 ուր Թաղուեցաւ կռոց նուիրեալ բազնի մի մօտ, « ի դոյզն ծորժորակին, ի սա-
 » կաւ անտառակին, ի Հացոստ պուրակին, որում անուն տեղւոյն իսկ Հացեաց
 » դրախտ կոչեն ». (Բուզ. Գ, ԺԳ): — Նոյն գաւառին մէջ Հացիկը կամ Հա-
 ցեկաց գիւղ մ'այլ կայ, որ ընծայեց ազգիս դպրութեան անգին հայրն և հեղի-
 նակն զՍ. Մեսրոպ - Մաշտոց. նոյն Թուի և Հացեաց գիւղ կոչուածն (Բուզ. Գ ԺԺ),
 ուսկից էր հարճն Պապայ՝ անարժան որդւոյ մեծարժան Ս. Թուսկան: — Մա-
 նօթ է և Հացիւնիք զաշտն և աւանն և գաւառ Վասպուրականի, որոց անուամբ
 և հաշակաւոր Հացիւնեաց Խաշն, այս ինքն մաս մի Քրիստոսի խաչափայտին՝
 զոր Տիկինն Սիւնեաց ճարտարութեամբ կորզեց ի Հերակլեայ կայսերէ: Ոչ պա-
 կաս քան զայսոնք պանծալի է և եզական յիշատակ Ս. Լուսաւորչին ի Թորղան

1. Գրոց օրինակ մի Բուխարայ գրէ, իբր Բուխարայ:
 2. Ուրիշ Բուխարան մի աւելի նստատուութեամբ գրէ. « Նանիու, նաև է նման Անիանի,
 ուր Հպի Հացի դեղ կամ Հաց ուզող ասէ »:

գիւղ Յկեղեաց, ուր կենաց վերջի ճգնաւորական ժամանակ՝ դրօսարան պարտիզիկ մ'ունէր, և իր լուսարայի ձեռքը՝ Հացի ծառ կամ ծառեր այլ տնկեր



Հացի.

էր. ուսկից յետ իբր 350 տարիներու Յովհ. Պատմիչ կաթողիկոսն՝ իբրեւ կենդանի նշխար կտրեց և մխիթարանք ըրաւ իր վշտալի պանդրխտութեան: — Հիմայ բուսարանք յիշեն Բարձրաձաղկ Հացի տեսակն Fr. Excelsior՝ ի Հս. և Հր.

կովկաս, — Սրատերեւն *F. Oxyphylla* ի Գարապաղ Սիւնեաց, և այսոր Փոքրատերեւ կոչուած զանազանեալն՝ ի բարձրաւանդակա Հար. Հայոց:

1662. Հացի Սերմն. Հացի Փայտ.

Ամիրտ. կ'ըսէ, « Լիսան քլ-Ասփոյր. հայերէն այսոր Չագոս չեզոս կ'ասեն, և իր ծառին Հացի փայտ կ'ասեն »: Ուրիշներն Հացի Փայտը կամ Հացափայտը զուգեն Կոփրոսի, ինչպէս նշանակած եմք ի կարգին, տես թ. 1489: Բայց երկու երեք տեսակ բան չփոթեն անուամբքս. որոց մին վերոյիշեալ ծառն է Հացի. միւսն իր պտուղն՝ որ Սերմ կ'ըսուի, և ուրիշ բառերով Չագլեզու կամ Ճըն-ճըղկալեզու (զոր տես ի կարգին). և մէկ մ'այլ թուի խոտեղէն բոյս մի, որոյ թերեւս յարմարագոյն էր Ճնճղկի լեզուի նմանութեամբ կոչուին:

1663. Անշրդի Հացի Փայտ.

Հացեաց մէկ տեսակն է անշուշտ, բայց որն ըստ բուսաբանից, կամ թէ ծառն ութ նոցա, ստուգելի է. յայտ է որ յիշողին կամ գրողին ի Հին Բժշկարանի ծանօթ էր. իր ըսածը յիշած եմք կովրուսն բառի ներքեւ:

1664. Հացիքի.

Այսպէս գրուած է յԱյրարատ օրագրի (ԺԹ, 448), վայրենի ծառոց մին ի Հաղրատ. բայց գուցէ սխալ տպագրուած է, փոխանակ Հացի և Գի գրելու:

1665. Հացխոտ.

Եղուած է բառից հաւաքման մի մէջ, իբրեւ տեսակ Փրփրեմի, *Portulaca Marina*.

1666. Հացհամեմ.

Օտար լեզուաւ գրուի առ մեզ և Պոյ, այլ և Հոչպէ. Հեյրովրակ. Բյրենի. տնտեսութեան մէջ գործածուած ծանօթ համեմն, որ կոչի Լ. *Foenum graecum*. Փ. *Foenu grec.* Ար. Հոչպա (*حبل*), Ռ. *Божья трава*, որ է Պոյն. ինքն երկու « ցեղ լինի. լաւն այն է որ նոր լինի »: այս ըսելով Ամիրտ. բժշկութեան մէջ ունեցած պէտպէս օգուտները յիշէ երկար. յետոյ նոր օտար անուններ. « Ասէ » Պտ. թէ այսոր Ծարիֆա ասեն, և Պ. Շարիփոյ? կու ասեն »: — Վաստակոց գիրքն (ՄՂԲ) Հացհամեմի հունտն աղալով ալիւր ընելով և քանի միջ նիւթոց հետ խառնելով, օծելիք մի զուգէ, որով օծուած մարմինը չեն կրնար մեղուք և նմանիք խայթել. գինւոյ տակառները ձիւթելու համար այլ ձիւթին նուսխայն գրէ (ՁԻԷ), և աւելցընէ. « Մենակ ի շողն լեսած Հացհամեմ ի վերայ ձիւթին ցաննեն՝ որ փակչի »: — Հին Բժշկր. լաւ սննդարար չի համարիր զՀացհամեմն, և խրատէ դեղի համար, « Եփէ, ու զլուրն մեղրով խմցո, հանէ յաղեց » զգէջ ցաւն. թէ քացխով տաս՝ զճիճին ի փորն սպաննէ. թէ Մարէով օւտէ՝ լոյծէ, բայց ինք զգլուխն ցավցընէ, և զքրտան հատն ու զգոգին գիւացընէ »:

1667. Հացուպանիր.

Եթէ հասարակ Մուշն չէ՝ նման բանջարեղէն մի է:

1668. Հաւաժիպակ. — Տե՛ս Խարի,

1669. Հաւաճոր ?

Վարմիր արմատով բոյս մի, ըստ Մանանայ (եր 448).

1670. Հաւակատար.

Նորոց յարմարացուցած կամ թարգմանած է յօտար լեզուաց, ինչպէս Ք. Խօ-
բոզ իպիկի, Լ. Rhinanthus Crista-galli կամ Celosia cristata. Փ. Orèto de Coq,
և ըստ ոմանց Ալլիոր բլբուռնի.

1671. Հաւակտիտ. Հաւակտուտ.

Վայրենի մանրիկ պտղոց սեռական կոչում է. ըստ Եէհրիմ. նշանակէ և Բըզ-
րուկը, Aisino.

1672. Հաւակուտկուտ.

Ի կարգի ծառոց և թփոց յիշուի (ի Մեղու օրագրի) ի կողմանս Նուխայ, և
սա գուցէ ըլլայ յիշուածն ի գիրս,

1673. Հաւամրգի.

Գալիենոսի բառից մէջ գրուի « Բալլալա, Սիրիական ? որ է Հաւամրգի ».
ուրիշ օրինակ մի, « Բալլալա, Հաւամրգ, յորմէ սկսանի միրգն. Balanos ».
այս բառս յունարէն է Βάλανος, և նշանակէ Կաղնեաց և նմանեաց մտմունքերը:
Առակախօսն կ'ըսէ (ո՛ն) Յարասին և Հաւամրգին պակասամտութեամբ տրանջէին,
թէ ինչու մեզի նման ըլլալով Մուրոն և Վարդն՝ այնքան ի պատուի են, և մենք
« անարգ լինիմք գործիք (աւել) զաւելորդս տանց և գռեհից մաքրելով », ա.
ռանց յիշելու անոնց անուշահոտութիւնը, եւ այլն. բայց տրտունջնին անլսելի մեա-
ցեր է, վասն զի ինչուան հիմայ այլ աւելու գործածուին, և նոյն հին անուամբ
լսուի ի Տարօն: — Ըստ Եէհրիմանի այս թուփս է Լ. Cytisus, Փ. Cytise, Յ.
Κετισος. Ար. صاص, « Ղաւաս, ըստ Ամիրտ. որ Ք. Առո օրի կ'ասէ. սպի-
» տակ խոտ կու լինի. երկու ճուղ ունի՝ յերկայնութիւնն մէկմէկ կանգուն, և
» տերեւն նման է Հուլպայի տերեւի, ծեծեն և ի հացն խոռնեն. և սպեզանի
» առնեն և դնեն ի վերայ պալղամի ուռեցնուն. Եւ ամենք զայս խոտս մեղուին
» փեթկին մօտիկ կու դնեն՝ վասն մեղու ուժովնայու համար »:

1674. * Հաւաք.

Պ. Ժ. գոր լաւագոյն տառադարձութեամբ հին Բժշկարանք և Բառգիրք
գրեն Հարակ (տես թ. 1573). Պէյթար և Ամիրտ. ստորագրեն Ար. Պատրոս

عربان անուամբ, որ պէսպէս կերպով գրուի ի Բժշկարանս, և նա եւ Ռազրոնձ. ինչ տեսակ բոյս ըլլալուն՝ ոմանք ի գիտնոց զանազանին ի կարծիս, համարելով ընդ մէջ Դաղձին և Ռեհանի. այսոր մէկ տեսակն է ըստ Ամիրտ. « Ըստ- » հան մի որ տերեւն լայն է. և լաւն այն է որ տերեւն կապուտ լինի. Թէ » զինքն քամեն և առնուն զլուրն և Քաֆուր խառնեն և ի քիթն կաթեցընեն, » զաչքն սուր առնէ և զսիրտն ուժովցընէ և խնդացընէ, և զտէ անդուլութեան » և խաֆաղանի. և Թէ կարիճ հարէ և կամ մեղուն՝ ի վերայ գնեո՝ զտէ և » զցանն խաղեցընէ. և ասացած է, Թէ ով որ մէկ գրամ Պատրուճ ուտէ՝ այն » օրն որ կորն զինքն խայթէ՝ շատ զեն շառնէ մարդուն... Իայն. ասէ Թէ այսոր » Թ. Թարայի Խորաստն կ'ասէ. և Թէ ի ջրէն խմես՝ զարիւն Թքնուլն կտրէ. » և Թէ ի զարնան աուլքն մէկ երկու անգամ ծամեն՝ այն տարին ակռան » չիցաւի. և Թէ զԹափան ծամեն և Թէ զլուրն ականջին կաթեցընեն՝ զակընջին » ծանրութիւն տանի և զցանն խաղեցընէ: Ատէ Պտ. Թէ յորժամ արեգակն ի խոյն » մտանէ՝ այն օրն քիչ մի Պատրուճն ծամես, մինչեւ տարին բոլորի՝ այլ ակռայի » ցաւ չտեսնու ինքն. փորձած է մինչեւ մէկ տարի »: — Ըստ Թարգմանին Պէյ- Թարայ Հաւաք կամ Հարակ է Լ. Ocimum Basilicum Ռեհանն, մեր Բառագրաց ոմանք այլ գրեն Ռեհան, ոմանք Պասիլիկոյ. գրածնին աւելի յարմարի վայրի Դաղձին (տես Թ. 848). Լ. Pulegium, Փ. Pouliot. վաստակոց գիրքն (ԾԿԴ) Պատրուճի ուրիշ անուն մ'այլ տայ, Մարուք, բայց ինչ ըլլալը՝ « Մեք չկարա- » ցաք ճշմարտել, կ'ըսէ, ի Թարգմանէն. և որք ճշմարտեն Թող գրեն ». Թարգ- մանն անշուշտ արարացի մի էր, որ չէ կարցած ստոյգ տեղեկութիւն տալ: — Ասար՝ ուտելի խոտ մի երեւցընէ զՊատրուճ. ոմանք ի նորոցս Թ. Անձմ օրի ասեն. այլք Օղոռ օրի: — Բժշկարան մի զՀաւաք համարի աւելի հայկական ա- նուն. « Պատրուճ, կ'ըսէ, որ Հայն Հաւաք ասէ »:

1675. Հաւի ծիլ ?

Օրագրի մէջ յիշուած է:

1676. Հաւլիլիկ.

Խոտեղէն մի երկու Թզաչափ բարձր. Ոսպի նման հատիկներ ունի, անուշահամ:

1677. Հաւլորիկ.

Թերեւս Հալուարիկ. յիշուած է յօրագրի:

1678. Հաւկթենի.

Յախ մի, ուսկից աւել կու չինեն. Թերեւս նոյն է և հետեւեալն,

1679. Հաւկթիկ.

Բայց Բժշկարան մի ծանօթ բոյս մի անուանէ զայս, « Մատիտեղն, որ է » Փարսի անտարոս, որ կոչի Փիր, հայերէն Հաւկթիկ (Հօկթիկ գրած). Գօզ օրի » Թուրքերէն ». նոյն Թուրի և նոր լատահաւաքի Հաւկիտուռի գրածն:

1680. Հաւկուրծաղիկ. — Տես Ծրակոտորուկ:

1681. * Հելիբովտա. Հելիբովրակ. — Տես Հացհամեմ:

1682. Հեղենի?

Ս. Աթանասի անուամբ Ատուածածնի ներբողի մէջ գրուած է. « Բուրա, ստան ամենածաղիկ, սաղարթեալ Հեղինայն »: Յունարէն այսպիսի ճառ ծա- նօթ չէ, որ ստուգուէր. միթէ ըլլայ Իռզենի կամ Եղենի փոխանակ Ձիթենայ, ինչպէս գրուած է ի գիրս Վաստակոց:

1683. Հեամուկ.

Հեապենական անուն. ըստ Ասարայ է Ասորեկ կամ Ճարճիր:

1684. Հերծի.

Ի Ս. Գիրս՝ Գանիէլի և Շուշանայ պատմութեան մէջ յիշուած ծառ է. բա- ւին պարզ նշանակութենէն և ծառայն տերեւոց ձեւէն՝ ի վերայ բերաւ մար- գարէն՝ շար ծերուն համար, « Հրեշտակ Ատուծոյ հերձցէ զքեզ ընդ մէջ »: Յունարէն բնագիրն է Σχίνοσ, Լ. Lentiscus, Փ. Lentisque, Ար. ցած, Չարոս: Այս ծառայս ստորագրութիւնն ըրած եմք Բաում անուամբ (Թ. 388):

1685. Հէլ. Հիլ.

« Որ է Փոքր Ղաղուլէ, » ըստ Բժշկարանաց: — Տես Մալխ:

1686. Հիաւս?

Ուրիշ բուսեղինաց հետ խառն յիշէ Բժշկարան մի՝ իրեւ. զեղ շան խածածի:

1687. * Հիլիօն. Հիլիօնի բազուկ. Հիլիօնի տակ. — Տես Ծրնեքեկ:

1688. * Հիղազ?

Ի բառս Գալիենոսի գրուած է և իրեն համանիշ Եգերասին. զոր նոյն գիրք զուգէ ընդ Հոյն, տես զայս. Թ. 1715:

1689. Հինա.

« Ինքն տերեւ է, կու ծեծեն՝ և յտքն և ձեռքն կու դնեն. աղէկն ի Հնդկաց » կու գայ. բնութիւնն հով է և մուհթատիլ է », եւ այլն: — Հինա. ինքն յայտնի է. լաւն այն է որ կանանչ լինի և նոր աղցած լինի... Թէ սեւ Չամշով ծե- ծեն և օճեն զմազն՝ սեւ այն է. և իր եղն օգտէ ստամբքին ցաւուն, և թէ խմես՝ օգտէ բշտին, խոցին և տաք ուռեցնուն, և կրակին այրածին. և զկտրած ոսկորն ամրացնէ. և ասացած է, թէ որ Հիննա խմէ՝ զօրին սպանանէ. և զանձն պայծառ և փառաւոր առնէ, և սպիտակ առնէ. բայց խաչակին զեն

» կու առնէ », եւ այլն: — Հինային գործածութիւնն յարեւելա՝ թէ մազ թէ մարմին ներկելու՝ յայտնի է, և շատ ի հնուց. Ար. այլ այս անուամբ կոչի **لح** և ըստ Պէլթարայ Յունաստի մեծութեամբ ծառ մ'է, ծաղկներն ներմակ են և Ծառիս կ'ըսուին **خياض**, խիտ ողկուզաձեւ՝ յետոյ հովանոցաձեւ բացուին, անուշ հոտ բուրելով. այս ողկոյզներն են հրէարէն Քոֆեր, Յ. և Լ. **Cyprus կուշուած Ս. Գրոց Երգերգոցի մէջ (Գ, 13)**. « Կիսրոս հանդերձ Նարդուսի ». իսկ անկէ առաջ (Ա, 13) Կիսրոս, **Cyprus** ծառն՝ հայերէն անուամբ Թարգմանուած է, « Ողկոյզ Նոճոյ է եղբորորդին իմ ինձ »: Երբ ծաղկներն թափին կ'երեւին պտուղքն, որ են Գնձի նման սեւ և քան զՊղպեղ մանր հատիկներ: Բուսաբանք կամ քննարանք Լ. **Ligustrum** և յատկարար **Ligustrum nigrum** անուանէին այս բոյսը, հիմայ անուանեն **Lawsonia inermis**.

1690. Հինգտերեւ. Հինգտերեւեան. Հինգտերեւուկ. Հինգմատն.

Օտար լեզուք այլ այսպիսի նշանակութեամբ անուանեն. Լ. ըստ յունին՝ **Pentaphyllum**, Փ. **Quintefenille**. Պ. և Ար. Պենձենկուշտ կամ Յենձենկուշտ, կամ Փանձանկուշտ **شجنتكش** ըստ մերոցս. Թ. Պէշ պարսնագ: Ինչպէս ըլլալն բացատրած եմք Աղլարատ անուամբ. տես թիւ 70:

1691. Հիսուկ.

Նոր բառհաւաք մի յիշէ՝ թէ չէ չփոթեր ընդ Հեսմուկ (թ. 1683), կամ Հիւժուկ (1695):

1692. Հիրիկ.

Ս. Գրոց Ելից մէջ գործածուած բառս, Կասիա նշանակէ (տես թ. 1329), իսկ առ յետինս և նորս Յ. «**Իրց կոշուած ծաղիկն**, որ և անուանի առ մեզ **Լուրջ Եռչան** կամ **Կասպոյտ կամ Կրկնագոյն**, ինչպէս գրուի և ի բառս **Գալիե**, նոսի. Ար. **لج** գրէ Պէլթար, յորմէ և Ամիրտու. «**Այրասս**, որ է իռաս. » ինքն **Կասպոյտ Սոսանիկն տակն է**. լաւն այն է որ սեւ և պինդ լինի և ծանր » և անուշահոտ. եփող է և բացող է. մարդուն քուն կու բերէ, և զգլխաւ » ցաւն կու տանի. և զմանն ի յերեսացն կու տանի, և զգլխուն զխոցն այլ կու » տանի. և թէ յաշքն քաշես զերդ թութիս՝ զսափրան ի աչիցն կու տանի... » և այսոր ձեքն անկան ցաւերուն և վատուժ անդամոց զվատուժութիւն այլ կու » տանի. եւ այլն, եւ այլն: Եւ այս Այրաս անունն անոր համար է՝ որ ինքն զէտ » զտէրունի գօտի (Յ. «**Իրց, ծիածան**») գունզգուն ծաղիկ ունի, զեղին, սպի. » տակ և լազվարդի. և լաւն այն է որ սեւ ու պինդ և հանկուստ հանկուստ է... » և ինքն ի յանապատ տեղեր շատ կու լինայ »: — Սալաձորցին իր երգած գեղեցիկ ծաղկանց մէջ չէ մոռցեր զՀիրիկ. բայց իրմէ առաջ Աղթամարցի Գրիգոր կաթողիկոսն իր գովանուոյն համար երգած է,

« Ի յեզըր Փիսոն գետոյն բուսանիս, Հիրիկ աննըման »:

Թէ և յատուկ ջրային Հիրիկ չի յիշուիր, բայց խիստ շատ են տեսակքն. որոց ամենէն գեղեցիկն և ինչպէս՝ ուրիշ տեղ յիշեցինք՝ Հայոց ծաղկանց չքնաղն՝ յետ

Ազրերաց արեան, է վրացի Հիրիկն, Iris Iberica, այսպէս կոչուած՝ նախ այն տեղ ճանչցուած ըլլալուն համար. բայց սքանչացուց տեսնողը՝ նա եւ ի ստորոտս Մասիսու. (տես Թ. 70): — Քիչ մի զանազանի անկէ՝ Կովկասայինն, I. Caucasica, տեսնուած ի Գարապաղ Սիւնեաց, ի Շիրակ, ի Մանախ, ի Սովխէթ. — I. Reticulata, ի Կարին, Գարապաղ, Սովխէթ. — Պարսկայինն Մ. և Փ. Հայոց միջոց յափունս Եփրատայ. — I. Sindjarensis, ի Սննար լեռինս. — I. Maculata, ի Միջագետս. — I. Sibirica, ի Սամսն, Հս. Կովկաս. — I. Guldenstadiana, ի Պոնտոս, Կարին, Էվէրէկ. — I. Heylandiana, ի միջոցի Ամրայ և Մէրսինի. — I. Acutiloba, ի Գանձակ. — I. Aquiloba, ի Շիրակ, Պարսու. I. Paradoxa, (Ալլազան) ի Խոյ, Գանձակ. — I. Pumila, ի Հս. և Հր. Կովկաս. — I. Motha, ի Շիրակ. — I. Lutescens, ի Շիրակ, յԱլի տաղ Ա Հայոց. — I. Sambucina, ի Գանձակ. — I. Flavescens, ի Ռ-Հ. — I. Germanica, ի Թ-Հ: Չանց ըրինք յիշելու Կիլիկիոյ մէջ տեսնուած տարբեր տեսակները: Տես և Հրուկ:

1693. Հիրիկ.

Սոցն այս անուամբ Թուփ մի այլ կայ, կ'ըսէ Ռոշքեանն, սիրելի մեղուաց, որ յաշնան ծաղկի և կոչէ Լ. Laica! անծանօթ անուն:

1694. Հիրն.

Յեղէ նոր բառհաւաք մի. անունն հին և Հրճուիլ բային արմատն կըրնայ ըլլալ:

1695. Հիւժուկ.

Նշանաւոր անուն մի ի բառս Գալիենոսի, որոյ համանիշ գրուած է Ղեքս ?

1696. Հլէզ ?

Յիշուած է յԱղբիւր օրագրի, (Չ. 333).

1697. Հլէիւն. — Տես Հայիրս:

1698. * Հլիւիտ. — Տես Չարնոտ:

1699. Հնարկի.

Հաւանօրէն Հաճարին է, իբր Հաճարուկ, կամ փոքր Հաճարի: (Մեղու ԻԲ, 83):

1700. Հմարգի.

Այս այլ նոյն օրագրէն յիշուած՝ հաւանօրէն Հաւամրգին է:

Հմել. — Տես Հոռնկ:

1701. Հնդակ ?

Որոյ սերմը բնութիւնը զօրացընելու գեղ գրէ Բժշկարան մի:

1702. * Հնդիկ Արմաւենի.

Պատուէն այլ Հնդկարմաւ. բայց ի նորոց յարմարած կամ Թարգմանած է, զոր ամեն ազգք ինչպէս և մեր Բժշկարանք Ար. անուամբ կոչեն Թմր հիւսի, (որոց բառակարգին կու վայլէր գրել). *L. Tamarindus Indica*. Փ. Tamarin, Tamarinier. Իր եղջերածնւ պտղոյն բժշկական գործածութեանն համար՝ հիմայ հանրածանօթ բերք մ'է. լսենք մեր Ամասիացոյն. « Թմրհնդի, ինքն ցեղ-ն է և յայտնի է. » լաւն այն է որ խիստ ԹԹու լինի և նոր. հով է ք արճ. և շոր է ք արճ. » (յիչէ սգուտները)... Իր առնելուն չափն 15 դրամ. բայց կրծոց զեն է. և գիւր » շարութիւնն տանի Խաչիչին շարապն, և իր փոխան Սալորն է որ ԹԹու լինի:



Հնդիկ Արմաւ.

» Ասէ Պատ. Թէ Համր ասեն, և Պապատան այլ ասեն, և նուրբ է քան զՍա-
 » լորն, այլ գիտացիր՝ որ հազին և կրծոց զեն կ'առնէ. և գիր շար Թիւնն տանի
 » Մանուշակն, և իր շարապն և Նշի ձէթն »: — Բնութեանն համար կ'ըսէ ուրիշ
 Բժշկր. մի « Ինքն նօսր է քան զՌամոնն, և այլ պակաս գիճութիւն ունի. և
 » է հով ք արճ. և գէճ ք արճ. սգտէ որ կիծ և ծարաւ ունենայ, և ապքու-
 » Թիւններ և Թախալ.. գաաֆրան լուծանէ և գարիւնն խաղաղէ »:

1703. Հնդիկ Ընգոյզ.

Տես Ընկոյզ և Նարգիլակ: Ուրիշ Հնդիկ մակդրով անուններն այլ տես իրենց բառաց գայական անուամբք:

1704. Հնդիպէ. Հնդուպա.

Տես Եղերդակ: Այս տեղ յիշենք հին Բժշկարանին գրածը. « Եղեգ՝ որ է Հըն. » գիպէ, կայ յինք լեղութիւն և փոյթտութիւն, և լեղութիւնն է շատ, և լե. » զութիւնն ամառն լինի. և իր լեղութիւնն շատնայ՝ հովութիւնն պակտէ. այլ » ձմեռն և գարուն՝ հովութիւն է շատ. և է ինքտ հովք թ արճ. և չոր ի մէջն. » և եր չորնայ՝ պակաս տաքութիւն լինի յինք. զլերդի ճանպահն բանայ, և զստա. » մաքն արբէ. իմաստունքն զինք հով ասացին. բայց՝ փորձեցաք որ ի ներս չո. » բութիւն կայ »:

1705. Հնդկոկի ունտ, կամ՝ Հնկոկի Բունտ.

Յիշէ հին Բժշկարանն, մանունի մի (Ասկոմիա Թագաւորի ?) բաղադրութեան մէջ շատ այլեւայլ նիւթերով: Ուրիշ Բժշկարան մ'այլ զնոյն կրկնէ Հնկոկ գրելով, անծանօթ Թագաւորին անունն այլ Ասկաւամիտ: Գուցէ նոյն ըլլայ ընդ վերոյիշեալ Հնդակի. Թ. 1701.

1706. Հողի բուրդ.

Ոչ անյարմար անուն Մամուռներու, որ և Գորտնբուրդ կոչուին:

1707. Հողի ճրագու.

Որ և Գետնի ճրագոս. ըստ ոմանց հողային նիւթ է, ըստ այլոց տեսակ մի Բարաքոս: — Տես Աղաւնոյ ծիրտ. Թ. 51.

1708. Հողկիթ.

Եւ սա յարմար անուն ծանօթ Փարսք կոչուած Գետնախնձորի, որ և Չոյի տակ կոչի, ոչ ի գրոց այլ ի նոր գրողաց, գուցէ գաւառական ծանօթ բառ ի կողմանս ինչ Հայոց:

1709. Հողմախտ.

Յիշէ կամարկացցին, և Թ. գրէ Գարրնձա եռակախ:

1710. Հողմածաղիկ.

Անեմոն ըստ Յ. և Լ. զոր յիշած և բացատրած եմք Հարսնուծաղիկ կամ Հարսնուկ անուամբ:

1711. Հողմավարդ.

Տես Բառավարդ: Մի. Հերացի գրած է և Պատվարդ՝ որ է Հողմավարդ և ըսել է որ Պարսից պատ բառէն բարդուած է, որ նշանակէ հողմ:

1712. Հողմափայտ.

Այս այլ բացատրուած է Կանթեղխոտ անուան տակ:

1713. Հողսունկ.

Այսպէս կոչէ Քաղիազեանն (Ա.տՄն. Մանկանց եր. 126) ազնիւ գետնախորն, ձոր կամ Հողկիթը, Truffe. Իր հնարած բառ է արգեօք թէ լսուած ի գաւառսին:

1714. Հոմնի.

Հին Բժշկարանն փորլուծի դեղ գրէ. « Հոմնի. հան իր տակովն, սրբէ և » կտրատէ զբազուկն. զլուրն ժողվէ, և եփէ քաջ. և քան ի ջրին կէսն գինի » խառնէ և խմցո »: Արդեօք չփոթմուած կամ նոյն Հունի և Հոմիի հետ:

1715. Հոյն կամ Հուն. Հունի. Հընի.

Որոյ ազգակիցք կամ նոյնանունք են Զողալ, Զում, Կո, Դավարա. զորս տես. Գայրենասի բառք գրեն Կերասին՝ Հոյն. իսկ Ամերտ. « Դարանիտ, որ Հ. Զում » և Կո և Հոն տսէ, և Ք. Ղըրձոսի և Սղալ (Չղալ). տսէ և Հա. Ահրանեա » տսէ. Ասէ զրոցս ժողովողն. թէ ինքն ծառ-ձե է որ ի լեբունքն կու բուսնի ի » հով տեղեր, և տերեւն Աղատրատիին տերեւն կու նմանի, և պտուղն նման է » Զեթուպտղի. և յորժամ խակ է՝ նա կանանչ է, և յորժամ հասնի՝ կարմիր » լինի որպէս արին, և համն տտիպ է և կապող է »: — Լ. Cornus. Փ. Cornouillier. Հայերէն կերպ կերպ անուններն վկայեն որ մեր երկրին հասարակ է այս վայրենի ծառն և պտուղն, թէ և աեղաքնինք յայտնի չեն յիշած, բայց ի կովկաս և ի Պանաս:

1716. Հոնի.

Փանձակայ կողմանց ծառոց մէջ յիշուի. հաւանորէն վերայգրեալ Հունի ծառն է. բայց Հոնի նշանակէ և Ծոթրինի տեսակ մի, մանաւանդ վայրին:

1717. Հոշի.

Վայրի ծառ մի, յիշուած ի Տարօն:

1718. Հոշոշիկ.

Օշօշն է. տես Երիցուկ և Գնդածաղիկ:

1719. Հոչիի ?

Այս այլ վայրի ծառ մի, յիշուած ի կողմանո Գանձակայ, թէ սխալ չէ գրուած:

1720. Հոռմցի Ընկուզ .

Հասարակ ընկոյզն է :

1721. Հոռմցի կաղամբ . — Տես կաղամբ :

1722. Հոռում Երնջնատակ .

Հին գրողն հոմանիշ գրէ Չերիանայ, Gentiana. Տես Բոգ :

1723. Հոռում Թաղթ .

Յիշէ հին Բժշկարանն : — Տես Թաղթ :

1724. Հոռում Խոնկ .

Ըստ ոմանց է Ար. Հարր, որ է Չրկոտեմն. ըստ այլոց շինծու է ի Հասանէ . տես զայս :

1725. Հոռում Ծաղիկ .

Միայն Սալաձորեցոյն երգով լսուած ,

« Հառո՛մ ծաղիկն է փոշոտեր, բուսեր հետ մոլին ? մորենուն » .

Թերեւս փոխանակ մոլին ըլլար Մոլին :

1726. Հոռում կորեկ .

Ըստ Առարայ Գառարան է .

1727. Հոռում Մնֆուլ .

« Որ է Նարդին », ըստ Բժշկարանի . տես Մնֆուլ :

1728. Հոսի .

Հին Բառագրոց մէջ հոմանիշ գրուի կորատի ? որ ձայնիւ նման է Թ. Κοπάς, Κοπάδος, ճեղքուած փայտի նշանակութեամբ, որոց քիչ մի յարմարի Դանիէլ Ասորայ (Սաղմ. Մեկն, 24) բացատրութիւնն . « Զոր օրինակ այրէ հուր զանտառս' » զոչ պտղաբերս փայտից, և բոց կիզու զՀոսի՝ որ ի վերայ լերանց » : Հաւանօրէն նոյն կամ մին և միւսն սխալ գրած, է հետեւեալն ,

1729. Հոսնի .

Որ յիշուած է Ակքան փշեղենի անուան տակ . Թ. 40 : — Տես և զՀոսի :

1730. Հովախի ?

Աղասեւ գաւառի վայրի ծառոց հետ յիշուած է . (Մեղու, 14, 85) :

1731. Հովուաբիր . Հովուի բիր . Հովուի գաւազան .

Հին Բժշկարանն զուգէ « Պարսիանդարոս , (چارسايندگار) . Հովուի Բիր որ է » Մատիտեղն » . նոյնպէս Միւ, Հերացի « Բարսի-անդարոս . Ինքզ Հովուի բիր

» կոչի, որ է Պտպոս ? » Եւրբի անունս ստուգութեան կարօտ է, Ար. և Թ. ա. նուաւնքն հայերէնի նոյնանիչ են Թ. Չօպան տայնակի. Հայերէն յատուկ անուն ունենալով Մատիտեղն, ի կարգին բացատրուի :

1732. Հովուի խշտիկ .

Նոր բառահաւաք մի գրէ առանց բացատրութեան :

1733. Հովուի փող .

Այս այլ արեւելեան լեզուաց Թարգմանութեամբ. Ար. Մէզմարի եր-սայի **عرا** Թ. Չօպան տոտառչի, ինչպէս գրէ Ամիրս. « Տերեւն նման է » Ջղախտարին տերեւին, և յերկայնութիւն մէկ մէկ թիգ կու լինի և այլ աւելի, » և զազաթն զէտ անգլուխ կու լինի. սպիտակ ծաղիկ կ'ունենայ և ի գեղնու. » թիւն կու քաշէ. և տակն Սեւ Վրացի կոճ կու նմանի, բայց անուշահոտ կու » լինի. և թէ երկու տրամ ի տակէն գինով խմեն, օգտէ ամենայն զազանա. » հարի. և թէ մէն և կամ իր չքօքն (չափով) Տղտով խմեն՝ զփորցաւութիւնն » խաղեցընէ. և աղեց գաներուն և արգանդի ցաւուն օգտէ. և թէ զայս խոտն » մէն խմեն՝ զփորն կապէ » : — Լ. *Plantago Alisma*, ֆ. *Pluteau*. նա եւ *Plantaine d'eau*, Ռ. *Часныха*. Տես և Խարչափուն :

1734. Հոսուղեննի .

Բարձուենեկի անուն-մի է, ի գիրս չեմ յիշեր գտած, բայց ծանօթ է անուամբն :

1735. Հոտիսոյ կամ Հօտիսոյ .

Այս անունը և համանիչքն յիշեցինք 117-8 թուերում, հօտ այլ յիշինք դարձեալ անուան շփոթութիւնը կամ զուգուածն այլ և այլ բուսոց՝ օտար լեզուօք. Բժշկ-կարան մի կ'ըսէ « Պրասիոն, որ է Հայերէն Հօտիսոն » . Լ. *Prasium*, ուրիշ մի տարբեր հնչմամբ, « Պարասիոն՝ վայրի Քարաւան է » : Ամիրս. Անձիտա, որ է » Հայիչ ըլ-քաչպն, և Հայն Հառախաս ասէ » . յետոյ Պարասիոն անուան տակ գրէ. « Ար Թ. Իր սխտիկի ասէ, որ է Շանչանիչ, որ շունն ի վերայ խիստ կու » շտէ. և ինքը չորեքժեռէն խոտ-մն է, և մէջն հանգուանի ունի, և տերեւն » թանձր է, ծայրն սուր չէ և բոլոր է, և տերեւին երեան խոշոր է. և ինքն ի » փողոցնին կու բուսնի. և մէկ հեղ զարունն կու բուսնի, և մէկ հեղ աշունն. » և համն լեղի է. և տերեւն սպիտակ կու քաշէ. ինքն զՊատրանձի-պուլային » տերեւին խոշորութիւնն տանի. Երկու ցեղ կու լինի, Սեւ և Սպիտակ. և լաւն » այն է որ նոր լինի և կանանչ. Իպտ. ասէ թէ զմէկ տեղ մի փորեն մարգա. » շափ, և ի ներքեւն աւազ ընուն և կրակ վառեն որ տաքնայ, և զկրակն քաշեն » և հանեն, և ի տեղն այս խոտէս սփանն. և հիւանդն որ չկարէ շարժիլ՝ ի » մէջն պառկեցընենն, և ի վերան այս խոտէս ծածկեն, և ի վերայ կապայ ծածկեն » շատ, և այնքան շատ պառկի՝ որ տաքութիւնն երթայ. Աստուծոյ ողորմութեամբն » յոտն ելանէ, ողջ և առողջ լինի. և ինքն փորձած է » : — « Պարասիոն. ինքն » երեք ազգ է, և անուշահոտ. աղէկն չոր է. . . Ասէ Մահմատ Զաքարիայն՝ թէ » ինքն Հոռմի անուն է, և օգտէ լերդին և փայծեղան ցաւոցն » : — Այս ե.

րեք ազգի զանազանութիւնը յայտնեն հաւանօրէն այլ եւ այլ անուանք բուսոյն . (որ են վերը յիշուածներէն զատ՝ Մեղրածած, Շանխոտ, Խորտակ Մոթրին, և այլն) . զորս չեմ կարող որոշել և իւրաքանչիւրին սեփականել . բուսաբանք այլ թէ նոյն թէ տարբեր համարին զՖարսախոն՝ Prasium և զMarrubium, մէկը հին միւսը նոր անուն գրելով . սակայն ի ստորագրութեան զանազանն, և տեսակ-ներուն մեծ մասն այս երկրորդ անուամբ յիշեն . մենք այլ անոր պահեմք Մեղ-րածոսծ կոչումը :

1736. Հոտոտ .

Հին Բժշկարանն գրէ՝ « Ինքդ քամուքս է » . — (Ինչք՝ քամուքս) : — Ուրիշ Բժշկարան մ'այլ յիշէ իբրեւ դեղ՝ առանց բացատրելու . Ար . Ոստոտո՝ վայրի Յասմիկն է , զոր սովորաբար կոչեն Ձիյան , ساجان , այսպէս գրէ և Ամիրտ . « Ձիեան , ինքն Եասամիկն է . լաւն այն է որ նոր լինի . . Իպն . ասէ , ինքն վայրի » Եասամիկն է , և Ոստոտո այլ կ'ասեն . և զէտ վարդին փուշն՝ փուշ ունի , և կու » լինի որ Իրպոսանի կ'ասեն ծառ մի կայ՝ ի հօն կու փաթվի և կ'ելնէ . և տակն » սեւ կու լինի . և թէ պրես և դտակն Թզով խառնես , սեւ ու սպիտակ պա . » հակին (որ և պիտակ) օծես , օգտէ . և թէ քացխով տրորես և օծես՝ այլմի » օգտէ . . (և այլ շատ օգուտներ) : — Եւ ցեղ-մն այլ կու լինի՝ որ տերեւն մանր և ի » ծառերն կու փաթվի . և զիր միրգն չրով կամ գինով և կամ ավմալիով ? տրորես » և տառ որ խմէ , լուծէ զպաղղամն և դասֆրան . և թէ զտերեւն սպեղանի առ . » նես և օծես բորին , օգտէ » : — Լ . Clematis , Փ . Clematite . քանի մի տե-սակաց մէջ Արեւելեան կոչուածն Օլ . Orientalis , տեսնուած է ի կողմանս Խար-բերդու և Մելիախնոյ :

1737. Հոտոտ մաքի կամ Յօզազմաքի ?

Յիշէ Ասար բժիշկ . իրն անծանօթ :

1738. Հոտոցուկ .

Անչուշտ ձեւէն առնուած անուն մի (եթէ Յօտոցուկ գրուի) . առանց բա-ցատրութեան յիշուած է նոր բառահաւաքէ :

1739. Հոտոսան ? Հոտոսան ? — Տես Նարմուշկ :

1740. Հոտվարդ . — Տես Բատտփարդ .

Հորբ . Հորփ . Հորֆ .

Տես Հարբ և Կոսեմ : — Բաագիրք մի գրէ « Հորփ՝ Հալեւորկի հունդ » :

1741. Հորթուկ .

Նոր բառահաւաք մի յիշած է :

1742. Հորթու քիթ.

Ըստ Ար. انفالعجل, Անֆուս ըլ-օնլ. « որ Թ. իր Հորթու քիթ ասէ. այնոր հա-
» մար որ միրզն հորթու քիթ կու նմանի, և թէ զայս խոտս եռցընես և զլուրն
» խմես, օգտէ ամենայն մահացու դեղոց, և թէ Սուսանի եղով խառնես և յե-
» րեսն օծես, ով տեսնու՝ ընդունի զինքն սիրով »: — Լ. Antirrhinum. Փ. այլ քիթի
կամ ջուրկի նմանութեամբ կ'անուանի Musnier. Տաք և շոր երկիրներում կ'ըլլայ, նա
եւ յԱսորիս, ի Յունաստան, ի Բիւզանդիոն: Տարեկան խոտեղէն է, անօթածեւ
պտղով և շատ մանր հատիկներով: — Նոր Բժշկարան մի գրէ « Ղիկորիօզ,
» ինքն քաղցր արմատ է, որթու քիթ կու նմանի. դեղին »:

1743. Հորի փերփեր. — Տես փերփեր, փրփրեմ,

1744. Հուլար կամ Հուլապ.

« Ինքն մէկ թիղի մի շափ կու բուսնի. մանր և սպիտակ ծաղիկ ունի, թէ զինքն
» գարոց այրով սպեղանի առնես և դնես ի վերայ կոտորածի և ելածի և շար-
» դածի և թուլցածի՝ շատ օգտէ »: Այսպէս գրէ Բժշկարանն:

1745. Հուլապ.

« Որ է Պտակն », ըստ Բժշկարանի, և ըստ այլում՝ « Թուրքն Պոյ ասէ ». մէկն այլ գրած է « որ է Մեհիկայն »: Իսկ ըստ հին Բժշկարանի է Հացհա-
մեմն, ուր յիշած եմք. թ. 1666.

* Հումայզ. Հումայտ. Տես Թրակիձ:

1746. Հումել. Հմել. Հմուլ. Խմել.

Յիշեցինք (թ. 417) որ Գայրուկ կոչուած է սա առ մերայինս. Գարեջուր զուգե-
լու համար շատ կարեւոր և հոշակուած, կանեփի ցեղակից դիմացկուն րոյս մի,
նկուն որձայով, արմաւածեւ ըլթակաւոր տերեւօք, հասկածեւ ծաղկօք, որ
հասունութեան ատեն կոնի ձեւ կ'առնուն. պտուղներն դեղին կամ ոսկեգոյն
աւազ կամ փոշի մի ունին սուր հոտով, որ գարեջրոց հիւթ կ'ըլլան. — Լ. Hu-
mulus Lupulus, Փ. Houblon. — Ասիոց մէջ գտուի ի Պոնտոս, և կովկասու եր-
կու կողմերում, որով և ի Հայս խնդրելի է հանդերձ անուամբն: — Ոմանք ի
բուսաբանից Ար. Համուրը համարին Urticularia inflexa.

Հունի. — Տես Հոյն:

1747. Հուսամ.

Թուի Խուզամա, عودج. Ար. անունն տառազարձութեամբ. ըստ Պէլթ. և
Ամիրտ. « է վայրի Խիրին, և ի Երրազ Ատրանայ կ'ասեն... թէ ծեծեն և
» մաղեն և ալուրով շաղղեն և վերայ խոցին դնեն, որջացընէ »: Խիր կամ
Խիրի Ար. անունն Միխակ նշանակէ. բայց Փ. Թարգմանին ոչ զայն՝ այլ պէտք
է իմանալ. կ'ըսէ, Լ. Lavanda Spica կոչուածը, զոր յիշած եմք Աննարակ բառի
բացատրութեամբ, թ. 116:

1748. Հուրայ. Հուրփ .

Սպիտակ Մանանեիի հունս է, ըստ Բժշկարանի միոյ . իսկ Ամիրաւլաթի բառագրոց մէջ հոմանիչն կոչուի Տայյար ?

Հովի . — Տես Յոփի :

1749. Հոմմանի ? Ճաղիկ .

Ըստ Պետ . Քալանթարեան՝ Երիցուկն է . Թերեւս և Սալաձորեցայն երգած Հոմմի ծաղիկն :

1750. Հտուտ .

Թուի Հտտոն վերայիչեալ (Թ . 1737) Չափրանի և Ափիոնի հետ յիշուի ի դեղորայս :

1751. Հրակ ծաղիկ .

Բժշկարան մի այս անժանօթ բոյսս յիչէ ուրիշ անժանօթ և անանուն բոյս մի ստուրագրելով . « Ծաղիկ մի կայ ծիրանի և կարմրազոյն է, ի մարգագետինն լինի, » և ինքն նման է Հրակի ծաղիկն, և տերեւն նորա որպէս Սխտորի, և զընձորն ? որպէս խաղի (Թերեւս ըլլայ Խաղողի . բայց զընձորն թնչ է), և այս զընձոս » ըին մէկն հին է և միւսն նոր . զնորն առ և տուր մեղրով », եւ այլն :

1752. Հրանուկ ,

Ըստ Բաղիչեցւոց, գուցէ և այլոց, է Յինկն :

1753. Հրանունկ .

Նոր յարմարած բառ է տառադարձութեամբ Լ . Ranunculus, անուան : Տես Խառածաղիկ :

1754. Հրիզոն .

Խորենացւոյ Աշխարհագրութիւնն կորեակ է կ'ըսէ, ի Տարուպանիա կղզին (Սէյւան) . յայտ է որ նոր տեսակ մի պիտի ըլլար յիշուելու արժանի . բայց առաջին անունն յունաձայն՝ լսուի Օրօն, որ է Որիզ, Ռրինձ :

1755. Հրմրուկ ?

Չեմ յիշեր ուր և որմէ գրուած է, Լ . Pilosella նշանակութեամբ, որ ըստ մեզ կոչուի Սպիտակ Բանջար :

1756. Հրշակ . Հարշակ . Արշուկ .

Յիշուած է ի Բժշկարանս . բայց առանց բացատրութեան : Ար . حشيشه նշանակէ Վայրի կանգառ բայց սա կարծուի թէ Մուաղ է, ինչպէս լսուի դեռ, ծառն այլ Արշրկի կ'ըսուի :

1757. Հրուկ ծաղիկ .

Հաւանօրէն Հիրիկն է, վասն զի, եօթնադոյն կ'ըսուի (ի Սասնեցւոց) և միւ-
ռոնի ծաղկանց մին :

1758. Հօսօտ .

Հին Ռժշկարանն օգտակար խոտոց մէջ գասէ զայս (0) տարակուսական նշա-
նաւ . « Հօսօտն զօրութիւն ունի . տերեւն նման ճակնդեղի կամ Գաղտիկրի,
» բայց խոշոր է և սեւ, ծաղիկն սպիտակ և դեղնագոյն : Զարմատն ծեծէ, դրամ
» մէկ և խմցո, մաղաս ի վեր բերէ . խառնի յաչից գեղան, և զլոյսն պայծաւ-
» ցընէ . ընդ փոխինդ և մեղր խառնեալ՝ զճանճա կտորէ . ալիւր նորա փնշալ
» տայ : Թէ երկնչի սք վասն դարձուցանելոյ (փսխելու ?) և առնու զնա միայն
» կամ կերակրով, կամ առցէ և ի վերայ կերակուր ինչ կերիցէ, աներկիւղ
» Պասսցէ : Եւ թէ մաղձդեղ առնուս զինք՝ զմաղձ և զմաղաս ի վայր հանէ » . և
այլ պէսպէս օգուտները գրէ . բայց այսչափս այլ թերեւս բաւական ըլլայ գիտուն
բժշկաց զուշակելու և ստուգելու այս նշանաւոր անունը և դեղը :

1759. Հօրան ?

Խորասանիկն է . տես վահչիժակ :

1760. Հըսումն ?

Անունն չէ օտար ի հայկականէ, բայց ստոյգ այնպէս կոչուին երկրայական .
վասն զի Ամիրտ . Ս տառիւ անուանց շալակներուն կարգին գրած է . Իրբեւ նոր
անուն մ'այլ Մարդատակի, և բժշկական օգուտները յիշէ ըստ Ֆօրսի :

1761. Հօրօտ Մօրօտ . Հօրուտ Մօրուտ . Խորոտ Մորոտ .

Թուի իմն թէ խեղճի ծաղկներ՝ են, և ի հնուց շատ ծանօթ ի Հայս, ուր մինչև
հիմայ լսուի, սակայն լսողքն և ճանչցողք՝ չեն միարան . ուրիշ տեղ այլ յիշե-
ցինք որ լեռնային ծաղկանց կարգումն էր ըստ Առակախօսին մերոյ, որ և բաց
տառերով գրած է Հաշրաշտ Մաշրաշտ, որով կ'իմացուի թէ պէտք է գրել հի-
մայ օ տառիւ և ոչ ո . Գալիենոսի բառգիրքն զուգէ ընդ Եզեբորոսի . օրինակաց
մէջ գրուած է Եղեբորոքոս կամ Եղեբորոքորոս, հայերէնն այլ Հաշրօտ կամ
Հարաշտ փոխանակ Հաշրոտի : Իրբեւ ծանօթ յիշէ հին Ռժշկարանն . « Թէ խօցն
» որգնէ՝ (որդնոտի), Հօրօտ Մօրօտ ծաղկի տակ աղա մանր, մեղրով և քացխով
» շաղէ և գիր, Թափէ զորդն » : Նոր ծանօթարարք մեր կ'ըսեն թէ Թոշրիս
ծաղիկն է սա՝ մանրիկ կապուտակ փնջածեւ անուշահոտ, և աղբերաց եղերք գըտ-
նըի . իսկ Մաղկերգուն նշանակէ գոյնն այլ .

« Խօրօտ Մօրօտ մաւի ներկած ժանկառի նըման սուրմայուն,
Աչեր հազար պիտի նայի, խառներ հեա Ախրայինձարուն » : (Թ . 31) :

Այս և նորոց վկայութիւնն ցուցընէ որ Մ/ս . Գոյէ քանի մի դար վերջը՝ Հօրօտ
Մօրօտ և իր ցեղակից Ապուղանն և նմանիքն իջեր են լեռներէն վայր ի

դաշտս. կամ լաւ եւս ըսել, ոչ միայն ի լերինս՝ այլ և ի բարձրաւանդակ դաշտա-
 գետինս այլ գտուին: — Ըստ *Շէհրիմ. և Hyacinthus Orientalis*, Արեւելեան
 Յակինթ: — Հորտ Մորտի անունն գուշակել տայ առասպելական ծագումն,
 մանաւանդ երբ յիշուի ի Պարսից մէջ այլ լուսած աւանդութիւն մի. ըստ որում՝
 Արտ և Մարտ երկու հրեշտակք էին, զորս խաւրեց Աստուած յերկիր՝ զիտեղծ
 մարդիկ մխիթարելու համար. բայց կ'երեւի թէ շատ վատահ չէր իր նուիրակաց
 վրայ, որոց խրատներ այլ տուաւ զգուշութեամբ վարուելու. սակայն անոնք (նման
 ի Ս. Գիրս յիշուած որդւոցն Աստուծոյ) հետեւեցան որդւոց մարդկան հեշտասէր
 բարուց, կամ զայս աւանդողներուն, որք քան զհրեշտակս՝ զԱստուած նուաս-
 տացընեն այսպիսի օրինակաւ:

1762. Չագախոտ. Չագխոտ. Չագուխոտ.

Շատ Բժշկարանք համարին զայս միայն Փաղանգամուշի կամ Զարնամուշի.
 բայց Ամիրտ. երկու տարբեր ըոյս գրէ. մէկն՝ այս պարսիկ բառով, զոր տես ի
 կարգի Փ տառի, մէկ մ'այլ Ար. Թռտարի « Չագու խոտ, որ է երկու երեք
 » ազգ թաւտարիքն: Չագու խոտ-մն (այլ) որ է Զարանճամուշքն: Մեր յի-
 շեմն և զուգեմն ընդ Չագխոտի է առաջինն. Ար. عرسيمون. Լ. Erysimon կամ E-
 rysimon, Փ. Vélar, Ռ. Полевая горчица. « Ինքն երկու ազգ է, մէկն սպիտակ
 » և մէկն կարմիր, մէկն յածվենիքն կու լինի, մէկն ի լերունքն և ի դաշտերն
 » կու բուսի. և լաւն այն է որ դեղնրար լինի. բացող և հէ տվող է. և թէ
 » ծեծեն և մեղրով յաչքն քաշեն՝ զխոցն կ'ողջացընէ. Ատ Պտ. Թէ Թռտ.
 » տարնած կ'ատեն և Պաղր ըլ-սկախոյ կ'ատեն (և այլ հինգ վեց անուանք). և
 » Թռտարին չորս ցեղ է. Դեղին, Սպիտակ և կարմիր, և կու լինի որ բաց հալողի
 » է, և լաւն դեղինն է. Թէ մեղրով և ջրով օծեն ուռեցին՝ օգտէ. և որոյ ա-
 » կանթթաքն լինի ուռեցն՝ այնոր այլ օգտէ. Եւ այսոր Հ. Չագխոտ կ'ատեն.
 » և ի վերայ պատերուն և յածվենիքն այլ կու բուսի »: — Չագխոտք շատ
 տեսակ ունին և Խաչածեւից ցեղէն խոտեղէնք են, ոմանք դիմացկուն. հաս-
 բակօրէն վրանին գորշագոյն ճիւղի պէս մազմուկ ունին. ամենէն ծանօթ տե-
 սակն Լ. E. Officinale, Փ. կոչուի Tortelle կամ Herbe aux chantes. յատուկ
 Հայկական տեսակ մ'այլ կայ E. Armeniacum ի կարին և ի Պինկէօլ տեսնուած.
 մէկ գլխաւոր տեսակն այլ է Սիամբարեան, E. Sisymbroides, յերեւան, Ա-
 տրրպատական. — Ոսկետեսակն E. Anreum ի Ռ-Հ. — Thyrsoidium, ի Մնձուր.
 Թէքաաղ. — E. Unciaifolium (կեռտերեւ) ի Մէկմանսուր, Մանախ. — E. Ge-
 lidum, (սառնորակ) յԱրագած լ. — Purpureum (ծիրանեղջյն) ի Հայք. — E.
 Pulchellum (գեղաղէշ) ի Ռ-Հ. — E. Leptophyllum ի Գարապաղ. — E. Ga-
 yanum, և Pasgalense, ի Դավրէժ, Ուրմիա, եւ այլն, եւ այլն:

1763. Չագի դեղ.

Կըրնայինք նոյն կարծել ընդ վերնոյն, բայց այն հին Բառգիրքն որ զՉագխոտ
 Փաղանգամուշի գրէ, այսոր օտար հոմանիշ մի կու տայ, Արրուհեյան, որ Թուի
 Թրնխոտն. վասն զի Բժշկարանք ոմանք զՓաղանգամուշկն Թ. Օղոռ օրի գրեն,
 որ է Melissa.

1764. Չագի լեզու.

Որ և ճննդկաբեզու. Ար. այլ նոյն նշանակութեամբ Լիստն ըլ-ատաֆիր سان, اعصار մեր բժշկական բառագրոց մէկն այլ Լ. Թարգմանութիւնը գրէ Լինկոյս ավիս, այսինքն Lingua avis, որ է Թռչնոյ լեզու. Փ. Langue de passereau. որչափ անունն կարծեցընէ նման բան մի, իրն բոլորովին տարբեր է. « Ինքն » Տարտարին պտուղն է », կ'ըսէ Ամիրտ. և օտարք այլ այսպէս ճանաչեն, Փ. Fruit de Frène. « Պտին. ասէ. Թէ ինքն ծառի մի միրգ է, որ Պ. Անր կ'ասէ, և Ղուպանի քունձոռչի կ'ասէ... իր ծառին տերեւն կապող է... իր փոխանն կար... » մեր Թօտարին է և կարմիր Պահմանն, և Հայերն կ'ասեն՝ Թէ այսոր Չագու » չեզու կ'ասեն, և իր ծառին Հացի փայտ կ'անեն » . զոր տես Թ. 1662: — Կամարկապցին գրէ. « Ինքն ծառ է, և տերեւն միջէն հանէ զինքն »:

1765. Չառատաղ. Չեռատաղ. Չառատաղոյ տակ.

Տես Երեանակ և Մորենոյ տակ:

1766. Չարխոտ.

Լաւ կ'ըսէ Բժշկարան մի, « Չարխոտն շատ անուն ունի. յոր տեղ որ քարէն « Լուր ճուայ (կաթէ, հոսի). անդ բուսանի. Թ. Ղարայ պարտր կ'ասէ, Հ. Մօրոռք » . բայց Հայն կ'ասէ նա եւ Չար Պատփոռ, Դիւռոռ ճար (Թ. Դիւլ սախալի), Մկէզօրի մազ. Գետնի ճար, Մարդգայրոռ ճար, Խոզի մազ, Գետնի խնձոր, Չրհորի Գինձ, Քարափի քոյոր, Պառչառչոռն, որ է Պ. Փարսի եռոռն بوسياوشان. Գետնի ճարն այլ Ար. է Շարի ըլ-արգ العشر الجاش Սկէզօրի մազն՝ Շար էլ-ճան, Խոզի մազն՝ Շար ըլ-խրնգիր, Չրհորի զինձն՝ Քոռզպարաք իլ-պէր. Յ. և Լ. աղնուացը նեղով՝ Աստըղկան մազ կոչեր են. Capillas Veneris, Փ. պարզ Capillaire կոչեն. Ամիրտ. յետ յիշելու այլ եւ այլ անուններ, կու բացատրէ. « Ինքն սեւ ու հաստ » մազի պէս է, և տերեւն նման է Գնձի տերեւին. և տակն քիչ է, և բնու... » Թիւնն մուհթատիլ է և նուրբ է. զմազն յերկնցընէ և ուժովցընէ, և զտաքու... » Թիւն կու խաղեցընէ... Ասէ Պտ. (յետ տասնի չափ անուններ յիշելու) Թէ » լաւն այն է որ սեւ լինի և տերեւն կանանչ. և այլ աղէկն այն է որ որձան » ի կարմրութիւն քլաէ »: — Ուրիշ Ար. անուամբ այլ գրէ Ամիրտ. « Լիկայ » ըլ-Ղոռչ. Թ. Դիւլ սախալի, որ ինքն յերրորդում ? (կլիմայն) կու լինի. և ի » գետնէն զէտ մազ կու ելանէ, և տերեւ ու ճուղ չունի... Թէ այն մարդիկ որ » հետեւակ քայլեն՝ ի Թեւն կապեն՝ չօգնեն »: Ար. բառն Ղոռչ ճիւաղ նշանակէ, և բոյան այլ տարբերի ի Չագխոտէ. Լ. կոչուի Asplenium Trichomanes. Սա կովկասու երկու կողմի գաւառաց մէջ գտուած է, որով և ի Հայս. յայտ է Թէ և Չարխոտն, որ ուսումնական անուամբ Լ. կոչուի Adiantum. Փ. Adiante, ի Յ. բառէ, որ նշանակէ անխոնաւ, անթաց. իբր Թէ երբ Աստղիկ ի ծովէն ելեր է՝ մազերն չոր մնացեր են. անոր համար կանայք շտտ ի գործ ածէին այս բոյոս մազերնին շտտ և փայլուն պահելու համար: — Հին Բժշկարանն Չագխոտի գուզէ Սաբառէ արեւելեան անունը. բայց սա ճանչցուած է Նուարտակ: Բանասիրաց Թո.

ղումք յայտնել, թէ ինչ է պատճառ Չարխոտի այսքան անուանց և մանաւանդ առասպելանմանից, և որ ազգի մէջ ծագած է, և ինչպէս արեւելեայք և արեւմտեայք ընդունել են:

1767. Չաւար.

Սովորաբար անթեփ և մանրած Յորենն ու Գարին այսպէս անուանին. յետինն բարդութեամբ կ'ըսուի Գարեճաւար (Վաստկ. գիրք, ՅժԻ):

1768. Զիարոշխ. — Տես Բոշխ:

1769. Զիալախուր.

Անունէն յայտնուի որ Վայրի Լախուր է (տես զայս) Լ. Smyrnium, զոր գրեթէ նոյնպէս գրած է և Պէյթ. *سمنون*, յորմէ և Ամիրա. գրէ Սամար. նիոն, և Վայրի Կրասնն (Կարոս) է, կ'ըսէ Յ. այլ հայերէնի նշանակութեամբ փոխուած է ի Լ. Hippoeselinum. բայց այսոր տեղ վերոյգրեալ Զմիւռնիոն անունն գործածուի Հիմայ: Փ. Maceron. Ութ կամ տասն տեսակէ գտուին այս բուսոյ, մէկ երկու տարի զիմացող խոտեղէնք, ձուածեւ՝ բայց աւելի լայն քան երկայն պողով. հասարակ տեսակն և մշակուածն Sm. Olusatrum կ'ըսուի. — S. Perfoliatum, յիշուած է ի Գարապաղ. — S. Cordifolium, (արտասերեւ) ի Տէյր Զաֆարան Մէրսինու:

1770. Զիածոճրին. — Տես Զաւերու:

1771. Զիակորեակ.

Յարեւելս շատ ծանօթ և պիտանի ընդեղէն, ու տեղիք մարդկան և անասնոց, Տոչրա կոչուած, որով կոչի և Լ. Holcus Durra, այլ և Panicum, Փ. Panic.

Ար. սուր ձայնով Զոչրա լսուի *حور*, Ամիրա. գրէ աւելի սաստկաձայն « Զոչառա. ինքն ցեղ-մն է ի Կորե. » կէն. և յերկայնութիւն Յորենի շափ կու լինի, և « շատ տերեւնի կ'ունենայ տափակ, և աղէկն սպի. » տակ և ծանր լինի. և զլուծումն կու կտրէ, և թէ « սպեղանի առնեն ի գրուց դնեն՝ հովցընէ զփորոքն. » և կապէ զփորն աղէկ »:

1772. Զիապուպկ.

Զգիտեմ ով հնարած է կամ ուստի գտած այս բառս, իբր հոմանիչ Լ. Fabago, Փ. Fabagelle. Լ. կոչուի նա և Zygophyllum, որ ըստ Յ. նշանակէ Զոյգտեւրեւուկ, որովհետեւ երկու յիւար կիպ տերեւներ ունի. փոքր թուփ և խոտեղէն է, 80ի շափ տեսակներ ունի, տաք երկիրներու մէջ, մանաւանդ Ասարալիոյ և Կանարեան կղզեաց: Մաղկին ձեւն կ'արդարացընէ հայերէն կոչումը. նմանութեամբն ձիոց գլխուն դրուած ցցունին, որ ռամկորէն պուպկ կոչուած է, իբր բրուկ:



Զիապուպկ.

1773. Չիաստացի ունդ.

Չիաստաց՝ ձին խայթող բոս կամ ճանճ կ'իմացուի մեր լեզուով. արդեօք ասկէ աւած է անունն, և որպիսի բոյս է՝ չէ յայտ: Հին բժշկարանն յիշած է, փոր- կապի գեղ գրելով, « Չիաստացի ունդն եփէ գինով, և խմցա »:

1774. Չիու ազի.

Նոյն նշանակութեամբ են Յ. Ίκπουρι, Լ. Equisetum, Ար. Զանապ ըր-խայլ **قنب ال خيل**, որոյ համար գրէ Ամիրտ. « Խոտ-մն է որ երբ կատարեալ բուսնի՝ » ի ձիու ազի կու նմանի, և լաւն այն է որ կատարեալ հասնի. օգտէ ակապին » մսերուն որ թուլացեր է, ամրացնէ և ուժովցնէ, և զարին թքնուն կտրէ. . » և թէ սպիղանի աւանեա՝ օգտէ աղեց դաներուն, և հեշտութեամբ զխոտերն » կու շորացնէ », եւ այլն: — Փ. Prêlo, կ'անուանի: — Քանի մի տեսակք կան այս բուսոյ որ գտուին նա եւ ի Հար. Կովկաս:

1775. Չիու ըղունկ.

Տես Խոնիկ, Խոնկորակ: — Բժշկարան մի այս անունս համանիչ գրէ Ար. Ազֆար ըր-բիպ անուան, սխալմամբ, փոխանակ գրելու Դիտո ըղունկ, ինչպէս գրէ Ամիրտ. և իմացնէ որ բոյս չէ, այլ ծովային խեցեմորթ, կըրնայ այլ կեն. դանարոյս կոչուիլ. ըստ այսմ՝ և իբր հետաքրքրական՝ լսեմք գրածը. « Դիվու » ըղունկն կենդանի է ծովային, յերկան, ի Սատաֆ կու նմանի, և այս ըղն. » կնին զինքն ծածկել է՝ որպէս ձկան փող, որ խոշոր լինայ. և երեք ցեղ կու » լինի. և թէ (եփեն և) խմեն՝ զփորն շարժէ լուծելով. . Իպն. ասէ, թէ ինքն » Սատաֆի պէս կենդանու վրայ կու բուսնի որպէս հագուատ. և զայս ի յայն » ծովուն կու բերեն՝ որ ի ծովեզերքն Սունպուլ կու բուսնի. և այս երկու ցեղ » կու լինի. մէկն Ղուզղուսի կու լինի, սպիտակ է, և մէկն Պասլիլի (1) կու լինի, » և մանար է և սեւուկ է, և լաւն այն է որ սպիտակ է, որ ի Մամանու կու » գայ. . Պտին. ասէ թէ Պ. այսոր Նախաւնի տեղ ասեն. և զիւր շարութիւնն տա » նի Հայ կան »: — Լ. Strombus Lentiginosus. Փ. Blattes de Byzance. — Ծխելու և կարմիր ներկ հանելու այլ գործածուի:

1776. Չիթենի.

Բուսականաց ամենէն նշանաւորն ի գործածութեան և պէսպէս հոշակեայն՝ յետ Որթոյ, ի Ս. և յանսուրբ գիրս, և յառասպելս Յունաց. ըստ որոց՝ մինչ որթն շապլ սւ շուայտ Բազոսի նուիրուած էր, սա իմաստութեան՝ Աթենասայ (2):

1. Ամիրտ. Գուլուս-ժ գրածն պիտի ըլլայ Տելուս-ժ, **سجل**, որ ըստ Էզուսինոյ՝ կարմիր ծովէն եկած տեսակն է. Պասլիլ այլ՝ Բաբելոնի կողմէն, որ սեւադոյն և պզտիկ է:
2. Ոչ միայն իրեն նուիրուած էր՝ այլ և ինքն Աթենաս հնարեց բուսուց զԱթենիին, ըստ առաւ պեղաց Յունաց, իր համանուն աիեզերութեւ զազգային Աթենքի տմրոցին վրայ. զոր հմտաբար յիշէ մեր վանական Վ. Հանգերձ ազգային պանծալի յեշտաակօք, որ թէ ստոյգ այլ ըլլան՝ պակաս

մեր հայրենեաց սահմանէն գրեթէ դուրս Ճայ. հին աշխարհագիր մեր Ուտի նահանգին մէջ միայն յիշէ. տեղացի պատմիչն այլ Մովս. Կաղանկատուեցի կ'աւելցընէ, թէ գտուի հօն « անբաւ Զիթենի » . ոմանք նա և ի Մոկս կարծեն. գտուի նա և ի Տայս, յԱրդուին: Ազնուութիւնն և յատկութիւնը վայելչապէս բացատրէ Առակախօս մեր (ձԳ), Թթենւոյ հետ բաղդատելով, որուն կ'ուզէր խնամենալ. և նա տնազ կ'ընէր, իր պողոյն քաղցրութեան և տերեւոցն մետաքսի նիւթ բլլալուն վրայ պարծելով. իսկ Զիթենին պարծէր ի « յարազուարճութիւն (մըշ) » տականաչ բլլալուն և ի պաղաւէտութիւն իւր. մանաւանդ զի պտուղ նորա « ոչ միայն ուտելի է՝ հատիւն և հիւթով, այլ զի և » նիւթ է ձիթոյ, և ձէթ նիւթ » է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի.. և ի տուընջեան.. ոչ չիջանի՝ այլ յազգաւ կիցն իւր խառնի », և այսպէս յաղթէ և հաւանեցընէ զհակառակորդն: — Յայտ է որ այսպիսի պատուական բոյս մի՝ մշակութեան մեծ խնամոց արժանի եղած է, ինչպէս և նիւթն՝ վաճառականութեան. զոր թողով տնտեսականաց՝ յիշենք մեր Վաստակոց հեղինակին գրածը (ԾԻԵ). « Զիթենիքն շատ ցեղք են. » զի կայ Զիթենի՝ որ հաստակեղև է, և է որ նօսր, և է որ կանուխ շարժի, և է որ անազան. պարտ է զայն Զիթենին որ հաստակեղև լինի՝ զճապատրոյսն » ընդ կեղևն և ընդ փայտն ի մէջ դնել, առանց ճեղքելոյ. բայց զնօսրակեղևն » պարտ է ճեղքել, և զփայտն օգնական առնուլ զի պահեցէ. և մեզ այն որ ճեղք » քելով պատրուի՝ լաւ է թուեցեալ և ամուր քան զայն՝ զոր առանց ճեղքելոյ » դնեն »:

Յետոյ խօսի պատրուելոյ ժամանակին վրայ. ուրիշ տեղ յատուկ զովութեամբ գրէ (ԾԷԳ). « Արժան է զօգտակար և գամկերեղանելի և զփայլուող և զօրնեալ » ԶԶիթենւոյս զգրութիւն և զսահմանն՝ ընդ գրով արկանել. և ապա զբարեւ » բուղի պողոյն զպարարտ և զօգտակար իւղոյն՝ վասն զբուսանաց մարդկան, որ » պէս աւանդեցաւ մեզ ի հնարագէտ իմաստնոցն, որք կամեցան յուրեանց վաս » տակոցն վայելել զկենցաղս, և յայլոցն հրաժարել.. Առաջին սահման է, որ » մարդ (որ) սուրբ շինի յախտից և ի մարմնական աղտեղութեանց՝ չմբռնեայ ի » ծառն, ոչ ի տնկել և ոչ ի քաղել զօրհնութեան պտուղս. այլ արժան է որ » գործեն զսա մաքուր և սուրբ յամենայն աղտեղութեանց.. թէ ոչ՝ փլասէ »: Առաւել քան զքրիստոսնէական՝ հեթանոսական զգուշութիւն: — « Եւ հինքն այն »

չն զան զՅունաց պարծանքն. « Զիթենի ի հեթանոսաց՝ Աթենայ ձօնեալ էր. էրք թէ զառաջին » յԱտտիկէ եղեր Զիթենի, որ նախ զմարտն նա եղիտ (պատերազմի շքուով իտմարուելով). » և պտուղն ինկելութեան տնկոյն Աթենայ՝ առ Պիսիզան (եւ կակառակութեան Ատտիկոյ. » քանզի նա՝ այն ծովու ի վերայ զպեղին ցուցանէ, և Աթենա՝ սառ ի Զիթենոյ.. առաջին սա » այն է որ ի Գլեկին բուսաւ, տնժաւ և մշակելն փթիթ. զոր՝ Համբան ելեալ ի քոց եհաւ, և » նա տնկէն բուսաւ ի նաոսածէն: Եւ Հայոց Մեծն Արտաշէս արեւալ Աթենայ՝ հրով և ջրով » վարեալ յազգականութիւն տնկոյն, և ոչ կարել (կարէր). զի ի նաոսածէն ի վեր բուսանէր, էրք » ի երցն ի վեր վաղեալ ելանէր. օգտեալ էր պանչիւեանն՝ երգեաց զայս բան »:

« Գեղեցիկ Զիթենի, և յար վարսաւոր, թաւ »:

Եւ բլլալեալ ծաղկաւ սպիտակաւ և մրգաւ »:

որպէս ասաց օմն, շուր բուսական նամատից (նամաղից ?). և Ասիզեղեանքն նովա վարին, և սղոց զօրութիւն յաւելու: — Վասն այս տնկոյս սառ Աստուածաբանն, թէ ընդ նաոսածն՝ ցնուի, ընդ սրոյ և ընդ ձեւին կակառակի. առեալ քրիստոսնէիցն՝ նուիրեցին Յակոբոյ Երբորի Տեառն՝ որպէս թագաւորի և քահանայապետի »:

» պէս են ճշմարտել, որ Արիւնիոյ երկիրն, եւս առաւել Անարզարայ թե՛մ՝ լաւ
 » գովելի պտուղ և անուշահամ ձէթ ունի քան զայլ երկիր. և կայսերացն և
 » մեծամեծաց՝ անտի բերէին վասն մարմնաւոր պիտոյից իւրեանց:.. Եւ զայս
 » Յուլիանոս իմաստունն և բնութեանց գիտողն՝ եգիտ և ուսոյց մարդկան ու:..
 « Եօթը և փոզ գետինն և տաքն պատշաճի Ձիթենույն. և վասն այսորիկ ի
 » Արիւնիայ և յԱնարզարայ առաւել անէ և զարգանայ քան յայլ գաւառ, զի
 » հողն և օդն այսպիսի է. նոյնպէս և սպիտակ է և գիլային. և այսպէս տայ
 » բազում և շատ ձէթ պարարտահամ. և սեւ գետին թէ քարուտ և կոկնուտ
 » լինի՝ աղէկ է. բայց ոչ՝ գերզ սպիտակն. և աւազն աղէկ է թէ աղի չլինի:..
 » և հաստ և կաղճին գետինն ամենեւին վատ է, զի պինտ է և գերզ շերզ, և
 » մասունքն ըմբռնեալ զիրարօք՝ և շապ մտանել արեգական ջերմութեանն ի
 » խորուն. և կարմիրն քան զամէնն վատ է, զի շատ ջերմանայ և խիստ պս
 » տասուտի, և աւերէ զծառն և զբերն »: — Առանձին գլխովք գրէ և (ԾՀԵ).
 » Վասն թէ որ օգ լաւն է Եղեմեացն ». և (ԾՀԶ) « Վասն թէ յոր աւուրս և ի
 » ժամս պարտ է տնկել ՂՆԴեմին, այսինքն Ձիթենին »: — Իսկ Ամիրոս. Ձի
 » թենույ գեղորեից օգտութեանց վրայ խօսելով՝ աւելցընէ. « Յիշենք քիչ մի բան՝
 » որ ասեր է Պտին վասն Ձիթապտղին, և այն որ հասուն է՝ խիստ մուկթատիւ
 » է, և այն որ խակ է՝ որ չէ հասել՝ հով և չոր է և կապող է. և այն որ կա
 » նանջ է՝ լաւ է քան զամեն ազգն. բնութիւնն հով և չոր է. և այն որ սեւն
 » է՝ յուժն և կերակրութիւն աւելի է քան զկանանչն, և բնութիւնն տաք է և
 » չոր է, և շուտ հալի քան զկանանչն. և թէ կտավ ուտես՝ օգտէ ամենայն ցա
 » ւոց որ ի թոքն լինի. և իր ուսելն տքնութիւն բերէ, և զքուն լինելն խափանէ
 » և զգլուխն կու ցաւցընէ, և սալտայի խտեր կու ընծայէ. և լաւն այն է որ
 » ի մէջ կերակրին ուտեն. զտամազն ուժովցընէ:.. և այն որ Վայրի Ձիթա
 » պտուղն է՝ տաք և չոր է:.. և այն որ հասունն է՝ մուկթատիւն է:.. և զկերակուրն
 » մարսել կու տայ. և այն որ կանանջ է՝ զբնութիւն կապէ և զտամազն ամ
 » բացընէ և զկերակուրն մարսել տայ. և այն որ աղի է՝ յուշ հալի և պիղծ
 » կերակուր լինի. և այն որ քացիին մէջն լինի դրած՝ շուտ մարսէ և զփորն ա
 » դէկ կապէ:.. Թէ գիր կուտն և զմիսն ծեծես և օժևս ըղնկան որ աւերել լինի՝
 » ձեռացն և ոտիցն ըղունգն, օգտէ », եւ այլն: Ձիթոյ՝ այսինքն եղին վրայօք այլ
 » առանձին գրէ. « Զայս, որ է Պ. Ըրուզանի Զայս. և այն որ քաղցր է՝ ի հասած
 » պտղէ է:.. և այն որ Վայրի է՝ մուկթատիւ է. և այն որ ի կարմիր պտղէ է՝
 » միջակ է ի հասունին և ի խակին մէջն. և այն որ խակ պտղէ է՝ այնոր Զայ
 » քին քոխ կու ասեն, և նման է վարզին ձիթին:.. և այն որ հին ձէթ է՝ ուժն
 » Տիզկանէփտին պէս է », եւ այլն: — Լ. Olea. Փ. Oliviet.

1777. Ձիթուկ ?

Յիշած է բառհաւաք մի. իբրեւ բոյս. ինչպէսն անյայտ:

1778. Ձիծի. Չուձու.

Անդնաշափ կամ կրկին բարձր խտեղէն մի՝ ներմակ ծաղկով (ըստ Ա.Թանաս. եր. 90). մանր կանաչ փամփուշտներու մէջ հատիկներ ունի, տղայոց խաղալիկ:

1779-82. Չիւնճաղիկ.

Այս անուամբ կ'իմացուի սովորաբար կաթնագոյն ծաղիկ մի՝ քանի մի բարակ մաշկի պէս երկայնաձև երթերով, որ ձիւններն հալելու սկսած ժամանակ կ'երևի, անոր համար Փ. Perce-neige կ'անուանեն. Սալաձորցիին այլ վկայէ, թէ

« Նախ Չիւնճաղիկն աւ Չիգիտամն.. յառաջագոյն »

քան զայլ ծաղիկս երեւնան. արմատն այլ կոճղէզի նման կ'ուուուի: — Լ. Galanthus, Փ. Galanthine. Առակախօս մեր՝ ձեան մէջ բուսած փափուկ կազմուածքը նկատելով, կ'ըսէ, որ արեգական հարսանեաց գալով՝ ուրիշ ծաղկանց հետ, հանգիսի առեն շերեցաւ. վասն զի « խորակահար եղեալ ցամաքեցաւ »: Քանի մի տեսակքն յիշուին ի Վրաստան և ի Հար. Կովկաս, ի Կարին, Երրակ, եւ այլն: — Կայ և ուրիշ ցեղ

Չիւնճաղիկ. — Որոյ գլխաւոր տեսակն կ'ըսուի Աշնանային, յաշնան ծաղկելուն համար, բայց չափովն և տակովն նման է առաջնոյն. ինչպէս վկայէ և Ամիրս. Ար. անուամբ կոչելով Սորգնման կամ Սորհեղան *سورجمان*. « Խոտի տակ » է սպիտակ, և նման է Կատտանային, աղէկն առողջն է և նորն. բնութիւնն » անհալ է և չոր է »: Գարձեալ գրէ ուրիշ Ար. անուն մ'այլ յիշելով, « Որ » է յԱքոյ, ինքն խոտի տակ է գէտ Շապարուդ. սեւ է, կարմիր է, սպիտակ » է, և լաւն այն է որ սպիտակ լինի.. ուժովցընող է, և գերեսն պայծառ առնէ, » և գիտակ պալլալմն կու լուծէ.. Թ. Արի (ժուռ) Կաստանայ կ'առնն. և լաւն » այն է որ յԵգիպտոս լինի, և կոտրելն ամուր լինի, և այն որ կարմիր և սեւ » է՝ գէշ է, » եւ այլն: — Լ. Colchicus, Փ. Colchique. Հին Բժշկարանն գրէ « Սորհեղան, որ է Չոյն ծաղիկն տակն »: — Ամիրս. առանձինն յիշէ, Ար. « Ա » ապեհի քչ-Հոյրնազ (Որմզդի մատուռք) ինքն Սորընճանին ծաղիկն է, գեղին » կու լինի և սպիտակ այլ կու լինի. և ասցել է գրոցս ժողովոյն՝ թէ Շանկար » յիքն (Շահարաւտ, Բաւուտ) է այս Սորընճանին. և այլ ասացել են՝ թէ Սորըն » ճանին տերեւն է »:

Չիւնճաղիկ կոչուի, տեսակ մ'այլ բարակուկ թելերով՝ տերեւի տեղ, և նոյնպէս բարակ կոթի ծայր կտպոյտ կարմիր (որչափ որ գուշակուի շորցածէն) թըթոյ նման ծաղկով, որ նոյնպէս ձեան հալելու առեն երեւնայ, կ'ըսեն:

Չիւնճաղիկ անուանած են նոր բանասէրք Փ. Boule de neige. Թ. Գար բօփոռ կոչուած մանր ճերմակ ծաղկանց գնտաձև խումբն, որ տեսակ մի է Լ. Viburnum, Փ. Viorne թփոյ կամ ծառոյ, և թուի Հ. Գերմանտի կոչուածն (Թ. 471). և եթէ արգարիւ նոյն է սա և անուանեալ գնտակաձև Չիւնճաղիկն՝ ընդ յիշեալ լատին Viburnum, այսոր մէկ տեսակն V. Opulus նշանակուած է ի Կարին, ի Մովսէղերս Պոնտոսի. — V. Lantana տեսակն Կովկասու երկու կողմերում. — Արեւելեանն. V. Orientalis ի Ռ-Հ. ի Վերս և Պոնտոս:

1783. Չխնի.

Ռոյքեանն գրէ. « Մաղիկ՝ որ յաւազուտ տեղիս բուսանի, և ի տեղի տե » ղեւոց փուշ ունի, մտականաչ. որոյ պտուղն ծխի՝ ուր թանկ է խունկն, և մը » տանէ ի դեղս »: և Լ. կոչէ Juniperus, որ Գի ծառն է (Թ. 478). և այս բառն պուած է ի Պլինիոսէ (ԺԳ. ԺԱ. Ժ):

1784. Չկան ածուենի. Չկան ածուենիկ.

Գորտնորդի կամ Մամույ շատ անուանց կամ տեսակաց մէկն է, Ամիրա. և այլ բժշկարանք Ար. Տահապ անուան զուզեն, طحلب. « Ար է Գորտնորդն. » լուեն այն է որ ի քաղցր ջրի լինի. և թէ զինքն շորցընեն և ի Բազկին տե. » բեան խառնեն և Մրտենուն, զերեսն կարմիր առնէ, և թէ յաղէցն ի վերայ » սպեղանի առնես՝ զուռէցն կտրէ »: — Պէթար այս տեսակ Գորտնորդը Ջրի Ոսպ կոչէ, Փ. Lentille d'eau, Լ. Lemma minor. — Արանակուած է այս տեսակս ի Կովկասեան գաւառս:


1785. Չկան խոտ.

Ար. բառի Թարգմանութիւն է, Հաշի իշ-Սամէր որ ըստ գիտնոց Թուրքաց՝ ջրի Շուշաններու տեսակ մի է. այսինքն Նունուֆար, Nonuphar, և Սպիտակն Nymphaea Alba կամ Nonuphar Lateum. Տես Հարսնամասն (Թ. 1655) և Կոկոս (Թ. 1486): Նոր բժշկարան մի ուրիշ նիւթոց հետ զայս այլ տնդի դեզ գրէ:

1786. Չկան Մահարար. — Տես Իջնագի և Խոնգառ:

1787. Չղկի կամ Չղկին.

Յիշուած է (որմէ՛) վերոյիշեալ Չկանց — խոտի նշանա. կութեամբ ջրային ծաղիկ մի. Փ. Souci d'eau կոչուածն, կամ Populage des marais, Լ. Caltha & Trollius palustris.



Չղկին.

1788. Չմերուկ.

Հում ուտելի խաւարտից ամենամեծ պտուղն, և ամենածանօթ. նշանաւոր է անունն մեր լեզուի մէջ, զուցէ ամառ ատեն զովացուցիչ ճաշակմանն համար. զարմանք է որ Վաստակոց գիրքն յիշելով զԻդում, Կոդայ և Պտեխ՝ որով իմանայ զՍեխ, չի յիշեր զՉմերուկ. ետքի տնունն Ար. է, جليج որով անունն Չմերուկն այլ, բայց աւելցընելով հետը Հինտի անունն իբր Պտեխ Հընդկաց, այսպէս գրէ և Ամիրա. ըստ Պէթարայ. « Չմերուկն՝ որ է Պատտիխի » Չիխն, որ է Պատտիխի Հեղին, Հնդաստանու ասեն, և ի Շիրազ Խիարի Ֆուտուս » կ'ասեն, որ ջրի լինի և մայի. օգտէ ամենայն ազգ. Չմերուկն. բայց հով բը. » նութեանց պիղծ ծարաւ կ'ընծայէ, և ի լերդն պաղղամ յաւելցընէ »: — Լ. Cucurbita Citrullus. Փ. Melon d'eau կամ Pastèque. — Մեծութեանն համար յարմարցուցեր է Միս. Գօշ զառակն Եր. « Մտեալ օմն ի պարտէզ՝ կամեցաւ » հարկանել զՉմերուկ և ուտել. և նորա զարհուրեալ ասէ. Չինչ գործես այր » դու. մէջ գիտես թէ Չու եմ ես փղի. եթէ տարցես զիս ի տուն քո և պա. » հեսցես զգուռութեամբ՝ դի մի՛ բեկայց, ծնայց քեզ փղորդի՝ հազար դահեկանի. » և ուրախ եղեալ տարաւ ի տուն. և յետոյ ընկէջ զնա արտաքս, գիրաւորեալ. » և այսպիսեօք զերծեալ եղել ի սրոյ »: Նարասացույ Երկրագործութեան գիրքն շատ երկար գրէ Չմերուկի մշակութեան համար:

1789. Զմերուկ վայրի.

Սա կոչի Հանգալ, **جند**, որ անուամբ ստորագրէ Ամիրս. « Ինքն էք և որձ »
 » լինի. և լաւն այն է որ դեղին լինի. . . Իր ձէթն ակնջին խլութեան և ձայն
 » հանելաւն օգտէ, և զմորուաց մազն կու բուսցընէ... և տերեւն փոխել կու
 » տայ աղէկ. . . և իր տակն օգտէ օձահարին և կարճահարին. . . Թէ զԶմերուկն
 » ծակեա և զհունտն հանես և ձգես, և ի մէջն Զամպարի ձէթ ընու, զծակն
 » խմորով կամ շոխով ամբացընես, ի վերայ կրակին զնես որ եռայ և հանես
 » զձէթն, և սպիտակ մօրուքի քսես, սեւ առնէ և չթողու որ սպիտակի. . . Եւ թէ
 » (զկեղեւն) եռցընեն և զլուրն ի տունն ցանեն, զլուս և զոյլին սպանանէ. . . Ասէ
 » Պա. թէ այսոր Ար. ֆայսատ կ'ասեն, և Պ. Կաֆատա կ'ասեն, և Հոռ. Կոշով.
 » կիսա ասեն, և Լ. Կօլօկեօյն (Colocynthis, Փ. Coloquinthe), և ի Քիրման
 » Խար-գահրա ասեն, և այլ բառով՝ Խարպուզի ըտուպահ ասեն: Ինքն էք և որձ
 » է. և այն որ էք է՝ սպիտակ և թուլ կու լինի և շատ կու կոտորի. և քանի որ
 » սպիտակ լինի՝ լաւ է, և կեղեւն դեղին լինի որ սպիտակութիւն քառէ. և այն
 » որ կապուտ գուն է՝ չէ աղէկ. . . և էգին Հասրոյի ասեն. և աղէկ թէպտիրն
 » այն է որ զՀանդալն ի տաք աւուրքն և ի ցուրտ աւուրքն մարդու շտան. և
 » լաւն այն է որ բարակ չի ծեծեն »: — Թէպէտ և Զմերուկի անուն և նմա-
 նութիւն ունի այս բոյսս, զօրութեամբ և գործածութեամբ շատ տարբերի. լեղի
 դեղ մ'է իր կեղեւն չորցուցած և վրայի մաշկն հանած. տաք երկիրներու բերք
 է, մանաւանդ Եգիպտոսի և Աֆրիկոյ. բայց բարեխառն կլիմայից մէջ այլ մը-
 շակուի. կուտերն լեղի չեն և իւղային մասն ունի: — Ս. Գրոց մէջ (Գ. Թգր.
 Գ, 38-40) Եղիսէ մարգարէին համար պատմուածն, թէ սովի ատեն հրամեց
 աշակերտին որ երթայ ի դաշտ՝ եփելու բան մի քաղէ, և նա « եգիտ որք յանդին
 » և քաղեաց ի նմանէ Ազոյս լի շալակաւ իւրով, և եկն և էարկ ի սան եփոյին,
 » զի ոչ ձանաչէր », (ուրիշ ուտելի խոտեղէն մի կարծելով, և կերողքն վնաս-
 ւեցան, ու մարգարէին հնարքով մի ազատեցան), մեկնիչք համարին այս վայրի
 Զմերուկն, որ երբայերէն կ'ըսուի Փաքա կամ Փաղիոր:

1790. Ծնաբեր ?

Յեշուած է յօրագրի (Մշակ, ԺԸ, 88):

1791. Ծնծում.

Ընկուզի ամբողջ միջուկն է:

1793. Զուխտակ կամ Զուտակ. — Տես Հոգիի:

Զուծու. — Տես Զիճի (Թ. 1778):

1793. Զուսնկ ?

Խոտեղէն մի Կարոսի նման տերեւներով:

1794. Ղազտամպուռա.

Չէլթունցոց բարբառով նշանակէ Եղերդակ:

1795. * Ղանիրանի ծառ. — Տես Ռեանի:

1796. Ղանճը ?

Սարմախ *سرمق* **Պ.** բառին զուգէ Բժշկարան մի, « Սարմախ՝ որ է Ղարճն » ածվոց և վայրի. լաւն այն է որ ածվոց լինի և դեղին լինի ». իսկ Ամիրտ. գրէ, « Ղատֆ, որ է Սարմախ, որ է Հռովի Սպանտին, և թէ ուտեն՝ դփորն » կակղացընէ.. և թէ եփեն՝ և բորոտ մարդիկ զձեռն ի մէջն խոթեն, » օգտէ. և թէ զհունդն՝ իր չքօքն շարով ծեծես և յաչքն քաշեն, զաչաց բորն » տանի, և թէ մեղրով և աղով խառնեն և ուտեն, օգտէ խոչակին ուռեցին, » և զստամոքն յստակէ և զկուրծքն կու կակղացնէ.. և թէ եփեն և ջրովն զաղ- » տոտ ապրումէ հալաւն լուանան, յստակէ և պայծառ առնէ »: — Ար. կոչուի Բարաֆ *عطب* կամ Ղատաֆ. **Լ.** *Atriplex*. **Փ.** *Arroche*. — Տես և Թայլ (**Թ.** 784) և Թասխոտ (**Թ.** 833):

— Ամիրտ. անդ մ'այլ Չար Առուոյտ գրէ զ'Ղար:

1797. Ղածի. Ղածքի.

Վայրենի ծառոց կարգին յիշեն նոր գրողք մեր և ստորագրողք Գուգարաց կողմանց, կամ Հաղբատայ վանաց, (Արարատ, ԺԹ, 445. — Մշակ, ԺԵ, 61. — Մեղու, ԻԳ, 85):

1798. * Ղալիոն. — Տես Կտրածի խոտ:

* Ղաղուլէ. — Տես Կակուլէ:

1799. Ղահվէ.

Իբրեւ ըմպելիք՝ անտարակոյս աշխարհածանօթ կրնամք ըսել, և բացատրելն աւելորդ, մանաւանդ որ յօրագիրս այլ ծանուցուած է գիւտն, գործածութեան սկիզբն, և Հայոց ձեռքով մտնելն նախ ի մեծամեծ քաղաքս արեւմտից, (տ. Բաղմավէպ Բ. 331). — Բժշկարանաց մէջ, ծէ դարուն, ոչ իբրեւ դեղ այլ պատահարար յիշուած է: — Յայտնի է որ Արարացիք ծանօթացուցին զայս՝ ուրիշ ազգաց, գոնէ արեւմտեայց, որք անոնց լեզուով ֆռռեկեալ կոչածը՝ քիչ շատ ծռելով՝ կ'անուանեն, ծառն այլ **Լ.** կոչուի **Саша**, **Փ.** *Caséier*. ոմանք համարին թէ ոչ ծառին՝ այլ Եթովպիոյ Գաֆէ քաղքին անուամբ կոչուած է. այլք՝ թէ ծառն իսկ կոչուէր ֆախապիէ. ծք դարէն ի վեր լսուի այս անունս. անկէ առաջ կ'ըսեն Պոռն կամ Պօն կոչուէր, կամ Պոնք. բայց ոմանք այս անուամբ օտար բոյս մի նանչնան:



Ղահվէ.

1800. * Ղամալախ ?

« Ղարիկոն, Սլշարիկոն (Յն.) որ է Ղամալախին Սունկն, Թ. Ղարբան կօպէկի » կ'ասէ »: — Այսպէս գրէ Բժշկարան մի: Տես և ԹԿօպի Սունկ:

1801. * Ղամպիլ.

Տես Ապրանճ, Թ. 143: — Կամարկայցին կ'ըսէ. « Ղամպիլ՝ Թրմուտ. ինքն » խօս է, իրով եղ ներկեն, կարմիր հալաբուշտիկ է »:

1802. * Ղայեալիոն ?

« Հեղինացոց բառով է, և ինքն խօս-մն է յԵրեւան. և օգտէ աղեաց գա- » ներուն »: Այսպէս Բժշկարան մի. յունագիտաց յանձնեմք ծանուցանել բառին ստոյգ անունը:

1803. * Ղայսոււմ. — Տես Բարձունենկ:

1804. Ղանձիլ. Խանձիլ.

Պէտքէս ստորագրեն զայս նոր գրիչք և օրագիրք. բայց միաբանին Թէ վայրի Սխտոր մի կամ սխտորահամ ասակ մի է. և աղի դնելով ԹԹու ուտելիք մի կաղ- մեն: Հսուած այլ է Թէ Թ. Թեքնէ օրոս կոչի: (ԱԹանաս. 81. — Մեղու իԲ, 83. — Արարատ, Ե, 23. — Բարխուդար. 244):

1805. * Ղար. — Տես Դափմի, կասրայ:

1806. Ղարաղաթի ?

Վայրենի ծառ մի ի կողմանս Հայ-Աղուանից: (Մեղու, իԲ, 83):

1807. * Ղարանֆիլ.

Թ. Նշանակէ Շահոգրամ. բայց Սալաձօրեցոյն երգածը,

« Ղարանֆիլն մօռ է հագեր. հոտն անուշ քան զամենուն »:

տարբեր ցեղով ու ձեւով փոքր բոյս մի է, նեղ երկայնկեկ փողածեւ բաժակներ ունի, որոց միջէն կ'եղնեն չորս հինգ թերթով թանձր կապոյտ կարմիր (մօռ) քշտող ծաղկներ. փողին ներքեւ կան փնջածեւ հաւաքուած մանրիկ տերեւք, իսկ եզերքն՝ աւելի մեծկակ սրածեւ տերեւք: Իրգողին ըսածէն յայտ է գտուիլն ի Կարին, ուստից մեզ այլ խարուած է:

1808. * Ղարաչալուի հունդ.

Յնէ Բժշկարան մի, քարի ցաւի դեղ. « Թէ զՂարաչալուին հունդն՝ որ ի » Չաղմակ (տես զայս) կու նմանի, քիչ-մն խառնեն (Տատայի ջրոյ հետ) նա զքարն » կու կտրատէ և հանէ զտղայոց և մեծ մարդու, հինգ վեց հեա երբ խմեն »: Թ. այդ բառք նշանակէ Դժնիկ:

1809. * Ղարասէ.

« Ինքն վայրի Սալորն է, և ծառն փուշ է, աղէկն յանձրդի տեղ լինի և
» հասունն »: Այսպէս Սիմ. Կամարկապցին:

1810. * Ղարատ. Ղարազ.

« Աղադիային ծառն է », ըստ Բժշկր.: Տես Ախաբիա, Թ. 28:

1811. * Ղարատին.

« Հայն Ուլիոսմի կ'ասէ (տես), և Թ. Տօնկոզէրիկի »: (Բժշկարան):

1812. Ղարի.

Ռոշքեանն ասէ. « Մառ որ տերեւս Արմաւենոյ նմանս ունի, յորոց Արարացիք
» զգետոս ինքեանց առնեն ». և Լ. գրէ Օցոս. անծանօթ է սա հիմայ. ըստ ա.
նուանն կրքնար համարուիլ Ղար:

1813. * Ղարիկոն.

Յունալատին անուն է, Agaricus, ֆ. Agaric. զոր Միս. Հերացի այլ գրեր է
(այ. եր. 118), և ընդհանուր է Սընկոց. ֆ. Champignons. Թ. Մանքար. Կամար-
կապցին որտէ. « Ինքն սպիտակ է գէտ Մանթար. ի փայտն կու բուսնի, աղէկն՝
» սպիտակն, կակուղն և անկուտն է »: Իսկ ըստ Ամիրա. « Թ. Ղարրան կօպակի
» ասէ, էգ և որձ է. լաւն այն է որ սպիտակ լինի և կակուղ... այն որ սեւ է՝
» պինդ է և ծանր է. չէ աղէկ, և այն որ սպիտակ և թեթեւ է և կակուղ է՝
» լաւն այն է, և չէ պատեհ որ ծեծեն, այլ ի մազն քսեն՝ որ ի վայր թափի,
» լաւ է »:

1814. Ղարփուզ.

Այս Թ. անուամբ գրէ Միս. Հերացի զՊմերուկն (եր. 80), զոր տես:

1815. Ղափեմ. Ղաֆեմ.

Առաջին կերպով գրած է Միս. Հերացի (եր. 85). Ար. բառ է اغانغ, « Ինքն
» խոտ է, և մէկ թիղ ու կէս տերեւ. լաւն ծիրանի ծաղիկ ունի ». կ'ըսէ Կամարա-
կապցին: Ինչ ըլլալը բացատրած եմք Հ. Նրեանակ անուամբ. Թ. 669:

1816. Ղեր.

Տես Գիմ: — Ղեր կոչուին ոչ միայն Գիմն, այլ և ամենայն կակուղ ուտելի
ծղօսք:

1817. * Ղերս ? — Տես Հիսթոզ Թ. 1695:

1818. * Ղրրքայ. Ղրֆա. Խրրքա.

Ար. قرحه, Խարֆայ. Տես Անմեռուկ, Թ. 133:

1819. Ղլմպօզ.

Ռամկօրէն անուն մի ճակնդեղի կամ Բազուկի, ըստ Բժշկարանի միոյ:

1820. Ղւկնդում?

« Թուփիա Հընդի ». այսպէս մեկնուած է անծանօթ գրողէ:

1821. Ղըլըղդանի?

Այսպէս կոչուի Մայծն յԱրցախ:

1822. Ղըուակենի. Ղըուանենի. Ղըուիթի.

Որոյ պտուղն այլ Ղըուիթ կոչուի, շատ կուտերով, բաց գունով կարմիր պտուղ մի է. մանր վայրի Տանձի նման ձեւովն. և է լայնատերեւ կոչուած տեսակն Սին պարոյ (տես զայս). *L. Sorbus latifolius*, որ և *Pyros intermedia*, Φ . *Sorbier à larges-feuilles*, *Alisier de Fontainebleau*. Գտուի ի Խոտուչուր և ի Ռ-Հ:

1823. Ղողնուշակ.

Սեւակապոյտ գունով կըր մեծ Սալոր մի է, կարմիր համեղ և մսով:

1824. * Ղուգապ. — Տես Գեոնադարի:

1825. * Ղուլըաս. — Տես Գեեգեդ:

* Ղուլըուլ. — Տես Գիդի. جلق:

1826. Ղուլպ.

Ար. قلب. « Որ է Հայ ըլ-Ղաշարն, որ է Մաշի Հնդին, և Թ. Թաշխասան » օրի առէ, սպիտակ հունա է, ի յարծաթ կու նմանի. և տերեւն նման է » Ձիթենոյ տերեւին, բայց յերկանուկ և կակուղ և տափկուկ կու լինի, և ի պինտ » և ի բարձր տեղ կու լինի. և ճղերն յերկան կու լինի և բարակ, և Սէզի ճղի պէս » յամէն ճղին մէջն մանր տերեւ կ'ունենայ, և յամէն տերեւի ներքեւ ամրկէկ » հունդ կու լինի բոլոր, որպէս սպիտակ քար կու նմանի... Չործկալն տանի, և թէ » ի հնդէն երկու դրամ սպիտակ գինով խմեն, զքարն հալէ », եւ այլն: — *L. Lithospermum*, ի յունականէն, որ նշանակէ Քարատերմ, հունաերուն կարծրու-թեանն համար. Φ . *Gremil*, կամ *Herbe aux perles*. — Այլ եւ այլ տեսակներէն՝ Աժոցն *L. Arvense* և *Sibthorpiantum*՝ յիշուին ի Կովկաս. Նորածաղիկն *Tenuiflorum* ի Միջագետս, յԱթապ. — *L. Officinale*, յԱրապատական, Միթրանէկապոյտն՝ *L. Parpureo-ceraleum*, ի Թ-Հ. և Պանտոս. այլեւայլ տեսակք ի Կիլիկիա:

1827. Ղում.

Այսպէս կոչուի Մարացորենն կամ Մայծ, Maïs, ըստ Կարմիրքոց. քննելու անուն մի, Թերեւս ի վաղուց ըսուած և լուած այդ կարեւոր ընդեղինին:

Ղուստ. — Տես կոստ:

1828. Ղուրանար ?

Ո՛ր և յորմէ գրուած է, չեմ յիշեր. բայց զուգած է Թ. Իպրանկիս քիչէնի,
L. Eryngium campestre. Փ. Panicaut champêtre կամ Chardon Rolande, Barbe
de Chèvre. Տես Երնջակ:

1829. Ղուուկի.

Տեսակ մի է Խաղողայ:

Ղրտում. — Տես Կրտիմն:

* ՂրՖա. — Տես Ղրքայ և Աննուակ:

1830. Ղօշի.

Այսպէս կոչուի Գտեակց-ճանկի սերմն, ըստ Քալանթարեանի:

1831. Ղօպօլ ?

Խտեղէն մի, Թ. Աղրօղայ ? ըստ Սերաստոցուց:

1832. Ճագարխոտ.

Ղանակէ բառհաւաք մի առանց բացատրութեան:

1833. Ճագում ?

Ամիրտ. գրէ Ար. Պանրունա կամ Պօնրունայ անսւան տակ չարչի, « որ է
» Կօհնա, որ է Ճագում, որ է Չաքում, որ է Երագըլ Կօհնախ ? , որ Թ. Պոսաձ
» ասէ. Ձիթենոյ ծառին վրայ կու բուսնի. ինքն խոտ-մն է որ տերեւն Ձիթենույ
» տերեւ կու նմանի, և խիստ կանանչ ճղեր ունի, և ի վերայ ճագերն հակիթ
» կ'ածեն, և ի Ղին և ի Տանձին ծառն այլ կու բուսնի: Եւ թէ զայս խոտս
» ծեծեն և զլուրն քամեն և խմեն, և ոսկրնուն կտարածին վերայ (քանն) և որ
» ի տեղացն ելնէ, և որ արիւն քքնու, օգտէ. և թէ թզով եփեն և զլուրն խմեն՝
» օգտէ հազին »: Պէյթար կ'աւելցընէ, որ Հայկաւ այլ խառնելով լրին՝ կ'օգտէ
տակրաբուժութեան: — Մտորազրութենէն յայտնի՝ որ մակարուսակ է, քիչ հեղ
գետնի վրայ բուսնի, այլ ուրիշ ծառոց վրայ, կարմիր կամ դեղին ծաղիկ և հա-
տապտուղ բերէ. հարիւրաւոր տեսակներ ունի, որք միանգամայն կ'ըստին L. Lo-
ranthus Փ. Lorantho, ի յունականէն (իբր կայէծաղիկ). իսկ Ամիրտայվաթի
յիշած անուններն յիշուած չեն ի Պէյթար, և հետաքննելի է ծագումն Ճագում
անուան:

1834. Ճամթ.

Կորեակ կամ տեռակ Կորեկի, ըստ Մերսուպայ Թաղիաղեան:

1835. Ճամուռի.

Ղանակէ տեռակ մի Ուռնի:

Ճալամ.

Խաչափայտն է, սխալ կարգացուած, ուղիղն կարգալու է Ճ ալամ, այսինքն
Հարիւրալամ:

1836. Ճալըուգայ կամ Ճաղըուգա.

Ար. Հասի Մեօպար. Եղեւին ծառոց տեսակաց շոր պտուղն է, մէջն Պիտակի
նման հատերով: Վամարկայցին գրէ. « Ճաչողզար. Սոնոպար. Յրատրք. ինքն
» փիչ? մի, որ պտուղ տայ գէտ Նչի. աղէկն խոշորն է »: Սահակ Մանուկեան
կ'ըսէ. « Չամ խօզալախի միջի Փրստըխն »: Նուչի, Ընկուզի, Սպըստանի և նմա-
նեաց հետ ուտել խրատէ Բժշկարանն՝ դողդօշոտ անձին: — Տես և Չաչուպա:

1837. Ճակատ.

Աշորայի զուգանիչ է, կամ Հանարի. բայց յիշողն անյայտ:

1838. Ճակն. Ճակնդեղ. Ճանկնդեղ.

Առանց բարդութեան սոսկ գրած է լաւ Բժշկարան. « Ճակն և Սոխ՝ մեղ.
» բալըով եփած »: Մանօթ և պիտանի բանջարոց մէկն, շատ հեղ Բազուկի հետ
չիօթի. Ամիրտովլաթ այլ խոտաովանի զայս՝ ի կարգելն Ճակընդեղ անունը.
« Ոմանք ասեն՝ Թէ Չիքնտուրն է, և ոմանք ասեն Թէ Բազուկն է »: և երկուքն
այլ խոտաանայ յիշել այն անուններով: Բազուկն կոչի Լ. Beta, Փ. Bête. Ար.
Ախիس سلق, իսկ Ճակնդեղն Լ. Beta rapa, Փ. Betterave, Ար. և Պ. Չքնտոր,
Ճաչողմտոր, Թ. Բանձար. և սա աւելի գործածուի տնտեսութեան մէջ. անոր
համար մեր Առակախօսն վկայէ (ծ), Թէ « կարգեցաւ հրամանատար ի Թագա-
» ւորէն բուսոց և Ճակնդեղ՝ ի վերայ Բանջարոց, իբրեւ զտեսող յամարայնի՝ ի
» ի կերակուր մարդկան ». որոյ նախանձելով ուրիշ բանջարեղէնք՝ սկսան շա-
րախօսել, « եթէ սաստիկ ամենեւին է և գոշող որովայնի ». բայց Թագաւորն ոչ
միայն չի լսեց անոնց՝ այլ և պատժեց: Իրաւունք ունի եղեր Թագաւորն
այն, մանաւանդ Թէ Թագաւորեցընող առակախօս վարդապետ մեր, գուցէ ծա-
ծուկ գուշակութեամբ մի, որ մեր օրերուս յայտնուեցաւ. այսինքն է Ճակնդեղի
գիրուկ երկայն իլիկաձեւ տակին՝ շաքարային հարուստ նիւթ ունենալն և ընծայելն,
որով այդոր հին Թագին վրայ՝ նոր և աւելի Թանկ պսակ մ'աւելցաւ, տնտե-
սութեան և առեւտրի մէջ. և մշակութիւնն շատ տարածեցաւ: Քանի մի տեսա-
կացը մէջ յիշուին ի Հայս B. Trigina, B. Lonatogona, B. Macrorrhiza. այս ետքի
տեսակս Հերայ (Խոյ) կողմերում:

1839. Ճակնըոյս.

Նոր բուռհաւաք մի վերոյ և ներքոյ գրեալներէն զատ գրէ այսպէս, իբր տար-
բեր բուսեղէն:

1840. Ճակնդեղուկ.

Ըստ վաստակոց գրոց (Յ), « Վայրի Ճակնդեղուկ, և Թէ ոչ՝ ընտանի՝ ծեծեա,
» և զլուրն ընդ բերանն խմցո », շողհար ոչխարի: — Լ. Beta Sylvestris.

1841. Ճակնխոտ.

Նոյն թէ տարրեր է ի վերոյգրելոցն. — չէ յայտ. նշանակած է բառհաւաք մի:

1842. Ճաղճողուկ.

Շէհրիմանեանն կամ ուրիշ մի վկայած է այս անուան զոյգ Լ. Gnaphalium, Փ. Gnaphale, Ար. Ֆիզզիյա خنفسه ֆիզիես, ըստ Ամիրո. « ինքն խոտ մի է » որ մանր ճղեր կ'ունենայ, և տերեւն նման է Մարզանկոչին տերեւին. և « ի վերայ սպիտակ զեզ զաղապ կու լինի, և կակուղ կու լինի. և թէ ծեծեն » և սպեղանի առնեն և նոր խոցերուն վերայ ձգեն, օգտէ, և զարիւնն կտրէ, » և միան բուսցընէ. և թէ զտերեւն Սերկելի շարապով խմեն, օգտէ աղեց գա. » ներուն և լուծման »: — Ըստ Պէյթարայ Ար. կոչի եւս ֆարիֆա, خنفسه.

— Լ. անունն, ըստ Յ. և Հ. յիշեցընէ զՎանեֆ, որովհետեւ բոյսն և մանաւանդ ծաղիկն՝ որ աստղատեսակ է, ճերմակ և կակուղ ասուի նմանի, փոքրիկ բոյս մ'է, նուրբ և երկայնկուկ տերեւներով, եզերքն սղոցակերպ. զլիսուոր և շատ յարդի տեսակն կոչուի Գ. Leontopodium, որ ըսել է Աբիւժոտն, նմանութեամբ ինչ, բայց և աստղակերպ ըլլալով կոչուի և Filago stellata. աւելի յարդի է այն՝ որոյ ծաղկան վրայ արծաթագոյն թանձր փայլուն թեփեր կան: Քարոտ լերանց վրայ գտուին յԱլպեայս, անոր համար կոչուի Փ. Immortelle կամ Perlière des Alpes կամ des neiges. բայց աւելի հռչակեալ անունն է գերմաներէն, Edelweiss (իբր Սպիտակափառ): Այսոր մեծ փափազանք ամեն տարի փնտաելու կ'երթան, մանաւանդ կանայք, և հազուադիւր ըլլալով թանկ վաճառուի, զարդի և յիշատակի համար, և անթառամ պահուի: Իտալիոյ և Փռանկաց քանի մի լեռնակողմերում այլ գտուի, բայց ի Չուիցերի գտուածն աւելի յարդի է: Մեր երկրին ընդարձակ լեռնոտ կողմերէն այլ սպասուէր այս բոյս. նորբոս, Տրէշվիտ Տուկլաս անգղիացին որ Աովկասու շատ լեռներ ելեր և զՄասիս այլ քններ է, ինչուան հիմայ կ'ըսէ այս Աբիւժոտն Ճաղճողուկն չէ հանդիպուած ի բնիկն Աովկաս, բայց Ռատտէ՝ բնակ գերմանացին Տֆոլիսու՝ որ շատ հետազօտութիւն ըրած է Աովկասու այլ եւ այլ կողմանց և Հայոց, ըսեր է իրեն, որ ինքն գտեր է զուիցերական տեսակէն՝ Աարօի մօտ



Ճաղճողուկ.

Ճաղճողուկն չէ հանդիպուած ի բնիկն Աովկաս, բայց Ռատտէ՝ բնակ գերմանացին Տֆոլիսու՝ որ շատ հետազօտութիւն ըրած է Աովկասու այլ եւ այլ կողմանց և Հայոց, ըսեր է իրեն, որ ինքն գտեր է զուիցերական տեսակէն՝ Աարօի մօտ

հայկական լեռանց վրայ (!)։ Հայ հողու, եթէ ներուի ըսել, պարծանք մ'այլ աւելցաւ. և սիրողաց՝ խնդրելի մ'այլ ի հայրենիս մեր, ուր կրնան բանասէրք՝ այս սպիտակ և փափուկ ծաղիկը հարսնացընել իրենց ծաղկանց թագաւորին՝ Աղբերաց արեան. փափազելի է որ ստուգուեր ի տեղացեաց ընկ անունն այլ մինչև որ այն յայտնուի՝ մենք կոչեմք Ճադձղուի Հայկական։ Պոնտացի բանասէր մի ըսեր է, թէ Բանփոռ իստ կոչուի. բայց թողումք քննութեան, որ չկարծուի չփոթել ընդ Բամբակ խոտի (թ. 399), թէ և իրարու չեն նմանիր։

1843. Ճամբու խոտիկ.

Անունն յայտնէ Հասարակ գետնի խոտ մ'ըլլալ, ձուռձեւ մանր, թանձր և խիտ տերեւներով, Տօսախի տերեւոց նման, այլ աւելի նեղկուկ և փոքրիկ։

1844. Ճանակ. — Տես Կղնուխ և Անտազ։

1845. Ճանբակ.

Ս. Գրոց մէջ (Սիրաք, ԻԳ, 30.) յիշուի Ճանբակ խնկոց, որոյ տեղ ուրիշ թարգմանութեան մէջ Չմուսս դրուած է. հաւանօրէն՝ է հոտուէտ նիւթոց զուգուած մի. Ար. Գարշիչան բոյն (թ. 565)։ Յիշեմք Հնդկաց Չամբակտ անուամբ բոյսը, *Michelia Champaka* ըստ գիտնոց, զոր շատ զովարանեն՝ ոսկեգոյն դեղեցկութեան և անուշահոտութեանն համար։

1846. * Ճանդալ.

Հնդկերէն անուն է (Ճանքաան), նոյնպէս կոչուի և յօտար լեզուս. Լ. *Santatum*, Փ. *Sandal*. Թ. Սանտալ ազամի, Ար. Սանտալ, *سندال*. « Ինքն փայտ է. եւ » բեք ցեղ լինի, կարմիր և սպիտակ և դեղին. լուսն այն է որ մուղասիր (բաւ » բակ ?) լինի. . թէ անուն աւնես, զակուայքն ամբացընէ. և թէ ծխես՝ օգտէ » նուզլային և սաք գլխացաւութեան՝ օծելով », եւ այլն. — Հնդկաստանի և կղզեացն ծառ կամ թուփ մ'է, որուն կեղեւին սակ որդեր կենան և կրծեն գեղին փայտը, որ զօրաւոր հոտ ունի և կծու համ. ուրիշ սաք երկիրներում այլ խնամքով մշակուի։

1847. Ճանդան.

Յիշուի յաշխարհագր. Խորենացւոյ, և ի Հնդկիս. գուցէ ըլլայ վերոյգրեալն։

1848. Ճանդարի.

Սօսի ծառն է Պ. լեզուաւ, յիշուած է ի Մեկն. Մննդոց գրոց (Եղիշէի?)։

1. No Edelweiss (*Leontopodium Gnaphalium*) has yet been met with in the Caucasus proper, but D.r Radde told me he had found the Swiss species in the Armenian ranges near Kars. — Աշխարհագրական Օրագրք Լոնտոնի. 1888, էջ. 697։

1849. Ճանդի. Ճանդուկ

Տես ինչ որ ըսած է Մխ. Գոշ՝ Ճանդիի և նմանակից Խաբուի համար (Թ. 1146). հաւանօրէն է Ճանդուկ, որ հիմայ այլ լսուի և Թուի Ստեպղին վայրի:

1850. Ճանկ. Թամիկ.

Այսպէս անուանեն ի Հայս հռչակեալ Երփոյլի վարդ կոչուած բոյսը. ետքի անունս առնուած է ի Ս. Գրոց (Սիրաք, ԽԻ, 18). բայց ոչ Վարդի նմանութիւն կամ յատկութիւն մի կ'ընծայուի իրեն, այլ զարմանալի և անտեղի բան մի: Ըստ աւանդութեան և ըստ գիտնոց՝ կոչուի Anastacia Hieroobuntina, Փ. Jéruse (համառօտութիւն Rose de Jéricho բառից). փորրիկ մոխրագոյն տերեւներով հասարակ բոյս մ'է, Պաղեստինու և Արաբիոյ և Սիւէզի կողմերում. վարէն ի վեր կարճ ճղեր կ'արձըկէ. վերի ծայրերն բերեն կարմիր ծաղիկ ու պտուղ, բայց հասուննալու ատեն ի գետին կու ճապղին. հունան ձեւանալէն ետեւ՝ ճղերն կու ցամքին և զնտակի պէս կծկելով՝ կու փրթին, և հովահար անապատին մէջ քարշ կու գան. երբ ջրի մէջ ինկնան կամ անձրեւէ Թրլուին՝ զնտիկներն կու Թուլնան կու բացուին, հունտերն կու Թափին և նոր բոյսեր կ'ենեն: Ոմանք այս ձկծիկները կու ժողվեն և ջրի մէջ ձգելով պարզիլ կու տան. երբ ցամքեցընեն՝ նորէն կու կծկին: Դայեակք և տղաբերք համարին՝ Թէ երկանց ժամանակ երբ զայն ձգեն ի ջուր և բացուի՝ կու դիւրանայ ծնունդն. անոր համար ջնան բերել տալ ի Պաղեստինէ կամ զնե՛լ Թէ գտուի ծախող: Ոմանք բարեպաշտ կամ Թերապաշտ մտք (Ս. կոյս) Մարեմայ քարիկ կոչեն զայս յԵւրոպա. գերմ. Maria's Hand.

Ճանկ գոմեց. — Տես Գորեց ձանկ, Գօտեաց ձանկ:

1851. Ճանկիկ.

Այսպէս կոչեն Մշեցիք, Թերեւս և այլք՝ Թ. Հանըմ պտուղնոր կամ ելի կամ փերլիսի կոչած՝ բարակուկ երկայն և պատաստուկ ճղերով բոյսը, որոյ ծաղկներն փունջ փունջ երկայն և մատի կամ ճանկի ձեւ երեւած է արեւելեաց. անոյշ հատոյն համար այլ տիկնայց պատշանեալ. կարմրիկ տափակ հատեր բերէ իբրեւ պտուղ: — Լ. Caprifolius, Փ. Chevreuille կոչուի, իբրեւ այժուց ախորժելի: Ար. և Պ. այլեւայլ խորհրդաւոր անուններ ունի. ըստ Պէլթարայ, مطر شحار, (Մատհար-շահար) որ է Անտառաց մայր, سلطان الجبل, (Սոլթան էլ-ձէպէլ), Լերանց Թագաւոր, سحر الطحال, զոր Ամիրտ. գրէ Շոմար ըլ-տեղ (Թհալ), և Սիսղանին ծառն է, կ'ըսէ, բայց իր բառագրոց կարգին մէջ չի յիշեր այս հետաքննական անունը: Տես Սիսի: — Ճորոխայ հովտին այլ եւ այլ կողմերում տեսնուած է այս բոյսս, և ինչուան մեր երկրին հարաւային սահմանածայրն այլ ի Զուլամերկ:

1852. Ճանկի տեղ ?

Նոր բժշկարան մի պատուիրէ դալկան դեղ տալ զայս՝ Մորի հետ եփելով:

1853. Ճանկխոտ.

Որ և Գեանի Փիճի ըստ Յ. և Լ. անուանն Obamopitys. որոյ որպիսութիւնն բացատրուած է Կեննարար բառի ներքեւ. Թ. 1391:

1854. Ճանկուլ. Զոնջուլ.

Տեսակ մի մեծկակ Սալորոյ, ըստ Ամիրա. Դամասկեան Սալորն է. վասն զի « Ճաննալ ի Դամասկոս շատ լինի, կ'ըսէ. հով է և դէճ, և զքնութիւնն կու » կակղացընէ »:

1855. Ճաննալ.

Տես վերոյգրեալ Թիւը.

1856. Ճաշկի կամ Ճաշգին ճաղիկ.

Կըրնայ բուն անունն Ճաշակ կամ Ճաշիկ ըլլալ, և սեռական հոլովով յիշէ Սա. լաձորցին.

« Ճաշկին ծաղիկն է խիտ հոտով, դեղին է նման Զաֆրանայն »:

1857. Ճապկի ճառ.

Յիշուի ի կողմանս Գանձակայ (Մշակ, ժԲ, 128. — Մեղու, ԻԲ, 833), այլ և ի Զէյթուն Մարաշայ:

1858. Ճապուռ.

Գալիենոսի բառից մէջ գրուած կայ՝ « Ո՞րտո՞ւ Ճապուռ. հին Բժշկարանն կ'ըսէ « Գրուկէի Զաման, որ է Ճապուռն »: Ամիրա. այլ, « Քամուռն, Զամանն » է, շատ ազգ է. աղէկն Գրմանին ». դարձեալ կ'ըսէ, « Երկու ազգ է, մէկն » վայրի և մէկն պաղչայի »: Ուրիշ տեղ գրէ. « Քարասիա. մէկ ամուսնն և մէկ » վայրի. և լուսն այն է որ ամվոց լինի և նոր լինի.. ինքն Չերայի բրտուիկն է, » որ է Հոսնցի Զաման » Ար. է Քարասիա, Լճի՝ Լ. Օարի. — Վաստակոց գիրքն (22) կ'ըսէ. « Եթէ զք ասնու զՃապուռն և լեսէ, և շող լուր ածէ ի » վերայ և ի տունն ցանէ, լուն սատակի առ հասարակ »:

1859. Ճապրապի.

Յիշուած է ի Խոտուձուր և ի Մուշ, իբրև մեծկակ վայրի ծառ մի. բայց Բժշկարանի մի մէջ ուր յիշուած են քանի մի բանջարեղէնք (Եղրդակ, Հնդուպէ, Ռազիան, Փարիօզան), ասոնց մէկուն համար տարբեր գրչով գրուած է՝ « որ է » Ճապրապին »:

1860. Ճատէ. Ճօտէ. — Տես Խնկածաղիկ:

1861. Ճատվար. — Տես Թուշի Լոսնի:

* Ճարասիա. — Տես Կեռաս:

1862. Ճարասիոն ?

Վաստ. գիրքն (86) ձիւ. Թարացաւի դեղ գրէ. « Առ ի Ճարասիոն խոտէ. և լեւեա » սակաւ մի աղ և հոռոմ ձէթ և քաղցր գինի, եւ այլն, եւ ի բերանն գիր »: Անշուշտ Յ. անուն է, բայց ստոյգն և որպիսութիւնն ճննելի:

1863. Ճարնատ.

Վայրի Հազարն է. Ամիրտ. Ար. Տարչադոշ բառի ներքեւ գրէ, « Ար է Եղըր- » դակն, և այլ ոք Վայրի Հազար ասեն. լաւն այն է որ մեծ լինի. տերեւն՝ զմանն » յերեսացն կու տանի, և կաթն՝ զախցն սպիտակն կու տանի. և զխառտոն այլ » կու տանի, և թէ սպեղանի առնես՝ օգտէ կարճահարին »: — Տես և Հազար Վայրի: — Լ. Cichorium Endivia.

1864. Ճարնատուկ.

Ըստ ոմանց նոյն է ընդ Ճարնատի. բայց ոմանք այլ (Մանան. եր. 449. — Աթա- նաս. եր. 85) խոտ է, կ'ըսեն կապոյտ ծաղկներով. գուցէ քիչ տարբերութեամբ նոյն բանջարեղէնն է, որ և Լ. այլ զատ անուամբ կոչուի Chondrilla, ֆ. Chondrillo, զոր նոյնպէս գրէ և Պէյթար՝ Խոնտրիլի, خندريل. — Օ. Iuncea ըսուած տե- սակն և իրմէ քիչ տարբերն ճանչցուած են յարեւմտեան Հայս:

1865. Ճարնիր. Ճարնրուկ. Ճրնրուկ.

« Վայրի Նաան ծաղիկ » է, ըստ Բժշկարանի միոյ: Դարձեալ Ճարնիր՝ Ար. جرجير, է Ասորեկ. տես թ. 168: Ամիրտ այլ գրէ. « Ինքն հունա է կարմիր, և » յիրար կիպ է, մեծ կտորնի է, աղէկն նորն կու պիտի. Ասէ Հաննան, թէ ինքն » զկերակուրն մարսել տայ... և երբ զինքն ուտէ մարգ՝ զգլուխն ցաւցընէ, ար- » ծան է զինքդ չազրին հետ ուտել և հետ Հնդկալէին և հետ Անմեակին »: Պէյթար այլ յիշէ այս հունտերը, զոր և աղալով և թրելով կու շորցընեն, կ'ըսէ, և համեմի տեղ ի գործ ածեն: Հասարակ կամ ածուոց տեսակն, Erna sativa, և Կապպադովկիական ըսուածն՝ E. Cappadocica նշանակուած են ի Հայս:

Կամարկապցին յիշէ և Պրդէ Ճարնիր մի, և ուրիշ նիւթերու հետ՝ ուժովցընելու դեղ կարգէ: Որոշ այսպէս գրուած է (և ընդհանրապէս ուղղագիր է գիրքն). Թէ ոչ՝ կըրնար կարծուիլ թէ պիտի ըլլար Պրդէ-Ճարնիր, ինչպէս առանձինն գրուի ի բաւգիրս Ամիրտ. որ և կ'ըսէ. թէ « Պ. Թուխմի Քիզիզ կ'ասեն, և ի Շիրազ՝ Քու- » մազ կ'ասեն. և լաւն այն է որ ածուոց լինի... Լուազին ասացել է թէ իր փոխանն » իր չափով Աւվոյան է, և ասացած է թէ Թուտարին է (Չագխաս). և Մանուլն ? » (Մանուլ ?) ասացեալ է թէ Քուրասին (Կարաս) հունտն է. և Դեոսկորիտէսն ա- » սացել է թէ իր փոխանն Մաննեխն է »:

1866. Ճարտրուկ. Ճարտարուկ.

Ըստ Փալինեսոսի բառից Պետոզդիկոն, այսինքն Petrocallis (Քարագեղ ?), որ է Խաչակերպից ցեղէն ազգ մի կոտեմի, Լ. Draba, ֆ. Dravo. և յատկապէս Dravo

des Pyrénées. ընդհանուր այսոր նմանեաց Արեւելեան Կոտեմ կ'ըսեն օմանք: Ռոզքեանն Apium palustris թարգմանէ զՃարտրուկ, որ է Ջրային Լախուր, և զայս թարգմանէ Ջրեչախոտ: Կարմիր գեղեցիկ ծաղիկ ունի Ճարտրուկն, որոյ յատուկ մէկ տեսակն Այրարատեան անուանած է բուսաբնինն P. Araratice:

1867. Ճաւիկ ?

Քեղաքունեաց կողմերու բուսոց մէջ յիշուած է: (Տէր Աւետիք, 45):

1868. Ճետոնն. — Այսպէս կոչուի տեսակ մի Տանձի:

1869. Ճերետ.

Քալիենոսի բառից մէջ յիշուի « Մահակոնիա, կապոյտ Ճերետի փայլ »: — Բուսարանք Հիմայ Mahagoni անուամբ ճանչնան Հասարակօրէն Cedrela կոչուած բարձր ծառեր, որ Ասիոյ, Ամերիկոյ և Աւստրալիոյ տաք կողմերում գտուին, և փայտն քանդակելու գործածուի. ունի և հոտաւէտ կամ համեմային մասն. բայց չի կարծուիր թէ սա ըլլայ Հին բառից գրուածն, այլ թերեւս ասորերէն Ճերետ, որ է Ազատդրախան. թ. 10:

1870. Ճըթտանն.

Վայրի խոտեղէն մի երկայն ճիւղերով, և ի ծայրն դատարկ երկայն կլոր մաշկով աղիտակ ծաղկով, համանման (գուցէ և նոյն Ճթուկն). ծաղկին բերանը գոցելով՝ երբ փամփուշտի պէս զարնուի պինդ նիւթոյ մի, ճայթման ձայն հանելով պատուի. ասկէ առած է անունը:

1871. Ճըռ Տանծի.

Տեսակ մի Տանձ վայրի:

1872. Ճթուկ.

Վայրենի բոյս մի անպիտան, անունէն գուշակելով: (Մանան. եր. 469):

1873. Ճիլ.

Բարակ Եղէգն, կամ Կնիւն:

1874. Ճիլուռ.

Ուռենի նշանակէ ռամկօրէն:

1875. Ճիւանն.

Բանջարեղէն մի, ծանօթ ի Խոտուջուր և ի Պոնտոս:

Ճիշնարութ.

Այլալեալ անուն ճշնարտի:

1876. Ճլակու.

Այսպէս կոչուի ձմեռուան համար դալար պահուած Սօխն:

1877. Ճլելիկ.

Ըստ բացատրութեան ծանօթի՝ *L. Silene*, *Φ. Silénée* կոչուածն է. որ *Շահա-գրամաձեւ բուսոց ցեղէն է (Caryophyllacées)*, ազգակից *Համասպրամի. և անունն աննուած է հեթանոսաց մեծափոր Սիլենոս շատուածէն, որովհետեւ ծաղկին բաժակն կըր և ուռած է, և մէկ տեսակն յատկապէս ուռած կոչուի, S. Inflata, և ուտելի է. ուրիշ շատ տեսակներ ունի՝ որոց շատերն տեսնուած են ի Հայս, նա և յատուկ անուամբք երկրին. ինչպէս, Հայկականն *S. Armena*, ի Կարին, Բաբերդ. — Սիսականն, *S. Sisianica* ի Սիսիան. — Կապպարովկիական *S. Cappadocica* ի Բաբերդ. — Արգեսական *S. Argæa* յԱրճիաշ. — Կեսարիական *S. Cesarea* ի Կեսարիա. — Գիշերաժաղիկ *S. Noctiflora* ի Թորթում. — Խժռոն *S. Viscosa*, ի Թորթում, Բաբերդ, Կովկաս. — Սեղճ *Compacta*, յԱրևմտ. Հայք, Մարաշ, — Յաժուն *S. Humilis*, ի Մանախ, Քէօփրիւ պաշի — *S. Leyseroides*, ի Նախճաւան. — *S. Ampullata*, ի Խարբերդ. — *S. Olympica* ի Պինկէօլ, Կարին, Գարապաղ. — *S. Dianthoides*, ի Կարին, Բաբերդ, Գեղաբունիք, Մանախ. — *S. Cephalantha* (Մաղկազուխ) յԱժուպտուկ լ. Կարնոյ. — *S. Aucheriana*, ի Վանայ կողմանս. — *S. Subulata*, ի Բաբերդ, Պարխար, Մանախ. — *S. Pungens*, (Խայթող) ի Թէքտաղ. — *S. Commutata* ի Պինկէօլ. — *S. Tuberala*, ի Բաբերդ. — *S. Laxa* ի Պինկէօլ. *S. Longiflora* (Երկայնածաղիկ) ի Բաբերդ, Գարապաղ. — *S. Chlorifolia*, ի Բաբերդ *S. Bupleuroïdes*, ի Կարին. — *S. Caramanica*, ի Կարին, Պինկէօլ. — *S. Peduncularis* յԱլիար Սիւնեաց. — *S. Eremetica* (Որժացուցիչ) ի Հեր (Խոյ), և այլն: — Մանանայ գրոց հեղինակն (եր. 449) յիշէ ճիւղի բոյս մի. և կ'ըսէ, « Մանր և » կըր հատիկ դառն, որ իբրեւ որոմն գոյանայ Յորենոյ հետ »:*

1878. Ճլգորուկ.

Եղեգանց նման խոտեղէն մ'է. արմատն կարմիր, և անոյշ կոճղէզներ ունի. թէ և որձայն կ'ըսուի լեղի. ոմանք կարծեր են Սյախպ. այլ թուի *L. Lappa Major* ըսուածն. տես Կուստուկ (թ. 1839). ըստ ոմանց թ. Թուրունգա օրի կոչուի:

1879. Ճխան.

Ռոշքեանն գրէ. « Խոտ որ ի հախին տեղիս բուսանի. *Silva* ». փոխանակ գրելու *Silva*, որ իրային Մամուռ է, քառակուսի բլլաւոր խիտ խողովակաց նման. որոց մէջ գունաւոր հիւթ մի գոյանայ. Մովային ճխանն հիւսիային ծովեզերաց աղքատ բնակչաց (Նորուեգաց, Սկովտաց), ուտելիք կ'ըլլայ:

1880. Ճկնաւար ?

Եթէ ստոյգ այսպէս երգած է Սալաձորցին,

« Բարձր լեռներ կու բուսնի Զաֆրանն հետ Ճկնաւարուն ».

ուրիշ օրինակք գրած են Ճգնաւոր կամ Կնքաւոր: — Բառհաւաք մ'այլ յիշէ Ճգնակիր:

1881. Ճղանփիկ.

Եղնալեզուն է, ըստ Կարնեցոց:

1882. Ճղանի.

Արեւելեան Հայոց և Աղուանից սահմանակից վայրի ծառոց հետ յիշուի: (Բար. խուզար. 84):

1883. Ճղեմն.

Նարեկայ Լուծմանց մէջ (18) գրուած է. « Կնիւն՝ Ճղեմն է, որ ի հեղեղաստ » բուսանի, մանր ու բոլոր ճիւղն »: — Բժշկարան մի մագթափութեան դեղ գրէ « Դալար Ճղեման Լուր »: զոր ուրիշ Բժշկարան մի Չղերման գրած է: — Ս. Բենեդիկտոսի Վանորէից մէկուն կանոնաց մէջ (զոր Վրլընջէր անուամբ մէկն գրած է), և ի վաղուց Թարգմանուեր է հայերէն, կ'ըսուի, թէ տօնական հանդիսի ատեն՝ « Սփռեն... անուշահոտ տերեւ... Մրտենի կամ Կապայ կամ Ճղեմն »: առջիններն դայար՝ միանգամայն և հոտաւէտ են, հարկ է որ այնպէս ըլլայ և Ճղեմն. ուրեմն Հոտաւոր Եղէգն ըսուածն է. Calamus odorans, կամ Acorus Calamus, Փ. Acore odorant. որ սուր՝ բայց հաճոյական հոտ ունի, համն լեղի և համեմային, մտանէ ի դեղորայս:

1884. Ճղուլուր. Ճողուլուր. Ճղուլրի.

Այսպէս կոչեն յարեւելեան Հայս զԸնկուզենին, և յատկապէս կոչտ կամ կոճղ ունեցող ծառը, զոր կտրելով՝ բարակ և ազնիւ ատաղձեղէն կահ կամ դրուագներ շինեն. և նոր ատեններս վաճառու շահարեր նիւթ մի եղաւ, բայց և վնասակար ծառոց (1):

1885. Ճղուկ.

Յիշէ նոր բառհաւաք մի, առանց բացատրելու:

1886. Ճնիման. Ճջեման.

Բժշկարան մի գրէ դեղ զլիսոյ և մօրուաց, « Ա՛ն ի խոտիս (Աւելի տակի) » ջրէն և Ճնիման Լուրն, և օժէ զգլուխն »: — Բառգիրք մ'այլ գրէ, « Ակիդաս ? » Ճջեման »: — Ռոջքեանն՝ Ըլաց դեղ խոտ մի է կ'ըսէ, և Լ. Poterium. սա շ. Երեանակ կոչուածն է, ինչպէս յիշուած է ի կարգին:

1887. Ճմի խոտ.

Հասարակ խոտ մի, կ'ըսուի, որ ի սկիզբն գարնան կ'երեւի:

1888. Ճմ'նդուկ.

Գալիենոսի բառից մէջ գրուած է այսոր զուգանիշ Փրիկ կամ Փրիկեն ? նոյնպէս զոյգ գրէ և Սպլամ. ինչպէս և ի շալակն Անգիտաց անպէտի գրուի. « Ա. » պլամ՝ որ է Ճմ'նդուկ », բայց ոչ մէկին և ոչ մէկայլին վրայ խօսի. Պէյթար պլ չի յիշեր զայս: Եթէ Փրիկն Phrygia (Փուրգիա) է՝ նշանակէ զՏերեւիակ, Centaurea.

1. Այս պաշտպ կամ ծառի անուան և հոգաբիւ (պրծիւ) բայի մէջ արդեօք կոճ յարեւելու թիւն ինչ:

1889. Ճնարակ կամ Զնարակ.

Գայլիննոսի բառք այսոր գուգանիչ գրեն Սերետիադիս, որ Թուր Շէրիս; տե-
սակ մի Եղիճոյ: — Դարձեալ, Ճնարակ կամ Ճնիրակ է Սանդարակ կոչուած
խէժն, Sandaraco, տեսակ մի կոնաձեւ ծառոյ՝ որ կոչի Լ. Thuja, Փ. Thua.
Ամիրո. ըստ Պէյթարայ գրէ « Սանդարու ساندرا, ինքն գեղին զամին է՝
» որ ի քահրուպար կու նմանի, և յստակ է. էգ և որձ այլ կու լինի:.. Իպտ.
» ասէ, Թէ ի Սանդարուին և ի քահրուպարին մէջն բաժանումն այս է, որ Թէ
» զՍանդարուն ի կրակն ձգես՝ պիղծ հոտ ելանէ, և քահրուպարն այսպէս շէ »:
Մեր միջին դարուց գրողաց մէկն Քարգառիկ կաշէ զՃնարակն:

1890. * Ճնդիան.

Բժշկարան մի գրէ. « Ա՛ւ զՃնդիանի տերեւն, որ է Երնջնանի տերեւն », և այլն. — Տես զայս և Բոք: Լ. բառն է Gentiana.

1891. Ճննդկարլիթ. Ճննդկահացիկ.

Մեծ և Փոքր տեսակք զանազանին. Մեծն հասարակ Մոլոշն է, ըստ ոմանց
և Տուլա. Փոքրն Կայլթաթն է, Alohimilla. Տես Թիւ 413:

1892. Ճննդկալեզու.

Տես Ձագի լեզու: Հին Բժշկը. գրէ. « Ճննդկի լեզու՝ Հացի ծառի ունդն է ».
ուրիշ տեղ այլ. « Ճննդկու լեզու, որ ի ծառերն լինի զէգ Սոսուպար »:

1893. Ճննդկահաւկիթ.

Խոտեղէն մի, յիշուած ի կողմանս Սերաստիոյ. (Պատկեր, Գ, 232):

1894. Ճննդկորեկ.

Բարակ երկայն սէգ մի, տեպոյն նմանեցուած կորեկի:

1895. Ճննդուան. Ճննդապաշար. Ճննդուպաշրուկ.

Ըստ ոմանց Ճննդկարլիթն է. ըստ այլոց (Մանան. 449) մանրիկ և կլորիկ տե-
րեւօք խոտ մի է:

1896. Ճննդու հինայ.

Ինչպէս ըլլալը տեղեկանալու է ի Խոտուլրեցուց:

1897. Ճննդպաշիկ. — Տես Ճննդիարլիթ:

1898. Ճշդարենի.

Հաւանօրէն է Նշտարենին. տես զայս:

1899. Ճշնարօտ. Ճշնարամ.

Տես Խաչափայտ, գուցէ ուրիշ տեսակ խոտեղէն մ'այլ ըլլայ այսպէս կոչուած:

1900. Ճշնարօտ Ճերմակ կամ Օպիտակ.

Այս ի Բժշկարանս և յԱղթարս դիւահարաց դեղ գրուի. « Ա՛ն զՍպիւս տակ Ճշնարօտին տակն, և երեք բաժին արա. զմէկ բաժինն ուտել տուր, և զմիւսն՝ ուրբաթ օրն ծխէ ի ներքեւն, որ մուխն ի յինքն անցանի, և զմիւս բա. ի ծինն յինքն պահէ, ազատի »:

Ճողոպուր. — Տես Ճիւպոս:

1901. Ճոմեր.

Նման Հանարի հասկաւոր ընդեղէն, որոյ տակն է կոծղէզ մի, ուտելի:

1902. Ճոն.

Ըստ բժշկական բառագրոց է Թ. Զատար, Ար. Տոսարս կամ Տոսար Կապ, ինչպէս գրէ Ամիրտ, « որ Թ. Զատար կ'ասէ, և Հ. Ճոն ասեն. լան » այն է որ սեւ լինի ». ըստ այսմ վերոյիշեալ Ճոմերին նման կամ նոյն է. բայց կ'աւելցընէ. « Ատ Պ. Թէ Պ. Զոն կ'ասէ. և ինքն ի Յորենին ի ոմէլն կու բուսնի ». ըստ այսմ կ'ըլլայ Արոմն, կամ Աթակն՝ Aegilops, ինչպէս ընդունի և փոսնկ Թարգմանն Պէթարայ. և կամ Լ. Spelta, Փ. Եթատրո, կոչուածն, որ և Յորենի տեսակ համարուի. Spelta Triticeus. — Գուցէ այս կամ այսպիսի ըլլայ Բժշկարանի մի մէջ ստուգելի գրուածն, « Նաղղէ » (զդեղն) և արա զերդ Սուլուի? հաց, որ է Ճոն »:

Ճուան. — Տես Ճիւսան:

1903. Ճուարս.

Անուն տեսակ մի Խաղողի:

1904. Ճուլինար. — Տես Նոսն ծաղիկ:

1905. Ճուլուզ.

Վայրի Նշենի ըսուած է. ըսողն կամ գրողն՝ անծանօթ:

Ճոն.

1906. Ճուլպան. Ճուլպանտ.

Ամիրտ. ի Բաագիրսն կ'ըսէ. « Որ է Գրսանայ, որ է Քուշնայ, որ է Պուս. Նախն »: Վաստակոց գիրքն (ԾԲ) Բակլայի մշակութեան կամ ցանելուն վրայ



խօսելով՝ « Ճուլպանն այլ այդու խրատովդ առնելի է », կ'ըսէ. Պէյթար այս բառով جلیان ստորագրէ ընդեղէն մի՝ Մաչի տեսակ. Լ. Lathyrus, Փ. Gesso-թ. Պոռչուգ՝ Վայրի Մաչ կամ Ուռուն նշանակէ. իսկ Քուշնայն տեսի կարգին. Շատ տեսակք կան Ճուլպանի, յորոց մեր երկրին մէջ նշանակածք են յեւրոպացի գիտնոց՝ L. Tuberosus, L. Rotundifolius, L. Sphæricus, L. Roseus ի Պինկէօլ. — L. Choranthus, ի Կարին, Մուշ. Մարաշ, L. Vinealis ի Խարրերդ. L. Pratensis, L. Incurvus. L. Angulatus, եւ այլն:

1907. Ճուլպնտիկ.

Այս այլ Ճուլպանի տեսակներէն մէկն է, վասն զի Կամարկապցին Քուշնայի հա-մար կ'ըսէ. « Ինքն Հայոց Ճուլպանտն է »: — Յիչէ զայս և նոր բառահաւաք մի:

1908. Ճուկի.

Յիշուած է, բայց ուր և ինչպէս, անծանօթ է ինձ:

1909. Ճուլմնում.

Ամիրտ. գրէ այս անուամբ. « Ոմանք ասոր Շաղախուլ ասեն, և ոմանք Մպխտակ » Պահեանկայ ասեն... Ասէ Պտ. Թէ ինքն տակ է՝ որ ի Շաղախուլի Մարի կու նը-» մանի գունովն. և ասցած է՝ Թէ յոսկուն տեղն կու բուսնի, և ոսկի տակով ի » գետնէն կու քաղեն. և ի Չին այս խոտս խիստ պատուական է. և ասացած է, » Թէ ի Թուրքիստան կու լինի ինքս, և սորա կ'ասեն Ճումնումի խիրայի. և օգտէ » զինաւասին և խնախին և հազին, և զանձն զիրացընէ »: Պէյթար՝ գրէ Ճիմնում բառով, և տակերը նմանցընէ Շաղախուլի, համն անոյշ և լեղեխաան կ'ըսէ, քիչ մ'այլ եղլի, նմանի եւս Կոճապղպեղի: Թարգմանն (Լըզէր) Ճումնումի անունը չէ Թարգմանած, Թուի Թէ անծանօթ է իրեն:

1910. Ճուշ.

Ըստ Վիլլորդի է կոստղարեր կաշուն հիւթ կամ խէժ բերող ծառն. Լ. Visoum, Փ. Gui. Ռ. Omela. Ար. Տիպիս خاد կամ قباد, « որ Թ. Օգսու ? կու ասէ. և » ինքն միրգ-մն է որ ի Սիսեա կու նմանի. և ինքն ցեղ-մն է, և լաւն այն է որ նոր » և Թաժա լինի և դուր լինի... և ինքն չի ուտվիլ, տիմէտ կու լինի. և Թէ ուտ- » վի՝ քիչ, բայց որտին զեն կու առնէ... Իպտ. ասէ՝ Թէ լաւն այն է որ նոր լինի և » դուրսի դիէն կարմիր, և մէջն Քուռաթին գունովն լինի. և Թէ գեղին զառիկով » կամ կարմիր զառիկով խաանես, եարամազ՝ որ է պեղծ՝ ըղունկն օժես՝ հանէ և » նոր բուսցընէ »:

Ուրիշ բոյս մ'այլ ստորագրէ Ամիրտ. Տիպիս անուամբ, որ աւելի յարմարի խը-ժաբերին. « Տիպիս, որ Թ. Պալիս ասէ. և ոմանք ասեն Թէ ծառ է, մարդու » չքաք կու բուսնի, և տերեւնի ունի յերկան, և ժողոված դեղնուկ ծաղկներ ունի. » և մեղուն ի վերայ կու փակչի... Եւ ցեղ մի ալ կու լինի՝ որ փշկներ ունի, և տե- » բուեն նման է Չիթենու տերեւին... և Թէ զտերեւն փոռն և կամ ծխեն՝ ամենայն » գազանքն փախչին ի տնէն », եւ այլն:

1911. Ճուռի և ճունի.

Հայ-Աղուանից կողմանց վայրենի ծառոց մէջ յիշուին, (Մեղու, իՖ. 83).

1912. Ճուճուկ կամ ճուճուռուկ.

Խոտեղէն մի, (Եղջիւրաւոր) *Cerastium ազգէն*. Ժաղկի ձեւին նմանութեամբ
Լ. (Աստղակերպ) *Stellaria կոչուի*.

1913. Ճունեկ.

Սոխատակ մանրատերեւ բանջարեղէն մի, որ եփուած կ'ուտուի. արմատէն
այլ կարմիր հիւթ կ'եղնէ:

1914. Ճրագախոտ.

Անծանօթ է ինձ բոսս, որպէս և յիշողն, և իր գուգած անունն Լ. *Leontopotamos* ?
որ չի յիշուիր ի բուսարանութեան, գուցէ ըլլար *Leontopetalon*, որ միջին կամ
արեւելեան Ասիոյ գիմնացկուն խոտեղէն մ'է, ողկուզածեւ ծաղկօք, արմատն սա-
լանի պէս հիւթ մի ունի, և բուրգ մաքրելու ի գործ ածուի:

Ճրճրուկ. — Տես Ճարճիր:

1915. Ճփնի.

Բժշկարան մի գրած է, « Դարիսենեկն՝ հայերէն որ է Ճփնին » . Գարիենոսի
բառից մէջ այլ գրուի « Բարունաճ՝ Ճփնոյ ծաղիկ » . սակայն հինն և ուրիշ ըն-
տիր Բժշկարանք գրեն, « Ճփնի, Դֆլէ (կամ ՏՖլէ. Լազ.) Մենաստեր » . փո-
խանակ գրելոյ Ուէանտեր, *Oléandre*. Դիֆայի վրայօք արդէն գրած եմք (Թ. 591).
հօս աւելցընեմք Ճփնոյ յիշատակն. Բժշկարան մի անծանօթ բուռի անուան մի
գուգէ գայս, « Եղրուփաստ ? (տ. Եղրուփարդ) որ է Ճփնին » . վաստակոց գիրք
քանի մի անգամ յիշէ զՃփնի. ինչպէս (ձԸ) լուերու դէմ դեղ. « Արա ի մէջ
» տան փոս մի, և ծեծեա զՃփնոյն տերեւն և ի փոսոյն մէջ լից. նա ինչ լու
» կենայ՝ ամենքն անդր ժողվին » : Մկներու դէմ այլ գրէ (ձԺ) . « Պօլանացիք
» գայս փորձեալ են, որք առին զգախն Ճփնոյ դալար, և այնու խծկեցին զժա-
» կադրունան. նա մկունքն անճարացան, և գայն կերեալ սատակեցան » : —
Ճփնոյ լեղի բնութեանն համար պատուիրէ (ձՂ) մեղուանոցի մօտերէն հեռա-
ցընել գայն, ինչպէս և Օլինդրը, եւ այլն. Դարձեալ, լաւ քացախ շինելու հա-
մար. « Թէ առնուս զՃփնուոյն պտուղն որ պատուի, և իւր պտղոյն փետուրն
» երթայ և ձգես ի կարան, զքացախն անուշացուցանէ » : — Քիմիական գիրքն
այլ, « վասն փոլատ շինելոյ, պատուիրէ. Առ Ճփնու տերեւ, և դիր ի Լուրն
» թրջոց 30 օր, որ գայ զէս գորտնբուրդ, և շինէ կակուղ երկաթէ օլաք, և
» մխէ. (այնպէս ամուր լինի՝ որ) քարն ծակէ » : — Ճփնին, Լ. *Nerium*, Փ.
Oléandre. Թ. Չրգզրմ. քչՅ ընդհանրապէս տաք երկիրներ սիրէ. գտուի և
յարեւմտ, Ասիա և ի Պոնտոս, ուր՝ մեղուաց ասոնց ծաղկով շինած մեղրն
փորցաւ պատճառէ. Հնդկիք՝ Ասիական կոչեն, որ ձիասպան ըսել է. այսպէս կո-
չուի և յիտալիա, նա և իլասպան (*Amazza-Cavallo*, *Amazza-Asino*).

1916. * Ճօզպէ. Ճավզ-պուէ.

Հնդրնկուզին փարր տեսակն է. (մեծն կոչի Նարգիզակ) *Myristica officinalis*, Φ . Moscate. Ար. կոչի եււ Ճավզի կը-րիպ *الطيب* *جوج*, զոր Աժիրաւ. գրէ « Ճավզի տաշիպ. լաւն այն է որ ամուր լինի.. Թէ ուտեն և Թէ ի բերանն » պահեն՝ օգտէ լեզուին ծանրանալուն, և պուխարին այլ օգտէ, և զբերնին » համն աղէկ առնէ, և զՍտիին և զՍխտորին զհտան տանի... և զտիրան խնգաւ. » ցընէ և տաքցընէ, և զկերակուրն մարսել տայ, և զփորն կապէ, և զործկաշն կտրէ »: Տես և Չազերբուակ:

Ճօզպէին կեղեւն այլ առանձին անուամբ յիշուի, « *داسلماس* Պուսպուսայ զէտ » տերեւնի է մէկ մէկի մէջ, և Ճավզպուէին կեղեւն է. լաւն այն է՝ որ ի ըն- » զուն հասցընես՝ սրութիւն ունենայ.. գունն գեղին է.. և Թէ զինքն ի քիթն » կաթեցընեն՝ օգտէ հով զխտացաւութեան և շակիկային, և զլիցերն ուժովցընէ, » և զտիրան խնգացընէ:

Տեսակ տեսակ լինկոյզք կամ լինկուզի նմանիք Ճաւզ անուան հետ յիշուին յԱրարաց, որոց զխաւորներէն մէկն այլ է Ճաւզի Ճանդումն կամ կանգում, զոր յիշած եմք ի Թիւ 51:

1917. Ճօմտերուի.

Լսուի ի Պոնտոս, և անունն յայտնէ Φ . Tremble կոչուած Դողգոլուն կաղա-մախին, և *Populus Tremulus*, տես կողամախ:

1918. Ճօշիր. Ճաւշիր. Զուանշիր.

Պ. Ար. *جشیر*. աւելի քան զբոյսն լսուի իր հաշակուած խէժն՝ այսպէս. որոյ համար հին Բժշկարան մի կ'ըսէ. « Ճօշիրն զնոյն բնութիւն և գործ սւնի զէզ » Օշակ. լաւն այն է որ դրուցեւ գեղին լինի և ի ներքսէ սպիտակ, համն լեզի. » կտորի շոյա. հոտն խիստ. զսեւն մի տար, և ամուր քանի զՕշակն »: — Աժիրաւ. գրէ. « Ճաւշիր, որ է կաւշիր. ինքն խէժ է, զամիսն է. համն սուր. և լաւն այն » է որ Չաֆրանին գունաղն լինի և կակուղ լինի.. Ասէ զբոցս շինողն, Թէ ի » Շիրազ Ճաւշիւզ կ'ասեն. և ինքն ծառի մի խէժ է, որ ճղերն կարն է և տե- » բեւն նման է Թղի տերեւին և այլ բոլոր. և այլ ցեղ մի այլ ասացել է, Թէ » տերեւն նման է Թղենու տերեւին, և ծաղիկն դեղին է. և պտուղն կուզ կուզ » է. և զճղերն ճեղքեն երկաթով, և խէժն ելանէ... և յորժամ որ ճղէն ելանէ » խէժն՝ սպիտակ է, և յորժամ չորանայ՝ դեղին դառնայ, և յորժամ լրով արորի՝ » կաթին գունաղն լինի. և Թէ սեւզոյն լինի՝ զուզուած է.. Շէհ Ռայիս Սի- » նեայ որդին ասեր է, Թէ ես խիստ մօտեցընեմ զՕշակն (Ճօշիրի) որ փոխանն է իր » չքօքն »: — Ճօշիր խէժը բերող ծառն կոչուի և *Pastinaca opoponax*, յունարէն բառերով, որ նշանակեն Հիւթ ամենարոյս, հիւթն այլ կոչուի *Spondylium*. Ճաւշիր կամ լաւ եււ կաւշիր՝ Պ. բառ է, նշանակէ կովու կաթ. իսկ բոյսն Նարգէտի (*Verula*) ցեղէն է:

1919. Ճօտ. ճՈւտ. ճօտէ. ճօտայ.

Ար. ճԱճ. Տես Խնկածաղիկ կամ Մարեմիտտ:

1920. Մագարիկոն ?

Խամկական կոչումն Ստեպղինի և Թրթնջուկի, ի Սերաստացւոց:

1921. Մագ.

Նաան ծաղկի կամ Ճուլինարի անուն է, Ամիրտուլաթի բառագրոց մէջ յիշուած:

1922. Մագապ.

Խորեն. Աշխարհ. օրինակաց ոմանց մէջ յիշուի իբր ծաղիկ, յերջանիկն Արարիա:

1923. Մագդիկ. Մագտաքէ. Մագտաքի.

Պութ տուող ծառն է, որ հասարակօրէն Հերձին է. տես զայս: Վաստակոց գիրքն (ԳԵ) խրատէ Զիթապտուղներն ամանի մէջ դնել, « երես մի պտուղ, երես մի Ը. » ապրիան կամ Սամիթ, կամ Մագտաքէի ցախ »: Ասոր զօրութեանն համար ուրիշ տեղ (ՅԻԲ) կ'ըսէ. « Ոչխար՝ որ ի Մագտաքէի ծառին ցախն արածի՝ աղէկ » կիթ առնէ, և օգտակար և մարսական »: Իսկ Մագտաքէի ծառը տնկելու համար՝ լաւ է կ'ըսէ (ԳԻԸ) Լանջիած չաչով շատցընել քան հունտով:

1924. Մագխոտ.

Հասարակ բարակ խոտ մի:

1925. Մագկափ ? Մագկապ ?

Պութ տուող կանգառն է, ըստ Պոնտացւոց. տես կանգառ վայրի:

1926. Մագկորեակ. Մագուկ.

Ինդին և ներմակ մանրիկ կորեակ, շատ ու շատ հատիկներով: Այս Թուի Լ. *Milium tenellum* կոչուածն:

1927. Մագմագ. Մագմագիկ. Մագմագուկ. — Տես կագմերտ և Մրոռանտակ:

1928. Մագմխոտ.

Եթէ չէ Մալմն: Ամիրտ. Ար. Զուֆայրա կամ Զուֆրա (زوفرا) բառի զուգելով գրէ. « Թ. Զօրտիկ ասէ. ինքն ծառ-մն է որ ի յԱնճիտան կու նմանի, և երկու » ցեղ է, լաւն այն է որ դալար լինի. և ասցել է գրոցս յինողն՝ Թէ ինքն Թուլիակ » խարն է »: Ուրիշ օրինակ մի գրէ « Զուֆայրա. որ է Հուռան. և ինքն նման Սագապին կերպովն և զօրութիւնովն. Թուի Թէ Մագմխոտն է »: Ուրիշ տեղ յիշուած չէ այս անունս. իսկ Զուֆայրա կամ Զուֆրա ըստ փռանկ Թարգմանին՝ է Լ. *Panaces Asclepios* Դէսոկորիտեայ. Պէլթար կ'ըսէ, Թէ ասոր որձայն հովանեկանէ ծաղկափունջ մի ունի սկեզոյն. համն լեղի բայց անուշահոտ է քան զՍագապն:

Մազութ. — Տես Մագդիկ:

1929. Մազրա.

Բանջարեղէն մի. ստուգելի է, եթէ չէ սխալ գրուած (Մեղու, ԻԲ, 83):

1930. Մաթուզնի. Մաթուզի.

Վայրի պտղաբեր ծառոց ցեղէն է. ծանօթ կարմրուկ և կակղուկ պտղովն, ախորժահամ՝ մանաւանդ տղայոց. բայց Թ. անունն՝ մեծարու ընծայէ, խօսաւ եմիչի.

Л. Arbutus, Ф. Arboisier. Ռ. ЕЖОВКА. բարեխառն և ցուրտ կլիմայից տակ գտուի, փոքր ծառ է, պտղին չորս կամ հինգ կուտերն՝ ունին բնասպիտակ (albumine) նիւթ շատ, և ըստ այնմ ի բուն կու գան: — Վաստակոց գիրքն Խնձորի մշակութեան խրատուց մէջ կ'ըսէ, « Թէ բնութեամբ ուզես որ կարմիր » լինի, ի Մաթըզի ծառի տակն պատրուես ա զԽնձորե » նին, նա լինի խնձորն կարմիր և քաղցր: — Ըստ սնուտի աւանդութեան Հոռոմայեցւոց՝ այս ծառս նուիրեալ էր կարդէա դիցուհւոյ, պահապանի դրանց, վնասողները արդիւնելու համար:



Մաթուզնի.

1931. Մալխա.

Այլ եւ այլ օտար անուններով յիշուի ի Բժշկարանս, ինչպէս Հիլ, Շոշլիր, և յաճախ զանազանելով. ըստ Ամիրատուլաթայ, « Ղաղոչի մեծ և փոքր լինի, և լաւն այն » է որ փոքր լինի և անուշահոտ լինի: Փոքր տեսակն յատկապէս Հիլ կոչուի, մեծն է բուն Կակոչի, յձՅԸ. « Աւէ Պտ. Թէ մեծ լինի և փոքր լինի, և քան զՃալզ » պուէն մեծկակ է, և իր հունտն նման Բամպկի կտին, » և այլ մեծ, և կեղեւն Թանձր և գոյնն կարծր՝ ի սեւու. » Թիւն կու քշտէ, և այն փոքր Ղաղուլէն է, Շոշլիկեր » ասեն և Շոշլիր ասեն. ինքն երեք ցեղ է. Հալիլային կտին չափ մեծու. » Թիւնն. մէկ ցեղն ճալզպուէին չափ է, և երեքզուէն է, և հատն նման է մէկ. » մէկի. և մէկ ցեղն Հիլն է, և ինքն լատիֆ է քան զմեծն, և այն որ մեծն է՝ որձ » ասեն, և այն որ էգն է, փոքր է: — Օշտին կամ զօրութեանն համար գրէ. « Չքիւնին հոտն անուշ առնէ. և ակնջին և ակապին ցաւուն օգտէ, և զսիրտն ու ժովցընէ, և զանձն ուրախ առնէ... և զսրտին խառնելն կու տանի », եւ այլն: — Л. Cardamomum, Ф. Cardamome. — Համամաց ցեղէն է, և շատ տեսակ, զլիաւորն զոյգ անուամբ կոչի Amomum Cardamomum, և յայտ է որ տաք կլիմայից բոյս է, Հնդկաց և Չինաց. սակայն Դիոսկոր. (Ա, Ե) և Այեաթոս (Ա, Բ, 186) վկայեն, որ ոչ միայն գտուէր և ի Հայս, այլ և լաւագոյն տեսակն. յեաինս գրէ. Cardamomum optimum est quod ex Armenia affertur. կըրնար կարծուիլ թէ Հայք վաճառականութեամբ հեռուէն բերած ըլլան. սակայն նոյն հեղինակք կ'ըսեն, թէ գտուէր և ի կողմանս Եփրատացւոց և ի Վասպոր:

1932. Մալաչի. Մալաչին. — Տեսակ մի Տանն:

Մախթ. — Տես Մադր:

1933. Մալի լեզու. — Տես Եզգեաչեզու:

1934. Մալուխ.

Տեսակ կամ նոյնանիշ անուն Սեխի:

1935. Մախմուր ծալիկ.

Թաւաչի նման փափուկ անուշաւոտ ծաղիկ մի, որոյ կուտերն կամ հունտերն բաւական հատեր են:

1936. Մախր. Մախրի. Մարխ.

Եղեւնեաց ցեղէն. կուպրի կամ ձիւթի նման առատ խէժ ունող ծառ, որ բոց կամ լոյս տալու համար ի գործ ածուէր ի հնուց՝ իր հիւթին անուամբ. Լ. կոչուի Pinus Picea, ֆ. Pesse կամ Sapin blanc. Թ. Չրքա. Պէյթար յունարէն բառով մի կարճ յիշէ, Էլբատի Է՛լատի. ىبى. Վաստակոց գիրքն տեղ տեղ (ՄԻ. ՄԼ) յիշէ Գէր Մարխ, թերեւս աւելի իւղոտ տեսակն: — Արեւելեան կոչուած տեսակն՝ P. Orientalis, յիշուի Տրապիզոնի և Կարնոյ միջոցում: — Հին Բժշկարանն կ'ըսէ, « Մայր փայտն՝ որ է Մարխն, տերեւն փոթաթ է. ծեծէ և ի վերայ վերին » գիր, օգտէ, և զմորթն բերէ. և ծեծել զդա և ի վերայ ցեցի դնել՝ որ է գէշ » ցան, օգտէ. և մեղրիով եփած՝ թէ տաս Լերդցաւու, օգտէ, և զՄաղթն » դորա թէ ընդ մեղր խառնես և ընդ Չամիշ՝ և օծանես, ցան հատանէ. և » որոց դեղ մահու առել են՝ օգնէ »:

1937. Մածնի ծաղիկ.

Ար. Ախնուան կամ Ախնուան, Օքոնան ծաղիկն է, զոր յիշած եմք նոյն անուամբ, (Թ. 13). Ամիրտ. այլ նոյն անուամբ գրէ. « Խոտ-մն է որ դեղին ծաղիկ » ունի, և տերեւն նման է Աղվէշրանկի տերեւին, և սպիտակ այլ կու լինի.. և » լաւն այն է որ սպիտակ լինի.. Ասէ Պա. լաւն այն է որ տերեւն կանաչ » լինի, և ծաղիկն՝ դուրսի դեհն սպիտակ լինի, և համն լեղի, և ցեղ-մն այլ » կայ որ տերեւն սպիտակ չէ »: — Ախհուանի համար յիշած եմք որ այլ եւ այլ նշանակութիւն ունի, որոց մէկ գլխաւորն է Լ. Partenium Matricaria կոչուածն, ֆ. Matricaire, զոր նոր գրիչք Արզանեաց ծաղիկ թարգմանած էին, բայց բժշկական գրոց և բառագրոց ոմանց մէջ Մածնի ծաղիկ գրուած կայ, յաւելուածով « Մածնի ծաղիկ սպիտակ՝ մէջն դեղին »:

1938. Մահդանակ. Մահադանակ.

Ըստ Ար. Մահուտանայ կամ Մահուտանա ڪاڻاڇوڇاڻا. եթէ չէ մի և նոյն ճուլպան՝ այնոր ազգակից է. Բժշկարան մի գրէ « Լադ. Գադարայիս », որ աւելի փասակ Catapuce բառին է մօտ. Լ. Catapodium, և է ազգ մի Lathyrus. ֆ. Gesse, որ է ճուլպան. Ամիրտ. կ'ըսէ. « Ինքն հունտ է, զէտ Տիգ է. (Կա.

» մարկայ. գրէ Շիրիկ) կու ցանվի. աղէկն յայգիքն լինի »: Դարձեալ գրէ. « Որ
» է Հայ ըլ-միռնքն, և ինքն Հռոմի Շահաանա է; և ինքն յԵթողներուն է. . Ստ
» Պա. Թէ քան զՄաշն խոշոր է, և գոյնն մթնազոյն է և ի կարմրութիւն կու
» քլտէ, և յորժամ կեղեւին մէջն լինի՝ որպէս փոքր Լուպիայի մի չափ է. և
» կեղեւին գոյնն սպիտակ, և մէջն այլ սպիտակ է. . և ոմանք՝ որա Դանգ ա
» սեն » (Տանդ): — Մահադանակ անդունն դեռ ճանչցուի ի Հայս, երկու ոտնաչափ
բարձր և հաստ որձայով բոյս մի, Ուռիի նման երկայն տերեւներով, և մանր
ճերմակ ծաղկներով:

1939. Մահել.

Չեազգիր բառգիրք մի կ'ըսէ. « Ծառ հանգոյն Գիոյ, Թունասաղարթ, որ լինի
ի Սպանիա »: Վարդան Յովնանեան ճանչնայ զայս ի Լ. Taxis, Փ. ԼԲ. որ է
Գեղձի (Թ. 438), ըստ այսմ համանիշ կ'ըլլան Մահել և Գեղձի. գուցէ տեսակաւ
տարբեր, Թէ և շատ տեսակ չունին. հասարակօրէն յիշուածն է Հատուոր կու
չուածն, Յ. Baocata, որ գտուի ի Թ-Հ:

1940 Մահլապի. — Տես Շշի:

1941. Մահմուտան. — Տես Սահանունի կամ Զովգարակ:

1943. Մաղաշարի պտուղ.

Պողատու ծառոց մէջ յիշուած է յԱբարատ օրագրի (Դ. 228):

1943. Մաղապ ?

Բոյս մի կարծուի ըստ Աշխարհգր. Խորենացոյ. այլ որպիսութիւնն անյայտ:

1944. Մաղասախտու. Մաղասխտու կամ Մաղսխտու.

Հին Բժշկարանն յիշէ իբրև մաղասկաթի դեղ, ուրիշ նիւթոց հետ. Ուրիշ
Բժշկարանք գրեն, « Մազասխտո՝ որ ի սարերն բուսանի », այլայլեալ գրու-
թեամբ ի Սագերն, Սագերն, ի Սայրերն:

1945. Մաղթ.

Շատ բնիկ և օտար անուամբք գրուած է այս ի Բժշկարանս, որոց մէկ քանին
յիշած ենք. Անգուժատ, (Թ. 101) Բարկժատ, փեժատ, Հլրխս, Ոպան, Չարեոտ,
Բարգաւո. ۵۷۳, ۷۱۵, ۸۱۵. և այլն: Եւրքի անուամբս ստորագրէ Ամիրտ, ըստ
Պէլթարայ. « Ինքն խժժ է; Թաց և չոր, և լաւն այն է որ անուշահոտ լինի ».
չառ օգուտներն ի դեղորայս գրէ, բայց չի յիշեր զինքը բերող բոյսը, որ է՝ ըստ
Պէլթարայ՝ Կարգիսից ցեղէն (Formula), և յոմանց Մետոպիոն ? կոչի ի Յունաց ա-
ռեալ Լ. և Փ. Galbanum, կամ Bubon Galbanum կոչէին խէժն և բոյսը, բայց հի-
մայ ստուգուած է որ Երպատուրէն (Լ. Peucedanum) կու հանուէր այս նիւթս,

որոյ Յ. Χαλβάνη անունն այլ ի մեզ փոխուած է Քաղղրան: Իսկ վերայիշեալ հիւ-
թարեր բուսոյն մէկ տեսակն՝ P. Meyeri գտուած է և ի Վարապաղ. միւս տեսակ
մ'այլ P. Polimboïdes յԱրտանուն: — Թ. Ղասնի կոչուի խէժն: Թ. Καμεδινστα
СМОЛА. Ն. Չարենտ անուամբ յիշէ վաստակոց գիրքն, և բուսոց փնասակար ճճեաց
դեղ պատուիրէ (ձԱ, ձԵ, ձԷ) ասոր ծուխը: — Բժշկարան մի օտար Ար. անուն
մ'այլ յիշէ. « Խամիրի, Մաղթն է, որ ի կաստանա կու նմանի. Ար. Խարիրի,
» ܚܡܝܪܝܘܬ. Զաանգն, Ֆերմենդուս » երկու լեզուով բառերն այլ մեր Ն. Խմոր բառը
նշանակեն, իսկ Մաղթի նշանակութիւն չկայ ի Պէյթար: — Հին Բժշկարան մեր
Մախրի խէժն այլ Մաղթ կոչէ:

1946. Մաղու.

Մորենոյ նման պտուղ վայրի. տեղն այլ Մողուտ կ'ըսեն ի Պոնտոս: Նոյն է և
Ժուզ. տ. Ժոխ:

1947. Մահոռակ կամ Մահուրակ.

Տեսակ մի փոքր խնձորի: Խաալացիք կոչեն Pomo di S. Pietro. Ս. Պետրոսի
խնձոր:

1948. Մահուր.

Թերեւս վերի բառին պարզն. բայց Պոնտոսի կողմերում Դուում նշանակէ:

1949. * Մամիճա. Մամիսա. Մամիտայ. Մամշա.

Ամենն այլ մի և նոյն անունն են Ար. ܠܡܝܠܘ. Ամիրտ. գրէ « Մամիսա, որ է
» Մաշիայ. ինքն խոտ է և գեղին ծաղիկ ունի, և տերեւն խայտ. աղէկն երբ
» ծագկի՛ ժողովէ և քամէ. . Մաղիկն նման է Խաղիսայի ծաղկին. . չըլըցնող է և
» դարձնող է, օգտէ աչաց ցաւութեան և զաչքն կ'ուժովընէ. . Ասէ Պտ. Թէ
» Մամշայ կ'ասեն, ինքն երկու ցեղ է. ծաղիկն կարմիր է և հալողի գոյն է, և մէկ
» ցեղին գոյնն գեղին է, և յիրմէն շաք կու առնեն և Շաքի Մամիսայ կ'ասեն »: Ու-
րիշ Բժշկարան մի կ'ըսէ. « Ինքզ գէտ Պոստ լինի »: Ուրիշ մ'այլ. « կարմիր Մա-
» միսա կ'ասեն ի Շիրազ Արյանուսի կամ Արմաղուսի, որ նման է Շախայիղի »:
— Եթժաանգեղի ազգակից է այս բոյս և անոր Լ. անուամբ կոչուի Chelidonium
Glaucum. — Տես և Դեղին կոճ:

1950. * Մամիրա. Մամիրան.

Ոմանք նոյն համարին վերնոյն հետ, բայց տարբեր տեսակ է, ըստ Ամիրտ. և
Պէյթարայ, Եթժաանխոտին փոքրն. անոր համար Բժշկարան մի գրէ « Լազ (իններէն)
» Սէլխուսիս », որ է Chelidonium. — Տես կանթեղխոտ:

1951. Մամխի. Մամխ. Մամխի.

Փոքրիկ վայրի Սալոր է. Լ. Prunus Selvaticus. Հինկեկ գրիշ մի կ'ըսէ. « Թութ
» է ի վերայ ցախի. նման է Շայ Թուրի ». այսինքն սեւ Թութի. նոր գրող մի (Մա-

նան. Կր. 149) տերեւները Խնձորենոյ նմանցընէ, կուար չափով և ձեւով Բայր Իը ման, և սեւ գունով. Թէ հում կ'ուտուի, և Թէ չաբրով սնուցած: — Տարօնոյ պտղատու ծառոց մէջ յիշէ հեղինակն Նոր Հայաստան գրոց (Կր. 193): Կամար, կապցին այլ գրէ. « Մամն. Մամնիս, Ար. ինքն երկու տգգ է, մէկն քաղցր, մէկն » ԹԹու: — Այս ծառը կամ Թուփը յիշած է մեր ամենէն հին գրչաց կամ պատմչաց մէկն, Բուզանդ (Պ, 37), նոյն Տարօնոյ և Եփրատայ կողմերում, ուր՝ ի « Հովիտան Թան, » ձրախուան անտա՞ ին ի գետախառնունան երկուց գե, » տոցն, ի Թաւութ խարձիցն Մամիսացն, ուր ի տեղւոջն » ի հնոցն իմն շինած քաղաք (էր), զոր շինեալ Մանա, » արուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի»: հօն անզգամ մարգպետն Հայոց զբանելու իջեր էր, երբ Շաւապ Արծրունի իարեութեամբ կանչեց զնա և նե, տահար սպանեց:



Մամիս:

1953. Մամխոպոպ .

Պուցէ մամերու հաճոյ անունն, ծաղիկն այլ՝ ման կամարոց. Սալաձորցին երգած է .

« Ազգերծաղիկն ու Մամխոպոպն կու բացուին հետ Ա-
[ուսեղներուն » :

Թուի հաւանորէն Թ. Պ. կոչուածն Չիչիֆի արուս, Հարսի խոպոպիք. որ է *L. Phaseolus Caracalla*, Φ . Haricot Caracolle. և ոչ Ար. Շէյպիդ էլ-աձուգն, որ նշանակէ Պառ վու ձար:

1953. Մամոչ .

Վայրի ծառոց շուտուելու պտուղներն՝ կաղնոյ կամ Ընկուզի նման այսպէս կոչուին հասարակ անուամբ, ինչպէս գրէ Բժշկարան մի, « Պալլուա, որ է կաղնուն » պտուղն, որ է Մամոչն », զոր Թերեւս Մամոչ գրելի է:

1954. Մամուկ .

Խոտեղէն մի, որ դարձեալ մամու անուամբ առնուած կ'երեւի:

1955. Մամուճեղ .

Թուի Դառնիճ. տես զայս, Թ. 554:

1956. Մամու ոջիլ .

Որչափ Մամխոպոպն շոգոմական լուէր մեր մարց, Թերեւս հակառակն ըլլայ սա, որ փոքրիկ բոյս մի է, բարակուկ Թելաձե տերեւներով և փրնջաձե ծաղիկներով, որ կ'որեկի հատից նմանին. այս նմանութիւններէն յարմարացուցեր են Հ. անուըր. *L. Fumaria officinalis*, Φ . Fumoterre կոչն, ծուխի պէս Թեթեւ աննշան բան մի ենթադրելով երկրիս երեսէն վեր ելած Թ. ДУМЯНКА,

1957. Մամուռ .

Հատ անուամբ և շատ հեղ յիշուած մակարուտակ, թէ ցամաք նիւթոց վրայ, ինչ պէս քարերու, պատերու, ծառոց, և թէ ջրերու երես, հասարակ անուն, որոյ հոմանիչ՝ թերեւս իրօք իրօք զանազանեալ՝ են, Գորտնըրդն, Գորտան քար, Լօռ, Խօզ, Խօզուկ, Խոզխոտ, Զրինոռ, Քարի ժանգ, Քարափառփառ, Կանաչ խոտ, որոց վրայ կ'աւելցընէ կամարկապցին և Անխախտ. յարմար մակդիր իր կեցած տեղ կ'պած անշարժ ըլլալուն, կաշի կամ մաշկի պէս. Թէպէտ ասոնցմէ ոմանք ոչ ցամաքի վրայ՝ այլ կեցող ջրերու երես կ'ըլլան, և կու զանազանին տեսակաւ, բայց հին գրողք խառն գրեն. ինչպէս Ս. Բարսեղ իր Աեցօրէից ճառից մէջ կ'ըսէ (է) ձկանց համար. « Կէսքն զՄամուռս ջուրցն » ուտեն, և կէսքն զսիկն և զաւազն և » կէսքն զխոտ ինչ որ բուսանի ի մէջ » ջուրցն՝ ճարակին »: Մտիթար Այրիվանցի Արարածոց մեկնիչներէն առնելով՝ կ'ըսէ. « Սկիզբն (ծառոց) Մամուռն՝ մօտ » ի բոյսս, և կատարումն Արմաւենին »: Ամիրտ. այլ յիշէ Ար. Տառնապ բառով **بلبل**, « որ է Գորտնըրդն. լաւն այն » է որ ի քաղցր ջրի լինի. . . Թէ գինքն չոր » ցընեն և ի Բաղկին տերեւն խառնեն և » Մրտենուն ջրովն զերեսն (լուանան) » կարմիր առնէ » եւ այլն: — Օտար լեզուաց մէջ այլ ըստ տեսակաց զանազանին անուանքն, բայց հասարակօրէն կըսուի Լ. *Muscus*, **Փ. Moussé**. **Թ. Էտուռն** Ռ. **МОХЪ**.



Մամուռ ոչիլ .

1958. Մամու Տանձ .

Թէ և անունն ծանօթ պտուղ մի ցուցընէ, ըստ Պոնտացուց, բայց վայրի Թուփ մ'է *Cratægus*, **Փա. Alisier**, Լ. կոչուածին մանր տեսակ մի, Որթոյ նման տերեւներով, ինչպէս կու տեսնուի ի պատկերիս բնական մեծութեամբ. պտուղներն այլ կեռասի կուտի մեծութեամբ են ձուածեւ կամ տանձածեւ: Քննելով զայս՝ բուսարանք յատկացուցին *Cratægus menogina* Willd. տեսակի.

1959. Մամրիչ .

Բաղեղան անուն մի. ծառերու պլլըող տեսակն. Լ. *Hedera arborea*,

1960. Մայիսի ճաղիկ.

Մեր երկրոց ծանօթ ծաղիկ մի պիտի ըլլայ, բայց ինձ անծանօթ:

1961. Մայճ.

Ընդեղինաց՝ որք աննդեան ամենակարեւոր նիւթք են, գլխաւորքն էին և են Յորեանն և Յրինձ, որով կերակրէր հին աշխարհ, իսկ Նորն (Ամերիկա) ունէր իրեն յատուկ մի, զոր և պարզեւեց հնոյն՝ երբ յայտնուեցաւ. թէ և շատ տեղ կոչուի սա Եգիպտացորեն, Հեղկարեւակ, Յորեն կամ Զուսայ (Sorgho) Թորքաց, եւ այլն, բայց սեփական և գիտնական անունն է Մտիգ, **Maïs**: Այս բառս մեզմէ իբր 380 տարի առաջ Յովհ. Անկիւրացի, Ժամանակին վարժ Հայ Թարգմանիչն, մէկ աշխարհագրական գրոց (Որտեղիտի) Թարգմանութեան մէջ՝ Մայճ գրած է, խօսելով զԱմերիկացւոց, ինչպէս. « Ու » տեն զՄայճն և ազգի ազգի » խտտեր: . . Արբենան ի գինւոյ » Մայճին », եւ այլն. Թարգմանչին արժէքն և բաւական հնութիւնն, նաեւ առաջնութիւն, մեզի ընդունելի ընծայէ իր ըրած անուան փոքր փոփոխութեամբ՝ մեր լեզուի յարմարութիւնը: — Պանտոսի կողմերու ազգայինք մեր Լազուտ կ'անուանեն, իրենց մերձաւոր Լազից մշակութեան և աննդեանն համար: — Ուսումնական լեզուաւ այլ կոչուի նա եւ **Maïs** կամ **Joa Maïs**, **Mays**. Ռ. Кукурза, ինչպէս և Աւստրիականք կ'անուանեն Բոչքուրոս:



Մամու տանձ .

1962. * Մայս. — Տես Լղդեհի:

1963. Մայր. Մայրի. Մայրափայտ.

Թուի թէ անունն սովորական նշանակութեամբն մեր լեզուով ընծայուած է ծառայս, իբր մայր ամենայն ծառոց. զի վաղուց ի վեր մանաւանդ ի Ս. Գիրս, ծառոց ամենէն մեծն և հինն համարուի, և շատ հեղ փոխանակ ծառոց ժողով կամ անտառ ըսելու՝ Մայրի կ'ըսուի: Սակայն յատուկ ազգ մ'է Վայրենի ծառոց իբրեւ տոննց Թապաւոր, մանաւանդ հին աշխարհի մէջ, զի նորն մեծագոյն եւս

ծառեր երեւցուց: Այս ծառս Բ. Լ. և Փ. կոչուի *Κέδρος, Cedrus, Cèdre, Ար. Եփրայիմ* شجر الساج, Թ. Չառ աղամի, կամ Ղարրան աղամի. առաջին Թ. անուամբն յիշէ Ասար, և կ'ըսէ. « յԱրգրում շատ լինի. լան գերն է. մով պէս կու վառի ».

այս վառողն չէ յատուկ Լիբանանու Մայրեաց տե. սակն, այլ Մախրին. բայց տեսակներն իրարմէ որո. չեւ դիւրին չէ, և նոյն անուամբ կոչուին, ինչպէս Ամիրտ. այլ գրէ. « Մայրափայտ՝ որ է Մախր »). Իսկ ուրիշ տեղ Ար. անուամբ, « Եփրայիմ, որ » է Ղարրանին ծառն, եր. « կու ցեղ է... Ասեր է » Պա. Թէ իր միրգն նը. « ման է Սենոպարին, և » այլ փոքր է, և ինքն փշի » է, երկու ցեղ է. յերկան » և կարճ. և կեղեւն կա. « պուտ է »: Օգուտներուն մէջ գրէ և զայս. « Իր » միրգն ծովու լապստակ » ուտողին օգտէ, յորժամ » խառնես դմակ եղով և » տաս որ ուտէ, և կամ » ի յանձն օժես, օգտէ, » և զազան յինքն չմո. » տենայ. և տերեւն և » միրգն կ'ուտվի » ! — Մեր Ս. Գրոց Թարգմանութեան մէջ ամէն տեղ ուր Մայր յիշուի՝ յոյն բընագիրն և լատինն միշտ նոյնպէս չեն ըսեր, այլ երբեմն *Cedrus*, երբեմն



Մայծ .

Pinus և նա եւ *Morus* (Թթենի). բայց միշտ առաջինն՝ երբ Լիբանանու Մայրեաց է յիշատակն, Թէ բնական և Թէ բարոյական նշանակութեամբք. զորս միանգամայն զուգէ վսեմական Սաղմոսն (ԼԳ). « Տեսի զամպարիչտն՝ վերացեալ » բարձրացեալ որպէս զՄայրան Լիբանանու. անցի, և ահա ոչ էր. խնդրեցի, » և ոչ գտաւ տեղի նորա »: — Հարիւր և հազար տարիներով համրուին կեանք Մայրեաց, և ուժոյ և տեսականութեան օրինակք ընծայուին ի բնութեան. այլ նոյն բնութեան տիրով « Չայն՝ փշիւ է զՄայրս, և մանրեացէ Տէր զՄայրան Լի. » բանու » (Սաղմ. ԻԸ): Բուսարանից Թողումք ստուգել Թէ Սողմոսնի ատենէն հռչակուած Լիբանանու Մայրեաց ծերունիներն դեռ յուսացուին գտնուիլ, Թէ

անոնց թռուռներն են՝ այսօր գտուածքն, որոց նմանք գտուին և մեր Ռուրիներեանց տիրած երկրում: — Տեղաքնին Գերմանացի մի՛ վիրգիներեան կոչուած Մայրը տեսած է յԱղստեւ գաւառի Հայ-Աղուանից:

1964. Մանակ.

Մատուտակի մէկ անունն է, ըստ Ամիրտուլվաթայ:

1965. Մանակօշ.

Այս այլ Բեւեկնի ծառայ համանիշ է. տես զայս և գճտում:

1966. Մանանեխ. Մաննեխ.

Մեծութեան նշանակ ի բոյսս՝ տեսանք վերը զՄայր, փոքրութեան նշանակ զսա ցուցուց մեզ՝ ինքն անճառարար փոքրացեալն Քրիստոս. վկայելով, թէ սա « Փոքր է քան զամենայն սերմանիս. և յորժամ աճիցէ՝ մեծ է քան զամենայն » Բանջարս, և լինի ծառ, մինչեւ զալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա » . (Մատթ. ԺԳ, 31) . ուրիշ անգամ այլ (ԺԷ, 19) , « Եթէ ունիցիք հաւատս՝ քան » զհատ Մանանխոյ », եւ այլն: Արդարեւ քան զկորեակ այլ շատ մանր է Մաննեխի հունան, որոց գործածութիւնն ի գեղօ և ի տնտեսութեան՝ իբրեւ համեմ, ծանօթ է հասարակաց — Լ. Senapis, Փ. Sénenó . Ռ. Горчича. Ար. և Թ. Խարտալ. ۱۰۳۰ . « Երեք ցեղ է, ըստ Ամիրտ. լաւն այն է որ նոր լինի, և » աղէկն ի յածվենիքն կու բուսնի. տաք և չոր է ի Գ տարածա. այրող է և » ուտող է. և օգտէ. լեզուին ծանտրանալուն, մոռացկոտին. և զպալլալան կու » կտրէ ի գլխուն, և զամենայն կալուածն կու բանայ, և փոխել կու տայ. և զբ » րեան պայծառ կ'առնէ. զճնիքն և զօճն կու սպանանէ. և զկերակուրն կու » մարտէ, և զժանր խլան կու նօսրեցընէ. և զիր եղն հանեն, օգտէ կարճահարին և » հերքուին. և թէ զերեսն քսեն՝ կարմիր առնէ. . . Ասէ Պատ. աղէկն այն է » որ կարմիր լինի և դէր. և իր խառիւթն այն է, որ եփ գինքն ի քաղցուն » ձգեն՝ նա քաղցուն չեալ և գինի չի լինայ, և քաղցր մնայ » :

Երեք ցեղ ըսած Մաննեխից երկրորդն է ըստ Ամիրտ. « Լապսան. օմանք այս » խոտիս Թ. Դիշի? կ'ասեն. և ինքն վայրի Խարտալն է. և թէ եփես լրով և » ի մէջն նստի տղայն՝ զէտ աւազան, շուտ քայլէ. և թէ զհունան ծեծեն կա » թով շաղեն և յերեսն օժեն՝ զմտնն տանի. և թէ շատ տարպանի (անգամ) » օժես՝ երեսն պայծառ առնէ և յիսարկէ. և թէ հին գինով խմեն, օգտէ ստա » մաքին ցաւուն » :

Երրորդ տեսակը կոչէ « Խարտալի ֆարսի, որ ինքն Հարֆին (կոտեմի) ցեղե » ռուն է, և այնոր Սպանդ-ասպանդ ասեն » . կամ Սպանդ ալ-Սպանդ. Չայս ուրիշ տեղ անուանէ Լաղանիս, և Սպիտակ Հարֆն է, կ'ըսէ: — Ուրիշ Բժշկարան մի Մաննեխի նոր անուն մ'այլ տալով կ'ըսէ. « Խարտալ. Բժիշտո. ինքն երկու » ազգ է, մէկն Սեւ ու մէկն Սպիտակ. աղէկն՝ սպիտակն ու խոշորն » : Ուրիշ մ'այլ Սպիտակ Մաննեխը զուգէ Սպիտակ կոտման հունգի. — Այս տեսակն նայն նշանակութեամբ կոչուի Լ. S. Alba, Փ. Moutarde blanche. — Վաստակ. Գիրքն Մաննեխի համար կ'ըսէ (ԵՂԱ), թէ ի Հռոմայ գաւառն ցանեն յայսպիսի » (ցանցառ ծառուտ) տեղօ՝ Մանանեխ, Աֆիօն և Չաման », հակառակ ճակըն, գեղի կոտման, և այլն որ զծառուտ տեղիս սիրեն:

1967. Մանգախոտ.

Անծանօթ բոյս մի, զոր հին Բժշկարանն խրատէ դեղ ոյժ տալու, հետն այլ « Վայրի Պուս, Յրդոյ պտուղ, Խնձորի շիր եփէ ջրով քաջ, և երեք օր հետ ի. » բաց խմցո յանօթից, ի յօրն մէկ լիտր »:

1968. Մանդալ.

Ծխանեկը մ'է, ըստ հին Բժշկարանի, և մարտողութեան դեղոց հետ խառնուի: Ըստ Ամիրտ. է Թօս, այսինքն Հայուէ:

1969. Մանդակն. Մանդիկ.

Վայրի բանջարեղէն մ'է մազոտ ճղերով, ճերմակ ծաղկներով, անուշահոտ արմատով. կ'ուտուի, նա եւ յաղջուր դնելով: Շատք ի նոր գրչաց յիշն զայս. քիչ մի հիներէն՝ Ռիվոլա ի հայ-լատին բառգիրքն, բայց միայն խոտեղէն մ'է ըսելով անցնի. իսկ Շէհրիմ. համարի Polygonum Bistorta. Ф. Bistorte. որ նշանակուած է ի բուսաբանից ի Թ-Ղ. ի Կփրիկիա, ի Վիրս, և ի մերօցս՝ ի Բարդոզ լեռին, ի Տարօն և ալ կողմեր:

1970. * Մանէֆրանճի ?

Բժշկարան մի յիշէ Մանուշակի և այլոց հետ:

1971. Մանի.

Յաղագս Մառոց վերնագրով համառօտ գրուածի մի մէջ յիշուի, և կ'ըսուի նըման Կաղնոյ, վարի դին աւելի բարակ քան զվերինն. տերեւն նման Ծիրանի. փայտն փուտ, որ գիշերը կու լուսափայլի: Տերեւներն անառնոց ուտելի են:

1972. Մանիքեղ ?

Բժշկարան մի գրէ. « Դտկիկ, որ է Մանիքեղոյ սերմ. Corylus ». Այս ծառս կամ Թուփ, Ф. Coudrier, կաստանայից ցեղէն է, Եւրոպիոյ բարեխառն կլիմայից տակ և Հս. Ամերիկայ գտուի. հին ատեն Գերմանացոց նուիրական ծառ մ'էր: Ճապուկ ճիւղերն կողով հիւսելու բանի կու գան. պտուղն՝ Կաղինէ պզտիկ ախորժակամ եղ մի կու տայ, անոր համար մշակուի. երկայնաձեւ Թեփոտ լիլիկ մ'այլ բերէ: Գլխաւոր տեսակն С. Avellana՝ որ կաղինաբեր ըսել է, տեսնուած է ի Պոնտոս, կովկասու երկու կողմերն. հաւանօրէն և ի Հայս:

1973. Մանծակ. — Տես Պատման:

1974. Մանճակ.

« Որ է Ղարանֆիլ » գրէ Ամիրտ. յԱնգիտաց անպէտն. տես Շահագրամ կամ Մեխակ:

1975. Մանիշակ. Մանուշակ.

Անուանն նման (որ հասարակ է և Պ. և Թ.) անուշակ ծաղիկ մի՛ հատով, համով, գունով, տեղեւ և յիշատակօք. Վարդի և Շուշանի գերազանցութիւնը շունի՛ ըստ երեւակայութեանց, այլ աւելի սրտի և նուրբ զգացման մօտ է: Երկք հեթանոսք ըսին, թէ Իս՝ Ատլասի դուստրն օրհասական Աքիլլէսի մարմինը արով ծածկեց. շատուածք այլ զինքը փոխարկեցին ի Մանիշակ, որ իրենց լեզուով՝ Լօս Խօն կ'ըսուի. պարհեշտութեան և հեղութեան նշանակ մ'ըլլայն քրիստոնէական գաղափարով աւելի պանծայի և փափուկ ընծայումն է: Մխ. Գոշ, որ չէր կրնար իր Առակաց մէջ զանց ընել այսպիսի ծաղիկ, քիչ մի ստուեր ձգէ վրան՝ հանդերձ փայլմամբ, անոր կանուխ ծաղկելէն սկսանելով. « Ըստ զարնանային յե. » զանակի երանէին ոմանք զգեղեցկութիւն Մանիշակի. և նա ճմարիտ կարծե. » ցեալ յանմտաց զասացեալն, առաքեաց առ Շուշան հրեշտակ՝ առնել ընդ նմա » բարեկամութիւն, վասն նմանութեան կարծեացն. զի գովիչքն նման եւս ա. » սէին Շուշանի, և նա պատասխանեալ ասաց, եթէ՛ Գու այժմ ծաղկեալ զար. » զարիս, և ես տակաւին իբր գօսացեալ և անյայտ. ներեա մինչեւ ես ծաղ. » կեցայց: Եւ յանալ նմա՛ յետ ոչ սակաւ աւուրց թառամեալ գօսացաւ Մա. » նիշակ. և ի ծաղկել Շուշանին՝ բնաւին անյայտ կայր Մանիշակ »: — Լ. Viola, Փ. Violette. Ռ. Фиалка. Ար. Պեկֆուեմ. Ե. Գու. Թ. Մեկեղլե կամ Պեկեֆլե. Ա.

միրտ. գրէ. « Պնաֆլա, որ է Մանուշակն, որ է Պանտֆլաան. ինքն ի լերունքն և » ի յածուենիքն այլ լինի. լան այն է որ գունն կուտ լինի, և հօտն ուժով » լինի.. թէ զինքն հօտվրաս՝ տանի զան զլիսացաւութիւնն որ ի տաքութենէ » լինի. և թէ զձէթն օժես.. զերեսին զխոշորութիւնն տանի, և զպալնկաց զըու. » կակն տանի, և թէ աչաց ցաւութեան օժես՝ օգտէ ». և այլ շատ ու շատ օգուտներ թէ իր ծաղկօջն, թէ եղօջն և թէ շարապով: — Գալիենու բառից մէջ յիշուի իբրեւ յատուկ տեսակ մի,

1976. — Մանուշակ Սպիտակ.

Տառադարձութեամբ գրուած Ե. Դեկիոն, Λευκοίον, յորմէ Լ. Leucojum, որ Սպիտակ Մանուշակ նշանակեն, Փ. Nivéole. — Ինչպէս շատ ծաղկանց՝ այսպէս և Մանուշակի տեսակաց մէկն այլ յատուկ Հայկական կողուած է, Viola Armena, տեսնուած ի կարին, Տփղիսու և Մծխիթայ միջոց. — Հասարակ տեսակն V. Camppestris յիշուած է ի Թորթում. — V. Mirabilis (զարմանագեղ) ի Սմխէթ. V. Riviniana և V. Elatior, ի Թ-Հ. և Հր. Կովկաս. V. Altaica, ի Ռս. և Թ-Հ. Մանախ. V. Dichroa ի Պինկէօլ, Կէօքտաղ. V. Hirta, ի Թ-Հ. Մարդուան. V. Occulta յԱրեւմտեան Հայս. V. Odontocalycina, V. Orthoceras, V. Sylvatica, յայլեւայլ կողմանս Հայոց և Կովկասու: Ասոնցմէ դուրս ի բժշկական գիրս մեր ույիշի և

1977. — Շան Մանուշակ. — Տես Շանպանակ:

1978. Մանչխարուկ. Մանչխարուս.

Լուսի ի Խոտուշուր: Ճղճղկէն բանջարեղէն մի, հաստ ու կլորակ տերեւներով:

Մանտակ. — Տես Մանգակ:

1979. Մանրագոր.

Տես ինչ որ ըսուած է ասոր վրայք Լօշտակ և Խնձորակ անուամբք, առջինէն զանազաներոջն. այստեղ յիշեմք որ այս անունս Յ. է Μανδραγόρας, յորմէ և Լ. և Փ. Mandragora, Mandragore. և հաւանօրէն Ն. Խնձորակն է: Ար. այլ եւ այլ անուններ ունի, Եսպրոռն. **عرجاج**, Թոֆֆոս էլ-մին (Քաջաց Խնձոր), Եսպրոռն Սաւմի, որ գիւակերպ ըսել է, և Լօշտակը յիշեցընէ. Սիրաձ էլ-գորրոպ, եւ այլն: Ս. Գրոց երբայերէն բնագիրն Դոռդայիմ կոչէ զայս՝ յոգնական Թուով (Մննգ. Լ. 14-6. Երգ Երգոց, Ե. 13), և յիշատակէն իմացուի որ Թէ՛ պտղեղէն էր և Թէ՛ անոյշ հոտ ունէր. այս բանս շատ տարակուսեցուց մեկնիչները, և շատերն պարզ ծաղիկ մի համարեցան, Շուշան կամ Մանիշակ կամ Յասմիկ. սմանք այլ կոնդէզ մի, այլք Մոռզ ըսուած Թուզն՝ հնդկայնոյն նման. Արարացիք իրենց Եսպրոռնին պտուղը Լոռֆոս **علاج** կ'անուանեն, և քնարեր յատկութիւն մի կուտան. այսպէս ըսած է և Գիսկորիտէս՝ իր Atropa Mandragora կոչածին, և այս է ընդունելի պոփմու գիտնականաց: Ըստ այսմ և մեր հեղինակ պնանչիլի ճառի Յարութեանն Ղազարու (Մամբրէ կամ Եղիշէ), Քրիստոսի ասոր ննջեաց ըսելուն համար կ'ըսէ. « Միթէ ի Մանրագորաց Թմբեալ իցէ », որ չորս օր քնանայ, — Բանասիրաց Թողով աւելի քննութիւնը. յիշեմք մեր հեղինակաց ոմանց ըսածը. երիցագոյնն Եզնիկ՝ կ'ըսէ. « ԶՄանրագորն եթէ զը լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և » խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց »: Կարեւոր և հաւանելի բան մ'այլ Նարեկ գրոց մեկնիչն. « Ամենայն պտղի Մանրագոր ասեն՝ որ զծաղիկն » ի ծայրն ունին, որպէս Մասուրն և Սինձն »: Եւ զարձեալ՝ « Ազգ մի Խնձոր կայ ո վաղահաս, Մանրագոր ասի, ուստի քաղեաց Բուրէն », և ետ մտ իւրոյ Լիայ. այսով այլ հաստատուի Խնձորակի համար ըսածնիս: Այսպէս Մանրագորի որ և է հասարակ պտուղ այլ նշանակելու վկայէ և ուրիշ Վարդապետ մի ի Տօնապատ, ճառս, ըսելով. « Գնասցուք ի դաշտ ինչ մրգաւէտ տնկոց, և բերցուք անտի Մանրագորս, ի պատիւ սրբոյ մօրս մերոյ եկեղեցւոյ »:

1980. Մանօղ.

Բժշկարան մի գրէ « Պիտոր Մարիամ, որ է Կարմիր Մանօղին **مراو جرجاج** քօքն »: Ամիրտ. « Պոսիտորի Մարիամ. որ Պ. Ղաչդանաք, Շաչդանաք? ասէ »: Տես ինչ որ գրուած է Թաղթ անուամբ:

1981. Մանօղայի տակ.

Առանձին յիշեն զայս Բժշկարանք. Ամիրտ. կ'ըսէ, « որ է Շահպանակ ». ուրիշ մի, Մրտիկ տակն:

1982. Մաշ.

Ար. այլ այսպէս կոչուի. شمس . Ի Սանսկր. Մաշա. « Որ է ըստ Ամիրա. Գոկու. » ձայ (Պէտհրիւնէ). ինքն ցեղ մի է. լաւն այն է որ խոշոր լինի և անարատ. Ատ
 » Պտ. Թէ Մաշ կ'ասեն, և ի Շիրազ Մամուռ մաշ կ'ասեն, և Պանու սիտն այլ կ'ա-
 » սեն. և իր ճօհէրն մօտ է Բակլային ճօհէրին, բայց քամին պակաս է. իր ուտե-
 » լուն աղէկ աւուրքն ամառն է, և լաւն այն է որ կանաչ և խոշոր լինի և գէր
 » լինի. և քան զԲակլայն շուտ հայի, և լաւն այն է որ կտված լինի »: — Այսպէս
 գրէ Ամիրա. ուրիշ տեղ այլ. « Մաշ. ինքն զէտ Գինն հատեր է, և ի Հնդկաց գայ.
 » աղէկն նորն է, և որ ի Հնդկաց գայ՝ բնութիւնն
 » չոր է »: Այս Հնդկային Մաշը՝ յատուկ անուամբ
 Ղոնայ կոչէ. տես զայս (Թ. 1826): Այս վերջինս ա-
 լելի յարմարի Որոտն ըսուածին. բայց քանի մի տե-
 սակ ազգակից ընդդէմը չիթուին կամ զուգին
 այս անուամբ. Հիմայ սովորաբար Մաշ կ'իմացուի
 այդ Ոլոտն, զոր Ամիրա. զուգեց Պարոհիկի կամ Սեռ
 պորտիկ ըսուածին. տես Թ. 593. Բժշկարան մ'այլ
 գրէ. « Մաշ, որ է Լովիան. Թ. Պոկրամէ կ'ասէ ».
 և ահա երեք տեսակն այլ ըստ մեր հիմակուան որոշ-
 ման միացուց. որով Մաշ է Լ. Pha-
 seolus Mango կամ Pisum. Փ. Poix.
 Իսկ Լովիասի և Դկուդի վրայ արդէն
 գրած եւ որոցմէ զատ յիշած եմք և
 զճուլպան: — Ո՛ր տեսակ Մաշ է Միս.
 Գաշի յիշածն (տճ), որ պտտրաստուած
 ըլլալով « ի դարմանս հիւանդաց, սնա-
 փառէր », ուրիշ ընդդէմը դինքը տնա-
 զելով՝ կ'ըռէին, Թէ և ոչ մեր իշխանն
 այդ շափ պարծի, իսկ քու անունդ այլ
 Մաշ իբր շուտ մաշող՝ յայտնէ, որ ժա-
 մանակաւոր է պէտք քո: — Ըսինս
 կոչուած Մաշն՝ P. Formosum տես-
 նուած է ի Թէքստող Լ:



Մաշ.

1983. Մաշխ.

Կարեւոր բոյս մի պիտի ըլլայ, որովհետեւ պիտանի բանջարեղինաց կարգին յիշ-
 էին Բժշկարանն, և կ'ըսէ. « Ի Նրային տեղ լինի. հերն զէդ Սխտորի է, ժաղիկն դե-
 » ղին. և մօտ ի տակն երկու կարեւորք են. զայս բանջարս տակոյն եփէ և տուր առն
 » և կնոջ ամոց, և ծննդականք լինին, Թէ այրն ամուլ Թէ կինն »:

1984. Մաշկամիրգ.

Խորենացւոյ Աշխարհագրութիւնն յայտնէ ինչ միրգ ըլլալը. « Կրասսանոն
 » (Թ. 1339), Մաշկամիրգ ». և ի Տուրուքերան կ'ըսէ գտուի, որ է Տարոն. որոյ

տեղացիքն մինչեւ հիմայ այսպէս կ'անուանեն զկաստանայն, նոյնպէս և Համէն-
ցիք: Բայց առ նախնիս մեր, որպէս և առ Պարսոս՝ լուսի և Շարաչոք անուն, որոյ
կարգին բացատրեմք:

1985. Մաշմն խոտ. — Տես ի բառն Կրտսան:

1986. Մառլայտակ ?

Մարուխի և ուրիշ բուսոց հետ եփելով խմել պատուիրէ արիննահոս փետա-
ւորի՝ Բժշկարան մի:

1987. Մասուր. Մասրենի. Մասրի.

Մառ, ծաղիկ և պտուղ, յիշուած ի միջին դարու գրչաց մերոց և ի նորոց, և
ամենէն այլ՝ վարդենույ ազգակից կամ վայրի վարդ համարուած, ինչպէս և
յօտարաց, որք Հնամվարդ կոչեն. Բ. Kynérodos, Լ. Cynorrhodon, Փ. Rosier des
Chiens, եւս Eglantier. Ար. Ուշէիս կամ Աշէիս իւր-քաւայ کلب السيق. Թ. Իր-
պոստնի. Ամիրտ. Ար. անուամբն գրելով կ'ըսէ. «Յոշէիս էլ-քաւայ, որ է Հ. Մա-
» սուր, և Թ. Իր պոստնի կ'ասեն. և քան զմէկայլ Յուլիան (Մորենին) այսօր
» ծառն մեծ կու լինի, և տերեւն քան զՄորմենուն տերեւն լանկեկ կու լինի, և
» ծաղիկն սպիտակ կու լինի, և ճգերն ամուր և պինտ կու լինի, և փշեր կ'ու-
» նենայ. և միրգն նման է Ձիթապտղին պտղին. երկանկուկ. և յորժամ հասնի՝
» կարմրուկ կու լինի. և մէջն զերդ բուրդ լինի. և զմէջն հանեն՝ որ Թոքին զեն
» շանէ, և Թէ գինով եփես և տաս որ խմէ՝ զփորն կապէ, և զգոզն արգիլէ:..
» Ատ Պա. Թէ Յոշէիս իւր-Ղոստո այլ կ'առնն, և ի Եիրազ Տրախտի սիչ կու ա-
» սեն, և իր մրգին Սեկոչ ասեն, և իր վարդին՝ վարդի սիյան (Սլաճ) կ'ասեն
» (ج السياج), Յանկերու վարդ) և Նասրին ալ-Մայիան (ج السياج)
» կ'ասեն »:

Սալաձորցին զանազանութիւն մի ցուցընէ Մասրենույ և ուրիշ վայրի վար-
դենայ մէջ, ըսելով.

« Որոտ վարդն է բաժնվեր յերամէն, խառներ յերամն Մասրենուն »:

Իրմէ առաջ Թլկուրանցին այլ երգեր է. « Նա խնդալով ցնծայ և ուրախանայ
» այն Մասրենին »: Խիկարն այլ ճարտարաբանէ. « Օձն փաթթեցաւ ի Մաս-
» րենին և անկաւ ի գետն. տեսեալ զնա Գայլուն՝ ասէ. Ահա շարն ի շարն հե-
» ծեալ. և շար է որ վարէ զնոսա » (զայլն այլ շար): — Աւետիք Ամրեցին նա-
հապետներն և մարգարէներն այլ եւ այլ ծաղկանց նմանցընելով, « Մասրենի
» ծաղիկն Դանիելի նմանի », կ'ըսէ. — նմանութեան պատճառն ի՞նչ է. —
յայտնին այս է՝ որ Մասուրն և Մասրենին մեր ազգայնոց շատ ծանօթ եղեր է,
և յետին յիշուած հեղինակէն մինչեւ ի մեկնիչն Նարեկացի՝ պէտպէս կերպով յի-
շեր են. Ամիրտ. այլ կարծես Թէ ծառն աչաց զիմաց օւնենալով ստորագրեր է:

1988. Մասպար. Մասփար.

Նոյն է ընդ Ասպուրի, տես զայս, Թ. 176, և Կրտսմն:

1989. * Մավզան.

« Մառի պտուղ է սեւ և տափակ. աղէկն ի Հոռոմք լինի », կ'ըսէ կամարկապցին. տես Աղուինակ:

1990. Մատի ծաղիկ. Մատին ծաղիկ.

Տես Այգոյ ծաղիկ և Գինեծաղիկ:

1991. Մատիտեղն.

Հովուի բիր անուամբ յիշեր եմք, (Թ. 1731), հանդերձ Ար. անուամբ. Հ. ըսուած է և Հանկրիկ, Լ. Polygonium. Փ. Βενουθε. Ռ. Спорышь. Գ. Պարսիցան. տարոս ڤارساڤاڤ. Ամասիացին գրէ Ար. Բասայի ըսոյի (Ասա իշտայի որ է



Մասպար .

Մատիտեղն.

» Հովիտի Գառազանն. և Մատիտեղ այլ կ'ասեն, և Թ. Չոպան տայաղի ասէ. ինքն
» էգ և որձ լինի, և տերեւն նման է Սազապի տերեւին. հով է. յերկան կու լինի, և
» որձն այս է: Թէ որձուն զլուրն խմեն՝ զկրծոց արիւն թքնուլն կտրէ, և զլուծումն
» այլ կտրէ. և թէ գինով խմեն՝ օգտէ գազանահարին և մահացու դեղոց, և թէ
» ջերմն չրոնելուն մէկ ժամ յառաջ խմցընեն՝ շատ օգտէ », եւ այլն: Ուրիշ տեղ
պարսիկ անուամբն ստորագրուած է. « ինքն խոտ մ'է, որ ի ցաներուն մէջն կու
» բուսնի շատ, և տերեւն նման է Սիսուան տերեւի, և ի վերայ պտուղ ունի, և ի
» յՆղիբուրի կուտ կու նմանի, և ի մէջն կարմիր հատեր ունի, նման է Ոսպի. և
» համն լեղի կու լինի: Թէ եռացընեն՝ զլուրն խմեն՝ օգտէ ստամոզին ցաւերուն »:
Մատիտեղանց ազգն հարիւրաւոր տեսակներ ունի. մեր երկրին նշանակուած

նն, Polyg. Bistorta. P. Amphibium. P. Minus. P. Alpinum. P. Polygonoides. P. Bellardi. — P. Pulchellum ի հիւսկիւմ. — P. Alpestro. P. Setosum (մետաքսայ) ի Բաքերդ, Մուշ. — P. Luzuloides, ի հիւսկիւմ, եւ այլ յիշուած յԷջմիածին, ի Բասեն, Երեւան, Արտահան, Համէն, Վարաժնունիք, եւ այլն:

1993. Մատնախաղող.

Նշանակէ երկայն ուռերով և ծիլերով Որթոյ ծառն, և յատկապէս ուռն (ճիւղն): Արելի և կայենի գրուցապատմութեան մէջ կ'ըսուի. « Ետես (կայէն) Մատնախաղող » բազում և երկայն. և ասէ ցեղային իւր. Ե՛կ, մատիբ, խաղասցուք... Արէլ » միամտութեամբ գրկեաց զծառն, կայէն առեալ զուռն Որթերուն և պատեաց » երեք փաթ, ձեռներովն և քամակն... այնչափ Ուռով Որթոյ պատեաց զնա, » մինչ զի ոչ մնաց հնար արձակելոյ՝ յտիցն մինչեւ ցզուրխն », եւ այլն.

1993. Մատնիկ.

Ք Ռամկական անուն Հինգտերեւի (Փանջանկուշտ) կոչուած բուսոյ:

1994. Մատնկաղնի.

« Յեղ մի կաղնուց է, որոյ ծաղիկն իբրեւ զմատունս կախ լինի, վասն որոյ և ընկ » կալաւ զանունն »: Այսպէս կ'ըսէ ձեռագիրք մի. բայց այսով յատուկ տեսակն չիմացուիր, վասն զի այլ եւ այլ տեսակաց այլ ծաղիկքն կըրնան նմանիլ մատնաձեւի:

1995. Մատնկներ.

Գոթեաց շանկն է. տես Թ. 509:

1996. Մատուկ. Մատուկք.

Թերեւս Մատուտակի տեսակ մի, որոյ նման երեք չորս մատնաձեւ տակ ունի, կարմիր բրդոտ ծաղիկ, և Շաղգամի պէս կ'ուտուի: — Հին գրուած մի կ'ըսէ. « Մատուկին՝ մատանց նման երեք տակուի ի վայր լինի, և կառին պէս դիր ի վեր, » որ աղքատքն ուտեն. այսպէս էր կեանք մարգարէիցն »: Յովբայ գրոց մեկնութեան մէջ գրուած է այս, որ Թուի վանական վարդապետին. — Bassia անուամբ լայնատերեւ և երկայնտերեւ տեսակօք ծառ մի կայ ի Հնդկաստան, ուր Մադոսկ կոչուի (Madhuka). կըրնայ իբր պարզ դիպուածով այսպէս կոչուիլ. բայց պտուղներն երկայն ու բաճիճաւոր կամ պարկուճաւոր նման են մատներու քովէ քով:

1997. Մատուտակ. Մատուտիկ.

Ունի ուրիշ անուններ այլ, ինչպէս Մանակ, Մարոշիս, Մարախ. — Յ. Γλυκορίζα (Գոփկոարեղին ի բառս Գալիենոսի). Լ. Glycyrrhiza (glabra). Փ. Réglisse. Ռ. Λακρυθα. Թ. Պիանցեօրի, Ար. Սոս, Սոջա. Սովորական Հ. անունն արմատին մատնաձեւ ըլլալուն համար կ'ըսուի, և տեղ տեղ Թ. այլ Մ'եռնիկ կ'ը-

սեն: Ամիրտ. Ար. անուամբ ստորագրէ, « Ինքն Մարուն է, և Մատուտակ այլ » կու ասեն. — Երկու ազգ է, Քաղցր և Լեղի, բայց երկուքն այլ ի բան չի մտնէ. « ազէկն Քաղցրն է և պիտեւանն. — գեղին տակ է, և մուհթատիլ է, և նլէ կու » տայ, և օգտէ ըռթիւանին (կեղ. վէրք) որ ի յաչքն լինի, և Ղաղաւութեան. և թէ » յաչքն քաշեն՝ օգտէ զաֆրային որ ի յաչքն լինի », եւ այլն: — Մատուտակն ոչ միայն դեղոց բանի կու գայ, այլ և ուտելու անեփ, մատղաշ եղած ատեն. վաստա կոց գիւրն շատ հեղ յիշէ, և « գովեցին ոմանք, կ'ըտէ, զայն գետինն՝ որ յինքն Ե- » ղէգն բուսանի և Մորենիք և Մատուտակ և Ղրասէր բոյսք »: — Քիչ տեսակներ ունի Մատուտակն և անորոշաբար յիշուի ի Կարին, յէջմիածին, Խնուս, Մուշ, Մանազկերտ, Արաբատական:

1998. Մար ?

Բժշկարան մի յիշէ զայս, Նուան կեղեփ հետ Մարի կեղեւ եփել ջրով, եւ այլն:

1999. Մարախ. — Տես Մատուտակ:

2000. Մարան. — Տես Կումակ ծառ:

2001. Մարանճու ?

« Որ է Մնեբեկն, որ է Հիլիօնն », գրուած է Բժշկարանի մի մէջ:

2002. * Մարար.

Ար. Մարար կամ Մորիբ յայտ է Ինքն խոտ-մն է որ ի գետին կու ճապղի երբ » բուսնի, և ի սեւութիւն կու քրտէ, և ի մէջն զերգ փայտ իրք մի կու բուսնի. » դեղնուկ ծաղիկ ունի ի գագաթն. բոլոր խոտ մի կայ որ Թ. Պոզա քիչեկնի ասէ, » այնոր ցեղերուն է. և ոմանք ասեն՝ թէ այս խոտս զուգտն գիրացընէ. և փուշն » շատ է և սպիտակ է: Եւ թէ զայս խոտս ուտեն՝ զլերդին կալուածն բանայ, և զա- » րեան տաքութիւնն խաղեցընէ, և զարիւնն պայծառ ասնէ, և օգտէ ջերմերուն, » և ճւանցաւայն և բորին և քորին, և թոքին խոցերուն », եւ այլն: — Ըստ արեւե- լադիտաց՝ Տերեփուկ մի է այս Մարարս, Centaurea Caloitropa, ☉. Centaurea chausse-trape, կամ Chardon étoilé !

2003. Մարգասամիթ.

Տեսակ մի Սամիթի. տես զայս:

2004. Մարգացնճու.

Նորոց հնարած անուն. 1. Imperatoria. ☉. Impéatoire. Հովանածեւ կու շուած բուսոց կարգէն է, և Երիցու աղցանին ազգակից, լայն տերեւներով և ան- բաժակ: Կովկասու կողմերում գտուի, և այն պատճառաւ կոչուի Im. Caucasiae.

2005. Մարգափուշ.

Ս. Ռոշքեանն կ'ըսէ. « Փուշ, որ ի մարգս ծնանի և ի ճաղնաղուտ տեղիս », և վկայութիւն այլ բերէ ի գրոց. « Մինչ քաղէր (Մարգափուշ) ի ցանկել զպարտէզն՝ յարցեցաւ ձեռնն ». և Լ. անուանէ *Luma*, որ հիմայ կոչուի և *Myrocseugonia*.

2006. Մարգի ընկոյզ.

Ար. Քաքաեաշ կամ Քեքեմէ կոչուածն է, որ Հ. կ'ըսուի և Յակոբոսկ, տես զայս.

2007. Մարգիծ ?

Յիշուած է ի Մեղու օրագրի (ԻԲ, 83).

2008. Մարգիմուշ ?

կամ Նարգմուշ, յիշէ Աօար, իբրեւ հոմանիչ Մկան ծիրա կոչուածին :

2009. Մարդ-ախոտ. Մարդ-ածաղիկ. Մարդ-ատակ. — Տես Լոչուակ.

2010. Մարդասպան.

Գալիենոսի բառից մէջ գրուած է, « Կարաշարի՝ Մարդասպան », Յ. բառն թերեւս ըլլար *Katadaphis*, որ նշանակէ փախչողը կամ յանցաւորը բռնող. կայ հիմայ *Cataleptique* կոչուած բոյս, որ ոչ մեռցընող այլ մոռցընող նշանակէ, և ուրիշ անուամբ կ'ըսուի *Dracocephalum* (վիշապագլուխ), և Շրթնաձեւ բուսոց ցեղէն է. — Նման կոչմամբ *Catalpa* բոյս մ'այլ կայ, բայց այս Ամերիկայի բնիկ է.

2011. Մարդգայլու ձար. — Տես Զարիտա :

2012. Մարդոց արիւն ?

Նորոց Թարգմանութիւն է *Androsæmum* անուան, որ է Փ. *Millepertuis* կամ *Toute-saine*. կամեցիայից ազգէ բոյս մի :

2013. Մարդու արիւնիք.

Թարգմանութիւն Քաֆի ատամ *كف* բառի: Ամիրտ. սոսկ « Խոտ-մն է, » կ'ըսէ, և իր օգտութիւնն Քաֆ ըլ-հարիւրին օգտութեանն և զսրութեանն պէս է ». բայց Պէյթար կ'աւելցընէ, թէ կանգնաչափ բարձր բոյս մ'է, տերեւներն նման Մրտենոյն, ծայրերն քիչ մի կլորակ. փայտն դեղին սեւութիւն քլտող, մէջն կարմիր: Սակայն այսքան բացատրութիւն բաւական չէ եղած գիտնոց ճանչնալու այս Մարդու արիւնեաց ինչ ցեղ ըլլալու: Իսկ անոր յատկակից յիշեալ Քաֆ ըլ-հարիւրն կամ Քաֆ ըլ-հիր *كف*, նշանակէ կատուի ճանկ. տես թ. 1353:

Յ014. Մարեմայ ճաղիկ. Մարեմճաղիկ.

Ըստ ոմանց է հասարակ Սպիտակ Շուշանն. տես Բրաբրոն և Խնկածաղիկ:

Յ015. Մարեմխոտ. Մարեմի խոտ. Մարիմխոտ. Մարեմայ խոտ.
Մարեմխոտիկ.

Բժշկարանք այլ եւ այլ օտար անուանց զուգեն այս գեղեցիկ և սրբազան անունը. մէկն գրէ. « Զարգայ՝ Մարեմխոտ » . միւս մի լաւ եւս, շօտայ. ուրիշ մի « Գովեզ, » որ անուանի Մայրամխոտ ». ուրիշ մ'այլ Զոսիրակն է, կ'ըսէ: Մէկն այլ գրէ օգուտը. « Եղջերուն յորժամ հիւանդանայ՝ Մարիմխոտ ուտէ և լաւանայ »: Տես և Արջտակ և Թաղթ անունները, ուր յիշուի Ար. Պոխտորի Միքիեմ բոյսը: — Յիտալիա Մարեմայ խոտ կ'անուանեն պատերու վրայ բուսած խոտ մի, մանրիկ վարդասպիտակ ծաղկներով, զոր քաղեն Համբարձման կամ Վերափոխման օր, և իրենց ննջարանին մէջ կախեն: Այսպիսի բոյս մ'այլ ի Փռանկաստան Marie-brogne կոչեն: Ուրիշ շատ բուսոց այլ Տիրամօր անունը կու տան Եւրոպացիք:

Յ016. Մարզանկօշ. — Տես Անճարակ, Թ. 116:

Յ017. Մարզօն ?

Հին Բժշկարանն գրէ. « Տաք է և չոր յերկու տարանայի մէջն. յուշ երթայ ի ստամոքէ. և որ ուտէ՝ Թող խառն կարօս ուտէ »:

Յ018. Մարիամի ճառ.

Ըստ ոմանց Լուսցտակի ծառն է. տես Թ. 930, և Լիբանովիտ: Պէջթար գրէ Շաճար ըր-մերիեմ, ریحان ریحان. շատ տեսակ բուսոց կու տրուի այս անունս, կ'ըսէ, բայց ի Սպանիա Լիբանովտի (Թ. 911) կամ Ալիսուանի (Parthenium). Ամիրտ. չի հաւնիր. « Իպն. հասարակ է ասեր (կ'ըսէ). և Մինհաճին տէրն ասէ, » Թէ Պոխտորի Մարիամն է. և ստուգել է Թէ ինքն երեք ցեղ է. մէկ ցեղն » պտուղ չունի, և երկու ցեղն միրգ ունի, և իր տակն Արտանիսան է »: (Տես զայս ի Շալակ գրոցս): Տես և վերոյիշեալ Մարեմայ ծաղիկն:

Յ019. Մարիամու բանջար.

Այս այլ յիշուած է Երազահան գրոց մէջ, և Թուի Թաղթն:

Յ020. * Մարիամու մատուցը կամ ձեռք.

Այս յիշուած չէ Հ. ի գիրս մեր, այլ Ար. Աստապե ըր-Մեթր جاساج որով անուամբ գրէ և Ամիրտ. « Որ Թ. Մարիամ այն (էլի) ասէ, և տերեւնին » Ղոռտ իտայաի կ'ասեն խոտ-մն կայ՝ այնոր կու նմանի, և ինքն մէն ու բարակ » կու ելնէ, և ի գազաթէն մինչեւ ի տակն ծաղիկ կ'ունենայ. և իր մազմզուկն

» զէտ կաթնկեր տղին ափին և մատներուն կու նմանի. և հինգ մատն կու լինի
» կամ վեց, և ի մէջն ի լիք գիհութիւն է. և իր գունն ապլախ սպիտակ և դեղին
» խառն է, և գիշ մի քաղցրկեկ կու լինի. և ի ավզի մէջ կամ ի ծովեղերք կու
» լինի, և զթանձր խլտերն կու հալէ, և զլղերն կու յիտարկէ, և խեւութեան
» օգտէ և դաղանահարի »: Փռանկ թարգմանն եւրոպական յատուկ անուն մի
չի դտներ այս ծաղկիս:

3031. Մարխ.

Տես Մարխ: — Ար. Մարխ կ'ըսուի *Leptandenia pyrotechnia* կոչուած ճաւ
պուկ ճղերով թուփն:

3032. Մարձակ.

Լաւ Հ. անուն մի լուռի ի հին Բժշկարանի, որ մաղասոյ դեղ խրատէ. « Մար-
» ձակ և Մաննեխ մասն մասն գինով խառնէ և խախաջեցո »: Դարձեալ. « Ա-
» կանդուկ և Խորասանիկ, Մաննեխ, Մարձակ, տղա և մեղրով յարս և ի Կաղնի
» շաք պլթէ, եր պիտենայ՝ այտով խախաջացո »:

3033. Մարմ.

« Սեւ Ամբա, որ է Կախէթու Ամպրան ». ըստ Բժշկարանի միոյ. Այս այլ
նախորդ անուան պէս հետաքննելի է. եթէ չէ Մարմ:

3034. Մարմախուր. Մարմախան. Մարմախուլ. Մարմախուզ.
Մարմախոյզ. Մարմարոյզ.

Այսպէս զանազանեալ գրութեամբ, և առ Պէյթարայ, *مرماخو. مرماخو. مرماخو. مرماخو. مرماخو. مرماخو.* Ամիրտ. գրէ. « Մարմախուլ, որ է Պարպանիձ. ինքն շորս ցեղ է,
» լաւն այն է որ կանաչ լինի, տաք է և շոր ք տարանան. նուրբ է և հալող է,
» և թէ հոտն կամ զլուրն ի գլուխն քսեն, զգլխոյն ցաւն որ ի հովութենէ լինի՝
» (տանի) և զըղեղան կալուածն՝ բանայ. և թէ զմաղն այնով լուանա՝ հաւա-
» սար առնէ. և թէ ի գինին խառնեն՝ շուտ հարբեցընէ և զսիրտն ուրախ առնէ
» և խնդացընէ. և հունտն օգտէ զիննաֆասին », եւ այլն: « Ասէ Պտին, թէ ինքն
» ի Մարմին ցեղերուն է, և Մարմի իսո այլ կ'ասեն լաւն այն է որ յածուց լինի »:
— Ուրիշ Բժշկարան մի գրէ. « Ինքն խոտ է և նման է Ֆարասիոնին (Հոտիոս),
» և անուշահոտն է լաւ »: Ուրիշ Բժշկր. մի՝ պլլրամէ պատճառած գլխացաւու-
թեան դեղոց մէջ յիշէ և Մարմախուզի տերեւ: — Լ. Marum. Փ. Herbe aux
Chats, կամ Germandré maritime.

3035. Մարմալ ?

Զայս և Արմալ և Մաուլայտակ և Մարուխ քաղցր՝ « եփէ, և զլուրն տուր՝
» որ խմէ », դեղ արիւնհոսողի, գրէ Բժշկարան մի:

3036. Մարմնատակ. — Տես Լոչուակ:

3027. Մարնատան ?.

Սխալ գրած կ'երեւի Բժշկը. մեր, թէ Հայք այսպէս կ'ըսեն Մանրագորին:

3028. Մարուխ. Գերմակ Մարուխ.

Այս անուամբ կոչէ շատ անգամ Մխ. Հերացի (եր. 41. 50) զՄատուտակ, զոր տես թ. 1997.

3029. Մարուֆ.

Տես Հաւաք: — Գր. Աղթամարցի շատ հեղ յիշէ զՄարուֆ՝ Մուրտի հետ.

3030. Մարս ?

« Ինքն խոտ-մն է, որ տերեւն նման է Դաղձին տերեւին, և ոմանք ի Թուր-
» քացն այս խոտիս Դրերոց Դաղձ կ'ասեն. և թէ գինով խմես՝ օգտէ ամենայն
» գաղանհարին... և թէ մէկ մարդ որ տայուն (խիարուկ ուռէցք) հանէ, և
» կամ այն տարին ի մարդկանց մէջն տայուն լինի, և թէ այս խոտէս մէկ երկու
» երեք անգամ՝ գինով կամ մուսալազով խմէ, այն տարին այն ցան ի նա չգայ
» և գեն շառնէ, և խալըսի Աստուծով »: — Պէյթար այս անուամբ յայժ-
բոյս մի յիշէ, բայց զճատարեր բոյս է. Ամասիացւոյն յիշածն հետաքննելի է: —
Նման է անուամբ և

3031. Մարսնի.

Ջոր նոր բառհաւաք մի գրած է, առանց ինչ բացատրութեան, և կըրնայ ըլ-
լալ թէ Մարսնին ըլլայ՝ այսպէս յետ և առաջութեամբ գրերու, ինչպէս Մարս
և Մարի: Բայց Բժշկարան մի յիշէ՝ լոյծ բնութիւնը պնդելու դեզոց մէջ և Մար-
սին տերեւ և պտուղ. նոյն թէ որիչ, ինչ չէ յայտ:

* Մարտակուշ. — Տես Մարգանկոշ:

3032. * Մելիովտա.

Այսպէս գրուած է հին Թարգմանութեան մի մէջ Յ. Μελιότων. և. Melilotus
որ է Կորնգան:

3033. Մելխակ.

Շահողրամի հետ շիոթուի մեր խօսից մէջ. բայց յետինս է Լ. Dianthus, իսկ
սա Caryophyllus, Փ. Giroնб. Ռ. Гвоздика. Թ. այլ Ղարկնֆիլ անունն թէ
վերայիշեալ ծաղկան կու արուի, թէ Մելխակին՝ որ համեմատը ծաղիկ է տաք
երկրի. և զայս բացատրէ Ամիրտ. նոյն Թ. բառով, « Ինքն Հնդի Երասպին է,
» լան այն է որ անուշահոտ լինի, տաք է և չոր է Գ տարածան, և հով ըղեղան
» ուժ տայ, և գրերնին հասմն անուշ առնէ, և օգտէ պուխարին և քթին հոտին

» և ակնջին գոռալուն, և զզլխուն մազն կ'ուժովցընէ, և զաչքն սրացընէ.. և
» ուրախ կ'առնէ:.. Ասէ Պտ. թէ Պ. Մաննակ կ'ասեն. և իր դալարն որպէս
» Չիթապտուղ կու նմանի, և այլ յերկան, և խիտ սեւ է, և իր խէժն կու
» նմանի Բեւեկնու խէժին, և ուժն այլ, և լաւն այն է որ հոտն սուր լինի և
» համն անուշ լինի, և քիչ մի լեղի է »: — Պէթար զՄեխակ յիշէ խորի ա-
նուամբ, **عجوة**. այսով յիշէ և Ամիրա. և « վեց ցեղ է, կ'ըսէ. լաւն այն է որ
» դեղին և անուշահոտ լինի », եւ այլն. բայց հետեւորդ բացատրութիւնն աւելի
Շահողրամի յարմար երեւնալով՝ թողու՛ք այնոր:

3034. Մեկոն.

Տես խաչառայ: Իսկ Մեկոնիոն. Բ. Մոսնոս, խաչառայ հիւթն կամ կաթն է.
որայ համար կ'ըսէ Ս. Բարսեղ իր Վեցօրէից մէջ (Ե). « Արմատք որ անուա-
» նեալ կոչին Եղբարոս և Ակոնիաովն և Մանրագոր և կաթն Մեկոնիոն ար-
» մատայ.. կաթամբ Մեկոնիովն արմատայ՝ զխիթս կարեւորս զհիւանդաց դարձու-
» ցանեն յախտից »:

3035. Մեհրանիկ.

Տեսակ մի Տանձի:

3036. Մեհրիկ ?

Պարսկերէն է. ըստ Բժշկարանի, և Մրուան-տակ նշանակէ:

3037. Մեղմերդ.

կաղնչնանի տակ է, կ'ըսէ Ատար: Տես Թ. 1377: Բէշուի և Իգամեղմերդոյ տակ,
զոր տես Թ. 851:

3038. Մեղոյշ. Մեղուշ.

Թուի խոտեղէն, Թթենոյ նման դէմադէմ տերեւներով, որոց՝ որձային կպած
անկեանց միջոց փոքրիկ քսակաձեւ կամ սկահաձեւ թեփոտ և մազոտ ամանք
կան՝ ամենափոքր ծաղկանց և հունտերու:

3039. Մեղուախոտ.

Ռոշքեանն գրէ խոտ մի սիրելի մեղուաց, և Լ. **Apiaster**, որոյ փոխան հիմայ
կոչուի **Melissophyllum**. որ նոյնպէս մեղուներու սիրելի կամ հաճոյ ըսել է, և
որովհետեւ շատ են ծաղկունք անոնց հաճոյական՝ չիմացուիր ստոյգ հիներուն
այս անունով ճանչցած յատուկ բոյսը:

3040. Մեղուախունկ.

Տես ինչ որ գրուած է Ժիլոյ բառի ներքեւ:

3041. Մեղուածաղիկ.

Խոտեղէն մի՝ որոյ արմատն սոխ կամ տակ ունի, իսկ ծաղիկն պէտպէս գոյ-
ներով և ձեւով մեղուի նմանութիւն ունի, որոյ համար այսպէս կոչեն Պանտաջիք:

3042. Մեղուակճիճ.

Նոր բանասերք յարմարուցեր են այս անունս **Լ. Trachelium, Փ. Trachélie.** բուսոյ, որ **Յ. բառով** Τράχηλος՝ Երկայնվզիկ նշանակէ, և **Տփածուից** ցեղէն է, խոտեղէն. ծաղկներն հասարակօրէն կապոյտ՝ հովանոցաձևե կամ արփաձևե ի ծայր որձային հաւաքեալ: **Գտուի** ի **Հր. Եւրոպա, ի Հս. Աֆրիկէ, և ի բարեխառն կողմանս Ասիոյ, ինչպէս ի Լիբանան, ի Յունաստան:**

3043. Մեղուամուշկ.

Այս այլ ի նորոց յարմարեալ անուն է **Լ. Athanasia, Փ. Athanasie,** իբր անթառամ անուանեալ բուսոյ. խողովակաձևից ցեղէն քառասնի չափ տեսակ թուփք են, տարածուած տերեւներով, դեղին անթառամ ծաղկօք և անուշահոտ կաշնեման հատերով: **Աֆրիկիոյ Բարեյուսոյ զուխն է ասոնց բնական երկիրն:**

3044. Մեղրախնձոր.

Տեսակ մի անոյշ խնձորոյ:

3045. Մեղրածուծ. Մեղրածծուկ.

Յիշեցինք ի Թիւ 118, որ Անճիտան անուամբ նաեւ Հոտիոյ՝ կ'իմանան ոմանք զայս իբր հոմանիշ, բայց և շիթեան նման բուսոց հետ. բայց սա յատուկ ըստ հին Բժշկարանի է « Փրասիոն (Πράσιον) որ է Մեղրածուծն » . **Լ. Marrabium, Փ. Marrabe. Գալիենոսի բառք գրեն **Մեղիդատուն կամ լաւեւ Մեղիտունն (Μελίωτον) Մեղրածուծ. Ռ. Куская мята. Ամիրտ. ըստ Պէթարայ Յ. գրէ. « Չարասիոն. երեք ազգ է, և անուշահոտ. ա. » դէկն չոր է. . . առէ Մահմատ Զաքարիայն՝ թէ « ինքն հոռմի անուն է, և օգտէ լերդին և փայ. » ծաղին կալուածոյն. . . և ակնլին ցաւոց. յոր. » ժամ զլուրն ի յականջն կաթեցուցանեա՝ զքա. » մին վարէ » : — Բժշկարան մ'այլ տեղեկութիւն կու ապ, « Փրասիոն՝ որ է Մեղրածուծ, » ի Զեթունայ քարերն շատ կու բուսնի » : 40ի չափ տեսակք կան այս տարեկան կամ դիմացու կուն խոտեղէն բուսոց, որոցմէ շատն անուշոտ գտուին ոչ միայն ի Զեթուն այլ և ուրիշ կիլիկիոյ և անոր սահմանակից երկիրներում. ի Հայս այլ **Աժտէրխանի տեսակն, M. Astracanicum.** — Քոչիի անուանեալն **M. Kotschy, և M. Condensatum. յԱմիդ. — M. Globulosum, ի Կեսարիա. — M. Propinquum, ի Փանձակ, Իււրէժ. — M. Parviflorum, ի Կարին. Սամսոն, եւ այլն:******



Մեղրածուծ.

3046. Մեղրապան.

Վիզի նման խոտ մի, որոյ պճեղներն կամ պսճերն անոյշ են, ըստ Սեբաստացւոց:

3047. Մեղրապուպ. Մեղրապուկ.

Փարը Չմերուկի տեսակ մի. իբր Շամամ, յիշուած ի Ս. Գիրս, (Թիւք, ծԱ. 8.), որոյ անոյշ համը յիշելով Եբրայեցիք՝ յանապատի ճամբորդութեան մէջ, փափագէին դառնալ յԵգիպտոս. Յ. այլ նման իմն կոչուի Μελοπέπων, Լ. Melopero. Փ. Méloperon. Աղեքսանդրի պատմութեան Թարգմանութեան մէջ այլ յիշուի (յերես 154) « Նաունք՝ որ քան զՄեղրապուպ մեծ էին »:

3048. ՄեղրԹեր.

Այսպէս կոչեն Պոնտացիք նորոց Եղեսպակ անուանածը (տես թ. 634), որ է Լ. Salvia, Փ. Sauge. Պէյթ. և Ամիրտ. Յ. բառով (Ελαδιόφακον) գրեն, **السلفاق**, « Ալիսֆադին որ այսօր Թ. Ըդոռո-լեգոս կ'ստէ. և ինքն յերկան յեր- » կան կու լինի, և շատ ճղեր ունի, և փայտն չորեքզոէն կու լինի և սպիտակ, » և տերեւնին Սերկեսիի տերեւ կու նմանի, բայց երկան կու լինի և բարակ. » և թէ զայս խոտիս զհիւզն տերեւոյն և փեւս և զլուրն տաս. . . օգտէ ամենայն գազա- » նահարի. և թէ խմցընես և օծես՝ զսպիտակ մազն սեւ առնէ, և զխոցերն կու » բուսցունէ, և զչտերն այլ աղէկցընէ. և թէ եացընեն և զլուրն խմեն՝ զլեգուին ծան- » բութիւնն կու տանի և քաղցր գրուցընել կու տայ », եւ այլն: — ՄեղրԹերթ Շրթնաձեւից ցեղէն խոտեղէն է, անուշահոտ ծաղկըներով, երբեմն պտղաւոր. գեղազորութեան մէջ շատ ի բան կու գայ, նոյնպէս և իր եղն: Խիստ շատ տե- սակներ ունի, որոց ոմանք Թերեւս մեր երկրին մէջ այլ եւ այլ անուններ այլ ու- նենան, զոր չեմք գիտեր, այլ բուսարանից որոշած անունները նշանակեմք. ի դուրս Թողով Արիկիոյ մէջ գտուածները, ուր որ լաւագոյն քննութիւն եղած է, բայց մեր ազգին բուն երկրէն գատ է. յիշնք նախ յատուկ Հայկական կոչուածը, Յ. Armona որ և Candidissima (ամենասպիտակ կամ ամենապայծառ) ի Կարին, Բարերդ. — Յ. Macroclamys, (երկայնաքղամիդ) ի Մուշ. — Յ. Suffruticosa, վանայ կողմերում. — Յ. Cæspitosa, ի Թ-Հ. — Յ. Bracteata, ի Սպեր, Մա- նախ, Հար. Հայք. — Յ. Euphratica, յափունս Եփրատայ ի Հայս. — Յ. Acetabulosa, ի Կարին, Մանախ, Կեսարիա, Խարբերդ, վան. — Յ. Glutinosa, Հս. Հայք, Պոնտոս. — Յ. Forskahlei ի Քէօփրիւ պաշի. — Յ. Syriaca, ի Թ-Հ. — Յ. Sclarea, ի Թ-Հ. — Յ. Urmensis և Յ. Aristata, Որմի. — Յ. Ceratophylla, ի Թ-Հ. — Յ. Verbascifolia, (Եղնալեզուի նման) ի Մուշ. — Յ. Xanthocheila, յերեւան, Արարատական. — Յ. Modesta, ի Կարին, Սպեր. — Յ. Staminea, ի Մուշ, Բարերդ, Սպեր. — Յ. Verticillata, ի Թ-Հ. և այլ քանի մի տեսակք:

3049. Մեղրիկ ծաղիկ.

Սալաձորցին երգած է.

« Տուզան ու Թորթն ու Մեղրիկ ծաղիկն՝ նման են ծաղկանց (կամ ծաղկած) ծառերուն »

Յիշուած է և ի Աշակ օրագրի (ձԸ, 88): Գուցէ նոյն ըլլայ և հետեւեալն,

2050. Մեղրիկենի.

Տանձենի մի մանր անոյշ պտուղներով, որ Մեղրիկ կամ Մեղրուկ կ'ըսուին, ի Թոտուլուր:

2051. Մեղրուկ կամ Մերրուկ.

Նոր բառգիրք մեր գրեն կապոյտ ծաղիկ Եզնալեզուի. իսկ եւրոպացի մի գուգէ Լ. Pulmonaria maculosa, Փ. Polmonaire, որ Պատնճանի ազգ մի է. դիմացկուն խոտեղէն, տերեւներուն վրայ սպիտակ պիսակներ կ'ըլլան. իբրեւ դեղ թոքի ախտից՝ այս անունն առած է (Pulmonaria, Թոքային): — Ագաթանգեղոսի մէջ յիշուած է Մեղրուկ ի կարգի գեղեցիկ ծաղկանց:

2052. Մեմբաճաղիկ կամ Միմփաճաղիկ.

Կոտեման և Տարգալի հետ գրէ նոր բառհաւաք մի. որ լսուի և ի կողմանս Ուրաստիոյ:

2053. Մերուշան.

Ահա գեղեցիկ հին անուն մի, զոր յիշէ Համամ՝ Վ. ի մեկնութեան Քերականի.
« Զվարդ. զՄերուշան, զԱպուզան՝ արական ասացին »:

2054. Մզեղ.

Այսպէս կոչեն ոմանք Օղնի արմատը, ուսկից կ'ըլլայ Շրէշն Տես Թաղաղու, Թ. 757:

2055. Մզմզուկ ?

Գուցէ նոյն է ընդ ներքոյ գրիւոյն հետ,

2056. Մզուկ.

Որ է Աւելուկն: տես Թ. 249:

2057. Մէշ.

Հին Բժշկարանն գրէ՝ « Նամամ՝ Մէշ, ի յԱնտաք լինի »: Նամամ կամ Նաւ մամ Ար. ܢܡܕ է տեսակ մի Թիւմ, Լ. Thyms Serpyllam, Փ. Thym Serpollet. Ամիրտ. գրէ « Նամամ, որ է Նամմ ըլ-մուշք և Նամհամ այլ կու ասեն. և ինքն » Սիսամպարն է, լաւն այն է որ կանանչ և սուր լինի... Գրոցս շինողն առաջն » ցեր է, թէ շատ եղեր է՝ որ Սիսամպարն այն է գարձեալ, և փոխեր է ի » բուսած տեղն, և այս բանիս իսկի հակառակութիւն չիկայ՝ որ Սիսամբարն » Նանայ եղաւ »: — Մէշի քանի մի տեսակներ կամ զանազաններ կան, որոց ոմանք գտուած են յԱպալկերտ, Կիւմկիւմ, Պինկէսլ, եւս ի Պոնտոս: — Տես և Թիւմ կամ Զամբուռ և Սիսամպար:

2058. *Մէշպահար. — Տես Ազոնս վայրի:

2059. Մըրիվանդ .

« Սպիտակ ծաղիկ ինչ » գրէ Մանան. (եր. 449): Թերեւս Մրուանտակ է:

2060. ՄԹՄԹուկ.

Նոր բառհաւար մի նշանակած է, առանց բացատրութեան:


2061. Մժեղամազ.

Ո՛վ յիշեր է նախ կամ ո՛ր գտուեր է. ինձ յայտնի չէ. բայց զուգուած է Լ. Jacobson բուսոյ, որ է Գարնան Հալուորիկն. (տես թ. 433), կամ անոր մերձաւոր տեսակն, որ տեսնուած է ի Կովկաս և ի Կիլիկիա. Փ. Séneçon Jacobée.

2062. Միաւորակ.

Ինչուան հիմայ լուսի անունս ի կողմանս Սերաստիոյ. հինկեկ Բժշկարան մ'այլ գրէ զայդ Ար. և Պ. Միչա անուան. ۴۴۴. Ամիրտ. գրէ. « Մոռիայք, որ է

» (Միայի սայիդէ . ինքն գիծու,
» Թին-մն է (խէժ) որ ի ծառէն
» կու ելնէ, և ծառն նման է Մշմի
» ծառին . . Հ. Չոնկի ձեք ասէ,
» և կարմիր լինի և սեւ լինի . .
» կակղացընող է և տաքընող է
» և եփող է . քուն կու բերէ: . .
» Ասէ Պո. Թէ Հա. Մուսֆայ ասէ:
» (Stacté, Styrax). և Ասայի Լուչպ.
» նի այլ ասեն. և այն որ իր քա-
» մուքան է՝ Չոր Չոնկին է. և լաւն
» այն է որ անուշահոտ լինի, և ի
» Շիրազ այսոր Պոնիտըր կ'ասեն.
» և իր խասիաթն այն է. յորժամ
» որ ծխեն՝ զբորոսային զօդն և
» զիր շարութիւնն տանի . . բայց
» գլուխ կու ցաւցունէ, և թոքին
» զեն է. և զիր շարութիւնն տանի
» Մագտաքէն » : Ուրիշ տեղ այլ
գրէ. « Լուչպի, որ է Չոր Չոնկի,
» և լաւն այն է որ խէժ ունենայ
» և անուշահոտ լինի . . Պո. ասէ,
» Թէ Լուչպին՝ Միւնան է, և այնոր Սայիրա ասեն . և ինքն մեզր կու նմանի,
» քաղցրութիւն չունի . և ինքն ծառի խէժ է, և Հոսոմոց երկիրն կու լինի .
» Ըստ Պէթարայ ծառն այլ Լուչպի կամ Լուչմա կոչուի: Գուցէ ի Միչա անու-
նէն է և Միաւորակն:



Մի՛ մոռանար.

Միճխի. — Տես Մժիսի.

3063. Մի' մոռանար. ինձ մի մոռնալ.

Շատ ազգաց ուսմկաց մէջ կան այսպիսի յիշատակաց ծաղկունք, որոց հաշ-
կեալք հիմայ կըրնան ըսուիլ Φ . Pensée կոչուած բազմատեսակ գեղեցիկ Մանու-
շակքն, որք խնամով դարմանուին և նորանոր տեսակներ հնարուին: Հայոց անմա-
ռացուկն որ ցեղ ծաղիկ կամ ծաղկըներ են. — խնդրելի է: Յիշուած է ի Մշակ
օրագրի (ձԸ, 88):

Միշմիշ. — Տես Մշմիշ.

3064. Միրիկէ կամ Միւրիկէ.

Յ. Μυρίκη, L. Myrica. Ս. Բարսղի վեցօրէից մէջ յիշուած է. « Միւս եւս ծառ
» որ կոչի Միրիկէ, որ Ղրարբին և ոստին է, զի ընդ Ղրարբիս՝ Ղրարբի է,
» և ընդ ոստինս ոստին համարի »: Պիներոս յիշած է զայս իբրև տեսակ մի
» Մոչայի (Tamarix Africana), որոյ թէ և ոչ սակաւ օգուտները յիշէ ի դեղո-
» բայս, բայց ուսմիկն անիծած ծառ համարի, կ'ըսէ, որովհետեւ ոչ պտուղ կու
տայ և ոչ մշակուի (!): Վերայգրեալ Միւրարակին պէս խժոտ ծառ կամ թուփ
է և անուշահոտ, տերեւներն այլ խժոտ կէտեր ունին, որոցմէ առաջ գնտաձեւ
մոմոյք բուսնին, ծաղկներն այլ նոյն ձեւով կ'երեւին: Մէկ տեսակն աւելի ա-
ռատ և ճերմակ խէժ ունենալով Մոմարբի կ'ըսուի, M. Cerifera. Φ . Cirier կամ
Arbre à la cire. Ստոնց ցեղէն է և Դարչիշանն, L. Asphaltathe, զոր յիշած եմք
թ. 565. որոյ նման կամ նոյն է և

3065. Միւռոնածառ.

Որոյ յատուկ տեսակն չի յիշուիր, այլ իբրև անուշահոտ խէժ կամ իւղ բերող
ծառ մի, և եկեղեցւոյ սուրբ օծմանց իւղոյ օրհնութեան մէջ խառնուի: Յիշենք
որ Դիոսկորիտէս կու յիշէ (Գ, ԽԳ) բայս մի ի Վիպրացւոց, ի Վիւզիկեցւոց
և ի Սիկիլիացւոց Սամիսոսի կոչուած կամ Սամիսոսի, Յ. Σάμψουον, L.
Sampaucum, զոր Եգիպտացիք Սոփոյ կոչեն, և այլք պէսպէս անուամբ. իսկ
Հայք՝ կ'ըսէ՝ Միսոն, Myuron, Հռոմայեցիք Majorana. և ինքն նոյն համարի
ընդ Amaracum. Պիներոս գրէ (ԻԱ, ԼԵ կամ ԺԱ) այս երկու անուամբք մէկտեղ.
որով կ'ըլլայ Սննարակն (թ. 116): — Մատտիոյի կ'ըսէ, թէ ի Տոսկանա Persa
կոչեն այս բոյսս, թերեւս ի Պարսից եկած կարծուելով. մենք այլ չենք կըրնար
ըսել՝ թէ ի Հայոց բառէն առած ըլլան արեւմտեայք Majorana անունը. որոյ
չստ ծիծաղական և անընդունելի կարծիք մի գրէ նոյն Մատտիոյի. ինչ այլ ըլ-
լայ՝ նշանական բան մ'է Դիոսկորիտեայ յիշելն հայերէն տնունը:

1. Vulgus Infelicem arborem eam appellat, quoniam nihil ferat, nec sœratur unquam,

2066. Մլբտիկ.

Տեսակ մի կարծր խնձոր, զոր յաշնան հոգու մէջ կու թաղեն և ի գարնան կու հանեն ուտելու:

2067. Մլմուկ.

Այսպէս կ'անուանեն Տրապիզոնցիք այն բազմատեսակ ծաղկներէն մէկը, որ Յ. Լ. և Փ. բառով Geranium կոչուին, որ կուռնկ հաւու նմանութիւն կ'իմացընէ. ասկէց ոմանք ի նորոցս՝ կոնկիենի կամ խորդենի յարմարցուցեր են. Պէյթար այլ նոյն Յ. բառով գրէ **انجیر**, ինչպէս և Ամիրա. «Ղարանիոն, ինքն խոտ-մն է,

» որ տերեւն նման Շարայիզ Երուսաղէմի (Պէյթ. կ'ըսէ
» Աննմոն) տերեւին. բայց այլ յերկար կու լինի, և
» տակն բոլոր կու լինի և սուր. և թէ սպեղանի առ-
» նես աղով և զածով խառնես և դնես ի վերայ կու-
» ծիծնուն՝ ի տեղացն հանէ և ձգէ »: — Յայտ է որ
այսպէս ստորագրուածն միայն մէկ տեսակի վերաբե-
րի, զոր ոմանք ի գիտնոց համարին *G. Rotundifolium*,
կամ *Tuberosum* (Բոլորատերեւ կամ կոնդեզաւոր).
ի Տրապիզոնէ խաւրուած չոր Մլմուկն այլ որ երկայն
կոթերով որթի տերեւի նման տերեւներ ունէր, և փոքր
ու բարակ մաշկով բաժակաձեւ ծի-
րանեզոյն ծաղիկ, բուսարանք անուա-
նեցին *G. Gracile* (ճղճիմ) *Trilobium*
(եռախորշ): Քանի որ ուրիշ Հ. ա.
նուն չէ յայտնուած այս ազգ բուսոց՝
Մլմուկ անունն ընդունիմք, և ի մեր
երկրի տեսնուած տեսակները յիշեմք.
և նախ Հայկականն *G. Armenum*, որ
թէ ի Թ-Հ. և թէ ի Թ-Հ. տեսնուած
է. — *G. Sanguineum*, (Արիւնազոյն)
ի Պարիսար Լ. — *G. Collinum*, ի Բա-
բերդ, Թէքտազ Լ. Արարատական. —
G. Sylvestrum (վայրի) ի Թ-Հ. ի
վիբո. — *G. Pyrenaicum* ի Մեծ և Փոքր Հայս. — *G. Robertianum*, ի Թ-Հ
և ի կովկաս. — *G. Pratense* (մարգաց) ի Սովխէթ. — *S. Ibericum*, (վրացի)
ի կովկաս և Պոնտոս. — *G. Tuberosa*, յարեւմտ. Հայս. — *G. Subcaulescens*,
ի Մանախ, յԱրգէսո Լ:



Մլմուկ.

2068. Մխիծ.

Ստ. Ռոչքեան կ'ըսէ խիժարեր ծառ, և Անձրուար նշանակէ:

2069. Մխսէս ?

Իժկ. Անտոն վ. մէկ երկու տեղ յիշէ, « Մխսէան և Թուզն և Բանջարն », որով իմացուի բուսեղէն ըլլալն, այլ ոչ որպիսութիւնն:

2070. Մծխի. Մցխի. Միճխի.

Ար կ'ըսուի և Որդան փայտ, Թ. Գզը աղամ կամ քեօք և Պագգամ աղամի, որ է Փ. Brésil. Ժանոթ կարծր և կարմիր փայտով ծառ, որ ներկելու ի բան կու գայ. մեծ և փոքր կամ Թփատեսակ ծառք, կան նա եւ խոտատեսակք. հասարակորէն տաք երկիրներու բոյսք են:

2071. Մկան ագի.

Ար է Թարգմանութիւն Ար. Չանսպ ըլ-ֆարէ ذنب الفارغة. որ ինչպէս գրեն Պէյթ. և Ամիրտ. « է Լիսան ըլ-համարն (որ է Գառնալեզուն), և այս անուան » անոր համար ունի՝ որ իր որձան ի մկան ագի կու նմանի, և ողկոյզն այլ կու նմանի »:

2072. Մկան ականջ. Մկնականջ.

Յ. այլ նոյնանիչ Μυσώτα, յորմէ և Լ. Myosotis, նոյն և Ար. Ազան ըլ ֆար ذنب الفارغة. Անճարակ անուան ներքեւ (Թ. 116) յիշեցինք Ամիրտովաթի ըսածը՝ այս Ար. անուան համար, որոյ և սեպհականեցինք նոյնանիչը՝ այլ եւ այլ Լ. և Ար. անուանց միջէն. ասոնց վրայ կ'աւելցընէ Ամիրտ. Յ. անուններ այլ և կ'ըսէ. « Ազան ըլ- » ֆարն, ինքն խոտ-մն է, տերեւն մանտր որպէս մկան ականջ » կու նմանի, և ինքն երեք ցեղ կու լինի. և լաւն այն է որ » աղէկ և սուր լինի.. Իպն. ասէ, թէ ինքն կու բուսնի յած- » վենիքն և ի յայգիքն, և մէկ ազգ-մն այլ կայ որ ի լերունքն » կու բուսնի. և ի տակն զէտ առվուտի ճղեր կու ելանէ. և » տակն ի մօտ կարմիր կու լինի, և մէջն փուճ կու լինի, և » մանտր տերեւնի կ'ունենայ և յերկան, և Թուրքերն իրեն » Հոսթոնք կօգի կու ասեն: Եւ թէ զտակն սպեղանի առնես » և ի յաչքն դնես՝ զնասուրն ի յաչիցն ուտէ.. Բայց ասած » խոտիս աղվորն այն է՝ որ ի աւզոտ տեղեր բուսնի և տե- » բեւնին և ճղերն ի գետինն ճապղի. մանր տերեւնի ունինայ » որպէս մկան ականջ, և թէ զինքն ի ջուրն եփես և քամես » և խմես, և ի վերայ աղի ձուկ ուտես, զճիճին յաղիցն հանէ »: Պէյթար չորս տեսակ զանազանէ և առանձինն յօդուածովք ստորագրէ. բուսարանք այլ շատ տեսակներ յիւնն, որոցմէ տեսեր և նշանակեր են M. Palustris (ճախնային) ի կարին, Մկան ականջ. ի կովկաս. — M. Cæspitosa ի Պոնտոս, կովկաս. — M. Sicula ի Ճիմիլ լ. — M. Sylvania (վարի) ի Թ-Հ. կովկաս, եւ այլն — M. Platyphylla (տափա-տերեւ) ի Մուշ. — M. Intermedia, կովկասու երկու կողմերում այլ. — M. Ispida, ի Հր. կովկաս. — M. Stricta, ի Բարբորդ և ուրիշ կողմեր, եւ այլն:



2073. Մկան աղիք .

Հին բառգիրք մի գրէ . « Հիոյիփարկոն (Hypericum) Մկան աղի ասեն , ծառի » կտեւ » : Հին Բժշկարանն . « Զքանջարն՝ որ Մկան աղիք ասեն՝ եփէ գինով » և խմեցո » գահացաւ ունողին : Մկանաղիքն Հ . Գոճաւորոռու և Քոշմորոռոք այլ կ'ըտուի . տես զայս յետինս :

2074. Մկան ճիրտ .

Յիշուեցաւ Մարգիմուշկ անուամբ . որոյ զուգէ Ասար և Նարգմուշկ . սա եթէ Նարմուշկ է Պ . անուամբ , նշանակէ Նուան մուշկ , նոանածեւ և անուշահոտ ծաղիկ մի . ըստ Պէյթարայ , զոր ոմանք վայրի Նուան ծաղիկ կարծեն , այլք Փենունա : Տես զայս :

2075. Մկնալոճ .

Ալոճի նման մանրիկ կարմիր պտուղ բերող Թուփ մի է , ծանօթ ի Տարօն :

2076. Մկնամիրգ .

Այսպէս կոչուած է յոմանց Խաղիրանն .

2077. Մկնճուկ .

Յիշուած և ոչ բացատրուած ի նոր բառհւսւաբէ :

2078. Մկնսոխ . Մկնասոխ .

Հին բառգիրքն Յ . գրէ Ասկալի ակրաս , այսինքն Սկիլլա աղբիւս . Σκίλλα άγρία , Վայրի Սոխ . L . Scilla , Φ . Scille . Պէյթ . գրէ Օնտոյ , Scilla . Իսկ Ամիրտ . « Խողի , » որ է Խակիչն , որ է Մկնսոխն , որ է Պասալ ըլ-յանուշն , որ է Պասալ ըլ-քարն . և » ինքն վայրի Սոխն է . և ինքն ի յանապատ լերինքն կու լինայ . աղէկն այն է » որ այն տեղերն լինայ՝ որ ի հօն Քիթրա բունի . . . Իպն . ասէ , թէ եփեն հո » ուով ձիթով և Փիճոյ խժ խառնեն և ծեծեն և օժին ի ձեռքն որ ճղքել լինի , » օգտէ , և ոտիցն այլ օգտէ . և թէ եփեն և ի կոծիծնուն վրայ դնեն , յետ տանի . » և թէ զայս Սոխս անարատ ի դուռն ի վայր կախեն՝ քնասակար և թունաւոր » գազան ի յայն տունն չի մտնու . և թէ յանձն օժես՝ շտեր այնէ յանձն , և » թէ մուրտասանկ քսես՝ աղէկցընէ . և որ այս սոխին կեղեւին վրայ կոխէ՝ կաղ » կու լինի ! և թէ զայս սոխն՝ մուկն ուտէ՝ մեռնի : Ասեր է գրոցս Ժողովողն , » թէ լաւ Թապիր այն է , որ յորժամ գինքն ի գետնէն հանեն , պիտի որ կրտեն , » այսպէս . հանց կու պիտի որ ղկղմիւտրն տաքցընեն և զայս սոխին որձան ի միջէն » հանեն փատէ դանկով , և երկաթ չիհասնի յինքն , և խարեն այն տաք կլմըն . » տրոզն զտակն՝ որ ուժն չերթայ . և յորժամ ուզես որ եփես՝ կեղեւէ փատէ դան » կով և ի խմորին մէջն առ և եփէ , կամ ի փռան կամ թոնիրն , և ի վրան » խմորին կաւ այլ օժես՝ լաւ է , հանէ կտրատէ փատէ դանկով և փռէ ի վերայ » քթան կտաւի՝ որ չորնայ » , և այլն : — Բուսաբանք հարիւր տեսակ մի Մկն .

սոխ զանազանեն, որք ոչ միայն դեղերու բանի կու գան, այլ և իրենց կարմիր. կապոյտ և ճերմակ ծաղկամբ՝ զարդ են պարտիզաց. ասոնցմէ Աննային կա. չուածն S. Autumnalis յիշուի ի Պնտոս և ի Հար. կովկաս. — S. Cernua ի Մանասի. — S. Bifolia ի կովկաս, ի Վիրս. — S. Sibirica գեղեցիկ կապոյտ ի Սեւան կղզի. և այլ շատ տեսակք ի Կիլիկիա և ի Փարս Աօխ:

Վաստ. Գիրքն գինեբանութեան մէջ գրէ (ՃՁԸ) Մկնստի գինի շինելու հա. » մար. « Առ Մկնստի լեռնէ, և թէ չգտանես՝ ի ծովեզերէ, ի թէմուզի (յուլիս) » 16 օրն. թէ քաղես՝ պահեա ի շուք տեղ, և ի մուստառին ժամն առ, և հան » զդրուց կեղեւն, և կտրեա զքիթն և զտակն և խաչք ճեղքեա, և երկու նուկի » ի տանն կտեր աման ձգեա, և այս կշռովս արա զայլ շատն. և երբ գինենայ՝ » ի բան տար, ստամբաքցն օգտէ. և իրեանդ խմելն՝ յառաւօտուն պիտի՝ » կթղայ մի, տաք ջրովն լաւ է քան հսկովն, և աչաց լուսոյն օգտէ. և յետ հաց » ուտելոյ հալ բերէ կերակրին »: — Չիազարմանութեան հեղինակն այլ գրէ (ՅՃԻ). « Դիմակրիտէս գրեալ է, թէ, որ ի գարնան սկիզբն առնու Մկնստի և » Մորենայ տակ՝ ծեծէ և ի շուրն դնէ, և տայ գրաստուն, տասն օր զհետ ի. » բերաց խմէ, նա փրկէ զանասունն յամենայն անծանօթ և ի ծանօթ ցաւաց »: Վայրի Մկնստի այլ յիշուի, զոր Գալիենու բառք զուգեն Նարգէսի:

2079. Մկնփուռ.

Թ. Չազրր բիքեհի, ըստ նոր բառհաւաքի. որպէսն քննելի:

2080. Մկրատուկ.

« Բոյս՝ որոյ սերմն մկրատածեւ է », կ'ըսէ Ռիվոլա բառագիրն:

2081. Մղամուհ. Մղամունչի ծառ.

Մշտադալար ծառաց դասէն է, և համարուի կաշուն խժարերն L. Viscum, Փ. Gui. Տես Ճուշ:

2082. Մղտեսուկ.

Թիչէ նոր բառհաւաք ոմն:

2083. Մնեւ.

Միայն ի Մի. Գոյէ յիշուի յԱռական (1Թ), և երեւի ընդեղէն քան բանջա. բերդէն. « Հանար և Մնեւ ի միասին ուրախ լինէին՝ իբրու անդրժեյիք էին թրուշ. » նոց. եկեալ գազանաց և անասնոց՝ կերեալ և կոխան արարեալ, և զղջա. » ցեալ ասեն. Անխայելոյ աղագաւ զանձինս պատեցաք, և այժմ վարկպարազի » ապականեցաք »: անշուշտ կամ թեփիկներով կամ փչիկներով էր պատանքն:

2084. Մնեխն متن.

Տեղ տեղ յիշուի ի Բժշկարանս, իբրեւ վայրի կամ անարգ տեսակ, որ և կո. շուի Գիշտեհու վարդ և Անդուն (թ. 114):

3085. Մնթուր.

Պ. Մենսար նշանակէ Շահագրամ. վաստակոց գիրքն ուրիշ ծաղկանց հետ յիշէ (Ծիւր). Ամիրտ. այլ յիշէ համառօտ՝ ըստ Պէյթարայ. « Մանսար ڃواړو, որ է » խիրի »:

3086. Մնողի.

Քուի թուփ, երկայն ձուռնեւ տերեւօք, և աւելի երկայն կոթերով փունջ փունջ ծաղկներ ունի. իւրաքանչիւր ծաղիկն այլ զատ մանր հաստկեկ կոթով հինգ թերթով, գեղնագոյն կարմրի քշտող, մանրիկ սեւուկ հունտերով:

3087. Մնջան.

Հին Բժշկարանն յիշէ, « Պիսիք, Մնջանի տակ ». ուրեմն Բուստն է, կենդաւնարոյս ծովային: Պ. Ք. Մերձան:

3088. Մնջեղ.

Վասակ. գիրքն կ'ըսէ (ԻԻ). « ԶՄնջեղ ծառայն սերմն, և իւր Տառ առնն, ի » այն ժամս պարտ է քաղել և ցանել »: — Յ. քնադրին բառն այլ յիշէ ուրիշ տեղ (ՅԻ), Մֆիտասան, զոր խոտ կոչէ. ուղիղն է Σφνδαμνος, որ է Լ. Δοερ, Փ. Erable. Տես Բիծխի, Քղկի:

3089. Մնտիկ.

Յիշուած է առանց բացատրութեան ի բառհաւաքէ:

3090. Մշամ ?

Ոչ հին Բժշկարան մի յիշէ, « Մշամի թթու ջուր »: Թերեւս ըլլայ Մաշմ:

3091. Մշկաղեղծ ?

Տղայոց ըխտաւորութեան դեղ « շատ օգտէ », կ'ըսէ Բժշկարան մի. գուցէ ըլլար Մշկադաղձ:

Մշկամիրգ. — Տես Մաշկամիրգ.

3092. Մշկան եղիճ.

Հնդկաց բառ է, կ'ըսէ բառգիրք մի. լաւ եւս է ըսել Հնդկաց բերք. Լեղակն է:

Մշկիկ. — Տես Մշտիկ:

3093. Մշմիշ. Միշմիշ.

Տես Միիրան: — Գառնեցին (Յովհ. Վ.) խրատուց մէջ կու գտուչոցընէ. « Տարզոն, Ըստեպղին և Սոխ և Մըմըշ չիր, մի՛ յուով ուտեր »:

2094. Մշտիկ. — Տես Զուպա.

2095. Մոլամզինի. — Տես Դանտարզենի:

2096. Մոլախոտ.

Այսպէս կոչուին որ և է բոյսերու փնասող անպիտան խոտեր:

2097. Մոլէխինդ. Մոլէֆուհնդ.

Տես Խնդակոթ, ուր բացատրուած է. յիշենք հօս Վանական Վի. ի ըսածը: « Մոլէխինդն՝ խոտ է. ցօղուն առնէ որպէս այն՝ որ Սպանդ են յասել. պտուղն » որպէս զմանր Պատինճան. մահադեղ է մարդոյ »:

2098. Մոլկուշտ.

Կոստոս, ըստ բառից Գալիենոսի, Լ. Costus, Ար. Գուստ. Տես Կոստ և Կապարասի:

2099. 2100 Մոլոշ. Մոլոխիա. Մոլոխ.

Հանրածանօթ հասարակ բոյս մի, որ յայտնուի նա եւ իր բազմատեսակ անուամբք և ի մեր լեզուիս. ինչպէս, Աղշկտակ, Բաղդրոշկ, Բիթերդ, Խոնպագ. Հալուորիկ, Ճննդկարդիք, Խաարուշտ ? Յ. Μολόχη. Լ. Malva, Փ. Mauve. Ռ. Зинзивей. Ամիրտ. գրէ Ար. անուամբն **حلب**. « Խոնպագի, որ է Մոլոխն, որ Թ. »
 « այս խոտիս Ալպամ կօմաձի ասէ. և ինքն երկու ցեղ է, յածվոց և վայրի. »
 « լաւն այն է որ մատղաշ և կանաչ լինի. կակղացրնող է. և Թէ զմազն լուա. »
 « նան իր ջրովն՝ պայծառ և փայլուն առնէ. և Թէ պրես և զմոխիրն առ. »
 « նուս՝ օգտէ տղրուկին որ ի խաչակն կպչի. և զկուրծքն կակղացրնէ, և օգտէ »
 « շոր հագին. որ զմարդն մեղուն խայթէ՝ ի վերայ սպեղանի առնէ՝ օգտէ. »
 « Տեղ-մն այլ Մոլոքիայ կայ՝ որ Պախլար ոչ-Երահուտիայ կ'ասեն » (Հրէից բակլայ): — Միս. Հերոցի այլ յիշէ Մոլոշը Յ. և Պ. անուամբք. « Մոլոխ, որ է ի »
 « Խուպագէ ազգ մի, որ է ցանծու » այսինքն ցանած կամ ածուոց: Վաստկ. Գիրքն այլ նշանպէս. « Ին ոմանք ի մարդկանէ՝ որք առնուն զինի և զխօտն որ »
 « անուանի Խուպայզ, եռացուցանեն զիւրեանք ընդ իրեար, և տպա յիստակեն »
 « զգինին և զայն ջրախառնեն, և խմեն վաստակաւորքն՝ հետ աղպէտին »:
 — Մոլոքի տեսակաց մէջ յատուկ յիշուած են ի Հայս, M. Aegyptia և M. Rotundifolia.

2101. Մոխրի կամ Մուխրի.

Տեսակ մի է Տանձի.

2102. Մոծակի ծառ. — Տես Կնճճի.

2103. Մողկ.

Ժախի նման բանջարեղէն մի, որ թարմ կ'ուտուի ի գարնան, յետոյ չուտուիր:

2104. Մոմեմար?

« Ընտիր բանջար վայրի ». ըստ Մանան (եր. 449):

2105. Մոմոչ.

Ինչպէս ուրիշ տեղ յիշած եմք՝ այսպէս կոչուին վայրի ծառոց պտղանման չոր բերքն, ինչպէս Նոճեաց և Կաղնեաց, որք շատ հեղ կլոր կ'ըլլան, երբեմն Բալուտի նման, երբեմն կակուղ երկայն կախուած, ինչպէս Ուռնեաց. Փո. Chaton. Drape. Achaine, եւ այլն:

2106. Մոնի.

Մոշայ ծառն է ըստ Համէլէնցոց. ըստ այլոց՝ « տեսակ մի Թեղի, տերեւներն » աւելի Ուռի տերեւներու կը նմանին, ոլորուելով բարձրացած մեծ ծառ է ». (Արարատ, Ին, 430): Ուրիշ մի Թ. Ըստրինճ աղտճի կոչէ:

2107. Մոշ. Մոշմիրգ.

« Սեւ Թըթի նման է, որ Մորենի ասեն », կ'ըսէ Կամարկապցին, նոյնպէս և Մանանայ: — Ըստ Բախտամեանի՝ Հապալասենի է, Լ. Rubus Fructuosus, Փ. Ronce arbrisseau.

2108. Մոշա. Մոշի. Մոշաւայրի. Մոշէփայտ.

Վայրի անտառային ծառոց հասարակ և ծանօթագոյն տեսակ, զոր ոմանք Գագ կոչեն, թէ և սա ուրիշ նշանակութիւն այլ ունի. ինչպէս Մոշի անունն այլ զանազան տեսակ ծառոց արուի. բայց յատուկն թուի Լ. Tamarix որ և Brya, յորմէ Փ. Bruyère. Նա եւ մեր Բժշկարանք գրեն Դամարիսգոյս. Ար. Տարֆա կամ Դարֆա Լ. Գ. զոր Թ. Խըրդուն աղտճի կոչէ Ամիրտ. և դարձեալ. « Որ » է Խաշ? ածւոց. և վայրի լինի. և լաւն այն է որ ի ջրէն հեռու լինի. կապող » և չորացընող է. և իր մոխիրն զոջին սպանանէ, և օգտէ գլխուն խոցերուն. » և իր միրգն օգտէ արուն թքնելուն... և կրակին այրածին և դժար խոցերուն. » և իր ջուրն զքրտինքն կու կտրէ. և օգտէ օդին պղծութեանն... Խալտ. ասէ, » թէ գիր տակն եփեն կարմիր շամշով և մէկ քանի օր այն մարդուն տան՝ և » խմցընեն որ գողութեան նշան երեցել է, տանի. և թէ երեք հեզ օրնկան » ծխեն՝ օգտէ. Ասէ Պտ. թէ կտգ կ'ասեն և իր պտուղն կազմագուն է (տես » և Քզմագիճ), և Խաշ կ'ասեն, և իւր պտուղն Հապ ըլ-Խաշն է »: — Սիմ. Կա. մարկապցին կ'ըսէ, « Վայրի աւելն է, Յախ ծառ, ինչոն աղտճի »: — Մոշա, ից այլ եւ այլ տեսակք ճանչցուած են մեր հին Հեր (Խոյ) գաւառին մէջ. ինչպէս T. Rosea, T. Ostandra, T. Laxa, T. Szowitsiana. Իսկ T. Pallasii ի Թ—Հ. — T. Brachystachys ի Հր. կովկաս:

3109 Կարմիր Մոշ.

Հին Բժշկարանն յիշէ. « Խուրս՝ Կարմիր Մոշի հնդով՝ օգտէ հազի և արոյնկե-
րի ». ուրիշ տեղ այլ յիշէ Հապաղասի, Ղաղուլէի և այլոց հետ:

3110. Մոռ Ճարիկ.

Յիշուի Գեղարունեաց կողմերում:

3111. Մոռ Գնուղէզ.

Ըստ սմանց Ալուեսնուց արմատն է, Սյախան: Տես Թ. 63:

3112. Մոր կամ Մորի.

Այսպէս կոչի Մորենայ պտուղն, և անոր նմանիքն, նա եւ Էլակն, Թէ և ոչ ա-
մէն տեղ: Տես և Մորմ:

3113. Մորենի. Մորեմուկ. Մորմենի. Մորիմուկ.

Շատ ծանօթ և վայրի Թուփ, տղայոց սիրելի՝ պտղոցն համար, իսկ փշտա և բարակ
հիւղերուն համար՝ անարգ և անպիտան. բայց ի Ս. Գիրս յիշեալ Մովսէս մարգա-
րէի ծանօթ տեպեամբն, « Մորենին վառեալ որ ոչ այրէր ». սրբազան յիշատակ
Թողած, մանաւանդ այս յիշեալ Շարականի նշանակութեամբը, որ է Ս. Աստուա-
ծածնի կուսութեամբ ծնանելն զՔրիստոս: — Լ. Rabus. ֆ. Bonoe, Ռ. Те-
рновой Кустъ. Ար. Ուլլաիգ هليق կամ ըստ Ամիր. « Յուշիս. որ Հ. Մորմենի
» ասէ և Թ. Պօկոսրդան ասէ. և ինքն ծառ-մն է, փունջն շատ և ճղերն կարմիր
» է, և միրգն Սեւ Թուփ կու նմանի. քամուքն լաւ է, հով և չոր է... միրգն..
» զփորն կապէ.. տերեւն զտտամբն ուժովցընէ », եւ այլն: — Ի վաստկ. գիրք
յիշուի Մորենայ տակ (տես ի բառն Մկնստի): Ար. բառով յիշէ Ամիրտ. և

3114. Շան Մորենի.

Ար. Յուշիս չը-չուպ. որ է Հ. Մասուրն, ինչպէս կ'ըսէ և ինչպէս գրած
եմք (Թ. 1987): Փշտաութիւնը ծաղրելով յիշեցընէ Առակախօսն (Գոշ, Ը.), Թէ,
Որթն կու լար իր ուռերը կարուելուն համար, և « եկին տունկը ամենայն միտ-
» Թարել զնա. եկն ընդ նոսա և Մորենի, և.. ասէր, Եկի միտթարել զքեզ, զի
» ինեւ զաչազ սրբեսցես. և նա ասէ. Շնորհ ունիմ տնկագործին՝ որ խէ զքեզ
» յարմատոց »: Յայտնի է բարոյականն. « Մորոսաց բան առաւել զայրացու-
» ցանէ՝ քան Թէ միտթարէ զսզաւորս, նման Մորենույն »: Թողունք այսոր
վրէժխնդրութեան պարծանքն այլ, որով դարձեալ յաղթուեցաւ (Թ): — Մորենին
իր տեսակներն ունի, որոց զլիաւոր մ'է R. Idæus կոչուածն, որ գտուի և ի
Պանտոս և ի Հր. կովկաս, նոյնպէս և R. Cæsius. իսկ R. Glandulosus (մո-
մոչաւոր) ի Թ-Հ:

2115. Մորէ.

Հին Բժշկարանն բանջարեղինաց դասին մէջ յիշէ զայս. « Մորէ, երկու ազգ » են. է որ գարէալոյրով և է որ ձկով » (ձուկով, ձկամբ, կ'եփուի և կ'ուտուի). Թերեւս այս է Կիրդի Ս. Գրոց մեկնութեան մէջ (Գ, Թագաւորութեանց, Գ, 9) գրուածն, « Ակքանն... նման Մորի կամ Կաղանջանն »:

2116. Մորմ.

Կամարկապցին կ'ըսէ. « Ելակն (է) որ ի մէջ խոտին բուսանի. հիմի (գեղ) է »: Տես և Մոր.

2117. Մորմն.

Հին Բառագրոց մէջ այսոր զուգուած Յ. բառն՝ է Ստոպիլոն, որ պիտի ըլլայ Ստրիխնոս Տըսչոս. Լ. Solanum.

2118. Մորմոյ պտուղ.

Քաղանջն է կ'ըսեն Բժշկարանք. և է Պողարեր կոչուած Մորենին, Rubus Fructuosus. Փ. Ronce arbrisseau.

2119 Մու.

Հին Բժշկ. կ'ըսէ, « Մու և Փու տակեր են »: — Ար. այլ, Գ. Լ. Փ. Meum, Յ. Միոս. « Մու, ըստ Ամիրտ. ինքն խոտ է, տերեւն ի Սամիթ կու նմանի, և » հոտն սուր, և լաւն այն է որ զլեզուն այրէ. անուշ է և յարգորող է, և զհով » լերդն տաքցընէ, և քամին տանի, . . . Ատէ Պտ. թէ Հո. Միտ աւէ. . . և » ինքն որպէս Սամիթ է, և որձայն այլ հաստ է և յերկայնութիւնն երկու կան » զուն լինի. և իր տակին Մու ասեն. Թեթեւ է և սպիտակ է որպէս Ղարիկոն » (Սունկ), և քիչ մի ի դեղնութիւն կու քտէ, և քիչ մի լեղի է, և անուշա » հոտ է. և իր տակն ի բան կու անցնի. լաւն այն է որ սպիտակ և պայծառ » լինի. և ինքն քան զՍնպուլն նուրբ է. . . և տակն ցրու է, և որն ըղորդ է և » որն ծուռ է. ազգի ազգի է »: — Քանի մի տեսակ ունի Մու, հասարակօրէն բարեխառն և ցուրտ կլիմայից տակ, դիմացկուն խոտեղէնք են, երկայնաձև պտղով, և անուշահոտութեան համար յարգի. զլիսաւորն է M. Athamantioum.

2120. Մուզուալա.

Կիլիկիոյ երկրին պտղոց մէջ յիշէ Թովմաս Վ. ոմն. Թուի Մեվզն Արարաց, որ է Musa. Տես Մօզ:

2121. Մուժուկուրկ ?

Յիշուած է, այլ յիշողն մոռցուած, իբրև համանիշ Միսկի, որ և Կարմիր բանջար և Բարբուզեա. զորս տես իրենց կարգին. — Պայթար՝ յորմէ և Ամիրտ.

ստորագրեն Պախլար ըլ-Եամանիա անուամբ. իրր Եմենու Բակլայ. բայց Արա-
բացին այլ եւ այլ անուններ այլ յիշէ, որոց հետ և վիստոնն, *بلبلط*. և ստո-
րագրութենէն ստուգութի թէ է Լ. Blitum, Փ. Blette. զոր յիշած եմք Բակլայի
անուանց տակ:

2122. * Մուլուլս. — Տես թասխտո և յրոյն ժանկ:

2123. * Մուլխալլասա. Մուղալասա.

Բժշկարան մի գրէ ստոյգ և անստոյգ. « Մոսխալլասայ որ թ. Հուրոսր պաշի
» ասէ (Յոպոպասար Թարգմանի, Ալոն). խոտ է, տերեւն որպէս Քարաւո, ժա-
» դիկն՝ որպէս կարիճն. երեք ցեղ է. լաւն Քիլիմիճի քոսի (Լերան Գինճ) կու-
» ասեն. կոկ է. հունտն խոշոր և լեղի է, ծաղիկն կտրմրածեռ՝ չրի եզերքն
» բուսնի և ի քարուտ տեղերն լինի, խիստ լաւն այս է: Եւ մէկն ի յաղբուտ
» տեղերն բուսնի. հունտն մանր, ծաղիկն սպիտակ է, սեւգուն: Պ. Քազտանկ
» ասէ, Պըլպըլի շամի ասէ. և ինքս թրեաք է ամենայն մուհացու դեղոց: Երբ
» արեգակն ի թոյն մտանէ՝ մէկ դրամ խմէ կամ մէկ մթխալ. նա այն տարին
» մահու դեղն մուտ շայնէ, և այլ շատ խասիաթ ունի: Եւ տեսայ գիրք մի այլ՝
» որ ասէր, թէ երբ Նաւաուզն մտանես՝ եօթն հատ Մուխալլասա սւտես. նա
» ի յօձի և կարիճի խեթելուն անահ ես », եւ այլն. — Ամիրտոլվաթ տեղ մի
» այսոր նման երկար բացատրէ, ուրիշ տեղ Շամարի Խարահիմն է, կ'ըսէ: Տես
և թ. 23. և Շահպանակ:

2124. Մուկլ. Մուղլ.

Քարախունկն է, կ'ըսէ Ամիրտ. և երկու ազգ է, կարմիր և ազրախ, և այս յետինս
է աղէկն. բայց Պէյթ. կ'իմացընէ որ ծառոյ մի խէժ է, որ Լ. Bdelium կ'ըսուի, և
երբնմբ բուսական բերք չէր կարծուէր. հիմայ այսոր բերող ծառն ճանչցուի Բնեկ-
նեաց տեսակ մի, և Բալասանի ծառ կ'ըսուի, Balsamodendron Mukul, նա եւ Heu-
delotia. Տես և Բալասան:

2125. Մուղաս.

Ըստ Բժշկարանաց « Վայրի Նաւան տակն է »: Տես զայս. գուցէ նոյն է և

2126. Մուղաք.

Թունաւոր նիւթոց և հաւանորէն բուսոց կարգին՝ գրէ Բժշկարան մի, և խրատէ,
« Դեղ՝ որ Մուղաք ուտէ, փսխել տուր », եւ այլն:

2127. Մուշկ.

Յայտնի է որ սա բոյս չէ, այլ կենդանական բերք է, բայց բուսականէ գոյանայ
անուշահոտ նիւթն ի մշկապորտ կենդանին, և ըստ այսմ կըրնայ մկաբեր ըսուիլ
և աննազարար բոյսն. բայց զայս որոշել դժուար է: — Յատուկ բուսական Մուշկ
է Ար. կողուածն ասորի բաւերով Մուշուք տերանցի. կամ Մուշքարատա անցի

جيدو لظكادو، ըստ Աւիրտ. « Մուշք տրամչիհ. սր է ինքն ի Դաղձին ցեղե
 » բուն, և տերեւն Ղաահանի տերեւ նմանի, և հոտն սուր և համն լեղի, և լաւն
 » այն է որ նոր լինի և թաժա. և թէ ծեծես և ի յաչիցն վերայ դնես՝ զկապուտ.
 » կիլն տանի. և թէ իր գուրչն յականջն մտնէ՝ զակընջին որդն հանէ, և զգո.
 » դալն կտրէ. . զքարն հալէ, և զճիճին հանէ՝ գրողորն և զերկայնն. . Ասէ Պտ.
 » թէ ինքն ի Ծոտրանաձին (Մոթրին) ցեղերուն է. և թէ յինքն ոչխարն արածի՝
 » ի կաթին տեղն արիւն կըթվի ի ծծէն. և որ ուտէ զինքն՝ Թող մէկ մթխալ
 » ուտէ » : — Պէյթարայ Թարգմանն՝ այս տեսակ Մըլկի կամ Դաղձին Լ. Dieta-
 mus գրէ, Փ. Pouliot de jardin.

2128. — Մշկադեղ.

Ընտիր Բժշկարան մի յիշէ, Թունաւոր բուսեղէն ուտողի դեղոց մէջ. Թուի վերո-
 յիշեալն կամ հետեւեալն :

2129. — Մշկի ճաղիկ.

Յիշեցինք զայս Դոկո ? և Դուն անուանց կարգին, և զուգիլն Սոտի հետ, ինչպէս
 գրէ և Աւիրտ. բայց ուրիշ տեղ զուգէ Ար. Սուտտ կամ Սուտտ Տայա անուան,
 և կ'ըսէ. « Ինքն խոտ-Յն է՝ որ տերեւն երկայն կու լինի, և նման է Ձիթենու տե-
 » բեւին, և ի տակն բոլորկեկ գէտ Պապունած իրք լինի, և ճուղն նման է Բացվե-
 » նու ճղին, և թէ զտերեւն և զծաղիկն ծեծեն և յաչքն քաշեն՝ զխոտորութիւնն և
 » զարիւնն տանի. . և թէ զծաղիկն հոտովան՝ խիստ փոնքտացընէ, և փոնքտալով
 » զըղեզն յստակէ. և թէ զայս խոտիս զամէնն ծեծես և սպեղանի առնես և դնես
 » յերեսին մանին վերայ, օգտէ Ատուծով » : — L. Cyperus rotundus. Փ. Sou-
 ohet odorant.

2130. Մուսուրի .

Մեծ Թթենի, որոյ սեւագոյն և մեղրահամ պտուղն Մուսուր կ'ըսուի, ըստ Խոտու-
 չրեցուց. գտուի և ի Կաղզուան, ի Հար. Հայս, յԱմիր.

2131. Մուրիկ. Մրկենի. — Տես Միրիկէ կամ Միրիկէ :

2132. Մուրտ. Մրտենի. Մրտի .

Անթառամ և հոտաւոր ծառ մի, հռչակեալի հնուց, ճիւղերն իբրև պտակ յիշա-
 տակաց և արժանաւորայ ընծայուելով. Յ. բառ է, յորմէ և Լ. Myrtus, Փ. Myrte.
 Իսկ Ար. Աս, سمرقوت որով յիշէ Աւիրտ. և կ'ըսէ « Որ է Մուրտն, և Թ. Միրիկն
 » ասէ. յածվենիքն լինայ և ի լերդնքն այլ լինի. լաւն այն է որ հոտն սուր լինայ . .
 » Ասցած է, թէ տերեւն այլ գէտ զպտուղն է ի գործաւորութիւն, և թէ հոտովան՝
 » զտաք պուխարնին չրէ, և պտուղն զհազն կու տանի. և թէ քացխով խառնես
 » և ի գլուխն օծես՝ զքթին կաթիլն և զարիւն կտրէ, և թէ իր ծառին ճղերուն
 » առնուս և գէտ հալլալ առնես. և ոտացդ ի ճկութն անցընես, զանձինն խտերուն
 » զուռեցն տանի. Այլ արուեստ-Յն այլ կայ, որ զինքն զամենն առնուն. զպտուղն

» զճուղն, զտերեւն և զկեղեւն, և ծեծես և առնուս եօթն նուկի ու կէս վաղիք? և
 » երեք մէտրա շիրա խառնէ, և այնչափ եփես՝ որ երեք բաժնէն մէկ մնայ,
 » քամես և առնուս զայն շարապն, ում որ խմցընես՝ օգտէ ակընջին և յբի խո-
 » ցերուն որ ի գլուխն լինի և թէ փուկին. և որ պէնէկ ունենայ՝ խմէ՝ օգտէ. . .
 » և այն գաներուն՝ որ ի յանձն լինայ և կամ ի յաղիքն կու լինայ. . . Այս Մըր-
 » տենուս մէկ ցեղն այլ կայ, և տերեւն կու նմանի յինքն և բոլորկեկ պտուղ
 » ունի տերեւին մէջն. և յօրժամ հասնի՝ կարմիր կու լինայ. . . Եւ Մուրտն ազգի
 » ազգի է. մէկին պտուղն սեւ և մէկին սպիտակ, աղէկն սեւն է »:

Վաստկ. գիրքն վերնագրելով (ՄԻՐ) « Վասն Հասարակաց », ճառէ Մրտե-
 » նոյ վրայ, և կ'ըսէ. « Փորձով, օգտակարութիւն ունի շինութեան. զի հոտն և
 » փոթոթութիւնն՝ զհաւայն առնու և բերէ ի շինութիւն. օգտակար է բնակ.
 » շացն. վասն այնորիկ պարտ է Մրտենին ի շուրջ շինութեանցն տնկել »: —
 Հին բուսաբանք կամ բնախօսք համարին, թէ Մրտենին սիրող է նռնենույ, և
 թէ իրարու մօտ ըլլան՝ շատ պտղաբեր կ'ըլլան:

2133. — Մրտի տակ .

Թէ վերայիշեալ Վաստկ. գիրքն (քԱ), և թէ Բժշկարանք՝ այս անուամբ փո-
 խանակ Մրտենոյ տակը կամ արմատը ճանչնալու՝ վրացի կոճն է կ'ըսեն. զոր
 օրինակ. « Թէ վրացի կոճ՝ որ է Մրտին տակն՝ ծխես, օգտէ », ճճիները փը-
 ճացընելու:

2134. Մուամոշ .

Թերեւս Մորամոշ ըսելու է. վասն զի Մոյի և Մորի նման պտուղ բերէ եր-
 կայնաձեւ, ճղերն ի գետին ասրածուին:

2135. Մուճիկ .

Ուտելի արմատ մի, ըստ Մշակի, (Ը, 88):

2136. Մումուուկ .

Յիշէ նոր բառհաւաք մի, առանց բացատրելու:

Մրիվանդ . — Տես Մըրիվանդ:

2137. Մրկենի . — Տես Մորիկի:

2138. Մրկիթ .

Ուռնաձեւ վայրի պտուղ մ'է, զոր շորցընելով կ'աղան և կերակուր կ'ընեն:
 — Թերեւս նոյն կամ նման է այն կեռասի նման կպչուն հիւթով պտղոյ, զոր
 աղալով պատսեղ շինեն, և բրնձով խառնած՝ պահոց կերակուր. սա կտուրի թոր-
 քոսմայ պատուեղ, անշուշտ այն տեղ գտուելուն համար:

2139. Մրուանտակ .

Այլ եւ այլ անուամբք այլ յիշուած է. Խոտիչ, Կագմարե, Մագմագիկ, եւ այլն. և Յ. և Լ. անուամբ՝ որով Պէյթ. այլ յիշէ, Ասարոն (Asarum). Ամիրտ. ետքի յիշուած օտար անուան տակ գրէ. « Որ Թ. Քետի օրի ասէ, և Հ. Մուրվանտակ » ասեն, և Պ. Մէհրէիտայ ասեն. և ինքն բարակ տակեր են և » անուշահոտ. հինգ ցեղ է. . . Ասէ Պտ. Թէ ինքն խոտ-մն է՝ որ » տերեւն նման է Լատանի տերեւին (Պէյթ. Բաղեղան ասէ, » ուրեմն Լապրայ պիտէր), և իր տակն ի բան կու անցնի . և » տերեւն այլ մանր է քան զԼատանին տերեւն. և ծաղիկն կար- » միր է. հունդն աման ունի որպէս Ազվէշբանկին հնդին . . և » այս խոտս շատն ի Հոռմաց երկիրն կու լինի . և ինքն երկու » ցեղ է, բարակ և հաստ է. և ինքս տակ է, մազմզուկ ունի, և » Թել ունի բարակ որպէս Նարտին՝ որ է Սնպուշի Ռուսին, և » Նարտինին մազմզուկն բարակ է, և ի դեղնութիւն կու քլտէ, » որպէս Մամիրանն. և Ասարոնն ի հաստութիւնն և ի բարա- » կութիւն ի մէջ է, և հոտն նման է Սնպուշի Հինտին հոտին . . » Եւ ամանք ասեր են Թէ Ասարոնն Սնպուշի ըռուսինն տակն » է » : — Մրուանտակի քիչ տեսակաց զխաւորներէն է Կովկասային կոչուածն, A. Caucasicum.



2140-1. Մրջմուկ. Մրջնածաղիկ .

Յիշուի ի կողմանս վանայ, (Մշակ, ԺԷ, 127, ԺԸ, 88). Թերեւս նոյն ըլլայ և

2142. Մրջնբոյս .

Յիշուած ի նոր բառհաւաքէ :

2143. Մրվան ծաղիկ,

Սալաճորցին երգած է .

« Երվան ծաղիկն է սպիտակ, մարգն բուսեր հետ Մրվանուն » :

Մրուանտակ .


2144. Մրվոր. — Տես Տորոռչի :

2145 Մօզ կամ Մավզ. Մավզայ .

Հին Բժշկր. գրէ, « Մօզ, որ է Քիլա, միրգ մի է որ յԱլայեայ գայ, և զինքն » ի Պասրայ այլ բերեն », իսկ Ամիրտ. « ինքն ծառ-մն է որ շինած է ի Ղուլ- » ղասին տակէն և ի յԱմբրաւին կտէն. լանս այն է որ խոշոր լինի . . Ասէ Պտ. » Թէ ինքն ծառ-մն է որ Նաիլ ասեն. և ծառ մ'այլ կայ ի յայն կու նմանի, » որ իր պտղին Մավզ կ'ասեն, և ի ծովեզր տեղրանք կու լինի շատ, և համն » քաղցր որպէս Խալխալ ? և կեղեւ ունի . . Եւ ասացեալ են, Թէ Մավզն ի յիր » ծառն չի չորանար, և յայնժամ կու չորանայ՝ երբ որ ի ծառէն ի վայր գայ

» և ի տունն քանի մի օր կախես. և շատ մարդիկ եկան պատմեցին մեզ. թէ
 » զՄավզին զմէկ ճուղն տեսաք՝ որ 60 Մավզ կայր, և ճղին ծանրութիւնն 60
 » լիտր էր, մինչև յայն ժամն որ կըզերն հասաւ և ի բուրգն շատ կըզեր այլ
 » բուսաւ. և ասնն, թէ իր տերեւին տափկութիւնն երեք կանգուն է, և երկու
 » կանգուն քան զմարդն բարձր լինի, և ի բուրն ամէնն տերեւնի կու բուսնի
 » մէկմէկի յետեւ: Եւ ասցած են, թէ Մավզն ի գետնէն ելնելուն մէջն մինչև
 » ի միջ տալն՝ երկու ամիս լինի. և ծաղկելուն և միրզն հանելուն ի մէջն 40
 » օր լինի. և յամէն ճուղ 30 Մավզ լինի, մինչև ի 800 Մավզն լինի. և յոր-
 » ժամ շատանայ՝ ի ճղերն սիւն կու դնեն՝ որ չի ծանրանայ ճիւղն և չի կտարի
 » ծառն »: — Յայտ է որ Մավզն Լ. *Musa paradisiaca*, Հնդկաց և ուրիշ տաք
 երկրի բերք է, Պանասն այլ կ'ըսուի. Ամասիացւոյն ըսածին պէս երկայն և լայն
 տերեւներով, գուցէ ոչ այնքան պտղաշատ. հաւանական է Ափրիկոյ կամ Լի-
 կայոնիոյ տաք ծովեզերքում այլ բուսնիլն (ուր է Ալայա). բայց ի Մուշ գտուիլն
 ինչպէս գրէ Քաղիագեանն (Առաջն. Մանկ. 168) աւելի քան զանհաւանական է:

3146. ՄՈՒԱՄԲ .

Բժշկարան մի գրէ, թէ այսպէս ասէ Հայն զԱփսաձ. Ամիրտ. այլ կ'ըսէ թէ
 Ալտան  Մորենիի տեսակ է. « որ փուշ ունի, և լաւն այն է որ կանանչ
 » լինի, և հոտն զէս Խնձորի հոտ լինի.. և ինքն անվար տեղեր լինի. աղէկն
 » այն անմարդարնակ տեղեր լինի, և տերեւն կանաչ լինի »: — Լ. *Lycium*
europæum, Փ. *Lyciet méditerranéen*. — Տես և Հագագ:

3147. ՄՈՐՈՒՐ . — Տես Չարխտո:

3148. ՅԱՐԵՆԱՅ ?

Այլ եւ այլ բանից՝ նաեւ բժշկականաց՝ բովանդակող Ոսկիփորիկ գրքի մի մէջ
 գրուած է. « Խոտ մի կայ Յարենայ անուն ասնն, որ է Թորթիա մի? Ճառվար
 » Ար. որ կախարդաց երկիւղ ունի՝ զնա հանէ և առ իւր (պահէ), չկարէ ոք
 » առնել նմա չար: Խոտոյս նշանն այս է. ինքն երկայն է և բարձր, և ծաղիկն
 » բոլոր, և գոյնն (քան) զամենայն ծաղիկն յոյժ պատուականն է և կարմիր. ի
 » լերինքն և ի նխուր? մարգագետին լինի. տերեւն սուր է որպէս զձեռն?
 » սերմն նման է Նռան հատի »: — Յաջողաց մնայ ստուգել ինչ խոտ է այս.
 » որոյ վրայք գրուածն այլ՝ ինչպէս կու տեսնուի՝ շատ սխալ և տարակուսական է:

3149. ՅԱԿԻՆԹ .

Յայտ է Յ. *Yáκινθος* բառ ըլլան, յորմէ և Լ. *Hiacinthus*, Փ. *Jacinte* կամ
Hyacinthe Ռ. *Γιακινθῶν*. Պէյթար այլ նոյն անունը գրէ, Ուաչիներս. *سنتياقث*,
 զոր մեր նախնիք այլ ի գործ ածեր են Ս. Հարց գրոց Թարգմանութեան մէջ.
 չիլեն և բնութեան զարմանալիքը, որ նոյն և մի հողն և ջուրն՝ Մանուշակին
 ծիրանի գոյն կու տայ, Յակընթին՝ կապուտակ. ինչպէս Ս. Կիւրեղ (Կոչ. Ըն.

ծայութեան, Գ). « Նոյն անձրեւ՝ ծիրանի զՄանուշակն երեւցուցանէ, կապու-
 » տակի հարկանի Յակինթ ծաղիկ »: — Ամիրտ. աւելի խորթ կարգացեր է Ար-
 բառը, Ալիաֆիհուզ, և « ինքն խոտ-մն է, կ'ըսէ, որ թիզ մ'է յերկանքն, և հաս-
 » աութիւն ճկըթի մի շափ կու լինի. և գունն կանանչ կու լինի, և ճերմակգուն
 » ծաղիկ կ'ունենայ, և գագաթն բոլորկեկ կու լինի, և ի լիք հունդ կու լինի »:
 Պէլթար, որ է Դիոսկորիտոսէ կ'առնու, ծաղիկը ծիրանի կ'ըսէ և ոչ ճերմակ-
 թէ և այս և այն գունովն այլ կ'ըլլայ, և կապոյտ այլ ըստ բանի Ս. Կիրղի-
 թէ գունոցն զանազանութեան և թէ անուշահոտութեան համար պարտիզաց
 զարդ է ի գարնան. Եւրոպա Արեւելեան Յակինթ, H. Orientalis կոչուի մէկ տեսակն,
 որ Նարդասի ազգի վերաբերի ըստ ոմանց, իսկ Յակինթ՝ Շուշանաձեւից ցեղէն է:



Յակինթ.



Յակոբուկ.

Բայց եթէ Մուզայից հարցընենք՝ կ'ըսեն, թէ նա Ամիւկլայ և Դիոմիզայ դուստրն
 էր և Ապոլոնի սիրականն. որոյ նախանձելով Չեփիւռ, երբ որ մի անոնք սկուտեղով
 կու խաղային, փչեց ասոր վրայ՝ որ Յակինթեայ գլխոյն զարնուելով՝ սպաննեց. Ա-
 պոլոն՝ այլ այս ծաղկան փոխարկեց սիրականին արիւնը, (ուրեմն ծաղկին բնական
 գոյնն կարմիր էր), և մարմինն այլ փոխադրեց յաստեղս: — Մեր երկրի սահմանաց
 մէջ յիշուած է ի Գանձակ և ի Հէքեարի (Այգառք): — Տես և Սմբուլ:

2150. Յակոբուկ .

Լ. *Physalis Alkekengi*. ֆ. *Alkekengi* կամ *Coqueret*, յայտ է որ այդ ուսում-
 նական անունն Ար. է, كوكاك. որպէս գրի և Հ. Քաքանաձ կամ « Քանքա-
 յաքա »:

» ետձ, որ է Յակորուկ, կ'ըսէ Ամիրտ. ինքն կարմիր միրգ-մն է, յամի մէջ է. և
 » ինքն ի Ծնխաղողին (Solanum) ցեղէն է. և լաւն այն է որ կարմիր լինի... Ատէ
 » Պտ. թէ Հապ ըլ-արոսս կու ասէ », (թէ այսպէս ըսուէր՝ Հարսնահատ կամ Հար-
 » սին պտուղ կըրնար թարգմանուիլ, բայց Պէյթար Հապ ըլ-լաեռզ գրէ, ըստ Լը-
 » զէրի, և մէկ ցեղ-մն այլ կայ որ ֆուսմոսեան կու ասեն, և Հ. Նազայիե ? կու ա-
 » սեն. և իր ուժն մօտիկ է Ծնխաղողին ուժին և տերեւին այլ. լաւն այն է որ
 » լեռան լինի, լեռանն հապն լաւ է, և տերեւն ածվոցն լաւ է քան զՎայրուն » : —
 » Դարձեալ գրէ Ամասիացին. « ինքն ի յայգիքն լինի, և կարմիր բշտեր է, մէջն զէտ
 » խաղողի հատ ունի, և կեղեւովն եղ ներկեն. աղէկն մանր է » : Ուրիշ գրող մի
 կ'ըսէ « Հալարչտիկ է. եղ ներկեն կարմիր » : Խաղողի նմանութեան համար Ար-
 կոչուի եւս ինեկ էլ-տիպ կամ Էցալիպ. որ է ըսել՝ գայլը կամ շաքալի խաղող : —
 Բժշկարան մ'այլ պարզապէս « Կարմիր Ծնխաղող » կ'անուանէ զՔաբանան : Յա-
 կորուկը խոտեղէն և դիմացկուն բոյսեր են, երկայն մազմզուկներով կու տարա-
 ծուին ածուոց մէջ հատերնին, ինչպէս ըստ մեր բնախօսն՝ մաշկի պէս հալարչտի
 մէջ ամբողջած է : Եուք և պարարտ տեղուանք կու սրբեն, ի Յունաստան, Փոքր
 Ասիա, Պոնտոս և յԱրեմոսեան Հայս այլ տեսնուած են, յԵրրոպա այլ կ'աճին : —
 Տես և Քաբանան : — Բժշկարան մ'այլ գրէ Յակորուկի համար, թէ « Թ. Հէր
 » տե՛մ պոհար (Մշտագարուն) .. Քորած հարսնուկ, զի Արուսի տարփեդտե՛ կ'ասէ » :

2151. Յակրի.

Վայրի փշոտ ծառ մի կամ թուփ, ինչպէս վկայէ Կաթուղիկեայ թղթոց մեկ-
 նիչ Սարգիս Վ. մեր, « Փլարերքն՝ որպէս զՅակրին և զԴժնիկն » . ուրիշ տեղ
 այլ (Բ Պետր. Բ) կ'ըսէ, « ի ծառս փլարերս սոյն խորհուրդ երեւի, որ յար
 » ի կանաչութեանն կայ և մնայ, և տերեւաթափ երեք ոչ լինին. որպէս Գին և
 » Յակրին և Դոճին », եւ այլն : Տերեւներն նմանին Նոճույ, պտուղն կամ հա-
 տերն՝ Սիսուան : Նմանութեանն համար՝ Կարնեցիք Գագ կոչեն այս ծառս այլ,
 որ է Լ. Rhamnus Catharticus, Փ. Norpran. Պէյթար շատ տեսակներ յիշէ այս
 ցեղ ծառոց, որոց որն յատկապէս մեր Յակրիին զուգուի՝ դժար է որոշել. ընդ-
 հանուր տեսակին անունն է Ար. Ախամ جاسم, որով գրէ և Ամիրտ. « ինքն
 » Յուլեիինց է », այսինքն՝ Դժնկաց ազգէն. տես զայն : Վերայիշեալ տեսակն B.
 Catharticus յիշուած է ի Հր. Կովկաս, որով յայտնի և ի Հայս :

2152. Յասմիկ. Յասմին.

Մանօթ աղնուական ծաղիկ մի, հոտովն և տերեւներուն ձեւովն, և անուշա-
 բոյր իւղովն. Ար. Եսսուսին, جاسمين, ուսկի առած են Լ. Gelsominus, Փ. Jasmin.
 Ռ. Ясминъ. Խորեն. աշխարհագրութեան մէջ յիշուի. անկէ առաջ Ագաթան-
 գեղեայ՝ Անիար և Մանիչակ ծաղկանց հետ. և թերեւս այս առաջին յիշատակն
 ըլլայ Յասմիկի ի գիրս : « Եսսուսին՝ երեք ցեղ է, գրէ Ամիրտ. լաւն այն է որ
 » սպիտակ լինի և հոտն անուշ լինի. տաք և չոր է.. և հոտն օգտէ հով զլիսա-
 » ցաւութեան.. և զղեղան կալուածն բանայ, և տերեւն զմանն ի յերեռացն
 » տանի, և զչտերն այլ տանի, և ակնջին և ծաղկին օգտէ.. և ձէթն օգտէ հին

» սակրացառութեան.. Ատէ Պտին. Պ. Սահրատ ասէ և ի Շիրազ՝ Կոչի ետաւ.
» մին ասեն, և ինքն սպիտակ և դեղին և ազրախ կու լինի.. Շարիֆն ասէ, թէ
» զսպիտակ Եասամին չորացընեն և լոսեն և քսեն սեւ մազին կամ ծխեն և
» կամ լուանան, զսեւ մազն սպիտակ այնէ. և թէ զԵասամինին չուրն տասն
» որ անօթուց խմէ՝ զնամազպուռունն (փորու որդ) ձգէ »: — Սեստինի (Se-
stini) իտալացի հնագէտն՝ անցեալ դարուն վերջերը ի Կոստանդնուպօլիս եղած
ատենն, կ'ըսէ, որ գնացեր է յՕրթագիւղ Հայազգւոյ մի պարտէղը, Յասմըկի
խնամով գարմանելը տեսնելու: — Տաուշոյ կողմերում յՈւտի նահանգի կ'աճի շատ:

2153. Յասմիկ վայրի. — Տես Հոտոտ:

2154. Յափուկ ?

Նորահնար բառ կ'երեւի Reseda բուսոյ համար. տես Կանչխոտ:

2155. Յեսմիկ կամ Յեսմուկ.

Ըստ Ասարայ ոչ է Յասմիկ՝ այլ Ասորեկ (Թ. 168). տես և Քաջաչ:

2156. Յոպոպասար.

Նորոց յարմարցուցած բառ կ'երեւի՝ Թ. Հոտոտը պաշի կոչուածին, զոր Ամիրտ.
ցեղ մի Ալուն կ'ըսէ, ուրիշ տեղ « Մոսիսալասա, (տես 2123), և Հայ ընկոյզ.
իսկ ի գիտնոց համարուի Լ. Osyris Linaria, Փ. Rouvet, կամ Osyris Alba, որ
Ճանդալի ցեղէն է, և կու յիշուի ի Յունաստան, Փոքր Ասիա, Կիլիկիա:

2157. Յունապի.

Ար. باده, պտուղն այլ Յունապ կոչուած է և Չոսպ. Թերեւս ըստ Լ. Zizyrus,
Փ. Juzabier, Ռ. Грудной придорожник, որ Գծնկաց ցեղէն է ըստ ձեւոյն,
այլ պտղովն յարգի, ըստ Առակախօսին մերոյ, որ կ'ըսէ (ժԸ). « Յանմաաց զք
» եհար զՅունապի՝ կարծելով զնա Գծնիկ. որոյ զայրացեալ ասաց. Ո՛ր անագո.
» բոյն, գտունկ՝ ի պտղոյ արժան է ճանաչել և ոչ ի տեսակէ »: Ամիրտ. օտար
անուն մ'այլ կու տայ. « Յունապն՝ որ է Շիրանա, լաւն այն է որ քաղցր լինի,
» և ծակ չունենայ, և կարմիր լինի և մալի լինի. և Ծռ. Ճոյճոյպի (Juzube) և
» Գոտրիպիս ? (Ռ. Грудная ягода) ասեն. և ինքն մուհթատիլ է, թէ եփեն
» և ուտեն, և կակղացընող է.. Ատէ Պտին. Թէ լաւն այն է որ կերակրէն յա.
» ուջ ուտեն. և քիչ կերակրէ զանձն և յուշ հայի. և թէ գիր տերեւն չո.
» րացընեն և լոսեն և քացախ խառնեն և ի վերայ կերվածին դնեն, օգտէ. և
» լաւն այն է որ յառաջ մեղր օծես և ապա ի վերայ դնես.. Եւ թէ զկուտն
» ծեծես և պաղ չրով խմես, զքնութիւնն ամրացընէ և զփորն կապէ. և թէ
» տաճիկ կռէզ խառնես և տաս, և թէ դիր խէժն քացխով թրջես երկու երեք
» հեղ, օգտէ աղեաց գաներուն. և թէ զտերեւն ծամես՝ քան զՏարղօն լաւ է.
» և այսօր ի Շիրազ Շիրան ասեն և ի Սպահան Շիրանա ասեն »: Ըստ հին

» Բժշկարանի՝ Յունապին « տաքն շատ է քան զգէճն, որ ուտէ՝ մարսկան է .
» որ թրղէ և զլուրն խմէ՝ զյեւելցած արոյն հահնդէ և գինութիւն առնէ . և
» յանօթեց զինք ուտել լաւ է, և օգտէ հազի և հեւուց, իրիկմեցալի և մսանցլի
» առաւել . և քանի մեծ լինի՝ լաւ է » : — Հասարակ տեսակն *Z. Vulgaris*
ճանչցուած է և ի Հայս :

2158. Յոփի. Յուրի. Ոփի. Հոփի.

Ըստ ազգայնոց ոմանց՝ Կաղամախի ծառն է . Բժշկարան մի գրէ, « Ղափախ որ Հ .
» Յուրի ասէ » : Ռոչքեանն գրէ . « Փոքր ծառ, որ զհոտաբեր ծաղիկս բերէ և
» վարդագոյնս, և զպտուղս փոքրագոյնս քան զՋիթեանոյն » . և *L. Capparis*
գրէ, որով շատ օտարանայ ի հասարակաց կարծեաց . մանաւանդ որ հին հեղի-
նակք մեր եւս, ինչպէս Պիտոյից գրոցն (ԺԱ) զոյգ յիշէ . « Տունկը Ոփեացն և
» Կաղամախեացն և վարսաւոր ծառոց, (և շինութեանց յարմար գրէ, վասն) « յոյժ
» ուղղաձիգ բարձրութեանցն և ողորկատարր բնութեանն և առոյգութեանն՝
» գիւրայարմարք մատուցանելոյ ի պէտս շինողացն փութոյ » : — Թուի՝ թէ սչ
նոյն այլ նման ըլլայ իտալ . *Oppio, Փ. Obier կամ Aubier, Լ. Opulus*, անուանած
վայրի ծառոյն, որ ազգակից է Բունչի և Բտուժի ծառոց : — Բայց ըստ Բառ-
գրոց՝ Կասլայ է, վասն զի գրէ Ար. բառով, « Հայ աչ-խար (Հայ ըլ-լար) Հոփոյ
» պտուղ, Դափնոյ պտուղ » . և առանձինն, « Ախար՝ Հոփի » :

2159. Յօշյօշիկ կամ Հոշոշիկ .

Ըստ Մանան (եր. 448) ծալուծայ տերեւներով և ճերմակ ու դեղին ծաղկը-
ներով տունկ մի : Եւ սա թէ ոչ նոյն՝ գուցէ տեսակ մ'է Օշօշի :

2160. Յօս .

Տես Հալուէ փայտն : — Գրուած կայ նա եւ « Յօտր փայտ, որոյ հոտն զօձս
» փախուցանէ » : — Բժշկարան մ'այլ գրէ, « Եօս՝ որ է Յաշտուհանն ? » —
Խաչափայտի այլեւայլ անուանց մէջ տեսանք որ Ար. բառով կոչուած է և Յօտի
Սալապ :

2161. Նազ .

Ըստ Շէհրիմանի այսպէս կոչուի Ասպուզանն՝ Հայաղուանից կողմերում :

2162. Նազար .

Այսպէս կոչուի Գազն « յորժամ ի լեռան բունի, ըստ Ամիրտ . և յորժամ
» յածուենիքն լինի՝ իսպ կու ասեն » :

2163. Նազիր .

Այսպէս այլ կոչուած է Ճարճիրն :

2164. Նաժ .

Այսպէս կոչուի Փստուղն ի Տարօն, ըստ անդացի ծերունի Մէհէրեան Հօր :

2165. Նախածաղիկ.

Երնժու բառ երեւի, թէ և Ռոչքեանն վկայութիւն բերէ ի գրուածոց Դամասկա-
ցւոյն, որպէս յատուկ անուն ամենէն կանուխ երեցող սպիտակարմիր ծաղկի մի,
զոր Լ. Bellis կոչէ, որ է Փ. Paquerette, և մէկ տեսակն որ դատուի ի Ծանախ՝
անուանուած է Հայկական, B. Armena.

2166. *Նաղիշտ.

Ար. عذراي. « Որ է Նոռն,
» ըստ Ամիրտ. ինքն խոտ-մն է՝ որ
» իսղին կոչիկին (գիթ, gazelle)
» եղիւրն կու նմանի, և ի՛յայն
» նման կու բուսնի, և մէջն ի լիք
» կու լինի, մանր հատկներ ունի,
» և թեթեւ կու լինի, և համն ի
» Ղարանֆուլին համն կու նմանի,
» և ոմանք այսոր վայրի Նոռն
» կ'սանն. օգտէ լերդի և ստամոք-
» ցաւին »: - Պէյթար չըսեր Նոռն
նմանութիւնը, այլ թէ ոմանք Սու-
տանի կամ Սեւերու Պղպեղ կ'անուանեն, և Բարբարոսաց երկրում Հորմի կ'ը-
սեն: Թարգմանիչը չեն կարցած ստուգել այսոր ինչ ըլլալը:



Նախածաղիկ.

2167. Նամամ կամ Նամմամ.

Այս Ար. անուամբ բռն յիշէ Միս. Հերացի (եր. 10), ու Պասպայիճի և
Մարզանկոչի հետ եփել և միօրեայ ջերմոտին զլուխն ասոնց շոգւոյն վրայ բըռ-
նել պատուիրէ: Ինչ ըլլալը բացատրուած է Մէշ բառիւ (թ. 2057):

2168. Նանախու. Նանխու. Նանախուա, Նանխոյա.

Ար. անուն Հացիդեղի (թ. 1680): Հին բժշկարանն գրէ « Նանախուա,
» յԱղսրայն (Ագ-սէրայ) լինի, զեղ Մթթրինի ունտ է »:

2169. Նանիր.

Յայտնի է բառիս հասարակ իմաստն, ընդունայն, փուճ, եւ այլն. բայց ծաղիկ
մ'այլ կարծուած է այս անուամբ. Սաղմոսի խօսքերէն գուշակուած, որ կ'ըսէ
« Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր՝ (ժԲ 115). ուրիշ տեղ այլ (ձԳ, 4)
« Մարդ Նանրոյ նմանեաց ». աստի կարծեն ոմանք ի մեկնչաց, ինչպէս մեր
վարդան մեծ վ. այլ, թէ « Ոմանք խոտ ասեն Դիւրանց »: Բարոյախօսք քիչ
մ'այլ առաջ երթալով ըսած են, թէ կայ խոտ մի (Նանիրս այս) որ բուսանելն
ինչուան ի թոռմին քանի մի ժամ անէ. ի խրատ թագաւորաց, որ չի հպար-
տանան իրենց մեծութեան վրայ, այլ յիշեն որ իրենք այլ անցաւոր են, իրենց

կոչնոց սեղանի վրայ կու զնէին այս խոստ, որ իրենց աչաց առջև կու ծաղկէր
և կու թռամէր՝ իրրեւ առժամայն կեննօք: — Նոր բառհաւաք մ'այլ յիչէ զՆա-
նիր խոտ. — Նոյն յիչէ և զՆանրնոց՝ իբր տարբեր բոյս:

2170. Նաշտ.

Ի բառս Գալիենոսի գտուի, նշանակելով զՄեծ Տերեփուկ, զոր տես: Նշանա-
ւոր և քննութեան արժանի բառ մ'է:

2171. Նաշք.

Վայրի և խիժոտ ծառոց կարգին յիշուի ի հին Բառգիրս:

2172. Նապ. Նապխ.

Բժշկարան մի յիչէ Մուրտի հետ և. « Նապի կեղեւ ». բայց պիտի ըլլայ
Նապխ, ինչպէս ուրիշ տեղ գրէ. « Նապխ և Մրտի պտուղ »: Իսկ այս Նապխ
որ գրուի և Նապղ, հաւանօրէն է Նարկ կամ Նարգ կոչուածն Ար. نبق, որ է
Ռախն ըստ ամանց. բայց և ուրիշ տեսակ բոյս մի՛ ըստ Պէյթ. և Ամիրտ. « Որ
» է Գանարնիքր? ասեն խոտ մի կոյ, այնոր միրգն է, լաւն այն է որ խոշոր
» լինի և հասուն լինի. թէ եփեն և զլուրն խաղալ առնեն, որոյ փողն ի տա-
» քութենէ ուռի՝ օգտէ. և թէ զմազն իր տերեւի ջրովն լուանաս՝ ամուր առնէ
» և ուժով առնէ, և զստամզն կու կապէ և կու ուժովցընէ, և զլուծումն կտրէ
» որ ի ստամզին վատուժութենէն լինի եղեալ:.. Ատէ Պտ. թէ Նապխն երկու
» ցեղ է, մէկն դալար, մէկն չոր, և Պ. Գանար ասէ, և այն որ դալար է՝ Գա-
» նարիքար ասէ, և այն որ չոր է՝ Գանարիխոշտ ասեն. և այն որ քաղցր է՝
» հովութիւնն պակաս է. և այն որ տոխպ է՝ խիստ հով է և կապող է խիստ.
» զարիւնն կտրէ ամենայն դիմօք »: — Պէյթար ուրիշ կերպ երկու տեսակ կ'ըսէ,
մէկն անուանելով Սիտր, Եւս կամ Զալ لظ, միւսն Օպրի عجب. երկուքն այլ
Գոժնկի կամ Յակրի տեսակներ համարին քննողք, և յատկապէս Լ. Zisypus
Spina Christi.

2173. Նապաստագի.

Ռոջքեանն ի Բժշկարանէ վկայութիւն բերէ, զոր մենք չենք գտած. « Ա
» զՆապաստագին, և սղկեա ». և Alopecurus անուանէ ի Լ. որ պիտէր Lagurus,
Փ. Lagure, յոյն բառով, որ նշանակէ Նապաստակի ագի, և Սիզոց ցեղէն խո-
տեղէն մ'է: Պէյթար յիչէ ուրիշ նման անուն Lagopus لظوج, որ նոյնպէս յոյն
անուամբ Նապաստակի ոտք նշանակէ, և Դիոսկորիտէս յիշած է. քննարանք
համարին զայս Առուպտ ածուց:

2174. Նապաստակի ականջ.

Նոյն նշանակութեամբ և յօտար լեզուս. Ար. Ասան ըլլ-ասնէպ ان الارنب.
« Որ Թ. Տաչան դոշաղի ասէ, որ է կօզ պոշքաղի. Լապակին ականջն է.

» ինքն մէկ խոտ-մն է, որ մէկ կանգուն ի գետնէն ի վեր կու ելնէ, և ծիրանի
 » ծաղիկ ունի. նման է Քթանի ծաղկին, և մէկ ճուղի մէջն կու ելնէ, և յե-
 » տեւ մանար ճղղներ կու բուսնի շատ. և միջի ճղի հաստութիւնն մէկ մատի
 » մի շափ է, և տերեւն նման է Ջղախոտին տերեւին, գունն քիչ մի սեւութիւն
 » կու քշտէ, և տերեւին վերայ որպէս զաղապ ունի.
 » և յորժամ հանեն և յերեսովն քսեն՝ զերեսն կար-
 » մրցընէ և զգունն աղէկցընէ, և թէ եփեն և զլուրն
 » խմեն՝ օգտէ գաղանաւարին, և զկուրծքն կակղու-
 » ցընէ »: — *Auricula leporis* կամ *Chantarella*, Φ .
Chanterelle. Բոյսն Սունկերու ցեղէն է, որոյ տեսա-
 կաց սմանք կ'ուտտին և կոչուին, *C. Cibarius*.



2175. * Նավրուզ կամ Նէվրուզ.

Ըստ պարսիկ անուանն գարնան սկիզբը ծաղկող-
 ներէն մէկն, (*Մանան. եր. 450*): ԸստՆշանակութեան Նապաստակի ականջ.
 բառին՝ կըրնայ ըլլալ Գարնան ծաղիկն. *Թ. 433*: Ըստ
 սմանց Հիրիկ, *Iris*, անուանեալ ծաղկանց աղգէն է: Հայք այս անունն երկու
 տեսակ ծաղկանց տուած են. ի Բասեն՝ բրդոտ կամ աղուամազոտ խոտեղէնի
 մի, ցանցառ նեղկուկ տերեւներով, որոց վերի կողմն բոլորակ՝ հաւաքում մի է
 մանր մասանց. ասոնց միջէն կ'ելնէ բաժակաձեւ բարակ գեղեցիկ մանուշակա-
 գոյն ծաղիկ մի, միջի կողմն ճերմակագոյն: — Կարնոյ կողմանց Նէվրուզ կամ
 Նաւրուզի ծաղկանց կոթերն վրանին շապիկ կամ մաշկ ունին, ծաղիկն (չորցածին
 տեւքով) բաց կարմիր զարնոց սպիտակ կամ դեղին փունջ մ'է, իրարմէ զա-
 տուած երկայնկեկ բարակ և թափանցիկ թերթերով:

2176. Նարգէս. Նարկիզ.

Ըստ հանճարեղ և երբեմն անհանճար առասպելաց Յունաց՝ այս անուամբ պատանի
 մի կար, որ օր մի որսէ դառնալով՝ աղբիւրի մի մէջ տեսնելով իր գեղեցիկ կերպա-
 բանքը, սիրահարեալ ցամաքեցաւ. բանաստեղծք՝ քան թէ չաստուածն՝ փոխարկե-
 ցին դեռ ի ծաղիկ մի, զոր մեր Բուրաստանաց երգիչն (*Վրոյր*) այսպէս աւանդէ.

« Եւ Նարգէս խարտիչագեղ, այն օր ի ծիլ բարձրայծանալ
 Հակեալ ըզգլուխ իւր սիրատարփ՝ դեռ նըկատէ զինքն ի յայխս,
 Դեռ նըւաղի ի դեղին գէմքն ի թալուկ գունագեղեալ »:

Յիշեցընին բանաստեղծքդ՝ մեր Աղբերաց արիւնն, որոյ նարկիզանման աչկունքն
 « մէկն ի քուն և մէկն այլ արթուն », կու յարմարին Նարգիսի այլակերպութեան
 վայրկենին: — Հօտոյն անուութիւնը կամ աւաւելութիւնը յայտնէ Աղթամարցին
 այլ, երբ ծաղկանց խումբ մի նուիրակ խաւրէ առ Վարդ՝ պէտպէս յատկութեամբ,
 միայն այսօր համար կ'ըսէ, « Այն Նարկիզին հօտըն բուրեաց »: *L. Narcissus. Φ.*
Narciso. Թ. Զերեհ. Ար. Նաճիս نارجوس. ինչպէս՝ զրէ և Ամիրտ. « Նարճիս, որ
 » է Նաճէսն. լաւն այն է որ մէջն դեղին և դուրսն սպիտակ լինի. Բագրաստ
 » ասէ, թէ ի Նաճիսն հոտուաս՝ զարիւնն ուժովցընէ, և քուն անուշ բերէ. որ
 » զինքն ծեծէ՝ ի յաչքն դնէ զգիլերոց կուրութիւնն տանի »: — Նարգիսի քանի մի

տեսակներն յիշուին աւելի այն կողմերում՝ ուր նախ բուսաւ, այսինքն ի Յու- նաստան և ի սահմանակիցս, ի Երիւկիա, եւ այլն. տեսակ մ'այլ N. Radii flo- rus յիշուած է ի Գարապաղ, բայց նոր ճամբորդներէ տեսնուած չլլալով՝ սա- բակուսի բուսարանն (Boissier) և Սուտ Նարգիս կոչէ, Pseudonarcissus.

1177. — Նարգեան.

Անշուշտ Նարգիսի ցեղէն նշանակել ուզէ գրողն, եթէ ստոյգ գրեր է, հին Բա- ազարոց մէջ, և վայրի Մկնճոխ է, կ'ըսէ:

2178. Նարգիլակ.

Ար. Նարճիլ نارجيل. « որ է Հնդի Ընկուզն — (այն է Հասարակօրէն Քօջօ » կոչուածն, Coco.) և լաւն այն է որ թաժայ լինի և սպիտակ և քաղցր լինի. և » այն է որ զկեղեւն տաշխ և ապա ուտես, և չի մարսել կեղեւն. և այն որ » հինն է՝ զտափակ ճիճին հանէ. Իւ ասէ գրոցս շինողն թէ Հնդիկ ընկըզի ծառն՝ » նման է Արժաւի ծառին՝ տերեւին և ճղին. և յամէն ճիւղ հինգ վեց պտուղ » կ'ունենայ և կու տայ, և իր պտուղն լիք կու նմանի. յամէն տարի պտուղ » կու տայ. և իր ջրին յատվախ ۶۱۷۱, կ'ասեն, քաղցր կու լինի, մինչեւ » ի կէս օր չի դիմանար ». այսինքն է կաթնանման հիւթն, զոր պտուղը ճղքելով ծառին վրայ՝ կու մզեն, և կու խմեն. եթէ օդ դաչի կամ երկար ատեն մնայ՝ կու գինովցընէ խմողը:

2179. Նարգմուշկ.

Որ և Մարգիմուշկ գրուած է, տես Նարմուշկ:

2180. Նարդ.

Այս և վերջը յաւելուածով Նարդէս, Նարդին, Նարդոս, այլեւայլ ազգ բոյսեր յիշուին, զոր զանազանելով յիշենք. և նախ Նարդ կոչուածը, զոր տես ի Կազմորէ:

2181. Նարդէս.

Չայս այլ տես Բախ անուամբ:

2182. Նարդէս ծառ.

Այսպէս կարդացուած է Ս. Բարսղի վեցօրէից մէջ (եր. 101). բայց ըսածն կարծել տայ թէ Նարդէս կարդալու է և Նարգիլակ իմանալու. « Այլ ազգի կերպարանս ունի հոյզն և կաթն Նարդէս ծառոյ, որ լինի յԵգիպտոս և ի Լիբիոյ աշխարհին »:

2183. Նարդիկ.

Յիշէ բառհաւաք մի, որ և զՆարդոսիկ՝ առանձինն:

2184. Նարդին. Նարդոս. Նարդոսիկ .

Լ. Nardus, ֆ. Nard. Այս անուամբ երկու կամ այլեւայլ ազգ և տեսակ ծաղկունք և բոյս կ'իմացուին. մէկն հասարակ վայրի ծաղիկ մ'է, որոյ համար կ'ըսէ Ամիրս. « Ինքն խոտ է, և տերեւն նման է Ստեպղինի, և ծաղիկն դեղին, և » դէկն մեծ տերեւներն է, ուժով բնութիւնն »: Միւս ազգն Նարդոս, արեւելեայց Սփրոջ կոչածն է, Եւայ, և գլխաւոր տեսակն Հոռոմ Սմբուլ, Սնկոյի Բուռի, որ ըստ Ամիրս. « տակ է որպէս Մամիրան, և բարակ է և դեղին որպէս Ասա » ըսն, և շատ մազմզուկ է . և բարակ է այս մազմզուկս քան զԱսարոնին. և » լան այն է որ գէր և նոր լինի, դեղին և անուշահոտ լինի . և այն որ գոյնն » սպիտակութիւն կու քստէ՝ չէ աղէկ. և բնութիւնն Նարդինին տաք է յերկու » ասրահան և չոր է յերեք ասրահան. և թէ գէղ ծարոք յաչքն քաշես զար » տեւանունքն բուցընէ »: — Նարդոսի մէկ զխաւոր տեսակն այլ է Հնդկի Սմպուլն, Սնկոյի Հիմտի որ կ'ըսուի եւս Սնկոյի Թայիպ (անարգ), նա եւ Սնկոյի էլ աստֆիր, ըստ Պէյթ: Հաւանորէն այս է Սողմանի երգածն իր խորհրդաւոր Հարսն ու փեսայի գրոց մէջ. նոյն և մեր Սալաւորեցոյն երգած « Սմպուլն (որ) մանաւաչ (էր) հագեր »: Ծիրանի կամ մանիշակի գոյն:

Բանասիրական գիտելիք մ'այլ. գուցէ մեր Գ և Դ տառից նմանութենէն չիոթմամբ ծագած. ինչ որ Ամիրս. գրէր համառօտ Նարդիլակի ջրին համար (Նարձիլ կոչմամբ), և զոր Պէյթար երկարագոյն գրէ, այս ետքինիս նման գրէ զնոյն Յովհ. Որոտնեցի (ի Մեկն. Յովհ.) Նարդոսի անուամբ. « Նարդոս՝ զայն ասեն թէ » ի Հնդկիս ծառ է, որ զճիւղն կտրեն և յիչէ կալնուն, և գրեթանն յիչն մոմեն, » և ծոր իջանէ և ընու գլին. և այլք ասեն՝ թէ ինքնին ծառն իջանէ, և անտի » ընուն և առնուն զեղն: Բայց սմանք ասեն, թէ խոտ է սեւագոյն, և ընդ մէջն » ելանէ իբրեւ զհասկ մի, և զայն առնուն և եփեն, և ամանօք տանին Թագա » ւորաց. և է սա օգտակար ջրորած մանր և տրորեալ անդամոց, որ երբ շփեն » ասողջանայ »: — Ըստ այսմ կ'ըսէ մեկնիչ Վ. մ'այլ (գրոց Գր. Նիւս. Երգ.) » Բազում զանազան են Խունկքն՝ որ եղ եփեն. բայց զՆարդոս բանջարն որ ի » ներս ձգեն, նորա անուամբն կոչի »:

2185. Նարդոսի փայտ .

Այս այլ Դարդիչանն է զոր բացատրած եմք, որ և Տարդիչոսն կ'ըսուի, և այսկէ կ'եղնէ Նարդեան իռն, յիշեալ յԱւետարանս, որով Մազդաղեանացին օժեց Քրիստոսի զլուխն և ոտուրները, և սա վկայեց որ իր մարմնոյ պատանաց զմրուսման նշանակ մ'էր այն, զոր կինն զերունակ սիրով կ'ընծայէր իր Փրկչին, մինչ մատնիչն միայր ագահութեամբ: Մեր տաղասացից մէկն ըսած է այսօր համար, « Եիչ Նարդիանայ, ի՛ Քաղցրահամբոյր չրթանց »: ուրիչ ճոխարան գրիչք այլ Նարդոսական իռ, կամ Նարդինահոս. որոյ գոյութեանն և հօտոյն զմայլած Պիտիդէս, երդէր. « Ո՛վ անոյշ իւզով եփէ զՆարդոսն, և անուշացուցանէ զհիւթն, » և զհասկն նորա ասնէ անուշելիս »:

2186. — Լեռնցի Նարդոս.

Յիշուի յԱռորիս և ի Կիլիկիա, և Թուրի Հայեցի Սմֆուլն Վաստ. գրոց (27). « որ ի լեռան լինի », և որով շինուի անուշահամ գինի դեղոց համար: Նոյն Թուրի և Վայրի Սմֆուլն, զոր ըստ Ամիրտուլվաթայ Պէյթար Աղրադրուկ համարած է (Թ. 82). իսկ հին Բաագիրը կամ Բառք Գայրենսուի՝ Ակարոն գրեն կամ բաշխ. Թ. 311:

2187. Նարինջ.

Ինչպէս ըսինք ի կարգի Թուրինն անուան, չիոթուի սա ընդ Նարընջի, կամ մէկմէկու անուն առած են՝ Ամիրտուլվաթի գրուածին մէջ, և նոյն իսկ համարուած. վասն զի գրէ. « Նարինճ՝ ինքն Թուրինն է, բայց այլ մանր և անուշահոտ, ա. » ղէկն հասունն է. կերակուր տայ օւտել, և զժարաւն կտրէ, և օգտէ տաք ջեր. » մերուն. և ծերոց զեն առնէ »: — Լիմոնի համար այլ Ամիրտ. Նարինջ կ'ըսէ. « Նարինճ՝ որ է Լիմոն »: ըսել է Թէ այդ Թթուենեաց (Agrumi) ազգին հասարակաց անուն համարի զՆարինջ: — Ար. այլ Նարհնն կ'ըսուի

և սպանիարէն. Լ. Aurantium, Փ. Orange Գերմ. Pomeranze, Պորտուգալացիք Լարանճա կ'ըսեն: — Հասարակաց ծանօթ ծառս այս և պտուղ գերազանց՝ տեսքովն և պէտպէս պիտանութեամբ, ուշ մտած է յԵւրոպա, և նախ Կիտրոնն, զոր Յոյնք և Հռովմայեցիք՝ Մարոց Խնձոր անուանելով առնց և Պարսից սեփական համարէին. ծանօթ էր ուրեմն և Հայոց: Մեր Առակախօսն ԺԻ դարու վերջը, տաք շէնքի մէջ Նարընջի դարմանուիլը կ'իմացընէ. զի կ'ըսէ (Ե) Թէ Թագաւորն անկոց « ի տունս բնակեցոյց զՆարինջ ». զոր դար մի յառաջ Արարացիք ի Հնգկաստանէ բերելով ծաւալեր էին յարեւմտեան Ասիա և յԵւրոպա: Բանասէրք համարէին Թէ այս էր ոսկեղէն Խնձորն յունական Դրախտին, կամ Եսպերիոյ պարտիզաց. և Թէ և այս հաւատք վերցաւ, բայց հիմայ այլ վկայեն տեսողք և զգացողք, որ երբ մէկն Նարընջեաց անտառի մէջ զտուի. ինչպէս ի Սիկիլիա և Նէպոլիս, կամ մանաւանդ ի Միլիս Սարտենիա կղզւոյ (ուր 500,000 ծառք կու համրուին, և տարին 12,000,000, ըստ ոմանց և 60 միլիոն ոսկի պըտուղներ կու հացընեն, և ինչուան մէկ ծառն 5000 հաս), յիրաւի ինք զինքը գրախտանման տեղւոյ մէջ կարծէ. այնպիսի գեղեցիկ գոյներով և անոյշ հոտով և օգով զմայլած կամ զինովցած. կան հօն մինչև 700 տարուան ծառեր, և չգրկուելու շափ հաստ: Սպանիոյ Մայորկա կղզիէն այլ տարին 50 միլիոն Նարինջ կ'եղնէ. և օտար երկիր տանելու համար՝ ի նաւ դրուած առեն՝ միլիոն մի Փր. արժէ:

Նարնիլ. — Տես Նարգիզակ:

2188. Նարնիս.

Ար. ար. ար. « Ճնագի սարար. որ է Նարնիս, ինքն հատմն է բոլոր, որպէս » Ամլանն, և հատն նման է Կեռասին հատին, և գոյնն կարմիր. և ի յինքն քիչ » մի կարմրութիւն կայ »: Բայց ինձ անծանօթ է ինչ տեսակ հատ կամ պտուղ ըլլալն: — Ասարայ յիշած Նարնի Սոխն հաւանօրէն է Նարգէս (Թ. 2176):

2189. Նարմուշկ. Նարշիշ.

Որ և Մարգինուշկ կամ Մարգինուշկ . Ար. Անուշ . « Ազգ մի Նուան կայ,
 » կ'ըսէ Ամիրտ . անուշահոտ, իր հունտն է . աղէկն նորն է » . և դարձեալ .
 « Նարմուշք որ է Նարխուշքն, որ է Նարմուշտայ... ասէ Պտ. Թէ ինքն Պաղիան ?
 » է, և ինքն Հնտի Նուան կոթն է . և Մինհաճին տերն ասէ, Թէ ինքն պպուկ
 » է, և կեղեւ է և կաթ է, որպէս Պասպասէ . և գրոցս շինողն ասել է, Թէ ինքն
 » պըպուկ է կարմիր, որպէս հունտ, և քիչ մի կանաչ տերեւ ունի մէջն . և
 » Սահակն ասէ, Թէ ի Խորասան լինի, և իր օգտութիւնն ի Սնպուլ կու նմանի . .
 » և ոմանք ասին՝ Թէ Հոտուան է », կամ Հոտուան ? որ տարբեր պիտի ըլլայ
 ի Հոտիտոյէ . բայց Նարմուշկին ինչ ըլլալն այլ անստոյգ է . հաւանօրէն վայրի
 կամ անպտուղ Նուան ծաղիկն է . ոմանք կարծեր են Փենուան :

2190. Նարնջափայտ.

Նարնջի հետ ազգակցութիւն չունի . այսպէս կոչեն Հիմայ այնոր գունով ներ-
 կելու համար Աղտորի ցեղէ ծառի մի փայտը . որ է լատ L. Rhus Cotinus, Փ.
 Sumac des tenturiers, կամ Fuset, եւս Arbre à perruque.

2191. Նափուգ.

Լեղակի գունով ծաղիկ մի, ըստ Խոտուլրեցւոց :

2192. Նափ կամ Նափափ, կամ Փափ.

Ալիւնայլ օրինակք այսպէս իրարմէ տարբեր գրեն Սալաձորեցոյն այս տողը .
 « Նափափն ու Զինար ու Ռեհան, հոտերն անուշ է Նարկիզնուն » .

Նբկ. — Տես Նապխ :

2193. Նգաճաղիկ.

Ըստ Գալիենոսի բառից նոյն է ընդ Բարձուենեկի :

2194. Նգայտակ.

Ըստ Սերաստացւոց համեմային խոտ մ'է, և Թ. կօշուի Երբան դալի :

2195. Նեխուր. Նիախուր. — Տես Լախուր :

2196. Ներգիւն. Ներգոյն.

Ըստ բառից Գալիենոսի է Լոտոս . L. Lotus. Տես Լուտոս :

2197. Ներքնար ?

Ռոջքեանն Գալիենու բառից մէջ գտեր է զայս՝ հոմանիշ Anthyllis բուսոյ, որ
 յունարէն նշանակէ Մաղկամազ, այսինքն մազոտ ծաղիկ . այս անուամբ քսանի

չափ տեսակ թուփք կամ խոտեղէնք կան, որոց պտուղն է ձուածեւ կամ երկայն բաճիճի մէջ. ծաղկներն այլ գնտածեւ կամ ողկուզածեւ. Այն տեսակն որ Լ. Vulneraris, Փ. Vulnéraire կոչուի՝ իրրեւ սպեղանի վիրաց՝ տեսնուած է ի Բաբերդ և ի Ճիմիլ Լ:

2198. Նզազ.

« Սարի բուսած Մոշեփայտ » . այսպէս գրուած է Բժշկարանի կամ ուրիշ գրքի մէջ:

2199. Նզրու? վարդ.

Գրուածն (ի Բժշկարանի) տարակուսական է, թերեւս Ղ կարգալու է Նդրու, որ կրճնար նշանակել Սիտուանի անուանի բերդից մէկը, Նդիր: Բայց բոյան յայտի է, Ճփնի (տես թ. 1915):

2200. Նէշու.

Բժշկարան մի կրկին անգամ յիշէ, « Նէշու դալար » . — « Ա՛ւ Նէշու հառ » սուն, և դիր զինք ի պտուկ, և շուր լից ի վերայ մինչեւ ծածկէ, և եփէ առ ղէկ և աճրոճ և քամէ, այլովի՛ պտուկն դիր և եփէ մինչեւ թանձրանայ, և թէ » ուզես՝ շաքարով առնես », Ռուկ յինելու համար. որոյ բնութեանն համար այլ կ'ըսէ. թէ « Հով է և չոր, և զսաֆրային սրութիւնն տանի, և օգտէ ամենայն » տաք ջերմանց, և զստամազն ուժովցընէ », Պտղեղիններէ բուկ (օշարակ) հանելու վրայ գրած ըլլալով՝ Նէշու այլ այն տեսակ բոյս գուշակուի:

2201. Նիլ.

Տես Լեղակ: — Մազ սեւցընելու դեղոց մէջ յիշուի և Նիլի անրես:

2202. Նիշուղ. Նշուղ.

Սփրտ. ի Բառարանին գրէ. « Ատրաք, որ է Նիշուղն, որ է Ալուճն, որ վայրի » Ալու ասեն ». իրաւ է որ Յ. Αδράχη Ալոճ նշանակէ:

2203. Նիր.

« Թ. Տէյի Անիսն ասէ », այսոր, ըստ Բժշկարանի: Տես Անիսն.

2204. Նիւ.

Թուի արմատ Նուիկ անուան, զոր տես ի կարգին.

2205. Նիփայ. Նիվայ.

« Գետերոյ եզերի Շուշան ծաղիկն է », գրէ Կամարկապիտն, փոխանակ գրելու Նիմփա կամ Նիւմփա, Nymphaea. Տես Նոնոփար և Հարսնամատն:

3306. Ննի.

Հին բազմիք յիշեն զայս նաև « Համկոս՝ Նրնոյ Սերմն », և մէկն գրէ Լ. Ammion, այսինքն Miniam. Ռաբբեանն՝ Ammiam գրէ, որ պէտք է ըլլայ Ammi. Գալիկոսոսի հին օրինակ մի գրէ Ատեոս, հաւանօրէն Ծ և Յ տառից շփոթմամբ. գրուած: Տես Նանխու:

3307. Նշանիս.

« Որ է Աբլիմէլիքն », ըստ Բժշկարանի միոյ, զոր մենք բացատրած ենք Քաւարապոսակ անուամբ:

3308. Նշարի. Նշարենի.

Կարծեն ոմանք թէ որ և է վայրի ծառ մի որ որթոյ նեցուկ ըլլայ՝ այսպէս կոչուի, ըստ բանի Փիլոնի (Լիւսիմաք. տրամախօսութեան մէջ). « Պատասի.. » զՊիթենեօք Բաղեղն, և կամ զՆշարենեօք Որթք »: Սակայն հարկ է թէ յատուկ ծառոյ մի անուն ըլլայ, բայց տեսակն շփոթուի. տեղ մի գրուած է իւրրեւ հոմանիշ իրեն՝ Նոճ, Գոճ, Սօսի, Ափրտ. Բառագրոց մէջ կ'ըսէ. « Նշարա.. » բնի՝ որ է Չինար », յետոյ զՉինար՝ Տուլպ կոչէ, Տուլպն այլ՝ Հ. « Սօսի ասէ » հայերէն »: Ի Յայտմաւորս պատմի (13 յունիս) Ս. Տիմոթէոս քահանայ վրկայի համար, Յալիանոսի ատեն, ի Պրուսա, թէ « Էր ի մէջ քաղաքին ծառ մի » մեծ Նշարենի, և յարմատ ծառոյն բունեալ ընակէր վիշապ մի ահաւոր ». Յունաց Յայտմաւորաց մէջ Կիպարիս (Κυπάρισσος) կոչուի ծառն. — Մեր բանասերգծից յիշատակութենէն կ'երեւի՝ թէ վայելուչ ծառ մ'էր Նշարին, որով հետեւ մէկը կարմրուկ կերպարանքը նմանցընէ « Երկուց Խնձորից Նշարենի » աստոց ». մէկն այլ (որ կարծուի Նարեկացին), « Նոճ ի Նոճ յեռից.. Նշարա.. բնի » . յարմար թէ անյարմար զուգեն:

3309. Նշնի. Նշի.

Մանթազոյն և նշանազոյն ծառոց և պողոց մէկն ի վաղուց, աւելի իր իւղոյն պիտանութեան համար ի դեղորայս և ի կերակուր. Լ. Amygdalus, Փ. Amandier. Պ. Ք. Պատեմ. Ռ. Миндалное дерево, Ար. [ավց . ۱۳] . Ամէն ընախօք նախ յիշեն որ երկու ազգ Նոշ կայ . Քաղցր և Լեղի . առաջինը Ա. միրա . գրէ Ար. բառով, « Լավց ըլ-հուրվ (Հալու ۱۳) որ Պ, Պատեմ զիշիրին » ասէ, որ է Քաղցր Նոշն. և լաւն այն է որ մեծ լինի և ի լի, ընտելեամբ » մուկթատիլ է ի հովութիւն և ի տաքութիւն և ի գիճութիւն. և ասած է, թէ ի » մէկ տարածա զանձն միջակ կերակրէ՝ ի շատութիւն և ի գիճութիւն. գիրացընող » է, և իր կտուածն օգտակար է չոր հագին և արուն թքնեղուն, և աղեցաւին » օգտէ, և զփորն լուծէ, և զկուրծն յիստակէ.. և թէ թզով ուտես՝ կատողած » շան խածածին օգտէ. և թէ տապկես՝ օգտէ ստամբքին և յուշ կու մարտէ.. » և թէ զգալար Նուշն կեղեւովն ուտես՝ որ դեռ չէ պնդացել, օգտէ ընդաց և » բերնին, և զտաքութիւնն խաղեցընէ. և (թէ) հովութիւն և տապութիւն ունի՝ » նա ի զուտի կեղեւն է, ի մէջն չէ »: — Իսկ Լեղի Նոշն է Ար. « Լավց ըլ-

» *انسان جمل* . և Գ . Պատեմի բայի կ'ատեն . և լաւ Լեղի Նուշ այն է՝ որ
» մեծ և եղի լինի . . և իր խափաթն այն է որ զոլին կու սպաննէ . և թէ քա .
» լաֆին օծես՝ տանի . . և թէ հետ զինու խառնես և զգլուխն լվանաս՝ զթե .
» փուկն ի գլխուն տանի . և թէ քան զգինի խմելն յառաջ հինգ հատ Լեղի
» Նուշ ուտես՝ զհարբենալն խափանէ . և ասած է , թէ աղվէսն հետ կերակրին
» Լեղի Նուշ ուտէ՝ մեռնի . — և զաշից լուսն աւելցընէ . . . Եւ ծառն ամենայն
» զիմօք զէտ զինք (Քաղցր Նուշն) է . և իր եղն այլ օգտէ ակնյին ցաւուն » :
— Այս նմանութիւնը տեսքով և աննմանութիւնը համով նշանակած էր մեր Ա .
» Բակարտան այլ (Իգ) , « Նշենիք Քաղցր և Դառն՝ եղբարք զօրով համամարք և ոչ
» համահարք , և նեղեալ ի դառնութենէ եղբորն՝ արար իւր բարեկամ և եղբայր
» զկասկեկնի , բարոյակից զնա գտեալ ըստ երկուց որակաց , և ի բազմաց մեղա .
» դրեալ՝ ասաց . Որ ըստ կամաց իմոց է՝ նա իմ եղբայր : Եւ ոչ ոք կարաց ա .
» սել նմա ինչ » , հակառակ : — Հին Բժշկարանն այլ կ'ըսէ , « Քաղցրն ի կե .
» բակրի մօտ (աւելի ուտելի է) քան ի դեղ . . . և թեթեւ կերակրէ . Չէթն ա .
» խորժ և թեթեւ , և կեղեւած լաւ է ուտել , տաք բնութիւն (մարդն) շաքրով
» ուտէ , և հով բնութիւնն՝ մեղրով . և թէ աղընձած ուտէ՝ փոյթօտէ զտամազն » :
Վաստակոց զիրքն այլ խրատ գրէ (ՄԼԵ) « Վասն որ զԼեղի Նուշն քաղցրա .
» ցուցանես . Քիտելի է որ Նշենին զազ և զնօսր գետինն ընդունի . զծառին
» բազուկն ցած ծակեալ չորեկոյս , յերկար զերդ թիզ մի և թող , նա պիտի որ
» լեղուութեան ջուրն ընդ այն ծակն ի վայր քամի ի արտէն , և ծառն քաղցրա .
» նայ և Նուշն . . . Եւ գիտելի է որ Նշենի ծառին բնութիւնն այս է . զինքն ի
» վերայ տակին կտրես և նոր ուռ բողբօլէ , և ծառ շինես , պիտի որ զիւր բը .
» նութիւնն փոխէ և զբերն , և լինի որ լեղին քաղցր դառնայ . . . Թէ կեղեւն
» Նշին հաստ լինի և ուզես որ նօսրանայ , դու բաց զտակն ի ծաղկին ժամն ,
» և անոյշ տաք ջրով ջրեա ի շարաթն երկու երեք հետ՝ մինչև ծաղկաթափի .
» նօսրանայ կեղեւն և լաւանայ . . . Եւ գիտելի է որ զՆշենույն պատրոյսն՝ երբ
» առնուլ կամենաս , ի ծայրիցն մի առնուր , ի ծոցոյն մօտ և ի միջէն . և իւր
» պատրուսելոյն ժամն՝ աշտան վերջին ամիսն է , փորձով : — Եւ թէ ուզես շինել
» աղւոր իր , որ երբ զՆուշն կոտորես՝ նա վերայ միջին զերդ զերր լինի , կոտա .
» րեա զՆուշն պատրաստ (զգուշութեամբ) , և առ զմիջուկն անարատ , և զրեա
» ի վերայ միջին՝ զոր ինչ կամիս , և զինքն պինտ կաւով պատեա յիւր կեղեւին
» տեղն , և թաղեա յաղէկ տեղի . և սակաւ մի խոզի աղբ անձ ի վերայ , և ծած .
» կեա , և թող որ բուռանի և ծառ լինի . նա՝ զիւր Նուշն որ առնէ՝ նոյն գրողն
» լինի » : Ոմանք ի հին բնախօսից՝ Լեղի Նշենին անուցընելու համար՝ պէտք է՝
» ըսին , երկաթ մը զարնել կամ մխել ծառին , և բարոյախօսութեամբ այլ հետեւ .
» ցուցին առակ . « Ի հզօրէ՝ քաղցր » :

Յետ այսքան մշակական խրատու , յիշենք նա եւ Նշենույ մէկ մխիթարական
» յատկութիւնն՝ որ ըստ բանի գիտնական նախնեաց մերոց՝ « Նշի՝ յետ ձմեռան՝
» յառաջ քան զայլ առնելա ծաղկի » . և խտրութեամբ լսեմք ուրիշի մի՝ որ
» կ'ըսէ . « Մի լինիր փոյթ իբրեւ զՆշենի՝ որ յառաջն ծաղկի և ապա ուրեմն լինի
» ուտելի » . աւելի հաճութեամբ մեր անուշակ և շնորհաշուք Երզրողին ըսածը .

« Նըշին ծաղկէ գուշակ գարնան ,
» Գունով պըննին վրկայքն արեան » :

Եթէ ծաղիկն՝ զարնան գուշակ է, պտղոց շատութիւնն այլ տարւոյն բերոց աւատութեան նշան համարուած է:

Երկեցիւք ի կարգին գլխառնուչն, (թ. 555). յիշեմք և զՆոյն փայրի, զոր Ար. բառով Ամասիացին կոչէ « Լավգի պարպարի, որ է Լավգի ձապային. ինքն » Ճոջոզն է ». բայց ըստ Պէյթ. տարբեր տեսակ մի է. պտուղն նման դեղնագոյն կաղինի, մէկ կողմն տափակ է, ներսի հասն Սոճեաց հատի նմանի. եղն պիտանի է ի դեղորայս . Փ. Arganier, ասիրիկեցի լիլկան կամ իրման **عجوة** անունէն. իւղոյն համար այլ Յ. և Լ. Eleodendronը ոմանք կոչեր են իւղածառ:

2210. Նշօշ.

Խորենացոյ Աշխարհզ. յիչէ այս տունկս ի Տայոց նահանգի. Գայիենոսի բառից մէջ Նշօի հոմանիչ Յ. դրուած է « Դդեքոն, որ է կատաղին ». ետքի բառս հայերէն նշանակութեամբն է թէ յունարէն է, թողու՛ք այլոց. իսկ առաջինն հաւանորէն է Thelygonum, Փ. Thélignon, որ Յ. բառերով ծընկածեւ նշանակէ, իսկ Պլինիոս իւզածին թարգմանէ: Փոքրիկ տարեկան խոտեղէն մ'է քիչ մի նման Եղիճներու. կլորիկ մալ չկ'որ և սպիտականիւթ (albumineux) ունի:



Նշօշ.

2211. Նոխազի մօրուք.

Տես Քօլմօրուք և Ալծի մօրուք, թ. 92:

2212. Նոն. Նոնի.

Դանօթագոյն վայրի ծառոց մէկն, շատ երկիրներու մէջ, և նշանաւոր իր սուլուիկ բարձր ձեւովն, անթառամ և տեւող գունովն, ամուր փայտովն, և թեթեւ անուշահոտութեամբ. այլ և բարդական իմն նշանակաւ գերեզմանատեղեաց սեփականուած, ուր կանգուն երկնաբերձ հասակաւ՝ իբրեւ լուռ արձան, արիական սոց օրինակ է, մինչ անոր հակառակ ընկեր Ուռենին՝ բոլորովին ի վայր կորացեալ, լալկանաց և հառաչողաց: — Ըստ Յ. Լ. Փ. անուանն՝ Cypressus, Cypresse, Հ. այլ երբեմն կիպարիս ըսուած է, ինչպէս Ամիրտ. այլ Ար. Գլա, բառով բացատրելով՝ կ'ըսէ. « Սյարվ, որ է կիպարին, ինքն ծառ-մն է որ ամուան և ձմուան » կանաչ լինի. և մէկն վայրի է և մէկն ածվոց է, և լան այն է որ խիստ կանաչ լինի. . . զմազն կու ուժովցընէ և սեւ անէ, և զմարդն չի թողուր որ շուտ ծերանայ. » և թէ զիր միրզն Թզով խառնես՝ օգտէ այն խոցին որ ի քիթն լինի, և զաւելի » միտն ի քթէն ուտէ և տանի, և օգտէ լեզուին թուլութեանն և աղեց և բշտի. . . և » ամենայն տաք ուռէցնուն. . . Եւ թէ զիր փայտն և զպտուղն ծխես՝ ամենայն » ճանճերն փախչին »: — Փայտին՝ շինուածոց գործածուելուն սրբազան վկայութիւն տան Ս. Գիրք՝ Սողոմոնի տաճարին նկարագրութեամբ, որոյ ամենէն նշա-

նաւոր քանդակքն այլ՝ երկու Քերովէքն սփիւսպատք՝ նոճեղէն էին. Գր. Նարեկացի՝ իր տաճարին Ապարանից Խաչի պերճարան նկարագրութեան մէջ կարծես կ'ուզէ իմաստուն թագաւորին աննման ձեւակերպին հետ մրցիլ, որոյ համար բերին, կ'ըսէ, « Զճիւզս ստեղնաձիգս Նոճիաճաճ հոխն անտառաց » :

2113. Նոճի ծաղիկ.

Նոճի ծառն յայտ է որ ակներեւ ծաղիկ շունի. ուրե՛մն տարբեր բոյս է այս՝ յիշուած ի բառհաւաքէ:

2214. Նոնոփար . Նոնոլփար . Նիլուփար . نیلوفر .

Յետինս է նախնական անունն, Եգիպտոսի հաշակաւոր (Նիլոս) գետոյն կոչմամբ, իր ջրոց մէջ աճեղուն համար, ուսկից ամէն ջրային Շուշանք այլ նոյնպէս կոչուին. որոց նմանութիւն և տարբերութիւն և շփոթումն ընդ Հարսնամատին՝ յիշեցինք այս անուամբ. այս տեղ յիշեմք միայն՝ որ այս յատկապէս ջրային կամ ջրալիստակ ծաղկունք՝ այլեւայլ գունով զանազանին և կոչուին, Նունուփար Սպիտակ Nymphæa Alba, Փ. Nénuphar կամ Lis des étangs. Ն. Կապոյտ, N. Cœrulea, Փ. Niloufar des Egyptiens. Ն. Կարմիր, N. Rubra. Փ. N. Rouge. Ն. Դեղին, N. Luteum, Փ. N. Jaune. Ասոնց բնիկ տեղիքն այլ յիշուած են ընդ Հարսնամատին



Նոնոփար .

(Թ. 1655): — Մեր գիտնական Գէորգ Վ. Սկեւուացի՝ Իսպանայ մեկնութեան մէջ « Ծաղկեացի անապատն իրրեւ զՇուշան » բանին համար գրէ. « Երկու ազգք » և երկու գոյն է ծաղիկ» այս. Սպիտակ է և 'Իեղին, ի ճահիճս և ի աղմուտ տեղիս » ծնանի, և եղեգնաձեւ աճեցեալ՝ ի վեր քան զլուրն՝ զծաղիկն ցուցանէ »: Նոյն խօսքը Գր. Տաթեւ. իր համառօտ մեկնութեան մէջ գրէ. « Շուշան երկու ազգ է » և երկու գոյն ունի, դեղին և սպիտակ, և բուսանի ի ջրեղջի վայրս, եղեգնաձեւ » ի վեր եկեալ, և յերեսս ջրոյն ծաղիկս արձակէ »: Օրինակող գրոցն ի լուսանցսն աւելցընէ . « Իսկ Ծաղիկս ծովացիսն այս՝ Նոնոփարն է »:

2215. Նոպարենի.

Վայրի ծառ մի՝ որոյ Յ. հոմանիչ գրուած է Եղատք, այսինքն Ελάτη, Եղեւին.

բուսաբանք Ելատինեան անուամբ (Elatineae) ազգ մի Նրային և ցամաքացին խոտեղինաց ճանչնան, տերեւներն Եղեւնեայց տերեւոց նմանելուն համար: Բայց մեր հալերէն անունն յատուկ ծառ մի գուշակէ, արժանի քննութեան և գիտի:

2216. Նորգենի.

Տարօնոյ կողմերում այսպէս կոչուի Մահչապի կամ Բանչի ծառն, որ՝ ինչպէս տեսանք՝ այս անուանց կարգին, այլ եւ այլ անուններ ունենալով՝ կըրնայ այլ եւ այլ տեսակներ այլ ունենալ:

2217. Նորենի.

Նորոց սմանց կ'երեւի այսպէս կոչած Մանուշակի տեսակ մի, *Viola Mariana*.

2218. Նորհարսնուկ.

Նոյն իսկ Հարսնուկն կամ Հարսնու ծաղիկն է (Թ. 1686), Թերեւս մատղաշ կամ աւելի փոքրածաղիկն:

2219. Նորուկ ?

Յիշողն յայտնի չէ, յիշուածն սպիտակ խնկեղէն նշանակէ. տես Լիրանոս և Լիրանովիտ:

2220. Նուար խոտ. Նուարսուակ.

Ուրիշ անուամբք այլ յիշուած է, (տես Թ. 111. Անձխոտ). Բժշկարան մի գրէ. « Նուար — խոտ, որ է Ֆուանկաց լեզուովն Սարկու խոտ ? (*Sarcocarpnos*). » ինքն ի շահառ. անգիտ ինի, և չորս տերեւ հանէ, և գէտ Սխտոր պնդնի հանէ, » սպիտակ, և համ չունի, և այսոր Նուարտակ ասեն »: Ուրիշ մ'այլ հոմանիշ անունները գրէ, Ար. « Շահրասաւ, Նուարտակն, որ է Արքոսխան, որ է Անձխոտն »: այս ետքին անուամբ գրած ենք, և յիշեմք դարձեալ որ նոյն ազգէ բայց տարբեր տեսակք են սա և Նուարտակն, որ յատուկ է Լ. *Lepidium* Փ. *Lépidie*. Ար. *سارکوش*. Շահրասակն այլ որ նոյն կ'ըսուի Անձխոտի հետ, միանայ

ընդ Նուարտակի՝ Հնդկի Շահրասակ տեսական: Ամիրտուլվաթի բառագրոց մէջ պակասի Շահթաակի վրայ գրածն կամ Թարգմանածն. Պէյթար գրէ ըստ Դիոսկ. Թէ հասարակ կարմիր գունով գիմացկուն խոտ—մն է, ի գերեզմանոցներ և պատերու վրայ կու բուսնի, փոքրիկ ճերմակ ծաղիկներով և ամենափոքր հատիկներով: — Այլեւայլ տեսակք կան Նուարտակի, յորոց յիշուին ի Կարին *L. Crassifolium*, *L. Cespitosum*. իսկ լայնտերեւն *L. Latifolium*, ի կողմանս Եփրատայ. *L. Pumilium*, ի Կեսարիս. *L. Lyratum*, յԷջմիածին. — *L. Crass. dentatam* ի վան. և այլեւայլ տեսակք անդանազան յիշուածք ի Շիրակ, Երասխաձոր, Կոտայք, Արտասան, Տաւուշ, և այլն:

2221. Նուրիկ. Նվիկ. Նուրիճ.

Հարազատ Հ. անուն լուսի, Թէ և չէ հեռի Ար. Լուֆ, *لوف* (ընդորութեամբ և և ն նայ տառից). բայց հայկական յատկութեան մեծ փաստ է այդոր Հայոց

Բաներար այլ կոչուիլն, որպէս և Կամասյ բաներար և Շասաչարիան՝ որոց ստուգաբանութիւնն չէ ծանօթ. օտար լեզուաց մէջ այլ պէտպէս նմանողական անուններ ունի, բայց և նմանատեսակաց հետ շփոթուի. այսպէս, Նուիկն՝ ըստ ամանց է Լ. Փ. Arum, ըստ այլոց Draouculus Փ. Serpentinaire. որձային վրայ պէտպէս պիտակներն օձի խորիսի նմանցընելով. այլք՝ Թերեւս պատշաճագոյն՝ երկուքն այլ միացընելով՝ Arum Draouculus կոչեն: Հին բժշկը. կ'ըսէ. « Նվիկն երբ եփես որ » կծվութիւնն ելնէ՝ օգտէ կրծացվի՝ որ ուտէ, և Թառանջի և հազի և լարգածի, » և որ ի դուխն մաղաս կաթէ և կամ ի կուրծքն, և դիւրաւ տայ բերել (Ի դուրս). զչորն ազալ ու տալ՝ լաւ գործէ. Թէ մեղրով խառնես՝ զվէր մաքրէ »: Նոր բժշկագիրն Կամարկացիի՝ համառօտ գրէ, « Ինքն Հայոց բանկարն է, և » մէջն կարմիր լինի »: Իսկ Ամիրա. ըստ Պէյթարայ. « Լուֆն՝ որ Հայն Նվիկ » ասէ, և լաւն այն է որ սպիտակ լինի, տաք և չոր է և արճ. կտրող և բացող » է, և (Թէ) զիր առկն մեղրով օծես՝ օգտէ քալաֆին և նամային (քօս) ճլէ » կու տայ, և քթին նասուրին դեղերուն է... և Թէ յանձն օծես՝ օձ ինքի մօտ » չի գայ... Իպն. ասէ, Թէ ինքն երեք ցեղ կու լինի, և Ք. Իրան (երլան) » դռնի ասէ (!), (կամ Երրան եաստղի), այնոր համար որ որձան օձու խորիս կու » նմանի. և մէկ ցեղին այլ Փնդի ականջ կու ասեն: Ասէ Պարն. Թէ ինքն Ֆիշ » կօչն է (Ֆիշձոչ, Պ. փղի ականջ). և ինքն Գ ցեղ կու լինի, և մէկ ցեղին Հա. » Տրադիտին (Draouculus) կ'ասէ, որ Թարգմանի Լուֆի հայրայ (حاج) Գ » և Լուֆ էլ-Սիւ այլ կ'ասեն, և Լուֆ քապիր (كبيبي) այլ կ'ասեն (Մեծ Նուիկ). » և մէկ ցեղին այլ Հա. Այստրան կ'ասեն, և Անգալիացուց լեզուան՝ Աստրա » փան, (Ալանտորա عصاره) ըստ Պէյթ. Միհրիման կամ Պենտակոստէի տօ » նին օրը՝ բայն ձայն հանէ, լսողն նոյն ասրին մեանի). . և ինքն Լուֆի » Ստդիրն է (Ն. Փղրը), և այնոր ճօտ կ'ասեն. և Գ ցեղին Հա. Արիստոզան » (Arisaron) . և ինքն Հարիան է, և Եգիպտացիքն այնոր Տարիրայ (چراغ) » կ'ասեն. և Սահակն ասէ, Թէ Լուֆի ըլ-ճօտն տաք է քան զԼուֆի Ստրան, » և ինքն հողային բնութիւնն յաւելի է », եւայն: — Նուիկի երկու գլխուս որոշմունքէն՝ Արեւելեան տեսակն Arum Orientalis գտուի ի Կովկաս, ի վերս. Պոնտոս, ուր նա եւ իտալականն, A. Italicam.

3222. Արջնուիկ.

Անունէն գուշակուի հասարակ կամ անարգ տեսակ մի Նուկի, որոյ մէկ տեսակն խաւրուած էր մեզ ի ցոյց, է և այս:

3223. Նուկտաւ.

Ըստ Կարմիրքցոց է Անմեռուկն կամ Փրփրեմ:

1. Չպիտով և Իմաստիւ նման Հ. անուամբ բոյս մի կայ կուլուած Ալ-Կու-Կ, բայց Յ. ուրիշ բուսոց նա զուգուած է, զոր տեսնես ի կարգին:

2224. ՆՈՒՄԱ. ՆՈՒՄԱԿԻՐ.

Թթուեղինաց ցեղէն, Թուի Ախորոն. վասն զի Ախիկեցի Թովմա Վ. իր երկրին բերոց մէջ յեա յիշելոյ զԹրինջ, Նարինջ և Լիմոն, գրէ և Նումա. Վաստակ. դիրքն այլ խրատէ (ԾԳ) ի հոկանեմբերի՝ « յամիսս յայս պարտ է զԹրնջիքն, զՆումայիքն և զԼիմոնիքն ծածկել » . յիշէ և (ՄԻԸ) Թրնջի և այլ պտղաբերաց հետ՝ « որ չաչի չի գնուին », այսինքն ճիւղով շէն տնկուիբ կամ բազմանար. Տես Ախորոն.

ՆՈՒՆՈՒՓԱՐ. — Տես ՆՈՒՆՈՒՓԱՐ.

2225. ՆՈՒՈՆ. ՆՈՆՆՆԻ.

Մի ի ծանօթ և աննման պտղոց. իր ներքին կազմուածքին համար, միանգաւ մայն և համոյն և տարակիւն և օգտութեան, այլ եւ արտաքին ձեւին և Թագաւ ձեւ ծայրին և իսկապայլ կարմիր ծաղկանցն, որք ծառին կանաչութեան մէջ՝ շատ գեղեցիկ տեսարան են աչաց : Բայց աւելի զարմանք և զմայլումն ընծայէ Նումոն աչաց և մտաց՝ իր գահարանման հատիկներուն շոկ շոկ շարուածքովը, զոր գեղեցիկ նկարագրէ Պիտիդէս. « Այր պատառեալ զմերթ Նումոն՝ և դիտացեալ զգիր » գէջ կարկեհանացն, և զիարդ զիրաքանչիւր դք եղեալ ի » տեղու՞ ցանկով ընդմիջէ և բաժանէ զսահմանսն, պարուտակ » մղձնածեւ նուրբ ձգեալ լար, զի մի ծանրացի մրգոյն Թու. » լուծիւն և նեղեացէ կապովք պնդութեանն, և յայմանէ » հիւթ զիլութեանն անկցի, և փտեացէ հատ զհատ հոսումբ. » և ո՛չ ամցէ զմտաւ զգերագոյն քան զմիտս բնութիւնն. և » նախ քան զուտելն օրհնեացէ զմկան ամենայնի . քանզի » միտք նոյն ծամայն վաղվաղակի ընթացիւք բնութեանն՝ Թու. » դեալ զքանչիլիսն՝ առ պատճառն ընթանայ » : Այս սքանչելի գէջ կարկեհանաց (իբր ջրեղէն կարմիր ակունք) մէկ մեծ յատկութիւնն այլ է երկար ամիսներ նոյն գեղեցկութեամբ իրարմէ անզատ պահել զհատերն . ափսոս, որ ոչ նոյնպէս մեան և գեղեցիկ ծաղկունքն . սակայն ասոնք նա և ի գետին Թափուած՝ յիշեցընեն մեզ մեր վայելուչ շարերգողին հետ՝ Բեդղեհեմի անմեղ մանկանց դիպուածք. « Եւ դիակունք սուրբ Մանկանցն » որպէս զծաղիկ Նունենեաց հարեալ ի կարկըտէ, և անկեալք » ի սուրբ Բեդղեհէմ » : Այս ծաղկաթափութիւնն իբրեւ յատկութիւն մի Նունենոց ցուցընէ և Առակախօսն (ԺԴ) . « Բան » փորձից դք անկոց հարցանէ զՆունենի . Զի է զի բազում » առնես ծաղիկ, սակայն զի հոսես և ծորես . և նա ասէ . » Աղահ է ակն անկողին, և ես նրոստ ծանրապտուղ. և եթէ » ոչ էի կակողուէչ՝ բառնալ ոչ կարէի, և յազազս այնորիկ հոսեմ՝ զի մի » բեկայց » : Յիշէ նա (Ժ) և զԹթուութիւնն՝ ինչպէս Թղենույն հետ բաղդատութեամբ տեսնուեցաւ . յիշէ և զօգուան իբրեւ դեղ, որոյ համար անկոց Թագաւորն՝ բժշկապետ կարգեց զնա (Է) : Բայց Նունենին միշտ Թթու չէ, կամ



Արչնուիկ.

ոչ ամեն Նուննի թթու, այլ ամենայն բժիշկը և բուսարանը ծանուցանեն՝ որ երկու տեսակ է, մանուանդ թէ ըստ հին Բժշկարանի մերոյ և Ամասիացոյն՝ « Երեք աղբ է. մէկ Քաղցր, և մէկն Մուգ և մէկն Թորո. աղէկն հատունն է. » բնութիւնն Թթուին հով է և Քաղցրն տաք » : Դարձեալ գրէ. Նուան որ « Ար. Բռունտի, *سوان*, և Պ. Անա, և Թ. Նառ ասէ, գ ցեղ կու լինի. . լան

» այն է որ քաղցր լինի, և ուժովընող է. և Թթու Նուան օգտէ ակնջին որ » խոց լինի. և ծեծեա նրազու եղով և քամէ յականջն. . և տերեւն զմտզն ա. » մուր կ'առնէ. . . և իր տակին կեղեւն զճիճին կու հանէ, և զօձն այլ ի փորուն » կու հանէ. և Թթուն օգտէ սափրայի շերմերուն. . (բայց) Ներուն և կրծոցն զեն » կու առնէ, և զիր շարութիւնն տանի շաքարն » : — Լ. Punicia (այսինքն Պու. նիկէ երկրի Խնձոր), Փ. Grenadier.

Վաստկ. Գիրքն խնամով գրէ Նուննեոյ մշակութեան (և պահպանութեան) վրայ (ԾԹԻ. ՄԻՋ. ՄԻՋ). նախ պատրուսելը սովորեցընէ, երբ « աղէկ պլլպլկէ ու ծիլ » հանէ՝ ապա պատրուսեա՝ որ բանէ » : — « Եւ թէ ուզես որ Նուան կուտ » շունենայ և կարմիր լինի և չպատառի, և դիմացուցանէ և կանաչ պահէ մին. » շեւ ի գարունն. և թէ վատէ ծառն՝ որպէս լաւացուցանես, թէ կամիս գծը. » թուն Քաղցր առնես. . . Գիրքի է զի Նուննին զսպիտակ հողն և զանջրգին » ընդունի: Եւ թէ ուզես որ Նուան ի մէջ հատին կուտ շունենայ. . . ճեղքեա և » զսրտունն հան ի վայր՝ մօտ ի հողն, և կրկին կապեա, և Մկնտխ մի ի » յինքն հազօ և հողով ծածկեա, նա՛ բեր զոր առնու՝ անկուտ լինի. . . և զայս » յամառն պարտ է առնել: Եւ թէ ուզես որ հատն կարմիր լինի՝ դու բա. » զանեաց կրակի մոխիր բաց, և անժ ի տակն, կարմիր լինի: Եւ թէ ուզես » որ ծառն բերուիկ լինի, զխիվայր անկեա զտունկն: Եւ թէ ուզես որ Նուան » չպատառի, բաց զտակն, և ծովու խիճ լից ի վերայ տակուցն, և հողով ծած. » կեա զնոր տունկն ի տնկելն. . . երբ գայ՝ ոչ ճեղքէ գերնս. . . Եւ թէ ուզես որ » Նուան ի ծառն մնայ մինչեւ ի գարունն, նա ճիւղ մի ի ծառէն՝ յորում կայցեն » Նուանքն ամբողջ և հասուն, բանեա երկու ձեռքդ և բերին վերեւ պինտ ո. » լորեա զճիւղն, այնպէս որ ճրխմի, և աղէկ ոլորն ի վերայ անցանէ, և այդպէս » թող որ ոլորն ի տեղն մնայ, և ծածք կամ հնար արա՝ անձրեւն չհասնի յինքն » և թող, մինչեւ ի գարունն ամբողջ մնայ. . . Եւ թէ զծաղիկն աւելի թափէ, » արճճի աղտ անժ ի տակն, արգելու. . . Եւ թէ ուզես որ Թթուն քաղցր լինի, » բեր հետ գետնին ծածկեա. . և զցիցն (ի տակուրն անցուցանելի) Գէր Մարխ » արա (կամ) Սոնոպրի, և պինտ զարկ ի ծակն (տակուրճին), քաղցրանայ. . . » Եւ թէ ուզես որ շառ պտուղ առնեն ծառքն, ան զՊառնարմակիկն, ծեծեա, » և բաց զտակն, և այնու աղէկ օժ զծառին տակն և լից, նա՛ շատ բեր առնէ: » Եւ այլ (կերպ). խոտ մի կայ որ հռամերէն Անջոսիսուս (Ολόσχορος) ասեն որ » Թարգմանի Շատահնդիկ, Թրլեա այդ խոտիդ լրովն զծառոցսն կուտան և ա. » պա ցանեա. նա՛ ծառ որ ի բեր գայ՝ շատ բեր առնէ: . .

« Եւ թէ ուզես որ ի ծառն պահես զՆուան, պուտունկներ ան և ի ծառն կա. » խեա, և զՆուան ճղերովք ի ներք դիր, և զբերանսն բռով ծեփեա, մնայ ողջ » ի տարին: Եւ թէ ոք պրտուով քթոցի նման ղէՖ (պատեան) յինէ Նաան՝ » զերդ կենայ ի ծառն, և բռով ծեփէ՝ մնայ աղէկ. . . Եւ այլ. Թանձր աղլուր » արա և զՆուան ի ներս մղեա, և դիր որ ցամքի աղէկ ի յարեւն, և կախեա.

» աղէկ մնայ. բայց խիստ սմբեցուցանէ զտերեւն. երբ կամենաս ուտել՝ եղկ ջուր
» արա, և ի ներք պահ մի թրջոց գիր, դալարանայ և զերդ նոր դառնայ »:

Մեր երկրին մէջ աղէկ Նուռն ի Սիւնիս կ'ըլլայ, ըստ հին աշխարհագրին մերոյ
(Խորեն.), իսկ Թթուն՝ ի Տայս:

2226. Նուռն ծաղիկ.

Յիշեցինք զայս Ճուլինար և Սազ անուամբք, կոչուած է և Սիլուռն կամ Սիլուռն,
և լաւ եւս Սիլուռն, վասն զի է Լ. Cytinus, Փ. Cytinet, ի յունարէնէ, որ է
Κύτινος. Նոնենոյ ծաղիկ նմանցուցած է, բայց ոչ է անոր ծաղիկն, այլ խոտե-
ղէն մի կամ մանաւանդ մակրուսակ, ուրիշ բուսոց բունոց և արմատոց վրայ
բուսնող, հասկաձեւ կամ ողկուղաձեւ ծաղկներով. գըլ-
խաւոր տեսակն այս բուսոց կ'ըսուի Լ. Hypocistus, ազգ
Քոչմորուաց: Տարբեր ազգ է վայրի Նուռն. — Տես
Նաղիլա:



Նուռն ծաղիկ.

2227. վայրի Նուռն ծաղիկ.

Որ ի բառս Գայիենոսի գրոց՝ է « Բադատրոն Նուռն
ծաղիկ », կամ լաւ եւս ըստ հին Բժշկարանի. « Բադա-
տրոն, Ճուլինար, որ է Նուռն ծաղիկ », Թ. բառին
ստոյգն է Βαλαστειον, յորմէ Լ. Balauetium, Փ. Balauete.
այս է Պ. Կոչինար կամ « Ճուլինար, որ է վայրի Նուռն
» ծաղիկ, ըստ Ամիրո. լաւն այն է որ կարմիր լինի..
» կապող է և զակուային զարժն ամրացընէ և զարու-
» նիլն կտրէ, և ակնջին յետեւին մանր խոցերուն օգտէ,
» և գլխոյն խոցերուն որ գէճ լինի, և զաչքն ուժովցընէ
» և զգիճութիւն կտրէ, եւ այլն.. Եւ միրգ չունի, քան
» զծաղիկն անցեալ. և լաւն այն է որ ի Պարսից գայ.
» և իր փոխանն՝ Նուռն կեղեւն է »: — Եթէ միրգ
չունի ուսուելու համար, բայց տեսքով ունի պտղակերպ
մի, հատերով այլ, բայց չեն հասուննար, և թէ՛ Նոնենոց թէ՛ Մրտենոց վերայ
գտունն այսպիսի սուս պտուղք. — Ճարձիր այլ կոչուած է վայրի Նուռն ծաղիկն:

2228. վայրի Նուռն տակ.

Ար. Աս քլ-սեման. յիշուի, բայց չի բացատրուիր ինչ ազգ բոյս ըլլալն: Այս
Ար. Նուռն անունը թերեւս յիշեցընէ Ս. Գրոց մէջ (Դ Թագաւ. Ե. 18) Ռեման
չաստուածը, որ երբայերէն այլ նոյն Ար. անուան պէս Նուռն նշանակէ, և կար-
ծեն ոմանք ի գիտնոց թէ Ասորոց երկրի դիցարանութեան մէջ Նուռն այլ իր
տեղն ունէր, բայց ոմանք աւելի բարձր և պատուաւոր նշանակութեամբ՝ արեղա-
կան ընծայուած մակդիր մի համարին:

2229. Նուռն Հնդի (Հնդիկ). — Տես Նարմոչի:

— Բժշկարան մ'այլ գրէ. « Ճուլինար՝ Մարայ Նուռն Մաղիկն է. թէ չգտնուի
նորա ծաղիկն, այս տեղաց ծաղիկն նորա տեղն կու բռնէ »:

2230. Նունէս.

Նարգէսն է, տես զայս: Գրուած մի կ'ըսէ. « Վարդ, մանուշակ և Նունէս, » իւրաքանչիւր ոգ զեղեցիկ զգենու: — Հին Բժշկարանն այլ գրէ, « Նունէս՝ » զՍմնակին (տես զայս) գործն այն է, և իրենց ձէթն օգտէ Ղուացաւու՝ որ ի » հովէ »:

2231. Նունէս.

Գր. Նիւսացւոյ գրուածոց մեկնին կ'ըսէ, « Մեկունն (Խաշխաշ) որ է Նունէսն »:

2232. Նունիկ.

Տեսակ մի Տանձ կարմիր ու ճերմակ: — Բառհաւաք մի յիշէ և

2233. Նունիկ կամ Նունիկ

Իրբև յատուկ բոյս կամ ծաղիկ:

2234. Նունիճ.

Կամարկապցին Նախն գրէ, նոյնպէս և բացատրութիւնը խառնակ կամ սխալ է. « Այս խոտն լեռներն կու բուսնի, հերն որպէս Խորտի (Թուի Հորտն). » ծաղիկն դեղին է ». յիշէ և զտակն և զհղերն: Ուրիշ Բժշկարան մի գրէ. « Հերն որպէս Սխտորի է. ծաղիկն դեղին, և մօտ ի տակն որպէս երկուս. » բիք կախ են »: Ի նորոց այլ վկայուած է որ բանջարեղէն է, և քանի որ Թարմ է՝ եղով կամ կաթով եփուած՝ ուտուի:

2235. Նօսր աղ.

Չարմանալի բուսարանական բարակ քննութիւն. բորբոսած կամ մզոտած բուսակի վրայ գոյացած աղուամազն այլ՝ բուսոց կարգը դնելով գրէ Բժշկարան մի. « Ասիոս (Ἄσιος β. ցեխոս, աղմոս, կամ ἄσις, ցեխ). ինքն վայրի ծաղիկ է, » որ է Նօսր աղ. և կու ընծայի այն քարին վրայ (որ) Թ. Քուշնայձիլոս ասէ »: — Սողմոն՝ որ պատերու վրայ խոնաւութենէն առաջ եկած կանաչը, զոր Չոսրս կոչեն Ս. Գիբք, իր բուսարանին մէջ ստորագրեր էր, արդեօք մինչև այս բարակի բորբոսն այլ նկատեր էր:

2236. Նֆլ. Նֆլա. Նֆլի.

Վերոյիշեալ Բժշկարանն գրէ. « Ինքն ծառ է, և որ գինքն միս (մսով?) խորվէ » և ուտէ, մեռնի. աղէկն ի Սիս լինի. տաք և շոր է Դ տարանա. շուտվի »: Ուրիշ Բժշկարանը իրբև ընդ գրեն « Սֆլի որ է Սֆլայ. — Սֆլա որ է Տիլֆա: — » Տիլֆա կամ Դիֆրա՝ որ է Ճֆնի »: տես զայս: — Բայց բուսարան մի կ'ըսէ, Ար. Նեֆլէ անուեն նշանակէ փոքրածաղիկ. L. *Celsia parviflora*. սա Խոնդաութ ցեղակից կամ անոր շատ նման բոյս մի է, և աւելի Ասիոյ և Աֆրիկոյ կողմերում

կ'ըլայ, բայց Եւրոպէոյ պարտիզաց մէջ այլ դարմանութի. անտնուած է և Երաս-
խայ հովտին մէջ, և ի Կորէս Սիւնեոց: Մէկ ազգն նոյն Ար. անուամբ կոչուի
Hoffea. Տես և Դիֆիլա, Տիֆա, — Բժշկ. մ'այլ գրէ. «Նախի խոտի-նն ասկ է,
որ ի Պատիւ: րերեն »:

3237. Շարալուծ. Շահպալուտ. Շամբուծ. Շատալուծ.

Ի բուս. Գալիենոսի Թուի Թէ սխալմամբ այսոր զուգուած է Միդարտրոս, Μα-
λάβαδρον, որ Հնդկաց Պեթէլն է կամ այնոր տերեւն. ըստ այսմ գրած է և Ռոշ-
քեանն. « Տերեւ է Հնդկային, նարգոսահա, և իւր օժանելի »: Իսկ Շահա-
լուծն ըստ վկայութեան Բժշկարանաց և այլ գրաց՝ է Մաշկամիրզն կամ սովորաբար
Կաստանայ կոչուած պտուղն. հին Բժշկարանն այլ յետ յիշելոյ զԱրքայկաղինն՝
միջէ զՇահպարտ, և « ասք է, ասէ... և ասքութեան վկայ իր քաղցրութիւնն.
» և պակաս կերակրէ. գոյ յորդորէ. որ շատ ուտէ՝ գլուխն ցաւի, գիտն կապէ,
» և խորոված՝ լաւ է. Թէ Թրդեա՝ լաւ կերակրէ, տաք բնութիւնն չաքարով ուտէ
» և հով բնութիւնն՝ մեղրով »: Ամիրա. գրէ « Շահպարտ Եթիօպիա, որ է Հ.
» Շապարտոս. Թ. Կաստանայ. և լաւն այն է որ խոշոր լինի և քաղցր, և ինքն
» մուգթափէլ է և չոր է: Իպն. ասէ՝ Թէ լաւն այն է որ զինքն լրով եփեն և ապա
» ուտեն, շարութիւնն երթայ և անուշահամ լինի. և ի մեր երկրին՝ կանայք զայս
» ուտէին վասն գիրութեան համար, զկանայքն զիրացունէր. զիր շարութիւնն
» ասնի Ղանգն? և ասացած է Թէ իր փոխանն Պալուտն է և կամ Խառնուպն:
» Արցել է Պա. Թէ ինքն Ղուտտոչն? է. և ինքն քաղցրկեկ կու լինի քան զՊա.
» լուտն.. և լաւն այն է որ հասուն լինայ.. և Մաղանտարան կ'ասեն քաղաք
» մի կայ, ի հոն հաղվա կ'եփեն և կ'ուտեն »: — Պէթար չի յիշեր զիրացուցիչ
ըլայը, Թուի Թէ մեր Ամսորացին իր երկրին կանանց համար կ'ըսէ:

Շարալուտը Յ. անուամբ Καστανία, կոչի և Լ. Castanea, Փ. Châtaignier, Ռ.
Каштановое дерево. Թ. Գետտակ. Այս Յ. անուամբ յախարհագրութեան Խո-
րեն. յիշուի մեր Տուրուբերան նահանգի (Տարօնոյ) կողմերում. « Պատակ և Կաստա-
» ետն որ է Մաշկամիրզ ». նոյն անուամբ գրէ և Վասակ. զիրքն (Մ) « Կաստանայն
» զնօսը գետինն սիրէ և զբարձրաւանդակն. և Թէ ուրուք անդին ցած լինի՝ նա
» զգետեզերան ախորժէ և զուազուտն, զհովային և ձիւնամեծ լերինսն. և իւր
» տունկն մաղմղկով սիրէ տնկել. և ինքն շոյս գայ ի բեր՝ քան զայլ ծառերդ. և
» ի գարնան դուռն երբ շարժի՝ ախորժայ տնկել. և ինքդ տունկ առանց մաղ-
» մըզկի բնաւ չբռնէ. ցանելով է իւր նարն, այս խրատովս. Առ զկաստանայն
» իւր գրուցի բուճունովն՝ որ զերդ ոզնի է. և լից զինքն ի մուծն տուն, և
» ներքեւ և վերեւ՝ դեպի աւազ լից, և զինքն յաւազն Թաղեա. և ամէն ամիս
» հետ մի զուաղդ փոխեա մինչեւ ի գարունն. և ապա հան և լից ի ջուր, և
» սես. այնորիկ որք ի վերայ գան՝ նա աւեր են նոքա, ձգեա, և որք ի յատակն
» իլանեն՝ աղէկ են, զայնոսիկ դիր.. ի տուն՝ որ ցամաքի ի շուքն, և փոսեր արա
» ի մաշարայ (յ'արտն) խորու Թիզ մի. և մի զծայրն ծիւն սուր դիպան ի վեր
» դեմը՝ որպէս՝ Նուշ կամ Ընկոյզ, այլ զծիւն սուր ծայրն ի վայր արա և զոտքն
» ի վեր, և դեպի աւազ չափ մի ի վերայ, և ապա զհոդն: Եւ Թող որ բուսանի
» և մեծանայ երկու երեք տարի. և ապա ի շարժն՝ հան և տնկեա ուր կամիս »:
Պտուղն այլ երկար ասեն պահելու համար՝ խրատէ (Մ), այսպէս գրելով.

« Դիր գինքն ի կաւեայ անձիւթ աման, և պրսմով կամ այլ ազգ շոր փշով զքե-
» րանն կալ, և խեցատ մի ներքեւ դիր, և գինքն ի վերայ բերանոյն շրջա, և
» գլխիվայր կանգնեցո. շատ պահուի: Եւ թէ փորեա հոր ի բաց տեղի՝ որ ծածք
» չլինի ի վերայ և ընուս ցամաք աւազ յառակն, և ապա դնես զկատանայն և
» զեզի (կամ Լեղի) Նուշն, կամ զայդպիսի խեցեպային իրագ, թեղար մի ի վե-
» րայ բերանոյն կործես, և զշուրջն խէնտէկես՝ որ ջուր շմտանէ, շատ դիմանայ
» յերբ ուզենաս՝ ուտես »:

Այժմու սովորական անուն պողոյս ի մեր լեզուիս է

2238. Շագանակ.

Այս անուն չի գտնուիր ի գիրս, և չէ յայտ երբ մտեր է ի լեզուիս. գուցէ
Շահնդակի կամ Շահդանահի (կանեփատ) անուններու հետ շփոթուած:

2239. Շաթառակ. Շաթառակ.

Այս Գ. անուան, جترش, որ է Թագաւորական բանջար, ինչ ըլլալը բա-
ցատրած եւք Անձխոս անուամբ, տես թ. 110: — Այլեւայլ տեսակներէն տես-
նուած և նշանակուած են ի կարին Fumaria Vaillantij, և F. Asepala. յետինս
նշանակուած է և ի կեսարիա, յԱյնթապ, եւ այլն: — Շահթառակի ծաղիկն այլ
յիշէ հին Բժշկարանն՝ վատ տեսնող աչքի դեղ, ձիոյ լեղիի հետ խառնած:

2240. Շալախ.

Շուս հասունցող Սելխ տեսակ մի:

Շախգմուկ. — Տես Շոդգամուչ:

2241. Շալֆէ.

Թերեւս տառադարձութեամբ այսպէս կոչէ Քալանթարեանն զSalvia.

Շախլոր. — Տես Շկոր:

2242. Շախրուն.

Հին Բժշկարանն հոմանիշ գրէ զայս և Քուեկան. անունն զոյգ կամ աւրուած
Թուի ի Շպրամէ, տես զայս:

2243 * Շակակուլ. Շախաղուլ. Շաղաղուլ.

Ար. է, شاقاقا. Տես Սնդրին: Կամարկայցին գրէ, « Շաղաղուլ՝ Սոսկ,
» մանթար ». ուրիշ մի « Շաղաղուլի հունտ՝ Երեսնակն է »:

2244. Շառապ.

Ըստ Ամիրա. « Ինքն խոտ-մն է՝ որ տերեւն նման է Մրտենու տերեւին, և
» կանաչ լինի որ ի դեղնութիւն քշտէ. և ի բարձրութիւնն Գ կանդուն է, և ի

» գագաթ ճղերուն՝ փշկներ ունի, և կարմրուկ վարդկներ ունի և հատկներ
» ունի, ի Շահաստայ կու նմանի. թէ քամեն՝ կաշտուկ ջուր ելանէ. թէ տան
» (և) ջուրն խմեն օգտէ հազին »: Գուցէ քաջ բուսարանից բաւական ըլլայ այսքան,
մեզ իմացընելու Շահաստին ինչ ըլլալը. զոր չի յիշեր Պէյթար:

2245. Շահասպրամ. Շահասֆրամ. Շահասֆարամ. Շահմիսպրամ.
Շահսիֆրամ. Շահիշֆարում. քթսթաճա.

« Որ թարգմանի Մաղիանց քաղաւոր », ըստ Բժշկարանաց, որք պարզապէս
այլ կ'ըսեն, թէ Ռեհանն է. տես զայս: Բայց ուրիշ բուսոց հետ այլ զուգեն. ինչ-
պէս, մէկն՝ Ղարաւֆուշի, միւս մի թ. գրէ « Աքքիրման (քաղաք Տարիոյ) Եար-
փոզդի? տուր »: Դարձեալ Ամիրտ. « Շահասֆրամ, որ է Հասպագի ֆրոնակին.
» զէտ Մաթրին լինի, այնոր Շահասֆրամի ֆրոնակի կ'ասեն, և Ըռահան այլ
» կու ասեն »: — Աչաց կպած կոպերը բանալու դեղ կու տան Բժշկարանք
Շահասպրամի ջուրը, հոտն այլ խալըիկ ունեցողին:

2246. Շահաւորաստ ?

Հնդկային բերոց մէջ յիշուի յԱշխարհագրութեան Խորենացոյ:

2247. Շահդանակ. Շահնդակ. Շահտանան. Շատանայ. Սատանէն.

Խորեն. Աշխարհագր. ի Կորնայս նահանգի Հայոց դնէ այս բոյսս, և մեկնէ,
» այսինքն Կամգար փշոց սերմն », նման է և Ար. Ե. Դգա անուան իմաստն,
որ է Կանեփատ. տես զայս: Յիշուի և Հոռնցի Շահդանան, որ է Մահոռտանան.
տես Մահդանակ:

2248. Շահենի խոտ.

Կամարկապցին յիշէ օձուկ ցուի դեղ. « Առ Շահէնին խոտն, ծեծէ, և առ
չի քամած մածունով լանթակ, խառնէ լաթին վրայն. առ կապէ վրան, երկու
» երեք հեղ արէ. օգտէ Աստուծով »:

Շահմառակ. — Տես Շարասակ:

2249. Շահկաղին.

Ստ. Ռոջբեան իբր Գալիենոսի բառից մէջ գտած, փափուկ կաղին նշանակէ.
Է: այլ կ'ասէ Mollusca. բայց հիմայ այդպիսի բառ չի լսուիր ի բուսարանութեան.
Ըստ նշանակութեան բառին՝ է Արքայկաղին:

2250. Շահմէլիք.

Շահենի խոտին յիշողն զայս այլ յիշէ ի դեղ ուռէցքի. « Առ զՇահմէլիք
» խոտն, կամ խաչէ կամ կրակին վրայ թառամեցուր. թոռմեցընելն լաւ է քան
» զխաչելն. զիր ուռէցքին վրայ և կապէ. օգտէ Աստուծով:

2251. Շահմիանդալ.

Որ և պարզ Հանդալ. է Չմերուկն վայրի, զոր բացատրած եմք տես թ. 1789. — վաստակոց գիրքն յիշէ (28.) « Թէ առնու զք վայրի Խիարկին տակն և զՇահմիանդալին, և լեւատ յիրար խառնէ, և այն ջրովն զհայտն շաղախէ և ձգէ, նա » սպանանէ զվկուռնսն » :

2252. Շահմիամ.

Նոյն գիրքն զայս այլ յիշէ (28.) « Առ զվայրի Խիարկին տակն կամ զցողունն, » նոյնպէս և զՇահմիհամին արմատն, և ծեծեա և ի ջուր խառնեա, և ի վերայ » բուսած արտին ցանէ՝ յառաջ քան զարեւծագն, նա ողջանայ » : Բնագիրն զայս տնուանէ Լ. Colocynthis, որ է վայրի Դգուան կամ նոյն վերոյգրեալ Չմերուկն վայրի :

Շահնդալ. — Տես Շահքանակ :

2253. Շահոզրամ.

Ի գիրս յիշուած չէ, բայց առ նորս սովորական է Թ. Ղարեմֆից կոչուած ծաղիկն համար, և ոչ չոր համեմին, որ Մեխակ կոչի. իսկ սա Լ. Dianthus, Փ. Oeillet, Ռ. ГВОЗДКА. չէ յիշուած ի Պէյթար և յԱմիրտ. բայց ծանօթ ծաղիկ է և հաճոյ անուշահոտութեամբն, բարդութեամբ թերթերուն և պէտպէս զոյներով և խատուակ պիտակներով. խնամով դարմանուած ի պարտէզս և տեսակները շատցուցած, յորոց այլեւայլք տեսնուած և նշանակուած են և ի Հայս. ինչպէս, D. Cyri, ի Գանձակ. — D. Multipunctatus, ի Խարբերդ. — D. Sulcatus, ի Մուշ. Ազգաբերդ. — յատուկ իաղիշեցին D. Bitlisianus. — D. Liboschitzianus Սարարատ Լ. Նիրախաձոր, Կարին, Պինկէօլ. — D. Floribundus, (Շատ-ծաղիկ) Նիրախայ ակունքն, ի Պինկէօլ. Արարատեան Լ. Կարին, Բաբերդ Մարաշ. — D. Robustus, ի Կոչքար Պինկէօլի. — D. Libanotis, ի Դաւրէժ. — D. Erythocalus, յԱգուա Լ. Կորնայից. — D. Fimbriatus, ի Թորթում, Մանախ, որոց ճերմակ զանազանութիւնն (Canescens) յԷլմիածին. — D. Crinitus, ի Դաւրէժ, ուր և յատուկ տեսակ մի, D. Tabrisianus. — տեսակ մ'այլ յատուկ Մշոյ, D. Muschianus. — D. Asperulus, ի Կարին, Կոչքար. — D. Carmelitarum, ի Թէքտաղ Լ. — D. Caloccephalus, ի Մանախ, Պինկէօլ, եւ այլն, և այլ շատ տեսակք ի Փ. Հայս :

2254-5. Շահորակ. Շահորանկ. Շահպանակ. Շահպանամ. Շապանկ.

Պէտպէս անուններ կամ հոմանիշներ ընծայեն Բժշկարանք, հասարակօրէն Մանուշայի տակ կամ Մանուշայի տակ, ըստ Պ. կամ Շահ Մանուշայի : Ամիրտ. գրէ. « Շահպանկ, որ է Շահպանակ և Շապանկ այլ կ'ասեն, և ինքն Պանախայի » քոչայիին է, և Ար. Ղոսսվար էր-քոչայ ասեն (Շանձուք). և առաջեալ է Սահիպ » Ճամէլին՝ Թէ ինքն Շամարի Խպրակիւնին փոքրն է, (և այլք այլ ազգ ասեր են).

» և գրոցս շինողն ասցել է, թէ այս ամէն խօսիլն չէ ստոյգ. և ստոյգ է որ ասեն
» թէ Շան Մանուչակն է. և ի Շիրազ Մանաշայի շահ կ'ասեն »: — Պէթար Պեր-
նոսֆ Գոյճ անուամբ ստորագրէ զՇահդանակ. զոր Ամիրտ. կարդայ Պարպուզ,
Թարգմանիչն Լ. Conyza odorosa կոչէ, որ է Լուարեղի տեսակ:



Շահոգրամ վայրի.

2256. Շահպոկ.

Ուր յիշուած է, յայտնի չէ. համարուած է Մանդակ, կամ հետեւեալն,

2257. Շահպուրակ կամ Շահպրակ.

Ի գիրս կարծեմ չէ յիշուած, այլ առ նորս ընդունուած իրր Պ. և Թ. Շահպոսէ,
Շենկոյ. զոր յիշեցինք Կորգուսխունկ անուամբ, վասն զի այնպէս կոչուած
վկայէր Պէթար այն բոյսը որ է ըստ Լ. Choiranthum. և որոյ առաջին մասն
կարծեն բանասէրք ոմանք Ար. Խիրիբաուն ըլլայ (տես թ. 1060) և այլեւայլ ծաղկը.

ներ նշանակէ, յորս և այս Շահպարակն. Փ. Giroնէօ. Համարիմ թէ այդ Ար. ա- նուամբ գրածն Ամիրտուլվաթայ՝ տոյն այս ծաղիկս է և ոչ Շահպարակն. « Վեց ցեղ » է. լաւն այն է որ դեղին և անուշահոտ լինի, տաք և չոր է յառաջին աստիճանն. » օգտէ այն գլխացաւութեան որ ի հովութենէ լինի. և թէ զծաղիկն յաչքն քա- » շեն՝ ճիշտ այս աչաց, և թէ մեղրով յականջն կաթեցընեն՝ զցաւն տանի... Խոյն. » ասէ, թէ որն սպիտակ, որն դեղին, որն կարմիր, որն խոտ, որն ծիրանի է, լաւն » այն է որ դեղին լինի ։ և հասարակ անուակն այլ այս է :

Շահաֆրամ. — Տես Շահասպրամ :

3258. Շաղգամ. Շողգամ. Շողգամբ. Շախգամ.

Ար. և Թ. այլ նոյնպէս կոչուի, Շեյմամ رجا, Շաչկամ, բայց չեմք կարծեր թէ ասոնք մեզի տուած ըլլան այս անունը, այլ իրենք առած մեր լեզուէն, մանաւանդ եթէ ըստ օմանց մեկնութեան՝ Բարձր Հայոց գաւառաց մէկն Շաղգամը՝ որ և Շառ գոմբ այլ գրուած, այս բանջարէն առած ըլլայ կոչումը. այն երկրին մէջ բուսած Շողգամն արգարեւ շատ համեղ կ'ըսուի: Ամիրտ. ի շալակ Շ տառի՝ Շողգամբ գրէ, իսկ բացատրութիւնն Սյւլմամ անուամբ. « Ինքն աղէկ է և զօրաւոր ամենայն » մարդոյ. աղէկն կարմիրն և խոշորն է... չաքն (չափն ուտելու) քանի որ պիտի » առ ։ »: Պէջթար երկար ստորագրէ զՇողգամ այլ եւ այլ տեսակզքն. Թուի թէ Ամիրտ. այլ այսպէս ըրած էր Շ տառիւ, վասն զի գրէ ի շալակն՝ թէ յիշուած է թէ Ս և թէ Շ տառիւ. բայց իր գրոց շատ օրինակաց մէջ Ն տառին վերջի, և Շ տառին առաջին անուանքն կու պակսին: — Շաղգամ. Թերեւս հողի տակ ծածկուած ուտելի բանջարեղինաց գլխաւորն է, և իր ցեղակից Ստեպղինի հետ յիշուի Սուակախօսէն: — Լ. Narus, Փ. Navot, Թ. Рыпа Բժշկարանը Գիրադեղ կ'ասեն զՇաղգամ, այսինքն գիրացընող:

3259. Շաղգամ վայրի.

Գալիենոսի բառից մէջ Թ. գրուի էլիզգամինոս, որ է Κυκλάμιος Լ. Cycelamion. ա. Արշտակ:

3260. Շաղգամուկ. Շողգամուկ. Շաղկմուկ. Շողգամբուկ.

Կոնդեգաւոր և ուտելի փոքր բոյս մի մանր փունջ փունջ բաժակաձեւ կամ չրթնաձեւ մանիշագոյն և սպիտակի քլտող ծաղկամբք:

3261. Շաղինգղ.

Տես Խաչինգղ. Թերեւս նոյն է և

3262. Շաղինտը.

Չոր Ռոշքեանն՝ ըստ Վարդանայ Վ. (Մեկն. Մննդոց գրոց) կ'ըսէ՝ խոտ մի անպիտան. « Ոչ ամենայն բանջար ուտելի է, որպէս Յմախ, Բանգ, Շաղինտը և » պլք, որք գառինք և ոմանք մահարերք իսկ են » :

2263. Շաղիպատուկ.

Գալիենոսի բառք այսոր Յ. գրեն Ղուշուշ. իսկ զսա Պէյթ. գրէ Գռչուս, որ գեղեցիկ անուն մ'է Բաղեղան:

2264. Շամամ.

Ար. ܫܡܡܐ, փաբրիկ և խատուտիկ Սեխ, ըստ սմանց Չմերուկ. « Որ է, ըստ » Պէյթ. և Ամիրտ. Տաստանդուռէն; և Աձուր կ'ասեն ». Այս երկրորդ անուամբ այլ գրէ « Տաստանդուռէ, որ Թ. Լանդուռ կու ասեն, ի մեր աշխարհն Աձուր կ'ասեն. » և կեղեւն տաք է և զկերակուրն կու հալէ, և զքամին կու վարէ յանձնէն, և « մէջն յուշ կու մարսէ », եւ այլն. տես Աճուր: Անունն մտած է առ մեզ գոնէ ԺԲ դարէն, զի Մխ. Կոշ յառակն (Կ) ծաղրէ զտգէտն՝ որ ի վաճառանոցի տեսնել լով զայն՝ զարմացած հարցուց Թէ ինչ է. — Սիրամարգի հաւկիթ է, ըսին շաբաճեհ. և նա զնեց « և տարեալ եդ ի ներքոյ հաւու՝ զի ելցէ ձագ Սիրա » մարգի, զոր առեալ եկեր հաւն », եւ այլն:

2265. Շամբ.

Ոչ յատուկ բոյս մի, այլ բազմութիւն Եղեգանց, մանաւանդ Նրային տեղեաց:

2266. Շամբալա.

Անպիտան կամ հասարակ խոտոց կարգին յիշուի, (Մեղու, ԻԲ, 83):

2267. Շամբար.

Ս. Բարդիշ Լարցմանց մեկնութեանց մէջ՝ ի կարգի պտղոց իբր յատուկ կամ տեսակ ինչ յիշուի, « Խիարն, Շամբարն, Դամոնն, Հիլայքն », եւ այլն: — Տես Խիարչամբար:

Շամբուռ. — Տես Շարաշոր:

2268. Շամպղիտակ. Շամղիտակ.

Իբրեւ ծաղիկ յիշուի յԱզաթանգեղոս. Շէհրիմանեանն՝ որ ուրիշ անուններ այլ յիշէ, Ծործորակ և Սոսան, համարի Լ. Symphytum, Փ. Consoude. Ռ. ПИБОКОСТБ. այն անուամբ գրէ և Պէյթ. ܫܡܫܘܐ որ Յ. բառ է և կաշուկ նշանակէ. այս հայերէն անուամբ բոյս մի նշանակած եմք ի կարգին, բայց տարբեր ցեղէ է. իսկ սա Թորթեբու ազգէն է: Ամիրտ. Սանդուռան կարդացեր է անուներ, և կ'ըսէ. « Յեղ-մն է որ մենուկ կու բուսնի, երկու կանգուն երկայնութիւն » ունի, և մէջն փուռ կու լինի, և ի վերայ տերեւնի ունի, յԾգնալեզուի (որ է « Թորթ ») տերեւ կու նմանի, և դեղին ծաղիկ ունի »:.. — Սանդուռան մ'այլ. « ինքն խոտ-մն է որ ի քարերուն ի մէջն կու բուսնի և մանր տերեւնի ունի, » և գազաթն ի Հաշայի գազաթ կու նմանի, և յերկանկուկ տկեր ունի. հաս.

» տութիւնն մատի շափ, և հոտն անուշ է, և համն քաղցրիկ կու լինի. և թէ
 » ծամեն՝ զինչ որ թաք ունի՝ ի բերանն ժողովի. և թէ եացընեն և զուրն
 » խմեն՝ զկրծոց և զթոքին խոշորութիւնն կու տանի և յառելէ, և զարիւն թքը.
 » նուրն այլ տանի, և թէ ծամեն՝ զծարսուն կտրէ, » եւ այլն: — Այս երկրորդ
 տեսակ Շամպիլտակն է անշուշտ Լ. S. Asperimum կոչուածն, որ տեսնուած
 է և ի Հայս և ի Կովկաս. յատուկ կովկասային տեսակն S. Caucasicum, գտուի
 և ի Քարապաղ. — Տաւրիացին S. Tauricum ի Թ-Հ. ՚ի Պոնտոս. — Մեծածա-
 դիկն, S. Grandiflorum, ի Վրաստան: — Տես և Ափնիք:

3269. Շամրաս ? կամ Շամրաշ.

Մաղիկ մ'է կ'ըսէ Յովհ. Եջնկացի, որով օձ իր ապականեալ մարմինը նորոգէ !
 Անծանօթ է մեզ այդ զարմանալի բոյսդ. և ծագումն անուանն. լսեցընէ քիչ
 մի Յ. Խաւարօփ, որ գեանամուծ բոյս մի նշանակէ. կամ ցած Ամուսենի:

3270. Շան ագի.

Ինչպէս ուրիշ ծանօթ կենդանիք՝ այսպէս և շունն իր այլ եւ այլ մատամբք՝
 զանազան բուսոց անուններ ընծայեր է, աւերելոյթ նմանութեամբ. իր ազւոյ
 նմանակը Ար. կոչուի Ունուռի (چشمه), « որ է Թ. իր զոչրոսդի. ինքն խոտ-մն
 » է որ երկու բարակուկ և պինտ և հաստ ճղեր ունի, և տերեւն նման է Ձի-
 » թենու տերեւին, և ի քարոտ տեղեր և ի փշոտ տեղերու մէջն կու բուսնի, և
 » ի լեռինքն կու բուսնի, և կախ կու լինի. և զէտ զծառ որձայն կու հանէ, և
 » տերեւ չի բուսնիր, և պողոն պողոն կու լինի: Եւ մէկ ցեղ այլ կու լինի՝
 » քան ի ճկութի մի շափ հաստութիւն ունի, և ճղերն շատ կու լինի, կարմիր կարմիր
 » եէմիշ կու լինի, և յորժամ հասանի՝ սեւանայ, և Թ. այս երկուքիս իր զոչ-
 » րոյի կ'ատէ, որ է Շան ագի, և ինքն հանգուստ հանգուստ կու լինի: Եւ թէ
 » զայս խոտս քամեն ի գինին խառնեն և խմեն, զլուծումն կտրէ, և թէ զինքն
 » Թզով եացընես և զուրն խմես, օգտէ հազին և հեւուց. և թէ զչորն ծեծես
 » և ցանես ի վերայ խոցին՝ բուսցընէ », եւ այլն. — Փոխանակ շան՝ Ձիոյ ագի
 կ'ըսեն, Լ. Equisetum, Փ. Equisette կամ Prêle. Հասարակ կամ Աժւոց տե-
 սակն E. Arvense, նշանակուած է ի Թ-Հ. ի Պոնտոս, ի Կովկաս. — E. Tel-
 matea, ի Հո. և ի Հր. Կովկաս, ուր և Անտառայինն E. Sylvaticum, և Ճախնայինն
 E. Palustre. — Ամիրտ. Ումուլ անուամբ գրածը՝ գրեթէ նմանապէս գրէ և
 Երանքարայ անուամբ, որ է ըստ տպագրեալ Պէլթարի Երանքարայ քլէտիշ,
 Թարգմանն գրէ Inichtella.

3271. Շանաշոպ ?

Ամիրտ. Շան Սմպուլը՝ Սունկոչի էլ-քաչայ բացատրելով՝ այլ եւ այլ կարծիքներ
 յիշէ այս ետքի անուան, զոր ոմանք սխալմամբ համարին Լիստե ըլ-ասաֆիր
 (Հացի ծառի չկորն), որ « ծառ-մն է որպէս Շանաշոպ կու ասեն, և ի Շիրազ
 » Հանսերը կու ասեն »:

3272. Շանդակիկ.

Քալիենու բաւից մէջ սա զուգուած է կնգարիոնի (Centaurum), Տերեփուկ մեծ:

2273. Ծանդանիճ. — Տես Ծանդանակ:

2274. Ծանլեզու.

Յ. բառի Թարգմանութիւն է, ինչպէս և Լ. Cynoglossum, Փ. Cynoglosse, և Ար. Լիսան բլ-քալայ, բայց ըստ Պէյթ. ոմանք կ'ըսեն և Գառնալեզու, ըստ Յ. Լ. Arnoglossum. Թուի թէ այս բառս այլալատ կարգալով յԱր. աւելի այլալու լեւով գրէ Ամիրտ. « Աիսողանիւն, որ Թ. Ծանլեզու ասէ, և տերեւն նման է » Մրտենու տերեւին, և ի գազաթն բոլոր լինայ, և տերեւին տակն զէտ զԱ. » լուսանի (Թ. 1) խոտի նման կու բուսնի. և յորժամ այս խոտէն յուս գլուխն » ցաւի՝ կախեն, զլիւսն ցաւին խաղվի. և թէ մորհամ առնեն և օծեն, պինտ » խոցերուն օգտէ և կակղցընէ: — Ծանլեզու մի այլ. ինքն խոտ-մն է որ տե. » րեւն նման է Գառնալեզովին տերեւին և կամ Զղախոտին, և որձան յերկայն 1, » երկու կանգուն, և ի նայ (խոնաւ) տեղերն կու լինի՝ որ շուր քիչ լինի, և » ծաղիկն կապուտ կու լինի, և տակն սպիտակ կու լինի. և թէ պեղծ խոցե. » րուն վրայ դնես՝ օգտէ »: — Ծանլեզուի հասարակ տեսակն Օ. Officinale տեսնուած է ի Վարին, Բարերդ, Կովկաս, եւ այլն. — Լեռնայինն Օ. Montanum ի Քարապաղ. — Օ. Nebrodense, ի Մանախ, Պոնտոս, Կիլիկիա. — Քարուսն Օ. Rapestris ի սահմանս Տփղիսու: — Առանց տեսակներն որոշելու յիշուի Ծանլեզուն յԵրասխաձոր, ի Երրակ, յԵրեւան:

2275. Ծանխոտ. — Տես Մեղրածոծ:

2276. Ծանկամ.

Ըստ Ստ. Ռոշքեան է Բազուկ վայրի, Լ. Lemonium. այս ետքի անունս Ամիրտ. կ'ընծայէ միանգամայն Գառնալեզուի և Գառնաղմակիկի: Տես երեքն այլ ի կարգին:

2277. Ծանկիար. Ենկիար. Ծանճար. Եինճար.

Խիարի և Պատնիճանի հետ յիշուի. Ամիրտ. պէսպէս Պ. և Թ. անուամբք յիշէ, և կատղած շան խածածի օգտակար գրէ ուտելն. « Լաւն այն է որ Զամ չով ուտեն և Նանխուով: Ասէ Ռազկանն որդին, թէ ինքն քան զԽիարն թեթեւ » է, և շուտ հալի. Խիարն և Խիարչայ և Դդումն՝ երեքն այլ օգտէ տաք բնութեան. » և թէ շատ ուտեն՝ քամի ընկենու ի փորն :. Եւ ցեղ մի այլ կայ, մանր տերեւնի » ունի և բարակ ճղեր ունի, և ի ծիրանի և ի կարմրութիւն կու քլաւ, և զէտ ա. » րեան տակեր ունի. և կալոց ատենն յաւազոտ տեղեր կու բուսնի. և թէ գտակն » և զտերեւն ուտեն և կամ զլուրն խմեն և կամ լուուխ առնեն՝ օգտէ ամենայն » գազանահարին », եւ այլն:

Նոյն Եինճար անուամբ ուրիշ ազգ բոյս մ'այլ յիշէ, « որ Պ, Ազանկար կ'ասէ. » ինքն Ապու խաղիսանն է և ինքիչդիսայ այլ կ'ասեն. և թէ զիւր տերեւն գինով » խմեն՝ զփորն կապէ. և իւր տերեւն նման է Լազարին տերեւին. բայց չոր լինի. » և ինքն Լեղի Կառզուպանն է, և ի հով լերունքն կու բուսնի »: — Պէյթար չորս տեսակ կայ կ'ըսէ Ծանճիարի, բայց չի բացատրեր, այլ միայն համանիչ անուններ

գրէ: — Թարգմանիչն Լ. Anchusa կոչէ բոլոր ազգը. բայց Anchusa անունն ուրիշ
ազգ բուսոց այլ տրուած է, ինչպէս Խարի: Տես և Խոյ մառօլի համար ըսուածը:

2278. Շան-ծուք.

Ար է Ար. անունն Խոռասք ըլ-քեղպ ըստ Ա՛իրտ. ի Պէյթար գրուած الكلب
 خصت, « ինքն խոտ-մն է որ տերեւն ի գեօինն կու փռվի եր բուսնի, և տերեւն
 » նման է Աթենոյ տերեւին, և տերեւին երկայնութիւնն մէկ մէկ թիզ կու լինի.
 » և տակն ի յայն խոտն կու
 » նմանի՝ որ Թ. Խր քասարի
 » ասէ, և երկու ճուղ գունդղկ
 » են մէկմէկի վրայ, մէկն ի
 » լի և մէկն թերի կու լինի,
 » և ծաղիկն ծիրանի լինի:
 » Բայց ասածս այն ցեղն է՝
 » որ տերեւն ի Քուռաթի
 » տերեւ կու նմանի, և տակն
 » երկու չաթալ կու լինի և
 » ձուք կու նմանի. վերեւն
 » զերգ սոսինձ ի մարդուն
 » ձեռքն կու կաշի. և թէ
 » սպեղանի աւնես և օժես
 » ի մարդուն յանձն, զպեղծ
 » շտերն տանի, և զտաք ու
 » ուէցնին այլ տանի », եւ
 այլն: — Փաւանկ Թարգման
 Պէյթարայ այս բոյսս գրէ Լ.
 Orchio, որ հասարակ անուն
 է անոր նման կողոպճիկ ունող
 բուսոց:



Շան-ծուք.

2279. Շան Մանուշակ.
Տես Շահպտեակ:

2280. Շան շուկիք. — Տես
Հոսիսոյ:

2281. Շանպալիթ.

Թուի պտղի նման բերք
բուսոց ոմանց, ինչպէս Արևն
ծաղկին՝ ուր յիշուած է. կամ
Շան քաշոտ իմանալի է:

2282. Շան Սխտոր.

Փէ՛ ձեւով թէ համով նման հասարակ Սխտորայ, որ արմատովը գրուելով յաղ-
ջուր կ'ուտուի: Արանակուած է ի Բարգող լերին Այրարատայ. (Աղբիւր. Զ. 333:)

2283. Շառնաջ.

Վայրի նաան սերմ է, ըստ հին Բառագրոց:

2284. Շատահրնտիկ.

Վաստկ. գիրքն՝ « Խոտ մի կայ կ'ըսէ (ՄԱԶ) որ հոռմերէն Աշոսիսուսու ստեն, որ » Թարգմանի Շատահնդիկ. Թրջեա այդ խոտիդ ջրովն զծառոյն կուտան, և ապա » ցանեա, նա ծառ որ ի բեր գայ՝ շատ բեր առնէ »: Յ. բառն պէտք է կարդալ Որոսիսուս, Ολιόχοπος, որ ըսել է շատկինի, կինի կամ Պրոսոյ ցեղէն ըլլալով:

2285. Շատծլուի. — Տես Ըղտախոջ:

2286. Շարի.

Պատուին այլ Շար կոչուի, և է կասլայ և իր հատերն. տես զայն. Թ. 1333. Լ. Bacchæ Lauri.

2287. Շարասիս ?

Հին Բժշկարանն ճիշտ հալածող կամ սպանող բուսոց կարգին յիշէ զայս, որոց մէկն այլ է Եղեւան. տես Թ. 641:

2288. Շարդուկ կամ Շարդակ.

Ճնեաց դէմ դեղ գրուած է. « ՉՇարդակի տերեւն ծեծէ և զջուրն խմէ, զամեն » հիւսիսն սպանանէ, զտափակն այլ »:

2289. Շարիւր.

Ըստ Բարխուդարեան վ. այսպէս կոչուի ազնիւ տեսակ մի Բրընձի. (Ա. գրուանք, 240):

2290. Շարխոն.

Վայրի խաշտան է. տես զայս. Թ. 1001:

2291. Շարշարուրիկ.

Սալաձորցին երգած է.

« Շարշարուրիկ ծաղիկ մի կայ, դեղին քաշեր վերայ փորուն.
Թերերն ամեն պախամ ներկեր, նորա ոլքն որպէս Տորուն »:

Պախամ՝ կարմիր ներկոյ փայտն է.

2292. Շարուկ.

Տեսակ մի Միրան պողոյ:

2293. Շաւաշ.

Քալիենու բառից մէջ գրուած է. « կիկղանիոն (Cyclamen), Արանց ծաղիկ » կամ Շաւաշ »: Տես Թաղթ:

2294. Շաւաշարին. Շաւարշարին. — Տես Նոյնի:

2295. Շաւառն.

Ար. Ռոշքեան համարի լեռնային խոտ մի՛ ուսկի եզ կու հանեն. բայց ըստ բառից Գալիենոսի և ուրիշ գրոց՝ Եղեգի տեսակ է, և այս անուան աակ յիշուած է՝ Թ. 616:

2296. Շաւքարան. — Տես Խեղափոր կամ Մոյնիսիկ:

2297. Շաքարկենի.

Տեսակ մի անոյշ Խնձորոյ.

2298. Շրրամ. Շպրիմ.

Տես Կաղնչան և Քրիկան, Ար. Շոպրոմ կ'ասեն:

2299. Շեռ կամ Շէր.

Տես Եղեւին. ուր յիշուեցաւ և Շէհ-երմանի, որ Հայ Շէհ կոչի ի Բժշկարանի, և բացատրեցաւ՝ ոչ այն ծանօթ ծառն ըլլալը, այլ Օշինդրի նման բոյս մի, որոյ լաւ տեսակն ի Հայոց երկրէն բերէին ի միջին դարս:

2300. Շեպ.

Ըստ Արցախեցւոց կժու և համեմային և վիրաց բուժիչ ծանօթ խոտ մ'է. Լ. Rhanus Rusticus, Փ. Raifort sauvage կամ Cran. (Խրէն կաշուի և ի մերայոց):

2301. Շերեփուկ.

Յիշեն նոր տեղագրողք ազգայինք, առանց բացատրութեան. (Մշակ, ԺԸ, 88. — Տէր Աւետիք. 48):

2302. Շէկխարի. Շիխար. — Տես Խարի, և Շանկիար:

* Շէսառէն. — Տես Շարառակ:

2303. Շէր. — Տես Շշի:

2304. * Շէրխիշու.

« Ինքն Մանանայ է, կ'ըսէ Ամիրտ. յերկնուց կու իջնու զէտ Թառանկուպին. » լաւն այն է որ սպիտակ լինի »: — Ուրիշ Բժշկարան մ'այլ խրատէ Շէրխիշուով լուծումն առնել:

2305. * Շէրմ.

Խոտի տեսակ մի, Ար. անուն ըստ Վտակ. գրոց (ՄՂ), Յ. բնագրին մէջ Κνίσπος գրուած է. զոր ոմանք Կատիա համարին. ի մեղուաբուծութեան ի գործ ամուրի:

3306. ԵԹՈՒԿ.

Տեսակ մի ԹԹու Տանձի. լսուի ի Մուշ:

3307. Եիլաման.

« Մանտր Յորենն է, որ երբ մազեն՝ ի վայր անկանի ո. դեղ կ'ըլլայ ուսեցքի, ըստ Բժշկարանի:

Եիլսար. — Տես (Շեկ Խարի) Խարի:

3308. Եիխիտրտիկ.

Այս անունս յիշէ Ասար, և համանիշ գրէ Յիրր և Սմարայ? ետքինս տարակուսական է, իսկ առաջինն է Ար. *طرب*, տեսակ մի Սընկոյ. Ամիրտ. գրէ. « Յոր. » որ է Սամարտիան, և շատ ցեղ է: և մէկ ցեղն Պագահն է. և մէկ ցեղն Ղայիլ. և » ամէնն ֆառահ է (Սունկ), և քան զամէն պեղծ Տարն է. և մէկ ցեղն այլ Սահ ռ րայիճ է, և մէկ ցեղն այլ ի յաղբին ներքեւն կու լինի, և մէկ ցեղն այլ ի գինուն » կարասին ի ներքեւն կու լինի և կու բուսնի. և Թէ զայս կեղեւեն շորցընեն՝ » յում որ մատին ծայրի շափ տան որ ուտէ, խելքն անցնի և ընկնի. և իր կեղեւն » սպանող է. և այն որ չոր է՝ զենն պակաս է. և բնութիւնն Տարին հով և գէլ » է... և լինի որ սպանանէ, և Թուխմոյ և զանձակցաւութիւն ընծայէ. և Թէ շատ » ուտեն՝ յուշ հայի. և մէկ ցեղն սպանող է, գինաֆաս կ'անէ, և պաղ քրտինք » կու բերէ. և երկրորդ օրն սպանանէ. և ինքն (լինի) ի բորբոսած և յայն տեղն » որ պեղծ գազան է բնակել, ի Ձիթենու տակն. և զիր շարութիւնն տանի գալար » և չոր Տանձն, խասիաթով օգտէ, և բարկ գինին ի վերայ խմեն » — Ըստ Փ. Թարգմանչին Պէլթարի՝ այս Սունկս Դիոսկորիտեայ *Mūx* կոչածն է: Բնու. Թեան արժանի է Ասարայ յիշած Հ. անունն:

3309. Եիկատակ. — Տես Սեգրոյ տակ:

3310. * Եիմար.

Ար. է. նշանակէ Հրում Սամիթ:

3311. Եինականաց Թիրեաք.

Թերեւս հենգնօրէն այսպէս կոչեր է Յունաց բժշկապետն (Հիպոկրատ) զՍիտոր:

Եինկխար. — Տես Եանկխար:

3312. Եինկղ. Եինգղ.

Հին բժշկարանն և ուրիշներ այլ զայս հոմանիշ գրեն Կօգայի. տես զայս և իշա. շինգղ: Թիլուի և հետեւեալն:

3313. Վայրի Շինկղ.

Եւ իր հունան. և նոյնանիչ Յ. կամ Ար. այլայլած անունն գրութ Աշխարհաւ ?

3314. * Երախուժ. Երախուշկ.

Ար. է, Երիտաջ Եւստիանոս Թառնդին է ըստ Բժշկարանաց, որ է Ար. Թէ. ռենճիւպին, որ է Մանանայն: Բայց զանազանէ Ամիրտ. և ինքն մանանայ է, յեր. « կնից իջնու. զէտ Թառանկուպին. լան այն է որ սպիտակ լինի և անուշահատ » կակղացընող է հաղին և փողին խոշորութեանն օգտէ... և իր ուժն աւելի է քան » զԹառանկուպին »: — Յայտ է որ սա բուսական չէ, բայց բուսականներէ անբաժան, քանի մի տեսակ ծառոց վրայ գոյանայ. տես Գաղպէ:

3315. Երամշուն ?

Երկրայական անուն, ինչպէս և իր համանիչն Հարկուտի, որ Գալիենոսի անուամբ գրուած բառից մէջ գտաւի:

3316. Երրիկ.

Ոչ է բոյս, այլ կենդիւ բուսոյ և նմանեաց իւրն: Կամարկապցին ուրիշ բուսեղինի մ'այլ նմանցընէ. տես Մահդանակ:

3317. Երխաս.

Բժշկարան մի գրէ Թ. « որ է Ղըրիս պօզուան »: — ազգային օսմանեան նշանաւոր բժիշկ մի ըսաւ, Թէ Լ. Սողոմոնի կամ Մարեմայ կնիք ըսուած բոյսն է, Լ. Sigillum Salomonis կամ Sigillum Mariæ, որ և Vigna Mariæ. ուրիշ անուամբ կ'ըսուի Clematis Vitalba կամ O. Cirrosa. Ամիրտ. յիչէ Պէթարայ Չիյան կոչած անուամբ որ է Յամիկ, բայց Արարացին Վայրի Յամիկը կ'իմանայ, որ նոյն է վերոյգրեալ Լ. անուանց հետ: Այս տեսակն գտուած է Ի Փ. Ասիո, Պարսկաստան, եւ այլն. Տես Հատոտ և Յամիկ Վայրի:

3318. Եիւղ.

Թէ և հասարակ բառ, որ և է բուսեղինի բարակ և պղտի կտոր մի նշանակէ, այլ նոյն անուամբ Լ. Festuca, և Փ. Fétuque կոչեն յատուկ բարակուկ բոյս մի նման Բոլխի:

3319. Ելոռոս.

Տեսակ մի Խաղողոց, բացազոյն կարմիր Թափանցիկ մաշկով:

Ելոր. — Տես Սադոր:

3320-1. Եկլոր կամ Եկլոր. Եախլոր.

Հին Բժշկարանն լաւ բացատրէ ինչ ըլլալը. « Ի կաղնի ծառն պտուղ լինի, ոչ » կաղնի է ոչ Գղթոր, ոչ Եկլոր. ապա խոշոր և զերգ փուշ փուշ լինի »: Անպէս

Թուի ըսածէն՝ թէ այդ կաղնի ծառոյ պտղակերպ բերքն նման է Եկլորի և ոչ Երկ-
լոր. բայց ուրիշ Բժշկը. որոշակի կ'ասէ. « Քթէն որ արին երթայ և ոչ դագրի,
» զկաղնի ծառին պտուղն, որ Գիտորի նման է, Եկրտար ասեն, լուս մանր և ի
» քիթն փշէ »: — Տես և Շնակ. Թ. 3330: — կամարկապցին յիշէ և Շախլոր,
բայց ինչ տեսակ ըլլալն չիմացուիր:

3322. Եղծայախոտ.

Զայս յիշէ Աթանասեանն, տերեւները նմանցը-
նելով Եղեշնակի (Թ. 633), « ծաղիկն բաց դեղին,
որձային ծայրն լարանման ? որ Թառամելուց յետոյ
Թողնում է. . . աստղանման և մոխրագոյն Թոփ չիւ-
ղեր », որ շուտ մի ցրուին՝ եթէ հով դայի:

3323. Եղլան գտակ.

Տեսակ մի Սունկ. (Մանան. 460):

Եղուն. — Տես Խոխուն:

3324. Եմնդ.

Յիշէ նոր բառհաւաք մի, առանց բացատրելու:

3325. Եմորգակ.

Գրած է մէկն՝ իբր համանիշ Լ. բառի *Stru-*
thion. որ չի լսուիր, Թերեւս ըլլայ *Struthiola*, ո-
րոյ Յ. անունն սերմն, և ձեւն յարմարին ճնճղկա-
լեզուի, Թ. 1892:

3326. Եմփոռուելուկ.

Խոտեղէն մի յիշուած յօրագրի (Նոր Դար, է,
102.) գուցէ ըլլայ Թիւն 3280:

3327. Ենազոխի պտուղ.

Հոմանիշն այլ Դոնասպիս կոչէ Բժշկարան մի:

Ենալեզու. — Տես Եանկեզու:

3328. Ենախաղող. Ենխաղող. Եանխաղող.

Կ'ըսուի նա և կամ կ'ըսուին իր տեսակներն՝ Իշախաղող և Զրախաղող: Լ.
Solanum ըսուած բուսոց ազգէն. Ար. Անաս ըլլ-Սայրայ, որ Աղուխու խաղող
նշանակէ. Ամիրտ. այլեւայլ Ար. և Պ. անուններ այլ յիշէ, որք յայտնեն թէ
այլեւայլ տեսակներ պիտի ըլլան. « լաւն դեղին լինի Թաժայ, և այն որ սեւ
» է՝ չէ աղէկ, և Թմրեցընէ և խեւցընէ, և ցեղ մի այլ կայ որ թէ երեք դրամ



Եիող (Թ. 3318)

» ուտեն՝ կու սպանանէ. և իր դեղն այն է որ փսխեն, և յետոյ թափայ կաթ
» խմեն և Անխոն և մեղրաջուր »: — Յիշուի ի մերայնոց և

2329. Շնխաղող կարմիր.

Արոյ հոմանիչ գրէ Բառգիրք մի՝ Քարքնակ: — Պէյթար ըստ Գիտակորիտեայ
չորս տեսակ Շնխաղող յիշէ, այս վերոյգրեալ անուամբ յիշածն՝ ըստ արեւելա-
գիտաց է այնոր Struchnos կոչածը. բուսաբանք Strychnos անուամբ հիմայ կ'ի-
մանան հնդկային որժացուցիչ Ընկոյզը: — Հայ-Աղուանից կողմանց վայրի ծա-
ռոց մէջ այս անուամբ ծառ մ'այլ յիշուի Շնհաղողի գրուած (Մեղու, ԻԲ, 83):

2330. Շնակ.

Այսպէս կոչէ Բիվուր ի Բառագիրան վերոյիշեալ Շկորը:

2331. Շնահաւոր խոտ կամ Եղէզն.

Այսպէս կոչէ Ամիրտ. Պէյթարայ Անարանտամի կոչածը, ինչպէս ինքն կար-
դացեր է, ուրիշ անգամ այլ Տերանտամի, իսկ Փ. Թարգմանն Երուսպօրանէ
علاج الحصى « ինքն խոտ-մն է, մէկ մէկ կանգուն ճղեր ունի, և տերեւն նման է
» Կաղնոյ տերեւին, և թէ զայս խոտիս զքաջն և զտերեւն եփես՝ զինով խմես,
» օգտէ ամենայն զազանահարի. և թէ զայսոր մէկ գրամ՝ երեք գրամ խնկով
» և 70 գրամ հին գինով յամէն օր խմէ մինչեւ չորս օր, զընդունութիւնն տանի...
» և թէ զայս խոտս եռցընեն և ի տունն ցանեն զձուրն, նա այն տանն ժողջ-
» վուրդն սիրեն մէկ զմէկ. Եւ Թ. այս խոտիս Ղոսրոնա օր ասեն, որ է Շնա-
» հառոր »: — Ըստ Թարգմանչին Պէյթ. այս բոյսս յիշեալ ի Գիտակորիտեայ՝ է
L. Verbena supina, որ ի Միջագետս և ի Հարաւ. Կովկաս այլ նշանակուած է:

2332. Շնբոլիկ.

Տես Բոյի, որոյ անարգ տեսակն թուի:

2333. Շնըրահիլի ?

Արցախոյ անտառաց ինձ անծանօթ ծառոց մէկն, յիշուած ի Մեղու օրագրի:

2334. Շնթակուր ?

Գրողն կամ հնարողն այս անուան՝ անյայտ է. բայց զուգած է L. Succisa կո-
չուած ցեղին, որով կ'իմացուին Քոսքուսի (Scabiosa) և Cephalaria (Գնտաղուխ)
ազգը ծաղկանց:

2335. Շնթելուկ կամ Շանթելուկ.

Տեսակ Թելուկի (տես թ. 678), չուտուելուն համար այսպէս կոչուած:

2336. Շնթուր.

Բանջարեղէն մի, զոր ոմն (Բախտամեանց, 302) Կովկասղամբ կոչէ, այլ և
Շողգամբ. բայց այսոր և Կաղամբի մէջ շատ տարբերութիւն կայ. թուի տեսակ
մի Բողկ. և ըստ սմանց L. Napellus, Փ. Napel կոչուածն, որ Մոլդաւիոյի ազ-
գէն է:

Ենիսիար. Ենկիար. — Տես Եսակիար և Խոյ փարունգ:

2337. Ենխտո.

Այսպէս կոչուի տեղ տեղ Խոյարձն:

2338. Ենկամնուկ.

Հասարակ կաթնոտ խոտ մի է, յիշուած ի Բժշկարանս:

2339. Ենհարմի կամ Եէնհարմի ?

Բժշկարան մի յիշէ զայս, դեղոց մէջ իրեն փոխան Դազձը գնելով, ուրիշ տեղ այլ Օշախը:

2340. Ենորեակ.

Ռոջեանն յիշէ զայս ի բառից Քալիենոսի, Լ. հոմանիչն այլ Serapios. այսոր ինչ ըլլալը յիշած եմք Ասպանակ անուան տակ, Թ. 171. մէկ տեսակն S. Pseudocordigera տեսնուած է ի Վլրաստան և յԻմերէթ. ուրիշ տեսակք ի Փ. Ասիա և ի Արիփիա:

2341. Ենփնամաղիկ.

Ռամկական անուն մի Քետնախնձոր ծաղկան, այսինքն Երիցուկի, յիշուած ի Բժշկարանի:

2342. Ենքարուկ.

Աւերակաց մէջ բուսած փշեղէն մի, (ըստ Մանան. եր. 451):

2343. Եշի.

Վանական վ. Գրիգոր Աստուածարանի գրուածոց մեկնութեան մէջ յիշէ. և կ'ըսէ, « Եշի՝ որ Մահլայի ասեն, Բարտեաց նման է »: Մահլայ է Ար. بلس, Բաուսի և Բանչոյ ցեղէն. Լ. Cerasus Mahaleb, Փ. Cerôsier Mahaleb, կամ Bois de S.te Lucie. Ամիրա. գրէ, « Ինքն միրգ է. ի Պուտոմ կու նմանի և անուշահոտ է. » և լուսն այն է որ սպիտակ լինի և ի մարգարիտ կու նմանի. . Ասէ Պո. Թէ » ինքն ծառ-մն է, նման է Ուռի ծառին և սպիտակ ծաղիկ ունի. և իր պտղին » Հայ ըլլ-մահրայ կու ասեն. և ասացել է գրոցս շինողն, Թէ լուսն այն է որ ի լի հաւանդ ? լինի. և իր ճղէն տանկինակ կու շինեն, զասն իր անուշ հոտուն հա- » մար, որ ի ձեռն մնայ հտտն այս փայտիս »: Ուրիշ Բժշկարան մի կ'ըսէ, Թէ սա « Հաւանցի Եսակամանն է... քան զՄաշ խոյոր է: գոյնն մթազայն կարմրութիւն » քրտէ. և յորժամ կեղեւին մէջն լինի՝ փոքր Լուպիայի մի շափ է, գոյնն սպիտակ » և մէջն այլ սպիտակ »: — Կամարկապցին այլ գրէ. « Մէհլէպ՝ ծառ է. վրան » Քիրազ ալլամիշ կ'ընեն »: — Ըստ ոմանց նախնեաց մերոց՝ Եշի այն ծառն է, կամ այն ծառերէն մէկն է՝ որոց ճիւղին կեղեւը տեղ տեղ աաշելով և խատուտիկ ընելով Յակովբ նահապետ, կու ձգէր ոչխարաց ջուր խմելու. աաազանին մէջ, զոր

տեսնելով մաքի՞ կու զկժէին և խառուակի բրդով գառնուկներ ծնանէին: — Թէ և մեր նպատակէն օտար է, այլ թէ՛ հետաքննական դէպք մի ըլլալով, և թէ ազգային յիշատակ մ'այլ բերելով, նշանակենք հետեւեալս. շատեր գիտնալով որ մարց և մաքեաց յղութեան ատեն երեւակայութիւնն կրնայ այսպիսի անբնական բաներ պատճառել, փորձեր են ոչխարաց վրայ այս Յակ. Նահապետին հնարքը, և շեն յաջողած. համոզուած են և գիտնականք, որ բնարար ըլլար այս բանս, և ողջամիտք ընդունած են որ աստուածային կամք կամ հրաշքով եղած է. ոմանք այլ կարծեր են թէ ուրիշ բնական հնարքով մի կարելի եղած ըլլայ: Այսու կարծեօք պատմէ Կոստանդին Պորփիրոսեն, թէ կայսրն Յուստինիանոս ատենօք ի Փ. Ասիա և ի Հայս պոռոյս մ'ըրաւ. հօս զինքն հիւր ընդունեց Թովմաս անուամբ հարուստ Հայ մի. այսոր հարստութեան աղբիւրն էր իր հօտից բազմութիւնն. որոցմէ 10.000 ոչխար ընծայեց իր փառաւոր հիւրին. զարմանալին այս չէր, այլ այն՝ որ ամէն մէկ հազար ոչխար՝ մէկ մէկ տարբեր գունով էին, և շատ շտեմեւած գոյներ և խայտեր ունէին: Կու հետեւցրնէ Միրանածին պատմիչն, թէ միթէ չն՝մք կրնար կարծել՝ որ ի Հայս և յԱսորիս գաղտնիք մի գիտողք կային՝ այսպէս զանազան դոյներով գառնուկներ ծնուցանելու: — Ընթերցողք այլ կարծեն ինչ որ լաւ համարին. այս բանիս համար գրէ մեր Վարդան գիտնական Վարդապետն. « Գաւառ զանօք Ընկուզի և Սօսի և Շշի՝ ծնանէր ի շուր աւազանին նկարէնս »: Ատնց տեղ մեր Ս. Գրոց Թարգմանութիւնն կ'ըսէ, « Առ Յակոբ գաւազան Շէր դալար » և Ընկուզի և Սօսոյ և կեղեւեաց զնոսա », եւ այլն. Լատին Թարգմանն զնէ դալար գաւազանս Կաղամախի, Կշենոյ և Սօսոյ, (Virgas Populeas virides et Amygdalinas et ex Platanis). Այս վկայութեանց համեմատ՝ Շէր հոմոնիչ կ'երեւի Շշոյ:

2344. * Շոգրան. Շաւքարան.

Գալիենոսի բառից մէջ Յ. գրուի փարբիոն կամ փապրիոն? Ար. է Շոքրոն
شوكران, և նշանակէ Մուլխինդ, խնդակութ:

2345. Շոխի.

Յիշուի ի Մուշ և ի Խոտուշուր. Կանեփի նման վայրի բոյս է արտերու մէջ և այնոր պէս այլ կ'ուրուրի:

2346. Շողան.

Եղեգի տեսակ մ'է, ըստ Բժշկարանաց. բայց ի՛նչ տեսակ:

Շողգամ և Շողգմբուկ. — Տես Շաղգամ և Շաղգանուկ:

2347. Շոնի կամ Սոնի.

Վայրի ծառոց զլխաւոր կամ հասարակներէն մէկն է, բայց յատուկ որ տեսակն ըլլալն որոշել դժար է. որովհետեւ գրեթէ նոյն և նման յիշուին քանի մի մի մասնկամբ անուանելու ծառք, Նոնի, Փիմի, մանաւանդ յետինս, նոյնպէս և Սնովպարն, որ թէ և Ար. կամ Պ. է, բայց իբրեւ Հ. գործածուի ի գիրս մեր. և

մերձագոյն կամ նոյն թուի ընդ Եոնույ, որոյ կրնամք յատկացնել Լ. Pinus, Փ. Pin. Ըստ մեր գաւառականաց և Խոտուղրեցոց՝ Կուենույ տեսակ կակուղ և փլաձեւ տերեւներով ծառ մի է, և յարմարի Հելլենաց Իսթմեան մրցանաց մէջ՝ յաղթողներու նուիրուած պսակացն, զոր թարգմանիչք մեր այս անուամբ յիշեն. ինչպէս Գր. Աստուածաբանի և անոր մեկնչին գրածն. « Եոնի ծառ՝ » զտեւականութեան ունի զնշանակ և զիմաստասիրութեան, յամարայնի և ի » ձմերայնի միշտ սաղարթացեալ. վասն որոյ և զԺուժկայն ի մրցմունսն առ աս » պարիսօք՝ Եոնի սասուլք պսակէին » Տերեւոց ասեղանման սուր ծայրից համար՝ ոմանք համարին Լ. Abies Pectinata կոչուածն, Փ. Sapin pectiné — Ամիրտ. չի յիշեր Եոնի կամ Սոնի, և ոչ այլ Վաստակոց գիրքն՝ որ յաճախ յիշէ զՍոնովպար կամ Սոնոպրի, նոյնպէս Ամասիացին այլ, որ և զոյգ համարի Փիճի և Մարիս ծառոց հետ. զայս յիշած եմք ի կարգին. միւսն այլ յետոյ յիշեմք. իսկ հօս գրեմք ինչ որ գրած է Ամիրտ. Սանովպարի համար, « որ է Փիճին. լաւն այն » է որ սպիտակ և թափայ լինի.. » գիրացընող է.. և թէ զկեղեւն » եփեն և թէ զլուրն խազալ առ » նեն՝ զպալղամն քաշէ, և օգտէ » ակափն և իր մուխն օգտէ այնոր՝ » որ արտեւանուներն թափի, և իր » պտուղն օգտէ հով հազին... Ի » ցեղ մի այլ կայ որ այլ մանր կու » լինի, և այլ տաք է », եւ այլն: — Վաստակոց գիրքն խրատէ (ՄԼԹ) հունտէ ցանել այս ծառս « աշնան » յետի ամիսն, յաւազուտ գետինն».



2348. Եոմին.

Որ Ար. բառով այլ կ'ըսուի Հ. Սարտ
ճախ կամ Ասպանախ, عابسان.

Եոնի պտուղ.

այս բառով գրէ Ամիրտ. բայց կ'աւելցընէ, « Որ Հ. Եոմին կ'ասեն, և Իրմել, կամ » Իրմել այլ կու ասէ (տես թ. 1198), և ինքն ցանծու է և յածվենիքն կու » բուսնի, և Վայրի այլ կու լինի, և լաւն այն է որ ի յանձրեւն բուսնի.. կակ » զացընող և զիճացընող է և գիրացընող է, և զկուրծքն կու կակղացընէ, և » օգտէ հազին, և հունգն օգտէ կրծոց ցաւին, և զփորն կու լուծէ և զսափրան » կտրէ, և շուտ անցնի ստամոքսէն. և զէտ այլ բանձարնի քամի շայնել, և օգտէ » ամենայն տաք բնութեան, և հով բնութեան այլ լաւ է, յորժամ տաք իրօք » եփի և մուկթատիլ լինի.. Իպն. ասէ, թէ զինքն թանձր եփեն և ի վերայ » Տարդինի ցանեն և ուտեն, օգտէ կանակին ցաւութեան. և Բարելացեոց ազգն » զայս կու ցանեն և ամառն և ձմեռն կ'ուտէին. շատ օգտութիւն գտնուին » խաչըկին ցաւութեան, և թէ տապկեն և ուտեն՝ օգտէ սուր լինմանն որ թ.

» Եւորդի առէ, որ ի սափրայէ լինի ո: — Այսչափ օգուտներն թերեւս յայտնի չէին Միւ. Գոյի, երբ գրէր Մաւական (տր). Թէ « Բժիշկ ոմն բնախօսէր, ստու. » գարանելով զանուն բանջարին կոչելոյ Սպանախ, եթէ է հիւանդ, զի սպանա. » Անչ արժան է ետիս, և ապա զնա տալ կերակուր. զի այնքան քնասակար է. » և լուեալ ախտացեալ այր՝ ամենեւին հրատարեաց, ոչ գիտելով թէ ոչ վրան » ամենայն հիւանդաց ասաց ո: — Լ. Spinacea. Փ. Epinardo. Գիտաւոր տե. սակ Շոմինի՝ Յ. Totandra յիշուած է ի Թ-Հ. ի Պազու, Եփրատայ կողմերում: Հին հեղինակն Համբուշտ զՍպանախ համարէր մշակուած կամ Ընտանի Թաղթ:

2349. Շոնիզ. — Տես Արչեղեղ:

2350. Շոդ.

Հասարակ անուն բուսոց մատղաշ բողբոջներու:

2351. Շոռան.

Ոչնանի նման բոյս մի ի կողմանս Կովկասի, ուսկից կալաքար շինեն ի սահ. մանս Երեւանի, ըստ Աթանաս. (եր. 90): Տես Աղտաղտուկ:

2352. Շուախոտ.

Հասարակ գետնի խոտ, Սիզոյ նման:

2353. Շուին?

Գրած է բառհաւաք մի իր բուսեղինաց ցանկին մէջ:

2354. * Շումրայ.

Վայրի Սամիթն է:

2355. Շուն սպանող.

Ըստ Ար. خانق الكلب խանեգ էչ-քեչայ, կամ խանեղ չոչ-քոչայ՝ ըստ Ամիրա. « և այս (բոյս) զայն բանն կ'առնէ (սպաննել), և այլ չուտ կու սպաննէ, և ինքն ի » Հնդկաց կու գայ. և այնոր Աղարիդի կ'ասեն ո: Պէլիար ըստ Գիտակոր. նկարա. գրէ զբոյսն իբրեւ՝ Թուփ մի երկայն բարակ և կարծր ճղերով, բազեղանման հոտա. ւոր տերեւներով, որոց ծայրը գեղին կաշուն հիւթ կայ. պտուղն այլ Բակլայի բա. ճիճ նմանի, մատնաչափ երկայն, մանրիկ և պինտ հատիկներով: Գիտունը կոչեն Լ. Apocinum erectum. — Վենետկեան կոչուած տեսակն՝ Ap. Venetum հաւանօրէն գառուի և ի Հայս, որովհետեւ յիշուի ի Հս. և Հր. Կովկաս, ի Պանտոս, ի Քրդա. ստան և Մարաշ:

2356. Շուշան.

Անունն հասարակ է մեծ մասին արեւելեայ լեզուաց և հերթայերէն բնադրին. իսկ ծագիկն գրեթէ անկարօտ ծանօթութեան. տեսողին և լսողին միտքը կու յափշտա. կէ. և որչափ այլ նիւթական բոյս մ'ըլլայ՝ ուրիշներու նման, բարոյական կամ ան.

նիւթական գաղափար մ'այլ կ'ազդէ. ի հնուց ի վեր վարդի հետ ծաղկանց զլեա-
ւորութիւնը ժառանգած է, իբրեւ թագաւոր և թագուհի. բայց որն այս, որն այն.
զի ըստ այլեւայլ լեզուաց՝ ոմանք զվարդ թագաւոր գրեն և զՇուշան թագուհի,
այլք ընդ հակառակն. մեզի առաջինն յարմարագոյն գայ: — Իսկ որն աւելի գե-



Մրային Շուշան. — Տես և թիւ 2314:

բազանց. — Հասարակաց վարկն վարդի տուած է այս առաւելութիւնը. սակայն երբ
յիշուի որ հինք՝ Սատղկան կ'ընծայէին զայն՝ առփանաց դիցուհւոյն, իր յարգն ու
վարկը կորսընցունէ քրիստոնեայ մտաց առջեւ, որ անոր հակառակ՝ զՇուշանն հա-

մարին օրինակ ողջախոհութեան և կուսութեան, ազնուագոյն ճրից և զգացմանց մարդկան, մանաւանդ իգական սեռի: Եւջան գերազանց կ'երեւի և մեր Առաւ կախօտին մտաց, երբ բուսոց Թագաւորութեան խնդրոյ մէջ ամենէն առաջ զՇուշան յիշել կու տայ (18), և բարձրամիտ Մանուչակին ընտանութեան փոփոագն այլ առ Եւջան ձգէ (19): Բայց Թողով զառոնք առ բանասէրս, յիշեմք ծաղկիս գլխաւոր և այլանման տեսակները:

Անտարակոյս հասարակօրէն երբ Եւջան լտուի՝ այն պարզ Սպիտակ ծաղիկն յիշուի, իր ձիւնագոյն կամ կաթնագոյն հինգթերթեայ բաժակովն (1) և անուշահոտ գործարանաց դեղին թելերովն. այս է և մեր Ամսիացոյն ստորագրածն Թ. ա. անուամբ՝ Չամպախ կամ Չենպագ, (چنبق), մինչ Ար. նման Հ. է Սոստան ڄامڄام:

« Ինքն սպիտակ ծաղիկ է, ձեղքած է, և մէջն գեղին, և թելեր ունի. և բար-
» ձրութիւն մէկ կանգուն է, և այլ աւելի և այլ պակաս այլ կու լինի. ի յամէն ճը-
» դերն չորս կամ հինգ ծաղիկ ունի. և կամ տասն ծաղիկ ունի, և անուշահոտ է
» և ուժով է, և տերեւն նման է Մրտին տերեւին՝ որ իր ճուղն լինի, և տակին տե-
» բեւն այլ խաշոր է, և Քաննու տերեւ կու նմանի, բայց կանանչ է: Եւ Մինհանին
» տերն առէ, Թէ Չամպախն Սպիտակ Սոստան է, և գրոցս ինտղն առէ, Թէ Ը-
» բազդին Չամպախն է. և չէ ստոյգ »: — L. Lilium, ֆ. Lis. Ռ. Λιλιε. և այս յատուկ Սպիտակն՝ Lilium Candidum, ֆ. Lis Blanc, կամ Coman, ըստ այսմ յետին նշանակութեան՝ շատ տեղ գտուի: — Հասարակ Եւջանաց ազգէն համա-
րուին և L. Martagon, որ գտուի ի Հր. Կովկաս. — L. Monadelphum Szovitsianum ի Համիէն. — L. Ponticum ի Համիէն, Ռիզէ, Չաղբաւան-դաշ 1. ևն:

3357. — Դեղին Եւջան.

Այն է զոր բուսարանք անոյշ անուամբ Ameryllis կոչեն, և յատուկ գեղին տեսակը նաեւ Lutea և Lutea lutescens. ֆ. Am. Jaune, և գերմանացի Գասպար Ետեռներէրկ Բուսարանի անուամբ Sternbergia. Ամիրս. գրէ « Անտրիզայիս,
» որ է Դեղին Սուսանն. Թ. Աշնան Չիկտամ կ'ասէ. . Թէ գտերեւն ծեծես և
» սպեղանի առնես. . զտաք ուռէցնին տանի, և Թէ աչքն այլ լինի տաք ուռեց՝
» ի վերայ դնեն՝ օգտէ, և Թէ զքօքն և զտերեւն սպեղանի առնես և դնես ի
» վերայ կրակին այրածին՝ շատ օգտէ »: Քանի մի տեսակ ունի այս ազգ Եւ-
ջանն, որոց մէկմէկէ գեղեցիկ անուններ ընծայած են բուսարանք կամ բուսա-
սէրք, զորս մեր Բուրաստանաց երգիչն այլ այսպէս բովանդակէ (Ա, 167-176).

« Ի՛րր աստանօր լըռել կարեմ ծիրաներփեանդ և զքեզ՝ Եւջան,
Հիւր ի յտար երկնէ առ մեզ եկեալ չըքնաղդ Ամարիլիս. (L. A. Formosissima)

1. Եւջանի ձևն աստեղաց նմանքնելով ծաղիկու ժամանակին կամար այլ այսպէս իմաստաւոր է ֆիլոս երբայցիք. « Եւջանն՝ թերեւ վասն սպիտակութեանն և զի լուսաստեղի իսկ է, իսկ աստեղք՝ նշուք են որ դնովաւ առանցք են. զի իւրացածիւր յաստեղացն հասարակ թաւակէ. ունի և բարաւնութիւն բանդ Եւջանիդ. հակառակ իմ ունի առ այլ ծաղկունս. զի է սր մեքրանի բոյս արձակէ, իսկ Եւջան ի կասանել ամբարանի, յորժամ այլքն թաւակ մին. քանզի որ շուրջքն ուռուցանի՝ ծաղկին. իսկ Եւջանն առ Եամին (Ենիկ ստոյգ), և յիս Եանն՝ յորժամ բոցտապագոյն է արեգակն »:

Նաժիշտը զառաջադրե պար ի ծաղկոցս ըզքեւ առնուն,
 Այն որ ծաղկէ աստեղաձեւ երկրաբուսիկ որպէս վարսամ (L. *Albica major*),
 Այն որ ի տիպ Խըստորոյ անփառունակ արկեալ յերկիր՝
 Բերէ բուրեան Շուշանիկ, առեալ կոչումն Ամբրոսական (ի. *Aglia Ambrosiano*).
 Եւ այն որ Սիրատարի ձայնեալ ի վանգ տընկաբանին (*Agapanthus umbellatus*),
 Զոր հըրուանգանըն Բարեյոյս յըղէ ծաղիկ հովանաձեւ.
 Այն որ զԹագի արքունւոյ բերէ ըզձեւ և զյորջորջումն, (*Corona reale*)
 Որ ձեղանակ ամերիկեան՝ ի հերապանժ ծոպիցն ոգեալ » (ի. *Crino d'America*):

2358. — Շուշան Երկնագոյն.

Որ և Լուրջ Շուշան, կամ Կապոյտ Շուշան. կ'ըսուի և Պոստ. զսա Բժշկա-
 րանք մեր Յ. բառիւ կոչեն, « Այրաս, որ է Իռաս », այսինքն Յ. Իրիս, L. *Iris*.
 որոյ մեկնութիւնն այլ կու տայ Ա.
 միրտ. « Ասէ Պոս. այս Այրաս անունն
 » անոր համար է՝ որ ինքն զէտ զՏէ-
 » բունի (ծիրանի) գօտի գունզգուն
 » ծաղիկ օւնի, դեղին, սպիտակ, լազ-
 » վարդի. և լաւն այն է որ սեւ ու
 » պինտ և հանկուստ է »: Այս գեղե-
 ցիկ ազգ Շուշանի այլեայլ տեսակներ
 օւնի. յորոց կոչուածն L. I. *Reticulata*
 գտուի ի Գարապաղ, ի Կարին, ի
 Սոմխէթ. — Պարսկայինն I. *Persica*,
 մեծ և Փ. Հայոց միջոց Եփրատայ կող-
 մերում. — Կովկասեանն I. *Caucasica*
 ի Մանսիս, Գարապաղ, Վրաստան.
 — Պաղեստինեանն՝ ի Սնգար լ. ուր
 յատուկ տեսակ մ'այլ գտուի I. *Sin-*
djarensis. — I. *Sibirica*, ի Սամսոն,
 Կովկաս. — I. *Guldenstadtiana*, ի
 Կարին, Էվէրէկ, Սամսոն. — I. *Ibe-*
rica, որ գեղեցկագոյն տեսակաց մէկն
 կամ ամենագեղեցիկն է և գտուի ի
 Ռ-Հ., նոյնպէս և I. *Paradoxa* ի Ռ-Հ. ի Հեր, ի Գանձակ. — I. *Lutescens*,
 յԱխտաղ լ. Գամրաց. — I. *Sambucina* ի Գանձակ. — I. *Flavescens* ի Ռ-Հ.
 — Գերմանականն՝ I. *Germanica* ի Թ-Հ.



Դեղին Շուշան.

2359. — Շուշան Ծովային.

Մովու Շուշան կարծեմ անծանօթիէ բուսարանից, բայց եթէ նոյն վերոյիշեալ
 Կապոյտն ըլլայ՝ ըստ կապուտակ գունոյ ծովու, կամ անոյշ իրային Շուշանն.

ուական եթէ յայտնուած այլ չըլլայ ոչ ծովու և ոչ ցամաքի վրայ, շատ էր մեզի մեր աննման Ենորհալոյ մտաք բուսոցընելն՝ ի նմանութիւն աննմանին Հոխի սիմեայ .

« Ծովային Եուշան ծաղիկ, բուսեալ ի տանքս Թորգոմի .
Առագեալ արեամբ Արբոցըն Պետրոսի և Պողոսի » :

Հաւանօրէն այս է և հին Բժշկարանին յիշածն « Ենշուն ծաղիի տակ, որ է Եօ . » եօֆար աղէկ վճառղ » , զոր ուրիշ բուսեղինաց հետ խառնել եփել և ըմբելիք մի պատրաստել խրատէ , որ Դիւնկրատեւ կոչուի . վասն զի այսով համանուն իմաստասէրն « քանի կենդանի կեցաւ՝ (ազատ) պահեց զինքն յամենայն ցաւոց » : Բիշած եմք մենք զայս Երային Եուշանս . տես Եոնսփար . (Թ . 2214) , ինչպէս և բնակազ մութեան վրայ գրող մի կոչէ « Զրի Եուշան , որ է (սխալ գրելով) Եղբար » :



Եուշան ծովային .

2360. — Եուշան Հովտաց .

Գերազոյն սիրերգակին (Սողոմոնի) երգածն և սիրելոյն նմանցուցածն՝ ըստ բուսաբանից նոյն ի մաստով կոչուի Լ . Lillium Convallium կամ Convallaria , Փ . Muguet : Մեկնիչք Ս . Գրոց այլեւայլ կարծիք ունին այս Սողոմոնեան Եուշանին վրայ , և շատք հաւանին որ Երայինն կամ եգիպտական Լոտոսն ըլլայ , գիտելով որ յԵրգ երգոցն գրեթէ միշտ սա յիշուի՝ արածելու կամ սննդեան իմաստի և բառից հետ , զի Լոտոսն այլ՝ որ Եեղոսի Երոց վրայ կու բարձրանար՝ ուտելիք էր . և դարձեալ , համարին ոմանք որ Սողոմոն այդ նմանութեամբ ուզեր է յիշեցընել իր եգիպտացի հարսը . այսպէս համարի և մէկ մեկնիչ Երոց երգոյն (Գր . Տաթեւ .) , « Եուշան հովտաց Եինոֆարն՝ որ ի Լուր բուսանի , գեղին գու . » նով , և ոչ է Եուշան Լերին՝ որ Սպիտակ է » : — Քալանթարեանն այլ Պարսից Լիլիֆար կոչածն է կ'ըսէ , բայց մանր սպիտակ ծաղիկ մի : Իսկ բուսաբանից վերայգրեալ Լ . և Փ . անուամբք ճանչցած ծաղիկն՝ ընդհանուր Եուշանաց ցեղէն է . գիմացկուն արմատով , վեցթերթեան , անուշահոտ , որոյ համար և դարմանուի , եռակողմ գնտածեւ պտղով . երբեմն եղ կամ Լուր կու հանէին ծաղկէն . աւելի հասարակօրէն փռնդացուցիչ փոշի մի կու հանեն՝ չորցընելով : Գրեթէ միայն մէկ տեսակ մի է այս Հովտային Եուշանս , C. Majalis , Փ . M. de mai , (Մայիսի Եուշան) , որ գտուի ի Կ . Պոլիս , և յերկու կողմանս այլ կովկասու :

2361. — Եուշան Ոստին .

Մեր շատ ձեռագիր և գունագեղ աւետարանաց սկիզբը՝ էլ էլ աղիւսակներ կան նկարուած՝ պէսպէս զարդերով և ձեւերով , որ խորանք կ'ըսուին . բայ ի գծածեւ զարդերէն և դէմքերէ՝ կան և կերպարանք Թաշնոց , ձկանց և ծաղկանց : Ենորհալի Հայր մեր և այլք ոմանք այս զարգուց և գունոց խորհրդաւոր իմաստ .

տները կամ ինչ նշանակելը բացատրած են. ծաղկանց մէջ կան և շուշանաձեւք, որոց մէկ տեսակը մեկնիչ մի կոչէ « Եռչան Ոստին, որ յարեզակնէ վառի »: — Ինչպէս կու վառի. — Թուի թէ վերոյիշեալ Երկնագոյն տեսակին նման պէս պէս գոյներով վառվառի. իսկ Ոստին նշանակէ ցամաք, չոր, և իբրեւ անմշակ տեղի. որով յարմարի և ծաղկին կոչուիլ

2369. — ԵՈՒՂԱՆ ՎԱՅՐԵՆԻՒ .

Այս անունս իսկոյն և աւելի ուժով և շնորհքով քան զՍողոմոնի ԵՈՒՂԱՆՆ Հովտաց՝ մտքերնիս յափշտակէ այն տեղ այն ամբողջին մէջ՝ ուր ցուցաւ, և մանաւանդ այն գերագոյն Անձին՝ որ զայս ցուցուց, այն ամենօրհնեալ և ամենարուղիս շրթանց՝ որ ըսաւ. « Հայեցարոտք ի Եռչանն վայրենի » . (Մտթ. Զ, 28. — Ղուկ. ԺԲ, 27) . « Ո՛վ ամենայարմար խրատուս և լի իմաստասիրական աւանդիցս, (կանչէ) » Ենորհաւոյ հոգէկիր յաշորդն ի մեկնութեան (1), որ յոյժ գլուխական ճարտաւ » ըրիքն գերազանցէ, և զարուեստ բաղդատութեանն անօխայ պահէ »: Աւետարանի ընթերցողն կ'իմանայ թէ ինչ առթով Տէրն մեր յօրինակ բերաւ բազմահոգ մարդկան՝ այս ծաղկիւր, և համառօտ խօսքով շատ բան բացատրեց. սրոց մեր գրուածին վերաբերեալ զլուսաւորն է՝ այդ ԵՈՒՂԱՆԻՆ անմշակ անդաման անապատ տեղ ինքնին անհին և ծաղկիլն. « Որպէս անէ ոչ ջանայ և ոչ նիւթէ » . և նոյնպէս ինքնին մնալն և քիչ օրէն թողմից ցամբիլն, և իբրեւ անպիտան խոտ մի ի կրակ ձգուիլն . « Այսօր » է և ի վաղիւ ի հնոց արկանի » . բայց, իր կարծ օրերուն մէջ այնպէս գեղեցիկ փափուկ, պայծառ գունագոյն փայլփայլելով, « զի և ոչ Սողոմոնն յամենայն ի փառսն » իւրում՝ զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ »: Ոսկիբերան՝ Քրիստոսի ԵՈՒՂԱՆՆ մատնանիլ ընելուն նման՝ Քրիստոսի ըսածներուն ամեն մէկն այլ շեշտելով կ'ըսէ . « Սուղոմոնն պարտեցաւ ի գեղեցկութենէ նոցա, և ոչ մի անգամ միայն կամ երկիցս, » այլ յամենայն իսկ ի թագաւորութեան իւրում, զի յամենայն ծաղկանց պարտեցաւ »: Զայս աւելի եւս բացատրելով իրմէ ոչ նուազ շնորհաւոր մեկնիչ՝ նախահայր մեր Մխիթար, կ'ըսէ, թէ այն մեծ ամենահարուստ՝ ամենագիտուն թագաւորն՝ իր բովանդակ փառաց մէջ « ոչ կարաց ունել հանդերձ մի ըստ գունոյ ծաղկանն այս » նորիկ . և թէ պէտ ջանաց՝ սակայն ոչ կարաց նմանեցուցանել. բայց փափաքելովն » ցուցանէր, թէ համայն փառք իւր բաղդատեալք առ պայծառութեան այնորիկ » գունոյ՝ նուաստք և սակաւք էին և կամ պակասք . Եւ թէ ընդէր (ամենայն իւր) մաստութեամբ և փարթամութեամբ իւրով) ոչ կարաց հնարել զգոյն հանդերձին » իւրոյ՝ ըստ նմանութեան այնորիկ, այս է պատճառն. զի բնական գոյնն ո՛ր և իցէ » ծաղկան՝ այնքան գեղեցիկ է քան զգոյնն արհեստական՝ զոր հնարին մարդիկ, » որքան բնութիւնն գեղեցիկ և ազնիւ է քան զարհեստն . քանզի բնութեանն գոյն » լով նախագաղափար արհեստի, և արհեստն հետեւող բնութեան, որքան և լաւաւ » գոյն իցէ հետեւողն՝ ոչ կարէ հաւասարել այնմ՝ որում հետեւի . . Տարանջատ

1. Ծանօթ է մեր բանասիրաց որ Կ. Ենորհալի Մտտթ. աւետարանին մեկնութեան այս սուղոմոնն չհասած՝ վախճանած է. իբնն մերձաւորք՝ Արիստակէս օմե և Եփրեմ շարունակած են մեկնութիւնը, բայց համառօտ և յՈսկիբերանէ քաղելով, յետոյ Յովն. Երեմիայի (որոյ ըսածն է վերոյգրեալ խօսքն), աւելի լաւ և երկոյն բացատրած է: Ղուկաս աւետարանին այլ յիշած է Քրիստոսի այս խօսքը, բայց իր մեկնիչ իզնատիտս վ. ընկերակիցն Ենորհալոյ, իր սովորական և բազմութեամբն զանց ըրի է այս պահանջի ԵՈՒՂԱՆԻՆ վրայ նպակու՝ և ոչ բառով մի յիշէ. ափսոս:

» նմանութեամբ... » և իցէ մարդ կարէ զգննուլ զհանդերձ ըստ գունոյ Շուշանի,
 » սակայն ոչ ունի զնորին յատկական և զիսկական նմանութիւն »: Իւ Ոսկերե-
 բանի տեղ ըսելով, « Որչափ ինչ ի միջի նշմարութեան և ստութեան իցէ, նոյն-
 » պէս ի մէջ հանգերձիցն և ծաղկանցն »: — Երբ այսպիսի օրինակ (ծաղկան),
 այսպիսի օրինակ տուող, այսպիսի մեկնիչք ի մէկ տեղ գան, ներելի համարիմ քիչ
 մ'այլ յերկարել, և հարցընել ընդ Ոսկերեբանի զայս այլ. « Վասն էր արդեօք այն-
 » պէս գեղեցիկ արար զնոսա՝ Արտուած. — Բազում իսկ և այս առաւելութեան
 » իմաստութեան է նշանակ. յորժամ և ի կարի նուագայնան՝ նորա խնամքն ե-
 » բեւեացին... որ այսօր իցէ և վաղիւն չիցէ... յայտ առնէ՝ թէ և ի փոքունսն ամե-
 » ռ նահնար ճարտարապետ է... և զխոտ դիրաթաւամ՝ պայծառ զարգարէ, այն-
 » պէս՝ որոց և ոչ Սողոմոն՝ այնչափ իմաստութեամբն և թագաւորական իշխանու-
 » թեամբն հաւասարել կարաց »:

Յետ բարոյախօսելոյ դառնալով ի քնախօսութիւն, ամենուն առաջին հարցմունքն
 այս կ'ըլլայ, թէ ինչ տեսակ Շուշան էր այդ՝ որոյ վրայ ընկաւ Ստեղծողին մարդ-
 կային աչքն և ցոյց տուաւ տեսողացն և լսողաց: — Ինչպէս ուրիշ այսպիսի խըն-
 գրոց՝ այսօր վրայ այլ գանազան կարծիք եղած են. Յ. բնագիրն Երիցոս կոչէ զայն,
 որով և հին Յ. հեղինակք Շուշանի և Նարգիսի տեսակ ծաղկներ կ'իմանային. L.
 Lilia agrif կ'ըստի Շուշանս վայրի, իբրեւ ճամբու վրայ և անժեակ տեղ բուսնելով
 և աճելով, և այն կոչվորու (Գալիլիոյ) բնական բոյս մ'էր. — չէր սովորական Շու-
 շանն սպիտակ, վասն զի ոչ միայն օտ Սողոմոնի պահուճանաց նախանձելի զգեստ
 մի չէր վայելբ ըլլաւ, այլ և ոչ առանց մշակութեան բուսնի այն կողմերում. ոմանք
 կարծեցին զՎակալ, ոմանք վերոյիշեալ Գեղիս ոսկեծաղկի Շուշանը (Amaryllis).
 ոմանք այլ այսօր ազգակից փափուկ պայծառ մանիչազոյն Ixiolirion montanum
 (Աեռնային Վաչուկ Շուշան) կոչուածը, որ ուրիշ տեսակ շունի, և գտուի ի Պարսե-
 տին և սահմանակից երկիրներում, ի Վիլիկիա, Միջագետք և ի Գ. Հայս. Գարձեալ
 ոմանք այլ Ասորոց Շոչան (Lilia Syriaca) համարեցան, որ պայծառ կարմիր գոյն
 ունի և ի գարնան ծաղկի, հասարակ Շուշանի կիսոյն չափ մեծութեամբ: Սակայն
 աւելի հաւանական համարուած Շոչանն վայրենի է վերոյիշեալ հասարակաց մի-
 ցէն L. Chalcedonium կամ Martagon կոչուածն, որ ճոխ կարմրափայլ ծաղկներ
 ունի: Մեր վարդապետաց՝ Եսայի մարգարէի ըսածին՝ « Ծաղկեսցի իբրեւ զՇու-
 » շան », տուած մեկնութեան վրայ կ'աւելցընէ՝ օրինակող մի. « Զվայրի Շուշանէն
 » ասէ, թէ Կարմիր է և Սպիտակ »: — Այս կարմիր Շուշանս գտուի այն կողմե-
 բում ուր Քրիստոս քարոզէր, և այն եղանակին՝ յորում կարծուի թէ Քրիստոս
 լեռան վրայ այն պանչելի աստուածային վարդապետութիւնն ըրաւ, որպէս զի
 մեր փոքրիկ սրտին մեծ մեծ կարծուած հոգերուն առեն՝ անգամ մ'այլ յիշենք.

« Բարէ, թէ այսօրան պերճ պըճնէ զվայրին ծագիկ՝
 Որ այսօր կայ, վաղիւ լին' ի հուր ընկեցիկ,
 Աստուած՝ որ զայն արար՝ առնէ՝ ն'անտես ըզմարդ՝
 Եր գիւրականն եհար կընիք:
 Ո՛վ բազմահոգ անցորդք կենացս անցականի,
 « Հայեցարուք դամ մ'ի Շուշանդ այդ վայրենի »,
 Հաստիչ նորին եւ ձեր՝ առնէ՝ ձեզ մատնանիչ.
 Իւ արարէք պատասխանի:

2363. — ԵՈՒՂԱՆ (ԹՈՒԹԻՎ) .

Կ'անուանեն Մշեցիք Կարնեցոց Թութիա կոչուած ծաղիկը . զոր տես ի կարգին .
իսկ Կարնեցիք Եուղան կոչեն և զԹաւրինջակ :

2364. ԵՈՒՂԱՐ .

Հին վայելուչ անունն , յիշուած ի ցանկի նոր բառհաւաքի . փափագելի է ստու-
գել որպիսութիւնը :

2365. ԵՈՒՂՄԱ . ԵՈՒՂԱՅ . ԵՈՒՂՄՈՒՂ . — Տես Կնչիք :

2366. ԵՈՒՂՄԱՈՒԿ .

Բժշկարան մի հոմանիշները յիշէ , « Որ է Մշուինն , որ է Տոչոսն , ածուոց բոյս
» է , որ է Մեծ խոչապղին » : — Տես Տուղտ :

2367. ԵՈՒՂՄԻՐ . — Տես Մաչախ ,

2368. ԵՈՒԼՈՒ ?

Հին Բժշկարանն յիշէ Դոսոսի ունդ , զոր ուրիշ շատ տեսակ նիւթոց հետ խառ-
նելով տազ շարսայ զուգել տայ :

2369. ԵՈՒՐՄՐԱՅ .

Յիշուած է իբրեւ վայրի Սամիթ :

2370. ԵԱՐԱՄ .

Տես Կաղնչան . Անգիտաց անպէտն կ'ըսէ . « Կաղնչանին տակն է . աղէկն ի
» Մծրնայ կու գայ » :

2371. ԵՈՒՋՈՒՓԱՅ ?

Անծանօթ , ուրիշ բուսոց հետ յիշուելով ի դեզ՝ ոչ հին Բժշկարանի մի մէջ փորձ
կակըղցնելու :

2372. ԵՐՁԱԼ ?

« Կարմիր մանր պտուղ ունի » , ըստ Բրգնիքցոց :

2373. ԵՐԷՂ . ԵՐԷՂԻ ՍՏԱԿ .

Ինչ ըլլալը բացատրած եմք Թաղաղոս անուամբ . տես Թ . 757 :

2374. — ԵՐԷՂ ԿԱՄ ԵՐԷՂ ՎԱՅՐԻ .

Այս այլ Թաղաղու Երէշի նման կամ աւելի փոքր բոյս է . իբր քլաչափ երկայն և
կէս մատնաչափ լայն տերեւներով , ծաղիկն այլ մազմզուկ է Նուշի մի շափ հաւ-
քած : Կ'ուտուի եղով տափկած . ծանօթ է ի Կարին :

2375. ԵՐՄՂՈՒՂԻ .

Թ . Սարմաղոնդ բառն է : որ է Բաղեղն իբրեւ ծառ յիշուած յԱրցախ :

3376. Երվան ծաղիկ.

Սալաձորեցին յիշէ և զայս երգելով.

« Երվան ծաղիկն է սպիտակ, մարգըն բուսեր հետ Մրվանուն »:

3377. Եփուաւելուկ.

Լայնատերեւ Աւելուկ մի՛ որ շուտուիր, ուռէցքի դեղ կ'ըլլայ:

3378. Եքլար. Եքրար. Եքրարի ծաղիկ եւ տակ.

Տես Արշտակ և Թաղթ:

3379. Եքուն.

Ըստ Գալլիենու բառից՝ է Եքունըիսես, որ Թուի Hexanthus, և Հիմայ կաշափ Litsea, նաեւ Agave. փշտո բոյս մի է, և գլխաւոր տեսակն Ամերիկացի կ'ըսուի, A. Americana. անունն տրուած է ըստ առասպելաց Յունաց, իբրու Թէ նոյն ա. նուամբ կին մի կատղելով՝ պատըռտեր է իր որդին, և փոխար. կուեր է ի փուշտ: Հ. անունն նշանաւոր է, Թերեւս այս այլ աղ. գային առասպելէ մի առաջ եկած, կամ Յունաց Սկիւլլա և կա. բիպտիս ծովային հրէշները նշանակէ:

3380. Եօլ.

Մաշ կամ Ուռն է, ըստ Մշեցւոց:

3381. Եօշ.

Գրուած է իբր Թաղթ, նշանակուած է և ի նոր բառհաւաքէ առանց բացատրութեան:

3382. Եօշան.

Այս անուանս զուգուած է Լ. Myrrhis Cicutaria, որ Հռ. վանաձեւից ցեղէն դիմացկուն խոտեղէն մ'է, նմանութեամբ ինչ Մոթրինի. իրիկի ձեւով պտուղ ունի, և անոյշ հոտ, որոյ հա. մար մէկ տեսակն կոչուի M. Odorata. ի մերայոց Չմաստես կոչող այլ եզած է: Յիշուած է մեր երկրին մէջ յԱրցախ:

3383. Եօշենի.

Յիշած է բայց չէ բացատրած նոր բառհաւաք մի:


3384. Ոգնկան ?

Ըստ Սիմ. կամարկապեցոյ է « Ռաւենտ, Գարծիլին տակն է »:

3385. Ոգոխ.

Ոնկուզի կանաչ կեղեւն այսպէս կոչուի :

3386. Ոլոռնիկ. — Տես կոյուճիկ.



Եօշան.

2387. Ոլոռն. Ոլեռն.

Որ և է ընդեղինաց կլորակ հատերն այսպէս կոչուին, բայց աւելի յատուկ Մաշն (թ. 1982) կամ անոր նմանագոյնք. — Լ. Pisum, Փ. Pois. Առակախօսն գրէ. (ԽԳ) « Ի չափողէ գերծեալ ի ձեռանէ Ոլեռն գնտատեսակ գոլով գնտին, » և նորա զայրացեալ ասէ. Երթ, կերակուր լեր թռչնոց », եւայլն: — Նորկեկ Բժշկարան մի գրէ, « Ոլեռն, որ է Սասըրխօւրան? », քամիի դեղ:

2388. Ողկուզուկ.

Թարգմանութիւն է Յ. անուան տեսակ մի Պտերի, որոյ ծաղկներն խաղողի ողկուղի նման իրարու կիպ շարուած են. Լ. Botrychium, Փ. Botryque.

2389. Ողնի տակ.

Այսինքն Օղին. Տես Թաղաղու, Երէշ : — Հին Բժշկր. գրէ, « զՈղնի տակն » մանր աղա և քացխով շաղէ, և դիր (ի վերայ ակուայի), հանէ »:

2390. Ողորմակոծ.

Բանջարեղէն մի ուտելի յաղջուր դնելով, քան զԵրնջանակ բարակ որձայ ունի:

2391. Ոճ. Ոարճ. Վարճ.

Տես Բաղշտակ կամ Բաշխ. — Բժշկր. մի գրէ, « Ոճ, որ է Լէկիոն, որ է Հ. » Բաղշտակ, որ կու բուսնի ինքն ի փոս և ի ջրարբի տեղրանք »:

2392. Ոսջուրա.

Ըստ Պոնտացւոց՝ Թանթրուենոյ տեսակ մի է. Լ. Sambucus Ebulus.

2393. Ոչխարախտո.

Նոր Թարգմանութիւն է Լ. Arnica (montana), յ'Arna բառէ որ նշանակէ ոչխար կամ մաքի, ինչպէս և նոյնաձայն Հ. Սեմ վայրի ոչխար. սակայն գիտնականք սխալ գտնեն այս կոչուածս, ոչ Arnica, ըլլալու էր այլ Ptarmica, Յ. (Πταρμικό:) բառէ, որ (Փանչակ, փանքացնող) նշանակէ: Արօտներու մէջ բուսած մութ կանաչ խտտեղէն մ'է, քիչ մի խայթող մազերով:

2394. Ոչխարի բակլայ.

Ար. ըստ Ամիրա. « Ոչխոճ ըլ-քալոյ ? (զոր չեմ գտած ի Պէյթար), Թ. Ղոյին » փախտափ ասէ, այնոր համար ասոր Ոչխարի բակլայ կ'ասէ, որ ոչխարն զինքն » շատ կ'ուտէ. և Թէ ծեծեն և քամեն և զլուրն խմեն՝ օգտէ լերգացափ, և » օտֆրային շատ օգտութիւն առնէ »:

2395. Ոչխարի լեզու.



Ըստ բառին նոյն է որ ինչ Գառնալեզու, և որ գրոց լեզուաւ ուրիշ անուններ ունի, և անոնցմով բացատրած եմք. սակայն Ոչխարի լեզու կոչուածն հիմայ ի Հայս, ինչպէս ի Կարին, տարբեր տեսքով քոյս մի է փաղբիկ, Նըլի չափ մանր վայելուչ տերեւներով, որոց վերի երեսն յիրաւի լեզուի մաշկի պէս փոթոթիկ է:

2396. Ոպան կամ Ուպան. Ուպանի տակ.

Տես Անհիտան (Թ. 118). ուր յիշեցինք զանազան անուններ քանի մի հիւ-
 Թաւոր բուսոց, զոր հինք և նորք շիոթեն կամ դեռ չեն որոշ զանազա-
 նած. այն տասնիւ չափ Հ. Յ. և Ար. անուն-
 ներն վերածուին երեք ուսումնական Լ. բառից. Galbanum կամ Galbanon, Silphium և Laser-
 pitium, զորս Եւրոպացիք այլ երբեմն շիոթեն և երբեմն զատեն, վերջի երկուքն աւելի մօտ
 գրելով կամ նոյն. մենք այլ այսպէս համարինք. յիշելով որ միջին անունը Հ. այլ Սիլփիոս գրուած
 կայ, Ամենէն նշանաւորն ըստ հնոց՝ էր վերջինն, իր զարմանալի համեղ խէժին կամ հիւթոյն
 համար, որոյ լաւն ի Հայոց կու գար, կ'ըսէ Պլինիոս (ծՔ. ծԵ), և ոսկւոյ գին կ'արժէր
 կշիռքն. այլ աւելի կըրնամք ըսել, որովհետեւ
 աստուածոց անգամ արժանավայել համարուէր:
 Յերաւի զարմանան որք Մաղթ կամ Բարզաա
 կամ Չարհաա կոչուածը՝ նոյն համարին այսօր
 հետ (Laserpitium), թէ ի՞նչպէս այդ զարչելի
 հիւթը՝ Հռօմայեցւոց քմաց անոյշ կու գար և
 աստուածոց նսւերելի, որոյ և անունն Գարչա-
 հաա նշանակէ, Asa foetida. Շատ գիտնականք
 հիմայ այս խէժը համարին Սիլփիուի և ոչ Ուպա-
 նի այսօր խէժն համեմային և լեզի է. տունկն խոտեղէն, ի ցեղէ Նարդէսից, նըս-
 նաձեւ պտղով, զոր կաստա-
 նայի նմանցընէր մեր Ամասի-
 ացին (տես Մաղթ), և գտուի
 յԱրեւմտ. Ասիա, Հիւս. Ա-
 մերիկա և Եւրոպա: Սիլփիուն
 որ յատուկ Պարսկային կո-
 շուէր S. Persicum՝ ի Պարս-
 կաստան, Աֆղանիստան և
 անոնց մօտ երկիրներում:



Ուխարի լեզոս (Թ. 2396).



Ոպան.

2397. Ոպնիազ.

Հաւ եւս նմանութեամբ Թ. և Լ. բառին՝ Երեմոս, Ebenus, Փ. Ebone. Թէ և
 ամեն կլիմայից տակ առաջ չի գար, բայց գրեթէ հասարակաց ծանօթ է իր
 փայտին համար, ուսկի պէս պէս արկղի, տըփի տեսակ բաներ, չըլանակներ,
 խաշեր, եւայն, շինուին, որք ժամանակաւ աւելի փայլուն սեւութիւն մի կ'առ-
 նուն, և կարծութեամբ գրեթէ անփուտ մնան: Չափաւոր մեծութեամբ ծա-
 ոեր և թուփեր են Ոպնիազը, որոց մէկ երկու տեսակն Փ. և Մ. Հայոց միջոց
 յԵփրատայ հովտին նշանակուած են: — Յովհ. կաթողիկոս Պատմիչ յիշէ մեր
 ազգապետին ձեռքի ոսկիանկար ոպնիազեայ գաւազանը:

2398. Ոջի ծառ.

Յիշուի ընդ վայրենի ծառս Արցախոյ, (Մեղու, ԻՐ, 83):

2399. Ոսի.

Փշեղէն թուփ մի Սիւնեաց լեռանց վրայ յիշուած, զոր արտարէից պարարտութեան ի գործ ածեն, չորն աթարի տեղ. արմատէն այլ ճախարակի և լիսաւն պէտրաներ չիենն: Թուի թէ ի գիրս յիշուած Հոսին է, տես թ. 1728:

2400. Ոսկէխոտ. Ոսկոյ խոտ.

Որ և Արեան խոտ, ինչպէս յիշուած է ի կարգին, հանդերձ Ար. և Լ. ա. նուամբ. որոյ համար Բժշկարանք, Աղթարք և Քիմիա կ'ըսեն՝ Արեգական մայր ըռուածին նման, « Ոսկիխոտին նշանն այս է. չորս տերեւ ունի, և լինի » սփռեալ ի վերայ գետնոյն, և տերեւի երկայնութիւնն երկու թիղ է, և ի մէջն զէտ » շտան, (թ. 1919) և ի վերայ տերեւին ծայրերն մամտար փշեր ունի. և կենայ ի » մէջն կոկ վարոց մի գերթ զտանկիկնակ, և նորա ծայրերն կայ հինգ ծաղիկ. և ծաղ. » կի գոյնն (մէկն) դեղին կարմիր, մէկն ժեռ. և թէ կարես զայդ խոտոգ՝ նա ե. » լանէ կարմիր արիւն. և ուր հասանի այն արիւնն՝ կեղեւի կային. երբ կարես » պատրաստ կայ որ արիւնն քեզ շհասանի. առ զիւր տերեւն, չորցուր և մանր » սզկէ և ձգէ ի վերայ արճընին, լինի ոսկի. և առ սնդիկ և դիր ի կէտն և » դիր ի վերայ կրակին, և լից զխալիզոնի ջուրն ի վերայ, և լինի Չինճիֆիր » կարմիր՝ որ գիմանայ ի կրակն. ապա առ այդ Չինճիֆիրէդ և ձգէ ի վերայ » արծաթոյ. նա լինի ոսկի ազնիւ. և դիր ի պղինձն ի վերայ արճիճին, և զառ. » նայ ոսկի. և առ զիւր ծաղիկն՝ ձգէ ի կաթն, և նա լինի արդար եղ. Եւ յար. » ժամ որ կամենաս որ առնուս զայդ խոտոգ, դու գիր տուփ մի ար մոմած լինի՝ » ար կարես առնուլ. և այդ է Ոսկէխոտն: Եւ բուսանի յերկրին Գեղամայ՝ որ » է Քիւղաբունի, ի գիւղն որ կոչի Չիւ և կարմունջ. Սեւանու ծովու անդիի » կողմն է, այսպէս իմացիր ու: — Ուրիշ մի տարբերութեամբ գրէ. « Խոտն » Շենսին, որ է Արեգականն, սորա՝ Տանկին Գանդոս օր ասէ, և շ. Արեան » խոտ, և Ոսկիխոտ եւս ասի. սորա ծաղիկն դեղին է և պտուղն կարմիր, զի » նմանի կարմիր Քիրազ, այս է կեռաս. և մեծութիւնն այլ կեռասոցի չափովն » է, և վատ հոտ ունի, երբ զհոտն առնու մարդ սիրտն կու խառնակի. զի տերեւն » բոլոր է և մեծ, և շատ կաթ ունի, յորժամ կտրեն շատ կաթ ելանէ, կարմիր » է որպէս արիւն: Եւ այս ի Մարաց երկիրն կու բուսնի, ճաշու մի ճանապարհ » ի Մըսրայ հեռի. և Արապն՝ սորա ըխալիս պէշարի ասէ. և կու բուսանի սա » ի Մասիսի տակն, մերձ ի գիւղն Ասկուաի, և ի Անդուայ լեռինքն, որ յա. » բեւմտից կողմն սահմանակից է Բալուայ և Ճապղղըրոյ, նաեւ կու լինի ի Քէ. » շիշ տաղն՝ որ մերձ է Պուսասոյ, և ի կուսայու լեռան: Եւ բարձր լինի կան. » գուն մի չափ. և ի քարուս և ի սեւահող տեղիս լինի. և այլ ուրիշ խոտ ի » բոլորն չի լինիր, զի այլոց ուժն ինքն առնու ու:..

Ըստ թ. անուանն նա եւ մասամբ նկարագրութեանն՝ այս զարմանայի բոյսս երեւի Լ. Sanguinaria, ♂. Sanguinaire կոչուածն, որ Խաչապոյց ընդհանուր

ցեղէն է. ըստ բուսաբանից, դիմացկուն խոտեղէն, մէկ երկու տերեւ միայն կ'ունենայ՝ դետնամած, գրեթէ որձայ չունի, այլ 8-12 թերթով կոթուար ծաղկեեր. արմատէն կ'ելնէ. արիւնազոյն կարմիր հիւթ մի, որ լուծողական զեղի զօրութիւն ունի և ի գործածութեան է յԱմերիկա, ուր աւելի գտուի, յԵւրոպա այլ մշակուի ի բուսաբանական պարտէզս : Հասարակ կամ գլխաւոր տեսակն՝ կանաչայ երկրին անուամբ կոչուի *S. Canadensis*.

2401. Ոսկի-ծաղիկ.

Սալաձորցին յիշած է զայս.

« Ոսկի-ծաղիկն պայծառացեր գեղեցկացեր լային լային,
Քերերն ամեն ջղա զարկեր, նա ծաղկանց Ենգիշարուն ».

ուրիշ օրինակ տարբեր գրէ.

» Ոսկի-ծաղիկն սուրաթ աւեր գեղեցկացեր լաւուն լաւուն,
Բոլոր գլխուն ճղայ շարեր. սա է ծաղկանց Ենկիշարուն »:

Ենիշէրիներու գլխարկէն առած կ'երեւի ծաղկին նմանութիւնն : Ըստ անուանն և ըստ գունոյն (գեղին) յարմարի Յ. Χρυσάνθεμον, և Լ. Chrysanthemum ա. նաւան՝ որ նշանակէ ոսկի ծաղիկ, բայց սա տարբեր ծաղիկ թուի : — Տես Կիւլվարգ :

2402. Ոսկիտակ. Ոսկիտակո՛ւի.

Ի նորոց յարմարցուցած երեւի *Ipeacuanha* կամ *Uragoga* ամերիկեան թիւոյ, զոր բուսաբանք կոչեն *Jochroma* Յ. բառիւ, որ նշանակէ մանիշակագոյն :

2403. Ոսպն.

Նահապետաց հին դարերէն վկայուած է այս ընդեղինիս ծանօթութիւնն և մշակաց կրտսցուցիչ կերակուր ըլլալն, զոր յետոյ շափաւորապէս կամ խնայութեամբ առնուին ճգնաւորք, Եսաւայ վաճառած և Յակովբայ վաստրկած անդրանկութենէն աւելի գերագոյն բան ժառանգելու համար. անոնց հետեւող մեր ազգային վարդապետաց մէկն այլ (Յովհ. Արճիշեցի յԺԳ դարու) Ոսպնակեր անուամբ ճանաչուի : Առակախօսն (Մխ. Գոշ) չի մոռնար Ոսպն հատիկն այլ խօսեցընել, և յիշել մէկ յատկութիւնը, միատեսակ (մէկ գոյն) ըլլալը, որոյ համար կու դատէր և կեղծաւոր կոչէր զԼովիաս, իբր թէ մարմինը ճերմակ է բերանն սեւ. նա թէպէտ ուզեց 'արդարանալ' ըսելով թէ ինքն ուրախներու համար սպիտակ է, սգաւորաց համար սեւ, բայց մի և նոյն ներգործութիւնն ունենալուն համար՝ ըսածն ընդունելի չեղաւ : — Ամիրտ. ստորագրէ Ար. անուամբ, « Ատաս, յսպէս ինքն երկու ցեղ է, Քաղցր և Լեղի. և լաւն այն է որ շուտ » եփի. և մուկթատիլ է, չոր է և բացող է. և իր ջուրն օգտէ խնխիին խոցե. » բուն և ակընջին խոցերուն և ցաւուն, եւ այլն, եւ այլն. Սպէ Իպն. թէ Ոսպնն » լաւն այն է որ շուտ եփի. և թէ եփես և թէ թրջես՝ ջուրն չի սեւնայ, և թէ » հանապազ ուտեն՝ ի յաշքն փարտա առնէ և յուշ կու մարսէ », եւ այլն.

խիտ շատ օգուտները կերպ կերպ յիշէ: — Վաստակոց գիրքն այլ Ոսպի մշակութեան համառօտ գլուխ մի բան (ԻՄ) ընծայած է. « Առ պախրէէց ազր շոր » և լեռած, խառնէ ի Ռսպն, և այնով ցանէ. նա ասող էլանէ բոյսն և լաւ... » Եւ Ոսպան ցանեղն՝ յայն ասողին անկմանն պատեհ է՝ զոր Ար. կոչեն Սիմեոն » ասմիհ, և լինի այս յունկարի ամուսնն, մինչև որ եօթն օր Ճաղեալ լինի գար... » նան, որ լինի ի 21 մարտի »: Յիշեալ ասողն նշանակէ տիգուար, և ըստ Գէորգայ Պալատացոյ՝ է Հայկն: — Լ. Lens. Փ. Lentille. Ռ. Чечвица. Յ. Όσπριον կոչուի որ և է ընդեղէն: — Հին Բժշկ. քանի մի օգուտներէն վերջ՝ Ոսպան վնասն այլ յիշէ. « Ստամբի և Ղերոյ՝ գեն է, և զլոյսն պակտէ. լաւ » է չուտել զինք. և ով ուտէ՝ դալար գէր մտով (Քող ուտէ) և ձգէ ի ներք Վայ... » րի Դաղձն, դալար Աննուխ, Պղպեղ, Չաման, Հոռոմ կամ Նջի ձէթ. և » լաւն Սպիտակն ու տափակն է, որ եփ թրջեա՝ լուրն չսեւնայ »:

2404. Ովսաննա.

Անունը միայն գրած էր նոր բառհաւաք մի:

2405. Ոտուռն ?

Նշանու Սալոր մի, կեղեւն կարմիր, միտն գեղին. ըստ Շէհրիմանի:

2406. Որդան ծառ.

Աւելի եւս ռամկօրէն Որդնի ծառ կոչուի Թթենին, իր շերամի որդանց համար:

2407. Որդան փայտ. — Տես Մժիխի.

2408. Որդնատակ. Որդնտակ. — Տես Զրեւանդ:

2409. Որդնխոտ.

Արժուահանկն է. տես Թ. 213:

2410. Որենի.

Ըստ բառից Գալիեհու Թուի Բուր Զրեւանդն: Տես Զրեւանդ:

2411. Որթ.

Թերեւս ամեն ակընջի ծանօթ չըլլայ այս անունս, բայց իր էութիւնն, պտուղն և մանուսանդ պտղին հիւթն՝ ամենուն ծանօթ են (Խաղողն և Գինին), և բուսեղինաց մէջ կերպ մի գերազանցութիւնն, ոչ լոկ երեւակայական այլ և իրական, որոյ վկայ են Որթոյ բերոց համալսարհական գործածութիւնն, և այգեգարմանութեան ամենամեծ խնամքն և արուեստն. որ սկսեալ անմիջապէս երկրիս ջրերէն ազատուելէն և յառաջին մշակող Նոյ նահապետէ՝ մինչև ցայսօր, ոչ միայն անդադար տեսէ, այլ գրեթէ և անընդհատ զարգանայ նորանոր խնամք և հնարքներով, և արուեստին հին գիտելեաց վրայ՝ նորք աւելնան: Այսօր այլ կըրնայ վկայ ըլլալ մեր շատ անգամ յիշած Վաստակոց գիրքն, որոյ երրորդ մասէն տեսելին այգեգարմանութեան վրայօք է. ուսկի և յայտ է՝ թէ շատ երկար և պէս.

պէս մասամբ գրել հարկ էր այս եզակի բուսոյ յատկութեանց և բերոց վրայ՝ լաւ ճանչնալու համար, որ և յատուկ գիտութիւն մի կըրնայ բուսիւ, և թէպէտ որ և է մշակ գիտէ այգին դարմանել, բայց կատարեալ գիտութեան համար յատուկ դարմանելու տեղիք և վարժարանք կան. որոց վրայ տեղեկանալ ուզողն այլ յատուկ գրուածք և վարպետ պէտք է խնդրէ և ոչ մեր անուանական բուսաբանութիւնը: — Ըստ այսմ տեսութեան՝ նշանելի է Հ, անունն (Որբ), կարճ, միավանկ, անլուծանելի, աննման ծառոց սովորական անուանակերպութեան, նոյնպէս և իր մասանց յատուկ կոչմունքն, ուս և ոչ ուս կամ միջ (ըստ գրոց), մատն, ծիլ, բարունակ (!), աղուրայ, եւայլն. նոյն և պտուղն՝ բոլորովին տարբեր անուամբ, թէ և այս՝ նմանութեամբ մի իր տեսքին (Խաղող): Այս նըկատմամբ այլ շատ յատուկ և աննման կամ անկարծական կերպարանք Այս ունի Որթն, քանի որ զարդարուած չէ իր ամեն մասամբք, ի ձմերան, և մանաւանդ յետ յօտելոյ ուռոցն, քան զամեն ծառ անկատար վտիտ, մերկ, կողպտած, տգեղ, չոր, պառուած փայտ մի երեւնայ, կարծես թէ միայն ի փուռ ու ի կրակ ձգելու է. իսկ երբ զարնանային ազդեցութիւնն առնու, նախ իբր իր սուգէն և անարգութենէն ելնելու արտասունքները թափելով՝ զթած աչքեր իր վրայ դարձընէ, յետոյ նոյնպէս պարկեշտօրէն՝ ոչ փայլ, ոչ գոյն և ոչ հոտ կ'արձըկէ վայելուչ ծաղկանց պէս, գրեթէ և ոչ ծաղիկ, այլ հազիւ ծաղիկ և հոտոյ նշան մի, որոց յաջորդեն անփաձեւ փափուկ նա եւ ուտուելի տերեւքն, և համեղ և վայելալար պտղոց ողկոյգքն, իրենց թափանցիկ մաշկէն ցոլացընելով ծածկուած այնպիսի օշարակ մի, զոր շատ հանճարեղ հին պաշտօնեայն արեւելից ինքնակալին՝ ախարհիս բարոյական ամենէն զօրաւոր դրօշներէն և յաղթողներէն մէկը հռչակեց, (Չօրաբաբէլ զԳիւնի): Իսկ հեթանոսք պէտքէս կերպով հռչակած և նուիրական ըրած են Որթը. ամենուն յայտնի է՝ Յունաց նուիրելն զնա իրենց ոչ համեստ Բաքոս դից, որոյ և զլիաւոր նշանակն է ողկուզազարդ տերեւալից Որթոյ ուուն՝ զլիսին պատած: — Ի՞նչ անհուն տարբերութիւն և գերահրաշ փոխարկութիւն Որթոյ և Կիւնոյ՝ քրիստոնէական պաշտաման մէջ... Չի համարձակիր գրիչ՝ այսպիսի գրուածոյ մէջ աւելի առաջ երթալ, այն անհղաղքանչ խորհրդեան յիշատակաւ, որ ուրախարար գինւոյ տեսակաւ՝ Արիւն մի ներկայացընէ. և որպիսի պրիւն... Ո՛ր միան կամ կորնչին ամենայն Սպանդարապետական տօնք՝ իրենց զարդարուն ուռերով և ողկոյզներով, երբ գերագոյն Մէկն կ'ըսէ, « Ես եմ Որբն ճշմարիտ », (Յովհ. 35 1):... Այսպիսի խոր և լայն գաղափարի առջեւ՝ անկարելի է մեզ երկարաբանել նա և նիւթական բուսոյն վրայ (2) որ Որբափայտ այլ կոչուի, Որբնաստկ այլ. և բաց ի զլիաւոր մասանցն նա եւ

1. « Բարունակ առն զայն՝ որ բաւերոյ յիւրեան զբազմաշառուիչ Որթն, եթէ յարմատացեալ » ծառս և եթէ հասեալ բազուկս փայտից՝ յօրինեալս ի ձեւ առխաից, անլուծեալս միջոցը, » զի զուսն և զտերեւսն ի վեր ունիցի, և զողկոյզն զեղեցիկ բազմոցոց ցուցանէ ի վայր ի ներս, » զուստ տեսողացն, հաճոյ աչաց նայելոյ և առ ձեռն ցածկացոցազ »: — Չայս Վարդան Վ. յԱնթուարառ. իսկ մեր եկեղեցոյ սրբերգակ ազալխարոզն՝ կ'անուանէ դիւքն՝ « Անբարունակ Որթն », որպէս և « Պազաղուրայս Չիթեհի »: (Շարական):

2. Բայց այն Գերագունին մեծ տարփածու և խորհրդածու մտքուր և մշտապա սիրա մի՛ գիտէ զուզել այնոր՝ նիւթական Որթոյն այլ եւ այլ մասերն և յատկութիւնները, բնաբանօրէն և բնազանցօրէն, ազօթելով. « Սաղարի եւր քր Միածնիդ. Դա Որթ է, և մեք Որբ... նպեայ առ

օգուտներէն ի դեղս, մեր բժշկապետն Հերացի յիշէ և Այգառոյ մատին տերեւի լուրը (եր. 69. 77): — Տես և Խաղող.

В. Δμυλος L. Vinea. Ф. Vigne, Ար. Գըրմ կամ Քուրմ, ըստ Ամիրտ. ۲۷ :

Թողով Արկուուուոյ Նոյատունկ այգւոյ նահապետական աւանդու թիւնն՝ (1) որոյ գինին ձէթի պէս վառուի եղեր, յիշեմք միայն հիմակուան Երեւանեան այգեաց և գինւոյ համբաւն, և ի նախնեաց յիշեալ Տայոց նահանգին մէջ Վաղարշակայ տնկել տուած այգիները, և Տարօնոյ ու Բաղիշոյ միջոց Մորթի և Սալնոյ ազնիւ գինիները հաշակուած Զ կամ Է դարոււմ:

3413. Որիզ. Ըռիզ.

Թերեւս աւելի յատկազոյն լեզուիս անունն է Բրինձ, և մեզմէ առած ըլլան Թ. Բրինձ կոչելը. իսկ առջի անունն հասարակ է եւրոպական լեզուաց, արեւելեաց այլ՝ մասամբ, Յ. Όρυζα, L.

Oriza. Լիւրիկ. Oriz. Ф. Riz, իտ. Biso. Ռ. РИЗЬ. Ար. Օրուզ ۱۱, կամ ինչպէս գրէ Ամիրտ. « Արուզ, որ է Բրինձն, որ է Ըռուզն, » և Թուրքմանն Թուրքուրդան ասէ. և ինքն երկու ազգ է, սպիտակ և կարմիր. և լաւն այն է որ սպիտակ լինայ. տաք և չոր է Ա տարածաւ. և կերակրող է և կշտացընող, և ով կաթով Բրինձ ուտէ՝ անուշ քուն բերէ, և աղէկ երաղնի տեսնէ. և թէ ի յերեսն քան և կամ ի յանձն՝ պայծառացընէ և զմանն ի յերեսն քան տանի և յիտարկէ. և ինքն քիչ մի կապող է. և թէ եղով եփի՝ ստամոքին շատ շահ այնէ... և կարմիր Բրինձն կապող է. և Բրինձ ուտելն զանձն գիրացընէ և կու լայնացընէ, և գերեսն թաժայ կ'այնէ... Իպն. ասէ. թէ Պ. Բրինձ ասեն, և ի այսոր բնութեան վերայ շատ հակառակ խօսք են տսեր. և լաւն այն է որ Քրմանի լինի, և անկից յետեւ Խարզամի (Խարզմի), և այլ յետեւ Կիլանի. և այն որ Քրմանի Բրինձն է՝ յորժամ լուանաս և Նշի ձիթով և դմակ եղով և շիրիկ ձիթով եփես, շատ օգտէ ստամոքին... և մարդ որ հանապազ Բրինձ ուտէ՝ յերկար ժամանակ լինայ »: — Այս բանս կըրնայ ստուգուիլ ի Հնդկաց և Չինաց՝ որոց հասարակ կերակուրն է. նա եւ ուրիշ արեւելեաց՝ որոց փիլիսոսան հանրածանօթ է. և յիրաւի, յետ Յորենի առաջին սննդարար ընդեղէնն է Բրինձն, և ըստ այսմ խնամով մշակուած, այլ և զգուշութեամբ. վասն զի լրոտ տեղ ցաւ, նուրի և աճի, և երբ լուրն անշարժ մնայ և քաշուի՝ օղոյ սպակաւ նութիւն և առողջութեան վնաս հասցընէ՝ այս բանիս ծանօթ պէտք է ըլլան մեր երկրացիք այլ, ուր տեղ տեղ Բրինձոյ մշակութիւն



Որիզ.

» մեզ և մշակէ գթութեամբ. սրբես զուս Որթուշ Համարտի՝ ի խնկէ և յաղաղ վիշապին...
» Ծագիցոյ ի մեզ հազն, և նոտաեա ի նոյն. և Արեւոյ ի մեզ գթութեամբիւն երկուգին, և Արեւոյ զնոյն. և Խոյնեոյ ի մեզ զտաղբութեան սիրոյն, և հաշակեա զնոյն. և հաշ զմեզ ի Հնչանք երկուցին, և զմայլեցո վերնովք. և ամբարեա ի շրտարան քո »: — Ն. Լամբրոսեցի:

1. Որչափ այլ Նոյի ստազանին տեղն և իր բնակութիւնն ընդունելի կամ տեղեկանելի ըլլա՞ս՝ ի

կ'ընեն, բայց շատ հին ատենէ սկսեալ շերեւոր, թէ և Ազաթանդելուօ գրոց մէջ յիշուած է Որիզ, ուրիշ պիտանի սերմանեաց հետ. մեր Աւակաթուն չի յիշեր, կարծեմ և ոչ Վաստակոց գիրքն, թերեւս գրողին կամ թարգմանողին եղած տեղը Բրնձոյ մշակութիւն շրջալուծ համար: Իսկ հին Բժշկարանն կ'ըսէ, « տաք » է, ի ք առիճայն և շոր յերկուքն. և իր տաքութեան վկայ՝ իր քիչ քաղցրութիւնն. զանձն աղէկ կերակրէ: Թէ ցաւն տաք է և զինք տաս, զեն է, զի « յուշ երթայ ի ստամբաց. թէ կաթով եփած տաս և Նոյի ձիթով՝ լոյծ է.. զիր » շարն հանէ՝ թէ զիշեր մի կաթով թրջես և ապա եփես, և իրենդ ջուրն զտաս. » մաքն պնդէ, զփորն կապէ, և սրբական է »:

2413. Որձախտո. Որձ-խտո.

Այս անունս լսուի հիմայ այլ ի Հայս. բայց արգեաք այն է զոր մէկն զուգած է Լ. Typha, Փ. Massotto, ճափնային խոտեղինի, և զոր նոյն անուամբ յիշէ Պէյթ. طيب, Ամիրտ. գրէ միայն « Տիֆա, որ է Վայրի Քանճի » և զսա ուրիշ տեղ նոյն համարի ընդ Եսնիզ: Քանի մի տեսակք կան այս Տիֆա կոչուածին, որք երկայն տերեւներով և երկայն կոթերով կու ճապղին ճահճաց մէջ, խոզովականեւ խուրձ մի ժողկանց բերելով. զյիսուոր տեսակն T. Latifolia, գտուի ի Հս. և Հր. կովկաս, Կիլիկիա, եւ այլն: — T. Angustata, ի Մարաշ. — T. Stenophylla. ի Հր. կովկաս, Կիլիկիա, Վրաստան. — T. Hausknechtii. ի Բեւհեանի, Ատիեաման, եւ այլն.

2414. Որձ-կոճ.

Այսպէս կոչէ կամարկապցին զԿոնստանդուպոլ:

Որոճ. — Տես Օրոճ:

2415. Որոմ'ն.

Մանօթ քնասակար և իբր հակառակ կամ թշնամի Յորենի, որոյ հետ կ'աճի յարտորայս, զոր Տէրն մեր նմանցընելով շար հագուց՝ հրամեց, թէ թոյլ կու արուի որ բարիներուն հետ աճի առ ժամանակ մի, բայց հնձոց ատեն երբ Յորենը քաղեն, զՈրոմն խուրձ խուրձ կապելով ի կրակ ձգեն (Մտթ. թգ. 30): Այս օրինակէն կամ նմանութենէն ծագած են այլեւայլ բարոյական բառք. Որոմեարի, Որոմ. նացան, Որոմնատեսակ. — Լ. Zizania, Փ. Ivraie, Ար. Եշյիւմ, زيزان, որով բացատրէ Ամիրտ. « Եիւամ, որ է Եիւրամ, ինքն Չուվանն է որ Թ. Տարուձա առէ. » Հ... (բառը մոռցեր է Ամասիացին և գատարկ թողեր է տեղը) ասեն.. լատիֆ և « հալող է. և թէ ամէզ առնեն.. զհերքունն և զզրտակն տանի, և զփուշն հանէ, և » հարեցընէ. և կու թմբեցընէ և զիւր շարութիւնն տանի շար Քինձն... և թէ Մրտին » կեղեւօնն և Չաֆրան և Խունիկ ծեծեն և մաղեն և զննն ի վերայ զօգուածին՝ որ » սլաք և կամ փուշ է մտել հանէ »: — Փայլեմնոսի բառից օրինակի մի մէջ գրուի և

Հայաստան կամ ուրիշ կողմ, կան զեռ մեր օրերուս այլ զրոզ գիտեականք, որ զՀայաստան եւ մարին ընտելայր Ուրոց, և Հայոց Քինձն անուանէն ծագած սեմական անունն այլ եւրոպականքն այլ. Յ. O'voe. Լ. Vinum. յորձ ֓. Իս. եւ այլն. Գերմ. Wein. Կեթր. Guin. Ամսօրիկ, Gwin. Վերք և կովկասայեկք կոչի:

2416 - Խողճկնոտ Որոմն.

Որոյ զուգանիչ գրած է Յ. Խոնքոս, որ է անշուշտ *Idydae*. և նշանակէ պիսա- կոտ կամ բրդոտ, և կամ ըստ Խազճաղուն բառին՝ կծկրտած, կաճըկոտած, որով կրնայ իմացուիլ Որոման ձեն կամ կազմուածն:

2417. Ուկոււմիլ. Ուրկոււմիլ.

Այսպէս կոչուի Կիլիկիոյ կողմերում տեսակ մի Սալոր կամ սալորանման պտուղ, անուշահոտ, կուտն այլ Միրանի կուտին նման: Բժշկարան մի գրէ. « *Չաքարիայի* » որդին կ'ասէ, թէ Պ. Պազյանդ կ'ասեն, և ինքն Ակակիայն է, Հ. Ուզկումիզ » կ'ասէ, և Ք. Տօնկոզ էրիկի, կ'եփեն և պաստիլ կու շինեն, Ակակիա կու լինի »: Այս կ'երեւի և Ամիրտ. յիշած Ղարատը. « ինքն վայրի Սալորն է, և ծառն փուշ » է, աղէկն յանջրդի տեղ լինի, և հասունն բնութիւնն տաք է և չոր է. . . Ատ » Պաղտատցի ծերն, թէ յիրմէն քամուքս առնեն և ախախիայ շինեն, որ զփորն » կապէ, և օգտէ աղեաց, և զարիւնն կտրէ և զանձն զիրացընէ »: Գարձեալ գրէ նայն անուամբ. « Մառ մի է որ իր պտղէն աղաղիա կու շինեն, և լաւն այն է որ » թանձր լինի. . . զակոան կու ամրացընէ, և թէ զմազն այնով վանան՝ ամրացընէ և » չի թողուր որ թափի, ստամոզն և զաղիքն ուժովցընէ, և զլուծուածն կու ար- » զիլէ. . . և կրծաց զեն առնէ, և զիր շարութիւնն տանի Գղումն և իր կուտն որ » կտուած լինի. . . Ատ Պա. թէ փշով միրգ է, և այն(որ) Չապտ (Սանդ) կու » ասեն. . . և իր միրգին Պ. Կարայ կ'ասեն, և ինքն ի Խառնուպ կու նմանի, » բայց սպիտակ և վատուժ կու լինի »: Պէյթ. Գարատ ۵۳ կոչէ զայս. և է ըստ զիանոց՝ *Mimosa nilotica*. որով տարբերի Ղարատն յՈւրկոււմիլէ: Այս եա- քինիս համար վկայեցին Օսմանեան բժշկարանի վարպետք՝ թէ Ք. Մոզգ էրիկի այլ կոչուի. և Փ. Perdrigon.

2418. Ուղունկ ?

Հին Բժշկարանն խուռս շինելու խոտեղէն այլ եւ այլ գեղոց հետ գրէ. « Բեւ- » կոյ խէժ, Մուկլ ազրախ, Ալն՝ որ է Ուղունկն, Հոռոմ-Մնֆուլ, Սալիխա », եւ այլն, երկու հոմանիչքն այլ (ստորազծեալք) անծանօթ են:

Ուշնա. — Տե՛ս Օշնայ:

Ուշու տերեւ.

Սխալ գրուած երեւի (յԱսար), փոխանակ Մոշու:

Ուղտափուշ. — Տե՛ս Ըղտափոշ:


2419. * Ումսուռի. — Տե՛ս Ծան-ագի:

* Ունսուլ. — Տե՛ս Մկնախ:

2420. Ունտուգ.

Պոնտոսի կողմերում լսուի այս անուամբ աղգ մի Եզնակն, *Buphtalmum Speciosum*, կամ *Telekia speciosa*, յանուն *Teleki Vonaszek* բուռասէր Ունգարացոյ. կոչու ու բրդոտ տունկ մ'է մեծամեծ սրտաձեւ և եզերքն սղոցաձեւ տերեւնեք,

բով. կու դարմանուի պարտիզաց մէջ՝ իր մեծ արեգակնաձեւ և նառագայթաւոր ծաղկին վայելչութեան համար, որոյ նշմար մի կըրնայ ըլլալ պատկերս, բնական մեծութեամբ ծաղկին՝ որ ցամքած խաւրուած էր մեզ ի Սուսմէլայ գիւղէ Տրս. պիզնի. տերեւին երկայնքն էր 0,23 Չ, լայնագոյն մասն, 0,17 Չ: Բուսարանը այլ յիշեն զայս ի Պոնտոս, ի Լազիկիա, ի Հս. և Հր. Կովկաս:



Ունտոզ. — (Թ. 2420):

* Ուպան. Ոպան. — Տես Մադր:

2421. * Ուպիուլ:

Տես Թաթուի և Յիրդ: (Չայնի նման՝ բայց խնձոր նշանակէ իւշանաւ. Սեհալ կամ Abhal, Aphal. որ և Գերմ. Eifel, Անգղ. Apple, եւ այլն:

2422. Ուռնի. Ուռի. Ուռեկ:

Երկայն և կակուղ գեանակախ ճիւղերովն, և իբրեւ մազարձակ զլիակոր և սգաւոր՝ գերեզմանաց ջով տնկըւած. ամենուն յայտնի հովանաւոր և գեղեցիկ ծառ մի, թէ և անպտուղ. անմոռանալի (212) Սաղմոսին սրտառուչ սրտաբան պանդրիտի երգովն. « Ա գետս Բարեւազուց անգ՝ նստէարք և լայաք, որպէս

» յիշեցաք մեք անդ զՍիոնն (զհայրենիս մեր) . Ի մէջ Ռաւեաց նոցա կախեցաք
 » զկտակարանս մեր . Անդ հարցանէին զերիչք մեր զբանս օրհնութեան . . Սիոնի .
 » — Իսկ զիարդ օրհնեացուք զօրհնութիւնս Տեառն՝ յերկիր օտար » : Արեւիկայ
 մարգարէի օրերէն ի վեր՝ պանդուխտ մի չի կըրնար տեսնել Բարեշահան Ռաին՝
 առանց անոր ճապուկ ճղերուն մէջ փնտաելու կախուած իր հայրենեաց կտակարանն
 այլ, չի լսել գաղտուկ հառաչանք մ'այլ, և չկաթել արցունք մի . — Լ. Salix. Փ.
 Saule. Ի. Salice. Ար. Խիլաֆ خالط . Ըստ Ամիրտ . « Խլաֆ, որ Ք . Սորդուս կ'ասէ
 » (Սէօկիւտ) . Լաւն այն է որ դեղին ծաղիկ ունենայ . հով է և չոր է յառաջին
 » տարածան, և իր լուրն օգտէ տաք զլիտուն ցաւուն . և ճէքն այլ զայս զօրութիւնս
 » առնէ . և թէ եփես և զլուրն առնուս և զզլուինն այն իրոնն լվանաս, զթե .
 » փուկն հանէ և տանի, և իր ձէթն զտամաքն ուժովցընէ . . և թէ իր մոխիրն
 » քայլուով օծես շտերուն՝ շատ օգտէ . . Իսկ . ասէ, թէ զծաղիկն հոտան՝ օգտէ
 » տաք բնութեան մարդոյ և զդեղն ուժովցընէ, և թէ զծաղիկն ժողկես և Շուշ .
 » մայով անցընես և զեղն հանես՝ խիտտ հով եղ լինի : Ասէ Պտ . թէ այսոր տե .
 « րեւին Սաֆաֆ կ'ասեն . և Պ . Պետ կու ասէ, և Պալիսիքն՝ Պահրահաձ կ'ա .
 » սեն : Եւ իր խէժն ի տերեւէն կ'ենայ, և լաւն այն է որ ի ջրեզերք լինի » .
 և հասարակօրէն այնպիսի տեղուանք լինի, իրր թէ անկից արցունք քաշելով կամ
 հօն թափելով, Հին Բժշկարան մեր ի Դիոսկորիտեայ քաղելով գրէ . « Ուռին՝
 » փոթոթ է . և այս է գործ նորա . զտերեւն եփել, և զայն լուրն հովցընել ու
 » պարզել, և աղցած Գղթոր ի ներս խառնել, և օծնել . . զօտք՝ զոր օձ հարկանէ,
 » օգտէ : Եւ ծծկան տղայ՝ թէ տաքնայ, և իր տերեւոնն ծածկես՝ որ քրտնէ,
 » առ ժամայն թողու տաքութիւնն : Եւ արմատն ու ծաղիկն ու տերեւն թէ ծե .
 » ծեռ ու տաս զլուրն խմէ, կամ տկճոր դնես՝ որ փորանցութիւն ունի, արգե .
 » լու զփորն, և ամենեւին ուստի և գայ արոյն՝ օգնէ, Ատաուժով » : —
 Վերոյգրեալ Ուռույ եղը յիշէ և Ասար՝ Ռաի ճէր կոչելով : — Գլխաւոր տե .
 սակ Ուռնեաց հարկ է որ Բարեշահան ըլլայ, S. Babylonica, որ գտուի և
 յԱրեւել . Կովկաս, Միջագետք, Քրդաստան . — Պարսկական տեսակն S. Persica,
 գտուի ի Միջագետս . — Իսկ S. Aemophylla կոչուածն ի Քրդաստան, յԱմասիէ,
 Բարբիոն : — S. Pentandra ի Խաղտիք, Արեւ . Կովկաս . — Դիւրաբեկն S. Fragilis,
 Ի Հար . Հայս, Կովկաս, Լիբանան . — Միրանեզոյն, S. Purpurea, ի Կարին,
 Թրակիա, Կովկաս . — Նեղոտերեւին S. Angustifolia, ի Թորթում, Բարբրդ, Նախճ .
 աւան, Վրաստան . — S. Caprea ի Ռ-Հ . Կովկաս, Կիլիկիա . — Մսիրագոյնն
 S. Cinerea ի Հայս, Կովկաս, Կիլիկիա . — S. Viminalis ի Պինկէօլ, Խաղտիք . — S.
 Hastata ի Ճիմիլլ . Խաղտեաց . — Ի Հայս՝ գտուածներու մէկ տեսակն պիտի ըլլայ՝
 Հ . Ճաթուռի կոչուածն . Իսկ Փոկուռի կոչուածն է Մսիրագոյնն (Cinerea),
 զի այս գոյնով վկայեն Խոտուլրեցիք, կակուղ ու ճկուն առանց կոտրուելու :

Ուսամն և Մուրտն Սալաձորեցոյն՝ ուղղելի է Մոռսամն :

3423. Ուսկուլի .

Այսոր հունդն յիշէ Բժշկարան մի, դեղ ձեռաց և մատանց մէջ գոյացած սունկի :

3424. * Ուսուղիխի ?

Վաստակոց գիրքն (ՃԱ) այգեաց ճճիները ջնջելու գեղոց մէկն այլ գրէ . « Եւ որք

» զխոտն Ուսուզիլի կոչեցեալ՝ ծխեն, օգտէ »: Յ. բնագիրն ունի Προσαίτι, որ է
L. Personata, Φ. Personnée, որ Echium (վիշապուկ) կոչուած տեղաց ցեղերէն
է. տես Ախիոն, Թ. 30:

2425. Ուտ.

Հին Բաագիրք մի գրէ. « Տայիս՝ անուշահոտ փայտ է, զոր Ոտ կոչեն »: անշուշտ
է Յոտ, Թ. Իտտ կամ Էտտ, որ է Հալուէի փայտն:

2426. Ուրծ. Ուրց. Ուռց.

Բժշկարանք այլևայլ բուսոց զուգեն. մէկն կ'ըսէ « Ուրց, որ է Միրրինն ».
միւսն, « Ուրծ, որ է Քաղիկ օրի »: միւս մ'այլ, « Քաղիկ օրի որ է Սայրարն ».
նոյնն « Սայթար՝ Մոթրին » գրէ. ի բառս Գալիենոսի ց տառիւ գրուի և հոմա-
նիշ Թունայ կամ Թունան, որ պիտի ըլլայ Թիոն: « Քիմիական գիրքն այլ գրէ
» Քէքլիկ օթին երկաթն կու հալէ, կամ Ուրծ խոտն »: Հին Բժշկարանն այլ
կուրծքի վրայ խոյլի կամ ուսեցքի դեղոց մէջ յիշէ, « և զՈւրցդ լեսէ՛ և յայն
խաանէ »: — Ի նորոցս՝ Մանանայ գրէ (եր. 480) « Խոտ անուշահոտ, նմանու-
» Թեամբ և հոտով իբրև Չէսլիէն, զոր ուտեն »: Աթանասեանն (եր. 83)
« Ուռց՝ շատ մանր կտոր և Թունգ տերեւներ ունի, և փնջի նմանութեամբ դուրս
» ելած ցօզուններն՝ ամենեւին չեն բարձրանում. սիրում է կրային հող. անջուր
» տեղերում, քարերի աակ. ունի կծու համ, և գործ է դրուում կերակրի մէջ,
» նորանից օդի են քաշում », դեղի համար: — Ըստ քննութեան գիտնոց՝ հա-
սարակ Զուիրակն է (Թ. 721), Origanum vulgare: — Անշուշտ նոյն կամ
նմանն է

2427. Ուրց-անուխ.

Որ լուսի ի վանայ կոզմանս, իբրև Անանիայ ազգակից:

2428. Ուրոյ.

Գալիենոսի բառից մէջ գրուի « Անգրիդիախ՝ Ուրոյ »: Ռոջքեան գրէ L. « Ուրոյ,
Anthriscus, խոտ է, որ զհոտաբեր տերեւս ունի. խոնջեղոց օրովայնին օգնէ »:
Ուրիշ հին Բաագիրք Յ. բառը գրեն Արրիագիս կամ այսօր նման. որ է ստու-
գիւ Յ. Ἄνθρισκος, L. Anthriscus, Φ. Anthrisque, ազգ Ohaerophilum ցեղի՝ ի նորոց
Խեղատերեւ անունեալ բուսոց, Φ. Cerfeuil, որոց մէկ տեսակն երկու անուններու
միութեամբ Anthriscus Cerefolium կոչուած՝ տեսնուած է յԱրևմ. Հայս, միւս
տեսակ A. Nemorosa mollis ի կարին, Մանախ, Ճիմիլ լ. — A. Glabra, ի Պին-
կէտ լ., ի Պոզըր մատեն. — A. Macrocarpa յԱրևմ լ. կապաղովկիոց: Յիշուի
և ի կոտայս առանց զանազանութեան տեսակին:

2429. Ուրուէ.

Ուրոյէ տարբեր Թուի, որովհետև երկուքն այլ առանձինն յիշուին մի և նոյն
գրոց մէջ. զուգուի Հալուէ այլ և Ղշէ ? անուանց. Յ. այլ գրէ Ակրոգորդանաս,
որ ինձ անծանօթ է. միթէ՛ վայրի Էթօտտ (Մղու) ըլլայ:

2430. Ոփի.

Տես Յոփի. — Ոսկերեքանի ճառի մի մէջ գրած է ըստ հայ թարգմանութեան, « Որպէս ընդ կաղնուոյ և ընդ կաղամախուոյ ընդ հովանեաւ՝ քահանայիցս » այսոցիկ նստելով ». Լ. Թարգմանն այս ծառերս գրած է Quercus և Fagus. մեր թարգմանիչն աւելցուցած է եւս, « ընդ հովանեաւ կան Ոփոյ, ընդ հովա- » նեաւ քահանայիցս նստեալ », որ սխալմամբ տպագրեալ է կանոփոյ: — Անցեալ դարու թարգմանիչ վարդապետ մի (Ղուկաս Խարբերոցի) Ոփնի կոչէ զծառս. և Լ. Populus.

2431. Ոքոզ.

Տես Ակքան, ուր յիշուած է այս բառս իբրև նոյնանիչ:

Չագամ. — Տես Շաքում:

2432. Չագար.

Ստ. Ռոշքեան վայրի ծառոց հետ յիշէ և համարի Լ. Fagus, որ է Հանարի:

2433. Չամալզուխ,

Տեսակ Խաղողոց յայգիս Երեւանի:

2434. Չամշամ.

Ռամկօրէն անուն խտտեղենի մի, բարձր որձայով և տերեւներով, ըստ Բրդընիկոցոյ: Գուցէ նոյն ընդ շրթտան (Թ. 1870):

2435. Չամթալ. Տես Չքնտոր:

2436. Չամթուկ.

Այսպէս կոչուի Բրինձն՝ քանի որ փեճեկին մէջ է:

2437. Չաման.

Այս այլ ի Ս. Գրոց ծանօթ, մանաւանդ ի յանդիմանութենէ Քրիստոսի առ Փարիսեցիս, որ այսօր նման շնչին խտտեղեններէ այլ տասանորդ կ'առնուին (տ. Անանուխ). կոչուի և Քամուռն ըստ Ար. ۱۰۰۰, Լ. Cuminum, Փ. Cumin, Ռ. Тминъ. « Եստ ազգ է. կ'ըսէ Ամիրտ. աղէկն Քրմանին է. ասէ Մարոյճօ. » վանն, թէ ինքն գերակնուն կալուածն բանայ, և թէ յաղիքն ճիճի կենայ՝ սպա- » նանէ, յորժամ մեղրով տաս որ ուտէ... և օգտէ կըծին և բորին որ ի կոպն » աչաց: — Առակախօս մեր Չամանի և նմանեաց բերնէն կ'ըսէ (ԽԸ) զինքն ար- համարհողաց, թէ, « Եփեալ՝ զսրութիւն տամք կերակրոց. զի զովի զօրութիւնն » և ոչ ցօղունն. և իբր պատուական ակունս՝ ի վարչամակն ծրարիմք »: — Այլ եւ այլ տեսակք Չամանի յիշուին, բաւական տարբերութեամբ իրարմէ, որով և օտար ազգէ այլ կըրնան կոչուիլ. և նախ, ըստ մեր Բժշկարանի, « Երկու ազգ

» է, մէկն վայրի և մէկն Պաղլայի »: — վայրին փեմուն պերրի ڪرون ڪون ڪون
և ֆառնն Հապէշի, Երրոկացոց Չաման, սեւ սեւ հունտերով, Φ . Cumin sau-
vage. ըստ Բժշկարանի նոյն է Կրտիսն և Սնորի տակ. ուրիշ Բժշկարան Հա-
պաշի Չամանը զուգէ Նամախուի հետ. ուրիշ մ'այլ զսա կոչէ

2438. — Չաման Թագաւորի.

Իսկ սա Հացիդեզն է կամ Հացհամեմ. β . 1686:

2439. — Չաման Հայոց.

ڪرون ارجنى « Որ է Քարաշիայն՝ ըստ Պէլթ. և Ամիրտ. սպիտակ ծաղկով
և Անիսոնի զորութեամբ, λ . Cuminum Armeniicum, որ և Carvi.

2440. — Չաման Հնդի.

Որ և Սեւ Չաման, ڪرون اسى, համարուի նոյն որ ինչ Եանիզն:

2441. — Չաման Հոռւմցի.

Այս այլ զուգուի Նաֆրայի? Հետ, բայց այս ետքինս Քարաշիայի և Արտիման
հետ նոյն գրեն Բժշկարանք, որով տեսնուի շփոթութիւն մի կամ գծարութիւն
զանազանելու տեսակները:

2442. — Չամանուկ.

Պարիենու բառից մէջ այսոր հոմանիչ գրուած է β . Կարագիւն, որ է ڪارون
(Չաման), բառին նուազական կամ ածանցն՝ ըստ հայերէնին:

2443. Չամիչ.

Յայտնի է Խազդդի չիր ըլլալն, և ըստ այնմ « շատ ցեղ է. լաւն այն է որ խոշոր
» և մալի լինի. կակղացընող է և եփող. զփորն և զկուրծքն կակղացընէ, և օգտէ
» հով հազին, և կուտն օգտէ արուն թքնողին. ., և թէ զՉամիչն Չամնով ծեծեն
» և գնեն ի վերայ հով ուռէցին՝ օգտէ. . տաք բնութեան գնն առնէ, և զիր
» շարութիւնն տանի Աքնճուպինն և թթու մրգերու լուրն՝ որ յետեւն այնոր խմեն. .
» և թէ զՉամիչին միսն խառնես Պղպեղով և Արեւկին ալուրովն տապկես և
» մեղրով խառնես և ուտես՝ զպալղամն ի բերնէն ի գուրս քաշէ. և թէ խառ-
» նես ի Բակլայի ալուրն և Քամանն՝ և տիմէտ առնես, զինչ որ կաշին ըն-
» ծայի՝ թէ ճատար թէ շտեր թէ բոր թէ քոր. . . թէ ըղունկն որ շարժի՝ նա
» կպցընէ և շուտ ողկացընէ: Եւ Չամիչն ազէկ կերակրէ զանձն քան զԽաղողն
» և քան զԹուզն, և աղէկ ճէ տայ անձինն. և Չամիչն լուծումն պակաս է
» քան զԹղին », ևւ այլն: — Φ . Raisin sec. Ար. Զապիպ, زبيب.

2444. — Չամիչ վայրի կամ Չամիչ մեծ.

Ար. Չապիպ իսլ-ձկակ; *بيب الجبيل* (Լեբան Չամիչ). որ յատուկ անուամբ եւս կոչի Մովսիսի կամ Միսթեգեմ (թ. 1989). *چيزجيز*, « ինքն ծառի պը » առող է, կ'ըտէ Ամիրա. սեւ և տափակ, և շատ օգտէ. ի Հոռոմքս լինի իր ծառն՝ » աղէկն. տաք է և չոր »: Դարձեալ գրէ. « Հատկներ է զէտ Չամիչ. յամիի » մէջ կու բուսնի. և լաւն այն է որ սեւ լինի. այրող է և ուսող է. և թէ » ծամեն՝ յակուայէն շատ պաղլամ քաշէ, և զոյիլն սպանանէ, և ակուային ցա » ւոյն օգտէ, և զթանձր պաղլամն լուծել և փաղել տայ, և զճհիքն և զօճն կու » հանէ, և զգաղանի սունկն յայտնի առնէ. և օգտէ. բորին՝ օծելով, և այն ու » ակցն որ ի ծունկն լինի և ի քամու լինի՝ օգտէ և հալէ », եւ այլն: — Փռանկ թարգման Պէյթարայ *Staphysagria* կոչէ, որ ուրիշ ազգ բոյսեր այլ նշանակէ:

2445. — Եէկ Չամիչ.

Դեղին Հայիլայն է, ըստ Բժշկարանի, տես զայս:

2446. Չամլոկ ?

Լսուի ի Խոտուղուր. մի թէ նոյն ընդ Չամրօր (թ. 2451):

2447. Չամչախունկ.

Բուսական և խնկեղէն խառն նիւթ մի իմացուի անուամբս, որոյ հոմանիշ գրուի Չոր Չոսկի. իսկ սա նոյն համարուի ընդ Ստաշխին. Թ. այլ Պոսխոսր Մեքիեմ գրուած է, որով այլ եւ այլ անուշահոտ բուսեղէնք կոչուին. ինչպէս Թաղթ, Մանօշ, և այլն: Տես Միաւորակ:

2448. Չամչարակ. — Տես Ծոռազ:

2449. Չամչի.

Տեսակ Խաղողոյ յԵրեւան և Նախճաւան.

2450. Չամրօր. Չամրօրէ.

Բժշկարան մի քանի մ'անգամ յիշէ այս բոյսս, և բացատրէ. « Այս Չամրօր » ծառս՝ Հնդկաց երկիրն կու լինի. Հնտուի բառով Մրնկրս ասեն. մեծ ծառ է, » ճղերուն վրայ փուշ բուսնի՝ որպէս բուսեա. և պտուղն վայրի Բամբակ է, որ » է Չանկայի Բամբակ »: — Թուլութեան գեղի համար այլ խրատ գրէ. « Ա՛ն » Չամրօրոյ ծառին կեղեւն, շուք տեղ չարացու, բարակ ծեծէ և մաղէ, օրն » երեք դրամ վաղմիւնէն աուր որ քաֆ անի, վրան պաղ ջուր խմէ »: (Ուրիշ նման հիւանդութեան համար այլ գրէ, վաղվրնէն անօթուց քաշ անի):

Այս հիմայ գրեթէ համայնարհական և հանրածանօթ բոյս սովորաբար թէյ կոչուած, Լ. Thea, ֆ. Theé, յիշուած է ծէ դարու վերջերը գրուած Բժշկարանի մէջ, իբր յաւելուած Ամիրտովաթայ Անգիտաց անպէտ գրոց. և գիտնալու է որ այս մեր հեղինակս՝ Չ տառիւ բուսոց անունները հազիւ թէ յիշէ, և մէկ երկու տողէ աւելի բան չի գրեր. իսկ մէկ օրինակի մէջ ամեն նոյնատա, անուններէ վերջը և ամենէն երկար (թէ և՛ ոչ չատ) բացատրութեամբ՝ դրէ այս հիմայ Թ. համաբուած անուամբ. և թերեւս հընազոյն յիշատակաց մէկն է ի գիրս, նա եւ Եւրոպացոց.

« Չայ. տերեւն բարակ և երկան. Աճամստանայ կու գայ.

» չորս դրամին 16 դրամ չաբար

» խառնէ և օխա մի ջուր խառնէ

» և եփէ, որ մէկ նիկի (ունկի !)

» մնայ մեծ . և մէկ Ղահվայի

» Ֆիլճան խմէ . ձմեռն խիստ

» տաքցընէ զմարդն : Հօբան 13

» զուռուչ է : Բայց զայս ծառ

» նիր՝ ով գիտուն , 16 դրամ

» Չային՝ ութ դրամ Պատրիսեան

» (Բրագիան) խառնես , և 16

» դրամին 16 օխայ ջուր եփես ,

» կէսն մնայ » :



Չայ.

Չայի յատկութիւն ունող և մեր երկրին մէջ կամ սահմանաց մօտ՝ նորերումս ճանչցուած բուսոց մէջ՝ յիշեցինք Անկի պիպիլը (Թ. 355). յիշեմք նա եւ անանուն մի, զոր նկարագրէ Շահխաթունեան եպիսկոպոսն (Ստորգր. Էջմիած. Բ, 199) կեչառուաց վանաց քովերը. « Գըտանի... և տեսակ իմն խոտոյ՝ որ բարձրանայ իբրեւ կանգուն մի, միացողուն, և է չիկագոյն, թաւամազ, և ի ծայրն բանայ ծաղիկ դեղնագոյն ողկուզաձեւ. տերեւք նորա չարակարգին ընդ ցողունն ի ներքուստ մինչեւ ցվեր, և նման են տերեւոյ Ուռնեւոյ կամ Չիթնեւոյ. զոր և ի գործ դնեն զօրէն Թէյի. քանզի եթէ արկցի լսա այնմ ի ջուր եռացնալ և ըմպեսցի չաբարաւ, լինի դեղ քրտնարեր և օգտակար, որպէս Ուտա չային » :

2452. — վանայ Չայ.

Այսպէս անուանեցին նոր ասեւններս՝ այս քաղաքի սահմաններում բուսած երկայն և բարակ տերեւով և կապոյտ ծաղկով բոյս մի, որ իրի մէջ եռացընելով Չինաց Չայի պէս ի գործ ածուի:

Չանդան. — Տես Ճանդան:

2453. Չանչար.

Հստ բժշկարանաց սմանց խառնուպն է, այսինին Եղիւրենին. տես զասոնք:

2454. Չաշմակ. Չաշմիկ. Չեշմակ.

Որ է Թաշիզամն *چشم‌آبد*, ըստ Ամիրոս. և սա է Պ. « Չամիզամն, և Չաշմակ » մեկ այլ կ'ասեն... « գտէ աչից լուսուն, և կապող է »: Ուրիշ Բժշկարան մի գրէ. « Աչքն որ չիմա ելնէ (այլ նիւթերու հետ) և Չաշմիկ՝ բարակ ողկէ և » աչքն քաշէ »: Մանօթ է Տարսոնոյ կողմերում այս Չաշմիկ անուամբ՝ Ակակիայի նման փշոտ ծառ մի, Ոսպի նման կարծր հատերով, և իրր աչաց դեղ: Բժըշկարան մ'այլ նմանցընէ « Ղարաչալուի հունդն՝ որ ի Չաշմակ կու նմանի »: — Լ. Argemonia, Փ. Argémone, որ Յ. աչքի աղա նշանակէ: Խաչխաչից ընդհանուր ցեղէն դասուած է Չաշմակ. մէկ ցած տեսակն Ag. Repens ճանչցուած է ի Մուշ, ի Բարբերդ, ի Պրիտ Լ. Կիլիկիոյ: — Գալանթարեանն պարզապէս համարի զՉեշմակ:

2455. Չաչ.

Հասարակօրէն նշանակէ ծառոց այն ծիւղերը՝ որ արմատանալու համար պարաստեն և տնկեն. ի մասնաւորի այլ նշանակէ Շողգամի տերեւները:

2456. Չատանայ. — Տես Կանեփաստ:

2457. Չատր Ծաղիկ.

Թուրքարէն վրանաձեւ ծաղիկ նշանակկ. Սալաձորցին յիշէ.

« Գամանդրաշն և Չատր ծաղիկն, Գօճակն, ծաղկեր արտերուն »:

2458. Չարալուացիկ.

Գալիենու բուսից մէջ զուգուած է Յ. Կաղվենաս անծանօթ, բառին եթէ ստոյգ է գրուածն. կայ Galvania անուամբ բոյս՝ որ յատկապէս կոչուի Palourea.

2459. Չարհոտ.

Տես Մաղթ, Թ. 1845, ուր բացատրուած է. Հօս աւելցընեմք ի Պէյթարէ՝ ծգարու առաջին կիսուն Ար. բժշկի մի աւանդածը. Թե Հայք երբ խուժաստանեայց, յիշէ, պատերազմելով անոնց Թինաւոր նետերէն վիրաւորուին, վրան Չարհոտ քսելով անվնաս մնան:

2460. Չափչափս.

Նման Չաթչաթի խոտ, ըստ Բրդնիբոցոյ, Թերեւս Ճրթաանն (Թ. 1870).

2461. Չեքի. — Թուի Թխտենի ծառն (Թ. 793):

2462. ՉԹլըխ. — Տես Հնդկապէ:

2463. ՉԹղնի.

Արցախային վայրի ծառոց հետ յիշուի: (Մեղու, ԻԲ, 83):

2464. * Չիթլամպուկ. — Տես Գեղճ:

Չիկտամ. — Տես Չրիտամ:

2465. Չինար.

Թ. Սօսի նշանակող ծառէն տարբեր բոյս մի գուշակել տայ Սալաձորցին, յիշելով « Քաֆն ու Չինար ու Ռեհան »:

2466. Չիչխան.

Փշալից վայրի Թուփ, որ Սիսուան չափ մանրիկ դեղին պտուղներ ունի, ոմանք ուտելի, որ մեր երկրին այլեւայլ կողմերում յիշուին:

2467. * Չիքուճ.

Այսպէս գրուած է Քիմիա գրոց մէջ Լ. Օուտս անունն, որ է Մոլիինդ:

2468. Չլըխ.

Ջրային կարմիր խոտ մ'է, նոյն գունով մանրիկ ծաղկներով. մանած դերձանք կարմիր ներկելու ի բան կու գայ:

2469. Չոպպաշի ?

Մեր երկրի արեւելեան կողմերու վայրենի ծառոց մէջ յիշուի: (Մեղու, ԻԲ, 83):

2470. Չոր Զուկի. — Տես Միասարակ:

2471. Չորմորեակ. Չորմուրեակ.

« Որ է Մարիաֆիլիոնն (Myriophyllum), որ ասն Հազարտերեւեան (տես զայս) » խոտ. և այլ ասն իր Ալիֆայո: Այսպէս գրէ Բժշկարանն:

Չորտիկ ? — Տես Չորտիկ:

2472. Չում.

Տես Հոյն (Թ. 1718). ուր այլեւայլ համանիշ անուններն այլ յիշեցինք, զորոնք Ամիրտ. Ղարաբիա անուամ տակ գրէր. նոյն անուամբ գրէ դարձեալ ուրիշ տեղ. « Ինքն միրգ է կարմիր և ի մէջն կուտ ունի. աղէկն հասունն է. բնութիւնն « հով է և չոր, չափն՝ քանի որ կարես: Ասացին Հռոմոց իմաստասէրքն. Թէ

» իր բնութիւնն և գործածութիւն մօտ է Մորին. և զսիրտն հովցընէ, և զփորն
» կապէ, և ստամոքսն սուր առնէ. և օգտէ լեղրդին տաքութեան. և տղայացն
» լաւ է »:

2473. Զոււմար.

Սիւմ. Կամարկապցին գրէ. Թ. « Խոտընայ լիլէկի, Արմաւենուն զլուին է կամ
» ծաղիկն »:

2474. Զուքազ.

« Ար է Գաղին փայտին վարդն, երբ զփուշն ի վայր տան », կ'ըսեն Բժշկա-
բանք: Ըստ այսմ հարկ էր Գ տառիւ գրել Զուգազ:

2475. Զուփերեսիկ.

Այս այլ խոտուրեցոց ծանօթ բուսոյ մի անունն է:

2476. Զքատակ.

Հին Բժշկր. ելլնգի դեղ գրէ. « Զքատակ աղա՛, և ձվի դեղնուցով ի հայս
» խառնէ և դիր »: — Ամիրս. կ'ըսէ. « Պոռչի-տարանտի՛ որ է Զքայտակ ».
ուրիշ տեղ այլ, « Պուչի Տարանտի, ինքն ի Տարանտու կու գայ. շաղուած է.
» նորն լաւ է. մուկթատիլ է, չաքն՝ քանի որ պէտքն է »: Պէյթար գրէ Պոռչ
կամ Մոռչ տարանտի شجوب شجوب, և լատիկաթ տունկ մ'է, կ'ըսէ. ըստ ու-
մանց՝ տերեւին հիւթն է. Էպուսինա՛ ի Հայոց կու գայ կ'ըսէ, Ռաղիկն այլ յօ-
դացաւութեան գրոց մէջ նոյնպէս ի Հայոց գալը վկայէ, բայց հիւթը կամ դեղը
էջ-խարդի կոչէ عجب. Թարգմանիւն չիմացըններ իր կարծիքը այս բուսոյս ինչ
ըլլալուն, որ եթէ արգարեւ « ի Տարանտու կու գայ », (որ ի Փոքր Հայս ըլ-
» լալով՝ կ'ըսուի ի Հայոց, ըստ Ար. բժշկաց), հարկ է Տարանտի կոչուիլ, ինչ-
պէս տեղ մի գրէ Ամիրս. բայց ուրիշ տեղ ըստ Պէյթ. Տարտանտի գրէ: —
Փափագիմք որ Տարանտացիք ծանուցանեն մեզ, եթէ գիտեն, ինչ բոյս կամ ինչ
զանգուած է այս: — Ար. բառով յիշէ դարձեալ Բժշկարանն և կ'ըսէ. « Շաֆ-Պ
» է՝ որ ի Հայոց երկրէն կու գայ, և ինքն բոյսն է, խոտ է »:

2477. Զքիտամ. Զգիտամ. Զկիտամ. Զիքիտամ. Զիկտամ.

Տես Սապտուկ: Սալաձորցին առջի անունով յիշէ, և գարնան՝ չորս կանուխ
ծլոզ ծաղկանց մէջ երկրորդ կարգէ. « Նախ Չնծաղիկն ու Զգիտամն », եւ այլն:

2478. Զքնտուր.

« Ար է Ճակնդեղ », գրեն Բժշկարանք ոմանք. այլք (سلق) Սիլիս Ճնպրի և
» Սիլիս Պարրի, որ է Բազուկն, և իր տակին Հալիմու ասեն. և ինքն Չաչքալն է.
» և Ազատտարոս կ'ասեն, և Հարժօր այլ կու ասեն »: — Կամարկապցին կ'ըսէ.
« Ինքն կարմիր ծաղիկ ունի, մէկն երկան և մէկն բոլոր. աղէկն երկանն է »: —
Տես Ճակնդեղ և Բազուկ:

2479. — Զընտուր Զրի.

« Ծարու նահր, ըստ Ամիրտ. Ասացած է թէ ինքն Սիլիս մային է (Զրի Բազուկ
سلق), որ է Զրի Զքնտուրն. որ ինքն ի մէջ Նրին կու բուսնի, և ինքն ի
» Նիլուֆար կու նմանի, և ի Նրէն ի դուրս քիչ կու ելանէ »: — Յ. Լ. Potamogeton. Փ. Potamot. — Քանի մի տեսակաց թուէն՝ Փոքրիկն՝ P. Pusillus
տեսնուած է ի Բարբերգ և ի Հր. կովկաս. — Խիտ կոչուածն այլ՝ P. Densus
նշանակուած է յԱրեւմ. Հայո:

2480. * Զորտիկ կամ Զորտիկ.

« Որ է Զուֆայրայ . (زوف) ըստ Բառագրոց Ամիրտ. որ և անդրադարձօրէն
գրէ. « Զուֆայրայ որ թ. Զորտիկ ասէ. ինքն ծառ-առ է որ ի յԱնհրտան կու
» նմանի, և երկու ցեղ է. լաւն այն է որ գալար լինի.. լատիֆ է և դքամին
» կու հանէ.. և զերդին ուռէցն տանի, և զպաղղանն կտրէ ի ստամոքէն.. Եւ
» ասցել է գրոցս շինողն՝ թէ ինքն թուփմիտարն է »: — Ըստ Թարգմանին
Պէյթար. է Լ. Panaces Asclepiu. — Տես Մաղաթիտոս (Թ. 1328). — Փոխան
ծառի՝ պէտք էր որ մեր Ամասիացին այլ տունկ մի կամ թուփ մի անուանէր զայս:

2481. * Պագրպանն.

Տես Աղուաշարանկ. — Քիմիական գիրքն յիշէ, « Ծոռակամուս (Hyoscyamus)
» որ է Պագրպանն և իր խոտն »:

2482. Պալախունկ կամ Պտղախունկ.

Խորենացոյ աշխարհագրութիւնն յիշէ ի Տայս, չէ յայտ ինչպէս ըլլան:

Պալասան. — Տես Բարտան:

2483. Պալատուր. Պալարտուկ. Պլատար.

چالدا ըստ Ար. Ամիրտ. գրէ. « ինքն պտուղ է սեւ և գէտ Շահպալուտ նմա.
» նէ. աղէկն նոր և մեղրոյն է »: Դարձեալ. « Պալատուր, որ է Շառքարան. ինքն
» սեւ միրգ է, որ ի փոքր Շահպալութ կու նմանի, և ձագուն (Թուշոյ) սիրտն
» կու նմանի, և լաւն այն է որ մեծ լինի.. և իր փոխանն իր շքօքն քնտուխն է »:
Ուրիշ Բժկր. Լ. անունն այլ գրէ « Անկարտայ (Anacardium), որ Հ. Պալա-
» տուր ասէ »: Լ. անունն ըստ Յ. Սրտի վերայ նշանակէ, որովհետեւ ծառն կամ
թուփն փնջաձեւ ծաղկըներէ վերջը՝ սրտի ձեւով մեծկակ մարմին մի կու ապ-
վրան այլ յիշեալ շագանակաձեւ պտուղը, որ ի դեղորայք ի գործ ածուին, նոյն-
պէս և կեղեւն և անոր հիւթն. իսկ պտղին միջի նշաձեւ հատերն կ'ուսուիին.
բարկ գինւոյ պէս ըմպելիք մ'այլ կ'ընծայեն. — Հին աստեւ ի Հնդկաց բերէին
զՊալատուր, յետոյ յԱմերիկայէ, հիմայ մշակուի և յԵւրոպայ:

2484. Պախրու ականջ.

Ար. Ազան ել-բուր, **ادن العور**. ըստ Ամիրտ. « Ք. Պախրու ականջ կ'ասէ. « և ինքն ի գետինն կու ճապաղի և կու բուսնի. և Ազնալեզու կ'ասեն. խոտ մի » կայ, ի յայն կու նմանի. բայց հոտն նման է Խիարի հոտին. և ի միջէն մէկ » կանգուն որձայ կու ելանէ, և ի գագաթն ծաղիկ կ'ունենայ. և թէ ծաղկոյն » եփես և ուտես՝ օգտէ խաֆաղանին և ստամարին տաքութեան. և այն շտերն » որ ի բերնին մէջն լինի և զցան այլ տանի. և թէ ի լեզուին վրայ զէտ Նաան » փուշ լինի, օգտէ »: — Ըստ Փ. Թարգմանին՝ այս բոյս է **L. Echium Plantagineum**, որ նշանակուած է ի Պոնտոս և ի միջոց Մեծ և Փոքր Հայոց:

2485. * Պախրու ցի.

« Որ է Տէրուսա Նոխոստ, ըստ Ամիրտ. ինքն ծառ մի է որ երեք կանգուն եր. » կայնութիւն ունի, և ի շրուպառակ (1) տեղեր կու բուսնի, և կարմիր ծաղիկ » ունի, և ի Սիսական շափ միրգ ունի. և թէ զիր միրգն ծեծեն և հոռոմ ձի. » թով խառնեն և ի վերայ կրակին քիչ մի տրորեն, և ի վերայ կոծիծնուն » դնեն, օգտէ. մէկ քանի հեղ պիտի դնեն. և թէ զտերեւն ձեռք քամեն և » տան արիւն թքնողին՝ կտրէ. և մէկ անգամ թող խմէ, և այլ աւելի չի խմէ »: — Յայտնի Սիսական նման կամ տեսակ մի ըլլալ, բայց յատուկ անուն մի չեն տար Թարգմանիչք և բառագիրք, այլ Թիթեոնակերպ (**Papillonacées**) բուսոց ցեղին վերաբերեն. օսմանեան գիտնականք Կ. Պօլսի զուգեցին ընդ **L. Secale Cornutum**, **Փ. Seigle érgoté**.

2486. Պախուկի.

Տեսակ մի Խնձորայ.

2487. Պաղուն.

« Վարտ իջ-Մերին է (**درو منتن**), որ է այն Վարդն՝ որ պեղծ հատ ունի, և » գոյնն կարմիր Վարդի պէս է. այնոր Պաղուն կ'ասեն. բնութիւնն տաք և չոր » է. և տակն այրող է որպէս Ակրկարհայ ». ըստ Ամիրտ. — **Փ. Rose fétide**.

2488. Պան.

Վիզի նման խոտ մի, որ կ'ուտուի: (Պատկեր, Գ, 257):

2489. Պանուկ.

Վայրի Ապաստ է. **Medicago sativa**. Տես թ. 173. Ըստ ոմանց նշանակէ Մալու: — Յիշուի և Հեատեւայն.

1. Ուրեւ Օր. գրէ Ղըղղաւսի Ար. ըրբ ու կարծր գետին:

2490. — Օձի Պահուկ.

Նշանակուած ի նոր բառհաւաքէ, առանց բացատրութեան:

2491. Պամիա.

Ար. **امبل** Եթէ չէ վրիպած յաչացա՝ Ամիրա. չէ գրած կամ Թարգմանած այս անունն ի Պէթարայ, և ուրիշ հայերէն գրոց մէջ այլ յիշուած չէ, մեր երկրի և սահմանաց մէջ մշակուած չըլլալուն համար. Հիմայ այլ շատ ծառալած չէ մշակութիւնն, որ յԵգիպտոս շատ ծաղկած և անուանի էր. համեղ խաւարտաց մէկն համարուի, կանաչ Պղպեղի կամ բուսեփ ձեւով մատնաչափ աւելի կամ պակաս երկայն պտղով, մէջն ճերմակ և կաշուն կակուղ մարմնով, դուրսն կանաչ: Ըստ բուսաբանից Մոլշեղինաց ցեղերէն է: — Լ. Hibiscus esculentus, ֆ. Katmie comestible կամ Gambaud.

2492. Պայլմ?

Անտն վ. յիչէ « Պայկ՛ի տակ, որ է Էրքուս », Մատուտակ. ուրիշ տեղի Պրոն կոչէ:

2493. Պայպուն. կա՛ Պէպուն.

Նարգէս ծաղիկն է, (ըստ Նոր Հայաս. գրոց. եր. 169):

2494. Պան.

Ար. **بان**. « Որ է Բան, ըստ Ամիրտ. ինքն հատ-մն է սկիզուն կու նմանի, » լեզութիւն և կապողութիւն ունի, և լաւն այն է որ անուշահոտ լինի. . ճլէ » տուող և կակղացնող է. և իր հասն օգտէ մանին որ յերեսն լինի. և իր կեւ » զեւն զքթին արիւնն կարէ. և զմազն կու ամբացընէ իր եղն, և զքուին (ըն- » քուիններու) մազն աղէկ այնէ, և քթին խոցերուն օգտէ, եւ այլն. իպն. ասէ, » Թէ ինքն ծառ-մն է որ ի Մոլու ծառ կու նմանի »: — Ոմանք ի Բժշկարա- նաց՝ Պան իշաթուզն է կ'ըսեն, զուցէ Հնդկաց Պանանը համարելով. մէկն այլ գրէ « յադիներէն Էպոյ ? »: — Ըստ գիտնոց է Behen, սերմն Moringa Aptera տընկոյ, որ Ասիոյ և Աֆրիկէի տաք կողմերում գտուի, և իր պտղէն կամ հատերէն կու հանեն Պանի եղը. զոր Բժշկարանք մեր կոչեն եւս Պանի ձեր:

2495. Պանթումա.

« Որ իր պտղին Տիպ ըլ-հարնայ ասեն », ըստ Անգիտաց անպէտի: Տես Ճագամ:

* Պանկ. — Տես Բանկ.

2496. Պանկլիկ.

Այս այլ Պանկ նշանակէ, իբրեւ կանեփի հունտ:

Պանջան. — Տես Պատրեշան:

2497. Պաշուլակ ?

Հունտի հասած կամ հինցած վարունգ նշանակէ:

2498. Պապրնկոյզ.

Ինչ ազգ բայ ըլլալը բացատրած չէ, այլ միայն թէ ճիւղերն կ'ուտուն, ի Պոնտոս:

2499. Պապի պլոր. Պապկեպլոր. Պապկլոր. Պապլոր.

Ըստ սմանց է կատուխազող կամ Շնխազող, և ըստ այլոց ուտելի բանջարեղէն՝ Թարմ եղած ատեն, ազցանով. գոյնն մոխրագոյն, և կապուտիկ հատերով, (ըստ Մանան. եր. 480, և Աթանաս. եր. 78), կամ աւելի նոնագոյն և մանուշաղոյն հատեր են իրարու կիպ, Թուֆի հատից պէս, և անոր նման՝ ծաղկանց պտուղ մի ձեւացընեն, ինչպէս տեսանք կարնոյ Մուտուրկու գիւղէն խաւրուածի վրայ, որ էր ըստ բուսարանից՝ *Muscari Moschatum*, Փ. *Muscari Musquet*, այսպէս կոչուած թեթեւ անուշահոտութեանն համար. գտուի նա եւ ի Փ. Ասիա, ի Հր. Կովկաս և ի Պոնտոս:

2500. Պապլաս կամ Պապլիս.

Վայրի խաչխաչն է, ըստ Ամիրս. և « ասացած է՝ թէ տերեւն նման է Պե. » դանտի տերեւին. ասկերն բոլորկեկ մրգկներ կու լինի, և ի պարաիզնին և ի » յայգեստանուն մէջն շատ կու լինի. և թէ ամենգի? շարապով խմես՝ զոս. » Քրան և զպաղղամն լուծէ յանձնէն և հանէ »: — Այդ ստորագծեալ բառին տեղ Պէյթ. գրէ մկ գաւաթ (سجۃ) մեղրաշուր: Իսկ բոյան է Յ. Πέπλος, Ափարրինից ցեղէն. Լ. *Euphorbia Peplos*. Ար. *البلبل*:

2501. Պապուկ.

Լայնատերեւ խոտեղէն մի. յիշուած ի Խոտուշուր և ի Սերաստիա:

Պապունան. Պապունին.

Տես Բարունիճ: — Շատ հեղ յիշուի ի Բժշկարանս՝ Մեծ Պապունան, զոր մէկն զուգէ Ախաւանի:

2502. Պառաւոսպն.

Arhaca. այսպէս յիշուած և զուգուած է, բայց որմէ, չէ յայտ. իսկ այդ Լ. կամ Յ. անուամբ՝ Թէոփրաստ և այլ հին հեղինակք նշանակեր են ընդդէն մի Ոսպի նման տափակ, ոմանք այլ հիմայ կարծեն տեսակ մի Վիգն, *Vicia Oracca*. որ նանչուած է ի կարին:

2503. * Պառշաւոյան.

Այսինքն է Փարսիոյանն արեւելեայց, որ է Չարխոս:

504. * Պառպուռ.

Լ. Berberis է. որ է Ծոր:

2505. Պառուռ Չար. — Տես Չարխոս:

2506. Պառուռ մէզար?

Տեսակ մի բանջարեղէն, յիշուած ի նոր տեղագրաց մերոց: (Մանան, 457, Պանդուխտ Վանցի):

2507. Պաննիալ?

Բժշկարան մի լերդացաւ հիւանդի կերակուր սպասարէ՛ գատ յայլոց, « Պա. » տընքալ կեր և կամ Եոմին, և կամ Դեղմի մուզաւարայ »:

2508. * Պասպային. — Տես Իշնոք:

2509. Պասպասէ. — Տես Ճօզպէ:

2510. Պասպօլ?

Ծարաւոյ դեղ գրէ Բժշկ. մի Պասպօյի շոք. Եւան Իրոյ հետ և Սալորի:

2511. — Պատաղին.

Սովորաբար Բաղեղն նշանակէ, և ըստ ոմանց Հոտտոն, Clematis erecta Փ. Clématite droite, որ նոյնպէս որմոց և ծառոց վրայ պլլուի:

2512. Պատառոտուկ.

Այս անունս Թուի ի նորոց հնարուած՝ Sanicula, Փ. Sanicle բուսոյ տեսակի, որ կ'ըլուի եւս Primula Auriculata. այսինքն Ականջաւոր Թաւրինջակ, որ գառուի մեր երկրին ամեն կողմերում այլ: Տես Թաւրինջակ:

Պատավարդ. — Տես Բատախարդ:

2513. Պատատուկ. Պատուտակ.

Բաղեղն է ըստ գրոց և ըստ Ասարայ. բայց Թուի տարրեր բոյս հետեւեալն,

2514. — Պատատուկ խոտ.

Չոր յիշէ Մեսրոպ Նրէց պատմիչ մեր՞ « Ընդ գետին տարածելոյ Պատատուկ » խոտոյ և զանպատշաճ բուսանելոյ »: — Թերեւս նոյն է որ ըսուի հիմաց այլ

բարձրիկեկ որձայով երկայն և երկնդի տերեւը բոյս մի, կապոյտ ծաղկներով, որ ծառոց և անկոց վրայ կու պլլուրի և կ'ուտուի ապուրի մէջ աղցանուած: Այս եւթինս է անուշտ Լ. կոչուածն Convolvulus caeruleus. իսկ պատմին յիշածն այլ՝ Աթուոցն, C. Arvensis. — Այս պլլուրը կամ գրկող բոյսերս շատ տեսակներ ունին. սմանք տեղեաց և սմանք իրենց բնութեան անուամբք զանազանեալ. որոց մէկն Հայկական կոչուի Conv. Armenus, երկայնաձեւ վարդապոյն ծաղկներով, ճանչցուած ի վարդոյ և ի Մուշ, ի Բեհեանի, յԱյնթապ. — C. Calverti ի Թորթում. Բարբրդ. — C. Commutatus ի կողմանս վանայ և Գարիժու. — C. Holosericeus ի Բարբրդ, Պոնտոս, Այնթապ. — C. Pediculatus ի կողմանս Խարբերդի, Ամշայ, Մէրտինու. — C. Galaticus, ի Բարբրդ, Պէրէրէթի մասէն, Այնթապ. — C. Germanicæ, այսինքն Գերմանիկէ Մարաշոյ. — C. Scammonia ի Սպեր:

2515. Պատելիս. Պատելկ. Պտելիս. ՊԹելիս.

Ար. է չքենց Պիզգիլիս. և նշանակէ Սեխ. տես զայս: Հին Բժշկարանն միշտ Պատելիս գրէ և ոչ Սեխ. վաստակոց գիրքն ի վերնագրի (ԾԿԸ զլիսոյ) Պատելիս գրէ. ի կարգի բանիցն՝ Սեխ:

2516. Պատեղ. — Տես Կրաստեակ:

2517. Պատեղիճ.

Յիշուի ի Գիրս Ագաթանգեղոսի ի կարգի փշեղինաց. — Տես և Պատաղիճ:

2518. * Պատիեան. — Տես Ռազիան:

2519. Պատընջան. Պատնիճան. Պորինճան. Պատնճան. Պանճան.

Գրուած է և վաղըման, վաղըման, կոչուած և Հատաղ և Սիրուի Ամիրտու վաթ գրէ « Պատնճան, որ է Բանայ, (باني) Մուշտու, Ժեմ Մաղտ, Ժնց « Ռաղտ), Հիս բլ-վայտա, Հատաղ, և Հո. Մ'անճան ասէ, լուսն այն է որ ծաղկն կապուտ է, կակուզ լինի. տաք և չոր է Բ տարածա, և չորացընող է. և թէ եփեն զինքն գէր մտով օգտէ հին հազերուն. և թէ լրին մէջն եփեն և խմեն՝ զսալտան հանէ և լուծէ. և թէ քացխով եփեն՝ զլերդին և զփայծզան կալուածն բանայ և զսափրան խաղեցընէ, և զսասմաքին զիջութիւնն տանի. և թէ Աղտորով լինի՝ զփորն կու կապէ. և թէ զիր կոթն և զտերեւն չորացընեն և ծեծեն ի վերայ սրնկան ցանեն, օգտէ. և իր ձէթն օգտէ ձեռաց և ոտից ուռէցին՝ որ ի հովութենէ լինի. և իր այրած մոխիրն օգտէ կերվածին և զտկներն տանի. բայց սալտա կու յաւելցընէ. և զիր շարութիւնն տանի եղն: Իսկն. ասէ, թէ Պատնճանին զլեղինն առնուն և Դղըմի եղով զմէջն շնուն և ի փուռն զնեն որ եփի, և զան ձէթն քամեն և հանեն և պահեն. և սկանջն որ ցուրի՝ կաթեցընեն, յայն պահն զցաւն խաղեցընէ: Եւ թէ զմանրն ի աղի լրի մէջ եփես, և զայն լուրն քամես, և այն լրին շափն հոտով ձէթ

» խառնեա, և այնչափ եփես որ լուրն հատնի և ձէթն մնայ, և եփած Պատնը՝
 » ճանով ծեծես և ի կոթիծնուն վրայ դնես, բայց դիշերն դնես՝ որ մինչև լուսն
 » կենայ, և ցերեկն այլվի եղով ծեծեն և դնեն, շատ օգտէ. փորձած է: Եւ թէ
 » գլեղին Պատինճանն կտաւատի ձիթով եփես և քամես և դեղին մոմ խառ-
 » նես, և որոյ կրունկն և մատնմիջերն և ի ձեռքն օծէ, և թէ գիր հունան
 » երկու գրամ և լեղի Նի ձէթ 8 դր. ծեծեն, կամ Մանուշակի ձէթ խառնեն
 » և օծեն սրնկան, շատ օգտէ. փորձած է. Ատուժով »: Ուրիշ Թժշկր. մ'այլ
 համառօտ գրէ. « Պատինճանն չերմ է և չոր. ով ուտէ՝ մազձ արկանէ և այ-
 » տումն, և պրընկոտ (չեչոտ) առնէ. բայց քացախ խառնեա, արագ կարէ գիր
 » շարութիւնն »: — Դեղինը յիշելով կ'իմացընէ որ կայ և կարմրագոյն կամ
 նոնագոյն, այլ և Սպիտակ. որք ձեւով այլ զանազանին, վարընգաձեւ, մահկաձեւ,
 քսակաձեւ, կլոր, եւ այլն: — Մի. Հերացի Պատընջան գրէ (եր. 128) և պա-
 տուիրէ սաւտայիկ բնութեամբ չերմ ունեցողին շաւլ ուտելու: — Լ. Solanum
 esculentum կամ Melongena, ֆ. Mélongène. Ռ. Меленъ.

2520. — Պատնիման վայրի . վայրի Պատնջան .

Ար. قحطی բառով Հ. այլ Հատաղ կոչուած է, Ամիրտ. գրէ « Հատաղայ,
 » ոմանք ասոր վայրի Պատնջան ասեն. . և ասոր ի վերայ փշկներ կաւ լինի. թէ
 » զան փշկներն ծեծես և դնես ի յայն տեղուն վերայ՝ որ կորն (կարին) է հա-
 » բել. օգտէ. և Թ. այս խոտիս՝ Տօնկոզ պոսրրադի ասէ (Խոզի ծունկ). և տե-
 » բուճ նման է Պատնջանին տերեւին »: — Լ. Solanum Cordatum. — Հին
 Թժշկր. կէս գլխացաւի գեղ գրէ վայրի Պատնջան:

Պատուտակ. — Տես Պատառոռկ:

2521. * Պատրանճպուէ. Պատրըմբոյէ.

Տես Թուրինճխոտ. որոյ ազդակից կամ տեսակ է և հետեւեալն,

2522. Պատրխան .

Պմուկի նմանի (թ. 477). և աւելի հաստկեկ ճղերով, որոց ծայրն է խուրձ
 մի ամենամանր Կորեկի պէս ծաղկանց, գեղնականաչ. որչափ գուշակուի չորցած
 խաւրուածէն ի կարնոյ.

2523. Պատրուճ .

« Ինքն ազգ մի է ի Ըռեհաններուն, և տիրեն լայն և կապուտ է », եւ այլն.
 տես Հաւաք, ուր և վաստակոց որոց հեղինակին կամ Թարգմանչին տարակոյսն
 յիշուած է:

2524. Պարանդ .

Պ. երեւի բառս, որոյ՝ « Հայն Ուլկուժիլ ասէ »: Տես զայս, Թ. 1247:

2525. Պարզատ.

Որ է Բարզատ, « կ'ըսէ Ամիրտ. և ի կարգին. գրէ. « Բարզատ որ է Ղիննա » (Հինա. Պրնա) և Պ. Փիրզատ կ'ասեն. ինքն Գ ցեղ է, մէկ Պահրի, մէկ Պարրի » մէկն Ճապարի է, և երկու ցեղ են, մէկն սպիտակ և թեթեւ և չոր է, և մէկն » կակուղ է և գեղինբար է որպէս մեղր, և յիստակ և սուր. և այս ցեղս լաւն » է, և բնութիւնն տաք է. օգտէ մահացու գեղոց և օձահարի և կարճահարի. » և թէ ի մարհամն խառնեն և օծեն՝ զխողքն հայէ. և թէ յիրմէն երկու դրամ » չրով խմեն՝ օգտէ սնկանն և տանի, լաւն այն է որ երեք հետ խմեն, իսկի » այլ չիինի », ևւ այլն:

2526. Պարկուկ.

Ռամկորէն անուն Միրանի առ մեզ, նոյն և Ար. برفوق. բայց տեսակ մի Միրանի է, վայրին կամ կրտէն չգատուողն, որ Թ. կոչուի Զերտայի. L. Prunus Pseudoarmoniacus. իսկ Յ. նոյն Հ. անուամբ կոչեն զծառն Աղրիոպէրիքոռքիա, որ է ըսել վայրի Միրան, Βαριχόκκια կամ Πρακόκκια, ուսկից և L. Præcocia, պտուղն այլ աւելի նմանածայն Յ. Βαρικοκκον, L. Præcox, և այս լատին բառէն (որ ըստ իրենց լեզուին վաղահաս նշանակէ. իտալ. այլ կ'ըսուէր Βαροכה), կարծեն քննաբանք ոմանք արեւմտեայք՝ ծագած զՊարկուկ անուն, փոխանակ ասկէ իրենցը ծագած ըսելու. վասն զի այն երկիրն որ ընծայեց իրենց պտուղը, հարկաւ կ'աւանդէր զանունն այլ, որ՝ Թերեւս ի պարկ բառէ ծագած է, ասմկորէն նմանութեամբ:

2527. Պարոն Բանջար.

Համեղ ուտելի բանջարեղէն մի, զոր յիշեն նոր տեղագիրք մեր առանց նկարազրելու. (Փորձ, Բ, Բ, 81. — Աթանաս. եր. 78. — Մանան, 451):

2528. Պարուրենի ?

Անծանօթ է յիշողն և զուգող L. բառի Spartium ? Թերեւս ըլլայ Spartina, որ է Սրած:

2529. Պարպ ?

Հին բժշկարանն Գողարգելի դեղ գրէ, « Պարպոս լուշու եփէ և խմցո ». կարծեօք համարեցանք թէ բառին ուղղականն Պարպ ըլլայ, իսկ Լուլու՝ Թուի լիլիկն վայրի ծառոց. բայց երկուքն այլ Թողումք ի քննութիւն յաջողաց:

2530. Պարսամայ խոտ ?

Կամարկապցին փորացառի կամ խիթի դեղ գրէ, « Ա՛ն Պարսամայ խոտն 100 » դրամ, և 300 տրէմ չրով եփէ՝ որ 100 տրէմ լուր մնայ, զայն լուրն քամէ, դիր » մէկ գիշերն յայազն, տուր զայն մարդուն. օգտէ »: — Թերեւս նոյն ըլլայ վարսամ կամ վարսաման, զոր տես ի կարգին:

2531. Պարտքաշխուց կամ Պարտփախուց

Անուն տեսակ մի Խաղաղայ:

2532. Պարտիզի տակ ?

Այս այլ փորացաւի դեղ գրած է Բժշկարան մի. « ԶՊարտիզի տակն հանն և գինով եփէ, և տուր որ խմէ »:

2533. Պացախ կամ Պացաղ.

Ըստ Բաղիչեցւոց (հաւանորէն և այլոց) է Կորնզանն կամ Զուխրակն. Աղթարու կան գրոց մէջ ըսուած է, « Երբժամ ձին և մարդ զառա (բորոտ) լինի, առ զՊա- » ցախի արմատն, եփէ չրով և նովաւ լուա. Աստուծով լուանայ »:

2534. Պացխար.

Թուր Գղմագիճ. վասն զի Թ. Կազմամ տղամի կ'ըսեն եղեր ի կողմանս Տրա. պիզոնի, ուր լսուի և հայերէնն:

Պեզա. Պեզէ. — Տես Բեզա:

2535. Պելխի.

Պապիի և Թեղւոյ նման ծառ, որ Լ. կոչուի *Carpinus Betulus*, ֆ. *Charme-Bou- leau*. Արցախոյ կողմերում գտուի և կոչուի այն անուամբ:

2536. * Պեղանոս.

Լսուի ի կողմանս Սերաստիոյ, և հաւանորէն է *Πήγαρον*, Փեղեմայ: Տես Թ. 2500:

2537. Պերսէի ծառ.

Ռոչքեանն վկայութիւն բերէ ի Մեկնութենէ Մննդոց գրոց. « Են և պտուղք » մահարերք, որպիսի է Պերսէի ծառն ». ինքն իր կողմանէ մեկնէ, և ստոյգ է ը- սածն, « Ծառ՝ որ գտանձաձեւ պտուղ և զկորիզ նչոյ նման ունի. այն որ ի Պարոս » լինի է մահարեր պտուղ նորա, իսկ որ յԵգիպտոս է՝ ուտելի է և բժշկական »: Լ. *Persea* կոչուի, ֆ. *Avocat* կամ *Avocatier*, և հասարակ տեսակն՝ իր պտղին ձեւով *Poire d'Avocat*. Ծառեր և թուփեր են 40 կամ 50 տեսակ, Ասիոյ և Ամե- րիկոյ տաք երկիրներուն. — Պելթար՝ Լեպախ կոչէ, յորմէ և Լ. P. *Lohek*. այս ծառս արմատաձեւ կանաչ անախորժ պտուղ մի ունի, կ'ըսէ, բայց ըսա Դիոս. կորիտեայ՝ ստամբի յարմար է, կ'աւանդէ թէ ծառս՝ ի Պարսկաստան (որոյ ա- նունն առած է), թունաւոր էր, յԵգիպտոս բերուած՝ անմլնաս եղաւ, բայց հիմայ չի գտուիր այս տեղ:

2538. Պեւեսկի. Պեւկէս.

Ս. Բարսղի Վեցօրէից մէջ (եր. 97) կարդաւք. « Երժամ վարիցին առ ար-
» մատովք երիթ ուռն պարարտ ի Բեւեկն՝ ի Պեւկէս փայտէ, իսկ եւ իսկ դառ-
» նութիւնն ի քաղցրութիւն եւ յանուշութիւն » (փոխի): Բնագիրն Յ. է Սսւչդ,
որ նշանակէ Շոճի կամ Մախր:

2539. Պզոտի.

Հին Բժշկարանն գրելով դեղ մի զուգուած Սքպինէճով, այս անուան վրայ
նայնպէս հին գրով գրած է Պզոտի. իսկ միւս բառն է Ար. سكبينيج . « Ինքն
» խէժ է գիշահոտ եւ կարմիր. աղէկն անուշահոտ եւ յիստակ. . եւ շուտ տրորի. .
» օգտէ. . ամենայն հով լրացաւութեան եւ աչից մթնալուն, եւ յորոյ աչքն սկըս-
» նաւ շուր իջնուլ՝ օգտէ. եւ զկոպին Թանձրութիւնն տանի՝ որ օժէն ի կօպն. .
» եւ զտափակ եւ զերկայն ճճին եւ զքարն կու հալէ. . Սոցել է Պտ. Թէ ինքն խէժ
» է բուսոյ որ ի Զինեան? կու նմանի. . . լաւն այն է որ ի դուրսեւն սպիտակ
» լինի եւ մէջն կարմրագոյն լինի, եւ հոտն սուր լինի եւ համն կծու, եւ ի շուրն
» շուտ հալի, եւ իր աղէկն Սպահանի լինի: Իպտ. ասցել է. Թէ լաւն այն է որ
» դուրսեւն կարմիր լինի եւ մէջն սպիտակ, եւ հոտն միջակ լինի Հլթիսին եւ Զին-
» նային. . եւ քան զՉարհոտն բռնաւոր է, նուրբ անող է. . . եւ իր առնելուն
» շափն՝ մէկ դրամէն մինչեւ ի մէկ մթխալ », եւ այլն: — Այս խէժս Լ. կոչուի
Sagapenum, իր բերող ծառն՝ Ferula persica (Նարդէս պարսկային), բայց շատ
ծանօթ չէ. տեղաքներէք այս տեսակ Նարդոսը տեսած են եւ ի կողմանս Նախն-
ուանի:

2540. * Պզրկատուն. Պզր ըլ-ղաթուն.

Որ է Ար. سچقچ: Պզր գորունա. « Հունդ է նման կտավտի եւ այլ փոքր է »,
կ'ըսէ հին Բժշկարանն. եւ դարձեալ. « Հասպայանգոս՝ Պզրկատուն կամ կտան
» փշի ունդն ». այլք պէտպէս գրեն. մին, « Գաղտիկուրի (Չղախոտի) սերմն՝ որ
» է Պզրկատուն ». միւսն « Պզր ըլ-ղաթուն, Գթանի հունտն կամ կտաւատն »:
— Տես կտաւախոս:

2541. Պզրուկ. Պզուր.

Տես Բզրուկ: Բայց անկէ տարբեր բոյս կամ նիւթ է յիշուածն ի Բժշկարանի՝
դեղ երիկամանց խոցի. Պնոռչիք Պզրուկ, կամ ըստ այլ օրինակի Պնոռչիք Պզրոչի:

2542. Պէժանկ.

Առանց բացատրութեան յիշէ ոմն ի նոր գրողաց (Տէր Աւետ. 48) Թուի նոյն եւ

3543. Պէժոք.

Ըստ Մէհերեան Մշեցւոյ Նոր՝ հեղեղատի խոտ մ'է, նման Թրթնջուկի, տերեւ- ներն նման Գդմոյ, մազմզոտ արմատով, դեղին գունով և անուշ հոտով. վեր- քերու և բորտութեան դեղ կ'ըլլայ. — Այս անուան մօտ է Պ. Բիչեք, որ է ըստ բուսաբանից Hedera helix.

* Պէնն. Պանն. — Տես Բանկ և Աղոսաշրանկ, Թ. 59:

3544. * Պէշ. Պիշ.

Ար. جيش . « Որ է, ըստ Ամիրտ. Պաղարձիճ օրի . (ըստ այսմ կրնար Լոյսու- խոտն ըլլալ. տես զայս և Բէշ):

3545. * Պէոնիա. — Տես Մասիկոտրուշ և խաչափայտ:

Պթելի. — Տես Պատեխ:

3546. Պիարի խոտ.

Յիշուի ի կողմանս Սասնոյ, Առուոյտի նման, Թերեւս և ի նոյն ազգէ տեսակ մի՝ դեղին ծաղկով:

3547. Պիլիլի.

Յիշեալ ի Խոտուջուր:

3548. Պիլիպիլի.

Ըստ Տրապիզոնեցւոց տեսակ մի Թրթնջուկ է. Լ. Oxalis corniculata. Փ. Oxalide cornue.

3549. Պիլիսկի.

Ար. عسکلی . « Այսոր Թ. Չօպտն սուզակի ասէ (Հովուի քամոց). և կու ա. » սեն Թէ հովիւն զկաթն այսով կու քամէ. և այս երկու ճուղ կու լինի. և յեր- » կան կու լինի, և տերեւն ի Տորունին տերեւն կու նմանի, և միրգն բաւորկեկ » և մէջն փոս՝ ի պորտ կու նմանի. և Թէ զմիրգն և զճիւղն և զտերեւն քամես, » և զլուրն գինով խմես, օգտէ օձահարին. և Թէ յականջն կաթեցընես՝ զցաւն » տանի. և Թէ հին ճրագեղով սպեղանի առնես և դնես ի վերայ խոցին, օգտէ » և հալէ և չքի, և խալըսի Աստուծով »: — Կարածի խոտ կոչուած բուսոց ցե- ղէն է. Լ. Galium Aparine, Փ. Aparine (Թ. 1560).

2550. Պիծակ խոտ կամ Պիծեկի խոտ.

Բժշկարան մի քառասարի դեղ գրէ. « զՊիծակի խոտն աղա, և զաեղն ձիթով » օծէ, և լոսած խոտն ցանէ »: Ուրիշ մի ուսացաւի և ոտնացաւի, « Ա՛ռ զՊիծէկ խոտն և ծեծէ, և ի վերայ ուղբին գիր, զցաւն կտրէ »:

Պիծխի. Պճղի. Պձղի. — Տես Բիծխի:

2551. Պինակ.

Հին Բժշկր. գրէ. « զՊինակ բանջարն չորցո և աղա ձիթով, յարո և ան ի » վերայ ջերմօղերմ, և կապէ ի վերայ (նետահարին), և թող որ խաղվրտի, ապա » ձիթով օծ, և զնոյն դեղդ արա »: Գուցէ վերոյիշեալ Պիծակին հետ նոյն է (!):

2552. Պիստակ.

Ար. Թ. Յոստագ կամ Յրասագ. قستق . Լ. Pistacia. Փ. Pistachier. — « Ինքն նման է Ֆնտուղի, կ'ըռէ Ամիրտ. բայց յերկայն է. աղէկն ի Շամ լինի », ինչպէս ծանօթ է հասարակաց: Թէ և տաք կլիմաներու յատուկ է, մէկ տեսակն գտուի յՈւտի նահանգի. — տեսակ մ'այլ P. Matica ի կողմանս Ղերայ (Խոյ): — Պիստակի եղն աւելի գործածական է քան զպտուղն: Հին Բժշկր. գրէ. « Ֆատուխ, տաք ու չոր է յ'Յ արճ. և այլ չորութիւն չունի քան այն քիչ լեւ » զութիւնն, և փոթոթ է. և բանայ զլերդին ճանպահ և զեր(ա)կնոյն. օգտէ » ստամաքի. զի տասցին բժշկապետքն, թէ ոչ կարենք ասել որ Ֆատուխ ստա » մաքի ահակէ, և որ ուտէ՝ թող կեղեւած ուտէ, տաք բնութիւնն շարքով, և » հով բնութիւնն՝ մեղրով. լերդի լաւ է իր ձէթն բնական, որ ի գիճէ և ի » հովէ ցաւի »:

2553. Պիւօլ ?

Եթէ ուղիղ է գրուածն, վայրի բանջարեղէն մի է, ըստ Մանան (եր. 451):

2554. Պիօխի ?

Այս այլ տարակուսական է, թերեւս Պիծխի ըլլայ կամ Պեխի, Արցախային ծառոց կարգին գրուած կամ տպագրուած ի Մեղու օրագրի, (ԻԲ, 83):

2555. Պլանուկ.

Այսպէս կոչուի Արցախոյ կողմերում հասարակ Մալխիինդն, Լ. Conium Maculatum, Փ. Ciguë tachetée կամ Grande Ciguë.

1. Աւելի ուշին կամ ուրիշ յատկութեամբ յիշուած է (յղբազանեմ) Պիւօլն Թուրան:

2556. Պլիւն. Պալիլան.

Բժշկր. մի գրէ իբրև զատ զատ բոյս. « Հիշիձ, և Ամիւձ, Բրեյիձ և Պրեյիձ, » զամէնդ ի կտէն սրբած », եւ այլն, դեղ զուգէ. ուրիշ տեղ այլ գրէ Պրեյիձ Ար. իսկ Լ. Պրեյիսէ. Ամիրտ. գրէ « Պալիլան (بلبل), ինքն բոլոր է զէտ Գոլթոր, և » մէջն կուտ յինի, աղէկն այն է որ նոր և անփուտ լինի »: Դարձեալ գրէ. « Պա. » լիլան, որ է Բեյիյեձն, ինքն Հալիլաներուն է. լան այն է որ դեղին լինի և ա. » մուր. չոր և կապող է. և օգտէ զլիտուն ցաւերուն. և թէ ծարուր անես և յաչքն » քաշես, զաչքն սրացնէ և ուժովցնէ և զարցունքն կտրէ. և թէ այրես և օձես » զարտեւանունքն բուսցնէ. և թէ գինքն ուտեն՝ զղղերն ուժովցնէ, և չթողու որ » մարդն շուտով ծերանայ », եւ այլն — Լ. Փ. Bellirio կամ Terminalia bellirica. Փ. Badamier. — Պէլթար կ'ըսէ թէ ի Հնդկաց կու գայ Պալիլան, և հին ատեն շատ պիտանի էր պտուղն ի դեղորայս, նոյն համարելով կամ լաւ եւս չփոթելով ընդ Հլէլիճի (տես Հալիլա, թ. 1590), բայց գտնէ նմանութիւն մի պահանջէ անուան նմանութիւնն և մէկ տեղ յիշուին. մանաւանդ որ 100 տեսակի չափ ծառոց և թփոց ունի ասոնց ազգն: Նոյն թուի և ուրիշ Բժշկարանի մի Պիլիւն գրածը, գի Լ. այլ Պիլիթիս կ'ըսուի այն տեղ:

2557. Պլկանդի.

Արցախային ծառոց մէջ յիշուի և այս. (Մեղու, իԲ, 83):

2558. Պլիտակ.

Այսպէս գրեն Բժշկարանք՝ Սիրքէհիպին (Քացախամեղր) զուգելու նիւթոց կամ հունտերու հետ. թերեւս ուղղական բառն ըլլայ Պրէ:

2559. Պկամ?

Թոյքեան գրէ, թէ Մորինման խնկահոտ խիժով ծառ մ'է. « զանկոյզս բերէ նման Բեւկան, բայց փոքրագոյնս ». և վկայութիւն բերէ յաշխարհագրական գրոց յիշուած՝ Փայտ Պկամ, և Լ. Picea. Երչէ եւ վայրի Պկամ, Լ. Piceastra.

2560. * Պղատան.

Յիշած է բառհաւաք ամս. երեւի թէ տառադարձեալ Յ. բառն է, Πλάτανος, և Լ. Platanus, որ է Սօսի ծառն:

2561. Պղեղ.

Շատ հաւանական երեւի՝ որ չէ Պղղեղն, այլ ուրիշ անծանօթ բուսեղէն մի. վասն զի բաւական լաւ գրուած Բժշկր. մի երկու անգամ այսպէս գրէ՝ զլիսացաւութեան դեղ, ուրիշ նիւթոց հետ խառնելով:

2562. Պղպեղ. Պղպեղենի.

Բամկորէն Տաքքեղ կ'ըսուի՝ բնութեանն յարմար. Ար. Գրիգորի կամ Գրիգորի, **جفلس**. Լ. Piper. Փ. Poivre, Poivrier, Ռ. Перецникъ. Ամիրտ. գրէ Ար. բառով, « Զլֆուլ, ինքն հունտ է և երկու ազգ է, ի Հնդկաց գայ, Սպիտակ և Սեռ, » աղէկն Սպիտակն է... Զո. Պիպերս ասէ. որ է Տաքքեղն, որ է Պղպեղն ». յետ յերկար յիշելու օգուտները՝ գրէ առանձին. « Գրիգորի Սպիտակ, նման է Պղպեղին » ծառին և Նոան ծառ կու նմանի: Գալիսնոս ասէ, թէ առաջի միտքն Պղպեղին » Տարի Պղպեղն է, այնոր համար որ նուրբ է քան » զՊղպեղն (տես Դարապղպեղ). և ասցել են թէ » Պղպեղին խակն Սպիտակ Պղպեղն է, և յորժամ » հասնի՝ սեւ լինի. և ասցել է Պ. թէ քանի որ » հարցայ և պատվեցի) ? պատմեցի) վաճառական, » նուն վասն այս դեղիս՝ որ ի Հինտ կ'երթային, » և ասացին ինձ, թէ Դարի-Պղպեղին ծառն ի » զատ է. և Պղպեղին ծառն ի Պանկայայ է. և » այն որ կ'ասէ՝ թէ Սպիտակ Պղպեղն՝ Սեւէն չէ, » ի զատ է, չէ ստոյգ: Եւ գրոցո շինողն ասացել է » թէ Սպիտակ Պղպեղն մեծ է քան զՍիսեռ, բո » յոր է և կոկ է », եւ այլն: — Պղպեղի ծառի տեղ թուսի Պղպեղի կոչէ բնագիր մի, ըսելով, « բնու » թիւնն ազդէ Բեւեկնոյն և դոյնպիտեաց և Թոփոյ » Պղպեղին՝ առաւել շրմուսթիւն »: — Պղպեղի ա » սացեալ այլեւայլ օգուտները յիշելէն ետեւ՝ Ա » միրտ. կ'աւելցընէ տեսակ կամ ազգ մի եւս, ա » նուանելով



Պղպեղ.

2563. — Զլֆուլ մուսա. որ է Պղպեղին ծառին տակն. և ոմանք ասեն թէ մանր « տակեր է, Ասա » բոն կու նմանի, և զոյնն կանաչ կու լինի, և ինքն » ի Չինու կու գայ. և միտք ունի, նման է Թուրին » շին կըտին, և օգտէ խուլինճին (ուռէցքի) և նկրի » սին. և թէ չգտի՝ իր փոխանն Նարմուշկն է »:

2564. — Զրի Պղպեղ.

Ար. Գրիգորի ըլ-մայ. « Որ ի կանգնման և ի քայլման ջրերն կու բուսնի, և որձայ » ունի և պուղուն պուղուն է, և պտուղ ունի, և ճղերն մէկմէկ կանգուն է. և տե » բուսն նման Աննուխի տերեւին. և շատ կու լինի և կակուղ կու լինի, և ի տերեւին » տակէն կու ելնէ, և կուզ կուզ կու լինի: Եւ թէ զպտերեւն և զմիտքն սպեղանի առնես և դնես ի վերայ պաղլամի ուռէցին՝ տանի », — Փ. այլ Զրի Պղպեղ կու շուի, Poivre d'eau, իսկ Լ. Polygonum hydropiper (Մատիտեղ Նրապղպեղ):

2565. — Կեղեւ Պղպեղ.

Այսպէս կոչեն Բժշկարանք ոմանք Ղրթարիճենիկն. տես թ. 261.

2566. — Կոճ Պղպեղ.

Որ Կոճապղպեղ անուամբ բացատրուած է, թ. 1465:

2567. — Լօլօզ Պղպեղ.

Այսպէս գրուած է տեղ մի. բայց թերեւս Պօլօզ ըլլայ, և նշանակէ Երկոյն Պղպեղը, *Փ. Poivre long, Լ. Piper officinarum* կամ *Chavica Officinarum*, որ տարբեր տեսակ մի է Պղպեղենեայ. և նախ ի Սուամտրա կղզիէն բերուեցաւ յԵւրոպա և յետոյ ի Ճեաւայէ, բայց աւելի յատուկ համարուի Պենկալային:

Յիշե՛ք հօս որ հասարակ Սեւ Պղպեղն՝ առանց հատին մաշկէն հանուելու չորցածն է. մաշկէն հանուած չորցածն կ'ըլլայ Սպիտակ, իսկ բոյսն՝ որ պատասաուկ մ'է Բաղեղան և Որթոյ նման՝ միշտ Սեւ կոչուի. *Piper nigrum*: — Ի վաճառականութեան կամ տնտեսութեան՝ յայտ է որ Արարացիք նախ մտուցին կամ ծաւալեցին զՊղպեղ յարեւմտեան Ասիա և յԵւրոպա, ուր Խաչակրաց և Քարոզաց ժամանակ (ՃԳ-Դ դարք) աւելի յաճախ բերուէր, բայց միշտ Թանկագին վաճառք մ'էր, մինչև որ ծովային նոր ճանապարհք բացուեցան: Վերայիշեալ դարուց մէջ Ռուբինեանց ախարհահոշակ նաւահանգիստն Այաս այլ՝ մեծ շտեմարան մ'էր Պղպեղի: Բայց Պղպեղի ծանօթութիւնն շատ հին էր ի Հայս և չէր կրնար վրիպել իրենց աշխարհաշրջիկ վաճառականաց աչքէն. Խորենացոյ աշխարհագրութիւնն յիշէ զՊղպեղ ընդ Սնգրուեղի ի Հնդիկս, իսկ իրենց գիտնականքն կարդային յիմաստասիրական գիրս Սահմանաց՝ վերայիշեալ գունոց տարբերութիւնը. « ԶՍպիտակ Պղպեղ և զՍեւա՝ նմանս միմեանց ասեմք գոլ ըստ » Վերմայնոյն.. այլ ըստ առաւելութեան և ըստ նուազութեան, քանզի Սեւան առաւել Վերմայն է, իսկ Սպիտակն նուազ »: Մեկնիչն այլ (Առաքէլ վ.) կ'ըսէ. « Երկու տեսակք են ի Պղպեղն, մին Սեւ և որպէս բոլոր հունք, որպէս Մանա » նեխ սերմն, զոր Յիֆո կոչեն, իսկ միւսն Սպիտակ՝ կոճ է, զոր Զանջարի կոչեն.. » Սեւն առաւել Վերմ է քան զՍպիտակն »: — Բժշկը. մի յիշէ Սպիտակ Պղպեղը փայծեղի դեղոց մէջ:

2568. Պղպեղիկ.

Յիշուած յօրինակս ինչ բառից Գալլիենոսի, ըստ Ստ. Ռոչքեան, որ և գրէ. « Է խոտ՝ որոյ պտուղն զՊղպեղի կօուութիւն ունի *Piperitis siliquastrum* ». Այս անուան փոխան հիմայ բուսարանք կոչեն *Lepidium latifolium* (լայնատերեւ Նուարտակ), *Փ. Passerage grande*, որ նշանակուած է Եփրատայ եզերքում և ի Կովկաս: — Ասկէ տարբեր երեւի

3569. Պղպեղխոտ.

Որ լսուի ի կողմանս Տրապիզոնի, ու բարակ ճղերով և Ուռույ նման երկայն տերեւներով բոյս մ'ի է, մանր հասկերու նման մանրկեկ բաց կարմիր հատիկներով, ճղերն այլ նոյն գունով են. բուսաբանք ճանչցան զայն Լ. Polygonum Lappatifolium (Մատիտեղն Աւելուկի տերեւով), ինչպէս Հատիկներն ալ նմանին Աւելի հունտերուն, գտուի և ի Կովկաս, յԱսորեստան, ի Եփրիկիս:

3570. Պղվտակն.

Ամիրտ. բառագրոց մէջ յիշուի « Հոտով Պղվտակ, որ է Սնդրին տակն »:

3571. Պնտուխ.

Յիշուած է ի դեղորայս ընդ Պզուրի կամ Պզրուկի, տես զայս, Թ. 3543: — Ասկէ տարբեր է ծանօթն

3572. * Պնդուկ. Պնդենի.

Այսպէս ի հայ փոխուած Թ. Յընտոզ անունէն, որ է Արքայկաղինն:

Պոզի. — Տես Բոքի:

3573. Պոլտիկ.

Յիշէ նոր բառհաւար ոմն առանց բացատրելու, թերեւս ըլլայ հետեւեալն

3574. Պոլոնիկ.

Որ է ըստ ռամկաց Սեւ-պորտիկ Լովիան. Թ. Պեօհրիշէէ:

3475. Պոլտիկ.

Այսպէս կոչեն ի Փոքր Հայս տնտեսութեան մէջ ծանօթ և համեղ կարմիր խաւարտն, որ Յ. Փ. Թ. կոչուի Tomate, Փ. նա եւ Pomme d'amour. Լ. Lycopersicon (Պայլասպան), հիւթն համեմ կ'ըլլայ կերակրոց:

3576. Պոմօղի.

Ի Պոնտոս լսուի, իբրեւ Պափնոյ նման ծառ, Թ. կոսկով? աղաձի: Թուի Բիծիսի. Թ. 347:

Պոկղակ. — Տես Պոպղակ:

2577. Պող. Պողիկ.

Բանջարեղէն մի ծանօթ ի Հայս. տես Բեխի, Թ. 331.

2578. * Պոյ.

Տես Հացհամեմ և Հուլպա:

2579. Պոչուկ.

Որսման պէս Յորենի արտերը բուսնող մանրահաս ընդեղէն մի, Թռչնոց և անասնոց ուտելի, քնածակար մարդոյ:

2580. Պոպղակ. Պոկղակ. Պոպպղակ.

Վայիննոսի բուռից մէջ գտուի, և շատ տեղ քառախ գրուած է (Պոպղակ). իսկ համանիշ Յ. գրուած է և իիդապոպեր, կամ իիդապոպեր, որոյ ստոյգն գուցէ ըլլայ Յ. Լ. Hieropteris կամ Horiopteris, անուն Պտեր բուսոց. Ռոշքեանն գրէ Hypo-ricium, որ է Մկանաղիքն կամ Գոնամբոուն: Տեղ մ'այլ գըրուած է Դեղին խանքարիոն:

2581. Պոպոզի ?

Պաղատու ծառ մի կ'ըսուի. (Արտարատ, Դ, 228):

2582. * Պուկ.

Կամ Պոյ, Ար. Ե Պէթարայ. « Ինքն Հնդկաց խիարն է, » և ի կարարին ? խիարն կու նմանի:.. Ասէ Պո. Թէ Ինքն » Հնդկաց միրգն է և ի մեծ խիար կու նմանի. և ասացել են » Թէ Հնդկաց Կուռն է. և այլ ասացել են Թէ Ղուսայի Հնդին » է (կամ Ղուսայի հնտէն) և կամ վայրին է. և կեղեւին Շոշ » կ'ասեն. և միջի ճրագուն Պուկ կ'ասեն, և պտղին Թոշ կ'ա- » սեն:.. Գրոցս շինողն ասէ, Թէ Պուկն Հնդի է, և իր մեծութիւնն Զարտալուի » չափ է և այլ բալոր, և փոքր է. և լան այն է որ քաղցր է. և իր ծառին ան- » նունն խամայի խատայ կ'ասեն: — Եւրոպացի գիտնոց սմանք՝ խիարի ցեղէ կարծելով կոչեն Cucumis Indicus, բայց Թարգմանն Պէթարայ Կարընճենեաց ցեղէն՝ է կ'ըսէ, և Սերկեւի չափ մեծ, որոյ համար կոչուի Oegle Marmelos. ետքի բառն Սերկեւիչ նշանակէ Պորտոգալաց լեզուաւ:



Պոյ.

2583. Պուկնուկ.

Տեսակ Պամի ծառոյ : յիշուի ի Տարօն, կակուղ և ճերմակ փայտով: Տես Բառում:

2584. Պուճուճ.

Ամիրտ. բառէ բառ փոխելով կ'ըսէ, Պուճուճ, որ է Սաւար ըլ-տարֆա, իսկ այս է Յատպէ, քչձԵ. սա այլ « Մոյու պտուղն է. լաւն այն է որ նոր լինի.. » և կապող է, որոյ լեզուն թուլանայ՝ օգտէ.. և ակուային ցաւուն օգտէ.. և « թէ՛վոտարածին վերայ դնես՝ օգտէ, բուսցընէ, յորժամ ի վերայ կապած լինի » : — Փռանկ թարգմանիչն Պէյթարայ այլ այսպէս ճանչնայ, Fruit de Tamarix. ըստ այսմ Պուճուճ հասարակ անուն կ'ըլլայ նման պողոց վայրի ժառոց:

2585. Պուն.

« Որ է Պուում, » ըստ Ամիրտ. տես զայս և զԲեւեկն:

* Պուշի Տարպանդի. — Տես Չքատակ:

2586. * Պուպալ?

« Լարանֆիլն է ըստ Բժշկր. և ինքն նման է Ճավգպուէին, հով և չոր է Բարձն.. օգտէ ամենայն տաք ուռէցին » :

2587. * Պուսիլա.

« ինքն ի Ճուլինարին ցեղերուն է », ըստ Ամիրտ: Տես Դռան ժաղիկ:

2588. Պուսը. Պուսիր.

Բժշկարան մի զուգէ այս անունս ընդ Խարաքի? « և զկուտն ձգէ » ըսելով կ'իմացընէ մէկ յատկութիւնը: Ար. քչԵ՛ճ նշանակէ Եղնագի, Խոնդատ:

2589-90. Պուտ. Պտի Ճաղիկ. Պուտպուտ.

Սովորաբար նշանակէ զՀարանուկն կամ Հարանու ժաղիկն. տես զայս: Դար. ձեռք նշանակէ զՇուշտնն երկնագոյն կամ Լուրջ որ և կապոյտ, տես ի կարգի տեսակաց Շուշտնի: Ուրիշ նշանակութիւն մ'այլ ունի

Պուտ. — վանական վ. իր Հարցմանց մէջ գրէ. « Չէթ ի Ձիթենեաց Խա. » կակութի լյա. — Բանջար է վայրի, որ յԱղուանս Պուտ ասեն, այլ եւ այլ « ազգ, է որ ուտի և է որ ոչ. պայծառ կարմիր ժաղիկ ունի. Սասնեցիք Խա. » կակութ ասեն. իսկ Ձիթապտուղն երբ հասած լինի՝ ձէթ հանեն, սեւ լինի « մրբալատ. և թէ Խակ կթեն՝ կարմիր և պարզ լինի » : Արժանի քննութեան է այս Պուտս այդ Հայ-Աղուանից և Սասնայ կողմերում:

2591. — Պուտ վայրի.

Յեղէ հին Բժշկարանն, իբր զեղ զօրութեան՝ ուրիշ նիւթոց հետ:

2592. * Պուտինա.

Վնասուած ստամոքի և ուրիշ ցաւոց դեղ յիւտի, Մազտաքէի, Խնկոյ, Քա-
մանի և այլոց հետ. ըստ Կամարկապոյն՝ Պ. բառ է և նշանակէ Անանուխ, ըստ
Ամիրա. Դաղձ. սա յիշէ և զՊուտինա չրեղերի, այսինքն Զրային:

2593. Պուտմ. Պտմի.

Որ է Բեւեկն, ըստ Ամիրա. տես զայն: Ուրիշ անդ այլ կ'ըսէ, « որ է Զարու »,
տես և զայս և զԲաուամ: Բժշկարան մ'այլ յիշէ զոյգ անուամբք:

2594. Պուտմ-Հասակ.

Իբրեւ մէկ բոյս՝ վասն զի չափն այլ դնէ ի դեղն՝ 14 մթիալ: Հասակ յատուկ
փշեղէն մի է, յիշուած ի Թ. 1640:

2595. Պուտուտակ.

Այս բառէն ետեւ անմիջապէս գրէ Կամարկապոյն, « Լապլապի. ինքն ի գետին
» կու ցտնեն, կու բուսնի, որ է Նօհուս »:

2596. Պուրմ.

« Որ է Մուրմ, ըստ Ամիրա. ինքն Ում ըղ-գարիանն է (Ղիլեան,) م غيلان
» և իր ծաղիկն է. և իր ումն ի Պէամուշքն կու նմանի »: — Ըստ Թարգմանին
Պէլթարայ՝ է Mimosa gummifera.

2597. Պսեմ'ն.

Ոսկիբերան Պօղ. Թղթոց Մեկն. (Ա. 399) ըստ Թարգմանչաց՝ ըսած է.
« Ընդդէմ միմեանց կայցեն հակառակք և միմեանց նմանիցեն, որպէս, Յորենոյ՝
» Որոմն, և Վարդի՝ Պսեմն »: Յ. բնագիրն փուշ կ'ըսէ, այլ աւելի յարմար է
վայրի Վարդի շատ փշոտ տեսակ մ'ըլլալն: Վաստակոց գիրքն յիշէ զՊսեմ՝ իր-
րեւ փշեղէն, ինչպէս յիշեցինք Շարալութի պահպանութեան համար ըսածը:

2598. Պսուր.

Համարելով ասարեր ի վերոյգրեալ Պուսրէ, Բժշկարան մի գրէ դեղ կերուած
ակուայի. « Թէ զՊսուրն ծեծես և օծես, օգտէ »: — Ար. Կապ Պար կամ Պուր՝
Արմաւ նշանակէ:

2599. * Պսպային. Պասպային. — Տես Կմոսք:

2600. Պալուկ.

Հասարակարար այսպէս կոչուին նոր ժլած բոյսը, կամ իրենց ծայրերն, բայց և առանձին նշանակէ զՆարմուշկ, զոր սեռ. թ. 2189:

2601. Պոնտ.

Վայրի Թղենի կ'ըսուի. բայց գրողն անյայտ է ինձ. գուցէ ըլլայ Պսեմն:

2602. Պուկոշ.

Սնուն տեսակ մի Տանձի:


2603. Պսակուկ ?

Նշանակած է նոր բառհաւաք մի:

2604. Պտեր.

Յ. բառ է Πτερύξ, նոյն և Լ. Pteris, Փ. Fougère. Ար. چتر چاب. Գէթ. յիշէ Յ. անունն այլ և գրէ چتر چاب Պրարիս Ամիրտուլ. շատ ուրիշ անուններ

յիշելով կ'ըսէ. « Ինքն տակ » է և կեղեւ ունի. էգ է և » որձ կու լինի, և լաւն այն » է որ սեւ լինի և ամուր լի. » նի... երկուքին այլ ուժն ի » մէկմէկի մօտիկ է... և յոր. » ժամ կոտորեա՝ մէջն Ֆատուխի » լինի: Առցել է Գալլիենոս, թէ » չորս մթխալ ասկից քաջէն » մեղրաջրով խմեն՝ զտափակ » ճիճին ձգէ... Ասոր թ. » Եէր աչրու ասէ » (Գետնի տակ): — Պտեր անունն հա. տարակ է անտերեւ անպտուղ բուսոց, բայց այս յիշեալ տեսակս համարուի Լ. Aspidium filix mas (որձ) կոչուածն:



Պտեր.

2605. Պտիկ. Պտուկ.

Պուան է՝ Հարսնուկ նշանակութեամբ. հին Բժշկարանն գրէ Պտիկ-Անիան:

2606. Պտկակոտրուկ.

Տես Մտփկոտրուկ և նման անուններ:

2607. Պտղախունկ.

Խորեն. Աշխարհագր. յիշէ ի Տայս՝ Սերկեւելի և Նոյ հետ զայս այլ, որով յայտնուի բուսեղէն ըլլալն անոնց նման, և ոչ սոսկ խնկեղէն. բայց տեսակն անծանօթ է հիմայ. տես և Պալախունկ:

2608. Պտղի. Պտեղեայ ծառ.

Վայրի ծառ, որ նոյն թուի ընդ Կնձնի և Քեղի, տես զայս: Յ. ասուա. դարձութիւն է, Πεδία կամ Πεδία, որ ի Յայտնաւորս (մայիս 9) ի վկայաբանութեան Ս. Յակինթոսի՝ գրուի Պտեղա-ծառ, կամ Պտեղեայ, Փտեղեայ ծառ. նոր Յայտնաւորք փոշտ ծառ գրեն կամ Փտեղա. ի Վասիլեան Յայտն. Յունաց (յուլ. 18) ի վկայարանութեան նոյն Սրբոյն յիշուի ծառս՝ իբրեւ սրբազան համարեալ յԱմաստրիացոց, և Լ. Ulmus թարգմանէ, որ է Կնձնի: Ըստ անոնց է Carpinus Betulus, Փ. Charme commun.

Պտմի. Տես Պուտմ.

2609. Պտուակ կամ Պտվակ.

Թուի Պուտ ծաղկանց ցեղէն, Սալաձորցին է յիշողն.
« Պուտն և Պտվակն ու Մատուտիկն և այլ ծաղկունք բացվին սիրուն »:

2610. Պտուկ.

Բանջարեղէն մի որ աղած ուտուի: — Նշանակէ և զՊուտ կամ Հարանուկ ծաղիկը:

2611. Պրան.

Տուղտի և Մուղտի հետ իբրեւ կակղացընող փորի՝ գեղ գրէ Անտոն՝ Վ. զՊրանի տակ. և է՝ կըտէ, իբրոտս: Սա Մատուտակն է: Տես և Պայէմ:

2612. Պրաս.

Յ. բառ է, Πράσον. Լ. Porram, Փ. Porreum, Ռ. Πορεϊ. Ար. كورج, շատ հեղ չ. այլ Քոռաս կոչուի և ասով բացատրէ Ասիրտ. յիշելով այլ եւս անուններ այս ստիակերպ բանջարեղենի. « Քուռաթ, որ է կանտանայ, և ինքն Շամի է և » Նապտի է և Ճապալի է, և այն որ Ճապալի է Յասարիոնն է (Յարասիոն, Ղոտիոց). և այն որ Վայրի է՝ մէջ Սիտորին և Քուռաթին. և ամենայն Քուռաթնին տաք է Գ տարածան և չոր է Գ տրճ. և այն որ Քուռաթի Նապտին է՝ այնոր Գոռասը ըզ-մայ (Ղրային) կ'ասեն, և իր տաքութիւնն աւելի է քան զՇամին. և ինքն քիչ մի կապողութիւն ունի. և այն որ Քուռաթի Շամին է՝ իխլիֆոտ (!) կու ասեն, տաքութիւնն պակաս է քան զՆապտին, և ծարաւ

1. Պէթար Յ. բառը Κεφαλότων (գլուխ ունող) գրեր է كرفس Գեֆլ-թ, ասիկս Ասիրտ. այլ փոխեր է յԻրեքիս:

» քիչ բերէ քան զՍխն. և ինքն էութիւնով պինտ է և լազիճ է. և այն որ
 » Քուաթի Շամին է՝ իր տակն կու ուտի, և տերեւն չի ուտիր. և թէ
 » Սումախով ի վերայ կոթիծնին օծես՝ խափաթն այն է որ օգտէ Ղուլինճին ».
 և այլն. շատ տեսակ օգուտներ այլ չարէ: — Դարձեալ առանձին յիշէ. « Քու-
 » ութ, ինքն տափակ տերեւ ունի և յերկան. աղէկն ըստամպօլ լինի. . Ատէ
 » Մասնէ բժիշկն, պեղծ գիլութեան որ ի կուրծքն լինի՝ օգտէ, և միջացն ուժ
 » բերէ »: — Վաստակոց գիրքն գրէ Քուաթի մշակութեան համար (ՄՄԸ).
 » « Պարտ է ներքեւ կղմինար կամ սալ դնել՝ որ զլուին տափկանայ և շթողու
 » որ երկայննայ ընդ գետին ի վայր, և հողով ծածկեալ. և թէ ուզես որ մեծ
 » զլուխ առնու՝ ճեղքեա զզլուին փայտեղէն սրով, և Շողգամի մէկ հունտ ի
 » ներք ձգեա, և դարձեալ ծածկեալ. և թէ այլ մեծ ուզես՝ երբ ճեղքես՝ շատ
 » Քուաթի հունտ ից ի ներք և ծածկեա, այլ մեծ լինի. և քանի շատ անգամ
 » առնես՝ նա խիստ մեծանայ: — Ա՛ռ զհունտն և զրգալ զրգալ ծրարանի արա
 » ի հին թթէթ, և սատրելայն (ամէն մէկ արմատին) չաքօքն տնկեա, լինի ամէն
 » զլուխ (մեծ) քան զՇողգամ մի »:

2613. Պրասխ.

Հին Բժշկր. գրէ. « Որոյ աչքն սիս է (ուռած) ծեծէ Պրասխ և Աննուխ, և
 » զայտոց ջուրն պարզէ, ընդ իրար խառնէ և ի շիշ ած, և Սիսուան մի շաք Ա-
 » զուինակ՝ որ է Խորասանիկն՝ ի ներքս խառնէ, և յաչքն դիր. և մեղրաջուր
 » խմցո »: — Ռոշքեանն համարի Marrubium, Մեղրածուծ. բայց հաւանագոյն
 է թէ ըլլայ Ballota, Փ. Ballote կոչուած բուսոց ազգէն, որ աւելի լեղի և հո-
 տուոր է, և որոյ մէկ տեսակն Բոլորատերեւ կոչուած՝ B. Rotundifolia՝ տեսնուած
 է ի Շապանը գիւղ Թորթումի:

2614. Պրինկ.

Տես Խաչխաչ Վայրի և Ապրանճ. — Բժշկր. մի գրէ, « Քաղունիճի ջուր՝ որ
 » է Պրինկն »: Ասար յիշէ և Պրինկի Քապուշի՝ տղայոց ճիճու դեղ՝ գրուէն դնելի:

2615. Պրիսկ.

Ի բառս Փայիենոսի զուգուած է Յ. Լ. Thapsia, Փ. Thapsie անուան Թափսոս
 կղզւոյ. Ամիրո. գրէ, « Ինքն լերան Սաղապին ցեղերուն է. լանն այն է որ դա-
 » լար լինի. . Իպտ. ասէ թէ ինքն Տրիսան է (ساجد), Բարբարոսաց լե-
 » զուա, ըստ Պէյթ). և ոմանք ասեն թէ ի կղզիքն կու բուսնին. նման է
 » Սամթին ծաղկին հունտն. . և իր տերեւն ի Հարմային (Նարդէս ըստ Պէյթ.)
 » տերեւն կու նմանի, բայց յերկան և տափակ է որձան, և ճղերն երկան է,
 » և հոտն ուժով և գիշահոտ է. և իր հունտն նման է Սաղապին հունտին՝: —
 Ռոշքեանն գրէ. « Պրիսկի. Թուփ՝ յորմէ հիւթ բժշկական ելանէ, եթէ շուրջ
 » զնովաւ փորեցես զհոզն »:

2616. Պրոմ.

Քորթ բառին կարգին յիշեցինք որ ի բառս Գալիենոսի. ոմանք նոյն գրեն վերկուքն, բայց ոմանք այլ Յ. Լ. և Փ. անուամբ գրեն և Հ. Պրոմ. որով նա, նաչուի վարսակի նման խոտեղէն մի:

2617. * Պրոտոս. Պրոնթոս.

Անունն յայտնէ յունական ծագումն և աւանգութիւն, ըստ որում Հերա մեծ զիցուհի անգամ մի իր վրայ ձգէ Առաղկան պաամուհանը, և ահա անոյն ժա. » մայն բղխեաց երկիր ամենազան ծաղիկս, վարդ և Մանուշակ և Շուշան, » Պրաւնթոս և Յակինթոս», որպէս գրեն Տօնապատճառք մեր. յորոց համա. բառերով Յովհ. Եղնկացի կ'ըսէ. « Մանիշակս, Շուշանս, Պրոտոսս և Յակինթոս »: Պրոտոս՝ հաւանօրէն է Protius, որ և Balsamea, տաք երկիրներու բոյս, ուսկից զտուի Բալասանի նման հիւթ մի: Մեր յիշողքն այս այս անունս առած են ի Նանեսոէ, որ կ'ըսէ « Արովկոս (Orocus, Գրզում), Պրոպոսս և Յաթինկոս »: Կայ Plotia տունկ մի, որ կոչուի եւս Myrsine.

2618. Պրուխ.

Ըստ Ասարայ՝ համանիչ է Քաղաղուի կամ Երեչի. տես զասոնք:

2619. Պրուստ ?

Նշանակած է նոր բառհաւաք մի:

2620. Պրոու.

« Տափակ ձիւ լրի միջի », գրած է մէկն ի վերջին դարս: Զրային Եղէզն է կամ Կնիւն. Լ. Junceus, Փ. Junc, Ռ. Тростникъ. ըստ ոմանց և Papyrus Ար. (ծծ) որ Պապիր նշանակէ: Ս. Գրոց մէջ շատ տեղ յիշուած է այս բոյսս, նոյնպէս և Ս. Հարց գրոց մէջ. Ինչպէս Ս. Եփրեմի մէկ ճառի մէջ. « Երկիր տղմային՝ բուսուցանէ » պէսպէս Եղեգունս և Պրոուս անշահս՝ այրելիս հրոյ ». և յիրուի շատ հեղ ժա. զուելով և չորցընելով կրակի կերկ'ընեն այս Եղեզները: — Հին Բժշկարան մեր գրէ. « Պրոու որ հին լինի՝ և յաղտեղի վիրի ի վերայ եզեալ՝ բանայ սրբէ և կըցցէ. և » թէ այրես ու ցանես ի վերայ բազմամեայ վիրի, սրբէ. և որ ի բերանն շար վէրք » լինին՝ ի վերայ ցանէ »:

2621. Պրրի. Պրենի.

Շատ նման տեսակաւ վայրի պաղարեր ծառոց անուն է, զոր յիշած ենք Զողա. լենի, Հոյն և Չում անուամբք: — Ռոչքեանն գրէ. « Պրրի, պտուղ կարմրագոյն և թթուահամ երկայնածեւ, որ սսկորտա կորիզ ունի »: — Հեապընական իմն է, որ ասոր նման թփոց պտուղներն՝ անզլիարէն այլ Berry կ'ըսուին. և բարդու. թեամբ այլ Goose-berry, Joy-berry, Bay-berry, եւ այլն:

Պօլի. — Տես Ռոյի:

Պօլմիկ. — Տես Պոլմիկ:

Պօլուկ. — Տես Պոլուկ:

3622. Զալլուպա. կամ Զաղուզա. Ճաղուզա.

Հին Բժշկարանի մէջ յիշուած է. Թուի Թ. կամ Ար. բառ, և նշանակէ ըստ արեւելեան բժշկի միոյ՝ Convolvulus Jalappa, բայց ըստ Բժշկարանաց՝ է Սնովպարի պատուէն: Տես Կուկնար, և Ճաղուզա:

3623. Զաղացավարդ.

Ճաղացավարդ գրուած ի նորոց (Ն. Դար, Դ, 62). տեսակն ինձ անծանօթ:

3624. Զատակուկ.

Յայտնի չէ ինչ լլլալն, բայց հունտը՝ քարք օձէ խաժուածի գեղ գրէ Բժշկարան մի:

Զատվար կամ Ճատվար. Տես Թռչի յոսանի:

3625. Զարդան. Զարդայ. Զարդոյ.

Երնջնակի տակ է, կամ ըստ Ստ. Ռոջեան և ըստ Կամարկապոյն, Մարեմխոտն, Ճօտա համարելով:



Չալդուզա.

3626. Զարջար.

Մանր Բակլայ է, ըստ Կամարկապոյն:

3627. Զաւզալակ.

Հին Բառգիրք մի (կամ Գալիենոսի բառք) այսոր զոյգ դրած է Սակամոնի, Ժանօթ և հոշակեալ հիւթն, զոր հին Բժշկարանն կոչէ « Բաղդղան կաթն. » լաւն Անտաքցին է. ուրիշ տեղ այլ Մահմուտի կոչէ: Ամիրա. գրէ Սակամոնի անուամբ, « որ է Սաղմոնիա, որ է Մահմուտայն. լաւն այն է որ աղբախ » լինի և շուտ մանրի՝ յորժամ ի պաղունցտ տաս, և ի ջուրն շատ տրորի և որ « պէս կաթն լինի:.. Ասցել է Պա. Թէ ինքն խոտ է ի յԵթողներուն (ցեղէն), և « իր անրեւն նման է Լապլապին տերեւին, և յերկայնութիւնն խոտին երեք կամ « շոր թիղ կու լինի, և շատ ճղբ ունի, և տակն մէկ է, և ծաղիկն սպիտակ « լինի. և իր կաթն Սաղմոնիան է. և լաւն այն է որ Անտիօքու գայ, և այն որ « սեւ լինի և դեղին և շուտ չի մանրիր՝ չէ աղէկ. և եփել կու պիտի: Եւ եւ « փեղուն կերպն այս է. աւա Խնձոր և կամ Սերկեւիլ, կարէ և զմէջն փորէ, և « զՍակամոնին ի մէջն դիր, և խմորով ծեփէ զԽնձորն, և ի կրակն թաղէ որ « եփի, և հան ի կրակէն, և Թող որ պաղի, և հան զՍակամոնին:.. Եւ ասցել « է Յեսու բժիշկն՝ Թէ ինքն իսկի փոխան չունի ի սափրայ լուծելն, քանի որ

» փորձեցաք. և ուժն կու մնայ երեսուն տարի և այլ աւելի, կաճաքն Աստուծոյ: Պարձեալ գրէ. « Ինքն Բաղեղան տակին կաթն է. թէ կամիս որ զինքն » գտնես, Բաղեղն երեք ազգ է. մէկ այն՝ որ ծառերն փաթտի, այս չէ. մէկ » այն է որ ճղերն կարճ կարճ և տերեւն լայն լայն, և ոչ այս է. ապա ազգ մի » կայ որ ճղերն երկայն և կանաչ լինի, տերեւն երեքճիւղ, միջինն յերկան և » քովինն կարճ. և այլ Բաղեղան տակն կաթ շունի, և այսորն ունի »: Ուրիշ տեղ այլ կաթին տեղ խեժ կ'ըսէ. — Ս.

Բարսգի Վեցօրէից Թարգմանութեան մէջ (Ե) յիշուի, « յՕչինդր և ի Սակամունիայ » փայտի՝ ճաշակ դառնութեան գտանի »: — Վաստակոց գիրքն այլ (ՄԿԸ) լուծման դեղ նշանակէ. « Թէ զՍակամունայն » կանաչ ցողունն որ եփէ այնչափ՝ որ » ի տասնէն մէկն մնայ, և ապա զբանն » ջարն քամէ և յայն լուրն թրջէ, ըզ- » նոյնն առնէ »: — Թէ և Բաղեղն ա- նուանեն մեր գրիչք, բայց տւելի Պա- տատուկ կոչելի է այս խիժաբեր կամ կաթնաբեր տունկը, որ է ըստ բուսա- բանից Convolvulus Scammonia, Հիւթն այլ Scammonium, Փ. Scammonée. Ի հնուց ճանչցուած էր յԱսորիս և ի Փոքր Ասիա, և ի միջին դարս զխաւար նիւթ վաճառուց յաճախ յիշուած յԱրարացի բժշկաց և գովուած Սնտիդէ եկածն: Նոր տեղաքնինք տեսած են այս բոցս և ի կարնոյ մտտեր Հայոց: — Նիւթոյն դառնութեանն համար անանդեղի կոչած է Պիսիդէս՝ ըստ Հ. Թարգմանին. « Նոխազք՝ զանաճաքելի Սակամունին (կամ » Սակամունին) կերեալ ի բաց թքանեն զտկարութիւն »:



Ջաշգայակ.

Ջիֆնի. — Տես Ճիֆնի:

2638. Ջլատակ. Ջլատակ. — Տես Երեսնակ:

2639. Ջլախոտ. Ջլախոտ. Ճղախոտ.

Որ և Գաղաթիկուր (Թ. 409). Թէ ոչ նոյն այլ շատ մերձաւոր տեսակ է Գառ- նալեղուի, ինչպէս յիշած եմք ի կարգին, Լ. և Փ. անուամբք Plantago, Plantain, Ռ. Попутнякъ. Բժշկարանք մեր օտար անուններ այլ գուգեն. ինչպէս, մէկն գրէ « Ալարայուղ (Պ) և (Ար.) Պրկատունայ. ինքն երկու ազգ է, մէկին հունտն » սպիտակ և մէկին կարմիր. սպիտակն է պիտեւանն »: — Ամիրտ. այլ Գառ- նալեղուին համար՝ « Երկու ցեղ է, կ'ըսէ, մեծ և փոքր է. և այն որ մեծ է՝ » տերեւն փոքր է, և իր ճոհն (ազգեցութիւն) խառնած է ի հողային և ի » ջրային, հով է և հողային է և կապուղ է. և լաւն այն է որ մեծ և գալար » լինի. Ծրանկն Բիսանդալեցի աւէ », Իտ. Piantaggino. Թ. այլ մեր Հ. բառին

իմաստով Սիմիրյի օր կ'ըսեն: Հին Բժշկը. մեր գրէ. « Գաղտիկուր, որ է Ջղա-
 » խոտն, տերեւն չոր և փոթոթ. ամենայն չար կեղոյ օգնէ, զարոյն արգելու,
 » զայրած տեղն մորթ բերէ. և օգնէ՝ թէ լինի քոս, շնառ, այտոյց, խոզք. և
 » է ապուր որ ուտէ: Թէ յաչից աղբոյր կամ ի քիթ ելունդ ելնէ, ծեծէ աղով
 » և ի վերայ դիր. — եփէ մեղրով և քացխով: և տուր ուտել որովայնածի, լուս-
 » նոտի և թառանչելոյ: Որ ի բերանն. գան լինի և կամ ընդ լինդն արոյն գայ,
 » ծեծէ դտերեւն, և զլուրն ի բերանն առնու. և յաչացվու աչքն դիր և օծնէ ու:
 — Շատ ազգ և տեսակ ունի Ջղախոտն, որոց ոչ սակաւք յիշուին ի Կովկաս և
 ի սահմանն, և յատուկ ի Հայս՝ Քարքարուտն, P. Saxatilis ի Կարնոյ կողմանս.
 — P. Ovota, ի Կարապաղ. — P. Notata ի Պաղու. — P. Lagopus և P. Co-
 ronopus, ի Հր. Կովկաս. — P. Maritima, ի Բաբերդ, ի Դավրէժ. — Եփրա-
 տականն P. Euphratica, ի մէջ Մ. և Փ. Հայոց. — P. Arenaria ի Պոնտոս,
 Հր. Կովկաս, եւայլն:

2630. Ջղու. — Տես Տիգրիանեփատ:

2631. Ջնակ.

Բժշկարան մի յիշէ Ջնակի տակ, միանգամայն և Ջանդիաներն կոչէ. իբր հո-
 մանիչ. որ է ներքոյ գրեալ Ջնդիանն:

Ջնարակ. — Տես Ճնարակ:

* Ջնդիան.

Տես Ճնդիան, Բոք և Հոռոմ Երնջան:

2632. Ջոլիրան.

Տեսակ մի Նուան, նշանակած է բառհաւաք մի:

2633. Ջոնջու.

Բանջարեղէն մի, աղելի և Թթուով ուտելի:

2634. Ջորեակ.

Ըստ Սիմ. Կամարկ. « Խիարչեմպէ ? ինքն Մարախն է, զոր Կարապետն ուտէր »:
 — Ուրիշներ այլ կարծած են որ Յովէ. Մկրտչի կերածն յանապատի՝ բուսեղէն
 ըլլայ, մեր լեզուին բառերն այլ յարմար գան Մարախ (միջատի) և Մարուխի (Մա-
 տուտակի). սակայն աւելի շառք համարին բուն Մարախ միջատն՝ ուտելի, որոյ
 գլուխն և ոտուրնները կտրած, չորցընելով և աղած՝ ուտելի էր երբեմն յարեւելս:

2635. Ջորեկ կորեկ.

Ջայռ այլ նոյն կամարկապոյնն յիշէ, իբրեւ տեսակ մի Կորեկի. և « Շատ ազգ
 » է, կ'ըսէ, բայց սպիտակ կամ կարմիր լինայ »:

2636. Ջորու ճճեր.

Չայս եւս նոյն կամարկ. յիշէ, և Թ. « Գարբը պօհնողի գրէ. լաւն խիտ մանարն է »: Թ. կոչուի և Գարբը գրունտի (Ջորու ըղունգ): Տես Օրոն:

2637. Ջուանշիր. — Տես Ճօշի:

2638. Ջոր.

Ըստ Ստ. Ռոչքեան է Լ. Veratrum, Փ. Veratro. որ և Բժշկարանէ վկայու-
թիւն բերելով պարզէ. « Խոտ է, որ զմեծ զօրութիւն մաքրելոյ ունի. է Սպի-
» տակ և Սեաւ. Սպիտակն փսխելութեամբ
» զպատճառս ախտից արտաքս հանէ »: —
Շուշանից ցեղէն դիմացկուն խոտեղէն բոյս մ'է
Ջոր, որ աւելի բարեխառն կամ հիւսիսային
կողմեր գտուի. երկու տեսակն այլ ի Հր. Կով-
կաս և ի Պանտոս ճանչցուած են, և ի Լալվար
լերինս Գուգարաց:



Ջոր.

2639. Ջրաբար.

Բառգիրք մի զուգէ Լ. Mollugo անուան, որ նշանակէ Փրփրեմի տեսակ մի,
որ չոր տեղուանք գտուի քան ջրային, եթէ Հ. անունն այսպէս իմանանք. որով-
հետեւ ուրիշ Բառգիրք մ'այլ Յ. բառով գրէ. « Սպերդոն? Բաղբակ, որ է
» Ջրաբար (1), որ յաղբուրն լինի »:

2640. Ջրախաղող.

Ընախաղողն է ըստ բառագրի միայ, որ Թ. եւս գրէ Աղձայ օրի?

2641. Ջրախոտ. Ջրխոտ.

Փոքրիկ Թղաչափ բոյս մի երկայնակով, երեք երեք սղոցաձև տերեւներով, որ
խաւարուած ի Տրապիզոնի կողմանց՝ առանց ծաղկի՝ անծանօթ Ֆիաց բուսարա-
նից (Պատուայի):

2642. Ջրակոսիմն. Ջրկոտեմն. Ջրկոտիմն. Ջրիկոտեմ. Ջրիկոտմուկ.

Անունն յայտնէ տեսակը (տ. Կոտեմ). Ար. այլ նոյնպէս նշանակէ Ղուշոր
ըլ-այն, قوت العيين. Բժշկարան մի Պ. անուամբ այլ յիշէ Թէրեթիթգէք, « ամէնն
» կը ճանաչեն, կ'ըսէ. ի պաղլան լինի »: — Հին Բժշկարանն օտարոտի անուն
մի զուգէ Ջրկոտեմի՝ Կալապառտանակրի, որոյ յետին մասն կըրնայ Յ. վայրի

1. Օրինակին մէջ Ջրաբար գրուած էր:

նշանակել: Ամիրտ. յԱնգիտի անպէտն Ա.ր. ֆուշար ըլ-այնը մէկ մի Ջրի կոտեմ կ'ըսէ, ուրիշ տեղ « Ջրին ֆադան . և լան այն է որ հոտն սուր լինի. . Ասէ » Պտ. Թէ Հո. Սելիճու ասէ, և ինքն ի կանգնման ջրերուն մէջն կու բուսնի. » և ի ճղերն կաշտուկ զինութիւն կայ, հանց որ ի ձեռն մարդոյն կու կալի. և » ինքն անուշահոտ է, և տերեւն ֆէրէվուզի տերեւ կու նմանի, և մեծ է քան » զԱննուխին տերեւն. և տաքութիւն ունի քիչ մի. և Թէ շատ ուտեն՝ զնու- » Թիւնն տաքցընէ, հանց որ գերեսն կարմրցընէ. և զպարսոն տանի և զգոյնն » աղէկ այնէ, և զիր շարութիւնն տանի Հազրին հունդն »: Թեա այս ըսելու կ'աւելցընէ. « Եւ Ա.ր. իրենս ձորմիր ըլ-մայ կ'ասեն »: որով կոտեմն, կարոն և Ատորկն շիթութիւն իրարու հետ կամ միանան: Լ. Siam, ֆ. Cresson, նա և. Berle. Ռ. Ибукка. Брункресч.

3643. Ջրապտեր.

Անունն յայտնէ ազգը, որ տասնիւ չափ միայն տեսակ ունի. համարելով զսա Լ. Osmonda. ֆ. Osmondo. որոց մէկն Պոնտոսի Ռիգէ քաղքին քովերը տեսնուած է:

3644. Ջրասպունգ.

Ռոշքեանն յիշէ զայս, « Խոտ՝ որ ի քաղցր ջուրս ի յատակն բուսանի, բրդոտ » մազոտ, Սպնգոյ նման »: — Լ. Conserva, ֆ. Conserve. — Այսոր նման Թուի

3645. Ջրուստ.

Գուչակելով անունէն, բայց յիշողն անծանօթ է: Նայնպէս կենդանարոյս Թուին և կամ չրարոյսք՝ հետեւեալքն,

3646-47. Ջրի կարիճ. Ջրի մերուկ. Ծովի մերուկ.

Որք յիշուած են յԱսար բժշկէ:

3648. Ջրի մուռ.

Կանգնած ջրերու երես մաշկի պէս տարածուած Մամուռ. Տես Գորտերորդ. Լտ. և այլն:

3649. Ջրխաշ.

Բառհաւաք մի գրած է, առանց բացատրութեան.

3650. Ջրկիր ?

3651. Ջրհորի Գինձ. Ջրհորի հունդ. — Տես Չարխոտ:

3652. Ջրղանի.

Արցախու կողմանց ծառերու կարգին յիշուած է: (Մեղու. ԻԲ, 83).

2653. Զրճանկ.

Ասոր այսոր հոմանիշ գրէ Բեքրեկ. որ Թուրքարէն ձայն մի լսուի.

2654. Զրմայր. Կժի Զրմայր.

Հին Բժշկր. գրէ. « Առ Սափորի Զրմայր, լեսէ մանր, յիրար խառնէ (Ասո-
» րիկի հետ, և յաչքն) գիր »: — Նոյն բանը կ'ըսէ Նոր Բժշկր. մ'այլ, Սափորի
տեղ Կրի Զրմայր կոչելով: — Թուի Նրամաններու յատակ գոյացած Աղտաղտուկն
և վերոյիշեալ Զրի մուռն:

2655. Զրման ջուր.

Ոչ ինչ ըլլալն յայտնի է և ոչ ուղղական բառն, միթէ Զրեմն. յիշէ նորկեկ
Բժշկարան մի, հերաթափութեան գեղ գրելով, խառնել այսոր ջուրը Լջտակի
ջրոյ հետ:

2656. Զրոտկէն.

Տեսակ մի Խնձորոյ, որոյ յատկութիւնն անունէն:

2657. Զրջուկ.

Յիշուած է ի Ն. Դար օրագրի (Ը, 83) իբրև հոմանիշ Կոպալի, և թունաւոր
բոյս: Copale բուսաբանից՝ խէժ է Himenæa բուսոյ, Փ. Courbaril, որ Ափրիկոյ
և մերձաւոր կղզեաց և Ամերիկոյ մէջ բուսնի, կարծր և փայլուն փայտով. Ժա-
մանակաւ մեծ յարգ ունէր խէժն, հիմայ ապիկարուելու (վեռնիճ) ի գործ ածուի:

2658. Զրջրուկ.

Ջրկոտեմի տեսակ մի համարուած է. Լ. Sisybrium aquaticum, Փ. Sisimbre,
կամ Cardamine amara.

2659. Զրսգինոյ ? Ծաղիկ. Զրցքեմի.

Այս այլ երկրայական անուն մի, բայց հին և ընտիր գրով Բժշկարանէ, որ չի
տար կարծել Զրսգինի. սրտացաւի կամ սրտադրացցաւի գեղ խրատէ. « ԶՋրսգինոյ
» ծաղիկն աղա և ի գինի արկ և խմց »: Ուրիշ աղէկ՝ բայց աւելի նոր Բժշ-
կարան մի գրէ. « ԶՋրցքենոյն ծաղիկն թէ աղաս և խմելոյ տա » գինով, նա
» ամէն աղգ սրտացաւութեան օգտէ »:

Ռագիան. — Տես Ռգիան:

Ռամեք. — Տես Բուռնոյ:

2660 Ռասան. Ռասէն. — Տես Անտուզ և Կրճուխ:

2661. * Ռատայայ.

Ար. ۱۲۵, Առուոյա կանաչ. տես թիւ 158. 162.

2662. Ռաւանդիսենի. Ռեւանդ. Ռեւանդսենի. Ըրեւանդ.

Աշխարհածանօթ դեղ, արմատ Գարծիլ կամ Խաւարծիլ բուսոյ, զորս յիշած եմք ի կարգին. հին Ռժշկարան մեր գրէ. « Նշանք Ռեւանդ առնելոյ. Հան գիտա. » վրժոյն տակն՝ որ է Գափն, զհասունն, կտրէ սղոցով և ի գինի ի թուրջ դիր » երեք օր և երեք գիշեր, և ապա եփէ ինչ որ գինին հատնի, և չորցո շուք ընդ » արեւ. և այտ է: Իսկ Ռեւանդի Խորասանին Խորասանոյ Գափին տակն է, և » Ռեւանդսենին՝ Հնդկաց Գարն է. և նոյն նշանքդ շինվի »: — Ըստ Ամիրտ. Չինի Ըռաւանդ այլ կայ և լաւ է քան զԽորասանին: — Թողումք հօս կրկնել արմատին յատկութիւնները, զոր յիշած եմք վիրոյշեալ երկու անուամբք և Խաշնդեղով, և գտուած տեղն ի Հայս, ի կողմանս վանայ, յԱզուաւքար, և մերձաւոր սահմանները: Ընտիր տեսակն, Լ. կոչուի Rhus officinale, Փ. Rhusbarbo. Հին ատեն հաշակուած էր ի Չինաց եկածն՝ Թուրքաստանէ և Պարսկաստանէ անցնելով, և ասոնց անուամբ այլ կոչուէր. զոր Արարք մոցրնէին յԵւրոպա, քանի որ խոր Ասիոյ վաճառականութեան ճամբաներն բացուած չէին հասարակաց. յետոյ կարաւանք անցնելով ընդ Քաշկար, Սմրդանտ և Պախարա՝ բերէին ի Սաւգանիէ, և անկից ի մեծ շահաստանն Պարսկահայոց՝ ի Դարբէժ. աստից այլ տաւնէին ի Տրապիզոն և ի Կ. Պօլիս. ուրիշ ճամբով այլ կու բերուէր յԱղեքսանգրիս: Իսկ մեր վաճառականք հաւանօրէն իրենց երկրին այս պատուական բերքը բերէին մինչև յԻտալիա, ծք զարու կիսէն վերջը մինչև ծը ին սկիզբները. ի վեներտիկ յիշուի 1575 թուականէն մինչև 1710. այս ետքի տարին և նախորդը (1709) 75 անուակով բերած էին Հայք և ծախած իբր 100,000 Փր. այն ժամանակի արժողութեամբ:

2663. Ռեման.

Արեւելեաց սիրելի և հաշակեալ բուսոց մէկն՝ տերեւոց անուշահոտութեանը համար, որ ծաղկի տեղ բռնեն, և պէսպէս անուամբք ճոխացեալ և Թագառոթական իսկ կոչուած, ինչպէս Յ. Փ. Ի. անուանքն, Βασιλίσκος, Basilio, Basilio, Ռ. Базиликъ. յորմէ և Թ. Փեւիշյեկն. Լ. Осытум. իսկ Ար. գատ յայլոց անուանց (Հաւք, Հարակ, Համակիմ, Պատրոս), Եանիֆիերմ, քաթաթա, Եանասպրամ ըստ մեզ, որ նշանակէ Թագառոթական Սպրամ կամ ծաղիկ, ինչպէս և պարզապէս կ'ըսուի ուրիշ անուամբ՝ Ռեհան ըլ-Ալիք: Այս ետքի անունն սեփական (Ռեհան) է և առ մեզ, և աւելի կերպով մ'այլ նուիրական, որովհետեւ եկեղեցւոյ ծխից մէջ եւս մտած է, Ս. Խաշն այնով պօսակելու կամ զարդարելու. իսկ այդ (سج) կոչումն բնիկ Ար. է՝ Թէ Հ. ստուգելու մնայ: Ուրիշ անուանց նկատմամբ՝ տես ինչ որ յիշած եմք ի Հարակ, Եահապարամ և Պատրուս: Անուանց շատութիւնն յայտնէ միանգամայն և Ռեհանի տեսակներ, մանաւանդ տերեւոց մեծութեամբ և փոքրութեամբ, քիչ մ'այլ անոնց գունով. մեր Ամա.

սիացին այլ վկայէ, թէ « Բայտնի է, շատ ցեղ լինի, և լաւն այն է որ հոտն աղէկ » լինի.. հաղող է, և հով ըզեղան աղէկ է, և զկալուածն կու բանայ.. և թէ » օժես՝ օգտէ զլիսու ցաւուն և շարջ զալուն՝ որ ի հովութենէ լինի.. և թէ » զիւր հունտն տապկես և տաս, աղեց զաներուն և կարճահարին այլ օգտէ... » բայց տաք ըզեղան զեն կու առնէ »:

Յիշէ քանի մի տեսակներ այլ, ինչպէս Թագաւորական Ռեհանը, Ռայեհանի միոջ գրեւով, և նոր համանիչ մ'այլ կ'աւելցնէ, « որ է Զատրանն? Սոդունի Ռե.. » հոտ, Ռայըհանի Սիւշիյանի, որ է Ճանաթրանն (Համասպրամ) և Հանայտո? » Սոշայեան այլ կ'առնեն. և ինքն ի Պարսից լերունքն կու բուսնի, և ի Սպանիան » այլ կու բուսնի, և ինքն նման է Սամթին՝ որ զալար լինի, և իր տերեւն կու » նմանի Տըզտին տերեւին, և ծագիկն փոքր է, ի Բաղեղան ծագիկ կու նը.. » մանի. և ինքն կու շրջընէ »: Ըստ քննողաց՝ սա է *Ocimum filamentosum*. — Ռեհան էլ-Քաֆուր, « որ հոտն ի Քաֆուր կու նմանի, և տերեւն ի Քասնու » տերեւ կու նմանի, և թէ հանապազ հոտիտան՝ զըզեղան և զիւելաց խառնա.. « կուսն տանի, բայց հով բնութեան մարդկանց՝ շար է »: — Ռեհան՝ թէ յա.. բեւելի և թէ յարեւմուտս՝ սիրոյ, ցաւոց և պէտպէս կրից նշանակ համարուի, կերպ կերպ այլաբանութեամբք: Ըստ տեղական տեսակաց՝ յիշուին,

3664. — Ռեհան Առուի.

Ըստ Սերաստացւոց՝ սա Զուգէնէճն է. տես զայս:

3665. — Ռեհան Զրի.

Ըստ անուանն նոյն է ընդ վերնոյն, « Զրի տեղ բուսած լինի », կ'ըսէ կա.. մարկտային:

3666. — Ռեհան Սարի.

Չեւն լաւ բացատրուած չէ, հունտերն համեմ կ'ըլլան կերակրոյ, և խարկած ու փշրած՝ դեղ վէրքերու: Յիշուի ի կողմանս Սասնոյ:

3667. Ռետնի. Ռետին.

Շատ ի հնուց ծանուցուած և ի Ս. Գրոց այլ յիշուած է Ռետին՝ անուշահոտ և բժշկական խէժն կամ հիւթն, և նոյնպէս կոչուած, մանաւանդ իրրեւ ընդհա.. նուր ցեղ այսպիսի նիւթոց, յարեւելի և յարեւմուտս. Յ. Բդոնոյ, Լ. Resina, Ար. Ռատինէճ. իսկ խիժարեր ծառն՝ օտար լեզուաց մէջ նոյն անուամբ չի յի.. շուիր, այլ Մայրեաց և Եղեւնեաց տեսակ համարուի: Վաստակոց զիրքն կ'ըսէ (ՄՂԳ), « Որ է Սոնոպրի ծառին խիժն.. ի Ռուսու (!), ծովեզերէն ելանէ, զերգ խայծղան է »: — Ար. Շիրպին, شيراز, որոյ համար կ'ըսէ Ամիրտ.. ըստ Պէյթարայ, « որ է Ղարրանին ծառն. երկու ցեղ է.. և իր միրգն օգտէ » ըռուպուին (խաչակի հիւանդութեան և լերդին.. և ծովու լապստակ ուտողին.. » և տերեւն և միրգն ուտուի.. Ասեր է Պ. թէ իր միրգն նման է Սոնոպարին, » և այլ փոքր է: և ինքն փլի է. երկու ցեղ է, յերկան և կարճ, և կեղեւն կա.. » պուտ է »:

1. Յոյն բնագիրն Զաիւնթոս (Զանգա) կզգի կ'ըսէ: վաստ. զերքն ուրիշ տեղ (ՅՅԵ) գրէ, « Ռեփրինէ. որ է Սաբին խէժն », Թերեւս սխալ զբուսած է, կամ Սարոյ:

2668. Ռզիան. Ռագիան.

Ար. Ռագիենէ, Թ. Ռեզենէ (عزج). Ար. կ'ըսուի եւս Շիմար. Լ. Foeni-
culum. Փ. Foenuil. Ի. Finocchio, Ռ. Укропное семя. Ամիրս. գրէ. « Ըս-
» զիանն, որ է Ար. Ռագիանանն, և Պ. Փատիեանն, երկու ցեղ կու լինի, Վայրի
» և Աժվոց. լանն այն է որ դալար և մատղաշ լինի... Իպն. ասէ, թէ առաջին
» նախահայրն Աղամ ասցել է! թէ մարդ մ'որ գարնան առաջին օրն արեգակն
» ի Խոյն մտանէ մինչեւ ի Խեցզետինն երթայ, որ է ամռան առջի օրն, յամէն
» օր մէկ մթիսալ Ըղիանի հունտ, մէկ մթիսալ Շաքար խառնէ և ուտէ, նա
» մէկ տարի ան մարդն հիւանդութենէ անհոգ լինի և առողջանայ: Եւ այլ զար-
» մանալի բան մ'այլ այս է, յորժամ ձմեռն լինի՝ օձերն ի գետնին ներքեն
» կու մտնուն և պառկին և կուր(անան), աչլին շի տեսնուլ. և յորժամ
» զարուն լինի՝ կուր ի դուրս կ'երանեն և կ'երթան Ըղիանն կու գտնուն, և
» զօրն կ'ուտեն և զօրն աչիցն կու զնեն, և աչլին կու բացվի, և արարիչն Աս-
» տուած զուն օձերուն տեսութիւն ի յայս խոտս է գրել. և նմա փառք յաւի-
» տեանս »:

Ռզիան Հոռմցի. — Տես Անխտն, Թ. 109:

2669. Ռւժակուի.

Վայրի ծառ մի յԱրցախ, այլոց հետ յիշուած (Մեղու, ԻԲ, 83):

2670. * Ռիպաս. Ռէվան.

« Որ է Գարծիլն (Թ. 392). լանն այն է որ ի Շիրազու բերեն », ըստ Բժշկր:

2671. Ռոշնակ ?

Յիշուած ի բառհաւաքէ. բառն նշանակէ պայծառ:

2672. Ռուզ.

Հին Բժշկարանն պիտակի գեղոց մէջ յիչէ և Սպիտակ Ռոզ. ուրիշ Բժշկ-
մ'այլ զլիսու ցաւու և տքնութիւն ունողի դարմանոյ մէջ՝ ուտելիքն այլ նշանակէ,
և ասոնց մէջ պատուիրէ ուտել « հաւի մսով և շաքրով, և կաթով Ըռոզգ և ձուր
» դեղնուց », եւայլն: — Նոյնն իր համառօտ բառակարգին մէջ հոմանիչ գրէ
Ռրիձի, որ է Որիզ:

2673. * Ռունաս. — Տես Տորոան:

2674. Ռուփէն.

Կամարկապցին՝ Ոսպ է, կ'ըսէ. Ռոշեանն՝ պարզապէս, « Խոտ, որ ի Ղրուտ
» տեղիս բուսանի, Լ. Rhopalum ». եւս և Nymphaea: Ետքինս շատ անգամ
յիշած եմք, իսկ առաջինն Mollusia կոչուած Ղրային բուսոց ցեղին մէկ ազգն է:
— Յիշուի և

2675. — Ռուսիէն Վայրի.

Յայտմուրդ կ'ըսեն (6 Մարտի — 15 մայիս) ի վարս Ս. Յովհ. Լուսկացի Փ. Հայոց Կոլոնիա քաղաքին եպիսկոպոսին, որ ի Պաղեստին յանապատ մի ճգնելով (Ռուսայ) քանի մ'որ մի անգամ իր ձեռք ժողվէր և միայն այս ինքնարոյս վայրի խտր կամ բանջարը կ'ուտէր. Յ. բնագիրն՝ յորմէ և Լ. Melagria կոչէ զայն. իբրև այն կողմերու անապատակեաց ճգնաւորաց ուժորական ուտելիք:

2676. Սարեկ.

Ով որ Ս. Գրոց պատմութեան քիչ շատ հմուտ է, կամ սուրբ շարաթու ընթերցուածոց, այս անունը լսելով՝ դժար է թէ շտեմէ սրտառուչ և սրազան բազմադիմի տեսարան մի. ծերունի հայր մի որ իր մէկ հատիկ սիրուն զաւակը կու տանի անմարդի տեղ մի՝ փոխան դառին մորթելու. միամտութեամբ հնազանդելով աստուածային ազդման, և կարծէ գեռ լսել աւելի միամիտ որդւոյն հարցումը. Ահա սուր և ահա փայտ, ո՞ր է, հայր, ողակիդի ոչխարն. — Աստուած տեսնէ, որդեակ, իր ողակիդիի զառնուկը. — և ամենատեսն այն՝ իսկոյն կուցուցընէ անոնց և մեզ՝ գիրուկ խոյ մի Լոյիւրներէն կախուած «զծառոյն Սարեկոյ»։ Գերազոյն հանճարք հազիւ բաւեն նկարագրել բանիւ այսպիսի տեսարան. իսկ ով կարէ արժանապէս նկարել նաեւ ի միտս՝ այն ստուերակերպ օրինակին տակ ծածկուած գերմարդկային ողջակէզը. զոր երգարանէ մեր եկեղեցին խորհրդարար. « Սարեկայ ծառոյն վերաբերեալ խոյ յողջակէզ՝ փոխանակ Խաւակայ, » այլ ի վերայ քո (Խաչափայտին) զենաւ Պառն անարատ, ի հայտութիւն Հօր, » և ի բառնալ զմեզս մեր »։ — Բայց թ'նչ ծուռ էր այդ Սարեկդ. — մեկնիչք՝ ոմանք այս ծառը, ոմանք այն ծառը կ'ըսեն. Յ. և Հ. Թարգմանութիւնք այդ երբայեցի բառը պահեր են. Լ. Verpes Թարգմանէ, որ Թանձր կամ փշտ Թուփ նշանակէ, և շատ գիտնոց կարծիքն է՝ թէ այսպէս իմանալու է, և ոչ յառուկ ծառի տեսակ, ինչպէս կ'ըսէ մեր Կիլիկիոց բերքերը յիշող վարդապետ մի (Թովմաս), « Թուփ, Նուռն և Սարեկ ». իսկ Վարդան ի Մեկն. Մննդ. « Սարեկն » ոստ մի ծառոյ Թարգմանի կամ երկնդի ծառ, իսկ առ ի միտս՝ Թողութիւն » կաչի »։ Այս ետքի իմաստով դարձեալ կ'ըսէ. « Ոմանք ասեն Թոյլ գոլ »։ զի Սարաք Թոյլ նշանակէ երբայերէն. բայց ուրիշ օրինակք գրոցն ոչ Թոյլ՝ այլ Թոյլ գրեն, որոշ բոյս մի, զոր յիշած եմք (թ. 764). և յօտարաց այլ ոմանք զնոյն (Atriplex) կարծած են. սակայն այս բոյսս կըրնար իր ճղիկներով զառնուկ մի վերցընել:

2677. Սազահուում ?

Հոսոց կոնգ, գրէ հին Բաագիրք մի, և Թուի Հում ծառոյն խէժը նշանակելու կամ Հոսմի կոնգ. առաջին բառն (Սազ) Յ. Թէ՛ Հ. անծանօթ է, բոլորն այլ՝ եթէ՛ Հումէ բարդուած չէ:

2678. Սաղար ?

Գալիենու բառից կարգին գրուած է, և բացատրած Ար. Բարոնաձ ալ-ճահարի, իբր գետոյ այսինքն Զրային Արիցուկ: — Ուրիշ օրինակ մի գրած է՝ Բարոնաձ տեղնար՝ (ալ-Նահար) Հիսապոս:

* Սաղ-իր. — Տես Երորին:

2679. Սազապ. Սատապ. Սատաֆ խոտ.

Ար. **اباد**. որ Հոռոմն « **Պեդանու սաէ** (**Πήγανος**) . և ինքն երկու ցեղ » է, մէկն Վայրի և մէկն Աժուոց. և այն լաւ է որ ի Թզենույն ի խէշն կու բուսնի, » տաք և չոր է, Գ տարածա. կտրող է և հալող է, տաքցընող է. և զփորն կու » կապէ, և թէ քացխով օծես՝ օգտէ հով գլխացաւութեան, և զքթին արիւնն » կտրէ, և զաչքն սրացընէ, և զակնջին գոռալն տանի, և զՍոխին և Սխտորին » հոսն կու տանի, և մահացու դեղոց օգտէ: . Ացցել է Պտ. թէ իր Պ. լե. » զուաւ **Յարաննու** կու առնն. և ինքն երեք ցեղ է. Վայրի է և Լերին և Աժուոց. » և լաւն այն է որ Աժուոց լինի. և թէ զտերեւն չոր Թզով և Լնկով ծամեն, » զմահացու դեղոց զչարութիւնն տանի և զազանահարաց. և յորժամ չոր Սամ. » թով եփեն և զլուրն տան որ խմէ, զմաղասն տանի, և օգտէ կօղացաւի », եւ այլն: — Լ. **Ruta** **Φ. Rue.**

Վայրի Սազապ կամ Սատապը՝ Աժիրա Ար. գրէ « **Չաֆարայ** (**Չաֆարա**). » թէ զտերեւն ծեծեն և խմեն, զփորացաւութիւնն տանի և զախպ շերմն տանի, » և զլերդացաւութիւնն այլ տանի »: — Տես **Կառան**, որ յատուկ Հ. բառ երեւի, և ըստ այսմ հարկ էր որ աժուոց Սազապն այլ այսպէս կամ ուրիշ Հ. առնուն մ'առնենար. և թէ եւ կոչուի **Փեգեկայ**, բայց սա այլ կըրնայ վերոյգրեալ **Յ. բառն ոլլալ**, եթէ Յոյնն այլ առած չէ դըրսէն: — Հին Բժշկարանն յիշէ Սատապի տեսակները, որք « ի տաք և չոր՝ հավարք են, սրբէ յղորկուտ պղզամէ, » զի լեղի է, զքամի հանէ ի ստամոքէ և փորոյ, զաչաց լոյսն ուժովընէ. բայց » զգլուխ ցաւցընէ. զի տաք ու չոր է. ի դեղեր ի պէտք է և ոչ ի կերակուր. » և Վայրի Սատապի ունդն ի դեղեր մտէ՝ և ոչ ի սպաս »:

* Սամաուէճ. Շէտաուէճ. — Տես Աճխոտ:

2680. Սալամ.

Տեղ տեղ այսպէս կոչեն զՀազար, աղցանի նշանակութեամբ, ըստ արեւմտեայց. բայց յատուկ

2681. Սալամ. Սալէթին կամ Սալամա.

Նշանակէ ըստ Բժշկր. « **Գարին**՝ որ կեղեւ չունի ի վերայ, որպէս Յօրեան կու » նմանի, և այլ փոքր է. և թէ ալիւրէն չօթ առնես և կիսաեփ լինի, և դնեն » ի մալխուլային (**սեւամաղձոտի**) գլխուն վերայ, օգտէ. և թէ զալիւրն մալէզ » առնես և շատ (կամ ի հետ) Հոռոմ ձէթ խառնես և երեք վաղվընէ և կամ » հինգ վաղվընէ մէկ ուսկուռա ? տաքցընես և խմես, օգտէ խեւութեան և ցրիւ » զրուցելոյն և անգոհութեան, և մէնալուն ? և այն մտաւրժութեան՝ որ ի սով. » տայէն լինի. և զկուրծքն յատակէ, և օգտէ հազին »: — Վաստկ. գիրքն այլ յիշէ զՍալէթին (**ռջ**), և կտաւատի հետ կըրնայ ցանուիլ կ'ըսէ, « զի այն եւս » եղ ունի ». ցանելու ժամանակն այլ « ի սեպտեմբեր ամսոյ 23 աւուրն ի վեր » մինչեւ ի յունվար ամսոյ երեք օրն՝ պիտի ցանել »:

2682. * Սալիխա.

« Հոսմերէն Սիրիկոյ ասեն, ըստ հին Բժշկր. Յ. Տարցո, Եղէզն կամ Եղիզ-
նեայ Սրինգ նշանակէ . իսկ Ար. سليخه է Լ. Laurus Cassia . Բժշկարանք
մեր կ'անուանեն և Ս. Գրիգորի ուխտին փայտին կեղեւն », կամ Ս. Գէորգայ
Խոտին տակն, զորս յիշած եմք ի կարգին (Թ. 476, 38) կարեւոր բացատրու-
թեամբք:

2683. Սալոր. Սալորենի.

Որ և Շ տառի Շլոր. (Հին և նոր դերմ. և անզղ. լեզուաց մէջ լսուի այս
ձայնս. Sloba, Schlebe, Sloe, Sliva, ինչպէս և Ռ. Слива). — Ոչ միայն պտղոց
տեսակի մի անուն է, այլ և տարբեր ազգի պտղոց ընդհանուր անուն, որով
յայտ է թէ շատ նման տեսակք այլ կան գլխաւոր ազգին, որք և առանձին ա-
նուամբք կոչուին. և հասարակաց անունն ամէն կողմ լսուի, թէ և պտուղն տար-
բեր ձեւով և համով ըլլայ. Ամիրտ. « Աձաս (اجاس) անուան տակ գրէ, « Որ
» Դամանն, որ է Սալորն, և Պ. Այոս կ'ասէ, և Թ. Արիկ(Էրիկ). և ինքն շատ
» ցեղ կու լինի, և լաւն այն է որ խոշոր լինի և քաղցր լինի, հով է Ջ տրճ. և
» գէճ է Բ տրճ. Թէ զտերեւն ջրով եփեն և խաղալ առնեն՝ օգտէ փողացա-
» ւութեան և զնուզան խափանէ, և զխոշրկին և զանկիկին ուռէցքն հալէ .
» և թէ զիր խէժն Թրլեն և խմեն՝ օգտէ կրծոց խոշորութեան, և զլոր հազն
» և զխոշրկին պնտութիւնն տանի. . Ասէ Պտ. թէ ինքն ցեղ ու ցեղ կու լինի,
» մէկն սեւ ու մէկն սպիտակ կու լինի. և այն որ սեւ է՝ Բռանան (կամ Այոսն
» ըր-պոխտր) կ'ասեն, և այն որ սպիտակ է Շտհայոս (կամ Շահրոս) կ'ասեն. . և
» լաւն այն է Սեւ Սալորին՝ որ աղէկ հասնի ինքնիրենն և խոշոր և քաղցր լինայ » : —
Պէյթար Սալորի համար Թուլացուցիչ է, կ'ըսէ, « բայց ոչ այնչափ որ յայս կողմն
» Հայոց (Էրուիկին ել-տախիչէ), վասն զի այնկէց եկածն քաղցր է, ամեն տեղ
» ծառին համեմատ է պտուղն. այս կողմի Հայոց Սալորն քիչ կծու է քան
» գրամասկեանն » : — Լ. Prunus, Փ. Prunier:

Սալորի գլխաւոր կամ աւելի ընտիր տեսակն է Դաման. որով երբեմն ընդ-
հանուր Սալորք կ'իմացուին. տես զայս անուն և ուրիշ մեզի ծանօթ տեսակաց
անուանքն, Այոսայ, Դամանեան, Դամասիս, Թարթոյ, Շանձոյ կամ Ջոնոյ, Էր-
կան, Ոտոռն ? Սար-Սալոր, Տոտոր, Տոտոգ : Իբրեւ յատուկ ազգք Սալորենեաց,
կամ այնպէս անուանելոց, յիշուին Սալոր Մէրտիմու, և Սալոր Հնգիաց, որ է
Հնգկարման :

2684. Սակամունի. — Տես Ջազգարակ :

2685. Սակուղաջուր ?

Ի գրոց է թէ ի լրոյ, և ինչպիսի՞ է. չէ նշանած գիտուն բառհաւաք մի :

2686. Սահապի.

Տեսակ Խաղողոյ յերեւան :

2687. Սաղապ.

Ըստ Ասարայ է ծանօթ Սաղապն արեւելեայց, որոյ իսկութիւնը տես Աղուէսա. ձուք անուամբ, Թ. 63:

2688. Սաղէ-տակ.

Թուփ կամ ցախ մի, սակից աւել չինեն:

2689. Սաղուզի?

Արցախոյ վայրի ծառաց մէջ յիշուի. Թուի Թ. բառ Սաղազ, Չութի ծառ, Հերձի:

2690. * Սան.

Եւ. Teotona grandis. « Ինքն ծառ-մն է որ շատ հզօր ունի, և տերեւն այլ » շատ կու լինի. և ինքն ի Հնդկիս կու բուսնի, և յիր շուքն մարդ շատ » կու ժողովի. և ամառն և ձմեռն միապէս չի այլայլիր, և թէ այրեն և » Մամիսայի Կրոնը տորոն և յաչքն քաշեն զէտ ծարուր, խիստ օգտէ, և ըզ- » Ղգերն ուժովցընէ, և զերեսին շտերն տանի, և օգտէ այն ուսեցին որ ի յաչից » կապերն լինի... Ասցել է Պտ. Թէ քան զինքն մեծ ծառ չկայ, և ինքն պինտ » է և սկէգոյն, և բնութիւնն հով է և չոր է, և թէ յիր պտղէն ձէթ չինեն, » որ այնոր ձիթին անունն Տոնն ըլ-Սամ ասեն, և զՄուշքին նաճոն (մկկապորա) » այնով կու չինեն »... Այս ծառին փայտն է Bois de Teck կոչուածն. ծառն գտուի ի Հար. Ասիա և յՈվկիանիա.

2691. * Սանգւնիա.

Շատ հեղ յիշուի ի Բժշկարանս՝ ուրիշ բուսականաց հետ, իրր զեղ պէսպէս արտից, բայց Ինչ ցեղ ըլլալն՝ ինձ անծանօթ է:

2692. Սամիթ.

Համեմային բանջարոց կամ խոտոց գլխաւորներէն մէկն, և Անանխոյ և Չա- մանի հետ յիշուած ի Քրիստոսէ, ի յանդիմանութիւն ազազ և կեղծաւոր Փա- րիսեցւոց. Լ. Anethum, Փ. Aneth, Ռ. Анишъ. Ար. Եհպեր, աչ, կամ Եիպր, ինչպէ՞ գրէ Ամիրտ. որ յիչէ թէ, « Թ. Տորադ օրի, ասէ, և Զո. Սնե- » գոմ, և ինքն ածւոց և վայրի լինի. լաւն այն է որ ածւոց լինի. և ծաղիկն » զեղին լինի: Տաք և չոր է ր արճն. եփող է, բնութիւնն կու խաղցընէ և քուն » կու բերէ, և հով գլխացաւութեան օգտէ, և ակնջացաւութեան այլ օգտէ, » եւայլն: Ատէ Պտ. Թէ ի Երիւզ Շառ կ'ասեն, և լաւն այն է որ դալար լինի. » և իր փոխանն Տարչինն է և Ղարանֆիլն »:

2693. Հոռոմ Սամիթ.

Պալիենու բառից մէջ Թ. գրուի Մարաբրոն, ուղիղն է Μαράβρον, սուանց ր. ասառի, թէ և Լ. այլ Marathrum, գրուի. բայց հասարակ անունն է Foeniculum, որ է Ռազիան. տես զայս:

2694. Սամիր.

Մեծ կորեական է կամ Գաւարս, ըստ Բառապարոց:

2695. Սամնարուկ.

Ըստ Սա. Շէհրիմանեան՝ կցմցուկն է, տես Թ. 1869, Լ. Polygonatum.

2696 Սամուխ.

Ըստ Ամիրտ. Մկնականջն է. Պէյթարի գրոց մէջ չկայ այս անունս, որ գտնուի է ոչ Ար. ըլլայ:

2697. Սամսար ճաղիկ.

Ձեւն բացատրուած չէ մեզի, այլ յիշուի Սասնոյ կողմերում, և անդամաւոր-
ծուծեան դեղ ըլլալով կոշուի և Անգամաշուծի խոտ:

2698. Սանամ.

Սպանզն է, ըստ Ասարայ. այս բառս այլ չկայ ի Պէյթար:

2699. * Սանամըքի.

Հին Բժկր. գրէ այսպէս, և կ'աւելցընէ, « Խոտ է, որ ի Մէքքէոյն » գայ,
նոյնպէս ուրիշներն այլ: Տես Աձալ, Թ. 74:

2700. Սանդատ.

Հին Բժչկարանն այսոր հոմանիչ գրէ Ար. Անահարի?

2701. Սանճատ?

Բժչկարան մի գրելով հովերու վրայօք, կ'ըսէ՝ « Աղէկ քամի այն լինի.. որ ի
» Թղենու, յՂնկըզէ և ի Սանճատէ չփչէ »: Եթէ սխալմամբ գրուած չէ՝ փո-
խանակ Սանճանի կամ Սանգիանի. սա Ար. Կաղնի նշանակէ, որ մէկ այլ երկու
ծառոց կըրնայ յարմարիլ:

2702. Սանսու.

Ըստ Ամիրտ. Արարացի կռէզը տուող ծառն է. Տես Կռէժ և Խարազ:

2703. * Սանտալ.

« Որ է Ար. Չանդան, (կ'ըսէ Բժչկ. մի). Յետու ասէ Թէ հով է և չոր է Բ
» տրն. օգտէ սրտին տրփալուն և ստամբին », եւ այլն: Անուշահոտ փայտից կար-
գին ծանուցուած է, և է Չանդանն Աշխարհք. Խորենացոյ (Թ. 1847): — Լ.
Santalum, Փ. Santal կամ Sandal: — Մխ. Հերացի յիշէ և Սպիտակ Սանտալ
ի դեղորայս միօրեայ չերման:

* Սանտարաք. — Տես Ճնարակ:

3804. Սանտրուկ.

Ամիրտ. կ'ըսէ, « Խոտն (է) որ կէսք մի այնով զակուան կու փորեն, ի Ղազ-
» օվայ (Սեբաստիոյ գաւառի) շատ կու լինի, և կէսք մի գիրեն հունտն ի Խո-
» րասանու տեղ կու ծախեն »: — Շէհրիմանեանն նոյն համար ընդ վերոյգրեալ
Սամանտրուկն: Polygonatum.

2705. Սապու. — Տես Հայտն:

2706. Սապտուկ. Սաւտուկ.

Այսպէս կոչեն շատ տեղ Հայք՝ Թ. Չիկուտ (տ. Չքիտամ) կոչուածը, որ փոքր
սոխաւոր բարակ բոյս մ'է երկայն թելակերպ տերեւներով, սպիտակ նա եւ
կարմիր կամ կապոյտ ծաղկներով, որձայն ճերմակ մաշկով պատած, սոխն կա-
նաչ նշի նման և գրեթէ Կաղինի չափ է, որ տեղացեաց ախորժեղի է ուտելու,
ի Տարօն, ի Շիրակ և ուրիշ կողմերում: Լ. Colobicum autumnale. — Տես և
Ձիւնծաղիկ, որ ազգակից է այսոր և մէկ տեղ երգուած ի Սալաձորեցոյն. միայն
թէ իրեն Չքիտամն կանուխ գարնանային է, Սապտուկն աշնանային: — Ըստ հել-
լենական առասպելաց՝ Մեդէա կախարդն այս բոյսս ի գործ ածէր՝ Թունաւո-
րելու կամ կատղեցընելու համար. Ամիրտ. Աշնանային Չիկտամը զուգէ ուրիշ
ծաղկի մի, Յ. կամ Լ. գեղեցիկ և յիշատակեալ անուամբ, Amaryllis, զոր խան-
գարեալ գրէ Այնարտաշախ կամ « Ախնարիդայիս, որ է Դեղին Սոսամն, Թ.
» Աշնան Չիկտամ կ'առէ... Թէ աչքն լինի տաք-ուռէց՝ ի վերայ դնեն, օգտէ,
» և թէ զքթն և գտերեւն սպեղանի առնեն և դնեն ի վերայ կրակին այրածին՝
» շատ օգտէ »: Յիշած եմք զայս, Թ. 2357, մեր նոր Բուրաստանի երգողին տողե-
րով. յիշեմք հօս որ լատին ուսանողաց անմոռաց է այդ Ամարիլլիս անունն,
զոր Վիրգիլիոս իր առաջին հովուերգութեան մէջ ներկայացընէ իբրեւ սիրուհի
Տիտիւրոս հովուի. և ամենքն ի բերնուց գիտեն բանաստղծին այն պարզ բայց
աննման երկտողը.

Nos patriam fugimus: tu, Tityre, lentus in umbra
Formosam resonare doces Amaryllida silvas.

« Մէք փախարտեայք ի հայրենեաց. Դու, Տիտիւրէ, ի հովս անխուր
Մարգես զմայրիս՝ ըզգեղանիդ Ամարիլլեակ հընչել անդու »:

2707. * Սառաբին.

« Որ է Սէքպենէն », գրէ Բժշկր. մի այսինքն Sacapenum. Ըստ այսմ պէտք
էր Սակարին կարգալ: Տես Պզոտի:

2808. Սառապիսեայ փայտ. — Տես Ապանակ, Թ. 171:

* Սասալիոս. — Տես Անհիտան:

2709. * Սատա.

Կամ Սատախիկիս, ինչպէս կարդացեր է Ամիրտ. Պէթարայ գրածը ساطا حياي

որ է *Stachys*, որ յԱնտալուսիա Գարա կոչուի, կ'ըսէ. և ուրիշ տեղ՝ Անուշա, զառոնք չի յիշեր Պեր Ամասիացին, այլ միայն թէ, « Բայս-ձն է որ ի լերունքն կու » բունի և ի քարոտ տեղեր, և ի Ֆարասիոն (տ. Հօտիսոյ) կու նմանի. մանր » և անուշահոտ կու լինի, և շատ ճղեր ունի, սպիտակ է.. և քան զՖարասիոնն » սպիտակ կու լինի.. զսիրտն ուժովցընէ, և օգտէ ամենայն փորոքի ցաւուն, » և կատղած շան խածածին ո, եւայլն: — Ըստ Թարգմանչին Պէյթարայ է Լ. *Stachys Germanica*.

2710. Սատանի խիար ?

Վարընպի տեսակ է թէ այլ ցեղ բոյս, չեմ գիտեր. Բժշկարան մի ուրիշ նիւթոց հետ խոստուկի գեղ գրէ և « Սատանի խիար ծ արամ, իր տակն ծ արամ. մեղրով շաֆ արա », եւայլն:

2711. Սատանի ծառ.

Այսպէս կոչէ Ասար զՄառանց պտուղն, որ է Աբլիմէլիքն:

Սատապ. Սատաֆ խոպ. — Տես Սագապ:

2712. * Սատէճ. — Տես կած և կասկած:

2713. * Սարախ.

Կամարկապցին կ'ըսէ. « Ինքն սեւ տակ է, և ճղերն յիրար կպած, աղէկն ի » գէճ տեղի լինի »: Հաւանօրէն է հետեւեալն ժանօթագոյն Ար. լեզուաւ,

2714. * Սարախս կամ Սէրախս.

سرخس , որ է Պտերն Լ. *Filix*, Φ . *Fougère*. զոր տես. Թ. 2604:

2715. Սարաճաղիկ.

Դունագոյն անուշահոտ ծաղիկ մի, կ'ըսէ օրագիր մի:

2716. Սարդ. Սարդենի.

Կապայի ծառն է, տես զայս, որ եւ Դափնի:

2717. Սարդոյ.

Մահաբեր խոտ մի ի Սարդենիա կղզի, կ'ըսէ Ռոջքեանն, և ի գրոց այլ վկայութիւններ բերէ. Լ. անուանէ *Sardoa*, Յիշած եմք զայս Կենատ անուան ներքեւ, որ Թերեւս յարմարուած է մահաբերի նշանակութեամբ՝ իբր կենաց - հատանող, այն տեղ նշանակած եմք և այժմու գործածուած Լ. անունը:

2718. Սարի խնձոր.

Այսպէս անուանած է ասվօրէն Ալոմն, ինչպէս և ուրիշ լեզուաց մէջ:

2719. Սարկաղնի.

Լերան կաղնի ծառ նշանակէ, և յատկապէս Գղթոր ունեցող տեսակը:

2720. Սարկաւի.

Մեր ազգային հին բժշկաց մէկն՝ կարեւոր տեղեկութիւն մի ընծայէ. « Դեղ
» փայծեղան, որ ես նուաստ Ստեփաննոս (որդի Ահարոնի) զուգեցի յԵղեսիա,
» դիպակագործ մարդոյ, և տգէտ մարդոյ խօսք և բժշկայան գործս, ապա չի
» պիտի քամահրել զտգէտ մարդոյ խօսքն ամենեւին: Խոտ մի կայ իր անունն
» Սարկաւի ասեն (Սարկօի գրուած), իր նշանն այս է. երկանուկ լինի քիչ մի
» կամ այլ եվելի, միանեղ է, և կամ երեքեղ բուսնի, ի Նաքրէն? որ է Կո-
» տրիսի? նման լինի գունոջն կերպոջն, ապա այլ մեծ տերեւ է որ քիչ ու լայն,
» Ուրհայու այգիքն լինի և ի լեռան շատ լինի: Ա՛ռ զայն, չորցու և լուէ, և
» Թերախորով ձու խառնէ, և տուր որ ուտէ. Թէ քսան տարուն փայծղան մեծ
» և ցաւ լինի՝ զամէն տանի. օգտէ կամօքն Աստուծոյ »: Թէ և տարակուսական
բառեր կան այս գրուածիս մէջ, բայց անտարակոյս երեւի բուսոյ անունն Սար-
կաւի, որ և նախընթաց անուան պէս բարգած Թուի Սար (լեռնային) բառով,
իսկ կառի՝ Թէ և առանձինն յիշուած չէ, բայց ուրիշ բարգաւած անուամբ այլ
գտուի, Օճկա-կառի. իսկ միւս երկու ստորագծեալ անուանքն հետաքննելի են:

2721. * Սարղանդ.

Ար. *تارخاس*. « Խոտ-մն է որ ի տակէն շատ ճղեր կու ելնէ, և յաւազի մէջ
» կու բուսնի, և սպիտակ ծաղիկ կ'ունենայ. և յորժամ հանեն ի տեղացն՝
» զէտ քամած կապայ կու ոլորվի. և այս խոտիտ տակն բան կու անցնի և այլ
» տեղն չի անցնիլ. Թէ եռցընեն և զլուրն խմեն, զանձն գիրցընէ, և Թէ հոտ-
» վրտան և Թէ ծխեն՝ զըղեղն ուժովցընէ. և օգտէ զուգամին՝ շատ և շուտ »:
— Լ. *Telephium imperati*, ըստ Թարգմանչին Պէյթարայ:

2722. * Սարմախ. — Տեա Դարք:

2723. Սարոյ. Սարւէ.

Հաւանօրէն ի սարերն գտնուելուն համար այսպէս կոչուած վայրի ծառ.
տեսակն որոշել գժուար է, որովհետեւ Թէպէտ Ս. Գրոց մէջ շատ անգամ յի-
շուած է՝ բայց հայ Թարգմանիչն Յ. բնագրին մէկ բառի տեղ՝ քանի մի անուն
գնէ, Թուի Թէ չկարենալով որոշել յատուկը՝ նմաններն այլ յիշէ: Գայիենոսի
բառից մէջ կայ գրուած Սարսէն իրր հոմանիշ Կիպարիսի, նոյնպէս Ս. Գրոց
մէջ այլ տեղ մի յարմարին ասոնք իրարու. Ռոշքեանն Բեւեկնի համարի զՍարոյ,
և պտուղն խընկի տեղ ծխուի կ'ըսէ. այսոր համաձայնի մատամբ և սաղմոսա-
մեկնիչն Դանիէլ ասորի (Սարզմ. 37). « Սարոյն՝ բնութեամբ անուշահոտ է, և
» փայտ նորա կարծր և առանց փտութեան, և ոչ յորդանց ապականի. և յոյժ
» վայելէ գեղեցիկ գործոց և դրօշելոց և քանդակուածոց, և զարդարէ զգրունս
» տաճարաց. այլ և բնութեամբ ջերմին է, և պտուղ նորին օգտակար. եփեալ

» և ճաշակեալ՝ ծիրանուց և դեղնագուանի երեսաց օգնէ, և զլուրն պտղոցն եփեալ
» և պնդեալ՝ վաղվաղակի ի խոնարհ ձգեալ արբէ զդեղնութիւն մաղասայ: . . Դար-
» ձեալ, յաճախէ ծառս այս բազում ստտովք՝ յարմատոյ մինչեւ ի վեր. և որ կամի
» ելանել ի գլուխ նորա՝ դիւրաւ ելցէ ընդ ստտս նորա »:

2724. Սարու ճաղիկ.

Առանց յատուկ անուան այսպէս կոչեն ի կողմանս Սասնոյ՝ Թուփ մի, քարոտ
տեղերում, որոյ ծաղիկք շուտով Թափին, և շորջուցած ի գործ ածուին իրրեւ
քրտնեցուցիչ, նա եւ մաքրիչ, և ուռեցքներու կակղիչ: Գուցէ ըլլայ վերայիշեալ
Սարածաղիկն (Թ. 2718):

2725. Սարուն ?

Գուցէ վերոյգրեալն ըլլայ, և գրուի նոյն Գալիենոսի բառից մէջ, համանիչ Եղի-
բացրաւննի ? Յ. մօտիկ ձայնով՝ Πλιόξανθρος նշանակէ Արեւու բղէղ, միջևս մի:

2726. Սարսենիկ.

Սերաստիոյ կողմերում լսուի Կասպայի տեղ. Թուի Դարսենիկ անունն այլալած:

2727. Սարտակ ?

Բայտնի չէ ինչ ըլլալն. հին Բժշկոր. քոսի և խաղուարտի գեղ գրէ՝ Գիոյ տերեւ
ծեծած խառնել Սարտակի հետ և վրան դնել:

2728. * Սարքուլա. — Տես Անձխոտ, Թ. 11.

Սաւդուկ. — Տես Սապտուչի:

2729. Սափառնիա.

Բժշկարան մի այսպէս կոչէ զՄենբեկ, և « ի Ղայսարի (Կեոարիոյ) գեղանն՝
» շատ կայ », կ'ըսէ:

2730. * Սաֆսաֆ. — Տես Ուռի:

2731. Սաֆտաֆ.

Կըրնար վերնոյն հետ շիոթուած և սխալ գրուած համարուիլ, բայց համանիչ
բառն զոր գրէ Բժշկարան մի՝ տարբեր բոյս ցուցընէ, և գրածն է Գօզդեսպիենե,
այսինքն Cochlearia կոչուած դրգալաձեւ տերեւեզ ազգ մի բուսոց հիւսիսային և բա-
րեխառն կլիմայից. որոյ մէկ տեսակն Coch. Aucherij տեսնուած է յԵղնկա, ի
Թորթում.

2732. Սգուճնի.

Անշուշտ Զղեարենին է. տես զայս:

2733. Սելեմուկ.

« Աղբերաց առջեւ բուսած բոյս մը », ըստ Սերաստացոց: (Պատկ. Գ, 279):

2734. Սելխ.

Մանթ մեծ պտուղ կամ բերք բանջարեղինի, որ Պատեխ, Պտեխ, Պթեխ այլ կ'ըսուի Ար. բառով, որով երբեմն և Սելխի ընկեր Չմերուկն այլ, ինչպէս յիշած եմք (Ք. 1788. 2516). « Պատեխ որ է Սելխն, ինքն յայտնի է, կ'ըսէ մեր Ամատիացին. » չորս ցեղ է. և լաւն այն է որ Սամարղանդի լինի, հով և գէճ է Բ արճ. թէ զհաւսունն ուտեն՝ զգոզն կու յորգորէ և ճլէ տայ. և թէ զիր միան աչացն ուտեցին տէ անեա՝ օգտէ. և թէ զիր կեղեւն ի ճակատն կայցընես՝ զնուզլան որ ի յաչքն իջնու՝ կու կարէ, և զմարմինն կու կակղացընէ, և զկուրծքն և զխոչակն այլ կու կակղացընէ... Եւ թէ զիր կեղեւն չորցընես և թէ պտուկ մի միա գնես՝ որ յուշ եփի, որպէս պախրու միս և որ սոցին նման է, և կտոր մի կեղեւէն ի վերայ ձգես, շուտ մի եփի, փորձիւ է. և թէ զկեղեւն չորացընեն և ցաւած ակուային ծխեն, և աչաց որ ձմաթուռ է՝ ծխէ, օգտէ: — Ալաստկ. գիրքն Սելխի մշակու. թիւը՝ կօղայի և Դոլումի նման գրէ (ՄԿԸ), իսկ հին Բժշկը. կ'ըսէ. « Հասած Սելխ՝ հով ու գէճ է յ' Բ արճ. և գէճն շատ է քան զչորութիւնն. և թէ զինք ի գրուցէ ընդ անձն ածես՝ որբէ զկային, և հունդն՝ զգոզն յորգորէ, զքարն հանէ յերկմանց և ի բշտէ. շոյտ գնայ ի ստամոքէ. և որ ուտէ՝ շոյտ ի սափրա փոխի և պղղամ. և ամենայն ցաւոց օգնական է, և յիրկայնն լաւ է քան զորոր. և հասած կեր. տաք բնութիւնն թէ ուտէ՝ Աքնճպի խմէ ի վերայ, և հով բնութիւնն՝ անպակ գինի մէկ կ'Թխայ. և Կերմնատի՝ չէ աղէկ ուտելն, զի խանգրէ զստամոք. և զկեղեւն մի ուտեր, զի յուշ հայի »: — 1. Cucumis Melo, ֆ. Melon Ռ. Дыня. Ար. بطنج . Թ. Գալխու. ۱۷۹۳: Սելխի այլեւայլ տեսակաց ոմանց զատ ա. նուաճք լսուին և ի Հայս. ինչպէս Դուղմակ, Շաղխ, զորս յիշած եմք, իսկ Պրեխ, Շամամ, Խարրգակ, հասարակօրէն Չմերուկի վերաբերին:

2735. * Սեկուտ.

Իբրեւ հայերէն գործածուած է նոր Բժշկարանաց մէջ. բայց Թ. Սեկուտ, բառն է, որ է, Ուռի, Ուռենի:

2736. Սեպր.

Աղելով ուտելի բանջարեղէն մի կ'ըսուի. — (Երեմ. Հայրենիք 317):

2737. Սեռիկ.

Գեղաբունոյ կողմանց բուսոց մէջ յիշուի առանց բացատրութեան:

2738. Սերկեւիլ. Սերկեւլի.

Ընտանի ծառոց մեծագոյն պտղաբերն, թէ հում և թէ եփած ուտելի, մանաւանդ չաքարով, ախորժահամ և առողջարար. ինչպէս ինքնին վկայած է՝ բերնով Առա.

կախօսին (ծք), երբ Դեղձն կու ծաղրէր զնա դեղնութեանն համար, և սա պատասխանէր, « Ես գեղին եմ՝ զի ցաւակցիմ՝ հիւանդաց, ի տես երթալով և զհիւանդ » դուքին բառնալով, և ոչ որպէս դու հալածեալ ի հիւանդաց »: — Ամիրս. գրէ Ար. Սաֆարձի կամ Սէֆերձի *سجدها* անուամբ համառօտ, վասն զի Պէյթար մոռցեր է եզեր գրել, յետոյ աւելցուցեր է, և գրածն ամեն օրինակաց մէջ այլ չէ մտած. Թուի թէ Ամասիացին այլ չէ գտած երկար բացատրած օրինակ մի. « Ինքն » երկու ազգ է, կ'ըսէ, մէկն քաղցր և մէկն թթու, աղէկն քաղցր է, բնութիւնն » հով և չոր է և տրճ. շափն՝ քանի որ կարիքն է: Ասէ Զուլուս, թէ օգտէ լերդին » և ստամոքին և սրտին. և թէ յանօթուց ուտէ՝ զփորն կապէ և զծարուն » կտրէ. . բայց ծերոցն զին առնէ խիստ »: Դարձեալ գրէ, « Սերկեւիլն խորվէ » և կեր մեղրով, զմիտքն բանայ, և զփորն կապէ »: — Լ. Cidonia, յանուն Կիւզոն քաղաքի Կրետեայ, որ բնիկ տեղ համարուի Սերկեւիլի, որայ համար և Կրետացի խճճոր կոչուէր, *Μηλον Κιδωνιον*. Փ. *Cognassier*, Թ. Այվա Ռ. *Дубок* *квешовое* *дерево*. Հասարակ տեսակն յիշուած է յԵւրոպացի տեղագրաց՝ ի Խարբերդ: — Պատմական յիշատակաւ նշանաւոր գիւղն Սերկեւիլի յԱլքարաւս՝ տայ կարծիք որ այս ծառայ և պտղոյ բերքէն առած ըլլայ անունը. Թուի թէ և Արաբացիք ի Հայոց առած ըլլան: Հին ժամանակ Քրիստոսէ վեց եօթն դար առաջ յիշուի Սերկեւիլն առ Յոյնս, իբրեւ պերազանց կամ նուիրական պտուղ մի, արժանի Եսպերական պարտիզաց, և հարսանեաց մէջ նշանակութիւն մ'ունէր, Աստղական նուիրուած, զոր նկարէին ելրեմն Սերկեւիլ ի ձեռին. յարեւելս այլ խնամով դարմանուէր, և ինչուան հիմայ շաքրով կամ մեղրով սնուցածն՝ յառաջաւորուած ուտելիք է: Վաստկ. գիրքն այլ կ'ըսէ (ՄԻԵ) այսօր համար, թէ շատ աւելի « աղէկ տեղի ախորժէ (քան Խնձորն. Տանձն, Սալորն, Կեռասն, Եւայլն, որք) « համսձայնք են միմեանց »: — Հին Բժշկարանն գրէ Սերկեւիլի բժշկական յատկութեանց համար. « Փոթոթ է քան զՍիինձ. օգտէ սաֆրայի որ ի ստամոքն. » զստամոքն փոյթօտէ, զփոր կապէ, զգոզն յորդորէ և որ արոյն թքնու՝ կարէ » զարոյն, զսաֆրան հաճնդէ. իր ըմբելին՝ եր սատակ ինի՝ զփորն կապէ, և » խիստ շող ստամոքի օգտէ. և այս ըմբելիտ շատ մնայ քան զայլ ցեղերն: Եթ » ուտեն զՍերկեւիլ՝ յուշ զնայ ի ստամոքէ, զՆուրն ծծէ և զինք ձգէ, այսպէս » և զամենայն միրգ. . . Սերկեւիլ ու Խնձոր ու Տանձ՝ ի կշտելեց կեր, և որ » Սերկեւիլ շատ ուտէ՝ կոյինձ ընծայէ, ապա և Թուխմա այնէ »:

2739. Սեւախրուկ.

Երկայն և կով տերեւով բանջարեղէն մի, աղցանով ուտելի անուշահամ, կապուտ կանաչ գունով. (ըստ Աթանաս. եր. 74):

2740. Սեւատեսուկ.

Ըստ Շէհրիմանի է Սէզն. Լ. *Pimpinella*

2741. Սեւ գնտիկ. Սեւ հնտիկ. Սեւուկ հնտիկ.

Տես Արջնդեղ և Եռնիդ: — Բժշկարան մի կ'ըսէ. « Սեւուկ հնդիկն ընդ առաջին դեղերն սահմանեցին՝ Գաղիանոս և այլ իմաստասէրքն »:

2742. ՍԵԼՈՒ ?

Կամարկապցին գրէ. Սեւ? Խիարչամկայ. ինքն Մառեխ? կամ Սելեռն է ո՞:

2743. ՍԵԼՐՍԿԻ ?

Քալիենոսի բառից մէջ գրուած կայ իբրեւ հոմանիչ Մանրագորի:

2744. ՍԵԼՈՒԿ.

Այսպէս կոչուի ի կողմանս ինչ Հայոց՝ սեւ և մանր տեսակ մի կտաւատի. Բայց՝ այն կողմանց ծանօթ բանասէր մի (Չելինսքի) Սելուկ անուան զուգէ Լ. Ustilago Uredo, որ Սընկոց ցեղէն է:

2745. ՍԵԼԳԻՍԻ.

Վայրի ծառոց անուանց հին գրուածի մէջ յիշուի, և նշանակէ Սել Յախ. զոր տես:

2746. ՍՂՆԻ.

Արցախոյ կողմանց վայրի ծառոց հետ յիշուի (Մշակ, ԺԲ, 128. - Ն. Դար, 2, 166. Բարխուդ. 54): Պտուղն կոչուի Սիզն կամ Սեզնը. և է ըստ նախնեաց՝ Սրափուշն. տես զայս: Սխալ մամբ գրուած երեւի ի Նոր Դար, Ը, 170. Սղնի:

2747. ՍԷՂ.

Հասարակ զործածութեամբ՝ զայլար կամ քիչ մի խոնաւ խոտ հասկացուի. բայց յատուկ բոյսեր այլ նշանակէ. Քալիենոսի բառք այսոր հոմանիչ Յ. Ագրիստոս գրեն, որ է Ἀγρόστις, Լ. և Փ. այլ Agrostis, որ Սիզոյ հասարակ նշանակութիւնն ունէր, բայց հիմայ բուսաբանք սեփականեն տեսակի մի՝ զոր կոչեն Gramen, Փ. Obident (Շնատամն). Ար. « Սի, ساء , որ է Սէզ, որ է ունէր, հիմայ Այրիս. լաւն այն « է որ թաժայ լինի... Իպտ. » ասէ, թէ ինքն խոտ-մն է որ ինքն հանգուս հանգուս կու » լինի, և տերեւն յերկան լինի. նման Մայթրունին տե » բեւին, և Տ. այս խոտիս կ'ասեն Այրիս օրի... և ցեղ-մն » այլ կու լինի՝ որ տերեւն նման է Սխտորին տերեւին, և » այս խոտիս Հ. Սէզ կ'ասեն, և ծաղիկն սպիտակ կու լինի, » և տակն հինգ վեց ճիւղ կու լինի, և հաստութիւնն մատի » մի շափ կու լինի, և կակուղ և քաղցր կու լինի.. և ի յայ » զեստանն շատ կու բուսնի, և ի յարտերն այլ կու բուսնի շատ: Եւ ազգ մի » այլ կու պատմէ զրոցս շինողն զայս խոտս որ Սիլ կ'ասեն, և Նամիլ և Նամիր » այլ կ'ասեն, և Պ. Փոքրիս կ'ասեն, և ինքն Խարչաֆին (Կանգառ) ցեղերուն » է. և բնութիւնն հով և չոր է յ'Ա տրճ ո՞: — Այս տեսակ Սիզոյ Հ. յատուկ ա » նուն երեւի Արտաանայի. տես Թ. 224: — Սէզ նշանակէ և զՎաղսեռուկ. ըստ Սիմ, Կամարկապեցոյ:



Սէզ.

2748. Սէզ որդան.

Այրարատայ յատուկ բերոց մէկ նշանաւորն է՝ բոսորագոյն կարմիր ներկ մի տուող Որդն, որ ջրի մէջ եռցընելով կու տայ այն գեղեցիկ Որդան կարմիր ըտուած գոյնը. իսկ Որդն կ'ըլլայ քանի մի տեսակ խոտոց և տնկոց վրայ, որ Սէզ կոչուին ի հին հեղինակաց մերոց, ինչպէս խորեն. յԱշխարհգր. կ'ըսէ. « Ունի » Այրարատ Որդն՝ յարմատոյ Սիզոյ, առ ի զարդ կարմրութեան », կամ Սիզաբերեալ գրուած. այս Սէզս յատուկ է Pimpinella կոչուի: Բայց այս ընդհանուր անուամբ շատ տեսակք Սիզոց կան, յորոց յիշուին մեր կողմերում, P. Corymbosa ի Բարբերդ, Թորթում. Մարաշ. — P. Peucedanifolia ի Ղախնաւան, Գարապաղ. — P. Saxifraga ի Կարին, Պինկէօլ. — P. Rhodantha ի Մանախ, Ճիմիլ շ. — P. Antriscoides, ի Հր. Հայս. — Որդնաբերն գտուի բնիկ Այրարատէ գուրս և յԵրեւան և ի Կարին:

Սիզն.

Պտուղ Սզնի ծառոյ տես զայս:

2749. Սիլսիլ.

Մանօթ է ի Հայս այս անուամբ ընդեղէն մի Յորենի կամ Հանարի տեսակ:

2750. Սիճ.

Բժշկարան մի գրէ Ար. Սըլլում, Լ. Սէլէն. եթէ սա է Selinum, Փ. Selin, ապա Սիճ՝ Լախուրն է կամ Կարոս:

2751. Սին.

Եթէ ստոյգ այսչափ գրուած է, նոյն է Փշատի հետ, Թերեւս իր փոշտեսակ մարմնոյն համար՝ բառին հասարակ նշանակութեամբ այսպէս կոչուած, իբր դատարկ, շնչին պտուղ մի. որ և իր փոտած փոշոտած վիճակին մէջ պիտանի կամ ուտելի կ'ըլլայ. բայց կրնայ կարծուիլ թէ գրուածին վերջը 2 տառ մ'այլ տուել, ցընելու էր, և Պ'ըլլար

2752. Սինձ. Մնձնի.

Այս անուամբ հասարակօրէն կ'իմացուի Չղեարի նման աւելի կակուղ և աւնոյշ տափակ կուտերով պտուղ մի, որ կոչուի Լ. Sorbus, Փ. Sorbo, Բ. Խոլէգ. բայց մեր Բժշկարանաց և այլ գրուածոց մէջ շփոթուին և նոյն անուն գրուին Սինձ, Փշատ և Արձ. Ար. Ղուպայրա Խըյճ անունը՝ Թարգմանչին Sorbo գրէ, բայց նկարագրութիւնն է Փշատի, ինչպէս և Ամիրս. կու գրէ, (տես ի Փշատ), և չի յիշուի ի Պէյթարայ. Թերեւս ծանօթ չէր իրեն և ոչ իր Թարգմանչին: — Բժշկարան մի գրէ միաւորելով, « Սինձ, որ է Բ. Խոտան, որ է Փշատն »: — Ռոչքեանն գրէ, « Երա՛ յորմէ խէժ ծորի առատագոյն և յատակագոյն ծուծ » հանի՛ քան ի Պկամէն ». և վկայութիւն բերէ ի Յայամաւորաց (Իեկտ. 16).

« Կապեցին զՓիլիմոն ի ՍՇՃՆՆԻ ծառ մի և նետաձիգ լինէին առ նա »: Առանց զանազանութեան գրէ հին Բժշկը, « Սինձն զփորն կապէ, զՍտամոքն փոյթտէ » և քիչ կերակրէ. և զինք մի ուտեր զէտ այլ միրգ. ապա քիչ կեր »:

2753. — Սինձ.

Նշանակէ ուրիշ բոյսեր այլ. բառք Գալիենոսի Սինձ գրեն Յ. Μελίμλον, որ անոյշ Խնձոր ըսել է, և ըստ Բժշկարանաց Ալոսին է. Կամարկապցին Միեակի լիոն գրէ, և կ'ըսէ « Ինքն է Սինձն, բանճար է, կ'ուսվի, և քէօքն սղկեն, շի. » ըրչ անեն »: Հիմայ այլ ծանօթ է ի Հայս այս բանջարս, նեղ երկայն գուռ շերտերով և պարարտ համով. ձեւին համար ոմանց թուեցաւ թէ նոյն ըլլայ ընդ Գագի կամ Գուգիկն, և ըստ Լ. Scorzonera Hispanica. — Հին Բժշկարանն ուրիշ բուսոյ զուգէ. « Քոչմորուք՝ Սինձն է, որ Թ. Էմիլիք ասէ »: զայս զրելով և նոր Բժշկարան՝ կ'աւելցընէ զՇակակուլ՝ իբր հոմանիշ: — Լոնք ծաղկարան Սալաձորեցոյն այլ.

« Սինձն, իրիցուկն ու Եղերգակն կու ըսպասեն Արեւորգուն,
..... չըրջին զօրն հեա արեւուն »:

Սինտրուկ կամ Սինդրիկ. — Տես Մնորոսկ:

2754. Սիպեղ կամ Սիվեղ.

Հին Բժշկարանն յիշէ՝ « Սիվեղան արմատ, եփէ մեղրով և զինով, և ուտէ », զօրանայու համար: Ասար այլ թղթացաւութեան գեղ զուգէ (ձե), « Մատուտակ և Սիվեղ »: Հասարակ ուտելի բանջարեղէն է, շատ կողմեր գտուի ի Հայս, կարսի նման, բայց հաւասար երկայն սղոցաձեւ տերեւք, և ցածկեկ. կայ տեսակ որոյ վերի կողմն աւելի լայնեկ է: Եւրոպացի գիտնականք այլ ճանչցած են, մէկն անուանէ Լ. Coronopus, որ Գաղտիկոի ցեղէն է, միւսն (Պիպերչոյան, Գ, 207) Bunium Falcaria. — Թ. Գագ այսաղը (Սագի ոտք): Տեղացիք (ի Կարին և ուրիշ կողմեր) եղով տապկած կ'ուտեն զայս:

2755. Սիսամբար. Սուսամբար.

Այս անուամբ երկու կամ երեք տեսակ բոյս կ'երեւցընեն մեր Բժշկարանք և ուրիշ գրողք. մէկն է վարսամ կամ վարսաման. զոր տես ի կարգին: Միւսն ըստ Բժշկարանի միոյ՝ է Լ. Alisma Plantago, Փ. Plantain d'eau. (Տես Հոգուի փող): Դարձեալ ըստ ոմանց է Անճարակն, տես Թ. 116, և ըստ ոմանց Թ. Մանա Նանեկի կոչուած Աննուխն: — Իսկ ըստ Սալաձորեցոյն,

« Այն Սուսամբար ծաղիկն որ կայ՝ ինքըն կարմիր պայծառագոյն,
Երբ որ բացուի վերայ թըփոյն՝ խիստ գեղեցիկ է ու սիրուն »:

Երգչի երկրէն (ի Կարնոյ) խաւրուած փոքր սպիտակարմիր ծաղկով Սուսամբար կոչուածը՝ բուսածանաչք կոչեցին Ranunculus aoris. — Մի. Հերացի յիշէ զՍիսամբար ի գեղս Լեւոնանց (եր. 11):

2756. Սիսարբաւղ.

Այսպէս գրուած ի Բառազիրս Ռիփոլայ, իբրեւ ի գարնան բացւող ծաղիկ մի:

2757. Սիսեռն.

Մանօթ ընդեղէն, Լուիսօսի և Ոսպան ընկեր. — Լ. Cicer, Փ. Pois Chiche, Ռ. Бараний горохъ. Թ. Նօհնտ. Ար. Հոռնգ ۱۳۳۰. « Երեք ազգ է ինքն, » ըստ Ամիրտ. մէկն սեւ, մէկն սպիտակ, մէկն կարմիր. աղէկն՝ եփուեն. բը- » նութիւնն տաք է և գէճ է, չաքն՝ քանի որ պիտի: Ասէ Քաղիանոս, թէ զինքն » Թրջեա և կտվեա և եփեա. . զպղղամն կտրէ և զգորն կակղացընէ, բայց երիկա- » մաց և հալարբաին զեն առնէ, և թէ կեղեւովն ուտէ՝ յինքն քամի ընկեանու և » զեն առնէ: . . Իպն ասէ, թէ ի լուսնանորուն առաջի օրն յամենայն կոծիծի վե- » րայ մէկ հատ Սեսեռ զնեա և կապեա, և կենայ մէկ ժամ, և յետոյ զամէնն ի մէկ » լաթ մի կապեա և յետեւզ քաշեա, այն կոծիծնին ընկնին: . . Քան զամէն ցեղերն » Սեսն ուժով է, բայց լաւն այն է որ Սպիտակ լինի և խոշոր լինի: . . և այն որ » Վայրի է՝ տաք է և չոր քան զածվոց Սիսեռն, և ի Շիրազ Նօխտոսի Հոռլանի կ'ասեն »: Բժշկարան մի՝ իրօտած՝ աչքի դեղ գրէ Ճերմակ Սոսրբանի Սիսեռն: — Հին Բժշկի. քար ունեցողի կերակուր պատուիրէ Սիսեռը Նշի ձէթով, « և ի հետ » Բողկ ու Քրեվս եփէ, խիստ լաւ է »:


Վաստկ. Գիրքն կ'ըսէ (ԻԲ). « Գիտացիր որ Սիսեռն զծովեզրն խիստ ընդունի, » զի ինքն բնութեամբ խիստ աղի է, և թէ ուզենաս որ զՍիսեռն կանուխ հասու- » ցանեա, նա դու կանուխ հետ գարուն ցանեա՝ որ ճարտար եղանի, ուտելոյ ժա- » մանէ. բայց թէ պահելոյ համար ուղեմաս, նա լաւն այն է որ հետ Ոսպան ցա- » նուի: . . և են ոմանք որ զՍիսեռն նոյն իւր պարկըճովն պահեն և նոյն պարկըճովն » Թրջին և ցանեն, նա խիստ արքենի լինի »: — Նոյնն՝ աւրբւած գինին աղէկը- » նելու համար խրատէ (ՃԾԲ) ազընձած Սիսեռ ձգել կէս լիտր 10 լիտր գինւոյ մէջ: — Քոյնէն զատ ձեւով այլ տարրեր տեսակներ ունի Սիսեռն, ըստ բուսաբանից, որք և յիշեն մեր կողմերում. C. Pinnatifidum ի Խարբերդ. Մանախ, Սնճար, Անթապ. — C. Ervoides, ի Քէշիտաղ լ. — C. Anatolicus ի Կարին, Տրապիզոն, Արգէնո լ:

2758. * Սիսղանի Ծառ.

Տես ինչ որ յիշուած է Ճանկիկ անուան տակ՝ այս ծառիս համար (Թ. 1851):

2759. * Սիսպար.

Այսպէս գրէ Ամիրտ. բայց Պէյթ. Սիսպան سیسبان. « Բոյս—մն է որ երկու » մարզու բարձրութեամբ ի գետնէն ի վեր կու ելնէ, և հաստ կու լինի, և տերեւն » ի Սիսառն տերեւ կու նմանի, և ճղերն բարակ կու լինի, և Հուլպոյի պէս ի վե- » րեւն հունտ ունի, և զտամբոքն կու ամրացընէ և զգորն կու կապէ »: Փռ. Թարգ- » մանն Լ. նոյն անուամբ կոչէ Dolichos Seisban, և է տեսակ մի Սիսառն կամ Դկուզի:



G. Jurebi. inc

Սիպեղ կամ Սիվեղ. թի. 2754.

2760. Սիսուխոս.

Երեւի Սիսեռէ առած անունը՝ անոր նմանութեամբ ինչ. թէ և գրուած կայ ի Բառգիրս Բ առաիւ այլ, Սիսար, և համանիշ՝ Մադոնէ, Լ. Mylo, որ աւելի սովորաբար կ'ըսուի Mylium, և Սխտորոց ցեղէն է:

2761. Սիվիշկ.

Նոր բառհաւաք մի յիշէ առանց բացատրութեան, եթէ չէ շիտթած Չրեշկի հետ:

2762. Սիրալախուր.

Յայտ է որ Լախուրի տեսակ մի պիտի ըլլայ, և ուրիշ տեղ բացատրած եմք Աղպատ անուան տակ (թ. 70), որ տարբեր ուրիշ հոմանիշ անուններ այլ ունի: Եթէ այս բառիս առաջի մասն և արմատն սէր է, առասպելական կամ գիցարանական գաղտնիք մի ծածկէ մոռացեալ հնութեան մէջ: Թէ և տարբեր է սա յԱղուաշրանգէ, բայց հետաքնին գիտնական մի նոյն կամ նման գրելով յետնոյս անուամբ կ'ըսէ, թէ միջին դարուց երեւելի գրչաց մէկն սիրարծարծ և հեշտացուցիչ համարուած աւանգեր է զայն:

2763. Սիրի Սիրի.

Ոչ յատուկ բոյս է՝ այլ Երեքտերեւուկն, Առուայտի տեսակ, բայց իբր յատուկ անուն կոչուի յերիտասարգաց և կուսանաց, որք այնոր երեք տերեւոց վրայ մէկ մէկ կտրիճի կամ աղջկան անձ կ'ըմբռնեն մտք, և կու հարցընեն. « Սիրի Սիրի, » որը կը սիրիս ». բաղդաւոր համարուի կտրիճն կամ աղջիկն՝ եթէ ընտրած տերեւին վրայ իր սիրականին անունը մտադրած ըլլայ հարցընողն: — Թէ ստոյգ աւանդութեամբ և եթէ դիպուածով կ'արժէ յիշել, որ ոչ միայն Հնդկաց Աստղական մէկ անունն է Սրի, այլ և ամուսնաբեր Սրի կոչուած պտուղ մի կայ, ըստ առասպելաց կամ վիպասանից նոցա:

2764. Սիրող.

Անհաճոյ չէ՝ որ բնութեան ամենէն գեղեցիկ արարածոց (ժաղկանց և տնկոց) վրայ՝ Սիրոյ անունն այլ հաղորդուած ըլլայ, թէ և այս յիշուած բոյս շատ գեղեցիկ այլ չէ, բայց սիրոյ գլխաւոր յատկութիւնը կու ցուցընէ, որ է զօրութիւնը, ուժով կապուիլը. և այս երեւի այն տնկին վրայ՝ որոյ յատուկ անուն մ'այլ եղած է Պատտուակ, և է Բադեղն, ըստ կամարկապոյն:

2765. Սիրուն.

Սիրային բառ մ'այլ, որոյ նշանակածն այլ գեղեցկատեսիլ է. Նոսն ծաղիկ. տես ինչ որ այս անուամբ բացատրած եմք. թ. 3327. և զի Գալիենոսի բառից մէջ Սիրոն իբրև յունարէն անուն այս ծաղիկն հոմանիշ է գրուած՝ մեզ անծանօթ է. յիշեմք միայն Σίραιον բառը, որ անուշահոտ եփած գինի նշանակէ և զօրութիւնն այլ Հ. անունէն հետու չէ:

3766. Սլփաճատ ?

Տեսակ Յորենոյ կարմրկեկ և կարծր. լսուի ի Հայս, (ըստ Ալիսնոզեայ):

Սխտոր. — Տես Խտտոր:

3767. Սխտորուկ.

Սխտորահամ բանջարեղէն մի, գուցէ արմատն այլ ռիտորակերպ. պանիր մակարդեղու ի գործ ածուի: Թ. Գեանեղայան կոչուի (ըստ ԱՔանաս 77):

3768. * Սխօլ ?

Ըստ Բժշկարանի միոյ է Սիօլոֆնետարիան, այսինքն Scolopendrium. տես Ար. Ժուանակ:

3769. Սկեզորի ճեր կամ մագ.

Տես Չարխտո: — Անշուշտ հին առասպելէ մ'առնուած է անունս. արեւմտեայք այլ Աստղկան հեր կ'անուանէին, Capillus Veneris, և կանանց մազերը շատընող և գեղեցկացընող համարէին:

3770. Սկղավ.

Հին Բժշկարան մեր նկարագրէ զայս. « Սկղավն բուսնի ի լերինս և ի քա. »
 « բուտ տեղեստան, և է անծաղիկ և անսերմ, բարձր է զէդ կանգուն մի և »
 « հաստ քան ի բոյթո. ճղերն նօսր և սփռին աստ և անդ որպէս Կաղըշնանի, »
 « և տերեւն նման լեզուոյ և բոյթի ձեռին. ներքի դեհի տերեւն դէպ ի վայր է »
 « և վերի դեհին ի կանգուն, և միջին նմանութեամբ որպէս ական գրեկ? և »
 « դրուցի տերեւն խարտէշ ոսկեգոյն: Ա՛ռ գինք զամէնն նոյն արմատովն, ի չըքի »
 « շորցս և աղա մանր, և շաղղէ սպիտակ մեղրով և պահէ յապիկէ աման, զգործ »
 « Թրիակի գործէ. ապա տուր որոց ի մահացու դեղոյ երկեղ կայ՝ յառաջ քան »
 « զհաց ուտել, մեծագոյն քան զկէս Կաղնոյ, և պահէ զմարդն... որ վախէ գի. »
 « շերն՝ որ է խափական. և որ արոյն բերէ ի վերնատանցն, տուր քաջխով և »
 « եղկ չրով, և ստամոքցվաց գինով տուր. հազոյ և խճշտաց՝ եղկ չրով. »
 « որովայնացվի՝ եղկ գինով, լերդցվի՝ չրով. սոնցվի, չրգոյի, անդամալուծի, »
 « դողդոշտաց՝ մեղրով »: — Այս քան բացատրութիւնն թերեւս գիտնոց բա. »
 « ւական ըլլայ այս մեզ անծանօթ բուսոյ և անուան համար, որ նմանի քիչ մի »
 « L. Scilla, և Ար. Սկղայ կամ Անսոլ Եօւէ կոչուած Ժանօթ Մկնստից, Յ. »
 « այլ Σικύα վարընգի և Դրուսի տեսակներ նշանակէ. բայց Սկղավի նկարագրու. »
 « Թեան շին յարմարիբ:

3771. Սղանգն. — Տես Չրեսանգ.

Սղնի.

Սխալ գրուած երեւի, փոխանակ Սիզն կամ Սզնի. տես Թ. 3748:

3772. Սղոցի .

Վայրի ծառ մի, որ յիշուի ի Ս. Գիրոս, ի մարգարէութեան Դանիէլի, Կու-
շանայ պատմութեան մէջ. Վաստակոց գիրքն (եթէ չէ շփոթած ուրիշ ծառի հետ)
Սեփիանի ծառ կոչէ, Լ. Plex, Իտ. Elce, Փ. Jouse. Հասարակ կաղնեաց ազգէն
է, և այսպէս անուանած իր տերեւոց եզերքն սղոցի պէս ակուայ ակուայ ըլլալուն
համար. իր պալուտն կամ պտուղն քիչ մի անուշութիւն ունի:

3773. Սղոցիկ .

Բոյս կամ ծաղիկ մի Գեղարունոյ կողմերում յիշուած . (Տէր Աւետիք 48):

3774. Սմաղ .

Ըստ Բախտամեանցի (եր. 37) է Չրիշին:

3775. Սմբուլ. Սմկուլ. Մնբուլ. Սմֆուլ .

Որոյ կապոյտ գունոյ համար Սալաձորցին ըսեր է, թէ « Կապոյտ է հագեր » .
այլևայլ տեսակ անուշահոտ ծաղկունք են, զորս նշանակած եմք Նարգոս անուամբ:
Յեշեմէ հօս հին Բժշկարանի գրածն ի կարգի Համեմաց, ս՝ Սեւն (Սմֆուլ) լաւ
է քան զկարմրազոյնն »:

3776. Սմբուկ .

Այսպէս կոչուի տեղ տեղ ի Հայս, և ի նոր Բժշկարանս՝ Պատինճանն: Բառին
նուազական մասնիկն կարծել տայ Սուսք պարզ անունէ մի ծագուած ըլլալ:

3777 . * Սմիղակ .

Ասինքն է Smilax. տես Գեղձի:

3778. Սմինդր . Սիմինդր .

Հացեղէն ընդեղինաց բարակ ալիւրն կամ Նաշիհն համարուի՝ այսպէս կոչուած
ի գիրս. բայց նորերս յատուկ կ'իմանան այս անուամբ զՄայծն (տես թ. 1961):
Սրգեօք վանական Վ. այլ յ՝ժԳ գարու այսպէս կ'իմանար, երբ կու մեկնէր,
« Երկու աղայ ի մի երկանն, զմին աղունն, որպէս զՍիմինարն, նախ կորկոտ և
» ապա Նաշիհ »: Հին Բժշկր. այլ իբր յատուկ ընդեղէն չի յիշեր զՍիմինդր,
այլ զՍիմինդրառոյ, սրով եփուած կորեկն և Հանարն՝ աղէկ կերակրեն, կ'ըսէ:

3779. Սմնակ .

Գունագոյն ծաղկանց հետ յիշուի յԱգաթանգեղոսէ. ինչուան Ժ դար այլ այս
անուամբ ծանօթ է եղեր ի Հայս. զի հին Բժշկարանն այլ յիշէ. « Սմնակն տաք
» ու չոր է, օգտէ պղղամին և զիճութեան և հով բնութեան մարդոյ, և զլիսա-
» ցաւի որ ի հովէ և ի սաւտայէ, և որ կէս զլիսոյն ցաւի, և այն ցաւուն՝ որոյ
» ծնօտն թափի »:

2780. Սմբւմ. Սմամուկ .

Առաջնայն համար Ռիվուա ի Բառագրին կ'ըսէ, « Սերմն նման կտաւատի, յորմէ » իւղ հանեն » . այսինքն է Սուսամե կամ Սիւնիմե Ար. բառա . տես Կնչիթ . Երկրորդին համար տես Սոսեմ :

2781. Մնգենի .

Սունկի տունկն , որոյ համար գրէ Ռոշեանն , « Փոքր ծառ է , որ զվատ կազինս » բերէ և զյոյժ թանձր կեղեւ ունի , յոր յենուլ սովոր են որք լսողաւ սւտանին » : Ծանօթ է ամենուն այս ծառոյ փայտին թեթեւութիւնն , և գործածութիւնն , մանաւանդ ձկնօրսաց կարթերու համար : լողցողաց վերաբարձող նեցուկ , և իմաստասիրաց ոչ արհամարհ զարմացք մի շնչին նիւթով ծովերու մեծ ու պղտիկ ալեաց վրայ , իրրեւ անփոյթ և անբոյթ որորան : Ռոշեանն վկայութիւն բերէ յԱռաքէլ Կաղասացէ .

« Ընդ Սընգենեաւ յողին անկեալ , Սողուն հըզօր ի նա դիմեալ » :

Լ. Sabot, ֆ. Liège. Տես Սունկն :

2782. Մնգոյրատակ .

Որ և Երկատակ . Գալիենոսի բառից մէջ : այլայլած համանիչն գրուի Լիենատոփիր ? ի նորոց ոմն կ'ըսէ թէ Հափաձիպա է , այսինքն Խարի , Լ. Anohusa . Իսկ ըստ այլոց նշանակէ Belladonna կոչուած բոյսն , ուսկից հին ատեն կանայք իրենց համար Սնգոյր մի կու հանէին . այն պատճառաւ այս Հ . և Լ . անուններն առած է :



Սնգոյրատակ .

2783. Մնգրուեղ .

Խորեն . Աշխարհգր . մէջ յիւրի ի կարգի Տարբոպանիա (Սէլլան) կղզւոյ բերաց . հին Բժշկարանն այլ բերնի և կոկորդի դեղ խախալ պատուիրէ . « Մեղր և Զմուռ , » գինի և Սնգրվեղ , երկու երկու գեկան աղա և խախալեցո » : — Անգիտաց անպէտն յայտնէ որ Զնեղպիլն է . տես Կոնապղպեղ :

3784. Մնդրի տակ . Մնարի .

Հին Բժշկը . զոյգ գրէ Յ . բառերով « Սօսն (կամ Սօսան) Կոփօն (կամ Կփօն) » կամ Երեանակ կամ Մնգրին » . ուրիշ մի . « Սնգրի տակ՝ Լըրեանակ է , որ Եա . » խաղուլ » , այսինքն Եակակուլ որ և Վայրի Ստեպղին կոչուի : Ամիրս . գրէ Սըն . գրենի համար , « է Ոչդարդն , ինքն դեղին տակեր է , և լաւն այն է որ հաստ և » պինգ և յատակ լինի և առողջ լինի » , եւ այլն . Ար . ۱۳۱۴۵ . Լ . Tordylium Secosul . Պէթար կ'ըսէ , թէ տերեւներն կու նմանին Պէսիլոս կոչուած (۲۱۳۳۲) ածուոց Ոլտուան (Pisum arvense) , արմատներն մատնաշափ հաստ՝ կրթէ գետնի երեսը կու տարածին . ամէն հանգուդէն մէկ մէկ տերեւ կ'ենլէ , որձային գագա . թէն այլ մանիլագոյն ծաղիկ մի ի գարնան , ուսկից կու գայ Սիտուան շափ հատ մի . սեւ և անոյշ հիւթով . դով և գէճ տեղուանք կու բուսնի՝ մեծ ծառոց կոճղերու քով . հնձոց ատեն պէտք է քաղել : — Ըստ սմանց է տակ՝ Լ . Eremodaucous կոչուածին :

3785. Մնդրուկ կամ Սինարուկ .

Նման և ճերմակ քան զՄնեքեկ , ըստ Բախտամ . (եր . 100) : Տես և Սանարուկ :

Մնկենի . — Տես Սնգենի :

Մնծենի . Մնծնի .

Տես Սինձ ծառն : Ըստ Վաստակ . գրոց (ՄԻԸ) այն ծառերէն է՝ որ լաւ կու շատ . նան լանջիած շաղով , և ոչ հունտով :

3786. Մնովպար . Սինուպրի . Սոնուպար . Մնուպար . Սոնուպրի .

Ար . ۱۳۱۴۵ . Արարացւոց և իրենց յաջորդաց հետ մտած է այս անունն , ի Հայս , որ ի հնուց կոչուէր Փիձի . տես զայս . Զգիտեմ ինչ նմանութեամբ կամ յարմարութեամբ գրած է բնախօս մի . « Եղաւ ի սիրտն՝ բնական ջերմութիւն , » ըստ կերպի Սնուպարի , գոյնն թուի կարմիր և խիստ և պինտ անախտելի ? »

3787. Մնչիկ .

Տեսակ մի Տանձի , որ պահուի ի ձմրան :

3788. Սոլոպուր կամ Սոլոփուր .

Այսպէս կոչուի Հիմայ Լ . Brassica Napus , Փ . Chou Navet կոչուած Կաղամբի տեսակն . բայց ըստ այլոց կարծրկեկ ճղերով և երկայն բարակ տերեւներով խոտեղէն կամ Թփիկ մ'է :

Մնֆուլ . Տես Մնքուլ և Նարդոս :

3789 . Սոխ .

Այս ամենածանօթ բանկարեղէնը՝ մեր բնախօս Ամասիացին Ար. անուամբ ստորագրէ « Պասայ . (جاص) . Պ . փիագ ասէ , և Հայն՝ Սոխ . Հո . Կարօմիտ » (Κρόμυον) , և Թ . Սօղան . (L . Cœra , Փ . Oignon , Ի . Cipolla) . Ինքն չորս ցեղ » լինի , և լաւն այն է որ սպիտակ լինի . տաք և չոր է ի Գ արճ . և այս չորս » ցեղ Սոխն՝ աւելի պակաս բնութիւն ունի . կտրող և նուրբ անող է . . . Թէ ի » ճանապարհին ուտեն՝ զլրերուն և զօգին զչարութիւնն տանի . և Թէ ի քացախն » ղնեն՝ որ մէկ քանի օր կենայ և ուտեն , զտամաքն ուժովցընէ , զսրտին խան . » նակիլն . . . տանի . . և Թէ ի կրակն Թաղես որ եփի աղէկ և տաք տաք ուտես . . » զպալղամն կտրէ և կակղացընէ . . — Դարձեալ գրէ . « Երեք ազգ է , մէկ » Սպիտակ և մէկ Կարօմիտ , և մէկ Մանրգդուխ , աղէկն Կարօմիտն և խոցորն է . . » Ասէ Փօրօսն , Թէ ով հում ուտէ՝ զլիւսացաւ բերէ և ծարաւեցընէ . . և Թէ ե . » փած լինի . . ազգի ազգի ջերմերուն զմշտան տանի . և Թէ զլուրն ի յաչքն քաշէ՝ » զհաւկուրութիւնն տանի » : Այս տեսակներս յիշելով Կամարկապցին , երրորդը՝ » փոխանակ Մանրգլխի՝ Դարգդուխ գրէ . — Վաստկ . գիրքն առանձին գլխով գրէ Սոխի համար (ՄԳՁ) . « Սոխն զկարմրակ հողն սիրէ , և երբ կամենան ղնես՝ » զտերեւն հան յիւրմէ , և ի Սխտորիտ ժամն է իւրդ (տնկելուն) , և զգետինն » տասն օր յառաջ կակղես , և զխոտն և զտակն հան , և զերդ մաղած արա » զգետինն և զիր , նա մեծ գլուխ առնու և աղէկ . և Թէ քսխայն (գլուխն կամ » տակն) շատ մազմզուկ ունենայ , դու կտրես որ մեծ լինի . . Եւ Թէ ուզես որ » շատ դիմանայ՝ ի յեռջուրն մխես և հան , յարեւն չորացս աղէկ , և ի գարէ . » յարդն Թաղես և պահես : Եւ Թէ զՍոխն ծեծես և ի մեղր խառնես և ի վերայ » կողացաւի ղնես , օգտէ : Եւ Թէ ընարէ զքիւփուկ Սոխն և ամէն վաղ . » վրէն մեղրով ուտէ , զմարմինն առողջ պահէ , և սպեղանիք՝ ելընդոց և խոցից » շատ օգտէ . . . Եւ Թէ զՍոխին ջուրն ի Թարսխոտ ականջ ածես՝ օգուտ ածէ » : Հին Բժշկր . այլ գրէ , « Սոխ՝ ծանր է ի Գ արճ . մէջն . . այլ հաց տայ ուտել , » եւս՝ Թէ հում լինի : Չլուրն հան և ընդ մեղր խառնեալ յաչքն դիր գեղդրով , » զլոյսն պայծառցընէ և յաւելու » :

3790 . Սոխամոսք ?

Ուրիշ ծանօթ և անծանօթ բուսոց հետ յիշէ զայս Բժշկարան մի :

3791 . Սոխորմ .

Տես ինչ որ յիշուած է այսոր համար՝ Ապիկու խոտ անուամբ , Թ . 140 :

3792 . Սոխուկ .

Տեսակ մի մանր Սոխի , որ յաղջուր ղնելով կ'ուտուի :

Սոնի . — Տես Շոնի :

2793. Սոնիճ. և Սել Սոնիճ.

Տես Շոնիզ, և Արջնդեղ: — Հին գրուածի մի մէջ՝ տապաստ հիւանդութեան դեղ գրուի, « Թորժամ բռնէ (ցան) Սոնիճ ընկէ՛ ի բերանդ երեք հատ. և թէ ող մարդն առնու՛ չռնէ »:

Սոնոպրի. — Տես Սնուկար:

2794. Սոսեմ.

Բժշկարան մի գրէ. « Խօս մի այլ կայ, Հո. Որհոյ? ասէ, և Հ. Սոսեմ. » նման է Լառնի, բարձր է թզաւ, սերմն նման է Առուտոյ, ի յարեզու ի « սպիտակ-հողուտ տեղիք լինի, ծայրն քաղցր է: Կապէ ի տակն կարմիր նշան, և « երիկունն գինի լից ի տակն. և յորժամ զկարմիր նշանն կապես, ասա, թէ « Զքեզ մաղձոյ և մաղասոյ համար հանեմ. և յայգն (1) գնա հեռագոյն փորէ. « թէ տրմատն խլի՛ չլինի գեղ. թէ մաղձոյ լինի՛ յտին ճկոյթն կապէ, և (թէ) « մաղասոյ՝ ի ձեռին ճկոյթն, որչափ կամի՛ս գործ առնէ »: — Թողլու վերջի սնտի խօսքը՝ առաջին ստորագրութիւնն Սոսեմի՛ պիտանի է զայն ճանճալու համար. որոյ լոյս կու տայ Վանական Վ. մեր՝ Գր. Աստուածարանի գրուածոց մեկնութեան մէջ. « Սոսեմնայս հունտ է, զոր աղացեալ և հաց ձեւացուցեալ՝ » աւտէին, որպէս որ ի սովի ուտեն մարդիկ զԱռաստի (Առույտ) և զՎերվերան « և զՍմեմուկ »: Տես զայս թ. 2780:

2795. Սոսենիկ.

Նոր բառհաւաք մի յիշած է, առանց բացատրութեան: Գուցէ նոյն ըլլայ և

2796. Սոսուն կամ Սոսուն

Ար դեղնածաղիկ և անուշահոտ բանջարեղէն մի ըսուած է:

2797. Սոսր?

Սոսրդ կամ սխալ՝ այսպէս գրուած է (Մշակ, ԺԸ, 88). յայտ է թէ տարբեր ի Սուսր նիւթոյ:

2798. Սորեկ.

Կարեկի նման ընդեղէն մի. Թուի Ասորեկն. տես զայս, թ. . ի Ս. Գիրս յիշուած Սորեկն՝ երբայեցերէն բառիւ՝ նշանակէ աղէկ խաղող կամ որթ:

2799. Սորխուն.

Բժշկր. մի Շան Չանմապիլ կոչուածին տերեւը՝ նմանցընէ Սորխունին. ուրիշ մ'այլ կ'իմացընէ, թէ Սորխունն է Խրաֆն .. այսինքն է Ուռի ծառն:

1. Գուցէ յոյբի. օրինակին մէջ գրուած էր յոբն:

Սորնջան . Սունջան . — Տես Չիանեպոլի :

2800 . Սորնջան Սպիտակ .

Ար . Լուսպոյի Պարպար . . ի մագրըպու կու գայ , և բնութիւնն տաք է և չոր :

2801 . Սորովիլ .

Ի կարգի պտղոց յիշէ Խորեն . Աշխարհգր . ի Քուզարս և ի Տայս , եթէ չէ Սերկեիչն , այլայլութեամբ գրուած , անծանօթ է . տեղեաց բերքերէն կըրնայ քննուիլ և ստուգուիլ :

2802 . Սորուկ .


Կտաւատի տեսակ մի (ըստ Մշակի , ԺԵ , 131) , որոյ եղը կու հանեն . կ'ըլլայ և կարմիր գունով :

2803 . Սումաղի .

Թուի Փղթոր բերող կաղնի ծառն . (Մեղու , ԻԲ , 83) :

2804-5 . Սունկ կամ Սունգն .

Փայլենու բառից մէջ (ըստ մեր օրինակի) Յ . Սոկոս գրուած է , որ պէտք էր Սոնկոս Σόγκος , ուրիշ օրինակք բառիցն գրեն Պրուդիաս , կամ Պտերեիա . յե . տինս թերեւս Պտերն է . այլ Լ . Sanchus կոչուածն և Փ . Laitron' թուփ է կա .



Սունկ կամ Սունգն .

Թոտ , որ կենդանեաց ուտելիք կու տրուի . իր ցեղէն մէկ ազգն այլ S. Pioridium , Փ . Pioridie կ'ըսուի , որ մտանայ Յ . անուանն . քանի մի տեսակք են որ գտուին յարեւելս և Միջերկրականի կողմերում : Յայտ է թէ այս չէ առ Հայս ճանչցուածն , այլ Սունկ կոչուի առ մեզ մէկ աստի տարբերութեամբ կոչուածն Լ . Fungi , Յ .

Σφόγγος (Ապունգ) այլ և Μύκης, Φ. Champignon, Ռ. Դրեճն. Ար. պէսպէս
անուամբ՝ զորս յիշէ Ամիրտ. « Ծոր (կամ Ծորդ *طر*), որ է Ք. Մանրար,
» որ է Սամարոնիան. շատ ցեղ է, և մէկ ցեղն Ֆագահ, և մէկ ցեղն Չօղեայ. և
» մէկ ցեղն Ղայիլ, և ամէնն ֆամահ է (*فامك*), և քան զամենայն պիղծ՝ Ծորն
» է. և մէկ ցեղն այլ Սահրայիմ է, և մէկ ցեղն այլ ի յաղբին ներքեւն կու
» լինի. և մէկ ցեղն այլ ի գինուն կարասին ի ներքեւն կու լինի և կու բուսնի.
» և թէ զայս ցեղս կեղեւեն և շորջընեն, ում որ մատին ծայրի չափ տան որ սուտէ՝
» խելքն անցնի և ընկնի. և իր կեղեւն սպանող է. և այն որ չոր է՝ զենն պա-
» կաս է. և բնութիւնն Ծորին հով և գէլ է »: . . Յայտ է որ Ամիրտ. թէ ու-
տեի և թէ թունաւոր Սունկերը յիշէ, զյետինս՝ պիղծ և սպանող կոչելով: Քի-
միական գիրքն այլ Մահապարտ Սունկ անուանէ. իսկ հին Բժշկարանն խրատէ.
« Սունկն վնասակար է, չէ պարտ ուտել. թէ ուտես վաճակէ, զչոր Դրումն
» այրէ, աղա և ջրով յերո, և խմցո. թէ չօգտէ՝ քացախաւ ձէթ եոցո և խմցո,
» կամ Բողկ ծծծէ և զլուրն խմցո, ապա լուն թրէակն է »: — Վաստկ. գիրքն՝
առանձին գլխով կարծ (ՄՀՅ) գրէ « Վասն Սունկ բուսուցանելոյ. Առ խմոր, չոր
» արա և տար զՆկուղի կամ զԿաղնի թորին կամ զչոր կնճակն, ջրեա. նա մե-
» նակ Սունկ հանէ. և թէ ուզես աանել որ ի գետնէն ելանէ, գիտ կակուղ գե-
» տին՝ որ իւր բոյսն փշուտ և կառնուտ լինի. ի յամպ և ի պղտոր օր այրեա զինքն.
» նա զերդ անձրեւ գայ, լինի Սունկ. բայց զխանձդ այնպէս ձգեա՝ որ անձրեւն
» անցանէ, և թէ յամէ՝ ջրել պիտի. նա լինի, բայց ի ջրելոյն չինի այնպէս պա-
» րարտ՝ զերդ անձրեւին, անձրեւին շնորհքն ի հետ է ». Ուրիշ Բժշկը. մի խրատէ.
« Ով զՍունկն ուտէ՝ թող եփէ, և ի ներս Քուզ ձգէ կամ Տանձի չիր, կամ տապկէ
» և չոր Գինձ ի ներքս ձգէ, որ զիր փասան խափանէ, և ի վերայ գաւաթմ գինի
» խմէ, լաւ է. և իր արատն այս է՝ որ փողցաւութիւն բերէ մարդոյ »: — Բժշկա-
րան մ'այլ գրէ. « Դարսիս բոյս է, որ է Սունկն, որ է Դարթ », Փ. Truffes. Դէր-
ֆուս Ար. *سفس*, — Տես և Սնգենի, Քնջուկ, Ղարիկոն:

2806. ՍՈՒՍ . .

Մատուտակի այլեւայլ անուանց մէկն է, յիշուած ի Բժշկարանս:

2807. ՍՈՒՍԱՄ .

Տես Եուշան, ուր յիշուին այլեւայլ տեսակքն:

2808. ՍՈՒՍԱՄԲԱՐ . — Տես Սիսամբար:

2809. ՍՈՒՍԱՄՐՈՒԿ .

Վայրի Սուսամ. տես կնջիթ և Եուշմա:

Սուսոյ կամ Սուսի. — Տես Սօսի:

Սուստ վարդ.

Տես ի կարգի Վարդից:

2810. Սուր .

Յիշէ բառհաւաք մի առանց բացատրելու :

2811. * Սուրաղաստանայ?

Սառգեղի անուն, որ ըստ Բժշկր. միոյ « ի Մաթրին կու նմանի . խոտ-մն է . և » տերուն ի Այրփայտակի ? տերեւ կու նմանի, և հունդն Շուշմայի կու նմանի, և » Թէ ի հնդէն խմեն՝ լուծումն առնէ, և զպալզամն և զսաֆրան հանէ լուծմամբ » :

2812. Սուրպուլ .

Տեսակ մի Զմերուկ, յիշուած ի բառհաւաքէ կողմանց Սերաստիոյ :

2813. Սոփիկ . կամ Սոֆիկ ծաղիկ .

Միայն գոյներովն յիշուած ի կողմանս Սասնոյ, գեղին, կարմիր և կանաչ, զոր և համարին միւռննի ծաղկանց մին :

2814. Սպանախ . — Տես Շումին :

2815. Սպանդ .

Բանջարեղէն, ծանօթ Բ. Πήγανον անուամբ, Լ. Peganum, Փ. Pégane, և յատկապէս Peganum Harmala . այս եւղբի անուամբ կոչեն Ար . և Թ . և այսով բացատրէ Ամիրտ . طحاج . « Հարմադ, որ է Թ . Ուզարիք (իւզէրլիկ) . լաւն այն է որ » հունգն նոր լինի . . կարող և նուրբ այնող է . և Թէ գինքն ի գինին խառնեն և » խմեն՝ օգտէ ըխտաւորին, և ինքն հարբեցնող է, և մեղրով յաչքն քաշեն՝ զաչքն » սրացընէ . . և վախենալուն զհոգան տանի : . . Եւ ցեղ-մն այլ Սպանդ կայ՝ որ տե- » րուն լեղի տերեւ կու նմանի, և ի գետինն կու ճապղի . և բուննիլն և ծաղկիլն » Մանուշկի ծաղկի կու նմանի, և ատեն կու լինի որ գետնէն ի վեր շորս կան- » գուն կ'երկըննայ, և գլուխն զէտ Սխտոր կու լինայ . . Ասէ Պտ . և պատմէ » զխօսքն Սիմաւոնին, (1) և ասէ, Թէ կարմիր է և սպիտակ, և այն ցեղն որ » կարմիր է՝ Հարմադի արուսի ասեն, և Հա . Մոչի ասէ, և Պ . Ստեգալի տալիս » ասէ . և տերուն նման է Ուռու տերեւին, և այլ փոքր է, և ծաղկին սպիտակ » է, նման է Եասէմինին ծաղկին, և հոտն անուշ է . . և ինքն վայրի Սաղա- » պին ցեղերուն է » :

Այս բառներէն յայտնուի որ քանի մի տեսակ Սպանդ կայ, և զլիաւորն է Էրարմիրն, և այն է Հարմադա մականուանեալն . յիշուի և Սպիտակ Սպանդ, բայց Զրկոտեմի ազգէն, իսկ Աարմիրն՝ Թ . Իւզէրլիկ կոչուածն՝ վայրի Փե- » գենայ է : Հին Բժշկր. փորուծութեան և սունկ ելունդի դեղ զրէ Սպանդի ունտն Արմաւի կուտի հետ եփուած : — վանական վ . Սպանդի նմանընէ Մոլեխնդի

1. Մեր Բժշկարանք այլ յիշեն այս Սիմաւոն չին բժիշկը . և իր նկարած մըտնն ու մտա- » դուրք, « զոր ինքն խմէր » էրանն :

ցողունը (տես Խնդակոթ, Թ. 1073): Բժշկական օգտից համար մշակուի յԵւրոպա, և հասն այլ գարշելի շրուիր. ինչպէս կ'ըսեն մեր նոր գրիչք (Աթանաս. եր. 92. Մանան. 491), և թէ ի գերեզմանոցս ամայի և քարքարոտ տեղեր բուսնի. և հակառակն այլ կ'ըսեն, թէ չորցընելով՝ ծխելու ի գործ ածեն իրբու խունկ. յիշն կլորկեկ պտուղն այլ, զոր Քիմիագիրքն Սպտեղոս Գոշոր կոչէ: — Կամարկապցին յիշէ իրբու հազի և կոկորդի գեղ:

2816. — Կոճատ Սպանդ.

« Եփէ ջրով, խմէ երեք օր անօթեց. հազն կտրէ. աչքն բացուի, լոյս գայ. » ձայնն իստակէ. շատ օգուտ է և փորձած »: — Սպանդն յիշուած է ի դաւնազան կողմանս, ի Կարին, Վան, Երեւան, եւ այլն:

2817. Սպարակ. Սպորակ.

Որ և Զարիր, Եջյ). « Ինքն բոյս է և վարդ է, որ ի լեռունքն կու բուսնի » և ի Եփրազ այնոր Ասպարակ կ'ասեն, և ի Հասմոց երկիրն և Հ. Րայգորաք » ասեն. և ներկարանին իրմով դեղին կու ներկեն. և ինքն յայտնի է »: — Լ. Courouma. Տես Գեղին Կոճ. Գուցէ նոյն ըլլայ և ի բառս Գալիենոսի յիշուած

2818. Սպերուկ.

Որոյ զուգանիչ Յ. գրուի Իեդոս, որ պարզապէս ըստ բառին՝ սղեղէն նշանակէ:

2819. Սպին.

Եթէ չէ սխալ գրուած յօրագրի (Երբ Դար, Ը, 170) Սին պտուղն կ'ըսուի:

2820-21. Սպիտակ Բանջար. Սպիտկուկ.

Բարակուկ մագի պէս տերեւներով գետնատարած խոտեղէն մի սոխաւոր, որով հերիսայ կ'եփեն, և չորցուցած կու պահեն ձմրան համար: — Եթէ նոյն է սա ընդ նոյնանիչ Թ. Ազմա օրի, ապա է Լ. Pilosella, զոր Ար. Եսաննա կու չելով գրէ Ամիրտ. « Զղախոտին և Եղին-ականջ խոտ մի կայ' (Թ. 657) ա. » նոր ի մէջն կու բուսնի, և ի անոնցմէն փոքր կու լինի, և ի տերեւին միջէն » որձայ կու ելանէ, մէկ թիզ երկայնութիւն կու լինի և հաստկեկ, և թէ ծե. » ծեն և ցանեն ի վերայ խոցերուն՝ բուսցընէ. և ի Եփրազ Մոռլ տարոս ասեն »: Պէյթարի Թարգմանիչն համարի զսա Heracliam Philosella. — Ըստ ոմանց այլ Խստորապրասն է. Թ. 1187:

2822. Սպիտակ ծաղիկ.

Մածնի ծաղիկն է ներմակ դունով. տես զայն. Թ. 1937. և Ախհուան, Թ. 33:

2823. Սպիտակ փուշ. — Տես Այազգնուէ:

2824. Սսնդուկ. Սսնդուն.

Լ. Pyrola. Փ. Pyrole, Թ. Լինուտ օրի, հինգթերթեան սպիտակ կամ վարդագոյն ծաղիկ մի, որոյ միջուկն կնճըթաձեւ մարմին մ'է. պտուղն պատիճաւոր, որ վարէն գէպ ի վեր կու բացուի: Քսանի շափ տեսակք կան ծաղկանս, որոց լաւագոյնք ի Կովկասային գաւառս և ի Խաղտիս ճանչցուած են:

2825. * Սպստան. Զպստան.

Ար. Գ. سبستان. Պէթար Գ. է կ'ըսէ, և նշանակէ Շան-պտուղներ. մարդաշափ բարձրութեամբ ծառ մ'է, փայտն ճերմակ, կեղեւն կանաչ, մեծ և կլորակ տերեւաք, Կաղինի շափ հատիկներով ողկուղաձեւ պտղաք, սպիտակ և կըպչուն հիւթով, Յունապի ձեւով, գոր և չորացուցած պահեն: Ամիրտ. գրէ. « Սպլս » տան, որ է Մոսխաստա, سبسطا, (Մօխէթա). լաւն այն է որ քաղցր լինի և » ի լի հասուն. և մուհթատիլ է և եփող է և կակղացընող է. և ինքն զմանն » ի յերեսացն տանի, և զխոչակն և զկուրծքն կու կակղացընէ. և չորութենէ » եղած զհազն տանի », եւ այլն: — Այս անուամբ կ'ըսուի և Փ. Sebastier, պտուղն այլ Sébeste, իսկ Լ. Cardia mixa: Այս Սալորին հոյզն յարեւելս շատ յարգ ունի. ծառն գտուի Բարեւրնի կողմերում, ի Պասրա և յԵգիպտոս:

2826. Սպրամ.

Յիշելով զՀամասպրամ՝ կարծելի էր թէ պարզապէս գեղեցիկ ծաղիկ մի նշանակէ և սա. բայց բազմահմուտ վանական վ. մեր նոյնացընէ Սպպի հետ, ձեւն այլայլելով. « Սպրամն՝ բանջար է որպէս զԱւելուկ, Սպպան է, հով է, և անու » պական պահէ յինչ կպի. ասեն թէ անդի խառնեալ էին ի Հալուէն՝ Իւզա » բերքն » (կանայք, եկեալք յօժումն մարմնոյ Քրիստոսի):

2827. Սպօք ?

Եթէ սխալ չէ՛(թէ և ընտիր է գրուածն) անուամբ անծանօթ՝ այլ իրօք ծանօթ ընդեղէն կամ հասարակ ուտելիք մի պիտի ըլլայ. որովհետեւ Ս. Բարսղի հարցմանց մեկնիքն կ'ըսէ (ԽԳ), « Կերակրոյն գիւտ՝ յԱտուածոյ շնորհեցաւ, Յորեանն և » Սպօքն, գործել զնոսս և ապա կերակրել »:

2828. Սսխի կամ Սսղի.

Պտուղն որ կարմիր մանր հատիկ է՝ Սսեղ կ'ըսուի. ծառիս կեղեւներն այլ խսիր հիւսելու կամ տունկեր կապելու ի գործ ածուին. ծանօթ է Կարմիրքի և Խոտուղոյ կողմերում:

2829. Սվրոխ. Սվրուկ.

Տեսակ մի խոտ, ուտելի ոչխարաց: (Մանան. 481):

2830. Ստաշին.

Յայտ է որ զուգծու խնկեղէն է անուշահոտ, բայց ի բուսեղինէ առաջ եկած է գլխաւոր հիւթն. որ և Ստիրակ կ'ըսուի, *Styrax*, Ար. Մայայէ քաջ կամ Մոխայի, ըստ Ամիրտ. որ և գրէ. « Ինքն գիճութիւն-մն է որ ի ծառէն կու ելնէ. և ծառն » նման է Մշմի ծառին, որ Ար. Միայի » սայիդէ ասէ և Հ. Չուկի ճէր ասէ. » և կարմիր և սեւ լինի. և այն որ իր » քամուքան է՝ Չոր Չուկին է, և լաւն » այն է որ անուշահոտ լինի. և ի Նի- » րազ ասոր Պոսիտոս կ'ասեն. և իր » խասիւթն այն է՝ յորժամ որ ծխեն՝ » զբորբոսային զօղն և զիր շարութիւնն » տանի, բայց զլուխ կու ցաւցընէ և » թաքին զեն է ու — Պէլթարայ յիշած հեղինակք՝ Միլմիտ տեղ ծառը Սեր- կեւի կամ Խնձորենի կ'ըսեն. փռանկ թարգմանն համարի Փ. *Aliboufier* կամ *Alligoufier*, որով կ'իմացուի պարզապէս ստիրակաբեր ծառն, *Styrax officinale*, որ գառի տաք և բարեխառն կլիմայից տակ, չափաւոր մեծութեամբ կամ թփատեոակ. ծաղկներն խումբ խումբ տերեւոց անկեանց միջէն կ'ար- ձըկուին, բերելով շորկեկ պտուղ մի՝ երբեմն միայն մէկ կուտով. — Ս. Գրոց մէջ մանաւանդ Գաւթի և Սողոմոնի, շատ անգամ յիշուի Ստաշին:



Ստաշին.

2831. Ստեպղին կամ Ստեփղին.

Յ. *Σταφυλιος* բառն է, Լ. *Daucus carota*, Փ. *Carotte*. Ռ. Морковь. Ար. ճա- գար, որ Հ. Գազար ըսուած է և յիշուած, Թ. 356, բայց սա աւելի Վայրի տե- սակը նշանակի. Թ. Հափուճ جرجان. Երկու տեսակն այլ նոյն անուններով գրէ Ամիրտ. « Գազար, որ է Ստեպղին, լաւն այն է որ կարմիր լինի և քաղցր. և այն որ » Վայրին լինի՝ իր տերեւն օգուտ է ակընջին ցաւուն, և օգտէ կրծոց և թաքին և » ստամոքին. և իր սնուցածն՝ օգտէ արծուոց » — Յ. անուամբ այլ գրելով Աս- » տաֆլին, Վայրի Ստեպղին կ'ըսէ. « և մէկ ցեղն այլ կու լինի որ տերեւն Անձ » խոտին տերեւն կու նմանի, և ի ջրեզերքն կու բուսնի. և թէ զտերեւն ծեծես » և մեղրով խառնես և դնես ի վերայ խոցերուն՝ որ միս բուսած լինի մկնատամին » օգտէ, բայց խոչկին և կրծոցն ջղերուն զեն կ'առնէ, և զսիրտն կու ցաւցընէ. և թէ » զհունտն առնուն և մէկ զրամին մէկ դրամ այլ չաքար խառնես և տան որ ուտէ,

2824. Սպնդուկ. Սպնդուն.

Լ. Pyrola. Փ. Pyrole, Թ. Լեհոշտ օրի, հինգթերթեան սպիտակ կամ վարդագոյն ծաղիկ մի, որոյ միջուկն կնճըթածեւ մարմին մ'է. պտուղն պատիճաւոր, որ վարէն գէպ ի վեր կու բացուի: Քսանի չափ տեսակք կան ծաղկանս, որոց լաւագոյնք ի Կովկասային գաւառս և ի Խաղտիս ճանչցուած են:

2825. * Սպստան. Զպստան.

Ար. Գ. سبستان. Պէյթար Գ. է կ'ըսէ, և նշանակէ Շան-պտկունք. մարդաչափ բարձրութեամբ ծառ մ'է, փայտն ճերմակ, կեղեւն կանաչ, մեծ և կլորակ տերեւք, Կաղինի չափ հատիկներով ողկուղածեւ պտղաք, սպիտակ և կըպչուն հիւթով, Յունապի ձեւով, գոր և չորցուցած պահեն: Ամիրտ. գրէ. « Սպըս » տան, որ է Մոսխատա, سخاب, (Մօխէյթա). լաւն այն է որ քաղցր լինի և » ի լի հասուն. և մուհթատիլ է և եփող է և կակղացընող է. և ինքն զմանն » ի յերեսացն տանի, և զխոչակն և զկուրծքն կու կակղացընէ. և չորութենէ » եղած գհագն տանի », եւ այլն: — Այս անուամբ կ'ըսուի և Փ. Sebestier, պտուղն այլ Sébeste, իսկ Լ. Cardia mixa: Այս Սալորին հոյզն յարեւելս շատ յարգ ունի. ծառն գտուի Բարեւոնի կողմերում, ի Պասրա և յԵգիպտոս:

2826. Սպրամ.

Յիշելով զՀամասպրամ՝ կարծելի էր թէ պարզապէս գեղեցիկ ծաղիկ մի նշանակէ և սա. բայց բազմահմուտ վանական վ. մեր նոյնացընէ Սապոի հետ, ձեւն այլայլելով. « Սպրամն՝ բանջար է որպէս զԱւելուկ, Սապոն է, հով է, և անու » պական պահէ յինչ կպի. ասեմ թէ անդի խառնեալ էին ի Հալուէն՝ Իւզա » բերքն » (կանայք, եկեալք յօժումն մարմնոյ Քրիստոսի):

2827. Սպօք ?

Եթէ սխալ չէ՝ (թէ և ընտիր է գրուածն) անուամբ անծանօթ՝ այլ իրաք ծանօթ ընդեղէն կամ հասարակ ուտելիք մի պիտի ըլլայ. որովհետեւ Ս. Բարսղի հարցմանց մեկնիչն կ'ըսէ (ԽԴ), « Կերակրոյն գիւտ՝ յԱրտուծոյ շնորհեցաւ, Յորեանն և » Սպօքն, գործել զնոսս և սպա կերակրել »:

2828. Սսխի կամ Սսղի.

Պտուղն որ կարմիր մանր հատիկ է՝ Սսեղ կ'ըսուի. ծառիս կեղեւներն այլ խտիր հիւսելու կամ տունկեր կապելու ի գործ ածուին. ծանօթ է կարմիրքի և Խոտուլրոյ կողմերում:

2829. Սվրոխ. Սվրուկ.

Տեսակ մի խոտ, ուտելի ոչխարաց: (Մանան. 451):

2830. Ստաշխն.

Յայտ է որ զուգժու խնկեղէն է անուշահոտ, բայց ի բուսեղինէ առաջ եկած է գլխաւոր հիւթն. որ և Ստիտրակ կ'ըսուի, *Styrax*, Ար. Մայայե 𐤎𐤃𐤁 կամ Մուիայի, ըստ Ամիրտ. որ և գրէ. « Ինքն գիճութիւն-մն է որ ի ծառէն կու ելնէ. և ծառն » նման է Մշի ծառին, որ Ար. Միայի
 » սայիչէ ասէ և Հ. Չուկի ձէք ասէ.
 » և կարմիր և սեւ լինի. և այն որ իր
 » քամուքն է՝ Չոր Չուկին է, և լաւն
 » այն է որ անուշահոտ լինի. և ի Շի-
 » րազ ասոր Պոսիտոր կ'ասեն. և իր
 » խասիաթն այն է՝ յորժամ որ ծխեն՝
 » գորբոսային զօղն և զիր շարութիւնն
 » տանի; բայց գլուխ կու ցաւցընէ և
 » թորին զեն է ո: — Պէյթարայ յիշած
 » հեղինակք՝ Միշիի տեղ ծառը Սեր-
 » կեպի կամ Խնձորենի կ'ըսեն. փռանկ
 » Թարգմանն համարի Փ. *Aliboufier* կամ
 » *Alligoufier*, որով կ'իմացուի պարզապէս
 » ստիրակարբեր ծառն, *Styrax officinale*,
 » որ գտուի տաք և բարեխառն
 » կլիմայից տակ, շափաւոր մեծութեամբ
 » կամ թփատեոակ. ծաղկներն խումբ
 » խումբ տերեւոց անկեանց միջէն կ'ար-
 » ձըկուին, բերելով շորկեկ պտուղ մի՝
 » երբեմն միայն մէկ կուտով. — Ս. Գրոց
 » մէջ մանաւանդ Դաւթի և Սողոմոնի,
 » շատ անգամ յիշուի Ստաշխն:




Ստաշխն.

2831. Ստեպղին կամ Ստեպղին.

Յ. *Staphylis* բառն է, Լ. *Daucus carota*, Փ. *Carotte*. Ռ. Морковъ. Ար. Ծա-
 » գար, որ Հ. Գազար ըսուած է և յիշուած, Թ. 366, բայց սա աւելի Վայրի տե-
 » սակը նշանակէ. Թ. Հափռա 𐤎𐤃𐤁. Երկու տեսակն այլ նոյն անուններով գրէ
 » Ամիրտ. « Գազար, որ է Ստեպղին, լաւն այն է որ կարմիր լինի և քաղցր. և այն որ
 » Վայրին լինի՝ իր տերեւն օգուտ է ակընջին ցաւուն, և օգտէ կրծոց և թորին և
 » ստամոքին. և իր սնուցածն՝ օգտէ արծուոց »: — Յ. անուամբ այլ գրելով Աս-
 » տաֆլին, Վայրի Ստեպղին կ'ըսէ. « և մէկ ցեղն այլ կու լինի որ տերեւն Անձ-
 » խտտին տերեւն կու նմանի, և ի ջրեզերքն կու բուսնի. և թէ զտերեւն ծեծես
 » և մեղրով խառնես և դնես ի վերայ խոցերուն՝ որ միս բուսած լինի մկնատամին
 » օգտէ, բայց խոչկին և կրծոցն լղերուն զեն կ'առնէ, և զսիրտն կու ցաւցընէ. և թէ
 » զհունտն առնուն և մէկ դրամին մէկ դրամ այլ շաքար խառնես և տան որ ուտէ,

» օգտէ Նղացաւութեան: Եւ զայն Ստեպղին որ ի Նրեզերն կու բուսնի՝ Թէ ի տունն
 » կախ այնես, ճիճիք և զնասակար գազանքն ամէնն ի տնէն փախչին, և Թէ
 » Ստեպղինին զտերեւն զամէնն եփեն և զտղակներուն ձեպին լվանան՝ որ ի
 » ցրտուն արուն պնդել լինի, տանի. և զինքն ով որ հում ուտէ՝ ստամազսին զեն
 » կ'առնէ և քամի ընկենու, և փքակցընող է. և ով ուտէ զինքն՝ Թող եփէ և
 » ապա ուտէ, և տաք դեզեր ցանէ. և լաւն այն է որ քան զկերակուրն յառաջ ու-
 » տեն և յետեւ կերակրին այլ ուտեն »: — Վաստկ. գիրքն ծառասէր բանջարեղի-
 նաց կարգը դնէ զՍտեպղին (ՄՂԱ). և դեղնած կամ ծանգոտած արտի և այլզայ
 գեղ այլ գրէ (ՂԶ) Ստեպղինը ծխել: —
 Իսկ Առակախօս մեր՝ Ստեպղինի եր-
 կայն և խոր արմատը կ'իմացընէ՝ Շաղ-
 գամին հարցմամբ, « Թէ, զի այդքան
 » ընդ երկրաւ մտանես. և նա ասէ.
 » Պատկառեմ ընդ յանդգնութիւն քո,
 » զի կարմիր և սպիտակ գոլով տեսիլ
 » դքեզ առնես. որում ապարանեաց
 » (Շաղգամ). եթէ չար է այս, չար է
 » և բնաւ երկչոտութիւն քո »:



Ստեպղին.

2832. — Ստեպղին Վայրի. — Տես
 Շախակոյ. Տոտոս և Ալմուսիսա:

2833. Ստեստ.

Քալիենու բառից մէջ գրուի այսոր
 հումանիչն Թափսիս, Յ. Փափա, Լ.
 Thapsia, յանուն Թափսոս կղզւոյ՝ ուր
 նախ ճանչցուած է. այս անուամբ գրէ
 և Պէյթար, յորմէ և Ամիրտ. որ և Սաֆ-
 սիս գրէ կամ Սաֆիսիս. և « Ինքն
 Լեռան Սազապին ցեղերուն է, կ'ըսէ. լաւն այն է որ դալար լինի. զսիրտն խնդա-
 » ցընէ. Իպտ. ասէ Թէ Ինքն Տրիստն է, և ոմանք ասեն Թէ ի Կղզիքն կու բուսնին.
 » նման է Սամթին ծաղկին հունտն. . . Ասէ Պտ. Թէ Ինքն Վայրի Սազապն է, և
 » իր տերեւն ի Հարմալին տերեւն կու նմանի, բայց յերկան և տափակ է, և որձան
 » և ճղերն երկան է, և հտնն ուժով, և զիշահոտ և ծանրահոտ է, և իր հունտն
 » նման է Սազապին հնդին »:

2834. Ստիւրակ. — Տես Ստայան:

2835. Ստնկօզի ?

Արցախային ծառաց տեսակ մի, ըստ Մեղու օրագրի (ԻԲ, 83):

2836. Ստորովենի ?

Յիչեն բառահաւաքք առանց բացատրութեան, և Թուի հետեւեալն,

2837. Ստրոփողոն.

Որ է Յ. Տերիբիւօս, և նշանակէ վայրի Փստղենի և իր կոնաձեւ պտուղը:

2838. Սրաֆեսի?

Շատ տարակուսական անուն մի, եւրոպական տառերով գրուած Serahæsi և հայերէն համարուած, իբր նշանակող տեսակ մի Պիստակի, Pistacia mutica.

2839. Սրափուղ.

Փշատեսակ ծառոց և թփոց հետ յիշուած է յԱգաթանգեղոսէ. և է հաւանօրէն Յ. Լ. Oxyacantha, Փ. Aubepine, Ռ. Боярышникъ. բայց ըստ նկարագրութեան հին

Յ. հեղինակաց այլեւայլ ազգք ծառոց երեւին. ըստ Գալիենոսի է Զրիչկն կամ Ծոր. ըստ Գիոսկորիտեայ՝ վայրի Տանձնեւոյ նման ծառ մի, Մորենոյ նման մանր պտուղներով. առջինին բառից մէջ Ոքսիկաներոս համանիշ ունի լափրի կամ Ծափրի նորալուր և ստուգելի անուն մի: — Ըստ անունն՝ փշոտ և ճապուկ ճղերով թուփ է վայելչաձեւ տերեւներով և փնջաձև ճերմակ ծաղկօք, որոց յաջորդեն Մասուրի նման պտուղք: — Անգղիոյ աւանկաց մէջ կ'աւանգուէր՝ թէ այս ծառս բուսած ըլլայ Յովսեփայ Արեւմաթացոյն գաւազանէն, Քրիստոսի ծննդեան նախընթաց օրը. անոր համար այն ծառին ճիւղերն իրարու ընծայ կ'ընէին նոյն տօնին, որ այն եղանակին կուսկսէր կանաչնայ:



Սրափուղ.

2840. Սրոյ հունդ. — Տես Տիգկանեփատ:

2841. Սրուն?

Գալիենական բառից մէջ գրուած գտուի այս անունն հոմանիշ ունելով Անտիկիւմնէ, Լ. այլ գրուած Antioimonium, որ անծանօթ է ի բուսաբանութեան. Յ. Ανταίμενον]առարկայմի նշանակէ, այլ ոչ բուսական ինչ:

2842. Սրտկողնի.

Արցախոյ կողման ծառոց կարգին յիշուի (Մեղու, իԲ, 83):

2843. Սրտկոյ տակ.

Որոյ թ. Շագախոց? տպագրուած է (Պատկեր, Գ) և թուի Շակակուլ:

2844. Սրփան.

Արմաւի տեսակ մի, ըստ հին Բառգրոց:

* Սքալինէն.

Այսպէս գրեն Բժշկարանք Ար. Սէքալինէնը, որ է Պզոտի. տես Թ. 2840.

2845. * Սքիմսու.

Ս. Բարսեղ Վեցորէից մէջ ըսած է (տպ. եր. 101). « Այլազգի կերպարանս ունի » հոյզն ծառոյն որ անուանեալ կոչի Սքիմսու, այլազգի կերպարանս ունի հոյզն » Բաղասման ծառայ »: Յ. Σχοίνος, Լ. Schoenus, Փ. Choin, Կնիւնի տեսակ բոյս է, գիմնացկան, կիպիւթիսի ցեղէ. բայց Ս. Բարսեղի յիշած խժաւոր կամ հիւթաւոր ծառն տարբեր ցեղէ ըլլալու է:

2846. Սքունօշ.

Իր ազգակից Բաբուռնի հետ յիշուած ի Սալաձորեցոյն. ուրիշ օրինակի մէջ Քոթառօշ կամ Կօկոռօշ գրուի, և երկուքն այլ « Լալառին ի հետ Զամպուն »:

2847. * Սօղ կամ Սօտ.

Ար. Սոսուտ, Տջաա, է Մշկի ծաղիկն. տես Թ. 2129, և Դոան, Թ. 602. Յիշուի և Սօտ Հնգի: Իսկ Ստոթ, Ար. Եջաա, է փանքտացընօղ բոյսն Չորանրեակ, *Achillea ptarmica*.

2848. Սօս. Սօսի. Սուսի (4).

Ռամկօրէն կոչուի Տննորի կամ Տնգորի, վայրի ծառոց հսկայն. յատկապէս մեր հայրենեաց մէջ, նշանաւոր յիշատակօք և աւանդութեամբք. Յ. և Լ. Platanus, Փ. Platano, Ռ. Яворъ. Ար. بوم, « Տոտայ, որ է Չիւնարն. Պ. և Թ. » զայսոր անունն Ղափխաղան ասեն, և Հ. Սօսի. ինքն մեծ ծառեր է և սպիտակ տերեւ ունի. և լաւն այն է որ թափայ լինի. հով և չոր է յերկու տրեւ, և շորցընող է. և թէ զիր կեղեւն քացախօվ թրջեն եփեն և մաղմատայ առնեն, զակռանին ուժովցընէ և զցանն այլ տանի. և իր մոխիրն օգտէ խորու խոցերուն և կարճաւորին. և թէ սպեղանի առնես՝ օգտէ ծնկան ցաւուն. . բայց կրծոց զեն առնէ... և թէ զտերեւն և զմիրզն ծխես, նա քաքրզէզն փախի. և ճար արա որ ի մրգէն և ի տերեւէն և կամ յասոնց ջրէն յականջըղ և ի յաչը չի հասցընես, զի շատ զեն ունի և մլեաս կու առնէ. փորձած է »: — Այս ծառս յատկագոյն է միջին արեւելեւ լեան Ասիոյ, անոր համար գլխաւոր տեսակն (չատ տեսակ չունի) Արեւելեան կ'ըսուի, Pl. Orientalis. Հասակին և տերեւոց մեծութեամբ և տարածութեամբն, և տանոնց մէջ հովերու փշելով հանած շնկոցին պատճառաւ՝ ի պատուի էր առ Յոյնս և առ մերայինս. նոքա նուիրած էին իրենց Քաջաց ոգւոց, Gónies, և յատկապէս Ալգոլոնի, որ երգոց և գեղեցիկ մտածմանց ազդեցող կամ պաշտպանն համարուէր, և իր տաճարին շուրջն այս ծառերէն տնկուէին, որոց ներքեւ նստէին իրենց իմաստուն.

1. Սլուեան լեզուաց մէջ Սօնա կամ Սօնի կոչի Եզեւինն:

քըն, և իմաստնագոյնն Սոկրատ կ'երգուըննար ի Սօսի. իսկ մեր Հայկազն նախնեաց տաճարն՝ նոյն իսկ Սօսեաց անտառն կամ ծառատունկն էր, զերկինքն ունելով բնականար գմբէթ, և հօն կատարուէին իրենց պաշտամունքն և նուէրքն, և անձամբ իսկ հօն նուիրուէին, ինչպէս մեր Գեղեցիկ Արայի Թոռան (Սնուշաւան) համար կ'ըսուի, թէ « Սօս անուանիւր, կամ Սօսանուէր, քանզի ձօնեալ էր ըստ » պաշտամանց ի Սօսիան Արամենկայ՝ որ յԱրմաւիր, զորոց զսաղարթիցն զօս » սափիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն եւեթ՝ ոստոց շարժումն՝ » սովորեցան ի հմայս՝ յաշխարհիս Հայկազանց. և այս զբազում ժամանակս ». (Խորեն, Ա, ԻԲ): Մնտորի պաշտամունքն վերցան. բայց դարձեալ Սօսեաց սօսափիւնն ակամայ լուրջ զգացում մի կ'ազդէ, մանաւանդ եթէ հողմն քրքրէ Որդուատայ և Վարդաշինի նման բազմադարեան սաղարթավարս գագաթները, որոց բունը կամ կոճեղք ինչուան 40 և 60 ոտնաչափ չըլապատ լայնութիւն ունին:

2849. Սօսամբ ծաղիկ.

Թուի թէ Սօսամբարն է:

2850. * Սօսան. — Տես Սնդրի:

2851. Սօսուն.

Աւանդողն չեմ գիտեր, բայց ըսած է թէ դեղին ծաղիկ մ'է, որ Պայպոռն կապոյտ ծաղկան հետ կուրուանի, և գիշերը իրարու կու փաթթըին:

2852. Սֆլար.

Այսպէս գրուած կայ Բժշկարանս՝ հասարակօրէն Նֆլ գրուածն, կըրնայ կարծուիլ թէ Նֆլակ գրելու էր:

2853. Վազենի.

Մեծապատու խնձորենի, ըստ Խոտույրեցւոց:

2854. Վահշիժակ. Վահշիզակ.

Ըստ Պէյթարայ այլ Վահշիրակ **قزاق**, « որ » Թուրքն Խորասանի ասէ, և ինքն խոտ-մն է որ ի ոյժինդր կու նմանի, և Էօվշան այլ կու ասեն »: Բժշկարան մի փոխանակ Խորասանի՝ Հօրան գրէ: — Ինչպէս ըլլալն նշանակուած է Աղուիճակ աւուամբ, տես թ. 65:



Վահշիժակ.

2855. Վաղանցուկ. Վաղենցիկ.

Թէ և հասարակօրէն խոտոց և ծաղկանց դատակնիքն է այսպէս ըլլալ, բայց յատուկ բոյս այլ կայ այսպէս կոչուած, ըստ բառհաւաքի միոյ, որ ինչպէս ըլլալը նշանակած չէ. և Թուի թէ չէ հետեւեալն,

2856. վաղմեռուկ կամ վաղամեռուկ.

Փափագելի էր գանել մեր նախնի հարց ականդութիւնը՝ այս ծաղիկս այսպէս կոչելուն համար, որ ըստ Յ. Լ. Schizanthus, Փ. Schizanthe կոչուի, իբր թէ պատշաճա՞ծ ծաղիկ. իսկ Ար. خردا, զոր մերայինք գրեն իրիւր կամ Օրխար. Ամիրտ. գրէ Լ. բառն այլ Սիկինանդում և օտար լեզուք ուրիշ անուններ. « Ասորին՝ »
 « Սահիլիս ասէ և Հոռոմն Սաննումիս ասէ, և թիպկիմաքի ? այլ կ'ասեն, և Պար- »
 « սիկն Եդուրպայի տաշտիկ ասէ, և Քահալիս այլ կ'ասեն. և ասեր է գրոցս ժողովոզն, »
 « թէ Ապու Շահաճն է. և լաւն այն է որ յորժամ ծամեն զինքն՝ համն զէտ Ղա- »
 « բանֆուլի համն գայ և Մազտաքէի՝ որ յիրար խառնած լինի, և հոտն Մանուշիկ »
 « լինի. բայց Իթիիրին Պ. Եդրիկս ? կ'ասն. և լաւն այն է որ արապի լինի և կար- »
 « մըրժեռ. և բնութիւնն տաք և չոր է յառաջին տրծ. և ի յամենայն լերունքն կու »
 « լինի և ի աղէկ ամառային բարձր տեղեր. և այն որ արապի է՝ բնութիւնն տաք և »
 « չոր է յերկու տրծ. բայց գլուխ կու տաքցընէ. Սինեայ որդին կ'ասէ, թէ Սէզ կու »
 « նմանի. ի Մակքայու կու գայ. և լաւն այն է որ բարակ լինի, պինտ և անուշահոտ. »
 « և թէ զինքն չատ հոտվտա՞ աղէկ քուն բերէ, և թէ զիր եղն երեսն օծեա՞ շուտ »
 « մորուք բերէ, զփորացաւութիւն խաղեցընէ և զստամազն ուժովցընէ, և զկա- »
 « լուածն բանայ, և զստամազին թթուութիւնն տանի », եւ այլն: — Բժշկարանն մի գրէ. « Ինքն Սէզ է, ի Պէրայէն գայ, նորն լաւ է, անուշահոտ լինի »: Կ. Պօլի Պերա (Բերա) թափն է թէ օտար տեղ: — Ըստ բուսաբանից՝ վաղմեռուկն Նարդոսից ցեղէն է:

2857. վաղունիկ. վաղնի. վաղնակ.

Ստ. Շէհրիման այսպէս անուանէ Լ. Calendula կոչուածը, որ կոչուի և Arnica montana. ոմանք ի նորոց այդ բառիդ նշանակութեամբ (որ նման է Հ. Առն՝ վայրի ոչխար) բառի. Ոչխարիտոթ Թարգմաներ են, ոմանք այլ անոր (փոնգացընոզ) յատկութեան անուամբ՝ Ptarmica, Փակչուկ. վայրի ծաղիկ մ'է դեղնագոյն, ոչ ախորժ հատով, բայց բժշկութեան մէջ ի գործ տծուի ամեն մասամբ: Պէյթար Ատրիուն ۳۳۵۱ կոչէ այս բոյսը, զոր չեմ գտներ յԱմիրտուլ. կանգնաչափ բարձր է, կ'ըսէ, ոսկեզոյն ծաղկով, մէջ տեղն այլ սեւուկ ուռէցք մի, սպիտակ և մազոտ մատնաչափ տերեւներով: — Գիտնականք ոմանք այս Ատրիուն կոչուածն համարին Եզնակն, ոմանք այլ Մածնի ծաղիկ: — Ուրիշ Լ. բառ մ'այլ զուգուած է վաղունիկի, Caltha, Փ. Populage, որ ճահիճներու մէջ բուսնի: — Առջինին մէկ տեսակն Պարսկային կոչուած՝ Calendula Persica՝ ճանչցուած է ի Գարապաղ և Բագու. երկրորդին՝ Բագմափերթ տեսակն, Caltha polypetala՝ ի Կարին, Մանախ, վան, Բաղէշ:

2858. վաղսամ.

Պիսիդեայ Թարգմանինն այսպէս կոչէ զԲալասան (թ. 280) « Ո՞վ ոք ի հոտ վաղ- »
 « սամոյ՝ և ոչ նախ քո անուշահոտութեանդ՝ բուրեցէ նմա »:

2859. վաղվաղիկ.

Նշանակուած ի բառհաւաքէ. գուցէ վերոյգրեալ վաղունիկն ըլլայ:

2860. վայրն ?

Արեքորեայ Ղերման, զուլինճի և ուրիշ ախտից պէտպէս դեղաց հետ յիշէ Ամիրտ :

2861. վան. վանի Խէժ.

Որ և կապուռի, ըստ Բժշկարանի միոյ, զոր Ար. կոչէ Հասարտ ոչ-Ղատրաս, և Թ. Չիտրադու. որ է, կ'ըսէ Բուսուճն. անս զայս և Բեւեկն : — Եթէ ծառոյ բերք է վանն՝ կայ և Այն վանի, ոչ բուսական. որն է յերկուց վանական վէ. յիշածն, Թէ ս Այլ է սա (Սաթն) և այլ է Հիրիկն և այլ է վանն ր :

վաշաղ. — Տես Օշակ :

վաշիժակ. — Տես վահյիժակ :

2862. վաշտ. — Տես Բաղտակ. Բաշխ :

2863. վաշտավառ.

Տեսակ մի Տանձի, գրէ բառհաւաք մի. ի գրոց Թէ նորոց :

2864. վաշտեւորի որ և վարդեւորի.

Այլեւայլ կողմեր ի Հայս լսուած է այս անունս, նշանակելով Թ. Հիւսնիս Եռուսոֆ կառուածը. Ամիրտ. զայս յիշէ յետագայ անուամբս,

2865. վառվառուկ.

Այսով Լ. Alyssum, Φ. Alysson, Պէյթար և Ամիրտ. սկսին իրենց Բառագիրքն, Ուարտասն, **السلي** կոչելով. « Ինքն խոտ-մն է, որ ի լերունքն կու » բուսնի. և ի յամեն ճուղ վերէն մինչև ի վայր սերտ տերեւնի է, որպէս Բակլայի » մեծութեամբ, բայց գունտ չէ գէտ զԲակլան. նօսր է, և ի վերեւն զաղապ ունի, » զաղուի? այն է, որ իբրև զփոյի խավ կու լինի պտղին վրայ. և ամէն տերեւ երկու » տակ է, և ի մէջն տափակ հունտ ունի կարմրժեռ. և յառաջ որ կու ելնէ՝ տերեւն » ի գետինն կու փռվի, և յետոյ որձայ կու հանէ, և հունտն ի յորձային տերեւին » մէջն է. Թ. այս խոտիս Ղուտուզ օրի կու ասէ, և Ար. Հաշիշ բլ-քէրպ կու ասէ, » որ Թարգմանի Հ. բառով կատարած շան դեղ, և Հոսնիս Եռուսոֆ այլ կու ասեն : » Յօրժամ զայս դեղս ջրով եփեն և զլուրն խմցընեն այն մարդուն՝ որ ցուրտ անցել » է՝ օգտէ. և բժշկապետքն ասել են, Թէ. ծեծեն և մեղրով շաղեն և յերեսն » օծեն՝ օգտէ մանին (և) սպիին որ ի յերեսն լինի, զուարթ ասնէ. և Թէ երկու » գրամ ծեծեն և ի կերակուրն խառնեն և կերցընեն այնոր որ կատղած շուն լինի » խածել, խալսի ի զլուսէն. և Թէ գինքն ի տունն կախ այնն, զան տան ժողո » վարդն ի հիւանդութենէ պահէ. և Թէ ի յախոռն կախեն՝ զամեն անասունքն և » զգրասան ի հիւանդութենէ պահէ. և Թէ զինքն ի կարմիր կտառ մի կապես, և » անասունն որ խոստկոտի՝ ի վիզն կապես, օգտէ և խոստուկն երթայ. և ի

» յայս դեղս (դեռ) շատ զօրութիւն կայ՝ որ չէ գրած »: — Վազուուկք ճերմակ դեղին ծաղիկ ունին և եղջերակերպ պտուղ, և իրրեւ 80 տեսակ խոտեղէն են, որոցմէ մէկն յատուկ Հայկական կոչուի. *Al. Armenum*, տեսնուած է ի Պայէզիտ, Մանախ. — *A. Bracteatum* ի Բօլու սար Նախնականի. — *A. Argenteum* ի Մէկմանսուր. — *A. Peltarvides*, յԵջնկայ, Խոջապարունար. — *A. Eriophyllum* ի Մուչ. — *A. Montanum ochroleucum* ի Թորթում. — *A. Müllerii* յԵրեւան. — *A. Macrostylum*, ի Կարին, Բաբերդ. — *A. Macropodium* և *Minatum* ի Կծսարիա. — *A. Micranthum*. ի Կարին. — *A. Dorsicarpum*, ի Բաբերդ. — *A. Caloynum* ի Փանձակ. — *A. Aureum* ի Խարբերդ. — *A. Huetii*, ի Կարին, յԱրգէտս լ. — Առանց յատուկ կողմերը յիշելու գտուին ի Հայս և տեսակքն *A. Alpestre*, *Lepidotum*, *Minimum*, *Strictum*, *Campestre*, *Hirsutum*, *Linifolium*.

2866. Վասմա ?

Ըստ Կամարկայ. Նշի տերեւն է, զոր Ա. և Թ. վարիյիցնէ կամ վրիյիցնէ կոչէ: Բժշկարանն ուրիշ նիւթոց հետ յիչէ իրրեւ օժանելիք կամ ներկելիք:

2867. Վատանուիճ.

Յիշողն անյայտ, նշանակութիւնն յայտնի Նուիճի վայրենին է. *L. Arisarum* Փ. կոչուի եւս *Capuchon*, իր տերեւոց ուռած շղերուն համար՝ որ կնգուղի ձեւ մի ներկայացընեն, իրենց անկանց միջէն արձըկելով Թանձր կարմիր գունով ծաղկըներ. ի քարոտ և չուք տեղեր կու բուսնի:

2868. Վարազ ?

Բժշկր. մի գրէ « Վարազի Խրաֆ, (և մեկնէ) ինքն Ուռին (Ուռենի) տերեւն է »:

2869. Վարառամ.

Թուի պարսիկ կամ հին Հ. անուն Մատուտակի, ըստ Բժշկարանի միոյ:

2870. Վարդ. վարդենի.

Հասարակօրէն ծաղկանց գերագոյնն և Թագաւորն ճանչցուած, իսկ այն լեզուաց մէջ որք բառից սեռ ունին՝ Թագուհի. մեր լեզուի մէջ յայտ է արական և արքայական ըլլալն, Վարդ, Վարդան, Վարդեւան, Վարդանասար, Վարդուկ, Վարդոյ անուամբք (1), որոց քոյրերն այլ պէտք է ըլլային Վարդուհի, Վարդենի, Վարդանոյ, եւ այլն: Եթէ ոչ ամեն բանաստեղծ՝ գոնէ ամենայն ազգաց բանաստեղծք՝ օղաչուք և գետնակոխք (ուսմիկք) երգած են զՎարդ. անոնցմէ

1. Մեր միջին դարուց Վարդապետաց մէկն այլ ոչսպէս կ'ըսէ ծաղկանց սեռի վրայօք դրելով. « Վարդն՝ քաղում բանից խաղաղմունս առնու, վասն արական գոյոյ, որպէս որ զի սսէ, Վարդիկ, » Վարդուկ, Վարդերես, Վարդան, Վարդահեր. բայց Մանուշակն՝ ոչ շարժի նշովմամբ, այլ « մեջս նոյնպէս տեսանի. . . զի ի ծաղիկս՝ Վարդ արական սսի. և Մանուշակն էք », եւ այլն:

վեր՝ ազգային աւանդութիւնը կրօնական և դիւցական յիշատակը պատուեր և սրբեր կամ պղծեր են զայն. և մինչ Ուիւմպոսի պաշտօնեայք իրենց Ափրոզիտեայ ոտին արիւնէն ծաղկեցուցեր են զՎարդ, Այրարատեան Մասեաց պաշտողք այլ իրենց Վարդապայից մէջ Անահիտ դիցումբ, Թերեւս յառաջ քան զՀոմերոս՝ ընծայած են Վարդամատն թաթեր, Արշալուսոյ դռները բանալու համար. և փոխանակ անոնց վարդապատկ Բագոսի՝ խորհրդապատ Վարդգէս մ'երեւան հաներ են, դեռ քննելի բանասիրաց. և մինչ Ս. Գրոց մէջ անգամ Յ. բնագիրն կ'ըսէ, Երբ արեւն ծագելու կամ բացուելու վրայ էր, Հ. Թարգմանիչն չի կըրնար զսպել գրիչը որ շթարգմանէ միանգամայն իր երեւակայութիւնն այլ, « Այն » ինչ Վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր » . մեր շնորհալի Եղիշէն՝ (որ կարծուեր է Թարգմանիչ այս Մակարայեցւոց գրոց), մինչեւ ի Բաղիշեցին Կարապետ՝ որ երգեր է

« Պլպուլն ի յոտքն է հագեր կօշիկ,
Սիրով կու փնտռէ զՎարդն անուշիկ » .

ոչ պակասած և ոչ դադրած են վարդերգութ. ինչպէս և ոչ օտար ազգաց մէջ. ինչպէս և ոչ Սողոմոնի՝ իր հարսերն երգելէն և իր երիտասարդաց ըսել տալէն, թէ « Բոլորիւք վարդից պասկեացուք », մինչեւ այս սր՝ ամեն ուրախական տօնից և յիշատակաց մէջ՝ Վարդն գրեթէ միշտ առաջին տեղը կու բռնէ, եկեղեցեաց և արքունեաց տաճարներէն մինչեւ ի հովուաց և մշակաց խրճիթները, ուր որ սէր ծագէ, և ուր նա եւ սուգ մարէ. վասն զի տիրութեան և մահուան յիշատակաց այլ հաղորդի Վարդ, և ոչ պակաս քան զուսպաստ հարսանեաց, գուցէ և աւելի՝ պսակէ և զգերեզմանս. մանաւանդ երբ ասոնց քով անկուի իրբու տարաժամ սգաւոր, և հայելի՝ հողուն մէջ քնացող հարսին և կուսին, սնոր հասակներն ու պսակները կերպարանելով իր յաջորդաբար փոփոխութեամբն՝ ըստ եղանակաց տարւոյ, երբեմն չոր երբեմն դալար, մէկ մի ծաղկած մէկ մի թու մած, և յիշեցնելով քերդողին ըսածն այնպիսեաց համար .

« Վարդ էր, վարդի չափ տպրեցաւ.
Երեկ ծաղկէր, այսօր անցաւ » :

Բայց եթէ հասարակաց համար է Վարդին կենաց և մահու նշանակութիւնն, ետքինս՝ իր կարծ դիմանալուն համար, առջինն իր գեղեցիկ ձեւով, շեղեցկագոյն գունով, ամենազեղեցիկ հոտովն, կըրնայ Հայն բաղդաւոր համարուիլ՝ անոր յատուկ կերպով անմահութեան և գերագոյն երջանկութեան նշանակ տալով, որ իր եկեղեցւոյն սեփական պարծանք և հրճուանք է. որովհետեւ յիշեցնէ և ըստ կարելւոյն ցուցնէ զՅաւիտենականն, որ մարդկային կենօք պարկեշտ և անուք ապրելով յերկրի, օր մի միայն՝ ժամ մի միայն՝ երեւցաւ սքանչելապայծառ՝ լերան մի վրայ. Այլակերպութեան օրը. զոր ամենայն քրիստոնեայք տօնեն կամ յիշատակեն, բայց Հայն է՝ որ Վարդապետ կոչէ, և ամենայն հեթոնոսական վարդերն ու զարդերն՝ իր կենարարին փառաւորութեան նուիրեալ՝ սուրբ պահէ : — Զմեղադրինք ուրեմն եթէ Վարդն զմեզ յափշտակեց և բարձրացուց ի սուրբ լերինս, և ի վեր եւս՝ յերկինս : Ապա թէ հարկ է իջնել յերկիր և ի սովորական ոճ մեր՝ յիշեմք մեր Ամուսիացի առաջնորդին հետ, որ այս ծաղկանս Ար. անուան

այլ նոյն է ընդ մերոյս, « Վարտ. Ծյց. և ինքն շատ ցեղ է, և լաւն այն է որ ա-
 » նուշահոտ և կարմիր լինի. չորացընող է և ուժովցընող է. և իր հոտն օդտէ
 » տաք գլխացաւութեան. և ջուրն օդտէ ակուային, և ակընջին ցաւուն որ ի տա-
 » քութեանէն լինի՝ տանի, և հունտն օդտէ բերնին խոցեցուն... և իր ձէթն օդտէ
 » բշտին խոցին... և փորին... Ստէ Պատ. թէ Արարն ճոյզ կու ասէ և Պ. Կոչ
 » կու ասէ. և ամենայն ծաղկի՝ Վարդ կու ասեն. և կարմիր Վարդին Վարդար
 » կու ասեն... և այն որ պլպլուկն է՝ հոտն ուժով է քան զբացուածն, և ա-
 » ղէկն խիստ կարմիր է. և ասացած է թէ դարտն լուծումն կու ասնէ »...
 Եթէ Վարդին յատկութեանց, տեսակաց և օգտից վրայ շափաւոր այլ գրել հարկ
 ըլլար, դարձեալ երկայն բան կ'ըլլար. վասն զի որչափ որ հռչակեալ է առաջ
 յիշած յատկութեանցն կամ գեղեցկութեանն համար, աւելի կըրնայ հռչակուած
 ըսուիլ օգտից համար, մանաւանդ յարեւելս, ուր՝ բժշկաց յիշեալ դարմաններէն
 զատ՝ ի գործ ածուին, Վարդի ջոշն (Կիւլայ), Վարդի Քացախն, Վարդի Եղն և
 Վարդի Սնուշն (Կիւլպէշէքէր), Վարդի մեղն (Կիւլէնկիւպին): Այսպիսի պիտանի
 և գովանի բոյսն՝ ի հարկէ այլ արժանաւոր խնամք պահանջէ դարմանուելու հա-
 մար, և այս այլ երկար գրուածոյ կարօտի. մենք յիշենք մեր Վաստկ. գրոց Ը-
 սածը (ԾԿԹ) մասնաւոր քանի մի բանի համար. « Եթէ ուզես որ կանուխ Վարդ
 » առնուս, փորեա զջուրն տակուցն արձակ՝ թիզ մի, և եղկ լրով արբո յօրն՝
 » երկու հետ, մենակ Վարդ տայ. և թէ ուզես որ շատացուցանես, պառակեցո
 » ի ճղերոյն և հող արկ ի վերայ. ծիէ և շատանայ, եթէ յամէն տարի զան
 » պառակեցընես: Եւ այլ ազգ, ի շարժն՝ կտրեա ի ճղերոյն և ստորեա՝ որ մազ-
 » մզուկ առնու, և ապա հոն տնկեա ուր կամիս, և այսու շատացո քանի կա-
 » միս, բայց զգետինն աղէկ պարտ է շինել. և այս օրինակու Վարդն անուշահոտ
 » լինի: — Ի Թէֆնէն (Պափնի) Վարդ պատրուեա, տերեւականաչ Վարդ լինի ի:
 — Այս ետքի խօսքս թերեւս նորալուր ըլլայ՝ Վարդի կանաչութեան նկատմամբ,
 բայց կու յիշեցընէ մեր մէկ Վարդապետի գրածն այլ. « Վարդն ունի շորս ե-
 » բանգ գունոյ. այսինքն Կանանչ և Կարմիր, Սպիտակ և Դեղին.. Վարդն հինգ
 » պատեանք պահպանի.. Բժիշկ է սրտի Վարդն » (Բաւական է որ փուշն շատ
 մտ չըլլայ):

Պալով Վարդի տեսակաց, եթէ մեր բժշկապետն շատ ցեղ է ըսու, մենք կըր-
 նանք անթիւ ըսել, որովհետեւ խնամքով և արուեստով տարուէ տարի կ'աւելնան
 տեսակքն. մեր ծաղկերգին այլ ըսած էր, « Երամն, ծանր է Վարդենոյն ».
 այսինքն իրստ շատ տեսակ ունի. յորոց ինքն յիշէ զհասարակ « Վարդն ու Քոչ-
 » վարդն և Հագրեվարդ »: Այս ետքինս յիշած եմք, Թ. 1583, նոյնպէս և զԳու-
 հար Վարդ, Թ. 510. յիշեմք և զՔափուր (Քեաֆիր) Վարդ, որ յիշուի Մշոյ
 և Խնուսոյ կողմերում, « մանաւանդ ի Խամլըբերդ լեառն Խնուսոյ, կ'ըսէ հեղի-
 » նակ Ն. Հայաստանի. բոյս սորա է ցածուն, ծաղկին մեծ քան զՎարդ (հա-
 » սարակ), անուշահոտ և առաւել գեղեցիկ կարմրագոյն, որոյ և տերեւ իսկ ունի
 « գոյն զարմանալի »: — Գիշահոտ վարդ. տես Անդուն և Մնթին: — Վանայ վարդ.
 — Թ. Վան կիշիշ, սպիտակ ծաղկով: — Հարիշարամ. զայս այլ յիշած եմք ի
 կարգին. բուսարանք այլ յիշեն Հարիշարբերեան Վարդ մի, B. Centifolia, և տե-
 սեր են յԵլմիածին, ինչպէս նա և Բիշարբերք Բիշարածաղիկ մի Myriacantha, ի
 Կող. Վարսոժնունիք, Քրդահայք: — Կան ուրիշ պէսպէս մականուամբք Վարդ

կոշուածներ այլ, բայց տարբեր ցեղէ կամ ազգէ ծաղկներ են, զորս յիշեմք քիչ մի վերջը. իսկ բուն վարդի ազգէն՝ ուսումնական անուամբք ճանչցուած տեսակներն ի Հայս, են. նախ, յատուկ Հայկականն՝ R. Armena (1), որ Արեւելեան (R. Orientalis) և Բրդոտ (R. Tormentosa) կոչուած տեսակաց մերձաւոր է նմանութեամբ, և տեսնուած է ի Բարբրդ. իսկ այդ յիշեալ երկու տեսակաց վերջինն՝ ի Պոնտոս, ի Պրիտ լ. Կիլիկիոյ, առաջինն՝ յԱլան տաղ լ. Փ. Հայոց. — R. Lutea, ի Բարբրդ, Մարաշ. Այնթապ. — R. Rapini, յԵգնկա. — R. Pimpinellifolia, ի Մափս, Բարբրդ, Թորթում. — R. Gallica և Cinnamomea, ի Թ. Հ. — R. Glutinosa, (Կաշուկ) յԵրասխայ հովտի, Կարին, Պրիտ և Ճիմիլ լ. — R. Caucasica, յԷջմիածին, Պարխար լ. Տաւուշ. — R. Saxatilis ի Վարձնունիս. — R. Alba, (Սպիտակ) ի Քութայիս. — R. Microcarpa, ի Ճիմիլ. R. Canina, ի Մարաշ, Այնթապ. — R. Rubiginosa, ի Թէքտաղ լ. — R. Crenata Kotschyana ի Մուշ. — R. Ulmaria ի Կարին, Ճիմիլ. — R. Filipendula ի Բարբրդ. — R. Aruncus ի Ճիմիլ, Հր. Կովկաս. — R. Vanheurckiana ի Մուշ, Եւայնի: — Ասոնց՝ Թէ ուրիշ տեսակի պատշաճի, չեմ գիտեր. Քիչմիշ կոչուած՝ վարդն ի Բաղէշ:

2871. — Վայրի վարդ.

Լ. Rosa Eglanteria, Փ. Eglantier, Ռ. Шиповникъ. Ար. Նասրին ناسين,
 « Որ է Զառին գաստահ, ըստ Ամիրտ. և Պէյթ. սպիտակ ծաղիկ է և հոտն սուր...
 » Ասէ Պտ. Թէ ինքն երկու ցեղ է, մէկ ցեղին՝ Պ. Կոչոյ մոշք ասէ, և մէկ
 » ցեղին Նասրին ասէ, և իր ուժն մօտիկ է Եասէմինին, և իր ձէթն Նաճէսին
 » ձէթն կու նմանի... և լուացող է և նուրբ անող է. և սգտէ ջրաց հովութեան,
 » և ճիճի որ յականջն մտանէ՝ սպանանէ... և զքթին կալուածն բանայ, զզուսին
 » տաքքընէ. և Թէ լոսեն և յանձն օժեն՝ զանձին հոտն անուշ առնէ և զքլըր-
 » տանցն այլ. և Թէ չորացընեն և յամէն օր հինգ մթխալ ուտեն և քանի մի օր
 » հետ մէկմէկի, զկտրիճութիւնն աղէկ պահէ և յուշ ծերացընէ: Ասէ գրոցս
 » իննողն՝ Թէ ի Խորասան տեսայ որ այս ծաղիկս կու լինի, Նասրինն էր մէկ
 » դրամ, մինչեւ երեք դրամ կու տային, հետ զեղին՝ ուժով լուծումն կու առնէր.
 » և Թէ յիրմէն կուլանկուպին առնեն՝ աղէկ լուծումն առնէ: »: — Տես և Մաս-
 » րենի: — Այս տեսակս՝ ըստ Պէյթարի կոչուի և Չինաց վարդ, վարդի Սինի
 զրուած յԱմիրտ. և մինչեւ հիմայ այսպէս կոչուի:

1. Հայկական վարդին (Rosa Armena), նկարագրին է բուսաբանից լեզուաւ. Aculeis ad ramos annotinos a basi rotundata subulatis rectiusculis aliis intermixtis et ad ramulos juniores gracilibus setaceis, stipulis omnibus conformibus angustis eglandulosis, petiolis aculeolatis, folios 5-7 elliptico-oblongis obtusis simpliciter serratis utrinque dense cinereo-tomentosis, floribus solitariis brevissime pedunculatis, petalis... Fructu erecto sphaerico-depresso breviter setuloso laciniis calycinis rectis subdivinis in caudam subdilatatam abeuntibus superato. Է. — Foliorum formá refert R. Cinnamomeam, sed hæc habet folia subtus tenuissime pubescentia, stipulis florales valde dilatatas, tubum calycinum glaberrimum et insuper aculeis geminatis, longe differt R. Armena a speciebus R. Orientali et Tomentosæ affinis ovarii sessilibus distat; et ex sententia cl. Godet et Crepin prope R. Involutam Sm. quæ tamen aculeos crassiores habet probab. collocanda est. — An humilis vel elata sit, ignotum. — BOISSIER, Flora Orientalis, II. p. 674. Մաս հմուտ պէտք է ըլլալ հասկանալու ամար:

2872. — Սոււտ վարդ.

Տես Մասրենի, ուր յիշուած է:

2873. — Իշու վարդ.

Ար. վարդու եղ-Համար الجارح ٥٧. « և ոմանք ասեն թէ Էզին աչքն է, որ է
» Այն ընդ-պոխարն (Bupthalamo). և այլ կ'ասեն, թէ մէջն կարմիր և գուրսն դե-
» ղին է, և թէ եղով խառնեն և զգլուխն օծեն, զտաքութիւնն տանի և զբոցն
» կտրէ »: — Տես Եզնակն:

2874. — Սարի վարդ.

Թէ և անունն լերան վարդ նշա-
նակէ, բայց տարբեր տեսակ կամ
ազգ է, ըստ վկայութեան տեսողին,
Տարսնոյ Ս. Առաքելոց վանաց մօտ՝
Անթանեայ (Աթանազիոսեայ աղբեր
քովերը. երկու թզաչափ կարծր բոյս
մի, տափակ և անփուշ. վարդն կամ
ծաղիկն կանաչկեկ գունով:

2875. — Չուվարդ.


Նշանակած է բառհաւաք մի. թուի
անարդ տեսակ մի:

2876. վարդախնձոր.

Տեսակ մի է Խնձորի:

2877. վարդ-կակաջ.

Եթէ ոչ ի գրոց, այլ ի լրոյ այսպէս
յարմարած կոչուի Սիդնիս Adonis
ծաղիկն, զոր յիշեցինք Ատրազոյն ա-
նուամբ, թ. 187. և է ի ցեղէ Խա-
ռածաղկաց. այլ եւ այլ տեսակներէն՝
A. Flammea (բոցենիկ) գտուի ի
Սպեր, Մանախ. — A. Cylenea ի
Պարխար. — A. Parviflora ի Նախճ-
աւան. — A. Walgensis, ի Կարին, Թորթում. — A. Eryocalicina ի Կարին,
Բարբերդ. — A. Aleppina յԱմիդ, Հալէպ. — A. Estivalis squarrosa ի սահմա-
նամէջն ֆ. և Մ. Հայոց:



վարդապետիկ.

2878. վարդապետի կանաչ.

Յիշուած է ի Մեղու օրագրի, (ԻԲ, 83). Թերեւս նոյն ըւայ և

2879. վարդապետի Սաւզ.

Որ ըստ Աթանաս. (եր. 53), Պատրիսն է: Տես Թրնջխոտ:

2880. վարդապետիկ.

Թութի ձեւով հաւաքուած մ'է մանտրոտիկ կապոյտ ծաղկանց, վեղարի նման,
ցընելով գանձք, որք փարրիկ (ոսպաչափ) բոժոժից նմանին, այսպէս կոչուած է:

2881. վարդասարդ.

Նոր թարգմանչաց հնարած անուն է Ճփնոյ. բայց Ռուջբանն Գալիենու բա-
ռից կարգէն համարի և գրէ. « Թուփ է, որ զՂի տերեւս ունի, բայց մեծագոյնս.
» որք չորքտանեաց են թոյն, և մարզկան դեղ ընդդէմ օձից. զծաղիկն նման
» վարդի և զտերեւ նման Սարդի ունի »: Առաջ Ղի նմանցուց տերեւները,
յետայ Դափնիի, թերեւս առաջ ծաղկին թերթերը կ'իմանար. իսկ Լ. անուն գրէ
Rhododaphne, որ հիշդ վարդասարդ ըսել է, և Nerium, որ է Ճփնին (Oleandro).

2882. վարդենիկ.

Իբրեւ տարբեր ի վարդէ բոյս գրած է բառհաւաք մի:

2883. վարդեւորի. — Տես վաշտեօրի:

2884. վարընկենի.

Ջիթենւոյ հետ յիշէ յՈւտի նահանգի՝ Խորեն. Աշխարհագրութիւնն. որով թուի
ծառ և ոչ վարունգ բանջարն:

2885. վարնող կամ վարնոխ. վարժող:

Անպիտան կամ վնասակար խոտեղէն մի, Յորենի, Գարիի նման ցօղնով և
երկայն փերեւներով. վաստկ. գիրքն կ'ըսէ (ԽԲ), « Յաղագս Եղեզան, Սիգի և
» վարճողի, թէ որպէս անցուցանեն և չորացընեն. Առ զԹրմուզին ծաղկած
» արմատն և ի վերայ Սիգին ցանէ, և 12 օր ի տեղն թող, նա չորացուցանէ
» զամէնն. և թէ ուզես որ Եղեզն, վարճոյն և Հայֆայն (Թ. 1603) սպտաի,
» տես զժամն յորում ելանէ Շէղր իւլ-զէպուր աստղն, և առ եղեգնի դանակ
» կամ այլ իրք նման նմին՝ որով կտրել կարենաս, և այնու կտրես », եւ այլն:
— Տես և վարնակ:

2886. վարշամակ. — Տես Օշակ:

2887. վարորնակ.

Այսպէս կոչէ Աօար բժիշկ՝ դեղագործութեան և հիւանդաց դարմանոյ նա և տըն.
տեսութեան մէջ ծանօթ արեւելեան բոյսը, թխար շանպար, *جاسيا*, որոյ
համար երկար գրէ Պէյթար, իսկ Ամիրտ. կարծ. « Ինքն ի Քապիլ և ի Պատրա և ի
» Հնդուստան կու լինի. լաւն այն է որ սեւ և հառուն լինի և մեղրով լինի. բնու-
» թիւնն մուկթատիլ է, հալող և կակղացընող է, և զփորուն զուռէցնին տանի և
» կու բանայ. և թէ եղով օձես՝ զուռէցնին հալէ. և առնելուն շափն՝ ի (մէկ) փո-
» ղէն (մինչեւ) տասն դրամ է. բայց զսիրտն կու խառնէ, և զիր վնասն տանի
» Թմրհնդէ լուրն »: — Լ. Cassia Fistula, Փ. Cassier.

2888. վարունգ.

Ոչ միայն ծանօթ է իր նման մտնո խաւարտից հետ, այլ իրրեւ երեւելի անոնց մէջ իրեն սեփականած է խաւարտ կոչումն, ըստ Ամիրտ. որ կ'ըսէ, « Խիար (ըստ » Ար. Ք. خیار) որ է Հ. բառով խաղաղարտն. լաւն այն է որ կուտն մանր լինի. »
 « րնութիւնն հով է և գէճ Գ. տրճ. և ինքն հովացընող և գիճացընող է. և իր ջուրն »
 « օգտէ սարսամին և տաք ուռեցին և ան զլուխցաւութեան՝ որ ի տաքութենէ լինի. և »
 « թէ զջուրն ի քիթն կաթեցընես՝ զարունն կտրէ... և ի յինքն քիչ մի կապողու. »
 « թիւն կայ. և թէ զիր հնտին զկաթն հանես և տաս՝ զծարաւն կտրէ. և օգտէ ա. »
 « մենայն տաք ջերմերուն. և իր փոխան Ենկիարն է. և թէ շատ ուտես՝ զեն առնէ », եւ այլն : — վաստկ. գիրքն առանձին գրէ (ԾԳԲ) « վասն Խիարի. Խիարին տնկելն »
 « և սատրելն՝ նոյնպէս է որպէս այլոցդ (բանջարեղինաց), և թէ ռք զիւր տերեւն »
 « ծեծէ և զՆղըրդոյն ընդ իրեար, և ի վերայ նոր կտրածի դնէ, զարիւնն կապէ և »
 « զխոցն կնքէ, և ուռեց շտայ առնել. և թէ զիւր տերեւն ծեծես և ընդ անլի հին »
 « խոզար խառնես և ի վերայ փշի կամ խոչի դնես՝ որ ի մարդն կենայ, հանէ. և »
 « թէ ճիւղած կամ տրորած կենայ ի մարմինն՝ սրբէ և լաւացուցանէ » : Հին Ռօշիր. մեր ընդ կօշայի բաղդատելով զվարունգ՝ գրէ. « Խիար և կօշա՝ հով են. »
 « յ' Բ. տրճ. և գէճ յ' ուռն, և Խիար՝ հով է քան զկօշա, և ի ստամոք ընձայէ թանձր »
 « և զորկուտ պղղամ. և արժան է պատրաստել ու շուտել, թող զմանրն ուտէ և »
 « զմանդրկուտն : կօշա՝ լաւ է քան զԽիար, որ զԽիար շատ ուտէ՝ ջերմնատի, բաց »
 « որ ի տաքէն վաղկտի՝ հոտն լաւ է. և որ շատ ուտէ և պատրաստի՝ Նանախուտ »
 « ծամէ ի հետ, և զկեղեւն մի ուտեր, ահոկէ » : — Նախայիշեալ վարունգի վերա-
 դասուելուն ի խաւարտս՝ վկայէ և ինքն, ըստ իմացողութեան Առակախօսի մերոյ. (ԾԳ). « վարունկն կոչեցեալ պտուղ պարտիզի՝ մեծարդոյ քան զայլն կարծէր զան. »
 « ձնէ վասն կանխութեանն, և ի Սեխէ ստգտեալ՝ եթէ պատուիս զի՝ մերձ ոչ »
 « իցեմ, և եթէ ոչ այնպէս սակայն անպատուիս՝ զեղնութեամբ զարելի եղեալ » :
 — Լ. Cucumis, Փ. Concombre, Ռ. Огурец .

2889. — վարունգ վայրի.

Որ սովորաբար խիարունկ կոչուի, այլ և վայրի խիարունկ ի վաստկ. գիրս, որ ար-
 տորէից այլեւայլ վնասուց դեղ գրէ այսոր տերեւներով կամ ցօղունով, ինչպէս
 (ՂԶ) այգիներու չոպի, (ՃԳ) մարախի, և խառն Թրմըզի ջրով ցանել բուսոց վրայ.
 (ՃԶ) Լուի դեղ. « Առ զվայրի խիարունկն և ծեծեալ ջրով, ի տունն ցանեա, լուն սա »
 « տակի առ հասարակ » : — (ՃԳ) Մկները սատկեցընելու համար՝ այսոր տակն ու
 Անգուժատ ձիթով խառնել. — Դարձեալ (ԾԳԲ), « Թէ զվայրի խիարկին ջուրն »
 « ռք առնու և օծանի, և երթայ մեղր կթէ, մեղու զինքն չկարէ խայթել. և զնոյն »
 « Խիարկիդ ջուրն և հոռոմ ձէթ ընդ իրեար խառնեն, զկտրած ուրուք օծանես՝ »
 « յառաջ որ այլ իրք լինի օծած՝ զկտրածն կցէ. և թէ զնայն խիարունկն ծեծես և ի »
 « վերայ խայթածի դնես, զինչ և իցէ՝ ամէնին օգտէ » :

2890. * վարս.

Ար. ساج. Հ. կոչուի Դեղին կոճ, Դեղնախոտակ. Ք. Զարտալօյի. Ամիրտ. այս
 (վարս) անուամբ գրէ, « Ղարտալօյին դեղինն է, Դեղնախոտակ ասեն. . Ասէ Պտ. Թէ

» ինքն բոյս-մն է որ ի Եամանու կու գայ և ի հոն կու բուսնի, նման է Շուշանի
» ծաղկին. և ասցած է, թէ յորժամ տարի մի ցանես՝ տասն տարի հերիք է, և
» յամէն տարի պտուղ կու տայ. և ասացել է զրոցս շինողն, թէ զինքն ի լեռանն
» տակն կու ցանեն, որ ան լեռանն Սմատանճու կ'ասեն. և լաւն այն է որ կարմիր
» լինի՝ որ ի դեղնութիւն քլտէ »: — Լ. Memecylon tinctorium.

2891. Վարսակ.

Եանօթ ընդեղէն կամ խոտեղէն մի իբրև գրաստուց ճարակ. մեր առաջին մա-
տենագիրն Ազաթանգելոս ի կարգի Մանրախոտոց յիշէ զսա՝ Լօռի և Կնիւնի հետ.
Սմիրտ. Պէյթարի յիշած քանի մի տեսակ անուններէն ըն-
տրելով զՀարտունան կամ Հարբուան **جان بوطه**, գրէ. « Կամ
» Ղրտանան կու ասեն. և ինքն հապ-մն է որ ի Յորենին մէջն
» և ի Գարուն մէջն է (նմանութեամբ). բնութիւնն մուհթա-
» տիլ է, ի տաքութեան և ի հովութեան մէջ է. բայց որու-
» թիւն ունի »: — Ս. Բարսեղի Վեցօրէք այլ կ'ըսեն, « Յո-
» ռ զ(ուն)ն Վարսակոյ ամենեւին փոր և սնամէլ է, քանզի
» չիք ծանրութիւն ի գրուխ նորա »: — Լ. Avena, Փ. Avoine,
Ռ. Овеч. Թ. Խոչաֆ **آوچه**: — Թէ և հասարակ բու-
սեզէն մ'է, բայց այլ եւ այլ տեսակներ զատած են բուսա-
բանք. յորոց A. Strigosa կոչուածն ի կողմանս կազրից
ծովու, ի Սպիան և Լէնքորան. — A. Pilosa և Clauda
կոչուածն ի Մերսին Կիլիկիոյ. — A. Fatua ի Կովկաս. —
A. Pubescens ի Պանտոս, Ճիմիլ Լ. — A. Argæa յԱրգիաս
Լ. Կեսարիոյ. — A. Batensis ի Սոմխէթ. — A. Planiculmis
ի Ճիմիլ:



Վարսակ.

2892. Վարսաման. վարսամն.

Գայիենոսի բառից կամ հին Բառագորոց մէջ գրուած է՝
« Փրենիկ՝ Վարսամն », կամ ըստ Բժշկր. « Փրենի տակ որ է
Վարսաման, որ է Կօստա (տ. Կօստ): — Ասար զուգէ,
« Վարսաման՝ Սիսամբար, Նամնամ ». Սմիրտ. յետին ա-
նուամբն (رمان) գրէ. « Որ է Նամնամ ըլ-մկուրն... և ինքն
» Սիսամպարն է. լաւն այն է որ կանանչ և սուր լինի ». Հետ
զանազան օգտիցն ի դեղորայս կ'աւելցընէ. « Գրոցս շինողն
» ասացել է, թէ շատ եղեր է որ Սիսամպարն Նանայ է դար-
» ձել և փոխեր է ի բուսած տեղն. և այս բանին իսկի հակա-
» ռակութիւն չիկայ որ Սիսամբարն Նանայ ելաւ »: — Ուրիշ
տեղ հունտն այլ յիշէ. « Պզրր Նամնամ, որ է Պ. Սիսամ-
» բարին հունտն. լաւն այն է որ ամուց լինի և ի սեւութիւն քլտէ »: — Պէյթարի
Թարգմանն Նամնամը կոչէ **Thimus Serpyllum**. Թուի թէ Թ. Մարսեման կոչուած
անուշահոտ և մազմազուտ երկայնատերեւ խոտն այլ Հ. Վարսամն է, որոյ անունն
այլ ձեւին (վարս, մազ) յարմարի: Ծոթրինի ճուարիչ զուգելու նիւթոց մէջ Վար-
սամանի համար յայտնապէս գրուած է, « Որ է Մարսամնայ »: Ասոր նորք յար-
մարցուցեր էին Լեղնտրոյկ անուճը, բայց մենք ցուցինք որ սա տարբեր բոյս է:

Հաւանորէն վարսամ և վարսաման են ըստ Պարսից Պերսամ և Պերսեման. այսպէս կոչէին անոնց կրակապաշտ մոգերն՝ ըլլայ այս բուսոյ ըլլայ Նանենոյ կամ Գազի շոր հիւղեր, զոր իրենց պաշտաման ատեն բոնէին ի ձեռուրնին. և այս է Հ. Բարսանեզ ըսուածն: — Տես և Սիսամբար և Լեղակ, զի Լեղակի տերեւ է վարսամանն՝ կըսեն ուրիշ Բժշկարանք:

2893. վարսնակ խոտ.

« Այն է որ զշուան կու » մանեն », կ'ըսէ հին Բժշկր. ուրեմն Պրտուի տեսակ մի է, հաւանորէն Ալֆա կոչուածն Ար. և Լ. Alfa. Տես և վարճող:

2894. վերբիծու մանանայ.

Նեգնորէն ըսուած, տեսակ մի սպիտակ կըր Սունկ, քօչից (վայրի այծից) ուտելիք, ի կողմանս լեբանց Սասնոյ և սահմանակից գաւառացի:

2895. վերվերան.

Սոսեմ անուան հետ յիշուած է. տես զայն, Թ. 2794:

2896. վիզն. վինզն. վիկ.

Նոյն կամ նման անուն և Բ. Визос, Բիկոս գրուած ի բառս Գալիենու, Լ. Vicia, Փ. Vesco, Ռ. Журавлиный горох, վայրի խոտ մի Ոսպի նման ատրեւներով և ծաղիկներով, որ կըրնայ այլ ուտուիլ. աւելի ծանօթ է ուրիշ բուսոց վրայ պլլըող յատկութեամբն. ինչպէս կ'իմացուի Ոսկիբերանի ըսածն, (Գաղատ. Թղթոց մեկն.), « Զոր օրինակ ի սերմանիս՝ ոչ է հնար եթէ վիզ » զք սերմանիցէ և Յորեան հնձեսցէ »: — Թէ ոչ նոյն՝ հապա ազգակից է վիզի և Աղուեսու սուսերն (Թ. 64):



վիզն.

2897. վինակ.

Դեղին ծաղիկ մի, որ մօտ Համբարձման տօնի օրերուն կու ծաղկի, և վինակընկեցութեան ի գործ ածուելով այս անունով յիշուի:

2898. վիշապուկ

Յերուած է ի Մշակ օրագրի (ԺԸ, 88):

2899. վլան տերեւ ?

Քէ սխալ գրուած չէ վչոյ տեղ՝ կըրնայ բառն վուչ կամ վիչ այլ ըլլալ, և վլան սեռական հոլովն. կամարկապցին է յիշողն, որ ճճիներու դէմ դեղ գրէ. « Առ » վլան տերեւ կամ զիւր խողիթն (կեղեւ ?) կամ զտակն, ծեծէ, և ի վերայ » պորտուն զիր, ճիճին սպանանէ »:

2900. վլիտօն.

В. Блитон. Լ. Blitum, Փ. Blite. Քէ և սովորաբար այս Լ. անուամբ տարեկան հասարակ խոտերէն մի կ'իմացուի, բայց ըստ Մխ. Հերացւոյ և դեռ հիմայ այլ լուած և ճանչցուած է վարընգի նման խաւարտ մի. վասն զի այն մեր հին բժըշկապետն՝ պալլաւի և սավոայի շերմնոտի կերակուր պատուիրէ (եր. 43), « Մաշ, վլիտօն և Դրուժ, և այլ զոր ինչ նման են այսոց »: — Տես և Միսել, Կարմիր Բանջար, և Բարբուզնա:

2901. վուշ.

Տես Կտաւաւ: (Հին գերմաներէն լեզուաւ կոչուէր Flahs). ի Բժշկարանս յիշուին Դեղին և Մեջ վռշ:

2902. վուշնիկ ?

Նշանակած է բառհաւաք մի:

2903. վուուչ.

Այսպէս անուանեն Պոնտացիք շոր Մուսղը:

2904. վուօշ.

Աւանց թեփի Տորեն, որ և Չաւար կոչուի:

վրացի կոն. — Տես կոճ վրացի:

2905. վրիպ.

Ատուածատուր Ներսիսեան ի Լատ. — Հայ Բառագիրն՝ զուգած է, « Labrusca, Փուշ, վրիպ, Թութ ». որ ըստ Լատ. — փռանկ բառգրոց՝ է վայրի Որթ, Vigne sauvage.

2906. * Տալիֆ.

Թուի Ար. բառ, և նշանակէ Մօզ կամ Մաւզ պտուղը տես Թ. 2145 Ար. دليق Նշանակէ վարդի պտուղը կամ Մասուրը:

2907. Տալիճ.

« Որ է Հնդի Աֆուրն », ըստ Ամիրտ: Տես Աֆուր:

2908. Տալիսայ ?

Բժշկարան մի գրէ այսոր համար. « Փոքր Ստատֆին ցեղերուն է. Շամցիք » Արլես կու ասեն, և Մարցիքն Տիլես ? կու ասեն, և աղով և հացով կ'ուտեն » : Տ. Սազապ :

2909-10. Տալիս կամ Տալլ.

Գեանի աստղ անուանեալն է. տես Թ. 459: Դարձեալ, ըստ հին Բժշկարանի, « Տալիս, անուշահոտ փայտ է զոր Ուտ կոչեն » : Ուրեմն Հալուէ, Թ. Իւտ աղանի. կըրնայ երկրայուիլ Թէ զուցէ Տալիսն այլ Տալիս կարդալու է, իբր Ստալիսն :

2911. Տակ.

Որ և է բուսոց արմատն՝ լայն և հաստ, միանգամայն և կակուղ, ուտելու կամ դեղի գործածուելու, այսպէս կոչուի. բայց յատկապէս Տակ կոչուի Ճակընդեղ բանջարն. տես զայն :

2912. Տակմուշտ.

Բժշկարան մի նոյն համարի զսա և զկասլա (Դափնի), բայց ասոնց զուգէ և զԱնգուժատ: Իսկ Ամիրտ. զուզանիչ գրէ Հապ ջլ-զար, որ է Դափնիի հատերն :

2913. Տաղուկ.

Գրած է բառհաւաք մի իր ցանկին մէջ, առանց բացատրութեան :


* Տաղուն.

Թ. բառ. տես Լղդենի :

2914. Տապղնուկ.

Վայրի Ստեպդին նշանակէ, ի նորոց լսուած :

2915. Տան.

Պէյթար յաւելուածով գրէ Տան ել-ամիր . « Ինքն բոյս-մն է՝ որ » Պոստան-աֆրոզ կու ասեն, ըստ Ամիրտովաթայ. որ Թ. Սոսլրան պորկի ասէ. » և լան այն է որ ի շուքն չորնայ, բնութիւնն հով և չոր է. գտտամոքն և զա- » ղիքն սրբէ. և Սահակն ասէ Թէ բշտին զեն է » : Այս բոյսս ըստ ոմանց է Լ. Amaranthus, ըստ այլոց Anemone (Հողմածաղիկ) :

2916. * Տանը.

Ար. جاد, « Որ է Լուպիան » . ըստ Ամիրտ. և Պէյթարայ :

Տամբուլ. — Տես Դամբուլ:

2917. Տանդ.

Ար. ԾՅԾ. « Որ է Հայ Խու-Սէրափն, Տատուխի հասեր է, ի Սինու կու
 » գայ, և Հնդի այլ կու լինի. և ինքն երեք ցեղ է, և լաւն այն է որ Սինի լինի..
 » խիստ լուծող է, և զաւելի խառնուածն կու հանէ՝ որ ի յղեղն և ի ջրերն
 » լինի, և պիտի որ զինքն ի հով քաղաքնի տան, և ի հով տեղերն նստին..
 » իր տա,
 » լուն չափն երկու հատ է, բայց աղեց զեն կու առնէ »: — Ըստ Թարգմանչին
 է Լ. Croton Tiglium, և ըստ այլոց Euphorbia Latyris, երկուքն այլ Ափարփիոնի
 ցեղէն են: — Հին Բժշկարան մի ուտելիք այլ պատրաստել տայ, « Տանտ Խու,
 » պայզով եփած »: Ար. կ'ընուի և Հայ բի-սէրափ (Արքայահատ): Տես և Տա.
 տիսենի:

Տանդունեկ. — Տես Թաւերանեկ:

2918. Տանձ. Տանձենի.

Ընտրելագոյն պտղոց մէկ ազգն, ինչպէս յայտնի է, Թէ համոյն Թէ անմնասու.
 Թեամբ և Թէ շատ տեսակներով, ինչպէս կ'ըսէ և Ամիրտ. ստորագրելով. Ար.
 Գրունասրայ كمشي անուամբ.

« Շատ ցեղ լինի ինքն. և լաւն
 » այն է որ մեծ և քաղցր լինի,
 » մուկթատիլ է և կապող է. և
 » Թէ ի կերակրէն յետեւ ուտեն՝
 » շթողու որ պուխարն ի գլուխն եւ
 » լանէ.. և Թէ զտերեւն եփեն և
 » զլուրն խմեն՝ օգտէ արուն Թքնեւ
 » լուն և Թորին կերվածին.. և
 » զսիրան ուժովցընէ... և կուտն
 » զճիճին և զօձն կու սպաննէ:..
 » Ասէ Պա. Թէ լաւ Տանձն այն է
 » որ ի Խորասան լինի՝ որ Շահ.
 » սրտա կ'ասեն, և ինքն ի Փոռս.
 » տայիկն? բոյան կու նմանի ի
 » հոան, եւ համն անուշ, եւ
 » մեծ լինի և հասուն.. և քան
 » զամէն միրգ աղէկ է կերակուրն..
 » և այն որ Թթու է՝ զգորն կու կապէ. և Թէ շորցընեն՝ ստամոքին աղէկ է. և
 » զծարան կու կորէ. և (Թէ) զՏանձն հետ Մանթարի եփեն՝ զչարութիւնն
 » տանն.. Եւ ասցած են Թէ չէ պատեհ որ ի վերայ Տանձին ջուր խմեն, և Թէ անօ.
 » Թուց խմեն զլուրն՝ պիտի որ ի քուն լինին և անապակ զինի խմեն, օգտին... և
 » ամենայն դիմօք Տանձին ջուրն լուծումն կու առնէ, և ինքն կապող է »: — Հին
 Բժշկր. այլ կ'ըսէ. « Տանձ.. շատ ցեղեր է, է որ Թթու է զէդ Խնձոր, և շատ գնայ



Տանձի ժաղիկ.

» Ի ստամոքէ, և է որ տտիպ, այն հով է ու ծանր. և է որ քաղցր, այն ընդ թթու և ընդ տտիպն ի մէջ է, ի տաքն մօտ է քան ի հով. իսկ որ թթուն է՝ զփորն կապէ, և ևւս, թէ քացիտով եփած՝ տաս ուտել. և չիրն ծանր է քան զդալար. և մեծ Տանձն յաւ է քան զփորըն » :

Խնչպէս կու վայլէր, Վսակ. զիրքն առանձին գրէ (ԹԻՐ), ս Յաղագս Տանձի. « Տանձն՝ զգիլային վայրսն ընդունի, և ինչ ցեղ որ ինքն շատ ազգեր է՝ և իւր տըն, կելն և սերմանելն բազում ազգ են, և իւր տնկելն պիտի յառաջ քան զՉմուսն միլի ամիսն, յայնպիսի տեղիս՝ ուր արեւելքի հողմն և հարաւոյն՝ հանապաղ որ. քան շարժին՝ գիպին յինքն և սնուցանեն... Եւ երբ տնկես՝ ազրախառն հող ան ի վերայ, բայց լաւն մազմզկոտն է՝ թէ գտանես. նոյնպէս և պատրոյսն անողալ է և և բերուիկ և շոյտ. Եւ թէ ուզես որ Տանձն քաղցր զայ և շատ, նա զու որպէս գրեալ եմք՝ ծակեա զծառին բազուկն վերեւ կողոյն, և կաղնի ցից զարկ խաշք պինտ վառով՝ որքան կարես, և թող ի տեղն, դեղն այդ է: Եւ թէ յիմեքէ պատ. ճառէ թափէ զծաղիկն կամ զբերն, ան գինեմբուր և փորեա զտակն ծառին և լից ի վերայ տակուցն 15 գիշեր ի վերայ իրերաց. և այդ է դեղն. և զինչ ցեղ և իցէ ծառն և զմրուրդ լնուս, զՏանձն քաղցրացուցանէ: Եւ թէ առնուս զպախրէի լեղին և բոյր զծառին հաստ տակոխն բանաս և օժանես՝ այլ ճիճի չի բնակի, և » որջանայ. և թէ փորես՝ զքարինսն ի ծառին տակուցն հանես, և մազած ազրախող ան ան ի տակն և ծածկես, Տանձն քար չունենայ, և իրով լինի և տնոյշ բայց ի վերայ աղէկ լրեա » : — Լ. Pyrus, Փ. Poire. Մեր յիշալ ազգային երկու հեղե նակաց կամ գրոց վկայութիւնն Տանձից շատ ազգ ըլլալուն՝ ինքնին հաւանեցընէ որ մեր երկրին մէջ այլ պիտի ըլլային այդպիսիք. օտարք յիշեն Ասորոց անուանեալն P. Syriaca ի Բաղէշ, և Փշտատերեւն՝ P. Elæagrifolia ի Պինկէօլ և ի Կեսարիա. իսկ առ մեզ ի գրոց և ի լրոյ ճանչցուած տեսակք են,

- | | |
|-------------------------------------|--|
| Ալխարթ կամ Ալխաթ (Վայրի Տանձ). | Մեղրիկ, Մեղրիկենի (շատ անոյշ Տանձ). |
| Ամբառիկ (մէկահատ Տանձ). | Մոխրի կամ Մուխրի Տանձ. |
| Աշնկենի. | Մեհրանիկ. |
| Լղմոր կամ Լզպոր (Թ. Պողազարեւ). | Նանիկ (մէկ երեսն կարմիր). |
| Լսեռկէն, Թ. (Տեկիդուկն տրմուտի). | Շթուկ, վայրի և թթուալ, ի Տարօն. |
| Խոզի Տանձ (Ազրագեւ ? ըստ Գալիեն). | Շիկոռ, նոյնպէս Վայրի, ի Խոտուլուր. |
| Մտի Տանձ. | Պակոյ. |
| Ղզուիթ. | Սարի Տանձ, անունն յայտնէ վայրի ըլլալը. |
| Համէտանձ (ի Համէէն շատ գառուելուն). | Սնչիկ (Չմերային Տանձ). |
| Ճէտոն (կարծր Տանձ մի). | Վաշտավառ, Վաշտեորի. |
| Ճըս Տանձի. | Քարատանձ (Յ. Պերիուէս ըստ Գալիեն). |
| Մալաչի կամ Մալաչիի (Փ. Poire du- | Քարնին. Քարջենի (Վայրի Տանձ). |

Ժէ դարու եւրոպացի տեղագիր մի Նախնաւանայ կողմերում յիշէ Պեկ-արմուտու կոչուած կանաչ կլոր քաղցրահամ Տանձը, և կարծէ թէ անկէ տրուած է յիտալիա Bergamote անունը, իբրեւ Տանձ Բերկամայի :

3919. Տաննէտ.

Բժշկարան մի գրէ Տաննէտի շոք, և Թ. այլ աւելցընէ՝ Գուզուս գուշաղի, որ է Գառնականին Թ. 435 :

2920. Տանն ?

Բժշկական բառից կարգի մէջ գրուած և իրեն զուգուած է Հապին ?

2921. Տանտիսենի.

Տես Տանդ: Բժշկարան մի գրէ, « Տանտիսենի, որ է Հապ ըլ-միտք, կեղեւեա » և հան զլեզուն՝ Թրջելով զնա ի քացախն, և... շինեա հապ »:

2922. Տաշպտակ ?

Քուռաթ է, ըստ նոր բառհաւաքի:

2923. Տապաղափ ?

Տեղ մի վրայ գրուած էր այս, և Յ. Ետրոս փայտ, Էրկիպարի փայտի, կոչաշնին ?

2924. Տապար ?

« Ի մէջ Թզին ցեղէն է, և կարմիր է », ըստ Ամիրտ: Ի Պէյթար շեմ գտած:

Տապղ. — Տես Տիպղ:

2925. Տապղայ.

Ըստ Ամիրտ. « Ի Յորենին ցեղերուն է, բայց բարկուկ է, և ես հանց իմա-
» ցայ, որ Թ. այս խոտիս Ղապղումա կ'ասէ »: Ուրիշ օրինակ մի կ'աւելցընէ, « եր-
» կայնութիւնն մարդու չափ կայ. զինքն ի ցուրտ և հով լերինքն շատ կու ցա-
» նեն, և Երայքի ? կու ասեն. բնութիւնն որպէս Յորենի բնութիւն է. բայց
» քամի ունի. և իր հացն՝ յորժամ ապք լինի՝ չէ աղէկ, յուշ երթայ ի ստա-
» մաքէն. և Թ է իր ալիւրէն մալէզ առնեն՝ զկուրծքն յտակէ և օգտէ հազին. .
» ոտամաքին զեն է, քամի կու ընկենու և գուգուացընէ զփորն, և Թ է ձին ուտէ՝
» զեն շառնէ, ինչպէս որ Յորենն զեն կու ասնէ »: — Կարծեմ Գլգիլն է. Թ.
495 և իր շալակն:

2926. Տապրիզատակ Շաքար.

Այսպէս գրէ հին Բժշկարան. և տակ բարդութեամբն տայ կարծել Եզէզն Շա-
քարի. իսկ ուրիշ շատ տեղ Բժշկարանք գրեն Տապարգի Շաքար, որ ըստ Պէյթ-
է Պ. բառով Ծշքթ, և նշանակէ տապարակտուր, (տապարով կամ կացինով
կտորած). վասն զի գտած խոտացուցած քարի պէս պնդած շաքարն է, զոր մե-
րայինք կոչած են Շաքար վանի, և Սիսեռնաշաքար, զուցէ Թ է Սառնաշաքար:

2927. Տառնջի.

Հիւսիսային Հայոց անտառային ծառոց հետ յիշուած է:

2928. * Տաստանպուեայ.

Գրուած ի Բժշկարանս. ի Պէյթար քշքթաւ. « Թ. Լանդում ասէ (կամ
» ինչանդում). ի մեր աշխարհն Ամուր կ'ասեն », եւ այլն. տես զայս Թ. 77:

2929. Տատաշ. Տատասկ.

Երբինս հին գրոց լեզուաւ է, առաջինն իբր *աամկորէն*, թէ և Մխ. Հերացի այլ այնպէս գրէ. նշանակէ *փշեղէն բոյս*, և յատկապէս *ցամաքայինը*: *Tribulus terrestris*, Փ. *Chausse-trape*. Ար. Հասսէք *شامه*, զոր Աժիրտ. և այլք գրեն « *Հասակ*, որ *Հ. Տատաշ* ասեն. ինքն Վայրի և ածուց այլ կու լինի. և լաւն » այն է որ ի աւզոտ տեղ բուսնի և կանաչ լինի. հով և չոր է և տրճ. և օգտէ » ամենայն լղացաւութեան և ակնջին՝ մեղրով ». և այլն: Բժշկը. մի գրէ Թ. Չաքրա տիքեհի. — Բիշուի ի Բժշկարանս և Զէր Տատաշի: — Թ. բառն *Τριβόλος* Հ. գրուի ի բառս Գալիեն. *Տրիբոլոս*. Դժնըկի և Եղիճի հետ յիշուի յԱղաթանգելոս. և գրեթէ անունովն այլ խայթէ զսիրտ, երբ լտէ ի Ս. Գրոց զանէծս մեր նախահօր. « *Փուշ և Տատասկ բուսուցէ քեզ երկիր* »:

Թուի թէ տարբեր տեսակ բոյս մ'այլ նշանակէ *Տատասկ*, զի Բժշկարան մի Լուի դեղ գրէ, « *զկանանչն Տատասկին ծեծէ և զլուրն քամէ*, ... անուշ հոտ » է (գրոզն Վանցի Հ տառի տեղ միշտ ո գրէ), և Լուն մուտ շաներ »:

2930. Տատին.

Առանձին չեմ գտած այլ զոյդ « *Հոռնցի Տատին*, որ է *Հայֆարզոն* ». այսինքն՝ *Hypericum*, Գոհամբուռ. տես զայս:

2931. Տատոսակ ?

Ի ցանկի նոր հաւաքման բառից գրուած, իբր *Փղբր Տատասկ*:

2932. Տատրակ.

Ըստ ոմանց Խոնկորիճն է, որ և իշտըտուուկ. *L. Tussilago Farfara*, Փ. *Tussilago*. Շէհրիմանեանն կ'ըսէ թէ ի Բասեն և ի Մուշ այսպէս կոչեն զՈւլան. *L. Laserpitium Ferula foetida*, որ ցեղակից է առջինին. և թէ նոյնն յԱրցախ թերախաշ կոչուի, ի Տայս Քեդի: Տես այս անունները իրենց կարգին. այլ և զԽոնճիկ և Խամալոն: — Տերեւն հաւկըթաձեւ, եզերքն տեղ տեղ ճեղուած, վրան բրգոտ է. այս բաներուս համար Թ. կոչեր են *Տեվե տապառը* (Ըղտու ներբան), այլ և *Բամպուզ օրի* (Բամբակախոտ):

2933. Տարաթիմ!

Բժշկարան մի գրէ անստոյգ բառեր զուգելով. Ար. կրարիթ? Լ. կարաիֆ. Թուի նոյն և

2934. Տարասիս.

Զոր հին Բժշկը. ուրիշ նիւթոց հետ դեղ գրէ *Թուլութեան*: — Ուրիշ Բժշկարան մ'այլ նոյն հիւանդութեան դեղը *Տարասիս* գրէ: Ըստ կամարկապոցոյն՝ « *Տարասիս՝ խոտ է, ի Հալէպ լինայ. լաւն նորն է* »:

2935. Տարգալի.

Ծաղիկ մի, ծանօթ Սերաստիոյ՝ գուցէ և ուրիշ կողմեր: Ըստ իմաստի բառին (զգալ) յարմարի է. Cochlearia դգալաձեւ բուսոյ, զոր յիշած եմք Խրէն անուամբ:

2936. Տարդիւն ?

Անծանօթ, գուցէ և ոչ բոյս. զի հետը յիշուած նիւթերն՝ ի դեղ այսուցի, ի հին Բժշկարանի՝ իւղային և խժային իրեր են:

2937. Տարեկան.

Վարսակի նման, բայց բազմաճիւղ խոտ է, կենդանեաց ուտելի:

2938. Տարիղան ?

« Որ է Վայրի Ղուրտուճն (տ. Ասփուր, Թ. 176). ինքն բոյս—ձն է որ գարունն » կու բուսնի, և իր ծաղիկն նման է Հասակին ծաղկին, և դեղին է. և ծաղիկն » փուշ ունի. և ի Շիրազ՝ Կոռնիկ կ'ասեն »: Այսպէս Ամիրտ. ի Պէյթար շեմ հանդիպած:

2939. Տարկավան ?

Որչափ ստուգութիւն ունի բառս և հայերէն ըլլա՞ն, աներկբայ չէ. Յովակիմ Օղուլուխեան բժիշկն իր գրուածոց մէջ զուգած է է. Tanacetum, Փ. Tanaisie բուսոյ, զոր յիշած եմք Աղարիոն անուամբ:

2940. Տարղոն. Տարխոն. Տարղուն.

Ար. Թ. Թարխոն, طرخون. « ինքն երկու ազգ է, մէկն վայրի և մէկն » պաղչայի. լաւն այն է որ թաժոյ լինի, տաք և չոր է. զքաշողութեան » ուժն ունի և օգտէ ակապին և ամենայն պեղծ խոցերուն, և զստամոզն ու » ժովցընէ, և թէ ծամեն՝ զգէշ հոտն ի բերնէն տանի. և զիւր շարոճութիւնն » ասնի քացախն »: — է. Draconoulus, Փ. Estragon, Թ. Эстрагонъ. Նուիճի ցեղէն է, և յիշուած այն անուան տակ: Յունաստանի և Փ. Ասիոյ կողմերում շատ գտուի: — Վայրի Տարղոն այլ յիշուի և համարուի Ար. Ակրկարնայն, տես Թ. 44:

2941. Տարշաղուղ. Տարշկուկ.

Վայրի Եղերդնակն է. տես Եղրդակ:

Տարուն.

Թուի սխալ գրուած փոխանակ Տարունի. տես Տորոն:

Տարունան. — Տես Դարունան:

2942. Տարտար.

Հացի կամ Թեղի ծառին պտուղն է, և յիշուած է այս անուամբ:

2943. Տափափուղ.

Ազաթանգելոս որ յիշած է զՍրափուղ՝ յիշէ և զսա, և անունէն տայ գուշակել տափակ փշեղէն մի:

2944. Տաքղեղ.

Ռամկական կամ տնտեսական անուն Պղպեղի:

2945. Տաք-կոճ.

Գուցէ և այս Դարապղպեղն ըլլայ. նշանակած է բառհաւաք մի:

Տեղտ. — Տես Տոզոտ:

2946. Տերեւատ.

Լ. Chamælea, Ohamæleon. Փ. Chaméleo. Ար. چومچله, « Մազարիոն, որ »
 « Թ. Դուրտփայ? ասէ և Հ. Տերեւատ. և ինքն Եթողներուն է, և տերեւն նը- »
 « ման է Զայթունի տերեւին... և ինքն երկու ցեղ կու լինի, մէկն մեծ և մէկն »
 « փոքր. լւան այն է որ տերեւն մեծ լինի... սպանող է, ճիշտ տայ և լուանայ... »
 « Ատէ Պտ. Թէ ինքն Խամաղանն է, և ինքն երկու ցեղ է, մէկ ցեղն Աշխան »
 « է, և ինքն Սպիտակ Մազարիոնն է. և մէկ ցեղն այլ այն է՝ որ գրոցս շինողն »
 « ասացեալ է Թէ Շիրազ Սասրոս կ'ասեն և Պ. Հաֆթարկա. և իր տերեւն փոքր »
 « է. և մէկայլ ցեղն քան զՄրտենու տերեւն մեծ է և Թանձր է, և գոյնն ի »
 « դեղնութիւն կու զարնէ. և լւան այս դեղինն է, և ուժն ի Շիպրիմին ուժն »
 « կու նմանի. և բնութիւնն տաք և չոր է ի Դ տրճ, և իր առնելուն չափն երկու »
 « դանկ է. և Թպտրաս և ապա ի գործ արկանես. և Թպտիրն այս է, որ հանց »
 « ի քացախն Թրջես՝ որ սրութիւնն երթայ... Եւ այն որ Սեւ Մազարիոնն է՝ »
 « չէ աղէկ, իր երկու տրճն. սպանող է »... — Խամաղան ըսածն ինչպէս և Լ. »
 « անունն՝ Յ. Χαμαλέων (Պետնառիժ) բառն է, որ նշանակէ գետնամած կամ »
 « ցած բոյս մի, միանգամայն և խայթող. Սեւ և ճերմակ տեսակներն այլ զանա- »
 « զանած էին հինք. ետքինս վերայիշեալ Ար. Իյիսիչ կոչուածն է, և Լ. Atractylis »
 « gummifera. առաջինն (Սեւն) կոչուի Ար. Պէչքերան տառաւ, Լ. Cardopatium »
 « orientale. — Հին Բժշկարանն յիշէ « Հապ Մազարիոնի, որ է Տերեւատն. բայց »
 « այնոր տերեւին ծայրն սուր լինի զեղ Չիթենայ, չինի բոլոր. օգտէ այն ցտ- »
 « ւուն՝ որ լուր լինի ժողվել ի փորն »: — Ուրիշ տեղ գրուած է, « Թ. Չօփ- »
 « յեւկ կ'ասէ: երկու Թուռլի է. մէկին տերեւն բոլոր է և մէկին սուր գէտ Չի- »
 « Թենայ, լւան այն է »:

2947. Տերեփուկ. Թերեփուկ.

Թ. Κενταύριος, յորմէ Լ. Centaurea, Փ. Centaurée, Ռ. Бѣлолиственникъ. Ար. Գաներուրիոն *قندلس*. Ըստ Ամիրտ. Ղանդարիոն, յանուն Քիրոնի ձիա-
մարդ բժշկի. Ի հնուց Ի վեր զանազանուած՝ և Երկու ազգ է, ծաղիկ է, մէկն
» Հաստ և մէկն Բարակ, աղէկն բարակն է »: Հաստը՝ մեծ կոշուի, Grande Cen-
taurée Ար. Ղանդ. ֆեպիր, ինչպէս գրէ և Ամիրտ. « Մեծ այլ կ'ասեն և ֆա-
» պիր այլ կ'ասեն, և նման է տերեւն Ընկուզի տերեւին, և խիստ կանանչ
» կու լինի, և զերդ սոց ալուանի ունի յեզերն. և որձան Ի Գառնալեզու կու
» նմանի, և երկայնութիւնն երկու թիզ է, երեք չորս այլ կու լինի. և ոմանք
» ասեն թէ երկու կանգուն և երեք կանգուն կու լինի. և գագաթն Ի Թաշխաշ
» կու նմանի, և այլ յերկանկուկ կու լինի. և ծաղիկն Ի ծարուր գուն կու նը-
» մանի. և միրգն Ի յԱփրի հունտ կու նմանի, և Ի ծաղիկն մէջն կու լինի, և
» տակն հաստ և ամուր կու լինի, և զհեութիւնն ի լի կու լինի. . . Ատէ Պտ.
» Թէ Հո. այս խոտիս Մոռնադոն կ'ասէ, որ է մեծ Ղանդարիոնն, և իր միրգն
» նման է Հասաբտանայի, որ է Ափրին հունտն, և ծաղիկն և վարդն Ի բուրդ
» կու նմանի, և իր քամուքն որպէս արիւն կու նմանի »: — Մոռնադոն՝ ըսածն
Թ. Մեզա, Մեդալի՝ մեծ նշանակողն է, ինչպէս Գալիենու բառից կարգին այլ
գրուած կայ, Հ. « Թերեփուկ, կենտարիոն մեզա ». ուրիշ օրինակ մի յաւելու
նոր անուն մ'այլ. « Կենտարիոն, Տերեփուկ Մեծ, կամ Շանդակիկ »: Հ. կոչուած
է եւս Դաշո: — Փղըն, Centaurée Petite, Ռ. Золотомы сячникъ « Ղանդա-
» րիոն Բարակ, որ Ար. Ղանդարիոն Տիդադ? ասէ (Սադիր *چنداد*), և ծաղիկն
» կարմիր է, և տերեւն նման է (Սազապի տերեւին).. տաք է և չոր է և նուրբ
» այնող է. օգտէ Ղղացաուութեան, և զգլուխն Ի յօլէն կու յստակէ, և օգտէ
» բերնին խոցերուն և աչից ճարապին և ուռեցին, և արիւն թքնելուն. . . Ատէ Պտ. Թէ
» Հո. այս խոտիս Տաշխաուս կ'ասէ, որ Թարգմանի Բարակ Ղանդարիոն. և ու-
» մանք այս խոտիս Մադրոն կ'ասեն (Թուի Μιχαρόν, փղըր), և ոմանք Մաշպա-
» սիոն կ'ասեն. և իր որձան բարակ լինի, և յերկայնութիւնն մէկ թիզ լինի.
» և ծաղիկն հալող է, և տերեւն նման է Մոշխորամշեհին տերեւին. և տակն
» փղըր լինի. իսկի օգուտ չունի. և համն խիստ լեղի լինի. և օգտութիւնն Ի
» տերեւն, յորձան և Ի ծաղիկն է », եւ այլն:

Տերեփուկը՝ Բոգից ցեղէն են և շատ նման կազմուածով հասարակ խոտեղի-
նաց կարգէն, մանաւանդ Փղըրն, որ խմբովին մանրիկ վարդադոյն ծաղկներ բերէ
Ի գագաթն. պտուղն երկբաժին պատիճ մ'է. որոյ եզերքի վրայ են հունտերն: —
Որչափ այլ շնչին խոտեր ըլլան հասարակօրէն Տերեփուկք անուանեալքն, բու-
սարանք շատ ազգեր և տեսակներ զանազանած են, որոց մէկն այլ Հայկական
կոչած, C. Armena, տեսնուած Ի Բաբերդ, յԵղնկա, Ի Պոնտոս. — Տ. Չքնաղ
C. Pulchella, Ի Կարին, Բաբերդ. — C. Margaritacea Ի Վրաստան. — C.
Pergamacea. Եփրատայ եզերքում Մ. և Փ. Հայոց միջոց. — Տ. Գեղեցիկ, C.
Bella Ի Քութայիս, Պորճում. — C. Simplicicaulis Ի Թ-Հ. — C. Amœna
(Չուարճայի) Ի Կեսարիա. — C. Serotina Ի Տրապիզոն. — Macrocephala Ի ՍօՖ-
իէթ, Վրաստան. — C. Pyrrhoblephara Ի Թորթում, Մանաս. — C. Kardu-
chorum Ի Բուժկի - խան Մոկաց. — C. Depressa Ի Կարին, Բաբերդ, Ռ-Հ.

— C. Axillaris achroleuca ի վրահայտ, Գարապաղ, Թեքտաղ. — C. Lanigera ի Մենուր և յԱբիւծ լ. — C. Ovina ի Գեղարունի. — C. Virgata յԱմիրդ, Սեւերակ, Այնթապ, Կարին, Բարերդ. — C. Aggregata, ի Պինկէօլ լ. Լիվանէ. — Scabiosa, յԵղնկա. Մուշ. — C. Carduiformis, ի Կարին, Բարերդ, Կեսարիա. — C. Cyrtolepis, ի Ռուս Հ. — C. Urvillei ի Ծանախ, Պրիտ լ. — C. Cardunoulus ի սահման Մէրտինի. — C. Solerolepis ի Մարաշ. Սեւերակ. — C. Kurdica, ի Մուշ, Պոզլան. — C. Fenzlii, Կիւմկիւմ, Պինկէօլ լ. — C. Goluensis ի Ճելու լ. — C. Rhizocalathium ի Բերդազրակ. — C. Sessilis ի Գեղարունի, Բարերդ, Պոնտոս. — C. Ustulata ի վան, Որմիա, — C. Balsamita ի Ռուս և Թ-Հ. Գարէժ. — C. Babylonica ի Մարաշ, Կիլիկիա. — C. Bohem ի Մարաշ, Ռ-Հ. — C. Polyrodifolia յԱմիրդ, Մէկմանսուր, Մէրտին. — C. Szovitsiana ի Նախնաւան. — C. Iberica ի վրահայտ. եւ այլն. Թողով դեռ շատ տեսակներ այլ որ յիշուած են ի մտ սահմանս, ի Փ. Ասիա, Կիլիկիա և յԱսորիս: — Ինչ յարմարութեամբ, չհրտեմ, ոմանք կ'ըսէ Գալանթաբեան՝ Հարիտրակոպիկ? Կոչեն զCentaurea. Լ. Centum 100 նշանակէ:

2948. ՏԵԼ.

Տերեւով Կաղնի? կ'ըսուի ի կողմանս Սերաստիոյ (Պատկ. Գ., 278). ի Կարմիրք այլ ծանօթ է:

2949. Տղկանեփատ. Տիզկանեփատ. Տիզկանեփայտ.

Անուանի Հ. և Ջրոս և Սրոյ հռնոյ. Լ. Boinas. Փ. Bicin, Ռ. Клеццевина, Ար. Սարգա, ինչպէս գրեն մեր Բժշկարանք, խիրոսա ըստ այլոց, عرچان. « Ասէ » Պտ. Թէ այսոր Պ. Պատանձիր կ'ասեն. լան այն է որ ի ծովեզեր տեղուանք » բուսնի »: Բնական տեղն Հնդկաստան կարծուի ուր (Մրանդա կոչուի) և Թուֆ ձեւանայ՝ մեծամեծ տերեւներով, յԵւրոպայ՝ բարձր և կանգուն խոտեղէն է, որ կուգաձեւ ծաղկներով, որք բերեն իր հոշակուած հատերը, դեղագործութեան մէջ շատ կարեւոր՝ լուծողական եղին համար: Այս հատերն են որ Սրոյ հռնոյ կոչուին ի Բառս Գալիենոսի՝ կտրոն բառի զուգանիչ, որ է Κρότων. Եղին համար գրէ Ամիրտ. Թէ « օգտէ զխացաւութեան. և իր ձէթն՝ զմանն յերեսացն տանի »:

2950. Տզրկախոտ. Տզրուկ խոտ.

Յ. Լ. Anagallis, Փ. Mouron. Ռ. Куросльпникъ. — Բժշկարան մի՝ « Տզրուկն » խոտ որ է Չանապ չըխայնն », կ'ըսէ. բայց յիշած Ար. անունն Զիու ազին է՝ և Մկնականջի հետ զուգէ: Ամիրտ. առանց Հ. անուան՝ Յ. անուամբն գրէ հետեւելով Պէյթարայ. բայց վկայէ, Թէ « Թ. Սոչուկ օրի սսէ, և ամանի » (երկնադոյն) և կարմիր այլ կու լինի. և լան նորն է.. քաչող է.. Թէ իրով » եփես և խաղալ առնես՝ զտզրուկն ի խոշակէն հանէ որ կպել լինի. և այս » դեղօ զարմանալի խասաթ ունի. մէկ ցեղն կարմիր է.. և մէկալն որ ծաղիկն » ամանի է, և հանց ամանի որ ի սպիտակութիւն կու քրտէ.. և Թէ օծես » Կոստերուն և ուռեցնուն՝ հալէ, և զկերուած խոցն յիստըկէ. և ի գործ արկա. » նեն ի խաղալ առնելն՝ քիկ (պիտի), և հազին զին աւնէ... իպն. սսէ,

» Թէ ինքն երկու ցեղ կու լինի, մէկին ծաղիկն սպիտակ կու լինի, այնոր էջ
 » ասնն, և մէկին կարմիր, այնոր Որձ կ'ասնն. և երկուքն այլ ծառեր են որ ի
 » գետինն կու ճապղին՝ եր բուսնին, և մանրկեկ և բոլոր տերեւնի ունին.
 » և միրգն այլ բոլոր կու լինի, և թէ շորցընեն զմիրգն և ցանեն ի վերայ խո-
 » ցերուն, օգտէ.. և թէ զայս խոտս ծեծես և իշու խիարով սպեղանի առնես
 » և կապես պօղազովն, զտզրուկն հանէ և ձգէ: Ասել են, թէ ի քիթն կաթե-
 » ցընես՝ շատ օգտէ.. և թէ զէգն ի ապիկի աման դնես և այրես և զմոխիրն
 » բարկ քաջախով խառնես և կաթեցընես ի քիթն, զտզրուկն ձգէ.. Եւ զայս
 » խոտս ի ձիուն աչքն կու դնեն, զհիւանդութիւնն կու տանի, և կու փարատի ձին



Տգկանեփատ.

Տզրկատա.

» ի ցառուն »: — Գարնանային ըսուած ծաղկանց ցեղէն է Տզրկատան, տես-
 յեամբ և չափով չնչին խոտ մի, բայց իր յատկութեանց համար՝ առաջին քննող
 Յոյնք՝ զուարթացուցիչ կամ ծիծաղեցուցիչ անուաներ էին իրենց բառովը, իսկ
 արեւելեայք անոր կարեւոր յատկութեամբ կոչեն, որ է տզրուկը հանելու կպած
 տեղէն:

2951. Տէրաղօթիկ.

Համեղ բոյս մի է, կ'ըսէ նոր գրող մի. եթէ ոչ նոյն՝ նման պիտի ըլլայ և

2952. Տէր-ողորմիկ.

Յիշուած ի կողմանս Գեղաքունոյ (Տէր. Աւետ. 48):

2953. Տիկնակիւ. — Տես էիս:

2954. Տիպիւ. Տիպիւ. Տապիւ.

Ար. بقبو. Խէժ է, Լ. Visous, (զոր մէկ Բժշկարան մի Տիպադոս գրած է).
 Փ. Gai. բայց յատուկ ծառի վրայ գտուի և ծառին այլ վրան գոյացած պտղի տեսակ մասէ մի, որ նոյն անուամբ կոչուի, և ըստ Ամիրտ. և Թ. Օգուտ կու
 » ասէ. և ինքն միրգ-մն է որ ի Սիսեռ կու նմանի (1) ։ և ինքն ցեղ-մն է. և
 » լաւն այն է որ նոր և թաժայ լինի և դուր լինի. տաք է և շոր է, հալող է և
 » կակզացընող է. օգտէ այն նասուրին որ ի յըզեղն լինի, և ակնջին ցաւուն..
 » և ինքն չի ուտվիլ, տիմէտ կու լինի, և թէ ուտվի՝ քիչ, բայց սրտին զեն կու
 » առնէ։. . . Իպտ. ասէ, թէ լաւն այն է որ նոր լինի և գուրօի դեհն կարմիր և
 » մէջն Քուռաթին գունոջն լինի, և թէ դեղին գառիկով կամ կարմիր գառիկով
 » խառնես, եարամազ՝ որ է պեղծ՝ եղունկն օծես, հանէ և նոր բուսընէ. փորձի
 » է » . — Նոյն Ամիրտ. ի կարգի բառից գրէ. « Տիպիւ, որ է Պանթրուսայի միրգն » .
 տես զայս Ճնդոմ անուամբ. — Պէթար կ'ըսէ թէ այս կիւ(ձութ)բերող միրգս
 գտուի Տոսաթի նման կաղնի ծառի վրայ, նա եւ Խնձորենայ և Տանձնեայ :

2955. * Տիվտար.

« Սանսպարի Հիեդին է », ըստ Ամիրտ. այսինքն Ննդկաստանի Եօնին, զոր
 Եւրոպացիք այլ այսպէս կոչեն, Deodara, որ հնդկերէն նշանակէ ասուածային
 կամ ասուածոց ծառ :

2956. Տիւան ?

Վարի Քուռաթն է, ըստ Անգիտաց անպէտի. որ և ուրիշ տեղ գրէ՝ « Ախի-
 » թիտայ, որ է Տիտանն » : Միթէ Յ. Ἰχθυόσ, որ տեսակ մի փուշ է. Թէ Ἀ-
 χυρόσ, որ նշանակէ յարդի կոյտ :

2957. Տից.

Հին ազգային վիպասանական բառ մի յիշուած ի Խորենացւոյ (Ա. Լ.) Տից խա-
 արծի, ընդ Արտախայր խաւարտի (տես Թ. 238), որոյ վրայ բանասէրք և Թարգ-
 մանիչք շատ մտածած և մեկնած են, բայց դեռ մեզի անտողջ է, գուցէ թէ բոյս
 այլ չըլլայ :

2958. Տլլակ.

Ռամկօրէն նշանակէ ողկոյղ Խաղողոյ :

2959. Տլվորուկ.

Այս թէ ոչ վիպասանական՝ այլ ազգային ռամկական բառ մ'է, որոյ զուգա-
 նիշ գրէ Ամիրտ, զՄրվոր, բայց երկուքն այլ մեզ անծանօթ, եթէ ետքինս չէ
 Թ. Միտրվեր, որ է Թանթրուենին : Մեր մօտ ազգային և տեղական անուն այլ
 Լսուի Տչուորիկ :

1. Ուրիշ Բժշկարան (Սուրկ Բժէի) Սիսեռն է կ'ըսէ, Սդերու (ու) Սի-

2960. Տլփա.

Հին Բժշկարանն յիշէ սունկ ուռէցքի դեղ՝ ուրիշ նիւթոց հետ՝ և Տրիայի տակ, որոյ անունն Գիֆլայի նման յիշեցինք (Թ. 891). սակայն նա ծառ է, սա խոտեղէն գուշակուի տակ մասամբն, և թերեւս ըլլայ Յ. Լ. Telephium, Թան. Թընիկն:

2961. Տխիլ. Տխիլ.

Կաղին նշանակէ ուսկորէն. Բժշկարան մի յիշէ « Տխիլ ձէթն՝ Արքայկաղնի » ձէթն է ու Տէս Կաղին և Արքայկաղնի:

2962. Տխկի.

Դ և Թ տառերով այլ գրուած և լսուի, ինչպէս յիշած ենք Թղկի անուամբ. Թ. 794. Այս տեղ յիշեմք քանի մի տեսակներն որ ճանչցուած և նշանակուած են ի Հայս. Acer Tartaricum ի Մուշ և ի Հր. Կովկաս. — A. Pseudoplatanus ի Բասեն. — A. Lætum ի Թ-Հ. ի Տրապիզոն. — A. Opulifolium ի Գարապաղ. — A. Ibericum ի Գանձակ:

2963. Տխտիկուռ.

Գաղտիկուրն է, որ է Չղախոտ. տես զայս:

2964. Տկափուշ.

Նշանակուած ի հաւաքողէ, առանց բացատրութեան. անունէն կրնայ գուշակուիլ արտաքին երեւոյթն:

2965. Տկողին.

Այս այլ Տխլիի պէս Արքայկաղին նշանակէ ի կողմանս Արցախոյ:

2966. Տղաբերուկ.

Ուտելի բոյս մի աղցան կամ Թթուիկ ըրած. հաւանորէն նոյն է և

2967. Տղայ ձգող.

Ավետանայ բառին զուգած գրէ Ամիրտ. հայերէն անունն այլ Թարգմանելով ի Թուրքարէնէ, զոր առանց յիշելու՝ կ'ըսէ. « Որ Թ. Տղայ ձգող ասեն, և տեսնին յերկայնութիւն չորս մաստ և լայնքն մէկ մաստ կու լինի, և ի գետինն » ի կու ճապղի և կու փուփի, եր բուսնի ծաղիկ չունի. և տակն կարմիր կու լինի. » ի չոր տեղեր կու բուսնի, և թէ ի տերեւէն զինով խմես՝ ի փորուն տղան » ձգէ, և յայն պահն սպանէ և հանէ »: — Անունն տայ կարծել որ ըլլայ Լ. Eunomia կոչուածն, որ ազգակից է Aethionema կոչուածին, և երկուքն այլ խոտեղէն են ի ցեղէ Խաչաձեւից, բարակուկ ճղերով, և երկու թերատաձեւ պլտ. զով: Ետքի ազգն Յ. բառերով բարգած կրնայ Թարգմանուիլ Տարաթելիկ, զի

օտարակերպ թել ունող ծաղիկ նշանակէ, և այլ եւ այլ տեսակքն ճանչցուած են ի Հայս. Ինչպէս, **Æt. Trinervium** (եռաջիղ) ի Կարին. **Գարապաղ.** — **Æ. Pulchellum**, (Չքնաղ) ի Թ-Հ. — **Æt. Cespitosum** ի Լիրնակողմանս. — **Æ. Diastrophis** ի Ռ-Հ. — **Æ. Speciosum** ի Կարին, **Ծանախ.** — **Æ. Limbriatum** և **Szowitzii** յԱրարատական. — **A. Cardiaphyllum**, ի Թորթում. — **A. Salamasium** ի Սալամաստ. — **Æ. Ibericum** ի Ծանախ. — **Æ. Cristatum** և **Buxbaumii** ի Ռ-Հ. և յատուկ տեսակ մի Հայկական, **Æ. Armenum.** ի Թ. և Ռ-Հ.

2968. Տղտնկուլ.

Տուղտն է, « Թ. Խաթէմ, որ Հայք Տղտնկուլ ասեն », ըստ Կամարկապոյն, Թ. Կիւր հարեմ: Թուի թէ Հայք Կիւլ (Վարդ) բառը Տուղտնէն ետեւ յորեր են, որպէս թէ Տղտավարդ կամ Վարդատուղտ: — Այսոր նման կոչեն և

2969. Տղտորիկ.

Ծանաւանդ դեղին Տուղտը, որ հաւանօրէն է Ար. և Լ. **Abutilon**, **سیدبدر** կոչուածն կամ **Sida Abutilon**, որ Տուղտի նման մեծ Մուշ մի է, կամ ընդ մէջ Մուշի և Տուղտի ազգ մի:

2970. Տմնտաշ.

Այսպէս կոչեն Պոնտացիք **Թ. Լ. Lysimachia** լսուած բոյսը, յանուն Լիւսիմաքոսի յոյն բժշկի, զոր Պէլթ. և Ամիրտ. Լուսիմաճուս կոչեն, իսկ « Թ. Այ- » բուն-դամիչ ասէ, որ Թարգմանի Ոսկի եղէգ. և ծաղիկն նման է սկուռն գունին, » և տերեւն նման է Ուռուռն տերեւին, և ի Զրեզերնին կու բուսնի, և ամէն » տերեւ մէկ պողումէն ելանէ: Եւ թէ սպեղանի առնեն և դնեն ի վերայ խոցին, » բուսցընէ, և զթթին արիւնն կու կարէ, և ուսկից որ արիւն ելնէ՝ կտրէ: — Չանազան տեսակներ ճանչցուած են ի Պոնտոս, ինչպէս **L. Dubia**, որ և ի Մի- չագետս. — **L. Vulgaris** (Հասարակ) որ և ի Մուշ և ի Կովկաս. — **L. Verticillata** (օղակաձեւ) և Կիտանիչ **L. Punotata**, ի Կովկաս, Պոնտոս. — **L. Atropurpurea** (Շիկակարմիր) ի Կիլիկիա:

2971. Տմների կամ Տնզըրի.

Այսպէս անուանէ զՍօսին Բառգիրք մի. նոյնպէս լսուի և յարեւելեան Հայս:

2972. Տուլ. Տուլի.

Տեսակ Դղըմոյ երկայնաձիգ ճղերով. Թ. Մոս գապաղը. — Վաստակոց գիրքն խրատէ (ճճԴ), « Թէ տաքութիւն դիպի պախրէին.. Տուլոյ տերեւ տուր արածել »: Ուրիշ տեղ այլ (ՄԻԸ), « Յաղագս ածու շինելոյ.. շուրջսնակի պատել արժան է » Կիպարիք կամ Բարտիք տնկել, և ի վերայ պատին Տուլիք ազգի ազգի տա- » րածանել »: Վերջի վկայութիւնն տայ գուշակել թէ ոչ միայն Դղմենին՝ այլ եւ ուրիշ նման երկայն և ճապուկ տարածուող ճիւղով բոյսք այնպէս կոչուին, ինչ-

պէս Որթն, որոյ վկայէ Բարսեղ վ. մեկնիչն Մարկոսի աւետարանին (յառաջին կէս ծր դարու), « Զտեսանեն զԹգենիդ և զՏոյլիդ. ի կորեկանէ Թզոյ և ի կտոյ » միոյ Խաղողոյ՝ եղեն այնպէս »:

Տողուն. — Տես Տոդոս:

2973. Տումալ.

Անպիտան խոտ մի, ըստ կամարկապ. որ և Թ. գրէ Տէվէ չեօքիտոսէն (Ուղտը գնեցընող). Տես և Տորոնխոտ:

2974. * Տումալան. Տումպոլան. — Տես Բողորոճ:

2975. Տոպ.

Հարսնուկ և կամ Երիցուկ ծաղիկն է. լուռի յԱրեւելեան Հայս:

2976. Տոռուպ.

Ափիոնն է ըստ հին Բառգրոց. տես և Խաղպապ:

2977. Տոտոր. Տոտուր.

Երկայնաձեւ Սալորի տեսակ մի, ըստ Խոտուղրեցոց: Առջի կերպով յիշուի ի Բժշկարանի, « դեղ աչաց՝ որ Տուտոր ասեն. օգտէ աչից որ քորի և կծայ և » Երբերէ և գէտ խաշած լինի. սն Չաֆրան, Դարիֆլիֆուլ » եւ այլն. բայց այս՝ գեղի կամ աչքի հիւանդութեանն անուն երեւի և ոչ բուսոյն:

2978. Տոտրիճ. — Տեսակ է Խեճորի:

2979. * Տորախ.

Պարսկերէն նշանակէ Ռզիան. տես զայս, այլ և Առուոյտ:

2980. Տորնուկ.

Իբր վայրի Տորոն, մանր դեղին ծաղկներով. — Լ. *Asperula tinctoria*, Փ. *Petite Garance*. Ծանօթ է ի Տարօն:

2981. Տորոն կամ Տորոն. Տորուն.

Որ և Տոնիր կոչուի. — Ծանօթ ներկոյ բոյս. Լ. *Rubia*, Փ. *Garance*, Ռ. *Марена*. Պ. Ռունաս, Թ. Բեօք կամ Գզըլ սոյս, Ա. ր. Ֆրոսիս. Ֆճ. « լան » այն է որ բարակ լինի », կ'ըսէ Ամիրտ. առանց ուրիշ բացատրութեան, բայց ըստ տեսակ բժշկական օգուտները նշանակէ: Դիմացկուն խոտեղէն մ'է Տորոնն, անկոթ սրաձեւ և եզերքն սղոցաձեւ. տերեւներով, մանր փունջ ծաղկներով. իր պատուական մասն է արմատին կեղեւն. զոր չորցընեն և անկէ հանեն կարմիր

հիւժը չրով, որով ներկեն արեղէն և կերպասեղէն: Բնիկ է Հնդկաստանի և արեւելեան աչք երկիրներու, բայց մշակուի և բարեխառն կլիմայից տակ. հաւասարակ տեսակն *B. Tinctorum* գտուի և ի Մուշ, Մարաշ, Ամասիէ, Կովկաս: — Ի Հայս ծանօթագոյն ըլլալով ի Տարօն, արդեօք տեղւոյս անունն՝ բուսոյ Տորոն անուան հետ՝ ձայնէն զատ յարընչութիւն ունի: — Ներկին գործածութեան վկայ է առականոս խիկարն եւս. « Որպէս այծն, կ'ըսէ, որ ուտէ զՏորունն, » և առէ. Ես ի կենդանութեանս ուտեմ զքեզ, թող յետոյ հանեն զտակք քօ՝ » և ներկեն զմորթիս իմ՝ »:

2983. Տորոն խոտ.

Թէ և անունն նոյն է ընդ վերնոյն, և մերձաւոր՝ այլ տարբեր ազգով բոյս մի. *L. Gentiana Asclepiadea*. ճանչցուած է ի Պոնտոս և Տրապիզոնի մտակ լեռանց վրայ: — *Gentiana* բոյսն Բող անուամբ յիշած եմք, *Asclepias* այլ յատուկ բոյս մի է, որոյ տեսակ մի է Պէլթարայ Ար. Աշար կամ Օշար քաւ, ըսածը, զոր Ամիրտ. գրէ « Թաշ որ է Թոշ. ծառ-մն է, տափակ տե- »
 « բունի ունի, և ի ծաղկին ի մէջն և տակն շաքար »
 « կու նմանի. և ծաղկին յայնժամ և յայն ատենն »
 « կու ելանէ՝ որ ուղտն կու փրփրի և ի պար կու »
 « նմանեցընեն? (Թուի պատկեցընեն). և ի յաւդին »
 « ի մէջն կու բուսնի. և թէ զտերեւն կտորեն՝ »
 « կաթն կու թափի, և լուծումն կու առնէ և զա- »
 « ղիքն կու վատուծցընէ. և թէ հերքունին օծեն՝ »
 « օգտէ: Առէ Պտ. թէ ծառ է Արապի և Եամա- »
 « նի, և ինչն Եթողներուն է, և իր պտղին Խարիճ »
 « ասեն. և ծաղկին նման է Տֆրայիս ծաղկին: »
 « Եւ ցեղ մի այլ կու լինի, թէ ի շուքն պառկին՝ »
 « զմարդն կու սպանանէ »: — Պէլթար ոչ ծաղ-
 կին ուղտի փրփրալուն ատեն կ'ըսէ, որ անպար-
 մար է. այլ պտուղը նմանցընէ ուղտի բերնէն ելած մսին՝ երբ սա փրփրի ու կռնչէ: Եւ եթէ Ամիրտու-
 վաթի վերոյգրեալ տարակուսականն՝ պառկեցընել է ստոյգ, ապա բոյսն կ'ըլլայ կամարկապցոյն յի-
 շած Տումաշ: — Ասանցմէ տարբեր խոտեր այլ կան Տորոն կոչուած ի Հայոց, մէկն Չիթենուոյ տերեւի ձեւով, աւելի նեղ, կարծրկեկ, նոյնպէս և հիւղն կամ որձայն. միւս մի երկայն թուռ կարմիր, որձային վրայ մէկ մէկէ հեռու բարակ թելանման փունջեր ունի իրեւ ծաղիկ և տերեւ:



Տորոն.

2983. Տուալայ ?

Բժշկարան մի՝ տեսակ մի օշարակ շինելու այլ և այլ բուսեղինաց հետ յիշէ զայս:

2984. Տուաղլուք ?

Ուրիշ Բժշկարան մի՝ պաղ չորէ վնասուողի դեղ գրէ. « Խմէ զՏուաղլուքն զի- »
 « նով կամ Արամասիա ու կամ Մարսիտոս ? » Գուցէ և չէ բոյս:

2985. * Տուխ. Տուխն.

Ար. տեսակ մի կորեկի. « Գիացիր կ'ըսէ Բժշկր. մի, որ կորեակն երեք ցեղ » է. մէկին ասեն Տոխն, և երկրորդին կապարս (Գաւարս), և երրորդին կօ. » ընկն Արզան? »: Տես կորեակ:

2986. Տուղու. Տողուն. Տուկօլ.

« Լեւան Ստեպղինն է, որ է Եաղաղուն », գրէ Բժշկարան մի. բայց այլք Եակակօլը համարին Սնդրին: — Անգիտաց անպէտն կ'ըսէ. « Վայրի Ստեպղինին հունտն. լաւն այն է որ ի յաժուենիքն լինի.. երող է և նուրբ այնող » է:.. Ատէ Պատ. Թէ ինքն Վայրի Ստեպղինին հունտն է, և իր տակն Եակակուն է. և իր խոտին Խարսքիս կ'ասեն, և Աֆիս այլ կ'ասեն. և զայս խոտս՝ » արջն խիստ կու սիրէ: Եւ ասացեալ է, Թէ Տուղուն վայրի Քարաւախն հունտն » է. և չէ ստոյգ. և Ղո. Տուղաս ստէ, և ի Եիրազ՝ Պատրան կ'ասեն. և լաւն » այն է որ Թատայ և դեղին լինի »: — Ըստ Թարգմանչին Պէյթարայ՝ Տուղուն է Լ. Caucasus Գիոսկորիտեայ: — Ուրիշ բոյս մ'այլ նշանակէ Ամիրտ. այն ա. նուամբ,

2987. Տուղու կամ Տուղաս.

Որ ըստ Պէյթ. այլ Թ. և Լ. Ստեպղինի անուամբ Daucus կոչուի ԿաճճՕ Ամիրտ. բառից ցանկի մէջ Տուղասը Պատնիճանի զուգէ: — (Ետքի բառիս տա. առդարձութեամբ Երոպացիք Tolasi գրեն Հնդկաց սրբազան և սաստկահոտ Ռեհանը), բայց տարբեր ազգ է. ըստ Ամիրտ. « Է Հաշիչար ոչ-Պարագիոն, որ » Թ. Պարս սրի ստէ, Հայկի խոտ (Թ. 1602): Ինքն խոտ է, տերեւն Ըղզիանի » տերեւ կու նմանի, և գազաթն ի Գինձ կու նմանի, և ծաղիկն սպիտակ է, և » միրգն այլ սպիտակ է. և ի վերայ մազկներու պէս կայ, և գետնէն ի վեր մէկ » Թիզ կու ելնէ. և մէկ ազգն որպէս Քարաւս լինի, և ցեղ մի այլ կու լինի » որ.. գազաթն ի Սամիթ կու նմանի.. և Թէ ի քնոյ ժամն ի մահիճն ցաննն » զհունտն, զլուն սպանանէ, բայց Հոռօմ ձիթով անըռէ և ապա ցանէ »:

Գարձեալ, ուրիշ անուամբ գրէ Ամիրտ. Ղուշարիոն կամ Ղուղալիոն՝ և ոմանք, « սորա Ղուղվայ? կ'ասեն. այս խոտ-մն է որ երկայնութիւնն մէկ Թիզ կու լինի, » և ի վերայ բրգոտ կու լինի, որ է՝ զաղապ կ'ունենայ. և տերեւն նման է Ռի. » զանի տերեւին, և ծառերն ծուռ ծուռ զեղ եղջիւր կու նմանի. սպիտակ և » անուշահոտ կու լինի »:.. Պէյթարայ Թարգմանն և այլք՝ այս Տուղաս — Տուկօլս խոտը ճանշան Լ. Athamanta Peucedanum, Կրեաէ կղզոյ Աթամաս լեռան անուամբ. Հովանեկաձեւ ծաղկանց ցեղէն է, և Ամիրտովաթայ ըսածին նման՝ աղուամազոտ և սպիտակ. գտուի յԵրոպա և յԱրեւմտ. Ասիա: — Ա. նուան մերձաւորութիւնն յիշեցընել տայ մեզ Արամանտիկ բոյսն՝ ըստ Պինեայ (Իր. 28) Adamantida, որ գտուէր ի Հայս և ի Կապոդօվիա. զոր Թէ միայն ցուցընէին առիւծու, բերանաբաց կ'ընկնար կանըկի վրայ. իսկ ազամանդի ա. նունը տրուած էր բուսոյն՝ կարծրութեանն համար:

2988. Տուղտ. Տեղտ.

Յ. Լ. բառով ըսուած է և Ողբիկ, եւս Շոքոնայոսկ. Մալոլից ցեղէն՝ բայց բարձր և կանգուն և մեծամեծ կարմիր, դեղին և սպիտակ, պարզ և բարդ ծաղկներով. թէ պարտիզաց զարգ և թէ դեղոց համար մշակուած. Լ. *Althea*, Փ. *Guimauve*, Ռ. *Большой Проскурняк*. Ար. *խարսի*, *خطم* թ. *مخاطك* Կիչ հարեմ: « Ինքն երկու ցեղ է, ըստ Ամիրտ. լաւն այն է որ Սպիտակ լինի. » յառաջին տրճ. մուհթատիլ է և գէճ. կակղացընոզ և զինացընոզ է. և իր » հունտն ի հազին դեղերուն է. Ասեր են թէ լաւն այն է որ կանանչ և վայրի » լինի և ծաղիկն սպիտակ լինի. և այն որ ածվոց լինի՝ Պրոստի Ռոսմանի ա. » սեն. և այն որ լերանն է՝ Պաշհամ թլ-մարճ, ասեն և ինքն ի Հայիմանի » (Մալոլի) ցեղերուն է: — Հայպոսպ անուամբ այլ գրէ Ամիրտ. « Այս խոտիս » թ. Ալճոտ օրի ասէ, և Սուրբան օրի այլ ասեն, և ոմանք Հայիմոյ ասեն. և » ինքն սպիտակ ծաղիկ ունի, և ինքն Սպիտակ Տուղտն է. և այս երկու ցեղ » կու լինի, մէկն օրճ և մէկն էգ, և միրգն կուզ կուզ կու լինի՝ այն որ էգն է. » և այն որ օրճն է՝ միրգն մանտր և բոլոր կու լինի: Դիոսկոր. այս բոյս ա. նուանած էր *Լինոզոստիս*, *Δωδζωστις*, հիմայ կոչուի *Mercurialis*. — Ըստ այսմ՝ Հալպուսպն Տուղտէն տարբեր ցեղէ է: Վաստակոց գիրքն Տուղտի և Ծներեկի տնկելու ատենը՝ միաժամանակ ի յունիսի դնէ. և տեղ մ՝ այլ հետք մի սովոր. » ցընէ գինի խարդախելու՝ Տուղտով. « Ի գինին արուեստով ջուր խառնես, որ բնաւ » չկարէ որ ճանաչել. աճ չոր Տղտի տակ և եռացս ի ջուրն և անձ ի գինին որ. » չափ կամիս. թէ ու կէս անձ, ոչ որ ճանաչէ: »

Տուղտն այլ եւ այլ տեսակաց մէջ ունի և զՀայկականն, *Al. Armeniaea*, ճանչցուած ի թ.Ղ. ի Մարաշ, Կետարիա, Վրաստան: — Իսկ Հալպուսպ կոչուածն՝ դիմացկուն և բրդոտ անասկ մի ունի *Merc. Perennis ovata*, ի Մանսխ:

2989. — Տուղտ.

Կոչուի ի Հայս և բոլորովին այլատեսակ խոտեղէն բոյս մի, որ իբր 00.3 Չ. ընդ երկայնն և ընդ լայն՝ Որթոյ նման վայելուչ տերեւիկներ ունի, որոց քովէն կ'ընծայուի հինգթերթեան սպիտակապոյտ ծաղիկ:

Տուղտնկուլ. — Տես Տղտնկուլ:

2990. Տոււտոոււ. — Տես Աղտոր, թ. 73.

Տոււպ.

Նայն թուի Տուպի հետ (թ. 2975), այսպէս գրած է Քաջբերունի:

2991. Տունկ.

Հասարակօրէն տնկելու կամ նա եւ որ և է բուսեղէն նշանակէ. բայց յառկապէս ըստ Բժշկարանի՝ « Խաղողի ծառն է: » Յիչէ նա և զԻսպոլի Տրեկի տակն:

2992. ՏՈՒՆ.

Եթէ Ուոի ծառին հետ շփոթուած չէ, զոր չեմ կարծեր, Բժշկարան մի՛ մանիայի (սեւամաղձութեան) դեղ գրէ, Մանուչակի, Վարդի և այլոց հետ՝ նա եւ Տոռի տերեւ, եփել և եղկ ջրով լեցընել գլխուն վրայ. — Մերձաւոր անուամբ յիշուի

2993. ՏՈՒՆԻ

Թուփ մի, որ յիշուած է յեղեգիս վիճակի Մոկաց:

2994. ՏՈՒՐՐԱ. — Տես Չոռասայ:

2995. ՏՈՂԻ.

Պտուղն այլ Տոռոզ. տեսակ մի հասարակ վայրի Սալոր է:

2996. ՏՈՆԵՂ.

Տեսակ մի սեւ Խաղողոյ, կլորակ և ջրոտ հատերով. լաւ և պայծառ գինի տայ:

2997. ՏՈՆԻՆ.

Փոխան Շատանիճի կամ Սատանէճի գրուած է Ամիրտուվաթայ գրոց մէջ:

2998. ՏՈՒՆԻՆ.

Բժշկարան մի դեղ զուգէ. « Ա՛ն գիտոս որ ասեն Տոռոյիճ, ու ի Լօշի տակէն » միաշաք, ու ընդ իրար ծեփէ », եւ այլն: Բայց ուրիշ Բժշկարան մի այնոր տեղ գրէ Անեյի տակ և Լօշտակ:

2999. ՏՐԱԽԱՍ.

Բժշկարան մի գրէ. « Շիրպին, որ է Ղարբանին ծառն. Հ. Տրախտ »: Ղաթրանի ծառն և Շիրպինն յիշած եմք Թեանի անուամբ:

3000. ՏՐԵՆԱ.

Անունն այլ զօրութիւնն այլ առասպելեալ կ'երեւի. Բժշկարանի մի մէջ գրուած է. « Խօտ մի կայ Տրբենա ասեն զանունն, ի դիւթաց և կախարդաց է. և թէ » երկիւղ լինի կախարդացն՝ հանեն զնա և առ ինքն պահեն, չկարէ ոք ինչ » առնել: Եւ խոտիս նշանն այս է. երկայն է և բարձր, ծաղիկն բոլոր, և քան » զամենայն ծաղիկս պատուական և կարմիր է. և յայն լերինն բուսանի՝ ուր » մարգագետին է. տերեւն սուր է որպէս զձեռն. սերմն նման է Նռան հատի. » և երբ հանես՝ ասա, թէ, Չքեզ վասն այս իրացս կու հանեմ, յանուն Հօր, » եւ այլն. և յորժամ հանես զնոյն գործէ »:

3001. Տրիկոն.

Նշանակած է բառհաւաք մի. միթէ՛ Trigonella, (Յ. Τριγωνος, եռանկիւն), որ է Հացհամեմն:

3002. Տրոզան.

Տեսակ բանջարեղենի, յիշուած յօրագիրս. (Մշակ, ԺԹ ? 41. — Մեղու, ԻԲ 83):

3003. Տփիկ.

Բառհաւաք մի նշանակած է իր բուսական ցանկին մէջ.

3004. Տօնի Բանջար.

Այսպէս կ'անուանեն ի Բասեն՝ Սպիտակ Բանջարը:

3005. Տօսախ.

Մանօթ մշտականաչ կարծրափայտ թուփ կամ ծառ ոչ մեծ . — Լ. Buxus, Փ. Buix, Ռ. Самшитъ. ըստ Յ. Սնչուս, ուսկից և Ար. ասէ՛ք. զոր Ամիրս. կարգայ « Պարաս, որ Թ. Շիւնէր աղաձի ասէ. որ Հ. Տօսախ փայտ ասէ, և Պ. » Տրախտ յիշատ ասէ, և Հռ. Ախսիս (Պուխսուս) ?.. և տերեւն նման է Մրտին » տերեւին, և հունտն նման է Մրտին. և թէ ի միրգէն ուտեն՝ զփորն կապէ, » և զամենայն զիջութիւն որ ի յաղիքն լինի՝ տանի. և թէ խարտեն և զխար- » տուքն ի հինան խառնեն և ի զլուխն դնեն, զմազն ամրացընէ և զցան տանի. » և զնպաղ մազն ժողովէ. և թէ հաւկթի սպիտակուց և Լաղլի փոշի խառնեն » և եախու առնեն, օգտէ Լղերուն ցաւուն շատ »: — Խորեն. Աշխարհագրու- թիւնն ի Գուզարս Հայոց նշանակէ զՏօսախ: — Ս. Կիւրեղ (Մեկն. Կենդ.) կ'ըսէ, թէ Ս. Գրոց երբայերէն բնագիրն և ասորի թարգմանութիւնն Տօսախէ կ'իմանան տապանին փայտը, իսկ ինքն Եղեւին համարի: Ստոյգ Տօսախն այլ յիշուած է ի Ս. Գիրս և ի մեր Ագաթանգեղոսն:

3006. * Բամաք. Բամեք. Բամեք. Ըռահմաք.

Պէտպէս գրուած. որոյ զուգանիչ գրէ մէկն՝ վայառք ծառ. Բժշկարանք առանց բացատրութեան՝ զեղոց հետ յիշեն. Ար. Բուսէք նշանակէ Բողբուճ, Լ. Tuber, Փ. Truffe.

3007. Յարի.

Եթէ սխալ գրուած չէ փոխանակ Յարի կամ Յարի, զարձեալ Յարի նման վայրի ծառ մ'է, որոյ տերեւները Սանահնի վանաց խոտակրօն ճգնաւոր- ներն հացի տեղ առնուին՝ պատրաստելով. « Ոմանք, կ'ըսէ Գր. Մազիտարոս, » ի տերեւոց Յարուց և ի կորզոյ Հունից աղացեալ՝ թրէին յարեգակնային տա- » պոյն, արարեալ բլիթս. և այն իսկ էր նոցա կերակուր. և ոչ հաց »:

3008. Յախ.

Այլ և այլ նշանակութիւն ունի բառս. հասարակօրէն նշանակէ բազմահիւղ թուփեր, որ խորձ կապուած աւել կ'ըլլան, անոր համար կոչուին Յախ առել. ճիւղերն այլ առանձինն Յախ կոչուին, ինչպէս նաեւ ուրիշ հապուկ ճիւղով ծառերու, զորս շատ հեղ յիշէ Վաստ. Գիրքն, և ընտրելու է կ'ըսէ (ՃԻ) այն « ազգ » Յախն.. որ յեռ(ալ)ն գինւոյ ի կարասին բերանն զրուի »: Բազմութիւն այսպիսի թփոց միանգամայն առեալ Յախոտս կ'ըսուի, ինչպէս եղեղանցն՝ Եղեգ. նուա կամ Պուրակ, ժառոց՝ Անտառ: — Դարձեալ իբր յատուկ ծառ

3009. — Յախ.

Ըստ ոմանց է Բիծխի ծառն, ըստ այլոց Հացի ծառն. — Տրապիզոնի կողմեր Յախ կոչեն Խալանը, Erica Arborea, Փ. Bruyère arborescente. որոյ երկայն բարակ ճգերուն տերեւներն խիտ խիտ մանրիկ մազեր են, և վայելուչ տեսք մ'ընծայեն թուփին. ասկէ կու շինեն աւել:

3010. — Յախ. Եղէգն.

Այս այլ զատ յիշուի՝ ոչ իբր վերիններուն պէս գործածուելու, այլ իբրեւ դեղ լերդացաւի, ուրիշ բուսեղինաց հետ խառնելով և « Յախ Եղեգ՝ բուռ մի »: Աւելի զարմանալին յիշէ կամարկապցին,

3011. — Երկնուց Յախ ?

Ակոյտի ցաւի դեղ. — « Ա՛ռ զԲարաբոտն և զԵրկնուց Յախն, մեղրով խառնէ, » և զբերանն և զառամունսն սրբէ »:

3012. Յանխոտ.

Հասարակ խոտ քանի մի թիղ երկայն և շատ նեղ ու փայլուն, ուտելիք ոչխարաց:

3013. Յանծաւոր.

Թերեւս Յնծաւոր: կամարկապցին՝ Չափրանը կոչէ, Հայոց Քրքում այսինքն հայերէն, և զայս՝ « Յանծաւորին խոտին ծաղիկն է », կ'ըսէ:

3014. Յարասի.

Թուփ է Յախի պէս, ուսկից մեծ մեծ աւելներ շինեն, կալերը և գոմերը աւելու և մաքրելու համար: Միս. Գոշ, այսոր անարգ բոյս մ'ըլլալն առակէ, Հասարակի հետ զանգատելովն (տես թ. 1673):

3015. Յաքի.

կերպով մի նման Յախի. փշոտ ծաղկոտ թուփ է, Ախախիայի նման, որով այգեաց և պարտիզաց ցանկապատ կու շինեն: Ասոր խումբն այլ Յաքոտ կ'ըսուի:

3016. Յեց.

Ըստ Ռոշլեանի՝ « Խոտ, որ զեօթն փոքրիկ ճիւղս ունի և զծիրանի ծաղիկ, » և զսերմն յարակայ ». Լ. գրէ Eriphia. բայց անծանօթ է հիմայ այս անունս։ Գալիենոսի բառից մէջ Յեցի հոմանիշ գրուի Երիտոս, որ է Լ. Aorides, Կարո՞ ճիկաց ցեղէ խոտեղէն մի, զեղին կամ կարմիր գեղեցիկ ծաղկներով, իբրև 10 կամ 12 տեսակ։

3017. Յընդվար. — Տես Զրոտբատ:



Յրոպտկի.

3018. Յրոպտկի.

Վայրի թուփ կամ մացառ մի, որոյ տերեւոց ձենն, փուչքն և պտուղներն կամ հատիկքն՝ բնական մեծութեամբն կ'երեւին ի պատկերիս, ի Տրապիզոնէ խաւրուած ճիւղէ մի լուսազրելով։ Տերեւոց փայլման և պտղոց այլ փայլուն կարմրութեանն համար՝ Փռ. Buisson ardent կ'ըսուի, որպէս թէ Մովսիսի տեսած Մորենին վառեալ։ Լ. Cotoneaster Pyracantha. ազգակից Crataegus կոչուած թփոց տես և Մամու տանձ։

3019. Յինգ. Յինկ.

Սիրաբայ Ս. Գիրքն կ'ըսէ (Խ. 16). « Յինգ առ ամենայն ջրով յեղեր գետոյ՝ յառաջ քան զամենայն խոտ խլեցի » . Յ. բնագիրն *Αχις* կօչէ զայս, իսկ *Λ. Թարգմանութիւնն* պարզապէս կանաչ խոտ կ'ըսէ կամ դալարի. *Viriditas*. Ժանօթ է նոյն անուամբ ի Տարօն, 2-3 թզաչափ բարձր խոտեղէն մի, տերիւններն ցանցառ կարօսի նման, երկայն կոթերով դեղին ոսկեփայլ հնգաթերթ ծաղկներով. զոր Միպանուկի պէս ի գործ ածեն վիրաց խարանի. ի Վան և ուրիշ կողմեր Յնկան կամ Յունկի (կամ Մունկ) ծաղիկ կոչեն, իսկ Բաղիշեցիք՝ Հրանուկ: Մանօթ էր և մեր Առակախօսին սոյն անուամբ, որ և անոր դեղին գոյնը նշանաւոր տեսնէր, և ծաղրեալ ի Գնդածաղիկէ և ուրիշներէ. որոց պատասխան կու տայ Յինգ, « Վան մեր » սուրբ սրին գերանդեաց. իսկ ես խոկալով զայստսիկ՝ զարհուրեալ դեղնիմ » . և այսով Հաստատէ Սիրաբայ ըսածը: — Ոչ միայն յեղերս ջրոց՝ այլ քիչ մ'այլ վար տեսնէ զՅինկ մեր ծաղկերգուն (*Սալաձորցի*), զմայլած այնոր փայլուն դեղնութեան.

« Յինկն դեղին ծաղկի, ցնծայ փայլէ ծպտայ մէջ ջրերուն » :

3020. Յիրդ. Յրդի. Յրդնի. Յրտնի.

Գի ծառոյ նման վայրի ծառ կամ թուփ մի փշոտ, յիշուած է ի Ս. Գիրս, (*Եսայի Մե. 13*), « փոխանակ Յրդոյ՝ Նոճ բուսցի, և փոխանակ Գծնըկին՝ Մուրտ ելցէ » . *Λ. Թարգմանութիւնն* *Scilliuca* զրէ, զոր տեսակ մի Նարդոս կամ Խիրի կարծեն մեկնիչք. բայց Հասարակօրէն Յիրդն Համարուի *Λ. Sabina*, *Φ. Sabine*. — Մեր բժշկարանաց մէկն կ'ըսէ, « *Լեռան Կիպարիս է* » . շատերն գրեն Գալիենու բառից մէջ, Յ. Արևիդրիս կամ Արկերիս և Հ. Յրդի. Յրդեղ, Յրդիդ. բառգիրք մ'այլ *Λ.* գրէ *Agrostis*, որ Յ. նշանակէ որ և է ածուոց բերք: Դառէն աւելի՛ պտղոյն անուամբ յիշեն Բժշկարանք. Ար. Օպիոյ կամ Սպիոյ *Լ. Գ.* և շատերն Ուշ. « հոշ, որ է Յրդուն պտուղն, որ փշով է տերեւն, և պտուղն կարմիր և համ » քաղցր » : Նոյնպէս և Ամիրտ. « Ուպհուլ, որ է Յրդուն պտուղն, որ Թ. Արտուձ » եհմիչի ասէ. ինքն երկու ցեղ է, սեւ և կարմիր, և լան այն է որ կարմիր լինի. . » Ասեր է Պտ. Թէ ինքն Ճավգի Ուպհուլն է. . և ինքն Վայրի Կիպարուն պտուղն է. » և Պ. Թոռիսի հաւայ կ'ասէ, և ի Խորասան՝ Փարոս ? կ'ասեն », — Յրդենի անունն ինչուան հիմայ լուսի յԱրցախ: Անտոն Վ. Յոշտ ծառ կոչէ:

3021. Յինի.

Այս այլ լուսի վերոյգրեալ Արցախոյ կողմերում, բայց նոյն թէ տարբեր ի Յախոյ:

3022. Յմախ. Յմախտակ.

Հին կամ Գալիենոսի բառք՝ այս անուան Յ. Սեղուտ կամ Սեղուա, Սիսոդոս գրեն, այլ և *Silauos* ? մէկն այլ *Λ.* Ջաշիսի ? ուրիշ մի Ջամարիքոյ, Քոնստոզ, շատերն այլ այս ետքի անունը գրեն պէսպէս ծումկած, Քրնուրս. Քոնստոզ, Քոնստոս, Ղոնստոզ, Քոնստուս ? յայտ է որ սա Ջրչուն կենդանոյ անունն է. պատ-

ճառը տայ Ամիրտ. ընդ Պէյթարայ՝ գրելով Յ. և Լ. *Strathium* անուամբ, բայց այս
այլ ծագած ի Ստատարիոն, մինչ Պէյթ. լաւ եւս գրէ յոյսեցաւ. « Ի Ղուանուզ
» կու նմանի խոտ—մն է, սսցել են, բայց նմանութիւն չունի. այս խոտ—մն է, բար-
» կուկ ճղեր ունի, և տերեւն մէկմէկէ հեռու է, Կաղամբին գունովն կու լինի, և
» սպիտակ ծաղիկ կ'ունենայ, և ի յարտերուն և ի Յորենոյն մէջն կու բուսնի, և
» հոտն աղէկ կու լինի, և տակն յերկան և սպիտակ կու լինի. և Թ. ասով ետփա-
» ղու կ'ասեն բուրդ—մն կայ՝ զայն կու լուանան »: Իսկ Թ. անունը Բժշկարան մի
վճռելի օրի կոչէ: — Ուրիշ տեղ Ամիրտ. գրէ, « Քուստուս, ինքն տակ է, և ի վե-
» բայ ստեր (չտեր?) լինի, աղէկն լեղի լինի և մէջն ճերմակ... օգտէ լուծման և այն
» խոցին՝ որ յաղիքն լինի »: և այլն: — Վաստկ. Գիրքն՝ — Յմախ տակ լեօած դեզ
գրէ բորոտած շան: — Պէյթարայ թարգմանն կ'իմացընէ որ այս հին Յ. *Strathium*
(*Strathiom*) ինչ ըլլալուն տարբեր կարծիք ունին գիտնականք. ոմանք կ'ըսեն *Cu-*
soubalus Behen, կամ *Silene inflata*, այլք և շատք՝ *Gypsophile*, որ գաճ սիրող ըսել
է, զանով բուսած պատերու քով կամ վրայ բուսնելուն համար. և այլ եւ այլ տե-
սակներ ունի, յորոց տեսնուած են ի Քանձակ *G. Szowitzii*, *G. Steveni*, *G. Aculi-*
folia. Իսկ *G. Ruscifolia* ի Մուշ, յԱմիրտ. Մարանդ, Այնթապ. — *G. Ortegioides*
յիզ օղու թարբերդի — *G. Elegans* ի Բաբերդ, Բաղէշ, Կարին, — *S. Venusta*, ի
կողմանս Եփրատոյ, Այնթապ. — *G. Aucheri* յԵղընկա, Մարաշ. — *G. Sphaeroce-*
phala ի Բաբերդ. — *G. Picta* ի Մանախ. — *G. Porrigans* ի Ռ—Ղ. — ասանց տե-
սակի որոյման յիշուի և յԵրեւան, ի Սոմխէթ, եւ այլն: — Տես և Յմամ:

3023. Յմախոտ.

Զայս յիչէ Ասար և զուգանիշ թարբարդ, ուրեմն Սպիտակ վրացի կոճն է:

3024. Յմամ.

Ընտիր Բաագիրք մի զատ և որոշ ի Յմախայ գրէ զայս, և այսոր զուգէ վերոյ-
գրեալ Յ. կամ Լ. անունը, Սիլաու, զոր Ստ. Ռոջեան Յմախի վերաբերե-
լով, գրէ « Խոտ դառն, որ ի ճախին և ի խճոտ տեղիտ մերձ վտակաց բուսանի. դեզ
» է խիթ որովայնի », և վկայութիւն բերէ ի խրատուց Հարանց վարուց. « Մայր՝
» մինչ կամեսցի հատանել զմանուկն ի ստենէ՝ Յմախ արկանէ ի վերայ ստեանցն. և
» փախչի ի դառնութենէ նորա մանուկն »: Աղեքսանդրի պատմութեան հին թարգ-
մանութեան մէջ այլ գետոյ մի ջրոյ համար կ'ըսուի՝ « դառնագոյն քան զՅմախ »:
Ս. Եփրեմի ճառից մէջ այլ. « Եթէ Յմախ արկանէ (յիւղն) լինի Յմախ-իւզ, իսկ
» եթէ Խնդամու արկցէ՝ լինի Խնդամու-իւզ »: — Ասոնք անշուշտ Յմախի վերաբե-
րին, որ Մեխակի ցեղին բուսոց տոգերէն է. իսկ *Silau* կոչուածն՝ ի Հովանեկա-
ձեւից և մերձաւոր Լեռնային Նարդոսի (*Meum*). այսոր մէկ տեսակն *Sil. Pencedo-*
noides ճանչցուած է ի Բաբերդ, ի Դաշքէօիքիւ և ի Ռ—Ղ:

3025. Յնճղի.

Պոնտոսի կողմերը լսուի այս անունս, որ և Թ. Անիծ աղամի կ'ըսուի. բարակ ճղե-
րու վրայ զոյգ զոյգ դիմադէմ տերեւներ ունի երկայն ձուռձեւ. ուրիշ մասերն
մեզ չէ ծանուցուած. բուսարանք տերեւոց ճիւղերէն միայն տեսնելով՝ չկարցան
ճանչնալ, բայց երկրայութեամբ ըսին. Սպասան, որ է *Sorbus domestica*.

3026. Յորեան .

Ամենայն բուսեղինաց գլխաւորն , մարդկան մեծ մասին անդեան առաջին և ուժով նիւթը տալով , Հացը . և այսպէս կ'անուանեն մեր ազգայինք ի մշակութեան , որոյ առաջին նպատակն է , և աստուածային տնտեսութեամբ սահմանուած՝ դրախտէն տարագրեալ մարդկութեան՝ գործել գերկիր , և քրտամբ երեսաց հայթհայթել և ուտել զհացն : Սակայն զայն որ մահացու կենաց դարման տուաւ , յետոյ աւմենահրաշալի կերպով նոյն ինքն Աստուած՝ մարդացեալ՝ հոգւոյ սնունդ և անմահարար հաց հաստատեց , ինչպէս Որթոյ բերքն այլ բաժակ փրկութեան . հեթանոսք մէկով զԲագոս պսակէին , միւսով զԻեմետրէ . Քրիստոսի Հարսն (եկեղեցի) երկուքովն այլ անթառամ պսակուի :

Մեր հին Բժշկարանն իրաւամբք գրէ . « Պարտ է յառաջ (քան զայլս) զՅորեան յիշել , զի ի վեր և թագաւոր է ամենայն հնտանաց , և տաք է , ի չոր և յի գէճ՝ հաւսար . և վկայ այն է , որ ծեծած և ի փեճեկէն հանած՝ թէ դնես յի վերայ՝ բանայ զելունդ (ուռէցք) : Եւ Յորեանի հացն (չատ) ազգեր են . Խօշ . կարն տաք է , և շոյտ ելնէ ի ստամոքէ , և կակուղ պահէ զքնութիւն . — Գիր . մակն քան զՄիմիդրն թեթեւ է և քան զԽօշկար ծանր ու կապ . և եր զՅորեան ուտէ մարդ՝ ճիճի ընձայէ . և քան զամենայն ախորժական է Յորեան նոյն , մանաւանդ թէ մեղր և եղ և պղպեղ և Մորէ լնուն ի վերայ՝ ուտեն . և թէ կաթամբ ուտեն տաք՝ լաւ է . և Նշայն Յորեանի՝ գիճային և չորային է , և կրծոց խոչրութեան և հագի և թոքոց օգուտ է . և այտոր վկայ այն՝ որ թէ քամոյ այտոց լինի ի կուրծք և ի պղղամէ որ կաշոյն ներքեւ լինի , և զինք եւ փես ի վերայ դնես , նա սրբէ . Իսկ թեփն տաք ու չոր է . զի եր թրջն ու քամեն որ հարիրա (? հերիսայ) այնեն՝ հագի օգնէ , և ախորժական է : Եւ զհացն այսպէս արա . Խմորով եկուն , աղն ի չիու (չափաւոր) , շատաճառ , կակուծ . — Թոյնքնփեցն լաւ է քան զայլ ազգ եփած . — Փռռանիտն լաւ է որ զէտ Թոյնքն եփեց լինի եփուն և շատաճառ , որ ջրով թրեն . և թէ նոր Նշի կամ Հոռոմ ճիթերով լինի այճառած՝ կարի լաւ է . և մանաւանդ թէ զերկու ձէթն յիրար խառնես : Եւ թէ մարդ ջերմաքնութիւն և ավաղ լինի , և զհացն այժուց կաթով և չաքրով ուտէ , լաւ է . ապա թէ հով քնութիւն և հով ստամոք լինի՝ մեղրով և Նշի ձիթով թող ուտէ . ապա թէ սաֆրայտ լինի և կակուղ քնութիւն , թոյ ժռով (ազոխ) ուտէ կամ Նուան ջրով կամ քացիտով : Ապա զՓռռանիտն եղով ու կար(ա)գով մի ուտեր , զեն առնէ շատ : Եւ ալոյրով Փրռանին ծանր է , զի բաղարջ է , և ամենայն բաղարջ վատուծ է և ծանր . Իսկ հացով փրուկն՝ լաւ է » : — Յորեանի գերազանցութիւնն այսպիսի ազգային լեզուի բացատրութեամբ՝ յուսամք որ ախորժելի ըլլայ ընթերցողաց և ոչ աւելորդ , նա եւ լսել նոյնպիսի և աւելի հին լեզուով գրուած բան մի՝ Ս . Բարսղի Աեցօրէից (Ե) . « Առնիս զարմանալ ընդ ցօղն (ցօղուն) Յորեանոյն , թէ զհարգ պնդեալ հաստատեալ վերանայ ծնկակապ կապօքն . զի հաստակապ հանգուցիւքն զօրասցի ժռակալեացի առ ի բառնալ զծանրութիւն հասկացն , որ պատկանին ի գլուխն , զի մի ի ծանրութենէ հասկիցն գլխարկեալ գտանիցի ծանրաբեկ ի յերկիր անկեալ : Իսկ ցօղն վարսակոյ ամենեւին փոր և սնամէլ է , քանզի չիք ծախրութիւն ի գլուխ նորա . Իսկ ցօղ Յորեանոյն ծնկակապ կապօք հանգոյց առ

» Հանգոյց հաստատեաց. դարձեալ, հատոյն՝ փոճոկս գողաձեւ կազմեաց ի հաս-
 » կին, և շուրջ պատեալ ամրացոյց քստով, իբրեւ ամրածածուկ պատնիշք. զի
 » մի լիցի դիրին սերմանաբաղ թռչնոց առնուլ ինչ ի նմանէ և քնաս առնել »:
 — Այսպիսի գրուածոց քով շատ կու ցածնայ մեր Ամասիացոյն ոճը, որ ըսա սո-
 վորութեանն Ար. բառով գրէ. « Հանդա (خاند) որ է Յորենն. մէկ Յանժու
 » է, և մէկ Վայրի. ինքն իրենն կու բուսնի խանդարաւ ? և լաւն այն է որ նոր
 » և գէր լինի. յառջի արժ. տաք է և մուհթատիլ ». և յետ յիշելու պէսպէս բը-
 ժըչկական օգուտները, վերջացրնէ. « Ասած է, թէ մարդուն բնութեան քան զայս
 » աղէկ իբք չկայ. (բայց կ'աւելցրնէ), և թէ հում ուտին՝ ի փորն ճիճի ընծայէ.
 » և թէ ձին ուտէ՝ զեն առնէ »: — Ս. Բարսղի Յորենոյ ծնկակապ և հաճոցոյց
 կոչածը՝ 'Աուկաս Խարսրդդի (ի թարգմանութեան Մեկն. Մննդոց՝ ի լատինէ).
 Խալա՛մ կ'ըսէ. « Ո՛րպէս յողուածովք շարահիւսին Խալամբն Յորենոյ, զի իբրեւ
 » նոքք կապանօք զօրացեալք, զծանրութիւն հասկից դուրապէս բարձցեն »:

Վաստակոց գիրքն՝ որոյ մեծագոյն մասն Այգւոյ մշակութեան խրատ է. Յո-
 րենի վրայք համառօտ գրէ, և աւելի « Վասն պահելոյ զՅորենանն », (Գլ. 1Է),
 պէսպէս հնարքներով. յետոյ (1Ը) « Վասն ճանաչելոյ և ընտրելոյ զլաւ և զպա-
 » հելի Հացն ». և վերջը (1Թ) Վասն հաց երկելոյ. « Ոմանք ի խմորի տեղն նա-
 » դրուն դնեն ի հայսն. և ոմանք առնուն զՉամիչն և ի թուրջ արկանեն ի լուրն՝
 » օր մի և գիշեր մի, և քամեն և այնու թրեն. բերէ զհայսն որպէս խմոր, և
 » լաւաւամ առնէ և զեղեցիկ. օգտակար և յորդորիչ է բնութեանն, զի խմորն
 » հակառակ է բնութեանն և վատուժացնող »:

Յորենի թէ բնական ձեւովն և թէ ցանելու ժամանակին համեմատութեամբ՝
 պէսպէս անուններ տրուած են. մեզի ծանօթ կամ լուածքն են. Ալրնցան և
 Գարնցան, ետքինս կարմրահատ է. — Դիր, մեծահատ ցորեն է, ցամաք
 տեղերում ցանելի. — ասոր նման է և Խաւմն. — Աւետիք կամ Հանտիկ՝ տաք
 տեղուանք ցանելի. — Մարմուռ, սպիտակ մանր Յորեն. — Տարնկան՝ Թ. Չալ-
 տար կոչուածն. — Հոռոմցի Յորեան, այս այլ կարմրագոյն է Խալուա ? կոչուած:
 — Լ. Triticum, ֓. Blé, և Froment, Բ. Пшеница. Թ. Գուդոյա Եւթ. քան
 զամէն լեզուաց նշանաւոր է հին իռլանտաց նմանաձայն անունն Յորենոյ, Tuireana.

3027. Յորենուկ, Յորնուկ.

Որ և Փստիխտոնչ կոչուի. հասարակ խոտ մի շատ տեղ ծանօթ ի Հայս, նը-
 ման Վարսակի, և անկէ աւելի հղճղած: Այլ եւ այլ տեսակ ունի. — Լ. Bromus,
 ֓. Bromo ի Թ. Βεῶμος բառէ, որ սնունդ նշանակէ, իբրեւ սննդարար ու-
 տելիք կենդանեաց. Թ. Լրոշտէ:

3028. Յուպ.

'Իանիէլ Ասորի ի մեկնութեան ԼԶ Սաղմոսի (տ. 38-9), « Տեօի զամբարիտն վե-
 » րացեալ և ամբարձեալ որպէս զմայրսն Լիբանանու. անցի և ահա ոչ էր », կ'ըսէ.
 » Անցի և տեսի իբրեւ զՅուպ և զՎաղնի, ոչինչ համարեցայ զնա, վասն զի ոչ
 » Պեսի ի նմա պտուղ ». ասոնց հակառակ ամբիժները նմանցրնէ Յորենի, Զի-
 թենոյ և Այգւոյ. որով պարզապէս յայտնէ թէ Յուպն այլ վայրենի անպտուղ

և մեծ ծառ մ'է, գուցէ արդէն մուրի ծանօթ ծառոց մէկն, բայց ոչ այս նոր ա. նուամբ. և թէ բառիս հասարակ նշանակութենէն (գուազան, բիր) առնուած է, բարձր ծառ մի կարծել տայ, որպէս Բարտի:

3029. Յրվարդ. (Թերեւս լաւագոյն Յովարդ).

Բառհաւաք մի նշանակած է. Թուի գիշահոտ կամ Մնթին կոչուածն կամ նմանն:

3030. Յրտկնի. Յրտնի.

Յիշուին ի կողմանս Արցախոյ վայրի ծառոց հետ, նոյն կամ մէկմէկէ տարբեր. համարելով թէ յատուկ տեսակ մի են՝ և ոչ Յրդի: Գուցէ այս ըլլայ և Յուրտ ծառն, Թ. 3020:

Փաթեխ. — Տես Պատեխ. Պրեխ.

3031. Փաթփամուկ.

Բառհաւաք մի նշանակած է, առանց բացատրութեան. Թուի թէ Պատատուկն է:

3032. Փալախոտ.

Փափուկ խոտ մի է վայրի:

3033. * Վալանտուզ ?

Բժշկարան մի գրէ գեղ՝ Ղուր մտած ակընջի. « Ա՛ռ Պրտու՛ որ Փալանտուզ. » ներու խոտին մէջն ինի, թաթխէ ի եղն, և դիր զմէկ ծայրն ի յականջն և վառէ, որ զլուրն ի դուրս քաշէ »: — (Փալանտուզ Թ. համետ շինող նշանակէ):

3034. * Փաղանգամուշկ. Ֆարանգամուշկ. Ֆալանգամուշկ. كاشانج:

Բառս Պ. է, և ըստ ոմանց նշանակէ՝ Փռանկաց Մուշկ. ըստ այլոց Յովազա. մուշկ, իբր թէ ծաղկին վրայ յովազի մորթի խայտուցին նման խայտեր կան. իսկ բոյան՝ Բժշկարանաց ոմանց Չարխոտն է, այլ լաւագոյն գրուած Չագախոտ: Բժշկարան մի գրէ, « Ինքն ի Դաղձերուն ցեղ մի է, և ազգ-մն որ ծաղկին ծի. » բանի որ սպիտակ կու քլաէ, անուշահոտ է: Թ. այս խոտիս Ըսէհանի Ղարան. » ֆիլի կ'ասէ »: Նմանապէս և Ամիրտ. « Հո. Յրուսկուն և Ռահանի Ղարան. » ֆիլի կ'ասեն. տաք է. և նուրբ է. հոտն օգտէ զուզամին և զքթին կալուածն » կու բանայ... Առէ գրոցս շինողն, թէ ինքն ի վայրի Դաղձերուն ցեղերուն է, և իր » բուսն ի Ղրարբի տեղեր կու բուսնի. և ի մէկ հետէն ի տակէն մէկ հետ ճղեր » կու ելանէ. և տերեւն նման է Ըռահանի տերեւին. և յորժամ բարձրանայ » և յերկաննայ՝ զէտ Ըռահան գլուխ կու բռնէ, և ծաղիկն ծիրանի է, սպի. » տակութիւն կու քլաէ, և քանի երթայ կու սպիտակի. և հոտն սուր է. և այս » խոտս Հո. Յրուսկուն կու ասէ ». Բ. Φιλόχορον՝ պարզասպէս թգասէր կամ Թզու. կեր նշանակէ: — Ըստ քննութեան գիտնականաց՝ Փաղանգամուշկն է Բրդոտ կոչուած Ռեհանն, *L. Ocyrtum pilosum*.

3035. ֓այլասենի.

Նարդոնն է անուշահոտ. Աղամայ ըսուած անվաւեր պատմութեան գրոց մէջ. ըստ Հ. Թարգմանութեան, կ'ըսուի, որ աղաչեց զինքը դրախտէն դուրս հանող հրեշտակին, քանի մի անուշահոտ բոյս տայ, որ երբ Աստուծոյ պատարագ ընծայէ, անոնց հոտով նուիրէ. Աստուած այլ « հրամայեաց տալ նմա շորս իրք, » որք են (Քրքում, Դարիսենի, Եղեգն), և Նարդոս՝ որ է ֓այլասենի »:

3036. ֓այլկտուկ.

Այսպէս այլ կոչուած է Երէշն. տես Թաղաղու:

3037. ֓այլտիչ.

Կապոյտ ծաղկով բոյս մի է. որով աւել շինեն:

3038. * Փանճանկուշտ. — Տես Հինգտերեռուի:

3039. Փապու.

Կաղնի ծառին տերեւն է, ըստ Խոտույրեցոց:

3040. Փառայ.

Վաստկ. գիրքն (ՅԲ) տնկացու բուսեղէնքը պահպանելու համար՝ հնարք մ'այլ գրէ. « Ոմանք զՓասային կոթէքն փետեն ի գետնէն, ի վերայ զտունկն ծած- » կեն. նոյնպէս և ներքեւն, նա լաւ պահէ, և թէ զնոյն ինքն Փառայն դնես »: Ըսածէն գուշակուի որ գետնանճապաղ բոյս մի է: Տես և Փարախոտ:

3041. Փառեղ.

Կըրնար կարծուիլ նոյն ընդ Բառեղ (Թ. 313), բայց անոր տեսքէն շատ տարբեր է սա, երկայնկեղ ճիւղերով, որոց երկու կողմէն իրարու անզոյգ և եզերքն սղոցածեւ մեծկակ տերեւներ ունի, և զատ զատ կոթերու վրայ մանրիկ ճերմակ ծաղկանց փունջեր:

3042. Փառինջ կամ Փարինջ.

Ազգ մի Յորենոյ, մանր և սեւկուկ հատերով: Լ. Triticum Spelta, Փ. Էթեանթր.

3043. Փառփառ. Փարփար.

Եղուած ի բառս Գալիենոսի և ի Բառգիրս Տիվոլայ. լսուի և հիմայ այլ: Փըրփրենն է: Տես զայս:

3044. Փարախոտ.

Երկու կամ երեք Թիղ բարձր խոտեղէն, մատի մի չափ լայն և քլաչափ երկայն, և քիչ մի մահկածեւ տերեւներով. երկայն կոթերու վրայ այլ ծոպածեւ փնջիկներ ունի ամենամանր ծաղկանց. և Աւելի կու նմանի:

* Փարասիոն. Ֆարասիոն. — Տես Հօսիսայ.

3045. Փարչուկ.

Իբր փարչ կտորոզ ծաղիկն, որ որ և է ամանի անուամբ կոչուի, և պարզապէս Անանկոտրիչ. տես Մափկոտրուկ. Թ. 1183:

3046. Փարփարայ.

Մտի-պաշարի տեսակ մի է, տես զայս, Թ. 1230:

3047. Փարփարնայ. — Տես Խոնկորիձ կամ Խոնկի:

3048. Փացի.

Տեսակ մի Վայրի Խոնձորի. Թերեւս նոյն որ Դառնիձ կոչուի:

3049. Փափղումն.

Ըստ բառից Գալիկենոսի Յ. Կիստոսու. Κυαθίς, 1. Chyathus, Cyath. Ազգ մի Պտերից, որ 80 կամ անելի տեսակ ունին, և Հասարակածի գաւառաց մէջ կ'աճին. չափաւոր բարձրութեամբ թուփեր և ծառեր են, ծայրերնին վարսաւոր, գեղեցիկ տեսքով, անոր համար յԵւրոպայ չերանցի մէջ կու դարմանուին:

3050. Փեգնա.

Կամ Փեգանայ, Յ. Πύργος, որ Հ. գրուած է Բեկենտ, Բեզանտ. այն ծանօթ ի տնտեսութեան փոքր բոյսերէն մէկն, որոց տասանորդելը յանդիմանեց Տէրն մեր: Բուռոյն որպիսութիւնը բացատրած եմք Սազապ անուամբ, նոյնպէս և իր պաշտպանութիւնն այլ ըստ Առակախօսին մերոյ՝ ի Չաման անուան:

3051. Փեժատ. — Տես Մաղր:

3052. Փենակ.

Սալաձորցին գրէ. « Փենակ ծաղիկն ու Լօշտակն յԱտուած դեղ տուել գարն » գերուն ». (Հոգոց, վշտաց). այս զուգութեամբ գուշակուի որ Փենակն նոյն ըլլայ ընդ Փենունայի:

3053. Փենայ. Փենատակ.

Ըստ բառից Գալիկենու է Գարունաճն. և ըստ այլոց կոճապղպեղ. տես զասոնք. տարբեր երեւի ի Փենունայէ. Վաստկ. գիրքն յիշէ (չՈ) « Ֆայոսեիա, որ է Փին » նայի տակն՝ ծխես, օգտէ » այգեաց զնասակար ճճիները Նիկիու: — Մի. Հերացի այլ Փենատակը ուրիշ շատ բուսեղինաց հետ զուգէ զուրս չինելու, ոս.

կերքն և գլուխն հովէ ցաւի դեղ: Առանձին ֆեննայն այլ յիշէ. « Մեր վարդա-
» պետն Գաղիանոս յիշել է, թէ ֆեննայն՝ երբ ի բազուկն կապեն կամ ի վիզն՝
» ուխտաւորքն, օգտէ »: — Եթէ և նոյն չէ՝ բայց նման է անուամբ, և զօրու-
թեամբ գերազանց

3054. ֆենուկայ.

Որ « 14 անուն ունի հրաշագործ ծաղիկ մի է », ըստ Ամարկապեցոյն, զոր
յիշած եմք իր հրաշալիութեամբն՝ Խաչափայտ անուամբ: Հրաշարանից մէկն՝ տես-
քին համար գրած է. « Ծաղիկն կարմիր է, կայ որ սպիտակ է. պտուղն Նշի
» պէս. հատերն կարմիր է, և է որ սեւ է »:

3055. ֆերփեր. ֆերփերան. — Տես Փրփրեմ, նոյնպէս և

Փերփեր քարի.

Որ է Վայրի Փրփրեմ: — Յիշուի և Հորի ֆերփեր.

3056. ֆէշփէշուկ.

Երկայն կոթերով խոտեղէնք են, ոմանց տերեւներն դիմադէմ, երեք կամ չորս
բաժնուած, վերի ծայրն եռանկիւնաձեւ. ոմանց միայն կոթին կամ ճղին մէկ կողմն
ունի տերեւ ձուաձեւ կամ քսակաձեւ:

3057. ֆըլօշ.

Օղի շինելու Չամիչն այսպէս անուանուած է:

3058. ֆիմրախ. Բըրաղ.

Այս բառս զործածուեր է (նախ որմէ՛, չէ յայտ,) այն կաշուն խոտին համար,
զոր բացաարած եմք Ապիկոյ խոտ անուամբ, Թ. 140:

3059. ֆիմրիզայ.

Սէզ մի կամ խոտ մի է, ըստ Խոտույրեցոց:

3060. ֆիլունց.

Տրապիզոնեցիք այս անուամբ և յատուկ մակդիրներով այլ կոչեն քանի մի
տեսակ խոտեղէն Պտերներ, որ շարք մ'են տերեւոց, որոց իւրաքանչիւրն բաժ-
նուած ի մանրաձեւ երկայն սրածայր մասեր, իւրաքանչիւր մասն այլ դարձեալ ի փո-
քրիկ տերեւներ բաժնուած է գէմառ դէմ, և ոմանց նա եւ այս տերեւիկքն այլ
ամենամանր բաժանմունք կամ մասեր ունին, և ամենքն այլ սուր ծայրով մի
վերջանան. մէջ տեղի չիղն կամ կոթն այլ՝ որոյ եզերքին շարուած են, նոյնպէս
սուր ծայր մ'ունի. շատ զեղեցիկ մանրաշար տեսք մի կ'ընծայեն (տես յէջ 594):
— Սոսկ Փիլունց կոչուածն բուսագէտք ճանչցան Լ. Aspidium aculeatum, Փ. A.



Φηλννγ. (αηα ηελ 628).

spidie á cils roides, այսպէս կոչուած միջնաշղին կորածե վահանի նմանութենէն, որ Բ. *áncis* կ'ըսուի ինչպէս և Հ. այլ Ասպար: Այս տեսակս գտնուի ի Պոնտոս և Կովկասու երկու կողմն այլ: — Արշփիդոնցն (Թ. 237) աւելի լայն է տեսքով կամ երկայն մասներով, որոյ տերեւիքն այլ քիչ մ'աւելի մեծկակ: Բուսագէտն տեսնելով մեզի խաւրած Թերթը՝ ճանչցաւ Լ. *Polystichum* կոչուածը, որ Բ. Բագմաշար ըսել է կամ Բագմաստեղն, նոյնն կոչուի և Արու Պտեր, *Filix mas*. որոյ հակառակ Եղովփիդոնցն (Թ. 629) կոչուի Էգ Պտեր, *Filix foemina*, այլ և *Asplenium*, որ և Հ. Խոռոտ կոչուի. այսոր տերեւիքն ստորաբաժանեալ նշմարին յամենամանր մասնիկս:

3061. Փիճի.

Շատ հեղ Ար. բառով Սնովկար կամ Սոնոպրի կոչուած առ նախնիս մեր, *چرخس* « Սնովկար որ է Փիճին, գրէ Ամիրտ. լաւն այն է որ սպիտակ » և Թաժա լինի. գիրքընող է, և իր հոտն օգտէ ըռահչային (գողգղալ) և իս. » Թըրխային (Յրգողութեան). և Թէ զկեղեւն եփեն և Թէ զլուրն խաղալ առնեն, » զպալղամն քակէ, և օգտէ ակռային. և իր մուխն օգտէ այնոր՝ որ արտեւաւ. » նունքն Թափի. — Եւ ցեղ մի այլ կայ՝ որ այլ մանր կու լինի, և այլ տաք է. » և ա՛ռ ի յիրմէն և ծծծէ և մեղրով շաղկէ, յսմէն օր ուտեն երեք գրամ, օգտէ » Ֆալճին », եւ այլն: — Գարձեալ գրէ. « Սնովկար, ինքն վարինն (Մարիս) » է. աղէկն գէրն է. սսէ Սահակ բժիշկն՝ Թէ ինքն ի Շէհէն է », (Թ. 2399):

Առականութիւն մեր՝ մեծ և բազմամեղ ծառոց կարգին չի դնել զՓիճի և զՀաւնարի, վասն զի, կ'ըսէ, « Ոչ են բազմուտք, և ոչ հողմոց ընդդիմանալ կարեն, » ի խոր արմատս ոչ ունելով: Վաստկ. գրոց հեղինակն կամ Թարգման՝ զանգանէ (ՀԱ) զՓիճի և զՍոնոպրի, երբ խրատէ զՈրթատունկն հանել « ի Փիճի » կամ ի Սոնոպրի կամ ի Բարտի », եւ այլն: Գանիելի Սաղմոսաց մեկնութեան մէջ ի Չեռագիրս, ուր Մայր փայտ գրուած է, ի լուսանց գրոցն Փիճի է գրուած: — Թէ և անպտուղ ըլլալով՝ անարգ ծառոց կարգին դնէ զայն՝ Ոսկրեւրանն, և խրատէ բարոյապէս չի տնկել Փիճի և Յրդի, այլ պտղաբեր ծառեր, սակայն մշակութեան մէջ այլ եւ այլ օգուտներ ունի, ինչպէս նշանակէ վերոյիշեալ Վաստկ. գիրքն, (ՀԱ. ճԼԳ. քԾ. ճԼԹ). իրեն յարմար գետինն՝ չորայինն է կ'ըսէ (Գ), ինչպէս և Տոսախին: — Շինուածոց այլ ի բան գալուն՝ վկայեն մեր պատմիչք (Ստ. Օրպել. Ը.) զի երբ Հէլադու զան Թաթարաց՝ ի Քառան դաշտի մեծ արքունիք մի շինել կու տար, Սմբատ խաւրեց Օրպելեան իխանը ի Բասեն, որ Սնովկար փայտ կտրել և բերել տայ: — Լ. *Pinus sativa*. Թերեւս սոյն տեսակն է՝ Կարլ. Քոխ բուսագէտ բժիշկին *P. Armena*, Հայկական Փիճի կոչածն. բայց պէտք է գիտնալ, որ *Pinus* անունն՝ այլ եւ այլ տեսակ և ազգ ծառոց կու տրուի, որք մէկմէկ ուրիշ բառով կամ մակդրով կ'որոշուին իրարմէ: — Բաց ի հասարակ Փիճիէ՝ յիշուի առ մեզ և

3062. Գետնի Փիճի որ և Գետնի Սոնովկար.

Որպիսութիւնը տես Ճանկխոտ և Կենարար անուամբք: Բիշուի և Փիճոյ խէժ. որով սովորաբար կ'իմացուի ծամելու Չութն կամ Տիկնակիւն. Բժշկարան մի գրէ. « Փիճոյ խէժ, Ըտարիանայ, Թաթինան (Թեախին), ինքն երկու ազգ է, մէկն » չրէ է և մէկն չոր է »:

Փինոյ պտուղ, — Տես Զարդազա և Կռակնար, որ և

3063. Փինխ.

Յիշուած հին Բժշկարանի մէջ՝ Զալղուզայի հետ. Թերեւս տեսակ մի Փինոյ բեր-
քին յատուկ անունն է:

Փիննա. — Տես փեննա:

3064. Փինչող.

Այսպէս անուանեն ի Պոնտոս Լ. Spiraea անուանեալ բուսոց տեսակներ. մէկն փոքր իրր երկու թաղափ երկայն կոթերով սղոցաձեւ եզերքով սրածայր տերեւներով, երեք երեք մէկ երկրորդական կոթի վրայ. առանձին կոթի վրայ մատ մատ բաժնուած ողկուզի պէս կախուած ծաղիկներ ունի, որ բերեն անթիւ կորեկի նման կանաչ հատիկներ իրարու կիպ: — Լ. Spiraea Aruncos, Փ. Spirée - de - Chèvre, կամ Barbe - de - Chèvre և Barbe - de Bouc, որ ըստ բառին նշանակէ Հ. Քոչմորոսը կոչուածն, սակայն շեմք կարծեր որ նոյնն ըլլայ: Այս տեսակս գտուի ի Պոնտոս, Սպեր, Կող. — Sp. Crenata ի Մուշ. — Sp. Ulmaria ի Կարին, Պինկէօլ, Ճիմիլ և. — S. Filipendula ի Բաբերդ, Կովկաս:



3065. Փիննիա.

Բժշկարան մի, ոչ հին, գրէ, « Առ զՓիննիայն և Սպանդ » և Մարեմիստն », եւ այլն. անունէն յայտ է, Paeo-
nia. Տես Խաչափայտ:

3066. Փիչխ.

Հաւանօրէն նոյն է և Փինխ. հին Բժշկր. յիշէ, և մար-
դու ոյժ տալու համար՝ զեղոց կարգին դնէ և Փիչխ
կոչած: Նոյն թուի և ուրիշ Բժշկարանի Փիւձի հոսեա ըսածն: Ար. Փիչեք նշանակէ
տեսակ մի Բաղեղան. Լ. Hedera Helix.

Փինչող.

3067. Փիփեռն.

Կանաչ կէս կլոր և սղոցաձեւ տերեւներով աղցան ուտելի խաւարտ մի, որ
կպչուն հիւթ ժունի, և եփուած՝ չուրը կու թանձրացընէ. ծաղիկն կապոյտ է,
հունտերն առփակ. Մուշի ցեղէն է. յիշուի յԵրեւան:

3068. Փղի ականջ.

Յիշուած է ի Բժշկարանի և է տեսակ մի Նուիկ:

3069. **Փղինջք. Փղնջքի.**

Կարծր փայտով թուփ մի, Սասնոյ կողմերում յիշուած. փոքր կաղինի չափ անուշահամ պտղով, որ նա և աղալով և փոխինդ ընելով կ'ուտուի: Թուփ Բախնչն. տես Բառում: Բիշուփ և ի Տարօն:

* Փղովոս. — Տես Էջնագի:

3070. **Փնդի.**

Պալիեննոսի բառից մէջ գրուած կայ. « Կաղամ փնդին է կամ Դաղցն (Դաղձ) »:

3071. **Փնկա. ֓նգա. ֓նկի.**

Լեռնային բանջարեղէն մի կարոսի նման. տապկելով կ'ուտուի: Բիշուփ ի Սասն և այլ շատ կողմեր:

3072. **Փնջակոկոռ.**

Ի նորոց յարմարացուցած բառ կ'երեւի, Լ. *Aphylanthes* կոչուած ծաղկին, որ Շուշանակերպից ցեղէն է, կամ անոնց նման. բայց ինձ յարմար կ'երեւի զուգել բառիս՝ *Trapa natans* ջրային փղեղէն մի եռանկիւնածեւ, կամ կէս աստղածեւ. Փ. *Macle* կամ *Macro*, կոչուի և *Chataigne d'eau* (Ջրային Շագանակ) պտղին ձեւէն: Թ. ЧИЛНМЪ :

3073. **Փնջնի ծաղիկ.**

Այսպէս անուանեն ի Սերաստիա Երիցուկը կամ անոր նման ծաղիկ մի, Թ. Գոյռակ կեօզիս: Բիշուփ և նորկեկ Բժշկարանի մէջ, որ Թուփ գրուած ի Տրտպիզոն:

3074. **Փշալ.**

Փշոտ թուփ մի, որ Թ. Իշոյ փուշ կ'ըսուի, ի Պանտոս:

3075. **Փշակաղնի.**

Հին Բժշկարանն՝ այրածի դեղ գրէ, « Փշակաղնոյ տակի կեղեւ աղա եփէ՝ որ » ջուրն թանձրնայ, և թանթխոցով ի վերայ ած, ողջնայ, և սպին չլինի »: Գուցէ Փ. *Chêne brosse* ըսուած տեսակ կաղնին ըլլար:

3076. **Փշատ. ֓շատի. ֓շատնի.**

Վայրի պտղատու ծառ մի, Լ. *Elæagnus*, Փ. *Chalef*. Թ. Իկտե. Ար. Ղուպիհրա, *إيجاب* ըսա Ամիրտ. « Ղուպայրա. Հ. Փշատ ասեն և Պ. Սանձատ » ասէ, և Թ. Իկտա ասէ. և լաւն այն է որ յիտտակ լինի և մտի լինի... կապող յ է և չի թողուր որ պուխար ի գլուխն ելանէ... Իսպն. ասէ, Թէ զծաղիկն ժողովեն

» և յիւրմէն ճիւղ մի կտրեն՝ որ ի ծայրն մէկ տերեւ ունենայ, և զայն ծաղիկն
» ի հոն շարեն և հլղայ (օղ, պսակ) այնեն, և զգլուխն բանան և ի գլուխն ան-
» ցընեն, զմարդն ուրախ առնէ և զհոգան տանի »: — Կովկասի ամեն կողմե-
րում այլ գտուի, որով և ի Հայս՝ այս փշոտ ծառս, որ նշանաւոր է իր Ախթենոյ
ձեւով պտղովը, որոյ միջուկն փոշիանման է և շաքարի պէս քաղցր:

3077. Փշաքեղ. Փշրաքեղ. Փշագեղ.

Լ. Behmen. Ար. *بهم*. « Բահման, որ Հ. Փշաքեղ կ'ասեն. և ինքն ի
» Սուսաններուն ցեղերուն է, կտոր կտոր տակեր է, կարմիր և սպիտակ այլ կու լինի.
» լան այն է որ կարմիր լինի և պինտ և ծալծու. գիրացընող է և զօրտն ուժովցընող
» է և ուրախցընող է. և ինքս ի գիրութեան դեղերն կու մտէ, և իր տալուն շաքն
» մէկ դրամ է. և զիր շարութիւնն տանի Անիսոնն »: Այս տեսակս Բահման
կարմիր կ'ըսուի. կայ և Սպիտակն. Ար. կոչուած *عاش خالص*, « Ետրպաշանաւ.
» որ Թ. Սաղ օր ասէ (որպէս և Փ. Herbe saine), ինքն խոտ-մն է՝ որ տե-
» բեւին յերկայնութիւնն թիգ-մն է, և տերեւին միջէն որձայ կու ելնէ, մէջն
» փուռ և բարոր կու լինի, և ի կիտէն ի վեր մանտր տերեւ ունի, և շատ ա-
» մաննի ունի որպէս սագու սաք, և ի վրան ծիրանի ծաղիկ ունի, սպիտակ կու
» քշտէ, և ամնուն մէջն ի լի և կաշուկ լինի, և քաղցրկեկ կու լինի... և ինքն
» ի փոս տեղեր և ի խանտակն (ակօս) շատ կու բուսնի: Իւ ոմանք ասեն թէ
» այս տակս Սպիտակ Բահման է »: Փ. Behen blanco, որ և Carnillet, Լ. Cu-
cubalus Behen. Ռ. Увѣчная шарва. կարմիրն ըստ ամանց է Լ. Statico Li-
monium, ըստ այլոց *Pyralis flexuosa*. — Պէյթար կ'ըսէ որ երկուքն այլ կու
բերուին յերկրէ Հայոց և ի Խորասանէ: — Բժշկը. մի նոյն Բահման համարի
զՓշաքեղ և զՎառվառուկ:

3078. Փշփշուկ կամ Փշփեշուկ.

Վայրի բանջարեղէն մի, ծանօթ ի Հայս, և յիշուած ի Բարդոզ լերին. իբր
երկու թզաշափ, քանի մի ճղի պէս երկայնկոթ տերեւներով, որք երեք մաս բաժ-
նուած են, վարի երկուքն կոթին երկու կողմէն երկայն ձգուած, վերինն՝ և
աւնկիւնաձեւ: — Այսպէս կ'անուանեն ուրիշ տեւքով բոյս մ'այլ մետրաշափ
երկայն ու շատ բարակ որձայով, որոյ կողմերէն թաքի նման տերեւներ կախուին
բարակ թերերով:

3079. Փոնոնոն.

Տօսախի նման թուփ մի կամ բոյս տարեկան, որ սեւ ներկելու ի գործ ածուի:
Այսչափ նշանակած էր բանասէր մի:

3080. Փոնոնի.

Գայիեն. բառք գրեն, « Էփիֆինոն, ծաղիկ վայրենի Փոքրոնոյ »: Պէյթար Յ.
բառովն գրէ. *عقارب*, յորմէ և Ամիրտ. « Աֆրիսոն, որ է Ծ. Էփիֆինոն. ինքն
» յայտնի խոտ-մն է՝ որ ի շոր տեղեր կու բուսնի, և լան այն է որ կարմիր

» լինի և հունդ ունենայ, և ի վերայ Մաթրուն բուսնի. և այն որ յԵրուսաղէմ
 » և ի Կրիտ լինի՝ լաւ է, և հոան սուր և բարակ լինի. և լուծումն կ'առնէ. .
 » օգտէ և խալիկ ցաւուն և պիտակին և մանին, և սպին որ յերեսն լինի, և
 » զանձն յիտարկէ և սրբէ, և զանդոհիլն և զխաճաղանն և զօսվտան տանի. .
 » և զամենայն ազգ ճիճին հանէ. . Ատէ Պտ. Թէ ինքն ծաղիկ է և հունգ և
 » որձայն է », եւայլն: — Յ. Ἐπιφύρον անունն, Մոթրինի-վրայ ըսել է. ինչպէս
 Ամիրտ. այլ ըսաւ « ի վերայ Մաթրուն բուսնի ». այսինքն կու պլլըբի կամ
 փաթթըբի, անոր համար կ'ըսուի և Բաթկենի (որ պէտք էր ք տառիւ գրուիլ
 ինչպէս Փոթորնին այլ Փոթոռնի) և Գայլ խոտ, տես Թ. 277. 409. Լ. Cuscuta
 Epithymum. — Տեղաքնինք յիշած են ի Փ. Ասիա և ի Կովկաս, զուշակուի և ի
 Հայս. հօս ճանչցուած է Եւրոպական կոչուած տեսակն, C. Europaea. ուրիշ տե-
 սակներ եւս կովկասու երկու կողմերում:

3081. Փոկուռի.

Տեսակ մի մոխրագոյն Ուռի, ծանօթ ի Խոտուջուր:

3082. Փողփեանի.

Թ. Պոջ ազաձի. այսպէս կոչուած ի Պոնտոս. քննութեան կարօտի տեսակն:

3083. Փու. Յու.

Հին Բժշկարանն զոյգ և սոսկ յիշէ, « Փու և Մու տակեր են ». ուրիշ տեղ
 այլ յիշէ զՓու տեսակ մի Թրեբաք շինելու դեղոց հետ: — Ուրիշ Բժշկիր. Ալ-
 բըղբուկ համարի զՓու. տես Թ. 82, որոյ արդարեւ մերձաւոր է, նա Valerianella,
 սա Valeriana, Փ. Valériane, կոչուած. որպիսութիւնը բացատրած եմք Կատուա-
 խոտ անուամբ, Թ. 1380: Բժշկական բառարան մ'այլ Յու՝ Սե Պղպեղ՝ գրէ:

3084. Փուղը.

Բաղադրեալ (Composée) կոչուած բուսոց ազգ կամ ազգեր և տեսակներ. այս
 անուամբ կոչուին ի Պոնտոս, Թերես և ուրիշ կողմեր. յատուկ Փուղը ծանօթ
 չէ ինձ, այլ Վայրի Փուղըն, մեծ կիսաբոյր լղոտ տերեւներով, մէկ երեսն
 կանաչ, միւսն սպիտակ: Ուրիշ անուամբ կոչի սա Խոնկորիս և Տատրակ, զորս
 տես ի կարգին:

3085. — Կամֆոլուղի.

Լ. Mulgedium, Փ. Mulgédie. որ կթուն ըսել է, և նշանակէ բուսոյն կաթոս
 հիւթ մ'ունենալն. Հ. անունն այլ զայն կու յայտնէ. խոտեղէն է երկայն կոթով
 եւանկիւնածեւ տերեւներով, նոյնպէս երկայն կոթով փնջածեւ ողկուզածեւ մանր
 սպիտակ և քիչ մի կապոյտի քլոտղ պարզ ծաղկըներով: Թէպէտ տեսքով նմա-
 նութիւն չունի՝ բայց ուրիշ մասամբ Հազարի ցեղէն է. այլեւայլ տեսակներ այլ
 ունի, որոց յատկազոյն Կամֆոլուղին է, Cacoaliæfolium, ծանօթ ի Պոնտոս,
 յիմէրէթ, Վրաստան. — M. Macrophyllum (Երկայնատերեւն) ի Ռ-Հ. ի Վիրս,
 Կովկաս. — M. Albanum ի Մանախ, Թէքտաղ Լ., Ճիմիլ Լ. — M. Burgœi ի
 Տրապիզոն. — M. Salicifolium յՕլթի:

3086. Փուշ Դաղծ.

Զրային Դաղձն է ըստ կամարկապոյն:

3087-88. Փուշ-Թուզ և Փուշ-խնձոր.

Նշանակած է բառհաւաք մի, իբր յատուկ բոյսեր և ոչ հասարակ տեսակ համանունն պտղոցն:

3089. Փուստա ?

Բժշկարան մի գրէ դեղ փսխելոյ դէմ. « Աս զկանաչ կեղեւն Փուստային և » ջրով եփէ. . և խմէ »:

3090. Փուրխ.

Գուցէ վերոյգրեալ Փուղրն ըլլայ. նշանակած է բառհաւաք մի իր ցանկին. Նա և ոչ բուսական նիւթ մի կարծեցընէ Բժշկարան մի, յիշելով « կարմիր և փուրխ » կղմինտար », իբր փխրուն, դիւրաւ փշրող:

3091. Փուրջուլուխ.

Ռամկօրէն կամ Թ. Պոռլալագ, Ստեպղին նշանակէ:

3092. Փուրփուզնա.

Ըստ վաստ. գրոց (ԿԵ) տեսակ մի է Խաղողոյ, որ ի Յ. բնագրին կորկիներու կան կոչուի:

3093. Փուփլէ.

Մի. Հերացի այտուց բերող կամ մաշարի կոչուած ջերման դեղ գրէ, այլ զուգեւ զՍանդալ և Փուփլէ, եւայլն. հին Բժշկարանն պարզ Ար. ձեւով Ֆուփեղ գրէ նոյն ըսածը. Ամիրտ. գրէ « Ֆուփալ, որ է Բուրալն, ի Հնդկաց կու գայ. » գէտ ճալղպուէ է. և մէջն ծակ ունի, և սեւ սպիտակ և կարմիր լինի. և լաւն » այն է որ պինտ լինի ». յետոյ շատ օգուտները յիշէ: Պէյթար կ'ըսէ տեսակ մի Արմաւենի է նման Գոքոյ բերող ծառին: Ըստ գիտնոց է Լ. Arec Catechu, հասարակօրէն Արեկ, Arec, ըսուած ծառն և Ընգոյզն:

3094. Փուքնի.

Այս այլ ըստ նոյն գրոց, տեսակ մի շուա հասնող Խաղող է:

3095. Փոքի.

Եթէ տարբեր է ի Բողէ, ըստ հին Բժշկարանի, բնութեամբ « ջերմին է և » փոթոթ. զարմասն՝ յարգանդի եղեալ՝ անձնունդ առնէ. եփէ ու ջրով զաշքն » ծեփէ, զայտոյցն նստեցընէ. զտերեւն լուէ և ի վերայ գանի ցանէ, զայտոյցն » նստեցընէ. զսեւութիւն մարմնոյն մաքրէ, մեղրով դնել՝ զշար կեղ մաքրէ »:

3096. Փչեչ.

Բուսոց տակի Սոխերն են հասարակ լեզուաւ. Լ. Bulbus, Փ. Bulbe.

3097. Փռանկի փուշ.

Համարելով տարբեր ներքոյգրեալ Փռանկաշտիէն, յիշե՛ք Բժշկարանի կոչելն զսա Բ. Պոսանանս փուշ, և հունդն ուռած փայծեղան դեղ՝ ուրիշ նիւթոց հետ:

3098. Փռննի. — Տես Վարսամ:

3099. Փռնդադ.

Այսպէս գրուած է Գալիեն. բառից մէջ, որ կըրնար կարծուիլ սխալ՝ Խոռն. դատի տեղ, բայց ԺԴ դարու ընտիր գրուած մ'այլ կ'աւանդէ « Դեղ Կարճի որ » խածանէ, զՓռնդադի ալիւրն ընդ մեզր խառնէ և ի վերայ դիր ». որով և յայտնուի ընդեղէն կամ ալիւր ընելու յարմար տակ կամ կոճղէզ մի ըլլալ:

3100-1. Փռնջնակ. Փռանկաշտի. Փռնջկակշտի.

Ի Բաւզիրս և ի հին Բժշկարանի յիշուին միշտ այսոր Սերմն կամ հունտն, և զուգուի Հապալակ կամ Հապաղփակ և Խնկատերեւ անուանց: — Տես զայս վերջինս և զՓաղանդամուշկ: Գուցէ նոյն ըլլայ և

3102. Փռնջուկ կամ Փռնջակ.

Նորոց հնարած կ'երեւի՝ Յ. Լ. փռնջացուցիչ Arnica բուսոց նշանակիչ: — Նոր բառահաւաք մի յիշած է և Փռնչիկ:

3103. Փռշնի ճառ.

Այսպէս կոչուի ի հիւսիսային կողմանս Հայոց՝ այն որ Փղինջ կոչուի ի հա. բառակողմն:

3104. * Փսնաս.

Յ. բառ, որ ըստ Ս. Բարողի Վեցօրէից նշանակէ Թզենույ և Արմաւենոյ պտղոց փոշին կամ որդնուկն, զոր էգ ծառոց վրայ ցաննն պտղաբերելու համար:

3105. Փսիկ.

Լաւի ի Խոտալուր. վայրի ծառոց լիլիկն կամ ծաղկատեսակ մասն:

3106. Փստփստուկ կամ Փսփսուկ. — Տես Յորենուկ:

3107. Փստուղ. — Տես Պխտակ:

3108. Փտեղի կամ փտեղեայ ծառ. — Տես Պտղի:

3109-11. Փտոռ. փտոռ. փթոռ.

Ս. Բարսղի Վեցօրեից մէջ գրուած է, թէ աղուէն « Բժշկէ զվէրս իւրոյ հա-
» բուածոյն ի կուզոյ, որ լինի ի ծառոյ միոյ, որ անուանեալ կոչի Պիտոլս »:
Յ. Սէտրոս նշանակէ Փիճի, կամ նման ծառ մի: — Մեր մեկնչաց մէկն կ'ըսէ. « Այն
» խոտն որ ի Վեցօրեայն յիշէ Բարսեղ, թէ աղուէն զիւր խոցն փոզոսեա: ?
» (բժշկէ), այսոր ի մեր գաւառս փոտս ասեն »: — Հին Բժշկարանն այլ դեղ
գրէ « Խոցի որ շար է և ուսեց՝ բանջարն Գաղտիկուր և փոտս » — Բժշկարան
մ'այլ գրէ « Մարկ ? փոտս »: Կայիննոսի բառք այդ իբր Յ. անցունը գրեն
Մարկս, Հ. այլ փոռք կամ փրոռք:

3112. Փրեմի կամ փրենի տակ. — Տես Վարսաանս:

3113. Փրերուկ կամ փրիրուկ. — Տես Արմաս:

3114. Փրչկլի.

Յիշէ բառհաւաք մի, թուի Փուրչուլուին:

3115-16. Փրփրեմ. փրփրեք. փրփրեքան.

Որ և Աննետակ, կոճկորակ. ծանօթ խաւարտ ուտելի. Լ. Portulaca. Փ.
Poursier, Ռ. Πορφυροκ որ նմանութիւն ունի Հ. անուան. Ար. « Պախլաթ
» ըլ-հանդա (قراغون) որ է Փրփրեմն, Փրփրեմին հունդն. լաւն այն է որ
» նոր և դաւար լինի, և տերեւն լայն լինի. ամենայն ցաւու օգտէ որ ի սափրայէ
» լինի, և որ մաղձ ժողովէ ի յողիքն, և երկամնացաւի և ամենայն ցաւոց որ
» ի տաքութենէ լինի... Ատ գրոցս շինողն, թէ Պ. Պարսի անտարտն կ'ասէ, և
» ի Նիրազ Քասրա կ'ասեն. և ցեղ-մն այլ անուն՝ որ Սոռլիս մտարտիկ ասեն »:
— Բժշկարան մի գրէ. « Պախլաթ ըլ-Եսանակիս. Սմասիս այս խոտիս փրփրեմ
» անալի կ'ասեն ». այսինքն վայրենի: Գուցէ այս այլ մեր Ամիրս. խօսքն է. որ
գարձեալ գրէ. « Ինքն խոտ է, ի գետինն կու ճապղի, Փրփրեմ ասեն, և սեւ
» հունա ունի. աղէկն Վայրին է »: — Յ. Ανδροχνη անունը՝ հին Բաագիրք մի
գրէ. « Անդրոքնէ. փրփրեքան կամ կոճկորակ կամ Աննետակ »: Ուրիշ մ'այլ.
« Փրփրեմ, որ է Թոռլանքան որ է Քօքն, որ է Պախլաթ ոչ-հանդան »: — Միս.
Հերացի՝ մահտարածամէ պատճառած ջերմի դեղ գրէ և « զփրփրեմի հընտի
» կաթն »:

3117. Փրփրիկ.

Օճառի նման փրփրացող խոտ մի, ըստ Բրգնիբոցո. թուի Օշնա:

3118. Փրփրիճակ. Փրփրիչ.

Գայրինասի Բաագիրք գրեն. « Այեզոմճ կամ Այգոյն և կամ Աղուս, Փրփրիչ » Փրփրիճակ, Լուարեղ »: Տես զայս, Թ. 927: Յ. բառն Աւջաօն, Լ. Aizoon ըստ Պէյթ. նշանակէ Աերասամ, այլեւայլ տեսակօք. Մեծն Համարուի Sempervivum Arboreum (Գառնաղմակիկ), Փոքրն՝ Sedum amplexicaule. բայց ուրիշ տեսակ բոյսեր այլ կարծեն քննիչք:

3119. Փրփրուկ.

Նորոց յարմարեալ կարծուի նշանակելու Լ. Filipendula, Փ. Filipendule, կոչուած բոյսը, Փինչողի (Spirea) տեսակ մի:

3120. Քարարա ?

« Խէժ է նման Սանդալօցի »: Այսպէս գրեն Հին Բաագիրք և բառք Գալիենու: Սանդալօզն է Σάνταλον. տես Ճանդան, որոյ խէժն այլ յիշուած է:

3121. Քալանդաշի կամ Քանդալաշի ծառ. — Տես Թաներոռեկի:

3122. Քակընջի տակ.

• Եիշուած է Խուպայցի կամ մեծ Մոլոշի նշանակութեամբ:

3123. Քահանայատակ.

Տես Խալափայտ: Ար. այլ Քեհիսանս կոչուի. كهياسا.

3124. Քահանայի պտուղ.

Բժշկր. մի գրէ միայն. « Որ զայս (պտուղ), ուտէ ակուայն խսկի չցաւի յաւտեան »:

3125. * Քաղբան.

Տես Մաղբ. Յ. անուն Χαλβάνη:

3126. Քաղկու !

Հին Բժշկարանն ակընջի մէջ ածած մի գրէ, Լեպիդիս (Lepidium, « Նուարտակ), Քաղկու, Ճնարակ, միաշաք արա և մանրէ, մեղրով և քաղխով » յարս և աէճնիչ (աետին ?) արա, և կամ զդեզդ ցամաք ի ներս փչէ »:

3127. Քաղմն.

« Ասփրէ (Ասպուր) հունդն է », ըստ Բժշկարանի միոյ:

3128. Քաղցրամարուխ.

Մատուտակն է Լ. այլ կ'ըսուի Dulcis Radix, ըստ Մատթիոյի:

3129. Քաղցր Հունդ. — Անխոնն է:

3130. * Քամազ.

Աղապքեղն կամ Քարի կարտան է, ըստ Ասարայ, որ գրէ Պիտրեուպոն, Petroselinum.

3131. * Քամահ.

Ար. زکام. « Որ է Սունկ », գրէ Ամիրտ. լաւ եւս Քաղցրամն է. տես թ. 367:

3132. Քամէխոտ.

Ըստ Պոնտացուց է Լ. Geranium Colombinum. Հասարակ խոտ մի նամբաներու վրայ և մօրիներու մէջ բուսած, բարակուկ և երկայն թելերով քան ճիւղերով, տերեւներն այլ նոյնպէս երկայն կոթերով մանրիկ ու բարակ թելեր են՝ ափի կամ ասոդի ձեւով տարածուած. ժողկներն բաժակաձեւ մանրկեկ առանձին թելերու վրայ: Անուամբն և թեթեւութեամբն յարմարի Հողմածաղիկ կոչման:

3133. Քամուկնի.

Հին Բժշկարանն յիշէ. Թուի Չամանն:

3134. Քանկարզատ.

Ար. دڤرک. Կանգարի խէժն է. կամ Հարչաֆի, ըստ Ամիրտ. « Եւ ա. » սացած է, թէ հով է, փոխել կու տայ հեշտութեամբ, (թէ) տաք ջրով և Սքընն. ու պլինով խմեն և մեղրով »: Ռազիկ բժշկապետն այլ թեթեւ վերաբերութեան համար պատուիրեր է գՔանկարզատ:

3135. Քանտան կամ Քանտանա.

Ասոր թէ հունտն թէ ջուրն իբրեւ բժշկարար դեղ յիշուի. բայց ոչ՝ ինչ ըլլալն: Տես և Կանդանա, թ. 1395:

3136. * Քաշիմ. Քաշմ.

Ար. کاشک, Անեխտանն է. տես թ. 118:

3137. Քաշտակ.

Կտաւատն է կամ Կտաւատի հունտն. ըստ Բժշկր. Ար. Պրո ըլ-Քէրեն:

3138. * Գապպա.

Ար. كبايا. յորմէ և Լ. Piper Cubeba, Փ. Cubébe. կոչուի Ար. և « Հապ »
» բլ-հարուս. ինքն զէտ զՖլորու հատկներ է և լեղի է. բացող է և օգտէ գրւ-
» խացաւութեան և շակիկային. և թէ օծես զակուան՝ ուժովցընէ, և գերնին
» խոցերն աղէկցընէ, և զՍոխին և զՍխտորին հոտն տանի. և թէ ի բերանդ
» պահես՝ զձայնն յտակէ, զպալղամի գիճութիւնն տանի... Եւ լաւն այն է որ
» ի Հնդկաց գայ : Հիմայ ի Ճեաւայ և ի Պոանէոյ կղզեաց կու բերեն :

3139. Գապարա. Գապրենի.

Բժշկարանն յիշէ Գապարայի տակի կեղեւ : Թուի կապպարն կամ Գապրցախ.
Մի. Հերացի՝ պինգ փայծեղան հալող դեղ գրէ « Գապրենոյ տակի կեղեւ չոր.
» ցուցած՝ կէս գրամ, եւ այլն » :

3140. Գապողակ կամ Գակողակ.

Հնդկաստանի բերաց մէջ յիշէ Խորեն. Աշխարհագրութիւնն :

3141. Գապողկրիտակ. Գապողկրտակ.

Ակրկարհայն է ըստ Ատարայ. տես թ. 44.

3142. Գապրխոտ.

Հին Բժշկարանն սընկոյ դեղ գրէ, « Գապրխոտի տակ, Տլիփայի տակ, Անկու-
» ժատի տակ, Մատուտկի քամուքս. բլթնի շինէ », եւ այլն : Թուի հետեւեալն,

3143. Գապրցախ.

Նոյն Բժշկր. յիշէ և զայս. « Գապրցախ սրտոյ աղաս և ի գինի խառնէ, և
» այտով խախալ այնէ », ակուայի ցաւ ունողն : — Տես կապպար :

3144. Գաջրեր.

Բառհաւաք մի նշանակած է ի ցանկին. թերեւս տեսակ մի Խաղողոյ կամ
ուրիշ պտղոյ :

3145. Գաջի ըղունգ ?

Բժշկարան մի զուգէ զայս Յեյի բառի, Յ. թէ Ար. թէ Հ. առասպել Ան,
որ տեսակ մի Գաջ կամ Դեւ է :

3146. Գաջվարդ.

Փենոււնայի շատ անուանց մէկն. տես Խաչափայտ :

3147. Բառ.

Այսպէս կոչուի տեղ տեղ ի Հայս Կապպարն, տես զայս:

3148. Քարատուլի?

Բանջարեղինաց ցեղին վերաբերի. յիշուած ի Մեղու օրագրի (ԻԲ, 83):

3149. * Քասնի.

« Որ է Եղրգակն », գրէ Բժշկարան մի. տես զայն և զԽանդարեկ:

3150. Քասպ. — Տես Թախ:

3151. Քատոր կամ Քատուր?

Ամիրտուվաթի Բժշկարանին ստածման մասին մէջ յիշուի քամիոտ սասմաքի դեղ, Վարդի շարապի հետ և « Քատուրի և Ազոխի շարապ » բայց ինչ ըլլալը չի յայտներ:

3152. Քարաժանգ կամ Քարի արիւն.

Կարմիր փոշտեսակ Մամուռ՝ փխրուն քարերու վրայ:

3153. Քարախունկ.

Այս տեսակ խնկի զուգանիչ գրէ Բաագիրք մի՝ Մոլիպարակ (Մուղլ-ագրախ). հին Բժշկր. այլ կ'ըսէ. « Քարանխընգին գործ, որ եր մարդոյ, սուր դեղ տան » և պատրաստին ի փորանցութենէ, թէ զաղիքն քերթէ՝ զինքն ի հետ տան որ » անմլաս պահէ. օգտէ և սընգան »: — Ուրիչ Բժշկր. Թեղօշ ծառի խիժն է, կ'ըսէ: Քայրենոսի բառից մէջ Բրեյիոն բառի զուգած է, որ է Յ. Βδελιον, L. Bdellium: Խորեն. Ալխրհ. Արցախոյ Կողթ գաւառի բերք գրէ զՔարախունկ: Հիներն այս Բրեյիոն կոչուած խէժը՝ Բալասանի ծառերէն հանէին, որոց ամենէն ընտիրն էր յԱփրիկէ. Քարախունկ կ'ըսուէր, ըստ ոմանց, քարի պէս կարծրանալուն համար:

3154. Քարահունդ.

Այլեւայլ բուսեղինաց հետ գրէ Բժշկարան մի զայս այլ, ի դեղ զօրութեան մարդոյ:

3155. Քարաննուխ.

Ըստ անուանն է քարերու մէջ բուսած Անանուխ. Թուի Փ. Menthe de montagne կոչուածն: Եղուի Վաստակոց գրոց մէջ, ուր բնագիրն է Oryganum, Զուրակ, և խրատ տայ մեղուաց աչքի ցաւի դեղ Քարաննուխ ծխել (ՄՂ):

3156. Քարասերմիկ .

Չաւարի տեսակ մի, ըստ Բախտամ:

3157. Քարացունճ .

Նորոց հնարած բառ երեւի (Salvia) Եղեւպակի համար:

3158. Քարաւէ. Քարուէ. Քարաւիա .

Ըստ Ար. կոչուի և կրտսեանա, Լեւոյճ, կրտսմն, Ղրտիւնա, Խորտանա. ըստ
մմանց է Ճապոնան, Լ. Carvum. ըստ այլոց Cardamina, Ջրկոտեմի տեսակ,
Հին Բժշկը. յիշէ բնութիւնը, « Տաք և չոր է. հանէ ի փորոյ զտափակ ճիճի. .
» զփորն կապէ քիչ քան զՉաման »: Յիշէ նա և զՎայրի Քարաւէ՝ Կրտմանա
կոչելով. Ամիրտ. և ուրիշներն այլ յատկապէս Վայրի Քարաւէ անուանեն զԿրտ-
մանա. Ար. Քարաւիա Ճապոնի (Լեռնային) և Քարաւիա պարրի (Վայրի). « լաւն
» այն է (ըստ Պատէհիւնի) որ դեղին լինի. և զիւր շարութիւնն տանի Անիսոնն »:
— Հասարակ Քարաւէն թէ և ամեն կողմ գտուի, քայց առանձին տեսակներ այլ
ուեի, որոցմէ Cardamine Hirsuta կոչուածն յիշուած է ի Բարբրդ. — C. Peo-
tinata ի կողմանս Բասննոյ. — C. Huetii ի Դաշքէօփրիւ. — C. Acris ի Պին-
կէօլ, — C. Uliginosa ի Կարին. — C. Impatiens ի Հր. Կովկաս:

3159. Քարաւէ կամ Քարաւիա. Հոռմցի .

Այս անուամբ այլ կոչուի Չամանն:

3160. * Քարաւս. Բէրէֆս. — Տես Կարտս:

3161. Քարափառփառ .

Քարերու վրայ մաշկի պէս պատած Մամուռն է:

3162. Քարափի Գոչոր. — Տես Չարխտս:

3163. Քարացոս .

Ըստ վերոյգրելոյն՝ քարերու Մամուռն է կամ Գորտնբուրդն. Գալիենոսի բառից
մէջ այսոր Յ. զոյգն գրուած է Ղիս կամ Ղիքոս. այսինքն Γεωχύν, Lichen. Տես և Լոռ.
Մամուռ. — Բնակազմութեան մեր հին գրող մի կ'ըսէ, առաջինն բուսեղինաց
« է Քարաքոսն, որ մօտ ի հող, և վերջին՝ Ամրաւ, որ արու և էգ... և Քարա-
» քոսն փոշին է՝ զոր բերէ հողմն և արկանէ զքարամբք. և ցօղ եկեալ տամ-
» կացուցանէ զնա, և յուր գարնայնոյ ծննդագործ առնէ վամանակին, և լքու-
» սանի, և ի զիշերի մինչեւ յերրորդ ժամ աւուրն սնանի, և կենդանի է, և
» անդր յառաջ մեռանի՝ մինչեւ ցերեկոյ, և դարձեալ կենդանանայ »:

3164. Գարբել.

Նոր հնարուած բառ Saxifraga անուան թարգմանութիւն. — Տես Ծնկածաղիկ.

3165. Գարի Բանջար.

Քարոս տեղուանք բուսնիւն յայտնուի. այլ տեսակն: Յիշած է բառհաւար մի:

3166. Գարիզունի? Ծաղիկ.

Յիշուած ոչ հին Բժշկարանի մէջ. Թուի Ղարիկոն, այսինքն Agaricus, որ է Սունկն, թէ և սա յայտնի ծաղիկ չունի:

3167. Գարիժանգ.

Այս այլ նոյն կամ նման է վերնոյն, և լսուի ի Խոտուշուր:

3168. Փարխնժորի.

Անունն Խնձորենույ է, բայց ի Խոտուշուր ասարեք տեսակ պատու մի հանչուցուի. նման Ղզուիթի (Թ. 1832). սակայն այսօր պէս շատ կուտ չունի, այլ հաս մի:

3169. Գարխոս.

Համարուի զխաւոր տեսակ մի Շամպդիտակի (տես Թ. 2268). Լ. Symphytum, Officinale կամ Consolida major, Փ. Consoude officinale, Grande Consoude, Herbe du Cardinal.

3170. Գարկժեղ կամ Գարժկեղ. — Տես Եղանա:

3171. Գարկողն.

Քննելու արժան անուն, յիշուած ի նոր բառհաւարէ:

3172. Գարհացի.

Այս ոչ անունէն յայտնուի Հացի ծառի տեսակ մ'ըլլալ. կարծր փայտով, որ շիտակ կու բարձրանայ, ճիւղերն այլ դէմադէմ: Յիշուի ի Տարօն:

3173. Գարձանձն. Գարածանձ. Գարածանձր.

Թէ հին Բժշկր. և թէ Ամիրա. կ'ըսեն թէ նոյն են սա է և Հալպրա, որ Թերեւս Ար. անունն է. բայց ինչ ըլլալն անծանօթ է ինձ. մի թէ Քարաբոն մի, ձանձախարիք բառին մասամբ զուգուած:

3174. Քարնին. Քարջին. Քարջնի.

Տեսակ մի Տանձի, որ աշնան վերջերը հասուննայ. ժանօթ ի Տարօն, յԱրցախ:

3175. Քարնլավարդ.

Հնկեկ Բժշկարանի մի մէջ այսպէս գրուած է, կէս մթխալ դեղ. բայց մեր հնագոյն Բժշկը. գրէ այնոր տեղ լազվարդ քար, զոր ուրիշ այլեւայլ դեղոց հետ զուգեց « ծեր բժիշկն Պաղտատցի, ինձ Հեթմոյ Սեւաստիօսիս, (կ'ըսէ Բժշկա- » բանիս տէրն), միջաց ցաւու, կոնջի և այլ այսպիսեաց »:

3176. * Քառնապ. — Տես Կաղամբ Հոսփոցի:

3177. Քարնշի.

Անունն Կի է, բայց ըստ Խոտուղրեցւոց վայրի Ձիթենի է:

3178. Քարղնշուշ.

Քարաննուխն է. Թ. Դաշ Նանեսի, լսուի հիմայ այլ ի Հայս:

3179. Քարքրուկ.

Հին թէ նոր անուն՝ չգիտեմ, բայց տրուած է Յ. և Լ. Cotyledon բուսոյ, զոր Պէյթ. այլ նոյնպէս գրէ كوتيليدون, Ամիրտ. « Ղոստռոշիոն, որ է Զարայիթ » ըլ-միտք, كوتيليدون, որ է Հայր ըլ-ալամն. և ասեր են ոմանք թէ բոյս-մն » է որ զՀայր ըլ-ալամին գրանն առնէ. և իր տերեւն և տակն զքարն (մար- » մնոյ) կու հալէ », եւայլն. Պէյթար կ'ըսէ, թէ կոչուի եւս Երիցու ականջ, ان الاضراس. Ազան ել-քասիս (քէշի) — Ըստ Քարգմանին բոյսն է Cotyledon Umblicum կամ Saxifraga Media կոչուածն: Քանի մի տեսակ խոտեղէն կամ փոքր Թուփեր են թանձր տերեւներով և հասկածեւ ծաղկներով:

3180. Քարուր վարդ. — Տես վարդ:

3181. Քարանաջ. Քարնիջի. Քակոնից. Քանքանան. Քարունից.

Հին բառգիրք մի կ'ըսէ, « Լեռնացի պտուղ է, որ է Մարգի ընկոյզ ». ուրիշ տեղ այլ, Մորմոյ պտուղ: — Ամիրտ. « Ինքն խոտ է, և իրմով եղ ներկեն կարմիր. » հալարըտիկ է. աղէկն կարմիր պիտի », և այլն. — Բառգիրք մ'այլ կ'ըսէ. Կարմիր Ենիագոյ է: Ուրիշ Բժշկը. մի յիշէ « Քարունիցի Լուր, որ է Պրիւկն »: — Ուրիշ մ'այլ. « Ինքն կարմիր միրգ մ'է յ'անի մէջ է, և ինքն Ենիագոյի ցեղերուն է, և » լաւն այն է որ կարմիր լինի... և տերեւն աչաց ցաւին օգտէ. և իր հաստն օգտէ » ակաւային ցաւութեան. և (Թէ) Լուրն քամեն՝ օգտէ ակընջին ցաւուն »: Տես Յս. կորուկ:

3183. Քաֆուր.

Ար. كافور. Հոտով և պէսպէս գործածութեամբ ծանօթ սպիտակ և սառնո՞ւրակ պինդ խէժ է, ծառէ մ'առաջ եկած, որ Փ. կաշուի Camphrier. « Երեք ցեղ » է, կ'ըսէ Ամիրս. Ղայրսոյի. Ըսուպահի և Չահի. լաւն այն է որ Ղայրսուրի « լինի »: القيصوري, յանուն Քիսուր երկրի Սէլլան կղզոյ, ըստ Պէլթարայ . « որոյ երկրորդ տեսակը Ռիխարի գրած է (ի տպագրին). ասոնցմէ զատ ուրիշ տեսակներ այլ յիշէ. անոր համար կ'ըսէ Ամիրս. « Ասացել է գրոցա շինողն՝ թէ շատ » ցեղ Քաֆուր կայ, և ամէնն ի Հնդկաց կու գայ. . . Եւ Քաֆուրի ծառն սպիտակ » է՝ որ ի կարմրութիւնն ի մօտ է, և կայ որ Նիլին գոյնն կու նմանի, և շուտ կոտորի, » և Քաֆուր՝ զամսին նման է, ճե, մակ, և ծառին կեղեւին միջէն կ'ելնէ, երբ » զծառն կոտորեն. հանց որ գիւյտին կեղեւներն ճղքես, ի միջէն ելնէ Քաֆուրն » : — Շատ տեսակ բժշկական օգուտները գրելով՝ կ'աւելցնէ. « Մատուճուէ ասէ, » թէ՛ մարդ-մե տեսաք որ վեց մթիսալ Քաֆուրն՝ Իրեք անգամ կերաւ, զստամաքին » ուժն փոխեց, և զկերակուրն չէր մարսել. . . և այլ իսկի զեն շեղաւ » : — Յիշուի սառնձին Քաֆուրի տակ և բացատրի Ուշուի կամ Ուշուրի կանաչ :

3183. Քեամմար ?

Ուտելի բանջարեղէն մի՝ նշանակած է բառհաւաք մի :

3184. Քելիս .

Բանջարեղէն թուփ մարդաչափ բարձր, և բազկաչափ հաստ որձայով, զոր կեղեւելով խաշին աղին և ուտեն թէ և լեղի. նման է Թերիաչի: Տերեւներն Ուրթոյ տերեւոց շափ մեծ և աւելի շատ անկիւններով և որածայր են :

3185. Քեղ .

Անուամբ մօտ վերինին բայց ազգաւ և ձեւով տարբեր. հին Բժշկարան մեր ստորագրէ այսպէս. « Քեղ, զօրութիւն ունի հովանի. Հիպոկրատէս՝ Պողիպոն կոչէ » զդա (Βολβιον կամ Βολβινη), ի գետեզր բուսանի. և իր նշանն այս է. բազուկն » յերկայն թղաչափ. տերեւն լայն և գէր, նման Ամեռակին. և ներքի դեհն կար » մրազոյն. ծաղիկն ծիրանոյն. հունդն բոլորակ ներքոյ տերեւին. կժու զէդ » Պղպեղ. տակն զէդ ձուք. և է պիտանի (!). ապա քաղել և շորջընել զդա ի հով » տեղ, և ճիճն շրջել. եք պիտենայ՝ աղա և մեղրով շաղէ. և ճակագի աղով ի վե » րայ այտուցի դնել՝ օղջրնէ, և ցանէ ի վերայ շոր վիրի, սրբէ և զփուտն ուտէ, և » որ ի բերան շար վէրք են՝ օգնէ. և գինով խմել՝ զօրովայնն օնգէ. և զալար ծե » ծածն զաղտեղի վէր և զցեց՝ որ է գէշ ցան, մէնակ սրբէ: Չհունդն եփել և » խմել գինով զփոռն լուծէ, և զմաղձ և զմաղաս հանէ, Եւ ոմանք ի թան դնեն » զդա » : — Ասար բժիշկ յիշէ Քեղոյ հոռնց և զուգանիչ գրէ Կապեղեղ և Քալմ, որ և Անճիտան, տես զայտոնք թ. 119: Իսկ Ստ. Թոշքեան գրէ. « Քեղ, խոտ, Քո-

1. Հին գրով զլիւի վրայ ու գրուած է, իբր անպիտան և ոչ պիտանի նշանակելու կըրնար թերեւս գրելի կարծեւ ասոնց տեղ, պիտի ապա քաղել, և այլն :

» Եւմորի տեսակ է, որ զինքն ընդ արեգական՝ ի ծագմանէ մինչեւ ցմուտ նորին,
» Թէպէտ և ամպ լիցի, շուրջ ածէ. Լ. Chreston ? » Այսպիսի Լ. անուն բուսոյ ան
ծանօթ է հիմա: — Հին Բժշկարանի յիշած Ե. անունն և բուսոյն արմատի ձեւն՝
տան կարծել թէ ըլլայ տեսակ Սխտորի Allium Cera. ֆ. Ognon.

3186. Քեղաքարոս.

Ըստ ոմանց է Ագաւաքեղն (Թ. 11). կամ Վայրի Լախուրն, Ե. Οροσεινον, Լ.
Arium montanum. Պէլթար այլ գրէ Ե. բառը՝ Օրեւապոլիսօս *اوريسكيا*, բայց
ստորագրէ քերէֆս *سدر* անուամբ, որով և Ամիրտ. « Քարաշու որ է Քարաշիզ,
» Աժուց և Վայրի, և Հոսեցի և Ջրի, և լաւն այն է որ աժուց լինի. . բացող է, և
» զհով գլխացաւութիւնն տանի, և զքերնին համն աղէկ առնէ, եւ այլն: Ատէ Պտ.
» Թէ ինքն շատ ցեղ է, Աժուց և Վայրի և Եամի և Լեռան և Երանեցի և Մարեղի ?
» (Մաղրըպի՝) և ցեղ մի այլ կայ որ ի ջուրն կու բուսնի, որ է Ճարձիր ըլ-մային »:
Տես Կարոս ջրի և Լախուր:

3187. Քեղասերմ.

Ճերի գեղ գրուած է. հաւանօրէն վերայիշեալ Քեղի հունսն է:

3188. Քերքէշ.

Բաշխտակն է. տես զայս:

3189. Քերքերթ. Քերքերթ.

Հին Բժշկ. գրէ. « Սիլիոս, Քերքերթ, այսինքն Ուլպանտակ », Լ. Silphium.
Տես Անճիւսան:

3190. Քըլմատ.

Այսպէս անուանեն ի կեղի զՍինձ խոտը. տես զայս:

3191. ՔԹան. — Տես Կտաշատ. Վաշ.

3192 * ՔԹիրա.

Տես Գաղի խէժ: — Բժշկը. մի գրէ. Լ. Տրակակոտում. փոխանակ Tragacantum.

3193. Քիզ. Քիզիզ.

« Զարլիր. Կարմիր Հունդ », ըստ Ասարայ. Տես Ճարձիր: — Կամարկապցին
գրէ, « Քիզ, Քիստ. Տեկ քիքեկի, Մարզանկուշ »:

3194. Քիմ. Քիմէ? — Տես Գերբի:

3195. Քիմիա Ճաղիկ.

Յիշուի Սանոյ կողմերում, այնոր Դիւցազն Մէհէր Դաւթի բերդին մօտեր

քարոտ տեղուանք փոքրիկ բոյս մի, որոյ տերեւներն ի սեւ քլտող կ'ըսեն տեղացիք, և անոնց միջէն երկու վարդի կոկոնի նման ծաղիկք կ'եննեն, որ գիշեր ատեն հեռուէն ճրագի լուսոյ պէս փայլին, մօտանց՝ ոչ. զօրաւոր հոտ մ'այլ ունենալով մեռանի ծաղկանց մէկն համարուի: Ամառ կու ծաղկի, աշնան կու ցամբի: Թուի Մխ. Գոյի Ախրիզանն. տես թ. 38: — Ասկէ յարմարցուցած և առասպելած կ'երեւի Քիմիաստան ճաղիլին. որ « մէկ, ծաղիկ » է, տակ ունի շրտ թուփայ, խաչանման սփռի ի վերայ երկրի, և եզրն թփին » մանար ծաղիկ ունի՝ որպէս առիւն ծայր. և ի վեր ծաղիկն շորս մանուշակա » գոյն և ըռանկ կարմիր որպէս արուն կարմիր. յորժամ ի ձեռաց երեսն տաս՝ » այրէ. թէ զծաղիկն մեղրով ուտես՝ ի հաստուն լինիս! Թէ զծաղիկն ի կաթն » խառնես՝ իւղ դառնայ. և թէ գինքն ի հետ քո պահես՝ լաւ է ամէն բանի ի » մաստութեանն »:

3196. Քիսամն.

Որ և Քրոշնայ. Սր. Քրոսան *αἰνυκ*. - *L. Orobus Tuberosus. Φ. Orobe.*
 « Քրոշնեա, ըստ Ամիրտ, որ է Քրուշնան, և լաւն այն է որ սպիտակութիւն » քլտէ. տաք և շոր յերկու տրճ. ճէ կու տայ և կու բանայ, և գերեսն աղէկ » այնէ և զմանն կու տանի, և կու կարմրեցընէ գերեսն... և Հոռոմն Աղքանիս ? » առէ և ի Շիրազ Քսանակ, կ'ասեն: Եւ ինքն հապ է՝ որ համն ի Մաշին համն » և ի Ոսրին համն ի մէջն է, և գոյնն մթնագոյն, և յորժամ կեղեւեն՝ Ոսրին » գոյնովն լինի, և որ կտուած լինելով զպախրէն քան զայս աղէկ գիրացընող » չի կայ. և լաւն այն է որ գոյնն ի սեւութիւն քլտէ, և լաւն ի Գմիս և ի Մար » լինի. Եւ զՔրուշնան թէ եփես, որ թէ ի հովութենէ չուկակ լինի և կամ թէ » հերքուն լինի, և ի վերայ ընուս, շատ օգտէ. և իր այիւրն զպինտ ուռէցնին » կակղացընէ. Եւ գինքն այսպէս տաշին արա. սա զՔրուշնան՝ որ ի լի լինի և » սպիտակ լինի, և ջուր լից ի վերայ, և պահ մի խառնէ՝ մինչեւ զջուրն խմէ, » և զայլ ջուրն հսն և թափէ. և տապկես որ կեղեւի, և յետոյ լաղացն ազա » և մաղէ. և սա յիրմէն երկու դրամ մինչեւ երեք դրամ. և յիրմէն պեղծ » խլտեր ընծայի. և շոր կերակուր է, և շատ ուտեցն », պէսպէս վնասէ. — Ի գիրս նախնեաց՝ Եւսերիոսի Եկեղեցական պատմութեան մէջ յիշուի այս ընդեղէնս (Գ. 2), հորոված, և Քիսամամբ ընուին զգորութիւնս տանջեցելոցն », ուր սխալ կարդացուեր է Քրոսամար. — Քանի մի տեսակ Քիսամ կայ, որոց մէկն Հայկական կոչուած է ի բուսարանից, *O. Armenus* ի Բարբրդ, և ի Քէքտազ. — Ոսկեգոյնն, *O. Aureus*, ի վարդոյ, ձիմիլ. — Կապտագոյնն ի Փարսպազ, Կովկաս. — Սպիտակագոյնն *O. Canescens*, յԱրգէսու լ. — Ճերմակն *O. Albus* ի Ռ-Հ. — Սեւն ի Հր. Կովկաս. — Մաղեղն, *O. Hirsutus*, ի Պնտոս, Հր. Կովկաս, եւ այլն.

3197. Քիքիզ.

Խառնուպն է:

3198. Քլքերտի ?

Մէկն նշանուած է այս երկրայական անունը, իբրեւ Բարտի ծառ:

3199. Գնարենի.

Յաղագս ծառոց վերնագրով հինկեկ գրուածի մի մէջ; որ միայն ծառոց անուններ է, այս այլ գտուի: Տես Քունար: Իսկ

3200. Գնարուկ.

Յիշուի յԱգաթանգեղոս ի կարգի ծաղկանց, բայց թուի վերնոյն պտուղն:

3201. ԳշուԹ. Գշուրդ. ԳշուԹը. Գշուս.

Հին Բժշկը. գրէ ս ԳշուԹը, որ է Գայլխտան, յայգիքն լինի, որպէս Բաղեղն է ո. շատ հեղ այլ յիշէ Գշուրի ունտ: Տես Գայլխտտ: Այս անուամբ

3202. ԳշուԹ (ԳէշիԹ).

Կոչեն Պոնտացիք Ստեպղինը:

3203. Գոլոզ.

Կրկայնաձեւ վայրի խոտ մի, որոյ հասկի ձեւով փունջներն Քրդաց զլիարկի նըմանցընելով այսպէս անուանեն:

3204. Գոռի ?

Ի բառ Գալիենոսի գտուի: Այլուստե Գոռի: Առաջին բառն է Ար. և նշանակէ Կղմուխ:

3205. Գոս.

« Առաջին աղգ բուսականաց Գոսն ի քարինսն » կ'ըսէ բնախոտ մի: Տես Քարաքոս:

3206. Գոսախոտ ?

Բժշկը. մի խրատէ Գոսախոտոյ ջրով լուանալ արիւնտ ըղունգը:

3207. Գոսքսուկ.

Այսպէս կոչուած է Scabiosa ծաղկն. բայց ի նորոց հնարեալ թէ ի գրոց. չգիտեմ խոտեղէն բոյս է, և այս Լ. անուամբ նշանակէ մորթի դեղ, կամ կեղ բժշկելու յատկութիւնը. ինչպէս և Հ. անունն, իբր քոսի քսելու. Թ. այլ կոչուի Ույուզ օրի (Բորի դեղ կամ խոտ): Գոյնզգոյն ծաղկներուն պատճառաւ դարմանուի ի պարտէզս. շատ տեսակներ ունի, որոցմէ ճանչցուած են S. Columbaria և Amœna ի Պոնտոս և Կովկաս. — S. Crinita ի Քարաքուշլ. Բարբերոյ, ի Մուշ. — S. Maritima ի Ռ-Հ. — Կովկասեանն՝ S. Caucasica. — S. Sulphurea ի Թէքաաղ. — S. Uranica ի Բարբերք, Ուռհա. — S. Hispidula ի Կեսարիա. — S. Olivieri ի Ռ-Հ.

Արդատական. — *S. Bicolor* (Երկգոյն) ի Վարդոյ. — *S. Palæstina microcephala* ի Մակ. — *S. Rotata* ի Մանախ, Սովսէթ. այս տեսակին մէկ զանազանեալն Միւրանեպակ *Porphyrostephana* կոչուած՝ գտուի ի Մանախ: Առանց տեսակի որոշման յիշուի Քոստուկն և յԵրեւան, Էջմիածին, Համէն, Խոտուշուր, Արտահան:

3208. Քորոս ?

Յիշուի յորադրի (Աղբիւր, Զ, 333):

3209. Քունար .

Բժշկարան մի գրէ. « Նապի, որ է Պ. Քունար. և Հունայն ասէ, թէ ինքն սաք » է. և ոմանք ասին, թէ հով է և գէն է. և թէ չորնայ՝ հով և գէն լինի »:... — Տես Նապի, ուր բացատրուած է ինչ ըլլալն. յիշեմք այս տեղ որ ըստ բուսաբանից ոմանց՝ է *Paliurus aculeatus* կոչուած ժանտափուշն: — Ըստ Պարսից՝ Նար՝ կրակ նշանակէ, Քունար է կրակին առաջին կայծն:

3210. * Քունդուս. — Տես Յմտատակ:

3211. Քուշմամ ?

Բառհաւաք մի նշանակած էր իր ցանկին մէջ:

3212. Քուշնա.

Ամիրտ. յԱնգիտաց անպէտն գրէ, թէ սա Պաշտանն է. կամարկապցին, « ինքն Հայոց ճուլպանան է »: — Քարոզգիրք մի. « Համարն՝ որ կոչի և Քուշնայ. » որ և անասնոց է կերակուր »: Վաստկ. գրոց մէջ այլ շատ տեղ յիշուի: Ինչ ըլլալը նշանակած եմք Քիսամ անուամբ. տես և ճուլպան:

3213. Քուշնիկ .

Կամ վերոյգրեալն կամ տարբեր բոյս, նշանակած է բառհաւաք մի:

3214. * Քուշտ .

Ար. Քիւչիթ. — Տես կոստ և կապարասի, և Դառնֆուշտ: — Գուցէ այսպէս պէտք էր գրել, և ոչ

3215. Քուշք ?

Ինչպէս գրուած է ի Բժշկր. գեղ լերդի, չոր Չութի, Մուռի, Հուլպայի և Պըզպեղի հետ խառնած:

3216. Քուշուլայ կամ Քուշուլա .

Կամարկապցին գրէ. « ինքն խտտի տակ է, որ ագաւաքն ուտեն և խեւանան »: — Բժշկր. մի գրէ զուգանիչ Մարտի բիրեսք, որ ի նորոց գրուած է Տոփայի բիրեսք (Պատկ. Գ, 303): Կարծուած է նա եւ Թնայի սունկն (Թ. 796). վասն զի Ամիրտ. գրէ, « Քուշուլա որ է Ազարիդի »: որ է *Agaricus*.

3217. ԳՈՒՈԱԹ. — Տես Պրաս:

3218. ԳՈՒՈԱԹ վայրի.

Կոչի և Տիտան. — Լ. Empotrum, գոր Պէյթ. գրէ ١٧٧٤, 1, յորմէ Արմիրս. այլ « Անպիտրոան, որ է Աֆիկիկոն? Ինքն ի լերունքն կու բուսնի, վայրի » Գրասաք աանն, և տերեւն ի Քուռաթ կու նմանի, և ի քարերուն ի մէջն և » ի ծովեզերքն լինայ, և թէ գինքն Դաւիթ մարգարէի մեղրովն խմես (մեղրա- » Զուր ըստ Պէյթ.), զպալղամն և զսաֆրան լուծէ. և Հո. Զիկիկոն ասէ »:

3219. ԳՈՒՐԱՊԵՐ.

Լսուած է ի կողմանս Ղրիմու, բայց չկարցանք ստուգել ինչ ծաղիկ ըլլալը:

3220. ԳՈՒՐԻՄ.

Ազգ մի ընդեղինաց դիմացկուն, մարդաչափ բարձր, տափակկեկ տերեւնե-րով. հասիկներն մեծ քան զկորեակ, անոր նման հասկով, որ Բրնձի պէս կ'ե-փուի յապուր, և հիւանդաց յարմար դատուած է. — Լ. Holcus. Փ. Houique կամ Houque. Տասնի չափ տեսակներ ունի, որոցմէ յիշուին ի Պանաս և ի Հր. Կովկաս եւս. H. Annuus և H. Laetatus մերայինք յիշեն ի Կարմիրք:

3221. ԳՈՒՐՈՒՄ?

Ամիրս. գրէ, « Որ է Քիմն (տես զայս, թ. 3194) որ է տակն Խաղողին? և » թէ գիր ճղերն ծեծես և սպեղանի առնես՝ զգլխացաւութիւն տանի՝ որ ի տա- » քութենէ լինի. և իր ճղերուն տերեւն զերեսն կարմիր կու առնէ, և զակաան » կու ամբրցընէ. և իր տերեւն օգտէ արուն թքնելուն... Եւ գիր ճուլն՝ որ գա- » բունն կու յօտեն և յիրմէն Զուր կու կաթէ, առնուն զայն Զուրն, և կայ որ » ի յորձան կու կաչի գէգ խէժ և կու պաղի. և թէ գինով խառնես և տաս որ » խմէ, զքարն կու հալէ. և լաւն այն Զուրն է որ ի ճղերուն ի վայր կաթէ. և » իր դալար ճղերն զստամոքն ուժովցընէ, բայց զխաչակն կու չորացընէ. Եւ թէ » գիր ճղերն այրես և զմոխիրն առնուս և քաղիսով օծես անկան և որ կոտրած » և ընկած լինի՝ այնոր այլ օգնէ. և օձահարին այլ օգնէ », եւ այլն. — Պէյթար և Ամիրս. տարբեր բոյս մ'այլ յիշեն, նա քչ՝ Քորմ անուամբ, սա Ղոռ-րիմ, որ և ի « Չինարին ծառն կու նմանի, կ'ըսէ. և տերեւն նման է Նշնոյ » տերեւին, և փուշ չունի, և Սօնուպարի պէս միրգ ունի. զտերեւն ուղտն » և պախրէն կու արծէ. և զփայտն ի նաւն կու դնեն և կու տանին ի քաղաքն, » թիկու այրեն ի փուռն. և թէ զտերեւն լոսնն երկու դրամ և խմեն մուռով, » յայն պահն կու կապէ ո: Ծովու ջրի մէջ բուսնի Ղուրուան ըստ Պէյթարայ, Լ. այլ կոչուի Soura marina.

3222. ԳՈՒՐ.

Հասարակօրէն փշոտ և ծեծելու գուազան նշանակէ, բայց մէկն նշանակած է Իբրեւ յատուկ բուսեղէն մի:

Քուքնար. — Տես Կռակար:

3333. Քոքոռոջ.

Սալաձորեցին յիշած է զայս, յետ շորս ամենէն առաջ բացուած ծաղկանց. յիշուած է և յօրագրի (Մշակ, ԺԸ, 88): Տես Բերդօշ:

3334. Քոեկ. Քոեկան. Քուռիկան.

Յիշէ հին Բժշկը. զուգանիշ Շախրունի: Տես Ժախ և Իշկաթնուկ: Իսկ քեռ. կանի տակ զուգուած է Կաղնջանի տակին, որ նոյն է ընդ Շախրունի և այլոց:

3335. Քսին?

Նշանակած է բառակապ ունի:

3336. Քսխայ.

Տես ինչ որ յիշուած է Սոխ անուան տակ:

3337. Քսուկ.

Յիշուի Փիլոնի Նախախնամութեան գրոց թարգմանութեան մէջ. « Մորենիք » և Կանկատունք և Քսուկք՝ առանց մշակութեան բուսանին ». մեկնիչն այլ գրէ. « Կանկատունք՝ Կառափուշն (է), Քսուք՝ Սուր փուշ »: Տես Սրափուշ:

3328. Քսուս. — Տես Քշուս, Քշոք և Գայլատ:

3329. Քրմուռ.

Այլ ևս այլ նիւթոց հետ դեղ գրուած է թոյլ փորցաւի. բայց ոչ թուի բոյս, այլ Cromore Գինուոյ մրուր դեղն:

Քրսամն. — Տես Քիտանն.

3330. Քրքում.

Որ Արեւելեան բառով շատ հեղ Չաֆրան և Չափարան կոչուի ի գիրս և ի խօսս մեր. կոչուի և Հախանն. հանրածանօթ, այլ ոչ հանրածաւալ ամեն և լաւ տեսակքն. Ամիրտ. գրէ. « Ինքն ցեղ-մն է. լաւն այն է որ կարմիր լինի. և ա. » նուշահատ լինի. հալող է և եփող, և զգլուին ծանրացընէ և քուն բերէ. ըզ. » սիրտն ուժովքընէ և խնդացընէ. և հանց՝ որ յառաւել խնդալուն՝ սպաննէ: » ... Ասէ Պտ. թէ Չաֆրան որ է Հաչի, և Հ. Հախանն ասէ (և շատ Ար. ա. » նուններ այլ յիշէ). և լաւն այն է որ ի Խորասանու գայ, և այլ լաւն Հոռմցի » լինի և Յուանկի և Մարցի »: — Ըստ Յ Κρόκος Լ. Crocus կամ Crocum, որ և տառագարձութեամբ գրուած է Հ. Կրասկան (Կրօկոսն): — Իբ անոյշ հատոյն

և զեղեցիկ ու պէսպէս գունոց համար, ի հնուց թէ ի Ս. Գրոց և թէ արտաքին զրոց, մանաւանդ արեւելիւայց, շատ հռչակուած է այս թօնկ սոխաւոր ծաղիկս. որով ոչ միայն պէսպէս իմաստով բարդ բաւեր կազմուած են մեր լիզուի մէջ (ինչպէս, Քրքմագոյն, Քրքմատեսակ, Քրքմացան Քրքմաւէտ) այլ եւ իրական բաներ, Քրքմայ խաշու (ուտելիք), Քրքմեղ (Քրքուի եղ, յիշուած Խորեն). Աշխրհգր. մէջ) որով Քրքմեղ զհերս և զմօրուս (կազկանտ. Գ. Ե): — 30 կամ 40 տեսակք կան Քրքմոյ. որոց շատն գտուին ի Պոնտոս և սահմանակից նահանգս. — C. Vallicola (Քրքուժ Հովտաց) ի Լ. Կարնոյ. — Ք. Հայոց կըրնայ կոչուիլ C. Karduchorum անուանածն, զի գտուի ի սահմանս Մոկաց և ի Շքրուան. — C. Cancellatus ի Թ-Հ. մօտ ի Գուզլա շայ. — C. Ancyranus, Անկիւրիա, Մարաշ. Արգէոս Լ. — C. Tournefortis ի Թ-Հ. — C. Speciosus, ի Խուլադ Լ. ի Գարապաղ:

3231. Քցմի.

Որ և կժիպի. ի Քցիմ բաւէ, որ նշանակէ մատին վրայ բուսած աւելորդ մասն կամ վէրքն. Թ. Լ. Paronychia, Փ. Panaris, որ բժշկուի այդ խոտով կամ փաքրիկ թուփի տերեւներով. Որ. այլ նոյն նշանակութեամբ կոչուի Հայոցի բոտանիկս. Թ. բաւն այլ գրէ Պէյթար՝ Ծարունոշիխ, كرفس. — 40 ի չափ տեսակք զանազանուած են. որոցմէ՝ Քրդաց կոչուածն, Kurdica, գտուի ի Թ-Հ. քանի մի տեսակք այլ Անթապի և Կիլիկիոյ կողմերում:

3232. Քօլօզիկ.

Դեղին ծաղիկ մի է, ըստ Մանան. (եր. 452): Տես և Քօլոզ, Թ. 3203:

3233. Քօշմօրուք. Քօշմօրու. Քոշմօրուք. Գոնմօրուք. Գոնմօրու.

Նոյն նշանակութեամբ կոչուի եւս Նոխագի մօրոնք, Այծոս մօրոնք. Որ. այլ նոյնպէս, Լիկեեր էլ-քիս سبب السبب. Ամիրտ. գրէ Լիկեար ըլ-քիս, որ է Քօշու. » բուռն. ինքն խոտ-մն է որ ի Գուռաթ կու նմանի. տաք և չոր է քարճ. կակուղ է, » և զկուան կ'ուժովընէ, և զթուլութիւն տանի, և զակնջին աղտ և զարուն » թընելն տանի, և կրծոց և թոքին խոցերուն աղէկ է, և զստամոքն կ'ուժովընէ, » և զփորն կու կապէ... Ստէ Պտ. Թէ ինքն բոյս-մն է... որ ի Լատանի ծառին » ներքեւն կու բուսնի, և ի գետնէն կարմրուն կ'ելանէ. և Պ. Ասպարանգ կ'ասէ. » և Որ. Զանապ ըլ-խալ (Զիու ագի), և ի Սպահան Շանաք կ'ասեն. և ինքն » զքթին արունն կու կտրէ. և իր փոխանն Վարդին հունտն է, կամ իր չքքն » կուլինարն »: — Ռամկօրէն հիմայ կոչուի ի Հայս Քօւ-միրոնք կամ Քօւի մօրոնք: — Լ. Tragopogon, առած է յունարենէ որ վերոյգրեալը նշանակէ, Трагипогон. Փ. Salsifis, Ռ. Козелець. — Քօշմօրուքն Բաղադրեալ բուսոց ցեղերէն Սինձի ազգակից տունկ մ'է. (Scorzonera) երկայն թանձր և մալի արմատով, որ կ'ուտուի. բայց կայ նաեւ Լեղուահամն: Շատ տեսակներէն՝ գտուին մեր երկրին կողմերում, T. Longirostre abbreviatum ի Թորթում, Մանախ, Ճիմիլ Լ. — T. Collinum յերեւան, Որմի, Պագու. — T. Coloratum, ի Մանախ, յԱտրպատա կան. — T. Pratense (Մարգաց) վանայ կողմերում. — T. Angustifolium (Նեղտե.

րեւի) ի կեսարիա, յԱնկիրիա. — T. Buphtalmoides ի Բաբերդ, Կիւմկիւմ, Քա-
րապաղ. — T. Stenophyllum, ի Մուշ, Բաբերդ, Այնթապ. — T. Reticulatum, ի
Կարին, Մանախ, Թորթում. — T. Paucillam ի Քանձակ, Տփղիս, Խոյ. այս տե-
սակիս Մաղկաբեր մ'այլ ճանչցուած է յիլիճէ Կարնոյ. — T. Aureum (Ոսկետե-
սակ) ի Պոնտոս, Չաղըրան տաղլ, Հին Բժշկարանն շատ հեղ յիշէ « Քոչմորուաց
« Քանուքս, որ է Տարարիք », ըսելով:

3234. Օղածաղիկ.

Յիշուի ի կողմանս Սերաստիոյ, հաւանօրէն և յայլ գաւառս:

3235. * ՕՌԵՄՈՆ.

Ըստ Ռոչքեանի, « Խոտ՝ որ տերեւս և ծղոտ ունի նմանս Սամթի. արմատն է
» յոյժ կծու, բայց օգուտ ատամանց ցաւոյ, եթէ ծամեսցի. Լ. Pyrethrum ». ու-
րեմն է Ակրկարհա տես զայս, Թ. 44. և Իգարող:

3236. ՕՌԽՈՐ. — Տես Իկերի:

3237. Օլօբեկ կամ Ոլոբիկ ?

Նոր բառհաւաք մի նշանակած է:

3238. ՕՃՄԱՆ ԾԱՈ.

Բալասանի պատշաճի, իբրև բժշկական օժանելիք. Ազամայ ապաշխարութեան
և մահուան պատմութեան մէջ կ'ըսուի, որ աղաչեց զԵւա երթալ աղաչել զԱս-
տուած, « զի թերեւս տացէ ի ժառոյն ՕՃման, որ այնու օժնէք զանձն իմ, զի
» դիրսանամ ի ցաւոցս ». բայց, աւանդ, Եւա՝ Սեթի հետ երթալու ատեն՝ Բեհեմովթ
գազանն իրենց արգել կ'ըլլայ, և իրենք չդարձած՝ Աղամ կու վախճանի. կամ,
հրեշտակէ իմանալով որ բժշկութեան ճար չկայ՝ տխրութեամբ դառնան:

3239. ՕՃԱՂԵՂ. Օժի դեղ. — Տես ՕՃի Սխտոր:

3240. Օժի ԹՈՒՐ.

Լսուի ի Խոտուջուր, ոմանց Թուի Լ. Gladiolus, զոր յիշած եմք Արանդուպա-
րանդ անուամբ: Բայց ծանօթք կ'ըսեն սլաքաձեւ տերեւներով եղէգանման բարձր-
կեկ բոյս մի, ոմանք այլ վայրի Շրէշը համարին:

3241. Օժի խաղող. — Տես Լօշտակ:

3242. Օժի ԾԱՈ.

Տես ՕՃի Սխտոր: Ար. Սոսի էլ-հայս: Բժշկարանք մեր Զնդիանա (Gentiana)
դրեն զսա, որ է Բոգ. իսկ Թարգմանիչն Պէյթարայ համարի Teucrium Scordium.
Ամիրտ. զնոյն զուգանիչ գրէ Սոսի պարրի, որ է վայրի Սխտոր. տես Խստոր
վայրի: Նոյն Թուի և

3243. Օծի կամք.

Որ ըստ իտաուլրեցւոց կազնչանն է:

3244. Օծի Պահուկ.

Նոր բառհաւաք մի նշանակած է:

3245. Օծի փայտ.

Նոյն իմաստով Ար. իւտ էլ-հայա **عجلى** Եւ Լ. Ophioxylam. « ինքն ի » Մատուտակ կու նմանի, կ'ըսէ Ամիրտ. ամուր կու լինի, և ի համն շեղութիւն յ կայ. և թէ ծխես սուր ծեծես շատ հատ ելնէ. և թէ կէս դրամ խմես՝ օգտէ մա- » հացու դեղոց. և թէ ի ձեռքդ բռնէ և օծես՝ օձն յայն մարդն չի մօտենայ. և զոր » օձ որ տեսնու՝ այն օձն ի տեղացն չի շարժի և ի քուն լինի. և թէ ծամեն և յաֆի » օձի բերանն թքնուն՝ մեռնի »: — Գրեթէ բառ առ բառ թարգմանութիւն է այս ի Պէյթարայ, որ կ'աւելցընէ, թէ ի Սուտան Ափրիկոյ գտուի այս փայտս. բայց ինչ ցեղ ըլլալն յայտնի չէ, մանաւանդ որ յարեւմուտս այլ եւ այլ տեկոց այդպիսի անուն տրուած է:

3246. Օծխի. Օծխուկ.

Փշոտ փոքրատերեւ խոտ մի է՝ Երեքնուկի նման, ծանօթ ի Մուշ, յԱլաշկերտ:

3247. Օծկակաւի կամ Օծակայի.

Ի բառս Գալիենն. զուգանիշ գրուի Անեմոնի: Տես Պուտ: — Նոյն բառից ուրիշ օրինակի մէջ կայ գրուած և Օձկուտի:

3248. Օծտակ.

Հին Բժշկարանն ուրիշ նիւթոց հետ զայս այլ խառնելով գեղ գրէ փորան- ցութեան:

3249. Օղին. — Տես Շրեշ, և Ողեխակ. Թ. 2389:

3250. Օճառախոտ.

Թռչեանն վկայութիւն բերէ ի Խրատուց Նեղոսի. « Սրբէ զաղտս Օճառա- » խոտն. մաքրէ գրիծս մեղաց՝ արտօսը ոգեշահ. Strathium ». Այս Լ. անուամբ բոյսն յիշուած է Հ. Յմախտակ բառիւ:

3251. * Օնոսմա.

Այս Բ. բառը Ամիրտ. սխալ կարդացեր է ի Պէյթար, փոխանակ Լաւոյց, » տառը թողով Ալեքսան գրեր է. այսպէս կարդացեր են և ամանք յԵրոպացւոց. ըսածն է. « Թ. Տղայ ձգող աստն (այս խոտիս). և տերեւին յերկայնութիւն չորս

» մատ և լայնքն մէկ մատ կու լինի. և ի գետինն կու ճապղի և կու փռվի. եր
 » բուսնի՝ ծաղիկ չունի և պտուղ չունի. և տակն կարմիր կու լինի. ի շոր տեղեր
 » կու բուսնի »: — Բ. բառն Լ. Onosma՝ իշհոտոտ նշանակէ, իբրեւ անարգ կամ
 իչոց ակործելի բոյս մի, որ արեւմտ. և միջին Ասիոյ կողմերում շատ գտուի, և այլ
 եւ այլ տեսակներ ունի՝ բանի հկող ի դեղորայս. մէկն կոչուի Հայկական, Օ. Ar-
 menum, ի Թ-Հ. — Օ. Setosum (մետաքսեայ) տեսակն ի Նախճաւան, Պաղու.
 — Բուզմածաղիկն Օ. Polyanthum և Գաճաճն Օ. Nanum յԵփրատայ հովտի, Փ.
 և Մ. Հայոց միջոց. — Օ. Aleppicum (Հալէպի) ի Հալէպ, Պիր, Ուսհա. — Օ.
 Rostellatum ի Սնճար Լ. — Օ. Sericeum ի Բարբրդ, Կարին, Մուշ, Պորժում, Ա.
 մասիա. — Օ. Flavum ի Սնճար, յԱտրպատական. — Օ. Rupestre (Ապառա-
 ժուտ) ի Սպեր, Թորթում, Պայէղիտ. — Օ. Microspermum. ի Կարին, Սպեր,
 Գարապաղ, Ատրպատական. — Օ. Procerum և Օ. Gracile ի Ռ-Հ. — Օ. Chlo-
 rotrichum ի սահմանս Վանայ. — Օ. Burgæi ի Մանախ. — Օ. Rousæi ի Մար-
 տին, Այնթապ. — Օ. Stellatum ի Բարբրդ, Պոստոս. — Օ. Auriculatum
 յԱմիդ, Ուսհա, եւայլն:

3252. Օշ. Օշակ. Աշակ. آشق

Արմատրառն Օշ գրուած է հին Բաագրոց մէջ, զուգանիշ՝ Ասյոյի և Վտառ, զոր
 Ամիրտ. « գրէ. Վշակիս և Արարն Քալախ սաէ. ինքն խէժ է և սպիտակ, տաք է Բ տրճ.
 » և չոր է Ա տրճ. հալող է. և յորժամ տրորեն, և օծեն, օգտէ խանաղարին և
 » ըխտաւորին, և զկուպին Թանձրութիւնն տանի, և զաչից տաքութիւն, և զմանն
 » և զսպին այլ տանի. և զկուրծքն և զԹոքն ի պիղժ գիճութենէն յիստրկէ. և զեր-
 » կան և զտափակ ճիճին հանէ, եւայլն: Մինհաճին տէրն սաէ, Թէ Տարտախիս
 » խէժն է: — Օշակի բոյսն Հովանեկաձեւից ցեղերէն է և նման Նարդոսից, պը-
 տուղն Ընկուզի նման, հոշակուած յարեւելս վերոյիջեալ խէժին համար, որ է Լ.
 Ammoniacum, բոյսն այլ Dorema Ammoniacum. գլխաւոր տեսակն Պարսկաս-
 տանի և Թուրքաստանի ամայի տեղերում գտուի. — Լերկ կոչուածն D. Glabrum
 ի սահմանս Նախճաւանի:

3253. Օշինդր.

Բ. Ἀψίνθιον Լ. Absyntium Փ. Absinthe, Ռ. Подынь. Ար. այլ նոյնպէս
 Աֆսինդիս, آسنتيم. « Աշինդրն՝ որ Ար. Ասֆինդիս սաէ, և Թ. փայիս և
 » Փարսեաշաւի սաէ, և ինքն խոտ-մն է՝ որ տերեւն ցրու է, և ձեւն նման է
 » Ստեպղինի տերեւին, և ծաղիկն դեղնագուն է, և տերեւն սպիտակզուն է.
 » և համն խիստ դառն է. և ինքն ի Հոռոմոց երկիրն շատ կու լինի, և ի խո-
 » բասան այլ կու լինի. և լաւն այն է որ նոր լինի, և ծաղիկն դեղին լինի...
 » Թէ մեղրով խառնես և տաս՝ օգտէ Սաքթային և Եարազանին, և զգլուխն կու
 » Թեթեւացընէ, և չի Թողուր որ շուտ հարբի մարդն և զականջն սուր կ'այնէ.
 » և զճիճին այլ կու սպաննէ, և Թէ յաչքն քաշես՝ զկուպին Թանձրութիւն տա-
 » նի... Իպն. սաէ Թէ զիր ջուրն խառնես և զիր գրես, Թանաքն ամուր լինի
 » և ի Թղթէն չեղնէ. և Թէ ի սնդուկն դնես՝ զայն իրքն շուտէ ցեցն, Թէ հա-
 » զուտ Թէ զինչ և իցէ. և Թէ զինքն ծեծես և ի կտաւ մի կապես և եռ ընդ

» ես չուրն խոթեն, և դնեն ի վերայ աչիցն որ շատ արուն կենայ, տանի զան
 » արունն. և թէ զլաթն յետ տանիս և քամես՝ արուն ելանէ. և թէ եօթն
 » դրամն եացընես ջրով և ցանես զչուրն, լուն սպաննէ. և թէ ծխես՝ տան միջի
 » սողունքն փախի, և թէ ի Նշի ձիթին մէջն եփես և քիչ մի այծու լեղի կա.
 » թեցընես և խառնես և յականջն կաթեցընես, զամենայն ցաւ տանի... Եւ
 » գրոցս շինողն ասեր է, թէ ինքն վայրի Պարանձապիքն (Բարձուենիկ) է, և
 » իր ցեղերուն է, և իր ծաղիկն նման է Ախաւանին ծաղիկն և այլ փոքր է,
 » և լեղի է որպէս Սապան. բայց Ախաւանին ծաղիկն սպիտակութիւն ունի,
 » և այս շունի. և աղէկն Հոսիցիցն և Սուսին » — Այս ետքի անուան տեղ՝
 » առաջ ուրիշ լաւ Օշինդր բերող տեղուանց հետ յիշէ Սիւր և Տարսունն այլ նա
 » եւ Բուսին, զոր Մխ. Հերացի՝ Հոսով Օշինդր կոչէ: Յիշուի և Օշինդրի տակ, որ
 » առանձին անուամբ Պղտակ այլ կոչուած է: — Օշինդրն Բարձուենեկի ցեղէն է:
 » Վաստակոց գիրքն յառաջ քան զմշակելն՝ մշակները խնամքով դարմանել պա-
 » տուիրէ, և ըստ ոմանց՝ տալ « Ըմպել Օշինդրի գինի՝ յառաջ քան զկերակուրն
 » և ի մէջն և յետ կերակրոցն. և թէ չուրդի (չի գտուի) Օշինդրի գինի՝ ան
 » զՕշինդրն և եփէ ջրով, և այն ջրովն գիրեանք արբո » — Գինի լաւցընելու
 » կամ պահելու համար այլ խրատէ չափ մի Օշինդր խառնել ուրիշ նիւթոց հետ.
 » Իսկ յատուկ Օշինդրի գինի շինելու համար գրէ (222). « Աւ Օշինդր Լեռնայիկ մէկ
 » նուկի և կապես ի սպրկիկ աստառ, և դիր ի տանն լիտր գինի՝ յանուշն կամ
 » ի մուստառն, և ի մուստառն լաւ է. և մի խիտտ շուր՝ որ չվայթի, գի պիտի
 » որ խիտտ եռալ տայ. և թէ Սայիխա խառնես ի ներք՝ լաւ է. և թէ մուս-
 » տառ լինի և թէ գինի լինի՝ յետ ութ աւուրն խմէ: Օգտէ քովուցն ցաւուն և
 » լերդի որ հովէ ցաւի, և թուխմայի և արծուեց և քամոյ և ստամբացաւի,
 » և զծիճին սպանանէ և հանէ ի փորոյն. աղնիւ է »: — Յիշուի և Էգոյ — Օ-
 » շինտր, զոր Բժշկարանն դեղ պատուիրէ ծանրալեզուի, հանդերձ Մոթրինով և
 » անապակ գինով և մեզրով եացուցած:

3284. Օշնա.

Ար. 𐎠𐎢𐎡 « Որ է կաղնու ծառին բուրդն, ըստ Ամիրտ. լաւն այն է որ սպի-
 » տակ լինի, և հոտն սուր լինի. ի տաքութիւն և ի հովութիւն միջակ է, և քիչ
 » մի կապող է. և թէ զՕշնան ի գինուն մէջն ձգես և թրլես, և ով որ այն գի-
 » նուն խմէ՝ խելքն երթայ. և թէ յաչից դեղերն խառնես՝ զորացընէ, և զգի-
 » ճութիւն կտրէ, և զարցունքն այլ կտրէ. և զսիրտն խնդացընէ... և մասնմիջին և
 » շտնուկին զհոտն կու տանի՝ յորժամ օծես քացխով, և զանձն այլ ուժովցընէ,
 » և զսկրաց պնդութիւն կու հալէ... Ասէ Պտ. թէ ինքն Փինոյ ծառին և կալ-
 » նու ծառին վրայ կու բուսնի. և լաւն այն է որ սպիտակ լինի: Եւ ես ան-
 » պիտան ծառայ ծառայիցն Աստուծոյ տեսայ որ ի գետինն այլ կու բուսնի. և
 » անուշահոտն լաւ է. և այն որ սեւ լինի՝ չէ աղէկ Հնդի է »: — L. Muscus
 » Arboreus, ♂. Lichen mousse.

3285. Օշնան. Աշնան.

Ար. 𐎠𐎢𐎡 Այսոր բայն Բաբախ կոչուի և յիշուած է, (Թ. 278) իսկ սա
 » աւելի անոր հիւթը նշանակէ. Ամիրտ. գրէ. « Աշնան որ է Չոդան (Թ.) ինքն

« շատ ցեղ լինայ. և լաւն այն է որ համն աղի լինայ, տաք և շոր է ու արձ. լվացող »
 « է և հէջ տվող է, և յորժամ պորա և Մագու խառնես. և այն խոցն որ ի գլուխն »
 « լինի՝ հմնէ (ի հիմանէ բուրոովին) ողջացնէ. և քացխով և աղով եփեն մինչեւ »
 « թանձրանայ և յաչքն քաշեն, գաշից թանձրութիւն տանի... Ինքն երկու ցեղ »
 « կու լինի, մէկն սպիտակ է և մէկն կանանչ. և այն որ ի բան կու մտնէ՝ կանանչն »
 « է. և թէ զայս կանանչս ի կրակն ձգեն և ծխեն, անասունքն և թռչունքն փախ »
 « չին յօթեւանեն... Լաւն այն է՝ որ համն Պորային համովն լինի, և կանանչ և »
 « նուրբ լինի, և աղի տեղեր լինի. ի Քուսթակի? խէշ կու լինի... և մէկ ցեղ այլ »
 « կայ որ տերեւն մօտիկ է Փիճոյ տերեւին. և իր տասն դրամն զմարդն սպանանէ. »
 « և զիր չարութիւնն տանի մեղրն և խիարի կուտն, և յետ այնորիկ Մանուշկին »
 « ձէթն » — Պէթար Օշնանի բոյսը Հորտ կոչէ. գուցէ այս է Արուեստական գրոց »
 « մէջ Որբն Օշնան կոչուածն: Մաքրող և փոփրացող զօրութեանն համար՝ օճառի »
 « (սապոնի) տեղ գործածուէր ի հնուց. անոր համար և. Saponaria, Փ. Saponaire »
 « Ռ. МЫЛАЯКА. կոչուի: Մեր ազնիւ Վարդապետն Եղիշէ ազնուական Հայոց կա- »
 « նանց համար կ'ըսէ, որ իրենց արանց գերութեան ատեն, Օշնանով լուացուելէն »
 « հրաժարեցան. « Չանկաւ Օշնան ի ձեռս փափկասուն կանանց », — Յայտ է որ »
 « այս լուացող նիւթը ուրիշ նմանեաց հետ Սոսա, Soude կոչուի ի գործածու- »
 « թեան, — Այլ եւ այլ տեսակներ կան Օշնանի. Արեւելեան կոչուածն S. Orientalis »
 « գտուի ի Կարին, Սպեր, Դարէժ. — S. Viscosa ի Նախճաւան, Ատրպատական: »
 « — S. Prostrata ի Բաբերդ, Կարին, Կեսարիա, Ամասիա, Ուռհա. — S. Triden- »
 « tata ի Սեւերակ, Ուռհա. — S. Modiflora ի Բեհեսնի, Մալազիա. առանց զանա- »
 « զանութեան տեսակին յիշուած է և յէջմիածին: — Տես և Բալախ:

— Պարսիկ Օշնան.

Յիշուած է ի Բժշկարանի, աչքի բորի դեղ, պորայի հետ:

— Սպիտակ Օշնան.

Յիշուի ի Քիմիական գիրս, և « ի Ճնճղկի ծիրտ նմանի », կ'ըսուի:

3256. Օշոշ. — Տես Հոռոյիկ, Երկցուկ, Գետնախնձոր:

3257. Օռուի խոտ ?

Եթէ չէ սխալ գրուած, ի Ն, Դար, է, 103:

3258. Օրոն. Որոն.

Չուղայեցիք այսպէս անուանած են, և ի Պոնտոս այլ լտուի Լ. Genista, Փ. Genét
 կոչուածն, Թ. Գարրո բրանադր կամ պօնձոզոռ (Չորու ըզուձգ). մեծ կամ փոքր
 թուփ է, ձիգ ճիւղերով, մանրիկ տերեւներով և հասկաձեւ ծաղկներով: Ար. կու-
 չուի Ռեթի (Ճ). այս անունն Ամիրտ. գրոց մէջ չեմ գտած: — Բժշկարան մի փայ-
 ծեղան դեղ գրէ « զայն Որոնն՝ որ ի Մորայ կու գայ »:

3259. Օրոտ ու Խորոտ .

Այսպէս գրէ Սիմ. Կամարկապցի փոխան Հորտ Մորտի, և անուանէ Թ. Գարապաշ յիշեկի, (որ է Երեցուկ) :

3260. * Ֆաշրա . Ֆաշարա .

Ար. անունն է Լօշտակի لوشاك. տես զայն. Ամիրտ. այս անուամբ այլ գրէ. « Ֆաշարա և Ֆաշարաշին, որ է Աեւ և Սպիտակ Ալգին. Ար. Քարմար » ըլ-Ստովպրա և Քարմար ըլ-պայցա ասէ. . . Իպտ. ասէ Թէ Սարմաշուխին ցե. » ղերուն է, և ճկեր ունի և տերեւնի ունի և Թելեր ունի որպէս Աւգի, և ա. » մենայն դիմաք Ալգի կու նմանի, և կուղ կուզ կարմիր հատեր ունի. և յոր. » ժամ որ ի գետնէն ելանէ, զծայրերն աւնուն և եփեն և ուտեն, զգողն յոր. » գորէ և զիրն լուծէ, և Թէ զմիրզն և զտերեւն և զտակն աղով սպեղանի » առնես և ի պիղծ խոցերուն վրայ դնես, օգտէ. և Թէ զտակն Հուլպայով » խառնես և յանձն օծես, զանձն յիստակէ ի մանէն, և զկոծիծնին տանի. և » Թէ սպեղանի առնես և ի վերայ կտարած ոսկրի դնես, օգտէ և բուսուցանէ », ևւ այն :

3261. Ֆարասիոն . — Տես Հոսիսոյ :

3262. Ֆրթնայ .

Բառգիրք մի գրէ և զուգէ « Ֆոշի, անուշահոտ դեղին ծաղիկ » : Վիլլոզ այլ իր Լատ-հայ Բառարանին մէջ զուգէ Լ. Jonquilla ծաղկան, Փ. Jonquille, որ Նարգիսաց ազգէն է, Narcissus Jonquilla. Ար. Նարին կամ Նարսիմ, نارسام կոչուի, ըստ Ամիրտ. որ կոչէ և « Չափն - զատահ, (բայց, կ'ըսէ) Սպիտակ ծա. » ղիկ է, և հոտն սուր է. և բնութիւնն մուհթատիլ է, և խոց կու առնէ, և » Թէ Չաֆրանով օծես՝ զմանն յերեսաց տանի, և զաչից խոցն կու եփէ և կու » չորացնէ, և չի Թողուր որ իլուածք լինի. և Թէ երեսն օծեն՝ չի Թողուր ա. » ղիւն գեն առնէ. և հազին և արիւն Թքնելուն օգտէ. . . Ասէ Պտ. Թէ ինքն » երկու ցեղ է. մէկ ցեղին Պ. Կոշի-մոշքին ասէ, և մէկ ցեղին Նարսիս ասէ. » և իր ուժն մօտիկ է Եասամինին ուժին, և իր ձէթն Նաճէսին ձէթն կու նը. » մանի. . . և լուացող է և նուրբ անող է, ևւայլն. Ասէ գրոցս յինողն, Թէ ի » Խորասան տեսայ որ այս ծաղիկս կու լինի, Նարսինն էր, մէկ դրամ մինչև երեք » դրամ կու տային հետ դեղին, ուժով լուծուան կու առնէր » : — Թէ և Փռանկ վարդապետն այն (Վիլլոզ) Jonquilla ծաղկան զուգած է զՖրթնա, բայց սորա անունն լսեցնէ Photinia. այսպէս կոչուած տերեւներուն փայլունութեան հա. մար (Յ. Փառսօս, լուսաւոր) . քանի մի տեսակ մշտականաչ ծառեր և Թուփեր են Ասիոյ և Գալլիֆոռնիոյ բառեխառն կլիմայից տակ, յԵւրոպայ այլ մշակուին ի. բրեւ զարդ պարտիզաց :

3263. * Ֆիլիքս .

Բառգիրք մի, ոչ հինկեկ, գրէ այսոր համար. « Խոտ է՝ որ ծնանի մանաւանդ » յանտառս. ի մոխրոյ նորա զապակի գործեն » : — Ըստ անուանն է Filix, ի ցեղէ Պտերից. Թ. 2714. 3060.

3264. * Ֆիլիօշ.

Փղի ականջ թարգմանուի ի Պ. Լեզու فيلكش. տես Նուբկ.

3265. Ֆիկ.

Ոլոռան՝ այսինքն Մաշի նման մանր ընդեզէն է ուտելի ծանօթ ի Պոնտոս.
յիշուած է և Ամիրտ. Անգիտաց անպէտի մէջ. « Թէ զոջին ի մէկ Բակլայի
» ծակ դնես, կամ Ֆիկին կամ Լուպիային ծակ դնես, և այն մարդն որ ըսիպ
» ջերմն կու բռնէ՝ ինքն չգիտենայ, կերցընես, շատ օգտէ. փորձած է, չի բռնէ »:


3266. Ֆլուսկուն. — Տես ի Փաղանգաւոռչի. Թ. 3034.

3267. Ֆլիուլ. — Տես Պղպեղ:

Ֆուլ. — Տես Փոս:

3268. * Ֆուլէնէն. Ֆուճնէն. Ֆոսնաջ. — Տես Մորրին:

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ



3269. Աղմամիթոն կամ Աղմամիւթիւն.

Կարմուկ կոճղեզաւոր բոյս մ'է, ուտելի. տերեւներն Մոլոչի նման, թանձր ու մանր. ծաղկներն դեղնագոյն կ'երեւին (չորցածը տեսնելով) բաժակաձեւ կամ չրթնաձեւ: Ծանօթ է ի Կարին, Խոտուջուր, Ալաշկերտ:

3270. Աթանասիա.

Անունն յայտնէ Բ. ծագումը, տերեւոցը անթուռամ մնալուն համար այսպէս ըսուած, իբր Ամենուկ. Լ. և Փ. այլ նոյնպէս կոչուի Athanasia, Athanasie. Բաղադրեալ և Փողաւոր կոչուած ծաղկանց ցեղն է: Մեր Բժշկարանք այլ այս Բ. անուամբ յիշեն, իբրեւ դեղ՝ շատ չուր խմելով փնասուած անձին:

3271. Ալեւորիկ.

Անուն տեսակ մի Խաղողոյ:

3272. Ալխարթ.

Այս այլ տեսակ մի Տանձի անուն է:

3273. Ախրիճանակ.

Հին և ընտիր անուն Կղմուխի. տես զայս, Թ. 1426: Ո՛ր և ուսկի նախ յիշուած ըլլալն՝ յայտնի չէ ինձ:

3274. Ակր.

Ջրային բոյս մի կ'ըսուի. անոյշ հոտով, որ չորցուցած ի գործ ածուի ի դեղս, և մանաւանդ լուերը հալածելու:

3275. * Աղաղանոյն և սխալագրութեամբ Աղանգանոյն.

Աւելի լաւ գրուած է Ղանդանոն. տես զայս ի Շալակի բառիցս:

3276. Ամրկենի.

Թուփ է, ուսկից Ցախ աւել յինեն, ի Խոտուջուր:

3277. Այրաս կամ Այրասա.

Յ. բառէ առնուած, շատ տեղ յիշուի ի Բժշկարանս, և կ'ըսուի այլ թէ « Էրս. » պոստ Եռչանն է », (թ. 2358):

3278. Անքիւում.

Աւետիք Տիգրանակերացի՝ հրեշտակաց դասերը մէկ մէկ ծաղկանց նմանցընելով, այս մեզ անծանօթ ծաղիկն այլ Քերովրէից զուգէ:

3279. Անդամալուծի ճաղիկ. — Տես Սմանար, թ. 2697:

3280. Անթառամ Դեղին.

Բժշկարան մի այսօր յատուկ տեսակ մի ըլլալը յայտնէ՝ թ. այլ յատուկ անուամբ, « որ իրենն էրառ ու գրչ կօճմասի ասեն ». և դեզ գրէ կսծիծի, վրան ծխելով:

3281. Անուածաղիկ.

Ի նորոց թուի յարմարեալ յանուն Passiflora ծաղկի:

3282. Աչուկ.

Յարմարի Լ. Aster Atticus (աստղ) կոչման. տես Քումիզ, թ. 516:

3283. * Ապարալսամոն.

Հոտաւոր բուսոց և պտղոց հետ յիշէ Ագաթանգեղոս (տպ. 479), արգէն անունն այլ յայտնէ Բալասանի տեսակ ըլլալը:

3284. Առուահամամ.

Տեսակ մի է Դաղձի, ըստ անուանն առուոց (լրոց) եզերք բուսող, ուրեմն նայն Առուի Դաղձն է (թ. 546). այսպէս կոչեն Մշեցիք:

3285. Ամնի ձէճ.

Յիշուած է յԱսար բժշկէ և յայլոց. նշանակէ Յասմուկի ձէթ (թ. 2152):

3286. Ապարիմ?

Ամիրտուլվաթայ ախտատածութեան գրոց օրինակ մի գրէ ի դեղո՝ Ապարիմ. ներոս շոթ, եթէ Ասփուրի և Սպրամի հետ չէ շփութուած:

3287. Ասփոնիլոն.

Այսպէս Յ. բառս գրած է Նոննոսի գրոց հին թարգմանիչ մեր. բայն է ծանօթ Երէշն, որ է ըստ մեզ Թաղաղու. տես թ. 757:

3288. Ատամնախոտ.

Աւետիք Ամդեցի ի Տօմարագիտութեան՝ խրատէ, յուլիս և օգոստոս ամսոց մէջ ուտել այս խոտս և Զարհոտ: Թ. այլ կայ նոյն նշանակութեամբ՝ Տիշ օրի, որ է Յմախ, կամ Մեղրթեր:

3289. Արագ կամ Արաք.

Ամիրտուվաթ արտատածութեան գրոց մէջ, այնոր՝ որ « բերնէն ջուր եր-
» թայ ի ժիր », գրէ դարման. « Արագ կ'ասեն փայտ մի կայ, ի բերանն
» խոթէ »: Իր բառագրոց մէջ այլ գրէ: ըստ Պէլթարայ. « Արաք, որ է Մոսս-
» փաքն, և ինքն Նափտին փայտն է. և տերեւն նման է Կաղնու տերեւի, և
» զէտ Շողկամիկներ ունի անուշահոտ. և ինքն ի Կասլային ցեղէն է. աղէկ և
» անուշահոտ լինի.. և իր միսվաքն (ակուայ քերիչ) զակուան ամրացնէ և ճէ-
» կու տայ, և գրեթէն հոտն անուշ կ'առնէ.. և այն խոցերուն օր ճապղի՝ ան-
» զնաս ողջացնէ: Եւ իր մրգէն մէկ մթխալ տուր. և թէ շատ ուտեն՝ զակուա-
» նին ծակ ծակ առնէ. և զիր շարութիւնն տանի քացախն »: — Երուպացիք
այլ նոյն անուամբ *Arack կոչին*, բայց և գիտնական լեզուաւ *Salvadora persica*.

3290. Արմաւ Արմարոնի.

Ինչ տեսակ Արմաւ է, բացատրուած չէ, կամ ինչ անյայտ. Բժշկարան մի ուրիշ նիւթոց հետ զայս այլ յիշէ՝ Զաղուզայի լուուխ գուգելու համար:

3291. Արմաւ Կախնթու.

Զայս այլ յիշէ ուրիշ Բժշկարան մի ի ցանկի բառից, և իր հոմանիշ անծանօթ անուն մի, Մարմ:

3292. Արջնուիկ.

Տես Նուիկ, Թ. 3228, իր տերեւին պատկերովը:

3293. Արջվարդ.

Խաչափայտի կամ Փենունայի շատ անուանց մէկն, թէ և անոնց անվայել:

3294. Արտանիսա.

Յ. ձայն բայց Ար. այլ (ք տառի տարբերութեամբ), այսպէս գրէ Պէլթար, *آرتانيسا*, այլ և ըստ նորա և ըստ Ամիրտ. « *Раш рг-ասատ կ'ասէ, داء الكف*,
» և Թուրքն Ասլան ալասի (Առիւծաճանկ) կ'ասէ. (այսպէս և Յ. Լ. *Leonto-*
» *petalon*). Խոտ-մն է որ մէկ թիզ երկայնութիւն ունի, և շատ ճղեր ունի, և
» յամէն ճղի ծայր՝ հանց որ ի Սիսիո կու բուսնի՝ հնգեր ունի, և տերեւն նը-
» ման է Կաղամբի, և յամէն ամանի մէջ երկու երեք հատ հունդ կ'ունենայ.
» և տակն սեւ կու լինի, և ի Շողգամբ կու նմանի, և ի վարած արտերու մէջն

» կու լինի, և ի Յորենին մէջն այլ կու բուսնի. և ինքն տաքցընող է. և թէ
» ի տակէն գինով խմեն՝ օգտէ ամենայն գազանահարի, և զցան խաղեցընէ..
» և թէ չորցընեն և ի վերայ խոցերուն ցանեն՝ բուսցընէ, և թէ ի սֆէ (սօֆ)
» կապանին և զքթան կտանին լուանան այս խոտովս, խիտո յիտակ առնէ
» և սպիտակ: Ասէ Պտ. թէ տակն ի բան կու անցանի » . և յետոյ այլ եւ այլ
հոմանիչ արեւելեան անուններն այլ յիշէ:

3296. Արքայարմաւ.

Թուրք-հայ Բժշկարան մի այսպէս անուանէ Լ. Imperatoria ըսուածը: Տես
Մարգարեթու. Թ. 3204:

3296. Ասիսինդ.

Թէ և Յ. անուն է Սըընդրի (Թ. 3253), բայց շատ հեղ այսպէս այլ գրուած
է ի Բժշկարանս մեր և յայլ գիրս: Նորկեկ Բժշկարան մի կ'ըսէ, թէ կոչուի սա
Հ. և Հոտած առեղ ?

3297. Աքաղաղի խոտ.

Յիշուած ի նոր Բժշկարանի. միթէ՞ Աքլորուկն. Թ. 268:

3298. Աքուլա ?

Ինչ որ նշանակէ Չայթուկ (Թ. 2436), սա այլ նոյնը, ըստ ոմանց:

3299. Աֆիմոն.

« Որ է. ըստ Ամիրա. Ֆա. Էփիթիմոն (այսինքն Յ. E'πιθυμον, Լ. Ephisimum,
Փ. Ephisym, և նշանակէ Թիւմի վրայ բուսնող Կայլխոտ. « ինքն յայտնի խոտ-ձ
» է՝ որ ի չոր տեղեր կու բուսնի. և լաւն այն է որ կարմիր լինի և հունդ ու
» նենայ. և ի վերայ Մորորոն բուսնի. և այն որ ի յերուսաղէմ և ի Արիտ լինի՝
» լաւ է. և հոտն սուր և բարակ լինի. և չոր է ֆ տրե », եւ այլն: Ամիրաու.
յետ շատ տեսակ օգուտներ այլ յիշելու ի բժշկութեան, կ'աւելցընէ, « Ասէ
» Պատէհին, թէ ինքն ծաղիկ է և հունդ և որձայ է: Բազարատ առէ թէ
» տաք և չոր է ֆ տրե. և զինքն շատ եփեղն վատուծ կ'առնէ », եւ այլն:

3300. Բակլայ կարմիր.

Քանի մի տեսակ Բակլայի յիշած եմք ի կարգի Թ. 284-7. զայս այլ յիշէ նորկեկ
Բժշկարան մի. և կարգէ դեղ մարդոյ՝ որ « այլ ընդ այլ կայ, կամ ցան կանկ-
» նեցաւ ? »:

3301. Բաղուկ.

Յովակիմ Օղուլուխեան բժիշկն այսպէս կ'անուանէ զՆարինջ. իրմէ հնարած
բառ չերեւիր, բայց ուստի՞ առած է:

Բամբոց կամ Բանբոց. — Տես Բամբոց, Թ. 300:

3203. Բացուենեկ. — Տես Բարձմանեակ:

3303. Բեքել ?

Շնխաղողի մանուն զուգելու այլ եւ այլ բուսական նիւթոց մէջ՝ զայս այլ դնէ Բժշկարան մի:

3304? Բզէզանութ.

Ղուկաս Խարբերդցի ի Թարգմանութեան Մեկն. Մննդոց, (Ա. 29), Ալապիտէ լատին աստուածաբան հեղինակի, այսպէս կոչէ Ովիդիոսի (Ալաբարան. Ա.) Fraga կոչածը, որ է Ելակ կամ անոր նման պտուղ մի, որ առաջին կամ վայրենի մարդկան ուտելիք էր, կ'ըսէ.

« Բզէզաթութըս ժողովէին,
Ջրալութս և զթութս Մորենեոյ ուտէին »:

... Fraga legebant, — Cornaque et in duri hærentia Mora Ruberis.

3305. Բողժ ? — Տես Բող, Թ. 364:

3306. Գառնուամաքի.

Տես ի Շալակ 431 Թուի, որ է Գառնադմակն:

3307. Գմոշոյ պտուղ.

Այսպէս անուանէ հին Բժշկարան զԳոգմադիեն. տես Թ. 474:

3308. Գորսնբուրդ ծովու.

Յիշուի ի Բժշկարանս, և կ'իմացուի Լ. Ալգա կոչուած ցեղէն, բայց ոչ ինչ ազգ կամ տեսակ ըլլալն: Տես և Խօզ, Թ. 1167. և հասարակ Գորսնբուրդ, Թ. 523:

3309. Դմշխիկ.

Տեսակ մի կարմիր խաղողոյ. կ'երեւի թէ Դամասկեան Սալորոյ գոյնէն առած է անունը: Լսուի ի կողմանս Տարօնոյ:

3310. Դրգլուխ Սոխ.

Երեք ազգ Սոխոց կան, կ'ըսէ Կամարկապցին, սա և Սպիտակն և Կարմիրն:

3311. Եսպիեար ?

Կամարկապցին աչացաւի այլեւայլ դեղոց մէջ գրէ, « եւ զԵսպիեարին տես. « րեւն քացխով և ջրով եփէ, ի վերայ աչացն դիր »:

3312. Ելատէ.

Յ. բառ է, որ և Լ. կ'ըսուի Elate, և է Եղեւին ծանօթ ծառն, բայց Հ. այլ այդ օտար լեզուի բառով գրուած է ի հին Թարգմանութեան Պատմութեան Աղեքսանդրի:

3313. Եղջերխոտ.

Բժշկարան մի ոչ հին՝ Սեւ Եղջերխոտ անուանէ զՍեւ Վրացի կռնն:

3314. Եպնդեղ.

Օգուլուխեանն այսպէս անուանէ՝ մեր Հուսամ գրածն ի կարգին, որ է Լ. Lavandula.

3315. Զափղ ?

Միս. Հերացի Յերմեակալած ըմպելիք մի զուգելու նիւթոց մէջ դնէ և զայս, և նոյնանիչ Յ. Պետարիոն. — Տեսանք ի Թ. 2417, որ Ամիրտ. Ուրկումիլ պըտուողը համարէր Ա. Զապտ կոչուած:

3316. Թավթ

Լուֆահը (Թ. 943, և իր շաշակն) շոր Տանձի զուգող Բժշկարանն՝ ասոնց նոյնանիչ գրէ և սյս անունս:

Թաւարա. — Տես ի Եալակ Դաւարա անուան, Թ. 558:

3317. Թաւալ. — Տես Թգեցի, Թ. 807:

3318. Թոր ?

Բժշկարան մի գրէ. « Դման է հոտն և համն ի Թուրինջ ». ուրեմն անոր ցեղէն կըրնայ կարծուիլ:

3319. Թուրշալակ.

Այսպէս գրէ միշտ նոր Բժշկարան մի զԹրթնջուկն կամ Թթակիչ. Թ. 788:

3320. Լաղնիտ ?

Թէ ստոյգ ու թէ անստոյգ՝ Թ-Հ. Բժկարան մի զուգած է կաղնչանի:

3321 * Լապսան.

Տես Մանանեխ, Թ. 1966. Լ. Lapsana, Փ. Lampsane, ի Յ. Λαπαζω բայէ, որ նշանակէ կակղեւ, և ասկէց յայտնուի՝ որ եթէ տեքով նման է Մանանեխի, այլ ոչ բնութեամբ, ինչպէս վկայէ և Պէլթար, գրելով لابسان:

3332. Լափրի.

Գալիենու բառից մէջ զուգուած է սա Որսիկանքոս անուան, որ է Յ. Օքսփաւձա, որ պարզապէս նշանակէ փոքր ծառ կամ թուփ, իսկ յատկապէս Սրափուշ: Տես թ. 3738:

3333. Լորան ?

Հնկեկ ձեռագրի մէջ գրուած է, « Լորան, պտուղ է Խաղողի նման »:

3334. Լուսնաբառ ?

Նորեկ Բժշկարան մի նոյնանիշ գրէ Կոճապղպեղի:

3335. Խարսըխոտ.

Պոնտացի Սահակ բժիշկն գրէ Փռ. Corfeuil անուան բացատրութիւն, « Թ. Տոկենկ մադրասեօսի. մենք Խարսըխոտ կ'ասենք »:

3336. Խազամ.

Տարբեր ի Խուզամիէ (թ. 116. 1136). և ի Խուսամէ (թ. 1142). վասն զի երկուքն այլ զատ զատ գրէ Բժշկր. մի, թէ և « Ղարամֆոշ լիակի կոչէ Թ. ինքն » խոտ—մն է որ ի պարտիզնուն մէջն կու բուսնի, և ծաղիկն նման է Մանուշակի » ծաղիկն, և այլ աղէկ է. և թէ տերեւն ի արդ առնուս և կամ ի ճէպղ գնես, » ով որ տեսնու զքեզ՝ խոտ սիրէ, և թէ ի ծաղկէն եղ առնեն և ի գլուխն օծեն, » ուրախ առնէ և զհոգսն տանի. և թէ գիշերն այս եղէն զլուխն քսեն և առաւօ, » տուն լվանան, զերեսն տաքցընէ, և զվատուծութիւնն և նենգութիւնն ? տանի » մարդուն »: — Տես և Հուսամ, թ. 1747:

Խախուլա. — Տես Կակոչա:

3337. Խանի.

Կանգարաձեւ բանջարեղէն մի, որ որձայով մէկտեղ կ'ուտուի. յիշուի ի Սասուն. և այլ ծաղկանց և հրնաց հետ դեղ գրուի Թուլութեան, կոլընջի, փորցաւի, և այլն:

3338. Խանտախուշ. Խանտուշ ?

Առջի անունը գրէ լաւ Բժշկարան մի Խանտախուշի հռոնգ. ուրիշ մի՝ երկրորդը: Միթէ չփոթ գրուած անուն Հանդաղուղի. թ. 1627:

3339. Խեռուլ.

Բժշկարան մի զուգէ զայս Շակակուլի և Վայրի Ստեպղիների, և կ'աւելցընէ. « Թուրքն Մօհրի սուրէյմանի ասէ »:

3330. * Խէրպուէ.

Այս այլ կակուլէի հոմանիշ գրուած է, բայց Ամիրտ. կ'որոշէ և « Փոքր Ղա-
» զուլէն է » կ'ըսէ, իրեն հոմանիշ այլ գրելով Հաշպուռ, Հաշ, Հէշ: յայտ է որ
Պոռէ շատ բառից հետ կցելով այլեւայլ հոտուէտ ծաղկներ նշանակէ: Ար. ۱۳۳۰,
ըստ Պէյթարայ, որ ի Սոֆալայէ (յԱփրիկէ) կու բերուի կ'ըսէ, և բնութեամբ
տաք ու չոր է: Փ. Petit Cardamome.

3331. Խիար Երկայն.

Մի. Հերացի յիշէ Տապաշիրի ղուրս զուգելու նիւթոց մէջ. սովորական վա-
րունգէ տարբեր տեսակ մ'երեւի:

3332. Խոնջտակ.

Ո՛ր գրուած կամ լսուած է, չեմ յիշեր, բայց ճանչցուած է Եզանագի. տես
թ. 609:

3333 * Խուրթում վայրի.

Հաւանօրէն է Ղուրտում, կրտիմն կամ կրտմանէ: Տես թ. 1566-7.

3334. Միրանի Փուշ.

Յիշէ: Բառագիրն Ստ. Ռոշքեան, և նոյնանիշ այլ գրէ Լայնոերեռնի:

3335. Մովային Ծաղիկ.

Պարզ Թարգմանութիւն է ըստ նոր Բժշկարանի. Լ. Rosmarinus անուշահոտ
բուսոյ. տես թ. 911, 930:

3336. Կամփ.

Ոչ ամբողջ բոյս, այլ վշոյ մանրած մասերը նշանակէ:

3337. Կաղմխենի.

Ըստ ձայնին պէտք էր համարիլ կաղամախուտ կամ կաղամախի ծառեր. բայց
Բժշկարանն (ոչ հին) զուգէ Անտուգի, որ է կղմուխ. ուրեմն պէտք էր գրել
կղմխենի:

3338. Կատուի ափ.

Նոյն է ինչ որ կատուի ճանկն, թ. 1383:

Կամբիլ. — Տես կմբիլ, կերիլ:

3339. Կամբ ?

Ասար դեղ գրէ « Անուշ գինուով և կամբաջրով »:

3340. Կապուտիկ.

Որ և Կապուի. Բեւեկի պտուղն է, այսինքն Բտուձ (Թ. 388), որ շատ ա. նուններ այլ ունի:

3341. Կարսանկ.

« Ինքն խոտ—ձ է՝ որ ի Հնդկաց կու գայ. հոտն անուշահոտ է, և (ի) համն » լեզուօթին և թթուութին կայ »:

3342. Կըզան.

Ըստ Թ—Հ. Բժշկարանի է Թ. Գոյուն օրի կամ Գուզու փսրրաղի, որ է Երեսնակն. տես զայս, Թ. 669:

3343. Կոտրխի. — Տես Սարկուսի, Թ. 2730:

3344. Կորկոտակ.

Տես Կոտրկոյ տակ, և Աղունսաձուռք, Թ. 63:

3345. Կրիտ խոտ.

Նոր Բժշկարան մի դեղ գրէ զայս ընդ այլոց՝ ճաթըտած չրթանց. Թերեւս Թարգմանելով Թ. Կիրիտ օրոս, որ է ըստ մեզ Խանթեփար. (Թ. 994):

3346. Հազի.

Այսոր Թ. ի բառս Գալիենու գրուի Սփենդամուս. ստոյգը տես Թ. 347. որով յայտնուի Բիծխիի ազգէ ծառ մի:

3347. Հալվորուկ.

Ամիրտուլվաթայ Մաւիզան բառիւ վայրի Չամչի վրայոք ըսածին՝ (Թ. 2444) օրինակող մի Բժշկարանի կ'աւելցընէ « Եւ Հայն Հալվորուկ ասէ »:

3348. * Համիշայ բահար.

Պ. բառ է. *سببها*, որ նշանակէ Մշտագարուն, կամ Անթառամ ըստ Լ. Sempervivum. ըստ մեզ Ազոսի վայրի և Գառնադմակիկ: Տես Թ. 15. 423. — Վիլլոզ յիչէ այս բառս իբրեւ Հ. և զուգէ Լ. Bellio, որ Թուի Թէ Bellis ըլլար կամ Bellium, գեղեցիկ նշանակելով. Փ. Pâquerette.

3349. Հարպան.

Բժշկարան մի վկայութիւն բերէ. « Ապուճարեհն ասէ, թէ տերեւն և հունդն՝ » ամենն երեքգուէն է ». (եռանկիւնի ձեւով): Պէյթարայ և Ամիրտուլվաթի գրոց մէջ չեմ հանդիպած այս անուան:

3350. Հասիմոնա ?

Անունն՝ եթէ ստոյգ է՝ Յ. և Լ. լսուի, բայց անծանօթ. Ռժկր. մի թերեւս Ամիրտ. գրէ. « Ինքն խոտ-մն է որ տերեւ չունի, և ճիւղն կաշտուկ կու լինի, » և տակերն ի Սեխ և ի Չմերուկ կու նմանի. և քանի որ ի վար երթայ՝ կու բար- » կընայ, զէդ մազ կու լինի. և երկայնութիւնն մէկ թիղ կու լինի, և տակն սեւ և » կեղեւին մէջն սպիտակ կու լինի. և զտակն և զճուղն կու եփեն, և հոռում ձի- » թով և քացխով կ'ուտեն. և կու լինի՝ որ զտակն կու շորացընեն և կու աղան » ի ջաղացքն, և հաց կու եփեն... Եւ թէ հում և թէ եփած ուտեն՝ օգտէ հազին. » և թէ ի ջուրն եփեն և աւազան առնեն այն տղայոցն՝ որ շին քայլեր, զօդուածքն » ուժովցընէ »:

3351. Հաւլիճան.

Որ է Ար. խոչեմման, حانچان. Ամիրտ. այլ գրէ « Խոչեմման. ինքն կար- » միր է, և տակ է խոտի, և ի Չանճապիլ կու նմանի. երկու ցեղ է, հաստ և բա- » րակ է, տաք և չոր է Գ տրճ. և նուրբ այնող է. և զբերնին համն աղէկ առնէ, և » զբերան պայծառ առնէ. զգինուն և զՍոխին և զՍխտորին զհոտն ի բերնէն » տանի, և զստամազն ուժովցընէ... Եւ ասեր են բժշկապետքն, թէ Խոչեմմանին » լան այն է՝ որ ի բազային բոյնն գտնըվի ». և այլն. — Գիտնական լեզուով կո- չուի սա Galanga radix.

3352. Հովուի մախաղ կամ Պարկ.

Թարգմանութիւն է. անուանն Bursa pastoribus: Տես Մտապաշար. Թ. 1230.

3353. Զնեփուկ. — Տես Երճերեկ:

3354. Զոձոհիկ.

Տեսակ մի Խաղողոյ. լսուի ի Տարօն:

3355. Ղալաթ.

« Որ է Մայի Հնդին (ըստ Բժշկարանի միոյ), Մատայինին ասէ, թէ ինքն նման » է կտաւատին, և սպիտակ է և փայլուն որպէս արծաթ. հով է և քիչ մի գինու- » թիւն ունի. կտրատէ զայն քարն որ ի բուշտն և երիկամն լինայ, և զլուծումն » արգիլէ »: — Մաշ անունն Հ. և Ար. յայտնէ ինչ տեսակ ընդեղենի ըլլալը: — Պէյթար և Ամիրտ. յիշեն զայս Ղուլպ անուամբ. տես Թ. 1836:

3356. * Ղալպաս.

Վերոյգրեալ Բժշկարանն յիշէ և զայս, ըսելով. « Խոտ-մն է որ նման է Օշնանի. » և բնութիւնն տաք է և չոր յԱ տրճ... զստամազն յիտուրկէ ի պեղծ խառնվա- » ծոց, և սրբէ աղէկ »:

3357. * Ղանդանոն.

Տառագարձութեամբ այսպէս գրուած է Laudanum, անուշահոտ բոյսն և իր քա-
մուքսն. աւելի ծռելով բառը՝ ոմանք այլ գրած են Աղանգանոյն. Վալիենուսի բառից
մէջ աւելի լաւ գրուի ու տառիւ, Աղագանոյն: Տես լատան, Թ. 889, և 3278:

3358. Ղենջակի տակ ?

Օտար և երկրայելի բան մի լսուի, մանաւանդ բառին ծանօթ և աննման
նշանակութեամբն. սակայն նորկեկ Բժշկարան մի համանուն պինդ բուսեղէն մի
կարծեցընէ, գրելով սպեղանի մի շինել. այսպէս. « Ա՛ն զՂենջակի տակն. լուս
» և ծեծէ այնքան՝ որ ճարճատի. լից ի Ղուրն. որ եփի այնքան որ սլօն դուրս տայ.
» յետոյ գարէ ալիւր ի մէջն դիր », եւ այլն:

3359. Ղճի ?

Բժշկարան մի ճարճիրը յիշելով՝ Ջրկոտեմն է կ'ըսէ, և կ'աւելցընէ. « Վայրի
» Խարտալին այլ ճարճիր կ'սօսեն, և նա Ղճին է, և Լապսան այլ կ'ասեն »:

3360. Ճնի.

Վաստկ. գիրքն՝ (81Է) լուստ կամ բորոտ շան դեղ գրէ Ճնին, եփել և անոր ջրով
լուանալ. ուրիշ տեղ այլ յիշուած է այս (27Է). բայց ուրիշ օրինակ ճփնի գրած է.
Իսկ վերոյիշեալ (81Է) գլխոյ մէջ առաջ ճփնի այլ յիշուած ըլլալով՝ հաւանական
կ'երեւի թէ անկէ տարբեր է ճինի:

3361. Ճնճղալէզ.

Բժշկարան մի օտարըզու գրած է զայս, զուգանիշ Հադա բառի, որ ինձ ան-
ծանօթ է, բայց Հ. անունն նշանաւոր է, և միայն խոտ ըլլալը յայտնէ գրողն:

3362. Ճոյփն ?

Ուրիշ Բժշկարան մ'այլ Թ. Չաւտար բառիւ՝ յայտնէ որ է Հանար կամ Ճոն:

3363. Մամըլխոտ.

Նորկեկ Բժշկարանի մէջ յիշուի, քոսոս գլխոյ դեղ, շատ բուսեղէն և հանքային
նիւթոց հետ:

3364. Մամուան.

Սահակ Տրապիզոնցի բժիշկն կ'ըսէ, « Գարու կու նմանի. Քիսպէէն կու գայ.
» աչից դեղ է »:

3365. Մասկուն կամ Մասկունի- Մահուկունի ?

Բժշկը. մի յիշէ նախ Մասկունի ճուարիչ, դեղ նիկրիտի և միջացաւի. յետոյ կ'ըսէ. « Ան Մասհուկունեայ հունդն, և Տարչին և Շէյտաուան.. ժեզրով » ճուարիչ արա, և տուր երեք տրամ » :

3366. Մարեմադաղծ.

Ի նորոց նուիրեալ թուի անունս՝ տեսակ մի Դաղձի, և զուգուած է Լ. Castus hortorum, որ չգիտեմ թէ հիմայ լսով՝ ի բուսաբանից :

3367. Մարսամոնա.

Բժշկարան մի նոյն համարի զսա և զՍիսամպար. տես զայս թ. 2755 և զվարսաման, թ. 2892 :

3368. Մկանխոտ. Մկնախոտ.

Թ. այլ այսպէս կոչուի, Սըլան օրի. ըստ Ասարայ և այլոց՝ Նարմուշկն է. թ. 2189: Պէտք չէ շփոթել զխոտս ընդ Մկնդեղոյ, որ չէ բոյս՝ այլ նիւթ :

3369. Մուրմ. — Տես Պուրմ, թ. 2896 :

3370. Յատպէ. Ատպէ.

Միս. Հերացի յիշէ զայս՝ խիստ լուծման դեղոց մէջ. Ամիրտուլվաթ կ'իմացընէ որ սա՝ Ար. 3370, Մոշոյ պտուղն է : Տես Մոշայ, թ. 2108 :

3371. Նաթրէ ?

Երկբայելի անուն. տես Սարկաւի, թ. 2720 :

3372. Նարնջխոտ.

Կամարկապցին գրէ Նարնջխոտ. « և այս խոտն, կ'ըսէ, լեռներն կուբուսանի. » Հերն՝ որպէս Խորտսի ծաղկէն դեղին է, և մօտ ու տակն որպէս երկուորն կախ » է ճղերոմն.. առ ծաղկոմն, քաբոմն, ճղերոմն, և եփէ ջրով, խմէ այգուց » (կինն) :

3373. Նարտան.

Իր ծաղիկը շատ անգամ յիշէ Բժշկարան մի, և Թրիակի նիւթոց հետ այլ. չափն այլ կ'ըսով նշանակուի, այս կամ այնքան տրամ :

3374. Նշուղ. — Տես Ուտրաք :

3375. Նրան ծաղիկ.

Ոչ Նոան ծաղիկն յիշուած ի Թ. 2227, այլ անծանօթ ծառի մի Արարիոյ. ըստ Ալիսարհզր. Խորենացւոյ, ուսկից հանէին անուշահոտ եղ մի, Նրան իւղ:

3376. Շապահի.

Պէյթ. գրէ քշահ, բայց Ասորիք կոչեն, կ'ըսէ Շապահի شاپاش. իրմէ կամ Սմիրա. առած Բժշկը. գրէ՝ « Խոտ-մն է, որ տերեւն նման է Մրտենու տե-
« րեւին, և կանանչ և դեղնութիւն կու քշտէ, և բարձրութիւնն երեք կանգուն կու
» լինի, և Ղերուն գագաթն՝ փշկներ և կարմրուկ վարդկներ և հատկներ ունի. և
» Թէ քամեն կաշտուկ չուր ելանէ. և տուր որ խմէ, օգտէ հազին և ղքարն հալէ.
» և մրգին չուրն եւս քարն կու հալէ »: Ըստ գիտնոց է Լ. Rhannus Paliurus. Փ. Paliuro, յազգէ Դժնկաց կամ Մորենեաց:

3377. Եկնջիթ.

Այսպէս՝ բայց գուցէ մասամբ սխալ ինչ գրուած ըլլայ բժշկական բառից հաւաք-
ման մէջ. և Թուի ոչ յատուկ բոյս, այլ մասն կամ պտուղ վայրենի ծառոց, ինչպէս
Եկնջին (Թ. 2320) և Ենակն (Թ. 2330). վասն զի գրուած է, « Մայրոյ վայրի Եկն-
» չիթ »: Ար. այլ նշանակուած Բագր-չայ ?

3378. Շղորտուկ.

Չուտ հայկական անուն՝ ուտելի բանջարեղէնի մի, ծանօթ ի Սասուն. փափա-
գելի է գիտնալ որպիսութիւնը:

3379. Շնախստոր.

Ի Բժշկարանս չեմ գտած այս անունս, այլ առ նորս, և գուգուած Լ. Ornithoga-
lum, Փ. Ornithogale, Ար. اسساج, որ է Երեշն, ըստ Ամիրտ. այլ ոչ յատուկն՝ որ
Լ. կոչուի Aspodelus, այլ տեմակ մի որ Թ. Չիրիչ կոչուի. այս զանազանութիւնը
կ'ընէ Պէյթար, և նախ Դիոսկորիատէս, և այլ գիտնականք:

3380. Շուքահի.

Պէյթար պատահարար յիշէ զայս شوكاش. իսկ Ամիրտ. յիշէ և Թ. անունը՝
» Ղաշաղան քիքանի. ինքն սպիտակ փուշ է, և կարմիր ծաղիկ ունի, և մեծ տե-
» րեւնի ունի. հով է քարճ. և չոր է քարճ. և ասացած է. Թէ յորժամ զայս
» խոտն ի տղակներուն բարձին ներքեւ դնեն, կտրէ զայն շողիքն՝ որ ի բերնէն
» կ'երթայ, և օգտէ ստամոքին գիճութեան. և ի լուծող գեղերն կու մտէ, և հին
» ջերմերուն օգտէ...: Ատէ Պտ, Թէ փուշ է, և իր ուժն Պատավարտ կու նմանի.
» և լաւն այն է որ կանանչ և դեղին լինի... Եւ ասացած է գրոցս շինողն Թէ ի
» Երբազ Հարմակ կ'ասեն, և ինքն ի լեռն և ի քարոտ տեղեր կու բուսնի. օգտէ

» ըսիպ ջերման և հով ջերմերուն » : Յետ այս բանից՝ բանիբուն քաղուած Բժշկարան մի կ'աւելցնէ . « Եւ Հայն Կոցոնի սաէ, և որձան որպէս Խիար կ'ուտեն » : Յարմար է այս ըսածն ստորագրութեան տեսողաց, բայց ոչ յարմար ուրիշ ըսուածներու Կոցուկի համար (Թ. 1814), և անոր զուգուած Heracleum ի : Արրնայ Շուքահին ըլլալ և հետեւեալն (Շուքաղ), թէ ձայնին և թէ ջերմահալած զօրութեամբ : Տես և Թերխաշ Թ. 783 : Գիտնականք այս փոտ Շուքահին համարին Spina arabica.

3381. Շուքաղ.

Միս. Հերացի (եր. 84) այլ եւ այլ նիւթոց հետ զուգէ զոս դեղ ջերմահալած. բայց թերեւս սխալ գրուած է, և ըլլայ Չուքաղ. տես Թ. 2474 :

3382. Շրուֆա ?

Բժշկարանք յիշեն այլ եւ այլ դեղոց խառնուածոյ մէջ, չափն այլ ունկիով. բայց որպիսութիւնը բացատրուած չեմ գտած :

3383. Ոջլաղեղ.

Թուի ի փռանկ լեզուէ՝ Herbe aux puces, առած է նոր Բժշկր. մի, թէ և Ար. Պզրկատուն անունն այլ գնոյն նշանակէ. յիշած եմք զայս ի Թ. 3540. Լ. կուչուի Pedicularis, Փ. Pédiculaire.

3384. Չաման Սեւ.

Արջնդեղն է, որ և Սեւ գնտիկ կամ Հնտիկ :

3385. ՉիԹլամուկ.

« Որ Հայն Կապուտիկ սաէ » . և է Բտումն տ. Թ. 368, ուր գրուած է և Թ. Չիչաղում, լսուի և Չէտլէմպիհ :

3386. Պախրու ագի.

Այսպէս այլ կոչուի նոյնանիշն Եզնագի :

3387. Պանմի.

Ար. ۱۰۰۰ « Պանման. խոտ-մն է որ ի յերդեստանն (տուներու երդիքն) » կու բուսնի, և տերեւն նման է Գարու տերեւին, և Չաւտարի գլխու պէս » գլուխ ունի. եօթ ութ գլուխ և ճիւղ կու ելնէ. և թէ Սերկեւի շարապով » խմեն, զլուծումն և զարիւնն կտրէ » : Տեսակ մի Որումն կարծեն գիտնականք :

3388. * Պարսինա.

Ըստ Պէյթ. որ ի Նարաթական վաստակոց գրոց առած է, نارسا Գեր-

սիանաւ. Բժկր. մի գրէ. « Ինքն խոտ-մն է որ անուշ հոտ ունի, և ի գազաթն »
 » հունդ ունի, և ծաղիկ չունի. յուլիսի յառաջի սրբերն կու բուսնի, և զմարդուն
 » անձն կու փառաւորէ, և ստամոքն կու տաքցընէ... և աչացն նլէ տայ, և
 » զղեղն ուժովցընէ, զսիրտն խնդացընէ. և թէ ի չրէն վարդի տերեւն խաւունես
 » և երեք տարայայ (անգամ) ի բաղանիսն օծես, զարկուց (վէրք) որ ի յանձն
 » սեւցել լինի՝ տանի. և թէ ի քիթն կաթեցընես, զղեղն յատակէ. և թէ իմ-
 » պիկով ջուրն հանես և տաս որ խմէ, զսիրտն ուրախ առնէ և խնդացընէ »:
 Փափագելի է այսպիսի սրտադիւր և խնդարար բոյս մի ճանչնալ. գիտնականք՝
 դեռ չեն ապահով իրենց գտածին, կարծեն թէ ըլլայ տեսակ մի *Chenopodium*
 կամ *Chenopodiana* կոչուածին, որ ըստ Յ. բառի նշանակէ Սագի ոտք, ուստի նոր
 բանասէրք մեր կոչած են Սագախոտ: — Ամիրա. համառօտ գրած է. « Պարսինս.
 » Ինքն բուս-մն է՝ որ ի կարօսի հունդ կու նմանի, և ինքն ի բորի դեղ կու
 » մտնէ. և ի Շիրազ այս դեղին թաղարտ? կ'ասեն »:

3389. Պետարիոն. — Տես Զափդ:

3390. Պնկիփանի տակ ?

Անծանօթ և երկրայելի, թէպէտ և բաւական լաւ գրուած Բժշկարանի մէջ,
 որ այլ և այլ նիւթոց հետ զայս այլ կարգէ՝ Պալատուրի (թ. 2483) մահուն
 զուգելու:

3391. Ռեման սուտ.

Այսինքն Սուտ Ռեման, ինչպէս յիշուի ի Բժշկարանի, և համարուի Հալպուպն.
 տես ի Շալակ 1601 թուոյ:

3392. Ռիզափակ ?

Նշանակուած է իբրեւ Քրքում. բայց կարօտի քննութեան և ստուգութեան:

3393. Սուսամ կարմիր.

Հայք այսպէս կոչեն զԱզաւի թուրն, ըստ Բժշկարանի միոյ. որ թ. անուամբ
 Ղուզղոսն գլխի կամ Քաջիկ Չիքտասի ստորագրէ. տես ինչ որ գրած եմք ի թ. 5:

3394. Սուտակ ճառ ?

Նոր Բժշկ. մի յիշէ ի կարգի դեղորէից խոզացաւի (կոկորդի խծկելու):

3395. Սպիտակ կոճ.

Վրացի կոճն է, ինչպէս և ներքոյ գրեալն

3396. Վրացի կոճակ. — Տես թ. 1462.

3397. Տամկալա խոսո ?

Ո՞ր լեզուէ ծագած է բառս. զոր նոր Բժշկր. մի գրէ դեղ երեսի պալարից :

3398. Տարաշնորն կամ Տարաշնորի.


Գալիենու բառից մէջ Կմբիլի, Անակոյի կամ Անակար ? Իբր Յ. զուգանիշ դրուի, իսկ Հ. ըստ այլ և այլ օրինակաց գրոցն, Տարաշնորն, Տարչնորն և Տարչնորն :

3399. ՓՅՈՒՅ կամ ՓՅՈՒՂ.

Հաւանական է բոյս ըլլալն. Տես Փտոս Թ. 3109 :

3400. Քակընջի տակ.

« Որ է Խուպային », ըստ բժշկական Բառգրոց. Խուպային մեծ Մուշն է կամ Տուղտն : Կամ նոյն կամ շփոթի ընդ Քաքանանի՝ որ է Յակորուկ. տես Թ. 3150. ուր և Ամիրտ. ըսածն. որ ուրիշ տեղ գրէ « Հապի Քաքանան, որ է Ճավզ » ըլլալն », որ նոյնպէս Տուղտի կամ Խուպայի պտուղը նշանակէ, և այս այլ կ'ըսէ. « Այն որ վայրի (է այնոր) Արուս տարփարտայ կ'ասեն, որ Թարգ. » մանի Հարսն քողած (գողած գրուած)... և լան անվոցն է » :



Շ Ա Լ Ա Կ

Թիւ 19. Ալանկի տակ. — Տես՝ Ալանկի Բաներար ի Թ. 309:

31. Ախլախնձոր. — Ըստ Ալաշկերտացոց Թզաշափ բոյս մի է անուշահոտ և գեղին ծաղկով:

38. Ալանդուկ. — Գրուած է նաև Ակրնգոռն, որ գուցէ սխալ ըլլայ, բայց գրողն կ'իմացընէ՝ որ կաղընչան է:

72. Աղտոր. — Հին Բժշկ. կ'ըսէ. « Հովու չոր է, ուտարն. առաջին. զոտու » մը փոթտէ և բանայ՝ վասն Թթուութեանն. և փոր որ ի սաֆրայէ լուծի՝ կա » պէ. և ինքն ի քացախի ի մօտ է: Իր ջուրն օգտէ լընդի և ակուայի, և թէ » զինքն վարդի ջրով Թրջես կամ Մրտենոյ, և ի վերայ կապես ստամոքին կամ » փորոյն, զփորցվուն փորն արդիլէ. և փողցվու վարդ ջրով Թրջած և քամած » խազալ այնքն՝ խիստ օգտէ »:

84. Ամլանի քառնոչան առանձին անուամբ Սոք կ'ըսուի արարերէն:

95. Անալուծ. — Խորեն. Աշխարհագրութեան օրինակ մի (վատիկանեանն) փոխանակ այս երկիմաստ անուան՝ գրէ. « Լինի ի նմա (ի Գուգարս) և Անոչ » խոտը ուտելիք »:

100. Անգուժատ. — Հին Բժշկ. գրէ Անկոժակ, և զուգէ դեզ զօրութիւն տալու. « Սոխ ունտ, Զնճախլ, Պղպեղ, Սոնիճ, Անկուժակ, աղա մաղէ, մեղրով » շաղէ », եւ այլն: — Ուրիշ Բժշկրն. սխալմամբ Թուի գրած Անկատ:

128. Աշմունիսայ. — Յիշուի և ի նոր Բժշկարանի:

153. Արիւծախոտ. — Առասպելական զրոյցը վատուկ. զիրքն առած է ի հնազոյն և նախնական Նարթական վաստակոց կամ երկրագործութեան գրոց: Տես Յառաջարանի երես 6:

178. Ատախոտոս. — Նորագոյն Բժշկր. մի գրէ, « Ուստոյխոտոզն՝ Ը » ուհանն է »:

188. Ատրաք. — Նոյն Բժշկր. յիշէ և զայս, և համանիշ՝ Նուշ և Աւոճ:

196. Արդուխա. — կամ Արթուղա, ինչպէս գրէ Բժշկարան մի, և « Սորա » նշանքն այս է, կ'ըսէ. Թուփ լինի. տերեւն Աննուխ նմանի կամ այլ սուր. » հոտ չունի »: և ուրիշ նիւթոց հետ խառնելով կսկիծ ցաւերու դեղ զուգէ:

230. Արջնձոյգ. — Բժշկր. մի գրէ. « Մատային (բժիշկն) ասէ, թէ որպէս » ընկուզ է, և ի վերան փուշեր կայ սուր, և ի մէջն հատեր ունի՝ որպէս Թու » բիննի հատեր »:

245. Արքայեկ. — Հին Բժշկարանին ըսածը՝ նոր Բժշկիր. մի գրէ. « Արպէս » Սունկ է. գիտ գինքն, և ի մի՝ ձու խառնէ և ծծծէ, և ի վերայ դիր. այրէ » և խալըսէ, և ի վայր ընկեմու ու: — Աղթարք գիրքն այլ՝ նոյն ցաւոյ համար կ'ըսէ. « ԶԱրքայեկն չորացո և լոսէ, և խաւծով կեր »:

250. Աւելախոտ. — Յատուկ այսպէս անուանածն շատ պղտիկ բոյս մ'է. որ. ձային երկու կողմէն ճիւղի տեղ մանրիկ տերեւներ ունի դէմ ընդ դէմ, նը. ման իմն Փիլուոնցի. տես Արշիփիլուոնցի պատկերը, Թ. 3060:

300. Բամբուկ. — Նմանի անուանո Գալիենու հին բառից մէջ գրուածն՝ իբր հոմանիչ Ամոնիակոնի (Ammoniacus), « ի Բամբուկ խունկ », կամ Բամբուկե. զոր՝ ոմանք համարին եղէգանման բուսոյ մի խէժ:

321. Բարձուկնեկ. — Էգ Բարձուկնեկն գրուած է եւս Էգարացուկնեկ:

333. Բեռնազնիկ. — Նոր Բժշկարան մ'այլ (փառնկերէնի հետեւող) յիշէ Բե. Բեգոյ Սերմե և իւղ. մի Թէ զկտաւատն իմանայ:

364. Բող. — Մըջմոյց կամ մըջմոյցն կոչուած մարմնոյ ետալու կամ քոսի՝ անահաւատ գեղ մի գրուած է ի Բժշկարանի, ուր յիշուի և նման անուն մ'այլ. բայց Թերեւս ոչ բոյս այլ կենդանի է. « Աղթարք Մըջմոյցն. Ա՛ա զհին պատի » ծեփն. Թքով շաղղէ յանօթից, և ան ի վերայ վերին զշողաղն. և ասա զս. » ղօթս զայս. Մըջմոյցն հերկ է արեր. Բող է լուծն, և Բողժ է հարորն... ի » վրան եթուք և չորացաւ. այնպէս Եղիցի և բժշկութիւն ծառայիս Աստուծոյ. » երեք օր այդպէս արա, և աղատի », եւ այլն:

375. Բորխոտ. — Անունն յարմարի Լ. Sabatilla. Իս. Sabadiglia կոչուածին:

388. Բտոււմ. — Գալիենու բառից հին օրինակի մէջ գրուած կայ Բտրմ:

421. Գառան դմակ. — Գրուի և Գառնուգնակ, կոչի եւս Գառնուգնալի:

424. Գառնալեզու. — Ասար բժիշկ յիշէ և վայրի Գառնուգնալ, օձահարի զեղ:

446. Գետնախնձոր (Երիցուկ). — Ար. այլ կոչուի այսպէս Թոնֆուկեղ-արգ:

488-9. Գինծ. — Մխիթար Հերացի՝ յիշէ և զԳալար Գինծ:

495. Գլգիլ. — Գրեթէ Մայծի չափ այլ հաստ կ'ըլլայ որձայն, և աւելի այլ երկայն. հասկերն այլ երկայնկուկ գունտեր ձեւանան կախուած, որոց իւրա. քանչիւրն հարիւրաւոր ճերմակ հատեր ունի Ոսպի չափ և նոյնպէս տափակ. զոր աղալով՝ Թոնրի հաց շաղղուն մէջ կ'եփեն: Այս է Սասնեցուց. ոգեպակիկ հացն և զլիտաւոր ուտելիքն. վասն զի իրենց քարոտ երկրին մէջ սա քիչ հողի վրայ այլ առատապէս կ'անի:

502. Գնծիկ. — Մաղկներն Նուշի չափ մեծութեամբ կանգառանեւ են, սուր սուր փշիկներով պատուած՝ որձային երկու կողմէն, իրարմէ հեռու:

522. Գորտնըուրդ. — Ի բժշկական Բառագիրս յիշի և Մովցի Գորտնըուրդ որ և Մովցի Դահլու, Ար. Տէնիկ:

538. Գրմակ. — Ըստ ոմանց է Խոնկարիճն կամ Տատրակ. տես զասոնք:

558. Դավարա. — Թերեւս այս է ք գրով գրուածն ի Բժշկարանի. « Դակ. » միհանգալի Թատարա »:

565. Դարչիշան . — Փշոտ պտուղը՝ « զերդ հակըտենի է », կ'ըսէ Բժշկը .
մի . այսինքն հակըթի նման .

573. عرق . — Ուղղելի է عرق Գարս կամ Ղարս :

579. Դեղին ծաղիկ . — Նորկեկ Բժշկը . մի գրէ . « Դեղին ծաղիկ մի կայ՝
» որ Ս . կարապետին ճամբէն կու գայ . չորը ա՛ռ » , եւ այլն . իրով եփելով դեղ
ըրէ դալուկ հիւանդութեան : Ամիրտ . յիշէ Թ . Դեղին ծաղիկ կոչածը , որ Ա . կո-
չուի ըստ Պէյթ . Ինս էլ-նէֆս اسفند (երբ շընչադիւր) , և ըստ Նարաթական
Վաստկ . գրոց՝ Իշքարաման اسكاطمان , որ Հ . Իշկաթնուկը յիշեցընէ (Թ . 868)
և հին Հայկազանց ժամանակը : Մեր Ամասիացին կ'ըսէ . « Ինքն խոտ-մն է՝ որ
» ի չոր տեղվանք կու բուսնի , և տէրեւն ի Զրկոտեմի տերեւ կու նմանի , և
» դեղին ծաղիկ ունի . թէ ոչխարն զինք ուտէ՝ զկաթն քայլեցընէ , և թէ այն
» կաթնէն խմես՝ կամ հում կամ եփած , զմարդն արբեցընէ՝ զէտ զգինի , և
» զսիրտն խնդացընէ . և օգտէ այն մեծ խորհրդին (? հոգոց) որ ի սավտայէ լինայ ,
» տանի , և խալըսի հիւանդն » : — Կիտնականաց՝ կարծեմ անծանօթ է այս
Ար . անուամբ բոյս :

580. حوخ . — Ուղղելի حوخ :

587. Դեւու ձար . — Գրուի եւս Դիւաձար :

647-8 Շաւառն եղէգն . Խունկեղէգն . — Ար . Ղասապ ըլ-գարիրէ ըլլալը
վկայէ Բժշկարան մի , « և ինքն Խունկեղէգն է » , գրելով :

669. Երեսնակ . — Ոմանք գրեն Երեսնանկ , և այսոր իմաստը զուգեն Անի-
ծած ծաղիկ կոչման :

689. Peucedane . — Ուղղէ Peucedane .

692. Զաֆրայ . زعفران . — Ուղղէ زعفران :

715. Զոխ . — Զոխո գրէ Բժշկ . մի և նկարագրէ . « կաթոտ լինի . տերեւն
» Սպաննախի և Բողկի նմանի » . և ուրիշ նիւթոց հետ քոտոտ զլսոյ դեղ գրէ :

742. Ընկոյզ . — Իր մասանց անուանց մէջ յիշուի և « Պոպոկ ընկուզի՝ որ
» հագուցեալ լինի » . որ Թուի արտաքին կեղեւն , նոյնպէս և Էնձակ , զոր յիշէ
Վաստկ . գիրքն (ՄԼԹ) , ուր և Թորիս , որ Թուի չոր Ընկոյզ :

753. Թամուկ . — Ուպհուլ . Բժկար . մի կ'ըսէ . « Յըրդուն պտուղն է , որ
» փշով է . տերեւն և պտուղն կարմիր , համն քաղցր և անսւշ » :

762. Թաղիկ . — Գայիենու բառից կարգին այլ գրուած է , Յ . « Անկան ?
» Թաղիկ կամ կառն » . ուրիշ մ'այլ գրած է , « Ակաք ? Թաղիկ . Էնկինառ .
» ինքն է կառ կամ կառոյ ձութ . ֆենկէր սախրզի » :

751. Թագուհույ խոտ . — Անշուշտ ի Փռանկաց առած կամ Թարգամնուած
է բառդ , որ է ըստ նոցա Herbe à la Reine .

775. Թաւընջակ . — Հին Բժշկարանն տեղ տեղ յիշէ Թորնձակ խոտ , և տեղ
մ'այլ կ'իմացընէ որ Պատրանպուէ է Թորնձակ խոտն . ուրեմն նոյն է սա ընդ
Թուրինիխոտի (Թ . 816) , և տարբեր նորոց ճանցած գարնան կանուխ ծաղկող
Թաւընջակէ :

803-4. Թորթ և Թորթիկ. — Ըստ անուանն և համազգիք պիտի ըլլան, նոյն պէս և Մեղրիկն՝ միատեղ յիշուած ի Սալաձորեցոյն. այս երեք ազգակցաց մէջ Թորթիկին պատշաճ համարիմ Լ. Borrage, Փ. Bourrache.

806. Թորմ. — Գալիենու բառից մէջ այլ գտուի գրուած Թորմ-Բակչոյ. ար. գէն Թորմուսն այլ՝ Յ. Θόρμος, մանր կամ եգիպտական Բակլայ նշանակէ:

807. Ի (վերջն) Թուգ. — Խորենացոյ Աշխարհագրութիւնն նա և ի Տայս նա հանգի նշանակէ, որոյ դրից նոյնաստիճան ըլլալով յիշեալ Մարտիրոս գաւառն, հաւանելի կ'ըլլայ այսոր Խոժոռնի կոչուած տեղոյ մէջ այլ գտուիլն:

814. Թուխմարան. — Կարծեմ պարոկերէն է, և կ'ըսուի Թէքնէքեան:

831. Թօփալախ. — Թուրքարէն է, Ա. Սառ կամ Սուա, Հ. Դուն, (Թ. 607), ուր բացատրուած է ինչ ըլլալն, նոյնպէս և նոյնանիչ Յ. անունն (Թ. 1407):

930 Լուացտակ. — Թուս անունն ուղղելի է Розмаринъ.

943. Լուֆաի. — Բժշկարան մ'այլ Չոր Տանձ գրէ զսա, ուրիշ անուամբ այլ, « որ է Ղոռսիտան? ». Թերեւս Թուրքարէն էր յետին բառս: Իսկ Կամարկապցին Լուֆահն Աֆիոն կ'ըսէ:

977. Խաղող վայրի. — Ար. Քարամի պարրի (կամ պարտանի), « Ինքն խոս—մն » է, ըստ Ամիրոս. որ երկայն երկայն ճղեր ունի. նման է Այգու ճղերուն, և կեղեւն ի վրայէն կեղեւած է. և տերեւն նման է Անապու—սայլապու տերեւին, և ծաղիկն նման է Կարմիր Հինային. և միրգն մանր է, և կուզ կուզ կու լինի, և յորժամ հասնի՝ կարմիր կու լինի. և թէ զտակն իրով եփես. և թէ խուերուն խմցընեն՝ օգտէ. և թէ զկուզերն ծեծես և օծես ի վերայ մանին՝ օգտէ... Եւ թէ զվայրի Խաղողին զգինին խմես՝ օգտէ ստամոքիդ և աղեց զանեբուն »:

790. Խայծելանի ծառ. Յիշուի և ի նոր Բժշկարանս, և է մեծ և ծանօթ Մայր ծառն. (Թ. 1963):

1014. Խառնուիմ. — Լաւ Բժշկր. մի ր տառիւ գրէ, և լեզուի զանկիկի կախուելուն դեղ. « Խախալ արա Խարթուի իրով և Հազրի իրով »:

1033. Խարձ. — Առակարան մի գրէ. « Հողագործ ոմն իշխան՝ ցանեաց » առ դետողն Բակլայ և Սիսեռն. իսկ սագերն և կռնկնին՝ ելեալ ի խարձէն » որ յեզր գետոյն, քաղցեալ ուտէին. և իշխանին տարեալ ակնատ յեզր Շամ. » քին », և այլն:

1089. Խիր. — Փոխանակ Սպիտակի՝ Դեղին Մանուշակ գրէ Բժշկարան մի:

1067. Խմի. — Թուրքարէն այլ Հրեշտակային անուանեալ Angelica բուսոյ՝ Մէլեք օրի կ'ըսուի, ըստ Թ-Հ. ձեռագիր Բառագրոց, ուր և Յ. Թարգմանօրէն նշանակէ սխալագրութեամբ Հրեշտակի տակ:

1093. Խոզկաղնի. — Նոր Բժշկր. մի գրէ, « Խոզի Կաղնին՝ որ է Քէտտէն է »:

1169. Խօսակ. — Կան օրինակք բառից Գալիենոսի, ուր Դարբինիճի տեղ Դա. րիճենի գրուի:

1133. Խորոտ. — Տես Թ. 1761, և 3373, ուր վկայուի դեզին ծաղիկ ու.

նենայն, փոխանակ մնաի կամ կապոյտ գունոյ. Թուի ուրեմն տարրեր տեսակ մի, կամ տարրեր ազգ բոյս:

1310. Ծնէբնկ. — կայ գրուած և Երենփոյ:

1370. Կաղամբ. — Յիշուի և Կարմիր կաղամբ, գլխացաւի դեղ, « Զկարմիր » կաղամբի ջուրն՝ քամէ և ի քիթն անծ. և զիւր բազուկն և զտերեւն ծեծէ և » ի վերայ ճակտին դիր »:

1303. Կանճրակ. — Կարծեմ ըստ բառից Գալիենոս՝ ոմանք հաւանին թէ նշանակէ Լ. Conza ըսուածն, որ է տեսակ մի կաղամբի, ուսկից եղ կու հա. նեն. անոր համար կոչուի եւս Լ. Brassica Napus olearia.

1324. Կառն. — Հին ձեռագրի մէջ գրուած կայ. « Ով զԿառնն տակն առ » իւրն պահէ, օձն չհարկանէ ». և դարձեալ, « Աչաց՝ հում մեղրով դիր օգտէ »:

1354. Կատուի ոտ. — Յ. բառիւ բուսաբանք կոչեն զայս Aeluropus, և տեսած են յԵրասխեան դաշտի:

1362. Կարկարիոն. — Գալիենոսի բառից մէջ այլ գրուի. « Բզուրն (հունոն) » Հանդակոկի՝ կարկարիոն ասի »:

1420. Կծուիչ. — Փ. անունն ուղղելի է Cranson.

1427. Կծմախոտ. — Գալիենոս բառից ուրիշ օրինակաց մէջ կայ՝ գրուած և Կծնակօր և Կծանկօր:

1456. Կոկոն. — Կամարկայցին զուգէ Խ. Իլուֆեր չէլէկի, և բացատրէ. « Գիւրարձակ ? Ժաղիկ մի է թօփգլուխ, հար ? է միջակ »:

1462. Կոն վրացի. — Ըսուած է և վրացի կոնակ:

1473. Կոյշ. — Գալիենոս լաւ օրինակ մի զուգէ այս բառս ընդ Դարիդէ, որ Թուի, Ար. Չարադեհ ճճին կամ որդն, որոյ համար Ամիրտ. կ'ըսէ, թէ Հայք կոչ կոչեն: Եթէ զԴարիդէ ուղղելի է Դարիդէ, միթէ Կոյշն այլ կարծելի չէ՞ Կոլ:

1501. Կորածի. — Ուղղելի է Կորաքի:

1514. Կոցուկ. — Տես Եուքահի, ի Բաւելուածն թ. 3380:

1523. Կուկնար. — Բժշկարան մի գրէ. « Առ Կուկնար, Սախըզի զէյթ ա. » զի(եաղի). Եամախի ձէթ », եւ այլն: Նոյնն ուրիշ տեղ այլ գրէ. « Քուքնարի » լուռիս որ է Խաչխաչի լուռին »: Հայագիր թուրք Բժշկարան մ'այլ գրէ. « Քուքնարից՝ Չամ ֆրստըղ »:

1529. Կուրեղիկ. — Ուղղելի է Կուրեղին:

1536. Կուաքանջար. — Գալիենոս բառից օրինակ մի գրէ Կաքանջար:

1566. Կրտիմ. Ար. անունն ուղղէ قرتين:

1577. Հագարածակ. — Սակակ Պոնաացի բժիշկն այլ յիշէ այս բառս. և զի սա շատ բան ի փռանկ գրոց աւեր է, Թուի թէ ասոնց Millepertua բառին Թարգմանութիւնն է:

1580. Հագարնաշան. — Ուրիշ Բժշկր. մ'այլ զուգէ Բաղեղան. « Սարմա-
» շուխ ասէ Թ. և ինքն սեւ միրգ ունի. և թէ զտակն ծեծես և տաս շանն՝ որ
» ուտէ, զսրահան տանի և չորացնէ »:

1583. Հագորան. — Պտուղն այլ Հագոր գրէ Բժշկարան մի:

1586. Հալեմիտուկ. Ուղղելի է Հալեմիտուկ:

1591. Հալիոն. Մնէբել. Բժշկարան մի կ'իմացնէ, թէ « ի Ղայսարի գե-
» ղանն (Կեսարիոյ գեղերում) շատ կայ »:

1593. Հալուկ. — Գալիենոսի բառք Հայիք գրեն, և զոյգ՝ Հոյն. Կերասին:

1597. Հալուէ (Եր. 351) Διο, ուղղէ Διο.

1601. Հալպուպ. — Ամիրտ. կ'ըսէ Հալպիպ. « Խոտի տակ է, ի Հնդկաց
» կու գայ. ի Սորնշան կու նմանի, և բնութիւնն տաք և չոր է Բ տրճ. և օգտէ
» նկրտին և ոսկրացաւին, զՍորընշանին գործն առնէ »: Գիտնականք ոմանք
համարին զաւ Լ. Mercurialis.

1617. Համեմ. — Ի բառս Գալիենոսի գրուի Համեմ, Յ. այլ Ամեմի:

1624. Հայրասպան. — Ար. անունն ուղղել Հայ:

1666. Հացհամեմ. — Մէկ տեսակն՝ քիչ զանազանութեամբ՝ կոչուի Լ. Tri-
gonella. Փ. Trigonelle.

1738. Հոսի. — Ի Բժշկարանս Հոսի կոչեմ կոչուի և Տրակաքանթա և Սա-
գահում. ուրեմն նոյն է ընդ Գագի խէժ:

1747. Հոլսամ. — Ոչ Խուզամա Արարաց, այլ Հոլսամէ, որ է իրաւ Lavandula.

1779. Զիւնծաղիկ. — Առաքել Սիւնեաց եպիսկոպոսն՝ նախ քան զՍալա-
ձորցին երգած էր,

« Զիւնծաղիկ կանուխ գարնան՝
Պայծառատիպ հողույդ փայլմամբ »:

1810-1. Ղարատ և Ղարտին նոյն է. ետքինս առաջնոյն հոլովածն է. Բժշկ.
մի գրէ. « Ղարատն՝ որ է Պարանդն. Հունան ասէ, թէ տերեւն հով է և չոր.
» օգտէ աղեց գաներուն... կ'եփեն և պատտեխ կու շինեն, Ակակիա կու լինի »:

1825. * Ղուլղաս. — Թէ և ի Գոնգեղ խաւրեցիւք (Թ. 800) զայս՝ քննել,
բայց տարբեր երեւի ըստ Պէյթարայ, յորմէ և Ամիրտ. գրէ. « Ինքն երկու ցեղ
» է. մէկ ածւոց և մէկ վայրի. ինքն ի ջրին մէջն կու բուսանի. նման է Դդումի տե-
» ռեւի. որձայ շունի »: Դարձեալ գրէ, « Ղուլղաս, որ է Ղալիայ. ինքն տերեւ մի
» է յայտնի. յածուննիքն կու լինի, և վայրի այլ կու լինի. և լաւն այն է որ յած-
» ուցն լինի... Ասէ Պա. Թէ ինքն բոյս-մն է որ ի ջրին մէջն կու բուսանի, և տերեւն
» նման է Դդմի տերեւին և որձայ և պտուղ չունի, և տակն նման է Ոչարուսին
» (Կիտրոն). և դուրսի դիհն կարմիր է քիչ մի, և մէջն սպիտակ է: Թուրքք այլ
» Ղուլղաս ասեն »: Ըստ գիտնականաց է Լ. Arum Colocasia.

1831. Ղուպուլ, ուղղել՝ Ղորպուլ:

1909. ՃՈՒՄՆՈՒՄ. — Բժշկը մի այսոր համար կ'ըսէ, թէ Պօստան աֆրօզն է. (տես Տան, Թ. 2915). « լաւն այն է որ ի շուքն շորնայ, և ստամբքն և զագիքն սրբէ »:

1910. ՃՈՒՂ. — Թ. Պալիխի տեղ՝ ուրիշ Բժշկը մի Պայճ օրոշ գրէ, նա և Ղաւայ դոֆէս ?

1918. ՃՕՂԻՐ. — Գալիենու բառից օրինակաց ոմանք գրեն Ճոշիր կամ Ջոխիր:

1947. Մանոռակ. — Տես վարը Թ. 1979:

1961. Մայծ. — Լ. անունն *Sea* ուղղէ *Շօս*.

1968. Մանդալ. — Բայտ է, ըստ Գր. Մագիստրոսի (Խուղթ ծԱ). « Գիտեմ և » այլ եւս աունկ համասեա... զծայրագոյնն ի նոցունց որ գերագոյնն է և պաւ » բարա, զՄանդալն անուանեալ »:

1971-2. Մանի. Մանիքեղ. — Թերեւս ասոնցմէ մէկուն համար գրէ Բժշկաւրան մի՝ դեղ զլիսացաւու և փորկապի. « Ջներբանքն հարուլ սուր Մանի տղեկով ? » և Խիարի միջով »:

1975. Մանիշակ. — Գրուած կայ նա և Մանեհայ :

1979. Մանրագոր. — Մեր Ս. Գրոց բառից մեկնիշ մի, Թերեւս Նրեմիա Մեղրեցի, պէսպէս բացատրէ. ի կարգին յիշեալ վաղահաս Խնձորէն զատ, գրէ նա և « Խնձոր, որ ի խոտոյ կամ ի մորիս ». դարձեալ, Մամաակ կոչէ (Թ. 1947). և « դարձեալ. Մանրագոր, ոչ է ուտելի այլ հոտոտելի. և բժիշկք հոտ ածեն » հիւանդաց »:

1986. Մարլայտակ. — Գուցէ նշանակի Մառօլի տակ (Հաղար) :

1989. Մավգան որ և Մավիգան. — Տես Չամիչ փայրի, Թ. 2444, և Հայրառորոշ ի Յաւելուածն, Թ. 3347:

2004. Մարգացնծու. — Այսոր զուգուած *Imperatoria* բուսոյ՝ Թուրք-Հայ Բժշկարան մի զուգէ Արքայարմա բառը:

2039. Մեղուախոտ. — Նոր Բժշկարան մի յիշէ զայս ուրիշ խոտոց հետ՝ դեղ շան խածածի. լաւագոյն Բժշկ. մ'այլ միայն Թ. անունով Առոշ օրի՝ ստորագրէ. « Ինքն » սպիտակ խոտ-մն է, և երկու ճուղ ունի, յերկայնութիւնն մէկ մէկ կանգուն և » այլ երկայն կու լինի. և անրեւն նման է Պոյի Չամառ ? տերեւին ». յետ յիշելու » քանի մի օգուաները՝ կ'աւելցընէ. « Եւ ոմանք այս խոտս ի մեզրին փեթեկին » մօտիկ կու ցանեն, վասն մեղու ժողովելու համար »:

2076. Մկնամիրգ. — Ալոճէն աւելի Նլակի նմանի մաշկին տեսքովը:

2082. Միաւորակ. — Լ. և Փ. անունները կարդա *Statio*.

2102. Մոծակի ծառ. — կոչուած է և Մոծակենի:

2123. Մուխալլասա. — Ըստ հայագիր Թուրք Բժշկարանի՝ Նախագ օրի:

2138. Մրկիթ. — Չեւով տափակ և սեւագոյն է, և ճգմելով ձէթ մի կ'ընծայէ. երկուքին այլ (գունոց և եղին) յարմարի անունն, իբրև Մուր կամ մրուր և կիթ:

2139. Մրուանտակ. — Թերեւս սխալմամբ գրուած կայ և Մարանդիտակ:

2166. Արարերէն բառն ուղղել **تأديان** :
2168. Նանախու. — Հացի դեղ անուան փոխան **Թ-Հ**. Բժշկարանն Հացուգոյ, գրէ . ուրիշ Բժշկարանն մ'այլ **Թ**. Տեյի Անխան :
2187. Նարինջ. — Կայ գրուած և Նարանն :
2189. Նարմուշկ. — Ըստ Ասարայ է Մկան խոտ. տես զայս ի Յանկուանն **Թ**. 3368 :
2206. Ննի. — Գայիենոսի յիշեալ Ատես բառը՝ ուրիշ օրինակք գրեն Արևու կամ Արունու, որ նշանակէ հոտաւէտ բայտ ըլլալը :
2209. Նուշ. — Միւ Հերացի՝ գեղաց մէջ գրէ և Սիրակ Նուշ. եթէ ուղիղ է գրուածն՝ Նշոյ տեսակ մի նշանակէ, թէ ասորեր բոյս :
2225. Նուռն. — Մեր Սիւնեաց եպիսկոպոս բանաստեղծ Առաքելն այլ՝ Պի. սիգեայ պէս Նուան վրայ զարմանալով, բայց հեռաւոր նմանութեամբ երգած է .
 « Թէ զարմանառ զու ընդ Փրկչին՝
 Ո՞րպէս յարեաւ կնքեալ վիմին,
 Չհատ Նըռան մ ստեղծ մին մին՝
 Մէջ բուրակ իւր պատենին » :
2247. Եանդանակ. — Եղուի և Ետեռանայ խոտն, և իր մուխն աչից գեղ :
2277. Ենկիար. — Աւելի պարզ կոչելի Եանիփար, կամ Ենիփար, զի և Բժշկը. մի կ'ըսէ, թէ այսպէս կոչեն Հայք :
2343. Եշի. — Փ. անունն **Cerésior**, ուղղէ **Cerisier**.
2356. (երես. 493). Ծրային Եուշան, ուղղէ **Ջրային** :
2403. Ոսպն. — Եղուի և լեռան Ոսպ, Ար. Առաս ըլ-նապալի :
2552. Պիւլօ կամ Պիոք. — Ըստ ոմանց տեսողաց՝ այս անուամբ կայ թուփ կամ ծառ մի բուրբի տերեւօք, և մանրիկ ու կարմրուկ ուտուելու պաղօք :
2662. Բաւանդիսենի. Ռեւանդ. — Բժշկարան մի՝ որ թուի Ասարայ, թէ և Գարին ասկն է կ'ըսէ և Խորժիլ, բայց և կու յարէ. « Չէ Գար, այս կու նմանի » ի Գարն, և իր ծլին մէջն փորսք, և ինք զէս անպակ ? գունն » :
2705. Սապու. — Գրուած է և Սասպուս :
2820. Ստաշին. — Մեր Ս. Գրոց բառագիր մեկնիչն՝ համարի զայս Հայուէի փայտ. վասն զի գրէ. « Ստաշին՝ անուշահոտ ազնիւ փայտ է, զոր Ոստ կոչեն » : Տես **Թ**. 1598 :
2912. Տակմուշտ. — Ուղղելի է Տահմուշտ :
2972. — Թէ և Նրոտ Դոմոյ տեսակ է Տոյն կամ Տոյ, բայց Բժշկարան մի յիշէ և յատուակ « Ջրի Տոյ կամ Ջրի Դոյում » :
3178. Քարոնշուշ, — Ուղղելի է Քարնշուշ :
3180. Քարուր վաքդ. գրելի է Քափուր :
3229. Օձի Սխտոր տես Բող **Թ**. 356 :

Տ Ա Ն Կ

ԼԱՏԻՆ ԵՒ ՓՈՒԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ԲՈՒՍՈՑ

Հ Ս Տ Բ Ո Ւ Ա Կ Ա Ր Գ Ի Ն Ո Ց Ի Ն

- | | | |
|--|---|---|
| <p>Abies 643
 — Pectinata 2347
 Abricotier 1198
 Abrotanum 321. —. Artemisia
 <i>Absynthe</i> } 3253
 Absinthium }
 Abutilon 2969
 Acacia 28
 <i>Acanthe</i>. Acanthium. 1278
 — d'Allemagne 54
 Acantholimon 1451
 Acasos 1238
 Acer 347. 794. 2088
 — Platanoides 1248
 — Tartaricum 2962
 Acetosa 360. 788
 Achillea (Fragrantissima) 270
 Acinos 1078
 Aconitum. Aconit 341. 746
 Acorus. Acore 4. 41-2. 311
 — Odorans 27. 311. 1883
 — Calamus 27. 311
 Adamanthide 2987
 Adiantum 1766
 Adonis (Flos) 187. 2877
 Ador 135
 Adragacantus. Adragante. 393
 Aegilops 91
 Aethionema 2967
 Agallochus. Agalloche 1598
 Agapanthus (Umbellatus) 2357
 Agaricus. Agaric. 796.
 1813. 3216
 Agnus Castus 509. —. Vitex
 Agrimonia 672
 Agrostis 2747. 3020
 Ail 1154</p> | <p><i>Ail sauvage</i> 1160
 Airelle 1633
 Aizoon 87. 3118
 Alangium 19
 Albuca (major) 2357
 Alchimilla. Alchimille 413
 Alga. <i>Algue</i> 1167
 <i>Alboufer</i> 2830. 470
 Alkekengi 143. 2150
 <i>Alistier</i> 1958
 Alisma 2755
 Alizari 18
 Alliaria. <i>Alliaire</i> 1156
 Allium 1154
 — Cepa 3185
 — Silvestrum 226
 Alnus 323. 888
 Aloe 1597. 964
 Alopecorus 340
 Alsine 340
 Althea 56. 1528. 2988
 — Arborea 781
 Alyssum. <i>Alysson</i> 1. 2865
 <i>Amandier</i> 2209
 Amaracus (Marjolana) 1076
 Amarantha 83
 Amaranthus (<i>Amarante</i>.) 2915
 Amaryllis 2357. 2706
 Ambrosia. <i>Ambroisie</i> 86
 <i>Amelle</i> 228
 Ammi. Ammium 1660. 2206
 Amomum. <i>Amome</i> 50. 1616
 — Racemosum 51
 Ammoniac 118
 Ampelobrason 88
 Amygdalis 2209
 Amyris (Giledensis) 280
 Anacardium 2483
 Anagallis 116.
 Anagyris 1018. 1102
 Anastasia 1850</p> | <p>Anchonium 578
 Anchusa 1029. 1570. 1782
 Andrachne —. Portulaca
 Androsenum 2012
 Anemone 83. 1656. 2915
 Anethum 2892
 Angelica. <i>Angelique</i> 363.
 1068
 <i>Anis</i>. Anisum 109
 Anoplangthus 53
 Anthedon 1474
 Anthemis 106. 445
 Anthericum 803
 Anthodendron 1184
 Anthoxanthum 578. 1070
 Anthriscus 2428
 Anthyllis 2197
 Antirrhinum 613. 1742
 <i>Aparine</i> 2549
 Aphaca 239
 Aphyllantus 3072
 Apiaster 2039
 Apios 832
 Apium 883
 — montanum 3186
 Apocynum (erectum) 2355
 Aquifolia 1481. —. Ilex
 <i>Arbousier</i> { 1930. 1624 [10
 Arbutus {
 <i>Arbre Saint</i> — à Chapelet
 — à perruque 2190
 — des moucherons 1438
 Arec (Catechu) 3093
 <i>Arganier</i> 2209
 Argemona. <i>Argémone</i> 2454
 Argyrolobium 1166
 Arisarum 2867
 Aristide 468 [728
 Aristolochia. <i>Aristolochie</i>
 Armeniaca (Prunus) 1198
 <i>Armoise</i> 501
 — Pontique 321</p> |
|--|---|---|

- Armoracia. *Armorain* 1420
 Arnica 3102
 — *Montana* 2393. 2857
 Arnoglossum 402 =. *Plantago*
Arrête-bœuf 861
Arroche 764. 1796.
 Artemisia 321. 501. 1615
Artichaut 240. 1291
 Artocarpus 2221
 Arum *Colocasia* 2221 ζ .
Arundo 644 [1825
Asarum 13. 2139.
Ascalea 264. 565
Asclepias 264. 2982
Ascyrium 200
Aspalathus. Aspalathe 565
Asparagus { 177. 1210
 Asperge
Asperula (odorata) 459
Asphodelus. Asphodèle 757.
 3287
 — *Filix* 2604
Aspidium. Aspidie 237
 — *Aculeatum* 3060
Asplenium 213. 1161. 1766
 3060
Assa fœtida 2396
Aster Atticus 516
 — *Amellus* 228
Asterochiton 493
Astragalus. Astragale 960
Athamanta (Peucedanum)
 928
Athanasia. Athanasie 2043
Atractylis gummifera 453
Atriplex 764. 823. 1796.
 2676
 — *Halimus* 1216
Atropa (Mandragora) 1979
Aubépine 2839
Aubier 2158
Aulne. Aune 323
Aunée 1426
Aurantium 2187
Auricula leporis 2174
Aurone 321
Aurum ~~4~~ Ascyrium 200
Aveline 242
Avena. Avoine 2891
Avocatier 2537
Azedarach (Melia) 10
Azerolus. Azérolier 22
Baccaris 271. 685. 692.
 1028
Bacchæ Lauri 1332. 2285
Bacchion. Bachium 520
Badamier 2556
Balaustium. Balauste 2227
Ballota. Ballaute 2613
Balsamea 2617
Balsamina =. Momordica
 — *Suaevolens* 97
Balsamodendron 2124
Balsamum 280
Barbe de Chèvre 1828. 3064
Barbeau 981
Bardana. Bardane 520
Basilic 2663
Basserole 235
Batrachium =. Ranunculus
Bdellium 2124. 3153
Behen albus 3077
Behmen 3077
Belladonna. Belladone 2782
Belle-de-nuit 35. 492
Bellio ζ 3348
Belliric 2556
Bellis 2165. 3348
Berberis 1218
Berce 54. 1514
Beta 276. 1838
 — *Sylvestris* 1840
Betonica. Bétoine 787. 1009
Betterave =. Beta
Betula 793
Bidens 1447
Biliric 353
Bistorta. Bistorte 1969
Blattes de Bysance 1775
Blé 3026
Blechnum 999
Blète 285. 1195
Bletum. Blète 1363. 2121.
 2900
Bluet 981. 1204
Boletus. Bolet 797
Bouton d'or 1602
Branca Ursina (Italica) 54
Brassica 1270
 — *Botrytis* 1270
 — *Napus* 2788 ζ . 1303
Brésil 2070
Britannica 1047
Bromus. Brôme 803. 3027
 — *de Seigle* 1165
Bruyère 2108
 — *arborescente* 3009
Bryonia Alba 950
Bubonium 516
Buglosse 614
Bugrane 861
Buis 3005
Buisson ardent 3018
Bulbe 3096
 — *vomitique* 709
Bulbus 190. 1467. 3096
 — *Sylvestris* 69
Bunium 682. 2754
 — *Bulbocastaneum* 269
Bupthalmum. Bupthalme.
 618. 2420. 2873. 3352
BursaPastoris 1230 *Bourse*
 à pasteur
Buxus 3005
Cadmie 809
Caffier 1799
Calament (Achinos) 1078
Calamintha 1461
Calamus 646
 — *odorans* 1883
Calla 47
Caltha 1787
Camomille 446
Campanula. Campanule
 1385
Camphora. Camphrier 3182
Canna 644
Cannabis 1296
Cantharellus 2174
Capillaire 1766
Capillus Veneris 1766. 2769
Capparis 1319
Caprier 1319
Caprificus 807
Caprifolium 1851
Capucine 35
Cardamina 168. 3158
 — *hirsuta* 3158
Cardamomum. Cardamom
 1359. 1931
 — *Petit* 3330
Cardia mixa 2825
Cardopatum 1610
Carduus 46. 1324
 — *Benedictus* 884
Carex 373
Carnillet 3077
Carota. Carotte 2831
Caroubier 662
Carpesium. Carpesie 8
Carpinus 1196
 — *Betulus* 2535. 2608
Carthamus. Carthame 176
 — *oxyacanthus* 176. 519
Carvi 1858
Carvum 3158
Caryophyllus 2033
Cascarilla 385
Casse 1329
Casse-lunette 981
Cassia Fistula. 841. 1262.
 1329. 2887
 — *Senna* 74
Cassier 2887
Castanea 2237
Castus hortorum ζ 3366
Catapodium. Catapuce 1938
Caucalis 364
 — *Daucoides* 364

- Cèdre* 1963
Cedrela 1869
Cedrus 1963
Celsia 2236
Celtis 387
 — *Australis* 892
Centaurea. Centaurée 1888.
 2947
 — *Calcitrapa (Chausse-*
trape) 2002
 — *Cyanus (Bleuet des*
Blés) 1204
Centaureum 981
Centinodia. Centinode 207
Cepa 2789. 3185
Cerastium 1912
Cerasus 282. 1393
 — *Mahaleb* 2343
Ceratonia Siliqua 662
Cercis (Siliquastrum) 219.
 946
Cerisier 1393
Cerrus 1093
Chalef 3076
Chamæcyparissus 451
Chamædactylis 457
Chamædaphnus 455
Chamædris 906. 1391
Chamalium 1610
Chamelea. Chamelée 512.
 987. 2946
Chamæleon 453. 1362. 1610.
 2946
Chamæmelum 446
Chamæplatanus 454
Chamæpytis 1116. 1391.
 1516. 1853
Chamæsyca 1016
Champignon 1813
Chantarellus. Chanterelle
 2174
Chanvre 1296
Chardapastum ? 453
Chardon 46. 1324
 — *Béniit* 519. 884
 — *Penché* 565
 — *Rolande* 1828
Charme 1196. 1254. 2608
Chartolepis 556
Chataignier 2237
 — *d'eau* 3072
Chausse-trape 2002. 2929
Cheizanthus 426. 2257
Chelidonium. Chélidone
 579. 1192. 1300. 1950
Chêne 1273
Chêne Brosse 3075
 — *à Kermès* 79
 — *Vélany* 1093 [3388
Chenopodium. Chénopode.
- Chèvrefeuille* 122. 1851
Chicorée 635
 — *sauvage* 992
Chiendent 224
Choin 2845
Chondrilla. Chondrille 1864
Chou 1270
 — *Cabus* 1270
 — *Fleur* 1270
Chreston ? 3189
Chrysanthemum 1410.
 2401
Cicer 2757
Cichoreum 635
 — *Endivia* 464
Cicuta 1072. 2467
Cidonia 2738
Cigué 1072
 — *grande* 2555
Cinara 1291. 1540
 — *Cardunculus* 736
Cinchona 385
Cinnamomum. Cinnamome
 561. 1404
Cirier 2064
Cistus. Ciste 889
Citrus. Citronnier 1408
 — *Bigaradier* 815
Citrullus. Citrouille 573
Citrus (vulgaris) 815
Clematis. Clematide 1736
 — *Vitalba* 2317
Clymenum 1353
Cnicus (benedictus) 519
Cnidium (Daphne) 57
Coccus (Gnidios) 512
Coccoecypselum 1359
Coclearia 2731. 2935
Coco 2178
Coffea 1799
Colchicum. Colchique 1779
 — *Autumnale* 2706
Colza ♀. 1303
Colocyntis. Coloquinthe
 209. 1626. 1789
Concombre 2888
 — *sauvage* 865
Conferva 2644
Conium 1072. 1476
 — *Maculatum* 2555
Consiligo 133
Consolida. Consoude 262.
 1623. 2268
Convallaria 2360
Convolvulus Arvensis 312
 — *Cœruleus* 2514
 — *Jalappa* 2622
 — *Niloticus* 898
 — *Scammonica* 2627
Conyza. Conize 927
- Conyza Odorosa* 2255
Coquelicot 1656
Coqueret 2150
Cordère 946
Coriandrum. Coriandre 487
Cornus. Cornouillier. 716.
 1715
 — *Mascula* 716
Corona imperialis = *Fri-*
tillaria
Coronopus 2754
Corydalis (alpina) 110
Corylus 1972
Costus (amarus) 1310
Cotoneaster (Pyracantha)
 3018
Cotonier 298
Cotyledon 3179
Coudrier 1972
Cranson (rustique) 1420
Cratægus. 1564. 1958. 3018
Cresson-alénois 718. 1490
 — *amère* 1491
 — *d'eau* 1493
 — *de fontaine* 1492
Crête de Coq 1670
Croton (Tiglim) 2917
Crocus 3230
 — *Vernus* = *Colchi-*
cum autumnale
Crozophora (tinctoria) 670
Cubèbe 3133
Cucubalus Behen 3077
Cucumis 2888
 — *Chemam* 77
 — *Indicus* 2582
 — *Melo* 2734
Cucurbita 573
 — *Citrullus* 1788
Cuminum. Cumin 2437
 — *Armenicum* 2439
Cupressus = *Cypressus*
Curcuma 580. 2817
 — *Zedoaria* 819
 — *Zerumbat* 727
Cuscuta. Cuscute 409. 1334
 — *Epithimum* 3080
Cyamus 497
Cyanus 981
Cyathus. Cyate 3049
Cyclamen. Cyclame 192.
 236. 759
Cychorium 992
Cydonia 2738
Cyminum. = *Cuminum*
Cynodon 224
Cynoglossum. Cynoglosse
 2274
Cynomorium Orobanche
 1287

- Cynorrhodon 1987
 Cyperus 1407
 — Rotundus 602. 2129
 Cypressus. *Cyprés* 2212
 Cyprés 1406. 1689
 Cytinus 2226
 Cytisus. *Cytise* 838. 1673
 Dactylis 221
 Daphne Gnidium 512
Dattier 221
 Datura Stramonium 230
 Daucus Carota 2831. 2987
 — Creticus =. Eremodaucus
 Densocanis 224
 Dentaria. *Dentaire* 476. 1276
 Deodara 1273. 2955
 Dianthus 2033
 Dictamum. *Dictame* 583.
 2127
 — Creticum 996. 1071
 Dioscorea 1158
 Diospyros =. Celtis Australis
 Dipsacus 946
 Dolicus. *Lablab Dolique* 887
 — Melanophthalmus.
 D. à l'œil noir 592
 — Seisbten 2759
 Doradille 213. 1161
 Dorema Ammoniacum 117.
 3252
 Doronicum. *Doronic* 566
 — Pardalianches 746
 Dorycinium. *Dorycine* 1047
Douve 626. 1866
 Draba. *Drave* 1494. 1866
 Dracæna 302
 Dracocephalum 2010
 Dracunculus 2940
 Drymis 1206
 Dryopteris =. Polypodium
 Dufresnia. *Dufrène* 1306
 Dulcamara 176
 Dulcis Radix 3128
 Ebenus. *Ebène* 2397
 Ebulus 456
 Ecbolium (agreste) 869
 Echinus 1436
 Echium 30
 — Plantagineum 610.
 2485
Eglantier 2871
 Elate 3312
 Elatine 20
 Eloagnus 3076
 Elaterium Momordica 865
 Eleodendron 2209
 Eleusina (indica) 290
 Emblic 84
 Empetrum 3218
 Endivia 635
Epeautre 1902. 3042
Épervière Piloselle 735
 Epilobium 142
Epinarde 2348
 Epithymum 3299
 Equisetum. *Equisette* 1774.
 2270
Erable 347. 794
 Eragrostis 1602
 Eranthis (hyemalis) 1462
 Eremodaucus 2784
 Erica 168. 965
 Erinus. *Erine* 29
 Eruca (sativa) 1865
 Ervum 64
 Eryngium. *Eryngé* 683. 687
 — Campestre 1828
 Erysimum 1156. 1762
Esparette 160
Estragon 2940
 Eunomia 2967
 Eupatorium. *Eupatoire* 175
 669
 — *E. Chanvrine* 735
 Euphorbia. *Euphorbe* 280
 — Latyris 2933
 — Peplos 2500
 Euphrasia. *Euphrasie* 139
 Faba 284
 Fabago. *Fabagelle* 1772
 Fagus 2430
 Felandrium 923
Fenouil 273. 2668
Fénu grec 352. 1666
 Ferula. *Férule* 361
 — Persica 2539
 Festuca. *Fétuque* 2318
 Fève 284
 Ficus 807
Figuier 807
 — *sauvage* 1016
 Filipendula. *Filipendule*
 3119
 Filix 2714. 3060. 3263
 Flacurtia (cataphrasta) 698
 Flos Adonis. Adonide 181
Flouve 578. 1070
 Flox 3203
Fluteau 1733
 Fœniculum 273. 2668. 2693
 Fœnum grecum 352. 1666
Fougère 308. 2604
 Fraga 3304
 Fragaria 444. 624
 — Sylvestris 625
Fraisier 624-5
 Fraxinus { 1661
Frêne {
- Fritillaria. *Fritillaire* 748
Froment 3026
 Fumaria { 11. 1956
Fumeterre {
 Fungi 2804
Gaillet 1533, 1560
Gainier 219
 Galanga 1121
 — Radix 3351
Galantine 1089
 Galanthus 1779
 Galbanum 100. 118. 1945.
 2396
 Galium 1533 1560
 — Aparine. 2549
 Galla 498
Gambaud 2491
Garance 2981
Gattilier 509
Gené. =. Genista
Génévière 478
 — *Sabine* 420
 Genista 3258
 Gentiana. *Gentiane* 356.
 529. 684. 1722. 3242
 — *As Clepiadea* 2982
 Geranium 468. 2067
Germendrée 906
 — *Maritime* 2024
Geste 1938
 Geum (urbanum) 389
Gingembre 1465
 Gingidium 354
Giroflée 426. 2033. 2257
 Gladiolus { 191
Glayeul {
 Glechoma 442
 Globularia (arabica) 1627
 Glycyrrhiza 1997
 Gnaphalium. *Gnaphale* 1842
 — Sanguineum 692
 Gossipium 298. 1442
 Gramen 2747
Grand Baume 97
Grémil 1380. 1382. 1826
Grenadier 2225
Griotte 282
Groisaillier 1459
Gui 1910
Guimauve 2988
 Gypsophile 3022
 Halenia 1592
Haricot 931
 — *Caracole* 1952
 Hedera 292
 — *Helix* 2543. 3066
 Hedysarum 1511
 — *Onobrychis* 889
 Helenium 1426
 Helianthemum 198

- Helichrysum 104
 Heliotropium 201
 Helleborus. *Hellébore* 1462
 Helxine 140
Hépatique étoilée 459
 Heracleum 783. 1514
Herbe à Paris 62
 — à la Reine 751 ζ .
 — aux Chats 1345. 2024
 — aux Perles 1826
 — aux Puces 1559
 — de la Saint-Jean 501
 — Seine 3077
 Hieropteris 2580
 Hexanthus 2379
 Hibiscus 296
 — Esculentus 2491
 — Pentacarpus 296
 Hieracium 657
 — Pilosella 735
 Hieropteris 2580
 Himenæa 2657
 Holcus 3220
 — Panicum 1771
 Hordeum 430
 Horminum. *Horminelle* 222
Houblon 417. 1746
 Humulus (Lupulus) 1746
 Hyacinthus. *Hyacinthe*
 2149
 Hyosciamus 59
 — Orientalis 1761
 Hypericum 2073
 — Pulchrum 206
 Hypocistis 2226
 Hysopus. *Hysope* 718
 Iberis 1497
If 438. 1939
 Ilex 110. 2772
Immortelle des Alpes 1842
 Imperatoria. *Imperatoire*
 2004
 Indigo 897
 Inula. *Inule* 516
 — Pulcinaris 927
 Intubus 1464
 Ipecacuhana 2402
 Iris 1692. 2358
 — Iberica 53
 Isopyrum. *Isopyre* 869
Ivraie 2415
 Ixiolirion montanum 2362
Jacinthe 2149
 Jalappa (Convolvulus) 2622
 Jasminium. *Jasmin* 2152
Jonc 1437. 2620
Jonquilla. Jonquille 3262
Soubarbe 422
 — des tois 976
 Jovis barba 976
 Juglans (Nux) 742
Jujubier 2157
 Juncus 1437. 2620
 Juniperus (Sabina) 153
 420. 478. 1783
Jusquiamé 59
 Lactuca 1575
 Lagochilus 658
 Lagurus 2173
Laiche 373
Laitron 871. 1243
Laitue 1575
 Lalemantia Iberica 1309
 Lamium. *Lamier* 652
Langue de passereau 1764
 Lapatum 251. 891
 Lappa 1539
 — Major 1878
 Lapsana. *Lapsane* 955
 Larix 890
 — Pinus 1388
 Laserpitium 736
 Lathyrus 1938
 — Tuberosus 1353
 Laudanum 778
 Laurus. *Laurier* 1332
Laurier-Amandier 1225
 — Cerise 1225
 — Rose 591
 Laurocerasus 1225
 Lavandula (Spica). *Lavan-*
de 116. 1747
 — Stæcas 616
 Lawsonia inermis 1689
 Lemna minor 1784
 Lemonium 2276
 Lens 2403
Lentille d'eau 1784
 Lentiscus. *Lentisque* 388.
 1684
 Leontodon 64
 Leontopetalon 236. 1914
 Leontopodium 1842
 Lepidium. *Lépidie* 111. 2220
 3126
 — Latifolium 2568
 Leptandenia 2021
 Leucojum 1976
 Libanotis 698. 911.
 Lichen 51. 189. 3163
Lichen-Mousse 3254
Liège 2781
Lierre 298
Lierre de terre 442
 Ligusticum. *Ligustique* 118
 Ligustrum 1689
Lilas de Perse 667
 Lilium 2356
 — Convallium 2360
 — Syriacum 2362
Limonier 914
 Limonium 425
Lin =. Linum
Lingua avis 1764
 Linum 1555
Lis 2356. =. Lilium
 Lithospermum 1380. 1382.
 1826
 Litsea 2379
Lizeron des Champs 312
 Lonicum Iberica 279
 Loranthus 1833
 Lotus (Dyospyros) 1627
 — Ornitopedioites 7
Lotus sauvage 1627
 Luffa 943
 Luma 2005
 Lupinus (albus). *Lupin*
 670
 — Sativus 826
 Lupulus Humulus 1746
 Lutea 2357
 Lychnis (Orientalis) 1613
 Lycium. *Lyciet* 1574
 Lycoperdon. *Lycoperde* 367
 Lycopersicum 2575
 Lycopodus. *Lycopode* 1297
 Lysimachia 2970
Maceron 1769
 Macis =. Polypodium
Macle. Maore 3072
 Mahagoni 1869
 Mahaleb 2343
 Mais 1961
 Majorana 116. 2065
 Malabatum 1337
 Malathrum 1250
 Mallotus 143. 1436
 Malus 1082
 — Armeniacus =. Ar-
 meniaca
 Malva 58. 2099
 Mandragora 950. 1979
 Marathrum 2693
Marie-bregne 2015
Marjolane 116
 Marrubium. *Marrube* 2045
 Martagon 2362
Massette 2413
 Matricaria. *Matricaire* 33.
 194. 1937
Mauve =. Malva
 Medicago 158. 173
 Melagria 2675
 Melampyrum 231
 Melilotus. *Métilot* 1511
 Melissa. *Mélisse* 816
 Melissophyllum 2039
Melon d'eau 1788
 Melongena. *Mélongène* 2519

- Melopepo. *Mélopépon* 2047
 — *de Coq* 97
 Memecylon 2890
 Menispermum *Cocculus*
 609. 3332
 Mentha. *Menthe* 96
 — *Sylvestris* 98. 545.
 3155
 — *Arvensis* 549
 — *Rubra* 548
 Mercurialis. *Mercuriale*
 1433. 7. 1601
 Mespilus 712
 Meum 1219
 Michelia 1845
Micocoulier 892
 Milium. *Millet* 1505
 Millifolium. *Millefeuille*
 1581
Millepertuis 206. 2012.
 7. 1577.
 Mimosa 304. 2596
 — *Nilotica* 1542. 2417
 Minum 2206
 Mirabilis *Jalapa* 35. 492
Molène 609
Molle 1221
 Momordica (*Elaterium*) 865
Morelle 1443
 Morina 53
 Moringa 2494
 Morus 439. 808
Moscate 1916
Mourier 808
Mouron 2950
Mousse 1957
Moutarde 1420
Muftier 613. 1742
Muguet 2360
 — *Petit* 459
Mulgedium. *Mulgédie* 1249.
 3085
 Musa 2120
 — *Paradisiaca* 2145
Muscari. *Musquet* 2499
Muscus 1957
 — *Arboreus* 3254
Mylium. *Myle* 2760
Myosotis 116. 2072
Myrica 2064
Myriophyllum. *Myriophyl-*
le 1581
Myristica 1916
Myrobalanum. *Myrobalan*
 302. 1590
Myrra 713
Myrrhis. *Myrrhe* 713. 2382
Myrtus. *Myrte* 2132
Napellus 2336
Napus 2258
Narcissus. *Narcise* 2176
Nardus. *Nard* 2184
Nascaphton 304
Nasturtium 1490
Navet 2258
Néflier 712
Nelumbium 477. —. *Cya-*
mus
Nénuphar 2214
Nepeta 176. 1345
Nerium 591. 1915. 2881
Nerprun 588. 2151
Nicotiana 751. 1109
Nielle { 227
Nigella. {
Nivéole 1976
Noisette 242
Noix 742
 — *Arménienne* 744
 — *de Gale* 498
 — *de Terre* 269
 — *Métel* 230
 — *Vonique* 230
Nux (*Juglans*) 242
 — *Indica* —. *Coco*
 — *Muscata* 745
Nymphaea 1456. 1655. 2205
 — *Nelumbo* 285
 — *Nenuphar* — *Alba*
 1785. 2214
 — *Lotus* 940
Ohier 2158
Ocinum 2663
 — *Basilicum* 1674
 — *Pilosum* 1078. 3039
Oeillet 2253
Oenanthe 480
Oenothera 142
Ognon 3185
Olea 1776
Oleago 512
Oleander. *Oléandre* 591.
 1915. 2881
Oleaster 1496
Olivier 1776
Onobrychis 160
Ononis 861
Onopordon. *Onoporde* 1278
Onosma 3251
Ophioxylum 3245
Ophris 2278
Opium 261
Opopanax (*Pastinaca*) 1918
Opulus 2158
Orange 2187
Orge 430
Origanum. *Origane* 721.
 2426. 3155
 — *Amaracus* 1071
Ormenis 771
Orme —. *Ulmus*
Ornitogalum. *Ornithogale*
 3379
Orobanche 53
Orobus. *Orobe* 3196
Ortie 650
 — *des marées* 652
Oryza 2419
Oseile 251
Oayris 267
Oxalis. *Oxalide* 425
 — *Corniculata*. *O. Cor-*
nue 2548
Oxyacantha 87. 2839
Oxylabathon 251.
Pæonia 1009
Palicurea 2458
Paliurus 437
 — *Aculeatus* 3209
Palma 221
Panais 396. 3231
Panax *Asclepiu* 1928. 2480
Panicum. *Panic* 1771
 — *Miliaceum* 434. 1505
Panicaut champêtre 1828
Papaver 1000
 — *Rheas* 1001. 1656
 — *Nigrum* 1003
Paquërette 3348
Papyrus 2620
Pardalianches 811
Parietaria. *Partéaire* 140.
 541
Paris 923
 — *Quatrifolia* 62
Paronychia 3231
Parthenium. —. *Matricaria*
Pas d'âne 1110
Passerina. *Passerine* 512
Pastèque 1788
Pastinacea 396
Patate 445. 452
Pavot 1000
 — *Coquelicot* 1001
Pêcher 580
Peganum. *Pégane* 2879
 — *Harmala* 2815
Pelargonium (*Triste*) 35
Pensée 2063
Pentaphyllum 70. 1690
Peonia. *Péonie* 1009. 1182
Peplis 1017
Peplus (*Euphorbia*) 2500
Pera moscata ? 80
Percil 11
Perdicium 1384
Perdrigon 2417
Perlière des Alpes 1842
Persea 2537
Persica 580

- Personata 2424
Pervenche (grande) 455
Pet d'âne 874
Petrocallis 1866
Petroselinum 11. 503. 3130
Peucedanum. Peucedane.
 689. 1945
Peuplier 1269
 — *Blanc* 1647. 1269
 — *Tremble* 1501
Phæopappus (salignus) 556
Phaseolus 931
 — *Caracalla* 1952
 — *Mungo* 1982
Phelippea (coccina) 53
Phlomis 326. 609
Phoenix 221
Photinia 3262
Phyllantherum 923
Physalis (Alkekengi) 2150
Phyteuma 1187
Picea (Pinus) 1936
Picridium. —. Sunchus
Picris 486
Pilosella. Piloselle 657.
 1755. 2820
Pimpinella 210. 2740. 2748
Pinus. Pin 782. 1936
 — *Armena* 3061
 — *Sativa* 3061
Piper 2562
 — *Cubeba. Cubébe* 3138
 — *Longum* 559
 — *Officinatum* 2567
Piperitis 2568
Pissenlit 1536
Pistacea. Pistachier 388.
 2552
Pisum (majus) 2387
Pivoine 1182
Plane 1248
Plantago { 402. 2629
 Plantain {
 — *Alisma* 1733
 — *Coronopus* 1559
Platane. Platanus. 2848
Poire. Poirier 2918
Poivre. Poivrier. 2562
 — *Long* 559. 2567
 — *d'eau* 2564
Polium (montanum) 1076
Polmonaire 2051
Polygala 1244 [2804
Polygonatum 1569. 2695.
Polygonium 1991
 — *Aviculare* 207
 — *Hydropiper* 2564
 — *Bistorta* 1969
 — *Lapatifolium* 2569
Polypodium 308. 1431
Polystichum 3060
Pomettes de doux closes 22
Pomme. Pommier 1082
 — *à cidre* 554
 — *d'amour* 2575
Pomus 1082
 — *acerba* 554 [2430
Populus. Peuplier 1269.
 — *Libica* 1501
 — *Nigra* 36
 — *Tremula* 323. 1917
Porrum. Porreau 2612
Portulaca 123. 3115 [2479
Potamogeton. Potamot 468.
Potentilla 70
Poterium 669. 1886
Pouliot 545
 — *de montagne* 1076
 — *de jardin* 2127
Pourpier 123. 3114
Præcox 2526
Præmium 389
Prasium 1735
Prime 389
Primevère {
Primula { 775
 — *montana* 1023
Protea. Protius 2617
Prunus. Prune 551. 2683
 — *Sylvestris* 1951
Psyllium 174. 1559
Ptarmica 2857
Pteris 308. 2604
Ptychotis (verticillata) 7
Pulegium 545. 927
 — *Mentha* 1315
Pulicaria 927
Pulmonaria 820. *Pulmo-*
 naire 2051.
Punica 2225
Pyrethrum. Pyrèthre 44.
 365. 3235
Pyrola. Pyrole 2824
Pyrus 2918
 — *Sylvestris* 1094
Quercus 1273
 — *Aegilops* 1093
Quercus Coccifera 79
Quintefeuille 70. 1690
Quisquillum 79
Racine de Magydaris 736
Radis 369
Radix Dulcis 3128
Raiafort sauvage 832
Raisin sec 2443
 — *d'Ours* 235 [1012
Ranunculus. Renoncule
 — *acris. acre* ~~quart~~ *des*
 près 1602
 — *Lingua* 626
Rapanea. —. Anoplanthus
Raphanus 369
Rapum rotundum 500
Ravanea 53
Régliasse 1997
Reine des bois 459
Renoncée 1991
 — *des petits oiseaux* 208
Reseda 164. 1304
Resina 2667
Rhamnus 588
 — *Catharticus* 2151
Rheum officinale 2662
 — *Ribes* 392. 1004
Rhinanthus Cristagalli
 1670
Rhododaphne 2881
Rododendron 885. 1472
Rhopalum 2674
Rhubarbe 1004
Rhus 72
 — *Cotinus* 2190
Ribes 450. 1459
Ricinus. Ricin 571. 1637.
 2949. 1024
Riz 2412
Romarin 911. 930
Ronce 2113
Roquette 161. 168
Roquille 168
Rosa. Rose 2870
 — *Eglantina* 137. 2871
 — *de Jéricho* 1850
 — *fetida. fétide* 2487
Roseau 644
Rosier des Chiens 1987
Rosmarinus 911. 930
Rouvet 2156
Rubia 2981
Rubus 2113
 — *Fruticosus* 2118
 — *Ideus* 244. 842
Rumex 251. 789
Ruscus 1239
Rue 2678
Rue fétide 1326
Ruta 2679
 — *graveolens* 1326
Sabina. Sabine 153. 3020
Saccharum 645
Sagapenum 2539
Salep 63
Salicornia. Salicorne 278
Salix 342
Salsifis 3233
Salsola 71
Salvador persica 21 ♂
Salvia 634. 738. 2048
 — *Hormimum* 222
Sambucus 766

- Arborea 3133
 — Ebulus 2392
 Sampsucum 2065
 Sanamunda 389
Sandal. 1553. 1846
Sandaraca. Sandaraque
 1889
Sanguinaria. Sanguinaire
 197. 2400
Sanguis Draconis 53
Sanicula. Sanicle 2512
Santalum 1553. 1846. 2703
Sapin blanc 1936
 — *pectiné* 643. 2347
Saponaria. Saponaire 3255
Sarapias 171
Sarcocapnos 5. 2220
Sarcocolla. Sarcocollier 112
Sardoa. Sardonias 1390. 2717
Sarrette 215. 1502
Satyrion 63. 212
Sauge 738. 2048
Saule 2422
 — *d'Egypte* 1064
Saxifraga. Saxifrage 1213
 — *muscoïdes* 1213
 — *media* 3179. 3207
Scabiosa. Scabieuse 3207
Scammonium. Scammonée
 2867
Schizanthum. Schizanthé
 2856
Schoenus 2845
Sciliunca 3020
Scilla. Scille 355. 2078. 2770
Scelopendrium. Scolopendre
 213. 2768
 — *officinale* 1484
Scordium 1155
Scordobrasum 1157
Scorpiurus 1513
Scorzonera. Scorzonère 532
 — *Hispanica* 2753
 — *Picroides* 486
Sebestier 2825
Secale 1607
 — *Cornutum* 2485
Sedum (minus) 423
 — *amplexicaule* 3118
Seigle 1607
 — *ergoté* 2485
Selinum. Selin 883. 1185.
 1373
Sempervivum 15. 422
 — *Arboreum* 482. 3118
Séné 74
 — *des Provençaux* 828
Senecio. Seneçon 433
 — *Jacoba. Jacobée* 2061
Sénévé 1966
Serpentaire 2221
Serpyllum. Serpolet 1172
Serratula 215
Sesamum. Sésame 1439
Seseli 118
Seura marina 3221
Sideritis (montana) 684
Sigillum Salomonis ~~4~~
Maris 2317
Silaus 3022. 3024
Silene. Siléné 1185. 1877
Siligo 183
Silphium 118. 3189
Sinapis 1966
Sisymbrium 1493
 — *Aquatica* 2658
 — *Nasturtium* 1493
Sium 1375. 2642
Smilax (aspera) 437
Smyrnum 1769
Solanum 1443. 2117. 2328
 — *Cordatum* 2520
 — *Nigrum* 62
 — *Esculentum* 2519
Soncus 871. 1243
Sorbus. Sorbier 1233. 1822.
 2752. 3025.
Sorghum 723
 — *Pictus* 1582
Souchet 1407. 2129
 — *odorant* 602. 2129
Souci d'eau 1787.
Soude 7. 3255
Spartina 2528
Spatula (fœtida) 859
Spelta 1902
Sphondylium 54
Spina Alba 313
 — *Arabica* 3380
 — *Hirci* 393
Spinacia 2348
Spirea. Spirée 3064. 3119
Spondylium 54
Stachys 178
 — *Palustris* 652
Staphyle 980
 — *Pinnata* 1554
Staphysagria. Staphysaigre
 65. 2444.
Statice 2062
Sticta pulmonacea 820
Stœchas 616
Stramonium 230
Stratiotis. Stratiote 964. 522
Strombus 1775
Struthium 3022. 3250
Strynus 2329
Styrax 2062. 2830
Suber 2781
Sufftus Maris 236
Sumax 72
Sunchus 2804
Sycomore. Sycomorus 835
Symphytum 262. 1623.
 2268. 3169
Syringa 667
Tabac. Tabacum. 1109
Tamarindus. Tamarinier.
 1702
Tamarix 214. 2108. 2584
Tanacetum. Tanaisie 618
Taraxacum 1536
 — *officinale* 1144
Taxus 1369. 1939
 — *Baccato* 438
Tectonia 2690
Telekia speciosa 2420
Telephium 15. 765
Thelygonum. Théligon
 2210
Terebinthus. Térébenthine
 337. 1061
Terminalia Billirica 302
Teucrium 906
 — *Montanum* 1076
 — *Scordium* 1155. 3242
Thalictrum 504
Thapsia Thapsie 901. 2615.
 2833
Thermocelium 470
Thuja 1889
Thym. Thymus 694
 — *Acinus* 1078
 — *Serpillum. Serpolet*
 1380. 2057. 2892
Thymelæa 512
Tilia. Tilleul 795. 926. 1608
Tithymalus. Tithymale
 901. 1277
Tordylium 118. 2784
Tournesol 201. 988
Trachelium Trachélée 2042
Tragacanthum 393. 3192
Tragopogon 3233
Trèfle = Trifolium
Tribulus 176
Tremble 323. 1917
 — *Terrestris* 2929
Trifolium 63. 158. 668
 — *pratense* 31. 1166
 — *Odorantum* 1511
 — *Procumbens* 1076
Trigonella. Trigonelle 1666
 A. C.
Triticum 3026
 — *Spelta* 3042
Trix 1384
Trollius 1787
Truffe 367. 1713. 3006
Tulipa. Tulipe 1260

- Turbith 828
Tussilago. *Tussilage* 1110.
2932. 987
Typha 2443
Ulmus 781-82
— *Campestris* 1438
Ulva 1879
Urtica 650
Uva Ursi 235
Vaccinium 1633
Valeriana. *Valériane* 52.
476. 1350. 3083
Valerianella 52. 3083
Velar. — *Erysimum*
Veratrum 133. 901. 2638
Verbascum 609
Verbena 50. 1171
Veronica. *Véronique* 1237
Viburnum 454. 1781
— *Opulus* 454
Vescie 2896
Vicia 1107. 2896
— *Cracca* 239. 2502
Vigne 2411
Vinca major 455
Vinea 2411
Viola. *Violette* 696. 1975
Viorne 554
Vipérine 30
Viscum 1910. 2954
Vitex 509
— *Agnus* 1298
Vomiquier 745. 1443
Vulnéraire 2197
Xiphium 859
Zea (*Mais*) 1961
Zingiber 1465
Zizania 2415
Zizyphus 724. 2157
— *Spina Christi* 2172
Zoophite 1325



Ց Ա Ն Կ

ԹՈՒՐԲ ԵՒ ԱՐԱՐ ԱՆՈՒԱՆՑ ԲՈՒՍՈՑ



Աստիճակ ? Կ. Աստիճակ
 Ազնա ազան 946
 Ազրեզ օթի 201
 Աշան էլ-առնեզ 2174
 — էլ-թուր 2484
 — էլ-ֆար 116. 2174
 Ազազ 111
 Ազատ տարու 276
 Ազատ տիրեալ 10
 Ազարիան 13
 Ազերիայ 154
 Ազերիան 13
 Ազֆար ըլ-թիզ 1775
 Աթալ 214
 Աթէլ օթի 154
 Աւաթ. Աւաթ 162
 Ապուն 27
 Ապամ 897
 Աթիա ? 1581
 Ախարան 32
 Ախանան 13. 33. 446. 1937
 — կուրի Աւ. 13
 Ակեր Կ. Էկեր
 Ազան զաւանի 1408
 Ազնա օթի 657
 Ազնա ազան 698. 911
 Ահէմ օթի 1674
 Ամամու 50
 Ամիրզադա 1218
 Ամիրզադա 556
 Ամ շէնէի 201. 205. 288
 Ամիր-ը-տուզ 229
 Այրաստ 1692
 Այազ ըլ-սուլազ 62 940.
 Անդուլիէ 635 [2328]
 Անթալէ ? 815
 Անդարա 142
 Անհիսայի Ռուսի 736
 — պասիպ 118
 — քալիմ 118
 Անհիսայի. Անհիսան 118
 Անհիթէ 650
 Աննուպար Կ. Իննուպար
 Անուար 142
 Անիլ 2078
 Անֆա՛-լ-օն 1742
 Աշրն 127
 Ալեքսար օթի 938

Ալիա. Կ. Իլիա
 Ալբ 257
 Ալբաս 757
 Ալլամ (Էլլէմ) 1888
 Ալուզան 142
 Ալու թէնան 2856
 Ալրէն 143
 Ալուալ օթու 145
 Առու օթի 838. 1673
 Աս 2132
 Ասլան պազի 236
 Ասադէն էլ-ֆատարի 975
 — էր-սայի 1991
 — ըլ-սֆի 2020
 Ասպանա 2348
 Ասֆուր 174. 176
 Ալամ 588. 2151
 Ատաս 2403
 Ասադէ 214. 2584
 Ասրիլ 7
 Ատրիան 2857
 Արանդուզերան 191
 Արար 478
 Արաւան 219
 Արնան 219
 Արուսի տարփերու 2150
 Արուսայիսի 247
 Արտամ 12
 Արտուն հէմիշի 753
 Արֆա 430
 Արալ 264
 Արերզարա 44. 365
 Արիլ յէիզ (Իլլ Էլ-ճէիզ)
 266. 748 1175
 Արար 269
 Աթթիման 3080
 Աթիան 261
 Արա 498
 Բակլազ. Կ. Պակլազ
 Գազուլէ (Պազուլէ) 1931
 Գաթըր Բըննազի կամ պոն-
 նուի 2636. 2858
 Գաթըր 1756
 Գալլան թիթի 1324
 Գամպիլ 1436. 1536. 1801
 Գայա զոուլի 422
 Գանդարիան 2947
 Գանիլու օթ 2400

Գան օթու 197
 Գասազ 645
 — Էլ-զարթի 646
 Գալազ 1358. 2153
 Գալան 2734
 Գարա հէմիշ 1225
 Գարալու 1808
 Գարապալազ 1766
 Գարապալու 616
 Գարապալ շիլիէի 3250
 — օթի 3
 Գարասի 1393
 Գարեմֆիլ 1807
 Գարենն հուլանի 1709
 Գար թֆու 1780
 Գարանաթ 683
 Գաֆլան օթի 746
 Գալլա ազան 1573
 Գալլազ 716. 1535. 1715
 Գընիլ Կ. Գամպիլ
 Գըթի 838
 Գընն (Ղիլն) 1945
 Գըսուս 292
 Գըրդ պալամ. 1407 2317
 Գարթիմ. 176
 Գուզու զուլազի 251. 788
 Գուլլուն 728. 2331
 Գուլլ (Ղուլլ) 1826. 1382
 Գուլլ զոննալ 1210
 Գուլլ պոննու 43
 Գուլլաթ. Կ. Պուլլաթ
 Գուլլա (Ղուլլա) 512. 1310
 Գուրու պազի 512
 Գոզ օթու 1679
 Գոլան հալլանի 1076
 — պոթրազի 669
 Գալ ժիզան 2454
 Գալ շէնէն օթի 1382
 Եազըլ զէօկէնի 1833. 3280
 Եանմա 657
 Եանպու 662
 Եապուլ 197
 — Ղուլլազ 950
 Եանմի 2159
 Եարազ 1195
 Եաֆըլան 1533
 Եաֆուլ 1596
 Եէթուլ 260

Ինտի գարառչ գանջ 53
 Իեր սոմանի 236. 759
 Իբրան հասարակ 2221
 — պահի 30
 Իբրան զուհ. ա. լանդան
 Իբրան թեօրի 1468
 Իրուաթ 91. 2891
 Իրազուրանի 2331
 Իսնա 159
 Իշան 642
 — օթի 1315
 Իսուն. Սու. Իսունի 522
 Զանայ ըլ-ազրեղ 1513
 — ըլ-խոյլ 85. 1774.
 2950. 3232
 — ըլ-ֆարե 2071
 Զապիկ 2443
 — էր-ճեղ էլ 65. 2244
 Զառինգաս 2970
 Զաննեղ 698. 911
 Զարեի 699
 Զարիբ 2817
 Զարու 388. 1664
 Զարուբ 602
 — պտասանի 712
 Զարրինարեի. ա. 703
 Զաֆրան 705. 1603. 3230
 Զաֆր ըլ-քաթ 1353
 Զէլայիթ ըլ-ճուր 3179
 Զէմպիլ իրէկի 693
 Զէննեղիլ 1465
 — Սէմի 736
 Զէպիկ ա. Զապիկ
 Զէրաի Ռունի 755. 1858
 Զէրէն 2176
 Զէրընպա Չուրուսպա 727
 Զէրնիչան 288
 Զէրաե շօփ 579
 Զէրթիլէ 111
 Զէօրե 692. 735
 Զըզըրմ 591. 1915
 Զըլաֆուլ 565
 Զըյան 1736
 Զիբ 709
 Զիբու 388
 Զիլֆի արուս 1952
 Զմառուլ 244
 Զուռա (Տուռա) 723. 1771
 Զուֆա 718
 Զուֆրէ. Չուֆայրէ 1326. 1928
 Էլասպի 874 [2480
 Էկիբ 4. 41
 Էրմուս օթի 2824
 Էնկիխար 762
 Էպրուս 149
 Էրիկ 2683
 Էրզնանի 219
 Էրուլաե 3027
 Էրիլ էլ-ճեղ էլ 930
 — Էլ-ճեղի ա. Արիլ

Էրէկ չեօրեկի 295
 Էրա ա. իւս
 Էրանան ա. Ռեհան
 Էրեի իլ-Չուրապ 7
 — Չարան 698. 911
 Ընիլան 392
 Էրաթ 72
 Էրաթի 72
 Էրազնետա 758
 Էրան իրէկի 246
 Էրաթ ալ-աթալ 214
 Էրազուր 2940
 Էրաֆուրանի 1391
 Էրթիլ 755
 Էրթիլուան 308
 Էրթիլի ազանի 10
 Էրէնն օթի 1804
 Էրի 807
 Էրիլ-ճեղի 643
 Էրիթիլ 1109
 Էրիլաթ 828. 1304
 Էրի իրանի 1702
 Էրիթ 808
 — Էրիլ 808
 Էրիլի խար 1928
 Էրիլիլան 814. 3115
 Էրիլի թիլիլ 161
 Էրմուս 694
 Էրմուսի 1762
 Էրմուս 815
 Էրմուս 369
 Էրմուս 871. 1082
 Էրմուս 927
 Էրմուս 208
 Էրմուս 602. 830
 Էրմուս 16. 2856
 — Էրմուս 1202
 Էրմուս 750. 1987
 Էրմուս ազանի 214. 393. 856
 Էրմուս 3076
 Էրմուս էլ-աթալ 235
 Էրմուս 122. 1987
 Էրմուս էլ-Էրմուս 613
 Էրմուսի իրէկի 683
 Էրմուս 164
 Էրմուս. իլ-Էրմուս 453. 1610
 Էրմուս 355
 Էրմուս 174. 340. 2629
 Էրմուս 2209
 Էրմուսի 876. 2815
 Էրմուս 2157
 Էրմուս 3255
 Էրմուս 3254
 Էրմուս 1598
 — էլ-ճեղ 3245
 — էս-ապիկ 1009
 Էրիլ էլ-ճեղի ա. Արիլ
 Էրիլ 857
 Էրմուս (Էրմուս) 879. 1260
 Էրմուս 77. 2928

Էրմուս. Էրմուս 20. 292
 Էրմուս 985 [887
 Էրմուս 2209
 Էրմուս 494
 Էրմուս էլ-ճեղ 1161
 Էրմուս էլ-ճեղ 3233
 Էրմուս 915
 Էրմուս 610
 — Էրմուս 564. 1764
 — Էրմուս 614
 — Էրմուս 2274
 Էրմուս ըլ-ճեղ 141
 Էրմուս 931
 Էրմուս 940
 Էրմուս 943. 2221
 Էրմուս (Էրմուս) 229. 1979
 Էրմուսի իրէկի 2988
 — Էրմուս 781
 Էրմուսի իրէկի 174
 Էրմուսի 2946
 Էրմուսի 766
 Էրմուսի 1131
 Էրմուսի 960
 Էրմուսի ըլ-ճեղ 746
 — Էրմուս 2355
 Էրմուս 1000
 Էրմուս 1575
 Էրմուսի 931
 Էրմուս 1024
 Էրմուս 1029
 Էրմուս 662. 1018
 — Էրմուսի 1102
 Էրմուս ալ-ճեղ 51
 Էրմուս 168. 1966
 Էրմուսի 29
 Էրմուս 580
 Էրմուս 1462
 Էրմուս 2888
 Էրմուսի 841. 1329.
 2634. 2882
 Էրմուս 666. 1064. 2422
 Էրմուս 426. 2033
 Էրմուսի 1121
 Էրմուսի 116
 Էրմուս 757
 Էրմուսի 53. 565
 Էրմուս 2099
 Էրմուս ըլ-Սալապ 63
 Էրմուսի էլ-ճեղ 2278
 — Էրմուս 1170
 Էրմուս 221
 Էրմուս էլ-ճեղ 63
 Էրմուսի 118
 Էրմուսի 618
 Էրմուսի իրէկի 256. 1656
 Էրմուսի 247
 Էրմուսի 1319
 Էրմուսի 139
 Էրմուսի օթի 51
 Էրմուս ա. Արմուս

Կիւրիակ 137
 Կիւր Կաթիմ 2988
 Կիւնէշ սեպէն 212
 — աօղան 203
 Կիւրիակի աղանի 1608. 1269
 Կրտսեր 842
 Հաղպաղ 1574
 Հալը 22
 Հալիէն ա. Հէլէլիէն
 Հալպիկ 1433
 Հալպի ? 808
 Հալֆա 998. 1602
 Համահիմ 83
 Համամա 50. 1616
 Համիշ պակար 578
 Համու 1746
 Հայիսլամ 15
 Հանդա 3026
 Հանդա 1626. 1789
 Հանըմ պարմադի 1851
 Հաշա 545. 694
 Հաշիշ եւ-դիւննու 140
 — իւս սամէր 1785
 — Եւ-թալան 117. 1735
 Հայիւնի եւ-ադրէպ 201
 — էա տախէս 3231
 Հապ աւ-աս 1633
 — Եւ-արուս 8. 1655. 3138
 — Եւ-իսարա 337. 388
 — Եւ-օլ 42
 — Եւ-մուք 1637. 1938
 — Եւ-զար 621. 2912
 — Են 898
 — իւս-սէլադի 2917
 — իւ-քիթ 662
 Հապաղ 83. 1572. 1627
 Հապառ Եւ-Ղարա 2861
 Հապաղ սուսո 227
 Հասար 1640. 2929
 Հասարանէ 176. 1262
 Հազմանիպ 2782
 Հազարի
 Հազարիուն } 151
 Հազուն 2831
 Հազար 1674
 Հազար. Հասնէր 1269. 1647
 Հասար 2520
 Հարթօման 2891
 Հարշաֆ 1291. 1756. 3134
 Հարֆ 1490. 1756. 1966
 Հարթիթէրէ 109
 Հեզարթուան 1580
 Հէիլիէն 302. 1590
 Հէրտէմպակար 2150

Հինա 1680
 Հիւսիս Երուսաղ 389. 2864
 Հուզամի 1747
 Հուրթուր պաշի 2423. 2156
 Հուլպէ 352. 1666
 Հուսի. Հուսիպ 251. 2757
 — Եւ-մայ 789
 — Եւ-պարա 251. 789
 Հունտէմիշի 1930
 Հուլպան թիպի 1324
 Ղալիս 1560
 Ղամէր շիշէկի 938
 Ղայիս աղանի 1647
 Ղայսուս 321. 1803
 Ղաննապիթ 1170
 Ղանի 1118
 Ղասու ֆ 764. 823
 Ղար 562. 1332
 Ղարապ. Ղարա 28. 1542.
 Ղարադաշ ? 2890 [1810
 Ղարանիէ 2472
 Ղարեմֆիլ 1807. 1033. 2253
 Ղարեպ. Ղարապ 323
 Ղաֆէթ 584. 669. 1815.
 Ղասառ Եւ-հիմար 865
 Ղարֆա 537. 1818
 Ղուզապ 455
 Ղուզուս պապի 7
 Ղուրթախամար ? 819
 Ղուրիկան 1121
 Ղուլուլ 28. 495. 1400
 Ղուլպ 1382
 Ղուլպար 2752. 3076
 Ղուսաթ ա. Գուսաթ
 Ղուսուս 289
 Ղուսա 557
 Ղուսուլ օթի 2865
 Ղուրապ (Ղարեպ) 323
 Ղուրասու 176
 Ղարմանա. Կրմանա 1567
 Ղուրան } [2891
 Ղազլուլա 1836. 1523
 Ղանդարի 1848
 Ղանտուպասար 260
 Ղամ 430
 Ղամար 434
 Ղամալ 742
 — ապիեր 2188
 — Արմանիուս 764
 — Եւ-թիպ 1916
 — մալիկ 393
 — մայիլ 230
 — Եւ-պուէ 397. 1916
 — Եւ-թան 1523

Ղամալի Ղանթուս 51. 450
 Ղասառ Ղասէ 1076. 2015
 Ղարապաղ 1195
 Ղարեթի 1865. 3193
 — Եւ-մայ 883. 3186
 Ղարա 396. 2831
 — Եւ-պարի 396
 Ղարի շիշան 7
 Ղաննիթ կիւրի 318
 Ղանէլ Կիւր 1304
 Ղան աղանի 782. 1438
 Ղանթաթիթ 63
 Ղուրիս 2227
 Ղուլպան 1906-7
 Ղուսուս 1909
 Ղանա պէտէպար 260
 Ղասէ ա. Ղասառ
 Մարթուս 118
 Մանիզարէ 609
 Մանիսան 1250
 Մանիկ 2343
 Մանիսաթ 2627
 Մանուլու 50
 Մանուպան 1938
 Մարթու 118
 Մարա. Մուզառ ? 2518
 Մարանուս 11
 Մարիս 1949
 Մարիս 1300
 Մարապուլ օթի 201
 Մանիկ 337
 Մանիսար 1813. 2805
 Մանիզու. օթի 583
 Մաշ 1982
 Մասու 635. 1575
 Մալ. Մեդ 2145
 Մալիզան. Միֆեդէն. 65.
 Մարան. Մերան 1661 [1989
 Մարապիկ 116. 1380
 Մարանիս 97
 Մարթուս. Մարթուս 1000
 Մեդար-Եր-Ռայի 1036. 1733
 Մեթան 512
 Մեդար օթի 363
 Մեդիպ 219-2. 1666. 1745
 Մեդար 15
 Մերար 2002
 Մերդէկիիւ ա. Մարապիկ
 Մերմուս 2024
 Միս. Մուսպ 2062. 2830
 Միս 892
 Միւլի 1147. 1198. 2093
 Միւրիթ աղանի 766. 2950
 Մի. ֆեդէն ա. Մալիզան
 Միթի 2084
 Մուլուս 823. 1216
 Մուխուլուս 23. 744. 2123.
 Մուլապարիս 3153 [2156
 Մուլթասարի 1160 2127
 Մուսարան 728. 1346

Կարգիչ 2166
 Կանմ 224
 Կամամ 1380. 2057. 2167
 Կանե 96. 108 [2892
 — Դաշ Կանե 3178
 Կանխուհու . 109. 1660. 2168
 Կապու . Կապի 2172. 3209
 Կարճիկ 745. 2178
 Կարմուշ 2189
 Կեսրի 2871. 3262
 Կեղբուզ խուտե 318. 2175
 Կերճի 2176
 Կերան 897
 Կիւնֆեր 1456. 2214
 Կիւսասան 141
 Կոխուս
 — զէլիւն 2485
 Կֆէ 2236
 Կարպիկ 13. 1182
 — Կոմանի 2067
 Կար 430
 Կարի . Կասաի 122
 Կանխուհու 111. 190. 2230
 Կանճիկ 2250
 Կանգալուի 2237
 Կանուտ 1504. 2257
 Կանեֆրեմ 2245. 2663
 — ուսի 616
 Կանտանե 1296. 1247
 Կանարի իւրբանի 2254
 Կամըզու ? 203
 Կամքաթ ա . Կեֆրեթ
 Կեղազու 2784
 Կելնամ 2258
 Կէկ երմանի 2299
 Կեկոյ 426. 1504. 1570
 Կեղնուիք 234
 Կեկար . Կեկեթ էլ-պազ 1436
 — էլՆերիեմ 2018
 — Թիւզեմ 728
 Կելլեմ 2415
 Կենկիւնար . Կեկիար 1029.
 1570. 2277
 Կեպեթ 2692
 Կեպուէն ա . Կանխուհու
 Կերպիս . Կերպիս 1963. 2667
 Կեֆրեթ 245 [2999
 — էլ-պազ 313
 — էլ-պապի 68
 Կիւնիս 267-1
 Կի . Կէ 642
 Կիմիբ ալանի 3005
 Կիրի 861
 Կիրիուշի 2314
 Կուշիկ 1391
 Կուրան . Կամքերան 1072
 Կուրան 168
 Կուրուտ 1408
 Կուլպի . Կուլի 2113
 — էլ-քուլ 1987. 2114

Ումուտ 2270
 Ուրուզ օթի 2207
 Ուլուու 753. 3070
 Ուշթուրիար 118. 736
 Չազու թիքեի 1256. 2079
 Չաթլանդու . Չեթլամդու
 337-8 437
 Չաշուր ? 368
 Չաքար 29. 1607. 1902
 Չէլեմ 494
 Չըրա 1936
 Չիկանեմ 2706
 Չիմե 2437
 Չիմե օթու 566
 Չիար 2848
 Չօան 3255
 Չօան սիւզեի 1533. 2549
 — սարազի 1533. 946
 — սեկեի 1731
 — սուտուի 1733
 Պազգամ ալանի 2070
 Պալասուր 2483
 Պալիլե 353. 2556
 Պալի ; օթի 1140
 Պալուս 1273. 1391
 Պանար դրախտի 2119
 — օթի 317
 — ըլ-անար 618
 Պամի է 2491
 Պան 2494
 Պանթուս 1833
 Պասալ 2789
 — ըլ-դի 190
 — ըլ-ֆարի 355. 2078
 Պասպան 560. 1916
 Պասալար 313
 Պասիան 273
 Պասրենն պուէ 816
 Պասրուտ 1674
 Պարանանի 320
 Պարաս ըլ-պանի 68.
 Պարզաս ա . Պերզաս 335.
 1945. 2525
 Պարսիանդարու 1731. 1331.
 լաս . Պախուզ 284 [3115
 — ըլ-նար 1017. 3115
 — Մըրի 826
 — Քուրի 497
 Պըր էլ-զար 983
 — Ճերի 161
 — Մարի 1559
 Պըր ըլ-զար Քարան 1555 .
 3137
 — Քարան 340. 1559.
 [2540
 Պէլիլե 2556
 Պէնմէ 3077
 Պէնեֆլե 1975
 Պէն 59. 304
 Պէլպարմազ 70
 Պէպպի 1431

Պերենեթի 3253
 Պերեման 68
 Պերուի 2620
 Պեդիլիլե 2113
 Պեֆրե 592. 1982
 Պիի 1788. 2734
 Պիանեթի 1997
 Պիթ օթի 375
 Պիսի 1533. 2549
 Պիլ 341. 2544
 Պլարի օթի 925
 Պուզուտ 27. 63
 Պուխուր էլ-Արաս 1504
 — լու 384
 — Մերի 236. 759.
 1980. 2447
 Պուզ թիքեի 683. 736
 Պուղաս 3026
 Պուլի սարանի 2476
 Պուլուար 832. 309
 Պուլուս 3212
 Պուրի 609. 1025
 Պուրիս 545
 Պուր օթի 927. 2987
 Պըր . Պուր 2598
 — խար 2604
 Պրիկ Քարի 143
 Պրիկ Քարուի 2614
 Պըլ . Պըլ 2582
 Պըլ 1745
 Պուզան է Քուլ 83. 422
 Պալիլե 2668. 101
 Պան ըլ-նար 51
 Պասան 1426
 Պաս է-Շիլ 1278
 Պասպ 159. 162
 Պեթ 3258
 Պենան 2663
 — Պարեթիլ 1078. 3034
 Պէման 2662
 Պիլուս 1490. 1966
 Պիպաս 1459
 Պուսան 2225
 Պուսան 2981
 Սազը ալանի 337
 Սազը թիքեի 165. 453
 Սազու . Սասու 2679
 Սալեպ 63. 1878
 Սէիլե 537. 2682
 Սալ օթի 3077
 Սան 2690
 Սամիր համա ? 201
 Սամիլ-նար 591
 Սամի 116
 Սայթար 721. 1172. 1561
 Սանաս 1553. 1846. 2703
 Սանու 602. 2487
 Սապ 1597
 Սասու ա Սազու
 Սասու 216. 1250 1337

Սարմախ 764. 1796
 Սարվա 2949
 Սաֆասֆ 1064
 Սեմեյա թագրիս 225
 Սէյրան ազանի 888
 Սեհամէքի 74. 2699
 Սեհեվպեր 1523. 2347
 — ըւարդ 906. 2539
 Սերվի 2212
 Սերզանդ 2721
 Սեբզդիէ 2539
 Սեֆերէի 2738
 Սըզըր աիլի 614
 Սիւ 224. 2747
 Սիւի 276. 788. 2478-9
 Սիսազան 2769
 Սիսիբլի օթ 2629
 Սիւէլյան ազանի 950
 Սիւմպիւ 693. 2184
 — Խեթայի 1068
 Սիւնեթլիէի օթ 992
 Սիւսիէ 1277
 Սիւս օթ 1244. 1560
 Սիքրան ըւարդի 59
 Սուս 2129
 Սու գազադի 1571. 2972
 Սուլթան էւնէպէ 1851
 — օթ 1851. 3988
 Սուս 1154
 — էլ-նայ 3242
 — բուսթի 1157
 Սումախ 72
 Սուս 1997
 Սուսամ 1439. 2356
 — օթ 144. 3988
 Սուրենյան 1779
 Սուրու թուրքի 698. 911
 Սորդան ազանի 666. 1064.
 Սեննա 3076 [2422]
 Վախշիրակ 2854
 Վան. Ուան 27. 311
 Վասի 488. 3252
 Վարդ 2870
 — էլ-հիմար 2873
 — ըլ-ձիլի 2487
 Տալպուի. Տալպուի 191
 Տակուպ 1784. 1957
 Տաղան 892
 Տան 2915
 Տամ գորուզու 976
 Տամ ըլ-ախվայ 53
 Տանա պուսնու 613
 Տալլան գուլադի 2174
 Տարի ֆուրու 559
 Տարիան 642
 Տարլազու 1863
 Տարլիշան 53. 565. 2185
 Տարլիս 537. 561
 Տարսիսի 1403

Տարար 781-2
 Տափլանի թրահադի 960
 Տեհիկ թոփալազը 236. 759
 Տեաղէնպուէ 77. 2264. 2928
 Տեզէ տիքէնի 124. 736
 Տեզէ տապանի 1110
 Տեզուար 782. 1438
 Տեֆէ 1332
 Տեֆու. Տեֆուէ 591. 2960
 Տիւլաուսադ 1661
 Տիւլադ. Տիւլա 1910. 2954
 Տիւլիան օթ 1602
 Տիւլիէի սիֆիբի 694
 Տուլա 2848
 Տուխա 927
 Տուխ 434
 Տուսուս 72
 Տուսուս ո. Չուսուս
 Տուսար 1902
 Տուրխուլ. Տուրխուլի 5
 Տամալան 367. 445
 Տոնուզ պադի 236
 — էրիկի 1811. 2417
 Տուսուլ 982
 Փամպուզ 298
 Փարսիեռան 1676
 Փափաթիս 446
 Փէլէսէնի իլէկի 320
 — իլէկի 819
 Փէլլամպեր աիւվէսի 377
 Փեննէնքուշ 509
 Փիրզան ո. Պարզան
 Քաղանի 9 23
 Քաթ ըլ-նաիի 630
 Քաթիթ 1842
 Քաման 367. 4. 46
 Քաման 1858. 2437
 — էրմանի 2439
 Քամբամ 1061
 Քանապ 1296
 Քանկար. Քէնկեր 1291
 Քալիս. Քալի 3185
 — ուսի 1312
 Քալիու 445
 Քապապա Քապապէ 8
 Քանի 635
 — պարի 992
 Քասա 756
 Քավթապ իւլ-արդ 459
 Քարուիէ 755. 1858
 Քարնապ 1270
 Քաթ էլ-տանի 259. 2013
 — նարի 1353
 — Նար 213
 Քեղամպի 474
 Քէլի 361
 Քէլի սուրի 712
 Քեման. Քեմաթ ո. Քաման
 Քէլի բենլէրի 673

Քէլի օթ 3
 Քէլի պոսնուզու 662
 Քէլապ 8
 Քէլիթէ 520 [3160 3186
 Քերէվիս. Քերէֆա 883. 1373
 Քերխէրան 1566
 Քերքէ 892
 Քերքէնէ 143. 2150. 2426
 Քերքի օթ 1380. 2139. 2426
 Քերս. Քուրս 2411
 Քիւ 2145
 Քիւ 978
 Քիւպի 143
 Քիւիւ. Քիւիւն 443. 487
 Քիւրազ 282. 1393
 Քիւրի 881
 Քիւիւիկ իլէկի 384 [1766
 Քուզպարթ իւպեր 603.
 Քուէնիւ (Քուսուէ) 1799
 Քամաար 2918
 Քանաուս 3022
 Քուսուս 2612
 — էլ-պի 1275. 2642
 — լամի 1295
 — էլ-զալապ 2254
 Քուրս 3221
 Քասանէ 3196
 Քաթի 298
 Քանար. Քանար 387
 Օղու օթ 816
 Օնադա 142
 Օշախ 117
 Օշար 2982
 Օրուզ 2412
 Օրուզ էլ-Սապադի 579
 Օրուս
 Փադի 1689
 Փաթի 3260
 Փարսիուս 12
 Փէլէնէմուշ. Փէրէնէմուշիկ
 305- 3034
 Փէննէնքուշ 1690
 Փէշու 437
 Փէշիէն 2663
 Փըթի 3262
 Փըթի 2308. 2805
 Փընադ 242
 Փընադ 2552
 — էլ-հիմար 858. 2552
 Փիւլիս 1842
 Փիւլու. Փիւլու 1279. 3264
 Փլամպուզ ազանի 926
 Փուլ 3083
 Փուլ ֆուլ 83. 581
 Փուլ ֆուլ 2563-4
 — թիւ 337
 Փուս 2981
 Փրէնի իւլիսի 842
 Փրէնէմուշ 1078

THE BORROWER WILL BE CHARGED AN OVERDUE FEE IF THIS BOOK IS NOT RETURNED TO THE LIBRARY ON OR BEFORE THE LAST DATE STAMPED BELOW. NON-RECEIPT OF OVERDUE NOTICES DOES NOT EXEMPT THE BORROWER FROM OVERDUE FEES.

Harvard College Widener Library
Cambridge, MA 02138 (617) 495-2413

CANCELED WIDENER SEP 8 9 1997 WIDENER	



